

ԼԵՒՈՆ ԾԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ԿՈՒԻՆԵՐՈՒ ԳԻԾԸ
ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գ. ՀԱՅՈՐ

Մշակույթ
94 (բնագրի
համար/վեր)

ԼԵՒՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ԿՌԻՒՆԵՐՈՒԻ ԳԻԾԸ
ԱԶԳԵՐՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գ. ՀԱՏՈՐ

2



Տպ. ՏՕՆԻԿԵԱՆ
ՊԵՂՈՒՄ
1967

ՈՐՊԷՍ ՆԱԽԱԲԱՆ



Ինչպէս մեր այս վերջին ուսումնասիրութեան՝ — *Դասակարգային Կռիւներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ* — Առաջին հատորին մէջ արդէն նշեցինք, մեր սոյն գործը հեղինակութիւն մը չէ, այլ՝ առաջադրուած նիւթին հետ կապակցութիւն ունեցող զանազան մարքսիստ կամ արմատական-ազատական հեղինակներու գիրքերէն ֆաղուածական ամփոփումներու հաւաքածոյ մը: Շէնքին տրուած ձեւը՝ կառուցումը իմս է, ատաղձները՝ ուրիշներունը:

Առաջին եւ երկրորդ հատորներու բովանդակած նիւթերու համար հարկ եղած գիրքերը արդէն ունէի իմ գրադարանիս մէջ, (իմ միակ հարստութիւնն է այդ գրադարանը) եւ անով ամբողջացուցի այդ երկու հատորները: Բայց Գ. հատորին համար անհրաժեշտ գիրքերը կը պակսէին: Իմ ուժերուն հետ սպառած էին նաեւ պահանջուած միջոցները: Ի՞նչ ընելու էի... Ամերիկայի մէջ տիրող դասակարգի շահերուն դպչող ռեւէ գիրք հազուագիւտ է եւ սուղ. արդէն այդ գծին վրայ կանգնած հեղինակներն ալ սակաւ են, արիւմտարհուած ու չֆաւոր: Նախորդ գործերուն հրատարակութեան առիթով հատրնտիր ընկերներու եւ բարեկամներու մասնակի օժանդակութեանց շնորհիւ իմ փոքրիկ խնայողութեանց զումարը չֆացեր էր: Հրատարակուած գիրքերուս մեծ մասը դիզուած էր մեր տան մէջ: — «Շատ ապերախտ գործի լծուած ես», գրած էր ինձ իմ մէկ բարեկամը. — «Ամերիկահայերը քու գրածները չեն կարդար ու եթէ կարդան ալ՝ չեն կրնար հասկնալ»: Բարեկամիս նկատողութիւնը ճիշդ էր, բայց սկսուած գործը կիսատ չէի կրնար թողուլ: Գիմեցի ամերիկեան ֆաղաֆային գրադարաններուն, Օֆլէնտի, Սան Ֆրանչիսկոյի, Ֆրեզնոյի գրադարաններուն, ցոյց տուի իմ փնտռած գիրքերուն ցանկը. ամէն տեղ ինձ տրուեցաւ նոյն պատասխանը. — «Ձեր ուզած գիրքերը մենք չենք պահեր»... Իրա՞ւ չէին պահեր թէ՛ բացարձակապէս չէին ուզեր որ դարակներէն դուրս գային վտանգաւոր ու փոխանցիկ հիւանդութեանց այդ միֆրոպները, ես այդ կէտը չկրցայ նշդել... Միակ միջոցը կը մնար գնումներ ընել: Բայց ինչո՞վ գնել, երբ ֆակս դատարկուած էր... Գրադարանիս մաս մը գիրքերը կարելի էր ծախել, ըսի ինքնիրենս: Ծախե՞լ... Բայց որո՞ւ... Ֆրեզ-

նոյի մէջ երկու ամերիկեան գրավաճառատուն կար. դիմեցի անոնց. — «գործածուած գիրքեր չենք կրնար ծախել, ըսին, դիմեցէ՛ք Սան Ֆրանչիսկոյի հին գիրքերով գրադոզ գրավաճառներուն...: Երկու հարիր մզոն հետո քաղաք մը երբայ գիրքերու ծրարներով... Ըլլալիք բան չէր, մանաւանդ որ փորձառութեամբ գիտէի թէ՛ այդ գրավաճառները շատ աննշան գին մը պիտի առաջարկէին ինծի. տասը տուարնոց գիրքի մը ոչ աւելի՛ քան 25 սէնթ. այդ կը նշանակէր մուրացկանութիւն: Որոշեցի դիմել ուրիշ գործնական միջոցի մը, **Bookman's** ամսաքերքին: Այդ ամսաքերքը կը ծառայէ բացառապէս ամերիկեան գրավաճառներու *պիզնէտ*ին: Անոնք իրենց վաճառել ուզած գիրքերու ցանկը կը դնեն հոն եւ կամ՝ իրենց յաճախորդներու փնտռած գիրքերու ծանուցումը կը գետեղեն անոր *Գիրք կ'ուզուի* սիւնակին մէջ: Ծանուցման պայմաններն են. — Գրավաճառներուն համար՝ տողին 10 սէնթ, իսկ դրոշմներուն համար՝ տողին մէկ տուար: Այդտեղ եւս ինձ համար անպատեհութիւն մը կար. ես գրավաճառներու ակումբին չէի պատկաներ, ուրեմն, իմ վաճառել ուզած ամէն մէկ գիրքիս ծանուցումը համառօտագրուած ձեւով առնուագն երկու տողի համար վընարելու էի 2 տուար: Ատիկա չէր յարմարել իմ նիւար ֆակին... Խորհեցայ ուրիշ կերպ: Ես գրադարանիս մէջ ունէի **Impricor**(*) շաբաթքերքի 11 տարուայ հաւաքածուները — 1920-31 — գործնական ատանձին հատորներով կազմել տուած էի. նոյնպէս Ամերիկամկուսի **Communist** ամսաքերքի 12 տարուայ հաւաքածուները — 1920-31 — բոլորն ալ լաքակազմ. ինչպէս նաեւ **Communist International**-ի 1925-1926-ի հաւաքածուները, երկու հատոր: Մտածեցի որ կարելի էր այդ հաւաքածուները համառօտագրուած 6 տողով ծանուցանել **Bookman's** պարբերաքերքի մէջ եւ այնպէս ալ ըրի: Ամբողջին գինը նշանակած էի 120 տուար: Հագիւ երեք շաբաթ անցաւ եւ ահա Նիւ Եորքէն, Պոսթոնէն, Ֆիլատելֆիայէն, Շիքագոյէն եւ Ուաշինկթընէն ստացայ ապսպրանքներ: Անոնցմէ մին՝ Նիւ Եորքի մէկ գրավաճառը, այնքան անապարեք էր, որ 120 տուար կանխիկ զրկած էր բոլորը մէկ անգամէն իսկոյն թղթատարին յանձնելու համար: Անսպասելի բան էր

(*) *Impricor* — International Press Correspondence — *կուսակցական Միջազգայնականի անդերերէն բաժնի շաբաթաթերթն էր, որ կը հրատարակուէր նաեւ ռուսերէն, գերմաներէն, ֆրանսերէն, իտալերէն եւ սպաներէն լեզուներով. կու տար վերլուծողական ծանոթութիւններ աշխարհի զանազան երկիրներու ընկերային, տնտեսական եւ քաղաքական հարցերու շուրջ:*

եղածը, անսպասելի եւ շանքահարող... Քանի՛ քանի քաղաքներ փոխեր էի եւ այդ հաւաքածուները ուրիշ գիրքերու հետ տարեր էի ինձ հետ: Անոնք կարեւոր պրպտումներու հարուստ ազբիւրներ ըլլալէ աւելի իմ հոգիի սիրասուն ընկերներն էին... Ա՛հ, ի՛նչպէս պիտի բաժնուէի անոնցմէ... Բայց... դաժան կեանքի հրամայական պահանջն էր, պէտք էր համակերպելի ու համակերպեցայ:

Աւելորդ է ըսել թէ՛ ինչքան նեղութիւն փառեցի, ի՛նչքան քրտինք ու արցունք քափեցի այդ ստուար հատորները թղթատարութեան յանձնելու ատեն, մինչեւ որ վարագոյրը իջաւ...

Շատ վերջերը հասկցայ որ իմ նշանակած գիներու կրկինը կըրնայի պահանջել եւ ստանալ, որովհետեւ իմ ունեցած հաւաքածուներս արդէն անցած էին *Հաղուազիւտ* գիրքերու շարքին:

Յամենայն դէպս, ինքզինքս մխիթարեցի, քանի որ իմ գործը շարունակելու միջոցը ստեղծուած էր. ես ուզած գիրքերս կրնայի գնել ու գնեցի...

Այս անգամ իմ առջեւ կեցած էր ուրիշ դժուարութիւն մը: Առաջին երկու հատորները պատրաստելու ատեն, արդէն յոգներ էի, սպառած էին իմ ուժերը... Ես իմ ձեռք ձգած գիրքերը պիտի կարդայի, պիտի ուսումնասիրէի եւ պիտի տայի անոնց ամփոփումը միշտ պահելով այն գիծը, որ համաձայնելու էր իմ առաջադրած նիւթին հետ:

Միթէ կարելի՞ էր այդ ընել... Վէպի մը ամփոփումը կարելի է տալ, բայց ի՞նչպէս կարելի է, օրինակ՝ Մարքսի *Կապիտալի* երեք հատորներու ամփոփումը պատկերացնել, կամ՝ Ամերիկայի բանուորական շարժման շուրջ 17 հատորներու համառօտագրութիւնն ընել...: Ամբողջ երկու տարի աշխատեցայ եւ վերջապէս ինքզինքս կրցի համոզել թէ գոնէ *ժառանգ* յաջողեր էի...:

Բայց կը մնար վերջին եւ ամենամեծ դժուարութիւնը. գործիս տպագրութեան ծախսերը հոգալու դժուարութիւնը:

Ֆրէզնոյի մէջ — փառք պաղ պատերազմին — 38 հայ միլիոնատէրեր կան. դիմեցի անոնցմէ մէկուն՝ որ 30 տարի առաջ տիրող տնտեսական տագնապի շրջանին համարեայ թէ մուրացկանութեամբ կ'ապրէր, եւ ինձ հետ բարեկամացեր էր...: Մարդը պահ մը մտածելէ վերջ կոշտ պատասխան մը տուաւ. — «Վագ անցիր էդ սոսիալիստական մոսիալիստական բաներէն... եթէ տուն մը գնես, քեզի քանի մը հազար տուար կու տամ եւ *ժօրթիլէճը* (կալուածամուրհակը) վրաս կ'առնեմ, եթէ ոչ՝ ես էդպէս խրվըռ զըվըռ բաներու փառա չեմ տար...»: Ես տուն մը պիտի գնէի — անշուշտ հասկնալի է՝ մաս մը կանխավաճառմով — ինքն ալ ինծի փոխատուութիւն պիտի ընէր, եւ եթէ չկարողանայի վճարել իմ պարտքը, տունը պիտի գը-

բաւեր եւ նորէն ծախէր բարձր գինով... : Ահա քէ ի՛նչպէս էր հարբս-
տացեր երէկուան այդ մուրացիկը... :

Այդ հարստացած հայերուն դիմելէ յուսահատ՝ որոշեցի չնա-
հանջել : Ամերիկայի զանազան քաղաքներէն մատի վրայ համրուած
մի քանի բարեկամներու եւ ընկերներու նամակներն ու քանակով
փոքրիկ՝ բայց բարոյական արժէքով բարձր օժանդակութիւնները
իրապէս ոգեւորիչ էին : Անոնց վրայ աւելցաւ Եւրոպայի հեռաւոր մէկ
անկիւնէն հռչակաւոր հայ հաստատութեան մը օգնութիւնը, որ ա-
նըսպասելի էր . միայն քէ ինձ ուղղուած նամակիմ մէջ քելադրուած
էր չիրատարակել նուիրատու հաստատութեան անունը : Ո՛չ, գործս
կիսաւարտ չէի կրնար բողոք : Դիմեցի Ֆրէզնոյի մէկ դրամատունը
եւ բնակարանս կալուածամուրհակի տակ դնելով՝ ստացայ հարկ ե-
ղած գումարը, որով ձեռագիրս այլեւս ազատ էի դրկել հրատարա-
կիչ Տօնիկեանին :

Ուրախալի էր, որ իմ կեանքի ընկերը՝ Եւգենէն, որուն շատ
բան կը պարտիմ իմ տէնացան աշխատութեան ընթացքին, երբեք
չհակառակեցաւ իմ առած քայլին : Բնակարանը միայն իմ սեփական-
ութիւնը չէր, իրեն ալ կը պատկանէր, եւ ան իր գլուխը իմինիս
հետ խոնարհեցուց պարտի լուծին տակ... : Բայց գործս ասով չէր
վերջանար . ես հարկադրուած էի առանձին նամակներով դիմումներ
կատարել բոլոր անոնց՝ որոնք ստացեր էին իմ գործիս Ա . եւ Բ . հա-
տորները, եւ խնդրել անոնց օժանդակութիւնը :

Թէ ի՛նչ արդիւնք պիտի տան իմ դիմումներս, չեմ գիտեր,
միայն գիտեմ որ նախ քան այս աշխարհէն հեռանալս, իմ ուսում-
նասիրութեան Գ . հատորը լոյս կը տեսնէ, եւ անով վերջակէտը կը
դնեմ բարեկամներէս մէկուն գրիչով որակուած իմ «*խենթութեան*
նը»... :

Եթէ Յ . Ոսկերչեանի նման — յարգանք այդ ազնիւ հայորդիի
յիշատակին — մէկը գտնուի որ մեկեմասը դառնայ իմ անտիպ գոր-
ծերէս մէկուն, այն ատեն՝ իմ կենդանութեանս կը հրնուիմ՝ տես-
նելով անոր ալ հրատարակութիւնը . այլապէս ձեռագիրներս աւանդ
կը բողոքմ իմ տիկնոջ, որ մեռնելէս յետոյ՝ զանոնք փոխադրէ Հա-
յաստան :

Ներէ՛ ինձ, սիրելի ընթերցող, որ ես որպէս նախաբան այս ի-
րողութիւնները պատկերացուցի Քեզի, որովհետեւ իմ աշխատութիւ-
նը աւարտելէ վերջ՝ երբ անոր *Յառաջարանը* պէտք է պատրաստէի,
իմ հոգեկան մթագնած դրութիւնը ուրիշ բաներ գրելու տուն չէր
տար... :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Գ . ՀԱՏՈՐԻՆ

Ա . ՄԱՍ

Կապիտալիզմի Իմաստը : Ֆեոդալիզմը՝ Քայքայող Ազգակները :
Բուրժուազիայի Մագումը : Կապիտալիստական Շրջանի Սկզբնառու-
մը : Ի՞նչ կը Սարվեցնէ Մարքսի Կապիտալը :

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ

- Maurice Dobb.— Studies in the Development of Capitalism.
- J. A. Hobson.— Evolution of Modern Capitalism.
- Karl Marx.— Pre-Capitalist Economic Formations.
- Karl Marx.— Capital. 3 Vols.

Բ . ՄԱՍ

Բանուորական-Արհեստակցական Միութեանց Կազմութիւնը եւ
Անոնց Գործունէութիւնը Կապիտալիստական Առաջաւոր Երկիրներու
Մէջ :

Դասակարգային Կռիւներու Գիծը ԺԵ . Դարէն Մինչեւ Ի . Դարը :
Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը :
Փարիզի Կոմունան :

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ

- William Z. Foster.— Outline History of Trade Union Mo-
vement.

Lorwin.— The International Labor Movement.

Thomas Carlyle.— The French Revolution.

L. Knowles.— Class Struggles in the Era of Capitalism.

Frank Jellinek.— Paris Commune of 1871.

J. Stalin.— Leninism. 2 Vols.

Գ. ՄԱՍ

Գիտութեան նուաճումներու ուղին 17-րդ Գարէն Մինչեւ Մեր
Ներկայ Օրերը :

Ազատ Մտածողութիւնը 17-րդ Գարէն Մինչեւ Ներկայ Օրերը :

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

J. D. Bernal.— Science in History. 2 Vols.

H. G. Wells.— The Outline of History. 2 Vols.

M. Robertson.— A Short History of Freethought.

W. E. H. Leckey.— History of Rationalism in Europe.

D. W. Brogan.— The Price of Revolution.

Գ. ՄԱՍ

Կապիտալիզմի Քայքայիչ Ազդակները : Սոցիալիստական Գա-
րաշքանի Նախկարապետ Երկիրները : Դասակարգերու Վերացում :
Առանց Պատերազմի Աշխարհ մը , որ Երագային Չէ :

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Paul A. Baran.— The Political Economy of Growth.

J. D. Bernal.— World Without War.

Thomson G.— The Foreseeable Future.

S. Lilley.— Automation and Social Progress.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Կ Ա Պ Ի Տ Ա Լ Ի Զ Մ Ը

**Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն
Ա . Մ Ա Ս Ի Ն Հ Ա Մ Ա Ր**

Մեր այս ուսումնասիրութեան Ա. Մասը յատկացուած է *կապիտալիզմի* սահմանադրումին: Ի՞նչ է *կապիտալիզմի* մասին մարքսեան հասկացողութիւնը: Յետոյ կու գայ *Ֆէոտալիզմի* պատկերացումը եւ *ֆէոդալիզմը* քայքայող ազդակները: Անկէ վերջ կու գայ այն հարցը թէ բուրժուազիան ինչպէս ծագում առաւ եւ նամբայ բացաւ կապիտալիստական շրջանին: Այս առթիւ Մարքս մեզի կու տայ նախակապիտալիստական շրջանի տնտեսական կազմաւորումներու մասին:

Քարլ Մարքսի *Կապիտալը* շատ քիչ մատչելի եղած է հայ ընթերցողներուն. մենք աշխատեք ենք հասկնալի ձեւով պատկերացնել Մարքսի ուսուցումները ամենասեղմ շրջանակի մը մէջ:

Կապիտալիզմ տէրմինը, որ վերջին տարիներուն հասարակական խօսակցութեանց եւ պատմագիտական ուսումնասիրութեանց առարկայ եղած է, այնքան տարբեր ըմբռնումներով գործածուած է, որ շատեր չեն գիտեր թէ ո՞ր մէկն է անոր ճշգրիտ իմաստը: Նոյնիսկ կարգ մը տնտեսագէտներ ու պատմաբաններ, կը մերժեն ընդունիլ, որ *կապիտալիզմը* տնտեսական բոլորովին ուրոյն սիստէմ մըն է, որ իր ներքնաշէնքով ու վերնաշէնքով հիմնապէս կը տարբերի գերետիրական ու աւատապետական սիստէմէն: Անոնք կ'ընդունին որ պատմական շրջանները բարդ եւ խառն տարրերով կազմուած ըլլալուն համար սխալ է զանոնք առանձին պատկերաւորումներով ներկայացնելը: Մենք անոնց պիտի մօտենանք վերացական ըմբռնումով: Փրոֆեսոր Թաունի, իր կրօնքը եւ *Կապիտալիզմը* գիրքին մէջ որոշակի կը շեշտէ որ *կապիտալիզմ* անունը ուրիշ բան չէ եթէ ոչ քաղաքական յանկերգ մը: Այս կարգի մարդոց կարծիքով *Կապիտալիզմը* մասնաշառուկ պատմական սիստէմ մը չէ:

Հազիւ քիչ մը աւելի յուսալից ուրիշ ըմբռնում մը կայ, որ *կապիտալիզմին* կու տայ նեղ շրջանակով պատկերացում մը: Համաձայն այդ ըմբռնողութեան՝ *Կապիտալիզմը* անհատական ազատ ձեռնարկութեան սիստէմ մըն է, ուր մարդոց տնտեսական եւ ընկերային յարաբերութիւնները կը կատարուին պայմանագրութեամբ, ուր մարդիկ ազատ են իրենց ապրուստի պայմանները փնտռելու մէջ, առանց ենթարկուելու օրինական սեղմումի ու բռնութեան: Դոսըն *Կապիտալիզմ* տէրմինը չի գործածեր իր գիրքին մէջ, այլ կը խօսի Individualismի եւ Collectivismի մասին:

Կապիտալիզմի գաղափարին շուրջ պատմական հետազոտութիւններն ու թարգմանութիւնները հաշուի առնելով կրնանք նշել երեք տարբեր ճիւղեր, որոնք *կապիտալիզմի* ծագման ու զարգացման մասին իրարմէ տարբեր մեկնութիւններ կու տան:

Առաջինը, որ ամենէն ընդհանրացածն է թերեւս, ձեւակերպուած է յայտնի հակա-մարքսիստ տնտեսագէտէ մը, որուն անունն է Վերնէր Զոմբարտ: Զոմպարտ *Կապիտալիզմի* էութիւնը չի փնտրուեր անոր տեսական ձեւին կամ Ֆիլիքսական կազմախօսութեան մէջ,

այլ անոր հաւաքական հեռանկարները յառաջացնող ոգիին մէջ, որ ներշնչումը տուած է ամբողջ դարաշրջանի մը կեանքին ու գործունէութեան: Այդ ոգին բուրժուական հաշուառումի եւ բանաւարութեան ոգիին ընկերացած՝ ձեռնարկութեան կամ արկածախնդրութեան ոգիին հետ տեսակ մը համադրութիւն կը ներկայացնէ: Տարբեր ժամանակներու մէջ տարբեր անտեսական դրութիւններ տիրապետող եղած են միշտ եւ այդ ոգին եղած է որ յարմարագոյն անտեսական կադմակերպութիւն մը յառաջացուցեր է: Հետեւաբար, Չոմբարտի տեսութեամբ Կապիտալիզմը մարդկային միտքի ու վարուեցողութեան վիճակներու զարգացման արդիւնքն է: Հետաւոր անցեալին մէջ, նախքան կապիտալիստական ձեռնարկութեանց իրականութիւն գառնալը, կապիտալիստական ոգին գոյութիւն ունեցեր է — սաղմնային վիճակով՝ եթէ կ'ուզէք: Նախակապիտալիստական ժամանակներու մարդը Բնութեան մարդն էր, որուն անտեսական գործառնութիւնը միմիայն իր բնական պէտքերուն կապուած էր: Այս շրջանը Կապիտալիզմի մանկութեան շրջանն էր որ երկար դարեր տեսց: Մաքս Վէպեր, հետեւելով Չոմբարտի, Կապիտալիզմը կը բնորոշէ որպէս մարդկային խումբի մը կարիքները արդիւնաբերական մեթոտով գոհացնելու դրութեամբ, դրութիւն մը, որ կը ձգտի բանավարութեամբ ու սխտէմատիկ կերպով շահոյթ ապահովել նեղ օրերու համար: Այսպիսով Կապիտալիզմի ոգին մտած է զարգացողական շրջանը:

Չոմբարտի եւ Վէպերի տեսութիւնը հիմնուած է իտալիստական բմբռնողութեան վրայ, որ արամարանական հիմք չունի: Եթէ այդ կապիտալիստական ոգին ինքնին պատմական արտադրութիւն մըն է, ի՞նչն է որ զայն բերած է պատմական թատերաբեմ: Այս հարցումին գոհացուցիչ պատասխան չկայ: Վէպերը այդ դերը կը վերագրէ Բողոքականութեան, Չոմբարտը՝ հրէաներուն:

Երկրորդ տեսութեան ջատագովն է Փրոֆէսոր Իրլ-Համիլտըն, որ Կապիտալիզմը կը բնորոշէ որպէս կազմակերպութիւն մը, որուն պատահն է արտադրողութիւնը դնել աւելի լայն ու հեռաւոր ուղիներու վրայ: Ձեռագործական արհեստաւորը երբ իր արտադրածը կը ծախէր քաղաքի շուկային մէջ, ատիկա կապիտալիստական գործառնութիւն չենք կրնար կոչել: Կապիտալիզմը իր ներկայութիւնը զգալի ընել տուաւ այն ատեն՝ երբ վաճառականը կանխավճարումով մեծաքանակ ապրանք սկսաւ կուտակել եւ յետոյ՝ գանձք ծախել շահով: Այս գաղափարը յառաջացաւ Գերման Պատմագիտական Դրագրոցէն, որ եկաւ գանազանութիւն դնել Բնական տնտեսութեան եւ Դրամական տնտեսութեան միջեւ: Բայց պէտք է ըսել թէ Մոմսէն, հին Հռովմի պատմաբանը, իր ատենին, արտադրութեան կապիտա-

լիստական ձեւի նշումը կ'ընէ հին թէ նոր՝ ամէն մէկ դրամական տնտեսութեան մէջ: Իրլ Համիլտըն, իր տեսութիւնը աւելի պարզաբանելով Կապիտալիզմը կը սահմանէ որպէս սխտէմ մը, ուր հողէն աւելի՝ դրամը կը գործածուի յաւելեալ եկամուտ ապահովելու համար: Ասոր տեսութեամբ, ուրեմն, Կապիտալիզմը վաճառականական սխտէմ մըն է, որ սկսած է շատ կանուխէն եւ զարգացած է Միջին Դարուն: Նոյն տեսութիւնը կը պաշտպանէ նաեւ Փիրէնի, որ կը փաստէ թէ՝ Միջին Դարու ազբիւրները կապիտալիզմի տեսական գոյութիւնը ապահովեցին 12-րդ դարուն: Անկէ յետոյ՝ Կապիտալիզմը սկսաւ արագօրէն յառաջդիմել եւ իր բերքը տարածել ամէն կողմ:

Այս տեսութեան ջատագովներն ալ սխալ մեկնակէտէ մը կը սկսին իրենց փաստարկութիւնը եւ կը յանգին իրապէս շփոթեցուցիչ եզրակացութեան:

Երրորդ տեսութիւնը կը պատկանի Քարլ Մարքսին, որ Կապիտալիզմը վեր հանեց՝ ո՛չ շահարեք ձեռնարկութեանց ոգիին, ո՛չ ալ փոխանակութեան միջոց դրամական կուտակման մէջ, այլ արդիւնաբերութեան մասնաշատուկ ձեւին մէջ: Արդիւնաբերութեան մասնաշատուկ ձեւ ըսելով ան չէր մտանշնչեր միմիայն արտադրողութեան զարգացած տեխնիկական վիճակը՝ զոր անուանեց արտադրողական ուժերու զարգացած գոյավիճակ, այլ այն՝ որ արտադրութեան միջոցները կապիտալիստական դրութեան տակ կ'անցնին սակաւթիւ մարդոց ձեռքը եւ մարդոց միջեւ ընկերային, անտեսական յարաբերութիւնները կը փոխուին հիմնապէս եւ կը հետեւին նոր ձեւի արդիւնաբերութեան ընթացառումին: Այսպիսով Կապիտալիզմը ոչ միայն պարզապէս սպառման շուկայի համար արտադրողական սխտէմ մըն է, — ապրանքներու արտադրութեան սխտէմ մը, ինչպէս Մարքս կ'անուանէ — այլ սխտէմ մը, ուր աշխատանքի ուժը ինքնին ազրանք կը գառնայ, որ կը գնուի ու կը ծախուի շուկայի վրայ՝ ինչպէս որեւէ ուրիշ տեսակի փոխանակութեան առարկայ: Կապիտալիզմի պատմական նախապահանջն է արտադրութեան միջոցներու սեփականութեան կեդրոնացում՝ որոշ գոտակարգի մը ձեռքին մէջ, գոտակարգ մը, որ հասարակութեան փոքրամասնութիւնը կը կազմէ եւ իրեն յենարան եղող պետութեան ղեկավարութեամբ ու օրինական ձեւարկութեամբ իրեն կ'ենթարկէ ընչպսոսակ դասակարգը՝ բանուոր գոտակարգը՝ որ ապրուստի իրր միակ միջոց ունի իր աշխատուժի վաճառումը: Այս հանգամանքներու տակ արդիւնաբերութեան աշխուժութիւնն ուրեմն, կը յայտնագործուի ո՛չ թէ բանուոր գոտակարգի վրայ ապօրէն բռնադատութեամբ, այլ աշխատավարձի օրինաւոր պայմանադրութեամբ: Այսպիսի սահմանում մը նկատի չառնել անկախ ձեռագործական արտադրութեան սխտէմը,

ուր արհեստաւորը տէրն է իր արտադրողական սահմանափակ միջոցներուն եւ ազատ է ծախելու իր արտադրութիւնները: Նոյնպէս նկատի չառնել անկախ ձեռագործական արտադրութեան սխաւէմը, ուր արհեստաւորը տէրն է իր արտադրողական սահմանափակ միջոցներուն եւ ազատ է ծախելու իր արտադրութիւնները: Նոյնպէս նկատի չառնել վաճառականներն ու դրամատէրերը, որոնք բաւական չեն կազմելու կապիտալիստական սխաւէմի հասարակութիւն մը: Բաւական չէ, որ մարդիկ ստացեալ կապիտալ ունենան, անոնք կապիտալիստ չեն կոչուիր: Անոնց կապիտալը պէտք է գործածուի աշխատաւորները լուծի տակ պահելու, անոնց աշխատութիւնը շահագործելու եւ այդպիսով յաւելեալ արժէք ստեղծելով կապիտալը յարատեւօրէն կուտակելու համար:

Այստեղ մենք նպատակ չունինք կապիտալիզմի մասին հակառակ սահմանում տուող տեսութիւնները քննարկի ենթարկելու, միայն պարզապէս կ'ընենք որ մենք մեր ուսումնասիրութեան մէջ կը հետեւինք Մարքսեան տեսութեան, որ անաւարկելիօրէն ուղիղ է, որովհետեւ այժմեան անտեսական պատմութիւնը վերջին մի քանի տասնեակ տարիներու ընթացքին՝ անընդմիջական կերպով կ'ընթանայ Մարքսի տեսութեան կողմը: Այսօր կը տեսնենք որ կապիտալիստներու եւ Պրոլետարներու դասակարգային տարբերականութիւնը՝ դասակարգային սրուած հակամարտութիւնն է, որ պատմական զէպքերու ծնունդ կու տայ, ոչ թէ սոսկական շահու պարզ նկատառումը: Նոյնիսկ Լիպսըն, որ իր Տնտեսական պատմութեան մէջ կը ջանայ փաստել թէ կապիտալիզմը արդիւնաբերական յեղափոխութենէն զարեւր առաջ գոյութիւն ունեցեր է, կը յայտարարէ որ «Այժմու կապիտալիզմի հիմնական կառուցուածքը հաստատուած է վարձու աշխատանքի սխաւէմին վրայ, սխաւէմ մը՝ ուր գործաւորը ո՛չ թէ իր աշխատանքի պտուղները կը ծախէ, այլեւ ինքզինքը. եւ հոս է այժմու անտեսութեան էական նշանակութիւնը»:

Բայց այստեղ կարեւոր կը նկատենք նշել շարք մը իրողութիւններ.

Ա.— Երբ մէկ անտեսական սխաւէմին կը յաջորդէ նորը, այդ նոր սխաւէմը ինքնին բոլորովին՝ հիմնական փոխակերպուած գտարիւն նոր ձեւ մը չէ. անոր հետ նախորդող շրջաններու մէջ գոյութիւն ունեցող յատկանշական մաս մը տարրեր կը մնան քով քովի, երբեմն զարմանալի բարդութեամբ իրարու խառնուած վիճակով: Գերետիրական շրջանին երբ յաջորդեց Ֆէոդալիզմը, առաջինին բազմապիսի տարրերը ամբողջապէս չանհետացան, անոնցմէ մաս մը պահեցին իրենց նախատիպ ձեւերը, նոյնիսկ կապիտալիստական շրջանին: Բայց անոնք Գերետիրութիւնը չկրցան վերակենդանացնել:


Նոյնպէս, կապիտալիստական շրջանը երբ յաջորդեց Ֆէոդալականին, երկրորդին նախատիպ մասերը տեղ տեղ պահեցին իրենց գոյութիւնը, բայց անոնք կապիտալիզմի բնոյթը չկրցան փոխել:

Բ.— Ֆէոդալական շրջանի վերջին դարերուն՝ Եւրոպայի մէջ երեւան եկան կապիտալիստական արտադրողական ձեւի բնութիւնը: Սխալ կ'ըլլայ ըսել թէ՛ կապիտալիզմը սկսաւ Միջին Դարուն, որովհետեւ այդ բնութիւնը թէեւ Ֆէոդալիզմի որովայնին մէջ կազմուեց ու գործօն դեր ունէին, բայց անոր Ֆիզիքական կազմախօսութիւնը չէին փոխել, այլ դարձեր էին անով անանող պարագիտ տարրերը: Նոր անտեսական ձեւի մը սազմանային վիճակի առաջին երեւումը մեղի իրաւունք չի տար որ մենք նոր դարաշրջանի մը անունը տանք անոր: Այդ կարելի է միայն այն ստեղծ, երբ նոր անտեսական ձեւը կ'աճի այնպիսի համեմատութեամբ, որ ան կարող կ'ըլլայ իր դրոշմը դնել ամբողջ հասարակութեան վրայ եւ կը գործադրէ իր ազդեցութիւնը՝ բացասական ուժերը սանձահարելու մէջ:

Գ.— Մարդկային անտեսութեան տարրեր զարաշրջանները իրարու չեն յաջորդեր տարբերայնօրէն, այսինքն՝ այնպէս ինչպէս ցերեկը կը յաջորդէ գիշերուան. այդ փոփոխութիւնը տեղի կ'ունենայ անտեսական-ընկերային գործօն ուժերու զարգացման հետեւանքով, ուրկէ կը յառաջանայ յեղափոխութիւնը: Ընկերային յեղափոխութիւնն է, որ կը նշէ հին սխաւէմին զէպի նորը փոխանցումը: Մենք պէտք է զիտնանք որ սեւէ հասարակութիւն, կազմուած է միմեանց ներհակ եւ միմեանց ազդող տարրերով, այսպէս որ միակ տարրի մը քանակական աճումով չէ որ ամբողջական փոխակերպումը տեղի կ'ունենայ: Իրերու զարգացումը պէտք է հասնի որոշ մակարդակի մը եւ հասարակութիւնը բազմապիսի զանազան տարրերը որոշ կերպով հակակշռողի դիրք բռնեն. այն ստեղծ զէպքերը հաւանական է որ անսովոր արագութեամբ շարժին, ո՛չ թէ քանակական աճման իմաստով, այլ բազմապիսի տարրերու հաստատակշռութիւնը փոխելու իմաստով: Բան մը, որուն արդիւնքը կ'ըլլայ նորաձեւ բազմապիսիութիւններ եւ առաւել կամ նուազ չափով սուր փոփոխութիւններ՝ հասարակութեան կառուցուածքին մէջ: Այդ պարագային կրնանք ըսել թէ յեղափոխութիւնը արդէն իր ընթացքն առած է:

Տնտեսական հասարակութեան յստակ պատկերը, որ այս արդիւնքը կը յառաջանէ եւ համաձայն է կապիտալիզմի մեր հիմնական ըմբռնումին, կապիտալիզմ՝ որպէս պատմական գաղափարաբան անտեսական հասարակարգ, նորէն կը պարզէ այն իրողութիւնը թէ՛ պատմութիւնը մինչեւ այսօր եղած է դասակարգային հասարակութեանց պատմութիւնը, այսինքն՝ հասարակութիւններ՝ որոնք բաժնուած են դասակարգերու, ուր մէկ դասակարգը, կամ դասակարգե-

2748



բու միակցութիւնը համապատասխան շահերու շուրջ՝ հրապարակ հանած է տիրոջ դասակարգ մը, որ կեցած է մասնակի կամ ամբողջական հակամարտութեան դժին վրայ հանդէպ ուրիշ դասակարգի մը, կամ ուրիշ դասակարգերու: Այդ պարագային հասկնալի է որ տիրոջ դասակարգը պիտի ձգտի պատմական տուեալ շրջանին վրայ դրոշմել որոշ որակական միաձեւութիւն մը, որովհետեւ երբ անիկա ընկերային եւ քաղաքական դիրքով տիրապետող է, բնականաբար իր իշխանութիւնը պիտի գործածէ պահպանելու եւ ընդարձակելու այս մասնայատուկ արտադրողութեան ձեւը, ուրկէ կախուած է իր գոյութիւնը: Անոր այդ ձգտումէն կը յառաջանան դասակարգային յարաբերութեանց նոր ձեւակերպումներ: Եթէ այդ նոր հասարակութեան մէջ փոփոխութիւնը հասնի այն աստիճանին, ուր տիրոջ նոր դասակարգի շարունակելու դիմաց գերիշխանութիւնը հարցական դառնաւ եւ ընկերային ուժերու հաւասարակշռութիւնը լրջօրէն խախտի, այն ատեն տիրոջ դասակարգը կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքը եւ ան՝ իր դասակարգային շահերու հրամայականին հետեւող պայքարումով պիտի արագացնէ տնտեսութեան փոխակերպումի ընթացքը, որուն պիտի յաջորդէ նոր դասակարգի մը ասպարէզ գալը, դասակարգ մը, որ պիտի կործանէ իր հակառակորդին եւ անոր նախորդող մնացորդներու ամբողջները եւ պիտի ընդարձակէ ու ամրացնէ իրենը: Արտադրութեան հին ձեւը անհրաժեշտօրէն պիտի չլնջուի, այլ դանդաղօրէն կամ արագ՝ պիտի հասնի այն աստիճանին, մինչեւ որ ան նորին լուրջ մրցակիցն ըլլալէ դադարի:

* * *

Կապիտալիզմի զարգացման յառաջընթացը անցած է շարք մը աստիճաններէ, որոնք իրենց հասունութեան շափանիչներով կը տարբերին իրարմէ եւ անոնցմէ իւրաքանչիւրը կը գատորոշուի անջատ դրոշմներով: Բայց մենք երբ փնտռենք այդ աստիճաններու հետքերը եւ ուզենք ընտրել անոնցմէ մէկը որպէս Կապիտալիզմի բացման նախագուռը, անմիջականօրէն նկատի պիտի ունենանք այն՝ որ իր կարեւորութեամբ մեզ շփոթութեան չի տանիր: Եթէ մենք պիտի խօսինք Կապիտալիզմի մասին, որպէս արդիւնարեքութեան մասնայատուկ ձեւի, ուրեմն, չենք կրնար այդ սխալմիւս արշալուսային ժամանակը նշանակել այն թուականը, երբ վաճառական դասակարգը իր մեղալուսային շրջանը կ'ապրէր. ասոր համար մենք չենք կրնար խօսիլ վաճառականական Կապիտալիզմի մասին, ինչպէս կ'ընեն ուրիշներ: Մենք պէտք է փնտռենք Կապիտալիստական շրջանի բացումը այն կէ-

տին մէջ միայն, ուր արտադրութեան ձեւին մէջ որոշ փոփոխութիւն տեղի կ'ունենայ. ուրիշ խօսքով՝ արտադրողը ուղղակի կ'ենթարկուի կապիտալիստին: Ասիկա տէրմիւսարանական բացատրութիւն մը չէ, այլ կարեւոր նշում մը, քանի որ ան կը նշանակէ թէ, եթէ ճիշդ ենք, առեւտրական դասակարգի երեւումը յեղափոխական նշանակութիւն պիտի չունենայ, որովհետեւ ան հասարակութեան վրայ հիմնական ազդեցութիւն չի կրնար ունենալ. իշխող դասակարգ մը՝ որ բազկացած է գերեթէրեթ կամ աւատապետական Լորտերէ, կրնայ ընկերանալ վաճառականին, բայց ատով ան յեղափոխական դասակարգ չի կրնար կոչուիլ, քանի որ ան արմատական փոփոխութիւն յառաջացնելու բնօրէն արդիւնարեքութեան ձեւին մէջ: Անոր դերը արդիւնարեքութեան գոյութիւն ունեցող ձեւը պահելն է, ոչ թէ զայն փոխելը:

Երբ մենք Կապիտալիզմի պատմութեան նայինք, այս մեկնակէտէն, պարզ կ'ըլլայ, որ պարտինք անոր երեւումի թուականը փրնտրուի Անգլիոյ մէջ, ո՛չ թէ 12-րդ դարուն, ինչպէս Պիրէնիի կը փորձէ ընել, ո՛չ ալ 14-րդ դարուն, երբ քաղաքային առուտուրն սկսաւ եւ ձեռագործական արհեստաւորներու միութիւնը առուծախի գործին մէջ մտաւ, այլ 16-րդ դարու վերջերը եւ 17-րդ դարու սկիզբները, երբ Կապիտալը սկսաւ նշանակելի թափով ներթափանցել արդիւնարեքութեան մէջ, ըլլայ Կապիտալիստի եւ վարձու աշխատաւորներու միջեւ յարաբերութիւն հաստատելով, եւ կամ այնպիսի ձեւով, որ իրենց տուներուն մէջ ձեռագործական աշխատաւորները նոյնիսկ կապուեցան ու ենթարկուեցան Կապիտալիստին: Ճիշդ է, որ 14-րդ դարուն, կամ նոյնիսկ աւելի կանուխէն, գոյութիւն ունէր բուլաքային տիպի ձեռնարկութիւն — զիւղին մէջ բարեկեցիկ զիւղացին ու քաղաքին մէջ արհեստաւոր վարպետը, երկու վարձու աշխատաւորներ կը բանեցնէին եւ կը զբաղէին առուտուրով: Բայց անոնք այնքան աննշան էին որ այդ շրջանը նոյնիսկ կարելի չէ կոչել Կապիտալիզմի պատանեկութեան շրջանը: Յամենայն դէպս, ուե՛է մէկը նշանակելի ապահովութեամբ կրնայ ըսել թէ՛ արտադրութեան կապիտալիստական ձեւ մը եւ կապիտալիստներու յատուկ դասակարգ մը մասնաւորապէս ընկերակցած այդ ձեւին հետ, որպէս ընկերային եւ տնտեսական զարգացման վրայ ազդող դասակարգ՝ չկրցաւ հասնիլ ուե՛է վճռական նշանակութիւն ունեցող դիրքի՝ մինչեւ Տուգորիան շրջանի (1485-1605) փակումէն տասնեակ տարիներ յետոյ:

Այդ թուականէն սողին, Կապիտալիզմի արշաւին մէջ երկու վճռական կարեւոր կէտեր կը պարզուին: Անոնցմէ մէկը կ'իյնայ 17-րդ դարուն մէջ. այդ վճռական շրջանի քաղաքական ու ընկերա-

յին կերպարանափոխութեան մէջ, ներառեալ այն պայքարները, որոնք մղուեցան արտօնեալ ընկերութեանց միջեւ, ինչպէս նաեւ խորհրդարանական պայքարները՝ մենատիրութեան դէմ, որոնք իրենց դազաթնակէտին հասան Քրոնֆէլտան յեղափոխութեան առեւն, եւ ասոնց արդիւնքը անիմաստ չմնաց, հակառակ իրաւախօհութեան զծով առնուած մէկ որոշ փորձին եւ վերահաստատման հետեւոյ հակազդեցութեան: Երկրորդ կէտը ճարտարարուեստական յեղափոխութիւնն էր որ տեղի ունեցաւ 18-րդ դարու վերջին՝ եւ 19-րդ դարու սկիզբները, բան մը, որ անտեսական հսկայական նշանակութիւն ունեցաւ, ինչպէս նաեւ խոր ազդեցութիւն մը՝ քաղաքական շրջանակներուն վրայ: Կապիտալիստական անտեսութեան ամբողջ ապաղաղյին վրայ այնքան վճռական էր անոր դերը, այնքան արմատական էր ճարտարարուեստի կազմակերպութեան եւ յորինուածքի կերպարանափոխութիւնը որ, ոմանք դայն համարեցին այժմեան Կապիտալիզմի ցաւատանջ ծնունդի շրջանը, ուրկէ յետոյ սկսաւ Միջին Գարու անվերադարձ հեռացումը եւ եւրոպական երկիրներու անտեսական եւ ընկերային զարգացումը:

ՖԷՈՂԱԼԻԶՄԻ ՊԱՏԿԵՐԸ, ՖԷՈՂԱԼԻԶՄԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ,
ԵՒ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԵՐԵՒՈՒՄԸ

Մ. Նահանգներուն մէջ Ֆէոդալիզմ տէրմինի դործածութիւնը զանազան ու հակասական նշանակութեամբ պատկերացուած է: Տր. Հէլէն Քէմ, յայտնի անտեսագէտ պատմաբանը, կ'ըսէ — Ֆէոդալիզմը խոշոր հողատիրութիւն է եւ հողատիրութիւնը իշխանութեան ազդիւրն է: Փրոֆէսոր ռքրովսկի, որ Մարքսիստ պատմաբանի համբաւ ունի, Ֆէոդալիզմը կը նկատէ որպէս «բնական տնտեսութեան» ինքնարաւ սխառմ մը, որ դրամով փոխանակութիւն կատարող անտեսութեան սխառմին հակադիր եղբը կը ներկայացնէ. տնտեսութիւն մը՝ որուն նպատակն է արտադրել ու սպասել: Պոքրովսկիի այս տեսութիւնը, զոր Սովետ. անտեսագէտները 30-ական թուականներէն սաղին չեն բաժներ, Արեւմուտքի անտեսագէտները կ'ընդունին. ասոնց կը միանայ նաեւ Գերման Պատմագիտական Դրպրոցը: Անգլիական միտքը սովոր է աննկատ թողուլ Ֆէոդալիզմի սահմանաւորումի շուրջ դարձած վէճերը, որոնք սոսկ բառերու շուրջ կը դառնան, հետեւարար, ճիշդ է այն դատողութիւնը թէ՛ այդ վէճերով զբաղելը իմաստակներու գործն է: Բայց պէտք է ըսել թէ Ֆէոդալիզմի սահմանաւորումի հարցը ամբողջապէս աննկատ չենք կրնար թողուլ, միայն թէ պէտք է թոյլ տանք որպէսզի իրո-

ղութիւնները խօսին: Կապիտալիզմի եւ Ֆէոդալիզմի որոշ նշանակութիւնը բացայայտօրէն վեր հանելու համար անհրաժեշտ է ընտրել փաստ մը, որուն կապուած ըլլալու են իրողութիւնները: Ֆէոդալիզմի սահմանաւորումը պէտք է վերլուծման հիմունք ծառայէ, այնպէս որ մէկը եթէ նկարագրութեան վերլուծման կ'անցնի, որդեգրուած ճիշդ սահմանաւորումը կը զիւրացնէ վերլուծումը: Սահմանաւորումի կարեւորութիւնը կը կայանայ ո՛չ թէ վաստի ու իշխանի օրինական յարաբերութեանց պատկերացումին մէջ, ո՛չ թէ արտադրութեան եւ արտադրութիւններու սպառման միջոցներու պարզարանումին մէջ, այլ ուղղակի՝ արտադրողի (ըլլայ ան դործատեղիի մը արհեստաւորը, կամ հողի մշակութեամբ զբաղող զիւղացի մը) եւ անոր անմիջական վերհսկողին կամ հողատիրոջ միջեւ ընթացիկ յարաբերութեանց նկարագրութեան մէջ, ուր նկատի առնուելու են նաեւ այն ընկերային-տնտեսական պարտաւորութիւնները, որոնք անբաժանելի են այդ յարաբերութիւններէն: Կապիտալիզմի համար երբ կ'ըսենք թէ արտադրութեան ձեւ մըն է, Ֆէոդալիզմի համար եւս կրնանք ըսել թէ ան եւս արդիւնարեւութեան մէկ ուրիշ ձեւ էր իր շրջանին. եւ ասիկա կը կազմէ մեր սահմանաւորումի էութիւնը: Եւ որպէս այդպիսին, Ֆէոդալիզմը իրապէս կը նոյնանայ ճորտատիրութեան հետ. ուժի միջոցով պարտաւորութիւն մը, որ դրուած է արտադրողի ուսերուն վրայ, եւ այդ արտադրողը անկախ իր սեփական կամեցողութենէն, հողատիրոջ անտեսական որոշ պահանջներուն զոհացում պիտի տայ, ըլլան այդ պահանջները ծառայութեան ձեւով եւ կամ դրամով, եւ կամ՝ ինչպէս Տր. Նէլսընը որակած է — «Նուէրներով՝ հողատէր լրտին ճարպարանին համար»: Այդ հարկադրիչ ուժը կրնայ ըլլալ զինուորական ուժ՝ որուն տիրացած է Ֆէոդալ դերիշխողը, կամ այն տիրական սովորութիւնը, որուն կռնակը կեցած է դատական ձեւակերպութիւնը՝ օրէնքի ուժը:

* * *

Եւրոպայի մէջ 1100 թուականէն յետոյ վաճառականութեան վերադրումը եւ անոր հարուածող հակազդեցութիւնը Ֆէոդալական հասարակութեան վրայ՝ բաւականին ծանօթ պատմութիւն է: Ինչպէս առուսուրի աճումը իր զարթօնքի շրջանին յառաջ տարին առեւտրականն ու առեւտրով զբաղող հասարակութիւնը, որ ինքնին անանցաւ որպէս օտար մարմին՝ Ֆէոդալական հասարակութեան ծակոտիքներուն մէջ, ինչպէս փոխանակութեան հետ միասին եկաւ դրամի աճող ընդձգումը աւատական ինքնարաւ անտեսութեան մէջ,

ինչպէս վաճառականի ներկայութիւնը պատճառ եղաւ որ յաւելեալ արտադրութիւններու փոխանակութիւնը վերածուի սպառման շուկայի համար ըլլալիք արդիւնաբերութեան, բայց այս իրողութիւնները կրկնուած են շատ յաճախ: Հին կարգերու հիւսուածքը արդէն իր մէջ ունէր այս արժատական տարրերը: Դրամական եկամուտը, ինչպէս նաեւ գերիներու ծառայութիւնը, ասոնք լորտերու փառասիրութեան թեւերը կազմեցին. զարգացաւ շուկայ մը պարտքերու մէջ, նաեւ շուկայ մը՝ հողի մէջ: Ինչպէս զրոյ մը Անգլիոյ մասին խօսելով ըսած է. — «Այն մեծ պողոտաները, որոնք Լոնտոնը կը կապեն ծովագերքին, այն երակներն են, որոնց մէջէն կը հոսի զրամը՝ իշխանական ուժի ամենէն քանդիչ ազդակը»:

Որ սոյն դարերուն, այս շրջանառութիւնը ամենէն ցայտուն ու կարեւոր իրողութիւնն էր, հազիւ վիճելի կը թուի: Որ ան կապուած էր այն փոփոխութեանց հետ, որոնք Միջին Դարու վերջակէտը դրին, այդ եւս յայտնի է: Այն ձգտումը, որ զարգացաւ եւ մէկ կողմէն՝ աշխատանքի ծառայութիւնները զրամական վճարումի փոխարկեց, միւս կողմէն ուղեց աւատահողը կամ պայմանաժամով վարձու տալ եւ կամ շարունակել անոր մշակութիւնը վարձու աշխատանքով, ահա այդ ձգտումն էր, որ յայտնապէս պատճառ եղաւ շուկաներու աճման եւ զրամական գործառնութեանց ընդհանրացման, որոնք կատարուած փոփոխութեանց անհրաժեշտ պայմաններն էին: Եւ պէտք է ըսել թէ այդ փոփոխութիւններն էին որ ճամբայ բացին Ֆէոդալիզմի քայքայումին, որովհետեւ «ընական տնտեսութեան» դէմ կեցուցին զրոյ աշխարհի «փոխանակութեան տնտեսութիւնը»:

«Բնական տնտեսութիւնը» եւ «փոխանակութեան տնտեսութիւնը» ասոնք իրարմէ տարբեր դատիներ են, որոնք չեն կրնար միախառնուիլ, որովհետեւ առաջինը կը ձգտի միմիայն հողատիրոջ փառասիրութիւնը զոհացնել եւ հողի աշխատաւորին՝ սոսկ բնական կարիքները հոգալ, մինչ երկրորդը կը ձգտի շահաբեր շուկաներ սպահնակել: Մէկը կ'ուզէ պահել իրերը այնպէս՝ ինչպէս որ են, իսկ միւսը կ'աշխատի հին գրութիւնը լուծարքի ենթարկել եւ Ֆէոդալիզմը փոխել նոր սխառման մը: Խնդրոյն տարօրինակ կէտն այն է, որ այս երկուքը յաճախ իրարմէ իրենց պէտք եկած ատաղձները կ'առնեն ու կը գործածեն, չնայած որ իրենց ձգտումներով իրարու հետ անհաշտ են:

Այսօրինակ թարգմանութեան մը շուրջ լուրջ կասկած մը կը ծնի, երբ Եւրոպայի տարբեր մասերուն՝ կամ նոյնիսկ Անգլիոյ տարբեր մասերուն մէջ բազմապատկան ուսումնասիրութեան ենթարկենք առուտուրի ազդեցութիւնը Ֆէոդալիզմի շէնքին վրայ: Օրինակի համար, եթէ ստրկական աշխատանքի վրայ հաստատուած հին հա-

սարակարգի վրայ զրամական գործառնութիւններու քայքայիչ ազդումները վճարական գործ կատարեր են, մարդ բնականօրէն կրնայ զրամական վճարման ձեւի ծառայութեանց փաստեր գտնել Անգլիոյ մէջ, ըսենք 14-րդ դարուն՝ ի մասնաւորի Լոնտոնի շուկային մօտիկ գաւառներուն մէջ, որոնք կապուած էին այն «երակներուն հետ, որոնց մէջէն կը հոսէր զրամը՝ իշխանական ուժի քայքայիչ ազդակը»: Իրապէս, այս թուականին, Անգլիոյ հիւսիսային արեւմտեան մասերուն մէջ զրամական վճարումով աշխատանքի ծառայութիւնը հաղուադէպ երեւոյթ էր, իսկ աւելի յառաջադէմ հարաւարեւելեան մասերուն մէջ, ատիկա արդէն զարձեւր էր սովորական երեւոյթ: Ուստի մէկը ասկէ կրնայ եզրակացնել թէ Եւրոպայի տարբեր շրջաններու մէջ առուտուրի զարգացման եւ Ֆէոդալիզմի անկումին միջեւ որոշ կապակցութիւն մը կայ: Այո՛, ճիշդ է այդ եզրակացութիւնը, բայց բացառութիւնները բաւականին յատկանշական են: Աչքի զարնող պարագան, ուր այդ կապակցութիւնը որպէս վերջնական փաստ չձառայէր, այն է, որ Արեւելեան Եւրոպայի Ֆէոդալիզմը, 15-րդ դարու վերջերը երբ վերքերով կը տառապէր եւ կոչուած «երկրորդ ճորտութիւն»՝ ուժգին վերապրումն էր հին սխառման, ինչպէս էնդէլս կը գրէ: Նոյնպէս Պալթիկեան պետութիւնները, Լեհաստանի եւ Ռուսիայի մէջ, որոնք ո՛չ թէ գիւղացիութիւնը կ'առաջնորդէին ստրկական աշխատանքի ջնջումին, այլ ընդհակառակը՝ աւելի կը ծանրացնէին այդ աշխատանքը: Երեւոյթը նոյնն էր Հունգարիոյ մէջ, ուր առուտուրի աճամբ մշակելի հողերը աւելի կ'ընդարձակուէին եւ գիւղացիութեան գրութիւնը աւելի դաժան կը դառնար:

Յամենայն դէպս, կան կարգ մը իրողութիւններ, որոնք կը պարզեն այն ճշմարտութիւնը թէ՛ ամենուրեք զրամական տնտեսութիւնը ըստ ինքեան՝ կ'առաջնորդէր ճորտատիրութեան դորացումին, որ իր կարգին կ'արագացնէր Ֆէոդալիզմի քայքայումը: Դրութիւն մը իր ամենափոքին աստիճանին հասնելէն վերջն է որ կը սկսի անկումը:

Քիչի վ եւ նովկորոտ, ռուսական քաղաքներ, որոնք առեւտրական կեդրոններ էին Պալթիկէն-Լադոկա Լիճի, Դնիկպէրէն Սեւ Ծովու ճամբուն վրայ, չէին արգիլէր որ իրենց տիրող դասակարգը գերիներ պահէր՝ որպէս արդիւնաբերութեան ու առուտուրի շարժական գործիքներ՝ զարգացնելով իւրաքայտուկ ճորտութեան ձեւ մը: Չորս դար յետոյ՝ Մոսկուայի մօտիկ հարուստ վանքերը՝ ինչպէս Տրուացա Սէրկիէվսկի, Մոսկուայի քով, կամ Սբ. Սիբիլ՝ ձերմակ Ծովուն վրայ, այդ շրջանին՝ ամենէն մեծ ձեռնարկուններն ու յաջողակ առեւտրական տունները կազմեր էին, որ շատ կանուխէն աշխատանքի ստորկական ծառայութեան լուծին տակ զրամ էին գիւղացիութիւնը:

Այդպէս էին նաեւ գերմանական վանականներն ու եկեղեցական զազ-
թային ձեռնարկութիւնները էլբայի արեւելքը, որոնք բնաշխարհիկ
սլաւ գիւղացիութիւնը ճորտութեան սիւնին կապեցին եւ նոյնիսկ
զանոնք ստրկացուցին երբեմնի իրենց ազատ հողերուն վրայ, եւ ընդ-
հանրապէս հաստատեցին աւելի դաժան ոչ ժիւմ մը քան ինչ որ հա-
տատեր էին աշխարհական ազնուականները:

Լեհաստանի մէջ 15-րդ դարուն, զբամով հարկային վճարման
սխալմին յաջորդեց ձրի աշխատանքի ծառայութեան սխալմը, այդ
ալ այն ատեն՝ երբ եղիպտացորենի արտահանման աճումով եւ 1466-ի
Թորունի խաղաղութենէն յետոյ Լեհաստանը յաջողեր էր ծովուն
վրայ ելքի ճամբայ մը ունենալ: Իսկ Լեհաստանի զբաւած Սեքանիոյ
մէջ, ուր ցորենի արտածման պահանջ կար, ճորտատիրութիւնը ար-
դէն ցոյց տուած էր իր սոսկալի դիմագիծը:

18-րդ դարուն, Ռուսաստանի մէջ Մեծն Պետրոսի եւ լուսա-
ւորեալ Կատարինէ Կայսրուհին զարբ, որ ռուս ազնուականութեան
ոսկեղարբ կը կոչուի, այն դարն էր, ուր ռուս ճորտատիրութիւնը
աւելի դաժան ոչ ժիւմ մը կը ներկայացնէր, քան գերետիրութիւնը:
Ճորտը, իրապէս շարժական ինչք էր իր տիրոջ համար, տէրը կրնար
զայն ծախել, կրնար շարժարել եւ սպաննել առանց պատիժի:
Այսուհանդերձ, այդ դարը հանդիսատես եղաւ աւելի բարձր աստի-
ճանի վաճառականութեան զարգացման քան նախորդող դարերը, եւ
նոյն ատեն՝ տեղի ունեցաւ մանուֆակտուրի աճումը:

Գալով այն հարցին թէ արդեօք ունի՞նք պատճառ մը ենթադ-
րելու որ զբամական տնտեսութեան աճումը ինքնին պիտի քաջալերէր
Ֆէոդալ Լորտը, որպէսզի իր ճորտերու աւանդական-ստրկական պար-
տաւորութիւնները չեղեալ յայտարարէր եւ զանոնք ճանչնար որպէս
իրաւատէր մարդ պայմանագրական յարաբերութեանց շրջանակին
մէջ: Այս հարցման պատասխանն է.— Ոչ. ո՛չ մէկ պատճառ կայ.
Ինդհակառակը՝ աւելի զօրաւոր պատճառ մը կար որ հողատէր Լորտը
աւելի սաստկացնէր ճորտութեան շահագործումը սպառման շուկային
կապուած իր զբամական եկամուտը աւելցնելու համար:

Անմիջապէս երբ մենք հարցապնդում կատարենք թէ Ֆէոդա-
լական տնտեսութեան ներքին ուժերը ո՛րքան պատասխանատու են
իր քայքայումին, մենք կը մտնենք այն ուղին, որ քիչ ուսումնասիր-
ուած է եւ ուր իրողութիւնները ո՛չ այնքան շատ են, ո՛չ ալ եղբարիա-
կիչ: Բայց մեր ձեռք ձգած իրողութիւնը որոշակի ցոյց կու տայ որ
Ֆէոդալիզմը, որպէս ճարտարարուեստական արդիւնաբերութեան ան-
յարմար եւ անատակ սխալմ, տիրող դասակարգի եկամուտը կըրկ-
նապատկելու եւ սոսկ հաճոյքի ծառայեցնելու անյազ տենչին հետ ըն-
կերացած՝ պատասխանատու է իր քայքայումին. որովհետեւ յաւել-

եալ եկամուտի պահանջը երբ կը հարկադրէր որ արտադրողին վրայ
գործադրուած ճնշումը սաստկանայ, ատիկա կ'առաջնորդէր այն կէ-
տին, ուր ճնշումը կը դառնար անտանելի ու ճնշուողը՝ խեղանդամ:
Այս աղբիւրը, ուրկէ Ֆէոդալ իշխող դասակարգը իր եկամուտը կը
ստանար եւ այդ եկամուտը կրնար աւելնալ, ստրուկ դասակարգի
յաւելեալ աշխատածամն էր, առանց որուն յաւելեալ արտադրութիւն
չէր կրնար ստանալ հողատէր լորտը. իսկ եթէ պահէր բանական եւ
մնայուն ժամանակամիջոցի մէջ, այսինքն՝ եթէ արտադրողը փոխա-
նակ 16 ժամ աշխատելու, իր ուժերը նորոգելու համար միայն 8 ժամ
աշխատէր, այն ատեն անոր արտադրութիւնը կը կիսուէր. կը կիսուէր
նաեւ լորտին եկամուտը, մանաւանդ՝ երբ նկատի առնենք որ հողա-
տէր լորտը արտադրողութեան հին ու նախնական ձեւը փոխելու մա-
սին չէր մտածեր, իր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուցեր էր
քամելու արիւնը իր ձեռքին տակ ունեցած շարժող գործիքին՝ հողին
կապուած մշակին ու գիւղացիին, որոնց բաժին ինկած էր միմիայն
անասունի յատուկ զոյւթիւն մը պահելու ճակատագիրը: Ահա թէ
ինչո՞ւ հողատէր լորտը ամէն անգամ աւելի ու աւելի կը սաստկացը-
նէր ճնշումը ճորտին, չնայած որ այդ հանգամանքը վերջ ի վերջոյ՝
ուժի սպառման եւ գործնականօրէն անզամայնօրէն կ'առաջնորդէր
այն մարմինը, որմէ կախուած էր իր կեանքը: Ֆրանսացի գրողի մը
բառերով.— «Ասպետին կամ պարոնին համար ճորտը կամ ազատ
մարդը միմիայն եկամուտի աղբիւր էին. խաղաղութեան ատեն՝ են-
թակայ մշտական հարստահարութեան ու շահագործումի, իսկ պա-
տերազմի ատեն՝ ենթակայ կողոպուտի, սանկոխումի, սպանու-
թեան ու ողջակիզումի: Գիւղացին արհամարհելի արարած մըն էր,
զոր պէտք էր շահագործել իր տան մէջ եւ բնաջնջել՝ հայրենիքի սահ-
մաններէն դուրս...: Գթութեան մէկ բառ իսկ չկար այն գիւղացիին-
րուն համար, որոնց տուներն ու հունձքերը հրոյ ճարակ կը դառնա-
յին, որոնք կը կոտորուէին հարիւրներով ու հազարներով եւ կամ
հոս ու հոն կը քշուէին ոտքերնին ու ձեռքերնին շղթայակապ...»:

Աւատապետական տնտեսութեան մէջ ո՛չ միայն աշխա-
տանքի արտադրողութիւնը կը մնար ցած աստիճանի վրայ, քանի որ
կը պակսէին աշխատանքի քաջալերանքը եւ արդիւնաբերութեան նոր
մեթոտներն ու գործիքները, այլեւ հողը հետզհետէ կը դառնար ա-
մուլ, իսկ ազբառ գիւղացիին արդիւնուած էր որ ան իր հողը պարար-
տացնէր պահուած կենդանիներու աղբերով: Յաճախ, հունձքէն յե-
տոյ՝ արտերը կը մնային անմշակ. գիւղացին, սնօթութենէ անուժ՝
չէր կրնար վայրի խտերը քաղել, երբ անոնք արագօրէն կ'աճէին ու
կը ծածկէին ամէն տեղ: Միջնադարեան Եւրոպայի մասին գրող հե-
ղինակ մը կ'ըսէ.— «Հողատէր լորտը, երբ հողը զարգացնելու մա-

սին մտածէր, այդ նոր տեսակի կեղեքումի դուռ բանալու նպատակով էր սոսկ: Ան ըլլալով կատարելագէտ պարագիտ արարած մը, երբեք չէր մտածէր քաջալերելու գիւղացիին ձեռներէցութիւնը, այլ կը գրաւէր անոր աշխատանքի պտուղները եւ զայն կը թողուր կիսաքաղց եւ ստերջ: Իսկ բնաւ զարմանալի չէր որ լորտերը կը դանդառնէին գիւղացիներու մասին՝ ըսելով թէ անոնք տիրոջ ներկայութեան՝ կ'աշխատին եռանդազին, բայց անմիջապէս որ ան հեռանայ, այդ անասունները կը պառկին իրենց կոնակին վրայ: Այդ անպիտան կենդանիները միայն խարազանի հարուածներու տակ է որ կը շարժին: Երբ խարազանը դադրի շարժելէ, եւ այդ անասունները լաւ սնունդ առնեն ու գիրնան, կը ծառանան իրենց տէրերուն դէմ եւ կը դառնան վայրի գաղաններ»: Ահա այս հոգեբանութեամբ տարուած վիճակով է որ լորտերը կը նայէին գիւղացի աշխատաւորներուն եւ ըստ այնմ կը վարուէին անոնց հետ:

Հակառակ անոր որ անհանդուրժելի թշուառութեան մէջ կ'ապրէին միջնադարեան գիւղացիները, հունձքէն յետոյ՝ ոստիկանները կը խուզարկէին անոնց հիւզակները եւ կը վերցնէին այն՝ ինչ որ կը մտածէին թէ աւելի էր:

Նոյն ատեն ազնուական դասակարգը իր գերածող կարիքներու թելագրանքով երբ կ'ուզէր իր եկամուտը աւելցնել, այդ պարագային ճնշման ու շահագործման մեթոտները աւելի կը սաստկացնէր նորաձեւ կեղեքումներու միջոցներով: Առաջին առիթով ձգտում մը կար (որ աւելի ուժգնորէն կը զործէր եւրոպական ցամաքամասին վրայ քան Անգլիոյ մէջ) բազմացնելու վասալներու թիւը՝ մեծ լորտերու գիրնուորական աղբիւրները ուժեղացնելու համար: Ասանկով, մէկ կողմէն աճեցան ազնուական ընտանիքները, միւս կողմէն՝ կըրկնապատկուեցաւ անոնց պահակներու թիւը, իսկ ատով՝ աւելի խոշորցաւ եւ ուժեղացաւ պարագիտ դասակարգը, որուն սննդատուութեան պարտքը յանձնուած էր ճորտ բնակչութեան: Այս գրութեան վրայ կ'աւելնային պատերազմի եւ աւազակութեանց շարիքները, որոնք անբաժան մասը կը կազմէին Ֆէոդալական դրութեան, իսկ երբ նոյն ատեն միստումն ու աւերումը կը տարածուէին ամէն կողմ, անոնք աւելի կը բազմապատկէին Ֆէոդալ լորտերու եւ թագաւորին ծախքերը:

Մինչ կեղեքումը եւ կողոպուտը կը նուազեցնէին արտադրողական ուժերը, նոյն ատեն կ'աւելնային արդիւնարեւոյններու կարիքները:

Պաշակիրներու պարբերական արչաւանքները առանձնապէս ցամաքեցուցին ազնուական ընտանիքներու Ֆէոդալական եկամուտները, ասով անոնք աւելի սաստկացուցին ճորտերու կեղեքումը:

Երբ ասպետական շրջանը աւելի զարգացաւ, (խաչակրական

շրջանին զարգացաւ ասպետականութիւնը) ազնուական դասու ծախսարարութիւնը նոյնպէս զարգացաւ. աննախընթաց ցոյի խնճոյքներ, փառասիրական շտեմնուած հանդիսութիւններ... որո՞ւ հոգ... այդ բոլոր ծախքերը կմտացած ու թշուառ ճորտերը հողալու էին: Ինչպէս Վինոկրատով կը նշէ. — «Լորտի քմահաճոյքն ու ազդեցութիւնը աւելի շեշտուած եւ աւելի ուժեղացած էր 13-րդ եւ 14-րդ դարերուն, քան թէ նախորդող շրջանին: Հողատէր լորտը հասարակ մահականացու մը չէր, այլ տեսակ մը կիսաստուած»:

Փոքր կալուածատէրերը, որոնք անպատ աշխատաւորներ՝ ճորտեր չունէին, ստիպուած էին քաջալերել զբաժանական վարձակալութիւնը եւ կամ՝ ազատ մարդոց վարձու աշխատանքը: Բայց ասոնք ալ չէին կրնար մրցիլ խոշոր հողատէրերուն հետ, որովհետեւ իրենց արտադրութիւնները չէին կրնար աժան ծախել:

Արբայ Գլունի, զուր տեղը կը դատապարտէր գիւղացիութեան վրայ գործադրուած ճնշումն ու հարստահարութիւնը, որոնք օրէ օր անտանելի չափանիշներու կը հասնէին: Բայց ո՞վ կը լսէր անոր դանդառները...

Սոյն չափազանցեալ ճնշումը ո՛չ միայն կը սղատէր զղեակին համար ոսկի հաւկիթ ածող սագի ուժերը, այլեւ յուսահատութեան բերումով յառաջացուց սպորինի կերպով աւատական հողերէն դադարեցնող շարժում մը: Հողին կապուած մշակները լքեցին իրենց տուններն ու հողերը ու սպաստանարան փնտտեցին քաղաքներու մէջ. ասով Ֆէոդալական տնտեսութեան երակներէն էական արիւնը հետորհեա՞ն սկսաւ ցամաքիլ: Հարկադրական այս գաղթականութիւնը յառաջացուց սարսափելի տակնուվրայութիւն մը թէ՛ Անգլիոյ եւ թէ՛ Եւրոպայի ցամաքամասին մէջ, եւ ատանկով ո՛չ միայն քաղաքներու բնակչութիւնը աւելցաւ, այլեւ երեւան եկան աւազակային խումբեր, թափառաշրջիկներ, ասոնց հետ նաեւ ժէքրիներու սպանական շարժումը (Այս մասին տես իմ գործի Բ. հատորը. Լ. Մ.): Իրերու այս ընթացքին որպէս հետեւանք՝ լորտերը իրենց կարգին, իրարու հետ համաձայնեցան փախստական գիւղացիներու դէմ պաշտպանուելու համար եւ նոյն ատեն փոխադարձ օղնութեան համար: Լորտ մը իրաւունք չունէր հիւրընկալելու ուրիշ լորտի մը փախստական գիւղացիները, հոգ չէր թէ իրեն հողին կապուած գիւղացիներն ալ լքած ու հեռացեր էին եւ ինք մնացեր էր ճգնաժամային դրութեան մէջ: Բայց փախստականներու խնդիրը այնքան լուրջ սպառնալիք էր եւ աշխատաւորներու կարիքը այնքան սուր՝ որ լորտերու համաձայնութիւնը գրութիւնը բարելաւելու չէր նպաստեր: Ոմանք, տեսնելով որ իրենց եկամուտի աղբիւրները կը ցամաքին, սկսան գիջումներ ընել:

Հրաւիրեցին զիւզացիները որ իրենց հողերը կէս առ կէս շահու պայմանով շահագործեն: Ոմանք ալ վարձու առին իրենց հողերը:

Փրանսայի մի քանի դաւառներու մէջ կազմուեցան զիւզական ընկերութիւններ, տեսակ մը զիւզական կոմունաներ, որոնք քաղաքներու նման ունէին իրենց սեփական կառավարիչը եւ դատական մարմինը:

Կար նաև ուրիշ իրողութիւն մը, զոր նկատի ունենալու ենք: Մինչև 1300 թուականը թէ՛ Անգլիոյ եւ թէ՛ Եւրոպական ցամաքամասին մէջ բնակչութիւնը նշանակելի չափով աճեր էր, նոյնպէս ընդարձակուեր էր մշակելի հողերու շրջանակը: Ճիշդ էր բնակչութեան աճմամբ աշխատուծի պահաս չկար, բայց երբ նկատի առնենք մէկ կողմէն զիւզի աշխատաւորներու վրայ գործադրուած ճնշումը, միւս կողմէն մշակելի հողերու ընդարձակումը, իսկ երրորդ կողմէն՝ մըշակութեան միջոցներու կոշտ ու նախնական հանգամանքը, ասոնք չէին նպաստեր ընշաքաղձ լորտերու եկամուտի աճումին: Մէկ երկու կրօնական միաբանութիւններ՝ ինչպէս օրինակ, կլունեական եւ կիստերիկան միաբանութիւնները(*) քաջարի ջանքեր թափեցին հողային բարեկարգութեան եւ արհեստներու քաջալերութեան ճամբուն վրայ, սակայն, մնալուն, դրական արդիւնք մը երեւան չբերին: Գերմանիոյ մէջ էլլայի, Օտէրի եւ Վիստուլայի ճահիճները չորցուցին, եւ ընդարձակեցին վարելահողերը: Նոյն երեւոյթը գրեթէ ամէն տեղ Եւրոպայի բոլոր կողմերը... Բայց ընդհանուր գործին մէջ չկար հարկ եղած ձեռներէցութիւնն ու մշակութեան համար անհրաժեշտ զարգացման ձգտումը:

1300 թուականէն յետոյ, սակայն, Արեւմտեան Եւրոպայի շատ մը մասերուն մէջ, բնակչութիւնը, փոխանակ աճելու, ինչպէս սկսած էր 1000 թուականէն, այս անգամ սկսաւ սուր անկումի մը: Որ այս երեւոյթին պատճառը կապուած էր աշխատանքի արտադրո-

(*) Կլունեական միաբանութիւնը հիմնուեցաւ Աբբայ Բրրնոյի ձեռնով՝ Փրանսայի Կլունի քաղաքին մէջ 910 թուականին, օրինակապահ ու խստաբարոյ միաբանութիւն մը, որ կը փառաբերէր գրականութեան ու գեղարուեստի ուսմունքը, բայց յետոյ վատաստուեցաւ:

Կիստերիկան միաբանութիւնը, Բենետիկտեան միաբանութեան գտարիւն յաջորդը՝ Սիտոյի Աբբայ Բապրուտ տի Տիէրի ձեռնով հիմնուած, որ կը հետեւէր պարզութեան եւ խստակեցութեան, արագօրէն տարածուեցաւ մինչեւ Ռուսաստան: Անգլիոյ մէջ Հէնրի 8-րդի օրով ենթարկուեցաւ հալածանքի:

ղականութեան վայրէջքին՝ թէ զիւզացիներու վրայ ի գործ դրուած տարապայման ճնշումին, գփուար է որոշակի ճշդել, միայն հաւանական է նկատել երկուքին կապակցութիւնը: Յամենայն դէպս, անոր անմիջական արդիւնքն եղաւ սպառնալիք մը Ֆէոդալական հասարակութեան եկամուտին եւ այն վահալիթումը, որ 14-րդ դարուն կոշուած է ըլլալ Ֆէոդալական տնտեսութեան տաղնապը: Սովորաբար այս անկումը վերագրուած է բացառապէս պատերազմներու եւ համաճարակի յառաջացուցած աւերածութեանց: Պատերազմն ու համաճարակը յայտնապէս մեծ մասով պատասխանատու են: Բայց նոյնպէս իրողութիւն է որ 14-րդ դարու Սեւ Ժանտախտի երեւումէն տասնեակ տարիներ առաջ արդէն սկսած էր տնտեսութեան անկումը, եւ այդ՝ կապուած էր տնտեսական պատճառներու հետ: Համաճարակի կործանարար արդիւնքը պէտք է ըսել թէ՛ հրահրուած էր բնակչութեան պէշ սննդառութենէն. համաճարակը սկսաւ հազարաւոր կեանքեր հնձել հասարակ ժողովուրդին՝ մասսաներուն մէջ եւ ո՛չ թէ պնտուականներու շրջանակին մէջ: Փաստեր կան, որոնք կը հաստատեն թէ Անգլիոյ մէջ երկրագործութեան անկումը սկսած է 1300 թուականէն անմիջապէս յետոյ, հաւանական է այն տտեն՝ երբ նոյն անկումը սկսաւ Փրանսայի մէջ, նախքան Սեւ Ժանտախտի յարձակումը:

Փրանսայի մէջ աշխատաւորներու սակաւութիւնը աւելի կանուխէն երեւան եկաւ. բան մը կ'արդելակէր մշակելի հողերու ընդարձակումը: Ո՛չ միայն խոշոր հողարժիւններ շնորհուեցան վասայներու եւ զինեալ մարդոց, այլեւ պայմանաժամով հողեր տրուեցան փոքր վարձակալներու, որոնք հունձքէն բաժին հանելու էին հողատիրոջ: Մաս մը տեղեր՝ ինչպէս Բուրկոնտի մէջ, բոլոր զիւզացիներուն ազատութիւն շնորհուեցաւ, պայմանաւ որ անոնք իրենց հունձքէն որոշ բաժին մը տան հողատէր լորտին:

Այն վայրերը, ուր հողային զիջումներ շնորհուեցան ճորտերուն, զարձան տեսակ մը գաղթափայրեր: Ասոր արդիւնքն այն եղաւ որ աշխատաւորներուն պահասութիւնը շեշտուեցաւ ո՛չ միայն Սաքսոնիոյ եւ Վէստֆալիայի մէջ, այլեւ մինչեւ հեռուն՝ Հոլանտայի եւ Ֆլանդրրոսի մէջ, ուրկէ գաղթականներ գունդագունդ դուրս եկան եւ գաղթեցին դէպի իրենց համար նպաստաւոր վայրերը: Իրենց հողերէն ժողովուրդը կորսնցնելու յարատեւ վախը, մասնաւորապէս այն տեղերը, ուր քաղաքները կը մեծնային եւ առանձնաշնորհաւ աւանները քաղոպական կեդրոններ կը դառնային, միացած աշխատանքի ծառայութեան ճամբուն վրայ զիւզացիութեան յարատեւ դիմադրութեան հետ, պատճառ եղան որ տեղ տեղ՝ ի մասնաւորի Արեւ-

մբռեան Գերմանիոյ մէջ, հողատէր լորտերը իրենց հողերու վարձա-
կալները չկորսնցնելու համար անոնց առաւելագոյն զիջումներ ընեն
և այդ զիջումներու գիծը շարունակուեցաւ 12-րդ դարէն:

* * *

Տիրոջ գրութեան վրայ ազնուական դասակարգի հակազդե-
ցութիւնը երբեք միաձեւ չէր, ան կը տարբերէր Եւրոպայի զանազան
չրջաններուն մէջ և ատկէ կը սկսի տնտեսական պատմութեան տար-
բերութիւնը: Շարք մը պարագաներու տակ, որպէսզի աշխատանքը
գրաւիչ դառնայ և սեւական (ինչպէս Ֆրանսայի հարաւային մասե-
րուն մէջ հարիւրամեայ պատերազմէն յետոյ), լորտերը հարկազ-
րուեցան զիջումներ ընել զիւզացիներուն և նոյնիսկ՝ պարտազիր
ծառայութեան փոխարէն գրամական վճարումով պայմանագրական
յարարերութիւն հաստատել անոնց հետ: Ուրիշ տեղերու մէջ, սա-
կայն, հողատէրերը իրենց կալուածներու վրայ աշխատողներու լու-
ծը աւելի ծանրացուցին, այս կամ այն միջոցներով բռնեցին փախը-
տականները և զանոնք շղթայակիր՝ կապեցին ստրկական աշխա-
տանքի: Այս վերջին երեւոյթը կը գտնենք Արեւելեան Եւրոպայի մէջ՝
ընդհանրացած և յաճոյ: Նոյնիսկ Անգլիոյ մէջ ապացոյցներ կան,
որ կը հաստատեն թէ ճորտութեան լուծը հոն ևս աւելի ծանրացեր
էր 14-րդ դարուն: Այս գծին վրայ վանական հաստատութիւնները
բացառութիւն չէին կազմեր: Քրիստոսի աշակերտող վանականները,
Աւետարանը կը կարգային, բայց նոյն ստեն՝ դահճապետի դեր կը
կատարէին: Երեւոյթը նոյն պատկերը կը ներկայացնէր Պալքանեան
պետութեանց և Ռուսաստանի մէջ, Լեհաստանի, Հունգարիոյ և
Բոհէմիայի մէջ: Սպանիոյ մէջ Միւսլիմաններն ու Հրեաները իրենց
կալուածներուն վրայ դարձան ճորտեր: Խեղճ զիւզացիի գրութիւնը
չատ աւելի գէշ էր քան թիսպարտինը: Այս շրջանին, հողատէրե-
րուն մշակող աշխատաւորները հասցնելու համար Միջերկրականի
չրջանակին մէջ իր վերապրումը աւետեց գերեզմանաւորութիւնը:

Յայտնի է որ քաղաքական և տնտեսական գործօն ուժերը
մեծ դեր կատարեցին իրերու ընթացքը որոշելու հարցին մէջ:

Վեր առնենք զիւզացիութեան գիմադրութեան ուժը և տեղա-
կան լորտերու քաղաքական և գինուորական իշխանութիւնը. ասոնց
հակամարտութիւնը, նայած դէպքերու բնոյթին, կը գիւրացնէր,
կամ կը դժուարացնէր զիւզացիի ընդգիմադրութեան յաղթելու և
բռնօրէն արգիլելու աւատահողերու լքումը. ասոր հետ թաղաւորա-
կան իշխանութեան ազդեցութեան աստիճանը՝ ուժեղացնելու հեղի-

նակութիւնը, կամ հակադարձաբար՝ պատահութիւնը ներկայացած
նկատելով տկարացնելու անոնց իշխանական դիրքը, այս բոլորը կա-
րեւոր էին որոշելու թէ բռնութիւնը լորտերուն պիտի կրնար նպաս-
տել՝ թէ ոչ: Շարք մը գրողներ, այն տեսութիւնը կը յայտնեն թէ
Անգլիոյ մէջ թաղաւորական դատարանները կը պաշտպանէին (ան-
չուշտ ո՛չ աւելի՝ քան մասնակի) արհամարհուածներու իրաւունքները
ընդգէմ լորտերու կամայականութեանց և թէ՛ Ֆրանսայի մէջ ալ,
երբ բացարձակ միապետութեան յաղթանակը հռչակուեցաւ, ատով
սահմանափակուեցաւ Փէոդարական հակազդեցութիւնը: Ի հակադ-
րութիւն՝ Հոնոսի արեւելեան մասերուն՝ ինչպէս նաեւ Լեհաստանի
և Մոսկովեան շրջանին մէջ, կը տեսնենք թէ կեդրոնական ուժեղ
իշխանութիւն մը չկար և թաղաւորը շատ կը նախանձէր լորտերու
և իշխաններու ինքնավարութենէն ու կ'աշխատէր սանձել անոնց
հեղինակութիւնը: Արեւելեան Եւրոպայի և Սպանիոյ մէջ այնպէս
կը թուէր թէ՛ տեղական լորտերու մօտ, ըլլայ զինուորական ուժը,
ըլլայ քաղաքական հեղինակութիւնը մնացեր էին բարձր: Ֆրանսայի
և Պելճիգայի մէջ Ֆէոդալիզմը Հարիւրամեայ Պատերազմէն յետոյ
տկարացեր էր, սակայն և այնպէս՝ Ֆրանսայի որոշ մասերուն մէջ
պարտններու քաղաքական ուժը անվթար պահուեցաւ. իսկ ամենուն
վերեւ, եկեղեցին, որպէս սերտօրէն հիւսուած միջազգային զօրեղ
կազմակերպութիւն մը՝ պահեց իր գերիշխող դիրքը: Անգլիոյ մէջ
պառտններու դասակարգը, որ ի հակադրութիւն թաղաւորին՝ երբեք
չկրցաւ զօրեղանալ, աւելի տկարացաւ Երկու Վարդերու Պատերազմի
հետեւանքով, այնպէս որ Հէնրի 7-րդի պարլամենտին հրաւիրուող
ազնուականները հազիւ թէ կէս թիւը կը կազմէին բաղգատամբ
դարու սկիզբը պարլամենտի մէջ ներկայ եղող պատգամաւորներուն:
Այս քաղաքական ազդակները հաւանական է որ օժանդակեցին Եւ-
րոպայի զանազան մասերուն մէջ իրերու տարբեր ընթացառումին:
Որոշ առնել մը վերջ, սակայն, Մոսկուայի քաղաքական կեդրոնա-
ցումը և բոյարներու իշխանութեան սանձահարումը ճորտութեան
սաստկացումին հետ ձեռք ձեռքի տուած յառաջ գացին. և մինչ
Ֆրանսայի մէջ բացարձակ միապետութիւնը, որ կրնար Փէոդարական
հակազդեցութիւնը շղթայել (առնուազն որպէս նախաբայ) ան այդ
հակազդեցութիւնը կրցաւ մասամբ չէզոքացնել միայն: Այդ բոլորը
կը ցուցնեն թէ իրերու ելքը պիտի որոշուէր տնտեսական գործօն
ազդակներու ազդեցութեամբ՝ ո՛չ թէ թաղաւորի մը կամքով: Այ-
սու հանդերձ, երբ մենք նկատի պիտի առնենք այդ գործօններու
վճռական բնոյթն ու կարեւորութիւնը, բաւարար ու վստահելի տուեք-
ներ չունինք: Այն ազդեցութիւնը, որուն կ'ուզողուի անմիջապէս մեր
ուշադրութիւնը, այդ առնուած մշակութեան տիրապետող ձեւն է:

Օրինակի համար, լորտ մը որ ընդարձակ արտաավայրերու տէր է եւ ուրիշ լորտ մը, որ մշակելի ընդարձակ հողաբաժիններ ունի, ասոնց երկուքին վրայ առանձին-առանձին՝ բոլորովին տարբեր ազդեցութիւն կ'ընէ աշխատաւորներու սակաւութիւնը կամ շատութիւնը: Առաջինը, որ անհամար ոչխարներ ունի եւ կը զբաղի մսի, կաշիի ու բուրդի ատուտուրով, աւելի սակաւութիւ վճարովի աշխատաւորներու պէտք ունի, քան երկրորդը, որ իր մշակելի ընդարձակ հողերու համար պէտք ունի բազմաթիւ ճորտերու, որոնց տրամադրելու եւ իրենց գոյութիւնը քաշքշելու շափ պարէն, իսկ իւրացնելու է անոնց արտադրութիւնները. ասով՝ այս երկրորդ լորտը առաջինին հետ մրցելու հնարաւորութիւն չունի, որովհետեւ ան աւելի ծախս ունի եւ աւելի շատ մտահոգութիւն, մտնաւանդ՝ երբ այդ դժգոհ ճորտերը փախուստի մատին կը մտածեն...: Սոյն ծախքերէն ու մրտահոգութենէն ազատուելու համար անիկա միայն մէկ միջոց ունի. այն է՝ պահել վարձու աշխատաւորներ՝ որոնք գործելու են միայն պէտք եղած ատեն, ապա արձակուելու են ազատ: Այդ պարագային՝ վարձու աշխատաւորներու պահեստի բանակ մը պէտք է ու ֆէոդալական սիստէմի տակ այդ բանակը գոյութիւն չունի: Բայց այսուհանդերձ՝ ան կրնայ այսպէս թէ այնպէս վարձու աշխատաւորներ ճարել քաղաքներու անդործներէն, որոնք ասոր անոր դուռը սորրկորէն կը ծառայեն եւ կամ՝ մուրացկանութեամբ կ'ապրին, եւ կամ՝ այն սնանկացած արհեստաւորներէն, որոնք իրենց ձեռագործական արտադրութիւնները համարժէք գինով չեն կրցած ճարել եւ լքելով իրենց գործատեղին՝ սոսկ ապրուստի համար ծառայութիւն կը փնտռեն: Բայց թէ՛ քաղաքի անդործ մուրացիկները եւ թէ՛ սնանկացած արհեստաւորները, որոնք մէկ կողմէն անվարժ երկրագործական աշխատանքին, միւս կողմէն ծանօթ հողատիրոջ դաժան վարմունքին, եթէ իրենց առաջարկուած գործը յօժարին ընդունիլ իսկ՝ պիտի պահանջեն այնպիսի աշխատավարձ մը, որ բաւարարութիւն տայ իրենց ու իրենց ընտանիքի ապրուստի պահանջներուն: Այստեղ հողատէրը դարձեալ ինքզինքը կը գտնէ անելի մը առջեւ: Ասիկա գժուարութեան մէկ կէտն էր:

Անգին կար ուրիշ ձեւ մը — արտադրութեան բաժնեկցական ձեւը: Հողատէրը գիւղացիներուն կրնար տալ որոշ հողաբաժին մը եւ իրեն պահել ուրիշ հողաբաժին մը: Գիւղացիները աշխատելու էին երկուքին համար ալ: Հունձքի ձախող տարին գիւղացիին եւ հողատիրոջ բաժինը հաստարապէս փոքր կ'ըլլար, բայց վերջնոյն բաժինը, որ բոլորովին չէր անհետանար, քանի որ դուս հասոյթ մըն էր, որ այլևս բաժնուելու չէր, երբեք չէր գոհացնել ռոպլ ու բազմաձայն հողատիրոջ ցանկութիւնը: Անիկա նոյնիսկ՝ հունձքի առատ

տարիներու բերած հասոյթներով ալ չէր կրնար գոհանալ: Այսու կը տեսնենք թէ մշակութեան այս ձեւն ալ այնքան գոհացուցիչ չէր հողատէր ազնուականութեան համար: Ուրեմն, միակ շահարեք սիստէմը ճորտատիրական սիստէմն էր, բունի ճորտական աշխատանքի սիստէմը: Բայց այդ սիստէմն ալ երբ իր ծայրայեղութեան կը տարուէր եւ գիւղացիները անտանելի պայմաններու բերումով ստիպուած էին ամէն ինչ թողուլ եւ փախչիլ, գիւղացիներու փախուստի հասանքը դազրեցնելու համար հարկաւոր էր զիջումներ ընել՝ քան թէ բնութեան դիմել:

Ընդհանուր դրութեան պատկերը աւելի պարզացնելու համար ի մտի ունենալու ենք այն հանգամանքը, որ ճորտային աշխատանքի ազրիւրները տարբեր էին տարբեր հողաբաժիններու մէջ: Ֆէոդալ ազնուականները նոյն դասին չէին պատկաներ. կային խոշոր հողատէրեր եւ մանր հողատէրեր, եւ այդ երկու դասու հողատէրերը նոյն քաղաքականութեան չէին հետեւեր. ինչպէս Անգլիոյ մէջ փոքրամասնական պառոնները, Գերմանիոյ մէջ ասպետները եւ Ռուսաստանի մէջ պոմօլցիքները, որոնք իրենց կարիքներու հետ համեմատած՝ ճորտային աշխատուժ չէին կրնար ստանալ քան թէ խոշոր հողատէրերը, մասնաւորապէս եկեղեցին, որ ամենամեծ ֆէոդալական հաստատութիւնն էր: Ասկէ զատ տարօրինակ կէտը այն էր որ խոշոր հողատէրերը զինեալ մարզոց միջոցով փոքր հողատիրոջ ճորտերը կ'առեւանդէին իրենց հողերէն փախչող ճորտերու պակասը լրացնելու համար: Ասանկով փոքր հողատէրերը աւելի շուտ կը մատնուէին տաղանապի, այդ իսկ պատճառով անոնք զիմեցին օրէնքի պաշտպանութեան, որպէսզի ճորտերը կապուած մնան իրենց հողերուն եւ առեւանգուածները վերադարձուին իրենց սեփական տէրերուն: Ասոր ապացոյցն է Բորիս Կառլինովի օրէնագրութիւնը Ռուսաստանի մէջ եւ անոր 1597-ի եւ 1601-ի հրովարտակները: Ռուսաց ցարը այդպիսով հրահրեց խոշոր հողատէր բոյարներու թշնամութիւնը, երբ պաշտպանել ուզեց փոքր հողատէրերու շահերը: Բայց այս փոքր հողատէրերն ալ կը տառապէին աշխատուժի պակասէն, որովհետեւ ճորտերը երբ խոշոր հողատէրերէն կը փախչէին, նոյնպէս չէին հանդուրժեր փոքր հողատէրերու շահագործման անխիղճ ձեւերուն. ազոր համար մանր հողատէրերը աւելի շահաւէտ նկատեցին վարձու աշխատաւորներով մշակութեան գործը շարունակելը. իսկ երբ տեսան թէ այդ եւս գժուարութիւն կը ստեղծէր, անոնց համար կը մնար վարձակալութեան ճամբան, քանի որ վարձակալը իր վարձած հողին համար վերջապէս բան մը վճարելու էր:

Անգլիոյ մէջ 14-րդ եւ 15-րդ դժուարին դարերուն, այս «բարեկենս» մանր հողատէրերու անտեսական յարաձուռ տաղանապը դուռ

բացաւ նոր իրողութեանց շարքի մը, երբ որոշ չափով բնդարձակուեցան պայմանաժամային վարձակալութիւնները, որոնք պէտքը չհշտեցին վարձու աշխատաւորութեան: Ասով տնտեսական վիճակի պարբերականութիւն ստեղծուեցաւ նոյնինքն՝ գիւղացիութեան մէջ եւ այդ ատեն մէջտեղ եկան բարեկեցիկ փարմըրներ, որոնք կարող ըլլալով կուտակել փոքր կապիտալ մը, եւ նոյն ատեն քաջալերուած տեղական առևտուրի ու տեղական շուկաներու աճումէն, յաւելիեալ հողեր վարձեցին եւ սկսան օգտագործել աւելի աղքատ գիւղացիներու վարձու ծառայութիւնը: Այսպիսով Անգլիոյ մէջ 14-րդ եւ 15-րդ դարերուն երեւան եկաւ կուլտի գասակարգի նման գասակարգ մը, որ նման էր 19-րդ դարուն Ռուսական պատմութեան մէջ երեւցող կուլտի գասակարգին: 1435 թուին, Քօմպի գղեակին ծառայող ճորտ մը մեռած պահուն, թողած էր երկու հագար ստերինկ: Անոր նման կային փարմըրներ, որոնք քանի մը հարիւր արտաւար հողեր կը մշակէին անկախօրէն՝ իրենց հաւույն: Գիւղական աղքատ բնակչութեան մէջ երեւան եկող այս դրութիւնը պատեհութիւն կուտար որ կուլտի գասակարգը բաւականին դրամագլուխ ամբարէր, դարդացնէր մշակման ձեւերը, աւելի հողեր ունենար եւ աւելի բարդաւաճ ըլլար: Այսպիսով կը տեսնենք թէ գիւղացիութեան աղքատութիւնը այն դեպքին էր, ուրկէ կը սնանէր գիւղական վաշխառու ու մանր գործատէրը: Բայց 15-րդ դարու վերջերը Ֆէոդալական դրութիւնը սկսաւ քայքայման նշաններ ցոյց տալ եւ տկարանալ՝ մի շարք ձեւերով: Երեւան եկան գիւղացիական բնդվորմներ. ճիշդ է որ անոնք ճզմուեցան զէնքով կամ խարերայութեամբ, բայց յեղափոխութեան ուրուականը մնաց հին կարգերու գլխուն վերեւ: Գիւղացիութիւնը կը փախչէր աւատահողերէն ու կը դիմէր ղէպի անտառները, ղէպի լեռները եւ յետոյ՝ յուսահատ, կը լեցուէին քաղաքները: Հին աղնուականութեան շարքերը կը նօսրանային եւ կը բաժնուէին իրարմէ, իսկ մանր հողատէրերուն համար պատեհութիւն կը ստեղծուէր վարձագրել նոր հողեր եւ դանոնք շահագործել փախրատական գիւղացիներէ բազկացած վարձու աշխատաւորներով:

* * *

Որքան ատեն որ շուկաներու աճումը որոշակի քայքայիչ ազդեցութիւն մը կը գործէր Ֆէոդալական շէնքէն ներս եւ կը պատրաստէր գետին մը, ուր կը դարգանային այն ուժերը, որոնք կը տկարացընէին զայն եւ պաշտօն ունէին անոր տեղն անցնել, այդ ազդեցութիւնը մենք կրնանք ներկայացնել քաղաքներու երեւումով, որոնք

որպէս բնկերակցական մարմիններ՝ դանազան սատիճաններով տնտեսական ու քաղաքական անկախութիւն ձեռք կը բերէին: Որպէս առևտրական կեդրոններ՝ քաղաքներու ազդեցութիւնը մասնաւորապէս մանր հողատէր սասկաններու վրայ, շատ խոր էր ու զօրաւոր: Ասկէ զատ քաղաքներու գոյութիւնը դրամական գործառնութեանց հիմք կը ստեղծէր եւ գիւղացին հարկադրուած էր դրամ տալ հողատիրոջ. օրէնք մը, որ որոշ չափով կը դործագրուէր արդէն Ֆէոդալական շրջանին: Եւ եթէ նկատի առնենք որ Ֆէոդալական շահագործման ճնշումը եւ երկրագործութեան քայքայումը կ'օգնէին քաղաքներու մէջ գաղթականներու ներխուժումին, այդ քաղաքները առաւել կամ նուազ տեսակով օլտսիսներ կը դառնային անազատ հասարակութեան մէջ եւ որպէս մագնիս՝ իրենց կը քաշէին գիւղական բնակչութիւնը, քաջալերելով անոր փախուստը աւատահողերէն. եւ արդէն, ինչպէս ըսինք, պարզ էր որ գիւղացիները կ'ուղէին ազատուիլ այն հարստահարութիւններէն, որոնք ամենագորաւոր գերը կատարելու կոչուած էին Ֆէոդալական սխտէժի քայքայումին մէջ:

Անգլիոյ մէջ մանր հողատէրերը, որոնք ամենէն շատ ենթակայ էին քաղաքային ազդեցութեան, ստիպուած էին վաճառականներէն դրամական փոխառութիւն ընել, մասնաւորապէս տաղնապալի ժամանակ՝ երբ իրենք ղէմ յանդիման կը գտնուէին պատերազմի ու սովի առջև: Յաճախ անոնք իրենց զաւակները աշկերտութեան կուտային քաղաքի արհեստաւորի մը, կամ՝ կը յաջողէին իրենց մէկ զաւակը ամուսնացնել վաճառականի մը դստեր հետ, որով ան ժառանգորդը կը դառնար Անգլիացի արխտոկրատի մը հարստութեան: Միւս կողմէ, երբ պայմանները նպաստաւոր ըլլային, անոնք կրնային յաւելիալ արտադրութիւնները ծախել եւ զնել քաղաքային արհեստակցական բնկերութեան անդամակցութիւնը եւ այդ ճամբով՝ զբաղել առուտուրով: Անոնցմէ շատերը բուրգի առուտուրի քաջալերական հանդամանքէն, 16-րդ դարուն, իրենց մշակելի հողերը արօտափայրի վերածեցին եւ իրենք եղան միջնորդներ, առնող-ծախողներ... ինչպէս Իտալացի դրող մը նշած է զարմանքով. — «Աղնուականներն ալ գիւղական գործառնութեանց մէջ կը մտնէին, արջառարուծութեամբ կը պարապէին եւ յետոյ՝ կը ծախէին իրենց բուրգն ու արջառները եւ երբեք չէին մտածեր թէ՛ գիւղացի դառնալով կը նուաստանային»:

Բայց մինչ այս քաղաքային հասարակուրդները այն չափով որ անկախ առուտուրի կեդրոններ էին եւ պայմանագրական գործերով կը զբաղէին եւ որոշ իմաստով օտար՝ խորթ մարմիններ էին, որոնց աճումը կը քայքայէր Ֆէոդալական սխտէժը, սխալ պիտի ըլլայ՝ երբ մենք անոնց շրջանակը ներկայացնենք որպէս Կապիտալիզմի մանրաշխարհը, որովհետեւ Կապիտալիզմի դարգացումը անոնցմէ չսկսաւ:

Սխալ պիտի ըլլայ նաև, երբ մենք անոնց գոյութիւնը նկատենք որպէս Ֆէոդալական յարաբերութիւնները յուժարքի ենթարկող ազգակ: Ճշմարիտ է, որ առևտրական այն տարրերը, որոնցմով կը սրնանէին այդ հասարակուրդները եւ կը հաւաքուէին անոնց բոլորաբը, վաճառականական եւ վաշխատուական կապիտալի սերմեր էին, որոնք ի վերջոյ՝ մեծ չափով գործածուելու էին խոշորցած շրջանակով: Բայց կուտակման նպաստող ուրիշ գործօններ պէտք էին որպէսզի այդ կապիտալը վերջնիթեր դարերուն ամեցունքեքայ դասնար եւ ըլլար տիրապետող: Մաս մը քաղաքներ՝ չքսենք բոլորը, ենթարկուած էին Ֆէոդալական իշխանութեան. այս կէտին մէջ քաղաքի բնակիչները որոշ չափով կը տարբերէին աւատահողի մը ազատ վարձակալներէն, որոնք ստրկային ծանր աշխատանքի ենթարկուած չէին, բայց տակաւին որոշ պարտաւորութիւններ ունէին իրենց Լորտին առջև: Քաղաքային ձեռագործներու արտադրութեան եղանակը կը ներկայացնէ պարզ ապրանքային արտադրութեան ձև մը, անդասակարգային-գիւղացիական ձև մը, ուր գործածուած գործիքները արհեստատրին կը պատկանէին եւ արհեստատրը կրնար իր արտադրութիւնները շուկայ տանիլ ու զանոնք ծախել՝ իր հաշուին: Այդ կանխագոյն օրերուն, այսինքն 15-րդ դարու նախալերջի շրջանին, Անգլիոյ մէջ տակաւին չկար արտադրութեան այն եղանակը, զոր կարելի ըլլար կոչել կապիտալիստական: Նոյն իսկ արհեստանոցի վարպետը — տէրը — քանի մը աշկերտներ ալ գործածէր, դարձեալ անիկա գործարանատիրոջ հանգամանք ունենալէ հետո էր, երբ նկատի առնենք արտադրութեան ձևեր եւ իր եկամուտը, ինչպէս նաև եկամտային եղանակը: Մի քանի կարելոր՝ պատմական զարգացման ձևեր պէտք էին, որ անոր ազատ ու փոքրաչափ ձեռագործը կապիտալիստական արտադրութեան ձևին վերածէր: Ճիշդ է, սակայն, որ այս քաղաքային ձեռագործական հասարակուրդները ժամանակի ընթացքին, ստացան իրենց ազատութիւնը ընդհանրապէս՝ առանց պայքարի եւ թէ՛ այդպէս ընելով տկարացուցին Ֆէոդալական տնտեսութեան ուժը, քանի որ իրենց գործադրած տնտեսական ղեկավարութեամբ անոնք կարողացան կանոնաւորել գիւղացիական բաժնի իրենց առևտրական յարաբերութիւնները եւ շահերը, մինչ ուրիշ կերպով՝ պիտի նպաստէին իշխանին կամ լորտին եւ կամ փանահօր: Ճիշդ է նաև որ քաղաքներու փաստկած ազատութիւնն ու բարգաւաճումը պատճառ դարձան որ ինքնարերարար դասակարգային տարբերութիւններ երևան գան քաղաքային հասարակուրդին մէջ եւ բացառապէս առևտրական սակաւապետութիւն մը հաստատուի քաղաքի կառավարութեան եւ զլիսաւոր արհեստակցական ընկերութեանց միջև:

Այս քաղաքային հասարակուրդներու ծագումը այնքան յստակ չէ եւ ենթակայ է հակաճառութեան: Ընդհանրացած իրողութիւն մը չկայ. եւ պայմանները, պէտք է ըսել թէ՛ սուր կերպով կը տարբերէին մէկ քաղաքէն միւսը, մէկ երկրէն միւսը: Ոմանք կ'ենթադրեն թէ՛ հոսմէական քաղաքներն էին որ անիշխանական շրջանին քայքայուեցան եւ յետոյ՝ վերակենդանացան եւ դարձան տիրապետող: Ճիշդ է, որ մէկ երկու մեծ քաղաքներ հաւանականաբար բարբարոսական շրջանին պահեցին իրենց հիմնարկութիւնները, եւ Ֆէոդալական ամբողջներն ու եպիսկոպոսական հաստատութիւնները այս հին կեդրոններուն մէջ չփճացան, եւ թէ վերջէն՝ քաղաքային կեանքը գատորոշուեցաւ եւ ամեցաւ անոնց բոլորաբը. կամ թէ՛ միջնադարեան քաղաքային միարանութիւնները դուրս եկան այն տեղերէն, ուր այդ հին քաղաքները գրեթէ լքուած էին բոլորովին: Բայց որպէս ընդհանուր բացատրութիւն՝ այս տեսութիւնը հիմնաւոր չէ: Ներկայիս, շատ մը հեղինակներ կը հաւատարացնեն թէ աւերուած կամ լքուած հին քաղաքներու ծոցէն նորերու երևումը անհաւանական է: Մենք պէտք է գիտնանք որ ո՛չ թէ կանգուն մնացող շէնքերը կամ բնակչութեան որոշ տարրերն էին որ նոր շրջանի Ֆիզիքական կազմախօսութեան մասը կազմեցին, այլ կեանքի նոր պայմանները եւ անտեսական նոր հիմնարկութիւններն էին որ նոր դարաշրջանի մը դուրս բացին: Կրնայ ըլլալ, որ ամենէն կարելոր հոսմէական մէկ երկու կեդրոններ՝ նոր կերպարանափոխութիւններով շարունակած ըլլան իրենց գոյութիւնը, բայց դժուար է հաւատալ, որ նոյնը պատահած է միւս բոլոր քաղաքներուն ալ: Լիփսըն կ'ըսէ թէ Հոսմէական Բրիտանիոյ եւ Սաքսոն Անգլիոյ քաղաքներուն միջև երբեք հինի շարունակութիւնը կարելի չէ տեսնել: Կարելի է ըսել թէ ընդհանրապէս քաղաքները լքուած էին, այսինքն՝ եթէ իրապէս հրդեհումով կործանուած չէին, բայց դատարկուած էին իրենց բնակիչներէն. ճակատադիր մը՝ որուն ենթարկուեցան Լոնտոնն ու Քէնտրբորըին: Շատ մը պարագաներու տակ, կը տեսնենք թէ բնակչութեան նոր խմբաւորումներ երևան եկած են, նոր տեսակի ընկերակցումներ՝ մասնաւորապէս 9-րդ դարէն յետոյ: Եւ եթէ անոնք հաւաքուած են նախորդ հոսմէական քաղաքներու բոլորաբը, այդ հանգամանքը մեզի իրաւունք չտար որ ըսենք թէ՛ նոր միարանութիւնները հիներուն շարունակութիւնները եղած են:

Ոմանք, ուրիշ տեսանկիւնով կը ջանան փաստել թէ՛ նոր շրջանի քաղաքները դուրս գիւղական ծագում ունեցեր են, այսինքն՝ գիւղական որոշ հարիւրեակներու բնակչութեանց խտացումով կազմուած են քաղաքները: Ասոնք կ'ըսեն թէ՛ բաժանման միակ գիծը, զոր կարելի է քաշել հին գիւղական հասարակուրդի եւ վերջնիթեր

քաղաքին միջև, կը կայանայ վերջնոյն պարիսպով ամրացումին մէջ: Քաղաքները պարիսպի մէջ առնուեցան բնակչութիւնը պաշտպանուած պահելու համար: Բայց այս բացատրութիւնը նոյնպէս անզոհացուցիչ է. որովհետեւ եթէ մենք այդ փաստը ընդունինք որպէս անառարկելի ճշմարտութիւն, դարձեալ հետեւեալ հարցումները կը մընան անպատասխան. այսինքն՝ եթէ քաղաքները զիւղերէն կազմուած են, ինչո՞ւ պիտի պաշտպանուէին, վտանգը ո՞ր տեղէն պիտի գար, զիւղերէ՞ն... և յետոյ՝ ի՞նչու քաղաքները իրենց անտեսական խարխուր պիտի բնորէին ձեռագործական արտադրութիւնը և առուտուրը:

Երբորդ՝ մենք ուրիշ բացատրութիւն մըն ալ ունինք, որուն հեղինակն է Պիրէնի. այդ ալ այն է, որ քաղաքները ծնունդ առած են վաճառականներու կարաւաններու տեղաւորումէն: Առևտրականներն առաջին անգամ շրջուն փերեղակներ եղած են, սրոնք մէկ տօնավաճառէն անցեր են միւսին, կամ՝ մէկ Ֆէոդալական տունէն միւսին. իսկ ասոնք ժամանակի ընթացքին, հաստատուած են իրենց յարմար նկատած վայրերուն մէջ, ինչպէս այս օրերու ատաղձագործներն ու որսորդները ըրած են հիւսիս-արեւմտեան Գանատայի մէջ, ուր հաստարուն ծառերով անտառներ կան, ու անթիւ որսի կենդանիներ:

Վաճառականներու յարմար նկատած տեղերն եղած են հոովմէական քաղաքները: Զինուորական արագ գործողութեան նպատակով Հոովմի բացած կանոնաւոր ճամբաները նպաստաւոր էին իրենց համար: Նոյնպէս վաճառականները ընտրած են պարիսպներով պաշտպանուած Ֆէոդալական զղեակներու շրջանակը և կամ հրապուրուած են սրբազան վայրերէն, ուր կը հաւաքուէին միտմիտ, ազէտ հաւատաւորներու բազմութիւնները, և ահա անոնք հաստատուած են անոնց մօտիկ տեղերը: Ի վերջոյ, աւելի լաւ պաշտպանութեան համար անոնք իրենց հիմնարկութեանց բոլորաթիբը շինած են պարիսպներ, զանոնք միացնելով լորտերու պարիսպներուն: Ասիկա ասոնց կու տար անջատ ինքնօրէնութիւն մը և զինուորական որոշ առաւելութիւն:

Յաճախ այս վաճառականներու գաղութները մեծնալով և որոշ ազդեցութեան տիրանալով՝ շնորհիւ իրենց կուտակած գրամի ուժին, թագաւորին կողմէ մասնաւոր առանձնաշնորհումներու և պաշտպանութեան առարկայ դարձան, որովհետեւ անոնք հարկ եղած ատեն փոխատուութիւն կ'ընէին թագաւորին, իսկ թագաւորական այդ առանձնաշնորհումները վաճառականներուն տուին ազատութիւն և զանազան չափանիշով տեսակ մը հեղինակութիւն: Իրերու զարգացման ընթացքին հետեւանքը եղաւ այն՝ որ վաճառականներու կազ-

մակերպութիւնը ո՛չ միայն անձեռնմխելի դարձաւ, այլև տիրացաւ առուտորի ղեկավարման գիրքին՝ որուն ղէմ ոտնձգութիւն չէր կրնար փորձել ո՛չ տեղական օրէնսդրութիւնը, ո՛չ ալ լորտը:

Ուրիշ բացատրութիւն մըն ալ կայ, որով կը պարզուի թէ՛ քաղաքները ծագում առած են Ֆէոդալական իշխանութեանց նուիրականացուցած սրբազան վայրերու քաղաքական ուժէն: Թէև այս տեսութիւնը այնքան ալ չի համաձայնիր նախորդ բացատրութեանց հետ, բայց ունի իր որոշ կարեւոր հիմքը: Այս տեսութեան համաձայն, քաղաքները ինքնածին չեն եղած, այլ կազմուած են Ֆէոդալական լորտերու նախաձեռնութեամբ: Ֆէոդալական հիմնարկութիւնները իրենց ամբողջութիւնով պէտք ունէին առևտրականներու, ձեռագործ արհեստաւորներու, ատոր համար բնական էր որ հրապուրէին բնակչութեան թոյլ տարրերը: Ասիկա պատկերին մէկ կողմն է. միւս կողմէն՝ եկեղեցիներն ու վանքերը, տիրացած ըլլալով սըրբազնացած իրաւունքներու, դարձեր էին բնական ապաստանարաններ, ո՛չ միայն ուխտաւորներուն, այլև այդ անօրէնք դարաշրջանի բոլոր տեսակի փախստականներուն, որոնք կազմեր էին բնակչութեան մէկ անջատ խաւը և կը զբաղէին օժանդակ արհեստներով, և որոնց համար տեղական հաստատութիւնը ստեղծեր էր շուկայ մը: Երբեմն, դարձեալ, լորտ մը մասնաւոր առանձնաշնորհումի առաջարկով կը հրապուրէր նորեկները, որպէսզի իր շահերուն ծառայող շուկայ մը պատրաստէր. նոյն ատեն նաև, երբեմն ալ եկեղեցին ու վանքը սրբացած ապահովութիւն մը կը շնորհէին իրենց ծառայողներուն, որոնք Ֆէոդալական օրինականութիւններէն ազատ կ'ըլլային...:

Մեր ձեռքին տակ ունեցած սահմանափակ ծանօթութիւններով մենք հաւանական է որ բաւականանանք միջնադարեան քաղաքներու ծագումը վերադրելու ընտրական բացատրութեան. բացատրութիւն մը, որ տարբեր արժէք կու տայ տարբեր պարագաներու ներքև տեղի ունեցող զանազան ազդեցութեանց: Անպիտոյ որոշ քաղաքները կրնայ ըլլալ որ զուտ զիւղական ծագում ունեցեր են, թէև իրենց քաղաքային զարգացումը անտարակոյս վերադրելի է գետի մը, ծովախորշի մը կամ հունի մը մօտիկութեան, որու շնորհիւ անոնք եղած են առևտրական կեդրոններ: Մանչէստրը, որ նախ զիւղ մըն էր, ապա եղաւ քաղաք մը, ատեն մը պահեց իր երկրագործական և ոչ-վաճառականական բնոյթը, նոյնիսկ՝ աւան մը ըլլալէն յետոյ: Քէմպրիճը, որ որոշակի էին զղեակի մը և բանակատեղիի մը մօտիկ էր, քաղաք եղաւ զիւղերու միազանգուածումով (նոյնը նաև Բիրմինգհեմը), բայց հունի մը վրայ իր գիրքը պատասխանատու է իր յետագայ աճումին: Պարագան նոյնը կրնանք հաշուել Օքսֆորտ

քաղաքին համար: Անդին, կրտսքոյի մասին կ'ըսուի թէ՛ ծագում առած է Սբ. Նինիան սրբարանի բոլորտիքը տեղի ունեցած կրօնական հաւաքոյթներէն, որովհետեւ անոնցմով պատեհութիւն կը ստեղծուէր առեւտուրի: Պիրէնիի բացատրութիւնը կը թուի թէ՛ կը յարմարի Լոնտոնի, ուր կ'ըսուի թէ՛ դերմանացի վաճառականները հաստատուած էին Էարլըէտի գահակալութեան ատեն, իսկ կրօնական հիմնարկութիւնները եւ պաշտպանութեան համար կառուցուած պատենէները պատճառ եղան որ դանազան ժողովուրդներ եւ փախստականներ հաւաքուին հոն եւ մեծցնեն Լոնտոնը: Նոյն հանդամանքները կրնանք ըսել, թէ՛ պատճառ եղան որ եւրոպական ցամաքամասին վերայ կազմուին ու մեծնան դանազան քաղաքներ՝ ինչպէս Փարիզը, որ մինչեւ 9-րդ դարուն, հոսիմէական պարիսպներու միջեւ ամփոփուած փոքրիկ կղզի մըն էր, ինչպէս Հոնոսի վրայ Քոլոնիան, որ օտար վաճառականներու հաստատած մէկ գաղութն էր: Նոյնպէս ուրիշ գերմանական քաղաքներ, ինչպէս Բրէմըն, Մակտէպուրի եւ Բրուկէս: Բայց կային ուրիշ շատ մը կարեւոր կեդրոններ, ուր քաղաքային հասարակուրդը ծագում առաւ առեւտրականներու եւ ձեռագործական արհեստաւորներու խմբաւորումներով, որոնք հաւաքուեցան վանքի մը, կամ զղեակի մը պարիսպներուն մէջ, ո՛չ միայն առեւտրական ճամբաներու ապահովութեանը ծառայող զինուորական պաշտպանութեան համար, այլեւ անոր համար՝ որ որոշ առանձնաշնորհումներ տրուած էր անոնց, որպէսզի անոնք Փէոզալական հաստատութեանց պէտքերը հոգատարէին: Այսպէս, մենք կը տեսնենք, որ Սբ. Դէնիս, Ֆրանսայի մէջ 11-րդ դարուն, ժողովուրդի քաղաքական ուժի կեդրոնը դարձաւ իր սրբարանի հանգամանքովը: Չորս շատ փայտեայ խաչեր տնկուած էին ընդարձակ հողամասի մը չորս անկիւնները, հողամաս մը՝ որ կրնար աւան մը կազմել: Թագաւոր Ֆրիլիպ Ա. հրովարտելով մը կատարեալ ազատութիւն տուած էր անոնց, որոնք պիտի հաստատուէին հոն: Անոնք ազատ պիտի ըլլային նաեւ անձնական տուրքէ եւ զինուորական ծառայութենէ: Անդրիոյ մէջ, շարք մը քաղաքներ՝ ինչպէս Դուրհէմ, Ս. Ալբանս, Աքինկտոն, Նորթհամպտըն, ամեցան ու մեծցան զղեակներու եւ վանքերու բոլորտիքը: Իսկ Վոլսի սահմաններուն վրայ նորմանտացի պառպանները մասնաւոր առանձնաշնորհումներ պարգևեցին առեւտրականներուն ու արհեստաւորներուն, քաղաքային հասարակուրդներ կազմելու համար, որպէսզի իրենց ճակատային զիրքերը զօրեղացնեն:

Հին քաղաքներու քայքայումէն վերջ նորերու վերահաստատումը նշանակելի դարձաւ այն ատեն, երբ Միջերկրականի վաճառականութիւնը սկսաւ ծաղկիլ նախ դանդաղ՝ ապա արագընթաց թափով: Այս ծովային վաճառականութիւնը ատեն մը մեծ հարուած

ստացաւ Իտալական արշաւանքի հետեւանքով, բայց 11-րդ դարու վերջերը հին վաճառականական ճամբաները վերարացուեցան եւ այդ վաճառականութիւնը Արեւելքի հետ շարունակուեցաւ Պաշակիրներու քայլերու հետքերով: Տարակոյս չկայ որ Միջերկրականեան վաճառականութիւնը 11-րդ եւ 12-րդ դարերուն մեծ դեր կատարեց անդրցամաքային առուտուրի վերապրումին եւ ատով՝ քաղաքային հասարակուրդներու անընդմիջական զարգացումին:

Այսպէս, նկատի առնելով իրերու գրութիւնը եւ տրուած պայմանները, կը տեսնենք որ երեք ճիւղերու վրայ քաղաքներ կազմուած են Փէոզալական շրջանակին մէջ. մէկը՝ Փէոզալական հիմնարկութեանց նախաձեռնութեամբ, միւսը՝ առեւտրական մարդոց խմբաւորումներով, երրորդը՝ եկեղեցւոյ եւ վանքերու քաղաքական ուժով: Արդարեւ պէտք է ընդունիլ որ եկեղեցին, Փէոզալական հաստատութիւններուն մէջ ամենէն ղլխաւորն էր, որ կը հետաքրքրուէր առուտուրով ու ձեռագործական արտադրութիւններով. հետեւաբար, սիսլ է կարծել թէ՛ Փէոզալական դարաշրջանին առուտուրը ամբողջապէս անհետացած էր եւ դրամի գործածութիւնը օտարտի էր, որովհետեւ շատ բնական էր որ քաղաքներու հաստատութիւնն ու անոնց վերհսկողութիւնը միշտ ալ պիտի նկատուէին Փէոզալական եկամտաւոր յաւելեալ մէկ աղբիւրը: 8-րդ դարու սկիզբներն արդէն, Փրանսական վանականներու գործակալները աշխուժիւ կը գործէին զնելու բուրդ՝ տարազագործութեան համար: Բուրկընտիի զինի առուտուրին մէջ վանքերն էին կեդրոնական վաճառատուները: Անդին, Լուառի եւ Սէնի արքայաբանները նաւարաթիւններ ունէին իրենց ընթացիկ առուտուրին համար: Փլորէնտի մէջ բուրդի ճարտարարուեստը, որ սկսած էր 1238-ին, վանական միաբանութեան ձեռքըն էր: Անդրիոյ մէջ գերմանացի առեւտրականներու հաստատումը վանականներու ձեռքով կատարուած էր, վանականներ՝ որոնք թէ՛ վաճառականութեամբ կը զբաղէին եւ թէ՛ պատերազմով: Անոնք մէկ կողմ նետած էին այն Աւետարանը, որ պատուիրած էր. — «Ձեր գանձերը երկրի վրայ մի՛ զիղէք»: Բրբքալի մէջ մենք կը գտնենք որ Արինկտոն Արքայաբանը կեդրոնական շուկայ մը եղած էր, ուրիշ առեւտրական նաւերը Թայմըրի վրայով կը սուրային դէպի Լոնտոն: Այդ արքայաբանը եղած էր հազուադէպ մանուֆակտուրայի կեդրոն: Կիստերկեան կրօնական միաբանութեան անդամները փրամանկեան եւ խոտալական վաճառականներուն հետ ամէն տեղ զբաղած էին բուրդի առուտուրով: Երբքալի մէջ, 12-րդ դարուն, երկաթի հանքագործութիւնը բացառապէս յառաջ կը տարուէր կրօնական տուներու միջոցով: Եւ բնաւ զարմանալի չէ, երբ պատմագիրները կը հաւատարացնեն թէ՛ այդ շրջանի վանականները այնքան հարուստ էին որ

Հէնրի Բ-ի օրով դրամ փոխ կու տային թագաւորական տան՝ յիսուն առ հարիւր տոկոսով: Եւրոպայի մէջ ընդարձակ հողամասերու վրայ հաստատուած էին գործատեղիներ, որոնց մէջ կը գործէին ճորտերը: Նոյնպէս կային յարաշէնքեր, ուր կիները — ճորտերու կիները, կը մանկէին ու կը հիւսէին լորտերու կիներու ամենախիստ հսկողութեան տակ: Եւ այդ աշխատաւորներուն կը տրուէր միայն այնքան՝ որքան որ պէտք էր անոնց անասնական գոյութիւնը քաշքշելու համար:

Իրապէս, 11-րդ դարէն սկսեալ եւրոպական ցամաքամասին վրայ եպիսկոպոսական հիմնարկութեանց մէջ գոյութիւն առաւ առանձնաշնորհեալ կէս-վաճառականական վերին դասակարգ մը, որ հարստացաւ առուտուրով, վաշխառութեամբ եւ կէս-գերետիրական աշխատանքի շահօյթով, եւ այդ դասակարգը կրցաւ գնել եկեղեցական բարձրագոյնութիւն: Ասոր համար գժուար է գիծ քաշել անկախ ձեռագործական արհեստաւորներու եւ վանականներու աշխարհական եղբայրներու միջեւ, մէկ կողմէն, իսկ միւս կողմէն՝ ձեռագործական արհեստաւորներու եւ քաղաքային հասարակուրդներու առեւտրականներու միջեւ, երբ այս վերջինները դղեակի պարիսպէն դուրս իրենք իրենց պարիսպ մը կառուցին եւ սկսան պայքարել Փէոզալ լորտերէն անջատուիլ եւ տիրանալ անկախութեան: Այս բոլորին մէջ յատկանշական երեւոյթը այն է, որ արհեստակցական ընկերութեանց կեդրոնական քաղաքները, որոնք նոյնպէս անկախութեան կը ձգտէին, քաղաքացիական պատերազմի դուռ բացին եւ կրօնական բարձր դասու կողմէն բանադրանքի ենթարկուեցան: 1327-ին Բերիի մէջ քաղաքացիները վանքը մտան եւ Արբահայրն ու վանականները բանտարկեցին: Տունցարլի քաղաքացիները բանադրանքի սպառնալիքին դէմ յայտարարեցին թէ իրենք աւելի կը նախընտրեն դժոխք երթալ՝ քան թէ վանահօր քմահաճոյքին ծառայել: Արինկտօնի մէջ կատուած խուժանը Օքսֆորտի դաշնակից ուժերու հետ պաշարեցին Արբայրանը եւ կրակի տուին ամբողջ շէնքը: 1381-ին Գիւզացիական Յեղափոխութեան ատեն քաղաքացիները Նորվիկի մայր եկեղեցին հրոյ ճարակ դարձուցին:

Այսպէս, ուրեմն, պէտք է ըսել թէ՛ քաղաքացիին հասարակուրդներու անկախութեան ուժգին ձգտումը եւ անոր հակադիր՝ Փէոզալ լորտերու կատաղի դիմադրութիւնը անխուսափելի դարձուցին Փէոզալական դրութեան քայքայումը:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒՄԸ

Քաղաքի հասարակուրդները, որոնք իրենց երեւումի սկզբնական շրջանին օրինաչափական հասարակուրդներ էին, որչափով իրապէս յաջողեցան մասնակի կամ ամբողջական ինքնավարութիւն կորզել Փէոզալական իշխանութենէն, գիւրին չէ որոշել: Տարակոյս չկայ, որ դրութիւնը խորապէս կը տարբերէր այլ շրջաններու մէջ: Եւ շատ մը պարագաներու տակ արագօրէն դարդացաւ տնտեսական միջոցներու եւ դուցէ նաեւ ընկերային գոյավիճակի տարբերութիւն մը նախկին բնակիչներուն, որոնք քաղաքի սահմաններուն մէջ հողատէրեր էին եւ վերջէն եկողներուն միջեւ, զաղթականներ՝ որոնք հեռուէն կամ գիւղական շրջաններէն եկած եւ հին սերունդի քաղաքացիներէն հողեր գնած էին: Յայտնի է որ եւրոպական աւելի մեծ քաղաքներու մէջ բացի այսպէս կոչուած՝ ազատ քաղաքացիներէն, կ'ապրէին մաս մը արխաւոյրատ ընտանիքներ, որոնք քաղաքին մէջ կամ շրջակաները հողեր ունէին: Ասոնք կը ներկայացնէին Փէոզալ հասարակութեան մէկ տարրը, որ կը շարունակէր իր գոյութիւնը քաղաքային նոր հասարակութեան մէջ, երբեմն պահելով իր բաժանուած ինքնութիւնը, երբեմն ալ՝ ինչպէս Ֆլորենտի մէջ, լուծուելով ազատ քաղաքացիներու մարմնոյն մէջ, կրցեր էին դրաւել տիրական գիրք: Շատ մը իտալական քաղաքներու մէջ, այս Փէոզալական ընտանիքները, ո՛չ միայն տիրական դարձեր էին քաղաքային կառավարութեան մէջ՝ քաղաքը իր շրջակայքով վերածելով Փէոզալ-վաճառականական հանրապետութեան, այլեւ իրենց Փէոզալական առանձնաշնորհումները կը գործածէին ստանալու բացառիկ իրաւունքներ՝ հետաւոր առեւտրական ճիւղերու վրայ: Այդպէս էին, օրինակ՝ այն հինգ ընտանիքները, որոնք ձենովայի առուտուրի հսկողութիւնը ստանձնած էին 12-րդ դարուն: Սոյն գործերուն մէջ անոնց ներկայութիւնը աւելի կը բարդացնէր ազատ քաղաքացիներու պայքարը Փէոզալ հեղինակութեան դէմ, յաճախ այդ պայքարը վերածելով դասակարգային ներքին պատերազմի մը՝ քաղաքի հասարակուրդին մէջ: Այստեղ արդէն կը տեսնենք որ սկսած է դասակարգերու դուռուրումը: Նոյնիսկ անգլիական քաղաքներու մէջ կը գտնենք հետքեր, որոնք կը բաժնեն ազատ քաղաքացիները՝ վերին եւ ստորագատ

խաւերու: ՀիլըրՓորդի մէջ աւատապետները, որ ձիաւորներ էին եւ աւելի բարձրաստիճան մարդոց դիրք ունէին, թագաւորի այցելութեան ատեն զայն կը գիմարէին մասնաւոր հանդիսաւորութեամբ: Այդպէս էին նաեւ Նօթինկէճի ապտետները: Վինչէստրի, Հընտինկդընի, Նորվիկի ու Դըրբի մէջ ազատ՝ բայց խեղճ քաղաքացիները, որոնք պարիսպներէն դուրս կը բնակէին, ենթարկուած էին ստորագաս վիճակի, մինչ Գէնտըրբըրի մէջ նախապատուութիւն կը տրուէր քաղաքի շրջակայքը ապրող հին կալուածատէր ընտանիքներուն: Դարձեալ, Սր. Ալբէրտի Արքային դէմ սկսուած պայքարին մէջ շատ խոր դանդաղանութիւն մը կը դաննէր գեղակայ եւ ստորագաս ազատ քաղաքացիներու միջեւ: Վերջինները 1327-ին ապստամբական միջոցներու գիմեցին, մինչ առաջինները՝ զազանապէս անոնց օգնելով հանդերձ՝ հաշտուեցան Արքային հետ փաստարաններու միջնորդութեամբ:

Այստեղ պէտք է նշել, որ Անգլիական քաղաքներուն մէջ միադաւան (gild) պնտեական դասակարգը ընդհանրապէս քաղաքի բնակչութեան մէկ մասը ներգրուած ըլլալով, դարձեալ ցոյց չէր տար որ գոյութիւն ունեցող անհաւասարութիւնները իրենց միջեւ անանցանելի անդունդներ ունէին. որովհետեւ ձեռագործ արհեստաւորները անոնցմէ մէկուսացած չէին, եւ յետոյ՝ սեւէ քաղաքացի որ փոքրաքանակ կամ մեծաքանակ առուտուրով կը զբաղէր, կրնար միադաւան վաճառական դասուն մէջ մտնել՝ վճարելով մուտքի համար պահանջուած դուժարը: Միայն ճորտերը անդամակցութեան հնարաւոր միջոցը չունէին: Նոյն ատեն շարք մը Անգլիական քաղաքներու մէջ Ընկերակից վաճառականը կը պահէր իր երկրագործական գոյափրճակը եւ աւատապետի իրաւունքը: քաղաքի ազատութիւն ըսելով կը հասկցուէր քաղաքային սահմաններուն մէջ հողաչերտի մը, կամ տան մը տէր գառնալու պատահութիւնը: Այս պարագաներուն տակ առուտուրը հաւանականաբար եկամտային աղբիւրի պատահական մէկ երեւոյթն էր: Զեռագործական արհեստաւորներու մէջ գործատէր վարպետին եւ վարձկան արհեստաւորին միջեւ տարբերութիւնը շատ աննշան էր եւ շահու անհաւասարութիւնը այնքան մեծ չէր: Օղնական արհեստաւորը իր գործատէր վարպետին հետ միասին կը գործէր, եւ երբեմն վերջնոյն սեղանակից կ'ըլլար. այնպէս որ գործատէր վարպետին, օղնական արհեստաւորին եւ հասարակ առեւտրականին միջեւ սկզբնական շրջանին շատ քիչ դանդաղանութիւն կար: Արհեստաւոր մը, եթէ ճարտար էր ու ձեռներէջ՝ կրնար Կիլտի անդամ դառնալ, իրեն համար գործատեղի մը բանալ եւ առուտուրի մէջ մտնել: Այսպիսով՝ երբ պատահութեան ազատութիւն տրուած էր բոլորին, շահու անհաւասարութիւնը կ'արգելակուէր, եւ քաղաքային հասա-

րակութեան մէջ քիչ՝ կամ ո՛չ մէկ տարբերականութիւն երեւան կու գար: Ժամանակի ընթացքին, սակայն, երբ քաղաքի բնակչութիւնը բազմացաւ եւ քաղաքը ընդարձակուեցաւ, այն ատեն քաղաքային նախկին հողատէրերը հարստացան, որովհետեւ իրենց հողերը ծախեցին, կամ բարձր վարձադիւնով վարձու տուին: Ասիկա տեղի ունեցաւ 13-րդ եւ 14-րդ դարերուն: Բայց ինչ ալ որ ըլլար, ըստ երեւոյթին պարզ էր որ քաղաքային հասարակութիւնը կը գանուէր — ինչպէս Մարքս նշած է, «մանր արտադրողութեան ձեւին» մէջ. այսինքն սխալմ մը, ուր արտադրութիւնը յառաջ կը տարուէր մանր արտադրողներու ձեռքով, որոնք աէր էին իրենց արտադրութեան գործիքներուն, եւ որոնք ազատ էին իրենց արտադրութիւնները առեւտրական շուկային վրայ հանելու, ինչպէս նոյնը կ'ընէր դիւղացին: Այդ պարագաներուն ներքեւ տնտեսութիւնը կը պահէր համեատ գոյափրճակ մը, ուր կապիտալի կեդրոնացումը տեղի չէր ունենար, բացի այն պարագային՝ երբ անակնկալ շահ մը կ'ապահովուէր, կամ քաղաքային հողի արժէքը կը բարձրանար: Աշխատանքի արտադրողականութիւն եւ արտադրութեան միաւորներ, սոսնք երկուքն ալ փոքր էին: Այսպէս, ուրեմն, կապիտալի կեդրոնացման աղբիւրը պէտք չէ փնտռել այս մանր արտադրողութեան ձեւին մէջ, այլ դուրսը, այսինքն այն վարդացողական ձեւին մէջ, որ շուտով գալու էր ապականելու քաղաքային հասարակութեան նախնական պարզութիւնը: Ահա այդ շրջանին էր, որ երեւան եկաւ ազատ քաղաքացիներու այն դասակարգը, որ բոլորովին զատուեցաւ արտադրողական ճիւղէն եւ բացառապէս նուիրուեցաւ մեծաքանակ առուտուրին: Հոն, այդ աւելի լայն եւ ընդարձակուող շուկային մէջ էր գերազանց շահու պատահութիւնը, ուրկէ բնականօրէն կը զրկուէր ձեռական արհեստաւորը: Այժմ հարց է թէ՛՝ այս նոր դասակարգի հարստութեան նոր աղբիւրը ի՞նչ էր որ կը տարբերէր սովորական եկամտային աղբիւրէն՝ որ ուրիշ բան չէր այլ զլիաւորաբար ճորտերու պարտադիր, ստրկական աշխատանքը, անոնց յաւելեալ ու անվճար աշխատանքի պտուղը: Մենք գիտենք թէ՛ զարգացած կապիտալիստական տնտեսութեան գործարանատիրոջ շահը ի՞նչպէս կը կրկնապատկուի: Անիկա կը կուտակուի տեխնիկայի զարգացումով եւ աշխատանքի շահագործումով. այսինքն՝ բանուորներու անվճար աշխատանքով յառաջացած յաւելեալ արժէքներու կուտակումով եւ զանոնք բարձր գիներով վաճառելով: Բայց 14-րդ եւ 15-րդ դարերուն այս նոր դասակարգը՝ քաղաքային բուրժուազիան, երբ ճորտեր կամ վարձու բանուորներ չունէր, երբ տեխնիկական վարդացած չէր եւ տակաւին չկար ճարտարարուեստական պրոլետարիատ, ի՞նչպէս կրնար հարստութիւն կուտակել: Անոնց եկամուտը, ինչ ձեւով ալ որ ստացուէր, կը ներկայացնէր դիւղացի մշակողին կամ քա-

զաքային ձեռագործ արհեստաւորի արտադրութիւններու մէկ բաժինը, իսկ միւս մասը կ'իյնար նոյնինքը՝ արտադրողներուն, կամ՝ որպէս Ֆէոդալական տուրք՝ արիստոկրատիին: Արդ, ի՞նչպիսի մեքենական ուղիով էր որ այս վաղեմի վաճառականական կապիտալը իրեն կրնար կապել այդ բաժինը, բաժին մը, որ բաւական էր նախկին ազատ քաղաքացիին հարստութեան հիմք կազմելու եւ գլխաւոր քաղաքներու մէջ հաստատելու հիանալի պանթաներ:

Ադամ Սմիթէն սկսեալ, մարգիկ չեն յոգնած պատասխանելու վերելի հարցումներուն, այսինքն թէ՛ այդ ազատ քաղաքացիներու հարստութիւնը «կ'արտադրուէր» աւելի՛ քան «կը ստացուէր»: Կ'արտադրուէր, այո՛, բայց ի՞նչպէս... Կ'արտադրուէր վաճառականութեան տարածուն ծառայութեամբ, որ կը կատարուէր ուղղակի արտադրողներուն եւ սպառող արիստոկրատիին համար: Վաճառականութիւնը, ընդարձակելով շուկաները եւ հայթայթելով զանազան արտադրութիւններ, որոնք նախապէս մատչելի չէին, կը ծառայէ բարձրացնելու արտադրողներու ապրուստի մակարդակը, առանց թողնելու որ անոնք արգելք ըլլան սպառման միջոցառումներուն: Ճշմարիտ է նաեւ որ վաճառականութեան զարգացումը հասարակութեան սպրտաւոր մակարդակն ալ կը բարձրացնէր, որ նախապէս ամփոփուած էր տեղական շուկայի նեղ սահմաններուն մէջ: Նոյնպէս, ան էր որ կը խթանէր արտադրողութիւնը, ստեղծելով աշխատանքի բաժանում, որ կը յառաջացնէր աշխատանքի արտադրութեան աճում: Վաճառականութիւնն էր, որ աղ եւ համեմներ կը բերէր հետու տեղերէ, որով միւսը կը պահուէր եւ ուտելու կը ծառայէր, փոխանակ հոտելու: Ան էր, որ հում նիւթերը կը ներածէր դուրսէն եւ կը զարգացնէր տեղական հագուստի որակը: Վաճառականութիւնն էր զարձեալ, որ բերքերու առատութեան շրջանին, անոնց համար սպառման ճամբայ կը բանար եւ կ'օգնէր մշակողներուն, անոնց տալով որոշ եկամուտ մը՝ երբ տեղական պայմանները կը դառնային դաժան: Ասոնք ճշմարիտ են. սակայն կը պակսի գոհացուցիչ բացատրութիւն մը թէ՛ ի՞նչպէս վաճառականը կրնար հարստութիւն գիլել՝ տիրող պայմաններուն տակ: Վաճառականութեան շահը հասկնալի է, բայց թէ ի՞նչպէս կ'ըլլար, որ այդ շահը կը հասնէր հսկայ համեմատական չափի մը, որուն չէր կրնար հասնիլ ձեռագործ արհեստաւորը, կամ հողը մշակող գիւղացին: Նկատի կրնանք առնել բախտի խնդիրը, բայց բախտը պատահական է, եթէ չըսենք վիպական, քանի որ ան տեւական բնոյթ չունի քաղաքային արդիւնաբերութեան մէջ, ոչ ալ իրական առկայութիւն մը:

Մեր փնտաած բացատրութիւնը երկու գիծով կը պարզուի. առաջինը այն է որ, այդ ատենուան վաճառականութիւնը, մասնա-

ւորապէս օտար վաճառականութիւնը աւելի շատ կը զբաղէր կա՛մ քաղաքական պատեհութիւնները շահագործելով եւ կա՛մ՝ կողոպուտով: Երկրորդը այն է, որ վաճառական դասակարգը ընկերակցական միութիւն կազմածին պէս շուտով տիրացաւ մենատիրական իշխանութեան. որով վերցուեցաւ մրցակցութիւնը վաճառականներու միջեւ եւ հաստատուեցան արտադրողի եւ սպառողի միջեւ այնպիսի կանոններ՝ որոնցմէ հաւասարապէս կ'օգտուէին բոլոր վաճառականները, առանց մէկը միւսին շահուն վնասելու: Յայտնի էր թէ՛ վաճառականութեան այս երկայրանի բնոյթն էր որ կը նպաստէր այս նորարոյս ազատ քաղաքացիներու միութեան՝ այսինքն բուրժուազիայի հարստութեան եւ առեւտրական կապիտալի աճման: Առաջինը կը պատկանի այն շրջանին, զոր Մարքս կը կոչէ «նախնական կուտակում», վերջինը կարելի է կոչել «առուտուրի միջոցով շահագործում», որուն շունչովը առեւտրական կապիտալի շահը քառապատկուեցաւ ի վնաս թէ՛ ձեռագործ արհեստաւորներուն, թէ՛ հողային մշակութեամբ պարապողներուն եւ թէ՛ նոյնիսկ՝ արիստոկրատ դասակարգին: Այս վերջնոյն Ֆէոդալական տուրքի եւ Ֆէոդալական շահու մէկ մասը արդէն կ'անցնէր նորարոյս բուրժուազիայի ձեռքը: Շատ մը պարագաներու տակ վաճառականին գլխաւոր շահոյթը կ'ապահովուէր ո՛չ միայն տեղական արդիւնաբերութեան արտադրութիւններու արտածումով, այլեւ վաճառականական եւ տնտեսական գծով ուժգնօրէն խթանելով տնտեսապէս յետամնաց հասարակութեանց աժանագին արտադրութեանց փոխանակումը: Գնել աժան եւ ծախել սուղ, այդ էր առեւտուրի անխախտ կանոնն ու ձեւը: Քանակական գուղակչիւրը, որով արտադրութիւնները կը փոխանակուէին, առաջին առիթով բաւականին կամայական էր: Երբ արտադրողները իրենց արտադրութիւններու փոխանակութեան վրայ չէին կրնար ազդել եւ զանոնք կը պահէին սահմանափակ շրջանակի մէջ, ասիկա ոսկեղէն պատեհութիւն մըն էր, ուրիշ կ'օգտուէր առեւտրական կապիտալը: Այս շրջանին, ձեռագործ աշխատաւորը այնքան գիւրիին հում նիւթեր չէր կրնար ձեռք բերել. ան անջատուած էր անոնցմէ, նոյնպէս՝ կազուած չէր սպառողին հետ, եւ յետոյ՝ անջատուած արտադրողի եկամուտի աղբիւրները այնքան չնչին էին որ, ան միշտ կախուած կը մնար վաճառականէն, վաճառականն էր որ իրեն հում նիւթ պիտի հայթայթէր. զարձեալ, վաճառականն էր որ իր արտադրութիւնը պիտի ծախէր: Բնակչութեան տեղական խճողումը եւ տեղական պարբերական սովը կողք կողքի՝ կը նպաստէին առեւտրական կապիտալի բարգաւաճման: Դեռ աւելին կայ. հողորդակցութեանց նախնական պայմաններու հետեւանքով, տեղական նեղիկի շուկաներուն մէջ՝ որոնք իրարմէ բաժնուած էին, սեւէ փոք-

ըրկ փոփոխութիւն՝ զնման եւ կամ վաճառման պահուն, մեծապէս կ'ազդէր շուկայի գործառնութեան վրայ, որով կը ստեղծուէր կանոնաւորութիւն պահելու հարկադրանքը, ի շահ շուկայի առեւտրականներուն: Որքան ատեն որ այս նախնական պայմանները գոյութիւն ունէին եւ կը շարունակէին, այնպէս ալ բացառիկ պատեհութիւններ կը ներկայանային վաճառականներուն, որոնք կը շահագործէին զանոնք եւ ատոր համար անոնք կ'ուզէին յաւերժացնել իրերու այդ գոյավիճակը ապահովող պայմանները: Ատիկա առեւտրական կապիտալի ապրող քաղաքականութիւնն էր: Այս պատճառով մտնողովը այդ շրջանի անտեսական կեանքի խարխալը կը կազմէր: Այս պատճառով էր նաեւ որ մինչ վաճառականութեան ազդեցութիւնը որպէս Ֆէոդալական յարաբերութեանց լուծարքի ազդակ՝ նշանակելի դեր ունէր, այսու հանդերձ՝ առեւտրական կապիտալը կը մնար իրբեւ պարագիտ՝ հին հասարակարգի քամակին վրայ, իսկ իր զիտակցական դերը, երբ իր պատանեկութեան շրջանը աւարտեց, աւելի պահպանողական եղաւ, քան թէ յեղափոխական: Ասկէ զատ, անգամ մը, որ կապիտալը սկսաւ կուտակուիլ, ըլլայ վաճառականական շահէն թէ քաղաքային հողերու արժէքի բարձրացումէն, բարդաւածման նոր ծառուղի մը բացուեցաւ անոր առջեւ: Այդ կապիտալը այժմ կը գիրնար վաշխառուական պատուներով: Վաշխառութիւնը մէկ կողմէն ուղղուած էր մանր արտադրողներուն, միւս կողմէն՝ այլասերող Ֆէոդալ հասարակութեան, այսինքն՝ կարօտութեան գիմող ասպեաններուն եւ պառոններուն, նոյնիսկ՝ թագաւորին:

Սկիզբէն վաճառական գասուն եւ քաղաքային վարչութեան կողմէ գործադրուած հսկողութիւնը, տարակոյս չկար որ կը գործադրուէր որպէս քաղաքի շահուն ի նպաստ քաղաքականութիւն. որովհետեւ քաղաքը հաւաքական մարմին էր, որ գործ ունէր մէկ կողմէն գիւղական շրջաններու հետ, միւս կողմէն՝ օտար վաճառականներու հետ: Ֆէոդալական իշխանութենէն իրենց սեփական շուկային վրայ քաղաքներու շահած դիրքը հասարակօրէն ի գորու դարձեր էր արդէն. ատով անոնք իրաւունք ունէին հաւաքելու շուկայի պարտքերն ու տուրքերը, ինչպէս նաեւ վաճառականներուն տրուած առանձնաշնորհումներու փոխարժէքները. ասիկա քաղաքի եկամուտի կարեւոր մէկ աղբիւրն էր: Բայց այս հսկողութեան ուրիշ մէկ բնոյթը, որ նուազ ի գորու էր, շատ մը կողմերով աւելի հիմնական էր: Քանի որ քաղաքային իշխանութիւնը իրաւունք ունէր կանոններ գնելու թէ՛ ուղբեր առուտուր պիտի ընէին եւ երբ առուտուր պիտի ընէին, այդ կը նշանակէր որ ան, նկատելի իշխանութիւն ունէր շուկայի գործառնութեանց հաշուեկշիռը դարձնել ի նպաստ քաղաքացիներուն: Եթէ քաղաքը կրնար որոշ առուտուրներ սահմանափակել

եւ առնուազն նախապատուութիւն տալ իր սեփական քաղաքացիներուն, եթէ ան կրնար նուազագոյն գին նշանակել քաղաքացիներուն ծախել ուզած ապրանքներուն վրայ, եւ առաւելագոյն գին նշանակել անոնց զնել ուզած բաներուն վրայ, եթէ ան կրնար սեղմել գիւղական շրջաններէն եկած առուծախի աղբիւրներու ընտրութեան շրջանակը, կամ ուղղակի գիւղացիներուն հետ օտար վաճառականներու առուտուր ընելու իրաւունքը սահմանափակել, ուրեմն, քաղաքը տիրացեր էր փոխանակութեան պայմաններուն վրայ ազդելու նշանակելի ազդեցութեան: Եւ իրողութիւն է որ քաղաքները այդ կանոնաւորութիւնները հաստատե՛ր՝ եւ կ'աշխատէին զանոնք պահել միաձեւութեան մէջ:

Առաջին առիթով, հացի, գարեջուրի եւ զինիի մասին հրաման արձակուած էր, որպէսզի անոնք քաղաքացիներուն համար աժան գինով սպառեն: Քաղաքի զլխաւոր նպատակն էր արգիլել եզրիտացորենի զինի բարձրացումը: Ատիկա բոլոր կանոնաւորութեանց խարխալը կը կազմէր: Երբեմն, մաս մը իրեր, ինչպէս փայտը, կաշին, ամուխը, բուրդը, ճարպը եւ մոմերը, ենթակայ կ'ըլլային կանոնաւորման: Ո՛չ միայն անոնց առաւելագոյն գիներ կը նշանակուէր, այլև որոշ ապրանք մը հասարակօրէն կը վերապահուէր մասնաւոր փողոցի մը մէջ միայն՝ ծախուելու համար, այդ փողոցէն դուրս՝ նոյն ապրանքէն վաճառումը բոլորովին արգիլուած էր: Կանոններու մեծ մասը կը պատկանէր ապրանքներու գիներու գերզնորոշման: Օտարականներուն արգիլուած էր կանխաւ զնումներ ընել, մինչև որ քաղաքի մարդիկը լրացնէին իրենց զնումները: Ինչպէս օրինակ՝ Սաուիսէճմտընի մէջ, սեւէ հասարակ մարդ կամ օտարական չէր կրնար քաղաք մտած ռեւէ ապրանք գնել. նախ քան վաճառական գասու մէկ անգամի զնորոշումին: Լոնտոնի մտազործներու ընկերութիւնը արգիլած էր որ ուրիշ ռեւէ մտազործ Սմիթֆիլդի մէջ մասցու կենդանի գնէր առաւօտեան ժամը 10-էն առաջ: Բըրվիկի վաճառական տունը արգիլած էր, բացի ընկերութեան եղբայրներէն՝ ռեւէ մէկուն՝ գնել կաշի կամ բուրդ. նոյնպէս, արգիլած էր որ մտազործները քաղաքէն դուրս գան եւ զնեն մասցու կենդանիներ: Փարիզի մէջ արգիլուած էր որ ռեւէ մէկը զիմաւորէր քաղաքը մտնող ապրանքատէրը եւ սկսէր սակարկութեան: Քրիտտոլի մէջ, երբ բեռնատար նաւը նաւամատոյց հասնէր, քաղաքի առեւտրականները կը հաւաքուէին, որոշելու թէ ի՛նչ ընելու էր ապրանքներուն հետ եւ թէ՛ ի՛նչ ըլլալու էին ապրանքներու գիները մրցակցութիւնն կանխարգիլելու համար: Մասնաւոր սակարկութեան ժամկէտ մը կար, երբ քաղաքի վարչութիւնը հաւաքական զնման յանձնախումբ մը կ'ընտրէր քաղաքացիներուն համար. այդպէս էր կանոնը Լիվըրպուլի մէջ, ուր

բոլոր ներածուած ապրանքները կ'ենթարկուէին քաղաքապետի գնորոշման՝ նախ քան անոնց վաճառքի հանուիլը:

Երկրորդ՝ ասոնցմէ դուրս, կանոններ դրուած էր օտարականներուն համար, որոնց արգիլուած էր ուղղակի գիւղական շրջաններու մէջ գնումներ ընել. անոնք իրենց գնումները ընելու էին քաղաքի վաճառականներէն: Գալով օտար վաճառականներուն, անոնց ծախու ապրանքներու մեծ մասը պերճանքի ու փարթամութեան վերաբերեալ ապրանքներ էին, որոնք ուրիշ կերպով չէին ստացուեր. իսկ անոնք կը ծախուէին բարեկեցիկ ազատ քաղաքացիներու եւ ազնուականներու: Օտարականները տեղական ձեռագործ աշխատանքներէն կրնային գնումներ ընել միմիայն մասնաւոր արտօնութեամբ: Լոնտոնի մէջ տօնավաճառի յատուկ օր մը կար, երբ օտարականները թաղաւորի արտօնութեամբ իրենց յատկացուած անկիւնի մը մէջ ազատ էին իրենց ապրանքները վաճառքի հանելու: Այլի կ'ըսէ որ օտար առեւտրականները սիրով կ'ընդունուէին այն ատեն՝ երբ իրենց հետ կը բերէին օտար ապրանքներ, որոնց պէտք ունէին ազատ քաղաքացիները: Բայց այդ առեւտրականները յաճախ չարաչար կը գործածէին իրենց արուած ազատութիւնը խարեպատիր ձեւերով: Ատոր համար, կը տեսնենք թէ Սկոտլանդական քաղաքները աւելի խիստ օրէնքներ դրած էին օտար վաճառականներուն համար եւ զանոնք առած էին խիստ հսկողութեան տակ:

Երրորդ՝ զանազան կանոններ դրուած էր քաղաքային ձեռագործական արտադրողներու միջեւ մրցումը սահմանափակելու համար: Ֆրանսայի մէջ, օրինակ՝ օրոշ օրէնք դրուած էր որ ձեռագործական մարդիկ իրարու ձեռքէ յաճախորդ չխլեն թախանձանքի, հրապուրանքի եւ կամ աժան գինի առաջարկի միջոցներով: Լոնտոնի դանակագործներուն արգիլուած էր գործել զաղտնի տեղերու մէջ եւ ազատօրէն ծախել իրենց շինած զանակները. ասկէ զատ՝ անոնք արձանագրելու էին զանակը գնողի անունը եւ բնակարանի հասցէն: Նոյն օրէնքը դրուած էր նաեւ զինագործներուն համար: Ասիկա ցոյց կուտայ թէ երկրին մէջ զաւազրութիւններ կային եւ ազատամբութեան վախ կար: Նոյնպէս օրէնք դրուած էր որ որոշ ձեռագործ ապրանքներ քաղաքէն դուրս գանուող մարդոց երբեք չծախուի:

Բայց պէտք է ըսել թէ դրուած այս օրէնքներն ու կանոնները շատ քիչ կ'ազդէին քաղաքացիներու եւ անոնց յաճախորդներուն առուտուրին վրայ, քանի որ ո՛չ այնքան հեռուն՝ մրցակից շուկաներ կային, որոնց մէջ գիւղացին կրնար փոխանակել իր արտադրութիւնները՝ առանց կաշկանդումի:

Որոշ շրջանի մը մէջ տիրանալ շուկայի մը՝ առանց մրցակից հակառակորդ մը ունենալու վախի, այդ բացառիկ առանձնաշնոր-

հում մըն էր, որ եռանդազին կը փնտռուէր եւ նախանձազին կը պահպանուէր: Այս տեսակի տեղական մոնոպոլը հաստատուած հռչակաւոր վաճառանոցներու միակ քաղաքականութիւնն էր, որ ծնունդ կու տար քաղաքացիական պատերազմներու: Քաղաք մը, երբ զարգացուցեր էր իր վաճառականութիւնը, ամէն կերպով կ'աշխատէր տէր դառնալ իր շուրջի ձաճրանքներուն՝ որոնք կապուած էին նաւահանգիստի մը, կամ այն պողոտաներուն՝ որոնց վրայէն կ'երթեւեկէին կարաւանները: Բրիտոլ քաղաքը անդամ մը թշնամացաւ Բըրքլի լորտին հետ, որովհետեւ այս վերջինը անջատ շուկայի մը տիրացեր էր Բէտքլիֆ փողոցին մէջ: Քէնտիպրիի մէջ Արքեպիսկոպոսի Վէստկէյթի եւ Վինկհէմի շուկաները կուտանսնձոր էին զարձեռ քաղաքին ու տաճարին միջեւ: Էլիի վանականները Լէքընհէտի մէջ խոշոր շուկայ մը հաստատեր էին, որուն համար կը բողոքէր Սըլիգմոնտի Արքան, որ սպաննաց զինեալ մարդոցմով յարձակիլ եւ կործանել այդ շուկան, քանի որ անով կ'ոտնակոխուէին քրիստոնէական սկզբունքները: Ստրէտֆորտի ժողովրդական մարմինը զինեալ մարդիկ կը պահէր, դրսի առեւտրականները քաղաքէն հեռու պահելու համար: Էլի քաղաքը կը նախանձէր Քէմպրիճին, Բէթհը՝ Բրիտոլին, Լինը՝ Պոստոնին, Օքսֆորդը՝ Վինչէսթրին եւ բոլոր մնացեալները՝ Լոնտոնին: Ստոյգ է, որ միջնադարեան քաղաքները վաճառականական զծով մէկը միւսին կը նախանձէին ու կը թշնամանային եւ այդպիսով դուռ կը բացուէր արեւալի կոխներու: Անվերսի հաղուստի վաճառատունը ամբողջ մէկ դար կուր մղեց Գալէոի բուրդի վաճառատան դէմ: Հանսէ Լիկան, որ մրցակցութեան զծով թշնամացեր էր Քոփէնհակի վաճառականներուն հետ, պատճառ դարձաւ Դանիմարքայի եւ Լուրեկի միջեւ 1546-ի այն պատերազմին, որ տեւեց վեց տարի: Իսկ 1563-էն մինչեւ 1570, Լուրեկ, դաշնակցելով Դանիմարքայի հետ, կուրեցաւ Շուէտի դէմ, նարվայի հետ առեւտրական իրաւունք ստանալու համար:

Աւելի զարգացած աստիճանով քաղաքային այն մոնոպոլը, ինչ որ կարելի է որակել տեսակ մը «քաղաքային գաղութարարութիւն», իր աչքերը ուղղած էր առաւելագէս գիւղական շրջաններուն: Նոյնիսկ Անգլիոյ մէջ, շատ անգամ լսած ենք որ քաղաքները իրենց իշխանութիւնը տարածել ուզեր են շրջակայ գաւառներուն մէջ եւ ուժեղ ճնշում բանեցուցեր են գիւղերու վրայ, որպէսզի անոնք միմիայն քաղաքի շուկայի հետ գործ ունենան: Սկոտլանդական քաղաքները իրաւունք ունէին անձնատուրք գանձելու, ինչպէս նաեւ որոշ առեւտրականներու եւ ձեռագործ վարպետներու առանձնաշնորհումները պարտադիր դարձնելու լայն շրջանակներու մէջ: Քաղաքի մուտքի դռնէն ներս մտնելու եւ կամուրջներէն անցնելու հա-

մար որոշուած տուրքերը ամէն տեղ նոյն խտութեամբ կը դան-
 ձուէին: Եւրոպական ցամաքամասին վրայ հարուստ քաղաքային հան-
 րապետութիւնները զիւզական բաժանմունքներուն վրայ իրենց տի-
 րապետութիւնը եւ շահագործման ձեւը աւելի գարգացուցեր էին: Իտալական կոմունաները, գերմանական կայսերական քաղաքները եւ
 Հոլանտական ու Շուէտական աւանները այս կերպով մեծնալով դար-
 ձան փոքր իշխանապետութիւններ: Իւլմ եւ Ֆլորէնս, օրինակի հա-
 մար, բռնագատեցին որ շրջակայքի զիւզացիները իրենց արջառ-
 ները ուրիշ տեղ չտանին, այլ բերեն քաղաք՝ որոշեալ զինով ծախուե-
 լու համար: Քոլոյն քաղաքը 12-րդ դարուն, արգելիչ օրէնք դրաւ որ
 փլամանկեան վաճառականները վերին Հոննոս չմտնեն: Վենետիկը,
 13-րդ դարուն, արգիլեց որ Բակունան Ատրիականի հիւսիսային
 կողմի քաղաքներուն հետ գործ ունենայ, չնայած որ ան ուսեստե-
 ղէն կը հայթայթէր Վենետիկի: Ճէնովա, արգելած էր որ Ֆրան-
 սացի վաճառականները ձէնովայէն անդին՝ դէպի հարաւ առեւտրա-
 կան յարաբերութիւն ունենան: 12-րդ դարուն, Փիզա եւ Լուկա,
 միմեանց հետ սուր պայքարի մէջ էին, որովհետեւ այս վերջինը
 կ'ուզէր Փիզայի եւ հիւսիսի միջեւ երկարող ճամբուն վրայ վաճա-
 ոանոց մը հիմնել: Վիէննա, այնքան ուժեղ էր, որ կրցեր էր արգի-
 լել, Սուապիայի, Բիլլընսպըրկի եւ Փասոյի վաճառականները, ո-
 ռոնք այլեւս չէին կրնար իրենց ապրանքներով Դանուբէն վար ճամ-
 րորդել դէպի Հունգարիա, այլ միմիայն պէտք է բերէին Վիէննա՝
 եւ հոն ծախէին որոշուած զինով: Բուսթովսկի կ'ըսէ թէ Քրաքով
 քաղաքը 14-րդ դարուն, ինչպիսի միջոցներով կ'ուզէր արգիլել թո-
 րունի վաճառականներու առուտուրը Հունգարիոյ հետ, այդ իրա-
 ւունքը վերապահելով միայն իրեն. իսկ միւս կողմէն՝ զոցեր էր Ա-
 բրեւելքի ճամբան, Բրէսլավէն եկող վաճառականներու առջև, մինչ
 Լիով, կը ջանար մոնոպոլ ընել դէպի Արեւելք «Թաթար երկիրնե-
 րու» առուտուրը: Նովկորոտի վաճառականները արգիլել էին Հան-
 սէ Լիկայի վաճառականները՝ առուտուր ընել իրենց քաղաքէն ան-
 դին եւ իրենք ստանձնել էին միջնորդի դեր՝ օտար եւ ներքին դա-
 ւառներու վաճառականներուն միջեւ: Նովկորոտի եւ Մոսկուայի
 պայքարը վերջացաւ առաջինին պարտութեամբ, որով Մոսկուան
 տիրացաւ զավոլոյի երկրի մոնոպոլին, այսինքն՝ հիւսիսային արե-
 ւելքէն դէպի Ուրալ եւ անկէ անդին տարածուող երկրամասը, որ
 հարուստ էր իր մուշտակներով ու մետաղներով: Ի վերջոյ, ռուս
 վաճառականներու ընկերակցութիւնները 17-րդ դարուն, այնքան
 ուժեղացան որ կրցան արգելք հանդիսանալ անգլիացի վաճառական-
 ներու առուտուր ընելու Արխանկէյէն հարաւ, իսկ միւս կողմէն՝
 արգելք եղան պարսիկ վաճառականներուն՝ անցնիլ Աստրախանէն

հիւսիս: Այսպիսով անոնք հիւսիսային Եւրոպայի եւ Պարսկաստանի
 միջեւ ընթացիկ առուտուրի մոնոպոլը ստանձնեցին եւ յաջողեցան
 պահել ռուսական արտադրութիւններու գնորտման իրաւունքը 50-էն
 100 տոկոսով, բան մը որ աւելի կը հարստացնէր զանոնք: Շուէտի
 վաճառականները մոնոպոլ ըրին երկաթ ձոյլերու առուտուրը եւ ար-
 գիլեցին օտար գնորդներուն՝ մտնել երկաթ արտադրող շրջանները:
 Հանսէնեան Լիկան աշխատեցաւ կտրել ներքամաքային քաղաքներու
 կապերը Պալթիկի հետ եւ իրեն պահել անոնց շուկաները:

2

Մեր պարզած իրողութիւնները ցոյց կու տան որ քաղաքներու
 այս մրցակցութիւնը կապուած չէր փառասիրական քաղաքականու-
 թեան հետ, ո՛չ ալ քաղաքի հաւաքական շահուն հետ. անոր մղիչ
 ուժը հարուստ վաճառականներու դասակարգային շահն էր, վաճա-
 ոականներ՝ որոնք քաղաքային կառավարութիւնը առած էին իրենց
 բացարձակ հսկողութեան տակ: Շուէտի հսկողութեան սխտէմը եւ
 քաղաքային մոնոպոլը՝ զոր մենք նշեցինք, մասնաւոր առաւելու-
 թիւն մը կու տար կազմակերպուած վաճառականներուն, որոնց շա-
 հը կը բաղկանար երկու տեսակի զինեւէն. մէկը այն զինն էր, զոր
 իրենք կը վճարէին զիւզացիին կամ ձեռագործ արհեստաւորին, ա-
 նոնցմէ պէտք եղած ապրանքը գնելու առին. միւսը այն զինն էր,
 որով անոնք նոյն ապրանքը պիտի վաճառէին քաղաքային կամ օտար
 յաճախորդին. ուրիշ խօսքով՝ իրենց կանխիկով գնումին ու կան-
 խիկով վաճառումին միջեւ եղած տարբերութիւնն էր իրենց շահը:
 Եւ պէտք է ըսել թէ այդ տարբերութիւնը բաւական մեծ էր, երբեմն
 60 տոկոսով, երբեմն՝ 100 տոկոսով: Այստեղ, ուր ձեռագործական
 արհեստաւորներու կանոնները — չմոռնանք նշել որ անոնք ալ դա-
 սախումբերով (Gild) կազմակերպուած էին — տեղացի գնորդ մե-
 ծաքանակ վաճառականներու շահերուն հակառակ էին, այս վերջին-
 ները իրենց աղղեցութիւնը կը գործադրէին չէզաբացնելու սեղմիչ
 կանոնները: Նոյնպէս հոն, ուր արգելքները ուղղուած էին իրենց
 նպաստող օտարներուն դէմ, որով կը փոքրանար իրենց գործարկու-
 թեան շրջանակը, անոնք այս անգամ դաշնագրութիւններ կը կնքէին
 օտար քաղաքներու վաճառականներուն հետ, փոխադարձ շահերու
 պաշտպանութեան համար: Այդպէս էր, օրինակ՝ Հանսէնեան Լիկա-
 յի եւ փլամանկեան քաղաքներու միջեւ կնքուած դաշնագրութիւնը:
 Արդարեւ, վաճառականական կապիտալի աճումը երբ այդ առախ-
 ճանին հասեր էր, արտածումով զբաղող մեծաքանակ ձեւի վաճա-

ուականներու հաւաքական ջանքերը կ'ուղղուէին քաղաքային մոնոպոլիը տկարացնելու նպատակին. մոնոպոլի այն գրութիւնը, որ իր մանկական շրջանէն սկսած՝ կը ջանար զօրեղացնել միջ-քաղաքային կազմակերպութիւնները, ի մասնաւորի՝ քաղաքային ձեռագործական արհեստաւորներու դասախումբը — կիլիտը: Այդ բանը պատահեցաւ, օրինակ՝ փլամինկեան քաղաքներու մէջ, որ պատճառ եղաւ քաղաքի կառավարութեան եւ Հանսէնեան Լիկայի միջեւ մղուած պատերազմին, որովհետեւ այս վերջինը ուղեղծով կը գործէր եւ կ'աշխատէր գիւղական արդիւնաբերութիւնը ճարտարարուեստականի փոխել եւ ատանկով շնորհնկալի գրութեան ենթարկել քաղաքային ձեռագործ արհեստաւորներու դասախումբը:

Այստեղ, պէտք է ըսել թէ՛ քաղաքային ձեռագործ արհեստաւորներու այս դասախումբը, բացի մեծաքանակ վաճառականներէն ուրիշ հակառակորդ մըն ալ ունէր, իր ծոցէն ծնած հակառակորդ մը. այդ ալ՝ առեւտրական շահերու շուրջ կազմակերպուած ընկերութիւնն էր, որ կը բաղկանար երբեմնի բարեկեցիկ արհեստաւորներէ. անոնք, անջատուելով արտադրողական ճակատէն, հիմներ էին բացառապէս տեւտրական կազմակերպութիւններ, որոնք շուտով տիրող դիրքը ապահովեցին քաղաքային կառավարութեան մէջ եւ սկսան իրենց քաղաքական իշխանութիւնը գործածել միմիայն իրենց շահերուն ծառայեցնելու նպատակին: Եւրոպական ցամաքամասին վրայ 1200 թուականին, շատ մը տեղերու մէջ մենք կը տեսնենք որ այս երեւոյթը դարձեր էր տիրական: Հօլանտայի մէջ խոշոր քաղաքներու դասախումբերը (կիլտերը) յարգարած ըլլալով իրենց դիրքը եկեղեցւոյ եւ ազնուականութեան դէմ, մօտիկ, ընկերակցական կապ հաստատել էին հարուստ վաճառականներու հետ եւ կ'աշխատէին մոնոպոլ ընել մեծաքանակ առուտուրը. իսկ իրենց ընկերութեան անդամակցութեան մուտքը նշանակել էին այնպիսի խոշոր գումար մը, զոր հասարակ արհեստաւոր մը չէր կրնար վճարել: Նոյն ատեն, պարզ էր որ նոյն քաղաքներու քաղաքական հսկողութիւնը կ'անցնէր հարուստներու ձեռքը, որոնք վերատեսուցեան կ'ենթարկէին ձեռագործ արհեստաւորներու գործերը, կը կանոնադրէին աշխատավարձերը եւ կը հսկէին քաղաքի շուկաներու գործառնութեանց: Ասանկով փոխուեցաւ նաեւ վաճառականական եւ մանուֆակտուրայի այս կեդրոններու կառավարութեան ձեւը. դեմոկրատականէն անցաւ փարթամավարութեան (plutocracy), յետոյ՝ սակաւապետութեան (oligarchy): Նոյնպէս, հիւսիսային Իտալիոյ քաղաքներուն մէջ իշխանութիւնը անցած էր (հասարակօրէն դաշնակից տեղական ազնուականութեան հետ) փարթամավարութեան՝ հասկնալի անունով՝ հարստապետութեան ձեռքին մէջ: Սոյն իշխող

դասակարգը, որ կը հսկէր Լոմբարտիի, Թոսկանիի եւ Վենետիկի քաղաքային հանրապետութեանց վրայ, իր հարստութեան կաթը կը ծծէր Արեւելքի հետ արտածման առուտուրէն եւ Ալպիաններէն անդին՝ Հիւսիսային Եւրոպայի արժէքաւոր հագուստեղէնի վաճառականութեան: Պապական Փարմային եկամուտները այս հարուստ քաղաքացիներուն պատահութիւն կու տային շահաբեր ձեռնարկութեանց հետեւելու: Կարգ մը քաղաքներու մէջ, ինչպէս Յլորէնսի մէջ հիմնուեցան պանքաներ եւ արտածումով պարապող վաճառականներու ընկերութիւններ, որոնք 13-րդ դարու կիսուն, քաղաքի կառավարութիւնը իրենց ձեռքն առին: Արեւելեան գերման քաղաքներու մէջ 14-րդ դարուն, թաղապետները կ'ընտրուէին առաջնակարգ վաճառականներու ընտանիքներէն. հասարակ ժողովուրդը քաղաքի կառավարութեան մէջ բաժին չունէր: Փարիզի մէջ տիրապետող դիրքը գրաւողներն էին վեց մեծահարուստ ընտանիքներ:

Անգլիոյ մէջ քաղաքներու այս ձեւի զարգացումը յառաջացաւ 14-րդ դարուն, երբ փերեզակները հարստացան եւ քաղաքական հարստապետութեան դիրքին տիրացան: Նախապէս հոն քաղաքային դեմոկրատի կար, որ չքայաւ 14րդ դարուն: Նոյնպէս քաղաքացիները, առաւել կամ նուազ չափով առուտուրի առանձնաշնորման իրաւունք ունէին, որ յետոյ՝ ստնակոխուեցաւ այս կամ այն ձեւերով: Կարգ մը պարագաներու տակ, վաճառական դասակարգը, որ բաղկացած էր ազատ քաղաքացիներէ եւ հարստացած արհեստաւորներէ, միացեալ կազմակերպութիւն մը հիմնեցին, եւ ձեռագործ արհեստաւորներուն արգիլեցին մեծաքանակ առուտուր ընել: Նուրասըլի մէջ վաճառականները արգիլած էին որ փերեզակները փողոցներուն մէջ ապրանք ծախէին: Վինչէստրի, Օքսֆորտի, Բիվլըրիի, Մալպորոյի եւ այլ քաղաքներու մէջ ազատ մարդոցմէն զատ ոչ ոք կրնար առուծախով գրադիլ: Այս ատենները կազմուեցան նոր վաճառական դասակարգեր, անջատ ձեռական արհեստաւորներէն, որոնք թագաւորական հրովարտակով տիրացեր էին մեծաքանակ առուտուրի առանձնաշնորհեալ իրաւունքին: Այս մարմիններու ձեռքին կեդրոնացած առեւտրական իրաւունքը նպատակ ունէր կաշկանդել ձեռական արհեստաւորին՝ իր արտադրութիւնը ծախելու ազատութիւնը. ան պարտադրուած էր իր արտադրութիւնը ծախելու յատկապէս որոշեալ վաճառականի մը, ոչ թէ օտար մէկ վաճառականին: Որոշ պարագաներու տակ, հին մէկ դասախումբը, որ միատարր էր, բաժնուեցաւ մասնագիտարկու ընկերութեանց: Օրինակի համար, Պէնսիլվերի մէջ, երեք ճիւղերով ընկերութիւն մը կազմուած էր կերպասավաճառներէ, ասուելվաճառներէ եւ կաշկավաճառներէ: Հասարակօրէն բաժանում կար նաեւ զանազան դասախումբերու (կիլտերու) միջեւ,

ըլլան անոնք արհեստաւորներու կամ վաճառականներու դասախումբեր, առաջինները ունէին արտադրութեան ճիւղի որոշ մենաշնորհ, վերջինները՝ առուտուրի: Լոնտոնի մէջ 12 առաջնակարգ ընկերութիւններ կային, որոնք կազմուած էին համընկերակցական հիման վրայ: Անոնցմէ վեցը բացառապէս վաճառականներ էին, միւս վեցին մէջ կային կերպասավաճառներ, նպարավաճառներ եւ մանրավաճառներ: Բայց նոյնիսկ անոնք որ իրենց մէջ առած էին ձեռագործ արհեստաւորներ՝ չուտով ինկան աւելի հարուստ առեւտրական տարրերու իշխանութեան տակ: Այս ձեւի համընկերակցութիւնը պատճառեղաւ ապրանքներու գիներու բարձրացումին, որուն համար Լոնտոնի քաղաքացիները սկսան բողոքել: Եղուարդ Գ.ի օրով թամբադործները մէկ կողմէն, ատաղձագործները, ներկարարներն ու սանձագործները միւս կողմէն անհաշտ թշնամիները զարձան իբարու դէմ: Թամբագործները կը պահանջէին որ այս վերջինները՝ ներկարարներն ու սանձագործները իրենց արտադրութիւնները ուրիշ չի ծախեն, այլ իրենք ստանձնելու էին անոնց վաճառման մենաշնորհը: Երբ այդ արհեստաւորները մերժեցին, թամբագործները գէնքերով յարձակեցան անոնց վրայ:

Աւելի յատկանշական է հիւտողներու պարագան, ան ալ ո՛չ միայն Լոնտոնի, այլեւ ուրիշ քաղաքներու՝ ինչպէս Վինչեստրի, Օքսֆորտի, Մալլուրոյի եւ Բեվերլիի մէջ: Հիւտողները նախապէս պաշտպանուած էին իրենց իրաւունքի սահմաններուն մէջ, բայց 14-րդ դարուն, անոնք ինկան ստորադաս վիճակի մէջ եւ վաճառականները եղան անոնց աշխատանքը շահագործող գործատէրերը:

Այս բոլորը նկատի ունենալով կը տեսնենք թէ միջնադարեան Ֆէոդալական հասարակարգը իր մէջ ունէր իր գոյութիւնը բացասող եւ հետզհետէ զարգացող ընկերային հակամարտ ուժերու բաղադրութիւն անխուսափելիութիւնը: Մէկ կողմը կեցեր էր հողատէր ազնուականութիւնը, որուն դաշնակից էր խոշոր ֆէոդալական եկեղեցին, անոր դէմ կեցեր էր վաճառական դասակարգը, իրեն դաշնակից ունենալով հարուստ-բրամատէր դասակարգը: Ասոնց դիմաց կանգներ էին քաղաքական հեղինակութենէ զրկուած արհեստաւորները, անաղատ քաղաքացիները, արհեստաւորներու աշկերանները, նոյնպէս հողին կապուած իրաւագուրկ ճորտերու բաղմութիւնը: Ուշագործութեան առնելու է նաեւ հարուստ ձեռագործ արհեստաւորներու դասախումբերը, որոնց միջև յաճախակի տեղի կ'ունենար կատաղի մրցում ու պատերազմ: Ասոնց հետ նկատի առնելու է քաղաքական պաշտօնեաները ու անոնց քաղաքական հեղինակութիւնը: Ասոնց բոլորին մէջ մեծամասնութիւն կազմողներն էին ստորադասուած արհեստաւորները, մշակները, անաղատ քաղաքացիներն ու

ճորտերը: Ուրեմն, հասարակութեան մեծամասնութիւնը, կիսով չափով իրաւագուրկ՝ կամ ամբողջապէս իրաւագուրկ դասակարգին կը պատկանէր: Ընկերային այս հակամարտ ուժերն էին, որ պատրաստեցին ծնունդը նոր դասակարգին՝ բուրժուազիային:

Մինչ տեսակ մը մրցում կար առանձնաշնորհայններու մօտ, երբ կապիտալը տակաւ կը կուտակուէր ձեռագործ արհեստաւորներու որոշ դասախումբերու քով, Անգլիոյ մէջ առեւտրական կապիտալի դիրքը ատանկով չէր տկարանար եւ հարստութեան աճումը չէր դանդաղեր: Շուկայի աճման հետ, երբ մասնաւորապէս կը զարգանար օտար գիծի առուտուրը, առանձնաշնորհայններու շարքը կը ստուարանար, թէև ասոնց չափազանց խճողումի: Ներքնապէս շուկան կ'ընդարձակուէր, ո՛չ միայն քաղաքներու աճումով եւ քաղաքային շուկաներու բազմացումով, այլ նաեւ աւատահողերու վրայ գրամական տնտեսութեան ներխուժումով, որուն կ'ընկերանար վարձու աշխատանքի աճը եւ հողերու վարձագրումը: Այսու հանդերձ օտար առուտուրի մէջ էր որ աւելի մեծ պատեհութիւն կար վաճառականներու արագ յառաջդիմութեան եւ այդ մարզին վրայ էր որ հարստութիւն կը կուտակուէր: Ատեն մը օտար վաճառականները գրաւեցին ասպարէզը. անոնց դիրքը աւելի ուժեղացաւ անգլիական թագաւորական մասնաւոր առանձնաշնորհման հրովարտակներով: Ասոնք փրամիսկեան եւ հանսէնեան առաջին վաճառականներն էին եւ ի վերջոյ՝ խառնացիները, որոնք բուրգը ուղղակի կը դնէին վանքերէն ու հողատէրերէն, իսկ յաճախ ալ՝ կանխավճարումով կ'ապահովէին իրենց ապագայ գնումները: Անգլիական վաճառականները այդ շրջանին, նախքան հարուստ շահարածիներէն օգտուելը, պէտք է կտրատէին օտար վաճառականներու տրուած առանձնաշնորհումները: Բայց ատիկա այնքան դիւրին գործ չէր, քանի որ Անգլիոյ թագաւորը ո՛չ միայն պարտական էր օտար վաճառականներուն, այլև նոր պարտքեր ընելու հարկադրանքի տակ էր: Օտար բորվորէրներու արտօնեալ դիրքը կարելի էր խախտել, երբ անգլիական վաճառականները ի վիճակի չէին իրենց թագաւորը ապատելու դիպուած պարտքերէն եւ չէին կրնար հոգալ պատերազմներու ծախքերը: Երեւակայեցէ՛ք, 1367-ին Անգլիոյ թագուհին Անվերս կ'երթար, 30 հազար լիբր ստերլինի փոխառութիւն մը կնքելու համար: Ասիկ կարելի է եզրակացնել թէ թագաւորական տունը ինչպիսի տնտեսական տագնապի մասնուած էր:

Պարլամենտի մէջ գաւառներու եւ աւաններու ներկայացուցիչները պահանջ դրին որ թագաւորը օտար վաճառականներու ապրանքներու վրայ մաքուր բարձրացնէ եւ անոնց ներածումը ենթարկէ սեղմումի: Եղուարդ Բ-ի եւ Գ-ի դահակալութեան ատեն Անգլիոյ արտաքին քաղաքականութիւնը փոխուեցաւ, որովհետեւ անգլիացի վաճառականները բաւական հարստացեր՝ ու կ'օգնէին թագաւորական տան: Եղուարդ Բ. արդիւնց որ բացի ազնուականներէն ու եկեղեցւոյ մեծերէն, օտար վաճառականներու ներածած հազուստները չգործածեն: Եղուարդ Գ. ազատ թողուց բուրդի արտածումը եւ արդիւնց օտար հազուստեղէնի ներածումը: 1358-ին, նախ քան Բրուկէս վաճառատան վերահաստատումը, Թոմաս ա Բիքէրի Եղբայրութիւն անունով մարմին մը կազմուեցաւ, Լոնտոնի կերպասավաճառներու մէկ ճիւղը, որ յաջողեցաւ Ֆլանտրբի կոմսէն մենաշնորհ ստանալ եւ Անվէրսի մէջ պահեստանոց մը բանալ անգլիական հազուստներու համար: Անիկա մրցման ուժղին հրաւէր մըն էր նետուած Բըրկէսի վաճառանոցի տէրերու երեսին, մրցում մը, որ պատերազմի դուռ կը բանար անգլիացի ձեռնարկուներու եւ Հանսէ Լիկայի միջեւ: Անգլիացի հարուստ վաճառականները ծովեղբերայ քաղաքներու մէջ՝ ներառեալ Լոնտոնը, Եորքը, Նորվիչը, Էքսէտըրը եւ Հըրը համընկերակցական մարմին մը հաստատեցին, որ կ'ապահովէր հազուստի առուտուրի մենատիրութիւնը Անգլիոյ, Հոլանտայի եւ Ֆլանտրբի միջեւ: Ասանկով պայքարը սուր կերպարանք առաւ Հանսէնեան Լիկայի եւ անգլիացի վաճառականներու միջեւ: Անգլիական նաւերը յարձակման ենթարկուեցան եւ ոմանք՝ գրաւուեցան, անգլիացիք դիմեցին փոխ վրէժի: Այս շրջանին զարգացաւ անգլիական ծովահէնութիւնը, որ սարսափ տարածեց չորս կողմ: ԺՁ. դարուն վերջերը, Դանցիկի մէջ անգլիացի վաճառականներուն շարժումն մէջ միայն մէկ օր թոյլատրուած էր առուտուրով գրաղիլ, բայց անոնք չէին կըրնար առուտուր ընել Փրուսիոյ սեւէ մէկ քաղաքին մէջ: Անգլիացի վաճառականներուն հետ աւելի վատ կը վերաբերուէին ամենուրեք, քան ուրիշ օտար վաճառականներու հետ, բացառելով հրեաները: Բայց 15-րդ եւ 16-րդ դարերուն, երբ Անգլիոյ հազուստի վաճառականները հարստացան եւ թագաւորական տունը սկսան հողատարել գրամական փոխատուութեամբ եւ այլ միջոցներով, անոնց ազդեցութիւնը աւելի ուժեղացաւ եւ օտար վաճառականներու ազդեցութիւնը իսպառ վերջացաւ: Բրիտանացի վաճառականները 16-րդ դարու կիսուն, յանգուզն եղան անցնելով հրախային ծովէն եւ մըտնելու Միջերկրականը եւ հոն մկրտելու հինգ կամ վեց նոր ընկերութիւններ, իւրաքանչիւրը նոր շրջանի մը մէջ գործելու առանձնաշնորհումով: 1553-ին, կազմուեցաւ Ռուսիա ընկերութիւնը, որ

երկու տարի վերջ մենաշնորհի հրովարտակ ընդունեց: Ասիկա առաջին ընկերութիւնն էր, որուն մէջ մտեր էին ապրանքատէրերն ու նաւատէրերը: Այս ընկերութեան անգամները, մեծ մասով անգլիացի վաճառականներ էին: Նոյն տարին, երբ ընկերութիւնը անգլիական թագաւորական արածութիւն ստացաւ առանձնաշնորհումներու յատուկ հրովարտակով, իր ներկայացուցիչ Ռիչըրտ Չէնսէլլի միջոցով յաջողեցաւ բանակցիլ Իվան Դ. ցարին հետ եւ ստանալ ձերմակ Ծովով Մոսկուայի հետ առուտուր ընելու իրաւունքը եւ հաստատեց ամբարանոցներ Սոլմոկորի եւ Վոլոկոտայի մէջ: 1557-ին, ձէնքինսըն, ընկերութեան մէկ գործակալը, ճամբորդեց մինչեւ Պարսկաստան եւ Բուխարա եւ 1567-ին, ընկերութիւնը առեւտրական իրաւունք ստացաւ Ռուսաստանի վրայով Քազանի եւ Աստրախանի մէջէն անցնիլ Պարսկաստան եւ հոն հաստատել առեւտրական տուներ: Նոյն տարին կազմուեցաւ ափրիկեան ընկերութիւնը, որ առանց խղճահարութեան՝ սկսաւ գիրնալ Ափրիկէի սեւամորթներու միսովն ու արիւնովը: Նոր գտնուած աշխարհին՝ Ամերիկայի համար գերիներ պէտք էին: 1578-ին, կազմուեցաւ Իսպլէնա ընկերութիւնը, որ առուտուրի առանձնաշնորհման իրաւունք ստացաւ Նորվեկիոյ, Շուէտի, Լեհաստանի, Լիզվանիայի, Փրուսիոյ եւ Պոմերանիայի հետ, Օտէր գետէն դէպի արեւելք՝ մինչեւ Տանցիկ, Էլբինկ եւ Քոնիկսպըրկ, ինչպէս նաեւ Քոնիկնհալըն եւ Ֆինլանտա: Իր կազմութենէն անմիջապէս վերջ՝ ան յաջողեցաւ Հանսէնեան Լիկայի մոնոպոլի պարիսպը ձեղքել եւ ապահովել ուղղակի էլբինկի վաճառատուներու հետ կապուելու իրաւունքը: Իսլէնա ընկերութեան կազմութեան նախորդ տարին, անգլիացի բախտախնդիր վաճառականները կազմեցին Սպանիական ընկերութիւնը, մոնոպոլ ընելով Սպանիոյ եւ Փորթուգալի հետ գինիի, իւղի եւ պտուղի շահաւէտ առուտուրը: Նոյն տարին կազմուեցաւ նաեւ Երբական ընկերութիւնը վենետիկեան ընկերութեան հետ, որուն գլխաւոր բաժնետէրն էր Էլիզաբէթ Թագուհին: 1600-ին կազմուեցաւ Արեւելեան Հնդկական Ընկերութիւնը, որ իր առանձնաշնորհումներու հրովարտակն ընդունեց ձէյմըս Ա.էն 1605-ին: Անգլիացի վաճառականները այս քոյր ընկերութեանց մէջ սենէին իրենց ազդեցիկ ներկայացուցիչները, որոնք իրենց ցուցմունքները կը ստանային Լոնտոնի կեղրոնէն, որովհետեւ Լոնտոնը անոնց գանկն էր: Այժմ թուրքիկ ակնարկ մը նետենք արհեստաւորական կիլոտրուն վրայ: Արհեստաւորական դասախումբերը (կիլոտրը) սկիզբէն, ուղղակի հողատէր ազնուականներու ծառայող համարեայ թէ ստրկական դրութեան տակ էին: Վաճառականութեան զարգացումով անոնք կիսանկախ միճակի տիրացան, բայց դէշն այն էր որ անոնք մէկ կողմէն վաճառականներու անխիղճ շահագործման ենթակայ

էին, միւս կողմէն՝ ազնուականներու ճնշումին: Յամենայն դէպս՝ այս արհեստաւոր խումբերն ալ իրենց շահերու պաշտպանութեան համար օրէնքներ ու կանոններ սահմանեցին իրենց լուծը թեթեցնելու կանխահոգութեամբ: Անոնց թոյլ կողմը այն էր, որ արհեստակցական միասնական ճակատ չէին կազմեր, այլ կը մնային անջատ-անջատ կազմակերպուած խմբաւորումներով եւ յաճախ ալ՝ կռուի կը բռնուէին իրարու դէմ: Ամէն մէկ դասախումբ խիստ կանոններ հաստատեր էր իր աշկերտներու հսկողութեան համար, մասնաւորապէս անոնց թիւը նուազ չափանիշի վրայ պահելու նպատակով: Այդ իսկ պատճառով մէկը, որ աշկերտ ըլլալու էր, վճարելու էր որոշ գումար մը. եւ 14-րդ ու 15-րդ դարերուն, անոնք պահանջուած այդ գումարը բարձրացուցին: Չեռարուեստի տիրոջ տղան ժառանգականութեան օրէնքով կը յաջողէր իր հօրը: Ժամանակի ընթացքին, գրեթէ մը համար դժուար էր մտնել արհեստաւորներու դասախումբին մէջ, եթէ ան ըստ բաւականին հարուստ չէր, որ կարենար վճարել մուտքի գումարը: Այս այլամերժ կանոնը ընդհանրացած էր Եւրոպայի ցամաքամասի բոլոր խոշոր քաղաքներուն մէջ շատ աւելի՝ քան թէ Անգլիոյ մէջ, ուր իւրաքանչիւր քաղաքի ճարտարարուեստ՝ անուամբ էր ժառանգական օղակներով շարուած վարպետներու ընկերակցութեան ձեռքին մէջ: Անգլիական ձեռագործական արհեստաւորներու դասախումբերը կանուխէն ստացեր էին գործարկելու վերջի իրաւասութիւնը, որպէսզի չձգէին որ ոեւէ մէկը մտնէր ճարտարարուեստի մէջ, երբ ան չէր ապահոված քաղաքացիի ազատութիւնը, եւ ոեւէ մէկը չէր կրնար ապահովել այդ ազատութիւնը, բացի այն պարագայէն՝ երբ ան կը ստանար դասախումբի վեց հոշակաւոր անդամներու յանձնարարականը: Աչլի կ'ըսէ որ 14-րդ դարու կիսուն, ընդհանուր տրամադրութիւն մը կար պակսեցնելու նորեկներու մուտքը: 1321-ին, Լոնտոնի հիւսողները կ'ամբաստանուէին այն բանին համար, որ անոնք անբնական վճարողին կը պահանջէին իրենց դասախումբին մէջ մտնել ուղղներէն. նոյնիսկ երկար ատեն աշկերտութիւն ընողներուն՝ անոնք արգիլած էին անդամակցութիւնը: Տիկին Կրին, այնքան յառաջ կ'երթայ որ կ'ըսէ թէ երբ մէկը երկար տարիներով իր աշկերտական շրջանը կ'աւարտէր, զայն կը ղնէին վարձու աշխատաւորներու շարքին: Լոնտոնի հիւսողները 15-րդ դարուն արդիւիշ օրէնք գրին, որ ոեւէ մէկը ոստայնանկի գործիք՝ հօր, չէր կրնար վարձել. ասով խեղճ արհեստաւոր մը իր սեփական գործը չէր կրնար ունենալ: Եւրոպական ցամաքամասին վրայ արհեստաւորներու դասատոհմի ազատութիւնը ժառանգական էր, որով գրեթէ անկարելի էր հոն նորերու մուտքը: Երբեմն նոյնիսկ օրէնք գրուած էր որ ձեռագործական արհեստաւորները փոխառութեամբ

իրենց արհեստի ճիւղը անկախօրէն շարունակելու իրաւունք չէին կարող ունենալ. ասով արդէն անհնարին կը դառնար որ փոքրիկ գրամազուլու ունեցող մը իր ոտքերուն տակ հող մը ապահովէր: Գերման քաղաքներու մէջ արհեստաւոր մը հինգ տարի իր գործատիրոջ հաշտոյն՝ որպէս գործակալ զանազան տեղեր ճամբորդելու եւ շահաւէտ աղբիւրներ ապահովելու էր, որպէսզի իրաւունք ունենար վարպետ տիրոջը անելու. իսկ այդ տիրոջը անելու ատենն ալ՝ բազմաժախ կոչունք մը սարքելու էր, պաշտօնական հանդիսութիւն մը... Ֆրանսայի մէջ 1581-ին, օրէնք անցաւ որ վարպետ տիրոջը վաստակելու համար, մէկը պէտք էր ամբողջ տարի մը աշխատէր ամենակատարեալ գլուխ գործոց բան մը արտադրելու համար եւ յետոյ՝ պարտաւոր էր նոյն արհեստով գրադողները պատուէր արտակարգ կոչունքով մը: Իսկ ոեւէ խեղճուկ արհեստաւոր, ի հարկէ, այդպիսի ծանր պայմաններով յաջողութիւն չէր կրնար ապահովել: Փարիզի մէջ առ հասարակ ընդհանուր ձգտումը աշկերտներու թիւը խստագոյն կանոններով պակսեցնել էր: Ընդհանրապէս աշկերտները երկու դասերու բաժնուած էին. ընտրանի աշկերտներ, որոնք վարպետ մեծաւորներու զաւակներ էին, եւ զրեցի՝ օտար աշկերտներ, ասոնցմէ ամէն մէկ գործատեղիի մէջ միայն մէկ հաս կը պահուէր: Արդէն ըսինք որ այս վերջին դասու աշկերտներու ծնողքը, որոշ գումար մը վճարելու էին որպէսզի իրենց զաւակը աշկերտութեան ընդունուէր: Օտար աշկերտ մը արտասովոր զոհողութիւն եւ գործունէութիւն ցոյց տալու էր վարպետ դառնալու համար, իսկ վարպետ դառնալէն յետոյ՝ երդում ընելու էր որ իրեն համար առանձին գործատեղի պիտի բանար:

Իրերու այս դրութեան որպէս հետեւանք՝ կը տեսնենք որ գոյութիւն ունեցող արհեստաւորական տոհմերու մարդիկը կը պարբայէին նորեկներու մրցումը եւ ասով պատենութիւն կը ստեղծէին իրենց բարգաւաճումին եւ չափաւոր կապիտալի մը կուտակումին: Այսպէս քաղաքային հասարակութեան վարին խաւերուն մէջ կը կազմուէր ու կ'աճէր վարձու ծառայներու եւ արհեստաւորներու թիւը. մարդիկ, որոնք ո'չ հեղինակութեան իրաւունք ունէին, ոչ ալ պաշտպանութիւն, այլ միայն իրենց աշխատութեամբ ծախելու հարկադրանք: Ընդհակառակը՝ թէ կիլտերը եւ թէ քաղաքային օրէնսդրութիւնը զբաղական օրէնքներ կը սահմանէին անպաշտպան արհեստաւորներուն համար, զանոնք ղնելով ամենազածան համակերպութեան մէջ եւ նոյնիսկ՝ արգիլելով որ անոնք իրենց դասակարգային շահուն համար կազմակերպչական հաւաքոյթ ունենան: Վարձու ծառայներու եւ արհեստաւորներու այս ճնշուած դասակարգի գոյութիւնը պատճառ կ'ըլլար որ շահու խողովակով տեղի ունենար կապիտալի կուտակում,

մասնաւորապէս առեւտրական կապիտալի կուտակում: Ձեռագործական արտադրութեանց տէրերը կը շահագործէին ծառաները, աշկերտները եւ վարձու աշխատաւորները, իսկ վաճառականները կը շահագործէին ձեռագործական արտադրութեանց տէրերը: Առաջիններու շահը յարաբերական էր, որովհետեւ ան կախում ունէր ո՛չ միայն արտադրողներու իրաւունքի կրճատումէն այլեւ վաճառականի քմահաճոյքէն, այսինքն՝ շուկայի վրայ սպառման պահանջէն: Բայց վաճառականներու շահը համեմատաբար որոշ էր, թէեւ կարելի էր ըսել թէ ան եւս 14-րդ եւ 15-րդ դարուն՝ յարաբերական էր, որովհետեւ այդ շահը կախում ունէր ընդհանուր ապրուստի չափանիշէն: Տասնվեցերորդ դարուն եւ հաւաքականօրէն տասնօթերորդ դարու կիսուն, սակայն իրերը փոխուեցան, երբ աշխատավարձերը գահաՎէժ անկում ունեցան ո՛չ միայն Անգլիոյ մէջ, այլեւ Ֆրանսայի, Գերմանիոյ՝ ինչպէս նաեւ Հոլանտայի մէջ: Ասոր պատճառը Պրոլետարիատի աճումն էր. Պրոլետարիատը՝ որ գրկուած էր ապրուստի պատեհութիւններէն եւ ենթարկուած էր սեւէ դնով աշխատանք ծարելու մրցումին: Լորտ Քէյնսը, այդ դարը կոչած է շահու առատութեան դար: Այո՛, շահու առատութիւն, բայց ո՛չ թէ արհեստաւորներուն, ո՛չ թէ աղքատացած գիւղացիութեան համար, այլ առաւելապէս հարուստ վաճառականներուն համար: Աշխատավարձերու անկման իրողութեան վրայ, նորածին բուրժուազիայի հարստացման որպէս աղբիւր՝ պէտք է աւելցնել ուրիշներու սեփականութեանց գրքաւորումն ու բռնազրաւումը, ըլլայ ան Ֆէոդալական սեփականութիւն՝ կամ մանր արտադրողներու սեփականութիւն:

Սոյն նորերու վաճառական բուրժուազիայի մէկ գիրքաւորման պատկերը, որ առաջին իսկ առիթով այնքան դարձացնող է եւ նոյն ատեն ընդհանրական, այն պատրաստակամութիւնն է որով այս դասակարգը իր առանձնաշնորհումը շահած օրէն համաձայներ էր Ֆէոդալական հասարակութեան հետ: Այդ համաձայնութիւնը մասամբ տնտեսական էր — այն իմաստով որ ան կը վնէր հող, արխատկրասիի հետ ընկերակցական դժով կը մանէր պիզնէսի մէջ եւ տեղական ազնուականութեան եւ անոր դաւակներուն առաջնորդող գիրք կու տար. անիկա մասամբ ընկերային էր — այն իմաստով որ միջամուսնութեամբ կը փոփաքէր ստանալ ազնուականութեան յատուկ արտոններ. անիկա մասամբ ալ՝ քաղաքական էր — այն իմաստով որ պատրաստ էր ընդունիլ քաղաքական միակցութիւն մը (ֆոալիսիոն) կառավարութեան մէջ՝ ազնուական ընտանիքներու հետ, կամ ընդունիլ նախարարական պաշտօններ կամ աթոռ մը Դատարանին մէջ — ինչպէս այդպէս եղաւ Անգլիոյ մէջ Տուգորեան շրջանին՝ 1485-1603 տարիներուն: Ահա այս շրջանին էր որ վաճառականական

կապիտալը ծաղկեցաւ, զարգացաւ եւ այնքան արագութեամբ տարածեց իր թեւերը, որ այլեւս անխուսափելիօրէն պիտի գար կապիտալիստական արտադրողականութեան գրութիւնը: Ասով, ի հարկէ, ըսել չենք ուզեր թէ այս հարուստ վաճառական դասակարգը իր ձեռքով յեղափոխութեան ուժ կու տար. արդիւնաբերողներու մասին ան բնաւ չէր մտածեր. իր միակ նպատակն էր աժան դնել եւ սուղ ծախել, ան ալ մեծաքանակ չափով: Ան հող չէր ընէր թէ ի՛նչ էր իր առուտուրի նիւթը, գերիններ էին թէ փողոսկը, բուրդ էր թէ՛ բրդեղէն հագուստ, թիթեղ էր թէ սակի, բաւական էր որ անկէ առաւելագոյն շահ մը ապահովէր: Ան հին հասարակարգին փակած մակարոյժ դասակարգն էր. իր բախտը կապուած էր իր տանտիրոջ բախտին հետ: Իր առաջին փառասիրութիւնն էր տիրանալ քաղաքական առանձնաշնորհումի, իսկ երկրորդը՝ վայելել այն՝ ինչ որ քիչերը կրնային վայելել: 16-րդ դարուն, այս նոր արխատկրասին, աւելի պահպանողական էր քան թէ յեղափոխական ուժ. իր ազդեցութիւնը եւ իր հիմնած հաստատութեանց ազդեցութիւնը աւելի կը դանդաղեցնէին քան թէ կ'արագացնէին Կապիտալիզմի զարգացումը: Կապիտալիզմը, որպէս արտադրողական-անդիւնաբերական նոր ձեւ, զարգացաւ տարերայնօրէն՝ տնտեսական գործիքներու միջոցով, ո՛չ թէ վաճառական դասակարգի յեղափոխական կամեցողութեամբ:



ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՐԵՒՈՒՄԸ

1

Մարքս, վաճառականական կապիտալի մասին իր պատմական նօթագրութեանց մէջ կը նշէ որ վաճառականական կապիտալը իր կանխագոյն շրջանին, անկախ ու անկապակից մնացած արտադրողութեան ձեւին հետ միմիայն արտաքին յարաբերութիւն մը ունէր: Վաճառականը այն մարդն էր որ արհեստաւոր կիլիտերու եւ գիւղացիներու արտադրութիւնները կը դնէր եւ զանոնք կը վաճառէր իրեն շահ մը ապահովելու համար: Ի վերջոյ, սակայն, վաճառականական կապիտալը սկսաւ իր ձեռքը դնել արտադրողութեան ձեւին վրայ, մասամբ զայն աւելի արդիւնաւորելու — ասով արդէն կը վատթարանար ուղղակի արտադրողներու դրութիւնը — մասամբ ալ զայն դրնելու աւելի լայն շուկաներու ծառայութեան ճամբուն վրայ, անկէ աւելի խոշոր շահոյթ ստանալու համար: Այս ձեւի փոխակերպման որպէս հետեւանք՝ Մարքս կը պարզէ երկու գլխաւոր զիծեր: Առաջինը, — իրապէս յեղափոխութեան զիծ մը — այն էր որ արտադրողներու մէկ հատուածը կըրցաւ կապիտալ կուտակել եւ մտնել առուտուրի մէջ ու ժամանակի ընթացքին արտադրողութիւնը կազմակերպել հիմքով եւ զայն ազատել ձեռագործական կիլիտերու սեղմումներէն: Երկրորդ զիծը այն էր որ, գոյութիւն ունեցող վաճառական դասակարգի մէկ հատուածը սկսաւ ուղղակի արտադրողութեան տիրանալ. ասանկով անիկա պատմականօրէն ծառայեց փոխանցման ձեւի մը, բայց նոյն ատեն, արդէլք եղաւ իրական կապիտալիստական արտադրողութեան ձեւին՝ որու զարգացումովը ինքն եւս ինկաւ անկումի ճամբան^(*):

Մարքսի տեսութեամբ, Ֆէոդալիզմի ծոցէն Կապիտալիզմի զարգացման համար անհրաժեշտ է հաշուի առնել երեք երեւոյթներ—

(*) Մարքս, Կապիտալի Գ. հատորին մէջ — էջ 388-96 — կ'ըսէ. «Կապիտալիստական դարաշրջանը սկսած է տասնվեցերորդ դարուն, քէեւ անոր սաղմնաւորումը սկսած է ցամուցրիւ կերպով Միջերկրականեան քաղաքներուն մէջ տասնչորրորդ եւ տասնհինգերորդ դարերուն»:

րու կապակցութիւնը. առաջինը — ինչպէս տեսանք, գիւղական ընկերային կառուցուածքը, որ կը թոյլատրէր գիւղացիութեան՝ որոշ կէտի մը վրայ «ըլլալ ազատ» . երկրորդը՝ քաղաքային ձեռագործութեան զարգացումը, որ կ'արտադրէր մասնագիտականացած, անկախ, ոչ-հողագործական ապրանքներու արդիւնարբերութիւնը . եւ երրորդը՝ գրամական հարստութեան կուտակումը առեւտուրի եւ վաճառութեան միջոցով: Այսպիսի գրամական կուտակման ձեւակերպումը «կը պատկանի բուրժուական անտեսութեան նախա-պատմական շրջանին»: Բայց պէտք է բռնել թէ գրամական այդ կուտակումներով տակաւին կապիտալ չէր կազմուածը: Անոնց սոսկական գոյութիւնը, կամ նոյնիսկ անոնց երեւութական գերակշռութիւնը մեքենականօրէն չէր յառաջացներ կապիտալիստական զարգացումը: Կապիտալիզմը պիտի զարգանար այն ատեն՝ երբ գիւղացիական բոլոր արտադրութիւնները կը մտնէին փոխանական արժէքներու շարքին. երբ ձեռագործական արհեստաւորներու կիլիտերը կը կորսնցնեն իրենց անկախութիւնը եւ կուտակուած գրամական գումարները փոխանակ վաճառութեան նպատակին ծառայելու կը ծառայեն արդիւնարբերական միջոցներու զարգացումին: Եւ Կապիտալիզմը ահա այդ ուղիներով զարգացաւ:

Այժմ քանի մը նշումներ ընենք Ֆէոդալիզմի մասին: Ֆէոդալիզմը տիրական էր ո՛չ միայն Եւրոպայի հողամասին վրայ՝ Անգլիայէն մինչեւ Ռուսաստան, այլեւ՝ տիրական սխտէմ էր Ասիոյ մէջ — Չինաստան, Հնդկաստան, Ճարնիա — եւ ասոնք նախորդող հասարակական սխտէմի նախատիպ օրգաններու մէկ մասը պահած էին տակաւին, ի մասնաւորի՝ գերեախրութիւնը: Եւրոպայի մէջ Կապիտալիզմի խանձարուրը պատրաստուած ատեն ծովեզերեայ նեղ շերտերու վրայ աւարառու ձերմակները հաստատեցին իրենց նախադրամատիրական իշխանական զիրքերը, նախնական կոմունիզմի հետքերը տակաւին կ'ընդնշմարուէին ամենուրեք՝ Ֆէոդալական հասարակարգի հաշտարար հովանաւորութեան տակ:

Հակառակ նպատաւոր պայմաններու եւ քանի մը յաջողութեանց, Ֆէոդալիզմը ամբողջապէս տիրապետող չդարձաւ երկու Ամերիկաներուն մէջ: Այն որ ի վերջոյ կոչուեցաւ Լատին Ամերիկա, հոն մեծ հողատէրերն ու Ֆէոդալ ազնուականները ընդարձակ հողամասեր գրաւեցին, ստրկացուցին նէկրոները, իրաւարկեցին ընդհանրիկները եւ հաստատեցին դժոխազէմ գաղութային սխտէմ մը, որ կը ծառայէր Ֆրանսայի, Սպանիոյ եւ Փորթուգալի շահերուն: Այս իրադարձութեանց ատեն, Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի մէջ Անգլիոյ, Ֆրանսայի, Սպանիոյ եւ Հոլանտայի հողատէրերն ալ հնդիկներու հողերը յափշտակեցին եւ նոր ցամաքամասին վրայ

հաստատեցին Ֆէոդալ Եւրոպայի տիրական գրութեան նման գրութիւն մը: Բայց անոնց յաջողութիւնը հիմնական ըլլալէ հետո՝ մասնակի էր, որ դատապարտուեցաւ ձախողանքի: Նոր միջնադարին մէջ նոր պայմաններ երևան եկած էին եւ հիւժախտի մատնուած ու ծերացած հին գրութիւնը այլևս չէր կրնար երիտասարդանալ: Ֆրանսացիք Աննո-Լօրէնսի երկայնքին զարգացուցին Ֆէոդալիզմի մանրանկարը: Հոլանտացիք Հրտսըն գետին քով հիմնեցին Ֆէոդալ-տանտտիրական սիստէմ մը: Իսկ ամենէն յատկանշականը՝ անգլիացիներու գործն էր: Անոնք ալ հարաւային նահանգներուն մէջ հաստատեցին կէս-Ֆէոդալական ռէժիմ մը, որ հիմնուած էր նէկրօ գերիներուն վրայ: Բայց ընդհանրապէս Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի բախտորոշ շրջաններուն մէջ երբ Ֆէոդալիզմը նոր հաստատուելու էր, իր ճակատած տնտեսական ազակեղորանացման ճիւղտող սեփերը եւ նորածիլ կապիտալիզմէն ծնած հակադրող հոսանքները այնքան ուժեղ էին, որ Ֆէոդալիզմը խոր արժատ չէր կրնար ձգել: Այդ երկիրներուն մէջ հողը մոնոքոլի կապել կարելի չէր, հնարաւոր էր նոյնպէս հողատէր ազնուականութիւն հաստատել: կարելի էր նաեւ գործաւորներն ու Փարմըրները ստրկացնել: Գոյն ալ հնարաւոր էր անոց կապիտալիստ դասակարգը շղթայել: Համարեայ թէ այդ ընդարձակածաւալ նոր շրջաններու տնտեսութիւնը, ըլլայ երկրագործութեան՝ ըլլայ ճարտարարուեստի մարդերուն վրայ, իրապէս կապիտալիստական բնոյթ ունէր:

Ինչպէս Ֆէոդալիզմը իր էական կառուցուածքով՝ նոյնպէս արհեստաւորներու կիլտի սիստէմը երբեք հող չունեցան իրենց ստրկերուն տակ, մասնաւորապէս Միացեալ Նահանգներու մէջ: Փորձեր եղան Հիւսիսային Ամերիկայի մէջ կիլտերու սիստէմը հաստատել, բայց այդ փորձերը դրական արդիւնք չտուին: Քամբնս, կը յիշատակէ միայն երկու փորձեր, որ տեղի ունեցան 1648-ին Պոստոնի մէջ, ուր կազմուեցան տակաւագործներու եւ կոչկալարներու կիլտերը: Իսկ Ֆոնրը, կը յիշատակէ ուրիշ կիլտի մը կազմութիւնը Ֆիլատէլֆիայի մէջ 1724-ին, ներկարարներու կիլտը: Բայց անոնք՝ թէ՛ առաջինները եւ թէ՛ երկրորդը երկար կեանք չունեցան այնտեղ՝ ուր կը խմորուէր կապիտալիստական սիստէմը տնտեսական նորագարթ ուժերով:

Այժմ տեսնենք թէ ի՞նչ կ'անցնէր կը դառնար Եւրոպայի մէջ:

Վաճառական կապիտալիստները իրենց մշտական նպատակը ընարած էին հետազօտել ու գտնել շահագործման նոր շուկաներ: այդ իսկ պատճառով անոնք եղան առաջամարտիկ ճամբորդողներ եւ արկածախնդիրներ: Գոլմպոս, Վասկօ տա Կամա, Մակէլլա, Քապոր եւ շատ ուրիշներ, վաճառական դասակարգի շահերուն ի խըն-

դիր՝ արկածախնդրական դժոյլ նաւարկեցին այս կամ այն ուղղութեամբ՝ առասպելական Հնդկաստանի նոր ու կարճ մէկ ճամբան գտնելու համար: Այս շրջանին, հետախուզող վաճառականները ծովահններէն դժուարաւ կը զանազանուէին: Անոնք պատահութիւններ կայացած պահուն չէին խնայեր ոչ սքի. ո՛չ մէկ սարսափելի միջոցառում հաշուի չէին առնէր. նաւային յարձակում, ջարդարարութիւն, կոտորուած...: Դոսպ կ'ըսէ որ Ֆրանսայի մէջ նաւարկու եւ ծովահեղձ անուաները համարեայ թէ հոմանիշ էին եւ փոխնիփոխ նոյն իմաստով կը գործածուէին:

Վաճառական կապիտալիստներու ամենամատ ընչաքաղցութիւնը ուղղուած էր արիւրեան սեւամորթ գերիներու առուտուրին, որ սեւ ոսկիի առուտուր կը կոչուէր: 1650 թուականին սկսաւ արիւրեան գերիներու եպերելի առուտուրը, որ տեւեց 350 տարի, մինչեւ ժժ. գարու կիսուն: Ամէն ամիս հազարաւոր սեւամորթներ բարբարոսական միջոցներով կը բռնուէին ու շղթայակապ կը քշուէին Ամերիկա, հոն ծախուելու համար: Նոյնիսկ Մ. Նահանգներուն անկախութենէն յետոյ՝ գերեվաճառութիւնը ո՛չ միայն զազար չառաւ, այլև, աւելի տարածուեցաւ: 1860-ին Քաղաքացիական Պատերազմէն առաջ, Ամերիկայի նէկրոներու թիւը հասեր էր չորս միլիոն չորս հարիւր քառասուն հազարի: Այսպիսով քրիստոնէայ վաճառականները արեան առուտուրով վիթխարի հարստութիւն զիջեցին: Բայց պէտք է ըսել թէ իրերու զարգացման հետեւանքով տարօրինակ շրջագարձ մը տեղի ունեցաւ: Երբ արդիւնարեան կապիտալը ճարտարարուեստական յեղափոխութեան միջոցով յառաջդիմեց, աւելի շատ պէտք ունեցաւ ազատ բանուորներու, քան թէ գերիներու: այդ իսկ պատճառով՝ Անգլիոյ եւ Ամերիկայի կառավարութիւնները գերեվաճառութիւնն արգիլող սեղմիչ օրէնքներ զրին, որով սկսաւ գերիներու մաքսաննդութիւնը: Անգլիոյ եւ Սպանիոյ մէջ մաքսաննդութեամբ պարագլոցները սկսան իրենց նաւերը դիւնել բռնագրաւումներու գիմաղբելու վճականութեամբ. երբ անոնք տեսան թէ անկարելի էր փախուստը, ընկղմեցին իրենց նաւերը: Անգլիական Բրիտանիոյ գերետար նաւը, տասն անգամ ուժիւրանալով Կուրա հանեց վեց հազար նէկրոներ: Անգամ մը, նոյն նաւը 600 նէկրոներով կ'ուղղուէր Կուրա, երբ չորս պատերազմական նաւեր պաշարեցին գայն: Փախուստի ճար չկար: նաւապետ Հոմէնս հրամայեց իր մարդոց որ գերիները շղթաներով իրարու կապեն իրենց վիզերէն եւ շղթաներու մէկ ծայրը ամրացնեն ծանր խարխախին: Երբ պատերազմական նաւերը սկսան մօտենալ Բրիտանիոյ, նաւաստիները խարխախ ձգեցին ուժիւրանալ մէջ. անոր հետ ծովամոյն եղան 600 նէկրօ գերիները: Երբ նաւը խուզարկուելով ո՛չ մէկ նէկրօ գտնուեցաւ, նա-

ւապետը խնդաց ու ծագրեց կառավարութեան պաշտօնեաները, որոնք եկած էին ձերբակալելու զինքը^(*) :

Իրողութեանց ընդհանուր շրջապծի մասին այս հարեւանցի ծանօթագրումէն յետոյ՝ այժմ անցնինք ներկայացնելու Եւրոպայի ներքին տնտեսական գործօն ուժերու յարաբերութեանց մանրանկարը :

ԺՁ. գարուն, հողագործութիւնը կը զիմէր թէև մասնակի՝ բայց կարեւոր կերպարանափոխութեան մը, որ երկու պատկեր կը ներկայացնէր : Առաջինը այն էր որ քաղաքի վաճառականները ծաւալուն շահարկութեանց կը ձեռնարկէին աւատական հողեր գնելու գործին մէջ եւ այդ՝ ո՛չ թէ ֆարմային գծով պարապելու այլ հողային ըլնտա (վարձք) ստանալով շահ ապահովելու համար . բայց երբեմն . ալ բոլորովին տարօրինակ չէր որ անոնք որոշ զբաղավայրի յատկացնէին եւ հողագործութիւնը քիչ մը զարգացնէին եւ վարձու աշխատանքի ուղիով զայն մօտեցնէին կապիտալիստական ձեռնարկութեան : Այդ պարագային առհասարակ մշակելի հողերը կը վերածուէին արօտատեղիներու , որովհետեւ բուրգի առուտուրը աւելի շահաւէտ ըլլալուն, պէտքը կը զգացուէր խթանել խաշնարածութիւնը աւելի ճիշդ անունով՝ ոչխարարուծութիւնը : Այս շարժումին ամենէն առաջ գոհ կը դառնային մանր ֆարմըրները, որոնք կը սեփականազրկուէին ու կը դառնային վարձու աշխատաւորներ, եթէ բախտաւոր ըլլային գործ ճարելու եւ ազատուելու Տուտորական Աղքատի Օրէնքի ճիւղաններէն : Ինչպէս Փրոֆէսոր Թաունի իրաւամբ կը յայտարարէ — «ձորտութիւնը կը զազրէր եւ կը սկսէր Աղքատի Օրէնքը : Երկրորդը այն էր որ այդ գարուն տեղի ունեցաւ նկատելի աճում մը վարձակալ անկախ ֆարմըրներու , որոնք հարստացան ընչազուրկ դարձած գիւղացիներու աշխատանքը շահագործելով մէկ կողմէն եւ ապա՝ վաշխառութեամբ : Փրոֆէսոր Թաունի կ'ըսէ որ ժՁ. գարուն արդէն մանր ֆարմըրները անհետացեր էին :

Այն որ արդիւնաբերութիւն կ'ըսենք, անոր հետ շահու նպատակով կապուող խմբաւորումներու միջև սրածայր զանազանութեան գիծ քաշելը գժուար է, չըսելու համար անկարելի . բայց կ'արժէ նշել անոնց անունները . այսպէս — չափաւոր միջոցներով ոստանիկ ֆարմըրները, ձեռագործական մանր արտադրութեանց տէրերը, parvenu կապիտալիստ գործատէրերը, հին վաճառական մոնոպո-

(*) Այս շրջանի գերեզմանաւանդանոցի անկի հանգամանօրէն ծանօթանալու համար տես 1958-ին հրատարակուած իմ մէկ ուսումնասիրութիւնը — Յո՞ երթաս Ամերիկա :

լիստները, որոնք տիրող դիրք ունէին ժՆ . գարուն, վարձակալ՝ բայց բարեկեցիկ ֆարմըրները եւ վերջէն կազմուած վաճառական մալու-ֆալիտուրայի տէրերը, որոնք երեւան եկան ժՁ. եւ ժԷ. գարներուն : Այս խմբաւորումներէն իւրաքանչիւրը նախ կը ձգտէր քանակական աճման, որ որոշ աստիճանի հասնելէն վերջ կը զիմէր որակական փոփոխութեան : Քանակական աճման գծին վրայ մարդը աւելի շատ վստահութիւն ունէր աշխատաւորներու թիւին՝ քան թէ իր սեփական ջանքերուն վրայ : Գալով որակական փոփոխութեան, ան առտիճանաբար ուշադրութեան կ'առնէր զիններու տարբերութիւնը եւ աւելի շահ ապահովելու նկատումով պահսեցնել իր գնած բաներու արժէքները ու բարձրացնել ծախուելիք իր ապրանքներու գիները : Եւ այդ ձգտումներն էին որ հարթեցին կապիտալիստական արտադրողականութեան ճամբան :

Վաճառականները Եւրոպայի զարգացած պետութեանց պատուաստեցին իրենց տնտեսական քաղաքականութիւնը : ԺՆ . գարէն սկսեալ mercantilismը — առեւտրականութիւնը — որպէս գործնական ծրագիր՝ տարածուած էր առաջաւոր երկիրներու մէջ : Ֆալքըր կ'ըսէ որ այդ շրջանին՝ առեւտրապաշտին հաւատոյ հանդանակն էր հետեւեալը . — «Այն ազգը կրնայ բարգաւաճիլ ու հարստանալ, որ քիչ կը գնէ եւ ամենէն շատ կը ծախէ . նուազ ներածում եւ աւելի շատ արտածում» : Հարուստ վաճառականները, որոնք պանքաներ ալ հաստատեցին (վաշխառական կապիտալի կեդրոններ) Ֆէնոզալական վերջնութեւր շրջանին, կը գործակցէին հողատէր իշխող դասակարգին հետ, անոնց խոշոր տոկոսով զբաղ փոխ կու տային եւ կ'օժանդակէին պետական պատերազմական ծախքերուն . սասնկով անոնք արտաքին առուտուրի հսկողութեան տիրացան թագաւորական հրովարտակով : Այս ճամբով էր որ անգլիացիք, հոլանտացիք եւ ֆրանսացիք առաջին անգամ զաղութներ հաստատեցին Հիւսիսային Ամերիկայի մէջ եւ մասնաւորապէս անգլիացիք իրենց ճիրաններուն մէջ առին Հնդկաստանը եւ ուրիշ զաղութներ :

Այս յեղուղակ վաճառականներն էին որ ժԱ. գարէն սկսեալ Եւրոպայի նաւարկելի դետերու եզերքները՝ մասնաւորապէս յարժար նկատուած ծովկեղքներուն վրայ քաղաքներ հիմնեցին : Իսկ յաջորդող դարերուն՝ Հիւսիսային Մովուն, Պալթիկի, Ատլանտեան ովկիանոսին, Միջերկրականի, Սև եւ Ատրիական ծովերուն նայող երկիրներու շահերուն ծառայող նաւահանդիսաներ շինեցին : Եւ այդ բոլոր իրադարձութեանց մէջ, ամենէն վերջ, տնտեսական գործող ուժերուն նպատեց նոր ազդակ մը, ատիկա ճարտարարուեստական յեղափոխութիւնն էր :

Ազգային եւ միջազգային շուկաներու ընդարձակումը մեծա-

պէս խթանեց արդիւնաբերութեան զարգացումը եւ ստեղծեց վաճառական կապիտալիստներու զօրեղ մարմին մը, որով տկարացաւ Ֆէոդալիզմի հեղինակութիւնը: Բայց ան այդպիսով ընկերային-հասարակական ոչ ժիւղը անմիջապէս հիմնովին չկրցաւ քանդել եւ հաստատել կապիտալիստական տիրական սխտէժը: Այդ պիտի ընէր նորածին դասակարգը — գործարանատէրերու դասակարգը, իրական կապիտալիստներու դասակարգը: Մեր նշած յեղաշրջող զարգացողութիւնները, որոնք սկսած էին արմատ բռնել, վճռական զեր ունեցան ժՁ. դարու վերջերը իրերու կերպարանափոխութեան ընթացառումին մէջ: Մարքս կ'ըսէ. — «Ֆէոդալական արդիւնաբերութեան ձեւէն դէպի նորին փոխանցումը տեղի ունեցաւ երկու ճանապարհով: Մէկը այն էր, որ արտադրողը զարձաւ վաճառական եւ կապիտալիստ ի հակադրութիւն՝ երկրագործական-ընկերային արդիւնաբերութեան, որուն հետ կը քայլէր արհեստակցական տոճմերու (կիւտերու) միջնագարեան քաղաքային ձեռագործական արդիւնաբերութիւնը: Միւսը այն էր որ վաճառականը ուղղակի արդիւնաբերութեան ճիւղերն առաւ իր ձեռքին մէջ: Պատմականօրէն իրերու այս ընթացառումը կատարուեցաւ արհեստակցական տոճմերու տէրերու կողմէն, որոնք հարստացան եւ ձեռագործական արտադրողութիւնը զարգացուցին ու ընդարձակեցին եւ տարին կապիտալիստական ուղղութեան. իսկ միւս կողմէն՝ հարուստ վաճառականներն ալ նոյն նպատակով շահարկութեան զբիւն իրենց կապիտալը(*):

Նորելուկ կապիտալիստները դանազան հասկնայի միջոցներով կործանեցին արհեստակցական տոճմերու հեղինակութիւնը եւ արդիւնաբերութեան ձեւը ու աստիճանաբար հաստատեցին գործարանական սխտէժը աշխատանքի բաժանման հիմքով: Այս շարժումը սկիզբ առաւ եւ յառաջ գնաց 17-րդ եւ 18-րդ դարերուն: Նոյն տաւն, խոշոր հողաչերտերու վրայ Ֆէոդալական արտադրողութիւնը կազմալուծուեցաւ պատրաստուելով անտեսական ու քաղաքական յեղափոխութեան մը, որ շուտով պայթելու էր: Այդ յեղափոխութիւնը իր ճամբան բացաւ 18-րդ դարուն, երբ շարք մը մեքենաներ գործի գրուեցան մասնաւորապէս հիւսուածեղէնի արդիւնաբերութեան մէջ: Անոնցմէ մին էր մանելու մեքենան, որ հնարուեցաւ 1769-ին, բամպակի հունտը զտող մեքենան, որու հնարիչն էր Վիթնի — 1793-ին: Իսկ ամենէն կարեւորը շոգեշարժ մեքենան էր, որ կատարելագոր-

(*) Pre-Capitalist Economic Formations - K. Marx - էջ 126-27:

ծուեցաւ 1764-ին: Այս գիւտերը նախակարապետներն էին յաջորդող տասնեակ տարիներու ընթացքին յառաջացած ուրիշ նորագոյն գիւտերու, որոնք զարգացուցին գործարանական սխտէժը, զոր Մարքս կոչէր է «Արդիական ճարտարարուեստ»:

Պայմանները հասունեցեր էին այս էական զարգացողութեանց համար եւ կը հարկադրէին անոնց իրականացումը: ԺՁ. դարուն, ընդարձակուող շուկաները արդէն կը յայտարարէին իրենց գլխաւոր գործառնութեանց հիմք ծառայող ամէն տեսակի ապրանքներուն անունները: Անդին, բազմաթիւ սեփականազուրկ զիւզացիներ ու արհեստաւորներ կային, որոնք պատրաստ էին մտնել գործարանները՝ որպէս վարձու բանուորներ: Իսկ Արեւմտեան Եւրոպայի երկիրներուն մէջ կապիտալի «նախնական կուտակումը» կը կատարուէր մասնաւորապէս Ամերիկաներէն հոսող ոսկիներով ու արծաթներով, Հնդկաստանի աւառներով ու փերիկեան գերեփաճառութեան ուղիով: Ասոնք էին այն կարեւոր ազդակները որոնցմով խոր արմատ բռնեց ու հաստատուեցաւ կապիտալիզմը:

Կապիտալիզմը տարածուեցաւ ամբողջ Արեւմտեան Եւրոպայի ինչպէս նաեւ Ամերիկայի անգլիական գաղութներուն մէջ: Ֆրանսա, Պելճիկա, Հոլանտա եւ գերմանական հռենոսեան շրջանը, բոլոր այս երկիրները ցոյց տուին կապիտալիստական աճում ու զարգացում: Բայց Անգլիա, անմրցելի առաջնորդը զարձաւ այդ ընդհանուր զարգացողական շարժումին, որովհետեւ բացի իր աշխարհագրական դիրքէն եւ իր ուժեղ նաւատորմիցէն, հանգամանքները տարապայմանօրէն նպաստաւոր էին իրեն: Ան տէրն էր անսպառ ամուխի եւ երկաթի ազրիւրներու եւ նոյն տաւն՝ ազատ էր այն պատերազմներէն, որոնք ամայացուցին Եւրոպան: Անգլիա զարձաւ «Մոլերու թագուհին» եւ ժԹ. դարուն՝ ամբողջ աշխարհի գործատեղին:

Բայց այստեղ զարձեւալ պիտի զրազեցնենք ընթերցողը յետագարձ ակնարկներով:

Հոլանտայի եւ Իտալիոյ շարք մը քաղաքներուն մէջ կապիտալիստական արդիւնաբերութեան զարգացման ընթացքը աւելի կանուխէն սկսեր էր ուժեղանալ քան Անգլիոյ մէջ: Փլամանկեան քաղաքներուն մէջ — այս քաղաքները կազմուած էին ԺԱ. եւ ԺԲ. դարերուն — կը վիտային ընչազուրկ, հողազուրկ եւ ճնշուած դասակարգի մարդիկ, որոնք գործ կը մուրային: Փլամանկեան քանի մը քաղաքներու մէջ կապիտալիստ վաճառական-տարազարդը ժԳ. դարուն արդէն սկսեր էր իր գործառնութիւնը: Նոյնիսկ 1200 թուա-

կանին շատ մը պարագաներու տակ արհեստաւորական կիլոտերը համադրածակցեր էին աւելի հարուստ վաճառականներու հետ, որոնք մոնոպոլ ըրած էին մեծաքանակ առուտուրը եւ իրենց անդամակցութեան մուտքի դումարը բարձրացուցեր էին այն չափանիշին, որուն չէր կրնար մօտենալ մանր արհեստաւորը: Այս վերջինը եզեր էր երկրորդական մարդ, որ իր արտադրութիւնները կրնար ծախել տեղական շուկայի վրայ, իսկ եթէ ուզէր գործ ունենալ առեւտրական խոշոր կեդրոններու հետ, ստիպուած էր դիմել կիլոտ մոնոպոլիստներուն: Նոյնպէս իրեն անհրաժեշտ հում նիւթերու դնումներու համար ալ ան հարկադրուած էր դիմել նոյն մոնոպոլիստներուն: Այս պայմաններուն տակ կազմակերպուած կապիտալիստները երբեմն յանձնարարուած գործեր կու տային կախեալ ձեռագործ արհեստաւորներուն: Այս կանխադոյն կապիտալիստներու դասուն կը պատկանէր ձին Բուսյն-Բրօք անունով հռչակաւոր մարդը, որ Գուէյ քաղաքի ատենակալն էր եւ նոյն ատեն՝ ասուեմիւստ: Այս մարդը հում նիւթեր կը մատակարարէր ձեռագործ արհեստաւորներու լայն շրջանակի մը եւ ունէր իր սեփական գործատեղին, հազուատեղէնի գործատեղի մը, ուր կ'աշխատէին վաթսուն գերձակներ՝ իրենց ընտանիքներով ու աշակերտներով: Ան իր գործաւորները կը պահէր անօդանական, կախեալ զրութեան մէջ եւ միշտ պարտքի տակ. հիւզակներ շինել տուած էր եւ գործաւորները կը բնակեցնէր անոնց մէջ: Խեղճ գործաւորը իր հիւզակին վարձքը տալէն վերջ իր ստացած աշխատավարձով հազիւ թէ կրնար պահել իր եւ իր ընտանիքի գոյութիւնը: Այս ատենակալ-վաճառական-կապիտալիստ պարոնը հաստատած էր նաեւ տեսակ մը փոխանակութեան սխառտ, որ շահու ուրիշ տեսակի աղբիւր էր: Ասոր ցեղակից ուրիշ շատեր կային դանազան քաղաքներու մէջ, ինչպէս Գինանտ, Լիլի, Բրուկէս, Սէնտ, Օմբը, Բըրուսէլ եւ Լուվէն: Եւ որովհետեւ Ֆլէնտրըսը հիւսիսային Եւրոպայի մէջ երթեւեկութեան ու սակարկութեան կեդրոն էր, հոն խոշոր շահեր կ'ապահովէին վերեւ նշուած ձեւին հետեւող առեւտրականները: Եզուարդ Գ.ի գաղտնի պատուիրակը գոթիսային պայմաններու տակ ապրող պրոլետարներու ի տես՝ զարմանքով ըսած է. — «Արդարեւ ողբալի է այս խեղճ ծառաներու ստրկական դրութիւնը. անոնց տէրերը դանտը կը գործածեն որպէս հեթանոսներ քան թէ որպէս քրիստոնեաներ. այո՛, որպէս ձիեր քան որպէս մարդիկ: Անոնք առտուն կանուխ կ'արթննան սոսկումով եւ գիշերը ուշ ժամին՝ պառկիլ, հանգստանալու կը թոյլատրուին: Ամբողջ օրը կը լծուին ծանր աշխատանքի: Իրենց կերածն է մի քանի տարեխ, բորբոսած պանիր եւ երկու կտոր չոր հաց: Անոնց արտադրած հարստութիւնը կ'երթայ կոշտ ու կծծի իրենց տէրերու դանձարանը, ուրկէ ո՛չ մէկ օգուտ կրնան սպասել խեղճները»:

Փլամանկեան առաջաւոր քաղաքներու մէջ այս նոր վաճառական կապիտալիստներու իշխանութեան երեւումը կարեւոր ներգործութիւններ կ'ընէր ո՛չ միայն արդիւնաբերութեան՝ այլեւ քաղաքային կառավարութեան վրայ: Ասոր իրր հետեւանք՝ երեւան եկան իրարու կապուած երկու ձգտումներ: Առաջնակարգ քաղաքներու մէջ քաղաքական իշխանութիւնը անցաւ աւելի հարուստ քաղաքացիներու ձեռքը, որոնց տրուեցաւ «պատրիկ» անունը: Քաղաքային պաշտօնեաները կոչուեցան էշվէն — թաղապետ — որոնց գործն էր վերհսկել ձեռագործները, կանոնաւորել աշխատավարձերը եւ հրահել քաղաքի շուկային: Սոյն պաշտօնեաները կ'ընտրուէին պատրիկներէն եւ ո՛չ թէ ամբողջ քաղաքացիական մարմնէն: Նոյն ատեն, դանազան քաղաքներու պատրիկները իրենց առանձնաշնորհումները փոխին ի փոխ գործածելու համար համաձայնելով կազմեցին բնկութիւն մը — Հանսէնեան Լիկան — որ կը բաղկանար Հոլանտայի զլիաւոր քաղաքներու առաջնակարգ արտածող վաճառականներէն: Սոյն փոփոխութեանց արդիւնքն այն եղաւ որ այլեւս ի գորտը ըլլայ զաղբեցան այն քաղաքային կանոնները, որոնց շնորհիւ քաղաքացի մը ազատ էր իր գործաւորութիւնը շարունակել ուրիշ քաղաքներու առեւտրականներուն հետ. ասով կ'ուժեղանար Հանսէնեան վաճառականներու դիրքը ձեռագործ-արհեստաւորներու յարաբերութեանց մէջ, մասնաւորապէս հոն՝ ուր Հանսէն ունէր իր ներկայացուցիչը: Ձեռագործ արհեստաւորները իրենց շինած հազուատեղէնները մեծաքանակ գինով չէին կրնար ծախել, այլ պարտաւոր էին դիմել Հանսէ վաճառականներուն: Հնադոյն քաղաքային տեղայնութիւնը (localism) տեղի տուած էր դասակարգի մը կազմակերպութեան ազդեցութեան առջեւ, ասով ձեռագործական արհեստաւորներու կազմակերպութիւնները իրենց կանոններով ենթարկուեցան վաճառականներու հսկողութեան: Գերմանական քաղաքները հետեւեցան նոյն ուղիին. Ստրազբուրկը, օրինակի համար, քանի մը իշխող ընտանիքներու իշխանութեան տակ էր. մինչ Քոլոյնի մէջ ձեռագործ արհեստաւորները պարզապէս պատրիկներու ճորտեր էին:

Բայց պէտք է ըսել թէ բոլոր քաղաքները այս կերպով ամբողջապէս չենթարկուեցան մանր բուրժուապիտալի սակաւապետութեան իշխանութեանը: Եպիսկոպոսական քաղաքներու մէջ, ինչպէս Լիլէզն ու Աբրապը, ուր զարգացեր էին քանքրները, արհեստաւորներն ու փոքրաքանակ խանութպանները, եւ որոշ առանձնաշնորհումներով կը մնային Ֆլէողալ ձեռքերու մէջ, պատրիկական քաղաքացիութիւնը եւ կապիտալիստական արտադրողականութիւնը հազիւ կենդանութեան նշաններ ցոյց կու տային: Այստեղ եւ շատ մը վաճառականացած քաղաքներու մէջ կար ընկերային եւ քաղաքական միակցութիւն

Հնադոյն Ֆէոդալ եւ Հողատէր ընտանիքներու ու Հարուստ քաղաքացիներու միջեւ: Այս վերջինները զնեցին Հող եւ անական կալուած, ինչպէս իրենց անդլիացի բաժնեկիցները, եւ լքելով վաճառականական ճիւղը որպէս աղնուական, նախընտրեցին ապրել Հողային եկամուտով եւ դրամական փոխատուութեամբ, ստանկով անոնք Հասարակական ծաղրանուն մը ստացան — Օշխոս — որ կը նշանակէ անգործ — ծոյլ...: Հոն, ուր այս բուրժուա պատրիկութիւնը կ'իշխէր, կը յայտնագործուէին յառաջդիմութեան եւ ճոխութեան նշաններ, թէեւ ձեռագործ արհեստաւորները կը մնային ճնշուած եւ թշուառացած: Գարաշրջան մըն էր ան, երբ ո՛չ միայն Հազուստեղէնի եւ պղնձի արդիւնարեութեան առուտուրը կ'աճէր, այլեւ խոշոր շինարարութիւնները. կառուցուեցան խոշոր սրահներ, ջրմուղներ, ամբարանոցներ, նաւամատոյցներ, ջրանցքներ եւ կամուրջներ, ասոնց հետ նաեւ, որ ամենէն նշանակալիցն էր, աշխարհական դպրոցներ:

Բայց ԺԳ. դարուն այս խոշոր կապիտալիստներու գերիշխանութիւնը ճակատեցաւ ձեռագործ արհեստաւորներու յեղափոխութեան, յեղափոխութիւն մը, որ կարգ մը պարագաներու տակ կը թուէր թէ օժանդակութիւն կը ստանար եկեղեցիէն (օրինակի համար Լիէժի մէջ) եւ աղնուականութեան մէկ հատուածէն: Եւ պէտք է նշել որ այդ յեղափոխութեան միացան կապիտալիստական հսկողութեան ներքեւ նոր արդիւնարեութեանց մէջ ծառայողները: 1225-ին ապրտամբութիւն մը պայթեցաւ Գինանտի մէջ, ուր պատրիկ պաշտօնեաները ձերբակալուեցան եւ Հաստատուեցաւ տեսակ մը կոմունա: Բայց ապտամբներու յաղթութեան շրջանը կարճատեւ եղաւ. քաղաքը պաշարուեցաւ եւ փոթորկալից կռիւէ մը վերջ, ապտամբները անձնատուր եղան: Քսան տարի յետոյ՝ մարտական գործադուլներու շարք մը սկսաւ փլամանկեան քաղաքներուն մէջ. անկազմակերպ շարժում մը՝ կազմակերպուած վիթխարի ուժերու ղէմ: Այդ գործադուլներու արդիւնքն այն եղաւ որ ձեռագործական արհեստաւորները բոլորովին կորսնցուցին իրենց անկախութիւնը եւ գործաւորներուն հետ ենթարկուեցան աւելի դաժան ճնշումներու: Հիւսողներուն ու լուացարարներուն արդիւրուած էր ղէնք կրել. գործաւորներուն արդիւրուած էր նոյնիսկ եօթը հոգիով հաւաքոյթ ունենալ: Գործադուլը պետութեան ղէմ գործուած աններելի ոճիւր էր եւ գործադուլաւորները դատապարտուելու էին մահապատիժի: Բայց ԺԳ. դարու սկիզբը զինեալ կռիւ մը ծայր տուաւ, կռիւ մը, որ բարդ հանգամանք առաւ, երբ Ֆրանսայի Ֆիլիպ Գեղեցիկը նեցուկ կեցաւ պատրիկներուն, մինչ ձեռագործ արհեստաւորները օժանդակութիւն խնդրեցին Ֆլանտրբի Կոմսէն, որ այդ կռիւին ազգային պատերազ-

մի ձեւ տուաւ. պատերազմ մը Փլամանկներու(*) եւ Ֆրանսացիներու միջեւ: 1302-ին, ընդհանուր ապտամբութեամբ եւ յատկանշական սասակութեամբ սկսաւ պատերազմը, որու ընտացքին պատրիկներն ու անոնց Ֆրանսացի դաշնակիցները անխափր կոտորուեցան (օրինակի համար Բրուէլէսի մէջ): Պատերազմը վերջացաւ 1320-ին Փլամանկեան յաղթանակով: Անոր ընդհանուր արդիւնքը այն եղաւ որ քաղաքի կառավարութեան մէջ ձեռագործ արհեստաւորներու իրաւունքը վերահաստատուեցաւ եւ անոնք վերանորոգեցին իրենց հին կիրտական կանոնները եւ քաղաքային տեղայնութիւնը. իսկ կապիտալիստական արդիւնարեութեան զարգացումը ստացաւ յետադարձ հարուած: Լիէժի պատերազմի երկրորդ տարին (քաղաքի Մայր Եկեղեցին նեցուկ կեցաւ ժողովուրդին) պաշտօնները բաժնուեցան առեւտրականներու եւ արհեստաւորներու միջեւ, եւ երբ պատրիկները կազմակերպուած ապստամբութեան դիմեցին, ապստամբութիւնը ճգմուեցաւ եւ ձեռագործական արհեստաւորները դատական պաշտօններ առին: Ուտրէքի մէջ ղեմովկրատական սխաւէմը ներմուծուեցաւ քանի մը ձեռագործ արհեստաւորներու հաւասար ներկայացուցիչներով: Գինէնտի մէջ իշխանութիւնը բաժնուեցաւ վաճառականներու պղնձագործներու մեծ միութեան եւ ինը ձեռագործական արհեստաւորներու մանր խմբաւորումներու միջեւ: Բրուէլէսի եւ Կէնտի մէջ արհեստաւորները վերստացան թաղապետներու մասնակի հսկողութիւնը, եւ ձեռագործական արհեստաւորները ինքնավարութեան իրաւունք ստացան փոխանակ ենթարկուելու դատական հեղինակութեան: Կիրտական կանոններ զրուեցան սահմանափակելու ձեռագործ արհեստաւորներու թիւը եւ ապահովելու կիրտ անգամներու գերիշխանութիւնը տեղական շուկաներու մէջ. ասով անոնք ընդհանուր կերպով ուժեղացան եւ փորձեր եղան ո՛չ միայն ճնշելու գիւղական արդիւնարեութիւնը՝ բայց կ'ուզէնք ճարտարարուեստը՝ ի նպաստ քաղաքային շուկային, այլեւ սահմանափակելու գիւղական ազատ առուտուրը՝ դարձեալ ի նպաստ քաղաքային շուկային, որուն համար ամբարանոցի առանձնաշնորհում կ'ուզէին ստանալ: Հազուստեղէնի մանուֆակտուրան արդիւրուած էր Կէնտի, Բրուէլէսի եւ Բպրէսի գաւառներուն մէջ: Հանսէ Լիկան գրկուած էր իր բացառիկ մոնոպոլի իրաւասութիւններէն եւ ձեռագործական արհեստաւորները, հաւանականորէն անոնց աւելի հարուստները, իրաւունք ստացան մեծաքանակ առուտուրով զբաղելու:

(*) Փլամանկ կը կոչուին Պելնիգայի եւ Հոլանտայի մէկ մասի բնակիչները:

Բայց կապիտալիզմի աճումը երբ դանդաղեր էր կիրառական առանձնաշնորհումներու վերահաստատություններ, շատ հեռու էր ամբողջապես արդիւնաւորել: Գաւառներ կային, ինչպէս Բրուկէյնի եւ Տրուանտի գաւառները, ուր ձեռագործ արհեստաւորներու յաղթութիւնը անկատար էր. կարգ մը տեղեր՝ զիւղերու մէջ կապիտալիստական տնական ինտաստրիկն (ճարտարարուեստը) կրնար յարձակիլ կիրտերու հեղինակութեան վրայ: Տասնհինգերորդ դարուն, կապիտալիստները Բուրկընտի Գիլիոյ թագաւորի առաջնորդութեամբ դաշնակցելով իշխաններու եւ ազնուականութեան հետ (դաշնակցութիւն մը, որ իրեն կապեց քաղաքներու առևտրական գերիշխանութեան ընդգիծացող զիւղացիութիւնը) այնպիսի քայլեր առին, որոնցմով կ'ուզէին կեդրոնական կառավարութեան հպատակեցնել քաղաքներու ինքնավարութիւնը: Սոյն ոտնձգութեանց հանդէպ քանի մը քաղաքներ իրենց սեփական ուժերով կատարի գիմադրութիւն ցոյց տուին: Բայց անոնց ներքին հատուածական հակառակութիւնները պատճառ եղան որ անոնք յաջողակի համագործակցութեամբ չկանգնին միասնական ճակատով հասարակաց թշնամիին դէմ. անոնց գիրքը կը տկարանար այն իրողութեամբ, որ տեղւոյն բոլոր հարուստ քաղաքացիները, որոնք մատ ունէին զիւղական ինտաստրիկն եւ արտաքին առուտուրի մէջ, իրենց հաւատարմութեամբ կապուեցան Բուրկընտի Տանը: Լիէժը հերոսաբար ճակատեցաւ բուրկընտիական ուժերուն, բայց վերջ ի վերջոյ անձնատուր եղաւ Գիլիոյի բանակներուն, եւ իր յամառութեան հետեւանքով ենթարկուեցաւ կողոպուտի: Կէնտ եւ Բրուկէյն քաղաքներն ալ պարտուեցան: Անկէ յետոյ՝ քաղաքային վարչութեան մէջ մտան իշխանի պաշտօնեաները. քաղաքի հեղինակութիւնը ջնջուեցաւ եւ ուժեղացաւ կեդրոնական կառավարութեան իշխանութիւնը: Բուրժուա պատրիկներու իշխանութեան համար բացուած էր նոր ճամբայ մը, որ կը նպաստէր կապիտալիստական արդիւնաբերութեան առնուազն մասնակի աճումին: Սպանիոյ հետ պատերազմէն յետոյ՝ Պիրէնի մեղի կ'ըսէ. «Ամենուրեք հաստատուած էր կարգ ու կանոն՝ հարուստ վաճառական դասու շահերու պաշտպանութեան համար: Ոստիկանական եւ դատական մարմինները բոլորն ալ վտանգաւոր պարագան ներկայացած պահուն, միշտ նկատի կ'առնէին հարուստ վաճառականին շահերը: Արհեստաւորական կիրտերու կանոններն ու առանձնաշնորհումները անգործածելի դարձան եւ մնացին իրենց բառական իմաստի սահմաններուն մէջ: Ըլլայ ազգային, ըլլայ տեղական, հարուստ վաճառական դասակարգը իր մէջէն հայթայթեց վարչութեան անձնակազմը եւ զբաւեց պետութեան ժողովներու ատոնները: Այս նոր պայմաններու արդիւնքն այն եղաւ որ հազուատեղէնի գիւղական

տարագործութիւնը իր ազդու վերապրումին զիմեց, իսկ անոր քանի մը ճիւղերը կազմակերպուած ձեւի տարագործարաններ հիմնեցին, որոնց մեծ մասը կապուեցաւ Անվէրսի՝ հազուատեղէնի նոր շուկային: Լիէժի, Նամուրի եւ Հէնոյտի գաւառներուն մէջ սկսան երեւիլ ամխահանքի եւ ձուլարանի կապիտալիստական ձեռնարկութիւնները: Արհեստաւորական կիրտերու մոխիրներու մէջէն դուրս եկաւ աւելի հարուստ տէրերու դասակարգ մը, որ գործ կու տար ազբատացած երբեմնի եղբայրներուն, մասնաւորապէս հիւսողներուն եւ լուացարարներուն, որոնք իրապէս վարձու աշխատուորներ դարձեր էին եւ կորսնցնելով իրենց ընկերակցական իրաւունքները, շատ քիչ կը զանազանուէին հարկազրութեան տակ գործող ստրուկներէն»:

Դրութիւնը, ըլլայ Հիւսիսային Իտալիոյ, ըլլայ Հունոսեան շարք մը քաղաքներու մէջ հիմնապէս այնքան տարբեր չէր: Գլխաւոր տարբերութիւնն այն էր որ Իտալիոյ մէջ Փէնոպալ իշխաններու եւ մասնաւորապէս եկեղեցւոյ իշխանութիւնը բաւական մեծ էր արգիլելու բուրժուա հանրապետութիւնները, որպէսզի անոնք իրենց պայմանադրական ինքնավարութեան սահմանէն դուրս քայլ չառնեն: Եւ արդէն այդ հանրապետութեանց մէջ վաճառականական սահաւակտութեան հետ բաժնեկից էին հին Փէնոպալ ընտանիքները, որոնք նոյն ատեն հողատէր էին, որոնք իրենց աւանդական իրաւունքներու թելադրանքով կը գործէին քաղաքին կամ անոր դրացնութեան մէջ: Ետա կանուխէն, այնպէս կը թուի թէ՛ կը կառավարուէին արխատկրատ դասակարգի ձեռքով, եւ ընակչութեան մեծամասնութիւնը, արհեստաւորները, առևտուրի մարդիկը, բոլորը միասին կառավարութենէն դուրս կը մնային: Փէնոպալական պարտաւորութիւնները վերապրեցան նոյնիսկ քաղաքներէն ներս եւ այնպիսի շափով, որ անոր նմանը չենք տեսնել Անգլիոյ մէջ: Արհեստաւորներէն շատերը Փէնոպալական ծառայութեան կապուած էին եպիսկոպոսներու եւ ազնուական ընտանիքներու մօտ, եւ այդ իրողութիւնը տեւեց մինչեւ ժԱ. դարը: Երբ միջերկրականեան վաճառականութիւնը իր վերազարթումի շրջանը մտաւ խաչակիրներէն յետոյ, արտաձուլ վաճառականներու ընկերութիւնները շափազանց հարստացան եւ կազմեցին նոր արխատկրատիկն: Անոնք իրենց ձեռքն առին արտաձման առուտուրի մոնոպոլը եւ սկսան սեղմիչ կանոններ գնել իրենց ազբանք հայթայթող արհեստաւորական կիրտերու վրայ, այս վերջիններն ալ իրենց կարգին՝ սեղմիչ կանոններ դրին իրենց ծառայող աշկերտներուն վրայ: ԺԴ. դարու սկիզբին, մանուֆակտուրայի արտադրութեան եւ բուրգի ճարտարարուեստի մէջ իրողութիւն դարձաւ արտադրանքի սխտէմին վրայ կապիտալիստական ծաւալուն հսկողութիւնը: Փլորէնսի մէջ, 1338 թուին, հազուատեղէնի 200 գործատե-

զիններ կային, որոնք կը գործածէին 30.000 բանուորներ, քաղաքի բնակչութեան գրեթէ մէկ չորրորդը: Դասակարգային կռիւը սկսուածն ալ, երբ գործաւորները փորձեցին իրենց անկախ կազմակերպութիւնը հիմնել եւ ասով պահանջել իրաւունքը: Բայց տրուած ծանր հարուածներու տակ, անոնք հարկադրուած նահանջեցին ու պարտուեցան:

Ֆրանսերէսի մէջ առեւտրական սակաւապետութեան իշխանութիւնը անխռով շմնաց: ԺԴ. դարուն երեւան եկան շարք մը դեմոկրատիկ ապստամբութիւններ ձեռագործական արհեստաւորներու եւ աւելի մանր կիլիտերու միջեւ, եւ եղաւ չըջան մը, ուր աւելի դեմոկրատիկ ուժեր մը տիրեց քանի մը քաղաքներու մէջ: Սիէնայի մէջ բուրգի ճարտարարուեստի վարձու աշխատաւորները ապստամբեցան արհեստաւորական կիլիտերու դէմ, որոնք իրենց հրամայող տէրերն էին: Բայց որովհետեւ այդ կիլիտերը կապուած էին վաճառականներու հետ, վաճառականները՝ քաղաքային արիստոկրատի եւ Ֆէոդալ պնտուականութեան հետ, այս շորս ուժերուն դէմ աշխատաւորները ոչինչ կրնային ընել. անոնք խոնարհեցան զինուած ուժերու առջեւ:

Գերմանական կարգ մը քաղաքներու մէջ, տասնըչորրորդ եւ տասներեքնորդ դարերուն նոյնպէս կը տեսնենք ապստամբական շարժումներ ձեռագործ արհեստաւորներու կողմէն՝ ընդդէմ կապիտալիստական գործատէր տարրերուն: Օրինակի համար, այդօրինակ շարժումներ տեղի ունեցան Քոլոյնի, Ֆրէնկֆուրտի, Օկերսպուրկի եւ Հալէյի մէջ: Անոնց մէկ մասը վերջացաւ համաձայնութեան դժով, միւսները եղան արիւնլուայ, եւ վերջ ի վերջոյ դեմոկրատիկ շարժումը իր ետեւէն բերաւ պնտուական գասու իշխանութիւնը:

Ֆրանսական քաղաքներու մէջ, այն՝ ինչ որ կապիտալիստական արդիւնաբերութիւն կը կոչուի, աւելի ուշ մտաւ քան Ֆրանսերէսի եւ Հիւսիսային Իտալիոյ մէջ, իսկ այդ նոր ձեւի տնտեսական զարգացումը աւելի հետեւեցաւ անդլիական կազապարին: Բայց նոյնիսկ ժԴ. դարուն՝ Փարիզի մէջ մենք կը տեսնենք որ հոն երեւան եկած է կապիտալիստներու դեռափթիթ դասակարգ մը, որ գործ կու տար ձեռագործական արհեստաւորներուն, ինչպէս կ'ընէին անդլիացիք: Ասանկով անոնք տիրական դիրք ապահովեցին արհեստաւորական կիլիտերու մէջ: Նոր ճարտարարուեստները բոլորն ալ կեդրոնացած էին եւ անոնք իրենց պէտք եղած թիւով վարձու աշխատաւորներ ներս կ'առնէին յարասուօրէն գերաճող անգործներու բանակէն: Բայց, ինչպէս ամէն տեղ, Ֆրանսայի մէջ ալ հետզհետէ սոցալացող թշուառութիւնը ապստամբական շարժումներու տեղի տուաւ: Փարիզի, Լիոնի եւ Նորմանտիի մէջ պայթեցան յեղափոխական բարձրուածներ, որոնք անմիջապէս մարեցան մահապատիժներու շունչին առջեւ:

Մեր նախորդ ըսածներէն պարզ կ'երեւի այն իրողութիւնը, որ քաղաքային կառավարութեան կողմէ տնտեսական հսկողութեան ջրնջումը եւ արհեստաւորական կիլիտերու վաստակած մոնոպոլիներու ստորագասումը մէկ պայմանն է՝ ըլլայ տարագործական՝ ըլլայ արնային ձեւի կապիտալիստական արդիւնաբերութեան աճումին: Ահա այս ուղղութեամբ գործառնութեան զիժին կը հետեւէին վաճառական կապիտալիստներու այն հատուածները, որոնք սկսեցին ճարտարարուեստի հսկողութիւնը իրենց ձեռքն առնել եւ ասով ուժեղացնել իրենց ազդեցութիւնը: Բայց նուազ կարեւոր չէ երկրորդ պայմանը. այսինքն այն՝ որ նորածին արդիւնաբերական կապիտալը ինքնին ազատագրուելու էր առեւտրական շրջապտոյտի մէջ այն արդեւազող մոնոպոլիներէն, որոնցմով պարսպաւորուած է վաճառական կապիտալիստը: Առանց այս երկրորդ պայմանին, արդիւնաբերական շահարկութեան դաշտը կը մնայ սահմանափակ, սահմանափակ կը մնայ նաեւ ակնկալուած շահը: Այս պատճառով էր որ այդ շրջանին, քաղաքական պայքարները այնքան շատ կարեւորութիւն ստացան. նոյնպէս այս պատճառով էր որ ընկերային դասաւորումները, որոնք հիմքը կը կազմէին այդ պայքարներուն, բարդ էին եւ փոփոխելի: Հաւանական է նաեւ կարեւոր նկատել այն պայմանները, որոնք արդեւակելէ աւելի կը նպաստեն որ կապիտալը շահարկութեան դրուի երկրաշարժութեան մէջ, ան ալ՝ ոչ թէ հողերը պարտաժուրհակի տակ առնելու եւ գանտնք դնելով վարձու տալու իմաստով, այլ այն իմաստով որ անով երեւան կու դար գիւղական պրոլետարիատը:

Ահա այս ազդակներն էին որ պիտի դարգացնէին կապիտալիստական ձեւի արդիւնաբերութիւնը: Եւ պէտք է ըսել թէ հետզհետէ ուժեղացած միապետութիւնը մաս մը պարագաներու տակ ուղղակի կամ անուղղակի կերպով կը նպաստէր կապիտալիստներուն, թէեւ երբեմն ալ՝ յենած հողատէր պնտուականութեան՝ խոչնդոտ կը հանդիսանար կապիտալիստական արդիւնաբերութեան զարգացումին: Բայց ինչ ալ որ ըլլար անհատ միապետի մը կամքը չէր կրնար արգիլել Ֆէոդալիզմի ծոցէն ծնած եւ անոր գոյութեան սպառնացող տնտեսական գործօն ուժերու յառաջխաղացքը, որուն յաղթանակը հուշակուեցաւ Ֆրանսական Մեծ Յեղափոխութեամբ:

Գ Լ ՈՒ Խ Դ .

Մ Ա Ր Ք Ս Ի « Կ Ա Պ Ի Տ Ա Լ Ը »

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

1

Վիթխարի ճակատամարտերու շրջանին, երբ պիտի որոշուէր բազմաթիւ սերունդներու ճակատագիրը, առհասարակ հանճարներ ծնած են, որոնք իրենց թանկարժէք ստեղծագործութիւններով, այսինքն՝ իրենց մաքի ու սրտի անպարտելի ուժով լուսաւոր ճամբայ մը բացեր են անոնց համար, որ կուներ են յանուն իրաւունքի եւ ազատութեան: Քարլ Մարքս ահա այն հանճարն էր, որ երեւան եկաւ ժԹ. դարուն եւ տուաւ այն լուսատու ուղեցոյցը, որու առաջնորդութեամբ՝ շահագործուող եւ տառապող մարդկութիւնը պիտի կռուէր, պիտի յաղթէր, պիտի յառաջդիմէր ու պիտի հաստատէր սոցիալիստական հասարակարգ մը, ուր աշխատաւորները տէրը պիտի դառնային իրենց աշխատանքի պտուղներուն, ուր դասակարգային հակամարտութիւնները պիտի ջնջուէին եւ ուր պիտի տիրէր աշխատանքի թագաւորութիւնը: «Պրոլետարներ բոլոր երկիրներու, միացէ՛ք», այս էր Մարքս-էնգէլսի խմբագրած Կոմունիստական Մանիֆէստի կոչը, որուն առաջին արձագանգը լուսեցաւ 1871-ին, Փարիզի Կոմունայի բերնով: Ի՞նչ ըսել, սակայն, որ արեւան մէջ խեղդուեցաւ այդ արձագանգը: Բայց Մարքս-էնգէլսի ցոյց տուած ճամբան, փոխանակ խաւարի մէջ ծածկուելու՝ աւելի լուսաւորուեցաւ: Առիւծասիրտ սուս պրոլետարիատը, Լենինի եւ ընկերներուն առաջնորդութեամբ՝ Փարիզի Կոմունայի փորձառութիւնը եւ անոր տուած դասերը որպէս ուղեցոյց վեր բռնած՝ 1917-ին, Հոկտեմբերեան Մեծ Յեղափոխութեան յաղթանակով հիմնեց Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութիւնը:

Պահ մը կարծուեցաւ թէ՛ եզածը ժամանակավրէպ երեւոյթ մըն էր, որ դատապարտուած էր ստուերի նման անհետանալու: Բայց այդ «ժամանակավրէպ երեւոյթը» 200 միլիոն հերոս ժողովուրդի մը անխորտակելի կամքը ներկայացնող կրանիթեայ հսկայական ժայռ մը դարձաւ, որու ստեղծուած առջեւ փշրուեցան կապիտալիստական պետութեանց խելագարութեամբ փոթորկաւոր ծովու սննացող ալիքները: Նախ հրապարակ իջաւ նացիզմը, աշխարհակալութեան ձգտող Հիթլերի զլխաւորութեամբ: Ու երբ ամբողջ քաղաքակիրթ

աշխարհը ահ ու դողի մատնուած էր, Սովետ. Միութեան քաջարի բանակներն էին որ մեծամիտ Հիթլերի արիւնհարբու հորդաները խուճապի մատնեցին ու գրաւեցին անոր միջնաբերդը՝ Բերլինը: Այս օրերս, հիթլերիզմին յաջորդած է ամերիկեան իմպերիալիզմը, որ Վիէտնամի մէջ յառաջ տանելով իր անորակելի բարբարոսութիւնները, բացայայտ կերպով հրաւէր կը կարգայ երկարը համաշխարհային պատերազմի մը, որմէ յետոյ՝ կը յուսայ տիրապետել ամբողջ աշխարհին, անոր վզին փաթթելով իր հասկցած ձեւի գերիացնող խաղաղութիւնը: Բայց այժմ 14 երկիրներ կան, որոնք 35 միլիոն քառակուսի քիլոմեթր տարածութեան վրայ, այսինքն՝ մեր երկրի հողամասին մէկ չորրորդին վրայ, հազար միլիոն բնակչութեամբ՝ այսինքն աշխարհի բնակչութեան մէկ երրորդով՝ կը ներկայացնեն սոցիալիստական անխորտակելի սիստէմը: Այսօր, ուրեմն, պատմութեան անիւր ետ դարձնելը շատ աւելի երազային է, որքան յիսուն տարի առաջ երազային կը թուէր Սոցիալիզմի իրականացումը: Եւ ինչո՞ւ չընդունիլ անառարկելի այն ճշմարտութիւնը, որ այս պատմական, աննախընթաց իրադարձութիւնը յառաջացաւ Մարքս-Լենինեան տեսութեան առաջնորդութեամբ:

Այժմ, որպէսզի մենք կարողանանք հանդամանօրէն հասկնալ այդ յեղափոխութեան էութիւնը, մեր ուշադրութիւնը դարձնելու ենք Մարքսիզմի հիմքը կազմող անկիւնաքարերուն: Այդ յեղափոխական տեսութեան շէնքը կառուցանողն եղաւ Քարլ Մարքս իր յաւէտ եզակի մնացող ստեղծագործութեամբ — Կապիտալով:

Մարքս իր Կապիտալով ամենախոր եւ բազմակողմանի սպասցոյցներով հազուեցուցեր է իր գիւտերը, որոնք մարդկային հասարակութեան մասին պարզուած տեսութեանց մէջ յառաջ բերին արմատական յեղափոխութիւն մը եւ անոնց դարդացման համար բացին լայն ուղիներ: Ասով ըսել կ'ուզենք թէ այդ գիւտերը Սոցիալիզմը գրին գիտական հաստատուն հիմքերու վրայ եւ ցոյց տուին որ սոցիալիզմը անհրաժեշտ եւ տրամարանական արդիւնքն է քաղաքակրթութեան դարդացման ամբողջ շրջանառութեան: Սոցիալիստական դադափարները ծանօթ էին շատ կանուխէն՝ նախ քան Գիտական Սոցիալիզմի հիմնադիրներու հրապարակ իջնելը: Բայց այդ սոցիալիզմը ուսոպիսա մըն էր, երազային կղզի մը, սոցիալիստական հասարակարգը հոս կը ներկայացուէր զուսուցող պատկերներով, նայած նկարիչի տաղանդին: Եւ պէտք է ըսել թէ այդ ուսոպիստներուն մէջ զանուած են փայլուն, կարող մտածողներ, ինչպէս օրինակ՝ Թամրա Մուր, Քամպանէլլա, Ռորերը Օվըն, Սէնդ Միմոն եւ Զուրիէ: Բայց այս ուսոպիստներու իտէալին եւ իրական աշխարհին միջեւ տարածուող անդունդ մը կար: Մարքս եւ էնգէլս գիտականօ-

ընդ փաստեցին որ մարդկային հասարակութեան յառաջգիծական զարգացողութեան յառաջընթացին մէջ կոմունիզմի յաղթութիւնը անխուսափելի է: Ասոր վրայ սոցիալիզմը ուստպիս մը ըլլալէ դադրելով եղաւ զիտութիւն մը, պրոլետարիատի զիտութիւնը: Իսկ այդ զիտութեան լիակատար բացատրութիւնը եւ մեկնարանութիւնը կը գտնենք Կապիտալի մէջ:

Ի՞նչ էր այն մեծ դիւտերու միջուկը, որու շնորհիւ Մարքսիզմը կրցաւ մարդկային հասարակութեան պատկանող զիտութեան յօրինուածքին մէջ յառաջացնել կատարեալ եւ հիմնական յեղափոխութիւն մը: Էնդէլս, այդ դիւտերէն երկուքը միայն վեր կ'առնէ, եւ անոնց կու տայ առաջին կարգի կարեւորութիւն. մէկը՝ պատմութեան մատերիալիստական ըմբռնողութիւնն է, միւսը՝ յաւելեալ արժէքի տեսութիւնը: Այդ երկուքը Մարքս իր Կապիտալին մէջ կը պարզաբանէ բարձր կատարելութեամբ, յստակութեամբ ու ճշգրտութեամբ:

Մարքսիզմը հիմնական յեղափոխութիւն յառաջացուց ամբողջ աշխարհի պատմութեան մասին ընթացիկ ըմբռնողութեան մէջ: Հազարաւոր տարիներով մարդիկ անզօր եղած են բացատրելու այն օրէնքները, որոնցմով հասարակութիւնը զարգացեր է ու կը զարգանայ: Հասարակութեան պատմութիւնը անոնց համար նկատուած է որպէս արդիւնք՝ «անհատական» հերոսներու քմահաճոյքներուն. շարունակական զիպուածներու շղթայ մը, որու օղակները իրարու միացնող տրամաբանական կապ կարելի չէ գտնել:

Մարքս դտաւ մեծագոյն գաղտնիքի բանալին. այսինքն այն՝ որ մարդկային հասարակութիւնը, ինչպէս բնութիւնը, կը զարդանայ համաձայն մասնախատուկ օրէնքներու: Ինչպէս բնութեան օրէնքները, մարդկային հասարակութեան օրէնքներն ալ կը յայտնադործուին ո՛չ թէ անջատօրէն ժողովուրդի կամքէն ու գործերէն, այլ ընդհակառակը՝ յայտնապէս՝ ժողովրդական վիթխարի մասսաներու յառաջացուցած գործառնութիւններէն ու շարժումներէն: Մարքսիզմը ցոյց կու տայ որ ժողովուրդները իրենք են որ կը դարբնեն իրենց ճակատագիրը, իրենք են որ կ'ապահովեն իրենց բարեկեցութիւնն ու աղատութիւնը: Մարդկային ցեղի զարգացումը յառաջ կ'ընթանայ հասարակութեան խոնարհագոյն ձեւերէն դէպի աւելի բարձր ձեւերը. եւ եթէ փորձեր ըլլան այդ յառաջգիծութեան ընթացքը կասեցնելու կամ զայն ետ մղելու, այդ փորձերը մասնուած են ճախողանքի՝ հոգ չէ թէ փորձարկուները ինչպիսի արիւնալի միջոցառումներու կը զիմեն: Մարքսիզմը անհերքելի տուիքներով կը փաստէ որ կապիտալիզմի զարգացումը իր հաստատած հասարակական կարգերու ծոցէն ծնած ներքին ու բարդ հակասութեանց բերումով կ'առաջնորդուի դէպի ընկերային յեղափոխութիւն, դէպի

պրոլետարական դիկտատուրան: Մարքսիզմը կը սորվեցնէ որ կապիտալիզմի փլուզումը ինքնարեւարար տեղի չունենար, այլ անարդիւնքը պիտի ըլլայ պրոլետարիատի դժուարին պայքարին, պայքար մը՝ որ կը մարմնացնէ ընկերային յառաջգիծութեան շարհերը՝ ընդդէմ յետադիմական դասակարգի ուժերուն՝ որոնք կը ներկայացնեն երէկուայ մարդկութիւնը:

Կապիտալը գործ մըն է, որ կը նշէ նոր զարաշրջան մը՝ մարդկային ընկերութեան պատմութեան մէջ: Հոն գրուած է զիմացկուն հիմք մը՝ հասկնալու մարդկային հասարակութիւնը եւ անոր զարգացման օրէնքները զիտական այն մեթոտով, որ կը կոչուի մատերիալիստական տիալէկտիկա: Պրոլետարիատի կենսական շահերէն ծնունդ առած, իր հրատարակութեան օրէնք մինչեւ ներկայիս՝ բանուոր գասակարգի ձեռքին ամենահատու զէնքն եղած է սոցիալիզմի համար մղուած պայքարի ճամբուն վրայ: Պրոլետարական յեղափոխականներու բազմաթիւ սերունդներ՝ ամէն երկրի մէջ իրենց աչքերը ուղղած են եւ տակաւին կ'ուղղեն Կապիտալին, որ երկար ատենէ ի վեր նիւթական ուժի վերածուած է եւ իրեն կը քաշէ մասսաները: Անոնք անոր մէջ կը գտնեն բանուոր գասակարգի եւ անոր պայքարի գործնական փորձառութեան փայլուն ընդհանրացումը:

Այս գործը իր հրապարակ ելած օրէնքի վեր, անզաղար զինած է այնպիսի ռազմիկներ, որոնք աշխարհի պատմութեան ամենամեծ ճակատամարտները շահած են: Որովհետեւ Կապիտալը նուիրուած է մշակելու այն տեսութիւնը, որ իր մէջ կը բովանդակէ գտարիւն զիտական ոգի մը միացած յեղափոխական ոգւոյն հետ: Ասոր համար Կապիտալը սոցիալիզմի համար մղուած պայքարին մէջ բանուորներու ձեռքի ամենագորաւոր զէնքն եղած է:

«Որքան ատեն որ երկրագունդի վրայ կապիտալիստներ եւ բանուորներ կան, ո՛չ մէկ զիրք այնքան կարելոր է բանուորներուն համար, որքան Կապիտալը»: Ֆր. Էնգէլս այս տողերը գրած պահուն, վեր առած է գործաւոր գասակարգը որպէս ընկերային ուժ մը՝ որ կը մարմնացնէ փաղուայ մարդկութիւնը իր լաւագոյն յոյսերով եւ ամենախիղախ մտածումներով. գասակարգ մը, որ արդէն մտած է պատմական գործունէութեան զարաշրջանը՝ ընկերային զարգացման օրէնքներու զիտական հասկացողութեան գրօշակով:

Մարքսի մեթոտը — յեղափոխական մատերիալիստական տիալէկտիկան — ամենէն լիակատար կերպով պարզաբանուած՝ կը տեսնենք որ գործածուած է Կապիտալի մէջ. եւ երբք սխալած չենք ըլլար երբ յայտնենք թէ անիկա ամենամեծ փիլիսոփայական, ինչպէս նաեւ տնտեսագիտական գործերէն մին է:

Շատեր կը հաւաստիացնեն թէ՛ Մարքս հետեւած է Հէկէլի

ևւ ընդօրինակած է անոր տիպիկտիկան. (դրութիւն, հակադրութիւն, համադրութիւն... Ուրիշ խօսքով՝ գաղափարները զիրար ժխտելով կը զարգանան) : Ասիկա Մարքսի հանճարը նսեմացնելու բացայայտ նպատակ մը կը պարզէ : Հէկէլի տիպիկտիկան մշուշապատ է, միտտիկական. ան կանգնած է իր գլուխին վրայ : Մարքսը զայն կանգնեցուց օտքերուն վրայ :

— «Իմ տիպիկտիկական մեթոտը ո՛չ միայն տարբեր է Հէկէլի տիպիկտիկայէն, այլև ուղղակի անոր հակառակը», այսպէս գրած է Մարքս, Կապիտալի առաջին հատորի Յառաջաբանին մէջ : Առաջին էջէն մինչև վերջին էջը այս գործը ցոյց կու տայ թէ ի՞նչ բնոյթ ունին յետադիմականներու փորձերը, որոնք կ'ուզեն Մարքսի տիպիկտիկան նոյնացնել Հէկէլի տիպիկտիկային հետ, մինչդեռ առաջինը ներկան վեր կ'առնէ եւ ապագային կ'ուղղուի . իսկ երկրորդը՝ անցեալին կը նայի : Մէկը յեղափոխական բնոյթով մատերիալիստական է, միւսը՝ յետաշրջական բնոյթով՝ իտէալիստական : Մէկը կ'ազդի ու կը յայտնադործուի միշտ իրական կեանքի մէջ, մինչ միւսը կը զեզերի բուրժուա մտածողներու գանկին մէջ : Առաջինը առաջնորդող ուժ կը դառնայ օր ըստ օրէ, մինչ երկրորդը սալոններու մէջ մտամարզանքի գիծով ժամանցի նիւթ կը հայթայթէ միայն : Հակառակ, սակայն, այս ակնբախ իրողութեան՝ բուրժուա տնտեսագէտները տակաւին սիրտ կ'ընեն յայտարարելու որ Մարքսի գծը Արեւմուտքի երկիրներուն մէջ արդէն ոչնչացեր է : Ոչնչացեր ու անհետացեր է, որովհետեւ աւելի առողջ եւ աւելի զօրաւոր հոսանք մը սկսած է եւ այդ հոսանքին մէջ ի սպառ խեղդուած է Մարքսի գծը — բուրժուա նացիոնալիզմի հոսանքը : Պատմական ուժերու զործօն դերին անգիտակ մարդիկն են որ այդպիսի անիմաստ հաւատարացումներ կ'ընեն : Մարքսի գծը բանուոր գասակարգի հիմնական շահերու գիտական բացատրութիւնն է : Եթէ Մարքսի գծը արմատախիլ եղած պիտի նկատենք, ապա ուրեմն, պիտի ընդունինք թէ բանուոր գասակարգն ալ փճացեր ու անհետացեր է : Բայց մենք գիտենք թէ բացարձակապէս անկարելի է բանուոր գասակարգը անհետացնել : Աւելի քան իննսուն տարի է, որ Մարքսի գծը իջած է քաղաքական ապարէզ եւ այդ ժամանակաշրջանին հարիւրաւոր բուրժուա կառավարութիւններ փորձեր են Մարքսի գծը ոչնչացնել : Բայց ի՞նչ եղած է այդ փորձերու արդիւնքը : Բուրժուա կառավարութիւնները եկեր ու անցեր են, բայց Մարքսի գծը ո՛չ միայն իր գոյութիւնը կը պահէ, այլև իր թեւերը կը տարածէ ամէն կողմ :

Մարքսի գծը—Լենինի գծը բանուոր գասակարգի մարտական թէորիան է : Միայն պրոլետարիատը — այն գասակարգը, որուն կը պատկանի ապագան — կրնայ անվախօրէն վեր հանել ընկերային

գարգացման օրէնքները, որովհետեւ այդ օրէնքներն են որ կը հաստատեն պրոլետարիատի յղթութեան անհրաժեշտութիւնն ու անխուսափելիութիւնը :

Կապիտալիզմի արշալուսային շրջանին, բուրժուադիան երիտասարդ գասակարգ էր լեցուած եռանդով, կորովով ու ուժով : Ան վճռական կամքով պայքարեցաւ Ֆէոդալական կարգերու դէմ, որոնք ծերացեր էին : Անոր ուսեալ տեսարանները անկեղծօրէն փորձեցին ներթափանցել մարդկային հասարակութեան գարգացման գաղափարներուն : Անոնք տեսան եւ նոյն գծին վրայ արձանագրեցին շատ մը արժէքաւոր բաներ : Բայց անոնց գասակարգային շահու սահմանաւորումները կ'արգիլէին որ անոնք պարզէին ընկերային գարգացման զործնական օրէնքները : Անոնք անկարող էին հասկնալ թէ այս ընկերային գարգացումը, որ բուրժուադիան իշխանութեան հասցուցեր էր, օր մըն ալ՝ զայն պիտի առաջնորդէր իր անկումին : Անոնք բուրժուական հասարակարգը ընդունեցին որպէս յաւիտենական, ընկերային ու բնական հասարակարգ մը :

Բուրժուա գասական անտեսագիտութեան տեսարաններէն ամենամեծն էր Ռիկարտոն, որ արդիւնաբերութեան կապիտալիստական ձեւի գանազան կողմերը խոր հետազոտութիւններու ենթարկելէ վերջ արժէքաւոր յայտնաբերութիւններ բրաւ, բայց ան ալ մնաց նեղ շրջանակի մէջ : Եւ Մարքս, զուր տեղը չէր որ անոր համար ըսաւ. «Պարոն Ռիկարտոն կ'երեւի թէ ուրիշ մոլորակէ մը եկած է» :

Այս անտեսագէտները այնպէս կ'ընդունէին թէ բուրժուական հասարակարգը ինքըստինքեան՝ ինքնածին հասարակարգ մըն է եւ չէին հարցնէր թէ ան ի՞նչպէս երեւան եկաւ : Ուսումնասիրելով հանդերձ արտադրողական յարաբերութիւնները, որոնց ներքեւ ժողովուրդը ապրանքներ կ'արտադրէր, անոնք պահ մը կանց չէին առնէր եւ հարց տալ թէ՛ այդ յարաբերութիւնները ինչպէ՛ս յայտնադործուեցան : Դասական անտեսագէտները սկսան այն տեսանկիւնէն, որ կ'ենթադրէր թէ արտադրողութեան բուրժուական ձեւը յաւիտենական է, բացարձակ եւ անփոփոխ բնոյթ ունի : Բուրժուա-գասական զարոցի ներկայացուցիչները պարզամտօրէն կ'ընդունէին որ Կապիտալիզմը մարդկային հասարակութեան բնական պայմանը ըլլալու է կոչուած . անոնք բուրժուական հորիզոնէն հեռուն չէին կրնար տեսնել եւ մինչև վերջն ալ չկրցան տեսնել :

Բուրժուա գասական անտեսագիտութիւնը ԺԸ. գարու զուական էր : Ան կապուած էր Լուսաւորիչներու այն գարաշրջանին, ուր կը պատրաստուէր Փրանսական գասական բուրժուական յեղափոխութիւնը : Դասական անտեսագէտները շարունակեցին Ֆրանսական Լուսաւորիչներու բանավարութեան (rationalism) գիծը՝ իր բոլոր ար-

մէքաւոր ու թերի կողմերով: Էնդէլս նշած է. — «Անոնց համար նոր գիտութիւնը իրենց զարաշրջանի պահանջներուն ու պայմաններուն արտայայտութիւնը չէր, այլ արտայայտութիւնն էր յաւիտենական Բանականութեան»: Պատմութիւնը բացատրելու դժին վրայ անոնք կապուած էին իտէլալապաշտական գանազան սխալմաներու: Անոնց մօտ բնական օրէնքի բանավարական թէորիան երբեք հարցական չէր նկատուեր:

Դասական տնտեսագէտները երբեմն իրապէս գիտական փաստարկումներով ու քաջութեամբ կապիտալիզմի ներհակութիւնները կը վերլուծեն: Բայց այդ ներհակութեանց տիպիկտիկան իր զարգացողական ձգտումով կնքուած կը մնայ գիրքի մը էջերուն մէջ: Մանրորոժուական տնտեսագէտներու եւ սկզբնական շրջանի սոցիալիստական երազատեսեան քննադատութիւնը կապիտալիզմին՝ նոյնպէս ձախողեր է պարզելու կապիտալիստական հասարակարգի զարգացման գլխաւոր զապանակները:

Միայն Մարքս եւ Էնգէլս եղան, որ կարողացան պարզարանել կապիտալիզմի շարժման գործօն օրէնքները: Մարքսի եւ Էնգէլսի պատմական մեծագոյն արժանիքը այն է, որ անոնք գիտական վերլուծումով կրցան սպառնացանել որ կապիտալիզմի փլուզումը եւ անոր փոխանցումը կոմունիզմին՝ անխուսափելի է. այսինքն՝ փոխանցումը այն դարաշրջանին՝ ուր գասակարգերը կ'անհետին եւ այլեւս կը դադրի մարդը մարդուն ձեռքով շահագործելու գրութիւնը: Արտագրողութեան մէջ շարժման օրէնքներու պարզարանումը, կապիտալիզմի անկման պարզարանումը, անոր ներհակութեանց ուժերու պարզարանումը: Ահա թէ ի՞նչ բրաւ Մարքսը:

Մարքս առաջին մարդն էր որ կրցաւ վեր հանել արտադրողութեան կապիտալիստական ձեւի պատմական՝ եւ նոյն ատեն սահմանաւոր բնոյթը: Աս ցոյց տուաւ որ կապիտալիզմը երբեք մարդկային հասարակութեան համար յաւիտենական, բնական եւ բացարձակ պայմանը չէ, այլ ընդհակառակը՝ ան միմիայն մասնաւոր, պատմականօրէն սահմանեալ ձեւ մըն է: Մարքս այդպիսով պարզարանեց կապիտալիզմի պատմական առաքելութիւնը: Ան ցոյց տուաւ թէ ինչպէ՞ս բուրժուական հասարակութեան միջոցով կեանքի կոշտեցան ընկերային աշխատանքի արտադրողական վիթխարի ուժերը եւ այսպիսով ստեղծուեցաւ նիւթական հիմքը նոր եւ աւելի բարձր հասարակութեան մը ձեւին: Նոյն ատեն բուրժուական հասարակարգը ծնունդ տուաւ այն ընկերային ուժին — Պրոլետարիատին — որ իր յեղափոխական պայքարումով կը ջանայ հասնիլ սոցիալիզմի իրականացման: Կապիտալիզմը ինքն իր ձեռքով կը ստեղծէ իր սեփական գերեզմանափորը: Սոցիալիզմի նիւթական նախապայմանները ծայրայեղօ-

րէն ներհակ եւ հակամարտ ձեւով դուրս կու գան կապիտալիստական հասարակութեան որովայնէն: Միմիայն պրոլետարիատի սոցիալիստական յեղափոխութիւնն է որ իր սեփական յեղափոխական տիկտատուրայի նշանաբանով կրնայ ազատել արտադրողական վիթխարի ուժերը այդ շրջաններէն, որոնք կազմուած են կապիտալիզմի արդեն նարեբական յարաբերութիւններու շրջանակին մէջ: Բանուոր գաստկարգի տիկտատուրայի վարդապետութիւնը միակ ուղին է, որ կը տանի Սոցիալիզմին. ատոր համար Լենին գոյն անուանած է Մարքսիզմի հիմնական եւ էական վարդապետութիւնը:

Կապիտալը պատմական շատ մեծ ու շատ կարելոր ուսումնասիրութիւն մըն է, որ պայծառ լոյսով կը լուսաւորէ կապիտալիզմի պատմական ուղին, անոր ծնունդէն մինչեւ վերջաւորութիւնը:

2

«ԿԱՊԻՏԱԼ»Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ .—

Կապիտալը տեսակ մը համայնադիտարան է, որ իր մէջ կը պարունակէ պատմական, փիլիսոփայական, քաղաքատնտեսական խնդիրներու շուրջ խոր սուսումնասիրութեանց վրայ հիմնուած կըրոնոգատ ծանօթութիւններ: Ո՛չ մէկ մարքսիստ պատմարան կրնայ իր առաջադրած գործը հանգամանօրէն վերջացնել, առանց տիրապետած ըլլալու Մարքսի կապիտալի բովանդակութեան:

Մարքս կապիտալը բաժնած է երեք հատորներու: Նիւթի այս բաժանումը ո՛չ պատահական է, ոչ ալ երեւութական: Յառաջադրուած նիւթը շատ բարդ ու բազմակողմանի ըլլալուն համար Մարքս գոյն բաժներ է եւ անոնց վերլուծումը բրեր է երեք հատորներով:

Առաջին հատորին մէջ վեր աւնուած է կապիտալի արտադրութեան շրջանառութիւնը: Մարքսի մեկնակէտն եղած է առաջնութիւնը տալ արտադրողականութեան: Ան կը հաստատէ թէ արտադրողականութեամբ տեղի կ'ունենայ այն շրջապտոյտը, որ կ'որոշէ տնտեսական կեանքի մէջ պահանջի ու մատակարարման միւս բոլոր երեւոյթները: Ասկէ կը սկսի բնականօրէն՝ կապիտալիստական արդիւնաբերութեան բրոցէսի հետախուզութիւնը: Առաջին հատորին մէջ, ուր այդ յառաջընթացը վերլուծման ենթարկուած է, յաւելեալ արժէքի քննարկումը կեղրոնական առանցքը կը կազմէ:

Երկրորդ հատորին մէջ վեր աւնուած է շրջաբերութեան բրոցէսը: Արտադրուած ապրանքները կապիտալիստական ձեռնարկութեանց մէջ ծախուելու համար են: Միայն այդ պարագային է որ

կապիտալիստը վարձու աշխատանքով արտադրուած ապրանքներէն կը քաղէ յաւելեալ արժէքը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ իր շահը: Շքերջարեութեան այդ բրոցէսին մէջ տեղի կ'ունենայ ուրիշ շրջանառութիւն մը — կապիտալի գրամական ձեւէն ապրանքային ձեւի փոխակերպման շրջանառութիւնը: Կապիտալիստը իր գրամով կը գնէ նոր ապրանքներ, այնպիսի ապրանքներ բնականաբար, որոնք անհրաժեշտ են շարունակելու եւ անընդմիջաբար վերանորոգելու կապիտալիստական արդիւնաբերութեան ընթացքը: Ապրանքային շքերջարեութեան բրոցէսով կապիտալիստական վերարտադրողականութեան ընթացառուժը եւ անոր հետ կապուած խնդիրները կը կազմեն երկրորդ հատորի նիւթերը:

Կապիտալի երրորդ հատորին մէջ Մարքսը կապիտալիստական արդիւնադործութիւնը որպէս ամբողջութիւն վեր կ'առնէ եւ կը վերլուծէ զայն՝ աւելի լայն եւ լրացուցիչ բացատրութիւններով:

Եւ այստեղ արդէն, պէտք է նշենք որ Կապիտալի երկրորդ եւ երրորդ հատորները առաջին հատորի մէջ շօշափուած նիւթերու աւելի մանրամասն, աւելի լայն, աւելի պատմական բացատրութեանց յատկացուած են մեծ մասով:

Մարքսի Կապիտալը, ինչպէս Լենին մէկէ աւելի անգամներ չեշտած է, կը ներկայացնէ գիտական վերլուծումը այն իրողութեան, որ կապիտալիստական հասարակութիւնը հիմնուած է իրարու հակառակ երկու դասակարգերու վրայ, բուրժուազիայի եւ պրոլետարիատի վրայ: Առաջին հատորի հիմնական բովանդակութիւնը յաւելեալ արժէքի տեսութիւնն է, որ նկատի կ'առնէ կապիտալիստական հասարակութեան երկու գլխաւոր դասակարգերու՝ բուրժուազիայի եւ պրոլետարիատի յարաբերութիւնները:

Մարքս, իր Կապիտալին մէջ հիասքանչ վերլուծումով կը լուսարկէ այն՝ ինչ որ ապրանք կը կոչուի: Ան այդ բանը կ'ընէ պարզելու համար զազանիքը յաւելեալ արժէքին, որ կապուած է աշխատուժը ապրանքի փոխակերպուելու հանգամանքին հետ: Եւ որպէսզի Մարքս կարողանայ այդ մասնայատուկ ապրանքը՝ աշխատուժը վերլուծման ենթարկել, ամենէն առաջ ան կ'անդամահատէ ընդհանուր ապրանքային արդիւնաբերութեան հիմնական ձեւերը:

Ապրանքային արդիւնաբերութիւնը կապիտալիստական արդիւնաբերութեանն առաջ ունեցեր է իր նախընթացը: Ապրանքային արտադրողականութիւնը սկսած է հազարաւոր տարիներէ ի վեր՝ նախքան կապիտալիստական դարաշրջանի բացումը: Միջին Դարու վերջերը ապրանքային արտադրողութիւնն արդէն հասեր էր համեմատաբար բարձր զարգացման աստիճանին: Բայց միայն կապիտալիստական սիստէմի ներքեւ էր որ ապրանքային արդիւնաբերութիւնը

համաշխարհային բնոյթ ստացաւ եւ եղաւ արդիւնաբերութեան իշխող ձեւ մը: Մարքս երբ սկսաւ ապրանքի վերլուծման իր լուսարկութիւնը, ատիկա առաջին քայլն էր, որ պարզելու էր մինչեւ այդ տեսն թագնուած յաւելեալ արժէքի զազանիքը:

Մարքս իր Կապիտալով երբ կը ցաւ լուսարանել ընկերային, հասարակական առեղծուածները, ասով գիտութեան համար բոլորովին նոր ճամբայ մը հարթեց եւ քաղաքական տնտեսագիտութիւնը նոր հիմքերու վրայ գրաւ:

Կոյր բուրժուա տնտեսագէտները տնտեսական յարաբերութիւնները կը վերադրեն իրերուն. մէկ ապրանքը կը փոխանակուի միւսին հետ: Անոնք նկատի չէին առնէր բնաւ այն իրողութիւնը, որ իրերը իրենք իրենց չեն փոխանակուիր, մէկ ապրանքը ուրիշ ապրանքի մը հետ չի փոխանակուիր, այդ փոխանակութիւնը տեղի կ'ունենայ մարդոց միջոցով: Ատիկա ապրանքային ֆէտիշիզմ է — թերափաշտութիւն: Մարքսը, ահա այդ թերափաշտութիւնն է գոր կը մերկայցնէ. ան ցոյց կու տայ որ ապրանքը, անոր արժէքը, արարանքներու փոխանակութիւնը, բոլոր ասոնք առանձնակի իրերու ստորոգելիքները եւ շարժումները չեն, այլ ժողովուրդի միջեւ մասնայատուկ ընկերային արդիւնաբերութեան յայտնագործումի ձեւերն են, որոնք մարդոց միջեւ կը յառաջացնեն ընկերային յարաբերութիւններ:

Աւելի հանգամանորէն յառաջ տարուած վերլուծումը ցոյց կու տայ թէ ինչպէս գրամական գործառնութեան հրապարակ գալովն ու զարգանալովը կապակցութիւնը ժողովուրդի միջեւ որպէս ապրանք արտադրողի՝ եղաւ աւելի սերտ, աւելի բազմակողմանի: Նոյն տեսն ապրանքի արդիւնաբերութեան ներհակութիւնները նոյնպէս բազմացան: Դրամի գործօն դերը, որպէս շքերջարեութեան միջոց, ծնունդ տուաւ տնտեսական տազնապներու կարելիութեան: Այս կարելիութիւնը աւելի ցցուն դարձաւ երբ գրամը անցաւ իր վերջին գործօն դերին, այսինքն՝ երբ ան եղաւ վճարումի միջոց:

Դրամական գերակայութեան հետ ժողովուրդի միջեւ եղած բոլոր յարաբերութիւնները դարձան ոսկեզօծ կամ արծաթապատ: Բայց Մարքս կը պարզէ որ «ոսկին ու արծաթը բնոյթով դրամ չեն, դրամը իր բնոյթով ոսկի ու արծաթ է»: Ուրիշ խօսքով՝ ժողովուրդի միջեւ արդիւնաբերութեան յարաբերութիւնները կը յայտնագործուին միմիայն այն բաներով, որոնք տրուած պայմաններու ներքեւ՝ դրամի դեր կը խաղան, օրինակի համար թղթադրամները, որ ո՛չ ոսկի են եւ ոչ ալ արծաթ:

Մարքս վերլուծելով ապրանքն ու դրամը, աւելի առաջ երթալով կը վերլուծէ կապիտալը: Այստեղ զարձեւալ ան առաջին կալը

գով ցոյց կու տայ թէ՛ հակառակ աստիկ անտեսագիտութեան հաւաստիացումներուն՝ կապիտալը իր մը չէ, այլ ընկերային յարաբերութիւն մը: Ան կը քննէ այս ընկերային յարաբերութեան էութիւնը, կը ցուցնէ անոր ծագման ու զարգացման պատմական պայմանները եւ կը պարզէ այն ձգտումները որոնք յառաջ կը տանին նշուած զարգացումը:

3

Մարքս շատ իրաւամբ ըսած է որ կապիտալը իր ամբողջ կեանքը արժած է: Անոր վրայ իր թափած աշխատանքը քառասուն երկար տարիներու շրջան մը կը բոլորէ: Այո՛, քառասուն տարի Մարքս յոգնաջան ու ծանր աշխատանքով եւ ան ալ՝ դժուարին պայմաններու մէջ գրուի հանած է իր նմանը չունեցող այդ վիթխարի գործը: Այն օրէն, երբ ան սկսաւ ուսանիլ քաղաքական անտեսագիտութիւն (1843ի աշնան) մինչեւ իր մահը (Մարտ 14, 1883) ան ո՛չ մէկ օր չի դադարեցուց կապիտալի վրայ իր աշխատանքը:

Մարքս վարպետ ճարտարապետի հոգածութեամբ եւ կենդանացեալ ուշադրութեամբ քար քարի վրայ դնելով էր որ կառոյց կոթողանման այն զարմանահրաշ շէնքը, որու շինութեան ատեն բարձրացուց բազմաթիւ լաստակներ: Կապիտալի վրայ իր աշխատանքի ընթացքին, Մարքսի գրած նախակարգային ձեռագիրները ստուար հատորներ կը կազմեն, որոնց մօտ կապիտալի վերջին գրամասը բրօշիւր մը կը թուի: Բացի այդ ձեռագիրներէն, Մարքս թողած է կապիտալի աշխատանքին նպաստող զանազան աղբիւրներէ անհամար քաղուածներ ու ամփոփումներ, որոնցմով տասնեակ հատորներ կարելի է կազմել:

Ճարտարապետ մը երբ հիանալի շէնք մը կը կառուցանէ, չի հետաքրքրուիր լաստակներով, որոնց օգնութեամբ է որ կը շինէ իր ծրագրած շէնքը: Գիտութեան մէջ հարցը կը տարբերի: Որպէսզի մենք կարողանանք գիտնականի մը աւարտած գործին շուրջ աւելի խոր, աւելի լիակատար եւ աւելի բազմակողմանի հասկացողութիւն ու զազափար ունենալ, նայելու ենք հեղինակին գիտական աշխատանոցին: Եւ եթէ ասիկա ճշմարիտ է ոեւէ բարձր չափանիշով գիտական աշխատանքի մը համար որ կու գայ այս կամ այն գիտութեան առջեւ զարգացման նոր զարագլուի մը բանալ, այն ատեն՝ մասնաւորապէս ճիշդ է նաեւ եւ կարեւոր՝ որ մենք նկատի առնենք կապիտալը:

Երբ մենք ծանօթանանք կապիտալի վրայ Մարքսի տարած աշ-

խատանքի շրջանին, կապիտալի մասին մեր հասկացողութիւնը կ'ըլլայ աւելի պարզ, աւելի նոր լուսաւորումով, աւելի հարուստ եւ աւելի խորունկ:

Կապիտալի վրայ Մարքսի աշխատանքը կարելի է բաժնել չորս գլխաւոր շրջաններու: Առաջին շրջանը կ'ընդգրկէ 1840-էն մինչեւ 1848-ի յեղափոխութիւնը(1) որու միջոցին Մարքս եւ Էնգէլս, որպէս աշխարհի պատմութեան մէջ պրոլետարիատի առաջին կոմունիստ կուսակցութեան առաջնորդները, կազմեցին կոմունիստ Լիկան(2): Այս շրջանը իր մէջ կ'առնէ գլխաւորաբար Մարքսի առաջին աքսորի տարիները, երբ ան երկար ատեն ապրեցաւ Ֆրանսայի եւ Պեճիկայի մէջ, իսկ յետոյ՝ կարճ ժամանակ մը՝ Անգլիոյ մէջ:

Երկրորդ շրջանը կ'ընդգրկէ այն տարիները, որ սկսաւ 1848-ի յեղափոխութեան պարտութեամբ, պարտութիւն մը, որ պատճառ եղաւ Մարքսի երկրորդ աքսորին. աքսոր՝ դէպի Լոնտոն: Այդ շրջանը, որ վերջացաւ 1859-ին, կարելի է կոչել երկրորդ տասնեակը: 1859-ին հրատարակուեցաւ իր մէկ գործը. — A Contribution of the Critique of Political Economy.

Երրորդ շրջանը կ'ընդգրկէ Critiqueի հրատարակութենէն մինչեւ կապիտալի առաջին հատորի երեւումը՝ 1867-ին:

Վերջապէս չորրորդ շրջանը կ'ընդգրկէ առաջին հատորի հրատարակութենէն մինչեւ Մարքսի մահը:

(1) 1848-ին բուրժուական յեղափոխութիւններ տեղի ունեցան Փարիզի, Բեռլինի եւ Վիեննայի մէջ: Առաջինը՝ Փարիզի յեղափոխութիւնն էր որ պայքեցաւ Փետրուարին եւ որ միւս յեղափոխութիւններէն կը զանազանուի 1848-ի Յունիսին, երկու դասակարգերու միջեւ մղուած մեծ ֆակտամարտով, ֆակտամարտ մը որ — ինչպէս Մարքս կը նշէ — «Այժմու հասարակութեան մէջ յառաջացուց երկու բաժանում»: Այս շրջանին (1848-1849) խմբագրեց Նու-Րէյնի-չէ-Յայթունկ յեղափոխական-դեմոկրատիկ թերթը, որ հրատարակուեցաւ Քոլոյնի մէջ, մինչ Էնգէլս պայքարի ֆակտան էր անցեր Գերմանիոյ մէջ:

(2) Կոմունիստ Լիկան հիմնուած էր Լոնտոնի մէջ 1847-ին, միջազգային ընկերութիւն մը՝ Գիտական կոմունիզմի գաղափարներու պրոպականդայի համար: Մարքսի եւ Էնգէլսի յանձնուեցաւ անոր ծրագիրը պատրաստելու գործը՝ կոմունիստ կուսակցութեան Մանիֆէստը, որ առաջին անգամ հրատարակուեցաւ 1848-ի Փետրուարին: Կոմունիստ Լիկան իր գոյութիւնը շարունակեց մինչեւ 1852 տարեթիւր:

1.— 1840-ի տարին —

Մարքս Քաղաքական Տնտեսագիտութեան Քննադատութիւնը գիրքին յառաջարանին մէջ կը նկարագրէ տնտեսական գիտութեան մէջ իր ուսանած ճիւղը: Ան ցոյց կու տայ որ ինք արդէն մասնագիտութեան տարած էր արդարադատական գիտութիւնը, անոր հետ նաեւ պատմութիւնը եւ փիլիսոփայութիւնը: Փերմանական համալսարաններուն մէջ, ուր Մարքս իր կրթութիւնը ստացեր էր, քաղաքական տնտեսագիտութեան այնքան կարեւորութիւն չէր տրուեր: Մարքսի համար, երբ ինք Րէյնիշէ Յայրունկի(*) խմբագիր էր, 1842-ին, քաղաքական տնտեսագիտութեան ուսման համար խթանիչ ազդակ մը եղաւ այն պարագան, երբ ինք շփման մէջ մտաւ այսպէս կոչուած «նիւթական շահերու» ոլորտին հետ: Մարքս անկէ յետոյ որոշեց նուիրուիլ քաղաքական տնտեսագիտութեան ուսման:

Մարքս իրագործեց իր գիտաւորութիւնը 1843-ի Հոկտեմբերին՝ Փարիզ փոխադրուելէն յետոյ: Ան իր գլուխը մխրճեց յեղափոխական կազմակերպութեանց եռուզեռու կեանքին մէջ, նոյն ատեն շարունակեց Փրանսական սոցիալիզմի եւ Փրանսական յեղափոխութեան պատմութեան ուսումնասիրութիւնը, ատոնց հետ նաեւ նուիրուեցաւ քաղաքական տնտեսագիտութեան ուսումին: Այդ ատեն Մարքս արդէն իսկ դարձեր էր յեղափոխական ան պրոլետարական մասսաներուն կը պարզէր գոյութիւն ունեցող հասարակական կարգերու շուրջ իր քննադատութիւնը:

Այստեղ պէտք է ըսել թէ Էնգէլսի հետ ունեցած յարաբերութիւնը շատ նպաստեց Մարքսին՝ քաղաքական տնտեսագիտութեան ուսումը յառաջ տանելու ճամբուն մէջ: Այո՛, Մարքս խորապէս ուսումնասիրեց այդ գիտութիւնը նախ, ապա իր գործերով զայն արմատական դժով յեղափոխութեան կապեց: Էնգէլս աւելի կանուխէն իր ուշադրութիւնը դարձուցեր էր դէպի քաղաքական տնտեսագիտութիւնը: Իր Outline of a Critique of Political Economy գործը, զոր Մարքս շատ զննատեց, հրատարակուած էր 1844-ին:

Մարքս տնտեսագիտական գրականութեան ուսումնասիրութիւնը նախ սկսաւ Փրանսերէնի թարգմանուած Անգլիացի տնտեսագէտներու գիրքերու ընթերցումով, բայց յետոյ՝ երկար ատեն մնալով Լոնտոնի մէջ, տիրացաւ Անգլերէն լեզուին եւ աւելի ուշադրութեամբ

(*) Րէյնիշէ Յայթունկ, բուրժուա ազատական օրկանը, որուն խմբագիրն էր Մարքս 1842-ի Հոկտեմբերէն մինչեւ 1843-ի Մարտ ամիսը, երբ խափանուեցաւ փրուսիական կառավարութեան կողմէ:

ուսումնասիրեց Ամիտի, Ռիքարտոյի, Սիամոնտիի, Բուրէրի, Սաարբէքի, ձէյմա Միլի գործերը: Անկէ վերջ երբ 1845-ին Բրուսէլ գնաց, հոն եւս անդադար չարունակեց իր ուսումնասիրութիւնները: Իսկ 1845-ի Օգոստոսին, Էնգէլսի հետ Մանչեստր ճամբորդելով, միասին ուսումնասիրեցին Պէտիի, Թուքիի, Քուպրիի, Քորէտի եւ ուրիշներու գործերը: Անկէ յետոյ, սակայն, Մարքս եւ Էնգէլս, երկուքը միասին, 1846-ին, որոշեցին իրենց կապերը խզել փիլիսոփայութեան մէջ իտալիստական ձգտումին հետ եւ առաջին անգամ ըլլալով անոնք ձեւակերպեցին պատմութեան մատերիալիստական ըմբռնողութիւնը, անոր հետ նաեւ ընդհանուր շրջանակով՝ տիպիկտիկական մատերիալիզմը:

2.— 1848-ի Յեղափոխութեան մինչեւ **CRITIQUE**-ի Հրատարակութիւնը —

1848-ի յեղափոխութեան ճախողանքէն վերջ, երբ Մարքս եւ Էնգէլս բռնադատեալ աքսորի մէջ էին, որոշեցին իրենց բոլոր ջանքերը կեդրոնացնել մեծ խնամքով պատրաստելու գործաւոր դասակարգի յեղափոխական թէորիան՝ որպէս այդ դասակարգի տեսարանական լաւագոյն զէնքը: Մարքս ամէն կերպով աշխատեցաւ հետու մնալ զաղթական յեղափոխականներու սնտարիանութիւններէն ու սոփեստական վիճարանութիւններէն, որպէսզի իր Էմբրժին ու ժամանակը յատկացնէր լրացնելու իր հիմնական տեսարանական գործը — քաղաքական տնտեսագիտութիւնը:

Ասիկա Մարքսի Լոնտոն աքսորանքի շրջանն էր: Ինչպէս ան կը նշէ իր գիրքի յառաջարանին մէջ, Լոնտոնը Մարքսի համար ծառայեց որպէս «դիտարան»։ Հոն ան ամէն պատեհութիւն ունէր քննելու ինչ որ կ'անցնէր կը դառնար բուրժուական աշխարհին մէջ: Լոնտոնը այդ ատենները ճանչցուած էր որպէս կապիտալիստական աշխարհի մայրաքաղաքը: Ան տնտեսական, քաղաքական եւ մտաւորական կեդրոնն էր երկրի մը, որ իր ձեռքին մէջ առած էր աշխարհի շուկայի մոնոփոլը: Ան աշխարհի ամենահարուստ մէկ երկրի մայրաքաղաքն էր: Եւ այդ քաղաքին մէջ էր որ Մարքս ամենամեծ գոնարութեանց պէտք էր յաղթէր, յամառօրէն շարունակելով իր ստեղծագործական ծանր աշխատանքը:

Մարքսի եւ Էնգէլսի միջեւ կատարուած թղթակցութիւնը ցոյց կու տայ թէ Մարքսը այդ շրջանին ինչպիսի գրկանքներու եւ անձկութեանց ենթարկուելով ապրած է երկար տարիներ: Միմիայն պրոլետարական յաղթանակի յատուկ պողպատէ անընկճելի կամքն էր որ այդ անհաւասար պայքարին մէջ պիտի ապահովէր Մարքսի յաղթութիւնը: Եւ Մարքս յաղթեց:

Ընդհանրապէս խօսելով, Մարքս Լոնտոնի մէջ վախից լիակատար ազատութիւն. ան չքանտարկուեցաւ, ոչ ալ պատժական ծանայութեան կապուեցաւ. նոյնիսկ իր գրութիւնները գրաքննութեան չենթարկուեցան: Բայց այդ «ազատութիւնը» Մարքսի համար անօթի մեռնելու «ազատութիւն» էր: Ազգատութեան եւ անօթութեան ըստ պառնալիքը շարունակ կախուած կը մնար իր գլխուն վրայ եւ զինքը կը դնէր գծուարին գրութեան մէջ: Վէյտիմէյրրի գրած մէկ նամակին մէջ (Փետրուար 1, 1859) Մարքս կը գրէ, — «Ես պիտի հալածեմ իմ նպատակը, հոգ չէ թէ գէր ըլլամ կամ նիհար. ես չեմ կրնար թոյլատրել որ բուրժուա հասարակութիւնը զիս գրամ-չինոզ մեքենայի վերածէ»:

Տարակոյս չկայ, որ բուրժուա հասարակութիւնը գրամներու տեղատարափին տակ կը պահէր Մարքսը, զայն կը դնէր ծայրայեղօրէն նպատաւոր ապրուստի պայմաններով օժտուած պատուանդանի մը վրայ, եթէ ան հրաժարէր իր նպատակէն եւ իր փառարանութեամբ վարպուրէր տիրող հասարակարգի ախտածէտ երեւոյթները: Այդ ճամբով ան կ'ազատուէր անհանդուրժելի գրկանքներէն եւ իր կեանքին սպառնացող ծանր բեռներէն: Բայց Մարքս բացորոշակի մերժեց իր բարձր նկարագիրը նսեմացնող այդ ուղին եւ ընտրեց ուրիշ ուղի մը. իր ճակատագիրը կապելով բանուոր դասակարգին հետ, եւ ան քաղց այդ ուղիով՝ մինչեւ իր կեանքի վերջը, առանց զղջումի. բնդհակառակը՝ աւելի հպարտ, աւելի գոհունակ: Մարքսի քալած ճամբուն վրայ Մարքսի տարած յաղթանակի ամենազլխաւոր օժանդակութիւնը տուողը եղաւ Էնգէլս, որ իր ժամանակը նուիրեց ստանձնելով «աղտոտ վաճառականական» դործ մը՝ պարզապէս օգնելու որ Մարքսը շարունակէ իր Կապիտալի աշխատանքը: Եւ արդէն, երբեք պատմական խեղադիրման փորձ մը ըրած չենք ըլլար, երբ ըսենք թէ՛ առանց Էնգէլսի մենք այս օրերու Մարքսը չէինք ունենար: Ահա թէ ինչո՞ւ Մարքսի եւ Էնգէլսի անունները անխզելի կերպով կապուած են իրարու հետ, որովհետեւ այս երկու հանձարները նոյն ուղիին հետեւեցան իրարմէ բոլորովին անկախ, եւ անոնք նոյն սկզբունքները, նոյն գաղափարները բերեցանուցին առանց զիրար խաչաձեւելու: Եւ անոնք իրաւամբ եղան պրոլետարիատի յեղափոխական գիտութեան երկուորեակ առաքեալները:

Բայց պէտք է ըսել թէ՛ յոյժ գնահատելի հոգատարութիւնը բաւական չէր: Մարքս շատ յաճախ հարկադրուած էր գաղբեցնել իր ուսումնասիրութիւնները, որպէսզի կարողանար պատահական դործ մը ճարել, բաւարարելու իր անհրաժեշտ կարիքները, բայց ասոր հետ մէկտեղ պայմանները գաժան էին եւ իր ճամբան փշոտ:

Օրինակի համար, իր նամակներէն մէկուն մէջ կը գտնենք հետեւեալ սրտաճմլիկ տողերը.

«Դարձեալ անօթի եմ, անօթի եմ բազէի նման.

«Մեր սենեակներուն մէջ ածուխ չկայ... Յո՛ւրտ, շատ ցուրտ է ամէն ինչ: Ես կը սիրէի հարիւր փարսախ գետնին տակը պառկիլ, քան այսպիսի դալիահար բոյսի մը կեանքը ասրելը»:

Էնգէլսի գրած իր նամակներէն մէկուն մէջ Մարքս առանց քաշուելու գրած է հետեւեալը (նամակին թուականն է Յունիս 18, 1862).

«— Կինս կը յայտարարէ... Ան կը փափաքի անոր գերեզմանին մէջ թաղուիլ իր գաւակներուն հետ... Անոնք միայն վախով կ'ապրին»:

Չքաւորութիւնը ցաւալի կերպով հարուածեց Մարքսի ընտանիքը եւ ան իր հոգւոյն մէջ կրեց այդ հարուածներէն մէկուն՝ ամենէն խորը վիրաւորող հարուածին ցաւը: 1857-ին, Մարքս ազջիկ գաւակ մը ունեցաւ. ի՛նչ ըսել սակայն, որ անոր ընտանիքը գրամ չունէր նորածին երեխային խանձարուր մը դնելու համար: Երեխան թըշուառութեան մէջ հազիւ մէկ տարի ապրեցաւ եւ յետոյ մեռաւ. եւ դարձեալ գրամ չկար մեռնող երեխային դազալ մը դնելու համար:

Կեանքի գծուարին պայմանները — յարատեւ ուժերու վատնում, ընտանեկան ճնշիչ անձկութեան, գիշերային աշխատանք — ասոնք շատ կանուխէն սկսան քայքայել Մարքսի ուժեղ օրգանիքը: Ան սկսաւ տառապիլ լեարդի խանգարումով: Մի քանի տարի յետոյ՝ անոր յաջորդեց խղիւսայթը, որ կը տանջէր զինքը Կապիտալի վրայ աշխատած բոլոր ժամերուն: Օր մը Էնգէլս, երբ կարդաց Կապիտալի առաջին գլուխը, կատակախառն նկատողութիւն մը ըրաւ.

— «Կարծեմ», ըսաւ, «այս գլուխը խղիւսայթներու նշաններ ցոյց կու տայ»: Ասոր վրայ Մարքս կատակով պատասխանեց.— «... Կը յուսամ թէ բուրժուազիան, իր ամբողջ կեանքի տեւողութեան ընթացքին՝ պիտի յիշէ իմ խղիւսայթները»:

Հակառակ անոր որ Մարքսը տակաւին ուժ ունէր կատակելու, բայց մէկ կողմէն ծանր աշխատանքը, միւս կողմէն հիւանդութիւնը անասելի ծանրութեամբ կը ճնշէին զինքը, ալ չխօսինք մշտական չքաւորութեան մասին: Նախ քան Կապիտալի հրատարակութիւնը, 1866-ի Փետրուար 10-ին, Մարքսի հիւանդութիւնը այնքան սաստկացեր էր որ, ան Էնգէլսին գրեց հետեւեալը.— «Այս անգամ, կարծեմ թէ կեանքի ու մահուան հարցն է գրուած... իմ Ֆրիդրիխանի վատթարացման գլխաւոր պատճառը դիտեմ, այդ գիշերուան չափազանցեալ աշխատանքն է»:

Այո՛, Մարքս գիտէր թէ այդ գծուարին պայմաններու տակ

ծանր աշխատանքը աւելի կը քայքայէր իր Փիղիբակները, բայց ան չէր ուզեր ընկրկիլ, ան վճռած էր պատրաստել ու լրացնել բանուոր գասակարգի պայքարի զէնքը՝ կապիտալը:

Էնդէլսի ստիպումով էր որ Մարքս ծովեզերեայ տեղ մը հանգիստի գնաց, ուր բժշկական խնամքի տակ քիչ մը ապաքինեցաւ:

1863-ին եւ 1867 տարիներու ընթացքին, Մարքս ո՛չ միայն կապիտալի առաջին հատորը ամբողջացուց պատրաստ ապագրութեան, այլեւ յառաջ տարաւ այն գործը, որ կապուած էր Բանուորներու Միջազգային Ընկերակցութեան(*):

1863-ի սկիզբը, քսանչորս տարեկան երիտասարդ մը, որ բժշկական ուսանող էր, ծանօթացաւ կապիտալի հեղինակին հետ: Այդ երիտասարդը Փոլ Լաֆարկն էր, որ ամենաեռանդոտ աշակերտն եղաւ Մարքսի եւ յետոյ՝ ամուսնացաւ անոր զստեր՝ Լորայի հետ: Փոլ Լաֆարկ, խիստ հետաքրքրական ու մանրամասն ծանօթութիւններ կու տայ Մարքսի աօրեայ կեանքին ու աշխատանքի եղանակին շուրջ:

1867-ի Օգոստոս 16-ին, Մարքս Էնդէլսին գրեց.

— «Ուրեմն, այս հատորը վերջացաւ: Այս գործը հնարաւոր դարձաւ միայն ու միայն Ձեր շնորհիւ, որուն համար անհուն շնորհակալութիւն: Առանց Ձեր գոհոգութեան եւ անդին օժանդակութեան՝ ինձ համար երբեք կարելի չէր դուրս հանել այդ գծուարին գործը: Կողջագուրեմ Ձեզ սիրով ու շնորհակալութիւններով»:

Բայց Էնդէլսի տուած օժանդակութիւնը հոգ չէր վերջանար, տակաւին հսկայ գծուարութիւններ կային, որոնց յաղթահարելու գործը վիճակուած էր իրեն՝ Էնդէլսին:

Մարքսի մահէն յետոյ՝ Էնդէլս ճակատած էր անմիջապէս գլուխ հանելիք երկու գործերու, մէկ կողմէն՝ Առաջին հատորի վերջին հրատարակութիւնը, միւս կողմէն՝ երկու հատորներու՝ Երկրորդ եւ Երրորդ հատորներու ապագրութիւնը:

1890-ին Էնդէլս, հրապարակ գրաւ Առաջին հատորի չորրորդ հրատարակութիւնը, եւ ինք հրատարակեց միւս երկու հատորները:

Լենին, Էնդէլսի մասին իր գրած մէկ յօդուածին մէջ կը գրէ հետեւեալը.

(*) Բանուորներու Միջազգային Ընկերակցութիւնը (Առաջին Միջազգայնականը) հաստատուեցաւ Լոնտոնի մէջ 1864 Սեպտ. 28-ին: Անոր նպատակն էր բանուոր դասակարգի պաշտպանութիւնը, յառաջդիմութիւնը եւ կատարեալ ազատագրումը:

— «Կապիտալի Երկրորդ եւ Երրորդ հատորներու հրատարակութեամբ Էնդէլս յուշարձանը կը կանգնեցնէ այն հանճարին, որ եղած էր իր բարեկամը. վեհաշուք յուշարձան մը, որուն վրայ Էնդէլս եթէ իր անունը դնէր, ատիկա անջնջելի պիտի մնար: Յամենայն դէպս, իրողութիւն է որ Կապիտալի այդ երկու հատորները Մարքսի եւ Էնդէլսի գործերն են»:

Այժմ անցնինք ընթերցողին պատկերացնել կապիտալի բովանդակութիւնը: Դժուարին աշխատանք է աս, չըսելու համար անհնարին. անհնարին այն իմաստով որ մեր ձեռնարկածը կը նմանի ծով մը գաւաթի մը մէջ ամփոփելու փորձին:

Բայց ինչ որ ծրագրած ենք, պիտի փորձենք:



Գ Լ ՈՒ Խ Ե .

Մ Ա Ր Ք Ս Ի « Կ Ա Պ Ի Տ Ա Լ » Ը

(ԱՄՓՈՓՈՒՄ)(*)

Այն երկիրներուն մէջ, ուր արտադրութեան կապիտալիստական եղանակն է իշխողը, հարստութիւն կոչուածը ոչ այլ ինչ է, եթէ ոչ միայն ապրանքներու հսկայական հաւաքածոյ մը. իսկ ապրանքը առանձին վեր առած՝ այդ հարստութեան բազկացուցիչ տարրական մասն է: Այս պատճառով մեր ուսումնասիրութիւնը կը սկսի ապրանքի վերլուծութեամբ:

Ապրանքը, ամէն բանէ առաջ, պէտք է գիտնանք որ արտաքին առարկայ մըն է, իր մըն է, որ իր յատկութիւններով կը բաւարարէ որեւէ տեսակի պահանջ, հոգ չէ թէ այդ պահանջի բնոյթը ստամոքսէն ծնունդ կ'առնէ, թէ երեւակայութենէն: Նոյնպէս նշանակութիւն չունի այն հանդամանքը թէ՛ այդ իրը մարդկային պահանջը ինչպէս կը բաւարարէ, արդեօք անմիջականօրէն՝ իրրեւ կենսամիջոց, այսինքն իրրեւ սպառման առարկայ՝ թէ կողմնակի ճանապարհով, այսինքն իրրեւ արտադրութեան միջոց:

Ամէն մէկ օգտակար իր, ինչպէս օրինակ երկաթը, թուղթը եւայլն, կարելի է քննել երկու տեսակէտէն — որակի եւ քանակի տեսակէտէն: Ամէն մէկ այդպիսի իր բազմաթիւ յատկութիւններու ամբողջութիւն մը կը ներկայացնէ, որուն համար ան կրնար զանազան կողմերով օգտակար ըլլալ: Իրերու այս տարրեր կողմերը եւ անոնց գործարկման բազմապիսի եղանակները որոշին ու երեւան

(*) Իմ ըրած քաղաքացիներու մէջ կը ցաւիմ որ պիտի չկրնամ յիշատակել Կապիտալի մէջ Մարքսի այն բազմաթիւ եւ յոյժ կարեւոր ծանօթութիւնները, որոնք լոյս կը սփռեն յառաջադրուած միտքերու միջին անկիւններուն վրայ, որովհետեւ իմ նպատակն է միմիայն տրամադրուած սահմանափակ էջերու մէջ բռնցիկ նօթերով խտացնել Մարքսի արտայայտած միտքերը՝ ընթերցողին հարեւանցի ծանօթութիւն մը տալու համար: Իմ այս անկատար փորձը գուցէ քելադրիչ պատճառ մը ըլլայ, որ ընթերցողը հետաքրքրուած՝ հետամուտ ըլլայ հանգամանօրէն անձամբ ուսումնասիրելու Մարքսի Կապիտալը:

հանելը պատմական զարգացման գործն է: Նոյնը պէտք է ըսել օգտակար իրերու քանակի հասարակական չափը որոշելու մասին ալ: Ապրանքաչափերու տարրերութիւնը կը պարզուի մասամբ չափուող առարկաներու տարրեր բնոյթէն, մասամբ ալ պայմանադրութենէն:

Իրի մը օգտակարութիւնը նոյն իրը կը դարձնէ սպառման արժէք: Բայց այս օգտակարութիւնը կախուած չէ օդին մէջ, այլ կապուած է ապրանքային մարմնի ունեցած յատկութիւններուն հետ: Այս պատճառով, ինքը՝ ապրանքը, ինչպիսին է, օրինակ, երկաթը, ցորենը, աղամանդը եւայլն, սպառման արժէք է կամ բարիք: Անոր այս բնոյթը կախում չունի այն բանէն, թէ արդեօք անոր սպառողական յատկութիւններու իւրացումը մարդուն վրայ շատ աշխատանք կը պահանջէ թէ քիչ: Սպառման արժէքներու քննութեան ժամանակ առհասարակ նկատի կ'առնուի անոնց քանակային որոշուածութիւնը. օրինակ՝ տասներկու ժամացոյց, տասը մեթր կտաւ, մէկ թօն երկաթ եւայլն: Ապրանքներու սպառման արժէքները յատուկ տիւսաւիզիւնի մը — ապրանքագիտութեան առարկան կը կազմեն: Իսկ սպառման արժէքը կ'իրականանայ միմիայն գործադրման կամ սպառման միջոցին: Սպառման արժէքները կը կազմեն հարստութեան նիւթական բովանդակութիւնը, հոգ չէ թէ այդ հարստութիւնը հասարակական ինչ ձեւ կ'ունենայ: Այն հասարակական ձեւի մէջ ալ, որ մենք պիտի ուսումնասիրենք, սպառման արժէքները նոյն տեսն կը հանդիսանան փոխանակութեան արժէքի նիւթական ներկայացուցիչները:

Փոխանակութեան արժէքը ամենէն առաջ կը ներկայանայ իրրեւ քանակային յարաբերութիւն, իրրեւ համամասնութիւն մը, որով տեսակ մը սպառման արժէքներ կը փոխանակուին ուրիշ տեսակի մը սպառման արժէքներու հետ. եւ այդ յարաբերութիւնը կը փոխուի ժամանակի ու տեղի համեմատ: Այս պատճառով փոխանակարժէքը կը թուի պատահական եւ միանգամայն յարաբերական բան մը, ապրանքին ներքնապէս յատուկ, ընդարձոյ փոխանակարժէք մը, հետեւաբար տեսակ մը պայմանական, ժխտողական միացումը ապրանքի սպառման արժէքին հետ:

Այն ինչ որ ապրանքներու սպառման արժէք կը կոչենք, որիչ բան չէ, եթէ ոչ մարդկային աշխատանքի արդիւնագործութիւնը: Ուրեմն, մեր առջեւ դրուած առարկայէն — ըլլայ ան սեղան, աթոռ, մանուածք կամ որեւէ օգտակար իր — վերցնենք անոր մարմնական բազադրիչ մասերը, որոնք զայն սպառման արժէք են դարձուցեր, այլեւս մենք սեղան, աթոռ, մանուածք կամ որեւէ օգտակար իր չենք ունենար. հետեւաբար կը չքանան նաեւ այդ աշխատանքի տարրեր ձեւերը, եւ այդ աշխատանքներն այլեւս իրարմէ

չեն դանազանուիք, այլ անոնք բոլորը մեր միտքին մէջ կը մնան որպէս միանման մարդկային աշխատանքի, վերացական աշխատանքի ձևեր: Բայց այստեղ պէտք է ուրիշ բան մը: Երբ մենք աթոռէն, սեղանէն, մանուածքէն հեռացուցինք մարդկային աշխատանքը եւ մեր առջեւ մնաց կտրուած փայտ, հաւաքուած բուրդ կամ բամպակ, կը տեսնենք որ անոնց արտադրութեան մէջ ալ մարդկային աշխատութիւն վատնուած, մարդկային աշխատանք է կուտակուած. ուրեմն, անոնք արժէքներ են, ապրանքային արժէքներ են:

Ապրանքներու փոխանակային յարաբերութիւններու մէջ անոնց փոխարժէքը այստեղ մեզի կը ներկայանայ իբրև բան մը, որ միանգամայն անջատ ու անկախ է անոնց սպառման արժէքներէն: Բայց որպէսզի անոնք սպառման արժէքներու փոխուին — փայտերը աթոռ ու սեղան դառնան, իսկ բուրդն ու բամպակը մանուածք — անոնց միանալու են մարդկային աշխատանքի ուրիշ ձևեր:

Այսպիսով սպառման արժէքը կամ բարիքը արժէք ունի այն չափով, որ չափով որ մարդկային հասկնալի վերացական աշխատանքը առարկայացած կամ նիւթականացած է: Հապա ի՞նչպէս պէտք է չափել անոր արժէքի մեծութիւնը: Այդ արժէքի մեծութիւնը պէտք է չափել անոր մէջ պարունակուած արժէք կազմող նիւթին՝ աշխատանքի քանակովը:

Եթէ ապրանքի արժէքը կ'որոշուի անոր արտադրութեան համար ծախսուած աշխատանքի քանակով, այդ պարագային՝ մարդ մը որքան ծոյլ ըլլայ կամ անճարակ, այնքան աւելի շատ ժամանակ պիտի վատնէ իր ապրանքի պատրաստութեան համար, հետեւաբար անոր արտադրածը պիտի ըլլայ աւելի արժէքաւոր: Այդ իսկ պատճառով նկատի չառնուիր այս կամ անհատը, այլ արժէքի նիւթ կազմող մարդկային միանման աշխատանքը, միեւնոյն մարդկային աշխատանքի ծախսումը: Հասարակութեան ամբողջ աշխատութիւնը, որ կ'արտայայտուի ապրանքային աշխարհի արժէքներուն մէջ, այստեղ կ'ընդունուի իբրև մէկ եւ միեւնոյն մարդկային աշխատութիւն, թէև ան կազմուած է անթիւ անհատական աշխատութիւնէն, որոնց համար որոշուած է հանրօրէն անհրաժեշտ աշխատատեղանակ: Հանրօրէն անհրաժեշտ աշխատատեղանակը այն աշխատատեղանակն է, որ արտադրութեան ընդհանուր առումով բնականն, առկայ պայմաններու եւ աշխատանքի հմտութեան ու լարուածութեան հասարակականօրէն ընդունուած միջին աստիճանով կը պահանջէ արտադրել որեւէ սպառման արժէք:

Այսպիսով ուրեմն հանրօրէն աշխատանքի քանակն է կամ ըստ սպառման արժէք պատրաստելու համար հանրօրէն անհրաժեշտ աշխատատեղանակն է, որ կ'որոշէ անոր արժէքի մեծութիւնը: Առանձին

ապրանքն այստեղ կ'ընդունուի ընդհանրապէս իր տեսակին մէջ որպէս նմուշահատ: Հետեւաբար այն ապրանքները, որոնք իրենց մէջ աշխատանքի քանակներ կը պարունակեն կամ կրնան պատրաստուիլ միեւնոյն աշխատատեղանակով, արժէքի նոյն մեծութիւնն ունին: Իբրև արժէքներ, բոլոր ապրանքները գործածուած աշխատատեղանակի որոշ քանակ մը կը ներկայացնեն միայն:

Հետեւաբար ապրանքի արժէքի մեծութիւնը հաստատուն կը մնար, եթէ անոր արտադրութեան համար պահանջուած աշխատատեղանակը հաստատուն ըլլար: Բայց այդ աշխատատեղանակը կը փոխուի աշխատանքի արտադրողական ուժի ամէն մէկ փոփոխութեան հետ: Աշխատանքի արտադրողական ուժը կ'որոշուի բազմազան հանդամանքերով, ի միջի այլոց, բանուորի հմտութեան միջին աստիճանով, գիտութեան զարգացման եւ անոր զարգացուցած տեխնիկայի գործարկման չափով, արտադրութեան պրոցեսի հասարակական կառուցուածքով, արտադրամիջոցներու չափերով ու գործունէութեամբ եւ բնական պայմաններով: Աշխատանքի միեւնոյն քանակը, օրինակ, բարենպաստ տարին, կու տայ 8 բուշըլ ցորեն, անբարենպաստ տարին՝ կու տայ միայն 4 բուշըլ ցորեն: Աշխատանքի միեւնոյն քանակը աւելի շատ մեծազ կը հայթայթէ հարուստ հանքերու մէջ, քան աղքատ հանքերու մէջ: Աղամանդները աւելի հագուազիւտ են երկրի կեղեւին մէջ, այս պատճառով անոնց յայտնագործումը միջին հաշուով աւելի շատ ժամանակ կը պահանջէ, ասոր համար անոնք աւելի սուղ են: Եթէ յաջողուի ամուխը աղամանդ գարձնել քիչ աշխատանքով, այն ատեն անոր արժէքը կ'իյնայ շինութեան համար գործածուած աղիւսի արժէքէն աւելի ցած: Ապրանքի արժէքի մեծութիւնը կը փոխուի անոր մէջ ներմուծուած աշխատանքի քանակի հետ ուղիղ յարաբերութեամբ, իսկ նոյն աշխատանքի արտադրողական ուժի հետ՝ խոտոր յարաբերութեամբ:

Իր մը կրնայ սպառողական արժէք ըլլալ՝ առանց արժէք ըլլալու: Այս բանը տեղի կ'ունենայ այն ատեն, երբ անոր օգուտը մարդոց մատչելի կ'ըլլայ ճիշդ այնպէս, ո՛չ թէ աշխատանքի միջոցով: Այսպէս է օդը, կուտական դետինը, մարդագետիները, անտառը եւ այլն: Իր մը կրնայ օգտակար ըլլալ ու մարդկային աշխատանքի արդիւնք՝ առանց ապրանք ըլլալու: Ով որ իր սեփական աշխատանքի արդիւնքով իր սեփական պահանջին դահացում կու տայ, անիկա թէև սպառողական արժէք կը ստեղծէ, բայց ապրանք՝ ոչ: Ապրանք արտադրելու համար, մարդը պէտք է ո՛չ թէ սոսկ սպառման արժէք արտադրէ, այլ արտադրելու է սպառողական արժէք՝ ուրիշներու համար, եւ այդ ըլլալու է հասարակական սպառման արժէք, որովհետև սոսկ ուրիշներու համար սպառման արժէք արտադրելը ապրանք արտադր-

րել չէ : Միջնադարեան գիւղացին Ֆէոդալ իշխանին համար կ'արտադրէր բերքահարկի ցորեն, տէրտէրներու համար՝ տասանորդի ցորեն : Սակայն ոչ բերքահարկի ցորենը, ո՛չ ալ տասանորդի ցորենը, սպորտնք չէին դառնար տակաւին, պարզ այն պատճառով որ անոնք կ'արտադրուէին ուրիշներու համար : Ապրանք դառնալու համար արդիւնքը փոխանակութեան միջոցով պէտք է յանձնուի այն ուրիշ մարդուն, որուն այդ աշխատանքի արդիւնքը կը ծառայէ որպէս սպառման արժէք :

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՄԷՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԿՈՒ ԲՆՈՅԹԸ

Սկզբնապէս ապրանքը մեզի երեւցաւ իբրեւ երկուքի ճեղքուած բան մը . այսինքն՝ սպառման արժէք ու փոխանակութեան արժէք : Ապրանքի մէջ պարունակուող աշխատանքը, որ արժէք ստեղծողն է, նոյնպէս երկուքի ճեղքուած է՝ որպէս տեսակ մը ապրանք : Աշխատանքի երկճեղքուած բնոյթը առաջին անգամ ես եմ որ քննադատորէն կրցեր եմ ապացուցել :

Վեր առնենք երկու ապրանք . օրինակ, մէկ բաճկոն եւ տասր կանդուն կտաւ : Առաջինը, ենթադրենք թէ ունի վերջիններու կրկնապատիկ արժէքը . այնպէս որ եթէ տասր կանգուն կտաւը կ'արժէ մէկ Ա, ապա մէկ բաճկոնը կ'արժէ երկու Ա :

Բաճկոնը սպառման արժէք մըն է, որ կը բաւարարէ յատուկ պահանջ մը : Բաճկոն պատրաստելու համար հարկաւոր է արտադրողական գործունէութեան մէկ որոշ տեսակ : Այս գործունէութիւնը կ'որոշուի իր նպատակով, գործունէութեան եղանակով, առարկայով, միջոցներով ու հետեւանքով : Այն աշխատանքը, որու օգտակարութիւնը այսպիսով կ'արտայայտուի իր արտադրած արդիւնքի սպառման արժէքին մէջ, մենք կ'անուանենք օգտակար աշխատանք : Այս տեսակէտով յիշեալ աշխատանքը միշտ քննուելու է իր օգտակար արդիւնքի կապակցութեամբ :

Ինչպէս որ բաճկոնն ու կտաւը որակով տարբեր սպառման արժէքներ են, այնպէս ալ անոնց գոյութիւնը մարմնացնող աշխատանքները որակով տարբեր են — դերձակի ու ջուլհակի աշխատանքներ են : Եթէ այս իրերը որակով տարբեր սպառման արժէքներ եւ հետեւաբար որակով տարբեր օգտակար աշխատանքներու արդիւնք չլլալին, ապա անոնք ընդհանրապէս չէին կրնար հանդիպակադրուիլ որպէս տարբեր ապրանքներ : Բաճկոնը բաճկոնի հետ չի փոխանակուիր . նոյն սպառարժէքը չի փոխանակուիր նոյն սպառման արժէքի հետ :

Այլատեսակ սպառման արժէքներու կամ ապրանքային մար-

միներու ընդհանրութեան մէջ երեւան կու գան նոյնքան բազմազան, ըստ սեռի, տեսակի, ընտանիքի ենթատեսակներու փոփոխակներու տարբերուող օգտակար աշխատանքներու ընդհանրութիւն մը : Ասով երեւան կու գայ աշխատանքի հասարակական բաժանում մը : Աշխատանքի այս հասարակական բաժանումը ապրանքային արտադրութեան գոյութեան պայմանն է :

Բաճկոնը, կտաւն ու այլ սպառողական արժէքները, մէկ խօսքով՝ ապրանքային մարմինները երկու տարբերու — բնանիւթի ու աշխատանքի միացումն են : Եթէ մենք բաճկոնին, կտաւին ու այլ իրերու մէջ ծածկուած բոլոր տարբեր օգտակար աշխատանքները մէկ կողմ դնենք, ապա յատակին կը մնայ միշտ մէկ նիւթական սուրբստանս, զոր բնութիւնը պատրաստած է առանց մարդու գործակցութեան : Մարդը իր արտադրութեան միջոցին կարող է վարուիլ այնպէս՝ ինչպէս ինքը՝ բնութիւնը . այսինքն՝ անիկա կարող է նիւթերու ձեւերը միայն փոխել : Դեռ աւելին կայ : Զեւաւորման այս աշխատանքին մէջ մարդը շարունակ կը յենի բնական ուժերու վրայ : Հետեւաբար աշխատանքը մարդուն արտադրած սպառման արժէքներու, նիւթական հարստութեան միակ աղբիւրը չէ : Ինչպէս Վիլլյըմ Պետտին ըսած է, աշխատանքը նիւթական հարստութեան հայրն է, իսկ հողը՝ անոր մայրը :

Մեր ենթադրութեան համաձայն բաճկոնը կտաւի կրկնակի արժէքն ունի : Բայց ասիկա միմիայն քանակային տարբերութիւն է, որ մեզ տակաւին չի հետաքրքրեր : Այս պատճառով մենք կը յիշեցնենք, որ եթէ մէկ բաճկոնի արժէքը աւելի մեծ է տասր կանգուն կտաւի արժէքէն, ապա քսան կանգուն կտաւը արժէքի նոյն մեծութիւնը ունի, ինչքան մէկ բաճկոնի արժէքը : Բաճկոնն ու կտաւը, իբրեւ արժէքներ, միեւնոյն սուրբստանսը (նիւթեղէնը) ունեցող իրեր են, միատեսակ քանակական աշխատանքի առարկայական արտայայտութիւններ : Բայց, ինչպէս ըսինք, դերձակութիւնն ու ջուլհակութիւնը որակապէս տարբեր աշխատանքներ են : Սակայն կան հասարակութեան այնպիսի կացութիւններ, երբ միեւնոյն մարդը փոփոխակի կերպով թէ՛ բաճկոն կը կարէ եւ թէ՛ կտաւ կը գործէ . հետեւաբար աշխատանքի այս երկու տարբեր եղանակները միեւնոյն անհատի աշխատանքի ձեւափոխութիւններն են, ոչ թէ տարբեր անհատներու առանձին գործարկումները : Այնուհետեւ մեր տեսած փորձը ցոյց կու տայ, որ մեր կապիտալիստական հասարակութեան մէջ, աշխատանքի պահանջարկի փոփոխուող ուղղութեան համաձայն մարդկային աշխատանքի տուեալ քանակ մը կը յայտնագործուի մերթ դերձակութեան ձեւով ու մերթ ջուլհակութեան ձեւով : Աշխատանքի այս ձեւափոխութիւնը չի կրնար կատարուիլ առանց որոշ

խոշորոտներու հանդիպելու, բայց յիշեալ ձեւափոխութիւնը պահանջի հրամայականին տակ պէտք է կատարուի ու կը կատարուի: Այժմ եթէ մենք անտես առնենք արտադրողական գործունէութեան որոշուածութիւնը, եւ աշխատանքի օգտակար բնոյթը, ապա անոր յատակին կը մնայ միայն բան մը, այսինքն այն՝ որ աշխատանքը մարդկային աշխատուծի ծախսումն է: (Ընդգծումը իմս է: Լ. Մ.)

Դերձակութիւնն ու ջուլհակութիւնը, շնայած որ որակապէս տարբեր արտադրողական գործունէութիւններ են, երկուքն ալ մարդկային ուղեղի, միաններու, նիւրոններու, ձեռքերու եւ այլ մասերու արտադրողական ծախսումն են եւ այս իմաստով երկուքն ալ մարդկային աշխատանք են: Անոնք մարդկային աշխատուծը ծախսելու երկու տարբեր ձեւեր են միայն... Դերձակութիւնն ու ջուլհակութիւնը բաճկոնն ու կտաւ կոշուած սպառարժէքներ ստեղծող տարբեր են ճիշդ անով, որ իրենք տարբեր որակներ ունին. անոնք բաճկոնի արժէքի ու կտաւի արժէքի նիւթեղէն մասերն են միմիայն այն չափով, որ չափով որ մենք անոնց առանձին որակները վեր կ'առնենք, բայց մենք գիտենք արդէն թէ՛ միեւնոյն որակը ունին ընդհանուր շրջանակով. մարդկային աշխատանքի որակը:

Բայց բաճկոնն ու կտաւը միմիայն արժէքներ չեն ընդհանրապէս, այլ որոշ մեծութիւն ունեցող արժէքներ են, եւ մեր ենթադրութեան համաձայն բաճկոնը կրկնակի կ'արժէ քան տասը կանգուն կտաւը: Բայց ո՞րտեղէն կու գայ անոնց արժէքներու մեծութեան այս տարբերութիւնը: Այդ տարբերութիւնը առաջ կու գայ անկէ, որ կտաւը միայն կ'իտով չափ աւելի պակաս աշխատանք կը պարունակէ քան բաճկոնը. այնպէս որ վերջինին արտադրութեան համար պէտք է կրկնակի ժամանակով աւելի աշխատուծ ծախսուի, քան առաջինի արտադրութեան համար: Այստեղ արդէն կը պարզուի ապրանքներու մէջ ներկայացուած աշխատանքի երկակի բնոյթը: Ամէն աշխատանք մէկ կողմէն՝ մարդկային աշխատուծի ծախսումն է բնախօսական իմաստով եւ միանման մարդկային կամ վերացական մարդկային աշխատանքի այս յատկութեամբ ան ապրանքային արժէքներ կը ստեղծէ: Ամէն աշխատանք միւս կողմէն՝ մարդկային աշխատուծի ծախսումն է առանձնաշատուկ նպատակով որոշուած ձեւով եւ միաձուլ օգտակար աշխատանքի այս յատկութեամբ կ'արտադրէ սպառողական արժէքներ:

ԱՐԺԵՁԵԻԸ ԿԱՄ ՓՈՒՍԱՆԱԿԱՐԺԷՔԸ

Ապրանքները հրապարակ կու դան սպառման արժէքներու կամ ապրանքային մարմիններու ձեւով, իրրեւ երկաթ, կտաւ, ցորեն եւայլն: Ասիկա անոնց տնարոյս բնական ձեւն է: Սակայն անոնք ապ-

րանք կը դառնան միմիայն անով, որ երկակի բան են. սպառման առարկաներ են եւ միեւնոյն ատեն՝ արժէք կրողներ: Հետեւաբար անոնք ունին կրկնակի ձեւ. մէկը բնաձեւն է, միւսը արժեքներ: Բնանիւթի ո՛չ մէկ հիւլէ ապրանքային մարմիններու արժէքային առարկայականութեան մէջ չի մտնել, որովհետեւ ան ապրանքային մարմիններու շոյափելի, կոշտ առարկայականութեան ուղղակի հակադրութիւնը կը կազմէ: Այս պատճառով մենք կրնանք առանձին ապրանք մը ձեռք առնել, շոյափել, այս կամ այն կողմ դարձնել ինչքան ուզենք. բնանիւթի հիւլէն իրրեւ արժէք ներկայացնող իր՝ անշոյափելի կը մնայ: Սակայն եթէ մենք մտաբերենք, որ ապրանքները արժէքային առարկայականութիւն ունին այնչափով, որ չափով որ անոնք միեւնոյն հասարակական միաւորի՝ այսինքն մարդկային աշխատանքի արտադրութիւնն են. հետեւաբար անոնց արժէքային առարկայականութիւնը դուստ հասարակական բնոյթ ունի, ապա ինքնըստիքեան հասկնալի կ'ըլլայ, որ ապրանքի մը յիշեալ առարկայականութիւնը՝ ուրիշ ապրանքի մը հետ ունեցած հասարակական յարաբերութեան մէջ միայն կարող է երեւան գալ: Ասով մենք կ'ըլլենք ապրանքներու փոխանակարժէքներէն կամ փոխանակային յարաբերութիւններէն, սրպէսի հասնինք եւ գտնենք անոնց մէջ ծածկուած արժէքի հետքը:

Ամէն մարդ, եթէ ուրիշ բան չգիտեր, գիտէ որ ապրանքները ունին ընդհանուր արժեքներ մը, որ սուր կերպով կը հակադրուի անոնց սպառման արժէքներու խայտարեղէտ բնաձեւերուն. ատիկա այն է որ, անոնք ունին դրամաձեւ: Սակայն մենք այստեղ պէտք է հետազօտենք բան մը, որ բուրժուական անտեսադիտութիւնը երբեք չէ ուզած ընել, այն է՝ ցոյց տալ այս դրամաձեւի ծագումը, այսինքն՝ հետազօտելով երեւան հանելու ենք ապրանքներու արժէքային յարաբերութիւններու պարունակած արժէքային արտադրութեան զարգացումը անոր ամենահասարակ, ամենէն աննշմարելի կերպարանքէն սկսած մինչեւ անոր շրջուցիչ դրամաձեւը: Երբ այդ ընենք, դրամի առեղծուածը կը չքանայ:

Երկու այլատեսակ ապրանքներ, Ա.ը եւ Բ.ը, կամ ըսենք, մեր օրինակի մէջ վեր առնուած կտաւն ու բաճկոնը, ակներեւ կերպով երկու տարբեր դեր կը կատարեն: Կտաւը իր արժէքը կ'արտայայտէ բաճկոնի մէջ — չէ՞ որ բաճկոնը կտաւէն շինուած է — բաճկոնը այստեղ կը ծառայէ իրրեւ արժէքային արտադրութեան նիւթեղէնը: Առաջին ապրանքը՝ կտաւը, գործօն դեր կը կատարէ, երկրորդը՝ այսինքն բաճկոնը կրաւորական դեր կը կատարէ: Առաջին ապրանքի արժէքը ներկայացուած է իրրեւ յարաբերական արժէք կամ կը գտնուի յարաբերական արժեքներ մէջ: Երկրորդ ապրանքը

կը գործէ իբրև համարժէք կամ կը գտնուի համարժէքային ձևի մէջ:

Յարարեալի արժեքները ու համարժէքային ձևեր միեւնոյն արժէքային արտայայտութեան միմեանց վերաբերող, փոխադարձաբար դիրար պայմանաւորող, անբաժանելի ձգտումներ են, բայց միաժամանակ մէկզմէկ բացառող կամ հակադիր բեւեռներ են. անոնք միշտ կը բաժնուին տարբեր ապրանքներու, որոնք իրարու հետ յարաբերութեան մէջ կը մտնեն արժէքային արտայայտութեան միջոցով: Ես չեմ կրնար նոյն չափով կտաւի արժէքը կտաւով արտայայտել: Քսան կանդուն կտաւը հաւասար է քսան կանդուն կտաւի. ասիկա արժէքային արտայայտութիւնն է: Հետեւաբար կտաւի արժէքը կարելի է արտայայտել միմիայն յարաբերականօրէն, այսինքն՝ ուրիշ ապրանքի մէջ: Միւս կողմէն, այս միւս ապրանքը, որ կը ներկայանայ իբրև համարժէք, միեւնոյն ժամանակ չկրնար յարաբերական արժեքներ մէջ գտնուիլ: Անոր արժէքը ներկայացնողը սա չէ: Այս միայն նիւթ կու տայ ուրիշ ապրանքի մը արժէքային արտայայտութեան համար:

Թէ արդեօք ապրանք մը յարաբերական արժեքներ մէջ կը գտնուի հիմա թէ հակադիր համարժէքային ձևեր մէջ, ասիկա բացառապէս կախուած է արժէքային արտայայտութեան մէջ ամէն մէկ անգամ անոր գրաւած դիրքէն. այսինքն՝ այն հանգամանքէն, թէ արդեօք անիկա այն ապրանքն է, որուն արժէքը կ'արտայայտէ, թէ՛ ընդհակառակը, այն ապրանքն է, որուն մէջ կ'արտայայտուի արժէքը:

Երբ, օրինակ, բաճկոնը, իբրև արժէք արտայայտող իր, մենք կը հաւասարեցնենք կտաւին, ուրեմն, առաջինին մէջ ծածկուած աշխատանքն ալ կը հաւասարեցնենք երկրորդին մէջ ծածկուած աշխատանքին: Թէևս դերձակութիւնն ալ, որ բաճկոն կը պատրաստէ, կտաւ պատրաստող ջուլհակութիւնէն տարբեր տեսակի կոնկրետ աշխատանք է, բայց ջուլհակութեան հետ հաւասարեցնելու հետեւանքը այն կ'ըլլայ, որ դերձակութիւնը փաստօրէն վեր կ'առնուի երկու աշխատանքի մէջ ալ գոյութիւն ունեցող իրապէս միանման մէկ բանին, մարդկային աշխատանքի այն ընդհանուր բնոյթին համար, որ երկուքն ալ ունին: Այս կողմնակի ճանապարհով կ'ըսուի ուրեմն, որ ջուլհակութիւնն ալ, որչափով արժէք կը հիւսէ, ոչ մէկ տարբերիչ դերձակութեան հետ համեմատած, հետեւաբար մարդկային աշխատանքի առարկայացած ձևն է ան: Տարբեր տեսակ ապրանքներու համարժէքայնութեան արտայայտութիւնն է միայն, որ երեւան կը բերէ արժէք ստեղծող աշխատանքի իւրայատուկ բնոյթը:

ԱՊՐԱՆՔԻ ՖԵՏԻՇԱՅԻՆ ԲՆՈՅԹԸ ԵՒ ԱՆՈՐ ԳԱՂՏՆԻՔԸ

Ապրանքը ըսուածը առաջին հայեացքով այնպէս կը թուի թէ ինքրատիպեան հասկնալի, սովորական իր է: Բայց անոր վերլուծումը ցոյց կու տայ, որ ան շատ տարօրինակ իր մըն է, բնագանցական նրբամտութիւններով լի, աստուածաբանական մանուածարանութիւններով շրջանակուած իր մը: Որչափով որ ան սպառման արժէք է, անոր մէջ խորհրդաւոր ոչինչ կայ. հող չէ թէ մենք հիմա գայն քննենք այն տեսակէտով, որ ան իր յատկութիւններով մարդկային պահանջներ կը բաւարարէ, թէ այն տեսակէտէն, որ ան այդ յատկութիւնները կը ստանայ իբրև մարդկային աշխատանքի արդիւնք միայն: Պարզապէս հասկնալի է, որ մարդը իր գործունէութեամբ կը փոփոխէ բնական նիւթերու ձևերը իրեն համար օգտակար նպատակով: Օրինակ, մարդ փայտի ձևեր կը փոխէ, երբ անկէ սեղան մը կը շինէ: Բայց այսուամենայնիւ սեղանը փայտ ըլլալէ չի դադրել, կը մնայ փայտ, սովորական, զգայական իր մը: Բայց անմիջապէս որ ան հրապարակ կ'իջնէ իբրև ապրանք, ան կը դառնայ գերզգայական իր մը: Ան ո՛չ միայն իր ստեղծումով կը կանգնի դեմնի վրայ, այլևս գլխի վրայ կը տնկուի միւս բոլոր ապրանքներու գլխացի իր փայտեայ գլուխէն այնպիսի խեղութիւններ կը հնարէ, որոնք շատ աւելի զարմանալի կը թուին, քան եթէ ան սկսէր ինքնիրեն պարել, կամ երգել:

Ապրանքի միատիկական բնոյթը անոր սպառման արժէքէն յառաջ չի գար, ոչ ալ այնքան որոշակի նկատելի կ'ըլլայ անոր արժէքային որոշումներու բովանդակութենէն: Որովհետեւ, նախ, որքան որ տարբեր ըլլան օգտակար աշխատանքները կամ արտադրողական գործունէութիւնները, բնախօսական ճշմարտութիւն է, որ անոնք մարդկային օրգանիզմի գործերն են, եւ որ ամէն մէկ այդպիսի գործ, ինչ ալ որ ըլլայ անոր բովանդակութիւնն ու ձևը, մարդկային ուղեղի, նիւրբերու, մկաններու, զգայարանքներու ու այլ օրգաններու ծախսումն է հապէս: Երկրորդ, ինչ կը վերաբերի արժէքային մեծութեան որոշման հիմքին, ամէն մէկ ծախսումի ժամանակային տեսողութեանը կամ թէ աշխատանքի քանակին, այստեղ նոյնպէս այդ քանակը կարելի է նոյնիսկ շօշափելիօրէն տարբերել աշխատանքի որակէն: Վերջապէս, երբ մարդիկ այսպէս թէ այնպէս կ'աշխատին իրարու համար, անոնց աշխատանքը նոյնպէս հասարակական ձև մը կը ստանայ, որուն մէջ միատիկական գոյն չկայ:

Ուրեմն, հարց է թէ՛ ո՞ր տեղէն յառաջ կու գայ աշխատանքի արդիւնքի առեղծուածային բնոյթը: Այս հարցման պատասխանը

պարզ է — այդ առեղծուածը յառաջ կու գայ պարզապէս աշխատանքի արդիւնք ապրանքաձեւէն :

Հետեւաբար պարանքաձեւի խորհրդաւորութիւնը պարզապէս այն է, որ ան մարդոց սեփական աշխատանքի հասարակական բնոյթը անոնց աչքին կ'արտացոլացնէ իրրեւ նոյնինքն աշխատանքի արդիւնքներու առարկայական բնոյթ, իրրեւ այդ իրերու բնական հասարակական յատկութիւններ, այս պատճառով ալ արտադրողներու հասարակական յարաբերութիւնը ընդհանուր աշխատանքի նկատմամբ կը ներկայացնէ իրրեւ առարկաներու հասարակական յարաբերութիւն, որ գոյութիւն ունի արտադրողներէն անկախ, արտադրողներէն դուրս, որպէս թէ արտադրողները անոնց մէջ ո'չ մէկ բաժին ունին : Այս quid pro quo-ի (մէկը միւսի փոխարէն ներկայանալու) միջոցով աշխատանքի արդիւնքները կը դառնան ապրանքներ զգայելի գերզգայական կամ հասարակական իրեր :

Բանուոր դասակարգը կը ծախսէ իր մտային ու Ֆիզիքական ուժերը, կը ծախսէ իր աշխատատեղերը, կ'արտադրէ ապրանք, որ ուրիշ բան չէ եթէ ոչ իր աշխատութի նիւթականացումը. բայց անոնց կ'ըսեն. «Դուք իրաւունք չունիք այդ ապրանքներուն զոչելու, անոնք արգէն բնական պահանջի հրամայականով արտադրուելու էին. մենք անոնց գնորոյժան, վաճառման կամ բաշխման համար մասնաւոր գործակալներ ունինք, ձեր պարտականութիւնն է միմիայն աշխատել, արտադրել եւ ստանալ աշխատավարձը՝ ձեր սպորուստին համար» : Եւ բանուորները այս իշխանական ազդարարութեան գէժ տրամաբանական ոչինչ ունին ըսելիք : Իրերու դասաւորումը այդպէս էր անցեալին մէջ, այդպէս է ներկայիս եւ այդպէս պիտի մնայ ապագային : Ուրեմն, անբնական ոչինչ կայ հոս : Այո՛, ամէն ինչ բնական կը թուի երևութապէս. բայց հարց է թէ՛ այդ բնականը արդեօք բանակա՞ն է : Բանուորը արտադրելու է ապրանք՝ կապիտալիստին համար, այսինքն այն մարդուն համար՝ որ այդ ապրանքի արտադրողութեան մէջ ոչ միտք է յղանցուցեր, ոչ ալ աշխատուժ է դրեր . . . :

Բայց մենք հարցին մօտենանք ուրիշ տեսանկիւնէ մը :

Ինչպէս մէկ իրի լոյսի տպաւորութիւնը կը զըռժուի տեսանկարդի վրայ ո'չ թէ իրրեւ սոսկ տեսանկարդի ենթակայական զրդիւն, այլ իրրեւ աչքէն դուրս գտնուող իրի մը առարկայական ձեւը : Բայց տեսողութեան ժամանակ մէկ իրի, արտաքին առարկայի, լոյսը իրօք կ'իյնայ ուրիշ իրի մը, այսինքն աչքին վրայ : Ասիկա Ֆիզիքական յարաբերութիւն մըն է, որ տեղի կ'ունենայ իրերու միջեւ : Մինչդեռ, ընդհակառակը՝ ապրանքաձեւն ու աշխատանքի արդիւնքներու այն արժէքային յարաբերութիւնը, որոնց մէջ կը ներկայանայ ար-

ժէքը, բացարձակապէս ընդհանուր բան մը չունին սպրանքներու Ֆիզիքական բնութեան ու անոնցմէ ծագում առնող իրային առնչութիւններու հետ : Ասիկա, սոսկ իրենց՝ մարդոց հասարակական յարաբերութիւն է միայն, որ այստեղ անոնց աչքին մէջ իրերու մէկ յարաբերութեան փախտաւազորիկ (ցնորատեսական-համատեսական) ձեւ կ'ընդունի : Ուստի ասոր մէկ համազօրը գտնելու համար մենք պէտք է գիմենք կրօնական աշխարհի մշուշապատ ոլորտները : Այստեղ մարդկային գլխի արդիւնքները կ'երեւին ինքնակայ գոյակներ՝ որոնք իրարու հետ ու մարդոց հետ յարաբերութեան մէջ են : Նոյնը կ'ըլլայ ապրանքային աշխարհի մէջ մարդկային ձեւքի արդիւնքներու նկատմամբ : Ասիկա եւ կ'անուանեմ ֆէտիշիզմ (սնտիխապատութիւն) որ կը կազմի եւ յատուկ կը դառնայ աշխատանքի արդիւնքներուն, անմիջապէս՝ երբ անոնք կ'արտադրուին որպէս ապրանքներ :

Ապրանքային աշխարհի այս ֆէտիշիզմին բնոյթը յառաջ կու գայ ապրանքներ արտադրող աշխատանքի իւրայատուկ հասարակական բնոյթէն :

Սպառման առարկաները ընդհանրապէս ապրանք կը դառնան միմիայն այն պատճառով, որ անոնք իրարմէ անկախօրէն կ'իրաւուող մասնաւոր աշխատանքներու արդիւնքներ են : Այս մասնաւոր աշխատանքներու կոմպլէքսը (համահաւաքը) կը կազմէ հասարակական միագումար աշխատանք : Որովհետեւ արտադրողները հասարակական շփման մէջ կը մտնեն միմիայն իրենց աշխատանքի արդիւնքներու փոխանակութեան միջոցով, ուրեմն անոնց մասնաւոր աշխատանքներու առանձնաշատուկ հասարակական բնոյթներն ալ երեւան կու գան միայն այդ փոխանակութեան ներքո : Այս պատճառով ալ անոնց մասնաւոր աշխատանքներու հասարակական յարաբերութիւնները արտադրողներուն կ'երեւան այնպէս, որ են իրօք, այսինքն ո'չ թէ որպէս անհատներու անմիջաբար հասարակական յարաբերութիւններ միայն իրենց աշխատանքի ժամանակ, այլ աւելի շուտ՝ որպէս անհատներու իրային յարաբերութիւններ ու իրերու հասարակական յարաբերութիւններ :

Ապրանքներ արտադրողներու հասարակութեան համար, որու արտադրութեան ընդհանուր հասարակական յարաբերութիւնները այն է, որ իր արդիւնքները կը ներկայացնէ իրրեւ ապրանքներ, այսինքն՝ իրրեւ արժէքներ, եւ որուն մասնաւոր աշխատանքները այս նիւթական ձեւով իրարու հետ կը յարաբերին իրրեւ միանման մարդկային աշխատանք, այդպիսի հասարակութեան համար կրօնական ամենահամապատասխան ձեւը Քրիստոնէութիւնն է՝ վերացական մարդու իր սլաշտամունքով. յատկապէս յիշատակելու ենք Քրիստոնէական կրօնի բուրժուական զարգացումը ներկայացնող փոփոխակ-

ները — բողոքականութիւնը, դէպքը (միաստուածութիւնը) եւլն։ Արտադրութեան հին տիրական, անտիկ եւ այլն եղանակներու միջոցին արդիւնքի ապրանք գառնալը, ուրեմն եւ մարդոց իրրեւ ապրանք արտադրողներու կեցութիւնը ստորագաս դեր մը կը կատարէ, որ սակայն այնքան աւելի նշանակելի կը գառնայ, որքան աւելի հասարակական տնտեսաձեւերը աւելի կը մտնեն իրենց անկման փուլին մէջ։ Իսկական առեւտրական ժողովուրդները գոյութիւն ունին հին աշխարհի միջերկրային տարածութիւններու մէջ։ Արտադրութեան այդ հասարակական օրգանիզմները անհամեմատ աւելի պարզ եւ թափանցիկ են, քան բուրժուականը, բայց անոնք հիմնուած են կամ անհատական մարդու տնտեսութեան վրայ, որ զեռ չէ պոկուած միւս մարդոց հետ ունեցած տոհմային բնական կապերու պորտաթելէն, կամ թէ հիմնուած են տիրապետութեան ու ծառայութեան անմիջական յարաբերութիւններու վրայ։ Անոնք պայմանաւորուած են աշխատանքի արտադրողական ուժերու զարգացման ստորին աստիճանով մը եւ մարդոց համապատասխանօրէն կաշկանդուած յարաբերութիւններով, որոնք գոյութիւն կ'ունենան անոնց կեանքի իրականացման նիւթական պրոցէսի ներսը, հետեւաբար իրարու բնութեան նկատմամբ ունեցած յարաբերութիւններու մէջ։ Այս իրական կաշկանդուածութիւնը զաղափարապէս կ'արտացոլայ հին բնական ու ժողովրդական կրօններու մէջ։ Իրական աշխարհի կրօնական արտացոլումը կարող է այն ժամանակ չքանալ անմիջապէս, երբ մարդոց սուօրեայ գործնական յարաբերութիւնները կ'արտայայտուին մարդոց՝ միմիանց ու բնութեան նկատմամբ ունեցած թափանցիկ ու բանական յարաբերութիւններու մէջ։ Կեանքի հասարակական պրոցէսի, այսինքն արտադրութեան նիւթական պրոցէսի կերպարանքը իր միտտիկական մշուշային քողը մէկ կողմ կը նետէ այն ժամանակ, երբ ան ազատօրէն հանրայնացուած մարդոց արդիւնք՝ կը գտնուի անոնց գիտակցական պլանաչափ վերհսկողութեան տակ։ Սակայն ասոր համար կը պահանջուի հասարակութեան նիւթական հիմք մը կամ նիւթական գոյապայմաններու շարք մը, որոնք իրենց կարգին զարգացման երկար ու տանջալից պատմութեան մը բնականօրէն աճած արդիւնքն են։

Քաղաքատնտեսութիւնը իրօք վերլուծեր է, թէ եւ ո՛չ բաւարար չափով, արժէքն ու արժէքային մեծութիւնը եւ երեւան հանած է այս ձեւերու մէջ ծածկուած բովանդակութիւնը, բայց ան ո՛չ մէկ անգամ մինչեւ իսկ չէ գրեր այն հարցը, թէ՛ ինչո՞ւ այս բովանդակութիւնը այն ձեւը կ'ընդունի, հետեւաբար ինչո՞ւ աշխատանքը կ'արտայայտուի արժէքի մէջ եւ աշխատաչափն ալ իր ժամանակի տեւողութեան միջոցով կ'արտայայտուի աշխատանքի արդիւնքի արժէքա-

յին մեծութեան մէջ։ Այն ֆորմուլաները, որոնց ճակատին գրուած է, թէ անոնք կը պատկանին այնպիսի հասարակական կազմութեան մը, ուր արտադրութեան պրոցէսը կը տիրապետէ մարդոց վրայ, իսկ մարդ չ'իշխեր արտադրութեան պրոցէսի վրայ, անոնց բուրժուական գիտակցութիւնը կ'երեւնայ իրրեւ նոյնչափ ինքքստինքնեան հասկնալի բնական անհրաժեշտութիւն, որքան ինքք՝ արտադրողական աշխատանքը։ Այս պատճառով ալ արտադրութեան հասարակական օրգանիզմի մինչ-բուրժուական ձեւերու մասին ան կը դատէ այնպէս, ինչպէս եկեղեցական հայրերը կը դատէին մինչ քրիստոնէական կրօններու մասին։

Թէ այն ֆէտիշիզմը, որ կը պարուրէ ապրանքային աշխարհը, կամ աշխատանքի հասարակական որոշումներու առարկայական երեւուածութեանութիւնը որքան շատ կը մոլորեցնէ տնտեսագէտներու մէկ մասը, ասիկա, ի միջի այլոց կ'ապացուցանէ այն ձանձրալի անիմաստ վէճը, որ կը վերաբերէր փոխանակարժէքի ստեղծման մէջ բնութեան կատարած դերին։ Որովհետեւ փոխանակարժէքը հասարակական որոշ եղանակ մըն է՝ իրի մը վրայ թափած աշխատանքը արտայայտելու համար, ուրեմն ան չի կրնար աւելի բնական նիւթ պարունակել, քան, օրինակ, մուրհակի մը կուրսը։

Որովհետեւ ապրանքաձեւը բուրժուական արտադրութեան ամենէն բնականօրէն ու ամենէն անդարդացած ձեւն է, որու հետեւանքով ան շուտով հրապարակ կու գայ, թէ եւ ոչ իրրեւ նոյն արտադրութեան մէջ տիրապետող եւ բնորոշող եղանակ, ինչպէս որ ներկայիս է, — ուրեմն անոր ֆէտիշային բնոյթը համեմատաբար զեռ զիւրին է նկատել։ Աւելի կոնկրետ ձեւերու ժամանակ պարզութեան այս արտաքին երեւոյթն ալ կը շքանայ։ Ուրկէ՞ յառաջ կու գան դրամական սխտէմի պատրանքները։ Ան ոսկիի եւ արծաթի մէջ ո՛չ թէ այն կը նկատէր, թէ անոնք իրրեւ դրամ, արտադրութեան հասարակ յարաբերութիւն մը կը ներկայացնեն, այլ այն՝ որ անոնք հասարակական տարօրինակ յատկութիւն ունեցող բնական իրերու ձեւ են։ Իսկ արդի քաղաքատնտեսութիւնը, որ բարձրամտօրէն կ'արհամարհէ դրամական սխտէմը, մի՞թէ անոր ֆէտիշիզմը չօշափելի չի գառնար, երբ ան կը քննէ կապիտալը։ Սխալ չէ՞ ֆիզիոկրատներու այն պատրանքը, թէ հողային ռէնտան (վարձքի դրութիւնը) հողէն կը ծլի, ո՛չ թէ հասարակութենէն։ «Մարգարիտ մը կամ ադամանդ մը արժէք ունի իրրեւ մարգարիտ կամ ադամանդ... սխալ չէ՞ աս... Մինչեւ հիմա տակաւին ոչ մէկ քիմիագէտ չէ կրցեր մարգարիտին կամ ադամանդին մէջ յայտնագործել այն՝ ինչ որ մենք փոխանակարժէք կը կոչենք, որովհետեւ այդ փոխանակարժէքը մարգարիտին

ու ազամանդին մէջ ներմուծուած մարդկային աշխատանքէն կը յայտնագործուի :

ՓՈՆԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Ապրանքները իրենք իրենց չեն կրնար շուկայ երթալ եւ իրենք իրենց փոխանակուիլ իրարու հետ : Ուրեմն մենք պէտք է դառնանք, նայինք անոնց տէրերուն՝ ապրանքներուն : Ապրանքները իրեր են, ուստի չեն կրնար հակառակիլ մարդոց կամքին : Մարդը կրնայ ուժ գործածել, այսինքն վերցնել եւ անոնց տէր դառնալ : Որպէսզի առարկաները իրարու հետ յարաբերութեան մէջ մտնեն, ապրանքատէրերը, որոնք փոխադարձաբար դիրտար կը ճանչնան որպէս անջատ ու անկախ ապրանքատէրեր, իրարու հետ յարաբերելու են իրրեւ այնպիսի անհատներ, որոնց կամքը իր կնիքն է զրեր այդ իրերուն վրայ : Այս իրաւական յարաբերութիւնը, որու ձեւը պայմանագիրն է, օրինական ըլլայ ան կամ ոչ, կամքերու յարաբերութիւն մըն է, որ կը կոչուի տնտեսական յարաբերութիւն : Ուսումնասիրելով այս ձեւի իրերու ընթացառումը մենք որոշակի կը տեսնենք ընդհանրապէս, որ անհատներու տնտեսական ընտրոշ զիմակները տնտեսական յարաբերութիւններու անձնաւորումն են եւ մարդիկ այդ յարաբերութեանց ներկայացուցիչներն են որոնք կը հանդիպին իրարու ապրանքներու միջնորդութեամբ :

Իւրաքանչիւր ապրանքատէր ուրիշի ապրանքը վեր կ'առնէ որպէս իր ապրանքի յատուկ համարժէք, իսկ իր ապրանքին կը նայի որպէս բոլոր ապրանքներու ընդհանրական համարժէք : Բայց որովհետեւ բոլոր ապրանքատէրերը միեւնոյն բանը կ'ընեն, ուրեմն ոչ մէկ ապրանք ընդհանրական համարժէք չի ներկայացներ եւ ապրանքները չեն ունենար նաեւ ոչ մէկ ընդհանրական յարաբերական արժեք, որուն մէջ անոնք կրնան նոյնանալ իրրեւ արժէքներ եւ համեմատուիլ իրրեւ արժէքային մեծութիւններ : Այս պատճառով այդ առարկաները իրարու դէմ կու գան ոչ թէ իրրեւ ապրանքներ, այլ միմիայն իրրեւ արդիւնքներ կամ սպառարժէքներ :

Իրենց դժուար կացութեան միջոցին մեր ապրանքատէրերը կը խորհրդածեն Փառուտի պէս : Սկիզբէն գործն էր : Եւ անոնք գործը ըրեր, վերջացուցեր էին նախքան խորհրդածելը : Ապրանքային բրնտեթեան օրէնքները երեւան կու գան ապրանքատէրերու բնագոյններուն մէջ : Անոնք կրնան իրենց ապրանքները իրարու հետ յարաբերութեան մէջ դնել լոկ իրրեւ արժէքներ, ուստի եւ՝ իրրեւ ապրանքներ, եթէ ուրիշ ապրանք մը ըլլայ, որ ներկայացնէ ընդհանրական համարժէք : Բայց միայն հասարակական օրէնքն է, որ կրնայ որոշ

ապրանք մը ընդհանրական համարժէք դարձնել, այսինքն այնպիսի մէկ ապրանք երեւան հանել, որ կարենայ բոլոր միւս ապրանքներու հասարակական գործունէութիւնը դատել եւ նոյն ատեն իր մէջ հանրակողմանիօրէն ներկայացնել այդ ապրանքներու արժէքը : Ասով այս առանձնապատուկ ապրանքի բանաձեւը կը դառնայ հանրօրէն ճանչցուած համարժէքային ձեւ, եւ ստիկա ուրիշ բան չէ եթէ ոչ գրամը :

Այն չափով, որչափով ապրանքափոխութիւնը կը փշրէ իր տեղական կապանքները եւ ապրանքային արժէքը ծաւալուելով կը դառնայ ընդհանրապէս մարդկային աշխատանքի նիւթականացում, այդ չափով ալ գրամաձեւը կ'անցնի ու կը մտնէ այն ապրանքներուն մէջ, որոնք իրենց բնոյթով պիտանի են եւ խիստ յարմար ընդհանրական համարժէքի հասարակական գործունէութեան համար : այդ ապրանքներն են մեզ ծանօթ ազնիւ մետաղները՝ արծաթն ու ոսկին :

Թէեւ ոսկին եւ արծաթը իրենց բնոյթով գրամ չեն, բայց գրամը իր բնոյթով կամ ոսկի է կամ արծաթ :

Դրամապրանքը, ըսենք ոսկին, որպէս սպառումի արժէք վեր առած, կրկնակ դեր ունի. անիկա որպէս ապրանք՝ ունի իր սպառման արժէքը, օրինակ, ոսկիով կը լեցնեն ծակ առամները, ոսկիով կը շինեն պերճանքի առարկաներ. որպէս դրամ՝ կը դերացնէ փոխանակութիւնը, այսինքն՝ իր մէջ կ'արտացոլացնէ ուրիշ ապրանքներու փոխանակային արժէքները : Սակայն ասով պէտք չէ հասկնալ, որ գրամապրանքի այս յատկութիւնը երկինքէն՝ կամ մարդուն կողմէ քմահաճօրէն տրուած բացառիկ յատկութիւն մըն է ոսկիին կամ արծաթին. ո՛չ, գրամապրանքին մէջ նոյնպէս մարդկային աշխատանքի նիւթականացումն է տեղաւորուած : Ոսկին ու արծաթը ինչպէս որ դուրս կու գան երկրի խորէն, մարդկային աշխատանքի մարմնառութիւնը կը ներկայացնեն : Ասկէ կը ծնի դրամի մոզական բնոյթը :

ԴՐԱՄԸ ԿԱՄ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ

Այս աշխատութեան մէջ ամէն տեղ ենթադրուած է, որ ոսկին է գրամապրանքը :

Ոսկիին առաջին գործն այն է, որ ապրանքային աշխարհին նիւթ մատակարարէ, անոր արժէքային արտապայտութեան համար կամ թէ ապրանքային արժէքները ներկայացնէ իրրեւ համանուն մեծութիւններ, որոնք որակապէս նման են եւ քանակապէս համեմատելի : Այսպիսով ան կը գործէ իրրեւ արժէքի ընդհանրական չափ եւ ամենէն առաջ սոյն գործառնութեան միջոցով է միայն, որ ոսկին՝ համարժէքային ապրանքը, կը վերածուի գրամի :

Գինը կամ ապրանքներու գրամաձեւը, որ ապրանքներու ծաւալուն յարաբերական արժէքային արտայայտութեանց անվերջ շարքին մէջէն վեր կը ցցուի, կը տարբերի ապրանքներու շօշափելի իրական մարմնաձեւերէն, ուրեմն եւ ան իտէական է կամ՝ պատկերացում մըն է միայն: Ապրանքատէրը պէտք է իր լեզուն գնէ իր ապրանքներուն բերանը կամ անոնց վրայ թղթէ ցուցանակներ կախէ՝ անոնց գիները արտաքին աշխարհին յայտնելու համար:

Դրամը իրրեւ արժէքներու չափ ու իրրեւ գինի չափանիշ՝ երկու միանգամայն տարբեր դործ կը կատարէ: Ան արժէքներու չափ է իրրեւ մարդկային աշխատանքի հասարակական մարմնառութիւն, իսկ գիներու չափանիշ է, իրրեւ հաստատուն մետաղային կշիռ մը:

Այն իրերը, որոնք ինքնատիւրեան ապրանքներ չեն, օրինակ, խիզճը, պատիւը, դատողութիւնը եւ այլն, կրնան իրենց աէրերուն համար գրամով ծախու բաներ ըլլալ եւ այսպիսով իրենց գիներու միջոցով ապրանքային ձև ստանալ: Հետեւաբար իր մը կրնայ ձևականորէն գին ունենալ՝ առանց փոխանակային արժէք ունենալու:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ

ԱՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Փոխանակութեան պրոցէսը, որ հակասական յարաբերութեանց շղթայ մը կը ներկայացնէ, ապրանքները ձեռքէ ձեռք կը փոխանցէ: Աշխատանքի մէկ օգտակար տեսակի արդիւնքը կը փոխարինէ անոր մէկ ուրիշ տեսակի արդիւնքին: Հասնելով այն տեղը, ուր ապրանքը որպէս սպառման արժէք կը ծառայէ, անիկա դուրս կ'ելլէ ապրանքափոխութեան շրջանակէն եւ կ'իյնայ սպառման շրջանակին մէջ: Այստեղ մեզ հետաքրքրողը ապրանքափոխութեան շրջանառութիւնն է, ատոր համար մենք պիտի քննենք ապրանքներու ձևափոխութիւնը կամ փոխակերպութիւնը միայն, որու միջոցով կ'իրականանայ հասարակական նիւթափոխութիւնը:

Ապրանքները նախ եւ առաջ փոխանակութեան պրոցէսի մէջ կը մտնեն առանց ոսկեզօծուելու, առանց շաքարապատուելու, ճիշդ այնպէս՝ ինչպէս ծնած են: Փոխանակութեան պրոցէսը առաջ կը բերէ ապրանքի երկճղում մը, երբ ան կը փոխուի ապրանքի ու գրամիյառաջ կը բերէ արտաքին հակադրութիւն մը, որու մէջ ապրանքները կը ներկայացնեն սպառման արժէքի ու արժէքի հակադրութիւնը, որ ծածկուած է իրենց ներքո: Հիմա ընկերանանք որեւէ ապրանքատիրոջ, օրինակ, մեր հին ծանօթ կտուագործին, եւ երթանք

փոխանակութեան շրջանառութեան հրապարակը՝ ապրանքաշուկան: Կտուագործի 20 կանգուն կտուի գինը բսենք թէ յայտնի է, որոշուած է, այն է՝ երկու տոլար: Անիկա կը փոխանակէ իր կտուը, կ'առնէ երկու տոլարը, եւ իրրեւ հին նիստ ու կացի մարդ՝ նորէն կը փոխանակէ երկու տոլարը Աստուածաշունչի մը հետ: Կտուը, որ կտուագործին համար միմիայն ապրանք էր, արժէք կրող ապրանք, կը փոխանակուի ոսկիի հետ՝ անոր արժէքային կերպարանքի հետ, ոսկին կը փոխանակուի եւ կը վերածուի ուրիշ ապրանքի մը՝ Աստուածաշունչի, այս վերջինը՝ Աստուածաշունչը, իրրեւ սպառման առարկայ, ջուլհակին հետ պէտք է երթայ անոր տունը եւ հոն բարարէ հոգեկան մխիթարութեան պահանջները: Կը տեսնենք, որ ապրանքի փոխանակութեան պրոցէսը կը կատարուի երկու հակադիր՝ բայց գիրար լրացնող փոփոխութիւններով, որոնք են՝ ապրանքի գրամ դառնալը ու գրամէն նորէն ապրանք դառնալը. ուրիշ խօսքով՝ արժէքէն փոխանակման արժէք եւ փոխանակման արժէքէն սպառման արժէք դառնալը:

Եթէ կտուագործը այժմ նայի իր առուծախի վերջնական հետեւանքին, կը տեսնէ, որ կտուի փոխարէն Աստուածաշունչ ունի, իր նախակրնական ապրանքի փոխարէն ունի ուրիշ ապրանք մը նոյն արժէքով, բայց տարբեր օգտակարութեամբ: Նոյն եղանակով ան կ'իւրացնէ իր միւս կենսամիջոցներն ու արտադրամիջոցները:

Այսպիսով ուրեմն, ապրանքի փոխանակութեան պրոցէսը կը կատարուի հետեւեալ ձևափոխութեամբ.

Ապրանք — Դրամ — Ապրանք
 Ա — Դ — Ա

Ա — Ա շարժումը ապրանքի փոխանակութիւնը ապրանքի հետ, իր նիւթական բովանդակութեամբ՝ հասարակական աշխատանքի նիւթափոխութիւն է, որու հետեւանքին մէջ ինքը՝ պրոցէսը կը վերջանայ:

Ա — Դ (Ապրանքէն գրամ) Ապրանքի առաջին փոխակերպութիւնն է կամ անոր վաճառումը: Ապրանքային արժէքին՝ ապրանքային մարմնէն ոսկիի մարմնի փոխակերպուելը ապրանքի մահացութիւնըն է: Եթէ այդ թոխչըր կը ձախողի, ոչ թէ ապրանքը կը տուժէ, այլ ապրանքատէրը:

Այստեղ պէտք է նշել, որ ապրանքներու փոխակերպութիւնը միմիայն առեւտուրի մէջ չէ որ կը կատարուի, երբ կտուը կը վերածուի գրամի եւ գրամը՝ Աստուածաշունչի: Կտուագործի աշխատանքը ոչխար պահելէն մինչեւ կտու հիւսելը չի հասնիր. այստեղ երեւան կու գայ աշխատանքի հասարակական բաժանումը, որ կտուագործի աշխատանքը կը դարձնէ միակողմանի, հոյ չէ թէ անոր պահանջները բազմակողմանի են: Բայց կտուագործը իր կտուը գը-

բամի փոխելով է որ կրնայ հասնիլ իր բազմակողմանի պահանջները բաւարարելու միջոցներուն: Բայց աշխատանքի բաժանումը արտադրութեան բնածուն կազմախօսութիւնն է, որու թելերը հիւսուած են եւ կը շարունակուին հիւսուիլ ապրանք արտադրողներու ետեւը՝ անոնց կոնակին: Երբեմն ապրանք մը երեւան կու գայ, որ արդիւնք է աշխատանքի նոր եղանակի մը, իսկ այդ եղանակն ալ կապուած է նորածաղ պահանջ մը բաւարարելու նպատակին եւ կամ իր սեփական յատկութեամբ այդ ապրանքը կրնայ հասարակական նոր պահանջ մը հրապարակ հանել: Այդ պարագային հին ձևի ապրանքը, որ նախկին ապրանքատիրոջ կը ծառայէր առ ու ծախի մէջ, հրապարակէն կը քաշուի բոլորովին, իր տեղը զիջելով նորին: Երբ փամփուշտով հրացանը մէջտեղ կ'ելլէ, կայծքարով հրացանը բոլորովին անպէտք կը դառնայ, կատարելագործուած հրացանի աուծախի շուկային մէջ:

Ասկէ սորոգ կ'երեւի որ ապրանքային փոխակերպութեան ընթացքին, ոչ միայն ապրանքները իրենց տէրերը եւ դերերը կը փոխեն, այլև կը փոխեն հետզհետէ իրենց տեսակը, արտադրութեան եղանակը, կը փոխեն նաեւ իրենց տէրերու դերերը — վաճառողը գնորդ կը դառնայ, գնորդը՝ վաճառող. — գեռ աւելին անոնք կը փոխեն մարդոց պահանջները եւ ատով՝ անոնց ամբողջ ընկերային, ընտանեկան ու քաղաքական հասկացողութիւնները:

Այժմ պէտք է կէտ մըն ալ նշել ու անցնիլ:

Ոչ մէկ բան չի կրնար աւելի անհեթեթ ըլլալ, քան այն քարացած բանաձևը, թէ ապրանքաշրջանառութիւնը վաճառման եւ զնման անհրաժեշտ հաւասարակշռութիւն պահպանելու հետ է պայմանաւորուած: Երբե՛ք. կապիտալիստական հասարակարգի մէջ չէ կարելի անտեսական յարաբերութեանց հաւասարակշռութիւն պահպանել առանց պետական ուժի, որուն նպատակն է արտադրողները պահել համակերպողի շրջանակին մէջ, հլու, հնազանդ:

Այս պարագան, սակայն, երբեք չի փոխեր իրերու, ինչպէս եւ մարդոց մտածումներու զարգացողական ձգտումը: Պետութիւնը կը կենայ իր հսկողի եւ կանոնաւորողի դերին մէջ, որքան ատեն որ այս հսկողի եւ կանոնաւորողի դերը արտադրողներու, ապրանքատէրերու եւ սպառողներու միջեւ ներդաշնակութիւնը կրնայ պահել... Անոր դերը կը փոխուի, երբ ներդաշնակութիւնը կը խանդարուի. անիկա իր հսկողի դերէն կ'անցնի բռնապետական դերին:

ԳՐԱՄԸ Կ'ԸԼԼԱՅ ԳԱՆՁ

Երկու հակադիր ապրանքային փոխակերպութիւններու անընդհատ շրջապտոյտը կամ վաճառքի ու գնման հոսանուտ հերթափո-

խութիւնը երեւան կու գայ զբամի անդադար շրջանառութեան՝ կամ անոր այն գործառնութեան մէջ, զոր ան կը կատարէ իրբեւ շրջանառութեան յարաշարժ մեքենականութիւն:

Իրամը կ'անշարժանայ, կամ շարժուն վիճակէն անշարժ վիճակին կը դառնայ, երբ փոխակերպութիւններու շարքը կը կտրուի. այսինքն վաճառքին չի յաջորդեր գնման գործը:

Ապրանքային շրջանառութիւնը ծաւալման առաջին վայրկեանին իսկ՝ բուն ձգտումն ունի պինդ պահելու փոխակերպութեան արդիւնքը՝ կամ անոր ոսկեայ բոժոժը: Ապրանքը կը ծախուի ոչ թէ ապրանք գնելու համար, այլ ապրանքաձևը դրամաձևով փոխարինելու համար: Այս ձևափոխութիւնը նիւթափոխութեան ստեղծական միջոց ըլլալէն վերջ կը դառնայ ինքնանպատակ: Ասով դրամը կը քարանայ իրբեւ դանձ եւ ապրանքավաճառը կը դառնայ գանձատէր: Վաճառքներն ու անոնց յաջորդող գնումները միջոց կ'ըլլան այն բանին, որ ազնիւ մետաղները բաշխուին ապրանքատէրերու միջեւ: Այսպիսով շրջանառութեան բոլոր կէտերուն վրայ առաջ կու գան ոսկեզանձեր ու արծաթազանձեր ամենատարբեր չափերով: Ապրանքն իրբեւ փոխանակման արժէք կամ փոխանակման արժէքն իրբեւ ապրանք իր ձևքին մէջ պինդ պահելու հնարաւորութեան հետ միասին՝ ապրանքատիրոջ մէջ կ'արթնայ դրամի ծարուր: Ապրանքաշրջանառութեան ընդլայնման հետ կ'աճի դրամի զօրութիւնը, հարստութիւնը: Իրամը ինքը ապրանք է, մշտարժէք ապրանք, արտաքին իր մը որ կարող է ամէն մարդու սեփականութիւնը դառնալ: Այսպիսով հասարակական ուժը կը դառնայ մասնաւոր անձերու մասնաւոր ուժը:

Գանձահաւաքման ձգտումը ըստ բնութեան՝ չափ չի ճանչնար: Իրամը որակապէս սահման չունի, այսինքն նիւթական հարստութեան ընդհանրական ներկայացուցիչն է, որովհետեւ անմիջականօրէն փոխարկելի է ամէն մէկ ապրանքի: Սակայն, միաժամանակ ամէն մէկ իրական դրամապտումար քանակապէս սահմանափակուած է, ուրեմն սահմանափակ ներդրութիւն ունեցող գնման միջոց է: Իրամի քանակական սահմանին ու որակական անսահմանութեան միջեւ եղած հակասութիւնը գանձահաւաքը կը մղէ տիրանալ որակական անսահմանութեան, խնայողութեան եւ ժխտութեան. ասոնք անոր հիմնական «առաքինութիւններն» են:

Գանձի անմիջական ձևի կողքին կը զարգանայ անոր գեղադիտական ձևը, ոսկեայ եւ արծաթեայ ապրանքներու տէր ըլլալը: Վերջինս կ'աճի բուրժուական հասարակութեան հարստութեան հետ: Այսպիսով կը կազմուի մասամբ՝ ոսկիի եւ արծաթի համար շարունակ ընդլայնուող շուկայ մը:

Համաշխարհային առևտուրի մէջ երբ ապրանքներն իրենց

արժէքները կը ծաւալեն եւ իրարու հետ փոխանակութեան մէջ կը մտնեն, դրամը ներքին շրջանառութեան ոլորտներէն դուրս գալով իր թեւերը կ'երկարէ համաշխարհային շուկային մէջ. դրամը կը դառնայ համաշխարհային արժեձեռ:

Համաշխարհային դրամը կը դործէ իրրեւ վճարման միջոց, բնդհանրական գնման միջոց, ինչպէս նաեւ միջազգային հաշուեկշիռները հաւասարեցնելու համար. անիկա նոյնպէս ընդհանրապէս հարրատութեան բացարձակ հասարակական նիւթականացումն է:

ԴՐԱՄԸ ԿԱՊԻՏԱԼ ԿԸ ԴԱՌՆԱՅ

ԿԱՊԻՏԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՖՈՐՄԻԻԼԱՆ

Ապրանքաշրջանառութիւնը կապիտալի ելակէտն է: Ապրանքարտագրութիւնն ու զարգացած ապրանքաշրջանառութիւնը, առեւտուրը, կը կազմեն այն պատմական նախադրեալները, որոնցմէ կը ծագի կապիտալը: Համաշխարհային առեւտուրն ու համաշխարհային շուկան 16-րդ դարուն կապիտալի կեանքի արդի պատմութեան սկիզբն են դրամ:

Պատմականօրէն կապիտալն ամէն տեղ սկիզբէն հանդիպակադրուած է հողային սեփականութեան՝ դրամի ձեւով. ան եղած է իրրեւ դրամական գոյք, իրրեւ վաճառականական կապիտալ ու իրրեւ վաշխառուական կապիտալ:

Հողային սեփականութեան ու դրամի իշխանութեան միջեւ հակադրութիւն կայ, չկայ հող, որ աէր շունենայ. դրամը աէր շունի. ու այս անտէր դրամն է, որ տեղ մը կուտակուելով կապիտալ կը դառնայ:

Ամէն մէկ նոր կապիտալ առաջին հերթին կ'ելլէ բեմ, այսինքն՝ իրրեւ դրամ կը մտնէ շուկայ, ապրանքաշուկայ, աշխատաշուկայ կամ դրամաշուկայ, եւ այդ դրամը որոշ պրոցէսի միջոցով կը դառնայ կապիտալ:

Դրամը իրրեւ դրամ ու դրամը իրրեւ կապիտալ սկիզբէն կը տարրերին շրջանառութեան իրենց տարրեր ձեւերով միայն:

Ապրանքաշրջանառութեան առաջին ձեւը տեսանք արդէն նախապէս.

Ա — Դ — Ա

Ապրանք — Դրամ — Ապրանք

Այս ձեւին մէջ ապրանքը դրամ կը դառնայ, ապա դրամը կը վերածուի ուրիշ ապրանքի: 20 կանգուն կտաւը 2 տոլարի կը փոխուի, ապա երկու տոլարը՝ Ատտուածաշունչի, ուրիշ խօսքով, բան մը կը ծախուի ուրիշ բան մը գնելու նպատակով: Բայց մենք այս

ձեւի կողքին կը տեսնենք երկրորդ ձեւ մը, առաջինէն առանձնայատուկ կերպով տարրեր ձեւ մը, այն է՝

Դ — Ա — Դ

Դրամ — Ապրանք — Դրամ

Այս ձեւին մէջ դրամը ապրանքի կը փոխուի ու այդ ապրանքը նորէն դրամի կը վերածուի. ուրիշ խօսքով՝ բան մը կը գնուի, գայն ծախելով դրամի վերածելու նպատակով: Սոյն պրոցէսի վերջաւորութիւնը արամարանականօրէն այն է, որ դրամը կը փոխանակուի դրամի հետ: Երբ ես 100 տոլարով 2000 փաուստ բամպակ կը գնեմ եւ այդ 2000 փաուստ բամպակը նորէն կը ծախեմ եւ կը ստանամ 110 տոլար, ասով ես փոխանակած կ'ըլլամ 100 տոլարը 110 տոլարի հետ. բայց եթէ բամպակի միջնորդութիւնը չըլլայ, անշուշտ ես այդ ձեւի փոխանակութիւնը չեմ կրնար ընել. որովհետեւ դժուար է գանել յիմար մը, որ նոյն ժամուն ինձմէ 100 տոլար ստանայ եւ անմիջապէս 110 տոլար ինձի վերագարձնէ:

Բայց մենք ամենէն առաջ պէտք է բնորոշենք Դ — Ա — Դ-ի եւ Ա — Դ — Ա-ի շրջապտոյտներու միջեւ եղած ձեւական տարրերութիւնը: Առանկով միաժամանակ երեւան կու գայ բովանդակութեան այն տարրերութիւնը, որ ծածկուած է այս ձեւական տարրերութեանց ետեւ:

Ամենէն առաջ առնենք թէ ինչ ընդհանուր բան կայ երկու ձեւերուն մէջ:

Երկու շրջապտոյտներն ալ կը փոխուին միեւնոյն երկու հակադիր փուլերու.

Ա — Դ: Այդ կը նշանակէ ապրանք ծախել,

Դ — Ա: Այդ կը նշանակէ ապրանք գնել:

Այս երկու փուլերուն ամէն մէկուն մէջն ալ միեւնոյն նիւթական տարրերն են, որ իրարու կը հանդիպին. այսինքն՝ ապրանքն ու դրամը. այս երկու միեւնոյն նիւթական տարրերուն հետ իրարու կը հանդիպին երկու անձեր՝ միեւնոյն անտեսական բնորոշ գիմակնեբով. մէկը գնորդի դերով, միւսը՝ վաճառողի դերով. բայց այս երկու անձերուն մէջ յանկարծ երրորդ անձ մըն ալ կը մտնէ, այս երրորդ անձը թէ կը գնէ եւ թէ կը ծախէ:

Սակայն Ա — Դ — Ա ու Դ — Ա — Դ երկու շրջապտոյտները ճիշդ գլուխէն իրարմէ դատորոշողն այն հանդամանքն է, որ շրջանառութեան միեւնոյն հակադիր փուլերը հակառակ յաջորդականութիւն ունին: Հասարակ ապրանքաշրջանառութիւնը կը սկսի վաճառման գործով եւ կը վերջանայ գնումով. դրամը՝ իրրեւ կապիտալ, իր շրջանառութիւնը կը սկսի գնումով եւ կը վերջանայ վաճառումով: Առաջին շրջանառութեան մէջ ապրանքը կը կազմէ շարժման ելակէտն

ու վերջակէտը, երկրորդ շրջանառութեան մէջ գրամն է ելակէտն ու վերջակէտը. առաջին ձևի մէջ գրամն է ընդհանուր ընթացքի միջնորդը, երկրորդին մէջ՝ ընդհակառակը՝ ապրանքն է միջնորդը:

Ա - Դ - Ա շրջանառութեան մէջ գրամը վերջի վերջոյ կը գտնայ այնպիսի ապրանք, որ կը ծառայէ իրրեւ սպառման արժէք: Հետեւաբար, գրամը կը ծախսուի վերջնականապէս: Դ - Ա - Դ հակադարձ ձևին մէջ, գնողը, ընդհակառակը, գրամը կը ծախսէ՝ իրրեւ վաճառորդ՝ գրամ ստանալու նպատակով: Ապրանքը գնելու ատեն ան գրամը կը հանէ շրջարեւութեան՝ որպէսզի նոյն ապրանքը ծախելով գրամը ետ ստանայ իր շահոյթով: Այս իր թաղուն նպատակն է:

Ա - Դ - Ա ձևի մէջ միեւնոյն ստակը երկու անգամ իր տեղը կը փոխէ. վաճառորդը կը ստանայ գրամը գնողէն եւ կը վճարէ ուրիշ ապրանքի մը համար: Ամբողջ պրոցէսը, որ կը սկսի տուած ապրանքի համար գրամ ստանալով, կը վերջանայ իր նոր գնած ապրանքի համար գրամ վճարելով: Դ - Ա - Դ ձևին մէջ ընդհակառակը տեղի կ'ունենայ: Հոն ոչ թէ միեւնոյն գրամն է, որ իր տեղը կը փոխէ երկու անգամ, այլ միեւնոյն ապրանքն է, որ իր տեղը կը փոխէ, այսինքն գնման ապրանքաձեւէն կ'անցնի վաճառելի ապրանքաձեւին, իսկ գնորդը ապրանքի վաճառորդի ձեռքէն ապրանքը կ'առնէ եւ կը յանձնէ նոր գնորդի մը: Այս պրոցէսին մէջ գրամը մէկ ձեռքէն կ'անցնի միւսին, ապա կը վերադառնայ իր ելակէտին՝ իր շահոյթով:

Քիչ առաջ օրինակ մը տուինք. 100 տոլարով 2000 փառնար բամպակ գնեցի եւ այդ ապրանքը ծախեցի 110 տոլարի: Ասով մեր սկսած պրոցէսը չի վերջանար, մեր ստացածը՝ 110 տոլարը միասնական արժէք է, որ կը գտնուի նոյն ինքնազանգ պրոցէսը սկսելու դերին մէջ, ինչ որ էր մեր նախապէս ունեցած 100 տոլարը: Դրամը երբ կը շարժի եւ իր գործառնութիւնը կը վերջացնէ, սկիզբը կը գնէ ուրիշ նոր շարժումի մը: Գնում՝ վաճառման համար նպատակը վերջ չունի: Դրամը՝ որպէս կապիտալի շրջանառութեան միջոց՝ իր ընթացքը պէտք է շարունակէ, ինքնաձման մշտապէս նորոգուող այս շարժումը, կապիտալի շարժումը սահման չունի եւ բուրժուական հասարակութեան մէջ բնաւ սահման չկրնար ունենալ:

Դրամատէրը՝ իրրեւ այս շարժման գիտակից ներկայացուցիչ, այսպիսով կը դառնայ կապիտալիստ: Անոր անձը, կամ ուրիշ խօքով՝ անոր զրպանը գրամի ելակէտն ու վերջակէտն է: Անոր ենթակայական նպատակն է վերացական հարստութեան աճուն խրացումը. անիկա կապիտալիստ է իր ղեղած գրամով ու կապիտալ է իր կամքով ու գիտակցութեամբ: Կապիտալիստի նպատակը սպառման արժէքը չէ, ոչ ալ առանձին շահոյթը. կապիտալիստի նպատակն է շահոյթի անդուլ շարժումը: Հարստացման այս բացարձակ ձգտու-

մը, արժէքի ետեւ ինկած այս մոլեգին վաղքը, ընդհանուր է թէ կապիտալիստին եւ թէ գանձահաւաքին համար: Բայց մինչդեռ գանձահաւաքը խելացնոր կապիտալիստ է միայն, կապիտալիստը խելացի գանձահաւաք մըն է: Առաջինը իր աչքը յառած է իր փոխ տուած գրամի բերելիք տոկոսին, երկրորդը՝ ապրանքային անընդմիջական ու յարաճուն շրջանառութեան:

Բայց մենք մեր վերլուծման մէջ կը տեսնենք, թէ ինչպէս առեւտրական կապիտալը, այնպէս ալ վաչխառուական՝ տոկոսարեւր կապիտալը օձանցական ձեւեր են, մանաւանդ, որ երբ նկատի առնենք թէ անոնք երեւան եկած են արդէն արդիական ձևի կապիտալի հիմնաձեւումէն առաջ:

Մենք պէտք է նկատի ունենանք, որ յաւելեալ արժէք բուսածը չի կրնար քմահաճօրէն երեւան դալ ապրանքային շրջանառութեանէն, կամ գրամի տոկոսն աւելցնելու քմահաճ փորձէն. յաւելեալ արժէքը կը գոյանայ ապրանքային շրջանառութեան կոնակին ետեւ. բան մը որ աննշմարելի է բուն իսկ շրջանառութեան մէջ: Բայց արդեօք կարո՞ղ է յաւելեալ արժէքը ուրիշ տեղէ մը առաջ գալ: Ապրանքարտադրողը շրջանառութեան ոլորտէն դուրս, առանց ուրիշ ապրանքատէրերու հետ չլիման մէջ մտնելու անկարելի է, որ ապրանքի արժէքը բարձրացնէ եւ գրամն ու ապրանքը կապիտալի վերածէ:

Այսպէս ուրեմն կապիտալը չի կրնար շրջանառութեանէն առաջ գալ եւ նմանապէս չի կրնար շրջանառութեանէն անկախօրէն երեւան գալ. կապիտալը կը կազմուի միաժամանակ շրջանառութեան մէջ ու շրջանառութեանէն անկախ:

Այժմ այդ հանելուկն է, զոր պէտք է պարզենք:

ԱՇԽԱՏՈՒԹԻ ԳՆՈՒՄՆ ՈՒ ՎԱՃԱՌՈՒՄԸ

Դրամի արժէքի այն փոփոխութիւնը, որ պէտք է կապիտալ դառնայ, չի կրնար կատարուիլ մեքենականօրէն նոյն գրամին մէջ, որովհետեւ գրամը իրրեւ գնման միջոց եւ իրրեւ վճարման միջոց՝ իրեն ներկայացող ապրանքներու գինը կ'իրականացնէ. անիկա կը գնէ, կամ ինչ որ վճարելիք է, անոնց համար կը վճարէ, բայց ինք կը մնայ իր սեփական ձեւին մէջ՝ կը դառնայ արժէքային անփոփոխ ու կարծրացած մեծութիւններու քարացում: Այդ փոփոխութիւնը նմանապէս չի կրնար առաջ գալ երկրորդ գործողութեանէն, այսինքն ապրանքի աւելի գնով վերստին վաճառումէն, որովհետեւ այդ գործողութիւնը ապրանքն իր բնաձեւէն կը վերադարձնէ գրամաձեւին: Հետեւաբար փոփոխութիւնը պէտք է կատարուի այն ապրանք-

քին մէջ, որ կը գնուի Դ - Ա գործողութեան ընթացքին, այսինքն՝ դրամին ապրանք գնելու առաջին գործողութեան ընթացքին. իսկ այդ գործողութիւնը պէտք է կատարուի գնուելիք ապրանքի արժէքը ամբողջապէս չվճարելով, որովհետեւ ապրանք գնելով շահոյթ ձեռք բերել ուղղող դրամատէրը, եթէ իր գնած ապրանքին համարժէքը վըճարէ, այն ատեն իր դրամը՝ բռնեք 5 տուրքը՝ 5 տուրքի հետ փոխանակած կ'ըլլայ: Յաւելեալ արժէքի գծով առաջ դալիք փոփոխութիւնը կրնայ ծնիլ միմիայն ապրանքի սպառարժէքէն, այսինքն՝ անոր գործածութենէն: Ապրանքի մը գործածութենէն արժէք գուրս հանելու համար մեր ապրանքատէրը այնքան բարեբախտ պէտք էր ըլլար, որ շրջանառութեան սրբախի ներսը՝ շուկայի մէջ, երեւան բերէր այնպիսի ապրանք մը, որու սպառարժէքն արժէքի ազդելը ըլլալու առանձնաշատուկ յատկութիւն ունենար, որու իրական գործածումը աշխատանքը նիւթականացնէր, հետեւաբար արժէք ստեղծէր: Եւ դրամատէրը շուկայի վրայ շատ հեշտիւ կը գտնէ այդպիսի առանձնաշատուկ ապրանք մը. այդ մարդկային աշխատելու կարողութիւնն է, մարդու աշխատութն է:

Աշխատութեամբ աշխատելու կարողութիւնն ըսելով մենք կը հասկնանք միապումարը Փիլիքիական ու հոգեկան յատկութիւններու, որոնք գոյութիւն ունին կենդանի մարդուն մէջ:

Սակայն որպէսզի դրամատէրը շուկան աշխատութեամբ կոչուած ապրանքը գտնէ, շարք մը պայմաններ պէտք է լրացած ըլլան: Աշխատութեամբ շուկայի վրայ իրբեւ ապրանք կրնայ երեւան գալ այն ատեն, երբ անոր տէրը իր աշխատութեամբ ծախել կ'ուզէ եւ ազատ է գայն ծախելու: Աշխատութի տէրը եւ դրամատէրը իրարու կը հանդիպին շուկային մէջ եւ իրարու հետ յարաբերութեան մէջ կը մտնեն իրբեւ իրաւահասարակ ապրանքատէրեր, մէկը որպէս գնորդ, միւսը՝ որպէս վաճառող: Այս յարաբերութեան տեւական ըլլալը կը պահանջէ, որ աշխատութի սեփականատէրը իր աշխատութեամբ ծախէ որոշ ժամանակի համար միայն. որովհետեւ եթէ ան իր աշխատութեամբ ծախէ ամբողջովին եւ միանգամընդմիջա՝ ատով ինքզինքը ծախած կ'ըլլայ, ազատ մարդէն կը դառնայ, ստրուկ, ապրանքատէր ըլլալէն կը դադրի եւ կ'ըլլայ ապրանք:

Երկրորդ էական պայմանը, որ հարկաւոր է, որպէսզի դրամատէրը աշխատութեամբ գտնէ շուկային մէջ, այն է, որ աշխատութի տէրը իր աշխատութեամբ ծախելու հարկադրանքին տակ գտնուի:

Եւ ազատ բանուորը միշտ ալ այդպիսի հարկադրանքի տակ է արդէն եթէ բացառիկ պարագաներ չներկայանան. օրինակ, երբ որ դանձ մը գտնէ, կամ ժառանգութեան մը տիրանայ եւ կամ Աստուծոյ հրամանով բռնած առարկան ոսկիի փոխուի:

Բանուորը իր աշխատութէն գատ ուրիշ ապրանք չունի ծախելու. մէկը որպէսզի իր աշխատութէն տարբեր ապրանքներ ծախէ, բնականօրէն պէտք է արտադրամիջոցներ ունենայ, հում նիւթ, աշխատանքի գործիքներ եւայլն: Ան չի կրնար կոչիկներ պատրաստել առանց կաշիի: Ատկէ գատ, անոր հարկաւոր են կենսամիջոցներ. ան Աստուծոյ խօսքերով չի կրնար ապրիլ, ոչ ալ կրնայ ապագայի արդիւնքներով սնանիլ: Ան պէտք է սպառէ նախքան արտադրելը: Մինչեւ կաշի գտնէ, մինչեւ գործիքներ ձարէ, (ուրտեղէն պիտի գտնէ ատոնք՝ այդ տարբեր հարց նկատենք) մինչեւ կոչիկներ չիւնէ, մինչեւ վաճառէ եւ դրամ ձեռք բերէ շարաթներ ու ամիսներ են հարկաւոր մինչեւ այդ հրաշքը ամբողջանայ...:

Այսպիսով ուրեմն, դրամատէրը դրամը կապիտալ դարձնելու համար պէտք է ապրանքաշուկայի մէջ գտնէ ազատ բանուոր, ազատ՝ կրկնակ իմաստով, նախ՝ որ ան իրբեւ ազատ անձ իր աշխատութեամբ արամագրէ գործին՝ իրբեւ իր ապրանքը, եւ միւս կողմէն՝ որ ան ուրիշ ապրանքներ պէտք չէ ունենայ ծախելու, ան ըլլալու է ազատ՝ այն բոլոր առարկաներէն, որոնք անհրաժեշտ են իր աշխատութեամբ գործադրելու համար:

Բնութիւնը մէկ կողմէն չէ ստեղծեր դրամատէրեր ու ապրանքատէրեր եւ միւս կողմէն լոկ սեփական աշխատութի տէրեր: Այս յարաբերութիւնը բնագաւառական յարաբերութիւնն է, որ ընդհանուր ըլլայ պատմական բոլոր ժամանակաշրջաններու համար: Ակնհերեւ է, որ այս յարաբերութիւնը ինքը նախնիթաց պատմական զարգացման մը հետեւանք է, անտեսական բազմաթիւ յեղաշրջումներու արդիւնք, հասարակական արտադրութեան աւելի հին կազմութեանց ամբողջ շարքի մը կործանման արդիւնք:

Հիմա պէտք է աւելի մօտէն քննենք այս առանձնաշատուկ ապրանքը — աշխատութեամբ: Բոլոր միւս ապրանքներու նման ան ալ ունի արժէք մը: Այժմ բացատրենք թէ ի՞նչպէս կ'որոշուի անոր արժէքը:

Աշխատութի արժէքը, միւս բոլոր ապրանքներու ամէն մէկի արժէքի նման, կ'որոշուի այն աշխատամասնակով, որ անհրաժեշտ է այս առանձնաշատուկ բանի արտադրութեան, ուրեմն եւ վերաբրտադրութեան համար: Աշխատութեամբ կենդանի անհատի գործելու կարողութիւնն է: Հետեւաբար աշխատութի գոյութիւնը կապուած է մարդ անհատի կենդանի գոյութեան հետ: Մարդ անհատը իր գոյութիւնը պահպանելու համար կարիք ունի կենսամիջոցներու որոշ գումարի մը, ուրեմն, աշխատութի արժէքն այն կենսամիջոցներու արժէքն է, որոնք անհրաժեշտ են աշխատութի տիրոջ գոյութիւնը պահ-

պանելու համար: Սակայն աշխատութիւնն առանձին միայն տեսանելի իրականութիւն կը դառնայ, երբ կը մտնէ աշխատանքի մէջ ու այդ աշխատանքը մարդկային միանունքներու, ջիղերու, ուղեղի եւ այլ օրգաններու միջոցով որոշ արդիւնք կ'արտադրէ: Երբ աշխատութի սեփականատէրը այսօր աշխատեր է, ուրեմն վազն ալ պէտք է կարողանայ աշխատիլ նոյն դիմին վրայ՝ ուժի եւ առողջութեան նոյն պայմաններու տակ: Հետեւաբար, կենսամիջոցներու գումարը պէտք է բաւարար ըլլայ իր բնականոն Ֆիզիքական կենսավիճակը պահպանելու համար, նայած ամէն մէկ երկրի կլիմայական ու այլ առանձնայատուկ պայմաններուն, ինչպէս նաեւ իւրաքանչիւր երկրի կուլտուրայի աստիճանին:

Աշխատութի սեփականատէրը մահկանացու է: Ուստի որպէսզի անոր շուկայի վրայ երեւան գալը մշտապէս ըլլայ, առանց որուն դրամը կապիտալ չի կրնար գառնալ, աշխատութիւնը ծախողը պէտք է իր սերունդը յաւերժացնէ. այսինքն՝ ան ոչ միայն ինքզինքը պէտք է պահէ, այլեւ իր ընտանիքն ու զաւակները: Մաշուելու եւ մեռնելու հետեւանքով շուկայէն հեռացած աշխատութիւնը տէրերուն պէտք է յաջորդեն նորերը, որքան բազմաթիւ՝ նոյնքան աւելի լաւ: Այսպիսով կը տեսնենք թէ աշխատութի արտադրութեան համար անհրաժեշտ կենսամիջոցներու գումարը իր մէջ կ'առնէ բանուորներու երեխաներու, ընտանիքի անդամներու կենսամիջոցներն ալ:

Ասիկէ դատ կայ նաեւ ուրիշ կէտ մը:

Դրամատէրը ուրիշ նկատում մըն ալ ունի, անիկա կ'ուզէ մարդկային բնութիւնը փոխել. իրեն համար աւելի լաւ են իր ուզած ձեւով դաստիարակուած ու կրթուած բանուորները քան թէ կոշտ ու կոպիտ մարդիկը, անդրադէտ գործատուները, որոնք յաճախ աւելի վնաս կը պատճառեն քան թէ իր ցանկացած օգտակարութիւնը: Ուրեմն բանուորի զաւակներու դաստիարակութեան ծախսերն ալ — թէեւ շատ շնչին — կու գան մանեւ անոր արտադրութեան վրայ ծախսուած արժէքներու շրջանակին մէջ:

Կը տեսնենք թէ աշխատութի արժէքը կերպով մը ներդաշնակուած է կենսամիջոցներու որոշ գումարի մը արժէքին հետ: Հետեւաբար աշխատութի արժէքը կը փոխուի, երբ կը փոխուի կենսամիջոցներու արժէքը:

Արտադրութեան կապիտալիստական եղանակ ունեցող բոլոր երկիրներու մէջ աշխատութի վճարքը կը տրուի միմիայն պայմանադիրով սահմանուած աշխատանքի որոշ ժամանակամիջոցի լրանալէն վերջը, առհասարակ ամէն շաբաթէն վերջը: Այդ կը նշանակէ՝ բանուորը նախապէս իր աշխատութի սպասարժէքը դրամատիրոջ պիտի յանձնէ, ապա ստանայ իր աշխատավարձը. հետեւաբար բան-

ուորն է որ կապիտալիստին վարկ կու տայ. իսկ երբ կապիտալիստը սնանկանայ, բանուորն է կորսնցնողը:

Աշխատութի սպասարժէքը կարանքի ու յաւելեալ արժէքի պրոցէս է միեւնոյն ատեն: Աշխատութի սպասարժէքը, ինչպէս ամէն մէկ սպասարժէքի սպասում, կը կատարուի սպասարժէքին շրջանառութեան ոլորտէն դուրս: Այժմ թողունք այդ շրջանակը իր ազմկալի կողմերով եւ դրամատիրոջ ու աշխատութի տիրոջ հետեւելով մտնենք արտադրութեան այն թաղանթները, որոնց շէմքին վրայ գրուած է — «Մուտքը արգիլուած է բացառեալ գործի նպատակով»: Այստեղ մենք կը հասկնանք ոչ միայն այն՝ թէ կապիտալը ինչպէս կ'արտադրէ, այլեւ այն՝ թէ կապիտալը ինչպէս կ'արտադրուի: Հոն կը պարզուի շահոյթի գաղտնիքը:

ԲԱՑԱՐՉԱԿ ՅԱԻԵԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈՑԷՍԸ ՈՒ ԱՐԺԷՔԻ ՄԵՏԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Աշխատութի տէրը իր աշխատանքը սպասարժէքներու մէջ ներկայացնելու համար պէտք է ամենէն առաջ այդ աշխատանքը զնէ ըսպատման արժէքներու մէջ, այնպիսի իրերու մէջ, որոնք մարդկային պահանջներու բաւարարման կը ծառայեն որեւէ ձեւով: Հետեւաբար կապիտալիստը բանուորը կը հարկադրէ պատրաստելու որեւէ առանձնայատուկ սպասարժէք, որեւէ որոշուած բան: Սպասման արժէքներու կամ բարիքներու արտադրութիւնը չի փոխեր արտադրութեան ընդհանրական բնոյթը անով, որ այս արտադրութիւնը կը կատարուի կապիտալիստին համար եւ անոր հսկողութեան տակ: Այս պատճառով աշխատանքի պրոցէսը պէտք է քննել անոր հասարակական ձեւէն բոլորովին անկախ կերպով:

Աշխատանքն ամենէն առաջ պրոցէս մըն է մարդուն ու բնութեան միջեւ, այնպիսի պրոցէս մը, ուր մարդը իր սեփական գործունէութեամբ բնութեան հետ իր նիւթափոխութեան աշխատանքը կը կատարէ, զայն կը կարգաւորէ, եւ կամ անոր վրայ կը հսկէ: Բնութեան մատակարարած նիւթին դիմաց ան հանդէս կու գայ իրրեւ բնական ուժ մը: Իր մարմինին պատկանող բնական ուժերը, բազուկներն ու ոտքերը, գլուխն ու ձեռքը ան շարժման մէջ կը զնէ, որպէսզի բնական նիւթին իր սեփական կեանքի համար պիտանի ձեւ տայ եւ զայն իւրացնէ: Այն ատեն, երբ մարդը իր այս շարժման միջոցով կը ներդրածէ իրմէ դուրս գոյութիւն ունեցող բնութեան վրայ եւ կը փոխէ զայն, ան միեւնոյն ատեն կը փոխի իր բնութիւնը: Անիկա կը զարգացնէ իր մէջ ներհող կարողութիւնները եւ իր ուժերու արդիւնքը կ'ենթարկէ իր սեփական իշխանութեանը: Մենք այստեղ

պիտի շքնենք աշխատանքի՝ կենդանիներու նման կատարած անդրա-
նիկ բնագրական ձևերը, որոնք կը պատկանին նախապատմական
շրջանին: Մենք կ'ենթադրենք, որ աշխատանքը կը կատարուի այն-
պիսի ձևով մը որպիսի ձևով ան բացառապէս՝ ձեռող, շափող,
գատող ու կշռող մարդուն է յատուկ: Մեզուն իր մեղքամոմի բջիջ-
ներու կառուցուածքով կրնայ զարմացնել շարք մը ճարտարապետ-
ներ, բայց ամենազէջ ճարտարապետը ամենայաւ մեղուէն կը տար-
բերի այն հանգամանքով, որ ճարտարապետը բջիջը իր գլխուն մէջ
կը շինէ, նախքան մեղքամոմէն շինելը: Աշխատանքը վերջացած ա-
տեն առջ կու գայ արդիւնք մը, որուն պատկերն արդէն կար ճար-
տարապետի միտքին մէջ: Անիկա բնութեան տուած իրը չէ, զոր կը
փոխէ ու կը ձևափոխէ սոսկ, ան բնական առարկային մէջ միեւնոյն
ատեն իր նպատակը կ'իրականացնէ, այն նպատակը՝ որ անոր զործի
տեսակն ու եղանակը կ'որոշէ եւ որուն ան պէտք է ենթարկէ իր
կամքը, իր նպատակայարմար կամքը լարուած ուշադրութեան հետ,
հոյ չէ թէ այդ աշխատանքը իր սեփական մարմնական եւ հոգեկան
ուժերու խաղը չէ եւ ինք ատկէ առանձնապէս քիչ կը հրապուրուի:

Աշխատանքի պրոցէսի մասերն են՝ նպատակայարմար գործու-
նէութիւնը կամ ճիշդ ինքը՝ աշխատանքը, աշխատանքի առարկան եւ
անոր միջոցները:

Հողը (տնտեսագիտական տեսակէտէն ջուրն ալ պէտք է հաշ-
ուել) որ սկզբնապէս մարդոց կը մատակարարէ պաշար, պատրաստի
կենսամիջոցներ, գոյութիւն ունի իրրեւ մարդկային աշխատանքի
բնդհանրական առարկայ: Այն բոլոր իրերը, զորս աշխատանքը մի-
միայն կը պոկէ հողի հետ ունեցած իրենց անմիջական բնդհանուր
կապէն, բնութենէն տրուած աշխատանքի առարկաներ են: Այսպէս,
օրինակ, ձուկը, զոր ջրէն կ'անջատեն, փայտը, զոր կը կտրեն նախ-
նագարեան անտառէն, հանքային նիւթը, զոր կը հանեն մարդիկ հան-
քերէն, ասոնք աշխատանքի առարկաներ են: Մէջտեղ բերուած հան-
քանիւթը, որ մաքրուած է, հում նիւթ կը կոչուի: Ամէն մէկ հում
նիւթ աշխատանքի առարկայ է. բայց աշխատանքի ամէն մէկ առար-
կայ հում նիւթ չէ: Աշխատանքի առարկան միայն այն ատեն հում
նիւթ կը հաշուենք, երբ ան աշխատանքի միջոցով արդէն միջնոր-
դական փոփոխութիւն կրած է:

Աշխատանքի միջոցը իր մըն է կամ այնպիսի իրերու բաղկա-
ցութիւն մը, զոր աշխատողը կը մտցնէ իր ու իր աշխատանքի առար-
կայի միջեւ եւ անոնք կը ծառայեն իրրեւ այնպիսի հաղորդիչներ, ո-
րոնք աշխատողի գործունէութիւնը կը միացնեն աշխատանքի առար-
կային: Աշխատողը կ'օգտուի իրերու մեքենական, Փիլիքական, քի-
միական յատկութիւններէն:

Հողը ինչպէս որ աշխատողի պաշարի սկզբնական մասանն է,
այնպէս ալ անոր աշխատանքի միջոցներու սկզբնական զինարանն է:
Անիկա աշխատողին կու տայ, օրինակ, քարը, զոր ան կը կտորէ կամ
կը գործածէ իր նպատակին համար: Հողը ինքը աշխատանքի միջոց
է, սակայն հողամշակութեան մէջ իրրեւ աշխատանքի միջոց ծառա-
յելու համար ան պէտք ունի ուրիշ աշխատանքի միջոցներու ամբող-
ջական շարքի մը եւ աշխատուժի համեմատաբար բարձր զարգացու-
մի մը: Աշխատուժի պրոցէսը երբ քիչ մը կը զարգանայ, անմիջա-
պէս աշխատաւորը կարիք կը զգայ մշակուած աշխատանքի միջոցնե-
րու: Հնադարեան մարդու քարանձաւներուն մէջ կը գտնենք քարէ
դործիքներ եւ դէնքեր: Մարդկութեան պատմութեան սկիզբէն մենք
կը տեսնենք, որ մարդը ոչ միայն քարը, փայտը, ոսկորները, խե-
ցիկները գործածեր է իրրեւ աշխատանքի միջոցներ, այլեւ բնտե-
լացուցեր է կենդանիները եւ գանոնք գործածեր է իր պէտքերու գո-
հացման աշխատանքին:

Ինչպիսի կարեւորութիւն որ ունի ոսկրեայ մնացորդներու
կառուցուածքը կենդանիներու շրջան տեսակներու կազմածքը ու-
սումնասիրելու համար, նոյնպիսի կարեւորութիւն ունին աշխատան-
քի միջոցներու մնացորդները հասարակական, տնտեսական շրջան
կազմերը քննելու համար: Տնտեսական դարաշրջաններն իրարմէ կը
տարբերին ոչ թէ իրենց արտադրութեան տեսակներով, այլ ար-
տադրութեան միջոցներու տեսակներով, աշխատանքի միջոցներու
տեսակներով: Աշխատանքի միջոցները ոչ միայն մարդկային աշխա-
տուժի զարգացման աստիճանացոյցերն են, այլեւ հասարակական
այն յարաբերութեան ցուցանիշները, որոնց մէջ աշխատանք է գրը-
ուած:

Այսպէս ուրեմն, աշխատանքի պրոցէսին մէջ մարդոց գործու-
նէութիւնը աշխատանքի միջոցներու օգնութեամբ առաջ կը բերէ
աշխատանքի առարկայի նախապէս նպատակադրուած փոփոխութիւն
մը: Պրոցէսի հետքը ջնջուած է արդիւնքի մէջ. աշխատանքը նիւթա-
կանացի եւ եղեր է սպառման արժէք: Բանուորը մաներ է եւ ար-
դիւնքը՝ կտաւն է:

Վերագառնանք այժմ մեր կապիտալիստին մօտ: Մենք գայն
թողուցինք հոն, երբ ան սպրանքաշուկային մէջ գնած էր աշխա-
տանքի պրոցէսի համար անհրաժեշտ բոլոր գործօնները, անհատա-
կան գործօնը կամ աշխատուժը: Ան գործի հմուտ մարդու խորամանկ
հայեացքով բնտրեր, վերջացուցեր էր իր առանձին ձեռնարկութեան
համար — մանարանի, կոշիկի գործարանի եւ այլն — պահանջուող
արտադրամիջոցներն ու աշխատուժերը: Մեր կապիտալիստն այժմ՝
սկսած է իր գնած կարեւոր սպրանքը՝ աշխատուժը սպառել տալու

գործին, այսինքն՝ ան կը հարկադրէ, որ աշխատութի տէրը՝ բանուորը, իր աշխատանքի միջոցով սպառէ արտադրամիջոցները:

Աշխատանքի պրոցէսը, ինչպէս որ տեղի կ'ունենայ իրրեւ կապիտալիստի կողմից աշխատութի սպառելու պրոցէս, երկու առանձնաբաժանուկ երեւոյթ կը ներկայացնէ:

Առաջին՝ բանուորը կ'աշխատի կապիտալիստի հսկողութեան տակ, որուն կը պատկանի բանուորին աշխատանքը: Կապիտալիստը աշաւորջ կը հսկէ որպէսզի աշխատանքը կատարուի կանոնադրապէս եւ արտադրամիջոցները նպատակաբարձար ձևով գործադրուին որպէսզի ոչ մէկ հում նիւթ չփճանայ եւ աշխատանքի գործիքը խրնայուի, այսինքն մաշուի այն չափով, որչափով որ աշխատանքի մէջ անոր գործադրումը կը պահանջէ:

Երկրորդ՝ աշխատանքի արդիւնքը կապիտալիստի սեփականութիւնն է, ոչ թէ արտադրողինը՝ բանուորինը: Կապիտալիստը կը վճարէ, օրինակ, աշխատութի օրական արժէքը, ինչպէս որ մէկ օրուան համար ձի մը կը վարձէ եւ այդ ձին այդ օրը իրեն կը պատկանի: Ապրանքի սպառումը կը պատկանի ապրանքը գնողին եւ աշխատութի տէրը երբ կ'աշխատի իր ծախած սպառարժէքն է, գոր կուտայ կապիտալիստին: Այն վայրկեանին, երբ բանուորը գործարան կը մտնէ, իրեն ուժի սպառարժէքը, ուրեմն անոր գործադրումը, աշխատանքը կապիտալիստի սեփականութիւնը կը զտնան: Կապիտալիստը աշխատութի գնելով է, որ աշխատանքը՝ իրրեւ կենդանի մակարդ՝ կը միացնէ արդիւնք գոյացնող մեռելալ տարրերու, որոնք նոյնպէս իրեն կը պատկանին: Այսպէս կը տեսնենք, որ աշխատանքի պրոցէսի արդիւնքը ամբողջովին կը պատկանի կապիտալիստին, ճիշդ այնպէս՝ ինչպէս անոր գինի մատանին մէջ կատարուող խմորման պրոցէսի արդիւնքը:

ԱՐԺԷՔԻ ՈՒՌՃԱՅՄԱՆ ՊՐՈՅԷՍԸ

Արդիւնքը — կապիտալիստի սեփականութիւնը — սպառողական արժէք է. կտու, ասուի, կօշիկներ, ասոնք սպառման արժէքներ են: Մեր կապիտալիստը թէեւ յառաջդիմական մարդ է, բայց ան չարտադրեր, օրինակ բսնք կօշիկներ՝ կօշիկներ արտադրելու սիրոյն, կամ՝ մարդոց ստերը պաշտպանելու սիրոյն: Սպառման արժէքներն ընդհանրապէս կ'արտադրուին որպէս փոխանակային արժէքներու նիւթական մարմնացումներ: Կապիտալիստը կը մտածէ երկու բան. ան կ'ուզէ այնպիսի սպառարժէք մը արտադրել, որ փոխանակային արժէք ունենայ. ան կ'ուզէ արտադրել վաճառուելու համար որոշուած բան մը, ապրանք մը: Երկրորդ՝ ան կ'ուզէ այն-

պիսի ապրանք արտադրել, որուն արժէքն աւելի ըլլայ, քան անոր արտադրութեան համար պահանջուած ապրանքներու, արտադրամիջոցներու ու աշխատութի արժեզուումը, որոնց համար ան ապրանքային շուկային մէջ իր հրաշագործ դրամը կանխաւ վճարեր է: Ան կ'ուզէ ոչ միայն սպառարժէք արտադրել, այլևս ապրանք, ոչ միայն ապրանք արտադրել, այլևս արժէք. ոչ թէ միայն ստակական արժէք, այլ նաև յաւելեալ արժէք:

Որովհետեւ այստեղ խօսքը ապրանքարտադրութեան մասին է, ապա ահնեքն է, որ մինչև հիմա մենք քննած ենք պրոցէսի մէկ կողմը միայն: Ինչպէս որ ապրանքը ինքը սպառման արժէքի ու արժէքի միասնութիւնն է, անոր արտադրութեան պրոցէսն ալ պէտք է աշխատանքի պրոցէսի ու արժէք ստեղծելու պրոցէսի միասնութիւն ըլլայ:

Հիմա քննենք արտադրութեան պրոցէսը իրրեւ արժէքի րստեղծման պրոցէս, յետոյ կը հասնինք յաւելեալ արժէքին:

Մենք գիտենք, որ ամէն մէկ ապրանքի արժէքը կ'որոշուի անոր սպառման արժէքի մէջ նիւթականացած աշխատանքի քանակով, անոր արտադրութեան համար հանրօրէն անհրաժեշտ աշխատաժամանակով: Ասիկա կը վերաբերի նաև այն արդիւնքին, զոր մեր կապիտալիստը կը ստանայ իրրեւ աշխատանքի պրոցէսի հետեւանք: Հետեւաբար ամենէն առաջ պէտք է այս արդիւնքի մէջ նիւթականացած աշխատանքը հաշուել:

Ըսենք թէ մեր պարոն կապիտալիստը կօշիկի գործարանի տէր է եւ կօշիկներ կ'արտադրէ բարեխիղճ հողատարութեամբ:

Մեր կապիտալիստը, ինչպէս իր անձն ու հարստութիւնը գո վարանող շատ բանաստեղծներ ու հրապարակագիրներ, այնպէս ալ իր մանրակրկիտ հաշիւները տեսնող լաւ հաշուադէպներ ունի: Իր կոնակին կեցող պետութեան հովանաւորութեան տակ գանուած դպրոցները պարսպ տեղը բացուած չեն. կապիտալիստական պետութիւնը դուր տեղը անոնց վրայ ծախս չ'ընէր:

Այժմ մեր բարեսիրտ կապիտալիստի արտօնութեամբ վերցընենք անոր հաշուետւումը եւ քննենք դայն:

Հաշուադէտը մանրամասնօրէն հաշուեր է կապիտալիստի վըճարած բոլոր դրամները, ամէն մէկ յարակից ճիւղի վրայ. անիկա գիտէ թէ միջին հաշուով անոր շէնքը որքան ատեն իրրեւ գործարան կրնայ ծառայել. անիկա հաշուեր է մեքենաներու գործածելիութեան տեսողութեան ժամանակը, անոնց գնման ու գործածութեան ատենուան ծախսերը. անիկա հաշուեր է կօշիկներու կազապարներու ծախսերը, հաշուեր է հում նիւթերը, անոնցմէ պահելիք մասերը, հաշուեր է աշխատանքի գործիքները, անոնց գործածելիութեան միջին

ժամանակամիջոցը, որոնք որոշ համեմատութեամբ՝ որպէս սպանարժէքներ կը մտնեն ապրանքային փոխանակային արժէքի մէջ. մեր հաշուազէտը հաշուած է նաեւ աշխատուծի, գրասենեակի պաշտօնեաներու ծախսերը, պետութեան վճարած շահատուրքը, սպառնալուծական ընկերութեանց վճարումները, շնախատեսուած դումար մըն ալ բարդեր է անոնց վրայ եւ տարեկան ամբողջ ծախսը նշանակեր է ելքի բաժնին մէջ՝ այսպէս ըսենք՝ 104,000 տոլար. իսկ ատով արտադրուելը է 26,000 գոյղ կօշիկ. իսկ տարեկան 26,000 գոյղ կօշիկի արտադրութեան պրոցէսին մէջ գործեր են 50 բանուորներ (ասոնց կարգին գրասենեակի ճեմակ շապիկաւոր եւ լաւ զարգարուած աղջիկները չենք հաշուել)։ Մեր կապիտալիստին տարեկան 104,000 տոլար ծախսը 52ով բաժնելով կ'ունենանք շարաթական 2000 տոլար ծախս։

Այժմ անցնինք մուտքի բաժնին. գործարանատէրը կօշիկները չէ արտադրելը դիզելու համար, այլ ծախելու համար եւ ան բոլորը ծախել է, բոլորն ալ սպառման շուկայէն եկած ի հրամանի ապսպրանքներ են։ Մուտքի բաժնին մէջ արձանագրուած կը տեսնենք 156,000 տոլար։ Այս դումարը բաժնելով 52-ով, կ'ունենանք 3000 տոլար շարաթական ներառեալ դումար՝ եկամուտ։ Ուրիշ խօսքով երկու հազար տոլարը մեր կապիտալիստի գրպանէն ելեր եւ գոցեր է չէնքին տարեկան բաժին ինկած հնացման ծախսը, մեքենաներու մաշուելու ծախսը, անիկա իւրով օծուել է, գրասենեակի գործաւորներուն շարաթական տուել է, կառավարութեան բաժին հանել է, սպառնալուծական ընկերութեանց վճարում ըրեր է, Կարմիր Սաչին տուել է, Փրկութեան Բանակին տուած է, կօշիկի կապարներուն քուել է, բանուորներուն կանոնաւորապէս վճարում ըրեր է, անոնց գրպանը լեցուցեր է առատաձեռնութեամբ՝ որպէսզի անոնք ուտեն, հաղուին, իրենց տան եւ ընտանիքի ծախսերը հոգան, եւ այս բոլորը ընելէն վերջ՝ վերադարձեր է կապիտալիստի սնտուկը՝ ոչ թէ պակասած քանակով՝ այլ աւելցած քանակով. երկու հազար տոլարն եղած է 3000 տոլար շարաթական։ Այդ կը նշանակէ 2 հազար տոլարը շնչաւոր կենդանիի փոխուել է եւ մէկ շարթուան մէջ 3 հազար տոլար վերադարձուցեր է Խորոջը. ո՞ւրիշ աւելցեր է այդ հազար տոլարը։

Մեզ հետաքրքրող հարցն այս է։

Եթէ մենք այս հարցումը հարցնենք մեր բարեսիրտ կապիտալիստին, անիկա որպէս զգայուն ու սարկեշտ մարդ՝ իրաւունք ունի բարկանալու եւ իրաւունք ունի մեզ դատի քաշելու, երբ մենք խարդախութեան կամ գողութեան կասկածը կը կապենք իր գործին, որովհետեւ ան ոչ ոքի իրաւունքը չէ իւրացուցեր — ըստ իր տոմարին — իր գնած բոլոր ապրանքներուն վճարել է. նոյնիսկ իր պար-

տականութենէն դուրս առատաձեռնօրէն նուէրներ տուած է եկեղեցիներուն, հիւանդանոցներուն, բարեսիրական ընկերութեանց. ո՞չ մէկ մարդ, ո՞չ մէկ ընկերութիւն իրմէ որեւէ պահանջ ունի. ան վճարած է բոլորին ծառայութիւնները, ինչ որ հասարակականօրէն անոնց ընդունուած արժէքն է։

Մեր պարոն կապիտալիստը, որ դուհիկ քաղաքա-տնտեսագիտութենէն բան մը կը հասկնայ վերջապէս, որովհետեւ ինքն ալ երկտասարդ ժամանակին զպրոց է դացեր, շատ բաներ է սորվեր, թերեւս մեզի կ'ըսէ. — «Հէ՛յ, պարոննե՛ր, ի՞նչ հաշիւ կ'ընէք, ի՞նչ զլուխ կը ցուցնէք... Երբ ես տարեկան 104,000 տոլար իմ սեփական գրամս շրջաբերութեան մէջ կը գնեմ, անշուշտ իրաւունք ունիմ շահոյթ ակնկալելու։ Ձեզմէ ո՞վ այդպիսի յանդգնութիւն կը փորձէ։ Բանուորներուն առատ կը վճարեմ, անոնց ընտանիքները կ'ապրեցնեմ, գրասենեակի գործաւորներուն կը վճարեմ, անոնց ընտանիքները կ'ապրեցնեմ, չէնքի ծախս ունիմ, մեքենաներու ծախս ունիմ, ելեքտրական, սպառնալուծական եւ զանազան բազմապիսի ընկերութեանց վճարումներ կ'ընեմ, հոս կը վազեմ, հոն կը վազեմ, կաշի կը գնեմ, բոլորին ալ կանխիկ կը վճարեմ. ատկէ զատ միտքս, հոգիս, ժամանակս գրած եմ գործի մէջ. եթէ բանուորը ութը ժամ կ'աշխատի ես ժամացոյցին չեմ նայիր, ես 16 ժամ կ'աշխատիմ։ Ի՞նչ կ'ուզէք, որ ընեմ։ Ես կրնամ գործարանս զոցել եւ ապրանք գնել ծախելով աւելի դրամ շինել։ Տեսէ՛ք սա դրամատէրը, որ ձեռքը բանի չի գարներ. դրամ փոխ կու տայ հարիւրին տասը տոկոսով. այդ կը նշանակէ՝ եթէ իմ գրամս 104,000 տոլարը տոկոսով փոխ տայի կը ստանայի 10,400 տոլար. հիմա ի՞նչ կը ստանամ. — ոչինչ, միայն 12,000 տոլար տարին. տարբերութիւնը 1,600 տոլար կ'ընէ։ Մի՞թէ իմ աշխատանքը այդքան դումար շարժե՞ր. եթէ ես իմ գործարանի բանուորին տարեկան գրեթէ 1500 տոլար կը վճարեմ, գիտնալով որ անոր նայուածքը շարունակ ժամացոյցին վրայ է, եւ օրական ութը ժամէն աւելի չ'աշխատիր»։

Հիմա հետեւինք մեր բարեմիտ կապիտալիստի ըսածներուն եւ քննենք թէ որքան արդարացի հիմք ունի անոր սրտնեղութիւնը։

Նախ վեր առնենք անոր սպառնալիքը. դուցէ ան իր բարկութենէն գործարանը կը զոցէ ու ապրանքի առուծախով կը զբաղի, կամ վաշխատութեամբ կը պարապի...

Այո՛, դուցէ... դուցէ այդ սպառնալիքը իրագործէ...

Բայց եթէ կապիտալիստի բոլոր աղբարիկները նոյնը ընեն, եթէ բանուորները ապրանք շարտադրեն, ո՞ւր եւ ի՞նչպէս ապրանք կարելի է գտնել եւ գնել՝ վաճառելու համար. կամ՝ եթէ աշխատանքի շահագործման հող չըլլայ, դրամի սոսկական շրջաբերու-

թիւնը ինչպէս տոկոս կրնայ բերել. մէկ տոլարը Հարիւր մարդոց ձեռքէն անցնի, դարձեալ մէկ տոլար կը մնայ, եթէ ան չգնէ սպառման արժէք մը, որ փոխանակային արժէքի վերածուելով իրեն ապահովէ որոշ շահո՞յթ:

Անցնինք այժմ վերլուծել մեր պարոնին կապիտալը:

Պարոնին կապիտալը երկու բաժանմունքով կը ներկայանայ մեզի. մին կը կոչուի Հաստատուն կապիտալ, միւսը կը կոչուի փոփոխելի կապիտալ:

Հաստատուն կապիտալը կապիտալի այն մասն է, որ կը գործածուի արտադրամիջոցներուն, այսինքն՝ հում նիւթի, օժանդակ նիւթերու, արտադրութեան յատկացուած մեքենաներու, գործիքներու եւայլի մասը: Ասոնց արժէքային մեծութիւնը չի փոխուիր արտադրութեան պրոցէսին մէջ, բայց անոնց արժէքը համեմատական չափով կը մտնէ արտադրուած արդիւնքի փոխանակային արժէքին մէջ: Օրինակ, կօշիկի մեքենայ մը, որ կ'արժէ 500 տոլար եւ անոր գործածելիութեան ժամանակը միջին հաշուով վեր առնուած է 20 տարի, գործարանատիրոջ վարձած հաշուակալը շատ դիւրութեամբ թուղթի վրայ կրնայ ներկայացնել, թէ այդ մեքենայի մէկ աշխատօրուայ արժէքը 81 սէնթ է, որ բարդուելու է մէկ օրուայ ընթացքին արտադրուած կօշիկներու փոխանակային արժէքին վրայ: Այսպէս են նաեւ հաստատուն կապիտալի միւս մասերը:

Կապիտալի այն մասը, որ կը մտնէ աշխատուժի, արտադրողութեան պրոցէսին մէջ, ընդհակառակը, կը փոխէ իր արժէքը: Ան կը վերարտադրէ իր սեփական համարժէքը ու զինքը գերազանցող յաւելոյթ մը, այսինքն այն՝ որ կը կոչուի յաւելեալ արժէք, որ իր կարգին՝ կրնայ ծառայել աւելի մեծ արժէք առաջացնելու գործին: Կապիտալի այս մասը՝ աշխատուժը, իր որոշ մեծութենէն կը փոխուի եւ կը դառնայ փոփոխելի մեծութիւն: Այդ պատճառով ես այդ մասը կը կոչեմ փոփոխելի կապիտալ:

Կապիտալի միւս մասը բաղկացուցիչ մասերը, որոնք աշխատանքի պրոցէսին մէջ կը տարբերին, մեզի կը ներկայանան. հաստատուն կապիտալը՝ որպէս առարկայական գործօն, իսկ փոփոխուն կապիտալը՝ որպէս ենթակայական գործօն:

Այժմ նորէն առնենք մեր քիչ առաջուան վեր առած կօշիկի գործարանը, ուր մեր կապիտալիստը 50 բանուորներով տարեկան 26,000 զոյգ կօշիկ արտադրած է, 104,000 տոլար ծախսով եւ ապա այդ կօշիկները ծախելով ստացեր է 156,000 տոլար:

Մենք արդէն ծախսի ամբողջ գումարը 52-ով բաժնելով դասնք շարաթական ծախսը, որ է 2000 տոլար, իսկ կօշիկներու վաճառումէն ստացուած ամբողջ գումարը նոյնպէս 52-ով բաժնելով ստա-

ցանք 3000 տոլար. այդ կը նշանակէ շարաթական 1000 տոլար շահոյթ: Ուրիշ՞ եկաւ այդ աւելի դրամը. այս հարցումը ըրինք ու պատասխանը չի տուինք. այժմ պատասխանենք:

Մենք տեսնք, որ մեր պարոնին կապիտալը երկու որոշ կողմեր կը ներկայացնէ. հաստատուն կապիտալ եւ փոփոխուն կապիտալ. առաջինին տեղը դնենք ՀՎ իսկ երկրորդին տեղը դնենք ՓՎ եւ կազմենք համեմատական եղբեր, հիմք բռնելով շարաթական ծախսը եւ շարաթական շահը:

ՀՎ առաւել ՓՎ հաւասար է 2000 տոլար. ստիկա ծախսի հաշիւն է:

Գործարանատիրոջ տոմարին մէջէն կը դատենք արտադրողական աշխատանքի լծուած 50 բանուորներու շարաթական վճարուած գումարը, որ է 1200 տոլար, որով ՀՎ-ի բաժինը կը մնայ 800 տոլար: Հիմա անցնինք մուտքի բաժնին.

ՀՎ առաւել ՓՎ հաւասար է 3000 տոլար:

Մենք դիտենք, որ ՀՎ-ի (հում նիւթ, մեքենայ եւ անոր յարակից մասերու ամբողջութիւնը) համար ծախսուած դրամը, որ էր 800 տոլար, կօշիկները ծախուելու ընթացքին չի կրնար բարձրանալ, հաստատուն կապիտալի արժէքը որոշ համեմատութեամբ մտեր է 500 զորդ կօշիկներու մէջ, (եթէ տարեկան 26000 զոյգ կօշիկ հաշուեցինք, շարաթական արտադրութիւնը կ'ընէ 500 զոյգ) բայց անոր արժէքը չէ բարձրացեր, չի կրնար բարձրանալ. կօշիկի մեքենային երբ 500 վճարուած է, կօշիկի վաճառումէն վերջ մեքենայի արժէքը չի բարձրանար. կապիտալիստը կաշի գնած ատեն եթէ մէկ փառւստի մէկ տոլար վճարած է, կօշիկը ծախելէն վերջ անիկա կաշիգործարանի տէրը չի փնտտեր անոր աւելի դրամ վճարելու համար, եւ այս վերջինն արդէն իրաւունք չունի աւելի պահանջելու, եթէ կօշիկի արտադրութեան գործին մէջ բաժնեկից չէ: Ուրեմն, եթէ 800 տոլարը հանենք 3000 տոլարէն, այսինքն՝ վաճառումով ստացուած գումարէն, կը մնայ 2200 տոլար: Մեր բարեսիրտ կապիտալիստը 50 բանուորներու վճարած է 1,200 տոլար իսկ կօշիկները ծախելէն վերջ ստացեր է 2,200 տոլար: Հանելուկն ինքնին կը լուծուի հոս. այս երկու գումարներու միջեւ եղած տարբերութիւնը, որ է 1000 տոլար, հրաշքով կաղմուած չէ. այդ փոփոխելի կապիտալի առաջացուցած տարբերութիւնն է, այսինքն՝ բանուորներու աշխատուժի այն սպառարժէքի մասն է, որ թէեւ մտած է կօշիկի արտադրութեան պրոցէսին մէջ բայց այդ ուժի գործածութեան շրջանին՝ աշխատանքի նիւթականացման աշխատաժամանակին համար վճարուած չէ. վճարումն եղած է մէկ մասին համար, ոչ թէ ամբողջին համար: Բանուորը եթէ շարաթը 40 ժամ աշխատած է, կապիտալիստը անոր կենսամիջոց-

ները հոգալու համար տուած է միմիայն 25 ժամուան աշխատութի սպառման արժէքի վճարագինը. մնացեալ 15 ժամուան ընթացքին բանուորը իր աշխատութի սպառման արժէքը դրած է կօշիկներուն մէջ եւ անոնց համար վճարում ստացած չէ: Մեր ազատամիտ կապիտալիստը այսպիսով, երբ ամէն շաբաթ, ամէն մէկ բանուորէն 15 ժամուայ աշխատութ օրպէս սպառման արժէք աննկատելիօրէն անվճար՝ դնել կու տայ արտադրուած կօշիկներուն մէջ, ահա այդ օրինականացած յափշտակութիւնն է, որ կը ստեղծէ յաւելեալ արժէք. այո՛, ատով է միայն որ շաբաթական 1000 տուար, տարեկան 52,000 տուար կը բարդուի իր գանձին վրայ եւ ատով ճամբայ կը բացուի աւելի խոշոր ուսուցման, որ եթէ մրցումի ընթացքին եւ կամ կապիտալիստական անխնայական արտադրութեան ձեւին կապուած անակնկալ հանդամանքներու բերումով ջախջախիչ հարուած չստանայ իր գլխուն, ան կը գրաւէ ազգային շուկան ու կ'արշաւէ միջազգային շուկաներ:

Բայց մենք զեռ չպատասխանեցինք մեր սրբօղած կապիտալիստի խղճի մօտիկ այն յայտարարութեան, որ ինքն ալ կ'աշխատի շաբաշաբ, կ'աշխատի մտքով, հոգիով, կ'աշխատի օրական փոխանակ 8 ժամուան 16 ժամ:

Այո՛, շիտակ է որ ան կ'աշխատի. միայն թէ մենք պէտք է անոր աշխատանքի օրակը գատորոշենք:

Ի՞նչ է անոր աշխատանքը: Անիկա իր վճարած դրամները կը հաշուէ, մուտքի ճամբով ստացած դրամները կը հաշուէ, կը բազդատէ, կը վերլուծէ, աջալուրջ կը հսկէ որ աւելորդ մսխումներ չըլլան, բանուորը իր ժամանակէն գողութիւն չընէ, հոս կը վազէ, հոն կը վազէ, աժան կաշի գնել կ'ուզէ, թերթերը կը կարդայ, ապրսպրանքները կ'արձանագրէ, նոր ապսպրանքներու ճամբայ կը բանայ. ահա այս ու ստոնց նման են իր կատարած աշխատանքները: Որ այդ աշխատանքները կօշիկի արտադրութեան պրոցէսին հետ կապուած չեն, այդ յայտնի է:

Բացատրենք եղածը:

Գործարանին մէջ կօշիկի արտադրութիւնը աշխատանքի բաժանման հիմունքին վրայ է դրուած: Ենթադրենք, որ 15 տեսակ իրարմէ տարբեր եւ սակայն զիբար լրացնող գործողութիւններէ կ'անցնի կօշիկը՝ մինչեւ կ'ամբողջանայ եւ պատրաստ կ'ըլլայ դուրս դրկուելու: Եթէ այդ 15 գործողութիւններու շղթայի մէկ օղակը պակասի, կօշիկը փոխանակային — վաճառելի — լրիւ արժէքէն որոշ մաս մը կը կորսնցնէ եւ ոչ ոք այդ կօշիկը կը գնէ: Այն՝ ինչ որ արտադրողական անիրաժեշտ եւ օգտակար աշխատանք կը կոչենք բանուորի այն աշխատութն է, որ օրպէս սպառման արժէք՝ աշխատանքի

միջոցով կը միանայ բնանիւթին՝ կաշիին հետ եւ դայն կը վերածէ փոխանակային արժէքի, ուրիշ խօսքով՝ վաճառելի ապրանքի: Այժմ հարց տանք, արդեօք մեր գործարանատիրոջ կատարած աշխատանքը վերեւ նշուած 15 տեսակ գործողութիւններէն ոեւէ մէկ օղակը կը կազմէ՞, ուրիշ խօսքով՝ առանց անոր աշխատանքին կօշիկներու արտադրութեան շղթան կը կտրուի՞, կօշիկները կօշիկ ըլլալէ կը դադրի՞ն:

Երբե՛ք: Մեր պարոն կապիտալիստը իր դրամներու հաշիւին համար մտածէ կամ ո՛չ, երբ անիկա իր ունեցած ապսպրանքները լեցնել կ'ուզէ (եւ արդէն իր իսկ շահուն համար կօշիկները պիտի արտադրէ իր յաճախորդ-դնորդները չփախցնելու համար) երբ գործաւորները կ'աշխատին (եւ չեն կրնար չ'աշխատիլ երբ ինք անոնց աշխատութը որոշ ժամանակի գործածութեան համար սակարկած է գնել, հոգ չէ թէ վճարումը մէկ շաբաթ վերջը պիտի բնէ) այդ կօշիկները պիտի արտադրուին. ինք մաս ու բաժին չունի կօշիկներու այդ արտադրութեան մէջ, հոգ չէ թէ իր երեւակայական իրաւունքներու շուրջ ունայն բարբաջանքներով հրապարակն աղմկեն քաղաքատնտեսութեան այն փրոֆէսորները, որոնք իրենց «պատուաւոր» գործին համար մասնաւոր վճարք կը ստանան: Կօշիկները արտադրողներն են իրենց աշխատութը կաշիին մէջ դնելով կաշին կօշիկի փոխակերպող աշխատաւորները, ոչ թէ կապիտալիստը՝ ինքը. կապիտալիստի քրտինքը երբեք խառնուած չէ բանուորներու քրտինքին հետ:

Հիմա անենք մեր գործարանատիրոջ ուրիշ մէկ նկատողութիւնը, այն՝ որ բանուորները օրական ութը կամ 10 ժամ կ'աշխատին եղեր:

Այստեղ նոյնպէս ճշդում մը ընել հարկաւոր է:

Մենք վերակրկնելու պէտք չունինք այն փաստուած իրողութիւնը, որ կապիտալիստը բանուորի աշխատածամանակի միայն կէսըն է, որ կը վճարէ անոր կենսամիջոցներու հայթայթման համար, իսկ միւս կէսը կը գողնայ իր յաւելեալ արժէքը ապահովելու համար. կարեւորը մէկ այլ հետաքրքիր իրողութիւն է, զոր պէտք է լոյս աշխարհ բերել: Եթէ բանուորը օրական 8 կամ 10 ժամուայ իր աշխատութը աշխատանքի պրոցէսի համար վաճառեր է կապիտալիստին, այդ չի նշանակեր թէ ինք միմիայն 8 կամ 10 ժամուան համար տրամադրուած է անոր: Մենք պէտք է գիտնանք, որ աշխատութի արժէքը ու աշխատանքի պրոցէսին մէջ անոր օգտագործումը երկու տարբեր բաներ են: Կապիտալիստն այս արժէքային տարբերութիւնն աչքի առաջ ունէր, երբ կը գնէր աշխատութը: Աշխատանքի օգտակար յատկութիւնը, որով կօշիկները կամ ուրիշ ապրանք կը պատ-

բաստուի, անհրաժեշտ պայման է միայն, որովհետեւ աշխատանքը օգտակար ձեւով պէտք է կատարուի, որպէսզի արժէք ստեղծէ: Արդ, ենթադրենք թէ բանուորը մեր կապիտալիստին համար 8 կամ 10 ժամերու ընթացքին իր անհրաժեշտ աշխատութիւնը սպառելէն վերջ, երթայ մէկ ուրիշ տեղ եւ 10 ժամ ալ հոն գործէ եւ միւս օրը սովորական ժամուն՝ վերադառնայ իր գործի գլուխը: Առաջին օրը թերեւս շատ խոշոր տարբերութիւն մը չնկատուի իր աշխատանքի ընթացքին, բայց երկրորդ ու երրորդ օրը ան ալեւս նոյն անհրաժեշտ եւ օգտակար աշխատանքը չի կրնար կատարել, որովհետեւ սպառուած աշխատութիւնը փոխարինուած չէ նոր ուժով. անիկա պէտք էր քնանար, պէտք էր լաւ ուտէր, հանգստանար. լաւ անդառումը, հանգստութիւնը, քունը, ասոնք սպառուած աշխատութիւնը նոր ուժով թարմացնելու միջոցներ են: Մեր կապիտալիստը յոգնած, ջարդուած, սպառուած ուժով ներկայացող բանուորի պէտք չունի. Ֆիլիքսապէս քայքայուած դրութեան հասած բանուորը իր ուշադրութիւնը, իր աշխատութիւնը գործին վրայ չի կրնար կեդրոնացնել. մարդ մը չունեցածը չի կրնար գործածել: Գործարանատէրը բանուորի վիճակը նկատի չառնէր, անիկա միմիայն կը մտածէ իր արտադրելիք կօշիկներուն վրայ, իր մեքենային վրայ: Ֆիլիքսապէս ուժասպառ բանուորը կրնայ վնասել մեքենային, կրնայ վնասել կօշիկներուն: Ահա թէ ի՞նչու ան կ'ակնկալէ, որ բանուորը հանգստանայ, լաւ ուտէ, քնանայ եւ թարմ ուժերով ներկայանայ, որովհետեւ ինք այդ թարմացած աշխատութիւն է որ վճարում կ'ընէ: Ի՞նչ կը նշանակէ աս: Անիկա կը նշանակէ, որ բանուորը թէեւ օրական 8 կամ 10 ժամ կապիտալիստին համար կ'աշխատի, բայց մնացեալ 16 կամ 14 ժամերն ալ պէտք է յատկացնէ իր որոշեալ աշխատածամբերուն պատրաստուելու համար. ուրիշ խօսքով՝ անոր ամբողջ օրուայ կեանքը ըստ էութեան յատկացուած է մեր պարոն կապիտալիստին, թէեւ այս վերջինը կը դանդատի, որ ինք աւելի երկար կը գործէ մտածելով, քան թէ բանուորը իր աշխատութիւնը նիւթականացնելու պրոցէսին մէջ գնելով:

Երբ կապիտալիստը դրամը կը հանէ շուկայ, կը գնէ ապրանքներ, որոնք կը ծառայեն իրրեւ մէկ նոր արդիւնքի նիւթական կազմիչներ կամ իրրեւ աշխատանքի պրոցէսի գործօններ, երբ անոնց մեռեալ առարկայականութեանը կը միացնէ կենդանի աշխատութիւն, ան ասով աշխատանքը կը դարձնէ կապիտալ, ինքնաճուն արժէք, շնչաւոր հրէջ մը, որ կը սկսի լսփել ու մեծնալ:

Եթէ մենք համեմատենք արժէք ստեղծելու պրոցէսը ու արժէքի մեծացման պրոցէսը, կը տեսնենք, որ արժէքի մեծացման պր-

ոցէսը ոչ այլ ինչ է, բայց եթէ ոչ արժէք ստեղծելու պրոցէս, որ որոշ կէտէ մը սկսեր ու երկարեր է:

Այն որոշ ճիւղին մէջ, ուր աշխատանքը գործադրութեան կը դրուի, ան պէտք է ունենայ հմտութեան, կանխապատրաստութեան ու արագութեան միջին չափը: Եւ մեր կապիտալիստը աշխատանքի շուկային մէջ նորմալ եւ որակաւոր աշխատութիւն գնած է: Այդ ուժը պէտք է ծախուի լարման միջին չափով, լարուածութեան ախտիսի աստիճանով, որ ընդհանրականօրէն գործածական է: Այս բանին կապիտալիստը կը հսկէ ծայրակեղ աջարջութեամբ, որպէսզի ժամանակի ոչ մէկ վայրկեան պարագ տեղը չվատնուի առանց աշխատանքի: Ան աշխատութիւնը գնէր է որոշ ժամանակամիջոցի մը համար եւ կ'ուզէ ստանալ այն՝ ինչ որ իրենն է. ան չուզէր, որ իր սեփականութիւնը գողցուի, կամ թալանի ենթարկուի: Վերջապէս, նոյն այս սկզբունքով ալ մեր պարոնը իր սեփական քրէական օրէնսդիրքը ունի. այն է՝ հում նիւթի ու աշխատամիջոցներու ոչ մէկ աննպատակաբար սպառում պէտք չէ տեղի ունենայ, որովհետեւ վատնուած նիւթեղէնը կամ աշխատամիջոցները առարկայացած աշխատանքի աւելորդ կերպով ծախսուած քանակ կը ներկայացնեն, ուրեմն հաշուի չեն առնուիր եւ չեն մտնէր արժէքի ստեղծման պրոցէսին մէջ:

Ապրանքի վերլուծումով մենք կը տեսնենք, որ սպառման արժէք ստեղծող աշխատանքի ու արժէք ստեղծող միւսնոյն աշխատանքին միջեւ տարբերութիւն մը կայ, որ մեզի կը ներկայանայ իրրեւ արտադրութեան պրոցէսի տարբեր կողմերու զանազանութիւն:

Արտադրութեան պրոցէսը, իրրեւ աշխատանքի պրոցէսի ու արժէք ստեղծելու միասնութիւն՝ ապրանքներու արտադրութեան պրոցէս է. իսկ նոյն արտադրութեան պրոցէսը, իրրեւ աշխատանքի պրոցէսի ու արժէքի մեծացման պրոցէսի միասնութիւն՝ արտադրութեան կապիտալիստական պրոցէս է, ապրանքային արտադրութեան կապիտալիստական ձեւ:

ԱՇԽԱՏՈՐԸ

Մենք սկսանք այն մեկնակէտէն, որ աշխատութիւնը կը գնուի եւ կը ծախուի իր արժէքի համեմատ: Ինչպէս ամէն ուրիշ մէկ ապրանքի արժէք, այնպէս ալ աշխատութիւնը արժէքը կ'որոշուի անոր արտադրութեան համար անհրաժեշտ աշխատածամանակով: Հետեւաբար, եթէ բանուորի օրական կենսամիջոցներու բաւարարման համար արտադրական աշխատանքը կը պահանջէ 6 ժամ, ապա ան պէտք է օրական միջին հաշուով 6 ժամ աշխատի եւ փոխարէնը ստանայ իր աշխա-

տուժի համար ստացած կամ ստանալիք արժէքը, ըսենք՝ օրավարձը: Այս պարագային անոր աշխատութեան անհրաժեշտ մասը, որուն համար լրիւ վճարում կը ստանայ, կ'ընէ 6 ժամ. մնացեալ ժամերը կը կոչուին յաւելեալ ժամեր ու այդ յաւելեալ ժամերուն բանուորի աշխատութիւնը՝ որուն համար վճարում չ'ստանար աշխատանքի պրոցէսով կ'արտադրէ յաւելեալ արժէք: Այժմ 6 ժամուայ անհրաժեշտ աշխատանքի ժամանակը եթէ անփոփոխ նկատենք, կրնա՞նք արդեօք աշխատութեան մեծութիւնը ճշդել: Անշուշտ չենք կրնար, միայն թէ ենթադրարար կրնանք ըսել, որ անիկա 6 ժամէն աւելի ըլլալու է, որովհետեւ եթէ բանուորը միայն 6 ժամ աշխատի եւ իր 6 ժամուան աշխատանքի ստեղծած արժէքը ամբողջապէս իւրացնէ, կապիտալիստը յաւելեալ արժէք սպասուած չ'ըլլար: Արտադրութեան կապիտալիստական եղանակի հիման վրայ անհրաժեշտ աշխատանքը բանուորի աշխատութեան մէկ մասը կը ներկայացնէ միայն, բանուորին պատկանած մասը. հետեւաբար աշխատութեան չի կրնար մինչեւ այդ նուազագոյն չափին իջնել: Միւս կողմէ՝ ընդհակառակը՝ աշխատուն ունի առաւելագոյն սահման մը, եւ այդ սահմանէն անդին չի կրնար անցնիլ: Այդ առաւելագոյն սահմանը կ'որոշուի երկու կերպով. նախ՝ աշխատութի Ֆիզիքական սահմանով: Մարդ մը 24 ժամերէն կազմուած բնական օրուան մէջ կարող է ծախսել իր կենսական ուժի որոշ քանակը միայն: Այսպէս, օրինակ, ձին օրական միայն 8 ժամ կրնար աշխատիլ: Օրուան միւս մասին պէտք է հանգստանայ, քնանայ. պէտք է ուտէ. նոյնն է մարդը. մարդն ալ պէտք է հանգստանայ, պէտք է ուտէ, պէտք է քնանայ, պէտք է բաւարարէ իր ֆիզիքական միւս պահանջները, պէտք է լողանք առնէ, մաքրուի, հազուի եւ այլն: Բացի այս զուտ ֆիզիքական սահմանէն, աշխատութեան երկարացումը կը բաղադրուի բարոյական սահմաններու: Բանուորին ժամանակ է հարկաւոր, որ բաւարարէ իր հոգեկան եւ սոցիալական պահանջները, որոնց ծաւալն ու քանակը կ'որոշուին իր ապրած երկրի կուլտուրայի ընդհանուր դրութեամբ: Յետամնաց երկիրներու մէջ, ուր թատրոն եւ օփերա չկայ, բանուորը ի հարկէ ատոնց ծախսերուն մասին չի կրնար մտածել: Ասով հասկնալի կ'ըլլայ, որ աշխատութեան մեծութեան փոփոխումը ենթակայ է ֆիզիքական ու սոցիալական պայմաններէն: Բայց երկու սահմաններն ալ խիստ առաձգական բնոյթ ունին եւ ամենամեծ սպարէզը կը բանան փոփոխութիւններու: Ատոր համար այսօր կը տեսնենք ամենատարբեր երկարութիւն ունեցող աշխատութեան տեղ մը 8 ժամ, տեղ մը՝ 10 ժամ, ուրիշ տեղեր՝ 12, 14, 16, 18 ժամ . . . :

Կապիտալիստը աշխատութեան գնած է անոր օրական արժէքով: Անոր կը պատկանի աշխատութի սպառման արժէքը մէկ աշխատութեան

ընթացքին: Ան իրաւունք է ձեռք բերած, որ իր վարձած ազատ բանուորը օրուայ մը ընթացքին՝ իրեն համար աշխատցնէ: Բայց ի՞նչ է աշխատութեան արժէքը: Հասկնալի է որ անիկա աւելի պակաս ըլլալու է քան կենսական բնական օրը, այսինքն՝ աւելի պակաս՝ քան 24 ժամուան տեւողութիւնը: Եւ ո՞րքան պակաս . . . : Կապիտալիստը իր սեփական հայեացքն ունի այս մասին, աշխատութեան անհրաժեշտ սահմանի որոշման մասին: Ան իրրեւ կապիտալիստ՝ անձնատրուած կապիտալ է միայն: Անոր հոգին կապիտալի հոգին է: Բայց կապիտալը եղակի կենսական ձգտում մը ունի, իր արժէքը մեծցնելու, յաւելեալ արժէք ստեղծելու, իր հաստատուն մասով, արտադրողական միջոցներով յաւելեալ արժէքի գծով ըստ կարելոյն շատ քանակային չափով ներծծելու ձգտումը: Կապիտալը մեղաւ աշխատանք է, որ հրէշի նման նոր կենդանութիւն կը ստանայ, երբ կենդանի աշխատանքի ուժը կը ծծէ. ան այնքան շատ կ'ապրի եւ այնքան առողջ կ'ըլլայ, որքան երկար, որքան շատ կը ներծծէ կենդանի աշխատանքը:

Կապիտալիստը իր շէնքը հիմնած է ապրանքափոխութեան օրէնքին վրայ: Անիկա, ինչպէս ամէն մէկ գնորդ, կ'աշխատի իր ապրանքի սպառման արժէքէն ըստ կարելոյն՝ ամենամեծ օգուտը ձեռք բերել: Բայց յանկարծ կը հնչէ բանուորի ձայնը, որ մինչեւ այժմ անխելի էր արտադրութեան պրոցէսին մէջ, մեքենաներու ազմուկին ու թնդիւնին մէջ.

— «Այն ապրանքը, զոր ես ծախսեր եմ քեզի, միւս ապրանքներու դէպքերէն կը տարբերի անով՝ որ անոր սպառումը արժէք կ'ըստեղծէ եւ այն ալ աւելի մեծ արժէք, քան ինչ որ դուն իրր թէ կը վճարես իրեն: Ատոր համար դուն այդ ապրանքը գնեցիր: Այն՝ ինչ որ դուն կը նկատես իրրեւ կապիտալի արժէքի մեծացում, ես կը նրկատեմ իր աշխատութի աւելագոյն ծախսում: Դուն եւ ես շուկայի հրապարակին վրայ մի միայն մէկ օրէնք կը ճանչնանք. ապրանքափոխութեան օրէնքը: Քու սիրած այդ օրէնքով՝ ապրանքի սպառումը ոչ թէ կը պատկանի վաճառորդին, այլ գնորդին: Հետեւաբար, քեզի կը պատկանի իմ օրական աշխատութի սպառումը: Բայց իմ աշխատութի օրական վաճառման գնով ես պէտք է իմ աշխատութեան վերանորոգեմ, որպէսզի նորէն կարողանամ դայն քեզի ծախել: Մէկ կողմ ձեռքով ծերութեան եւ այլ պատճառներով բնական մաշումը՝ ես պէտք է կարողանամ վաղն ալ ուժի, առողջութեան ու թարմութեան միեւնոյն բնականոն դրութեամբ աշխատիլ, ինչպէս այսօր: Դուն շարունակ ինձի կը քարոզես «խնայողութեան» եւ «ժուժկալութեան» աւետարանը: Դէ՛, լա՛ւ: Ես՝ որպէս բանիմաց ու խնայող տնտես՝ կ'ուզեմ իմ միակ ստացուածքը՝ աշխատութեան պահպանել եւ

հրաժարիլ ամբար վատնումէն: Դուն գիս ազատ կը ձգե՞ս իմ նըպատակիս մէջ: Երբե՛ք: Ես կ'ուզեմ ամէն օր իմ աշխատութս այն քանակով հոսուն դարձնել, շարժման մէջ դնել, աշխատանքի վերածել, որքան թոյլ կու տան անոր նորմալ տեւողութիւնն ու առողջ զարգացումը: Բայց դուն կ'ուզես իմ աշխատօրը երկարացնել: Դուն կ'ուզես մէկ օրուան մէջ իմ աշխատութի մեծագոյն քանակը հոսուն դարձնել, շարժման մէջ դնել, աշխատանքի վերածել, որքանով որ ես այդ վատնուած աշխատութի քանակը երեք օրէն չեմ կրնար փոխարինել: Այն՝ ինչ որ դուն կը շահիս իմ աշխատանքէն, ես կը կորսնցնեմ իմ աշխատանքի նիւթը կազմող աշխատութէն եւ այդ աշխատութը պատրաստող կեանքէն: Իմ աշխատութի օգտագործումը եւ իմ աշխատութի կողոպտումը, ասոնք իրարմէ բոլորովին տարբեր բաներ են: Դուն ինծի կը վճարես մէկ օրուան աշխատութի համար, մինչդեռ իմ աշխատութը քու կապիտալի ուսճացման համար կը գործածես երեք օր: Դուն իմ ապրանքիս՝ աշխատութիս երկու երրորդը կը գողնաս ինձմէ: Ասիկա հակառակ է մեր պայմանագրութեանը եւ ապրանքային փոխանակային օրէնքին: Այսպիսով ուրեմն ես կը պահանջեմ բնական երկարութեամբ աշխատօր մը եւ կը պահանջեմ առանց դիմում ընելու քու սրտին, որովհետեւ դրամական գործերուն մէջ բարեհոգիութիւնը ձայն չունի: Դուն կարող ես օրինակելի քաղաքացի մը ըլլալ, թերեւս կենդանիները հովանաւորող ընկերութեան մը անդամը, եւ բացի առկէ կրնաս սուրբի համբաւ վայելել, բայց այն իրը՝ կապիտալը, որուն ներկայացուցիչն ես, իր կրճքին տակ սիրտ չունի: Եթէ քեզի կը թուի թէ անոր կրճքին տակ բան մը կը բարսիւէ, այդ՝ իմ սեփական սրտի զարկն է: Ես կը պահանջեմ բնական աշխատօր իմ պահանջը հիմնական է եւ արդար ես իմ ապրանքի՝ աշխատութի արժէքն է, զոր կը պահանջեմ, ինչպէս ամէն վաճառորդ իրաւունք ունի իր վաճառած ապրանքի արժէքը պահանջելու»:

Կապիտալիստը բանուորի այս խօսքերուն կարեւորութիւն չի տար, որքան ատեն որ ատոնք կը մնան սոսկական խօսքի սահմանին մէջ: ան իրբեւ գնորդ կ'աշխատի իր գնած ապրանքը՝ աշխատութը օգտագործելու համար աշխատօրը երկարել: Այստեղ երեւան կու գան իրարու հակադիր երկու կողմեր, մէկ կողմը՝ որ աշխատօրը սահմանափակել կ'ուզէ եւ իր ծախած ապրանքին՝ աշխատութին լըբիւ արժէքը կը պահանջէ, միւս կողմէ, որ աշխատօրը երկարացնել կ'ուզէ եւ կ'աշխատի իր գնած ապրանքին՝ աշխատութին կրկնապատիկն ու եռապատիկը արժեցնել տուող փոխանակային արժէք ապահովել իրեն համար: Երկու իրաւատէրեր կանգնած են զէմ առ զէմ.

իրաւունք իրաւունքի զէմ. երկուքն ալ ապրանքափոխութեան օրէնքի կողմէն վաւերացուած են:

Բայց ո՞վ կ'ըլլայ արդարութիւնը վճողը դատաւորը: Յայտնի է, երկու հաւասար իրաւունքներու միջեւ վճողը պիտի ըլլայ ուժը: Այսպիսով կապիտալիստական արտադրութեան պատմութեան մէջ երեւան կու գայ աշխատօրուայ սահմանման համար կռիւ մը, կռիւ, որ կը մղուի հաւաքական կապիտալիստներու, այսինքն՝ կապիտալիստներու դասակարգին, ու հաւաքական բանուորի, այսինքն՝ բանուոր դասակարգին միջեւ:

Կապիտալիստական արտադրողութեան ընթացքին եթէ մենք մանրամասնօրէն հաշուի առնենք բանուորական զոհերու թիւը, ասոնց անչափահաս երեխաներու շարաշար աշխատանքի պահուն հիւծումն ու սպառումը, այդ թիւը միլիոններու կը հասնի, իսկ անգլիոթեանց տեսակներն ու անոնց նկարագրութիւնները հատորներ կը լեցընեն: Այս երկու դասակարգերու միջեւ սկսուած կռիւը նախ անհաւասար էր ու տկար, ապա ծագում առին խռովութիւններ, պայքարը սխտեմատիկ ընոյթ ստացաւ, գործադուլներ կազմակերպուեցան, յեղափոխութիւններ երեւան եկան, արհեստակցական ու բանուորական միութիւնները կշտաւոր ձայն ունեցան եւ ասոնց բոլորէն վերջ պետութիւնը հարկադրուեցաւ աշխատանքի որոշ օրէնքներ սահմանել: Պետութիւնը, որ իրբեւ ուժի ներկայացուցիչ կեցեր էր կապիտալիստի կողքին եւ ուղղակի բոնութեան տակ կ'աշխատեցնէր բանուորները, անոնց կիներն ու երեխաները, կ'աշխատեցնէր հերթով գիշեր ու ցերեկ, ի վերջոյ՝ փոխեց իր դիմակը եւ գարծաւ հաշտարար միջնորդ, եւ նոյնիսկ եղան պարագաներ՝ երբ ցոյց տալու համար իր «անկողմնակալութիւնն» ու «ժողովրդասիրութիւնը», ան ստիպուեցաւ պատիժի ու տուգանքի ենթարկել անհատ կապիտալիստին՝ երբ այս վերջինը հաստատուած օրէնքը սուրբ տակ առնելու փորձը կ'ընէր: Բայց, բոյոր այս իրադարձութեանց ընթացքին, որ մի քանի դարերու պատմութիւն ունի, կապիտալիստ դասակարգը կորսնցո՞ւց իր սուրբ տակի հողը, կորսնցո՞ւց իր պետութեան պաշտպանութեան իրաւունքը: Երբե՛ք: Օրէնքներ դրուեցան, ճիշդ է, փոխուեցան շահագործման ձեւերը, բայց շահագործման սկզբունքը նոյնը մնաց: Մեքենաներու առատ ու արագ արտադրողականութիւնը, գաղթային քաղաքականութիւնը, եւ բնականօրէն յառաջացող բազմապիսի ու բազմերանգ նպաստաւոր պայմանները կապիտալիստական արտադրողականութիւնը զարգացուցին, անոր յաւելեալ արժէքի ճամբան աւելի լայնցուցին եւ «ժողովրդապետական» հովանիին տակ կապիտալիստը աւելի դեմոկրատիկ դառնալով ինքնախարէութիւնն ունեցաւ կարծելու, որ դասակարգային կռիւը վերջացեր էր,

երբ ամէն մարդու պատեհութիւն տրուած էր կապիտալիստ դառնալու...

Կապիտալիզմը իր դիզած ոսկիներու դէզին վրայ առ այժմ թող հանդիստ բազմի, մենք շարունակենք մեր քննարկը:

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ՅԱԻՆԼԵԱԼ ԱՐԺԷՔԻ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աշխատօրուայ այն մասը, որուն համար կապիտալիստը աշխատութի տիրոջը՝ բանուորին համարժէք վճարում կ'ընէ, մենք մինչեւ հիմա նկատի առինք իրրեւ հաստատուն մեծութիւն՝ արտադրութեան տուեալ պայմաններու ներքեւ: Բանուորը իր այս անհրաժեշտ աշխատածամանակէն 2, 3, 4, 6 կամ աւելի ժամեր աշխատելու է կապիտալիստի յաւելեալ արժէք արտադրելու համար: Մենք բսինք, որ եթէ առաջինը կը կոչուի անհրաժեշտ աշխատանք, երկրորդը կը կոչուի յաւելեալ աշխատանք: Ասկէ պարզ կը տեսնենք որ յաւելեալ աշխատածամանակի երկարացման մեծութենէն կախուած է յաւելեալ արժէքի նորման ու աշխատօրուայ մեծութիւնը: Հիմա առնենք այնպիսի աշխատօր մը, որուն տեւողութիւնը ինչպէս նաև անհրաժեշտ աշխատանքի ու յաւելեալ աշխատանքի բաժանումները ենթադրենք թէ որոշուած են: Այդ աշխատօրը ներկայացնենք հետեւեալ ձևով.

Ա ——— Բ — Գ.

Ենթադրենք, որ Ա. կէտէն մինչեւ Գ. կէտը երկարող գիծը 12 ժամուայ աշխատօր է. Ա. կէտէն մինչեւ Բ. կէտը երկարող գծի մասը կը ներկայացնէ անհրաժեշտ աշխատանքի ժամանակը — ըսենք 10 ժամ, իսկ Բ.էն Գ. կէտը երկարող մասը կը ներկայացնէ յաւելեալ աշխատանքի ժամանակը, որ կը նշանակէ միայն 2 ժամ: Մեր պարոն կապիտալիստը եղբայրութեան եւ հաւասարութեան ջատագով մարդ է. անիկա այս բանին մէջ եղբայրութեան ու հաւասարութեան հակոտնեայ եզրեր կը նշմարէ. ինք՝ բանուորի աշխատութիւնը 12 ժամուան համար դնած է. այդ աշխատութիւնը պահպանուելու համար կենսամիջոցներու պէտք ունի. կապիտալիստը գիտէ այդ պարագան եւ ըստ այնմ իր պարտականութիւնը կը կատարէ, շարժէ շարժք բանուորի աշխատավարձը կը վճարէ. բայց խնդրին մէջ անհաւասարութիւն մը տեսնէ. ինք բանուորին օրական 5 տոլար կուտայ ու բանուորը թէեւ 12 ժամ կ'աշխատի, բայց 10 ժամը կենսամիջոցներու արժէքը գոցելու յատկացուած աշխատանքն է, որմէ կապիտալիստը շահ չունի, մնացած 2 ժամերն է որ յաւելեալ աշխատանքի ժամերն են եւ ինք՝ յաւելեալ արժէքը այդ յաւելեալ աշ-

խատածամանակէն կը քաղէ. այդ կը նշանակէ, որ եթէ 12 ժամուայ աշխատօրը 6 մասի բաժնենք, անոր 5 մասը կ'երթայ բանուորին, միայն 1 բաժինը կը մնայ կապիտալիստին, այսինքն՝ այն մեծհոգի մարդուն, որ գործարան է կառուցեր, մեքենաներ է գնէր, ծանր պարտաւորութեանց բերան տակ է կըրեր... Իրապէս եղածը անիրաւութիւն է, եւ շատ մեծ անիրաւութիւն եւ մեր պարոնը դիչեր ցերեկ այդ անիրաւութիւնը հրապարակէն վերցնելու համար է որ կ'աշխատի, թերթեր կը կարգայ, հաւաքոյթներ կը կազմակերպէ, իր վարձած խոշոր գլխու տէր անտեսագէտներուն լիառատ վճարումներ կ'ընէ, որպէսզի իրեն կերպ մը սորվեցնեն. այսինքն՝ սորվեցնեն արտադրամիջոցի եղանակ մը, որով առանց աշխատօրը երկարելու իրեն համար յաւելեալ արժէք արտադրող յաւելեալ աշխատածամանակը երկարի: Տեսակ մը հանելուկ է աս. 8 կանգուն կտաւը 12 կանգուն կտաւի վերածելու չափ դժուար հանելուկ մը: Հիմա հարցը սա է. ի՞նչպէս կարելի է յաւելեալ արժէքի արտադրութիւնը շատցնել, այսինքն՝ յաւելեալ աշխատածամանակը երկարացնել առանց աշխատօրը երկարացնելու:

Նորէն վեր առնենք մեր նախապէս ներկայացուցած օրինակը — գծի համեմատութեամբ.

Ա ——— Բ — Գ.

Կապիտալիստը Գ. կէտէն գիծը չի կրնար երկարել. աշխատօրը 12 ժամ է ու 12 ժամ ալ մնալու է. եթէ Գ. կէտէն գիծը երկարէ, այսինքն՝ 12 ժամուան աշխատօրը 14 ժամի վերածէ, այն ատեն Բ. կէտէն գիծը նոյն համեմատութեամբ կ'երկարի դէպի Գ.ի կողմը. ուրիշ խօսքով՝ կապիտալիստը եթէ 10 ժամուան համար 5 տոլար կուտար բանուորին որպէս անհրաժեշտ աշխատածամանակի վարձք, ուրեմն այդ անհրաժեշտ աշխատածամանակին վրայ երբ 2 ժամ կ'աւելցնէ, պէտք է վճարէ 6 տոլար: Ինչպէս կը տեսնենք՝ համեմատութիւնը նոյնը կը մնայ: Ասով անիկա բան չի շահիր բայց բանուորը ըստ երեւոյթին կը շահի. ըստ երեւոյթին կ'ըսենք, որովհետեւ բանուորը երբ 14 ժամ կ'աշխատի իր աշխատութիւնը նախորդին բազդատելով 2 ժամ աւելի կը սպառէ եւ պէտք ունի նոյն աշխատութիւնը փոխարինող սննդառումի: Ասկէ պարզ կ'երևի, որ հաւասարութեան սկզբունքի ջատագով մեր պարոն կապիտալիստը վերեւ ներկայացուած գիծին վրայ Բ. կէտէն պիտի քշէ դէպի ետ՝ դէպի Ա.ը. այսինքն բանուորի անհրաժեշտ աշխատածամանակը պիտի կարճեցնէ, ուրիշ խօսքով բանուորի կենսամիջոցներու հալթայթման համար իր վճարագինը պիտի պակսեցնէ: Անշուշտ Բ. կէտէն գիծը ետ մղելն ու կարճեցնելը դիւրին է թղթի վրայ, բայց դործնական կեանքի մէջ՝ քիչ մը դժուար է. ատիկա շատ նուրբ հաշուառութեան

խնդիր է, որ չի կրնար կապուիլ ո՛չ քմահաճոյքի, ոչ ալ բանութեան: Ու մեր կապիտալիստը կը մտածէ ուրիշ հնարք մը գտնել, եւ շատ չանցած՝ կը գտնէ այդ հնարքը: 12 ժամուայ աշխատօրուայ միջոցին կրկնապատկել արտադրութիւք ապրանքներու քանակը եւ ատով կենսամթերքներու գիները պակսեցնել, ատով ան իրաւունք կ'ունենայ բանուորին օրական 3 տոլար վճարել, այսինքն անոր անհրաժեշտ աշխատածամանակը 10 ժամէն 6 ժամի իջեցնել, քանի որ ան այդ 3 տոլարով իր աշխատութիւք վերանորոգելու համար նոյնքան կենսամթերք կրնայ գնել, որքան որ կրնար գնել իր նախապէս ստացած 5 տոլարով: Հանելուկը լուծուած է ուրեմն. բանուորը 6 ժամ կ'աշխատի իր աշխատութի համարժէքին համար, 6 ժամ կ'աշխատի իր ընկեր կապիտալիստի յաւելեալ արժէքին համար. հաւասարութիւնը կատարեալ է:

Մեր վերեւի ներկայացուցած գիծն էր.

10 ժամ 2 ժամ
Ա ————— Բ — Գ հաւասար է 12 ժամի.

Այդ գիծը կը փոխուի եւ կ'ըլլայ՝

6 ժամ 6 ժամ
Ա ————— Բ ————— Գ հաւասար է 12 ժամի.

Ընթերցողը անշուշտ կ'ըմբռնէ, որ վերեւ ներկայացուած փոփոխութիւնը մէկ վայրկեանի մէջ չի կատարուիր, անիկա տնտեսական, պատմական շրջանառութի գործ է: Պէտք է աշխատանքի պրոցէսի տեխնիքական ու հասարակական պայմանները յեղաշրջուին, ուրեմն բուն իսկ արտադրութեան եղանակը պէտք է փոխուի, յեղաշրջուի, որպէսզի աշխատանքի արտադրողականութիւնը բարձրանայ. աշխատանքի արտադրողականութեան բարձրանալով աշխատութի արժէքը կ'իջնայ, եւ այսպիսով կը կրճատուի աշխատօրուայ այն մասը, որ անհրաժեշտ է աշխատութի այս արժէքը վերարտադրելու համար:

Աշխատօրը երկարեցնելու միջոցով արտադրուած յաւելեալ արժէքը եւ կ'անուանեմ բացարձակ յաւելեալ արժէք. ընդհակառակը՝ այն յաւելեալ արժէքը, որ յառաջ կու գայ անհրաժեշտ աշխատածամանակի կրճատումէն եւ աշխատօրուայ երկու բաղադրամասերու քանակական յարաբերութեան համապատասխան փոփոխութեանէն, եւ կ'անուանեմ յարաբերական յաւելեալ արժէք:

Որպէսզի աշխատութի արժէքն իյնայ, արտադրողականութեան բարձրացումը պէտք է ընդգրկէ արտադրութեան այն ճիւղերը, որոնց արդիւնքները կ'որոշեն աշխատութի արժէքը: Կօշիկի արժէքը, օրի-

նակ, միմիայն կօշիկարի աշխատանքով շ'որոշուիր, այլ նաեւ կաշիի, կուպրի, մոմաթելի եւ այլոց համեմատական արժէքի աւելացումով, ուրիշ խօսքով հաստատուն կապիտալի նիւթական տարրերը — արտադրամիջոցներն ու աշխատանիւթը նոյնպէս գործ ունին աշխատութի արժէքը կոտրելու մէջ:

Այստեղ նկատի պէտք է առնել նաեւ կապիտալիստական արտադրութեան ներքին օրէնքները, որոնք իրրեւ մրցման հարկադրական օրէնքներ, ապրանքներու եւ կենսամիջոցներու գինի բարձրացման կամ անկումին մէջ դեռ որոշ դեր կը կատարեն:

Ապրանքներու արժէքը խոտոր կը համեմատի աշխատանքի արտադրողականութեան հետ. աշխատանքի արտադրողականութիւնը եթէ բարձրանայ, ապրանքներու արժէքը կ'իջնէ. այս օրէնքը նոյնն է. աշխատութի ալ տեսակ մը ապրանք է եւ ապրանքային արժէքով կ'որոշուի: Միւս կողմէ՝ ընդհակառակը, յարաբերական յաւելեալ արժէքը ուղիղ կը համեմատի աշխատանքի արտադրութեան հետ: Ան կը բարձրանայ բարձրացող արտադրողականութեան հետ եւ կ'իյնայ ինկող արտադրողականութեան հետ: Կապիտալիստին համար ապրանքի բացարձակ արժէքը նշանակութիւն չունի. զայն հետաքրքրողը ապրանքի մէջ թաղնուած ու ծախելու ժամանակ երեւան եկած յաւելեալ արժէքն է միայն: Եթէ բանուոր մը 12 ժամուան մէջ մէկ զոյգ կօշիկի փոխարէն հինգ զոյգ արտադրէ, կապիտալիստը այդ կօշիկները աւելի աժան կրնայ ծախել եւ աւելի շատ յաւելեալ արժէք ձեռք բերել:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Արտադրութեան միեւնոյն պրոցէսին մէջ, կամ արտադրութեան տարրեր՝ բայց իրարու հետ կապուած պրոցէսներու մէջ ծրարադրուած կերպով կողք կողքի՝ կամ իրարու հետ միասին աշխատող բազմաթիւ անձերու աշխատանքի ձեւը կոոպերացիա կը կոչուի. կոոպերացիա անունը վեր պէտք է առնել ուժերու միացումի իմաստով:

Ինչպէս կը տեսնենք, կապիտալիստական արտադրութիւնը իրապէս կը սկսի այն տեղ, ուր միեւնոյն անհատական կապիտալը բանուորներու աւելի մեծ քանակ մը կ'աշխատցնէ միաժամանակ. հետեւաբար աշխատանքի պրոցէսը կ'ընդարձակէ իր ծաւալը եւ քանակապէս շատ աւելի արդիւնք կ'արտադրէ: Բանուորներու մեծ թիւի մը միաժամանակ, միեւնոյն տեղը (կամ, եթէ կ'ուզէք, աշխատանքի միեւնոյն ասպարէզին վրայ), միեւնոյն ապրանքատեսակի արտադ-

րութեան համար, միեւնոյն կապիտալիստի հրամանատարութեան տակ գործելը պատմականօրէն կապիտալիստական արտադրութեան ելակէտը կը կազմէ: Օրինակ, արտադրութեան բուն խոհ եղանակի տեսակէտէն քննելով՝ տարագործութիւնը իր սկզբնաւորութեան ատեն համբարական արհեստային արդիւնաբերութենէն կը տարբերէր իր աշխատացած բանուորներու աւելի մեծ թիւովը: Համբարական վարպետի արհեստանոցը երբ մանուֆակտուրայի գործարանի կը փոխուի, ասով միմիայն ընդարձակած կ'ըլլայ իր ծաւալը՝ հետեւաբար եւ՝ բանուորներու թիւը: Այս հանգամանքը հասարակական միջին աշխատանք կը ստեղծէ ու զայն շարժման մէջ կը դնէ. անհատ արտադրողը հաւաքական-հասարակական արտադրութեան մեքենայի մէկ մասը կը դառնայ:

Նոյնիսկ աշխատանքի անփոփոխ եղանակի միջոցին բանուորներու մեծ թիւի մը միաժամանակ գործածումը աշխատանքի պրոցէսի առարկայական պայմաններու մէջ՝ առաջ կը բերէ յեզպիտութիւն(*) մը: Եւնքերը որոնց մէջ շատերը կ'աշխատին, հում նիւթի պահեստանոցները, անօթները, գործիքները, ասոնք բոլորը միահամուռ կը մտնեն այժմ աշխատանքի պրոցէսին մէջ: Միասնաբար օգտագործուած արտադրամիջոցները արժէքի աւելի փոքր բազմազամաս կը փոխանցեն արդիւնքին: Ասով կ'իյնայ հաստատուն կապիտալի արժէքային բազմազամասը ինչպէս նաեւ ապրանքի ընդհանուր արժէքը: Ասոր ներգործութիւնը նոյնը կ'ըլլայ, ինչ որ կ'ըլլար, եթէ ապրանքի արտադրամիջոցներն աւելի աժան արտադրուէին: Արտադրամիջոցներու կիրառման այս տնտեսումը առաջ կու գայ այն հանգամանքէն, որ շատ մը բանուորներ միասին գալով աշխատանքի պրոցէսին մէջ արտադրամիջոցները միասնականօրէն կը սպառեն:

(*) Մարքս կոտպերացիայի շրջանը վեր կ'առնէ որպէս կապիտալիստական ապրանքարտադրութեան նախաշրջան, երբ տակաւին շոգին չի շնջեր շոգեկաթսային մէջ, երբ գործատեղիներու մէջ արտադրամիջոցներուն հետ մարդկային բազուկի ուժն է գլխաւոր ուժը, երբ փոխադրութեան միջոցները ցամաքային նամբաներու վրայ եղած են կառքերն ու սայլերը, ջորիներն ու ուղտերը: Այս շրջանին կը յաջորդէ մանուֆակտուրայի՝ ձեռնական տարագործութեան շրջանը, երբ արտադրութիւնը կը սկսի աւելի մեծ ծաւալով, ի վերջոյ կու գայ մեքենաներով արտադրողականութեան շրջանը: Մարքս իւրաքանչիւր շրջանի մասին կը խօսի առանձին եւ այդպիսով ընթերցողին կը ծանօթացնէ ամէն մէկ շրջանի պատմական գարգացումը:

տանքի պրոցէսին մէջ արտադրամիջոցները միասնականօրէն կը սպառեն:

Արտադրամիջոցներու տնտեսումն ընդհանրապէս պէտք է քննել երկու տեսակէտէն: Մէկը այն չափով, որչափով յիշեալ տնտեսումը կ'աժանցնէ ապրանքները եւ ասով կ'իջեցնէ աշխատուծի արժէքը: Միւսն ալ, այն չափով, որչափով ան կը փոխէ յաւելեալ արժէքի յարաբերութիւնը կանխավճարուած ամբողջ կապիտալի վերաբերմամբ, այսինքն՝ կապիտալի հաստատուն ու փոփոխուն բազմազամասերու արժեզուումի վերաբերմամբ:

Ինչպէս որ հեծեալ ղորագունդի մը յարձակման ուժը կամ հետեւակ գունդի մը զիմադրութիւնն էապէս տարբեր են ամէն մէկ առանձին հեծելադորքի կամ հետեւակազորքի առանձնօրէն ծաւալած յարձակման ու զիմադրութեան ուժէն, այնպէս ալ առանձին բանուորներու ուժերու մեքենական գումարը կը տարբերի հասարակական այն ուժական կարողութենէն, որ կը ծաւալի այն ժամանակ, երբ բազմաթիւ ձեռքեր միաժամանակ կը համագործակցին միեւնոյն անբաժան գործանութեան մէջ: Այստեղ խօսքը կը վերաբերի ոչ միայն կոռպերացիայի միջոցով անհատական արտադրողականութիւնը բարձրացնելուն, այլ այնպիսի արտադրողականութիւն մը յառաջ բերելուն, որ արդէն մասսայական ուժ կը պահանջէ:

Մէկ կողմ ձգելով ուժական այն նոր կարողութիւնը, որ կը ծագի բազմաթիւ ուժեր միաձուլելով ընդհանուր ուժի վերածելէն, մենք կը տեսնենք արտադրողական աշխատանքներու հասարակական համաշփման ատեն ուրիշ երեւոյթ մը եւս. այդ՝ կենսական եռանդի այն մրցակցութեան ուղին է, որ ինքնաբերաբար կը յորդի եւ կը մեծցնէ առանձին անհատներու գործունէութիւնը, այնպէս որ 12 անձեր՝ 144 ժամերէ կազմուած մէկ աշխատօրեայ ընթացքին շատ աւելի խոշոր ընդհանուր արժէք կ'արտադրեն, քան թէ 12 առանձնացած բանուորները, որոնցմէ իւրաքանչիւրը առանձինն նոյն աշխատօրեայ 12 ժամերը յատկացնէ նոյն գործին, կամ թէ մէկ բանուորը օրական 12 ժամ եւ 12 օր անընդհատ՝ նոյն գործին վրայ աշխատի:

Շատ մը բանուորներ մէկ տեղ հաւաքելն ու զանոնք գործի դնելը որոշ գումարի կը կարօտի. բանուորներուն շարաթականները պէտք է վճարել, հաստատուն կապիտալին պէտք է վճարել: Որքան բազմաթիւ ըլլան բանուորները, այնքան խոշոր կ'ըլլայ անոնց շարաթական պահանջը եւ նոյնքան խոշոր կ'ըլլայ հաստատուն կապիտալի ծախսը. ինչպէս որ կարելի է հետեւցնել, նոյն համեմատութեամբ մեծ կ'ըլլայ արտադրութիւնը եւ անոր մէջ նիւթականացած յաւելեալ արժէքը:

Անհատական կապիտալը որոշ՝ նուազագոյն մեծութիւն մը ունենալու է սկզբնապէս, որպէսզի փոքրիկ վարպետ կապիտալիստ մը դառնայ եւ ձեւականօրէն կապիտալիստական յարաբերութիւն ստեղծէ իրեն եւ շահագործուող բանուորներու միջեւ: Իրեն եւ իրեն համար աշխատող բանուորներու միջեւ եղած տարբերութիւնն այն է, որ ինք դրամ ունի, յանդգնութիւն ունի եւ ձեռներէջութեան ուզի ունի:

Բազմաթիւ վարձու բանուորներու համագործակցութեան առաջացման հետ կապիտալի հրամանատարութիւնը կը զարգանայ եւ կը դառնայ անհրաժեշտութիւն բուն իսկ աշխատանքի պրոցէսը գլուխ հանելու համար, եւ այդ կը դառնայ արտադրութեան իրական պայման: Հիմա կապիտալիստի հրամանը նոյնքան անհրաժեշտ կը դառնայ արտադրութեան զաշտին վրայ, որքան զօրավարի մը հրամանը՝ ճակատամարտի զաշտին վրայ:

Բայց այստեղ բանուորներու մէջ իրարմէ տարբեր երկու տեսակ արամագրութիւններ կը սաղմնաւորուին ու կը մեծնան. բանուորները միեւնոյն յարկին տակ միասնարար գործելով իրենց մէջ կ'աճի ընկերականութեան զգացումը, որ հետզհետէ զիտակցական կը դառնայ. միեւնոյն ժամանակ շահագործուող բանուորները երբ կը տեսնեն, որ իրենց գլխուն կանգնող նախ հեղ՝ ապա դոսող կապիտալիստը աւելի եւ աւելի կը հարստանայ, մինչ իրենք կը մնան նոյն վիճակին մէջ, ասով՝ իրենց մէջ կ'աճի զիմադրութիւնը. սոյն զիմադրութեան հետ միեւնոյն ատեն կ'աճի կապիտալի ճնշումը, որուն նպատակն է բանուորներու զիմադրութիւնը ճզմելը:

Կապիտալիստական զեկաւարութիւնը ըստ բովանդակութեան՝ երկճիւղուած է, որովհետեւ արտադրութեան զեկաւարման ենթակայ պրոցէսները իրենք երկճիւղուած են արդէն. մէկը՝ աշխատանքի հասարակական պրոցէս է՝ արդիւնք մը պատրաստելու համար, միւսը՝ կապիտալի արժէքի աճեցման պրոցէս է, յաւելեալ արժէքը կրկնապատկելու համար, ասով կապիտալիստական զեկաւարութիւնը արտադրութեան հսկելու դերին հետ կը ստանայ բռնակալական դեր: Կոպերացիայի՝ խոշոր շափանիչով զարգանալուն հետ այս բռնակալութիւնն ալ կը զարգացնէ իր ինքնայատուկ ձեւերը: Փոքրիկ կապիտալիստը որ նախապէս 20 կամ 30 բանուորներ կ'աշխատեցնէր ու ինքն ալ սկիզբէն անոնց հետ ընկերաբար՝ թէ գործին հրակող՝ եւ թէ որպէս բանուոր կ'աշխատէր, երբ ընդարձակեց իր գործատեղին, երբ բազմապատկեց իր բանուորներուն թիւը, այն ատեն ստիպուեցաւ թողուլ իր ձեռական աշխատանքը ու շարունակաբար բանուորներուն վրայ հսկելու գործը յանձնեց վարձու բանուորներու առանձին մէկ տեսակին: Ինչպէս որ բանակը կարիք ունի զինուո-

րական աւազ-սպաներու ու ենթասպաներու, այնպէս ալ միեւնոյն կապիտալի հրամանատարութեան տակ միասնարար գործող բանուորներու մասսայի համար պէտք են արդիւնարեական աւազ սպաներ (կոռավարիչներ) եւ ենթասպաներ (աշխատանքի վերակացուներ) որոնց աշխատանքը՝ հսկելու աշխատանքը, բացառիկ գործ կը դառնայ:

Հոս խիստ կարեւոր բան մը կայ, որուն շատ մօտէն ուշադրութիւն պէտք է ընել:

Բանուորը իր աշխատութի սեփականատէրն է մինչեւ այն ժամանակ քանի զեռ ան իրրեւ աշխատութ վաճառող կը սակարկէ կապիտալիստի հետ, եւ ան կրնայ միմիայն այն բանը ծախել՝ ինչ որ ունի, այն է՝ իր անհատական, առանձնացած աշխատանքի ուժը: Կապիտալիստը մէկի փոխարէն 100 աշխատութ կրնայ դնել եւ կամ 100 բանուորներէն իւրաքանչիւրին հետ առանձին պայմանագրութիւն կրնայ կնքել, բոլորովին անկախ՝ միւսներէն: Կապիտալիստը այդ 100 բանուորները կը լծէ աշխատանքի եւ ճիշդ է որ անոնց առանձին առանձին աշխատավարձերը կը վճարէ: Մենք արդէն ըսած ենք, որ ան յաւելեալ աշխատածամանակին համար չի վճարեր եւ այդ կը կազմէ իր կողոպտած յաւելեալ արժէքը. ասկէ զատ ան վճար կը թողու ուրիշ բան մը եւս. — այդ՝ 100 բանուորներու համակցուած աշխատութի առաւելութեան բաժինն է: Աշխատանքի հասարակական արտադրողական ուժը, զոր կապիտալիստը որոշ պայմաններու մէջ կը դնէ եւ դայն բնականօրէն կը զարգացնէ, այդ զարգացման հետեւանքը, որ կը մտնէ ապրանքին մէջ եւ կ'աւելցնէ կապիտալիստի շահոյթը, անիկա այդ մասը անվճար կը թողու եւ այդ բաւականին մեծ ու նկատելի շահաբաժին է: Ասիկա կը պարզէ հետեւեալ փոխակերպուած իրողութիւնը, ինչպէս որ աշխատանքի հասարակական այն արտադրողական ուժը, որ կը զարգանայ, կը ծաւալի կոպերացիայի միջոցով, երեւան կու գայ իրրեւ կապիտալի արտադրողական ուժ, այնպէս ալ ինքը՝ կոպերացիան կը ներկայանայ իրրեւ արտադրութեան կապիտալիստական պրոցէսի առանձնայատուկ ձեւ մը՝ որ կը հակադրուի առանձին անկախ բանուորներու կամ մանր վարպետներու արտադրութեան պրոցէսին: Աշխատանքի իրական պրոցէսը ասով առաջին փոփոխութիւնն է, զոր ցոյց կու տայ՝ ենթարկուելով կապիտալին: Այս փոփոխութիւնը կը կատարուի տարեբայնօրէն: Անոր նախադրեալը, վարձու բանուորներու մեծ թիւի մը՝ աշխատանքի միեւնոյն պրոցէսին մէջ միաժամանակ գործի լծել տալն է. եւ այդ կը կազմէ կապիտալիստական արտադրութեան իրակէտը: Այս էլակէտը եւ կապիտալի գոյութիւնը կը նոյնանան:

Պարզ կոպերացիան տիրապետող ձեւ է արտադրութեան այն

ճիւղերուն մէջ ուր կապիտալը իր գործառնութիւնը կ'ընէ խոշոր
չափանիւղով, բայց դեռ աշխատանքի բաժանումը հասցուցած չէ իր
բարձրութեան՝ մեքենաները դեռ նշանաւոր դեր չեն կատարեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՒ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ

1.— ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ

Աշխատանքի բաժանման վրայ հիմնուած կողպերացիայի դա-
սական տեսակը կը հանդիսանայ մանուֆակտուրան՝ տարազադոր-
ծութիւնը: Իրբեւ արտադրութեան կապիտալիստական պրոցէսի բնո-
րոշ ձեւ՝ ան դերիչիող զիրք ունի բուն մանուֆակտուրայի ժամա-
նակաշրջանին՝ որ մօտաւոր հաշուով կը տեւէ 16-րդ դարու կէսէն
մինչեւ 18-րդ դարու վերջին երրորդամասը:

Մանուֆակտուրան երկու կերպով առաջ կուզայ: Առաջին.—
Գործատեղիի մը մէջ միեւնոյն կապիտալիստի հրամանատարութեան
տակ կը համախմբուին տարբեր տեսակի արհեստներու պատկանող
բանուորները, որոնցմէ իւրաքանչիւրը բոլորովին տարբեր արհես-
տով տարբեր արդիւնք կ'արտադրէ եւ սակայն այդ տարբեր արդիւնք-
ները իրարու մօտ բերուելով մէջտեղ կը հանեն այն ընդհանրադու-
մար ապրանքը, որու համար տարբեր արհեստաւորները համախմբ-
ուած էին նոյն աշխատանոցին մէջ՝ ի հարկէ, հասկնալի է, իրարմէ
տարբեր աշխատանքի բաժանման յարկարաժիններով: Օրինակի հա-
մար, արտադրուածը կառք մըն է, որուն համար աշխատեւ են կա-
շեսարքադործը, կառագործը, դերձակը, փականադործը, դարբինը,
ապակեգործը, ներկարարը եւայլն: Երկրորդ. բազմաթիւ արհես-
տաւորներ միեւնոյն ապրանքները կ'արտադրեն եւ իւրաքանչիւրը
աշխատանքի տարբեր ստորաբաժանումներու կապուած են. օրինակ՝
թուղթի պատրաստութեան կամ ասեղի շինութեան մէջ՝ ամէն մէկ
բանուոր որոշ աշխատանք կը կատարէ, եւ որովհետեւ այդ աշխա-
տանքը միեւնոյն ձեւով կը կրկնէ, ան իր աշխատանքը կ'արագացնէ
եւ կը կատարելագործէ. այնպէս որ եթէ բանուոր մը օրուան մէջ
5 ասեղ կընայ շինել, պայմանաւ որ բոլոր գործողութիւնները ինքն
առանձինն ընէ, եթէ 10 բանուորներ ասեղի արտադրման գործո-
ղութիւնները առանձին առանձին ընեն, անոնք ոչ թէ օրական 50 ա-
սեղներ կընան շինել, այլ 100 ասեղներ: Այդ կը նշանակէ կրկնապա-
տիկը: Աշխատանքի բաժանումի սկզբունքին հետեւողականութեամբ
ասեղի արհեստաւորը իր արհեստէն կ'անջատուի եւ ասեղի արտադ-

րութեան մեքենային մէկ մասը կը դառնայ, մարդկային մեքենակա-
նութեան մարդկային մասը:

Այս երկու ձեւերուն մէջ մենք կը տեսնենք արտադրութեան
նոյն մեքենականութիւնը, որուն օրգանները մարդիկ են:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԻՒՍ ԱՌԱԻԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եթէ մենք խնդրին աւելի խորը մտնենք, ամենէն առաջ պիտի
տեսնենք, որ բանուորը երբ իր ամբողջ կեանքի մէջ միեւնոյն պարզ
գործողութիւնը կը կատարէ, իր ամբողջ մարմինը յիշեալ գործառ-
նութեան ինքնաշարժ ու միակողմանիօրէն նոյն շարժումին յարմար-
ցուած մեքենան կը դառնայ, ուստի այդ բանուորը նոյն գործը աւելի
արագ եւ աւելի լաւ կը կատարէ քան այն արհեստաւորը, որ գոր-
ծողութիւններու ամբողջ շարքը ինքը կը կատարէ փոփոխակիօրէն:
Ասկէ դատ մասնական եւ անջատուած աշխատանքի մեթոտը, կա-
տարելագործել կու տայ այդ աշխատանքը: Միեւնոյն սահմանափակ
գործունէութիւնը շարունակ կրկնելով եւ ուշադրութիւնը այս սահ-
մանափակ գործին վրայ կեդրոնացնելով բանուորը կը սորվի աւելի
քիչ աշխատութ սպառել եւ աւելի շատ արդիւնք տալ:

Ասիկա մէկ առաւելութիւնն է:

Աշխատանքի բաժանումը մասնագործ բանուորի բացառիկ
հմտութեան կարողութիւնը բացառիկ աստիճանին կը հասցնէ, այն-
պէս որ մարմնական այդ զարգացած ու մեքենայացած յատկութիւնը
ժառանգականօրէն կ'անցնի բանուորի արտադրած նոր սերունդին:
Սերունդէ սերունդ կուտակուած եւ հօրմէն որդւոյն ժառանգաբար
անցած եղակի ճարտարութիւնն է միայն, որ ինչպէս հնդիկին՝ նոյն-
պէս եւ սարդին տուած է մասնագործական մեծահմտութիւն:

Ասիկա երկրորդ առաւելութիւնն է:

Արհեստաւոր մը, որ արդիւնքի մը արտադրութեան ժամա-
նակ տարբեր մասնական գործեր կը կատարէ իրարու ետեւէն, պէտք
է փոխէ իր տեղը, իր գործիքները. ասով կը փոխուի իր միտքի եւ
ուշադրութեան դիրքը: Մէկ գործառնութեանէն միւսին անցնիլը կ'ընդ-
հատէ անոր աշխատանքի հոսանքը եւ տեսակ մը ծակոտիներ կը բա-
նայ անոր աշխատօրուան մէջ: Այս ծակոտիները իրարու կը սեղմուին
եւ կը չքանան, երբ ան ամբողջ օրը նոյն տեղը, նոյն գործիքներով,
նոյն գործը կը կրկնէ միշտ: Անշուշտ հասկնալի է, որ միօրինակ աշ-
խատանքի շարունակութիւնը կը թուլցնէ բանուորի կենսական ու-
ժերու լարումն ու աշխուժութեան զօրութիւնը, բայց այդ միեւնոյն
ատեն բանուորի օրգանները կը վերածէ հոգեկան աշխուժութիւնը

անկարեւոր դարձնող մեքենականութեան: Ու կապիտալիստին պէտք եղածը արդէն այդ է. արտադրել եւ շտամել, գործել եւ չյողնիլ:

Ասիկա երրորդ առաւելութիւնն է:

Աշխատանքի արտադրողականութիւնը կախուած է ոչ միայն բանուորի մեծածափութենէն, այլեւ անոր գործիքներու կատարելագործուած ըլլալու հանգամանքէն: Գործիքները կը կատարելագործուին իւրաքանչիւր բանուորի օրերու, ամիսներու եւ տարիներու փորձառութեամբ: Գործիքները որքան կատարելագործուին, մասնաշատուկ գործողութիւնը այնքան կը զիւրանայ, որքան զիւրանայ գործողութիւնը այնքան քիչ ժամանակ կ'առնէ: Պիրմինկհէմի մէջ 500 տեսակ մուրճեր պատրաստուած են, որոնց իւրաքանչիւր տեսակը արտադրութեան առանձին պրոցէսի համար է շինուած: Գործիքներու բազմազանութիւնն ու զարգացումը մեքենաներու ստեղծման նիւթական պայմաններէն մին է. ի՞նչ են մեքենաները — եթէ ոչ պարզ գործիքներու առանձին առանձին միաւորներու գործի համակցութեան շաղկապեալ միաւորումները:

Ասիկա չորրորդ առաւելութիւնն է:

Իւրաքանչիւր ապրանք սկիզբէն մինչեւ իր կատարեալ ամբողջացումը հասցնելը ամբողջական արհեստաւորի գործն է. կատարեալ արհեստաւոր ըլլալու համար երկար ժամանակ կը պահանջէ վարպետ մը իր ամբողջ ժամանակը օրերով՝ դուցէ շաբաթներով պիտի յատկացնէ իր աշակերտին արհեստ սորվեցնելու համար: Աշխատանքի բաժանումը երբ գործը իր ամենապարզ մասերուն կը բաժնէ եւ իւրաքանչիւր մաս պարզ գործառութիւն մը կը դառնայ, ասիկա կապիտալիստին համար նպաստաւոր հանգամանք կը ստեղծէ: Մասնագործ բանուոր մը երբ կը հիւանդանայ, կը մեռնի, կամ՝ գործը կը թողու, մեր կապիտալիստը շատ դժուարութիւն չի քաշեր անմիջապէս անոր տեղը դնելու անփորձ նորեկ մը՝ որուն աշխատանքի վերակացուն մէկ օրուան մէջ կրնայ սորվեցնել գործը:

Ասիկա աշխատանքի բաժանման հինգերորդ առաւելութիւնն է:

Որովհետեւ հաւաքական բանուորական աշխատանքի տարբեր գործառնութիւնները կրնան ըլլալ աւելի պարզ կամ թէ աւելի բարդ, աւելի հասարակ կամ աւելի բարձր, ուստի անոր օրգանները, անհատական աշխատութիւնը կը թուրեման տարբեր աստիճաններ կը պահանջեն եւ հետեւաբար խիստ տարբեր արժէք ունին: Այսպիսով ուրեմն մանուֆակտուրան առաջ կը բերէ ու կը զարգացնէ աշխատութիւնը նուիրապետութիւն մը, որուն կը համապատասխանէ աշխատավարձերու սանդուխք մը: Եթէ մէկ կողմէ անհատական բանուորը միակողմանի գործողութիւն մը կ'իւրացնէ եւ կենսատեւօրէն կը շաղկապուի անոր հետ, ապա յիշեալ նուիրապետութեան աշխատանք-

քային տարբեր գործառնութիւնները նոյն չափով կը յարմարցունին բնական ու ստացական ունակութիւններուն:

Մանուֆակտուրան իր ընդգրկած ամէն մէկ արհեստի մէջ առաջ կը բերէ այսպէս կոչուած անվարժ բանուորներու դասակարգ մը: Երբ մանուֆակտուրան միակողմանի մասնագիտութիւնը ամբողջ աշխատանքային կարողութեան հաշուոյն զարգացնելով մեծածափութեան կը հասցնէ, ան կը սկսի արդէն զարգացման պակասութիւններն ալ մասնագիտութիւն դարձնել. վարժուած բանուորները եթէ մասնագէտ են, անվարժներն ալ անվարժութեան մասնագէտ են:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՄԱՆՈՒՓԱԿՏՈՒՐԱՅԻ ՆԵՐՍԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Քննելէ ետք մանուֆակտուրայի ծագումը, այժմ համառօտապէս շօշափենք այն յարաբերութիւնը, որ կայ աշխատանքի հասարակական բաժանման միջեւ որ ամէն ապրանքարտադրութեան ընդհանրական հիմքը կը կազմէ:

Եթէ աչքի առջեւ ունենանք բուն իսկ աշխատանքը միայն, ապա կրնանք հասարակական արտադրութեան բոլոր սեռերու բաժանումները՝ ինչպէս երկրագործութիւնը, ոչխարարուծութիւնը եւ այլն, անուանել աշխատանքի ընդհանրական բաժանում, անոնց ենթատեսակներու բաժանումը՝ աշխատանքի մասնակի բաժանում, իսկ երբ գործը կը հասնի մանուֆակտուրայի գործանոցի մէջ եղած աշխատանքի բաժանման՝ մենք զայն կրնանք կոչել վերջին փուլի միակցած բաժանում, ուրիշ հրապարակ կ'իջնէ տարազագործուած ապրանքը:

Հասարակութեան մէջ աշխատանքի բաժանումը մանուֆակտուրայի ներսը եղած աշխատանքի բաժանման նման կը զարգանայ հակադիր ելակէտներէ: Աշխատանքի բնաճուն բաժանում առաջ կուգայ սեռի ու տարիքի տարբերութենէն, համայնքի ծաւալումէն, բրնակչութեան բազմացումէն, տոհմերու միջեւ պատահող ընդհարումներէն, արդիւնափոխանակութեան բնոյթէն, տոհմերու եւ համայնքներու միջեւ եղած շփումէն: Տարբեր համայնքները տարբեր արտադրամիջոցներ ու տարբեր կենսամիջոցներ կը գտնեն իրենց շրջակայ բնութեան մէջ: Այս պատճառով անոնց արտադրութեան եղանակը, ապրելակերպն ու արդիւնքները տարբեր կ'ըլլան: Այս բնաճուն տարբերութիւնն է որ համայնքներու շփման ատեն կեանքի կը կոչէ փոխադարձօրէն առաջարկուող ապրանքներու փոխանակութիւնը:

Աշխատանքի դարդացման ու ապրանքափոխանակութեան միջոցով իրականացած բոլոր բաժանումներու հիմքը քաղաքի ու գիւղի իրարմէ անջատումն է: Կարելի է ըսել, որ հասարակութեան ամբողջ տնտեսական պատմութիւնը ամփոփուած կը ներկայանայ այս հակադրութեան շարժման մէջ:

Որովհետեւ ապրանքառադրութիւնն ու ապրանքաշրջանառութիւնը արտադրութեան կապիտալիստական եղանակի ընդհանրական նախադրեալներն են, ուստի աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը կը պահանջէ, որ հասարակութեան մէջ եղած աշխատանքի բաժանումը մինչեւ յայտնի ատիճան մը հասունցած ըլլայ արդէն: Ընդհակառակը, աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը յետագարձ ազդեցութիւն ընելով՝ կը դարդացնէ եւ բազմաքանակ կը դարձնէ աշխատանքի յիշեալ հասարակական բաժանումը:

Մանուֆակտուրայի կապիտալիստական բնոյթը .—

Միեւնոյն կապիտալի հրամանատարութեան տակ գործող բանուորներու աւելի մեծ թիւը կը կազմէ ինչպէս ընդհանուր առմամբ կոոպերացիայի՝ այնպէս ալ մանուֆակտուրայի բնածուն ելակէտը: Բայց պէտք է ըսել, որ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը տեխնիքական անհրաժեշտութեան աստիճանին կը հասցնէ գործող բանուորներու թուական աճումը:

Մանուֆակտուրայի ինչպէս եւ պարզ կոոպերացիայի մէջ, գործող աշխատամարմինը կապիտալի գոյութեան հիմքն է: Արտադրութեան հասարակական միխանիզմը, որ բաղկացած է բազմաթիւ անհատական մասնագործ բանուորներէն, կը պատկանի կապիտալիստին: Այս պատճառով ալ, աշխատանքներու համակցութեանն առաջացած արտադրողականութիւնը երեւան կու գայ իրրեւ կապիտալի արտադրողականութիւն:

Մանուֆակտուրայի մէջ հաւաքական բանուորի, ուրիմն եւ կապիտալի՝ հասարակական արտադրողական ուժերով հարստանալը պայմանաւորուած է բանուորի՝ անհատական մտաւորական ուժերու աղքատացման հետ: Տգիտութիւնը արդիւնաբերութեան, ինչպէս եւ սնահաւատութեան մայրն է: Մտածողութիւնն ու երեւակայութեան ուժը ենթակայ են սխալների, բայց ոտքը կամ ձեռքը շարժելու սովորութիւնը ոչ մտածողութենէն կախուած է, ոչ ալ երեւակայութենէն: Մանուֆակտուրաները ամենէն աւելի կը ծաղկին հոն, ուր հոգեկան կեանքը ամենէն աւելի աչքաթող է եղած, այնպէս որ գործատեղին կրնանք նկատել իրրեւ մեքենայ մը, որու մասերը մարդիկն են: Եւ իրօք, 18-րդ դարու սկիզբը՝ քանի մը մանուֆակ-

տուրաներ, նախապատուութիւն կու տային կիսապուշներուն եւ զանոնք կ'աշխատցնէին քանի մը այնպիսի պարզ գործողութիւններու համար, որոնց մէջ էր գործարանային դադանիքը:

Բանուորի հոգեկան եւ մարմնական հիւծումը անխուսափելի է միատեսակ մեքենական գործի ընթացքին մէջ:

Մեքենաներն ու խոշոր արդիւնաբերութիւնը .—

Արտադրութեան եղանակի յեղաշրջումը մանուֆակտուրայի մէջ իրրեւ ելակէտ՝ կ'ընդունի աշխատուժը, իսկ խոշոր արդիւնաբերութեան մէջ՝ արտադրամիջոցը: Այս պատճառով ամենէն առաջ պէտք է քննել, թէ աշխատամիջոցն ինչպէս գործիքէն կը փոխակերպուի մեքենայի, կամ թէ մեքենան ինչպէս կը տարբերի արհեստային գործիքէն:

Բոլոր զարդացած մեքենաները կազմուած են էպպէս իրարմէ տարբեր երեք մասերէ. շարժիչ մեքենայէ, հաղորդիչ մեքանիզմէ ու գործիք-մեքենայէ կամ աշխատամեքենայէ: Շարժիչ մասը կը գործէ իրրեւ ամբողջ մեքանիզմի շարժիչ ուժը. ինչպէս օրինակ՝ շոգեկաթսան, մոտորը, ջրի անկումը ջրանիւի վրայ, հողմը՝ հողմաթեւի համար եւայլն. հաղորդիչ մասը, որ կազմուած է զանազան տեսակի անիւներէ, փոկերէ, լծակներէ, կը կարգաւորէ շարժումը, գոր կը փոխադրէ տեղէ տեղ: Մեքանիզմի այս երկու մասերը միայն մէկ պաշտօն ունին. անոնք շարժման մէջ կը դնեն մեքենան, իրական գործող մեքենան՝ որ կը բռնէ աշխատանքի առարկան եւ նպատակայարմար կերպով կը փոխէ զայն: Մեքենաներու ճիշդ այս մասէն, գործիք-մեքենայէն է ծնած 18-րդ դարու արդիւնաբերական յեղափոխութիւնը:

Եթէ մենք մօտէն քննենք գործիք-մեքենան, կը տեսնենք, որ անիկա հին արհեստային ձեռական գործիքներու փոփոխուած ու լաւապէս յարմարցուած եւ իրարու միացած՝ ներդաշնակուած կառուցուածք մը կը ներկայացնէ:

Այն մեքենան, ուրկէ սկիզբը կ'առնէ արդիւնաբերական յեղափոխութիւնը, մէկ հատիկ գործիքով աշխատող բանուորը կը փոխարինէ մեքանիզմով մը, որ միանգամով կը գործէ միեւնոյն կամ նմանատեսակ գործիքներու բազմութեամբ եւ շարժման մէջ կը դրուի եզակի շարժիչ ուժով մը, հոգ չէ թէ ինչ ձեւ ունի այդ շարժիչ ուժը:

Աշխատամեքենայի մեծութիւնը եւ միաժամանակ անոր գործող գործիքներու թիւը բազմացնելը պայմանաւորուած է աւելի մեծազանգուած շարժիչ մեքանիզմով: Մարդկային ուժը այդ շարժիչ

մեքանիզմին համար անբաւարար է. մարդը արտադրութեան համար շատ անկատար գործիք մըն է եւ չի կրնար միակերպ ու անընդմիջական շարժում առաջ բերել. ան կրնայ գործիք մը գործածել որոշ գործի մը համար, բայց չի կրնար խոշոր մեքենայ մը դարձնել: Մանուֆակտուրայի ժամանակաշրջանին, ինչպէս նաեւ խոշոր արդիւնաբերութեան մանկութեան ժամանակաշրջանին, յաճախ ձիու ուժը գործածուած է, ինչպէս այդ մասին կը վկայէ մեքենայի ուժը ձիու ուժով չափելու օրէնքը, որ մինչեւ այսօր պահած է իր տեղը. ելեքտրական մոտորներուն վրայ նշանակուած կ'ըլլայ միշտ մոտորին քանի ձիու ուժ ունենայը. բայց ձին ալ նպատակայարմար չէր մեքենաներ դարձնելու գործին: 17-րդ դարու սկիզբին արդէն փորձեր էին ջրանիւի ուժը ջրադաշէն գործատեղիին մէջ փոխադրել, բայց չյաջողեցան, որովհետեւ չէր կարելի բարձրացնել ջուրի ուժը ոչ ալ կարելի էր պահել գոյն նոյն աստիճանի վրայ ջուրի նուազելուն հետեւանքով: Ատկէ վերջն էր որ շոգեմեքենայի յայտնագործութեամբ խոշոր արդիւնաբերութիւնը դառաւ իր մշտականօրէն մղիչ ու շարժիչ ուժը: Մարդիկ անմիջապէս երբ շոգիի ու յետոյ ելեքտրականութեան ուժը իրենց բնտրոյիմ տակ առնել սկսան, մեքենագիտութիւնը, քիմիայի գիտութիւնը աննախընթաց թափով զարգացան եւ արդիւնաբերութիւնը հասաւ բարձր չափերու:

Մեքենայական արտադրութեան ամենամօտ ներգործութիւնը բանուորին վրայ.—

Ինչպէս տեսնք՝ խոշոր արդիւնաբերութեան ելակէտը, կը կազմէ աշխատանքի միջոցներու յեղաշրջումը, այսինքն՝ գործիքներու մեքենաներու վերածուիլը, իսկ յեղաշրջուած աշխատամիջոցները իրենց զարգացած ձեւին կը հասնին գործարանի մեքենաներու արտադրական պրոցէսի բաժնուած մասերու ընդհանուր համակցուած սխաէմին, որով՝ մէկ կողմէ շոգիի կամ ելեքտրականութեան ծախսը շատ աննշան կը դառնայ, միւս կողմէ մեքենական սարքաւորումը բանուորին վրայ բոլորովին տարբեր ազդեցութիւն կը գործէ:

Այժմ քննենք այդ ազդեցութիւնները:

Ա.— Կանանց ու մանուկներու աշխատանքը.— Երբ մեքենաներն աւելորդ կը դարձնեն մկանային ուժը, անոնք գործարանի դռները կը բանան այնպիսի բանուորներու առջեւ, որոնք մկանային ուժ չունին եւ կամ մարմնապէս լիովին զարգացած չեն, բայց օժտուած են մարմնի անդամներու աւելի մեծ ձկունութեամբ: Այս պատճառով բնական կը դառնայ կանանց եւ մանուկներու աշխատանքը կապիտալիստական արտադրութեան մէջ:

Այս իրադարձութեանց ընթացքին մենք իսկոյն կը տեսնենք, որ կը շատնայ վարձու բանուորներու թիւը, երբ ընտանիքի բոլոր

անդամները՝ առանց սեռի ու տարիքի խտրութեան՝ կը հպատակին կապիտալի անմիջական իշխանութեան:

Աշխատուծի արժէքը որոշուած էր կանխաւ՝ ոչ միայն անհատ շահահաս բանուորի ապրուստի համար, այլեւ անհրաժեշտ աշխատատեղիով՝ բանուորական ընտանիքի ապրուստի համար: Երբ մեքենաները բանուորի ընտանիքի բոլոր անդամները աշխատանքի շուկան կը նետեն, ասով անոնք այր մարդու աշխատուծի արժէքը կը բաժնեն անոր ամբողջ ընտանիքի միջեւ: Ասով ինքնաբերաբար կ'իյնայ բանուորի աշխատուծի արժէքը:

Մեքենաները նոյնպէս հիմնովին կը յեղափոխեն կապիտալիստական յարաբերութեան ձեւական իրականացումը, բանուորի եւ կապիտալիստի միջեւ կնքուող պայմանագրութիւնը: Ապրանքափոխութեան հիմքի վրայ եղած առաջին ենթադրութիւնն այն էր, որ կապիտալիստն ու բանուորը իրարու կը հանդիպէին ու իրարու հետ սակարկութիւն կ'ընէին իրրեւ ազատ անձեր, իրրեւ անկախ ապրանքատէրեր, մէկը՝ իրրեւ գրամի եւ արտադրամիջոցներու տէր, միւսն իրրեւ աշխատուծի տէր: Բայց մեքենաներու երեւան դալովը՝ կապիտալը կը դնէ անշահահաս մանուկներն ու կիները: Առաջ բանուորը կը ծախէր իր սեփական աշխատուծը իրրեւ ձեւականօրէն ազատ մարդ: Հիմա ան կը ծախէ իր կիներն ու երեխաները: Բանուորը ասով կը դառնայ ստրկավաճառ:

Բ.— Աշխատորուայ երկարացումը.— Եթէ մեքենաներն ամենահզօր միջոցն են աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու, այսինքն ապրանքի մը արտադրութեան համար անհրաժեշտ աշխատատեղի կարճեցնելու, ուրեմն անոնք իրրեւ կապիտալի ներկայացուցիչներ՝ աշխատօրը իր բնական սահմանէն անդին քիչ մը աւելի երկարացնելու միջոց կը դառնան այն արդիւնաբերութեանց մէջ, որոնք չլթախուած են մեքենաներով: Անոնք մէկ կողմէ կը ստեղծեն նոր պայմաններ, որով կապիտալը ընդունակ կը դարձնեն աշխատօրը երկարացնելու մշտական ձգտման սանձը ազատ ձգելու, միւս կողմէ՝ առաջ կը բերեն նոր գրգայատճառներ՝ բանուորի աշխատանքի նկատմամբ ունեցած անոր անյաղ ծարաւը յազեցնելու:

Ամենէն առաջ աշխատանքի գործիքներու համաձուլուած եղանակով շարժումն ու գործունէութիւնը յանձին մեքենաներու, ինքնընդատինքեան անկախ բան մը կը դառնան բանուորի համար: Մեքենան կը գործէ առանց բանուորի ուժի օգնութեան: Ան փոխակերպուած է արդիւնաբերական յարաշարժ գործիքի. բանուորի գործը հոն ուրիշ բան պիտի չըլլայ այլ եթէ ոչ հսկել, մեքենայի սխալները շտկել, կամ անոր հասցնել նիւթեղէնը, իսկ ապրանքը իր ձեւն ստանալէն վերջ՝ վերցնել, մէկ կողմ դնել: Այս բոլոր գործողութիւնները

յողնեցուցիչ ու սպառիչ աշխատութ չեն պահանջեր, հետեւաբար բանուորը կրնայ 12 ժամէն աւելի աշխատիլ ու մեքենան ինքը՝ որպէս կապիտալիստի հուսաարիւմ օղնականը, որ կարծես դիտակցութիւն ու կամք ունի, կը բռնադատէ բանուորը՝ պակսեցնել իր դիմադրութեան աստիճանը եւ դայն հասցնել նուազագոյն չափին:

Մեքենաներու արտադրողականութիւնը խոտոր կը համեմատի արժէքի այն բաղադրամասի մեծութեանը, որ մեքենաներէն կը փոխանցուի արդիւնքին: Որքան աւելի երկար ըլլայ այն ժամանակաշրջանը, որու ընթացքին մեքենաները կը գործեն, այնքան աւելի մեծ է արդիւնքներու այն կոյտը, որուն վրայ կը բաժնուի մեքենաներէն միակցուած արժէքը, բայց նոյն ատեն այնքան աւելի փոքր կ'ըլլայ այն արժեմասը, զոր մեքենաները կ'աւելցնեն առանձին սպրանքի վրայ: Մեքենաները թէեւ շնչաւոր էակներ չեն, բայց անոնք ալ կեանքի տեսողութեան շրջան մը ունին, կը գործեն, կը մաշին ու կը մեռնին՝ անգործածելի կը դառնան: Կապիտալիստին համար աւելի նպաստաւոր է մեքենաներու կեանքի տեսողութիւնը կարճեցնելը անոնց աշխատանքի ժամանակը երկարացնելով, քան թէ անոնց աշխատանքի ժամանակը կարճեցնելով անոնց կեանքը երկարացնելը: Օրինակ՝ մեքենայ մը, որ 16 տարի կրնայ գործել օրական 8 ժամ գործելով եւ ապա անգործածելի դառնալ, լաւ է որ նոյն մեքենան 8 տարի աշխատի օրական 16 ժամ գործելով եւ 8 տարի աւելի կանուխ՝ անգործածելի դառնայ, որովհետեւ առաջին պարագային յաւելեալ արժէքը աւելի դանդաղ՝ աւելի ուշ կը կուտակուի կապիտալին վրայ, իսկ երկրորդ պարագային՝ աւելի շուտ կը կուտակուի յաւելեալ արժէքը եւ ուռճացած կապիտալը աւելի շատ յաւելեալ արժէքներու կուտակումը կ'ապահովէ:

Մեքենայի նիւթական մաշումը երկու տեսակ է. մէկը կը յառաջանայ անոր գործածումէն, ինչպէս հնչիւն դրամները կը մաշին շրջանառութենէն. միւսը՝ մեքենայի անգործածութենէն, ինչպէս շրջածածուած սուրը կը ժանդոտի իր պատեանին մէջ: Առաջին տեսակի մաշումը ապրանք կ'արտադրէ, երկրորդ տեսակի մաշումը կ'արտադրէ խոշոր դէրօ մը, որուն վրայ պէտք է բարդել մեքենայի վճարագիրը՝ որպէս վնաս:

Բայց մեքենան նիւթական մաշումէն զատ ենթակայ է բարոյական մահուան: Նոր յորինուածքով մեքենաները, որոնք երեւան կու գան որպէս նոր դիւտի եւ տեխնիկական անհրաժեշտ զարգացման պտուղներ՝ հին մեքենաներու գործածական արժէքը կը պակսեցնեն: Կապիտալիստը պիտի աշխատի աշխատատեղերու երկարացումով՝ իր գնած մեքենաները բանուորի թեթեւցած աշխատութեամբ որ-

քան կարելի է շատ եւ շուտ շահագործել մրցման ասպարէզին վրայ շահահանջելու համար:

9. — Աշխատուծի լարուածութիւնը. — Աշխատորուայ այն երկարացումը, որ մեքենաներու ստեղծած հարկադրութեան արդիւնքն էր, վերջ ի վերջոյ սպառնալով հասարակութեան կեանքին, պետութիւնը ստիպուած եղաւ սահմանափակել բնականոն աշխատորը: Հասկընալի է, այդ մեր պետական պաշտօնեաներու բարեկամեցողութեան հետեւանք չէր, այլ բանուորներու պայքարներուն արդիւնքը: Պետութիւնը երբ սահման մը նշանակեց աշխատորուան համար, կատարապիտալ աշխատորուայ սահմանափակումէն կրած վնասը անմիջապէս դարձանել ուղեց աշխատուծի լարուածութեամբ, պարզ խօսքով՝ հարկադրելով, որ բանուորը աւելի աշխուժանայ եւ աւելի աբարգ արտադրէ: Մեքենաներու արագութիւնն արդէն որոշ ճնշում կը բանեցնէ բանուորներուն վրայ, արագացնելու նոյն համեմատութեամբ՝ իրենց շարժումները: Կապիտալիստը մեքենաներու օղնութիւնը ապահովելով հանդերձ՝ ուրիշ մեթոտ մըն ալ կը հնարէ յանկարծ: Ան կը փոխէ ժամով աշխատավարձի մեթոտը քանակական արտադրանքի աշխատավարձի մեթոտին. այսպէս կոչուած՝ գործ գլուխ մեթոտին. զոյգին այսքան, երկոտասնեակին այսքան, կանգունին այսքան կամ փառւնտին այսքան եւայլն: Այս մեթոտը ոչ միայն մրցում կը ստեղծէ բանուորներու միջեւ, այլեւ աւելի կը խորացնէ ազահութեան զգացումը. շատ արտադրել, շատ վաստկել...: Անշուշտ ամէն գործարան նոյն մեթոտով կարելի չէ զեկավարել. բայց այն տեղերն ալ մեքենաներու արագութիւնն ու աշխատանքի վերատեսուէններու աջալուրջ հսկողութիւնը պակաս բան չեն թողուր:

ԲԱՆՈՒՈՐԻ ԵՒ ՄԵՔԵՆԱՅԻ ՄԻՋԵԻ ՄՂՈՒՈՂ ԿՈՒԻԸ

Կապիտալիստի ու վարձու բանուորի միջեւ մղուող կռիւը ճիշդ կապիտալիստական յարաբերութեանց հետ է որ կը սկսի: Ան կատարաբար կը շարունակուի մասնաֆակտուրային ժամանակաշրջանի ընթացքին: Բայց այն օրէն, երբ մեքենաները երեւան եկան, բանուորը սկսաւ կռուիլ բուն իսկ աշխատանքի միջոցներուն դէմ, կապիտալի դոյութեան նիւթական եղանակին դէմ:

17-րդ դարուն գրեթէ ամբողջ Եւրոպան ունեցաւ բանուորական խռովութիւններ: Հողմաշարժ սղոցարան մը, որ Լոնդոնի մօտերը շինուած էր, հրոյ ճարակ դարձաւ: 1758 թուին բուրգ խուզող առաջին մեքենան որ ջուրի ուժով կը դառնար, կտոր փշուր եղաւ բանուորներու ձեռքով: Նման արարքներ կրկնուեցան շատ տեղեր,

մինչև որ բանուորներն իրենց յարձակումները փոխադրեցին մեքե- նաներէն՝ ուղղակի կապիտալիստական շահագործման ընդհանրական ձևին վրայ:

Անգործներու պահեստի բանակը.—

Մեքենաներու երեւումը առաջին իսկ օրէն երբ պակեցուց մկանային աշխատուժի կարելորութիւնը, երբ կիններն ու երեխա- ները քաշուեցան գործարաններէն ներս, այն օրէն արդէն սկսան կազմուել անգործներու դուռերը. մեքենաներու զարգացումն ու կատարելագործման ընթացքը բազմաճաղար բանուորներ նետեց աշ- խատաշուկան եւ ատով կազմուեցաւ անգործներու պահեստի բանա- կը, կապիտալիստական շահագործման տրամադրելի այդ բազմաթիւ աշխատուժերու լեզէոնը: Անգործներու այս պահեստի բանակը այն- քան անհրաժեշտ էր կապիտալիստական շահագործման համար, որ- քան գինուորներու պատրաստի բանակն անհրաժեշտ է, երկրի պաշտ- պանութեան համար: Եւ այս երկու տեսակի բանակներու ծախսը պետութիւնը կը հոգայ տիրող դասակարգի շահուն համար. թէեւ պէտք է ըսել, որ առաջին տեսակի բանակին՝ անգործներու պահես- տի բանակին ծախսերը մեծ մասով կը հոգացուին եկեղեցիներու կող- մէ, բարեսիրական ընկերութեանց կողմէ, որոնց գանձարանները կապիտալիստը գիտէ թէ ինչպէս կարելի է լեցնել: Անգործներու պահեստի բանակը մշտական սպառնալիք է գործող բանուորներու բանակին. գործող բանուորները երբ դիմադրութիւն փորձեն, աշ- խատալարձի յաւելում պահանջեն, կապիտալիստը կրնայ դանոնք դուրս նետել եւ անգործներու բանակէն ներս առնել չլուներն ու ոչխարամիտները:

Թափառաշրջիկ բազմութիւնը.—

Հիմա վեր առնենք ժողովրդական այն խաւը, որու ծագումը գիւղական է, բայց զբաղումը մեծ մասամբ արդիւնաբերական: Անի- կա կը կազմէ կապիտալի թեթեւ հեծելագորքը, զոր ան իր պահան- ջին համաձայն՝ երբեմն կը շարտէ այս կէտին՝ երբեմն միւս կէտին վրայ: Այս բազմութեան գործը թափառաշրջիկի աշխատանք է. շի- նարարական ու ցամաքուրդի շրջանակներուն մէջ, աշխատանք ա- ղիւսագործութեան, ճահիճներ ցամքեցնելու մէջ, աշխատանք՝ եր- կաթուղազծերու վրայ, եւայլն: Այս բազմութիւնը իրրեւ համաճա- րակի սերմնացան իր մտած տեղերը կը տարածէ ծաղկախտ, տիֆ, գոլբրա եւայլն: Կապիտալի նշանաւոր ծախսեր պահանջող ձեռնար- կութիւններու մէջ, ձեռնարկուն մեծ մասամբ ինքն է, որ իր բա-

նակին կը մատակարարէ փայտէ խրճիթներ, որոնք միբրոպներու բոյներ կը դառնան մի քանի օրէն, որովհետեւ առողջապահական տարրական օրէնքները յարգուած չեն հոն: Այս յանկարծակեբա զիւ- ղերը մեր պարոն կապալառուի համար շահաբեր աղբիւրներ կը դառ- նան: Նայած թէ փայտեայ խրճիթը քանի որջ կը պարունակէ, ան հոն բնակող մարդամուկերէն կը դանձէ համապատասխան դումար:

Նուազ վատթար չէ նաեւ վիճակը Փարմային այն բանուորնե- րուն, որոնք իրենց վերմակն ու բարձր շալկած խմբովին կը թափա- ոին հոս հոն, բամպակ քաղելու, պտուղ հաւաքելու եւ այլ աշխա- տանքներու համար. քաղաքի մէջ անոնց աշխատուժը գնող չկայ, գիւղէ գիւղ կը թափառին գնորդ գտնելու համար. աշխատանքի ա- զատ դերիները... Ո՞վ կը մտածէ անոնց առողջութեան ու ընտա- նիքներուն բարելաւ պայմաններ ապահովելու մասին. ո՞չ ոք, նոյն- իսկ իրենք՝ բանուորները չեն մտածեր, ինչ որ կը մտածեն կեանք մը քաշքշին է, հասարակ սննդառում մը:

Ծառայողները.— Ասոնք բանուորներ չեն, ասոնց ծախածը աշխատուժ չէ, մկանային ուժ չէ. մտային ուժ է: Ասոնք զպրոց են գացեր, վկայական են ստացեր ու կապիտալիստը դանոնք կը վար- ձատրէ իրենց ծառայութեան համար: Ասոնք գրասենեակի պաշտօն- եաներ չեն միայն. ասոնց հետ կ'երթան ուսուցիչները, զբաղէտնե- րը, թերթի խմբագիրները, տնտեսագէտները, գիտունները, փիլի- սոփաներն ու բանաստեղծները, բոլոր անոնք, որոնք ուղղակի կը ծառայեն տիրող դասակարգին եւ կամ անուղղակիօրէն օգտակար կ'ըլլան անոր՝ մտային հաճոյքի կամ շահու տեսակէտէն: Ասոնց տրուած է հասարակական մտածողութեան ղեկը վարելու գործը, ա- սոնց տրուած է հոգիներու ստրկացման վերատեսչութիւնն ու ա- սաջնորդութիւնը:

Կապիտալիստ դասակարգի ծագումը.—

Արդիւնաբերական կապիտալիստի ծագումը նոյն աստիճանա- կանութեամբ չէր եղած, ինչ որ եղած էր ֆարմըրինը: Անկասկած քանի մը համբարական մանր վարպետներ եւ աւելի մեծաթիւ մանր արհեստաւորներ ու նոյնիսկ վարձու բանուորներ կը դառնային մանր կապիտալիստներ եւ վարձու աշխատանքի աստիճանաբար ընդարձակ- ուող շահագործման ու համապատասխան կուտակման շնորհիւ կը դառնային կապիտալիստներ: 15-րդ դարու վերջը մեծ յայտնագոր- ծումներու շնորհիւ երբ կեանքը փոխուեցաւ, երբ համաշխարհային շուկայի առեւտրական պահանջները բազմացան, հին մեթոտի դան- զաղ ընթացքը արդիւնաբերութեան մէջ՝ չէր համապատասխաներ այդ

պահանջումներուն: Բայց միջին դարը փառանգութիւն էր ձգեր կապիտալի երկու տարրեր ձեւեր, որոնք կը հասունանային հասարակական-տնտեսական տարրեր ձեւակերպումներու մէջ եւ արտադրութեան կապիտալիստական եղանակի դարաշրջանէն առաջ կը համարուէին կապիտալ: ասոնք էին՝ վաշխառուական կապիտալը եւ առետրական կապիտալը: Ասոնք ձեռք ձեռքի տուած էին ատեն մը եւ իւրացուցեր էին հասարակական հարստութիւնը, թէեւ ո՛չ մէկ օրէնք անոնց չէր յանձնած սեփականութեան այդ իրաւունքը: Սեփականութեան այս իրաւունքը իրականութիւն դարձաւ կապիտալի քաջած տոկոսներու շնորհիւ, եւ գարմանալի չէր, որ Եւրոպայի օրէնսդիրները կ'ուզէին այդ ընթացքը խափանել վաշխառութիւնը չղթաչող օրէնքներով:

Վաշխառութեան ու առետուրի միջոցով կազմուած դրամական կապիտալի արդիւնաբերական կապիտալ դառնալուն արդելք էին Ֆէոդալական իրաւակարգը դիւղին մէջ ու համբարական իրաւակարգը՝ քաղաքներուն մէջ: Այս սահմանափակումները չբացան, երբ Ֆէոդալական զինախումբերը լուծուեցան եւ զիւղական ժողովուրդը սեփականազրկուեցաւ եւ մասամբ ալ զիւղէն վտարուեցաւ: Նոր մանուֆակտուրան հաստատուեցաւ ծովային արտասահմանեան նաւահանդիստներուն մէջ, կամ թէ զիւղական երկրամասի այն կէտերուն վրայ, որոնք հին քաղաքային կեանքի ու անոր հետ համբարական իրաւակարգի վերհակողութենէն դուրս էին: Այս պատճառով Անգլիոյ մէջ առաջ եկաւ այն կռիւը, զոր համբարական-կոռպերաքիւ քաղաքները կը մղէին արդիւնաբերական նոր գործատեղիներու դէմ: Հին ձեւն էր որ կը դաւէր նորին դէմ:

Ամերիկայի մէջ ոսկիի եւ արծաթի հանքերու շահագործումը, բնիկ ազգարնակչութեան ստրկացումը, Արեւելեան Հնդկաստանի նոր սկսող նուաճումն ու կողոպուտը, ամերիկեան սեւամորթներու առուծախը, ասոնք կապիտալիստական արտադրութեան դարազլխի արշալոյսը բացին: Ասոնց յաջորդեցին եւրոպական ազգերու առետուրական պատերազմները, որոնց թատերավայրը դարձաւ ամբողջ երկրագունդը: Կապիտալի կուտակման սկզբնական շրջանին աւելի կամ թէ պակաս կանոնաւոր յաջորդականութեամբ՝ զլխաւոր երկիրներն եղան Սպանիա, Փորտուգալ, Հոլանտա, Ֆրանսա եւ Անգլիա: 17-րդ դարու վերջերը կապիտալի կուտակման հետ համընթաց յառաջացող իրողութիւնները սխտեմատիկօրէն միանալով՝ Անգլիոյ մէջ հանդէս եկան իբրեւ դադութեան սխտէմ, պետական պարտքերու սխտէմ, հարկային սխտէմ ու մաքսային հովանաւորման սխտէմ: Այս մեթոտները մասամբ խարսխուած էին ամենակոպիտ բրտնութեան վրայ, ինչպէս, օրինակ, դադութային սխտէմը: Եւ ասոնք

բոլորն ալ կ'օգտագործէին պետական իշխանութիւնը, հասարակութեան համակերպողացուած ու կազմակերպուած բռնութիւնը, որպէս զի արտադրութեան Ֆէոդալական ձեւէն կապիտալիստական ձեւի փոխանցումը ջերմոցային եղանակով շտտպեցնեն: Բռնութիւնը մանկաբարձն էր ամէն մէկ հին հասարակութեան, որ յղի է մէկ նոր հասարակութեամբ: Ան, բռնութիւնը անտեսական ուժ մըն է:

W. Howit — մարդ մը, որ քրիստոնէութիւնը մասնազիտութիւն է ըրեր իրեն համար, քրիստոնէական գաղութային սխտէմի մասին կը գրէ. — «Այսպէս կոչուած քրիստոնէական ցեղերու կատարած բարբարոսութիւններն ու անդամ անդթութիւնները աշխարհին ամէն մէկ մարդին մէջ եւ ամէն մէկ ժողովուրդի դէմ, զորս կըցեր են հպատակեցնել, իրենց նմանը շունին համաշխարհային պատմութեան որեւէ մէկ դարաշրջանի մէջ, որեւէ մէկ մարդացեղի մէջ, որքան ալ որ այդ ցեղը վայրենի ու անկիրթ, անկարեկից ու անամօթ ըլլար:»

Գաղութային սխտէմը անսովոր արագութեամբ կը հասունցընէր առետուրն ու նաւազնացութիւնը: Մենատիրական ընկերութիւնները կապիտալի համակերպողացման հզօր լծակներն էին: Գաղութը նորածագ մանուֆակտուրաներու համար կ'ապահովէր վաճարման շուկան ու շուկայի մենաշնորհի միջոցով՝ սաստկացաւ կուտակումը: Այն գանձը, որ եւրոպայէն դուրս ձեռք կը բերուէր ուղղակի յափշտակութեան, ստրկացման, կողոպուտի ու սպանութեան միջոցով, ուսնացած կերպով կը վերագոռնար մայր երկիր ու հոն կը դառնար կապիտալ: Ասանկով արդիւնաբերութիւնը իր գերիշխանութիւնը հաստատեց եւ իր պոչին կապեց առետուրական գերիշխանութիւնը: Գաղութային սխտէմը այն «օտար Աստուածն» էր, որ բազմեցաւ տաճարի սեղանին վրայ Եւրոպայի հին աստուածներու կողքին եւ գեղեցիկ օր մը բոլորն ալ մէկ հարուածով տապալեց եւ մարդկութեան միակ նպատակն հռչակեց շահագործումը:

Հանրային վարկի, այսինքն պետական պարտքերու սխտէմը, ատեն մը տարածուեցաւ ամբողջ Եւրոպայի մէջ: Գաղութային սխտէմը իր ծովային առետուրի եւ իր առետուրական պատերազմներու հետ միասին իբրեւ ջերմոց կը ծառայէր հանրային վարկի սխտէմի համար: Պետական պարտքը իր կնիքը կը դրոշմէ կապիտալիստական դարաշրջանի վրայ: Այսօր, այսպէս կոչուած ազգային հարստութեան միակ մասը, որ իրապէս կը կազմէ արդի ժողովուրդներու ընդհանուր ստացուածքը, անոր պետական պարտքն է: Ուստի կըրնանք ըսել թէ հետևողական է արդի այն վարդապետութիւնը, թէ ժողովուրդ մը այնքան հարուստ կ'ըլլայ, որքան աւելի շատ պարտ-

քերով բեռնաւորուած կ'ըլլայ: Հանրային վարկը կը դառնայ կապիտալի հաւատամքը:

Պետական ամէն մէկ փոխառութիւն երկինքէն ինկած պատառի նման կապիտալին ծառայութիւն կը մատուցանէ, — պետական պարտքն է որ ծնած է բաժնետիրական ընկերութիւնները, ամէն տեսակի արժեթղթերու առևտուրը, աժիտաժը (գրամաշահութիւն), մէկ խօսքով սակարանի խազը եւ արգի հսկայ դրամատուններու հիմնարկութիւնը:

Իրենց ծնունդ առնելու ժամանակէն խոշոր դրամատունները, որոնք պննուած էին ազգային տխրոսներով, մասնաւոր շարաշահ ընկերութիւններ էին սոսկ, որոնք կ'օժանդակէին կառավարութեանց եւ ստացած արտօնութեանց շնորհիւ ի վիճակի կ'ըլլային վարկով դրամ տալ անոնց: Դրամատուններու բաժնետոմսերու յաջորդական բարձրացումը անսխալ չափանիշն է պետական պարտքի կուտակման: Դրամատուններու լիակատար փթթումը սկսած է անդլիական դրամատան հիմնադրութենէն 1694 թուականէն, այսինքն այն ատեն՝ երբ ան կառավարութեան վարկով դրամ տուաւ հարիւրին 8 տոկոսով: Անդլիական դրամատունը այսպիսով կամաց կամաց դարձաւ երկրի մետաղազանձերու տէրն ու տնօրէնը եւ ամբողջ առևտրային վարկի ձողութեան կեդրոնը: Այն ատեն երբ Անգլիոյ մէջ այլեւս վճուակները խարոյկներուն վրայ չէին վառեր, այս անգամ սկսան դրամատան տոմսերը կեղծողները կախել:

Պետական պարտքերու հետ յառաջ եկաւ միջազգային վարկային սխտէժ մը, որ յաճախ նախակգրնական կապիտալի կուտակման թագուն աղբիւրներէն մէկը կը հանդիսանայ այս կամ այն ժողովուրդի մէջ:

Որովհետեւ պետական պարտքը կռթնած է պետական եկամուտներու վրայ, որոնք պէտք է գոցեն տարեկան տոկոսային եւ այլ վճարումները, ապա արդի հարկային սխտէժը դարձաւ այդ վճարումներու միակ միջոցը:

Միւս կողմէ մաքսային հովանաւորման սխտէժը, որ արհեստական միջոց մըն էր գործարանատէրերուն համար, եկաւ սեփականազրկել անկախ արհեստաւորները, եկաւ ազգային արտադրամիջոցներն ու կենսամիջոցները ենթարկել կապիտալի վերհսկողութեան: Եւրոպական պետութիւնները զիրար կը բզբտէին ատեն մը՝ մաքսային արտօնազրկերը նուիրականացնելու համար:

Գաղութային սխտէժ, պետական պարտքեր, հարկերու ծանրութիւն, առևտրական պատերազմներ եւ այլն, ասոնք վիթխարի համեմատութեամբ անեցան խոշոր արդիւնաբերութեան մանկութեան ատեն:

Միջնադարեան Ֆէոդալիզմը իր չափահասութեան հասնելէն վերջ իր ծոցէն ծնած էին իր գոյութիւնը բացասող այնպիսի տարրեր, որոնց դիմադրելը անկարելի էր: Կապիտալիստ դասակարգը, որ ծրներ, մեծցեր ու երիտասարդական ուժ էր ստացեր, որ աւելի յառաջգիմական էր քան ճորտատիրականը, անխուսափելիօրէն կոչուած էր տիրող դասակարգ դառնալ եւ իրապէս ան դրաւեց իր տիրապետութեան աթոռը, արհամարհելով հինի նախատիպ մնացորդները, որոնք հոս ու հոն իրենց գոյութիւնը կը քաշքշեն տակաւին եւ սակայն, ուշ կամ կանուխ դատապարտուած են չբացման:

Կապիտալիստական Փարմըրներու ծագումը.—

Երբ մենք քննեցինք թուրքներու պէս ազատ պրոլետարներու բռնի ստեղծումը, այն արիւնհալի իրաւակարգը, որ դանոնք կը դարձնէ վարձու բանուորներ, վարչական ու պետական այն կեղտոտ գործունէութիւնը, որ շահագործման աստիճանին կը բարձրացնէ կապիտալի կուտակումը ոստիկանական միջոցներով, հարցում մը կը ծնի ինքնին, — զիւղական ժողովուրդի սեփականազրկումը, որ խոշոր հողատիրութեան մայրն է, ի՞նչպէս յառաջացաւ:

Ինչ կը վերաբերի Փարմըրի ծագմանը, մենք կրնանք այսպէս ըսած, ձեռքով շօշափելով հետախուզել զայն, որովհետեւ անոր ծագումը դանդաղ, բազմաթիւ դարեր շարունակ թաւալուող պրոցէս մըն է: Ճորտերն իրենք՝ մէկ կողմ թողած զեռ ազատ մանր հողատէր զիւղացիներն ալ, շատ տարրեր գոյքային յարաբերութեան մէջ էին, ուստի կրնանք եղբակցանել, թէ անտեսական շատ տարրեր պարագաներու տակ անոնք ազատագրուեցան:

Անգլիոյ մէջ Փարմըրի առաջին ձեւը ճորտ bailiff-ն է — կալուածատիրոջ անտեսութեան կառավարիչը: 14-րդ դարու երկրորդ կիսուն՝ այս ձեւի ճորտին կը յաջորդէ Փարմըրը, որուն կալուածատէրը կու տայ սերմնցու, անասուն եւ զիւղատնտեսական գործիքներ: Այս Փարմըրի վիճակը շատ չի տարբերի զիւղացիին վիճակէն: Տարբերութիւնն այն է, որ այս մեր Փարմըրը աւելի շատ թիւով վարձու աշխատանք կը շահագործէ եւ ատով կը դառնայ metayer — վարձահողագործ: Հողագործական կապիտալի մասը ինքը կը գնէ, միւսը՝ հողատէրը: Երկուքը ընդհանուր արդիւնքը կը բաժնեն իրենց կնքած պայմանազրկով որոշուած համեմատութեամբ: Այս ձեւը Անգլիոյ մէջ արագօրէն կը չքանայ, տեղի տալով իսկական Փարմըրին, որ իր սեփական կապիտալը կը մեծցնէ, վարձու բանուորներ կ'աշխատցնէ եւ յաւելիալ արդիւնքի մէկ մասը դրամով կամ թէ սեփական ընարդիւնքով (in natura) կը վճարէ հողատիրոջ՝ իբրեւ հողային ռենտա — հողային վարձագին:

15-րդ դարուն քանի դեռ անկախ զիւղացին ու հողագործական մշակը, որ վարձու ծառայութեան կողքին նոյն ատենը կը պարտապէսին նաև սեփական տնտեսութեամբ, իրենց աշխատանքով ինքզինքնին կը հարստացնէին. ֆարմըրի վիճակը ու անոր արտադրութեան դաշտի վիճակը հաւասարապէս միջակ աստիճանի վրայ կը մնային: 15-րդ դարու վերջին երրորդամասին մէջտեղ եկած երկրագործական յեղափոխութիւնը, որ շարունակուեցաւ գրեթէ ամբողջ 16-րդ դարուն, ֆարմըրներն հարստացուց այնքան արագ, որքան արագ աղքատացուց գիւղական ժողովուրդը: Համայնական արօտավայրերու, ինչպէս նաև ուրիշներու արօտավայրերու զանազան միջոցներով բռնազբաւուածը, ֆարմըրին հնարաւորութիւն տուին, գրեթէ առանց ծախսի, բազմացնել իր անասուններու թիւը եւ միեւնոյն ատեն հարուստ պարարտամիջոց հայթայթելու՝ իր հողերը մշակելու համար:

16-րդ դարուն սոսոր վրայ աւելցաւ ուրիշ վճռական ազդեցութիւն գործող հանգամանք մը: Այն ատենները վարձակալման պայմանագիրները երկար ժամկէտներ ունէին, յաճախ 99 տարի տեւող ժամկէտներ: Ազնիւ մետաղներու, ուրեմն եւ գրամի արժէքի շարունակական անկումը ոսկի հակիթներ կ'ածէր ֆարմըրներու համար: Այս անկումը, ինչպէս եւ աշխատաւորներու աղքատացման ու բազմացման հանգամանքը, հեղհեղէ վար կը ձգէին աշխատավարձի գինը: Աժան աշխատավարձը ֆարմըրի շահոյթի մէկ մասն էր, միւս մասն էր հացահատիկի, բորդի, միսի, երկրագործական բոլոր արտադրութիւններու գիններու յարատեւ բարձրացումը. կար նաև շահոյթի ուրիշ բաժին մըն ալ, այն էր՝ ֆարմըրը իր հողային ռէնտան (վարձագինը) կը վճարէր պայմանագրուած հնացած դրամարժէքով. ասոնք բոլորը միասնաբար՝ կամ առանձին առանձին, կու դային ուռճացնելու ֆարմըրի դրամական կապիտալը, որուն համար ան քրտինքի մէկ կաթիլ անգամ թափելու կարիք չունէր: Ահա թէ ինչպէս ֆարմըրը երթալով կը հարստանար թէ իր վարձու բանուորներու եւ թէ իր հողատիրոջ հաշտոյն: Ուստի դրամանալու բան չկայ, որ Անգլիան 16-րդ դարու վերջը ունեցաւ, այն ատենուայ չափանիշով՝ հարուստ «կապիտալիստ ֆարմըրներու» գասակարգ մը:

Երկրագործական յեղափոխութեան յետադարձ ներգործութիւնը արդիւնաբերութեան վրայ. —

Գիւղական բնակչութիւնը երբ ցնցումի ենթարկուեցաւ, երբ խոշոր հողատիրութիւնը ուժեղացաւ եւ խեղճուկ գիւղացիները սեփականագրկուելով գիւղէն հեռացան, անոնք խտացուցին քաղաքային արդիւնաբերական պրոյեկտաբառի շարքերը: Ի՞նչ եղաւ, սակայն, անոնց մշակած հողը: Այդ հողը չնայած մշակողներու նուազած թի-

ւին, առաջուան պէս՝ եթէ ոչ աւելի արդիւնք կու տար նորէն: Ի՞նչ պէտք...: Նոր մեթոտներ որդեգրուած էին հիներուն տեղ. գործարանային դրութեան նման աշխատանքի բաժանում, համեմատաբար աւելի զարգացած հողագործական գործիքներ, մշակոյթի աւելի խոշոր համագործակցութեան, համակեդրոնացման սխաւէմ մը, որուն ներքեւ աշխատաւորները բռնադատուած էին աւելի լարուած աշխատանք տանելու քան որ էին առաջները: Հողագուրկ ու ազատ արձակուած մշակները ասանկով դարձան փոփոխուն կապիտալի նիւթական տարրեր: Գիւղացին, որուն ձեռքն ու ոտքը հողի սեփականութեան իրաւունքէն կտրուած էին, իր սնունդի միջոցները պարտէր ստանալ իր տիրոջմէն՝ աշխատավարձի ձեւով: Սկիզբները գիւղացին արտադրուած հում նիւթին մէջ բաժնետէրի իրաւունք ունէր, այժմ արտադրուած հում նիւթը իր տարազագործուելիք կարելիութիւններով կը պատկանէր իր տիրոջ. այդ կը նշանակէ՝ անիկա դարձաւ հաստատուն կապիտալի մէկ տարրը:

Այստեղ ուրիշ կարեւոր կէտ մըն ալ կայ:

Այն իրադարձութիւնները, որոնք մանր գիւղացիները վարձու բանուորները կը դարձնեն եւ անոնց կենսամիջոցներն ու աշխատամիջոցները՝ կապիտալի նիւթական տարրերը կը շինեն, միեւնոյն ատեն անոնք կապիտալի համար նոր շուկայ կը ստեղծեն: Առաջ գիւղացիի ընտանիքը կ'արտադրէր եւ կը վերամշակէր այն կենսամիջոցներն ու հումքերը, որոնցմէ մեծ մասը ինքը կը սպառէր: Այդ կենսամիջոցներն ու հումքերը հիմա դարձեր են ապրանքներ. խոշոր ֆարմըրը զանոնք կը ծախէ մանուֆակտուրայի տէրերուն: Մանուածքը, կտաւը, բրդեղէն կոշտ կտորները, իրեր՝ որոնց հումքերը կը գտնուէին ամէն մէկ գիւղացիական ընտանիքի տնօրինութեան տակ եւ անոր ձեռքով որոշ ձեւի կը մտնէին սեփական գործածութեան համար, հիմա կը դառնան ապրանքներ, որոնց սպառման շուկան ճիշդ գիւղական շրջաններն են: Գիւղացի մշակը այլևս կտաւ չի կրնար շինել իրեն համար, ինք միայն դրամ պիտի ճարէ որպէսզի կտաւ զնէ:

Հոս կը տեսնենք թէ միմիայն խոշոր արդիւնաբերութիւնն է, որ մեքենաներու հետ հաստատուն պատուանդան կու տայ կապիտալիստական երկրագործութեան, արմատապէս կը սեփականագրկէ գիւղական ժողովուրդի վիթխարի մեծամասնութիւնը եւ կ'աւարտէ այն անջատումը, որ կը կատարուի հողագործութեան ու տնային գիւղական արհեստագործութեան միջեւ, եւ պոկելով կը հանէ վերջինին արմատները: Հետեւաբար միմիայն խոշոր արդիւնաբերութիւնն է, որ ամբողջ շուկան կը նուաճէ արդիւնաբերական կապիտալի համար:

Երկրագործութեան շրջանակին մէջ խոշոր արդիւնաբերութիւնը կը գործէ յեղափոխական եղանակով, ու այս այն իմաստով, որ ան կ'ոչնչացնէ հին հասարակութեան հիմնախարխիւր, «չինականը», եւ անոր տեղը կը դնէ վարձու բանուորը: Ինչպէս որ մանուֆակտուրայի մէջ էր, այնպէս ալ երկրագործութեան մէջ արտադրութեան պրոցէսի կապիտալիստական փոխակերպութիւնը միաժամանակ երեւան կու գայ իրրեւ արտադրողներու մարտիրոսագրութիւն, աշխատանքի գործիքը երեւան կու գայ բանուորը լուծի տակ ընկճելու, շահագործելու ու աղքատացնելու իրրեւ միջոց, իսկ աշխատանքի պրոցէսի հասարակական համակցութիւնը երեւան կու գայ, իրրեւ բանուորի անհատական կենսունակութեան, ազատութեան ու ինքնակալութեան կազմակերպուած ճնշում: Գիւղական բանուորներու՝ աւելի ընդարձակ տարածութեան վրայ ցրուած ըլլալու հանգամանքը միեւնոյն ատեն կը կտարէ անոնց ղիմագրութեան ուժը, մինչդեռ համակերպողները կ'աւելցնէ քաղաքային բանուորներու ղիմագրական ուժը: Ժամանակակից կապիտալիստական հողագործութեան մէջ, ինչպէս եւ ժամանակակից արդիւնաբերութեան մէջ, աշխատանքի արտադրողական ուժի բարձրացումը եւ աւելի մեծ քանակով անոր գործածութիւնը ձեռք կը բերուի իրեն՝ բանուորական ուժի քայքայման եւ հիւժման գինով: Բացի այդ՝ կապիտալիստական հողագործութեան ամէն մէկ յառաջդիմութիւն յառաջդիմութիւն է ոչ միայն բանուորին ուժն ու հողին թալանելու արուեստին, այլև հողը թալանելու արուեստին: Հետեւաբար կապիտալիստական արտադրութիւնը, արտադրութեան հասարակական պրոցէսի տեխնիկան ու անոր յարակից բաղադրամասերը կը զարգացնէ միայն այնպիսի ճանապարհով, որ ան միեւնոյն ատեն կը խորտակէ ամէն մէկ հարստութեան աղբիւր հանդիսացող տկերը, այսինքն՝ թէ հողը եւ թէ բանուորը: Հողը չի կրնար ընդգլխիլ իր հարստահարիչին դէմ, բանուորը՝ կրնայ, բայց գիւղացի ընչազուրկ բանուորը պատահութիւն չունի մըլտապէս յարարելու քաղաքի բանուորին հետ, մինչդեռ իր տէրը՝ հողատէր կապիտալիստը, առեւտուրի եւ շահակցական գիծով կապուած է քաղաքի խոշոր արդիւնաբերութեան տիրացած կապիտալիստին հետ: Ծահագործող գասակարգերու միջեւ գոյութիւն ունեցող մրցումը անոնց հողեկան դաշնակցութիւնը չի խախտեր: Գիւղի ու քաղաքի բանուորութեան մէջ մրցումի խնդիր չկայ, բայց միեւնոյն ատեն՝ հողեկան համակցուած դաշնակցութիւն ալ գոյութիւն չունի. ահա թէ ինչո՞ւ կապիտալիստ գասակարգը աներկիւղ կը շարունակէ թէ՛ բնութեան եւ թէ՛ բանուորութեան կայունացնելուն մէջ իր շահագործման գործը:

ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՊՐՈՑԷՍԸ

Որեւէ դրամագումար՝ երբ աշխատուժը արտադրամիջոցներուն կը միացնէ նպատակադրուած ապրանք մը արտադրելու համար, աւիկա առաջին գործն է, որ ան կ'ընէ իր տիրոջ միջոցով՝ եւ ատով կը կոչուի կապիտալ: Յիշեալ գործը կը կատարուի շուկային մէջ, շրջանառութեան ասպարէզին վրայ: Անոր երկրորդ գործը, արտադրութեան պրոցէսը, վերջացած կը նկատուի, երբ արտադրամիջոցները կը փոխուին ապրանքներու, որոնց արժէքը շատ աւելի է քան իրենց բաղադրիչ մասերու արժէքի գումարը, այսինքն՝ անոնք կը պարունակեն սկզբնապէս կանխափճարուած կապիտալը եւ անոր վրայ բարդուած յաւելեալ արժէքը: Այս ապրանքները յետոյ նորէն նետուելու են շրջանառութեան ասպարէզը: Ապրանքները պէտք է ծախել, անոնց արժէքը դրամի վերածել, այդ դրամը դարձեալ կապիտալի վերածել ու այսպէս ամբողջացնելով իրարու կցել նոյն օղակները: Ծարունակ միեւնոյն յաջորդական փուլերէն անցնող այս շրջապտոյտը կը կազմէ կապիտալի շրջանառութիւնը:

Կապիտալի կուտակման պրոցէսը վերլուծելու ատեն կարելի է ենթադրել երեք բաներ. առաջին՝ որ կապիտալի շրջանառութեան պրոցէսը կը կատարուի բնականոն եղանակով. երկրորդ՝ որ կապիտալիստական արտադրողը ամբողջ յաւելեալ արժէքի սեփականատէրն է. երրորդ՝ որ ան սկզբնական դրամագումարը կերպով մը ունեցեր է, ինչպէս թէ հողը, թէ հրաշքով, ժառանգութեան խողովակով բանք՝ թէ աստուածային պարզեւատրութեամբ: Այս ենթադրութիւններով պէտք է առաջնորդուել, որովհետեւ մեր դուռ վերլուծման փորձը կը պահանջէ մէկ կողմ դնել բոլոր այն երեւոյթները, որոնք կը ծածկեն կապիտալի կուտակման մեքենակալնութեան ներքին խաղը:

Պարզ վերարտադրութիւն .—

Արտադրութեան պրոցէսը հասարակական ինչ ձև ալ որ ունենայ, ան պէտք է շարունակական ըլլայ կամ միշտ միեւնոյն փուլերէն անցնի: Ինչպէս որ հասարակութիւն մը չի կրնար սպառելէ դադրիլ, այնպէս ալ ան չի կրնար արտադրելէ դադրիլ: Հետեւաբար իր մշտատեւ կապակցութեամբ ու իր նորոգման մշտատեւ հոսանքին մէջ երբ կը քննենք այդ խնդիրը, կը տեսնենք, որ հասարակական արտադրութեան ամէն մէկ պրոցէս միեւնոյն ատեն վերարտադրութեան պրոցէս է:

Արտադրութեան պայմանները միաժամանակ վերարտադրութեան պայմաններն ալ են:

Եթէ արտադրութիւնը կապիտալիստական ձեւ ունի, վերարտադրութիւնն ալ նոյն ձեւն ունի: Ինչպէս որ արտադրութեան կապիտալիստական եղանակի ժամանակ աշխատանքի պրոցէսը կը ներկայանայ լոկ իրբեւ մէկ միջոց՝ արժէքի աճեցման պրոցէսի համար, այնպէս ալ վերարտադրութիւնը միմիայն մէկ միջոց է՝ կանխավճարուած արժէքն իրբեւ կապիտալ, այսինքն իրբեւ աճող արժէք, վերարտադրելու համար:

Յաւելեալ արժէքը կապիտալէն ծագող եկամուտի ձեւ կ'ընդունի: Եթէ այս եկամուտը կապիտալիստը ամբողջապէս սպառէ, իր շարունակած գործը պարզ վերարտադրութիւն մը կ'ըլլայ: Բայց կապիտալիստը այնքան անխոհեմ չէ. անիկա իր եկամուտը շուսթօրէն չի մոխեր, եթէ կ'ուզէ մրցման մէջ ապահով դիրք գրաւել:

Հարուստներ կան, որոնք գործարան չունին, որոնք ուրիշի աշխատանքի արդիւնքները կը սպառեն ապրանքադնման միջոցով: Եթէ անոնք եկամուտ չունենան, շուտով կ'աղքատանան: Արդի հասարակակարգի մէջ հարստութիւնը ուժ ունի ուրիշի աշխատանքի միջոցով վերարտադրուելու: Հարստութիւնը, աշխատանքի նման ու աշխատանքի միջոցով, տարուան մէջ կու տայ պտուղ մը, որ միշտ կը սպառի եւ միշտ կը նորոգուի: Հարուստը չի տեսներ ու չի գիտեր թէ որոնք կը գործեն իրեն համար. ինք եկամուտ ունի ու եկամուտը կու գայ կապիտալէն. ան կրնայ երդում ընել, որ ինք ուրիշը չի շահագործեր: Բայց թէ շահագործումը տեղի կ'ունենայ անուղղակի կերպով, այդ չէ հարցը, որովհետեւ ինք ատոր մէջ մեղաւոր չէ:

Արտադրութեան պրոցէսը կը սկսի այն ատեն՝ երբ կապիտալիստը բանուորի աշխատութիւնը որոշ ժամանակի մը համար կը գնէ. եւ այս երակէտը միշտ կը նորոգուի, երբ աշխատանքի ծախուելու ժամկէտը կը վերջանայ եւ ասով ալ կը լրանայ արտադրութեան մէկ որոշ ժամանակաշրջան, շարաթ, ամիս եւ այլն: Բայց բանուորի աշխատավարձը չի վճարուիր նախքան անոր կողմէ աշխատութիւն սպառելը. աշխատավարձը կը վճարուի այն ատեն, երբ անոր աշխատութիւնը մտեր է ապրանքներու մէջ եւ ատով բանուորը վճարեք է թէ իր աշխատավարձի արժէքը եւ թէ միեւնոյն ատեն ստեղծեր է յաւելեալ արժէք: Ասով մենք կը տեսնենք, որ բանուորի ձեռքով մշտապէս վերարտադրուող արդիւնքի մէկ մասն է, որ շարունակ ետ հոսելով՝ բանուորին կը տրուի աշխատավարձի ձեւով: Կապիտալիստը ապրանքային արժէքը բանուորին կը վճարէ դրամով, բայց այս դրամը աշխատարդիւնքի փոխակերպուած ձեւն է միայն: Երբ բանուորը արտադրամիջոցներու մէկ մասը արդիւնքի կը վերածէ, անոր առաջուայ արդիւնքի մէկ մասն ալ դարձեալ դրամի կը վերածուի: Անցեալ շարժուայ կամ թէ վերջին կէս տարուայ անոր աշխատանքովն է, որ

կը վճարուի այսօրուան կամ յառաջիկայ կէս տարուան անոր աշխատանքը: Կապիտալիստներու դասակարգը միշտ դրամաձեւով չէքեր կու տայ բանուոր դասակարգին՝ բանուորին արտադրած ու կապիտալիստին իւրացուցած արդիւնքի մէկ մասին համար: Այս չէքերը բանուորը նոյնպէս միշտ կը վերադարձնէ կապիտալիստներու դասակարգին եւ փոխարէնը կը ստանայ իր սեփական արդիւնքի՝ ճիշդ իրեն բաժին ինկած մասը: Ասիկա կապիտալիստական գործարքի անկատելի մէկ խաղն է. անկատելի՝ որովհետեւ արդիւնքի ապրանքաձեւն ու ապրանքի դրամաձեւը այդ խաղը կը վարագուրեն կերպով մը:

Այսպիսով ուրեմն, փոփոխուն կապիտալը կենսամիջոցներու այն յատկապումարի (fund) կամ աշխատաշատկապումարի երեւան դալու մէկ առանձին պատմական ձեւն է միայն, որուն կարեքն ունի բանուորը իր ապրուստի ու վերարտադրման համար եւ ինքն է, որ հասարակական արտադրութեան բոլոր ձեւերուն տակ պիտի արտադրէ եւ վերարտադրէ այդ իրեն համար կենսական fund-ը: Աշխատանքի fund-ը մշտապէս դէպի բանուորը կը հոսի անոր աշխատանքի վճարամիջոցներու ձեւով միայն, մինչդեռ անոր աշխատութի սեփական արդիւնքը՝ ապրանքը, բանուորէն կը հեռանայ կապիտալի ձեւով:

Արտադրութեան կապիտալիստական պրոցէսի սոսկական յաջորդականութիւնը կամ պարզ վերարտադրութիւնը ուրիշ առանձնաշատուկ փոփոխութիւններ ալ առաջ կը բերէ, որոնք կը շօշափեն ոչ միայն փոփոխուն կապիտալի մասը, այլեւ ամբողջ կապիտալը:

Ենթադրենք թէ 1000 տոլարնոց կապիտալ մը, ամէն տարի կը ստեղծէ 200 տոլար յաւելեալ արժէք: Եթէ ամէն տարի այս յաւելեալ արժէքը մեր պարոն կապիտալիստը ծախսէ իր հաճոյքին կամ սովորական կենսամթերքներու համար, հինգ տարուայ ընթացքին սպառած կըլլայ հազար տոլար, այսինքն՝ իր հիմնադրամին հաւասար դումար մը. իսկ եթէ տասը տարուայ ընթացքին իւրաքանչիւր տարուայ յաւելեալ արժէքն սպառէ, ասով սպառած կ'ըլլայ երկու հազար տոլար, իսկ իր հիմնադրամը երկու պարագային ալ կը մնայ նոյնը. հազար տոլարը հազար տոլար է. ան ոչ միայն բան մը չի կորսնցնէր, այլ յարաձուն կապիտալի բնոյթը նոյն պրոցէսին մէջ՝ նոյն կարողական՝ աճողական ուժով պահած կ'ըլլայ: Ի՞նչ կը հետեւի ասկէ: Ասկէ կը հետեւի երկու բան. բանուորը ոչ միայն իր աշխատութի միջոցով իր կենսամթերքներու գինին վճարումը կ'ընէ, այլեւ վճարումը կ'ընէ կապիտալիստի կենսամթերքներու գինին. այս առաջին նկատառման կէտն է: Երկրորդ նկատառման կէտն այն է, որ բանուորը ոչ միայն կապիտալիստի կենսամթերքներու եւ անոր

հաճոյքի ծախսերուն զինք կը վճարէ, այլև անոր կապիտալը կը հայթայթէ, կապիտալ մը՝ որուն մէջ մեր ձեռներէց կապիտալիստի հիմնադրամէն մասնիկ մը անգամ գոյութիւն չունի, երբ նկատի առնենք անոր դործանութեան երկրորդ հնգամեակը: Կապիտալիստը 200 տոլարով եթէ կրնար գոցել իր ծախսերը, իր հիմնադրամը՝ որ էր միայն հազար տոլար՝ հինգ տարիէն պիտի սպառէր. իսկ ան ի՞նչ պիտի ընէր երկրորդ հնգամեակին, մինչդեռ մենք կը տեսնենք, որ երկրորդ հնգամեակին ան իր կենսամիջոցներուն եւ հաճոյքին համար հազար տոլար ծախսելէն վերջ՝ նորէն իր գրպանը պահած է հազար տոլարը: Բայց մեզի համար այդ հազար տոլարը հին հիմնադրամ հազար տոլարը չէ. այդ հիմնադրամը՝ հազար տոլարը, տասը տարուան մէջ երկու հազարի փոխակերպուեր է ու անհետացեր. ուրիշ խօսքով՝ կապիտալիստի հազար տոլարը չքացեր է ու իր անբեւութեամբացումէն վերջ տասը տարուայ ընթացքին՝ ետ է վերադարձեր եւ իրեն հետ բերեր է երեք հազար տոլար: Մեր պարոն կապիտալիստը հազար տոլարը նորէն գործի մէջ կը դնէ, որպէս կապիտալ, իսկ երկու հազար տոլարը արդէն ծախսեր է: Հաշիւը այստեղ շատ պարզ է ինքնին:

Այսպէս ուրեմն, միանգամայն անտեսելով ամէն կուտակում, պէտք է ըսել, որ արտադրութեան պրոցէսի սոսկական յաջորդականութիւնը կամ պարզ վերարտադրութիւնը, կարճ կամ երկար ժամանակաշրջան անցնելէն վերջ, ամէն մէկ կապիտալ անհրաժեշտօրէն կը դարձնէ կուտակուած կապիտալ կամ կապիտալի վերածուած յաւելեալ արժէք:

Ի՞նչ է բանուորի դիրքը այս ընթացառումին մէջ: Բանուորի դիրքը նոյնն է ու նոյնը կը մնայ. ան պէտք է իր սպառումը վերարտադրէ, իր սերունդը վերարտադրէ. ատիկա կապիտալիստական արտադրութեան անհրաժեշտ պայմանն է:

Բանուորի կատարած սպառումը երկու տեսակ է: Արտադրութեան մէջ ան ինքը իր աշխատանքի միջոցով արտադրամիջոցները կը սպառէ եւ զանոնք կը վերածէ աւելի բարձր արդիւնքներու, քան ինչ որ կանխավճարուած կապիտալի արժէքն էր: Ատիկա բանուորի արտադրողական սպառումն է. եւ միեւնոյն ատեն՝ անոր աշխատութի սպառումն է կապիտալիստի կողմէն, որ այդ աշխատութեւնը գներ է: Միւս կողմէն՝ բանուորը իր աշխատութի փոխարէն ստացած դրամը կը ծախսէ կենսամիջոցներու վրայ. ատիկա անոր անհատական սպառումն է: Կը տեսնենք, ուրեմն, որ բանուորի արտադրողական ու անհատական սպառումը լիովին տարբեր են: Արտադրողական սպառման ատեն բանուորը կը գործէ իրբեւ շարժիչ ուժ. բանուորը կաշի չ'ուտեր, կօշիկ կը շինէ ու կօշիկը կապիտալիստին կը

պատկանի. երկրորդ սպառման ժամանակ, այսինքն՝ այն ատեն երբ անհատական սպառում կ'ընէ, ան ինքն է որ կ'ուտէ, իսկ ուտելու գործը արտադրութեան պրոցէսէն դուրս է: Մէկուն հետեւանքը կապիտալիստի կեանքն է, միւսինը՝ ճիշդ իրեն՝ բանուորի կեանքը:

Բայց խնդիրը այստեղ ուրիշ կերպարանք չառնէ երբ քննութեան կ'առնենք ոչ թէ առանձին՝ անհատ կապիտալիստն ու առանձին՝ անհատ բանուորը, այլ կապիտալիստներու դասակարգն ու բանուորներու դասակարգը, ո՛չ թէ ապրանքի մը արտադրութեան առանձին պրոցէսը, այլ արտադրութեան կապիտալիստական պրոցէսը՝ իր հոսուն վիճակով ու իր հասարակական ծաւալով: Երբ կապիտալիստը իր կապիտալի մէկ մասը աշխատութի համար կը ծախսէ, ան ատով կը մեծցնէ իր ամբողջ կապիտալի արժէքը: Ան մէկ քարով երկու ճնճղուկ կը սպաննէ: Ան շահոյթ ձեռք կը բերէ, ոչ միայն անով՝ ինչ որ բանուորէն կ'առնէ, այլ նաեւ անով՝ ինչ որ անոր կու տայ: Բանուորը հացը կ'արտադրէ, բայց ստիպուած է իր ստացած աշխատավարձով հացը գնել, որպէսզի ուտէ ու ապրի, սընունդ տայ իրեններուն եւ ապրեցնէ զանոնք. նոյնն եւ միւս սպրանքներուն ու կենսամթերքներուն համար: Կապիտալիստը՝ որպէս ազատութեան ջատագով ու ազատամիտ մարդ՝ այդ գործը խղճի հանդրատութեամբ թողած է բանուորներուն, որովհետեւ անիկա վստահ է անոնց ինքնապահպանման ու բազմանալու բնազդին վրայ: Բանուորը միս կ'ուտէ կամ բանջարեղէն, աղի կ'ուտէ թէ լեղի, լաւ կը հագուի թէ վատ, երկու սենեակի մէջ կ'ապրի թէ խոշոր տան մէջ. այդ բանուորին ազատութեան կապուած է: Կապիտալիստը միմիայն կը հողայ այն մասին, որ բանուորի անհատական սպառումը ըստ կարելու յն անհրաժեշտ պիտոյքներու զոհացումով սահմանափակուի ու ան մնայ կախուածութեան դերին մէջ:

Հոսմէկական սարուկը չլթաներով կապուած էր իր տիրոջ հետ, վարձու բանուորը անտեսանելի ու բազմաթիւ թելերով կապուած է ազատամիտ կապիտալիստին հետ:

Կար ատեն մը երբ կապիտալը, ուր որ հարկաւոր կը թուէր իրեն, ազատ բանուորի նկատմամբ սեփականութեան իր իրաւունքը կենսադարձել կ'ուզէր պարտադիր օրէնքի միջոցով: Այսպէս, օրինակ, Անգլիոյ մէջ մինչեւ 1815 թուականը մեքենայական բանուորներու արտադարթն արգիւրուած էր ծանր պատիժի սպառնալիքով:

Բանուոր դասակարգի վերարտադրութիւնը միաժամանակ իր մէջ կը պարփակէ ճմտութեան կուտակումն ու աւանդումը մէկ սերունդէն միւսին: Թէ կապիտալիստը այսպիսի ճմտութեամբ օժտուած բանուորներու կեանքը իրեն պատկանող արտադրապայմաններու շարքին մէջ կը դասէ որոշ աստիճանի նկատելի կարեւորու-

թեամբ, ատիկա յայտնի կ'ըլլայ այն պարագային, երբ շնախատեսուած ճշմարտամ մը այդ կեանքին վտանգ կը սպառնայ: Ամերիկեան քաղաքացիական պատերազմի առեն երբ Լանկաշիրի եւ այլ վայրերու բամպակեղէնի արդիւնաբերութեան բանուորներու մեծամասնութիւնը փողոց նետուեցաւ, Մանչեստրի առեւտրական պալատի նախագահը առաջարկեց Յ միլիոն ստերլինկի փոխառութիւն կնքել եւ անգործ բանուորներուն ողորմութեան ձեռով հատուցում տալ, որպէսզի անոնք մնան իրենց տեղը եւ չհարկադրուին գաղթել:

Յաւելեալ արժէքի կապիտալ դառնալը.—

Մենք նախապէս քննեցինք թէ յաւելեալ արժէքն ինչպէս առաջ կու դայ կապիտալէն: Այժմ պէտք է քննել թէ կապիտալն ինչպէս ծագում կ'առնէ յաւելեալ արժէքէն: Յաւելեալ արժէքը իբրեւ կապիտալ գործածութեան դնելը կամ յաւելեալ արժէքը նորէն կապիտալի վերածելը կը կոչուի կապիտալի կուտակում:

Ենթադրենք թէ մէկը 10 հազար տոլար ունի եւ դայն վերածեր է կապիտալի, այսինքն՝ դնած է հում նիւթ, վարձեր է գործատեղի, գնած է գործիքներ կամ մեքենաներ, գնած է նաեւ բանուորներու աշխատութիւնը եւ արդէն սկսեր է ապրանքի արտադրութեան ընթացքը առաջ տանիլ: Ընդունինք, որ մեր նորելուկ կապիտալիստը տարեկան երեք հազար զոյգ կօշիկ կ'արտադրէ եւ դանոնք ծախելով կը ստանայ 15 հազար տոլար: Հինգ հազար տոլարը իր գանձած յաւելեալ արժէքն է, որ գոյացած է բանուորի անվճար աշխատածամանակէն: Մեր պարոնը ունի իր անձնական ու ընտանեկան ծախսերը. այդ հինգ հազար տոլարէն երեք հազար տոլարը կը հանէ իր տարեկան ծախսերուն համար, որով կ'ունենայ 12 հազար տոլար: Երկրորդ տարուայ ապրանքարտադրութեան ընթացքին յաւելեալ արժէքը բնականաբար 12 հազար տոլարի համեմատութեամբ պիտի ըլլայ, որ կ'ընէ 16 հազար տոլար. եւ այսպէս՝ շարունակաբար:

Կը տեսնենք, որ կապիտալի կուտակման համար յաւելեալ արժէքի մէկ մասը գոնէ՝ պէտք է բարդուի սկզբնական կապիտալի վերայ. եթէ այդ բարդումը տեղի չունենայ, այդ կ'ըլլայ պարզ ապրանքային վերարտադրութիւն մը, որ երկար կեանք չի կրնար ունենալ կապիտալիստական տնտեսական օրէնքներու ճնշումին տակ:

Կապիտալիստական ապրանքարտադրութեան տնտեսական օրէնքները հաստատուած են սեփականութեան իրաւունքի վրայ, որուն հետեւանքը կ'ըլլայ այն՝

1) — որ արտադրութեան արդիւնքը կապիտալիստին կը պատկանի, ոչ թէ բանուորին,

2) — որ այդ արդիւնքի արժէքը, որ կանխավճարուած կապի-

տալի արժէքէն զատ կը պարունակէ նաեւ յաւելեալ արժէք մը՝ յառաջ եկած բանուորի աշխատանքով, իսկ կապիտալիստը ատոր համար ո'չ մէկ ծախս ըրեր է, այդ ալ կապիտալիստի օրինական սեփականութիւնը կը դառնայ,

3) — որ բանուորը ազատ է բայց պարտաւոր կը զոյգ ինքզինքը՝ պահպանելու իր աշխատութիւնը եւ կրնայ նորէն ծախել դայն եթէ գնորդ մը գտնէ:

Որչափով որ կապիտալիստական արտադրութիւնն ու կուտակումը կը զարգանան, նոյն չափով ալ կը զարգանան մրցումը եւ վարկը, կապիտալի կեդրոնացման երկու ամենահզօր լծակները: Եւ այսօր, այս երեւոյթը կը տեսնենք ամէն տեղ, ուր որ կապիտալիստական զարգացումը իր վերելքի ճամբուն մէջ մտած է արդէն: Կապիտալի կուտակումն ու ուռճացումն մէկ կողմէն, անգործներու պահեստի բանակի ստուարացում՝ միւս կողմէն: Ահա թէ ուր կը տանի կապիտալի կուտակումը:

Կուտակեցէ՛ք, կուտակեցէ՛ք: Այս է Մովսէսն ու մարգարէները: Այսպէս ուրեմն. տնտեսեցէ՛ք, տնտեսեցէ՛ք, այսինքն՝ յաւելեալ արժէքի կամ յաւելեալ արդիւնքի ըստ կարելոյն աւելի մեծ մասը նորէն կապիտալ դարձուցէ՛ք: Կուտակում կուտակման համար, արտադրութիւն՝ ի սէր արտադրութեան, — այս ֆորմիւլով կ'արտայայտէր կլասիկ տնտեսագիտութիւնը այն պատմական կոչումը, որ յատուկ է բուրժուազիայի ժամանակաշրջանին:

ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Այժմ դառնանք ժողովրդական այն խաւին, որու ծագումը գիւղական է, բայց որու զբաղումը մեծ մասով արդիւնաբերական է: Այս բաղմութիւնը կապիտալի թեթեւ հետեւակաղօքն է, զոր ան իր պահանջմունքի համաձայն երբեմն այս կողմը կը շարժէ, երբեմն այն կողմը: Թափառաչը ի կապիտալի աշխատանքը կապուած է տարբեր շինարարական ու ցամաքորդի գործառնութիւններուն, աղիւսագործութեան մէջ, կրակիզութեան մէջ, երկաթուղիներուն վրայ, եւ այլն: Իբրեւ համաճարակի ուղեցոյց սիւն մը, այս բաղմութիւնը ծաղկախոտ, ջերմախոտ, ժանտախոտ, քուրէշ եւ այլ տեսակի համաճարակներ կը փոխադրէ այն տեղերը, որոնց մօտիկ վայրին մէջ կը հաստատէ իր բանակը: Կապիտալի հսկայական ծախսումներ պահանջող ձեռնարկութիւններու մէջ, ինչպէս են երկաթուղիները, ձեռնարկու պարոնը մեծ մասամբ ինքն է որ իր բանակին կը մատակարարէ փայտեայ խրճիթներ կամ նման կացարաններ — յանկարծակերտ գիւղեր, որոնք

տեղական իշխանութեան վերհսկողութենէն դուրս մնալով զուրկ են առողջապահական ամէն յարմարութիւններէն, բայց միեւնոյն ատեն՝ խիստ շահութարեր են պարոն կապալառուի համար, որ բանուորները կը շահագործէ եռապատիկ կերպով, բանուորներ՝ որոնք թէ՛ պիտի աշխատին ջնջին աշխատավարձի համար եւ թէ՛ իրենց բնական խրճիթին վարձ պիտի տան շարթական մէկ, երեք կամ չորս շիլլենդ, նայած թէ այդ փայտեայ խրճիթները քանի որջ ունին: Այստեղ տանք օրինակ մը: 1864 թուականի Սեպտեմբերին, ներքին դործոց նախարար սըր ձօրձ Գրէյը զեկոյց մը ստացաւ Լուիշէմէն Տունպրիճ տանոց երկաթուղիի աշխատանքներու մասին: Չեկուցում տուողն էր նախարարի կողմէն զրկուած քննիչը՝ Տը. Սայմընը: Չեկոյցը կը պարունակէ հետեւեալ տողերը.— «Դեռ տարի մը առաջ ծագկախար միանդամայն անձանօթ էր այս ծխական համայնքին: Ասկէ կարճ ժամանակ առաջ սկսան երկաթուղիի աշխատանքները: Բացի այն հանդամանքէն, որ գլխաւոր աշխատանքները կը կատարուէին այս քաղաքին անմիջաբար մօտիկ վայրերուն մէջ, այստեղ հաստատուեցաւ ամբողջ ձեռնարկութեան պահեստանոցն ալ: Ուստի այստեղ մարդոց մեծ բազմութիւն կար զբաղած: Որովհետեւ ասոնց բոլորը անկարելի էր անակներու մէջ տեղաւորել, այս պատճառով կապալառուն, պարոն ձէյը, ուղեգիծի երկարութեամբ տարրեր կէտերու վրայ շինել տուաւ խրճիթներ՝ բանուորներու բնակարան բաշխելու համար: Այս խրճիթները ո՛չ օդափոխութիւն ունէին, ո՛չ ալ կեղտահորեր եւ, ասկէ դատ, ամէնքն ալ խճողուած էին եղկելի էակներով, խճողուած էին հարկադրանքի տակ, որովհետեւ ամէն մէկ բնակարան վարձող, չնայած որ այդ երկու սենեակ ունեցող բնակարանը իր բազմանդամ ընտանիքին բաւարարութիւն չէր տար, ստիպուած էր ուրիշներ ալ ներս առնելու: Բժշկական այն տեղեկատուութեան համաձայն, որ մենք ստացեր ենք, այդ խեղճ մարդիկը ստիպուած էին սովալու շնչահեղձ ըլլալու բոլոր տանջանքներուն, որպէսզի պաշտպանուին ուղղակի իրենց լուսամուտներու տակ լծացած կեղտոտ ջուրերու ու արտաքնոցներու վարակիչ գոլորչիներէն: Բժիշկ մը, որ առիթ էր ունեցեր այցելելու այս խրճիթները, բողոքած էր մեր կոմիտէին եւ ամենագոն արտայայտութիւններով պատկերացուցեր էր այսպէս կոչուած կացարաններու սոսկալի վիճակը: Սեպտեմբեր Ծին, բժիշկ Քէլընը, ինձ կը հաղորդէր նոյն խրճիթներու մէջ պատահած ողբալի գէպքերու մասին եւ կը նկարագրէր թէ անոնց վիճակը սարսափելի է: Ի տեղեկութիւն Չեզի, ես պիտի աւելցնեմ, որ մեր ծխական համայնքը մեկուսացուած տուն մը ունի, այսպէս կոչուած՝ վարակատուն, ուր, որպէս թէ կը դարմանուին վարակիչ հիւանդութիւններէ բռնուած ծխականները: Իսկ

դարմանում ըսելով պիտի հասկնանք մահուան միջոցով ազատութիւն: Այո՛, հիւանդները կատարելապէս կը դարմանուին, երբ կը մեռնին, եւ ամէն օր մի քանի մարդիկ կը մեռնին, եւ ատով տեղ կը բացուի նորեկներուն, որովհետեւ այդ դարմանատուն կոչուածը խճողուած է հիւանդներով»:

Քարածուխի եւ ուրիշ հանքերու բանուորները կը պատկանին բրիտանական պրոլետարիատի ամենէն լաւ վարձատրուած շարքերուն: Թէ ի՞նչ զինով անոնք ձեռք կը ձգեն իրենց աշխատավարձը, ես այստեղ թոուցիկ ակնարկ մը կ'ուզեմ նետել անոնց բնակարանային պայմաններուն վրայ: Հանքերը շահագործողը, հանքի սեփականատէրն ըլլայ ան թէ վարձակալը, միեւնոյնն է, սովորաբար խրճիթներ կը շինէ իր բանուորներուն համար: Բանուորները իրենց բնակարաններն ու վառելու քարածուխը կը ստանան «ձրի», այսինքն՝ այդ խրճիթներն ու քարածուխը բանուորները կը ստանան իրենց աշխատավարձի մէկ մասի հաշոյն, որ կը տրուի բնեղէնով (in natura): Անոնք որ այս կերպով բնակարան չեն կրնար ստանալ, ատոր փոխարէն կը ստանան տարեկան 4 ստէրլինդ: Լեռնադորձական շրջանները իրենց կը քաշեն մեծաթիւ բնակչութիւն, որ կազմուած է հանքագործներէն եւ անոնց շուրջը խմբուած արհեստաւորներէն ու խանութպաններէն: Ինչպէս ամենուրեք, ուր բնակչութիւնը խիտ է, այստեղ ալ հողի ռէնտան բարձր է: Այս պատճառով հանքի արդիւնարեութեան ձեռնարկուն կ'աշխատի հանքահորի բերնին մօտ շինարարական ըստ կարելոյն նեղ հողամասին վրայ այնքան խրճիթներ շինել տալ, որքան հարկաւոր էր իր բանուորներն ու անոնց ընտանիքները անոնց մէջ խճողելու համար: Եթէ մօտակայքը նոր հանքահորեր կը բացուին, կամ հիները նորէն դործի կը լծուին, այն ատեն նեղուածքը աւելի կը սաստկանայ: Խրճիթներ շինելու ատեն միայն մէկ տեսակէտ նկատի կ'առնուի, — իննայել տտազձ ու «աւելորդ աշխատանք»: Ատոր հետեւանքը այն կ'ըլլայ, որ այդ բնակարանները բնակարան ըլլալէ առաջ հիւանդութեանց որջեր են, որոնց մէջ մարդիկ կը տառապին ջուրի պակասութենէն, արտաքնոցներու պակասութենէն, թարմ օդի պակասութենէն: Յաճախ ալ, մէկ խրճիթի վրայ կը շինուի մէկ ուրիշը: Այժմ երեւակայեցէք տիրող դրութիւնը: Ձեռնարկուն այդ դաղութիւն կը նայի այնպէս՝ կարծես թէ ան այնտեղ ժամանակաւոր բանակ մըն է դրած, որ մէկ օրէն միւսը տեղաշարժ պիտի կատարէ: — «Իմ ստացած հրահանգները կատարելու համար» — այսպէս կը գրէ Տը. Ստէվընսը — «ես այցելած եմ Դիւրհէմի լեռնադորձական խոշոր գիւղերու մեծ մասը... Առանց հաշուելու խիստ սակաւաթիւ բացառութիւնները, բոլորի մասին պէտք է ըսել, որ բնակիչներու առողջութիւնը ապահովելու

որեւէ միջոց բոլորովին անտեսուած է: Բոլոր հանքադործ բանուորները տարին տասներկու ամիս, հանքարանի վարձակալին (lessee) կամ թէ սեփականատիրոջ կապուած են որպէս ճորտեր: Եթէ բանուորները յանդգնին իրենց դժգոհութիւնը յայտնել կամ թէ որեւէ կերպով ցաւցնեն վերակացուի դուխը, այն ատեն վերակացուն անոնց անուան դիմաց նշան մը կը դնէ եւ տարին լրանալուն՝ տարեկան նոր պայմանագիր կնքելու ատեն ազատ կ'արձակէ զանոնք: Եւ վայն է եկար այդ ազատ բանուորին»:

Այստեղ կու տանք չորս հոգիէ բաղկացած բանուորական ընտանիքի մը տարեկան պիւտճէի պատկերը.

Հայրը տարեկան 300 օր աշխատելով կը ստանայ	468 Փրանկ
Մայրը տարեկան 300 օր աշխատելով կը ստանայ	267 Փրանկ
Տղան տարեկան 300 օր աշխատելով կը ստանայ	168 Փրանկ
Աղջիկը տարեկան 300 օր աշխատելով կը ստանայ	165 Փրանկ
Ընդամէնը	1068 Փրանկ

Այժմ անցնինք պատկերացնելու մէկ ուրիշ ցանկ.	
Նաւատորմի իր նաւատիրն տարեկան կը ստանայ	1828 Փրանկ
Ձինուորը տարեկան կը ստանայ	1473 Փրանկ
Բանտարկեալը տարեկան կը ստանայ	1112 Փրանկ

Այսու կը տեսնենք թէ չորս հոգիէ բաղկացած բանուորի ընտանիքը նոյնիսկ բանտարկեալէն շատ պակաս կը ստանայ իր կենսամթերքներու համար: Եւ եթէ նկատի առնենք որ բանտարկեալը ընակարանի վարձ չի տար, այն ատեն տարբերութիւնը աւելի խոշոր կ'ըլլայ: Բայց ի՞նչպէս բացատրելու է այս դաղտնիքը. բանուորներու խոշոր մեծամասնութիւնը ի՞նչպէս կ'ապրի այդպիսի զրկանքով չղթայուած պայմաններու մէջ: Այս առեղծուածը կը լուծուի անով, որ բանուորներու յիշեալ մեծամասնութիւնը ստիպուած կը դիմէ այնպիսի հնարքներու, որոնց դաղտնիքը միայն բանուորներուն յայտնի է, այսինքն՝ բանուորը իր ստացած կենսամթերքի բաժինը կը մկրտաւ, կը պղտիկցնէ. ցորենի հացի փոխարէն հաճարի հաց կ'ուտէ. միս աւելի քիչ կամ բնաւ չուտեր. նմանապէս իւղ, բանջարեղէն կամ պտուղ, անոր ընտանիքը սեղմուած է մէկ կամ երկու խցիկի մէջ, ուր աղջիկներն ու տղաները միասին կը քնանան. ան կը խնայէ հաղուստեղէնէն, լուսցքէն, մաքրութեան միջոցներէն. մէկ խօսքով՝ ան կ'ապրի զրկանքներով լեցուն ամենադաժան կեանք մը, որպէսզի կապիտալիստը աւելի դիւրաւ կարողանայ կուտակել յաւելեալ արժէքներով ուճացած իր կապիտալը: Եւ երեւակայեցէք որ անգլիական կապիտալիստներու մէջ նորաձեւութիւն դարձեր է Անգլիան Բելճիգայի բանուորներուն համար իբրեւ դրախտ ներկայացնե-

լը, որովհետեւ հոն «աշխատանքի ազատութիւնը» կամ, որ միեւնոյնն է, «կապիտալի ազատութիւնը» չի խախտուիր ո՛չ քրէյտ-իւնիոններու բռնապետութեամբ ու ո՛չ ալ դործարանային օրէնքներով: Ասով ընթերցողը կրնայ երեւակայել թէ՛ երբ Անգլիան դրախտ է, ի՞նչպիսի սոսկատեսիլ պատկեր կը ներկայացնէ Բելճիգան...:

ԸՆԶԱԶՈՒՐԿՆԵՐՈՒ ԴԷՄ ՈՒՂՂՈՒԱԾ ԱՐԻԻՆԱԼԻ
ՕՐԷՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ֆէոդալական զինախումբերու լուծման եւ հողի ու տեղի ցընցումնաւոր բռնի ընչազրկման հետեւանքով վտարուած բազմութիւնը՝ որ կը բաղկանար անգործ աշխատուորներէ ու սեփականազրկուած գիւղացիներէ, թաշուններու պէս ազատ այս պրոլետարիատը, չէր կրնար նոյնքան արագօրէն կլանուիլ բողոքող մանուֆակտուրայի կողմէն, ինչպէս արագօրէն հրապարակ էր նետուած: Միւս կողմէն՝ իրենց կենսաշաւիղէն յանկարծակի այս դուրս նետուած մարդիկը չէին կրնար նոյնպէս յանկարծակի յարմարուիլ նոր դրութեան ստեղծած կարգապահութեանը: Անոնք մասսայական կերպով դարձան մուրացիկներ, աւազակներ, թափառաչըջիկներ, մասամբ բնական հակումով, մեծ մասով ալ՝ պայմաններու հրամայականով: Այս պատճառով 15-րդ դարու վերջերը եւ ամբողջ 16-րդ դարուն, բովանդակ Արեւմտեան Եւրոպայի մէջ արիւնալի օրէնսդրութիւն հաստատուեցաւ թափառաչըջիկներու դէմ: Այժմու բանուոր դասակարգի հայրերը ամենէն առաջ պատժուեցան այն բանին համար, որ անոնք բռնութեամբ թափառաչըջիկներ ու մուրացիկաններ էին դարձեր: Օրէնքը զանոնք կը նկատէր որպէս «ազատակամ» յանցաւորներ եւ կ'ենթադրէր թէ անոնց բարի կամքէն կախուած էր շարունակել աշխատելու այն հին պայմաններու տակ, որոնք այլեւս գոյութիւն չունէին:

Անգլիոյ մէջ յիշեալ օրէնսդրութիւնը սկսաւ Հէնրի VII-ի թագաւորութեան ժամանակ:

Հէնրի VIII-ի ժամանակ, 1530 թուականին, ծեր ու աշխատելու անկարող մարդիկ՝ մուրացիկանութեան արտօնութիւն կը ստանային: Իսկ ընդհակառակը՝ ձեռքով, ոտքով անթերի թափառաչըջիկներու համար սահմանուած էր խարազանում ու բանտարկութիւն: Անոնք կը կապուէին սայլակի մը ետեւ՝ գրեթէ մերկ եւ կ'ենթարկուէին մտրակահարութեան, մինչեւ որ արիւնը շուշաւր անոնց մարմինէն, յետոյ՝ անոնք երգում ընելու էին որ կը վերադառնան իրենց ծննդավայրը կամ թէ այնտեղ՝ ուր ապրած էին վերջին

երեք տարիներուն եւ կը լծուին աշխատանքի: Ի՛նչպիսի անգութ հեղանակ: Հէնրի VIII-ի 27-րդ հրովարտակով կը վերահաստատուի յիշեալ օրէնսդրութիւնը՝ աւելի խիստ յաւելումներով: Թափառաշրջիկութեան մէջ երկրորդ անգամ բռնուողը պէտք է կրկնակի մըտրակահարուի, եւ անոր մէկ ականջը պէտք է թոցուի, իսկ երրորդ անգամին՝ պէտք է մահապատիժի ենթարկուի որպէս ծանր ոճրագործ ու հասարակութեան թշնամի:

Եղուարդ VI-ի ժամանակ, 1547 թուականին, օրէնք անցաւ որ, մէկը երբ աշխատիլ չուզեր, անիկա ստրուկ պիտի ըլլայ այն անձին, որ զայն ամբաստանէր է իրբեւ պարագ մարդ: Անոր տէրը իր գերին պիտի կերակրէ իր յարմար դատած եղանակով: Ան իրաւունք ունի խարազանել ու շղթայի կապել իր ստրուկը՝ կատարել տալու ամէն տեսակի աշխատանք՝ հոգ չէ թէ այդ աշխատանքը ինչքան զզուելի է, ինչքան ծանր է: Եթէ ստրուկը բացակայի 14 օր, այն ատեն ան կը դատապարտուի ցմահ ստրկութեան, եւ պէտք է ճակատին կամ այտին վրայ խարանուած դրոշմ մը ունենայ S տառը, որ կը նշանակէ Slave — գերի: Իսկ եթէ ան փախչի երրորդ անգամ, կ'ենթարկուի մահապատիժի որպէս պետական դաւաճան: Տէրը զայն կրնայ ծախել, ուրիշի մը կտակել, կամ վարձու տալ իրբեւ անասուն: Եթէ ստրուկները իրենց տէրերուն դէմ դաւադրութիւն սարքեն, անխուսափելի է անոնց մահապատիժը: Որեւէ դատարկաշրջիկ երբ երեք օր պարագ-սարագ հոս հոն է թափառեր եւ կը բռնուի, անոր կուրծքին վրայ հրաչէկ երկաթով կը խարանուի V տառը, որ կը նշանակէ Vagabond — թափառաշրջիկ: Այդ մարդը շղթայակապ պարտի աշխատիլ ճամբաներու վրայ: Ամէն մարդ իրաւունք ունի թափառաշրջիկէն խլելու անոր երեխաները եւ զանոնք պահելու որպէս աշկերտ — տղաներուն մինչեւ 24 տարեկան, աղջիկներուն մինչեւ 20 տարեկան դառնալը:

Նման խիստ օրէնքներ կային Ֆրանսայի մէջ ալ: Լուդովիկոս XVI-ի թաղաւորութեան առաջին շրջանին 1777 թուականի Յուլիս 13-ի օրէնսդրութեան համաձայն, 16-էն մինչեւ 60 տարեկան ամէն մէկ առողջակազմ մարդ, եթէ ապրուստի միջոցներ չունէր, պէտք է թխարան գրկուէր:

Եւ պէտք է ըսել, դրութիւնը նոյնն էր Պելճիգայի մէջ Հոլանտայի մէջ, ամենուրեք ուր մուտք էր գործեր կապիտալիստական արտադրութեան սկզբնական յառաջխաղացքը:

Բաւական չէ, որ աշխատանքի պայմանները մէկ բեւեռի վրայ հրապարակ կու գան իրբեւ կապիտալ ու միւս բեւեռի վրայ՝ իրբեւ այնպիսի մարդիկ, որոնք իրենց աշխատութէն զատ ուրիշ ոչինչ ունին՝ ծախելու: Բաւական չէ նաեւ այն, որ անոնք բռնադատուած են

կամովին ինքզինքնին ծախելու: Կապիտալիստական արտադրութեան յառաջխաղացութեան հետ զուգընթաց կը զարգանայ բանուորական դասակարգ մը, որ դաստիարակութեան, աւանդութեան, սովորութեան ազդեցութեամբ կ'ընդունի, թէ արտադրութեան յիշեալ եղանակի պահանջները բնութեան ինքնըստինքեան հասկնալի օրէնքներ են:

ԳԻՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՁՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆԱԶՐԿՈՒՄԸ

Նախերգանքը այն յեղաշրջման, որուն շնորհիւ արտադրութեան կապիտալիստական եղանակի հիմքը կը ստեղծուի, տեղի կ'ունենայ 15-րդ դարու վերջին երրորդամասին ու 16-րդ դարու առաջին տասնամեակներուն: Թուշուններու նման ազատ պրոլետարներու բաղմութիւն մը աշխատաշուկայ նետուեցաւ այն իրողութեան հետեւանքով, որ լուծուեցան Փէոդալական գինախումբերը, որոնք, ինչպէս սրբ ձէյթս Ստուարթը ըսած է, «ամենուրեք անօգուտ կերպով լեցուած էին տուներու եւ բակերու մէջ»: Թէեւ թաղաւորական իշխանութիւնը, որ ճիշդ ինքը բուրժուական զարգացման արդիւնք էր, բացարձակ գերիշխանութեան ձգտելով բռնի միջոցներով կ'արագացնէր այդ գինախումբերու քայքայումը, բայց եւ այնպէս՝ ան չէր տտր միակ պատճառը: Ամենախիստ կերպով հակադրուելով թաղաւորական իշխանութեան ու պարլամենտին՝ յատկապէս խոշոր Փէոդալ իշխանն էր, որ անհամեմատ աւելի բաղձաթիւ պրոլետարիատ հրապարակ կը հանէր, որովհետեւ ան էր որ գիւղացիութիւնը բռնութեամբ դուրս կը քշէր այն հողէն ու տեղէն, որուն վրայ ան ալ Փէոդալական իրաւունք ունէր, որքան ինքը՝ իշխանը... Եւ ասա այդ իշխանը բռնութեամբ կը տիրանար գիւղացիութեան համայնական հողին:

Փէոդալիզմի ուժերը տակաւին ամբողջապէս պարտուած չէին եւ նոր դասակարգը ստիպուած էր յամառօրէն կռուիլ՝ իր դիրքը պահելու եւ աւելի մեծ ու ապահով իշխանութեան հասնելու համար: Եւրոպայի տնտեսական, ընկերային եւ քաղաքական կեանքը փոթորիկումներու մէջ էր: Վաճառական դասակարգը՝ կապիտալիստական մեծ բանակին առաջին զօրարածինը, կեցեր էր իշխանութեան գլուխը. անոր գործն էր հետախուզել աշխարհը եւ յարգարել այն ճամբան, ուրիչ անցնելու էր ճարտարարուեստական կապիտալիզմի գրամման բանակը:

Այս այն շրջանն էր, ուր նոր ազգեր ու կրօններ դուրս կու գային եւ ընկերային կեանքի ուժերը ամէն ճակատի վրայ կը բաղթէին իրարու հետ՝ յանուն տիրակալութեան:

Անգլիոյ մէջ, օրինակի համար, ուր այդ ատենները մեծապէս ծաղկած էր բուրգի ճարտարարուեստը, վարձակալները դուրս կը քշուէին իրենց վարձած հողաբաժիններէն՝ որոնք պէտք է վերածուէին ոչխարներու արօտատեղիներու, որովհետեւ բուրգի պահանջ կար: Թամբս Մօր, իր Ուտոպիայի մէջ, որ գրուած է 1615 թուին, հետեւեալ տողերով կը նկարագրէ Անգլիոյ դրութիւնը:

— Ձեր ոչխարները, որոնք այնքան հեզ էին, այնքան բարի էին եւ անխաս, եւ այնքան անտրտունջ կը հետեւէին հովիւին, այժմ դայլեր են դարձեր եւ կը յօշոտեն մարդիկը, կ'ամայացնեն երկիրը. կ'ամայացնեն ո՛չ միայն գիւղերը, այլեւ քաղաքները, որովհետեւ ուր որ կը տեսնուի թէ հարուստ հող կայ, որ կրնայ արօտատեղիի վերածուելով ոչխարներուն տալ կահուղ եւ ազնիւ բուրգ՝ հոն ազնուականութիւնը եւ միջակորեար դասակարգը, նոյնիսկ՝ սա սուրբ մարդիկը՝ վանահայրերը, որոնք չեն գոհանար իրենց ազարակներու բերած վարձքով, ո՛չ ալ կը մտածեն թէ իրենց վայելքին համար իրենց ունեցածէն աւելին ժողովուրդին օգտին չի ծառայեր, կ'որոշեն վերցնել երկրագործութիւնը, կործանել գիւղերն ու քաղաքները, պահելով միայն եկեղեցիները եւ ցանկապատ գետիներն ու դոմերը՝ ոչխարներ պահելու համար: ... Հողատէրերը, վարձակալները դուրս կը քշուին իրենց հողերէն՝ մերթ րոնութեամբ, երբեմն զագրելի մեքենայութեամբ, երբեմն ալ՝ յուսահատութեամբ: Եւ ահա այսպէս, այս թշուառ բազմութիւնը, մարդիկ ու կիներ, ամուսնացած կամ ամուրի, ծէր կամ երիտասարդ, իրենց բազմանդամ ընտանիքներով հարկադրուած են լքել իրենց հողերը, իրենց բնակարանները՝ առանց զիտնալու թէ ո՛ւր կ'երթան (ինչու չեն գիտեր... երկիրը աշխատող, «ազատ» մարդոց պէտք ունի...): Վա՛յ տկարին, որ չի կրնար ճակատիլ հզօրին...»:

Եւրոպան դրուած էր եռացող կաթսայի մը վրայ: Հարիւրամեայ պատերազմը նոր վերջացեր էր, երբ Գոլոմպոս դտաւ Ամերիկան: Յաջորդող երեք դարերու ընթացքին, համարեայ Եւրոպայի բոլոր ազգերը միմեանց հետ զինեալ կռիւի մէջ էին: Պատերազմները մեծ մասով կրօնական հարցերու շուրջ՝ ընդունել էին համաճարակի բնոյթ: Այդ պատերազմներէն մէկը, որ ծանօթ է Երեսնամեայ Պատերազմ անունով, վերջացաւ Վեստֆալիոյ դաշնագրութեամբ՝ 1642-ին: Այս առթիւ պատմագիրները զիրար կը գերազանցեն, նկարագրելով այն սարսափելի աւերածութիւնները, որոնք յառաջացան սոյն կռիւներու թատերաբեմներու բոլորախորը: Մէկը այդ պատմագիրներէն, դրութիւնը կը պատկերացնէ հետեւեալ տողերով.

— «Ո՛չ միայն ձիւներն ու արջառները կը քշուէին հոս ու հոն զանազան բանակներու յառաջխաղաց եւ յետախաղաց շարժումներն

րէն, ո՛չ միայն տուներն ու ախոռները՝ այլեւ հունձքերը հրոյ ճարակ կը դառնային: Տան տէրը կ'ենթարկուէր աննկարագրելի շարշարանքներու, որպէսզի ցոյց տար իր պահած ոսկիներու տեղը: Երբեմն ալ, երբ խեղճ մարդը ոչինչ ունէր, ծեծի տակ կը մեռնէր՝ չունենալուն համար: Երբ թշնամի բանակը կը մօտենար, ամբողջ գիւղի բնակչութիւնը կը փախչէր եւ կ'ապաստանէր անտառներուն ու քարայրներուն մէջ: Թշնամիին հեռանալուն, խեղճերը երբ կը վերադառնային իրենց տուները, կը տեսնէին աւերակները... հազիւ թէ գերմարդկային ճիւղերով մարդիկ զանոնք վերաչինել կը սկսէին, ահա կրկին երեւան կու գար թշնամին... եւ... դարձեալ փախուստ:

«1635 եւ 1636 տարիները ամենէն սարսափելի թշուառութեան շրջանը կարելի է կոչել, իսկ յաջորդող տարիներուն՝ սովն ու համաճարակը եկան պակաս թողուած շարշարանքը լրացնել: Անօթի ու կիսամերկ ժողովուրդը կը սնանէր ծառերու արմատներով, խոտերով ու տերեւներով. նոյնիսկ մարդակերութիւնը դարձաւ սովորական երեւոյթ: Կախազաններու վրայ ճօճացող մարդոց մարմիններն ու գերեզմաններու մէջ թաղուած դիակները պահպանութեան տակ առնուեցան: Մայրերը ստիպուած էին իրենց զաւակները մօրթել եւ ուտել: Աւեր ու ամայութիւն այն վայրերուն մէջ, որոնք ատեն մը կը ներկայացնէին ծաղկեալ ազարակներ ու այգիներ»:

Վեստֆալիոյ խաղաղութեան դաշնագրի կնքումէն յետոյ՝ պայթեցաւ ուրիշ պատերազմ մը՝ 1674-ին, Ֆրանսայի եւ Հոլանտայի միջեւ, որ տեւեց մի քանի տարի: Ֆրանսան յաղթութիւնը ապահովելէն յետոյ՝ որոշեց Հոլանտայի ըմբոստ ժողովուրդը տեղահան ընել: Ֆրանսական հրամանատարը յայտարարեց որ երեք օրուան մէջ մօտաւորապէս կէս միլիոն մարդկային էակներ պէտք է երկրէն հեռանան: Ձմրան եղանակին, դաշտերն ու ճամբաները ծածկող ճերմակ ձիւնը սեւցաւ իրենց տուներէն փախչող անհամար մարդոց, կանանց եւ երեխաներու ծովածաւալ բազմութեամբ: Անոնց տուները, եկեղեցիները, կառավարական պաշտօնատները բոլոր հրոյ ճարակ դարձան:

Մահուցէն, այս նկարագրութիւնը ընելէ վերջ՝ կ'աւելցնէ. — «Այս թշուառ էակներէն շատերը մեռան ճամբաներուն վրայ, մեռան ցուրտէն ու անօթութենէն, իսկ մնացեալները հասան Ամբողջրտամ, ուր իրենց կը սպասէին նաւային անխիղճ գործակալները, որոնք այդ եղիւլիներու ամենափերջին լուծանքը կողոպտելէ յետոյ՝ զանոնք խոզերու նման լեցուցին նաւերու մէջ՝ դէպի Գոլոմպոսի դտած Նոր Աշխարհը: Անոնց կէս մասը հազիւ բախտաւորուեցաւ հասնիլ Ամերիկա, միւսներուն զիակները նետուեցան ծովը, իսկ բախտաւորներն

ալ, որոնք չէին կրցած իրենց նաւորչէքը վճարել, որպէս զերի ծախուեցան Ամերիկայի զերեմիաճառանոցի շուկային վրայ»:

Ֆէոդալ հին ազնուականութիւնը կուլ էր դացեր Ֆէոդալական պատերազմներուն, իսկ նոր ազնուականութիւնը՝ որ իր ժամանակի զաւակն էր, անոր աչքին՝ մարդը արժէք չունէր, գրամն էր ամենէն թանկարժէքը՝ այո՛, գրամը՝ այսինքն ուժերու զերազոյն ուժը: Անօգուտ մարդիկ բազմացեր էին, անոնք կամ մեռնելու էին եւ կամ՝ դաղթելու էին: Եւ ահա սկսաւ դաղութարարութեան քաղաքականութիւնը:

ԳԱՂՈՒԹԱՅՄԱՆ ԱՐԴԻ ԹԵՈՐԻԱՆ

Քաղաքական տնտեսագիտութիւնը սկզբունքով կը շփոթէ մասնաւոր սեփականութեան երկու շատ տարբեր տեսակներ, որոնցմէ մէկը հիմնուած է արտադրողի սեփական աշխատանքի վրայ, միւսը՝ ուրիշի աշխատանքի շահագործման վրայ: Ան կը մոռնայ, որ վերջինը ո՛չ միայն առաջինի ուղղակի հակադրութիւնը կը կազմէ, այլեւ կ'աճի անոր զերեղմանին վրայ միայն:

Արեւմտեան Եւրոպայի մէջ, քաղաքատնտեսութեան այդ հայրենիքին մէջ կապիտալի նախկզբնական կուտակման պրոցէսը վերջացեր է աւելի կամ պակաս չափով: Կապիտալիստական իրաւակարգը այստեղ կամ ուղղակի իրեն կ'ենթարկէ աղքատին ամբողջ արտադրութիւնը, կամ թէ՛ այնտեղ, ուր տնտեսական յարաբերութիւնները դեռ զարգացած չեն, անուղղակի կերպով իր վերհսկողութեան կ'ենթարկէ ճիշդ եւ ճիշդ իր կողքին պահպանուող եւ դէպի անկում դիմող այն հասարակական խաւերը, որոնք կապուած են արտադրութեան հին եղանակին: Քաղաքական տնտեսագիտութեան վարդապետը այս պատրաստի աշխարհի նկատմամբ այնքան աւելի երկիւղած եռանդով ու այնքան աւելի խոր խանդաղատանքով կը նկարէ մինչ կապիտալիստական աշխարհի իրաւական ու գոյքային պատկերացումները, որքան աւելի բարձր կ'աղաղակեն իրողութիւնները՝ իր գաղափարարանութեան հակառակ:

Մնդիրը այլ է գաղութներու մէջ: Կապիտալիստական իրաւակարգը այնտեղ ամենուրեք արդելքի կը հանդիպի արտադրողի կողմէն, որ, իրբեւ իր աշխատապայմաններու տէրը, իր աշխատանքով ինքը կ'ուզէ հարստանալ՝ փոխանակ կապիտալիստը հարստացնելու: Այս երկու տրամազօրէն հակադիր տնտեսական սիտէժներու հակասութիւնը այստեղ գործնականօրէն երեւան կու գայ անոնց կռիւին մէջ: Այնտեղ, ուր կապիտալիստը մայր երկրի ուժն ունի իր թիկունքին,

քին, կ'աշխատի սեփական աշխատանքի վրայ հիմնուած արտադրութեան ու իւրացման եղանակը բռնութեամբ մէջտեղէն վերցնել:

Մենք տեսանք որ ժողովրդային մասսան իր հողէն ու բնակարանէն սեփականագրելը կը կազմէ արտադրութեան կապիտալիստական եղանակի հիմքը: Ազատ դաղութի էութիւնը, ընդհակառակը, այն է, որ հողարածինը ժողովուրդի սեփականութիւնն է սակաւին, եւ հետեւաբար, ամէն մէկ գաղթական կրնայ անոր մէկ մասը իր մասնաւոր սեփականութիւնն ու իր անհատական արտադրամիջոցը դարձնել, առանց խանգարելու, որ իրմէ յետոյ եկող գաղթականը նոյն գործողութիւնը կատարէ: Այս է ինչպէս գաղութներու փթթումին, այնպէս նաեւ անոնց քաղցկեղին պատճառը. այսինքն՝ գաղտնիքը այն դիմադրութեան՝ զոր անոնք ցոյց կու տան կապիտալի բռնակարանի հաստատմանը: Ուր որ հողը շատ աժան է, եւ բոլոր մարդիկ ազատ են, եւ ամէն մարդ բոս իր ցանկութեան կրնայ կտոր մը հող ձեռք ձգել իրեն համար, այնտեղ աշխատանքը ո՛չ միայն շատ սուղ է, այլեւ դժուար է բանուորական համակցուած աշխատանք ձեռք բերել որեւէ մէկ գինով:

Երբ գաղութներու մէջ տակաւին գոյութիւն չունի բանուորի անջատումը աշխատապայմաններէն ու անոնց հիմքէն, բնել կ'ուզեմ հողէն ու տեղէն, կամ թէ՛ այդ բանը գոյութիւն ունի սպորտաիկ կերպով (ցանցառ կերպով) եւ կամ՝ սահմանափակ տարածութեան վրայ՝ ոչ ալ գոյութիւն ունի երկրագործութեան բաժանումը արդիւնաբերութենէն, ոչ ալ տեղի ունեցեր է գիւղական արդիւնաբերութեան ու շքնազոյնումը, այդ պարագային ուրիշ՝ ներքին շուկայ պիտի ստեղծուի կապիտալի համար:

Ամերիկայի Միացեալ Նահանգները շատ յատկանշական օրինակ մը կը պարզեն մեր առջեւ: Ամերիկայի այդ մասը սկիզբէն անգլիական գաղութ էր: Այդ գաղութի բնակչութեան ո՛չ մէկ մասը բացառապէս երկրագործ բնակչութիւն էր, եթէ չհաշուենք ստրուկներն ու զանոնք աշխատցնողները, որոնց կապիտալն ու աշխատանքը համակցուեր էին խոշոր ձեռնարկութիւններու համար: Ազատ ամերիկացիք իրենք հողը կը մշակէին եւ միեւնոյն ժամանակ ուրիշ գործերով կը զբաղէին: Անոնք իրենց դործածած կահարասիքի ու գործիքներու մէկ մասը սովորաբար իրենց ձեռքով կը շինէին: Յաճախ անոնք իրենք կը շինէին իրենց տուները եւ իրենց սեփական արդիւնաբերութեան արդիւնքները կը տանէին ամենահեռաւոր շուկան: Անոնք մանողներ էին եւ ջուլհակներ, կը պատրաստէին օճառ ու մոմեր, կօշիկ ու հագուստ՝ իրենց սեփական գործածութեան համար: Հողագործութիւնը շատ անդամ, որպէս օժանդակ արհեստագործութիւն՝ եղած էր դարբնի մը, ջաղացպանի մը կամ խանութպանի մը զբաղու-

մը: Բայց իրերու այդ դոյալիճակը որքա՞ն երկար տևեց: Երբ Եւրոպայի մէջ արդէն մտեր է կապիտալիստական սխտէ՛մը եւ Ամերիկայի գաղթականները եւրոպացիներ էին, անրնական էր, որ Ամերիկան կղզիացած մնար եւ իր տնտեսական սխտէ՛մը անխորտակելի պարիսպներու մէջ պահէր: Ահա թէ ինչո՛ւ Ամերիկան, մարդկային քաղաքակրթական պատմութեան երկու հին դարաշրջանները՝ գերետիրական եւ աւատապետական դարաշրջանները անոնց փոտած ատաղձներով շուտով աւարտեց ու անցաւ կապիտալիստական դարաշրջանին: Եւրոպայի մէջ խմորուած ու դարպացած սոցիալական ուժերն էին անոնք, որոնք իրենց նախահայրերու պատմութեան մանրանկարը դրծեցին ու անցան եւ այլեւս իրենց ետեւ չնայեցան: Անգլիան, որ ամբողջ աշխարհի առեւտրական շուկայի հրամանատարն էր, չկրցաւ իր հրամանները դործադրել տալ իր հարազատ զաւակներուն, որոնք նոր Աշխարհի մէջ բուրժուական յեղափոխութեան շեփորը հնչեցուցուցին, որուն հետեւեցաւ Փրանսական մեծ յեղափոխութիւնը: Ամերիկեան բուրժուազիան, տիրանալով անկախութեան, տակաւին ամէն ինչ չէր վերջացուցած. հարաւային նահանգներու գերետիրութիւնը կ'արդէլակէր կապիտալիստական արտադրութեան յառաջիմութիւնը: Քաղաքացիական պատերազմը եկաւ ջնջել գերետիրութեան յառաջիմութիւնը: Քաղաքացիական պատերազմին հետեւանքը եղաւ հսկայական հանրային պարտք մը, ու անոր հետ հարկային ճնշում. երեւան եկաւ Փինանսական ամենաստոր ազնուական դասակարգ մը եւ նոյն ատեն՝ հրապարակ իջան երկաթուղիներու, հանքերու եւ ուրիշ շահագործմամբ զրազող ընկերութիւններ. ուրիշ խօսքով՝ տեղի ունեցաւ կապիտալի արագավազ կուտակում: «Թողէ՛ք, որ Ամերիկան ազատ ըլլայ», ըսաւ Անգլիա, «մեզի համար Հնդկաստանը կը բաւէ»: Բայց Հնդկաստանն ալ կարող է հետեւիլ Ամերիկայի օրինակին: Ամերիկայի բուրժուական յեղափոխութեան նախակարապետն ըլլալու հանգամանքը կապիտալիստական առաջաւոր պետութեանց՝ առաջին հերթին՝ Անգլիոյ գաղթային քաղաքականութեան նոր թէորիական ուղեգիծ մը ձեւակերպեց, սխտէ՛մատիկ գաղութարարութեան թէորիան: Այս թէորիան հետեւեալ կերպով կարելի է պատկերացնել: Երկիր մը, ուր մտած է կապիտալիստական պետութիւն մը, նպատակ ունենալու է շահագործելու անոր արտադրած հում նիւթերը եւ հանքային կարողական հարստութիւնները: Այդ նրպատակը իրագործելու առաջին պայմանն է այդ երկրի կառավարութիւնը առնել հսկողութեան տակ ուրիշ կապիտալիստական պետութեան մը մուտքը արգիլելու համար: Երկրորդ պայմանն է երկիրը պահել տնտեսական յետամնացութեան մէջ, վաճառականական կապիտալի սպառման շուկան ազատ ու ապահով պահելու համար: Այս

երկու նպատակներու յաջողութեան համար Փինանսական կապիտալի օգնութեամբ սիրաշահելու եւ այդ երկրի կառավարութիւնը, եւ որ ամենէն կարեւորն է, զաւնակցել երկրի տիրող դասակարգին հետ, որու միջոցով կարելի է խեղդել հաւանականորէն պայթող յեղափոխութիւնը: Գասակարգային խրամատները կամրջելու նպատակով գաղութարար պետութիւնը դործ ունենալու է «ազատ» մարդոց եւ ոչ թէ ստրուկներու հետ: Չեռագործական արհեստաւորները «ազատ» ձգելու է իրենց ձեռագործական արդիւնարբերութեան ճիւղին վերայ, պայմանաւ որ անոնք չ'օժանդակեն տեղական բուրժուազիայի կազմաւորումին ու ծագելումին: Իսկ հանքերու մէջ աշխատաւորներու տալու է տեղական օրավարձէն քիչ մը աւելի վարձատրութիւն: Բայց ամէն պարագայի տակ նկատի ունենալու է արտադրութեան ու կապիտալի կուտակման կապիտալիստական եղանակի անփոփոխելիութիւնը. այն սխտէ՛մը, որ պայման դրած է անձնական աշխատանքի վրայ հիմնուող մասնաւոր սեփականութեան ոչնչացումը, այսինքն՝ գործաւորին ընչազրկումը:

Եւ կապիտալիստական պետութիւնները այս թէորիային դեմոկրատիկ հազուատ կրնան հազցնել, բայց անոր բնոյթը չեն կրնար փոխել:



Գ Լ ՈՒ Խ Զ .

ԱՅԽԱՐԻԻ ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆՆԵՐԸ

ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆԻ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԻՈՐՈՒՄԸ (1764-1876)

1. — ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՍՎՋՐՆԱՌՈՒՄԸ

Քարլ Մարքս, Եւրոպայի մէջ կապիտալիստական սիստէմի ընդհանուր սկզբնառումը թ.Ձ. դարուն տեղի ունեցած ըլլալը հաստատեր է իր Կապիտալի անդուգական ուսումնասիրութեամբ: Նախագէտ Եւրոպական ընկերային ուժի մի հիմքը կը կազմէր Ֆէոդալիզմը, որ սկսաւ Ե. դարուն Հռովմէական կայսրութեան կործանումէն յետոյ:

Ֆէոդալիզմը տիրական սիստէմ էր ո՛չ միայն ամբողջ Եւրոպայի մէջ, Անգլիայէն մինչեւ Ռուսաստան, այլեւ՝ Ասիոյ մէջ: Չինաստան, Հնդկաստան, Ճապոն եւայլն — այդ երկիրներու մէջ ան միախառնուած էր նախորդող ընկերային այն սիստէմին հետ, որ հիմնուած էր գերետիրութեան վրայ: Եւրոպայի մէջ կապիտալիզմի ծնունդ առած ատեն Ափրիկէի, Աւստրալիայի եւ Ամերիկաներու ընդարձակ տարածութեանց վրայ բնակող հասարակութիւնները նահապետական Կոմունիզմի կեանքը կ'ապրէին, բացի անոնց ծովեզերքներու այն նեղ շերտերէն, որոնց մէջ ճերմակ աւարտները արդէն հաստատեր էին իրենց նախակապիտալիստական բանակատեղիները:

Հակառակ չարք մը յաջողութեանց, Ֆէոդալիզմը երբեք լրիւ տիրական չեղաւ Ամերիկաներուն մէջ: Ինչ որ վերջերս ծանօթ եղաւ որպէս Լատին Ամերիկա, մեծ հողատէրերն ու Ֆէոդալ ազնուականները, հոն ընդարձակ հողամասեր գրաւեցին, ստրկացուցին նէկրոներն ու հնդիկները եւ հիմնեցին գաղթային սիստէմ մը, ի ենթածառայութիւն՝ Ֆրանսայի, Սպանիոյ եւ Փորթուգալի: Ինչ որ իրականագէտ տեղի ունեցաւ Մ. Նահանգներու եւ Գանատայի մէջ, Անգլիոյ, Ֆրանսայի եւ Հոլանտայի հարուստ հողատէրերը նոյնպէս բռնութեամբ ու խարդախութեամբ հնդիկներէն յափշտակեցին հսկայ հողամասեր եւ անոնց վրայ հաստատեցին Եւրոպայի Ֆէոդալիզմի նըմանող սիստէմ մը, որ գառապարտուած էր ձախողանքի: Ֆրանսացիք Ֆէոդալիզմի մանրանկարը դրին Սէնդ Լորէնս գետին եզերքը. հոլանտացիք Ֆէոդալ տանուտիրական սիստէմ մը հաստատեցին Հըտսըն գետի շրջակայքը, իսկ անգլիացիք հարաւային նահանգներու մէջ

հաստատեցին կէս Ֆէոդալական սիստէմ մը: Բայց ընդհանուր առմամբ Մ. Նահանգներու եւ Գանատայի վճռական դեր կատարող շրջաններու մէջ բոյն դնել ուզող Ֆէոդալիզմը՝ որ արդէն անդամահատուեր էր, չէր կրնար դիմադրել նորածին կապիտալիզմի ուժեղ յարձակումներուն: Ան չէր կրնար մոնոպոլ ընել ցամաքային հողամասերը, ան չէր կրնար ստրկացնել բանուորներն ու Փարմըրները, եւ ան չէր կրնար ետ մղել հեղահետէ ուժեղացնող կապիտալիստ գասակարգը: Գրեթէ սկիզբէն իսկ, կարելի է ըսել թէ, այս լայն շրջաններու տնտեսութիւնները, ըլլալ երկրագործական թէ ճարտարարուեստի մէջ իրենց էութեամբ կապիտալիստական էին:

Կիլտի սիստէմը. —

Ֆէոդալիզմի շրջանին քաղաքները այնքան մեծ չէին եւ սակաւ էին. բայց ինչ որ նշանակելի է, անոնք ձեռագործական արտադրութեանց կեդրոններ էին: Ձեռագործ արհեստաւորները, կազմակերպուած էին եւ անոնց կազմակերպութիւնը կը կոչուէր կիլտ — արհեստակցական ընկերակցութիւն: Կիլտի գործատեղիները առհասարակ փոքր էին: Անոնց ամէն մէկը ունէր մէկ վարպետ, երկու կամ երեք արհեստաւոր եւ մէկ աշկերտ: Կիլտերը միմիանց կապուած էին որոշ կանոնադրութեամբ եւ ստեղծեր էին գործաւորներու, արտադրողութեան ու առուտուրի մոնոպոլիներ: Ասոնցմէ զուրս կային հասարակ աշխատաւորներ, որոնք կիլտերու կապուած չէին: Կիլտի սիստէմը Ամերիկայի մէջ արմատ չկրցաւ բռնել:

Առեւտրականութեան (մէրքանտիլիզմի) զարգացումը. —

Ֆէոդալական սիստէմը լայն պատհանութիւն կու տար վաճառական գասակարգին՝ աճելու եւ բարգաւաճելու: Վաճառական գասակարգին գործն էր ապրանքներ փոխանակել քաղաքի կիլտերու միջեւ, առուտուր ընել կիլտի մարդոց եւ հողատէր ազնուականութեան միջեւ եւ զարգացնել օտար առեւտուրը: Վաճառականներն ալ ունէին իրենց կիլտերը, որոնք տիրական ուժեր զարձան Միջին Գարու քաղաքներու մէջ: Արհեստաւոր կիլտերու եւ վաճառական կիլտերու միջեւ պայքար սկսաւ, իշխանութեան ձգտող պայքար մը, ուր յաղթութիւնը վիճակուեցաւ վերջիններուն:

Առեւտրական յեղուղակ վաճառականները զարգացուցին քաղաքներ՝ նաւարկելի գետերու եզերքներուն՝ մասնաւորապէս ծովեզերքներուն վրայ:

Ճարտարարուեստական յեղափոխութիւն .—

Ազգային եւ միջազգային շուկաներու ընդարձակումը մեծապէս խթանեց արտադրողականութիւնը եւ ստեղծեց վաճառական կապիտալիստներու զօրեղ մարմին մը, որ կրցաւ տկարացնել Փէոդալիզմի հիմքերը, բայց անկարող էր տապալել այդ ընկերային ուժի մը եւ հաստատել կապիտալիզմը՝ որպէս տիրող սիստէմ: Այդ բանը ընողը պիտի ըլլար կապիտալիստ դասակարգը, որ պիտի փոխէր արտադրութեան Փէոդալական ձեւը: Այն յեղափոխական զարգացողութիւնները, որոնք արդէն արմատ բռներ էին անցեալին մէջ, վճռական, կարեւոր դեր խաղացին ԺՉ. դարուն:

Նոր ճարտարարուեստական կապիտալիստները վերջ տուին կիրաւրու հսկողութեան եւ հին արտադրողական ձեւերուն, որովհետեւ պայմանները մտած էին հասունացման պրոցէսին մէջ: Այս շարժումը յառաջ գնաց ԺԷ. եւ ԺԸ. դարերուն, երբ Փէոդալական արտադրողութիւնը սկսեց էր վատթարանալ եւ պատրաստուիլ տնտեսական եւ քաղաքական յեղափոխութեան՝ որ շուտով պիտի պայթէր:

Ճարտարարուեստական յեղափոխութիւնը սկսաւ ԺԸ. դարու կիսուն, երբ մասնաւորապէս հիւսուածեղէնի ճարտարարուեստի մէջ զարգացան ու գործի դրուեցան շարք մը մեքենաներ:

Կապիտալիզմը ծլեցաւ Արեւմտեան Եւրոպայի հողին վրայ եւ տարածուեցաւ Ամերիկայի անդլիական դաղութներուն մէջ: Ֆրանսա, Պելճիզա, Իտալիա, Հոլանտա եւ Գերմանիա, բոլորն ալ կապիտալիստական աճման դիմով ճիւղեր ունեցան. բայց Անգլիան մնաց շարժման առաջնորդը:

Բուրժուա-ֆազալական յեղափոխութիւնը .—

Սկզբնական շրջանին, Փէոդալիզմը, հիմնուած ճորտութեան վրայ, յառաջդիմական էր այն իմաստով որ իրեն նախորդող գերետիրական սիստէմին՝ հոովմէական սիստէմին հակադրուած սիստէմ մըն է, համեմատաբար իր զարգացողական բնոյթով, բայց ան իր ներքին ներհակութեանց աճումով, հետզհետէ շղթայեց արտադրողական ուժերը եւ դարձաւ արգելք՝ կապիտալիզմի զարգացման: Ասկէ ծնան յեղափոխութիւնները: ԺԸ. դարուն բուրժուայ աշխարհին մէջ յեղափոխական առաջին շարժումն էր Բողոքական Բարեկարգութեան շարժումը, որ ուղղուած էր Կաթողիկէ Եկեղեցւոյ դէմ: Անոր հետեւեցաւ անգլիական յեղափոխութիւնը 1644-ին, ամերիկեան յեղափոխութիւնը՝ 1776-ին, Ֆրանսական յեղափոխութիւնը՝ 1789-ին: Ասոնք մահացու հարուածներ տուին Փէոդալիզմին: Կապիտալիզմի վերջնական յաղթանակը ապահովուեցաւ յաջորդող դարուն, երբ կա-

պիտալիստական արտադրողականութեան ձեւը ընդհանրացաւ ամենուրեք՝ այս կամ այն յեղափոխական շարժումներու բռնկումով: Մենք անոնց մասին կը խօսինք յետոյ:

2.— ԳՈՐԾԱԻՈՐ ԳԱՍԱԿԱՐԳԻ ԾՆՈՒՆԴԸ

Կապիտալիստական սիստէմը հիմնուած է հողի եւ ճարտարարուեստներու մասնաւոր սեփականատիրութեան վրայ, շահու համար արտադրականութեան սկզբունքին վրայ եւ գործաւորները շահագործելու ուղեգիծին վրայ: Անոր նախաձեռնութիւնն ու կեանքի շարունակութիւնը կը պահանջէ մեծ թիւով անհատներու ներկայութիւնը, անհատներ՝ որոնք խարէութեամբ կամ բռնութեան տակ ընդունուած աշխատավարձով պարտաւորուած են աշխատելու կապիտալիստներու շահուն համար: Թէ ի՞նչպէս կապիտալիստ դասակարգը իր տնտեսական ու քաղաքական սիստէմի զարգացումով կրցած է գործող ուժերը համատեղել իր իշխանութեան տակ, ասիկա մարդկային սեռի պատմութեան ամենէն ողբերգական մասը կը կազմէ:

Ձեռագործ մարդոց վարձու բանուոր դառնալը .—

Եւրոպական կիրաւր պատմութիւնը ցոյց կու տայ որ ձեռագործ արհեստաւորները Միջին Դարուն ճարտարարուեստական բանուորներու գլխաւոր մարմինը կը կազմէին, որոնք էապէս անկախ արդիւնաբերողներ էին: Անոնք իրենց սեփական գործիքներն ունէին, որոնցմով կը գործէին. անոնք կը գնէին հում նիւթերը եւ կը ծախէին իրենց աւարտած արտադրութիւնները: Կիրաւրու միջոցով անոնք կը կանոնաւորէին իրենց առուտուրի պայմանները, կը հոգատարէին իրենց անդամ եղող հիւանդն ու ծերը եւ կշտաւոր ձայն ունէին այն քաղաքական օրէնսդրութեան մէջ, որու հովանիին տակ կ'ապրէին իրենք: Վարպետները, որոնք կողք կողքի արհեստաւորներու հետ, սովորաբար ունէին համեմատական եկամուտ, եւ ամէն մէկ հասարակ արհեստաւոր կամ աշկերտ՝ կ'երազէր որ օր մը ինքն ալ պիտի դառնար գործատէր վարպետ՝ իր սեփական իրաւասութեամբ: Այս գրութիւնը, իր զանազան ճիւղաւորումներով գործնականապէս տիրական սիստէմ էր Եւրոպայի մէջ:

Կապիտալիզմը երբ ծնունդ առաւ, կիրաւր գործատեղին իր անկախ ձեռագործ մարդոցմով եւ մոնոպոլիստական գործարկութեամբ իրական արգելք էր անոր համար: Նորելուկ կապիտալիստներն ուրեմն, զարգացուցին շատ մը միջոցներ, որոնք կը ձգտէին քանդելու կիրաւր սիստէմը: Ասոնց նպատակն ուրիշ պարագայ մը: Վաճառա-

կանները եւ հարստացած կիլտի գործատէրերը հետզհետէ ձեռք առին ձեռագործ արհեստաւորներու գործածած հում նիւթերու հրահողութիւնը եւ իրենք ստանձնեցին կիլտի արդիւնաբերութեան վաճառքի իրաւունքը: Ասիկա բաւականին ծանր հարուած կու տար կիլտի սիստէմին եւ միւս կողմէն կը նպաստէր կապիտալիստներու յաջողութեան:

Ճարտարարուեստի զարգացման մէջ յաջորդ զլիսաւոր երեւոյթը, որու երեսէն ձեռագործական արհեստաւորները պրոլետարներ դարձան, մանուֆակտուրայի աճումն էր, որ երկու փուլերէ անցաւ: Առաջինը այն էր, որ ձեռագործ մարդիկ հետզհետէ հաւաքուեցան մեծ թիւով ու սկսան գործել մէկ հաստատութեան մէջ, կապիտալիստներու վերահսկողութեան տակ: Այս կերպով ճամբայ բացուեցաւ երկրորդ փուլին, այսինքն մեքենաներու գործածութեամբ արտադրութեան զարգացումին: Այս բոլորին արդիւնքն այն եղաւ որ կիլտի մարդիկը (արհեստակցական միութեանց անդամները) պրոլետարներ դառնան:

Գիւղացիութեան պրոլետարականացումը.—

Զարգացող կապիտալիզմը գիւղացիութեան շարքերէն եւս զինուորագրեց մեծ թիւով գործաւորներ՝ իր աճող ճարտարարուեստներուն համար, եւ զանոնք լծեց հակամարդկային, անզուժ միթոաներով աշխատանքի լուծին:

Սոչոր հողատէրերը, չափազանց հրապուրուած բուրդի բարձր գինէն, ընդարձակ մշակելի հողամասեր ոչխարներու արօտատեղիներու վերածեցին, որոնց համար քիչ գործաւոր էր պէտք: Ասով գիւղացիները դուրս քշուեցան իրենց հողերէն ու գարձան մուրացիկներ, որոնցմէ բախտաւորները պրոլետարական բանակի զինուորները դարձան:

Ճարտարարուեստական յեղափոխութիւնը կապիտալիզմի զարգացումը աւելի արագացուց եւ երկրագործութիւնն ալ դարձուց կապիտալիստական շահագործութեան զետիւն: Իրերու այս ընթացառումը ամենէն առաջ տեղի ունեցաւ Անգլիոյ մէջ, յետոյ անցաւ եւրոպական ցամաքամասին վրայ: Ռուսաստանի մէջ նոյն երեւոյթը պարզուեցաւ երբ 1861-ին ճորտատիրութեան վերջ տրուեցաւ:

Պարտադիր աշխատանք, պարտաւտայութիւն (peonage) եւ ստրկութիւն (chattel slavery).—

Երիտասարդ կապիտալիստական աշխարհի մէջ ո՛չ մէկ տեղ գործաւորներու պահանջը այնքան ուժեղ էր, այնքան բուռն կերպով չեւտուած՝ որքան երեք Ամերիկաներուն մէջ. նոյնպէս ո՛չ մէկ տեղ

տնկարկութեան ու նորածին ճարտարարուեստական սիստէմի ծառայութեան համար գործաւորներ ձեռք ձգելու դժուր այնքան անմարդկային միջոցներ ի գործ կը դրուէին, որքան Գոլոմպոսի գտած այդ նոր աշխարհին մէջ: Մինչ Անգլիոյ եւ առհասարակ Եւրոպայի մէջ կը վխտային թափառաշրջիկներն ու մուրացիկները, երեք Ամերիկաներուն մէջ ուժգին կը շեշտուէր գործաւորներու պահանջը: Անգլիական կառավարութիւնը իր ուսերուն ծանրացող անդործներու բնոր թեթեւցնելու համար բանտերու մէջ խճողուած յանցաւորները եւ փողոցներուն մէջ վխտացող անդործները սկսեց էր ծախել նաւային ընկերութեանց: Բայց այս միջոցն ալ ուռճացող պահանջին բաւարարութիւն չէր տար: Ասոր հետեւանքով զարգացաւ երեխաներ ու չափահաս մարդիկ առեւանդելու եպերելի արհեստը: Այս արհեստի վարպետները այնքան ճարպիկօրէն յառաջ կը տանէին իրենց գործը, որ խաւարամիտ ժողովուրդի մէջ տարածուեցաւ ռզիմերու հաւատքը: Իբր թէ՛ չար ողիններ կային, որոնք կը յափշտակէին երեխաներն ու չափահաս մարդիկը եւ զանոնք կ'աներեւութացնէին. մինչդեռ իրողութիւնը այն էր, որ անոնք չէին աներեւութանար, այլ ծախուելով կը դրկուէին Ամերիկա:

Ամերիկաներուն վարձու գերիներ հայթայթելու համար, կապիտալիստական սիստէմի կանխագոյն շրջանին, մարդիկն ու երեխաները առեւանդելու եւ ծախելու ձեւէն զատ, կային նաեւ պարտաճառայութեան զանազան ձեւեր, որոնց ամենէն շատ երկար տառապող զոհերն էին ամերիկեան հնդիկները եւ նէկրոները, մասնաւորապէս Սպանիոյ, Ֆրանսայի եւ Փորթուգալի զաղութներուն մէջ: Նէկրօ գերին բռնադատեալ երկրագործական աշխատաւոր էր: Անոր աշխատավարձը չէր տրուեր. ան միայն իր գոյութիւնը պիտի քաշքշէր խարազանի հարուածներու տակ:

3.— ԹՐԵՅԳԻ ԻԻՆԻԸՆԻՁՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՁ (1764 — 1824)

Կապիտալիզմը ծնաւ Անգլիոյ մէջ, անոր հետ ծնաւ ժամանակակից բանուոր դասակարգը եւ Թրէյտ Իւնիլընի (Արհեստակցական Միութեան) շարժումը:

Մեր ուսումնասիրութեան թուականը նշանակեցինք 1764-ը, որովհետեւ ան ճշգրէն ճարտարարուեստական յեղափոխութեան սկզբնառումի թուականն է: Երիտանական զարգացող կապիտալիզմը անկէ յետոյ սկսաւ ոստումով յառաջդիմել: Էնդէլս կ'ըսէ թէ «1771-1775, տարեկան 5 միլիոն փառուտ բամպակ կը ներածուէր Անգլիոյ

մէջ, իսկ 1841 թուականին, Անգլիան կը ներածէր 528 միլիոն փառուստ բամպակ», որ կը նշանակէ աւելի քան հարիւր անգամ: «1738-ին, 75,000 կտոր բրդեղէն հագուստ կ'արտադրուէր Եորքշայրի Արեւմտեան Րիտինկի մէջ, իսկ 1834 թուին 950,000 կտոր բուրդի հագուստեղէն արտադրուեցաւ նոյն քաղաքին մէջ»:

Անգլիացի գործատէրերը տարուած կապիտալիստական անսահման ընչաքաղցութեան ոգիով, մարդկային տարողութեան սահմանէն անցան վարձու դերիները շահագործելու իրենց ջանքերուն մէջ: Ֆէոդալ ունեւորները ձեռնարկեցին աշխատուորները գործի որոշ ժամեր ունէին եւ համեմատաբար աւելի տանելի պայմաններու տակ կ'ապրէին, զիտէին թէ ի՛նչ է հաճոյքը, ի՛նչ է հանդիստը: Բայց այժմ, գործաւորները, չնայած որ նոր մեքենաներու գործարկութեամբ արտադրողականութիւնը եռապատիկ աճեր էր, բայց իրենց դրութիւնը կ'երթար գէշէն յոռեգոյնին: Այս նոյն պայմանները տիրող էին միւս բոլոր կապիտալիստական երկիրներու մէջ:

Բանուորներու ընդդիմադրութիւնը.—

Շահագործումի եւ թշուառութեան անհանդուրժելի պայմանները, որոնցմով շղթայուած էին Բրիտանացի բանուորները, աշխատաւորական մասսաներուն մէջ յառաջացուցին ինքնապաշտպանութեան արմատները մը, որ յետոյ փոխուեցաւ մարտական զիմադրութեան:

Գործաւորները առաջին առիթով, միացան եւ կազմեցին «բարեկամական ընկերութիւններ», նպատակ ունենալով ինքզինքնին պաշտպանել անգործութեան, հիւանդութեան, արկածներու, ծերութեան եւ ուրիշ անակնկալներու դէմ: Այդ նպատակով ալ՝ անոնք ինքզինքնին զրկելով գոյացուցիչ հասարակաց հիմնադրամ մը: Ասիկա նախնական քայլն էր ընդդիմադրութեան ոգիին: Անոնք այս քայլին զուգընթաց՝ ուրիշ քայլ մըն ալ առին, քաղաքական գործունէութեան քայլը, ճարտարարուեստական յեղափոխութեան առաջին տարիներուն: Այդ պահուն, բուրժուազիան, որ կը կռուէր իր գլխաւոր թշնամիներուն՝ Ֆէոդալ հողատէրերուն դէմ, որպէսզի իր կողքին ունենար կռուող լաւագոյն դաշնակից մը, որպիսին էր գործաւոր դասակարգը, վեր հանեց դեմոկրատական դրօշակը՝ ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան նշանարանով: Բայց անմիջապէս յետոյ՝ երբ այդ գլխաւոր թշնամին պարտուեցաւ ու ինք գրութեան տէրը դարձաւ, ցոյց տուաւ իր դաժան դէմքը: Բանուորները շուտով հասկցան թէ դեմոկրատի անունով հաստատուած կառավարութիւնը զիրենք անխղճօրէն շահագործող գործատէրերու կառավարութիւնն է: Ասոր վրայ անոնք ընդդիմադրութեան ուրիշ գիծ մը որդեգրեցին

— անտեսական համագործակցութեան գիծը, որուն հետեւանքով կազմեցին կոպերատիւներ: Այս շարժման առաջնորդն էր Ռապըրտ Օվէն: Տնտեսական համագործակցութիւնը թէեւ շատ քիչ չափով թեթեւաց բրիտանական բանուորներու սոսկալի պայմաններու ծանրութիւնը, բայց անոնց վիճակուած էր մեծ դեր կատարել ո՛չ միայն բրիտանական հողամասին մէջ, այլեւ յաջորդող տասնեակ տարիներու ընթացքին՝ ուրիշ շատ մը ազգային ու միջազգային բանուորական կազմակերպութիւններու մէջ:

Մեքենաներու խորտակում եւ ապստամբութիւն.—

1764-1824-ի ժամանակաշրջանին բրիտանական բանուորները, որոնք ազգու միջոցներու մասին կը մտածէին կռուելու զիրենք շահագործողներուն դէմ, տեսնելով որ բարեկամական ընկերութիւնները, կոպերատիւներն ու կառավարութեան զիմումնադրերը ոչինչով կ'օգնեն իրենց, որդեգրեցին յարձակողական մեթոտներ. այն է՝ փչրել մեքենաները:

Այս շարժման առաջնորդն էր առաւել կամ նուազ առասպելական մարդ մը Նէտ Լուտ, որուն ենթադրական ամբոցն էր Շէրվուտ Անտառը, երբեմնի նոյնպէս վիպական՝ Ռապին Հուտի բնակավայրը: Գոյի կ'ըսէ որ «թագաւոր Լուտի ով ըլլալը ո՛չ ոք գիտէր եւ ոչ ոք զայն տեսեր էր երբեք. բայց շարժումը իրական էր: Թագաւոր Լուտի հետեւորդները փչրեցին Րիտինկի հիւսուածեղէնի մէկ գործարանի մեքենաները եւ գործարանը հրոյ ճարակ դարձուցին»: Անոնց այդ յանդուզն արարքը համակրութեամբ ողջունեցին ուրիշ գործով պարապող գործաւորները:

Յուսահատութենէ մղուած բանուորները բաց ճակատով պարզած էին ապստամբութեան դրօշը: Բայց շարժումը խեղդուեցաւ արեւան լիճի մէջ, շատեր սպաննուեցան, ողջ բռնուածները կախաղան բարձրացան: Նման ապստամբութիւն մը պայթեցաւ Նատինկհէմի մէջ 1815-16-ին, որ նոյնպէս կառավարութեան ուժով ճզմուեցաւ: Այդ շրջանի բանուորները տակաւին չէին մտածեր թէ մեքենաները փճացնելով իրենց վիճակը չէր բարւոքուեր, իրենք այդ մեքենաներուն տէրերը դաւնալու էին:

Գործադուլներ եւ թրէյտ իւնիւրններ.—

Ճարտարարուեստական յեղափոխութենէն յետոյ ԺԸ. դարու վերջին քառորդին քրէյտ իւնիւրնիզմը սկսաւ աճիլ ուժգնօրէն եւ գործադուլները դարձան սպառնական: Անգլիական Պարլամենտը 1800 թուականին մասնաւոր օրինագիծով ապօրէն յայտարարեց գործադուլն ու քրէյտ իւնիւրնիզմը: Բայց հակառակ այդ օրինադի-

ծին, բանուորները արհամարհեցին դրուած օրէնքները եւ շարունակեցին իրենց կազմակերպուած շարժումը: Գործատէրերը այս անգամ դիմեցին ուրիշ միջոցի մը. այն էր՝ բաժնել բանուորները ներհակ շահերու խրամատով: Վարպետ մեքենագէտներուն, տպագրիչներուն, մասոններուն աշխատավարձերը աւելցուցին անհամեմատ չափով. ասոնք շարաթական կը ստանային յիսուն շիլլինգ, մինչ հասարակ գործաւորները կը ստանային միայն տասը շիլլինգ: Ասով յառաջացաւ բանուորական արիստոկրատիան, որ բաժնուած էր առանց առաջնորդի մնացած շահագործուող ու ստուապող բանուորներէն:

4.— ՕվէնիՉՄ եւ ՉԱՐՏԻՉՄ (1817—1868).—

Գերաճող կապիտալիստական շահագործման կրկնակի ճնշումին տակ, երբ աշխատավարձերը կրճատուեցան, Մեծն Բրիտանիոյ բանուորները ժԳ. դարու կիսուն, ո՛չ միայն հերոսաբար կուուեցան ինքզինքնին պաշտպանելու համար, այլև անցան յարձակողականի: Ի հարկէ հասկնալի է, որ քրէյտ իւնիքնի անդամները մէկ օրուան մէջ դասակարգային խոր գիտակցութեան չէին կրնար հասնիլ. դժուարին պայքարումներու ընթացքին էր որ անոնց զազաւարները պիտի բերեզանային, որպէսզի որոշակի ճշգէին իրենց վերջնական նպատակը եւ զայն իրագործելու միջոցները: Այդ օրերուն, տակաւին Մարքս մը չկար, որ լուսաւորէր անոնց քալած ճամբան: Բայց ինչ ալ որ ըլլար, սկսեւ էր բանուորական շարժման մահլէ՛թացութիւնը եւ պիտի շարունակուէր, հոգ չէր թէ տիրող պայմանները աննպատ էին:

Բրիտանական բանուորները մասնակի յաղթանակ մը ապահովեցին երբ ընդհանուր քուէարկութեան իրաւական պահանջով 1832-ին Բարեկարգութեան Օրինագիծ մը կրցան անցնել տալ: Բրիտանական կղզիներու 16 միլիոն բնակչութեան միայն 160,000ը քուէատու էր: Այդ օրինագիծը անցնելէն յետոյ քուէատուներու թիւը եռապատուուեցաւ: Ասիկա փոքրիկ յաղթութիւն մըն էր, որ կրնար աւելի մեծ ըլլալ եթէ բուրժուական տարրերը չդաւաճանէին:

Բանուորներու երկրորդ յաղթութիւնը 1847-ին, Ինը ժամուայ Աշխատանքի Օրինագիծին հաստատել տալն էր:

Նոյն ատեն ուրիշ պատմական շարժում մը սկսաւ Ռարըրտ Օվէնի առաջնորդութեամբ, որ արտակարգ դեր կատարեց բրիտանական աշխատաւորական շարժման մէջ:

Օվէն ծնած էր 1771-ին Նիւտընի մէջ: Ինք ըլլալով հարուստի զաւակ, երբ մեծցաւ բաժնետէր դարձաւ Նու Լանարքի բամբակի մա-

նարաններուն, ուր կը գործէին երկու հազար բանուորներ: Մօսէն տեղեակ գործարաններու ընդհանուր՝ սարսափելի պայմաններուն, Օվէն ձեռնարկեց մաս մը բարեկարգութիւններ մտցնել իր գործարանին մէջ. աւելցուց աշխատավարձերը, կրճատեց գործի ժամերը, չափաւորեց երկխաներու աշխատանքը, առողջապահական կանոններով տուներ շինեց եւ նոյն ատեն ալ խոշոր շահեր ապահովեց: Իր տիպար օրինակ ծառայող մանարանները ընդհանուր ուշադրութիւն գրաւեցին:

Բայց Օվէն չուտով աւելի յառաջ գնաց: 1817-ին, գործարանային բարեկարգութեանց հետ ան առաջադրեց հաստատել 500-էն 5000 հոգիներով ինքնարաւ զիւղեր՝ բոլորն ալ սարքաւորուած անհրաժեշտ մեքենաներով: Այս համագործակցական հասարակուորդներուն մէջ կապիտալիստներու եւ բանուորներու միջև եղած տարբերութիւնը կը վերջանար: Օվէն միամտօրէն կը յուսար թէ իր օրինակին պիտի հետեւէին միւս գործատէրերը եւ յետագիծական կառավարութիւնն ալ պիտի օժանդակէր իրեն: Այդ ատենները, Նարոլէոնական պատերազմներու հետեւանքով, երբ երկիրը անտեսական ճրգնածամի մատնուած էր, Օվէնի ծրագիրը խնդրոյ առարկայ դարձաւ:

Նոյն շրջանին, Օվէնի պէս կը մտածէին Սէն Սիմոն, Չարլզ Զուրիէ, Էտիէն Գարէտ եւ ուրիշներ: Ասոնք իւտոպիստ սոցիալիստներ էին, որոնք կապիտալիստական շահագործման սոսկալի հետեւանքները կ'ուզէին վերցնել իրաւախոհութեամբ ու բարի ցանկութեամբ: Յամենայն դէպս, պէտք է ըսել, որ այս իւտոպիստները մեծ դեր խաղացին աշխատաւորական պատմութեան մէջ: Էնգէլս, շատ իրաւամբ Օվէնը կ'անուանէ «Անգլիական Սոցիալիզմի հիմնարկիչը»:

Օվէն, տեսնելով որ իր ծրագիրը մատնուեցաւ ձախողանքի, 1825-ին, անցաւ Ամերիկայի Մ. Նահանգները, 30,000 արտավար հող գնեց Ինտիանա նահանգին մէջ եւ Նու Հարմոնէի մէջ հաստատեց կոոպերատիվ գաղութ մը, որ նոյնպէս ձախողանքի մատնուեցաւ: Օվէն երբեք չանդրադարձաւ այն ճշմարտութեան՝ որ իր հաստատած փոքր կղզիները կապիտալիստական ովկիանոսին մէջ կարելի չէր պաշտպանել ու յաւերժացնել սոսկական համակրութիւններով ու բարի կամեցողութիւններու պարիսպներով:

Վերադառնալով Անգլիա, Օվէն տեսաւ որ բանուորութիւնը տողորուած է յեզափոխական անզուսպ տրամադրութեամբ: Բանուորները յուսալով որ կրնան բարելաւել իրենց դրութիւնը եւ վերջ գնել կապիտալիզմին, հետեւեցան Օվէնի ծրագրին ու եռանդալին յառաջ տարին կոոպերացիայի շարժումը: Շուտով 800,000 բանուորներ համախմբուեցան այդ շարժման շուրջը: Բայց ի՞նչ ըսել, որ այդ շարժումն ալ վերջացաւ, երբ 1834-ի Փետրուարին կազմուեցաւ Մեծն Բրիտանիոյ Միացեալ Համագային Թրէյտ Իւնիքը: Օվէն ին-

քը պատրաստեց Միութեան յայտարարութիւնը եւ ինքն ընտրուեցաւ անոր Նախագահը: Իր համոզումով այդ միութիւնը պիտի կրնար հասարակութեան հսկողութիւնը ստանձնել եւ ճարտարարուեստները ղեկավարել, որպէս ապագայ սերունդներու սէնտիկալիզմի յառաջագահը: Այս շարժումը անհրաժեշտ դասերի ծառի նման եւ մի քանի ամիսներու ընթացքին՝ աւելի քան կէս միլիոն անդամներ ունեցաւ, ներառեալ Փարմային աշխատաւորներ եւ կիներ:

Այս Միացեալ Համագրային Թրէյտ Ինիլընի նպատակն էր ո՛չ միայն աշխատավարձերը աւելցնել եւ աշխատանքի ժամերը կրճատել, այլեւ հասարակութեան մէջէն վերցնել տղիտութիւնն ու ծուլութիւնը: Պէտք էր հաստատել տարբեր հասարակարգ մը, ուր իրապէս օգտակար եւ բանիմաց մարդիկ անցնելու են արդիւնաբերական ճիւղերու գլուխը, որպէսզի վերջ տրուի անխիղճ շահագործումներու: Միութեան կանոնադրութեան մէջ գրուած էր գործազուլը, բայց ո՛չ մէկ բառ քաղաքական գործունէութեան մասին. այդ կը նշանակէ թէ միութիւնը միմիայն անտեսական գետնի վրայ պիտի գործէր, բայց երկրի քաղաքական շէնքին պիտի չմտնար: Բայց յաջորդող տարիներուն, երբ գործազուլները իրարու յաջորդեցին ու սպառնալից կերպարանք ստացան, բանուորները իրենց դէմ կանգնած տեսան ո՛չ թէ իրենց գործատէրերը, այլ քաղաքական շէնքի ներքնայարկերը լեցնող զինեալ ոստիկաններն ու զինուորները: Ահա թէ ի՛նչպէս մէկ տարուան մէջ Միութիւնը հրապարակէն անհետացաւ:

Չարտիզմի երեսումը.—

Բրիտանական Համագրային Արհեստակցական Միացեալ Ընկերութեան պարտութիւնը Անգլիոյ գործաւոր դասակարգի կռուելու ոգին չսպաննեց. երեք տարուայ ընթացքին ուժգին արագութեամբ ուրիշ շարժում մը սկսաւ. Ժողովուրդի Չարտրի (ուխտազրի) պատմական շարժումը, որու կեդրոնական նպատակն էր յետադիմական հին քաղաքական շէնքը վերակազմել: Բանուորները համոզուած էին որ առանց քուէարկելու իրաւունքի, իրենք չէին կրնար բարելաւել իրենց աշխատանքի եւ ապրուստի դաժան պայմանները: Այդ ատենները, Անգլիոյ մէջ 24 մարդոցմէն միայն մէկ մարդ քուէ կու տար, Վէյսի մէջ՝ 23 մարդոցմէն մէկ մարդ միայն, Սկոտլանդի մէջ՝ 45 մարդոցմէն մէկ մարդ, իսկ Իրլանտայի մէջ՝ 115 մարդոցմէն միայն մէկ մարդ կրնար քուէ տալ:

Ուխտը (Չարտիզմը) ծնունդ առաւ Լոնտոնեան Բանուորներու Ընկերակցութեան մէջ, որ կազմուած էր 1836 թուականին: Անոր գլխաւոր հեղինակն էր Ուիլիամ Լըվէտ, մասնագէտ մեքենավար մը եւ Օվէնի հետեւորդ մը: Չարտիզմի ծրագիրը, որ հրապարակուե-

ցաւ 1838-ին, հետեւեալ վեց կէտերը կը պարունակէր.— (1) Չափահասներու ընդհանրական քուէարկութիւն. (2) միամեայ պարլամենտական սիստէմ. (3) հաւասար ընտրողական շրջաններ. (4) պարլամենտի անդամներու վճարում. (5) գաղտնի քուէարկութիւն. (6) աննկատ թողուլ պարլամենտի անդամներու սեփականատէր ըլլալու կամ չըլլալու հանգամանքը:

Չարտրը գարգացած էր ամենէն յարմար պատեհութեան ատեն: Երկիրը 1835 թուականէն սկսած անտեսական ճգնաժամի մէջ էր. միւս կողմէն՝ բարձրացեր էր բանուորներու կռուելու տրամադրութիւնը:

Չարտրի յայտարարութիւնը արտասովոր ոգևորութեամբ ընդունուեցաւ ճնշուած ու թշուառացած մասսաներու կողմէ: Բազմամարդ հաւաքոյթներ տեղի ունեցան երկրի բոլոր կողմերը, աննախընթաց ժողովրդական հաւաքոյթներ՝ յաճախ 350,000 մասնակիցներով: Այդ հաւաքոյթներու ընթացքին՝ կառավարութեան մատուցուելիք պահանջազիրը ստորագրողներու թիւը հասաւ մի քանի միլիոնի...:

Յեղափոխութեան ազդանշանը տուող այս մասսայական շարժումը սարսափով շղթայեց հողատէրերու եւ կապիտալիստներու սիրտը: Անոնց մտքին մէջ թարմ էր Ֆրանսական Յեղափոխութեան սոսկատեսիլ պատկերը: Ատոր համար անոնք չուզեցին ժամանակ կորսնցնել ջախջախելու Չարտիստական այդ սպառնալից շարժումը: Այսպէս էր ընդհանուր դրութիւնը՝ 1839 թուականին:

ՉԱՐՏԻՍՏԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Չարտիստական շարժման անմիջական եւ վերջնական նպատակին եւ անոր հասնելու լաւագոյն միջոցներու շուրջ Ուիլիամ Լըվէտը անորդներու մէջ գաղափարական լուրջ տարբերութիւններ կային: Ասոր հետեւանքով՝ շարժումը բաժնուած էր աջ ու ձախ թեւերու: Չարտրը (ուխտազիրը) յստակօրէն որդեգրած էր երկրի բոլոր ղեմակրատական ուժերու միացումով պայքարելու սկզբունքը, բայց ատոր ետեւ անհամաձայնութիւն մը ծագում առաւ: Օվէնի հետեւորդները կ'ուզէին կոռպերատիվի ձեւով հասարակապետութիւն հաստատել, իսկ Թրէյտ Ինիլընի առաջնորդները կ'ուզէին բաւականանալ բանուորներու վիճակը նուազագոյն չափով բարելաւելու ծրագրով: Այս բանը տեղի կ'ունենար տասը տարի առաջ՝ նախ քան կոմունիստական Մանիֆէստի հրապարակումը՝ Մարքս-էնգէլսի կողմէ:

Տակտիկայի շուրջ նոյնպէս արմատական տարրեր մտածողութիւններ կային Չարտրբի առաջագրած կռիւի միջոցառումներու գիծին վրայ: Լըվէտ եւ իր խումբը, որ աջակողմեան պատեհապաշտներէ կը բաղկանար, կողմնակից էր խաղաղասիրական միջոցներու գործարկումին՝ դաստիարակել մասսաները. մինչդեռ Օ՛րբայն, Օ՛րբանըր, Հարնի եւ ուրիշներ, խաղաղասիրական մեթոտը ընդունելով հանդերձ՝ կը ջատագովէին «Ֆրիդբական ուժի» սկզբունքը: Ասոնց նշանաբանն էր. — «խաղաղութիւն՝ եթէ կրնանք, ուժ՝ եթէ պէտք է»:

Կառավարութեան հետ առաջին բախումը տեղի ունեցաւ 1839ին, երբ Յուլիս 17-ին, Չարտիստները 1,250,000 ստորագրութեամբ պահանջադիր մը ներկայացուցին պարլամենտին: Կառավարութիւնը իր զինուորական ու ոստիկանական ուժով ճգմեց շարժումը եւ բանտարկեց Չարտիստ առաջնորդները: Որոշ տեղերու մէջ ապստամբական շարժումներ երեւան եկան, որոնք անգթօրէն ճգմուցան բազմաթիւ զոհեր տալով:

Այս ճախողանքը ծանր հարուած մըն էր Չարտիսական շարժումին, բայց տարի մը յետոյ՝ երբ բանտարկուած առաջնորդները ազատ արձակուեցան բանտէն, շարժումը նոր թափ ստացաւ: 1840-ին կազմուեցաւ Ազգային Չարտիստ Ընկերակցութիւնը՝ որպէս քաղաքական կուսակցութիւն, որ շուտով ստուարաթիւ անդամներով աճեցաւ եւ ուժեղացաւ: Այս անգամ կուսակցութիւնը պարլամենտին ներկայացուց 3,317,700 ստորագրութեամբ պահանջադիր մը: Նոյն ատեն տեղի ունեցաւ հսկայ գործադուլ մը: Կառավարութեան ուժով տիրող դասակարգը դարձեալ յաղթական դուրս եկաւ:

Չարտիստներու քաղաքական վերջին գործողութիւնը տեղի ունեցաւ 1848-ին, երբ Մեծն Բրիտանիան մխրճուած էր անտեսական ծանր ճգնաժամի մէջ եւ բանուորները ներշնչուած էին Եւրոպայի այն յեղափոխական շարժումներու հոսանքէն, որ սկսած էր Փարիզի մէջ 1848-ի Փետրուարին: Հսկայ ժողովրդական հաւաքոյթներ տեղի ունեցան ամբողջ երկրի մէջ՝ մէկ ծայրէն միւսը, հաւաքոյթներ՝ որոնք ղերազանցեցին 1839-ի եւ 1842-ի հաւաքոյթները: 1848-ին Ապրիլ 4-ի համազումարին մէջ Օ՛րբանըրը անգլիական պարլամենտին մատուցանելիք պահանջադիր մը ներկայացուց, որ կը ներկայացնէր 5,700,000 ստորագրողներու անունները: Յեղափոխութեան շունչը տարածուած էր ամենուրեք: Պահանջագիրը պիտի մատուցուէր Ապրիլ 10-ին, ժողովրդական բազմութեան ձեռքով: Կառավարութիւնը ահաբեկ եւրոպական ցամաքամասին վրայ տարածուող յեղափոխական ալիքներու շառաչուէն, շուրջ թոյլատրել այդօրինակ ցուցարարութիւն մը: Վիլինկտըն Դուքսի հրամանատար-

ութեան տակ անմիջապէս հրապարակ հանեց 250,000 զինուորներու ոստիկաններ եւ յայտարարեց որ երբեք պիտի չխնայէ ոչ ոքի: Այս սպառնալիքի ազդեցութեան տակ Օ՛րբանըր եւ ուրիշ Չարտիստ առաջնորդներ, ցրուեցին ցուցարար բազմութիւնը եւ իրենք անձամբ մատուցին պահանջադիրը, որ մերժուեցաւ: Կառավարութիւնը ձերբակալեց առաջնորդները եւ զանոնք դատապարտեց ցմահ բանտարկութեան: Այս վերջին պարտութիւնը մահացու հարուած մը եղաւ Չարտիստական շարժումին, որ կազնի կազ քանի մը տարի եւս ապրեցաւ բայց կորսնցուց իր ուժն ու մասսաներու համակրութիւնը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԲԱՆՈՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԹԵՔԻ ԴԵՊԻ ԱԶ

1848-ի եւ 1864 տարիները, երբ կեանքի կոչուեցաւ Միջազգային Բանուորներու Ընկերակցութիւնը (Առաջին Միջազգայնականը) այն շրջանն էր, ուր անգլիական ճարտարարուեստն ու առուտուրը արագօրէն զարգացան: Հիւսուածեղէնի, երկաթի, ամուխի եւ ուրիշ ճարտարարուեստները կրկնապատկեցին ու եռապատկեցին իրենց արտադրութիւնները: Բրիտանիոյ արտաձուծը երբեք անգամ աւելցեր էր քան ինչ որ էր 1849-ին: Ազատ առուտուրը եւ laissez faire-ը (ազատ թողուցէքը) ղերբարդաւաճ կապիտալիստներուն աւետարանն եղած էին, Վիկթորեան Ոսկեդարը, ուր բրիտանական կապիտալիստները հասեր էին իրենց ճոխութեան ամենարարձրագոյն աստիճանին:

Բանուորները, մասնաւորապէս ճարտարազէտ տարրերը, այդ ճոխութեան փշրանքներէն իրենց բաժինը ստանալով այլեւս չէին հետաքրքրուէր յեղափոխական շարժումով: Գործերը առատ էին եւ աւելի տեսական, ասկէ զատ երբ Ամերիկայէն աւելի աժան ցորեն կը ներածուէր, կենսամթերքի գիներն ալ նկատելի կերպով նուազեր էին: Սոյն պայմաններուն տակ, Չարտիստական շարժման ճախողանքին հետ խառնուած, բրիտանական Թրէյտ Իւնիքընի շարժումը սկսեր էր որոշակի հակիլ դէպի աջ: Բրիտանիոյ բանուոր դասակարգը այժմ թեւակոխած էր այն դարաշրջանը, զոր Սամուէլ Գամպլըրը՝ Ամերիկայի Աշխատանքի Դաշնակցութեան նախագահը վերջերս անուանեց. — «Մաքուր ու պարզ» Թրէյտ Իւնիքընիզմ:

5. — ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆԻԶՄԸ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ (1776-1865)

Կապիտալիզմը Մ. Նահանգներու մէջ ծաղկեցաւ նպաստաւոր պայմաններու տակ: Ահա երկիր մը, որ ունի ընդարձակ բնական հարստութեանց աղբիւրներ եւ միատեսակ կառավարութիւն մը, որ իր հսկողութեան թելերը երկարած է Ատլանտեանէն մինչեւ Սաղա-

դական ովկիանոսը. իսկ ունի ներքին շուկայ մը՝ որ անմրցելի է: Չհաշուելով գերետիրական Հարաւը, Մ. Նահանգները նոյնպէս ազատ էին Ֆէոդալական ստուերներէն, ինչպէս հողատէր պնուակա-նութիւնը եւ իշխանական եկեղեցին, ատոր համար կաշիւանդիչ շրջ-թաներ չունէին կապիտալիստական զարգացումը արգելակելու հա-մար: Իր աշխարհադրական դիրքն ալ մեծագոյն առաւելութիւն մը կու տար իրեն Եւրոպայի մէջ մղուող պատերազմներէն պաշտպան-ուելու տեսակէտէն:

Մինչեւ 1776 թուականը, գաղութային ամերիկեան կապիտա-լիզմը զարգացաւ բրիտանական իշխանութեան արգելիչ ազդեցու-թեան ներքեւ, բայց երբ ան յեղափոխութեան ուժով փշրեց տնտեսա-կան ու քաղաքական կապանքները, անկէ յետոյ՝ սկսաւ արագավազ յառաջդիմել: Կապիտալիզմը իր երկրորդ ոստումը կատարեց 1861-65 տարիներուն, երբ Քաղաքացիական Պատերազմով վերջ գրաւ գերե-տիրական սահաւապետութեան, եւ զարգացողական ճամբուն մէջ Անգ-լիան՝ «Աշխարհի գործատեղին» տարաւ յետամնաց դիրքի մը վրայ:

Նախայեղափոխական շրջանին ազատ ճերմակները փոքրամաս-նութիւն կը կազմէին Ամերիկեան աշխատաւորութեան շարքերուն մէջ, որովհետեւ բազմաթիւ էին առեւանդումով ներածուած ճեր-մակները եւ նեղրօ գերիները: Բայց մինչ ազատ ճերմակներուն զոր-ծի ու ապրուստի պայմանները Անգլիական գործաւորներուն հետ բազմապատկուելով 30էն 70 տոկոսով աւելի լաւ էին, այսու հանգերձ՝ երբ կապիտալիզմը կ'ուռճանար, անոնց դրութիւնն ալ կը վատթարանար. մէկ կողմէն՝ աշխատավարձերը կը կրճատուէին. օրական 12էն 15 ժամ աշխատօր եւ վերհսկիչներու անսանձ կամայականութիւն գոր-ծատեղիներու մէջ: Ասոր հետեւանքով շատ չանցած՝ Ամերիկեան ճեր-մակ գործաւորները հետեւեցան Մեծն Բրիտանիոյ գործաւորներու ու-ղիին. — Մտան գործադուլի ճամբան, կազմեցին Թրէյտ իւնիւրններ եւ դիմեցին քաղաքական գործունէութեան:

Գաղութային տարիներուն յիշատակելի են քառասուն յեղափո-խական ցոյցեր՝ գերիներու կողմէ եւ շարք մը ըմբոստութիւններ խեղճ Փարմըրներու եւ բանուորներու կողմէ, ինչպէս օրինակ՝ Բե-զոնի ապստամբութիւնը Վիրճինիայի մէջ 1676-ին, Լեսլըրի ապս-տամբութիւնը՝ Նիւ Եորքի մէջ 1689-ին եւ ուրիշներ՝ 1756-ին ու 1771-ին:

Թրէյտ Իւնիւրն շարժման ծնունդը. —

Յեղափոխութենէն վերջ ամերիկեան ճարտարարուեստը նշա-նակելի յառաջդիմութիւն ունեցաւ: Նոյն ատեն, երկրի բնակչութիւ-նը արագօրէն աճեցաւ: Նոյնպէս զարգացաւ գործարանական սիստէ-

մը, որուն հետ բազմացաւ պրոլետարներու թիւը: Ամենէն առաջ ծաղկեցաւ հիւսուածեղէնի արդիւնարբուութիւնը: Երկաթի, ատաղ-ձի, ալիւրի եւ ուրիշ ճարտարարուեստներ, որոնք աննշան միաւոր-ներ էին, յարատեւօրէն աճեցան ու մեծցան: 1810-ին տարագաղոր-ծուած ապրանքները կ'արժէին 198 միլիոն տոլար. 1834-ին 325 մի-լիոն տոլար արժողութեամբ ապրանք արտադրուեցաւ: Առուտուրի զարգացումով աճեցաւ նաեւ ծովային ղինուորներու թիւը:

Ամերիկեան յեղափոխութիւնը վերջ գրաւ ճերմակներու ա-ռեւանգման սիստէմին. նոյնպէս յաջորդող տարիներուն՝ ճերմակ գործաւորները ստացան քուէարկելու իրաւունք: Իսկ նէկրօ գերիներ-ուն դրութիւնը նոյնը մնաց, միայն թէ ափրիկեան գերիներու ա-ռուտուրը միանգամընդմիշտ ապօրինի հոչակուելով արգելուեցաւ:

Ընդհանուր առմամբ, ասիկա այն շրջանն էր, ուր կենսամթեր-քի դիները բարձրացան եւ գործաւորները սկսան կոտորի՝ իրենց ապ-րուստի պայմանները բարելաւելու համար. ասով սկսաւ դասակար-գային կռիւր:

Գործարանատէրերն ու հանքատէրերը, որոնք ծանօթ էին եւ-րոպական բանուորական խռովութեանց, փորձեցին բրիտանական օ-րէնքներու գծով արգիլել բանուորներու կազմակերպչական փորձե-րը, բայց անօգուտ: Մ. Նահանգներուն ճերմակ գործաւորները, հա-կառակ դրուած սեղմիչ օրէնքներուն, սկսան կազմակերպուիլ Բրէյտ իւնիւրններու շրջանակով: Ասկէ սկսաւ գործադուլներու շարքը: 1833-37 տարիներուն՝ օրավարձի յաւելման եւ աշխատածամբու կրճատման ի խնդիր՝ 173 գործադուլներ տեղի ունեցան Ատլանտ-եանի մօտիկ քաղաքներուն մէջ: Բայց այդ գործադուլները ձախող վերջաւորութիւն ունեցան: Բանուորները այս անգամ կազմեցին ի-րենց քաղաքական կուսակցութիւնը, որ պայմաններու հասունցած չըլլալուն հետեւանքով հրապարակէն չքացաւ. անոր հետ չքացան նաեւ կազմակերպուած Բրէյտ իւնիւրնները՝ 1837-ին, մեծ մասով. միայն մի քանի քաղաքներու մէջ անոնք պահեցին իրենց անուանա-կան գոյութիւնը:

Գերետիրութեան հրատապ հարցը. —

1837 եւ 1860 տարիներու շրջանին՝ Մ. Նահանգներու մէջ ընդ-հանուր յատկանշական իրադարձութիւններն էին. — Հիւսիսի մէջ ճարտարարուեստի արագ աճումը, Հարաւի մէջ՝ գերետիրութեան տարածումը. նուաճում՝ գէպի Արեւմուտք, Քալիֆորնիայի ոսկիի գիւտը, ջրանցքներու բացումը եւ երկաթուղային ցանցերու ընդար-ձակումը, Բրէյտ իւնիւրններու կրկին վերելումն ու անոնց ամբա-ցումը, նէկրօ գերետիրութեան ջնջման ի խնդիր՝ զօրեղ շարժման մը

յառաջացումը եւ ամենէն վերջ՝ յարատեւորէն սրուած կռիւ մը՝ Հիւսիսի գործառնէրբուն եւ Հարաւի գերետէրբուն միջեւ:

1793-ին, բամպակի մեքենայի գիւտէն ու գործարկումէն յետոյ՝ բամպակի արդիւնաբերութիւնը վիթխարի չափով աճում ունեցաւ, անոր հետ զարգացաւ նաեւ գերետիրութեան սիստէմը: 1790 թուին, միայն 3 հազար հակ բամպակ կ'արտադրուէր, իսկ 1860-ին, ան բարձրացաւ 3 միլիոն 481 հազար հակի: Նոյն շրջանին՝ երբ նկատի առնենք գերիններու թիւը, կը գտնենք հետեւեալը. — 1790-ին 697 հազար էր գերիններու թիւը, 1860-ին այդ թիւը բարձրացաւ չորս միլիոնի: Հարաւի գերետէրբերը կը յոխորտային ո՛չ միայն իրենց «Փաղաւոր Բամպակ»ի տարածած ազդեցութեամբ, այլեւ այն իրողութեամբ՝ որ անոնք երկրի քաղաքական իշխանութեան շէնքին մէջ կը զուարթ հեղինակութիւն ունէին: Տասնվեց նախագահներէն տասներմէկը իրենց մարդոցմէն ընտրուած էին. ծերակոյտը իրենց հսկողութեան տակ էր: Ասով անոնք կ'ուզէին գերետիրութիւնը պատուաստել նաեւ Հիւսիսի վրային: Բայց այս չէր Հիւսիսի եւ Հարաւի միջեւ հակամարտութեան կարեւոր գիծը: Հարաւի գերետէրբերը ո՛չ միայն հողին կապելով միլիոնաւոր աշխատաւորները, կը դանդաղեցնէին Հարաւի ճարտարաբանութիւնը զարգացման ընթացքը, այլեւ իրենց արտադրութեանց մեծ մասը — հում նիւթեր՝ բամպակ, ծխախոտ, վուշ եւ այլն — կը զրկէին Բրիտանիա: Անոնց այս գործառնութիւնէն կ'օգտուէին նաւատէրբերը եւ պանքաները: Հարաւի գերետէրբերը նոյնպէս մշտական արդելք էին Արեւմուտքի մէջ կապիտալիստական ձեւի փարմային զարգացման: Այս բոլորին վրայ երբ աւելցնենք նաեւ այն՝ որ Հարաւի գերետէրբերը կառավարութեան հսկողութիւնը իրենց ձեռքն առնելով արգելք էին ի նպաստ Հիւսիսի գործարանատէրբուն՝ կանոնաւորելու մաքսային դրութիւնը, այս բոլոր հանգամանքները իրենց բարդութեամբ կ'առաջնորդէին քաղաքացիական պատերազմի մը, որ սկսաւ Ապրիլ 12, 1861-ին:

Սոյն պատերազմի շրջանին քրէյտ իւնիքնի շարժումը ծաղկեցաւ անսովոր կերպով: 1864-ի Դեկտեմբերին Մ. Նահանգներու մէջ քառորդ միլիոն բանուորներ մտած էին քրէյտ իւնիքններու մէջ, որոնց թիւը կը հասնէր 300-ի:

Մնդրին խորթ կողմը, սակայն, այն էր որ նէկրոնները թէեւ քաղաքացիական պատերազմէն յետոյ՝ Հիւսիսայիններու յաղթութեամբ ազատագրուեցան, բայց անոնց առջեւ տակաւին փակուած էին քրէյտ իւնիքններու դռները:

6. — ԿԱՆԵԱԿՈՅՆ ԹՐԷՅՏ ԻՒՆԻՂՆԻՋՄԸ ԵՒ ԲՈՊԱՅԻ ՄԷՋ (1848 — 1864)

Եւրոպական ցամաքամասի երկիրները ժժ. դարէն սկսած ճարտարարուեստական զարգացման ճամբուն վրայ շատ ետ մնացեր էին Անգլիայէն, բայց աստիճանաբար ինկած էին Ֆէոդալիզմի քայքայման պրոցէսին մէջ: Ֆրանսական Յեղափոխութիւնը, նապոլէոնական պատերազմները Արեւմտեան եւ Միջին Եւրոպայի միապետներու թագերը չարտեր էին գետին, արագացնելով Ֆէոդալիզմի անկումը եւ կապիտալիստական ուժերու ծլարձակումը: Արեւմուտքի մէջ արդիական կապիտալիստական պետութիւններ նոր երեւան եկած էին, բայց Գերմանիան տակաւին շատ մը փոքրիկ պետութեանց խմբաւորում մը կը ներկայացնէր, այդպէս էր նաեւ Իտալիան: Ռուսաստանը կ'իշխէր Եւրոպայի Արեւելեան մասին, իսկ Թուրքիան կը հսկէր Բալքաններուն: Ճարտարարուեստական յեղափոխութեան կանչը յիտունէն հարիւր տարի վերջն էր որ լսուեցաւ Եւրոպայի մէջ: 1848-ի Եւրոպական յեղափոխութիւնը ուժգին թափ տուաւ ճարտարարուեստի զարգացման, անոր հետ նաեւ՝ քրէյտ իւնիքնի շարժման ուժեղացումին: Այս վերջինին սկզբնառումը կրնանք վերիվերոյ ըսել թէ՛ տեղի ունեցաւ 1848-ի յեղափոխութեան տարին, երբ Եւրոպական զանազան երկիրներու մէջ կազմուեցան քրէյտ իւնիքններ: Արդէն 1864-ի պատմական տարին, ուր Միջազգային Բանուորներու Ընկերակցութիւնը (Առաջին Միջազգայնականը) կազմուեցաւ, համաշխարհային աշխատաւորական շարժման պատմութեան զլխաւոր մղողնացոյցը կը ներկայացնէ:

Գերման թրէյտ իւնիքնի շարժման ծնունդը. —

Ժժ. դարու սկիզբները գերման աշխատաւորական ուժը կազմողներն էին ճորտերը, որոնք կ'աշխատէին Ֆէոդալական լուծի տակ. կային նաեւ աշկերտացած արհեստաւորներ ու վարպետներ, որոնք կազմակերպուած էին կիլտի սիստէմով: Գերմանիոյ մէջ գործարանական սիստէմը սկսաւ զլխաւորաբար Բրուսիոյ մէջ նոյն դարու երրորդ ու չորրորդ տասնամեակներուն: 1850-ին, երկիրը միայն 6,000 քիլոմետր երկաթուղային գիծ ունէր, 1860-ին, 14,687 քիլոմետր գիծ ունեցաւ: Փրուսիոյ մէջ ածխահանքերու բանուորներու թիւն էր 29,907. 1860-ին, այդ թիւը բարձրացաւ 65,682-ի: Փրուսիան, 1846-ին, 1,216 հատ շոգեշարժ մեքենաներ ունէր, 1861-ին ունեցաւ 4,682 մեքենաներ:

Սկզբնական շրջանին, կապիտալիստական Գերմանիոյ մէջ բանուորները կ'աշխատէին 12-էն 16 ժամ, սովամահութեան աստի-

ճանին մօտեցնող աշխատավարձքով, անոնք չունէին ընկերային ապահովագրութիւն, ոչ ալ քուէարկելու իրաւունք: Հոն եւս տեղի ունեցան ընդվզումներ, ապստամբութեան փորձեր ու մեքենաներու խորտակումներ՝ յաճախակի գործադուլներու զուգընթաց:

Նախ քան 1848 թուականը, մի քանի քրէյտ իւնիքններ միայն կային: Այդ տարին դերման բուրժուազիան կ'աշխատէր խորտակել երկրի տնտեսական ու քաղաքական կեանքին վրայ ծանրացած Ֆէոդալական կապանքները: Գերմանիան այդ ատեն բաժնուած էր միմեանց արդելք եզող 36 անկախ պետութեանց, որոնք բոլորն ալ յետադիմական հողատէրերու իշխանութեան տակ էին: Գերման բուրժուազիան նեղ դրութեան մէջ էր եւ վախնալով արժատական յեղափոխութեան հեռանկարէն, այնքաւ ուժ չտուաւ յեղափոխական ուղեւորին եւ համաձայնեցաւ փրօստիական հողատէր ազնուականութեան հետ՝ երբ այս վերջինը յօժար էր թոյլատրելու կապիտալիստական տնտեսական զարգացման փորձարկութիւնը: Այս պայքարին մէջ գործաւոր դասակարգը, պէտք է ըսել թէ՛ շատ կարեւոր դեր ունեցաւ:

Այդ պարագային էր կազմուեցաւ «Գործաւորներու Եղբայրութիւն» անունով կազմակերպութիւն մը, որուն հիմնադիրն էր Ստեփան Բօրն, 1848-ի Յեղափոխութեան ատեն՝ Մարքսի եւ Էնգէլսի գործակիցը:

1850-ի եւ 1860-ի տարիներուն, երբ ճարտարարուեստի յառաջդիմութիւնը ուսումներով կ'ընթանար, անոր հետ կը քալէր նաեւ բանուորներու կազմակերպութիւնը: Բուրժուազիան երբ ունէր իր քաղաքական կուսակցութիւնը — Յառաջդիմական կուսակցութիւնը, Ֆերտինանդ Լասալի առաջնորդութեամբ, բանուորներն ալ ունեցան Ընդհանուր Գերման Գործաւորներու Ընկերակցութիւնը: Ֆ. Լասալ, այն համոզումն ունէր որ սոցիալիզմին կարելի է հասնիլ տնտեսական կոպերատիվներով՝ որոնց նպաստելու էր կառավարութիւնը, ասոր համար բանուորները ունենալու են քուէարկելու իրաւունք: Այս կազմակերպութիւնը նախակարապետը եղաւ Գերման Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան՝ որ իր ընդթով թէեւ քաղաքական էր, բայց նոյն ատեն ծառայեց որպէս կեդրոնական խարխի՛ քրէյտ իւնիքններուն համար: Ի վերջոյ՝ Ուիլհէլմ Լիբկնիցտի եւ Աւիուստ Բէրէլի զլխաւորութեամբ՝ կազմուեցաւ Սոցիալ Դեմոկրատ Բանուորական կուսակցութիւնը:

Կանխագոյն ֆրանսական թրէյտ իւնիքնները.—

Ֆրանսան կապիտալիստական զարգացման ճամբուն վրայ ռահ-վիրայ երկիրներէն մէկն էր: Արդէն 1765 թիւին, կապիտալիստական գերածոց ուժերը այնքան զօրաւոր էին, որ Լուի XVI-ը, ա-

նոնց ազդեցութեամբ հարկադրուեցաւ կիլտերը (արհեստակցական տոհմային ընկերակցութիւնները) դատապարտութեան սիւնին կապել: Ֆրանսական յեղափոխութիւնը զանոնք հռչակած էր ապօրինի: Յեղափոխութեան շրջանին քանի մը գործադուլներ տեղի ունեցան, եւ Բարոֆ զարգացուց կոմունիստական ծրագիր մը, բայց 1791-ի օրէնքները ապօրէն յայտարարեցին ո'չ միայն կիլտերը, այլև բոլոր այն գործունէութիւնները, որոնք աշխատավարձքի յաւելման կը ձգտէին:

1830 թուականին, եւ անկէ առաջ, Ֆրանսայի շարք մը քաղաքներուն մէջ — Հալլըր, Ռուէն, Փարիզ եւ Լիոն — բանուորները վրիժառութեամբ լեցուած փշրեցին մեքենաները. անոնց նշանաբանն էր — «Անկցի՛ Նախարարը, կորչին շոգեշարժ մեքենաները, կեցցե՛ր բանուորները»:

1820-50 տարիներու ընթացքին, Ֆրանսայի մէջ ուժեղացաւ իւտոպիստ սոցիալիստներու շարժումը, որուն ընկերացան բազմաթիւ գործադուլներ: Յետագիմութիւնը, սակայն, ամէն ատեն յաղթական դուրս եկաւ եւ Ֆրանսական արդիւնաբերութիւնը անսովոր արագութեամբ աճեցաւ: Այս շրջանին հրատարակ իջան երկու դէմքեր. մին՝ Լուի Բլանին էր, որ կը ջատագովէր կոպերատիվ շարժումը, միւսը՝ ձօղէֆ Պրուզոնն էր, անարխիզմի հայրը, որու ծրագիրն էր վերցնել պետութիւնը եւ հասարակութիւնը դնել բանուորներու ազատ համագործակցական ընկերակցութեանց հիմքին վրայ:

Հակառակ կառավարութեան յառաջ տարած հալածանքին եւ Լուի Բլանքի ու Պրուզոնի նման իւտոպիստներու մոլորեցնող քարոզչութեանց, Ֆրանսայի մէջ քրէյտ իւնիքնի շարժումը հետզհետէ ծաւալեցաւ մասնաւորապէս 1857-ի եւ 1862-ի տարիներուն, երբ երկիրը մասնուած էր տնտեսական ճգնաժամի:

Իտալական թրէյտ իւնիքնիզմը.—

Երբ Իտալիան ժժ. դարուն կապիտալիստական արագ զարգացման շրջանը մտաւ, երկիրը բաժնուած էր շարք մը անկախ պետութեանց Աւստրիոյ գերիշխանութեան տակ: 1848-ի յեղափոխութիւնը ընդգրկեց նաեւ Իտալիան: 1848-էն 49, ամբողջ Իտալիան ապստամբութեան կրակով բռնկած էր: Բայց այդ ազգային յեղափոխութիւնը ճգմուեցաւ: 1859-ին էր միայն, որ Աւստրիացիները երկրէն քշուեցան դուրս, իսկ 1870-ին, Ֆրանսացիները դուրս հանուեցան Հռոմէն: Անկէ վերջն էր որ Իտալիան իր սեփական բուրժուազիի առաջնորդութեամբ կապիտալիստական անկախ պետութիւն եղաւ:

Իտալական բանուոր դասակարգը գործօն մասնակցութիւն ունեցաւ զինեալ յեղափոխութեան պայքարին մէջ: Բայց այդ բանուոր դասակարգը տակաւին հասունցած չէր, որ ունենար իր քաղաքական ծրագիրը, իր սեփական կազմակերպութիւնը, ատոր համար ան կը հետեւէր մանր բուրժուական արմատականներու, Կարիբալտի ու Մազզինիի նման առաջնորդներու ուղեգծին: Այսու հանդերձ՝ քրէյտ իւնիընի շարժումը սկսած էր երեւիլ հոս ու հոն եւ ան շուտով լայն շրջանակով տարածուեցաւ Առաջին Միջազգայնական յեղափոխական ազդեցութեան ներքեւ:

Այստեղ ուրիշ հատուած մը շաւելցնելու համար, ըսենք անմիջապէս, որ քրէյտ իւնիընի շարժումը այս շրջանին, ոչ միայն դրաւնէր Իտալիան, այլև Աւստրո-Հունգարիան, Պելճիգան, Հոլանտան, Գանիմարքան, Շուէտն ու Նորվեգիան, Իրլանտան, Սպանիան, Գանատան, եւ շարժման ալիքները հասան մինչեւ Սիւնէ, մինչեւ Աւստրալիա:

7.— ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԸ ԵՒ ՔԱՐԼ ՄԱՐՔՍ (1864 — 1876)

Միջազգային Բանուորներու Ընկերակցութիւնը (ՄԲԸ), գործաւոր դասակարգի առաջին միջազգային կազմակերպութիւնը, հիմնուեցաւ Լոնտոնի մէջ — Սէն Մարթին Սրահը, 1864-ի Մեպտեմբեր ամսոյն 28-ին: Ան արձանագրեց այն կշռադատ նպատակը, որ իր կեանքով ու պայքարումներով դէպի առաջ քաշելու ճամբաներ բանալու է բանուոր դասակարգի համար ընդհանրապէս, եւ քրէյտ իւնիըններու համար՝ մասնաւորապէս: Արդէն Չարտիգլի ատեն բանուորներու միջազգայնականի դադափարը կար, եւ Կոմունիստ Լիկան, Մարքս-էնգէլսի գլխաւորութեամբ՝ 1846-էն 1852, ամենէն կարեւոր յառաջադէմ էր Առաջին Միջազգայնականին:

Այդ ատենները միջազգայնականի մը կազմակերպման ճնշումը թէ՛ տնտեսական էր եւ թէ՛ քաղաքական, եւ այդ ճնշման հետեւանքով էր որ Ֆրանսայի եւ Բրիտանիոյ բանուորական շարժման առաջնորդները Լոնտոն հաւաքուեցան եւ հիմքը դրին Միջազգայնականին:

Աւելորդ է ըսել թէ ՄԲԸ-ի առաջնորդները Մարքսէն ու էնգէլսէն զատ ուրիշներ չէին կրնար ըլլալ, որովհետեւ անոնք էին որ 1848-ին հրապարակեցին Կոմունիստ Մանիֆէստը որպէս Կոմունիստ Լիկայի ծրագիրը:

Մարքս, իր գործակից էնգէլսի հետ վերլուծման ենթարկելով կապիտալիստական պետութիւնն ու կապիտալիստական տնտե-

սութիւնը, եւ զարգացնելով բանուոր դասակարգի սոցիալիստական հեռանկարն ու անոր յեղափոխական դերը, նոյն ատեն ուրուագծեցին պրոլետարիատի յեղափոխական փրկիստիպալութիւնը: Ասիկա դիալեկտիկական մատերիալիզմն է, որ կ'ընդգրկէ գիտութեան ամէն մէկ ճիւղը, ինչպէս նաեւ մարդկային մտածողութիւնն ու գործունէութիւնը:

Մարքսիստական մատերիալիզմը կը յայտնարերէ այն ճշմարտութիւնը, որ մարդոց խորհողութիւնը կը գունաւորուի իրենց ապրուստի պայմաններով, այդ կը նշանակէ անոնց զաղափարները կը ձեւորուին համաձայն իրենց նիւթական շահերուն: Արտադրողական յարաբերութեանց հաւաքական գումարն է որ կը կառուցանէ հասարակութեան տնտեսական շէնքը — այսինքն այն իրական հիմքը, որուն վրայ կը բարձրանան իրաւական ու քաղաքական վերնաշէնքերը եւ որոնց կը համապատասխանեն ընկերային գիտակցութեանց որոշ ձեւերը: Նիւթեղէն կեանքի մէջ արտադրողութեան եղանակն է որ կ'որոշէ ընկերային ընդհանուր բնոյթը, կեանքի քաղաքական եւ մտաւորական շրջանառութիւնները:

Մարքսիստները հասարակութեան կը նային որպէս գոյացութիւն մը որ յարատեւ փոխակերպման ընթացքի մէջ է, Էվոլյուցիայի մէջ: Այդ Էվոլյուցիայի մէջ կապիտալիզմը, որպէս ժամանակաւոր հասարակակարգ՝ անցնելու է տեղի տալով կոմունիզմին: Բայց այդ փոխակերպումը տարերային պիտի չըլլայ, ինչպէս զարուհը կը յաջորդէ ձմրան, այլ պիտի ըլլայ կապիտալիզմի ծոցէն ծնած ու կապիտալիզմը բացասող գիտակցական ուժով, պրոլետարական յեղափոխութեամբ:

8.— ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԸ, ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԵՐԸ ԵՒ ՓԱՐԻՋԻ ԿՈՄՈՒՆԱՆ (1864 — 1876)

Առաջին Միջազգայնականը քաղաքական կազմակերպութիւն մըն էր: Ան նպատակ ունէր համախմբել զանազան երկիրներու բանուորական ուժերը տանելու համար միացեալ ճակատով կռիւր՝ կապիտալիստ շահագործողներու եւ անոնց սիստէմին դէմ: Ան կոուլեցաւ պատերազմի դէմ, մեռնող Ֆէոդալիզմի մնացորդներուն դէմ: Ան կ'ուրուագծէր Մ. Նահանգներու մէջ նէկրո գերետիրութեան վերացման համար, Իրլանտայի եւ Լեհաստանի անկախութեան համար, բանուորներու քուէարկելու իրաւունքին համար, ընկերային օրէնրդութեան համար եւ անդուլ անդադար մասսաներուն մէջ տարածել աշխատեցաւ յեղափոխական դաստիարակութիւնը:

ՄԲԸ-ը նոյն ատեն՝ միջազգային քրէյտ իւնիքնիզմ էր. ահա թէ ինչո՛ւ ան մարտական կռիւ մղեց բանուորական միութեանց պահանջներուն համար. նեցուկ կեցաւ գործադուլներու, կազմակերպեց միութիւններ, եւ արշաւանք սկսաւ երեխաներու աշխատանքին եւ կին բանուորներու խտրականութեան դէմ: ՄԲԸ-ը 12 տարի ապրեցաւ, եւ իր բոլոր խորհրդածոյններուն ու գոնկրէսներուն մէջ շարունակ հետապնդեց բանուորական միութեանց հիմնական շահերը:

Ընդհանուր կերպով խօսելով, բրիտանական բանուորական միութեանց առաջնորդները այնքան գործօն դեր չստանձնեցին Միջազգայնականին մէջ եւ փորձ չըրին դրակելու կազմակերպութիւնը՝ ինչպէս ըրին Պրուզոնիստներն ու Բաքունիստները:

Գերման մարքսիստներ սահմանափակ աստիճանով մասնակցեցան Առաջին Միջազգայնականի գործերուն մէջ, իսկ գերման քրէյտ իւնիքն շարժումը, որ տկար էր, գրեթէ չէզոք մնաց միշտ:

Պրուզոնը հակառակ էր քրէյտ իւնիքնիզմին, հակառակ էր Ֆրանսայի եւ Պելճիզայի մէջ տեղի ունեցած գործադուլներուն, եւ իր այդ պայքարը շարունակեց Միջազգայնականի մէջ:

Ուրիշ բացասական ուժ մըն էր Բլանքի՝ 1848-ի յեղափոխութեան վեթերանը, որ անհամբեր էր եւ անմիջական ապստամբութեան կողմնակից, մանաւանդ Ֆրանքո-փրուսիական պատերազմի նախօրեակին, երբ սկսած էր գործադուլներու շարքը:

Ֆրանքո-փրուսիական պատերազմը սկսաւ Յուլիս 19, 1870-ին, եւ վեց շարժումն մէջ Նապոլէոն Գ.ի ապականուած կառավարութիւնը շարաշար պարտուեցաւ: Սեպտեմբեր 4-ին, Ֆրանսացի ժողովուրդը տապալեց Երկրորդ Կայսրութիւնը եւ հաստատեց Հանրապետութիւն, իսկ Փետրուար 15, 1871-ին, ժողովուրդը կատղած այն առաջնորդներէն, որոնք դաւաճանեցին Հանրապետութեան, Փարիզի մէջ հաստատեցին կոմունիստական դրութիւն՝ որպէսզի քաղաքը ազատեն գերմանացի եւ Ֆրանսացի յետադիմականներէն: Ջանքեր եղան, Ֆրանսայի միւս քաղաքներու մէջ ալ կոմունաներ հաստատելու, բայց անօգուտ... Փարիզի կոմունան կրնա՞ր տեւականանալ...:

Փարիզի կոմունան, պրոլետարական դիկտատորութեան պատմութեան մէջ առաջին օրինակն եղաւ, որ միայն երկուք ու կէս ամիս տեւեց եւ կործանեցաւ Մայիս 28-ին:

Միջազգայնականը, որ առաջին անգամ նման յեղափոխութեան մը կողմնակից չէր Փարիզի մէջ, կատարուած իրողութեան առջեւ ուրիշ ընելիք չունէր, բայց եթէ նեցուկ կենալ այդ յեղափոխութեան. այլ՝ ի դուր...:

Փարիզի հերոս ժողովուրդը չէր կրնար դիմադրել թշնամիներու բանակին: Վերսայի կառավարութեան զօրքերը Փարիզ մտան

Մայիս 21-ին եւ սկսան անխնայ կոտորել յեղափոխականներն ու հասարակ ժողովուրդը: Այդ կոտորածը աւելի սոսկալի էր քան 1848-ի յեղափոխական կռիւներու վաղորդայնին կատարուած կոտորածը:

9.— ԻՏԱԼԱԿԱՆ ԵՒ ՍՊԱՆԻԱԿԱՆ ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԵՐԸ, ԵՒ ԲԱՔՈՒՆԻՆ (1864 — 1876)

Միջազգային Բանուորներու Ընկերակցութեան (ՄԲԸ) 12 տարիներու ընթացքին՝ Իտալիոյ մէջ քրէյտ իւնիքնիզմը նկատելիօրէն յառաջդիմեց: Բայց այդպէս ընելով ան ունէր երկու զօրաւոր ուժեր, որոնք կ'արգելակէին իր աւելի մեծ թափով յառաջդիմութիւնը: Ասոնք էին մանր բուրժուական ձգտումներու անձնատուր մարդիկ. մին Մազզինին էր, միւսը Բաքունին:

Մազզինի, միջակորեար հանրապետական մը, փառասէր ու յանդուզն, ատեն մը փորձեց Առաջին Միջազգայնականը իր հակա-կռիւն տակ առնել եւ հոն ներմուծել դասակարգերու համագործակցութեան երազային ծրարիրը, որ իսկոյն մերժուեցաւ: 1872-ին Մազզինին մեռաւ, իրեն հետ մեռաւ իր շարժումը: Իտալական բանուորական շարժման մէջ Մազզինիէն աւելի մեծ դէմք մըն էր Միչէլ Բաքունին, ուստի անիշխանական առաջնորդը, որ ցարական հայածանքներէն փախչելով ապաստանած ու հաստատուած էր Իտալիոյ մէջ 1864-ին: Բաքունին Պրուզոնի աշակերտն էր, բայց անկէ կը տարբերէր տեսարանական ու տակտիկական մէկ քանի կէտերով:

Պրուզոն քրէյտ իւնիքնի հակառակ էր, հակառակ էր նաեւ գործադուլներուն, որովհետեւ իր կարծիքով, երկուքն ալ իր ծրագրով ընդունած փոխադարձ համագործակցութեան ուղեգծին բնական թշնամիներն էին: Պրուզոն յեղափոխութեան թշնամի չէր, բայց այնպէս կը մտածէր թէ յեղափոխութիւնը պիտի յառաջանար թշուառութենէն: Ան այդ իսկ առիթով դրեց քշուառութեան փիլիսոփայութիւնը, որուն Մարքս պատասխանեց իր մէկ հեզնական գործով. — «Փիլիսոփայութեան Թշուառութիւնը»:

Բաքունին, սակայն, քրէյտ իւնիքնիզմը կ'ընդունէր որոշ չափով: Ան գործադուլները կը նկատէր որպէս նախապատրաստական յեղափոխական շարժումներ, որոնք ճամբայ կը պատրաստէին զինեալ ապստամբութեան: Ան մշուշապատ դադափարներ ունէր բանուոր դասակարգի դերին եւ դասակարգային կռիւի մասին: Ան իր յարձակումը չէր ուղղեր կապիտալիստ դասակարգի դէմ, այլ պետութեան ու կրօնքին դէմ: Ան Աստուած եւ Պետութիւն դիրքը այդ տեսութեան նշանաբանով գրած է:

Միջազգայնականի մէջ Սպանիական կազմակերպում
Աշխատաւորութիւնը .—

Ժժ. դարու առաջին երեք քառորդին, Սպանիան շարք մը յեղա-
փոխական կռիւներու թատերարմ էր դարձեր: Այդ կռիւները կը ներ-
կայացնէին զարգացող բուրժուական յեղափոխութեան զանազան աս-
տիճանները: Յեղափոխութիւն՝ որուն նպատակն էր Փրանսացի ար-
չաւողները երկրէն քշել դուրս, խորտակել հողատէք ազնուականու-
թեան իշխանութիւնը եւ բացարձակ միապետութիւնը, զբաւել Կաթո-
լիկ Եկեղեցւոյ կալուածները եւ տիրանալ երկրի քաղաքական մեքե-
նային, մէկ խօսքով՝ բանալ կապիտալիստական զարգացման ճամբան:

Բաբունին, որ լատին երկիրներու մէջ բաւական լայն շրջանա-
կով դետին դրաւած էր, Սպանիոյ Միջազգայնականի բաժանմունքին
մէջ հեղինակաւոր դիրք ունեցաւ: Միջազգայնականը որքան ատեն որ
իր գոյութիւնը պահեց Սպանիոյ մէջ, Մարքսիստները փոքրամաս-
նութիւն կը կազմէին: Երբ 1872-ին Միջազգայնականը բաժնուեցաւ
երկու մասի, Սպանիական Դաշնակցութիւնը զնաց Բաբունիի ետեւէն:
1873-ին, Փետրուար ամսուն, Սպանիան մատնուեցաւ քաղաքական
ճգնաժամի, որ սկսած էր խմորուիլ երկար ատենէ ի վեր: Օգտուելով
նպաստաւոր դրութենէն, երկրի բուրժուական ուժերը յաջողեցան
միապետութիւնը տապալել եւ հաստատել հանրապետութիւն: Բայց
հաստատուած կառավարութիւնը շատ տկար էր, բազմաթիւ էին ներ-
քին հակամարտութիւնները. այդ իսկ պատճառով 1874-ի Դեկտեմբե-
րին, միապետականները տապալեցին Հանրապետութիւնը եւ վերա-
հաստատեցին Բուրպոններու թագաւորութիւնը:

Առաջին Միջազգայնականի բաժանումը .—

Միջազգային Բանուորներու Ընկերակցութեան մէջ սկսած էր
պայքար՝ Մարքսիստներու, հատուածականներու եւ պատեհապաշտ-
ներու միջեւ: Պայքարը սկսաւ համարեայ այն ատեն, երբ Բաբունին
1868-ին միացաւ Միջազգայնականին:

1872-ին, Լահէյի մէջ տեղի ունեցաւ Միջազգայնական Գոնկ-
րէսը: Պայքարը իր սաստկութեամբ պայթեցաւ նոյն համագումարին
մէջ: Մարքսիստները պայքարին մէջ յաղթանակը տարին ու Բաբո-
նիստները արտաքսեցին Միջազգայնականէն: Բայց Միջազգայնականի
կացութիւնը լուրջ էր. անոր գոյութիւնը փրկելու համար, կեղրոնը
փոխադրեցին Լոնտոնէն Նիւ Եորք:

10. — ԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԸ (1866-1876)

Մինչ Միջազգային Բանուորներու Ընկերակցութիւնը փոթոր-
կալից շրջան մը կ'ապրէր Եւրոպայի մէջ, անդին՝ Մ. Նահանգներու
երկտասարդ աշխատաւորութեան շարժման մէջ տեղի կ'ունենային
կարեւոր զարգացողական դէպքեր: Քաղաքացիական Պատերազմէն
յետոյ՝ Ամերիկեան ճարտարարուեստը զարգացեր էր թէ՛ կեղրոնա-
ցումով եւ թէ՛ ծաւալումով: Այս բոլորին հետ ընդարձակուեր էր նաեւ
աշխատուծի շուկան. շատ բնականօրէն ուրեմն, բանուորներն ալ պի-
տի ուժեղացնէին իրենց Թրէյտ իւնիքները՝ տեղականէն տանելով դա-
նոնք ընդհանուր՝ ազգային հիմքի վրայ: Բայց այդպիսի միութիւն
մը կազմելը այնքան դժուրն գործ չէր, որովհետեւ այս ու այն քա-
ղաքներու մէջ ցրուած էին իրարմէ անկախ ու անկապ տեղական ար-
հեստակցական միութիւններ, ութը ժամուայ աշխատանքի նշանաբա-
նով լիկաներ, բանուորական խորհուրդներ. ասոնք բոլորը իրարու
միացնելու համար արտասովոր կարողութեամբ օժտուած մարդ մը
պէտք էր: Եւ այդպիսի մարդ մը կար արդէն. ան Ուիլիամ Սիլվիոն
էր, այո՛, Սիլվիոն էր որ այդ վիթխարի շարժումը յառաջ տարաւ եւ
անջատօրէն գոյութիւն ունեցող բանուորական խմբաւորումները
միացուց եւ կազմեց Ազգային Աշխատաւորական իւնիքը:

Բայց այս կազմակերպումը Աշխատաւորական Միութիւնը ճա-
կատած էր անմիջապէս մեծ առեղծուածի մը: Չորս միլիոն նեկրոններ
կային որոնք նոր ազատագրուած էին ստրկութենէ: Անոնք պէտք ու-
նէին հողի՝ մշակութեան համար, ճարտարարուեստի մէջ գործ՝ ապ-
րուտի համար, եւ որպէս ազատ քաղաքացի՝ իրաւունք ունէին ջուէ-
արկելու: Ի՞նչ կարելի էր ընել անոնց համար: Ազգային Աշխատաւո-
րական Միութիւնը այս հարցին չկրցաւ մօտենալ(*) հակառակ մի

(*) Մինչեւ 1965 բուականը նեկրոններու դէմ մղուած ընդհա-
նուր նոյն խնդրականութիւնը կը շարունակուէր, հակառակ Մ. Նա-
հանգներու Գերագոյն Ատեանի որոշումին եւ Նախագահ Ճանքընի
յայտարարութեան: Հարաւի կարգ մը նահանգներու մէջ, մինչեւ
այսօր, ո՛չ միայն արգիլուած է անոնց բուէ տալ, այլև արգիլուած
է ֆաշի գերմակներու նաշարաններուն մէջ, քննալ ներմակներու
պանդակներուն մէջ, ներմակներու հետ ֆամբորդի օդանաւով, շոգե-
կարգով կամ օթօ պրտով: Բայց նեկրոնները պարտաւոր են կռուիլ Ա-
մերիկեան դրօշակի տակ՝ Ամերիկայի համար: Երկու տարիէ ի վեր,
նեկրոնները կը պայքարին քաղաքացիական իրաւունքի համար, եւ

քանի արմատական առաջնորդներու աշխատանքին: Քաղաքացիական պատերազմի ատեն նեկրոները կուուեցան հերոսարար: Նեկրոներն էին, որ լծուած էին ամենածանր ու ամենէն անարգ աշխատանքի, բայց անոնց արդիւուած էր մտնել ճերմակներու միութեան մէջ: 1869-ին, նեկրո բանուորները իրենց ուրոյն Աշխատաւորական Միութիւնը կազմեցին, բայց ճերմակներու Միութիւնը միացեալ ճակատի մասին չմտածեց բնաւ: Ուժերու բաժանումէն յառաջացաւ ուժերու քայքայում, եւ Ազգային Աշխատաւորական Միութիւնը սկսաւ քայքայուիլ, անոր հետ նաեւ նեկրոներու միութիւնը: Քարիթատիւտներու ուղածն ալ այդ էր:

Ազգային Աշխատաւորական Միութեան Անկումը .—

Աշխատաւորական այս միութիւնը թէեւ բաւականին արմատական ծրագիր ունէր — միջազգային բանուորական միութիւն, ութը ժամուայ աշխատանք, կանանց իրաւունքներու պաշտպանութիւն, անչափահասներու աշխատանքի վերացում եւ այլն — բայց երկու տեսակ որդեր կային, որոնք կը քայքայէին իր Ֆիզիքական կազմախօսութիւնը եւ կը բաժնէին իր ուժերը: Այդ որդերէն մին դադափարախօսական դիժն էր, միւսը՝ կազմակերպչական դիժը:

Ազգային Աշխատաւորական Միութեան մէջ մտեր էին եւրոպական խոզովութիւններէն փախտականներ, ինչպէս Չարտիստականներ, իրլանտացի ազգայնականներ, Կարիբալդիի բանակի կարմիր շապիկաւոր զինուորներ, 1848-ի Գերման Յեղափոխութեան հետեւանքով հալածուածներ, Դանիմարքացի, Աւստրիացի եւ Ռուս յեղափոխականներ, պաշարաւոր ու դիտակից Մարքսիստներ եւ անիշխանականներ: Ասոնք բոլորը դադափարական նոյն ուղեղովն վրայ բերելը դրեթէ անհնարին էր: Այսպէս ուրեմն, երբ դադափարական որոշ դիժ մը չկար, ատկէ կը յառաջանար դործունէութեան անհամաչափութիւն, աջ ու ձախ թեւերու բաժանում, իսկ ամենէն վերջը՝ քայքայում: Բայց ինչ ալ որ ըսենք, պէտք է ընդունինք որ այս միութիւնը Ամերիկայի աշխատաւորական շարժման մէջ կարեւոր դեր կատարեց:

տասնեակներով գոհեր տուին, բայց տակաւին մաս մը տեղերու մէջ խորականութեան օրէնքը ի գորու է: Հինէն ի վեր Մ. Նահանգներու մէջ նեկրոներու դէմ գործադրուած բարբարոսական մեքստները կապիտալիստական որեւէ երկիր չէ ունեցեր, ինչպէս լինչինկը, ձիմ Քրոիզմը... Այդ մասին տես իմ ուսումնասիրութիւնը.— «Յո՞ երթաս Ամերիկա...»: Լ. Մ.

Մ. Նահանգներու մէջ Առաջին Միջազգայնականը .—

Երբ 1872-ին, Լահէյի Գոնկրէսի որոշումով Ա. Միջազգայնականը Նիւ Եորք փոխադրուեցաւ, Ազգային Աշխատաւորական Միութիւնը Մ. Նահանգներուն մէջ գրեթէ հրապարակէն հեռացած էր, ինկած էր կազմալուծման վիճակին մէջ, քանի որ կրկիրը տնտեսական շատ խոր ճգնաժամի մասնուած էր:

Չորս տարիներու ընթացքին, Միջազգայնականի յարող Մարքսիստ անդամներու թիւը հազիւ թէ հասեր էր 15,000-ի: Անոր (Միջազգայնականի) գլխաւոր ճիւղերը տարածուած էին Նիւ Եորքի, Ֆիլատելֆիոյ, Շիքակոյի եւ Սէնտ Լուիզի մէջ:

Միջազգայնականը դործոն դեր ունեցաւ Ամերիկեան բանուորներու տնտեսական ու քաղաքական պայքարներուն մէջ, որդեգրելով Չարտիստներու նշանաբանը.— «Խաղաղ միջոցներով՝ եքէ կրնանք, ուժ՝ եքէ հարկ է»: Անոր ամենէն մեծ դործն եղաւ 1874 Յունուարին՝ ղեկավարել Նիւ Եորքի անդործներու ցոյցը, որ ճգմուեցաւ սատիկանական ուժով:

Մ. Նահանգներու բանուորները տակաւին քաղաքական հասկացողութեան մէջ խակ էին եւ իրենց համար Միջազգայնականի սկզբունքները կը թուէին օտար: Այդ հանդամներին վրայ եթէ աւելցնենք առաջնորդներու միջեւ տեղի ունեցած տեսարանական տարբերութեանց շուրջ հրապարակային հակառակութիւնները, այն ատեն երբեք տարօրինակ չի թուիր բանուորներու անտարբեր կեցուածքը: Ամենէն աւելի նոր շարժման վնաս տուողներն եղան Լասալեանները: Վերջ ի վերջոյ ներքին կործանարար պայքարները սաստկացան, ու Առաջին Միջազգայնականը լուծուեցաւ 1876-ի Յուլիսին:

11.— ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ ԵՒ ԲՈՒՐԺՈՒԱ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ (1644-1876)

Բուրժուազիան, ինչպէս նշեցինք նախապէս, Ֆէոդալիզմը խորտակելու համար յեղափոխական միջոցներու դիմեց, կուուեցաւ, պատերազմեցաւ քաղաքական իշխանութեան տիրանալու նպատակով: Ի հարկէ, ան առանձինն ոչինչ կրնար ընել առանց բանուորներու օժանդակութեան: Նոյն ատեն բանուորներն ալ իրենց պահանջները յառաջ տանիլ ուղեցին. եւ երբ տեսան թէ բուրժուազիան իրենց ուժը օգտագործելու համար խարեր էր զիրենք, այն ատեն իրենց մէջ արթնացաւ դասակարգային դիտակցութիւնը: Այժմ թուուցիկ վերատեսութիւն մը ընենք այդ յեղափոխութեանց վրայ:

ԺՉ. դարուն, Բողոքական Բարեկարգութիւնը մեծագոյն հարուածն էր, որ կու տար Կաթողիկէ կեղեցիքին: Առաջին բուրժուական յեղափոխութիւնը տեղի ունեցաւ Հոլանտայի մէջ 1579-ին, որու յաղթանակով Հոլանտան եղաւ ծովային իշխանութեան երկիր մը: Յետոյ՝ անոր յաջորդեց Անգլիական Յեղափոխութիւնը, որ տեւեց 1640էն 1686: Ասով Անգլիան կապիտալիստական տիրական երկիր դարձաւ եւ եղաւ ծովերու թագուհին: Այս յեղափոխութիւնները կրօնական դիմակի տակ պայթեցան տնտեսական ու քաղաքական քոչարկուած նպատակներով, որովհետեւ Կաթողիկէ կեղեցիքին Ֆէոդալիզմի յառաջապահն էր:

Հիմնականօրէն, Անգլիական Յեղափոխութիւնը կապիտալիզմի նորածիլ ուժերու եւ քայքայուող Ֆէոդալիզմի միջեւ եղած պայքարի հետեւանքն էր: Մէկ կողմն էր բացարձակ միապետութիւնը, Փէոդալ լորտերը, եկեղեցական բարձրաստիճան մարդիկը, հարուստ վաճառականներն ու մոնոպոլիստները, միւս կողմն էին զարգացող ճարտարարուեստի տէրերը, փոքր վաճառականները, ստորագաս ազնւականները, կապիտալիստ ֆաբրիքները եւ աշխատաւոր մասսաները: 1688-ին թեթեւ համաձայնութիւն մը գոյացաւ երկու թշնամիներու միջեւ, բայց յեղափոխութիւնը իր ծրագրուած նպատակին չհասաւ:

1776-83-ի Ամերիկեան Յեղափոխութիւնը բուրժուական յեղափոխութիւն էր, որուն գլխաւոր նպատակն էր վերջ տալ Անգլիոյ իշխանութեան եւ երկրի կառավարութիւնը յանձնել երկրի մէջ ուժեղացած Ամերիկեան բուրժուազիւսի ձեռքը: Այս յեղափոխութեան հետեւանքն այն եղաւ որ Արեւմտեան Կիսագունդին վրայ զաղթային կայսրութեանց — Մեծն Բրիտանիոյ, Սպանիոյ, Փորթուգալի եւ Յըրանսայի — իշխանութեանց վերջ տրուեցաւ, որովհետեւ անոնց գաղութները ապստամբութեամբ հետեւեցան Ամերիկայի օրինակին ու զարձան անկախ երկիրներ: Բայց այդ շրջանին, ոչ ոք կը գուշակէր թէ՛ Ուաշինկթընի Ամերիկեան պիտի ըլլար ապագային տուրքի կայսրութիւն մը, կապիտալիստական պետութեանց ընդհանուր հրամանատարը:

Ֆրանսական Յեղափոխութիւնը 1789-94-ին, քաղաքական գրծով աւելի ձախ հակեցաւ քան Անգլիական եւ Ամերիկեան յեղափոխութիւնները: Լուի ԺՉ-ի եւ Մարի Անթուանէթի գլուխները կտրելէ վերջ բազմաթիւ արիստոկրատներ գլխատեց, գրաւեց անոնց կալուածները, ապօրինի հաշակեց Կաթողիկէ եկեղեցին, կրօնքը հիմնապէս ոտնակոխ ըրաւ եւ կապիտալիզմի ճամբուն վրայի բոլոր արդեւքները չքացուց: Բայց յեղափոխութեան յաղթանակէն յետոյ՝ գործաւոր-

ներն ու գիւղացիները անցան նոր տեսակի լուծին տակ(*): Անոնք նոյնիսկ գրկուեցան քուէարկելու իրաւունքէն: Ֆրանսայի 24 միլիոն բնակիչներէն միայն 50,000 այր մարդիկ կրնային քուէ տալ:

Իրերու այդ դրութեան առեւ հրապարակ իջաւ գիւղացիի գաւակ՝ Ֆրանսուա Բարոֆ, որ իւտոպիական Կոմունիզմի գրոշակակիրը դարձաւ: Անոր ծրագիրն էր (1) Օգտակար աշխատանքի չլծուող բոլոր մարդիկը իրաւազրկել. (2) Ձինել ժողովուրդը եւ զինաթափ ընել յեղափոխութեան թշնամիները. (3) Հակայեղափոխութեան վերադարձումը արգելելու համար խիստ զբաքննութեան տակ սահել մամուլը. (4) Ձնջել ժառանգականութեան իրաւունքը. (5) Գրաւել հակայեղափոխականներու կալուածները. (6) Ամէն առողջ մարդու համար պարտադիր դարձնել հասարակական օգտակար աշխատանքը. (7) Ներմուծել մեքենաներ՝ պակսեցնելու համար մարդոց գործի ժամերը. (8) Ամէն մէկ կոմունայի մէջ հաստատել հասարակաց խանութներ. (9) Բանուորական խորհուրդներ ստեղծել տնտեսական նոր ծրագիրներ մշակելու համար. (10) Դաստիարակութեան ժողովրդական սիսակէմ որդեգրել հաւասարապէս բոլորին համար. (11) Բոլոր արդիւնաբերողները հասցնել այն աստիճանին, որ անոնք կարող ըլլան իրենց համար օրէնքներ գծել. (12) Ձնջել դրամը, ջնջել ազգային պարտքը, ջնջել արտաքին առուտուրի մոնոպոլը:

Սոյն ծրագիրով նոր յեղափոխութիւն մը խմորուելու վրայ էր, երբ կառավարութիւնը 10 Մայիս 1796-ին ձերբակալեց Բարոֆը եւ անոր գլխաւոր ընկերակիցները, որոնք պատրաստուած էին եւ ամենայն հաւանականութեամբ յաջողէին գրաւել կառավարութիւնը: Երեք ամսուայ զատավարութենէն յետոյ ձերբակալուածները թիրառնի զատապարտուեցան, իսկ Բարոֆը 28 Մայիս 1797-ին կիլեոզինի վրայ գլխատուեցաւ: Երեսուն եօթը տարեկան այս երիտասարդը մեծագոյն հերոսն եղաւ պրոլետարական գառին համար:

Եւրոպայի Բանուորները 1848 քուականին.—

1848-ի յեղափոխութիւնը, որ արագօրէն քայքայուող Ֆէոդալիզմի վրայ լայնատարած յարձակում մըն էր, յառաջացուց ապրտամբական շարժումներ՝ Եւրոպայի մէկ ծայրէն միւսը: Այդ փոթորկումին գլխաւոր կեզրոններն էին Ֆրանսան եւ Գերմանիան, բայց Անգլիան, Իրլանտան, Սպանիան, Իտալիան, Լեհաստանը, Ռուսաս-

(*) Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան մասին պիտի խօսինք այս հատորի երկրորդ Մասին մէջ, քիչ մը աւելի հանգամանօքէն: Լ. Մ.

տանը եւ ուրիշ երկիրներ նոյնպէս որոշակի ազդուեցան անկէ : Եւրոպայի մէջ կապիտալիստական տիրակալութեան նպատակին ուղղուած վճռական հարուած մըն էր ան, որմէ ազդուեցան նոյնիսկ Լատին Ամերիկան ու Մ. Նահանգները : Աւելորդ է ըսել թէ այս յեղափոխութեան մէջ դարձեալ բանուոր դասակարգն էր որ մեծագոյն գործօն դերը խաղցաւ ի նպաստ կորովի ու երիտասարդ կապիտալիզմին :

Յեղափոխութիւնը սկսաւ 1848-ի Փետրուարին : Այս յեղափոխութիւնը խիստ յատկանշական է այն բանին համար, որ բուրժուական եւ պրոլետարական ուժերը բաժնուեցան ու բաղխեցան իրարու : Փարիզի պրոլետարիատը պարզեց ապստամբութեան գրօշակը՝ Անկլի բուրժուազիան եւ կեցցէ Պրուլետարական դիկտատուրան նշանաբանով : Բայց աւա՛ղ, Փարիզի հերոս բանուորներու ջանքերը ձախողեցան : Բուրժուա հանրապետութեան ուժերը յաղթանակեցին :

1848-ի Յունիսեան ապստամբութիւնը Փարիզի Կոմունայի նախակարապետն եղաւ, ըսել կ'ուզենք 1871-ի Կոմունային :

Գերմանիոյ մէջ յեղափոխութիւնը սկսաւ Ֆրանսայի մէջ յեղափոխութիւնը սկսելէն մէկ շաբաթ յետոյ : Գերմանիան բաժնուած էր հողատէր ազնուականութեան ճիրաններուն մէջ : Նոյն ատեն աշխատաւոր մասսաներու, գիւղացիներու, արհեստաւորներու եւ բանուորներու դրութիւնը անկարգութիւնի աստիճանով վատթարացած էր 1847-ին : Երկիրը գրուած էր եռացող յեղափոխութեան կաթսային վրայ . բայց իշխող դասակարգերը ամբողջապէս ապշեցան, երբ յեղափոխութիւնը պայթեցաւ :

Մի քանի օրերու ընթացքին բանուորական մասսաները տապալեցին կառավարութիւնը Բատէնի, Վուրտէնպուրկի, Բաւարիայի, Հանովրի, Բրունսվիքի, Նասսոյի եւ Սաքսոնիոյ մէջ : Բերլինը նոյնպէս ինկաւ ժողովուրդին ձեռքը : Վրեննայի մէջ նոյնպէս ժողովուրդը տէր դարձաւ քաղաքին : Յեղափոխութեան շունչը տարածուեցաւ Հունգարիոյ, Բոհեմիայի, Հարաւային Սլավներու եւ Իտալացիներու մէջ :

Մարքս եւ Էնգէլս, Կոմունիստ Լիկայի առաջնորդները, որոնք քանի մը շաբաթ առաջ հրատարակած էին հռչակաւոր Կոմունիստական Մանիֆեստը, Բեյճիդայէն անցան Գերմանիա, յեղափոխական շարժումը ղեկավարելու համար :

Գերման եւ Աւստրիական բուրժուազիան, միացեալ ճակատով անձնատուր եղան հողատէր յետադիմական ազնուականութեան եւ կեղրոնացեալ ուժերով յարձակեցան ապստամբներուն վրայ : Անհաւասար այդ կռիւին մէջ թէեւ բանուորները երկար ամիսներու ընթացքին

հերոսաբար կռուեցան բայց ի վերջոյ 1849-ի Յուլիսին, պարտուեցան : Մեծ թիւով բանուորներ — ողջ մնացողներէն — ձերբակալուեցան, իսկ փախչելով ազատուածները անցան Մ. Նահանգներ :

12. — ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ ՄԻՆՉՆԻ 1876

1876-ի տարին կարելի է վեր առնել որպէս յատկանշական սահմանադիմ ներկայացնող տարի մը, երբ արձանագրուած կը գտնենք կարեւոր իրադարձութիւններ . ինչպէս օրինակ՝ Առաջին Միջազգայնականի երեւումն ու լուծարքումը, բանուորական յեղափոխական շարժումներ : Այս շրջանին կը գտնենք նաեւ որ կապիտալիզմը Արեւմտեան Եւրոպայի մէջ սկիզբ առնելէն վերջ արագօրէն տարածուեցաւ գրեթէ եւրոպական բոլոր երկիրներու՝ նոյնպէս նաեւ Մ. Նահանգներու մէջ եւ դարձաւ համաշխարհային տիրական սխտէժ : Բայց այստեղ մի քանի կէտեր եւս պարտինք ուշադրութեան առնել :

Առաջին. — Նոր կապիտալիստական մեթոտները ոչ միայն ճարտարաբուեստական դիմով յեղափոխական էին, այլեւ յեղափոխական էին քաղաքական դիմով : Անոնք խորտակեցին միապետական եւ հողատէր արիստոկրատի քաղաքական շէնքերը եւ հաստատեցին այս օրերու կապիտալիստական պետութիւնները : 1876-ին համաշխարհային կապիտալիզմը մահացու հարուածը տուաւ համաշխարհային Ֆէոդալիզմին :

Երկրորդ. — Կապիտալիզմի աճումը ամէն տեղ նոյն քայլով ու նոյն արագութեամբ յառաջ չգնաց : Կապիտալիզմի անհաւասար զարգացման օրէնքը պատճառ եղաւ որ ան կապիտալիստական աշխարհին մէջ վճռական դեր կատարէր զարգացնելով կապիտալիստական պետութեանց միջեւ արագօրէն զարգացող իշխանութեան դուզակշիռը, որ կրնար ճշգուիլ միայն մեծ պատերազմներով :

Երրորդ. — Կապիտալիզմի զարգացումով բանուոր դասակարգը որպէս ընկերային ուժ՝ հրապարակ իջաւ ու կազմակերպուեցաւ կապիտալիստական բարբարոս շահագործման վերջ դնելու համար : Իր պայքարումներուն մէջ ան ձախողեցաւ, բայց այդ ձախողանքները բանուորներու դասակարգային զիտակցութիւնը խորացուցին, որով անոնք տնտեսական ու քաղաքական գետնի վրայ պայքարի պատրաստուեցան :

Չորրորդ. — Մարքս եւ Էնգէլս հիմքը դրին այն յեղափոխական ծրագրին, որու առաջնորդութեամբ ամբողջ աշխարհի պրոլետա-

ըրևառը պիտի տապալէր կապիտալիզմի բերդերը եւ հաստատէր Կոմունիստական իրաւակարգը:

13.— ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԵՒ ԵՐԿՐՈՐԳ ՄԻՋԱԶԳՍՅՆԱԿԱՆԸ (1876-1914)

Առաջին Միջազգայնականի վախճանումէն մինչեւ համաշխարհային Առաջին պատերազմի ժամանակաշրջանը յատկանշական է այն բանին համար, որ բոլոր կապիտալիստական երկիրները մտան իմպերիալիզմի շրջանը, կապիտալիզմի վերին եւ վերջին հանդրուանը, ուր ժամանակաւորապէս բազմելէն յետոյ՝ պիտի սկսէին իրենց վայրէջքը, կործանման տանող վայրէջքը:

Լենին, իմպերիալիզմի մասին խօսելով, զայն կ'որակէ «Կապիտալիզմի մոնոպոլի օթեւանը», «Ֆինանս-կապիտալի դարաշրջանը», «կապիտալիզմի վերջին զարաւանդակը» եւ «մահամեծ կապիտալիզմը»: Ան իր վերլուծումով իմպերիալիզմը կը պատկերացնէ հետեւեալ ձևով (ա). — Կապիտալի եւ արդիւնաբերութեան կեդրոնացում, զարգացած այնպիսի բարձր աստիճանով, որ ան կը ստեղծէ մոնոպոլիներ, որոնք վճռական դեր կը կատարեն տնտեսական կեանքի մէջ. (բ). — Պանքայի կապիտալի եւ ճարտարարուեստական կապիտալի միացում, որու ստեղծած հիմքին վրայ կը հաստատուի ֆինանսական սակաւապետութիւն մը. (գ). — Կապիտալի արտածումը, որ կը զանազանուի ապրանքային արտածումէն եւ կը ստանայ մասնայատուկ կարեւորութիւն. (դ). — Միջազգային մոնոպոլի բազկացուցիչ մասեր կը կազմուին, որոնք իրենց միջեւ կը բաժնեն աշխարհի շուկաներն ու հարստութեանց աղբիւրները. (ե). — Աշխարհի ամենամեծ կապիտալիստական պետութիւնները կը վերջացնեն աշխարհի երկրամասային բաժանումը:

Եւ Լենին իր նշումներուն մէջ երբեք սխալած չեղաւ: Համաշխարհային պատերազմը պայթեցաւ իմպերիալիստ պետութեանց միջեւ ի խնդիր՝ զաղութներու եւ նոր երկրամասերու տիրացման: Հրդօրները յաղթական դուրս եկան: Բայց ասով հարցը չվերջացաւ: Պայթեցաւ երկրորդ համաշխարհային պատերազմը, որմէ յետոյ ասպարէզը մնաց ամենահօգրին՝ ամերիկեան իմպերիալիզմին, որու դաշնակիցները զսպումած զժգոհութեամբ ու անհամբերութեամբ կը հետեւին իրենց հրամանատարին, որովհետեւ ուրիշ սպառնալիք մը կայ իրենց առջեւ, Պորճըրային Միութեան եւ սոցիալիստական աշխարհի սպառնալիքը...:

Երկրորդ Միջազգայնականի հիմնարկութիւնը. —

Ժժ. զարու վերջին տասնամեակներուն բանուորներու մէջ զարգացած էր դասակարգային դիտակցութիւնը: Կապիտալիստական երկիրներու մէջ կազմուած էին սոցիալ դեմոկրատ կուսակցութիւններ: Նոր միջազգայնական մը կազմելը հրամայական պահանջ էր դարձեր. եւ այդ միջազգայնականը — Երկրորդ Միջազգայնականը — կազմուեցաւ Յուլիս 14, 1889-ին Փարիզի մէջ՝ գերման սոցիալ դեմոկրատներու նախաձեռնութեամբ եւ Էնգէլսի առաջնորդութեամբ:

Երկրորդ Միջազգայնականը միակ բանը, որ կրցաւ ընդհանրացնել, Մայիս Մէկը որպէս համաշխարհային բանուորութեան համար տօնական օր՝ նշանակելն էր:

Թրէյտ Իւնիքնները այդ միջազգայնականին շյարեցան անմիջապէս, բայց Բ. Միջազգայնականը Թրէյտ Իւնիքններու հետապնդած խնդիրները իր քաղաքական ուղեգծին հետ մասնաւոր հոգածութեան առարկայ ըրաւ:

Այստեղ, պէտք է ըսել թէ՛ Թրէյտ Իւնիքնները կը հետաքրքրուէին եւ երբեմն ալ կը մասնակցէին այս տեսարանական պայքարներուն, որոնք յաճախակի ցնցեցին Բ. Միջազգայնականը, որուն մէջ երեք զլխաւոր հոսանքներ կային: Առաջինը՝ Սամուէլ Կամպերօսի հոսանքն էր, որ Թրէյտ Իւնիքնիզմը վեր կ'առնէր որպէս «մաքուր եւ պարզ» կազմակերպութիւն մը, որ քաղաքական դրոճերու խառնուելու չէր: Այդպէս էին Մեծն Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու Իւնիքնները:

Բ. Միջազգայնականի մէջ երկրորդ հոսանքը, որ Բաքունիի կը հետեւէր, Անարխո-Սէմտիկալիզմի հոսանքն էր, որուն զլխաւոր գետինները կը զանուէին Լատին երկիրներու, Ֆրանսայի, Սպանիոյ, Իտալիոյ եւ Փորթուգալի մէջ:

Բ. Միջազգայնականի մէջ երրորդ հոսանքը Մարքսիզմի հետեւող Թրէյտ Իւնիքններու հոսանքն էր, որուն կեդրոնն էր Գերմանիան, անոր հետ՝ Աւստրիան եւ Սքանաինավիան երկիրները:

Նախ քան համաշխարհային առաջին պատերազմը Բ. Միջազգայնականի տարիներուն, Թրէյտ Իւնիքնի պատմութիւնը եղած է վերեւ նշուած երեք հոսանքներու միջեւ պայքարի պատմութիւն մը՝ ի խնդիր տիրապետող դիրքի:

Որպէսզի մենք կարողանանք համաշխարհային բանուորական շարժման ընդհանուր պատմութիւնը իր զարգացողական ընթացումով հարեւանցիորէն ներկայացնել, անհրաժեշտ է հետեւիլ կապիտալիստական առաջաւոր երկիրներու Թրէյտ Իւնիքնի փորձերուն: Այժմ սկսինք Գերմանիայէն:

14.— ԲԻԶՄԱՐՔ ԵՒ ԳԵՐՄԱՆ ԹՐԷՅՑ ԻՆՆԻՏՆՆԵՐԸ

Իշխան Օթօ Վոն Բիզմարք, վերջերս — միացեալ Գերմանիոյ «երկաթեայ» վարչապետը, պնդապաշտ ֆրոուսիացի ազնուական հողատէր մը, ծրագրած էր ընկճել գերման բանուոր դասակարգը, որ արթնցած էր ու սկսեր էր շարժել իր բազուկները սպառնալից եղանակով: Անոր նպատակն էր ընկերային ապահովագրութեամբ որոշ զիջումներ ընել զործաւորներուն, քաջալերել քրիստոնէայ (կաթոլիկ) դեղին իւնիքները, պահել ֆրոուսիական սիստէմով քուէարկութիւնը եւ փշրել սոցիալ դեմոկրատական շարժման բոլոր ճիւղերը: Ան մէկ ձեռքին բռնած էր կարկանդակը՝ մանր բարեկարգութեանց ծրագիրը, միւսով բռնած էր սոսկում պատճառող ահարկու լախոր: Ահա թէ ինչու Բիզմարք ապօրինի հռչակեց սոցիալ դեմոկրատին: Իրեն հետեւեցան զործատէրերը եւ սկսան ընդհարումները:

Հակա սոցիալիստական օրէնքը զործադրութեան դրուեցաւ Հոկտեմբեր 21, 1878-ին: Երկու օր յետոյ՝ Հոկտ. 23-ին, լուծուեցաւ Միախոտի Բանուորներու Միութիւնը: Մէկ շաբթուան մէջ 17 միութիւններ լուծուեցան: Լուծուեցան նաև Սոցիալ Դեմոկրատներու հովանաւորութեան տակ գտնուող 330 փոխադարձ օգնութեան ընկերութիւններ: Անձեռնմխելի մնացին միայն քրիստոնէայ եւ բուրժուական թրէյտ իւնիքները:

Ռախտատակին մէջ Սոց. դեմոկրատներու ներկայացուցիչ Բէքքըր, յայտարարեց.— «Մենք այդ օրէնքը կը մերժենք եւ պիտի կոտինք»... Թրէյտ իւնիքները հակառակ դրուած օրէնքին ու դժուարութեանց, սկսան նորէն կազմակերպուիլ, երբ անդին կուսակցութիւնը Զուիցերիոյ մէջ հաստատեք էր իր կեդրոնը եւ կը հրատարակէր կուսակցութեան պաշտօնաթերթը: Պարոն Բիզմարքը հըրդեհի տարածուելու վախէն՝ հրապարակուած օրէնքը թարգմանաբար չափաւորեց յայտարարելով որ «Թրէյտ իւնիքները կրնան զոյութիւնին պահել, պայմանաւ որ անոնք քաղաքական զործունէութենէ հեռու մնան»: Ասոր վրայ գերման զործաւորները ո՛չ միայն սկսան նորէն կազմակերպուիլ, այլև սկսան մարտական զործադուլներու:

Տրուած էր կռիւի ազդանշանը: Կուսակցութիւնը եւ թրէյտ իւնիքները լուրջ կորուստներ ունեցան: Տասնչորս թերթեր խափանուեցան, 1,500 սոցիալիստներ ձերբակալուեցան ու բանտարկուեցան, շատեր աքսորուեցան եւ մեծ թիւով գաղթականներ՝ անցան Մ. Նահանգները: Այս ցնցող իրադարձութեանց ընթացքին, սակայն, բանուորները շահեցան: Տարուէ տարի սոցիալ դեմոկրատներու քուէները կ'աւելնային: 1890-ին, անոնց քուէներու թիւը հասաւ մէկ ու կէս միլիոնի: Նոյնպէս Թրէյտ իւնիքներու մէջ կազմակեր-

պուած բանուորներու թիւը 50 հազարէն բարձրացաւ 400 հազարի:

Պարզ էր որ հակասոցիալիստական օրէնքը անդործնական էր դարձեր եւ Սոցիալ Դեմոկրատիան կը մնար իր գիրքին վրայ: Ասոր հետեւանքով, Բիզմարք՝ «երկաթեայ» վարչապետը յարզի շիւղ դարձաւ եւ ստիպուեցաւ հրաժարիլ: Սեպտեմբեր 30, 1890-ին, անոր օրէնքը կառավարութիւնը յայտարարեց անվաւեր: Ասիկա գերման բանուորութեան փառաւոր յաղթանակն էր, որ արձանագրեց ամբողջ աշխարհի մէջ:

Էրֆուրտի ծրագիրը

Անմիջապէս երբ հակասոցիալիստական օրէնքը չեղեալ յայտարարուեցաւ, գերման սոցիալիստները ուղեցին վերամշակել կուսակցութեան ընդհանուր քաղաքականութիւնը: Ասոր արդիւնքն եղաւ 1891-ին Էրֆուրտի հռչակաւոր ծրագիրը: Նախապէս 1875-ին դրուած էր Կոթայի ծրագիրը որ խճողուած էր Լասպլեան սխալներով եւ ենթարկուած էր Մարքսի քննադատութեան: 1891-ի Էրֆուրտի ծրագիրը դժողը եղաւ Քարլ Կաուցկի (այն ատեն յեղափոխական մարքսիստ): Այս ծրագիրը ո՛չ միայն բոլոր երկիրներու սոցիալ դեմոկրատներու նախատիպը եղաւ, այլև ան ծառայեց որպէս կիսապաշտօնական ծրագիր՝ Երկրորդ Միջազգայնականին համար:

Գերման աշխատաւորական շարժումին ուրիշ մէկ կարեւոր քայլն էր հաստատումը Ընդհանուր Յանձնախումբի մը, որ ազգային գետնի վրայ միմիանց միացնելու էր բոլոր գերման քրէյտ իւնիքները: 1892-ի Մարտին, Հալբըրշտատի մէջ 208 պատգամաւորներով գումարուեցաւ համագումար մը, ուր ընտրուեցաւ Գերման Թրէյտ իւնիքներու ընդհանուր յանձնախումբ մը: Բայց ատեն մը կուսակցութեան մէջ յառաջացաւ տեսակ մը յոստէսութիւն հանդէպ քրէյտ իւնիքներուն, որոնք 1890-ի տնտեսական ճգնաժամին լճացած վիճակ մը ունեցան:

Գործատէրերու միութիւնը եւ ֆարտարարուեստական իւնիքնիզմը

1882-էն 1907 տարիներուն Գերմանիոյ մէջ մենատէր կապիտալի գերաճման հետ, աճեցան նաև Թրէյտ իւնիքները: 1906-ին անոնց անդամներու թիւը կը հասնէր մօտաւորապէս երկուք ու կէս միլիոնի: Գերման զործատէրերը այս ցնցող իրականութեան առջեւ անտարբեր չէին կրնար մնալ: Քրուփի ճարտարարուեստական հիմնարկութիւնները ուրիշ մեծ ընկերութեանց հետ կազմեցին Միացեալ Գերման Գործատէրերու Ընկերակցութիւնը: Կապիտալիստական այս նոր դաշնակցութիւնը, իր մարտիոցները պատրաստեց գերման բան-

ուորութեան զէմ, քանի որ կառավարութիւնն ալ կեցեր էր իր կողքին: Հէր Քրուփ, ամբարտաւանօրէն յայտարարեց. — «Ես իմ տան տէրն եմ, եւ ոչ ոք կրնայ ինծի հրամայել»: Եղան գործադուլներ, բայց բոլորն ալ ձախողեցան: Երեւոյթները զրեթէ նոյն դոյնն առին Մ. Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Պելճիզայի եւ ուրիշ տեղերու մէջ, մինչեւ համաշխարհային առաջին պատերազմը: Հին կազմով քրէյտ իւնիքները, իրենց զէմ ունենալով կապիտալիստներու ուժեղ դաշնակցութիւնը անկարող էին իրենց սոցիորական մեթոտներով յաջող կռիւ մղել: 145,000 ընկերութիւններ, որոնք մօտաւորապէս հինգ միլիոն բանուորներ կը գործածէին, եւ այդ հինգ միլիոն բանուորները չէին կրնար կուռիլ ոչինչ փոքրամասնութեան մը զէմ, այլեւս հասկնալի է թէ ո՞րքան թոյլ էր անոնց դասակարգային դիտակցութիւնը: Մանաւանդ՝ երբ նկատի առնենք որ գերման իւնիքներու մէջ ալ կար բաժանում մը. համարուեստ քրէյտ իւնիքները անհաշտ էին միւս քրէյտ իւնիքներու հետ, եւ երբ այս վերջինները ուղեցին թրէյտ իւնիքնի շարժումը դասակարգային հիմքի վրայ դնել եւ զայն վերածել ճարտարարուեստական-արդիւնաբերական իւնիքնիզմի, ներդրակելով բոլոր բանուորները անխտիր՝ առաջինները բուն կերպով հակառակեցան ու մնացին բաժնուած:

Բերնշդայնեան վերաֆնմութիւնը.—

Ութսունական թուականէն սկսեալ Երկրորդ Միջազգայնականին մէջ մտած էին պատեհապաշտական տարրեր: Եւ արդէն այդ Միջազգայնականը ինքնին շատ անորոշ ու թոյլ կազմակերպութիւն էր. չունէր որոշ սկզբունքով ու կարգապահութեամբ զեկավարող կեդրոնական մարմին, չունէր միջազգային պաշտօնաթերթ, չունէր կանոնաւոր օրէնսդրութիւն, այդ իսկ պատճառով պատեհապաշտները շատ զիւրութեամբ կրնային պղտորութիւն յառաջացնել անոր մէջ: Վոն Վոլմար Գերմանիոյ մէջ, Ֆարեան «սոցիալիստները» Անգլիոյ մէջ, եւ նման տարրեր Ֆրանսայի, Մ. Նահանգներու մէջ ու այլուր, պատեհապաշտական ձայն բարձրացուցին մթազնելով բանուորներու դասակարգային դիտակցութիւնը յայտարարելով որ անօգուտ է սոցիալիզմի համար կռիւ մղել, որ քուէն աւելի ազդու է, քան հրացանի զնդակը, որ կապիտալիստ երկիրներու զազթային քաղաքականութիւնը կը բարելաւէ բանուորներու դրութիւնը, եւ որ՝ ի վերայ ամենայնի՝ կապիտալիզմը արդէն ինքնաբերաբար կը զիմէ զէպի սոցիալիզմ: Միջազգային այս հակամարքսիստ ուղեղէին ամենահազակաւոր տեսարանն եղաւ Սոցիալ Դեմոկրատ Եզուարդ Բերնշդայն: Այս մարդը Մարքսիզմը վերաքննութեան ենթարկելու ջանքով

հրատարակեց Բաբշըջական Սոցիալիզմ անուն զերբ մը, որով կը ժխտէր Մարքսիզմի բոլոր հիմնական սկզբունքները: Ան կը մերժէր պատմական մատերիալիզմը, դասակարգային կռիւը, պրոլետարական դիկտատուրան եւ ընկերային յեղափոխութիւնը: Բերնշդայնի բոլորտիքը հաւաքուեցան մանր բուրժուական տարրերը եւ ամէն դոյնի պատեհապաշտները: Բ. Միջազգայնականի մէջ սկսաւ պայքարը Մարքսիստներու եւ վերաքննականներու միջեւ եւ այդ պայքարը շարունակուեցաւ մինչեւ որ առաջին համաշխարհային պատերազմին՝ այդ Միջազգայնականը գերեզմանուեցաւ:

15.— ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐ ԻՒՆԻՐՆԻՉՄԸ (1876-1906)

1850-էն 1875 թուականներուն Բրիտանական կապիտալիզմը իր «ոսկեզարը» հռչակած էր, որովհետեւ ան տիրական դարձեր էր թէ՛ ներքին՝ ազգային շուկային եւ թէ՛ օտար շուկաներուն վրայ: Այդ շրջանին, թրէյտ իւնիքները նոյնպէս զարգացան ու տարածուեցան: Բայց յատկանշական իրողութիւն էր որ Մ. Նահանգները կը յառաջդիմէին իսկ Բրիտանիան հետզհետէ ետ կը մնար արտադրողականութեան ճամբուն մէջ:

Այդ շրջանին, թրէյտ իւնիքները իրենց 600 հազար անդամներով ամբողջապէս ենթարկուած էին բարձրորակ (Skilled) մեքենազէտներու եւ անոնց առաջնորդներու ազդեցութեան: Այս տարրերը, աշխատաւորական արիստոկրատին կը ներկայացնէին, հակառակ էին Մարքսեան յեղափոխական ուղեգծի, ատոր համար Բրիտանական միութիւնները պահպանողական առաջնորդներուն հետեւելով հեռացան իրենց նախկին մարտական եւ արմատական ուղիէն: Գործադուլները անոնց համար դարձան սոսկ զրամն եւ ուժը յումպէտս վատնող միջոցներ, աննպատակ եւ անարդիւնք:

Նաւամատոյցներու մեծ գործադուլը.—

1880 թուին, երբ Մեծն Բրիտանիան ճարտարարուեստական արտադրողութեան վրայ հաստատօր էր իր համաշխարհային մոնոպոլը, գործառնները աւելի սաստկացուցին թրէյտ իւնիքներու եւ գործաւորներուն վրայ բանեցուցած ճնշումը: Թրէյտ իւնիքներու ձախ թեւը, Թամ Մէնի եւ ընկերներու առաջնորդութեամբ կը ջատագովէին մարտական կռիւի շարժումը, մինչ պահպանողական-բուրժուարտիկ քլիքը, ծան Բերնէտի եւ ընկերներու առաջնորդութեամբ

յամաուրէն կը մերժէին ընդառաջել ժամանակի հրամայական պահանջին:

Այդ ատենն էր որ փոթորիկը պայթեցաւ. Լոնտոնի նաւամատոյցի բանուորները գործադուլ յայտարարեցին Օգոստոս 13, 1889ին: Այդ գործադուլին հետեւեցան ուրիշ մանր գործադուլներ: Շարաթ մը յետոյ՝ ուրիշ նաւամատոյցներու բանուորներն ալ գործադուլի ելան: Էլէնիօր Մարքս, Մարքսի դուստրը, գործադուլի կոմիտէի քարտուղար ընտրուեցաւ:

Այս գործադուլը ամբողջ աշխարհի ուշադրութիւնը դրաւած էր: Գործադուլի յաջողութեան համար հաւաքուեցաւ 48 հազար ստէրլինկ. այդ գումարի 30 հազար ստէրլինկը եկած էր Աւստրալիայէն: Ասիկա ապացոյց էր բանուորական համերաշխութեան:

Ժողովուրդի համակրութիւնը գործադուլաւորներու կողմն էր: Նաւամատոյցները գոցուած չէին կրնար մնալ, չորս շաբաթ յետոյ՝ գործատէրերը խոնարհեցան եւ տեղի տուին:

Այս մեծ յաղթանակը ոգեւորեց բանուոր դասակարգի լայն մասսաները, որոնք մինչեւ այդ ատեն գիտակ չէին իրենց ուժին: Ասկէ սկսաւ յառաջդիմական ուժեղ շարժումը բանուորներու մէջ, ուրիշ անցաւ մինչեւ Աւստրալիա եւ Նիու Զէլանտա: 1890-ին Լիվըրպուլի մէջ Թրէյտ Իւնիլըններու Գոնկրէսը գումարուեցաւ, ուր որդուեցաւ արտաքսել ձան Բրընէտի նման պատեհապաշտ առաջնորդները:

Բրիտանական Աշխատաւորական Կուսակցութեան հիմնարկութիւնը —

1868-ին Բրիտանական Թրէյտ Իւնիլընի առաջնորդները ընդհանրապէս միացեալ քաղաքական ճակատ կազմեցին Լիբերալներու (Ազատականներու) հետ: Լիբերալ կուսակցութիւնը կը ներկայացնէր մանր կապիտալիստները եւ միջակ դասակարգը եւ ներգրաւած էր բարձրորակ բանուորները. ան կը պայքարէր Պահպանողական Կուսակցութեան դէմ, որ կը ներկայացնէր հողատէրերն ու մեծ գործատէրերը: Լիբերալներու գլխաւոր առաջնորդն էր Վիլիլամ Կլատտոն, որ չորս անգամ վարչապետ ընտրուեցաւ: Այս մարդը գործաւոր դասակարգը սիրաշահելու համար օրէնսդրական գծով մանր բարեկարգութիւններ հնարեց, բայց նոյն ատեն՝ աւելի վատ դեր կատարեց քան Բիզմարքը, որովհետեւ այս մարդն էր որ ապականութեան ու անդամալուծման առաջնորդեց բանուոր դասակարգի ղեկավարները:

Մեծն Բրիտանիոյ մէջ առաջին Մարքսիստ կուսակցութիւնը կազմուեցաւ Օգոստոս, 1884-ին: Այդ կուսակցութեան առաջնորդն էր զիմակաւոր Մարքսիստ մը — Հայնտմէնը: Նոյն տարին, շաբթ մը մտաւորականներ, որոնք ինքզինքնին «սոցիալիստ» կ'անուանէին,

ինչպէս Վէրրաբ եւ ձորճ Բէրնարտ Շօն, հիմնեցին Փարեան Ընկերութիւնը: 1889-ին, Քէր Հարտի, կազմեց Անկախ Աշխատաւորական Կուսակցութիւնը: 1900-ին կազմուեցաւ Աշխատաւորական Ներկայացուցչական Կոմիտէն, որ ճամբայ բացաւ Աշխատաւորական Կուսակցութեան (Labour Party) որ հաստատուեցաւ որպէս ժողովրդական-քաղաքական ուժ:

16.— ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԻ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ԵՎ (1876-1900)

Ժժ. դարու վերջին քառորդը յատկանշական է այն իրողութեամբ, որ բոլոր առաջաւոր կապիտալիստական երկիրներու մէջ Թրէյտ Իւնիլընի շարժումը շատ ուժեղ աճում ունեցաւ, ինչպէս տեսանք Գերմանիոյ եւ Մեծն Բրիտանիոյ մէջ: Այժմ, երբ մենք վերադառնանք Ամերիկեան Թրէյտ Իւնիլընի շարժման պատմութիւնը, հոն պիտի տեսնենք արձանագրուած այնպիսի դասակարգային կոիւններու պատկերները, որոնց նմանը ուրիշ ո՛չ մէկ կապիտալիստական երկիրներու պատմութեան մէջ չէ գրուած:

Ամերիկեան կապիտալիստ դասակարգը, որ անհաւատալի արագութեամբ ծաղկեցաւ եւ հարստացաւ, նոյնքան անհաւատալիօրէն անողոք վարմունք ունեցաւ իր բարձրացման օժանդակող աշխատաւորութեան հանդէպ: Քաղաքացիական ատերազմէն յետոյ՝ ամերիկեան կապիտալիստները խելագարուած աւազակներու նման երկրի մէկ ծայրէն միւսը՝ շուտով հարստանալու անյաղ ծարաւէն մղուած, սկսան խարել, գողնալ, կողոպտել եւ այդպիսով տիրանալ ընդարձակ հողամասերու, անտառներու եւ հանքային աղբիւրներու, իսկ այդ բոլոր գործերը, որպէս օրինականացած գործեր, անոնք յառաջ տարին կառավարական պաշտօնեաներու օժանդակութեամբ: Բայց հարստանալու հարցը գողութեամբ ու աւազակութեամբ չէր վերջանար. անոնք անցողակի գործողութիւններ էին. աշխատանքի շահագործումն էր ամենէն կարեւորն ու ամենէն տեսականը: Եւ մարդիկը զաղթականներու բանակներ բերին ու լեցուցին երկիրը: 1870էն 1914-ի տարիներուն, 27 միլիոն 135 հազար 457 զաղթականներ եկան Մ. Նահանգները՝ ծառայելու բացուած գործարաններու, արտերու եւ հանքերու մէջ:

Այդ զաղթականներու բանակները կը բաղկանային բազմաթիւ մուրացիկներէ, անգործներէ, յանցագործներէ, բարձրորակ գործաւորներէ, յեղափոխութեան երեսէն փախտականներէ, մտաւորական-

1892-ի Յունիսին, Գառնէկի Պողոսյանի Ընկերութեան բանուորները Փրօքուրկի մէջ գործադուլի երան: Երեք հազար գործաւորներ, թէեւ կազմակերպուած չէին, բայց մէկ անգամէն միացեալ ճակատով ցցուեցան իրենց թշնամիին դէմ: Անոնց առաջնորդն էր Օ'Դանէլ: Ընկերութիւնը գործարանները երկաթեայ փշաթելերու մէջ առաւ եւ Օհայիոյէն բերել տուաւ 300 դինեալ գաղտնի ոստիկաններ՝ զէնքի ուժով գործադուլը ճղմելու համար: Բայց բանուորները, որոնք 1889-ին նման յարձակում մը ետ մղած էին, զիմեցին զէնքի: Մի քանի բանուորներ սպաննուեցան, նոյնպէս եւ տասէն աւելի գաղտնի ոստիկաններ: Ողջ մնացող ոստիկանները կռիւի գաշտը լքեցին ու քաղաքէն հեռացան: Բանուորները յաղթանակը տարած էին, բայց աւա՛ղ, կառավարութիւնը այստեղ եւս իր զինուորներով օչնութեան հասաւ ընկերութեան եւ յաղթութիւնը փոխեց պարտութեան:

Հեռաւոր Արեւմուտքի մէջ, այս շրջանին, նոյնպէս տեղի ունեցան զինեալ գործադուլներ՝ Վիլիլլմ մէջ չէյվուտի առաջնորդութեամբ՝ 1893 թուին, Մոնթանայի, Գոլորատոյի եւ Այտահոյի մէջ: Ասոնք մետաղի հանքագործներն էին, որոնք յեղափոխական ողիով կ'ուզէին պաշտպանել իրենց միութիւնը եւ բարելաւել իրենց ստրկական դրութիւնը: Այս գործադուլները քաղաքական հանգամանք առին եւ զինուորական անպարտելի ուժին առջեւ նահանջեցին:

Սոյն տասնեակ տարիներու ընթացքին զասակարգային կատաղի կռիւներու բարձրագոյն կէտը հանդիսացաւ 1886-ի Մայիս 1-ի ութը ժամուայ աշխատօրի ընդհանուր գործադուլը: Այս պատմական գործադուլը որոշուած էր Ամերիկեան Աշխատաւորական Դաշնակցութեան կողմէն 1884-ի համադումարին մէջ: Մայիս 1-ին, ամբողջ երկրին մէջ ութժամեայ աշխատօրի նշանաբանով բանուորները գործադուլ յայտարարելու էին: Այս որոշման հակառակ կեցաւ միայն Տէքէնս Փառտըրլին, Աշխատանքի Ասպետներու (Knights of Labour) յետադիմական առաջնորդը:

1886-ի Մայիս 1-ին 350 հազար բանուորներ գործադուլ յայտարարեցին Շիգակոյի մէջ, ուր ձախ թելի ազդեցութիւնը ուժեղ էր բանուորական միութեանց մէջ: Սոյն գործադուլը պատճառ եղաւ որ երկրորդ Միջազգայնականը 1889-ի Փարիզի Գոնկրէսին մէջ Մայիս Մէկը նշանակէ որպէս Միջազգային Աշխատաւորութեան Տօնական օր:

Աշխատանքի Ասպետներու կազմակերպութիւնը սկզբնական շրջանին հակառակեցաւ ստեղծուած շարժումին, որուն հետեւանքով մի քանի տարի վերջ կազմալուծուեցաւ:

1886-ի ընդհանուր գործադուլը յառաջացուց ամենէն այսպանելի, աննկարագրելիօրէն բարբարոսական արարք մը, զոր գործեցին

կապիտալիստները հանդէպ բանուոր զասակարգին: Մի Քորմիկի գործարանի գործադուլի առիթով չորս բանուորներ անդթօրէն սպաննուած էին: Շիգակոյի Հէյմարքէթին մէջ բողոքի ժողով մը դուրս մարուած էր: Դաւադիր մը — դուցէ ընկերութեան մէջ գործակալը — ռուժ մը նետեց բազմութեան մէջ, որով սպաննուեցան եօթը ոստիկաններ եւ չորս գործաւորներ եւ վիրաւորուեցան շատեր: Ոստիկանները բանուորներու առաջնորդները անմիջապէս ձերբակալեցին որպէս գործուած ոճիրին պատասխանատուները: Փարօն, Սպայս, Ֆիլլըր եւ Էնդէլ 1887-ի Նոյեմբեր 11-ին կախաղան բարձրացան, անոնց մէկ ընկերը՝ Լինկը բանտին մէջ ոստիկաններու ըսածներուն նայելով՝ անձնասպան եղաւ, միւսները ցմահ բանտարկութեան զատապարտուեցան: Բանուորութեան կորովի առաջնորդները հրապարակէն վերցուած էին... դաւադրութիւնը յաջողած էր:

Այս շրջանին ուրիշ շատ մը սոսկալի գործադուլներ^(*) տեղի ունեցան, ինչպէս 1892-ին Նու Օրլէանի մէջ նէկրոններու եւ ճերմակներու ընդհանուր գործադուլը, 1905-ին, Շիգակոյի կառապաններու գործադուլը, ուր 20 բանուորներ սպաննուեցան, 400 հոգի վիրաւորուեցաւ եւ 500 բանուորներ ձերբակալուեցան: Մ. Նահանգներու մէջ 1875-էն 1900 թուականներուն, աւելի քան հարիւր գործադուլներ տեղի ունեցան, որոնց սարսափի ազդեցութեան տակ գործատէրերը կազմակերպուեցան՝ բանուորներու կազմակերպութիւնները միատեսակ ազդու միջոցներով ճղմելու, չքացնելու համար:

Բանուորներու եւ Ֆարմըրներու դաշնակցումը —

1876-էն 1900 թուականներուն տեղի ունեցող շատ մը գործադուլներու հետ զուգընթաց՝ աշխատաւոր մասսաները յառաջ տարին քաղաքական գործունէութեան ծրագրերը, որ իրարու պիտի միացնէր շահագործուող զիւղացիութիւնն ու բանուորութիւնը աւազակարարոյ կապիտալիստական ճակատի պարագիտներու դէմ քաղաքական գետնի վրայ պայքարելու համար, որովհետեւ գործնական փորձը ցոյց տուած էր որ ամէն մէկ գործադուլի ատեն կառավարութիւնն էր որ իր զինուորական ուժով ջախջախեր էր բանուորներու արդար պահանջները հետապնդող շարժումները: Այդ շրջանին կազմուեցաւ Ֆարմըր-Լէյպը Կուսակցութիւնը, որ չկրնալով փոքր ի շտէ հակալիզոտ ուժ ներկայացնել Հանրապետական եւ Դեմոկրատ կուսակցութեանց դէմ, միայն անուն մը ձգեց պատմութեան մէջ եւ հեռացաւ ասպարէզէն:

Պէտք է ըսել թէ Սամուէլ Գամբըրը շատ տխուր դեր կատա-

(*) Մ. Նահանգներու բանուորական շարժումներու շուրջ համագամաօրէն ծանօթանալու համար տես իմ մէկ ուսումնասիրութիւնը — Յո՞ Երթաս Ամերիկա հատորը:

րեց Ամերիկայի բանուորներու գասակարգային զիտակցութիւնը թմբեցնելու եւ զանոնք քաղաքական գործունէութենէ հեռու պահելու համար:

Մարքսիստներու դերը.—

1876-1900 տարիներուն Ամերիկեան Մարքսիստները իրենց քաղաքական կազմակերպութիւնը ունէին՝ Սոցիալիստ Լէյպըր Փարտիին, որ հակառակ իր փոքրաթիւ անդամներուն ու զանազան զաղափարախօսական տկարութեանց կարեւոր դեր խաղցաւ տնտեսական ու քաղաքական պայքարներու մէջ: Անոնք մեծ մասով զաղթականներ ըլլալով իրենց հետ բերած էին Եւրոպայի հատուածական թեքումները: Կային Լասալի հետեւորդներ, Բաքունիի հետեւորդներ եւ համոզուած մարքսիստներ: Ասոնց վրայ աւելցաւ Դանիէլ տի Լէոնը, ինքնակոչ մարքսիստը, որ ծայրայեղ ձախակողմեան թեւը պաշտպանող կեղծ մարքսիստ մը ըլլալով հատուածականութեան ուժ տուաւ: Ասոր հետեւանքն այն եղաւ որ 1900 թուին, կուսակցութիւնը բաժնուեցաւ եւ հրապարակ իջաւ Սոցիալիստ Փարթիին, Մորիս Հիլզուիտի եւ Վիկտոր Բըրկըրի գլխաւորութեամբ:

17.— ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՇԽԱՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱՅԻ, ԻՏԱԼԻՈՅ ԵՒ ՍՊԱՆԻՈՅ ՄԷՋ (1876-1900)

1871-ի Փարիզի Կոմունայի տապալումէն յետոյ՝ Ֆրանսայի մէջ մարքսիստական շարժումը իր թափը կորսնցուց, բայց գործաւոր դասակարգը կամաց կամաց ուշքի եկաւ եւ սկսաւ կառուցել իր թրէյտ Իւնիքնները, երբ արդէն երկրի արդիւնարեքութիւնն ալ սկսած էր զարգանալ եւ աճիլ: Թէեւ Ֆրանսական տնտեսութեան մէջ պերճանքի առարկաներու ճարտարարուեստը առաջին տեղը կը բռնէր, բայց ծանր արդիւնարեքութիւնն ալ սկսեք էր յառաջդիմել: Երկաթի արտադրութիւնը, օրինակ, որ 1880-ին 380,000 թօն էր, 1913ին բարձրացաւ 3 միլիոն 630,000 թօնի:

Այդ թուականներուն թրէյտ Իւնիքններու անդամներու վիճակագրութիւնը այնքան որոշ չէր. միայն կարելի է ըսել, որ անոնց անդամներու թիւը կը հասնէր մօտաւորապէս 400 հազարի: 1912-ին անոնց ընդհանուր թիւն էր մէկ միլիոն 164 հազար, որոնցմէ 400 հազար անդամները միացած էին Աշխատանքի Ընդհանուր Համադաշնակցութեան: 1884-էն թրէյտ Իւնիքնները իրաւունք ստացեր էին կազմակերպուելու եւ գործելու օրէնքի սահմաններու մէջ:

Ֆրանսայի թրէյտ Իւնիքնի շարժման մէջ կարեւոր կողմը այն

էր, որ անոնք կազմեր էին տեղական եւ դաւառային դաշնակցութիւններ, կամ bourses du travail. Ֆրանսական բուրսը աւելի կարեւոր գործառնութիւն եւ աւելի մեծ հեղինակութիւն ունէր քան Անգլո-Ամերիկեան երկիրներու բանուորական կեդրոնական խորհուրդները: Անոնք ունէին ընկերային ապահովագրութիւն անգործութեան, արկածի ու հիւանդութեան դէմ. ունէին դրադարաններ, լրատու գրասենեակ, բանուորական թանգարան եւ արհեստի վերաբերեալ կրթական հիմնարկներ: Տեղական կառավարութիւնը կ'օգնէր բուրսերուն:

Անարխո-սէնտիկալիզմի գարգացումը.—

Անարխո-սէնտիկալիզմը Ֆրանսական Թրէյտ Իւնիքնի մէջ տիրող մէկ զիծն էր, որ իր փորձարկութիւնը յայտնարեքեց առաջին պատերազմին եւ Ռուսական Յեղափոխութեան դժուարին փորձերուն հակադրելով իր յեղափոխական ֆրագները:

Անարխո-սէնտիկալիստները իրենց ամբողջ հաւատքը կապեցին Թրէյտ Իւնիքններու գործունէութեան վրայ: Անոնք քաղաքական գործունէութեան չեն հաւատար, չեն օժանդակեր քաղաքական կուսակցութեանց: Անոնց համոզումով Թրէյտ Իւնիքնն է, որ պիտի տապալէ կապիտալիզմը: Անոնց գործածած զէնքերն են գործադուլները, բոյքոտը եւ սապոդաթը: Անոնք չեն հաւատար անհատական տէնորի, որովհետեւ կը ջատագովեն մասսայական յեղափոխութիւնը, որուն առաջնորդը ըլլալու է Թրէյտ Իւնիքնը:

Ֆրանսայի մէջ մի քանի սոցիալիստ խմբաւորումներ որդեգրեցին Սէնտիկալիզմի սկզբունքները եւ միացան անոր:

Բայց պէտք է ըսել թէ Սէնտիկալիզմը, որպէս «նոր ընկերային թէորիա», չէր կրնար ու չկրցաւ համաշխարհային աշխատաւորական շարժումը առաջնորդել իր նպատակին:

Մարքսիստ թրէյտ Իւնիքնիզմը Իտալիոյ մէջ.—

Մենք ըսինք, որ 1850-ին եւ 1860-ին իտալական աշխատաւորական շարժումը բուրժուա հանրապետական առաջնորդութեան տակ էր, որուն ներկայացուցիչն էր Մազզինի: Ասիկա Էվոլուցիայի (Իրեւորու շրջանառութեան) առաջին քայլն էր, երկրորդ քայլը առնուեցաւ, երբ անարխիստ Բաքունիզմը հրապարակ իջաւ: Անկէ յետոյ՝ կազմակերպուած իտալական բանուորներու եւ զիւղացիներու մէջ Մարքսիզմի զազափարախօսութիւնը տիրական դարձաւ: Սոյն էվոլուցիայի ճամբուն մէջ ամենէն կարեւոր քայլը ան էր, որ 1882-ին կազմուեցաւ Աշխատաւորական կուսակցութիւնը ձազարբի գլխաւորութեամբ: Այս կուսակցութիւնը գործօն դեր ունեցաւ մինչեւ 1888

թուականը, անկէ վերջ լուծուեցաւ: Նոյն ատեն տիրական դոյն ունեցող շարժում մը կար — fascio (Ֆաշիօ) շարժումը, որ կը ներկայացնէր ձախակողմեան ծրագրով արդիւնաբերական ու քաղաքական կազմակերպութիւն մը: Ֆաշիօն եւ ուրիշ բանուորական կազմակերպութիւններ, ենթարկուած էին կառավարական հալածանքի: Այս աշխատաւորական շարժումն էր, որ մէկ սերունդ յետոյ՝ Մուսուլինի իր ուղած ձեւին վերածեց եւ զայն հակայեղափոխական գիծին վրայ դրաւ, որ պատմութեան մէջ արձանագրուեցաւ ֆաշիզմ անունով:

Իտալական Camere del Cavaro, կամ տեղական Թրէյտ Իւնիլըն խորհուրդները առաջին անգամ կազմուեցան Ֆրանսացիներու bourses-րու ձեւով 1891-ին, Միլանի եւ Թուրինի մէջ: Ուրիշներ հետեւեցան անոնց: Սոցիալիստները առաջնորդող դեր էին ստանձնեցին: 1901-ին անոնց թիւը բարձրացաւ 60-ի:

Fasci կուսակցութիւնը, որ 300 հազար անդամներ ունէր, մեծ մասով գիւղացիներ, հանքագործներ ու գործարանի բանուորներ, մարտական կարեւոր դեր կատարեց իտալական բանուորական շարժման մէջ, մասնաւորապէս 1894-ի գործադուլի ատեն: Կառավարութիւնը հարիւրաւոր գործաւորներ զնդակահարեց կամ բանտարկեց: Հակառակ այդ հալածանքներուն, սակայն, գործադուլներու ալիքները բարձրացան ու տարածուեցան: Ամենամեծ գործադուլը տեղի ունեցաւ 1904-ին, երբ մէկ միլիոն բանուորներ գործադուլ յայտարարեցին: Բայց որովհետեւ շարժման մէջ մտեր էին բարենորոգչականներ եւ պատահապաշտ առաջնորդներ, յեղափոխական փոքրամասնութիւնը անկարող էր կուռիլ եւ գործադուլը տանիլ իր նպատակին: Որքան անարդ էր ներքին թշնամին, նոյնքան զօրաւոր էր արտաքին թշնամին՝ կառավարութիւնը: Այն հսկայ գործադուլը, որ յաջողութիւն կը խոստանար, բազմաթիւ գոհեր տալով ձախողեցաւ:

Թրէյտ Իւնիլընները Սպանիոյ մէջ.—

1876-ին, երբ Ա. Միջագոյնականը լուծուեցաւ, Անարխիստները մի քանի տարի պայքարը տարին Անդլիոյ մէջ, որպէս միջազգային բանուորական շարժում: Անարխիզմը Փրանսայի մէջ բոլորովին լուծուեցաւ, երբ սկսաւ Անարխօ-սէմտիկալիստ շարժումը: Բայց Անարխիզմը Սպանիոյ մէջ, որպէս աշխատաւորական շարժում՝ իր թիկունքին ունենալով պրոլետարներու բազմութիւն մը երկար ատեն զեզերեցաւ մինչեւ 1936-39-ի քաղաքացիական պատերազմը: Անարխիզմի պատմական վերակախեալ գիրքը կարելի է վերադրել Սպանիոյ մասնաշատուկ մի քանի պայմաններուն, որոնց մէջ երկու գլխաւոր կէտեր կան ուշադրութեան արժանի: մէկը այն էր, որ Սպանիան իր խոշոր արդիւնաբերութիւնը զարգացնելու ճամ-

բուն մէջ ձախողած էր. երկրորդը այն էր, որ մարքսիստական շարժումը այդ երկրին մէջ տկար էր:

Սպանիական Անարխիզմի բերդը Բարսելոնայի մէջ էր, Սպանիոյ ամենատկար կեդրոնը անտեսական սիստէմին: Հոն Անարխիստները կ'առաջնորդէին բանուորական շարժումը սէնդիկալիզմի գիծով: Շարժումը տարածուեցաւ նաեւ Անդալուզիայի շրջանը Թըլուառացած գիւղացիութեան մէջ: Ժժ. դարու վերջին քառորդին, Բարսելոնան, վայրի շահագործման եւ բռնակալութեան տակ, շատ մը մարտական գործադուլներու եւ քաղաքական պայքարներու թատերաբեմ դարձաւ: Անարխիստները այդ կռիւներու ընթացքին ստիպուեցան ուժը գործածել, մասնաւորապէս 1890-ին: Այս շրջանին կազմուեցաւ Սպանիոյ Բանուորներու Դաշնակցութիւնը, որուն յաջորդեց Իբերիայի Անարխիստներու Դաշնակցութիւնը:

Մարքսիստական շարժման գլխաւոր կեդրոնն էր Մատրիաը, ուր կար փոքրաթիւ պրոլետարիատ մը: Ասիկա մէկ պատճառն էր մարքսիստական շարժման տկարութեան, իսկ միւսը՝ այն էր, որ շարժումը զեկալարողները աջակողմեան հակաժ ունեցող պատեհապաշտներ էին: Այսու հանգերձ՝ անոնք Թրէյտ Իւնիլըն մը կազմեցին, որ 1913-ին, ունեցաւ 147,000 անդամներ:

Այս շրջանին, Սպանիոյ բանուոր դասակարգի դժուարին կռիւներու կարգին՝ ամենամեծն եղաւ Յուլիս 26, 1909-ի ընդհանուր գործադուլը, որ բողոքի ցոյց մըն էր Մարոքի պատերազմին դէմ: Այդ գործադուլի առաջնորդներն էին սոցիալիստները, որոնց միացան Անարխիստները, Սէմտիկալիստները, Ազգայնականները եւ Արմատական Հանրապետականները: Սոյն գործադուլը, որուն կեդրոնը Բարսելոնան էր, ամբողջ շարաթ մը Սպանիան անգամալուծութեան մատնեց: Կառավարութիւնը իր բոլոր ուժերը շարժման մէջ դրաւ եւ կրցաւ ճղմել շարժումը:

18.— ԹրէՅՏ ԻԻՆԻՐՆԵՆԵՐԸ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՁ (1876-1914)

Առաջին Միջագոյնականի լուծուելէն յետոյ՝ կապիտալիստական սիստէմը ընդհանրացաւ շատ մը նոր երկիրներու մէջ. այդ ընդհանրացումին հետ զարգացաւ եւ ընդհանրացաւ նաեւ Թրէյտ Իւնիլընի շարժումը:

Առնենք նախ Սքանտինաւեան երկիրները:

Կապիտալիզմը սկսաւ արագօրէն զարգանալ 1880-ական թուականներէն յետոյ՝ նախ Տանիմարքայի, ապա Շուէտի ու Նորվեգիայի

մէջ: Թրէյտ Իւնիքնի շարժումը զարմանալի արագութեամբ զարգացաւ այդ երկիրներուն մէջ, որովհետեւ ցեղային, ազգային կամ կրօնական փոքրամասնութիւններ չկային որ տարբեր գոյնով անջատ կազմակերպութիւններ յառաջացնէին:

Թրէյտ Իւնիքններու հետ երեւան եկան սոցիալիստ կուսակցութիւններ, գերման սոցիալ դեմոկրատիայի ազդեցութեամբ: Տանիմարքայի մէջ Սոցիալ Դեմոկրատ կուսակցութիւնը կազմուեցաւ 1871-ին, Նորվէկիոյ մէջ՝ 1887-ին, Շուէտի մէջ՝ 1889-ին: 1909-ին, Շուէտի մէջ տեղի ունեցաւ հսկայ գործադուլ մը, որ ձախողեցաւ: Ասոր հետեւանքով ձախակողմեան տարրերը հակեցան Անարխո-Սէնտիկալիզմի կողմը:

Թրէյտ Իւնիքնները Արեւելեան Եւրոպայի մէջ .—

Ռուսաստանի մէջ Թրէյտ Իւնիքններն ու բանուորական դիւղացիական կուսակցութիւնները խստիւ արգելուած էին ցարական դիկտատուրայի կողմէն: Յանցագործները կ'աքսորուէին Սիբերիա: Նոյն խստութիւնները կը գործադրուէին ռուսական իշխանութեան ենթարկուած երկիրները, ինչպէս Լեհաստան, Ֆինլանտա եւ ուրիշներ:

Աւստրիոյ մէջ, ուր ինքնիշխան ուժի մը այնքան խիստ չէր, 19-րդ դարու վերջերը ցրուած կային Թրէյտ Իւնիքններ: 1888-ին կազմուեցաւ Սոցիալ Դեմոկրատ կուսակցութիւնը Օթո Բոյքրի եւ Վիկտոր Աւլըրի գլխաւորութեամբ: 1892-ին Մետաղի Բանուորներու Միութիւնը կազմուեցաւ, յաջորդ տարին անոր հետեւեցան ուրիշներ:

Լեհաստանը, որ բաժնուած էր Ռուսաստանի, Գերմանիոյ եւ Աւստրիոյ միջեւ, վերջիններու բաժիններուն մէջ սկսեւ էր երեւնալ Թրէյտ Իւնիքնի շարժումը:

Չէխո-Սլովակերան, ուրիշ երկիր մըն էր որ ձեւականօրէն գոյութիւն չունէր որպէս անկախ երկիր՝ մինչեւ համաշխարհային Ա. պատերազմի վաղորդայինն, 1867 թուականէն սկսած, ազգային ու կապիտալիստական սուր ճնշման տակ երեւան եկան Թրէյտ Իւնիքններ. իսկ 1878-ին կազմուեցաւ Սոցիալիստ կուսակցութիւնը:

Հունգարական Թրէյտ Իւնիքնը սկսաւ ձեւաւորուիլ 1890-ին, երբ տեղի ունեցաւ Մայիս Մէկի ցոյցը: Նոյն տարին կազմուեցաւ նաեւ Սոցիալիստ կուսակցութիւնը:

Բուլկարիոյ մէջ հակառակ կրկնուող ճնշումներուն, Սոցիալ Դեմոկրատ կուսակցութիւնը կազմուեցաւ 1894-ին, իսկ երեք տարի վերջ կազմուեցաւ Տպագրիչներու Միութիւնը: 1905-ի ռուսական յեղափոխութեան շրջանին տեղի ունեցան մի շարք գործադուլներ: Ռուսմանիոյ, Յունաստանի, Սերպիոյ եւ Բալքանեան միւս եր-

կիրներու բանուորական շարժումները գրեթէ նոյն տարիներուն երեւան եկան գժուարին պայմաններու տակ:

Թրէյտ Իւնիքնները Լատին Ամերիկայի մէջ .—

Լատին Ամերիկայի մէջ, Կեդրոնական եւ Հարաւ. Ամերիկայի ընդարձակ տարածութեամբ երկիրներուն եւ Կարիպեան Ծովու շրջանը, Թրէյտ Իւնիքնիզմը սկսաւ զարգանալ նախքան 20-րդ դարը: Այդ շրջաններուն մէջ, Բրիտանիան 178 միլիոն ստէրլինկի հսկայ կապիտալ մը շահարկութեան դրած էր: Անոր քայլերուն հետեւեցան ամերիկացիներն ու գերմանացիները՝ 1898-ի Սպանո-Ամերիկեան պատերազմէն յետոյ: Նախապէս արդէն անասելի կերպով շահագործուող բանուորներն ու դիւղացիները բազմաթիւ ապստամբական ցոյցեր սարքած էին Լատին Ամերիկեան երկիրներուն մէջ, երբ այդ երկիրները 1820-ին, յեղափոխական կռիւներով իրենց անկախութեան տիրացեւ էին, թոթափելով Փորթուգալի, Սպանիոյ եւ Ֆրանսայի լուծերը: Բայց երբ անոնք իմպերիալիստներու ճնշման ենթարկուեցան ուղղակի, բանուորները սկսան կազմել Թրէյտ Իւնիքններ եւ անոնց առաջնորդութեամբ պայքարիլ գործադուլի եւ վնասարուութեան գէնքերով: Լաիլիզոզ կապիտալիստներն ու հոգատէրերը գործադուլաւորներուն հետ վարուեցան անորակելի անդթութեամբ՝ զանոնք նկատելով որպէս օրինազանց ապստամբներ: 1907-ին, Չիլիի գործադուլներու ատեն չորս հազար բանուորներ սպաննուեցան: 1919-ի Յունուարին, Արժանթինի գործադուլին 1,500 մարդ սպաննուեցաւ: Լատին Ամերիկայի բնակչութեան 68 տոկոսը կը կազմէին ոչ-ճերմակներ — հնդիկներ ու նէկրոններ — եւ ասոնք էին որ կազմեր էին Իւնիքնները, որոնց քով ցեղային կամ շովինիստական թոյն չկար:

Այս շրջանին, ամենամեծ Թրէյտ Իւնիքնի շարժումը տարածուեցաւ Մէքսիկոյի մէջ 1910-ի Հոկտեմբերին եւ տեւեց մի քանի տարի: Այս շարժումն էր, որ Չապատայի եւ Վիլլայի առաջնորդութեամբ օգնեց յեղափոխութեան:

Սպանիական դադութները — Ֆիլիպեան կղզիները, Կուբա եւ Փորտո-Րիկո — զոր Մ. Նահանգները գրաւած էր Սպանո-Ամերիկեան պատերազմին, նոյնպէս կազմակերպուեցան Թրէյտ Իւնիքններու մէջ, որովհետեւ ամերիկացի նոր տէրերը հիներէն աւելի սաստկացուցին շահագործման իրենց նոր մեթոտները:

Ափրիկէի Թրէյտ Իւնիքնիզմը .—

Նախքան համաշխարհային Ա. Պատերազմը Թրէյտ Իւնիքնի շարժման կեդրոնը Ափրիկէի մէջ՝ Քէյթիթաունն էր: Այդ Իւնիքնը

կը կոչուէր Հարաւ Ափրիկեան Իւնիքն, որ կազմուած էր 1887-ին: Բայց այս միութիւնը մասսայական բնոյթ ստացաւ 20-րդ դարու առաջին տասնամեակին, երբ Մեծն Բրիտանիան, 1899-1902-ին, Բոյնիքեան ապստամբութիւնը ընկճեց եւ տէր դարձաւ Օրանժ-Ֆրանս-վալի ոսկիի եւ ազամանգի հանքերուն: Կոչաւ շահագործման եւ ինքնիշխան օրէնքներով կազմուեցան հանքագործական ընկերութիւններ (Corporations): Ասոնց կողքին՝ ճերմակ հանքագործները, գլխաւորապէս բրիտանացի, բացառելով ձախ թեւի փոքրամասնութիւնը, նկատի չէին ունենար բնիկ նէկրօ հանքագործներու թշուառ դրութիւնը: Սեպտեմբեր 13, 1955-ին, Նիւ Եորք Թայմզ թերթը կ'արձանագրէր հետեւեալը.— «Միջին հաշուով՝ նէկրօ բանուորը պղնձի հանքերու մէջ կը ստանայ տարին 210 տուր, իսկ ճերմակ գործաւորը՝ տարին կը ստանայ 5,600 տուր: Երբ դրութիւնը այդպէս էր 1955-ին, ընթացողը կ'ընայ երեւակայել թէ ի՞նչ սարսափելի ըլլալու էր նէկրոններու վիճակը այդ թուականէն յիսուն տարի առաջ:

Հանքագործներու միութիւնները մի քանի անգամ գործադուլի դիմեցին, բայց անօգուտ: 1913-ին, բանուորները ընդհանուր գործադուլի ընթացքին, քանի մը օր Եոհաննեսբուրգի տէր դարձան, գրաւեցին քաղաքը. բայց թագաւորական ջոկատները վայրի յարձակումով ճնշեցին գործադուլը: Տասը հազար գործադուլաւորներ շղթայի տակ բանտարկուեցան, իսկ անոնց առաջնորդները առանց դատաւարութեան՝ դատապարտուեցան աքսորի:

Ճերմակ գործաւորներու դրութիւնը եւս այնքան լաւ չէր: Անոնք թէեւ բարձր աշխատավարձը կը ստանային, բայց միւս կողմէն կը կողոպտուէին զուարճատեղիներու եւ բախտադախի ահուժներուն մէջ: Ամենէն տխուր իրողութիւնը, սակայն, այն էր որ ճերմակ ու նեղ շուկաներէն թոյլ չէր տար որ անոնք մօտենային նէկրոններուն, միացեալ ճակատով դասակարգային կռիւ մղելու համար:

Ասիական աշխատաւորութիւնը կ'արքննայ.—

Համաշխարհային պատերազմէն տասնեակ տարիներ առաջ, Ասիոյ աշխատաւորական մասսաները իմպերիալիստական պետութեանց տնտեսական, քաղաքական եւ զինուորական ճնշման տակ հասեր էին մարդկային տարողութենէն վեր՝ թշուառացած ստրկային վիճակի: Սկսաւ նախ ազգային ազատագրական շարժումը՝ տեղական բուրժուազիայի առաջնորդութեամբ. անոր հետ նաեւ դասակարգային կռիւր: Նախ քան մեծ պատերազմը, գաղութային եւ կիսագաղութային երկիրներու մէջ գործադուլներ: Բայց այդ շրջանին, տակաւին ոչ Թրէյտ Իւնիքններ կային ոչ ալ բանուորական քաղաքական կուսակցութիւններ:

Գաղութային երկիրներէն Հնդկաստանը արդիւնաբերական տեսակէտով ամենէն զարգացածն էր եւ ունէր կապիտալիստներ եւ բանուոր դասակարգեր: Բրիտանական իմպերիալիստները չէին ուզեր որ Հնդկաստան ճարտարարուեստական երկիր դառնար, բայց հակառակ այդ քաղաքականութեան, նորածին բուրժուազիան սկսեր էր գործել: 1858-ին Բոմբէյի մէջ միայն մէկ հիւսուածեղէնի գործարան կար. 1900-ին, բացուած էին 193 գործարաններ, որոնց մէջ կը գործէին 171,000 գործաւորներ: Բրիտանական իշխանութեան տակ բանուորներու եւ գիւղացիներու թշուառացումը հասեր էր ծայր աստիճանի: 1800-էն 1900-ի տարիներուն, Հնդկաստանի մէջ սովէն ու զանազան հիւանդութիւններէ մեռան 21 միլիոն 400,000 մարդկային էակներ:

1885-ին կազմուեցաւ Հնդկական Ազգային Գոնկէսը ի խնդիր՝ Հնդիկ ժողովուրդի անկախութեան եւ 1905-ին սրայթեցաւ ապստամբութիւնը: Ապստամբութեան զուլընթաց տեղի ունեցան գործադուլներ: Բայց բրիտանական կառավարութիւնը սարսափի միջոցներով արեան մէջ խեղդեց բոլոր շարժումները՝ տեղական կաշառուած իշխաններու օգնութեամբ:

Մեծ Զինաստանի մէջ նոյնպէս ժողովուրդը, նախքան Ա. Աշխարհամարտը, սկսեր էր կռուիլ իմպերիալիստ արշաւողներուն ու շահագործողներուն դէմ (*): Նշանաւոր էր 1900-ի շարժումը, որ խեղդուեցաւ արեան մէջ բրիտանական, Ֆրանսական, գերմանական, ռուսական, ճապոնական եւ ամերիկեան միացեալ ուժերով:

Ճապոնական Աշխատաւորական Շարժումը.—

Ճապոն, Ասիական երկիրներու մէջ միակն էր որ շնորհիւ գիւրին կերպով պաշտպանուած աշխարհագրական դիրքին, գաղութային կամ կիսագաղութային երկիր չեղաւ: Այսուհանդերձ՝ 1854-56-ին Ճապոնի դռները բացուեցան եւ եւրոպացիք իրենց ապրանքներով ներս մըտան ու փորձեցին կառավարութիւնը առնել իրենց հսկողութեան տակ: 1868-ին, Ֆէոդալ արիստոկրատի յառաջիմական թեւը Սամուրէի զինուորական ուժի օժանդակութեամբ պետական հարուածով տապալեց Շոկընի կայսրերու կառավարութիւնը, որ Ճապոնի վրայ կ'իշխէր 1192 թուականէն ի վեր: Այս նոր կառավարութիւնը երկիրն

(*) Տես Դասակարգային կռիւներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ, իմ ուսումնասիրութեան Ա. Հատորը, ուր առաւմտիկ բաժին յատկացուցեր եմ չինացի ժողովուրդին: Լ. Մ.

մէջ բուրժուա քաղաքական եւ տնտեսական բարեկարգութիւններ մտցուց ու երկիրը տեսակով մը արդիականացուց :

Ճապոն — ազատ իմպերիալիստական տիրակալութենէն շուտով կրցաւ երկիրը ճարտարաւեստականացնել եւ մտնել կապիտալիստական զարգացման ճամբան : 1860-ին Ճապոն ունէր միայն մէկ բամբակի գործարան . բայց 1900-ին, բամբակի գործարաններու թիւը բարձրացաւ 162-ի . իսկ բուրդի հիւսուածեղէնի գործարանները, մեծաքսի գործարաններ եւ մեքենաներու ձուլարանները նոյնպէս բազմացան : Այսպէս, ուրեմն, երբ արդիւնաբերութիւնը յառաջդիմեց, Ճապոն ապրանքներուն սպառման նոր շուկաներու եւ հում նիւթի նոր աղբիւրներու տիրանալու համար, ստիպուած էր թափ տալ իր զինուորական ուժին ու անցնիլ երկիրներ գրաւող յարձակողական քաղաքականութեան : Գրաւեց կարգ մը կղզիներ եւ 1895-ին, յաղթելով Չինաստանին, գրաւեց Քորէան : Այսպիսով Ճապոն դարձաւ իմպերիալիստական պետութիւն մը, որ 1914-ի պատերազմին անցաւ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսաստանի կողմը :

Ճապոնի արդիւնաբերութեան զարգացման հետ զարգացաւ Թրէյտ Իւնիքընի շարժումը : Աէն Քաթայեամա առաջին կազմակերպիչն եղաւ բանուորական միութեան : Գործաւորներու կազմակերպութեանց հետեւանքով կառավարութիւնը ճնշող միջոցներու դիմեց, բայց անօգուտ : 1900-ին, Ճապոնի մէջ մէկ միլիոն 86,000 կազմակերպուած բանուորութիւն կար : Նախապէս Սոցիալիստները առաջնորդող զերն ունէին, սպա անոնց տեղն անցան Անարխո-Սէնտիկալիստները՝ Քոթոբուի գլխաւորութեամբ : 1904-ին, Ամստերտամի մէջ Բ. Միջազգայնականի Գոնկիէսին, Քաթայեամա եւ Պէլիանոֆ, Ճապոնի եւ Ռուսիոյ սոցիալիստ կուսակցութեանց առաջնորդները, երբ սղջագուրուեցան ու երգում ըրին միացեալ ճակատով կռուիլ պատերազմի դէմ, պատգամաւորներուն մէջ ստեղծեցին աննկարագրելի խանդավառութիւն : Բայց աւա՛ղ, այդ խանդավառութեան մեղրալուսինը երկար չտեւեց : 1911-ին, Ճապոնի, ինչպէս նաեւ ամբողջ աշխարհի աշխատաւորութիւնը ցնցուեցաւ, երբ Քոթոբուի եւ ուրիշ 11 ճախակողմեան թեւի մարտիկներ ճապոնական բանտին մէջ խեղդամահ եղան : Երբ պատերազմը սկսաւ 1914-ին, Ճապոնի Թրէյտ Իւնիքըններու թիւը իջաւ 10,000-ի :

19.— ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹՐԷՅՏ ԻՒՆԻՒՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆԸ

Չանազան երկիրներու մէջ Թրէյտ Իւնիքըններու զարգացումը սկիզբէն իսկ ուժգնօրէն շեշտեց անհրաժեշտութիւնը միջազգային

կազմակերպութեան մը, որ ներդաշնակ ընդհանուր գործունէութեան ճամբուն մէջ առաջնորդ ըլլար բոլոր երկիրներու Թրէյտ Իւնիքըններուն : Կապիտալիստական սխտէ՛մը միջազգային սխտէ՛մ էր, բոլոր երկիրներու կապիտալիստները կեցած էին նոյն ճակատին վրայ նոյն անփոփոխ սկզբունքով . այն է՝ ներքի ու աններքի մեքոսներով անխղճօրէն շահագործել բանուորութիւնը : Ուրեմն, Թրէյտ Իւնիքընները եւս պէտք է կենան միացեալ ճակատի վրայ, պէտք է գործադուլներու ատեն օժանդակեն իրարու, պէտք է արդիւն գործադուլ վիժեցնողներու ներածումը, դասակարգային կռիւի մէջ պէտք է օգտուին ընդհանուր փորձառութենէն եւ այսպիսով ներգրաւեն բոլոր բանուորները, անփոփոխ պահելով կոմունիստական Մանիֆէստի նշանաբանը . Բանուորներ, բոլոր երկիրներու, միացե՛՛ք . . . :

Արդէն Բ. Միջազգայնականի գոնկիէսներուն մէջ միջազգային Թրէյտ Իւնիքընի հարցը յաճախակի խնդրոյ առարկայ եղած էր, բայց ամէն անգամ զերման սոցիալ զեմոկրատ առաջնորդները հակառակած էին : Անոնց գլխաւոր փաստը այն էր, որ այդպիսի կազմակերպութիւն մը սոցիալ զեմոկրատ կուսակցութիւնները՝ անոնց հետ նաեւ Բ. Միջազգայնականը պիտի տանէին ետ՝ երկրորդ կարգի վերայ եւ թէ Անգլիոյ, Ֆրանսայի ու Մ. Նահանգներու Թրէյտ Իւնիքընները տիրող պիտի դառնային բոլորին վրայ : Այսուհանդերձ՝ Անգլիական Թրէյտ Իւնիքըններու նախաձեռնութեամբ 1900-ին, բոլոր երկիրներու միութեանց ներկայացուցիչները հրաւիրուեցան Քոպենհակէն, ուր Քարլ Լիճիւն, զերման Թրէյտ Իւնիքըններու մէկ առաջնորդը, որ ներքնապէս հակառակ էր նման ծրագրի մը իրագործումին, ընտրուեցաւ միջազգային Թրէյտ Իւնիքընի ընդհանուր քարտուղարը : Շարժումը արդէն ատով զերեզման կը դրուէր, երբ այդպիսի դաւադիր մը կ'անցնէր պատասխանատու պաշտօնի մը զըլուխը :

Կարողիկէ Աշխատաւորական Միջազգայնականը .—

Մինչ դասակարգային ուղեղծի վրայ կազմակերպուած Թրէյտ Իւնիքընները կ'աշխատէին միջազգային մարմին մը յառաջացնել եւ որպէս թէ յաջողութիւնը ապահովուած կը կարծէին, միւս կողմէն, կային ուրիշ Թրէյտ Իւնիքըններ, Քրիստոնէական Թրէյտ Իւնիքըններ, որոնք Վատիկանի առաջնորդութեամբ կ'ուղէին հիմնել Աշխատաւորական Միջազգայնականը, որ կը մերժէր Սոցիալիզմը, Սէնտիկալիզմը եւ կոմունիզմը, կը մերժէր դասակարգային կռիւը, նշանաբան ունենալով սէր ու համերաշխութիւն :

Հոսովի Պապն էր որ կը պատրաստուէր կռուիլ Մարքսի դէմ : Վատիկանի ստեղծած շարժումը, սակայն, յաջողութիւն չէր

խոստանար, որովհետեւ ոչ-կաթողիկէ երկիրներ կային, ինչպէս Մ. Նահանգները, ուր բնակչութեան 20 տոկոսը միայն կաթողիկէ էր, իսկ մեծամասնութիւնը չէր ուզեր ենթարկուիլ Հռովմի Պապի հրահանգներուն:

20.— ԹՐԷՅՏ ԻՒՆԻՒՐՆԸ 1905-ԻՆ

Ռուսական Յեղափոխութիւնը

1904-1905-ի պատերազմը իմպերիալիստական առաջին պատերազմն էր Ռուս եւ Ճապոնական իմպերիալիզմի միջեւ: Երկու զայլերու նպատակն էր յօշոտել անօգնական Չինաստանի մարմինը: Բայց երբ անոնք զիրար կը բղթէին կատաղութեամբ եւ հազարաւոր զոհեր կը փռէին պատերազմի ճակատին վրայ, անդին, Ռուսիոյ բանուորներն ու զիւզացիները անհանդուրժելի պայմաններու հրամայականով սկսան իրենց սեփական կռիւը, որու նպատակն էր պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի եւ տապալել ցարական վարչակարգը:

Նախքան այս զրութեան քննարկումը, անհրաժեշտ է վեր հանել այն հսկայ փոփոխութիւնները, որ տեղի ունեցեր էին նախորդող տարիներուն՝ ռուսական բանուորական շարժման մէջ: Որովհետեւ այդ շրջանին էր որ բերեղացաւ Մարքսիզմ-Լենինիզմը, այն յեղափոխական շարժումը, որ մեծ կարեւորութիւն ունէր ոչ միայն Ռուսիոյ, այլ եւ ամբողջ աշխարհի համար:

Լենին կը վերահաստատէ Մարքսեան Սկզբունքները:—

20-րդ դարու սկիզբները Երկրորդ Միջազգայնականի Թրէյտ Ինիշրնի բիւրոկրատներն ու մանր բուրժուական տարրերը սկսեցին խորապէս ազդուիլ Բերնշտայնի վերաքննութեան թոյնէն: Տարուած կապիտալիզմի վերելքին հետեւող պատրալից ճոխութենէն, անոնք այն եզրակացութեան հասեր էին թէ՛ Մարքսիզմը այլեւս անզործնական է, որ Մարքսի տնտեսադիտութիւնը հնացեր է, որ բանուորները իրենց ազատագրութիւնը փնտռելու չէին յեղափոխական ճամբով կապիտալիզմը բնաջնջելու, քանի որ այդ սխտէմը արդէն աստիճանաբար կը դիմէ գէպի սոցիալիզմ: Այս գաղափարաբանութեամբ վատասերուած սոցիալիստներ էին անոնք, որոնք յառաջացուցեր էին տեսակ մը պղտորութիւն:

Սոյն վերաքննական պատեհապաշտ գաղափարները թափանցեր էին Ռուսիոյ բանուորական շարժման մէջ, բայց այդ գաղափարները ամենէն աւելի Ռուսական կացութեան կը սպառնային, որովհետեւ ռուս բանուորներն ու զիւզացիները նոր արթնցեր էին, եւ արթնցեր

էին մարտական ոգիով՝ կռուելու վճռակամութեամբ: Այդ վերաքննութեան գէմ ամենաառաջին ու կարկառուն կռուողը եղաւ Լենինը, որ միջակ կարողութեան տէր ծնողքի դուստր էր: Ան ծնած էր Սիբիրսկի մէջ (Ռուսիա) 10 Ապրիլ 1870-ին: Լենին բաց ճակատով հրաւէր կարգաց բոլոր պատեհապաշտներուն եւ անառարկելի տրամաբանութեամբ հաստատեց Մարքսի յեղափոխական սկզբունքներու եւ ծրարաբար ճշդութիւնը: Լենին արդէն «Իսկրա» (Կայծ) թերթի առաջին համարին Գերմանիոյ մէջ հրատարակութենէն ի վեր (Դեկտեմբեր 24, 1900) անհաշտ պայքար կը մղէր Մարքսիզմի յայտնի ու դիմակաւոր թշնամիներուն դէմ: 1903-ին, Լոնտոնի մէջ գումարուած կուսակցութեան երկրորդ համագումարին(*) ռուս սոցիալ դեմոկրատները երկու հատուածի բաժնուեցան.— Բոլշեւիկներ ու Մենշեւիկներ: Լենինը կը դիտարկէր առաջինները: Այդ երկու հատուածները համաձայն էին այն տեսակէտին շուրջ, որ Ռուսաստանը բուրժուական յեղափոխութեան նախօրեակը կ'ապրէր, բայց անոնք տարբեր համոզում ունէին տիրող զրութեան մէջ բանուոր դասակարգի դերին մասին: Մենշեւիկները կը պաշտպանէին այն տեսութիւնը, թէ բուրժուազիան պէտք է առաջնորդէ յեղափոխութիւնը, որ գործաւորները պէտք է ամէն կերպ օժանդակեն բուրժուական յեղափոխութեան, որ զիւզացիութիւնը իր էութեամբ հակայեղափոխական ուժ է, եւ որ վերջապէս Սոցիալիզմի հարցը ձգելու է ապագային, որովհետեւ անոր կարելի է հասնիլ Էվալիցիայի դանդաղ բրոցէտով: Միւս կողմէ՝ Բոլշեւիկները սկզբունքով համոզուած էին, որ բուրժուազիան պիտի դաւաճանէր յեղափոխութեան՝ համաձայնելով ցարական հողատէրերուն հետ, որ բանուորները պիտի դաշնակցին զիւզացիութեան հետ յեղափոխութեան յաղթանակին համար, որ բուրժուական յեղափոխութիւնը պիտի վերածեն անոնք պրոլետարական յեղափոխութեան եւ պիտի հաստատեն բանուորներու եւ զիւզացիներու վարչակարգ՝ պրոլետարական դիկտատուրան: 1905-ի յեղափոխութեան մօտեցումը, ուրեմն, տրամադծօրէն իրարու հակառակ՝ Մենշեւիկներու եւ Բոլշեւիկներու տեսութեանց առջեւ կը դանուէր: Բայց ո՞ր մէկուն տեսութիւնն էր գործնականը եւ զիտականը:

Լենինի կուսակցութեան նոր կերպարը:—

Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան ամենէն մեծ վիճելի հար-

(*) Աւելի մանրամասնութեանց համար տես իմ Դասակարգային Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ, Ա. Հատոր, էջ 327-328-329-330 եւ 331:

ցը այն էր թէ՛ բանուորներու կուսակցութիւնը ի՞նչ ձեւ պիտի ունենար, ի՞նչ հիմքով ու սկզբունքով պիտի կազմակերպուէր...: Մենշևեիկները, ուրիշ երկիրներու իրենց եղբայրներու նման, համաձայն իրենց պաշտպանողական ըմբռնումներուն՝ բանուոր դասակարգը կը ստորադասէին բուրժուազիային, կ'ուզէին զայն անկերպարան եւ թոյլ կառուցումով կուսակցութեան վերածել, կուսակցութիւն, որուն համար երկաթեայ, իրական կարգապահութիւն եւ զօրաւոր առաջնորդութիւն՝ հաւասարապէս անպէտք եւ հետեւաբար անկարելի էին: Այսպիսի կուսակցութիւն մը, որ կը ճակատէր ցարական ռեժիմի սեղմումներուն, այլեւս չէր կրնար մրցել յեղափոխութեան մէջ բուրժուազիայի քաղաքական առաջնորդութեան հետ:

Մանր-բուրժուական տիպի այսպիսի կուսակցութեան մը դիմաց Լենին արմատական հակադրութեամբ կ'առաջարկէր զօրաւոր, լաւ հիւսուած եւ երկաթեայ կարգապահութեամբ կազմակերպութիւն մը՝ հաստատուած դեմոկրատական կեդրոնացման սկզբունքին վրայ: Կուսակցութեան անդամները ոչ թէ սոսկական օժանդակներ ըլլալու էին կուսակցութեան արշաւներուն, ինչպէս պատեհապաշտները կ'ուզէն, այլ անոնք ըլլալու էին կուսակցութեան անդամները վճարելու էին, առանց բացառութեան՝ մասնակցելու էին կուսակցական ժողովներուն, պայքարներու մէջ պատրաստ կատարելու իրենց յանձնուած պարտականութիւնները՝ զինուորական կարգապահութեան տակ: Կուսակցութիւնը, քնականօրէն պիտի ըլլար դադարի՝ ընդյատակեայ, քանի որ ցարական վարչակարգը ճնշման անգութ մեթոտներ կը գործադրէր: Կուսակցութիւնը, ուրեմն, պիտի ըլլար ամրակուռ, մարտական կազմակերպութիւն մը՝ քաղաքական եւ տնտեսական ճակատի վրայ:

ԼԵՆԻՆ ԵՒ ԹՐԷՅՏ ԻՆՆԻՉՆՆԵՐԸ

Ժժ. դարուն, Ռուսիոյ մէջ ցարական երկաթեայ ճնշումին տակ Թրէյտ Իւնիքն զոյութիւն չունէր: Բայց եւ այնպէս, գործադուլներ սկսան 1870-ական թուականներուն, Սէն-Պետրսբուրկի մէջ 1896-ին, հիւսուածեղէնի 40,000 բանուորներ գործադուլ ըրին. 1902-ի Մարտին, Ռոստովէն Դոն երկաթուղային բանուորները գործադուլի ելան. 1903-ի գարնան, Հարաւային Ռուսիոյ իւրի բանուորները գործադուլ յայտարարեցին. 1904-ի Մարտին Օտեսայի բանուորները ընդհանուր գործադուլ յայտարարեցին: Այս բոլոր շարժումները ճգմունցան անգութ ջարդարարութեամբ: Բանուորները այդ տարիներուն՝ միայն մի քանի դադարի միութիւններ եւ բարենպաստ ընկերութիւններ ունէին, բայց ոչ ազատ Թրէյտ Իւնիքններ: Այդ ձեւի միութիւններ բաց

ճակատով երեւան եկան 1905-ի յեղափոխութեան ատեն: Երբ արդիւնաբերութիւնը կը տարածէր իր ճիւղերը եւ բանուորութիւնը կ'աճէր, Թրէյտ Իւնիքնի գլխով «օղին մէջ» էր: 1900-ին, կառավարութիւնը վախնալով բանուորական շարժումներու հեռանկարէն, դադարի ոստիկանութեան ձեռքով յառաջացուց «Աշխատաւորական միութիւններ», որոնք կը կոչուէին «Զուգատո՞՞ կազմակերպութիւններ»: Բայց կառավարութեան այդ փորձը ձախողեցաւ, որովհետեւ անոնց մէջ մտան մեծ մասով յեղափոխական բանուորներ:

Նախապէս, 1890-ական թուականներուն Ռուսաստանի մէջ երեւան եկած էր աշխատաւորական նոր խումբ մը. ասոնք կը կոչուէին Էկոնոմիստներ: Անտարակոյս անոնք գործատէրերու ազդեցութեան տակ էին (անոնցմէ շատերը միացան յետադիմական Սահմանադիր ռամկավարներուն՝ Կադէտներուն): Էկոնոմիստները կ'առաջարկէին բանուորները կազմակերպել «մաքուր եւ պարզ» ձեւով՝ Գամպըրսի շինած կաղապարով: Անոնք կ'ուզէին որ բանուորներու պայքարը մընար տնտեսական գետնի վրայ, քաղաքական պայքարի առաջնորդութիւնը ձգելու էր բուրժուազիային: Իսկ Թրէյտ Իւնիքնի շարժումը պէտք էր մնար ցարական ռեժիմի օրինական սահմաններուն մէջ:

Էկոնոմիստները Մենշևեիկներու նախակարապետներ էին, երկուքն ալ քաղաքական դիժի վրայ գրեթէ նոյն սկզբունքներուն կը հետեւէին: Լենին, իր պայքարը կը մղէր երկու հասանքներուն դէմ, դանոնք նկատելով «Մարքսիզմէն դասալիքներ»: Լենին նոյնպէս կը կըրուէր կուսակցութեան հանդէպ չեզոք դիրք բռնելու պատեհապաշտական թէորիայի դէմ: Ան բացայայտ կերպով յայտարարեց, որ Թրէյտ Իւնիքնները անպատճառ միանալու չէին կուսակցութեան հետ, բայց պահելու էին ամենամօտիկ համադրեցութեան գիծ մը: Բանուորական միութիւններն ու կուսակցութիւնը միասնաբար պայքարելու են ցարիզմի դէմ, առաջնորդութիւնը ձգելով Կոմունիստ կուսակցութեան:

Էկոնոմիստներն ու Մենշևեիկները կ'ընդունէին թէ բանուորական կազմակերպութեան մէջ գործնականութեան ճամբուն վրայ գաղափարական դարգացումով փոփոխութիւնը կը յառաջանար ինքնաբերաբար, հետեւաբար պէտք չկար ո'չ արտաքին թելադրանքի, ոչ ալ բռնազրօսիկ պրոպականտի ու միջամտութեան: Լենին այս ըմբռնումին դէմ ալ կը հակառակէր: Ան կը ջատագովէր այն տեսութիւնը, որ Թրէյտ Իւնիքնները կառուցուելու էին ամրակուռ հիմքերու վրայ՝ դասակարգային դիտակցութեամբ, բիւրեղացած սկզբունքներով եւ կեդրոնացած առաջնորդութեամբ: Անոնք, նայած պայմաններուն կրնան փոխել իրենց գործունէութեան եղանակը՝ լեկալ եղանակէն անցնելով իլլիկալին, բայց մէկ բան մնալու է անփոփոխ. այն է՝ ա-

նոնք չբեկու չեն կոմունիստ կուսակցութեան առաջնորդութիւնը: Ահա Լենինեան այս դիժին վրայ էր որ կազմուեցան ուսական Թրէյտ Իւնիքմեները եւ այդպիսով անոնք մեծ դեր խաղացին 1905-ի յեղափոխութեան մէջ:

Լենին, մասնաւորապէս կուսեցաւ Էկոնոմիստներու այն տեսութեան դէմ, որով անոնք կ'ընդունէին թէ բանուորները դասակարգային կռիւի ընթացքին՝ իրենք իրենց արդէն կրնան ձեւակերպել իրենց սկզբունքները, անոնց թելադրելու չէ բրածոյած սկզբունքներ: Լենին բացարձակապէս ժողոկոսային տեսութիւնը եւ յայտարարեց որ — «Առանց յեղափոխական քէորիայի (տեսութեան) երբեք յեղափոխութիւն չի կրնար ըլլալ»:

1905-ի Յեղափոխութեան ընթացքը.—

Ռուս-ձապոնական պատերազմը սկսաւ 8 Փետրուար 1904-ին, երբ ձապոն յարձակեցաւ յանկարծակի՝ Փորթ-Արթուրի ուսական նաւաբաժնին վրայ: Յաջորդող 18 ամիսներու ընթացքին՝ Ռուսիոյ եղերական պարտութիւնները մէկը միւսին յաջորդեցին, այնպէս որ 23 Օգոստոս 1905-ին, խաղաղութեան համաժողովին մէջ ձապոն Ռուսաստանէն պոկեց Փորթ-Արթուրը, Սաքալեան կղզիները, Քորէան եւ համակ Հարաւային Մանչուրիան:

Կիսաքաղց, չարաչար կերպով շահագործուող եւ բռնակալութեան վայրենի մեթոտին ենթարկուած Ռուս մասսաները ցարական իմպերիալիզմը պատերազմը պիտի մղէին, պիտի զոհուէին հարիւր հազարներով, որպէսզի ցարը յաղթանակը շահէր, ի վերջոյ՝ նոյն ժողովրդական զանգուածները աւելի անկթորէն ճգմելու համար. այդ անընական էր: Պայթելու էր յեղափոխութիւնը: Յեղափոխական փոթորկումի առաջին ազդանշանը տրուեցաւ 1904-ի Դեկտեմբերին, երբ Բաքուի քարիւղի բանուորները յայտարարեցին հսկայական զործադուլ մը: Դիզուած կրակին վրայ իւր լեցուեցաւ, երբ 140,000 բանուորներ 22 Յունուար 1905-ին, Սէն Պետերսբուրկի Չմեռնային պալատին առջեւ խաղաղ ցոյց մը կազմակերպած էին, ցոյց մը՝ ուր հազար բանուորներ սպաննուեցան եւ երկու հազար հոգի վիրաւորուեցան: Մայրաքաղաքի փողոցներու ձիւնը արիւնով ներկուեցաւ եւ այդ Կիրակին կոչուեցաւ յետոյ՝ «Արիւնոտ Կիրակի»: Զայրոյթի ալիքներ համակեցին Ռուսիան: Սէն Պետերսբուրկի մետաղի բանուորներու առաջնորդութեամբ երկրի բոլոր բանուորները դիմեցին զործադուլի, զործադուլ՝ յեղափոխական բնոյթով: Միայն Յունուար ամսուան մէջ 450,000 բանուորներ մասնակցեցան զործադուլներու: Լենին կ'ըսէ, թէ 1905-ի տարուան տեւողութեան երկու միլիոն 800,000 բանուորներ մտած էին զործադուլներու մէջ: Այդ ատեն, զիւղացիութեան

խոչորադոյն հատուածը եւս անցած էր զործի: Աւելի քան երկու հազար չէնքեր հրոյ ճարակ դարձան եւ տեղի ունեցաւ հողային վերաբաժանում: Ամենուրեք ուսանողները միացան եռեւեփող շարժումին, եւ ժողովուրդը զխաւոր քաղաքներու մէջ սկսաւ կազմել սովետներ (բանուորա-զիւղացիական խորհուրդներ): Լեհաստանը պարզեց ապրտամբութեան դրօշակ:

Ռուս բանուորները կը պահանջէին.— Ութ ժամեայ աշխատօր, ցարական ուժիմի տապալում եւ Սահմանադիր ժողովի գումարում: Անոնց յեղափոխական ուժի ճնշումը այնքան մեծ էր, որ 19 Օգոստոս 1905-ին, ցարը հաստատեց հսկայեղափոխական Դումա մը: Յեղափոխական փոթորիկը, սակայն, չհանդարտեցաւ. ուս ժողովուրդը չէր ուզեր խարուիլ դատարկ ձեւականութենէ: Սկսուած ամբողջ շարժումը իր ծայրակէտին հասաւ, երբ Դեկտեմբերին Մոսկուայի մէջ պայթեցաւ զինեալ ապստամբութիւն: Ցարական բանակը, որ տեղ տեղ տատանումի մէջ էր, դէնքի ուժով տապալեց Մոսկուայի ապստամբութիւնը, որով յեղափոխութիւնը սկսաւ նահանջել:

1905-ի յեղափոխութիւնը Ռուսական յեղափոխական շարժման առաջին արարուածն էր, աւելի շիտակն է ըսել՝ առաջին փորձը որ լաւ դարդացած էր եւ քաղաքական դիմով լաւ կազմակերպուած չէր, ձախողեցաւ, որովհետեւ զիւղացիութեան լայն զանգուածները դեռ հասունցած չէին յեղափոխական զործունէութեան համար, եւ վերջապէս՝ ձախողեցաւ, որովհետեւ Մենչևիկիները իրենց հսկայեղափոխական քաղաքականութեամբ խրամատ բացեր էին բանուոր դասակարգին մէջ:

ԹՐԷՅՏ ԻԻՆԻԸՆՆԵՐՈՒ ԴԵՐԸ

1904-1905-ի յեղափոխական զործադուլային շարժումը, որ աշխարհի ամենամեծ զործադուլային շարժումն էր, ինքնարոյս, տարերային շարժում չէր. անոր առաջնորդներն էին Լենինը եւ Սոցիալ Դեմոկրատ Աշխատաւորական Կուսակցութիւնը: Կարգ մը կեղբոններու մէջ երիտասարդ Սովետներն էին առաջնորդները: Մոսկուայի Սովետն էր, որ կոչ ըրաւ ընդհանուր զործադուլի՝ Դեկտեմբեր 7-ին: Լազովսկի կ'ըսէ. «Ամէն տեղ ձեռներէց խումբեր, յանձնախումբեր, զործադուլի կոմիտէներ եւ բանուորական խորհուրդներ կազմուած էին, եւ բոլորն ալ զործօն մասնակցութիւն բերին ընդհանուր զործադուլին»:

Յեղափոխութեան ձախողանքէն յետոյ՝ հակառակ տակաւին շարունակուող տեւորին, զործաւորները սկսան բացէն ի բաց կազմել Թրէյտ Իւնիքմեներ: Անոնցմէ առաջինը եղաւ Մոսկուայի Տպագ-

րիչներու Միութիւնը, որուն հետեւեցան ղերձակները, խաղախորթարանի բանուորները, կօշկակարները, ապա երկաթուղիի գործաւորները: «1906-ի սկիզբները», Լազուլսկի կ'ըսէ, «Ռուսաստանի մէջ չկար խոշոր քաղաք մը, ուր Թրէյտ Ինիլըն գոյութիւն չունենար: Այս խոշոր քաղաքները նոյնպէս ունէին իրենց աշխատաւորական խորհուրդները»: Ասկէ պարզ կը տեսնուէր, որ յեղափոխութեան կրակը թէեւ արեան տեղատարափին տակ մարած կը թուէր, բայց մոխիրներուն մէջ բազմաթիւ կայծեր կային, որ այդ արիւնը պիտի բռնկեցնէին, յառաջացնելով այն մեծ հրդեհը, որու բոցերուն մէջ ոչ թէ բանուորութիւնը պիտի վառուէր ու փոշիանար, այլ՝ նոյն ինքը՝ ցարիզմը: Եւ այդ հրդեհը պայթեցաւ 1917-ին:

1905-ի Սեպտեմբերին Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ Թրէյք Ինիլընի համազգային առաջին համագումարը, ուր ներկայ էին 36 պատգամաւորներ: Բանուորներու եղբայրական ընկերութեանց թոյլ տրուեցաւ ներկայ ըլլալ համագումարին, բայց Չուբատովի Ինիլըններուն առջև զոյնուցան դռները անոնք ներս չընդունուեցան:

Յեղափոխութեան վաղորդայնը .—

1905-ի Ռուսական յեղափոխութիւնը ամբողջ աշխարհի աշխատաւորներու եւ ճնշուած ժողովուրդներու մէջ զարթուցիչ արձագանգ տուաւ եւ ներշնչման ուժով լեցուց Սախոյ գաղութային եւ կիսագաղութային երկիրները: Ան ուժգին կերպով խթանեց ազգային ազատագրական շարժումները՝ Պարսկաստանի, Թուրքիոյ, Եգիպտոսի, Զինաստանի, Հնդկաստանի եւ այլ երկիրներու մէջ:

Յեղափոխութիւնը նոյնպէս մեծ թափ տուաւ Եւրոպայի ու Ամերիկայի աշխատաւորական շարժումներուն: Բանուորները սկսան լրջօրէն հետաքրքրուիլ Մարքսիզմի եւ վերաքննականներու հոսանքի տեսութիւններով, որոնց շուրջ կռիւ կը մղուէր Բ. Միջազգայնականի մէջ: Մարքսեան յեղափոխական գաղափարաբանութիւնը սկսած էր մտնել բիւրեղացման շրջանը:

21. — ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ԷԱՐՑԸ

1905-ի Ռուսական Յեղափոխութիւնը ուրիշ շատ մը դասերու հետ հիմնականօրէն պարզեց ընդհանուր գործադուլի հարցը բանուոր դասակարգին համար: Նախապէս, տարիներու ընթացքին, այդ հարցը վէճի առարկայ եղած էր. 1905-ի յեղափոխութիւնը, սակայն, եկաւ փաստել, որ ընդհանուր գործադուլը լաւագոյն ու գործնական

զէնքն է բանուորութեան՝ մասնաւորապէս յեղափոխութեան տաք շրջանին:

Բանուորները առաջին անգամ երբ սկսան կազմակերպուիլ եւ վերահաս ըլլալ իրենց տնտեսական ուժին, համոզուած էին որ ընդհանուր գործադուլի միջոցով պիտի կրնան իրենց գործատէրերուն հարկադրել պահանջուած զիջումներն ընել: Նոյնիսկ կանխագոյն շրջանին, բանուորները իրենց մտքին մէջ ունէին ընդհանուր գործադուլի անհրաժեշտութեան գաղափարը:

Առաջին միջազգայնականի շրջանին (1864-1876), Անարխիստները ամենաեռանդուն ջատագովներն էին ընդհանուր գործադուլին, որպէս միակ ու վերջնական զէնքը, որ պիտի ապահովէ բանուորութեան վերջնական յաղթանակը: Անարխիստներուն հետեւեցան Անարխո-Սէնտիկալիստները:

Մարքսիստները, ընդհանրապէս հակառակ էին Անարխիստներուն ու Անարխո-Սէնտիկալիստներու միակողմանի տեսութեան, քանի որ անոնք կը մերժէին ընդհանուր գործադուլին զուգընթաց՝ կուսակցութեան քաղաքական գետնի առաջնորդող դերը: Այս առթիւ արդէն Էնգէլսն ալ պարզած էր իր տեսութիւնը՝ Հոկտեմբեր 21, 1873-ին:

Համաշխարհային Ա. Պատերազմի նախաշրջանին, Բ. Միջազգայնականի աջակողմեան առաջնորդները, մասնաւորապէս գերման Սոցիալ Դեմոկրատներէն Օէր, Էնգէլսի տեսութիւնը խեղաթիւրելով յայտարարեց .— «Ընդհանուր գործադուլը ինքնին ընդհանուր անիմաստ բան մըն է»: Բայց Սոցիալ Դեմոկրատներու առաջնորդը չէր ուզեր անդրադառնալ այն իրողութեան՝ որ Էնգէլսի քննադատութիւնը չէր վերաբերեր ըստ ինքեան ընդհանուր գործադուլին, այլ Անարխիստներու ջատագոված զուտ արգիւնաբերական կամ տնտեսական այն գործադուլին, որ պրոլետարիատի քաղաքական պայքարը պէտք էր փոխարինէր: Այս քննադատութիւնը քաղաքական նպատակի համար տեղի ունեցող ընդհանուր գործադուլին կապուած չէր: 1905-ի Ռուսական յեղափոխութեան շրջանին էր, որ Լենինի առաջնորդութեամբ ռուս բանուորութիւնը եկաւ թէորիսով ու գործով հաստատել ընդհանուր գործադուլի վաւերականութիւնը, որպէս բանուոր դասակարգի մէկ հատու զէնքը: Անկէ յետոյ՝ Մարքսիստները ընդհանուր գործադուլի ախոյեանները դարձան եւ զայն կապեցին իրենց քաղաքական գործունէութեան հետ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԸ ՕՐԱՎԱՐՁԻ ԵՒ
ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Համաշխարհային աշխատաւորական պատմութիւնը լեցուն է այն արձանագրութիւններով, որոնք կը ցուցնեն թէ՛ ճնշուած բանուորները կարիքի հրամայականով դիմած են ընդհանուր գործադուլի իրենց տրուած անբաւարար աշխատավարձքը աւելցնելու կամ իրենց ուժերը սպառող երկար աշխատաժամերը կրճատելու համար: Նոյնպէս տեղի ունեցած են շատ մը ընդհանուր գործադուլի ցոյցեր՝ սովորաբար կարճ տեւողութեամբ, որոնց նպատակն եղած է բանուորներու մէջ զաղափարական գիծով աւելի ամրացնել համերաշխութեան կապը: Միջազգային Մայիս Մէկը, օրինակի համար, այդօրինակ միջազգային ցոյցի գործադուլ է:

Իտալիան ունեցեր է շատ մը գործադուլներ — ձէնովայի գործադուլը 1900-ին, Ֆլորէնսինը՝ 1902-ին, Փարմայինը՝ 1908-ին, Միլանինը՝ 1907-ին եւ 1913-ին, Հոովմիներ՝ 1903-ին: Ունեցեր է նաեւ ընդհանուր գործադուլներ՝ 1904-ին եւ 1914-ին: Սպանիոյ աշխատաւորական պատմութիւնը 1870-էն 1930, մեզի ցոյց կու տայ շատ մը մասսայական գործադուլներ, որոնցմէ քանի մը հատը քաղաքական եւ համերաշխական նպատակներ ունեցեր են: Մասնաւորապէս յիշատակելի են 1902 եւ 1909-ի Բարսէլոնայի ընդհանուր գործադուլները, որոնք ցնցեցին ամբողջ Սպանիան:

Ֆրանսան 1890-էն սկսեալ, մասնաւորապէս Անարխո-Սէնտի-կալիզմի շրջանին, թատերաբեմն եղած է շատ մը ընդհանուր գործադուլներու: Նշանակելի է 1902-ի Հոկտեմբերեան ընդհանուր գործադուլը, որ մասնակի յաջողութիւն ունեցաւ: 1904-ին Մարսէյի գործադուլը տեղի ունեցաւ: Ֆրանսական Իւնիլընները շատ կարեւորութիւն տուին Մայիս Մէկի ցոյցին, որ փոխուեցաւ քաղաքական գործադուլային ցոյցի: 1906-ի Մայիս Մէկին, օրինակի համար, 300,000 բանուորներ ընդհանուր գործադուլ յայտարարեցին, յանուն համաշխարհային բանուորական համերաշխութեան:

Պայքարի ոգին տարածուած էր նաեւ Լատին Ամերիկայի մէջ, ուր ամէն մէկ երկիր մէկէ աւելի ընդհանուր գործադուլ ունեցաւ, որոնցմէ ոմանք քաղաքացիական պատերազմի դոյն առին: Ծապոն նոյնպէս Բ. համաշխարհային պատերազմէն յետոյ՝ մի քանի հսկայական ընդհանուր գործադուլներ ճանչցաւ:

Կարժէ նշել մի քանի գործադուլներ եւս: 1917-ի Օգոստոսին տեղի ունեցաւ Աւստրալիայի ընդհանուր գործադուլը: Սիէտլի եւ Վաշինկտոնի մէջ ընդհանուր գործադուլ՝ 1919-ի Փետրուարին:

այդ գործադուլին մասնակցեցան 75,000 բանուորներ: Վինիպէկ — Գանատայի մէջ 45,000 բանուորներ գործադուլ յայտարարեցին 1919-ի Մայիս Մէկին, յանուն բանուորական համերաշխութեան: 1926-ին, Հինգ միլիոն բրիտանացի բանուորներ ընդհանուր գործադուլի ելան՝ ածխահանքի բանուորներու գործադուլը յաջողութեան տանելու համար: 1934-ի Յուլիսին, տեղի ունեցաւ 125,000 բանուորներու ընդհանուր գործադուլը Ման-Ֆրանչիսկոյի մէջ, Խաղաղականի եզերքի նաւաստիներու գործադուլային դատը պաշտպանելու համար: Բոլոր այս գործադուլները, պէտք է ըսել, ձախողութեամբ վերջացեր են պարզ այն պատճառաւ՝ որ կազմակերպուած աշխատաւորութեան վերին առաջնորդները եղած են պահպանողական եւ տիրող դասակարգին սիրելի ըլլալու համար դաւաճանած են բանուորութեան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐ՝ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ
ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ընդհանուր գործադուլներու ուրիշ առատարուղի աղբիւր մըն էր այն պայքարը, զոր Եւրոպայի բանուորները կը մղէին քուէարկութեան իրաւունքին համար: Նախ քան Համաշխարհային Ա. Պատերազմը, եւրոպական գրեթէ բոլոր երկիրները, ներառեալ Գերմանիան, առաւել կամ նուազ չափով չէին թոյլատրել որ բանուորները մասնակցին քաղաքական քուէարկութեան: Այդ իսկ պատճառով, ամենուրեք Սոցիալ Դեմոկրատ կուսակցութիւնները իրենց ծրարադիրի առաջին մասին մէջ զետեղած էին պայքարի գիծը — «հաւասար, դաղտնի, ուղղակի եւ ընդհանուր քուէարկութեան» համար: Անոնցմէ շատերը, Թրէյտ Իւնիլըններու հետ սկսած էին պայքարել նոյն նպատակով:

Տիրող դասակարգերը յամառօրէն կը մերժէին զիջիլ եւ բանուորներուն տալ քուէի իրաւունք, խորհելով որ այդպիսով վերջ կը տրուէր իրենց սեփական իշխանութեան: Ասոր հետեւանքով բանուորները երբ տեսան թէ իրենց առջեւ փակուած էր պարլամենտի ճամբան, իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցին քաղաքական ընդհանուր գործադուլի միջոցով ձեռք բերել քուէի իրաւունք: Այս շարժումը նշանակելի թափով սկսաւ Ռուսական Յեղափոխութենէն (1905) յետոյ: Անարխո-Սէնտիկալիստները համաձայն իրենց ապաքաղաքական տեսութեանց, չէին հետաքրքրուեր այդ հարցով. անոնք ընդհանուր գործադուլը կը ջատագովէին միմիայն տնտեսական նուաճումի համար:

Անդլիոյ բանուորները, ըլլալով Թրէյտ Իւնիլընի ռահիփրանե-

բը, առաջինը եղան որ լայն մասսայական քաղաքական գործադու-
լով քուէի իրաւունք ձեռք բերել փորձեցին: Ատիկա 1830 եւ 1840-ի
Չարտիստական շարժման ծրագրի ուղն ու ծուծը կը կազմէր: Այդ
նպատակին ուղղուած Բրիտանական բանուորական շարժումը, ձա-
խողեցաւ, որովհետեւ բանուոր դասակարգի անկազմակերպ վիճակը
շարժումը ուղիղ ճամբու վրայ չկրցաւ պահել: Խոսքերի տարիներ
յետոյ էր որ անոնք յաղթանակ տարին:

Պելճիգայի մէջ բանուորները առանց ազդուելու Անգլիոյ իրենց
եզրայրներու ձախողանքէն ու պահպանողական Սոցիալիստ առաջ-
նորդներու յոռետես քարոզչութիւններէն, 1893-ին, քուէի իրաւունք
չահելու համար յայտարարեցին ընդհանուր գործադուլ: Այդ ատեն,
երկրի 6,500,000 բնակչութեան մէջ միայն 138 հազար մարդ կրնար
քուէարկել: Բանուորները երեք դանդուածային գործադուլներ սար-
քեցին գործատէրերուն ու կառավարութեան դէմ, առաջինը՝ 1893ին,
երկրորդը՝ 1902-ին, երրորդը՝ 1919-ին: Անոնք մասամբ յաջողեցան
մեղմել քուէարկութեան սխառտի անհաւասարութիւնը, բայց վեր-
ջին տարուոյ՝ 1913-ի յեղափոխական ապստամբութեամբ էր որ յա-
ջողեցան շահիլ հաւասար քուէարկութեան յաղթանակը: Շուէտի
բանուորները, որոնք նոյն պայմաններուն տակ էին, եւ ենթակուած
հակադեմոկրատական քուէարկութեան սխառտի մը, նոյնպէս 1902ին,
ընդհանուր գործադուլի դիմեցին հաւասար քուէարկութեան իրա-
ւունքի համար եւ մասամբ յաջողեցան: 1909-ին դարձեալ՝ հակա-
ռակ երկշտ առաջնորդներու ընդդիմութեան, ընդհանուր գործա-
դուլ յայտարարեցին, այս անգամ ալ մասնակի յաջողութիւն միայն
կրցան ապահովել: Հոլանտայի բանուորները նոյնպէս 1903-ին, ընդ-
հանուր գործադուլ րին, մեծ մասով անտեսական հարցերու շուրջ,
բայց անոնց հետ խառնեցին նաեւ քուէի իրաւունքի հարցը: Աւստրիոյ
մէջ, 1905-ի Հոկտեմբերին, Ռուսական Յեղափոխութեան ազդեցու-
թեան տակ ամբողջ երկրի արդիւնաբերութեան ճիւղերը քուէարկու-
թեան իրաւունքի տիրացման համար բանուորները ընդհանուր գոր-
ծադուլի դիմեցին: Սոյն գործադուլի արդիւնքն այն եղաւ որ 1907-ի
Յունուարին, բանուորները ապահովեցին ընդհանուր քուէարկու-
թեան իրաւունքը:

Գերմանիոյ մէջ ալ, Ռուսական ազդու օրինակին հետեւողու-
թեամբ գործաւորները ընդհանուր գործադուլով վերջ տալ որոշե-
ցին այն սխառտին, որ չլիքայած էր ազատ քուէարկութիւնը: Շար-
ժումը հազիւ թէ տարածուի սկսեք էր երկրին մէջ երբ Սոցիալ Դե-
մոկրատներու պահպանողական Թրէյտ Իւնիքներու եւ յեղափոխա-
կան բանուորներու միջեւ սկսաւ երկպառակութիւն: Սոցիալ Դեմոկ-
րատ Կուսակցութիւնը 1905-ի Սեպտեմբերին, կուսակցութեան հա-

մագումարին, որ դումարուեցաւ Ենայի մէջ, սկսուած քաղաքական
գործադուլին հանդէպ անորոշ, տատանուող դիրք բռնեց, մինչ
պահպանողական Թրէյտ Իւնիքները բացէն ի բաց հակառակ կեցան
գործադուլին: Միմեանց հակառակ այս խաչաձևուածն ու ընդհա-
րումը գերման աշխատաւորական շարժման վրայ խոր ազդեցութիւն
թողուց:

ՀԱԿԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԳՈՐԾԱԳՈՒԼՆԵՐ

Նախ քան 1917-ի Ռուսական Յեղափոխութիւնը ամբողջ յի-
սուն տարիներու ընթացքին, սոցիալիստներու եւ Թրէյտ Իւնիքնե-
րու Միջազգային Գոնկրէսները զբաղեցան ընդհանուր գործադուլի
հարցով, որպէս միջոց՝ դադարեցնելու կապիտալիստական պատե-
րազմները եւ յառաջացնելով Սոցիալիստական յեղափոխութիւն: Բայց
ինչպէս յետագային պիտի տեսնենք, համաշխարհային աշխատաւոր-
ական շարժումը, որպէս ընդհանրական եւ միազոյն շարժում՝ չկը-
ցաւ լուծել հակապատերազմական առեղծուածը եւ ձախողեցաւ ար-
գիլել Առաջին պատերազմի սոսկալի սպանդը: 1905-ի Ռուսական Յե-
ղափոխութեան ընդհանուր ուղեղիմը ցոյց տուած էր արդէն, որուն
հետեւելու էր աշխարհի բանուորութիւնը: Բայց Երկրորդ Միջազ-
գայնականը վիսաւորող վերաքննիչ պարտները «բարբարոս Ռուսե-
րու» տուած դատերէն չօգտուեցան:

1905-ի Յեղափոխութեան ատեն ընդհանուր գործադուլը ուղ-
ղուած էր պատերազմի եւ ցարական-կապիտալիստական սխառտին
դէմ: Ռուսաստանի մէջ շատ մը գործադուլներ տեղի ունեցան, բայց
շարժման գլխաւոր ծանրութեան կեդրոնները երկու մեծ գործադուլ-
ներն էին, որ երեւան եկան Յունուարին եւ յետոյ՝ Հոկտեմբեր-Նո-
յեմբերին: Առաջինին մասնակցեցան 440,000 բանուորներ, իսկ երկ-
րորդին աւելի քան կէս միլիոն գործարաններու բանուորներ, որոնց
վրայ աւելցան երկու հարիւր հազար երկաթուղիի եւ փոստ-հեռագ-
րատանց գործաւորներ:

Լենին կ'ըսէ թէ աշխարհի մէջ ո'չ մէկ կապիտալիստական
երկիր — նոյնիսկ ամենէն յառաջադէմ երկիրները՝ որպիսին են
Անգլիա, Մ. Նահանգները եւ Գերմանիան — չեն ունեցեր այսպիսի
վիթխարի ու լայնատարած գործադուլներ, ինչ որ տեղի ունեցաւ
Ռուսաստանի մէջ 1905-ին: Յեղափոխական Ռուսաստանը իր այս
գործադուլներով յեղափոխական դարաշրջան մը բացաւ ամբողջ աշ-
խարհի բանուորական շարժման համար: Ռոզա Լուկսենպուրկ, որ
եռանդուն ախոյեանը դարձաւ ընդհանուր գործադուլին, իրաւա-
ցիօրէն զրեց թէ Ռուսական մասսայական գործադուլները համաշ-
խարհային յեղափոխութեան գետին պատրաստեցին:

1905-ի և 1917-ի Ռուսական Յեղափոխութեան միջանկեալ շրջանին, ինչպէս տեսանք, մի քանի գործադուլներ տեղի ունեցան եւրոպական երկիրներու մէջ: Ամենէն կարեւորը և նշանակալիցը այդ գործադուլներուն, Սպանիոյ բանուորներու յեղափոխական գործադուլն էր, որ պայթեցաւ ընդդէմ Մարտի 1909-ի պատերազմին: Բարսէլոնայի յեղափոխական գործաւորները Յուլիս 26-ին, ընդհանուր գործադուլ յայտարարեցին, որ չուտով իր արձագանգը գտաւ Սպանիոյ միւս մասերուն մէջ: Ծրագրուած էր Օղոստոսին, ամբողջ Սպանիան շղթայել ու անդամալուծել, բայց կառավարութիւնը իր ոստիկանական ու զինուորական ուժով արգիլեց շարժման նպատակի իրագործումը:

1917-ի Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը Արեւելեան և Կեդրոնական Եւրոպայի զանազան երկիրներու մէջ ծնունդ տուաւ ուրիշ շարք մը ազգային-ընդհանուր գործադուլներու, որոնց նպատակն էր կործանել կապիտալիստական կառավարութիւնները: Ռուսաստանի մէջ յեղափոխութեան առաջին շրջանը, որ սկսաւ Յունուար 9-ին Սէն Պետէրսպուրիի մէջ և տարածուեցաւ Մոսկուայի և ուրիշ քաղաքներու մէջ, իր էութեամբ բուրժուական էր: Փետրուար 18-ին, ուրիշ գործադուլ մը սկսաւ Պիւտիլովի մետաղի բանուորներու կողմէ, որ չուտով տարածուեցաւ և բոլշեւիկներու առաջնորդութեամբ ապստամբութեան գոյն առաւ: Փետրուար 27-ին, ցարական զօրքերը մերժեցին կրակ բանալ բանուորներու կրճքին, ասով բուրժուական յեղափոխութիւնը յաղթանակեց: Յեղափոխութեան երկրորդ շրջանը՝ սոցիալիստական շրջանը, բոլշեւիկներու ղեկավարութեամբ սկսաւ և յաղթանակեց: Բուրժուական յեղափոխութիւնը ութը ամիս յետոյ՝ փոխուեցաւ պրոլետարական յեղափոխութեան. ուստի բանուորները զբաւեցին գործարանները և հաստատեցին սովիէտներու՝ բանուորա-զիւղացիական խորհուրդներու իշխանութիւնը Նոյեմբեր 7, 1917-ին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԳՈՒԼ ՈՐՊԷՍ ԳԼԽԱՒՈՐ ԶԷՆՔԸ
ԲԱՆՈՒՐ ԳԱՍԱԿԱՐԳԻՆ

Աշխատաւորական պատմութեան մէջ ընդհանուր գործադուլներու ցանկը հետեւողականօրէն ցոյց կու տայ որ բոլոր երկիրներու գործաւորները գործատէրերու և անոնց կառավարութեան գործակալներուն դէմ իրենց մղած սուր պայքարներու շրջանին, բնագորարար ուշադրութիւնին դարձուցին արդիւնաբերութեան ամբողջական, ընդհանուր դադարումին, կոտորելու գործատէրերու և անոնց քաղաքական գործիքներու յետադիմական դիմադրութիւնը: Առաջ-

նորդներու յոռետեսութիւնը չէր կրցած արգիլել որ բանուորները դիմեն ընդհանուր գործադուլի: Ժամանակ առ ժամանակ անոնք ամենադժուարին պայմաններու մէջ տնտեսական գործադուլը վերածեր են քաղաքական գործադուլի, բայց ո՛չ յաջող վերջաւորութեամբ: 1905-ի և 1917-ին կոմունիստական առաջնորդութեամբ պայթած մասսայական քաղաքական գործադուլներն էին միայն որ ազդուօրէն օգտագործուեցան, որով բանուորները կրցան տիրանալ տնտեսական ու քաղաքական իշխանութեան: Համաշխարհային բանուորութիւնը այդ երկու պատմական թուականներու գործնական փորձառութենէն վերջ տակաւ սկսաւ աչքերը բանալ և տեսնել որ դասակարգային կռիւի գլխաւոր զէնքն էր ան:

Բայց բանուորները պէտք է գիտնային որ ընդհանուր գործադուլին թեթեւ աչքով նայելու չէին. անիկա երկսայրի սուր մըն է որ կրնայ իրենց աւելի վնաս պատճառել քան թէ օգուտ, եթէ անզոյշ կերպով գործածուի: Բոլոր ձախող ընդհանուր գործադուլները աղիտաւոր եղած են այն պատճառով, որ անոնք ճիշդ ժամանակին ու վճռական կամքով յառաջ տարուած չեն, երկչոտութեամբ սկսուած են և վերջացեր են դիմակաւոր առաջնորդներու, ի մասնաւորի՝ սոցիալ ղեմնկրատներու դաւաճանութեամբ:

22. — ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԻԶՄԸ
1876 ԵՒ 1914 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

Նախքան Համաշխարհային Ա. Պատերազմին սարսափելի արիւնհահողութեան մէջ Թրէյտ Իւնիքններու փորձառական շրջանի մուտքը, կանգ առնենք վայրկեան մը և վերատեսութեան ենթարկենք բանուորական շարժման շրջանները, անոր աճումը, մղած պայքարներն ու հրատապ խնդիրները, մէկ խօսքով Ա. Միջազգայնականի լուծման թուականէն՝ 1876-էն մինչև երկրորդ Միջազգայնականի փլուզումը՝ Առաջին պատերազմի պայթումի տարին՝ 1914-ի տարին:

Խնդրոյ առարկայ չորս տասնեակ տարիներու ընթացքին՝ զանազան երկիրներու բանուորները անհամար գործադուլներ ըրին և մղեցին ուրիշ պայքարներ: Եւ այդ գործադուլներն ու պայքարները աւելի և աւելի լայն շրջանակներու մէջ տարածուեցան և աւելի խորացուցին դասակարգային կռիւները: Սոյն դժուարին պայքարներով բանուորները զանազան երկիրներու մէջ կրցան գործատէրերէն կորզել կարեւոր զիջումներ: Այդ զիջումներուն մէջ գլխաւորներէն մէկն

էր օրուայ աշխատածներու կրճատումը: Այն երկիրներուն մէջ ուր Թրէյտ Իւնիքնները զօրաւոր էին, 12էն 15 ժամերու աշխատօրը փոխուեցաւ ութէն տասը ժամուայ աշխատօրուան: Բանուորները նոյնպէս շատ մը երկիրներու մէջ ստացան ընկերային ապահովագրութիւն, զործարանական քննութիւն եւ քուէարկութեան իրաւունք:

Բանուորները իրենց անթիւ անհամար պայքարներով վերջապէս յաջողեցան չափաւորել զործատէրերու անզուխ շահագործումները: Այս շրջանին, կապիտալիստական առաջաւոր երկիրներու մէջ շարք մը բարեփոխութիւններ ներմուծուեցան բանուորներու ապրուստի մակարդակը բարձրացնելու գիծով եւ այդ՝ մասնաւորապէս բարձրորակ բանուորներու համար: Սոսկով Մ. Նահանգներու մասին, Ֆոլքընըր կ'ըսէ որ 1897-էն 1914-ին այդ կապիտալիստական ամենէն առաջաւոր երկիրն մէջ բանուորները աշխատավարձի շատ աննշան յաւելում ստացեր էին: Նոյն ընդհանրացած երեւոյթը տիրական էր թէ՛ Անգլիոյ եւ թէ՛ Գերմանիոյ մէջ: Բայց Մարքս, այս իրողութեանց խորը թափանցելով կը փաստէ, որ բանուորներու բացարձակ թըշուառացումը եւ գրութեան յարաբերական հիմքը կը շարունակուի, որովհետեւ բանուորները թէեւ քիչ մը աւելի աշխատավարձ կը ստանան, բայց աշխատավարձը ուղիղ համեմատութիւն չի պահեր իրենց արտադրութիւններու քանակին հետ. անոնց արտադրութիւնը մեքենաներու կատարելագործումով եւ գործի արագացման սխտէմով կը կրկնապատուի. նոյն ատեն կ'աւելնան անգործներու թիւը, արկածները եւ տնտեսական ճգնաժամերու հետեւանքով կը վատթարանան գործաւորներու ապրուստի պայմանները, միւս կողմէն՝ զաղուծներու եւ կիսազաղուծներու մէջ իմպերիալիստական շահագործումը միլիոնաւոր մարդիկ կը տանի աննկարագրելի թշուառութեան գիրկը:

Սոյն ընդհանուր գրութեան տակ բանուորներու լայնածաւալ պայքարի հիմնական եւ ամենէն նշանակելի ձգտումը հետզհետէ կ'առնէր քաղաքական բնոյթ: Այս քաղաքականացումը յայտնագործուեցաւ ո՛չ միայն Սոցիալիստ կուսակցութիւններու կազմութեամբ եւ նոյն կուսակցութեանց քաղաքական արշաւներու բազմացումով, այլ եւ գործադուլի բնոյթի փոփոխութեամբ: Կանխադոյն տարիներուն Թրէյտ Իւնիքններու գործադուլները զանազան երկիրներու մէջ բացառապէս տնտեսական բնոյթ ունէին: Բայց առաջին համաշխարհային պատերազմի նախօրեակին գործադուլները այնպիսի ցցուն կերպով քաղաքական սպառնալից հանգամանք ստացան որ կառավարութիւնը մէկ կողմ նետելով իր ղիմակը, ուղղակի գործադուլ աւրողի դերն ստանձնեց մէկ ճակատի վրայ, իսկ միւս ճակատին վրայ շարժման մէջ դրաւ իր ոստիկանական եւ զինուորական ուժերը:

Գաղափարական նուաճումներ եւ արգելակներ.—

Համաշխարհային բանուոր դասակարգը ընդհանուր այս շրջանին, մեծ կորուստ ունեցաւ երբ մեռան իր երկու առաջնորդները — Քարլ Մարքս եւ Ֆրեաէրիկ Էնգէլս: Մարքսը մեռաւ 14 Մարտ 1883-ին, Էնգէլս մեռաւ 5 Յոգոստոս 1895-ին: Այդ երկու հանճարեղ տիտաններն էին, որ հիմնական վերլուծման ենթարկեցին կապիտալիստական սխտէմը եւ այն խնդիրները, որոնց ճակատեր էին աշխարհի շահագործուող բանուորները. անոնք պատրաստեցին բանուորներու համար տնտեսական ու քաղաքական կշռադատ ծրագիրը. անոնք էին որ պարզեցին այդ ծրագրի յաջողութեան նպաստող գործունէութեան ու ընդհանուր ռազմավարութեան այն եղանակը, որուն հետեւելու էին բանուորները՝ կապիտալիստական գրութիւնը խորտակելու համար. անոնք էին դարձեալ, որ բիւրեղացուցին այն սկզբունքները՝ որոնց հիման վրայ կառուցուելու էր նոր հասարակարգը՝ սոցիալիստական հասարակարգը, — ի հարկէ, ոչ անհրաժեշտօրէն ամէն երկրի մէջ նոյն ձեւով: Բայց այդ երկու առաջնորդներու մահով՝ համաշխարհային բանուորութիւնը առանց առաջնորդի չի մնաց: Տնտեսական ու քաղաքական այն պայմանները, որոնք հրապարակ հանեցին Մարքսն ու Էնգէլսը, աւելի եւ աւելի զարգացեր էին, եւ ահա անոնք հրապարակ հանեցին ուրիշ առաջնորդ մը, ուրիշ անգերագանցելի հանճար մը, որ եկաւ Մարքս Էնգէլսի մշակած ծրագիրը զննել յեղափոխական ուղեղով վրայ եւ ապահովել անոր երաշխաւորուած յաջողութիւնը. այդ առաջնորդը, այդ հանճարն եղաւ Վլադիմիր Իլիչը Լենինը:

Բանուորները տասնեակ տարիներու ընթացքին, իրենց մղած ռազմաթիւ ու դժուարին պայքարներով տնտեսական ու քաղաքական շատ մը նուաճումներ ապահովեցին, բայց անոնց ամենամեծ յաղթանակը այն էր, որ անոնք տնտեսական ու քաղաքական կռիւներով յաջողեցան գլուխ հանել լայնածաւալ ու ամբակուռ կազմակերպութիւն մը, որ իր թեւերը տարածեց աշխարհի մէկ ծայրէն միւսը: Մարքսիզմը, հակառակ անոր, որ ունեցաւ յայտնի ու ղիմակաւոր թշնամիներ, որոնք ամէն կերպ աշխատեցան ազճատել ու ոչնչացնել զայն, դարձաւ բանուորներու տիրական՝ ուղեցոյց զաղափարաբանութիւնը Լենինի ուսուցմունքով: Հատուածական այն վարակիչ տեսութիւնները, որոնք կործանեցին Առաջին Միջազգայնականի շէնքը, ամբողջապէս դարձան անլսելի: Պրուզոնիզմը, Բլանքիզմը, Լասսալիզմը, որոնք նախորդ շրջանին այնքան ուժեղ էին, ենթարկուեցան լուծարքի: Բաքունիզմը, այն ժայռը, որուն վրայ փշրուեցաւ Ա. Միջազգայնականը, ինքն եւս քայքայուեցաւ եւ վերածուեցաւ Անարխիստական կղզիացած խումբերու: Նախնական «մաքուր եւ պարզ» Թրէյտ

Իւնիքնիզմը, որ կ'արհամարհէր Սոցիալիզմը եւ լքած էր քաղաքական գործունէութեան ուղին, մնաց Մ. Նահանգներու մէջ՝ Գամպլըրտի զեկալարութեան ներքեւ:

Բոլոր ասոնք իրականութեան դրական կողմը կը ներկայացընէին, բայց բանուորներու դադափարախօսութեան խնդրին մէջ կային նաեւ լուրջ բացասական կողմեր: Ինչպէս նշեցինք, 1880 թուականէն Անարխո-Սէնտիքալիզմը, որ Ֆրանսայէն ծագում առաւ, սկսեց էր տարածուիլ մասնաւորապէս Լատին Ամերիկեան երկիրներու մէջ: Անոր դադափարաբանութիւնը խառնուրդ էր Անարխիզմի եւ մարտական Թրէյտ Իւնիքնիզմի դադափարաբանութեան հետ, նոյն ատեն պահելով Մարքսիստական դասակարգային կռիւի ըմբռնողութեան հետքերը: Ան ըստ բաւականին շփոթութիւն եւ տկարութիւն յառաջացուց աշխատաւորական շարժման մէջ:

Երկրորդ բացասական երեւոյթը Կաթողիկէ («Քրիստոնէական») Թրէյտ Իւնիքնիզմն էր, որ 1890 թուին երեւան եկաւ եւ զարգացաւ եւ թշնամական ուժեր ներմուծեց բանուոր դասակարգի դադափարաբանութեան ու կազմակերպութեան մէջ: Անկէ յետոյ՝ այդ շարժումը յաւելիւ աղբիւրք մը եղաւ բանուորութեան յառաջխաղացքին:

Երրորդ բացասական երեւոյթը այն էր, որ 1876-1914ի շրջանին, Մարքսիզմի «ծայրայեղ ձախակողմեան» թեւ մը երեւան եկաւ, որ նշանակելի վնաս պատճառեց կազմակերպուած աշխատաւորութեան շարքերուն: Այս թեւի ամենացոյց տեսարանը եղած է Դանիէլ Դի Լէոնը, որ Մարքսիզմը սխալ մեկնաբանելով յայտարարեց թէ՛ բոլորովին անօգուտ ու վնասակար է անմիջական պահանջներու համար ուժ սպառել ու պայքարիլ: Բանուորները միայն մէկ ճամբայ ընտրելու են — ընկերային Սոցիալիստական յեղափոխութեան ճամբան: Ան չէր ընդուներ Թրէյտ Իւնիքնիզմը մասնակցութիւնը յեղափոխական միութիւններ կազմելու էին: Ան նկատի չէր ունենար Նեկրոներու եւ աւելի աղքատ գիւղացիներու պայքարները: Այս մարդուն հատուածական ուղին մեծ վնաս պատճառեց բանուորական շարժման, որովհետեւ շատ մը Մարքսիստներ հեռացան ու կզգիացական մասսայական կազմակերպութիւններէն, բանուորներու պայքարի ճակատէն եւ ուրիշ ղեմոկրատական զանգուածներէն:

Չորրորդ բացասական երեւոյթը, որ իր հասունութեան մէջ ժխտումն էր Մարքսիզմին, Կաուցկիիզմն էր ան, որ կազմեց Սէնտրիզմի թեւը (Կեդրոնական թեւը): Այս թեւը — ինչպէս Լենին շատ իրաւամբ նշած է — Բառով յեղափոխական էր, գործքով՝ հակայեղափոխական: Իսկ խօսելով Կաուցկիի եւ անոր դադափարակից Պլե-

խանովի մասին, ան ըսած է. — «Այս մարդիկը Մարքսիզմը նոր կազապարի մէջ ձուլել կ'ուզեն. անոնք մաքրագործման ձեռնարկեր են, սոփեստական միջոցներով Մարքսիզմէն մերկացնելով ու զուրս նետելով անոր յեղափոխական ապրող հոգին: Անոնք Մարքսիզմի մէջ կ'ընդունին ամէն բան բացի պայքարի յեղափոխական միջոցառումները, բացի յեղափոխութեան համար պայքարի պատրաստութեան ջատագովանքը եւ մասսաները այդ ուղղութեամբ դաստիարակելու պարտաւորութիւնը:

Կաուցկիզմը ամենէն աւելի լայն հող ունեցաւ Գերմանիոյ մէջ, բայց ուրիշ երկիրներու մէջ ալ ունեցաւ իր ներկայացուցիչները, որոնք Համաշխարհային Ա. Պատերազմի նախօրեակին վատ դեր խաղացին: Երբ իմպերիալիստական պետութիւնները իրարու ձեռքէ յափըշտակել կ'ուզէին այս կամ այն դաղթաւայրերը, այդ սոցիալիստները յանուն հայրենասիրութեան՝ միլիոնաւոր մարդոց համար զերեզմաններ բացին: Եւ տիրող դասակարգերը խնդացին սոցիալիստներուն վրայ:

Բայց բանուոր դասակարգի ներքին վտանգներուն ամենամեծն էր մէկ ուրիշ բացասական երեւոյթ, որ այդ ընդհանուր շրջանին մէջ իր հասունութեամբ հրապարակ իջաւ եւ մեծ հարուած տուաւ Մարքսիստական յեղափոխական շարժումին. եւ ատիկա աջ թեւի հոսանքն էր, վերաքննականներու հոսանքը: Աշխատաւորական շարժումի այս ախտը աճեցաւ եւ տարբեր գոյներով տարածուեցաւ մի քանի երկիրներու մէջ. — Բերնշտայնիզմը՝ Գերմանիոյ մէջ, Ֆարխանիզմը եւ Մկոնոնլիզմը՝ Մեծն Բրիտանիոյ մէջ, Մէնշևիզմը՝ Ռուսաստանի մէջ, եւ Գամպլըրիզմն ու Բըրկըրիզմը՝ Մ. Նահանգներու մէջ. բայց ասոնք բոլորն ալ հիմնականօրէն նոյն սկզբունքներով կ'առաջնորդուէին, այսինքն մէկ խօսքով՝ բուրժուակիայի դադափարաբանութիւնն էր, զոր կ'արտայայտէին եւ ատով կը ծառայէին տիրող դասակարգի շահերուն:

Բանուորական շարժման սկզբնական շրջանին, բանուոր դասակարգի մղած պայքարներուն եւ Թրէյտ Իւնիքնիզմը մէջ արդէն կային պահպանողական տարրեր, անոնց վրայ աւելցաւ ձախ թեւը, կեդրոնական թեւը եւ աջ թեւը...

Իմպերիալիզմը պահ մը կարծեց թէ բանուորներու ուժերու բաժանումով ու խաչաձեւումով արդէն սոցիալիզմի ահռելի հեռանկարը շքացեր ու ինք՝ ապահոված էր վերջնական յաղթանակը, բայց Լենինը մեռած չէր, անոր մէջ կեդրոնացեր էր համաշխարհային բանուորութեան յեղափոխական անպարտելի հոգին, որ 1917-ի Նոյեմբերին, սրբար աշխարհի պիտի յայտարարէր Սոցիալիստական դարաշրջանի արեւածաղը:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ԿՈՒԻՆԵՐՈՒ ԳԻԾԸ
ԱԶԳԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԺԳ.—Ի. ԴԱՐԵՐ)

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեր ուսումնասիրութեան Առաջին Մասի վերջին Գլուխը յատկացուցինք բանուորական շարժումներու եւ *թրէյս Ինկրեններու* կազմակերպման ու գործունէութեան: Այս երկրորդ մասը յատկացուած է զանազան երկիրներու մէջ տեղի ունեցած դասակարգային կռիւներուն եւ դասակարգային շահերու գծով՝ պայքող պատերազմներուն:

Նկատի ունենալով նիւթի ծաւալուն ու լայն հանգամանքը մէկ կողմէն եւ մեր գիրքի նեղ շրջանակը միւս կողմէն, մենք հարկադրուած ենք դարձեալ խիստ ամփոփ եւ բոուցիկ ակնարկներով անցնիլ, որուն համար ներողութիւն կը խնդրենք մեր ընթերցողներէն:

Լ. Մ.

ԵՒՐՈՊԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ 18ԻԴ ԴԱՐՈՒՆ

Փամանակակից կապիտալիստական հասարակութիւնը, ուր տիրապետող դասակարգը բուրժուազիան է, կազմուած է երկու յեղափոխութիւններու հետեւանքով: Ասոնցմէ մէկն էր հասարակական արդիւնարեութեան մէջ կատարուած յեղափոխութիւնը, այսպէս կոչուած արդիւնարեական յեղափոխութիւնը, որու շնորհիւ ձեռահան արտադրութիւնը փոխարինեց մեքենայական արտադրութիւնը: Այս յեղափոխութիւնը ամենէն առաջ տեղի ունեցաւ Անգլիոյ մէջ 18-րդ դարուն: Միւս յեղափոխութիւնը, որ նոյն դարուն վերջերը տեղի ունեցաւ, Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնն էր, որուն հետեւանքով պետական իշխանութեան գլուխը անցաւ բուրժուազիան:

Այժմ սոյն գլուխը պիտի յատկացնենք պատասխանելու հետեւեալ հարցումներուն.

1.— Ի՞նչ պայմաններ նպաստեցին Անգլիոյ մէջ արդիւնարեական կապիտալիզմի զարգացման:

2.— Ի՞նչպէս կազմուեցան Մ. Նահանգները:

3.— Ի՞նչու յեղափոխութեան ուղիով միայն կարելի էր Ֆրանսայի մէջ փոխել հին կարգերը:

4.— Ի՞նչ ուղիներով ընթացաւ ճորտային տնտեսութեան եւ ճորտատիրական պետութեան զարգացումը Ռուսիոյ մէջ:

5.— Որո՞նք էին 18-րդ դարուն՝ Ռուսաստանի մէջ յառաջացած գիւղացիական յեղափոխութեան սոցիալ-տնտեսական նախապայմանները եւ անոր պարտութեան պատճառները:

ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՅԻՒՆ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

18-րդ դարու սկիզբը Անգլիոյ բնակչութեան մեծագոյն մասը կը պարապէր գիւղատնտեսութեամբ, առոր համար կղզիին հարաւարեւելեան մասի բնակչութիւնը աւելի խիտ էր: Հողագործութիւնը ձեռնարկատիրական բնոյթ չունէր. արտադրուած մթերքները հողագործները գրեթէ իրենք կը սպասէին: Լորտերը խոշոր հողատէրեր էին. կային նաեւ մանր կալուածատէրեր եւ ազատ գիւղացիներ: Գիւղացիներու մնացած մեծ մասը նախկին ճորտերու հետեւորդներ էին, որոնք կը գործէին յօգուտ կալուածատէրերուն:

Գիւղերու մէջ կը պահպանուէին տնավարական հին ձեւերը :

Առուտուրն ու արդիւնաբերութիւնը կեդրոնացած էին քաղաքներու մէջ, որոնք իրենց բնակչութեան քանակով շատ աննշան էին : Քաղաքներու մէջ դեռ գոյութիւն ունէին ուժեղ, համաբարութիւններով (կիլտերով) կազմակերպուած արհեստները : Կառավարութիւնն ու համաբարութիւնները յատուկ կանոնադրութիւններով հսկողութեան տակ առած էին արտադրութեան բոլոր ճիւղերը — արտադրանքի քանակը, գործածուող նիւթերու ներկուածքը, գոյնը եւ չափերը — անոնք կ'որոշէին բանուորներու թիւը արհեստային ձեռնարկութիւններու համար, կը կարգաւորէին վարպետներու, վարպետացուներու եւ աշկերտներու փոխ յարաբերութիւնները, նոյն ատեն անոնք կը կանոնաւորէին նաեւ փոխանակութիւնը եւ արտահանման համար ապրանքներու որոշ քանակ մը կ'որոշէին : Գրամական տնտեսութեան զարգացմամբ, սակայն, այնպիսի պայմաններ ստեղծուեցան որ կիլտերը այլեւս ի վիճակի չէին զարգացնել ոչ արտադրութիւնը, ո՛չ ալ փոխանակութիւնը : Այսպէս երեւան եկան մանուֆակտուրիստներն ու վաճառականները :

Արդիւնաբերութեան տնային տնտեսութեան դիմաց այն առաւելութիւնն ունէր ան որ այստեղ, մանուֆակտուրայի մէջ աշխատանքի արտադրողականութիւնը հսկայական չափով կը բարձրանար, չնորհիւ աշխատանքի բաժանման եւ բանուորներու վրայ հսկելու հրնարաւորութեան :

Մանուֆակտուրան արագացուց եւ եռապատկեց ապրանքներու արտադրութիւնը. նոյն ատեն ան անհրաժեշտ պայմաններ ստեղծեց մեքենաներու երեւան գալուն. աշխատանքի մանր մասերու ստորաբաժանումը դիւրացուց արտադրութեան մեքենայացման գործը :

Ծաւալուող տնային արդիւնաբերութիւնն ալ բազմաթիւ ապրանքներ շուկայ կը նետէր եւ կը նպաստէր, որ քաղաքի եւ գիւղի միջեւ առեւտրական կապերը ամրապնդուին եւ ուժեղանայ ապրանքներու արտահանումը դէպի օտարերկրեայ շուկաները :

18-րդ դարու սկիզբները, Անգլիոյ մէջ արգէն նկատելի դարձաւ խոշոր կապիտալներու կուտակումը, որ գլխաւորապէս երեւան էր եկեր Անգլիոյ վարած արտաքին առուտուրի հետեւանքով : Ատիկա այն ժամանակաշրջանն էր, երբ զանազան շահադիտական ընկերութիւններ սկսան կազմակերպուիլ՝ մեծ յաջողութիւններով :

Մարքսը կ'ըսէ. — «Ինչպէս մեքենաներն ու վարկը, այնպէս ալ ստրկութիւնը բուրժուական արդիւնաբերութեան հիմնաքարը կը հանդիսանայ. առանց ստրկութեան՝ բամբակ չէր ըլլար, առանց բամբակի ալ՝ անկարելի բան էր ժամանակակից արդիւնաբերութիւնը. ստրկութիւնն էր որ մեծ նշանակութիւն տուաւ ժամանակա-

կից գաղութներուն. գաղութներն ալ ստեղծեցին համաշխարհային առուտուրը, իսկ համաշխարհային առուտուրը անհրաժեշտ նախապայմանը կը հանդիսանայ խոշոր արդիւնաբերութեան համար» : Անգլիան հարստացաւ ոչ թէ ներքին շուկայի առուտուրով, այլ գաղութներու կողոպուտով : Հարստացաւ ո՛չ միայն Անգլիան, հարստացան նաեւ Փորթուգալը, Սպանիան, Հոլանտան եւ Ֆրանսան : Անոնց հարստացումը անհնարին էր, եթէ նախապէս չ'ոչնչացնէին արարական կուլտուրան, չկողոպտէին Ափրիկէն, եթէ չաղքատացնէին ու շամայացնէին Հարաւ. Ասիան իր կղզիներով, եթէ անխղճօրէն չչաւագործէին Արեւելեան Հնդկաստանը, Միջին եւ Հարաւ. Ամերիկայի բարդաւած պետութիւնները : Սկզբնական կապիտալի կուտակման դարաշրջանին կատարուած գաղութային կողոպուտները դուռ բացին Եւրոպայի կապիտալիստական դրութեան զարգացման :

Կապիտալիստական ամբողջ սիստէմը կ'օգտուէր պետական իշխանութեանէն, այսինքն՝ կազմակերպուած բանութեանէն, այդպիսով էր որ արտադրութեան կապիտալիստական եղանակը դիւրութեամբ վերածուեցաւ կապիտալիստական եղանակի :

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի, մանաւանդ Հոլանտայի մէջ բուրգի արտադրութիւնը բուրգի մեծ պահանջ յառաջացուց, — յատկապէս անգլիական բուրգի, որ անուանի էր իր բարձր որակով :

Բուրգի գինը քառապատիկ բարձրացաւ : Այդ հանգամանքէն դրդուած՝ հողատէրերը ընդարձակեցին իրենց արօտատեղիները՝ վարելահողերը կըճատելով : Արօտատեղիները ընդարձակելու եւ գանոնք ցանկապատելու մէջ առնելու գործը պատճառ եղաւ որ գիւղացիները վտարուին իրենց հողերէն եւ դառնան պրոլետարներ : Հողերու ցանկապատումը, որ սկսաւ 15-րդ դարուն, փաստօրէն կը նշանակէր գիւղացիները կողոպտել : Այդ կողոպուտը դժուար չէր, քանի որ անոնց յատկացուած հողերը կը համարուէին կալուածատիրական : Բայց մանր հողատէրերու պարագան տարբեր էր. եւ ահա մանր հողատէրերը սեփականազրկելու համար օգնութեան հասաւ պարլամենտական օրինագիծը : Այսպիսով Անգլիոյ մէջ հողատիրութիւնը կը յարմարուէր նոր պայմաններուն. — անգլիական կալուածատէրերը բուրժուական հողատէրեր կը դառնային եւ եռանդազին «կը մաքրէին» հողը գիւղատնտեսական մանր արտադրողներէն, կը հեռացնէին զանոնք արտադրողական միջոցներէն եւ կը ստուարացնէին վարձու բանուորներու շարքերը :

Այսպիսով վերջացաւ Ագրարային յեղափոխութիւնը : Արգէն

18-րդ դարու կէսերուն գիւղացիութիւնը՝ որպէս ուրոյն դասակարգ՝ գրեթէ գոյութիւն ունենալէ զազրած էր:

Ազրարային յեղաշրջման հետեւանքով՝ հողերու ահազին տարածութիւնները անցան խոշոր հողատէրերու տիրապետութեան ներքեւ, որոնք իրենց հողերը յաճախ կարճ ժամկէտներով վարձակալութեան կուտային կապիտալիստներուն. իսկ այս վերջինները աւելի մեծ շահոյթ ստանալու համար նոր միջոցներով եւ կապիտալի ներդրումով ֆարմային նոր տնտեսութիւններ սկսան կազմակերպել: Ասոնք առեւտրականներ էին, որոնք հարստացեր էին վաշխառութեամբ, շահագիտութեամբ, արտաքին առուտուրով եւ զաղութային աւարառութեամբ: Անասնաբուծութիւնն ու ոչխարաբուծութիւնը կապիտալի կուտակման համար աղբիւրներ զարձան:

ՏԵՆԵՆԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Այսպէս ուրեմն, հրապարակի վրայ պատրաստ էին այն բոլոր տուեալները, որոնք անհրաժեշտ էին արդիւնաբերութեան վերելքին համար այն է՝ կապիտալ, աշխատուժ եւ շուկայ: Այժմ հարցը կապուած էր արտադրութեան մեքենայացման հետ, մեքենայացում՝ որ անհրաժեշտ էր ապրանքներու յարածուն պահանջը բաւարարելու համար: Ահա այդ մեքենայացումն էր, որ յայտնագործուեցաւ բամպակագործութեան ասպարէզին մէջ. ճիւղ մը՝ որ Հնդկաստանէն օրինակուած էր: Անկէ ներածուած բամպակեայ գործուածքները մէկ անգամէն լայնօրէն տարածուեցան ու ընդհանրացան: Եւ ահա արագօրէն հիմնուեցան բամպակագործական մանուֆակտուրաներ՝ Ռիչմընտի, Էտինսփորայի եւ ուրիշ քաղաքներու մէջ: Բամպակեայ կտաւներու այդքան արագ եւ ուժեղ չափով ընդհանրացումը մեծ խոտովութիւն յառաջացուց բրդեղէն ապրանքներ արտադրող շրջաններու մէջ. չէ՞ որ բամպակէ ապրանքները իրենց աժանութեամբ բրդեղէն ապրանքները կը վտարէին շուկաներէն: Վերջապէս բամպակը յաղթեց բուրդին: Բայց այժմ, ձեռական արտադրութիւնը չէր բաւարարեր շուկայի հսկայական պահանջները: Ժամանակն էր տեխնիկական յեղաշրջման:

Առաջին մեքենաները կը գործէին բանուորներու, կենդանիներու կամ ջուրի ուժով: Ջուրի ուժը, իրրեւ գործածական ուժ՝ խոշոր ազդեցութիւն ունեցաւ արտադրութեան բարձրացման վրայ: Գետերու եզերքները սկսան կառուցուիլ բազմաշարկանի գործարաններ: Բայց որովհետեւ այդ պարագային արտադրութիւնը կապուած կը մնար նոյն տեղին հետ եւ կախուած՝ բնական պայմաններուն եւ կլիմայական ազդեցութեան, այդ հանգամանքը կը սահմանափակէր արտադրողական լայն հնարաւորութիւնները: Մարդիկ գտան շոգիի

ուժը եւ հնարեցին շոգեշարժ մեքենաներ. եւ գործարանատէրերն այլեւս տեղի ընտրութեան մասին երկար մտածելու պէտք չունէին: Ջուրի ուժի փոխարէն շոգիի ուժը ներմուծուելէ յետոյ՝ գործարանները հնարաւորութիւն ստացան կեդրոնանալու այն քաղաքներուն ու վայրերուն մէջ, ուր շոգիի արտադրութեան համար անհրաժեշտ եւ բաւականաչափ ջուր եւ ածուխ կարելի էր ձարել: Շոգին այսպիսով, գործարանական քաղաքներու մայրն եղաւ:

Մեքենաներու տեխնիկական զարգացումով մեծ յեղաշրջում կատարուեցաւ նաեւ մետաղագործական արդիւնաբերութեան մէջ: Շոգեշարժ մեքենաներով ձեռնարկութիւններու սարքաւորումը անսովոր չափով ուռճացուց անագի, երկաթի ու պողպատի պահանջը: Քարածուխի եւ երկաթի հանքերով հարուստ Անգլիոյ մէջ մինչեւ 18-րդ դարու վերջերը, երկաթը կը հալեցնէին փայտածուխով: Ասկէ կը յառաջանար խոշոր վտանգ մը. — Անգլիան անտառազուրկ երկիր մը պիտի դառնար եւ պիտի չքանար լորտերու որսորդութեան հաճոյքը: 1788 թուին, Եորքշայրի մէջ շինուեցաւ առաջին երկաթէ կամուրջը, իսկ 1790 թուին, գտան պողպատ ձուլելու եղանակը: Երկաթի հանքերու օգտագործումով շինուեցան երկաթուղիներ, սորոնք հեռուոր քաղաքները օդակեցին իրարու հետ: Ասով տնտեսական-ընկերային ու քաղաքական յարաբերութիւնները միանուազ ձեւ ու դոյն ստացան:

Արդիւնաբերական յեղաշրջումը խորապէս անդրադարձաւ Անգլիոյ ամբողջ կեանքին վրայ: Գիւղական տուներէն դուրս նետուած բնակչութիւնը զիմեց քաղաքներն ու լեցուց նոր հիմնուող գործարանները: Քարածուխի հանքերուն մօտ խոշոր քաղաքներ կառուցուեցան: Կատարուեցաւ բնակչութեան տեղափոխութիւն. Անգլիոյ հարաւ. արեւելեան պողպարեւ մասի բնակչութիւնը տեղափոխուեցաւ քարածուխի հանքերով հարուստ՝ Հիւսիս-արեւմուտք:

Այսպիսով սկսաւ ժամանակակից հասարակութեան երկու հիմնական դասակարգերու՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի պայքարը:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ մէջ առեւտրա-արդիւնաբերական դասակարգը, որ գերիշխող տնտեսական դիրք էր դրաւեր այնքան արագօրէն, 18-րդ դարու վերջերը, սակայն, տակաւին պարլամենտի մէջ չէր մտած: Անգլիական պետութիւնը նախկինին նման կ'առաջնորդուէր հողատէրերու շահերով եւ արդեւքներ կը յարուցանէր առեւտրա-արդիւնաբերական — ազատ գործունէութեան: Կառավարութեան այս քա-

զաքականութիւնը ո՛չ միայն տնտեսական վնաս կը հասցնէր բուրժուազիային, այլեւ կը հակասէր անոր մէջ խորացած այն համոզումին, որ ընդհանուր շահերու տեսակէտէն անհրաժեշտ է լիակատար ազատութիւն տալ արդիւնաբերողներուն ու առեւտրականներուն՝ ծաւալելու իրենց զործունէութիւնը: Այդ բուրժուազիան կը հաւատար որ տասնամեակներու ընթացքին կատարուած հսկայ փոփոխութիւնները արդիւնք են անհատներու ուժին ու ձեռներեցութեան ու ազատ մրցման պայմաններուն: Տնտեսական յարաբերութիւններու լիակատար ազատութեան բուրժուական իտէալը իր ամենալըիւ արտայայտութիւնը գտած է «քաղաքատնտեսութեան հայրը» համարուող Ադամ Սմիթի (1723-1790) երկերուն մէջ: «Ժողովուրդներու հարստութեան մասին» իր գրած երկասիրութեամբ ան կը պնդէ, որ տնտեսական զարգացման հիմքը անձնական շահադրոշմութիւնն է: Ամէն մարդ կարող է եւ ազատ ըլլալու է իր նախասիրած շահաէտ զործը ընտրելու մէջ: Պետութիւնը պէտք չէ կաշկանդէ անհատին ազատութիւնը, մանաւանդ փոխանակութեան ասպարէզին մէջ: Այսպէս յտակօրէն ձեւակերպուած ազատ առուտուրի իտէալը դարձաւ անգլիական բուրժուազիայի հաւատոյ հանգանակը, որուն համար ան աշխատեցաւ մուտք զործել պարլամենտի մէջ, գլուխ հանելու իր իտէալներու կենսագործումը՝ օրէնսդրական ճանապարհով:

Կապիտալիզմի զարգացման ուղեկից էր գիւղական եւ բանուորական մասսաներու աղքատացումն ու աշխատանքի հարկադրանքը: Այդ իրողութեան բնական անխուսափելիութիւնը պաշտպանելու ելաւ անգլիական տնտեսագէտ Ռարըրտ Մալթուսը (1766-1834): Իր «Փորձ մը՝ աղղարնակչութեան օրէնքի վերաբերեալ» գիրքին մէջ, Մալթուս կ'աշխատի ասպարէզել, որ ժողովրդական աղքատութիւնը տուեալ հասարակակարգի արդիւնքը չէ բնաւ, կապիտալիզմը յանցաւոր չէ, որ աղքատութիւն կը յառաջանայ. աղքատները իրենք են որ կը ստեղծեն աղքատութիւնը, երբ կ'անտեսեն բնութեան անփոփոխ ու յաւիտենական օրէնքը: Աղքատները իրենք են մեղաւորը, որովհետեւ շատ արագօրէն կը բազմանան եւ չեն հասկնար որ արագ բազմացումի պրոցէսին հետ հորիզոնական գծով չընթանար արագօրէն՝ գոյութեան միջոցներու աճումը: Բնակչութիւնը (ծնունդը) կ'աճի երկրաչափական յառաջատուութեամբ, այսինքն 1-2-4-8-16 եւ այլն, մինչդեռ ասպրուտափ գոյութեան միջոցները կ'աւելնան թուարանական յառաջատուութեամբ, այսինքն՝ 1-2-3-4-5-6 եւ այլն: Այս անհամապատասխանութիւնը մարդիկ կրնան չբացնել կանխարգիչ միջոցներով միայն, սեռական սիրոյ եւ ուրիշ խնդիրներու մէջ ժուժկալ կեանք վարելով եւ սերնդագործութեան որոշ չափ դնելով, այլապէս՝ անխուսափելի են պատերազմները, հիւան-

դութիւններն ու համաճարակները, որ բնականօրէն գալու են խախտուած հաւասարակշռութիւնը վերականգնելու համար՝ մարդկութիւնը ենթարկելով արհեստական կրճատման:

Բուրժուազիան գտած էր իր լաւագոյն փաստարանը, յանձին Մալթուսի, որ խուրճուրդ կու տար բանուորներուն ըլլալ ժուժկալ եւ չափ դնել սերնդագործութեան, այն ստեն աղքատութիւնը պիտի չձօտենար իրենց...:

Ի՛նչ հանճարեղ միտք, արդարեւ...:

ՀԻՒՍԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

18-րդ դարու մօտերն էր որ Անգլիացիները սկսան զաղթել Հիւսիս. Ամերիկա եւ հոն բնակութիւն հաստատեցին: Առաջին զաղթականներն անոնք էին, որոնք իրենց հայրենիքին մէջ ենթարկուած էին քաղաքական կամ կրօնական հալածանքներու: Անգլիացի զաղթականները այս նոր աշխարհին մէջ գտան բարեխառն կլիմայ, լայնաձաւ տափաստաններ, կուսական անտառներ, նաւարկելի գետեր եւ չբացուած գանձերու ամբարանոցներ:

Հիւսիսային Ամերիկայի արեւելեան մասի ծեփերը կտրուած է բազմաթիւ ծովախորշերով ու նաւահանգիստներով: Անգլիական զաղթականները այդ նոր աշխարհին մէջ հանդիպեցան կիսաթափառական ցեղերու — հնդիկներու — իրարու հետ թշնամացած ցեղեր, որոնք սկզբնական շրջանին շատ թոյլ գիմադրութիւն միայն կրցան ցոյց տալ նորեկ նուաճողներուն, ապա ենթարկուեցան անոնց անգութ ձեւերով շահագործումներուն: Եկուորները անմիջապէս սկսան օգտագործել երկրի բնական հարստութիւնները՝ զարկ տալով գաղութներուն մէջ գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան ու առուտուրի զարգացման: Այդ շրջանին, շարք մը իրարմէ անկախ գաղութներ հիմնուեցան, ինչպէս Նիւ Եորքը, Մէսչուսէցը, Վիրժինիան, Պէնսիլվանիան, Հիւսիսային եւ Հարաւային Կարոլայնա, Ճորճիա եւ հինգ ուրիշ նահանգներ:

Անգլիական կառավարութիւնը նախապէս այնքան չէր միջամտեր գաղութներու ներքին գործերուն: Գաղութները կառավարողներն էին անգլիական կառավարութեան կողմէ նշանակուած նահանգապետները, որոնց իշխանութիւնը սահմանափակուած էր չափով մը: Գաղութներու բնակչութիւնը կ'աճէր առասպելական արագութեամբ: Բնակչութեան աճման հետ կ'աճէր նաեւ երկրի արդիւնաբերութիւնը եւ ճարտարարուեստը՝ իր բոլոր ճիւղերով:

Անգլիան յաջողեցաւ 18-րդ դարու կիսուն՝ գրաւել Փրանսական գաղութները, որոնք տեղաւորուած էին Միսիսիպի գետի երկարութեամբ, ինչպէս նաեւ Գանատան:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆԸ

Անգլիան կը ձգտէր իր ամերիկեան գաղութները վերածել սպառման շուկաներու. անոնցմէ պիտի առնէր հում նիւթեր եւ անոնց պիտի վաճառէր տարազազործուած ապրանքներ: Բայց ամերիկեան գաղութներուն մէջ արդէն հասակ նետեր էր ամերիկեան բուրժուազիան, որու զարգացուցած արդիւնարերութիւնը մեծ հարուած կու տար Անգլիոյ շահերուն: Անգլիան այդ իրողութեան հետ չէր կրնար հաշտուիլ, ատոր համար հրատարակեց շարք մը սեղմիչ օրէնքներ՝ գաղութները մշտապէս իր իշխանութեան ներքեւ եւ անմիջական կախեալ դրութեան մէջ պահելու նպատակով: Այդ օրէնքներու համաձայն՝ գաղութները միմիայն անգլիական ապրանքներ կրնային ներածել անգլիական նաւերով եւ նոյն առեն իրենց հում նիւթերը — մորթեղէն, անասուններ, մետաղներ, բուրդ, բամպակ եւայլն — առանց տարազազործելու պարտաւոր էին արտածել Անգլիա: Այդօրինակ խնամակալութիւնը Անգլիոյ կողմէն բռնութեան հոմանիչ էր Ամերիկեան բուրժուազիայի համար: Եւ ահա սկսաւ տնտեսական պայքարը, որ նախ արտայայտուեցաւ Արեւմտեան Հնդկաստանի, Սպանիոյ, Փորթուգալի եւ ուրիշ երկիրներու հետ տարուած մաքանանկութեամբ: Անգլիան, որ 18-րդ դարու կիսուն Ֆրանսայի հետ մղած բազմաթիւ պատերազմներու հետեւանքով Ֆրանսական դժուարին դրութեան մատնուած էր, սկսաւ աւելի ուժեղ ճնշել գաղութները, որոնք դործադրուած ճնշումին պատասխանեցին բռնկոտով: Անգլիա, իր կարգին, ընդարձակեց նահանգապետերու իշխանութիւնը եւ զօրքեր ուղարկեց Հիւսիսային Ամերիկա: Անգլիոյ դէմ պայքարելու համար գաղութները որոշեցին միանալ իրարու հետ: 1774-ին Ֆիլատէլֆիայի մէջ կայացաւ ընդհանուր համագումար՝ ուր ներկայ էին առանձին գաղութներու պատգամաւորները: Այդ համագումարը փորձեց զիջումներով համաձայնութեան գալ Անգլիոյ հետ, բայց Անգլիան իր կողմէն մագաչափ զիջում չուղեց ընել եւ պատերազմական վիճակ յայտարարեց: Ամերիկեան բուրժուազիային համար կը մնար միայն մէկ ուղի. — յանուն անկախութեան պայքարելու ուղին: 1775 թուին, գարձեալ Ֆիլատէլֆիայի մէջ՝ գումարուեցաւ երկրորդ համագումարը, որ վերջնականապէս որոշեց խզել կապերը Անգլիոյ հետ, հրապարակ հանեց ամերիկեան դրամը եւ շուտով կազմակերպեց իր բանակը: Բանակին հրամանատար նշանակուեցաւ կալուածատէր-կապիտալիստ ձորճ Վաշինկտոնը, որ նոյն համագումարի պատգամաւորներէն մէկն էր: Անգլիայէն անջատուելու ծրագրին դէմ էր հարաւային գաղութներու բուրժուազիան, որ նոյնպէս պաշտպան էր գերեզմանութեան. ա-

նիկա բամպակ եւ ծխախոտ կը մատակարարէր անգլիական արդիւնարերութեան: 1776-ին գաղութները հանդիսաւոր կերպով յայտարարեցին իրենց անկախութիւնը Անգլիայէն: Յայտարարուած անկախութիւնը կ'ազդարարէր հետեւեալ սկզբունքը. — «Բոլոր մարդիկ ի ծնէ հաւասար են, ուստի անոնք լիակատար իրաւունք ունին տալալելու այն կառավարութիւնները, որոնք շարագործութիւններու եւ բռնութիւններու վրայ են հիմնուած»: Այդպիսով սկսաւ անկախութեան համար մղուող պատերազմը, որ տեւեց մինչեւ 1783 թուականը: Պատերազմի ընթացքին, յաջողութիւնը մերթ այս կողմը կը հակէր, մերթ միւս կողմը: Ապստամբներու դրութիւնը ծանր էր, որովհետեւ կռիւի անվարժ մարդիկ ստիպուած էին ճակատիլ Անգլիական կանոնաւոր զօրքերու դէմ: Ժողովրդական զանգուածները, երկար առեն տառապած ըլլալով անգլիական ճնշող օրէնքներու տակ, ողբերուած էին ազատութեան ու անկախութեան զազափարով եւ հերոսաբար կը կռուէին այդ զազափարին համար, մինչդեռ բուրժուազիան եւ հողատէրերը վախնալով մասսաներու ապագայ յեղափոխութեան հեռանկարէն, կ'աշխատէին կերպով մը համաձայնութեան գալ Անգլիոյ հետ եւ կասեցնել յեղափոխութեան վտանգաւոր կերպարանափոխութիւնը, որ կարող էր յանկարծ երեւան գալ: Ամբողջ Եւրոպայի համակրութիւնը ապստամբներու կողմն էր. հազարաւոր կամաւորներ կու գային գաղութներուն օգնութեան: Աւելի շատ կամաւորներ կու գային Ֆրանսայէն, որ իր կրած անյաջողութեանց վրէժը կ'ուղէր առնել իր բախտաւոր մրցակիցէն: Ֆրանսական կամաւորներու շարքերուն մէջ էին երիտասարդ մարքիզ Լաֆայէտը եւ Ֆրանսական մեծ յեղափոխութեան յետազայ դործիչ եւ ապագայ սոցիալիստ-լուտոպիստ Սէն-Սիմոնը: Յամառ կռիւներէն յետոյ՝ Անգլիան հարկադրուեցաւ 1783-ին ճանչնալ ամերիկեան գաղութներու անկախութիւնը:

Սոյն պատերազմը, որու հետեւանքով տնտեսապէս ու քաղաքականապէս ինքնուրոյն պետութիւն մը ստեղծուեցաւ, խոշորագոյն նշանակութիւն ունեցաւ եւրոպական երկիրներու համար:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ազատագրուած գաղութներու համար տնտեսական ապակեզրոնացեալ դրութեան հետեւանքով դժուար էր սահմանել իրենց սահմանազրութեան հիմնական սկզբունքները, որովհետեւ գաղութայիններու շրջանին մէջ կային թէ՛ միասնական հզօր պետութիւն մը կազմելու կողմնակիցներ եւ թէ՛ առանձին նահանգներու ինքնուրոյնութիւնը պաշտպանողներ: 1789-ին միայն վերջնականապէս մշակուե-

ցաւ «Միացեալ Նահանգներ» անունով նորածագ պետութեան սահմանազրուութիւնը: Այդ սահմանազրուութեան համաձայն, նահանգներէն իւրաքանչիւրը կը պահպանէր իր ընտրովի հիմնարկութիւնները տեղական գործերը վարելու համար: Կեդրոնական համապետական հաստատութիւնը եղաւ զոնկրէսը, որ կազմուած էր երկու պալատներէ, այն է՝ ծերակոյտը, որու մէջ կը մտնէր իւրաքանչիւր նահանգէն երկերկու ներկայացուցիչ եւ պատգամաւորներու պալատը, որու անդամները կ'ընտրուէին իւրաքանչիւր նահանգի բնակչութեան քանակի համեմատութեամբ: Միացեալ Նահանգներու գլուխը անցաւ նախագահը, որ ընտրուած էր ընդհանուր քուէարկութեամբ, միայն չորս տարուան համար: Նախագահը Գոնկրէսէն անկախ՝ իրաւասութիւն ունէր ըստ իր հայեցողութեան՝ նշանակել կամ ազատ արձակել իր դաշխիճի անդամները: Առաջին անգամ նախագահ ընտրուեցաւ ազատագրական կռուի զեկավար Վաշինկտոնը:

Մ. Նահանգներու այգօրինակ պետական կառուցուածքը զանազան փոփոխութիւններով կը պահպանուի մինչեւ այսօր:

Բայց մէկ բան պարզ է. այսինքն այն՝ որ այս օրերու Մ. Նահանգներու պետութիւնը 1789-ի նորակազմ սահմանադրական պետութեան չի նմանիր. ան եղած է համաշխարհային իմպերիալիզմի յառաջապահը:

Հին ԿԱՐԳԵՐԸ ՖՐԱՆՍԱՍԻ ՄԷՁ

ՖՐԱՆՍԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ 18-ՐԴ ԳԱՐՈՒՆ

Մինչ Անգլիան արդէն կը վայելէր արդիւնաբերական յեղաշրջման արդիւնքները, Ֆրանսան նոր կը սկսէր այդ յեղաշրջման շրջանը: Մինչեւ 18-րդ դարու վերջերը գլխաւորապէս հողագործական երկիր էր ան. ամբողջ բնակչութեան 90 տոկոսը կ'ապրէր գիւղերու մէջ: Միայն երկու քաղաքներ կային 100 հազարէն աւելի բնակիչ ունեցող. մէկը Փարիզն էր, միւսը՝ Լիոնը:

Տնտեսական բոլոր ճիւղերէն ամենէն աւելի կը զարգանար արտաքին առուտուրը, չնայած որ Ֆրանսան կորսնցուցեր էր իր դադութիւններէն շատերը: 1720-էն մինչեւ 1789 տարեթիւր իր առուտուրը գրեթէ հինգ անգամ աճեր էր: Այնպիսի նաւահանգիստներ, ինչպէս Մարսէյն էր, Բորդօն ու Նանտը, համաշխարհային առեւտրական կեդրոններ դարձան: Ֆրանսայի արտածուած հիմնուած էր գլխաւորապէս գիւղատնտեսական մթերքներու եւ պերճանքի իրերու վրայ: Բայց իր ներքին շուկայի առուտուրը չափազանց աննպաստ պայմաններու մէջ էր: Ամբողջ երկիրը բաժնուած էր շարք մը մարզերու, որոնք իրարմէ անջատուած էին մաքսային սահմաններով, բան մը

որ կը խանգարէր ապրանքներու շարժումը եւ կը բարձրացնէր անոնց գինը: Յաճախ անբերրութեան հետեւանքով ցորենի առուտուրը կը կաղար: Կառավարութիւնը խստօրէն կը կարգաւորէր այդ առուտուրը, սահմանելով ցորենի վաճառման ժամանակն ու տեղը, ցորենի գինը եւ տուրքերու չափերը: Երկրի սահմաններէն դուրս ցորենի արտածումը մեծ մասով արգելուած էր: Այդ բոլոր միջոցներու հետեւանքը այն կ'ըլլար որ անբերրութեան տարիներուն ցորենը չահաղիտութեան նիւթ կը դառնար, իսկ այդ բացասական անզրադարձում կ'ունենար բնակչութեան վրայ:

Արդիւնաբերութեան ասպարէզին մէջ գերիշխող էին գիւղի տնայնադրծական արտադրութիւնը եւ քաղաքներու մանր ձեռնարկութիւնները, որոնք հազիւ թէ 10 բանուոր կ'աշխատայէին, իսկ 100 բանուոր ունեցող ձեռնարկութիւնները արդէն խոշոր կը համարուէին: Խոշոր արդիւնաբերութիւնը առհասարակ կը կեդրոնանար նաւահանգստային քաղաքներու մէջ: Արդիւնաբերական գլխաւոր քաղաքն էր Լիոնը, մետաքսեղէն արտադրող կեդրոնը:

18-րդ դարու վերջերը Ֆրանսան նոր էր սկսեր իւրացնել Անգլիոյ արդիւնաբերական տեխնիկան. ահա թէ ինչո՞ւ մեքենաներու քանակը Ֆրանսայի մէջ մինչեւ 19-րդ դարու սկիզբը շատ աննշան էր: Գերիշխող էին միջին տեսակի մանուֆակտուրաները, որոնց կարգին խոշոր գեր կը կատարէին խառն տիպի ձեռնարկութիւնները. անոնց կապուած էր բանուորներու մէկ մասը միայն, իսկ բանուորներու մեծ մասը իր տունին մէջ կը կատարէր իր աշխատանքը: Բաւական չափով զարգացած էր արհեստային արտադրութիւնը: Առաջուան պէս այդ արտադրութիւնը բաժնուած էր առանձին կիլոտերու (համաքարութիւններու՝ արհեստակցական միութիւններու) ուր միացած էին վարպետները, որոնց քով կ'աշխատէին վարպետացու արհեստաւորներն ու աշխերտները: Համաքարային արտադրութիւնը կաշկանդուած էր որոշ կանոնադրութիւններով, որոնց ներքեւ սաստիկ կը ճնշուէին վարպետացուները: Այս վերջինները իրենց շահերը պաշտպանելու համար յատուկ միութիւններ կը կազմէին եւ երբեմն ալ գործադուլներու կը դիմէին: Արդիւնաբերութեան արագ զարգացման առջեւ մեծ խոչընդոտ կը հանդիսանար պետութիւնը, որ կը միջամտէր արտադրողական գործին. ան էր որ հիւսուածեղէն կատրներու համար որոշ որակ, զոյն եւ լայնութիւն կը սահմանէր: Այն հիւսուածեղէնը, որ չէր համապատասխաներ կառավարութեան պահանջներուն, իսկոյն կ'ոչնչացուէր:

Այս տեսակ ճնշումներէն խոյս կու տար միայն տնայնադրծական արտադրութիւնը, որ բազմաթիւ գիւղացիութեան լրացուցիչ եւ կամուտի աղբիւրը կը ներկայացնէր: Տնայնադրծութիւնը մասնաւոր

բապէս դարդացած էր Ֆրանսայի հիւսիսային մասին մէջ, ուր հողը անբերրի էր եւ բաւարարութիւն չէր տար բնակչութեան կարիքներուն:

Անդլիոյ օրինակին հակառակ՝ գիւղացիական հողատիրութիւնը Ֆրանսայի մէջ իր գոյութիւնը պահեց մինչեւ 18-րդ դարու վերջերը: Անոր կողքին, գոյութիւն ունէր նաեւ խոշոր հողատիրութիւն, որուն յատկանշական գիծը այն էր որ միեւնոյն տիրոջ պատկանող հողամասերը բաժան-բաժան ինկած էին եւ այդ արդեւք կը հանդիսանար անտեսութիւնը կանոնաւոր վարելու համար: Այս պատճառով ալ կալուածատէրերու մեծագոյն մասը իր հողերը վարձակալութեան կու տար գիւղացիներուն շատ փոքր հողաբաժիններով: Իսկ վարձակալութեան պայմանները չափազանց ծանր էին: Ամենէն շատ տարածուած էր կիսարաժնի վարձակալութիւնը: Գիւղատնտեսական տեխնիկայի մակարդակը շատ ցած էր. դուրսնի փոխարէն կը դորձածուէր արօրը. իսկ անասուններու սակաւութեան հետեւանքով պարարտանիւթ ալ չկար: Մի քանի տարիներու ընթացքին, հողը կը դառնար ուժասպառ, իսկ անբերրիութիւնը՝ անխուսափելի:

Գիւղացիութեան ճնշող մեծամասնութիւնը թէեւ ազատուած էր ճորտական դրութենէն, սակայն այն հողը, որուն վրայ անոնք կ'աշխատէին, տակաւին կը շարունակուէր սէնիորէն (կալուածատիրօջմէն) կախուածութիւնը: Ասոր վրայ երբ աւելցնենք ծանր հարկերը, այն ասեմ կը պարզուի գիւղացիութեան ողորմելի դրութիւնը: Գիւղացիները պարտաւոր էին որոշ վճարում մը ընել սէնիորին, երբ անոր ջրաղացին մէջ ցորեն կ'աղային, կամ՝ երբ անոր փուռին մէջ հաց կը պատրաստէին: Այն բոլոր հարկերն ու տուրքերը, որոնք ծանրացեր էին գիւղացիութեան ուսերուն վրայ, այնքան մեծ վնաս չէին պատճառեր որքան ինքը՝ սէնիորը, երբ կ'այցելէր իր կալուածքը, որսորդութեան նպատակով: Ազնուականներու սիրած զբաղումը որսորդութիւնն էր. անոնք կը բազմացնէին ճագարներ, կաղաններ, աղանիներ, որոնք կը փճացնէին գիւղացիներու դեռ չհաւաքած բերքը: Գիւղացին երբ կը դանդաղէր, կ'ենթարկուէր դանակոծումի:

Ասոնք բոլորը հին կարգերու մնացորդներն էին. Ֆրանսական գիւղը իր դարդացմամբ արդէն աճեր, դուրս էր եկեր այդ հին կարգերու շրջանակներէն եւ այժմ կը ձգտէր իր վրայէն թօթափել ճորտատիրական կարգերու շղթաները, մինչդեռ այդ շղթաները աւելի կը նորոգուէին, աւելի կ'ամրանային: 18-րդ դարու 70-ական թուականներուն, երբ կապիտալը արդէն մտած էր Ֆրանսական գիւղը, հին հողատէր ազնուականութիւնը բուն կերպով կ'աշխատէր վերահաստատելու իր փառաշուք իրաւասութիւնները, իսկ գիւղացիները ազնուականներու կամապաշտ փորձերուն կը պատասխանէին ա-

ւելի եւ աւելի սաստկացող խռովութիւններով, որոնք յաճախ վրժառու ապստամբութեան գոյն կ'առնէին շատ բնականօրէն:

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Ֆրանսայի բնակչութիւնը պաշտօնապէս բաժնուած էր երեք դասակարգերու, որոնց մէջ ընկերային տարբեր խմբաւորումներ կային: Առաջին դասակարգը հոգեւորականութիւնն էր, որ բոլորովին ազատ էր ամէն տեսակի հարկերէն ու տուրքերէն. անոր կը պատկանէր լաւագոյն հողի գլխաւոր մասը, որ ահապէն եկամուտ կը բերէր: Ատկէ զատ անոր դանձարանին կապուած էր այսպէս կոչուած՝ «տասանորդ» — վաղուց ի վեր գոյութիւն ունեցող եւ պարտադիր դարձած այն հարկը՝ զոր բնակչութիւնը վճարելու էր եկեղեցւոյ օգտին՝ իր ստացած եկամուտի մէկ տասներորդի չափով: Եւ պէտք է ըսել այդ հարկը գլխաւորապէս կը ծանրանար արդէն իսկ կորաքամակ գիւղացիի ուսերուն: Այդ հսկայական եկամուտները ամբողջովին կը ծառայէին «եկեղեցական իշխաններու» օգտին, այսինքն՝ եպիսկոպոսներուն, որոնք սովորաբար ազնուականութեան շրջանակներէն ելած մարդիկ էին: Իսկ ծխական հողեւորականութիւնը, որու շարքերը կը մտնէին գլխաւորապէս մանր բուրժուազիայի ներկայացուցիչները, համեմատաբար զրկուած կեանք մը կ'ապրէր եւ մասամբ ձուլուած էր գիւղական մասսաներու հետ:

Երկրորդ դասակարգը կազմողն էր ազնուականութիւնը: Անոր անտեսական դրութիւնը շատ խախտու էր դարձեր: Տոհմական ազնուականութեան մեծ մասը լքած էր իր ոչ այնքան հասութարեր կալուածները եւ փոխադրուած էր Փարիզ՝ արքունիքը: Այդ քայքայուող դասակարգը պետութեան ղէմ չթշնամանացնելու եւ իր կողքին պահելու համար կառավարութիւնը ստեղծեր էր շարք մը պաշտօններ՝ որոնց հետ ո'չ մէկ աշխատանք, ո'չ մէկ պարտականութիւն կապուած չէր: Այդ պաշտօններու համար տրուած վարձատրութիւնը կը քամէր պետական դանձարանին մեծ մասը: Ատկէ զատ, ազնուականութեան այդ վերին խաւը զրուած էր բանակի բարձրագոյն հրամանատարական բոլոր պաշտօնները, որոնք — աւելորդ է ըսել — նոյնպէս շատ լաւ կը վարձատրուէին: Այսպիսով, ինչպէս բարձր հողեւորականութիւնը, նոյնպէս եւ տոհմական ազնուականութիւնը, երկուքն ալ կը կազմէին պորտաբոյժ-պարազիտ դասակարգ մը, որ թէեւ փոքրաթիւ էր, բայց շատ սուղի կը նստէր ամբողջ բնակչութեան՝ մասնաւորապէս գիւղացիութեան վրայ:

Այս դասակարգին յաջորդ խումբը կը կազմէր կալուածատէր ազնուականութիւնը, որ տակաւին իր բոյնին մէջ նստած կը մնար:

Աղքատ կ'ապրէր ան, երբեմն, իր կեանքի պարզութեամբ շատ քիչ կը տարբերէր իրեն ենթակայ զիւղացիներէն: Անոր պարծանքն էր ծագումով ազնուական ըլլալը. ան չէր խառնուեր զինքը չըջապատող արհամարհելի բնակչութեան հետ եւ ինքզինքը նուաստացած կը համարէր որեւէ զործով զբաղելով, բայց նոյն ատեն նախանձով ու զայրոյթով կը նայէր փարթամութեան մէջ լողացող պալատական ազնուականութեան:

Ազնուականութեան երրորդ խաւը կը կազմէր պաշտօնատար ազնուականութիւնը կամ «պատմունճանի ազնուականութիւնը», (այդպէս կը կոչուէր ան, որովհետեւ դատաւորները իրենց պարտականութիւնը կատարելու ատեն՝ ըստ ընդունուած սովորութեան՝ փառաւոր պատմունճան կը հազնէին): Այդ մարդիկ այն բարձրաստիճան քաղքենիներն էին, որոնք կը մասնակցէին պետական խորհուրդի եւ պարլամենտներու նիստերուն: Պարլամենտներ կը կոչուէին գաւառային դատական հիմնարկութիւնները, որոնք վաղուց ի վեր իրենց վերապահած էին որոշ իրաւունք մը — արքայական բոլոր կարգադրութիւնները օրէնքներու ցանկին մէջ արձանագրելու իրաւունքը. իսկ այդ զործը կատարելու ատեն, երբեմն կը փորձէին, — սակայն, ապարդիւն — ընդդիմանալ թագաւորական ինքնակալութեան: Ամենէն տարօրինակն այն էր, որ պետական դանձարանը լեցնելու միջոցները երբ արդէն սպառած էին, կառավարութիւնը կը ձեռնարկէր պետական պաշտօնները ապրանքի նման վաճառքի հանելու գործին: Անոնք որ այդ պաշտօնները կը զնէին, կը ստանային ազնուականի կոչում:

Ասկէ օգտուեցան ունեւոր բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք վաղուց ի վեր կը նախանձէին ազնուականներու արտօնութիւններուն: Չեռք ձգելով բարձր պաշտօններ, մանաւանդ պարլամենտներու մէջ, եւ դառնալով այդ պաշտօններու անփոփոխելի՝ ժառանգական տէրերը, անոնք ինքզինքնին անկախ կը զգային թագաւորական իշխանութենէն:

Երրորդ դասակարգը կ'ընդգրկէր մնացեալ ամբողջ բնակչութիւնը: Այս դասակարգի ամենէն աւելի բազմամարդ խումբը կը կազմէին զիւղացիները, որոնց մասին խօսեցանք արդէն: Բացի ազնուականութեան եւ հողեւորականութեան օգտին ուղղուած վճարումներէն, զիւղացիները պարտաւոր էին նաեւ տալ մի շարք պետական հարկեր՝ թէ ուղղակի, թէ անուղղակի հարկեր: Անուղղակի հարկերէն ամենէն ծանրն էր աղի հարկը: Պետութիւնը իրեն վերապահած էր աղի առուտուրի մոնոպոլը եւ աղի վրայ այնպիսի խոշոր տուրք էր դրած, որ աղի սովորական գինէն տասնեւհինգ անգամ աւելի էր: Եւ զեռ այդ ալ բաւական չէր, կառավարութիւնը կը հարկազ-

րէր որ ամէն ոք մարդագլուխ որոշ քանակով աղ զնէր, հոգ չէր թէ այդ քանակը սպառման բնական չափէն շատ աւելի էր եւ մարդը կարիք չունէր այդքան աղ զնելու: Անորակելի բռնութիւն էր այդ:

Այստեղ պէտք է ըսել թէ երրորդ դասակարգը կազմող բնակչութիւնը միատարր չէր, զիւղացիութեան ունեւոր եւ միջակ խաւերու կողքին գոյութիւն ունէին զիւղական չքաւոր մասսաները:

Երրորդ դասակարգի գլխաւոր տնտեսական ուժը կը ներկայացնէր բուրժուազիան, որ շատ այլատարր էր իր կազմով: Անոր բարձր խաւը խոշոր կապիտալիստներն էին, որոնք մեծ տոկոսով զբրած փոխ կու տային պետութեան եւ նոյն ատեն կապալով կը ստանձնէին հարկերը հաւաքելու գործը, իսկ այդ հարկերը կը հաւաքէին կրկնապատիկ չափով ու այդպիսով կը քամէին ժողովուրդի արիւնը: Անոնց համար հին կարգերը ձեռնառու էին, բայց նոյն ատեն՝ կը վախնային որ պետութիւնը իր պարտքերը պիտի չկրնար վճարել, այդ երկիւղը կը ստիպէր որ անոնք մտածէին ու հոգ տանէին պետական իշխանութեան բարեփոխման:

Անկէ յետոյ կու գար գաւառային տնտեսա-արդիւնաբերական բուրժուազիայի խումբը, որ պատճառ ունէր շտրելու հին կարգերը, որովհետեւ այդ կարգերը կ'արգիլէին երկրի կապիտալիստական զարգացումը: Ասկէ դատ, 1786 թուին Ֆրանսան Անգլիոյ հետ կնքեց պայմանագրութիւն մը, որուն համաձայն՝ Անգլիական ապրանքները Ֆրանսա կը մտնէին ազատ մաքսատուրքէ: Ֆրանսական թանկագին ապրանքները, որոնք մեծ մասով ձեռական աշխատանքով կ'արտադրուէին, չէին կրնար մրցիլ անգլիական ապրանքներուն հետ: Այս պայմանագրութիւնը պատճառ եղաւ որ Ֆրանսական ձեռնարկութիւններէն շատերը սնանկանան: Եւ սնանկացած բուրժուազիան կերպ մը կը մտածէր տիրող աննպաստ դրութիւնը փոխելու համար:

Երրորդ դասակարգին կը պատկանէին, վերջապէս, բուրժուազիայի ինտելիգենցիայի ներկայացուցիչները (փաստաբանները, բժշիկները եւ լրագրողները, եւ այլն) մանր բուրժուազիան եւ նոր հրապարակ իջնող պրոլետարիատի խումբը:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Ֆրանսայի մէջ պետական կարգերը հիմնուած էին բացարձակ միապետութեան վրայ, որու գլուխը կանգնած էր ժառանգական թագաւորը՝ իր շուրջը ունենալով չափազանց փառայեղ արքունիք մը: Պետութիւնը կառավարողներն էին բիւրոկրատները՝ որոնք կռօնած էին զօրքին եւ ոստիկանութեան ուժերուն վրայ: Պետական ծախսերը բնաւ չէին համապատասխաներ եկամուտներուն: Մեծցեր էին պետական պարտքերը, մինչդեռ պետական եկամուտը բոլոր

ծախսերու ընդհանուր դումարին հազիւ թէ կէսը կրնար վճարել: Լուզովիկոս ԺԳ-ի, կամ, ինչպէս անոր շողոքորթ պալատականները անուանած են, «Արեգակ արքայի» ժամանակէն սկսած, Ֆրանսայի թագաւորները իրենց մշտական բնակութիւնը հաստատել են Վերսայլի մէջ, մայրաքաղաքէն 17 քիլոմետր հեռաւորութեամբ հոյակապ պալատ մը, չըջպատուած հրաշալիօրէն դեղեցիկ պարտէզներով եւ դարձարուած բազմաթիւ շտարուաններով ու արձաններով: Մօտակայ անտառներուն մէջ պալատականները կը կազմակերպէին ազմկալի որսորդութիւն, որուն կը հետեւէին շքեղ հանդէսներ՝ պարերով, երաժշտութեամբ եւ հրավառութեամբ: Պալատի այդ հսկայական ծախսերը աշխատաւորական եւ դիւղացիական ճնշուած դանդուածները աւելի կ'աղքատացնէին:

Կապիտալիզմի եւ մասսաներու յեղափոխական շարժման աճումով կ'ուժեղանար արդիւնաբերական բուրժուազիայի եւ բացարձակապետութեան միջեւ բազխումը: Զրկուելով բուրժուազիայի աջակցութենէն, բացարձակապետութիւնը այլեւս կը դառնար Ֆէոդալական-կալուածատիրական յետադիմութեան գործիք: Վրայ հասնող յեղափոխութիւնը պէտք է խորտակէր, աւելք ու հովին տար այդ բացարձակ միապետութիւնը:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Հին կարգերէն դժգոհ՝ բուրժուազիան տրամադրուած էր ընդդիմադիր հոգեբանութեամբ: Անոր ծոցէն հրապարակ իջան շարք մը մտածողներ, որոնք իրենց գաղափարական ստեղծագործութեանց մէջ արտացոլացունէին բուրժուական տարրեր խմբաւորումներու բազմատեսակ ձգտումները:

18-րդ դարու գրողներէն ամենականաւորն էր Վոլտէրը (1694-1778) որ իր դրական տաղանդը նուիրեց հասարակական եւ պետական կարգերու քննադատութեան: Վոլտէրը ուժեղ կերպով կը յարձակէր թէ՛ Ֆէոդալական եւ թէ՛ կրօնական նախապաշարումներու վրայ: Ան կոչ կ'ընէր խորտակելու եկեղեցին, «ճղմելու այդ դարչելին»: Բայց Վոլտէրը անհաւատ չէր, կը հաւատար Աստուծոյ եւ զայն կ'ընդունէր որպէս ստեղծագործող ուժ, միայն թէ ամէն բանէ բարձր կը դասէր բանականութիւնը եւ լուսաւորութիւնը: Իր ժամանակին բանավարակամ փիլիսոփայութեան — ռացիոնալիզմի — խոչորագոյն ներկայացուցիչներէն մէկն էր ան: Բարձր գնահատելով բուրժուազիայի մշակոյթը, ան արհամարհանքով կը նայէր աշխատաւոր մասսաներուն: «Ժողովուրդը», գրած է ան, «գոհհիկ ու բթամիտ է. անոնք եղներ են, որոնց հարկաւոր է լուծ, ջրոյ եւ կեր»: Վոլտէրը այդպիսով կը հանդիսանար հասարակութեան ազնուական-բուրժուական վերնախաւի տեսարանը:

Ուրիշ հայեացք ունէր «Օրէնքներու» գիրքի հեղինակը՝ Մոնտեսքիոն (1689-1755): Ֆրանսական մտաւորականութեան ներկայացուցիչները՝ միապետութեան լուծէն դաշրացած՝ առանձին հետաքրքրութեամբ կը դիտէին անգլիական պետական կարգերը, ու կը հիանային անգլիական սահմանադրական միապետութեան վրայ: Մոնտեսքիոն նման հայեացքներու ամենափայլուն արտայայտիչն էր: Ան կ'ընդունէր որ քաղաքական ազատութիւնը հնարաւոր է միայն այն ատեն՝ երբ թագաւորի իշխանութիւնը սահմանափակուած է ժողովրդական ներկայացուցիչներու ժողովի կողմէն եւ այդ ժողովի ձեռքն է կեդրոնացեր օրէնքներ սահմանելու իրաւունքը, նմանապէս դատաւարութիւնը պէտք է կատարեն ժողովուրդէն բնորոշ եւ թագաւորի իշխանութենէն անկախ դատաւորներ. իսկ թագաւորին կարելի է վերապահել միայն կառավարելու, այսինքն՝ որոշեալ օրէնքները գործադրելու իրաւունքը, ինչպէս նաեւ զօրքերն ու պետական Ֆինանսը տնօրինելու իրաւունքը, պարլամենտի խիստ հրահրութեան տակ: Այս տեսութիւնը որ կը կոչուի իշխանութիւններու բաժանման տեսութիւնը (օրէնսդիր, գործադիր եւ դատական բաժիններ) մեծ յաջողութիւն էր գտեր բուրժուական շրջաններուն մէջ, քանի որ ան կ'արտացոլացնէր բացարձակապետութեան դէմ ուղղուած բուրժուազիային հոգին: Մ. Նահանգներու սահմանադրութեան հիմնադիրները հաւանականաբար հետեւեցան Մոնտեսքիոյ:

18-րդ դարու դեմոկրատիայի (ժողովրդավարութիւն) քարոզիչը մանր բուրժուազիայի ներկայացուցիչ Ժան-ժակ-Ռուսոն էր (1712-1778): Վոլտերին հակառակ՝ ան շատ բարձր կը գնահատէր աշխատաւորական զանգուածները իրենց բնական պարզութեամբ. քաղաքային կեանքը իր փարթամութեամբ եւ կուլտուրայով կ'ամբարոյյականացնէ մարդիկը: Իր համոզումով՝ մարդիկ աւելի լաւ կ'ապրէին նախադարեան շրջանին, երբ գոյութիւն չունէր մասնաւոր սեփականութիւն, ոչ ալ անոր վրայ հիմնուած անհաւասարութիւնը: Մասնաւոր սեփականութեան մասին ան գրած է այսպէս. «Քաղաքացիական հասարակութեան հիմնադիրը առաջին անգամ հողամաս մը ցանկապատելու միտքը յղացու եւ ըսաւ. — Այս իմս է —: Եթէ մէկը այդ ցանկապատի ցիցերը քանդէր եւ սահմանադրի փորուածքը հողով գոցէր ու իր մերձաւորներուն ըսէր. — Մի լտէք այդ խաբերային. դուք կորսուած էք եթէ մոռնաք, որ երկրի պտուղները կը պատկանին բոլորին, իսկ հողը կը պատկանի ո՛չ ոքի —, այս ձեւով որքան յանցանքներէ, կոխներէ ու սպանութիւններէ, որքան փորձանքներէ եւ արհաւիրքներէ կը փրկէր մարդկային ցեղը»: Այս տողերով Ժան-ժակ-Ռուսոն կ'արտայայտէր գլխաւորապէս «մանր բուրժուազիայի տրամադրութիւնը, որ կը ձգտէր ջնջել արխաոկ-

բատիայի արտօնութիւնները: Ասիկա ապագայ պետութիւնը կը պատկերացնէր «ընկերային պայմանադրութեան» վրայ հաստատուած պետութիւն մը, որու հովանիին տակ կ'ապահովուէր անհատի բարօրութիւնը, այսինքն՝ մանր սեփականատէրերու շահերու պահպանումն ու պաշտպանութիւնը:

Ահա ասոնք էին բուրժուազիայի տարրեր խաւերու հայեացքները: Սակայն նոյն ատեն երեւան եկան կոմունիստական դադափարներ ալ, որոնք կ'արտայայտէին հասարակութեան վարի դասակարգի շահերը: Այդ գաղափարներու արտայայտիչն եղաւ չքաւոր ծխական քահանայ մը՝ Մելիէնը (1660-1729) որ տարիներով ապրած էր գիւղացիներու հետ: Ան իր կտակին մէջ գլխաւոր շարիքը կը համարէր հողի մասնաւոր սեփականութիւնը եւ դասակարգերու գոյութիւնը: Անոր համոզումով՝ այդ շարիքի պաշտպան կը հանդիսանայ քրիստոնէական եկեղեցին, որ կոչուած է ամէն կերպով յիմարացնելու եւ խարելու միամիտ ու աստապող աշխատաւոր մասնաները: Բուրժուական գրողներուն հակառակ՝ Մելիէն կոչ կ'ընէր չքաւորներուն ապստամբելու բոլոր կեղեքողներու եւ շահագործողներուն դէմ, նոյն ատեն՝ անօգուտ բան համարելով հարուստներէն ակնկալել որեւէ փոփոխութիւն՝ դէպի լաւը: Իր կոմունիստական խտէալը Մելիէն կ'արտայայտէր հետեւեալ ձևով. «Նրկրի բոլոր բարիքներն ու հարստութիւնները մարդիկ պէտք է վայելեն միասին եւ հաւասար շփով: Քաղաքի մը կամ ծուխի մը բոլոր բնակիչները պէտք է կազմեն ամբողջութիւն մը, որպէս մէկ ընտանիք: Անոնք պէտք է ապրին միատեղ, սնանին միեւնոյն ուտելիքով, բոլորը հագնին լաւ հագուստեղէն եւ ունենան հաւասարապէս լաւ բնակարան»:

Այն ժամանակուան համար խիստ յատկանշական էր այսպէս կոչուած՝ Էմսայֆլապեղիստներու գրական գործունէութիւնը: Անոնք վեր առին նիւթ մը, որուն ոչ ոք այնքան յանդգնութեամբ եւ հանգամանօրէն մօտեցեր էր, այն էր՝ բոլոր կրօններու հրամանատարը, մարդոց հոգիները ստրկացնող յաւիտենական ինքնակալը՝ Աստուածը: Անոնց գլխաւորներն էին Դիդրոն (1712-1784), դ'Ալամբերը (1717-1783), Հոլբախը (1723-1789) Հելվեցիուսը (1715-1771) եւ ուրիշներ: Ասոնք կը ձգտէին տարածել եւ մատչելի դարձնել զիտական նորագոյն նուաճումները. այդ նպատակով անոնք ձեռնարկեցին գիտութիւններու, գեղարուեստի եւ արհեստներու մեծ «համայնագիտարանի» մը հրատարակմանը, որ հալածանքի ենթարկուեցաւ գրաքննիչներու կողմէն: Փրանսական մատերիալիստները հրապարակ իջած էին որպէս «հին կարգերու» գաղափարախօսութեան խորտակիչներ՝ եւ կ'ուզէին բանալ բուրժուական յեղափոխութեան ճամբան: Որպէս համոզուած քրիստոնք (Աստուծոյ գոյութիւնը ժխտողներ)

անոնք իրենց երկասիրութիւններուն մէջ մատերիալիստական դադափարներ կ'արծարծէին, ընդունելով որ բոլոր երեւոյթներու հիմքը նիւթի շարժումն է եւ ասկէ անոնք այն եղբակացութեան կը յանդէին, որ մարդոց բնաւորութիւնները կախուած են ո՛չ թէ իրենց բնածին յատկութիւններէն, այլ շրջապատող միջավայրի ներգործութենէն: Բայց պէտք է ըսել թէ Փրանսական մատերիալիստները տարամերժօրէն չոր մատերիալիստներ էին, մեխանիքական մատերիալիստներ՝ որոնք կը ժխտէին զարգացողական պրոցէսը ե՛ւ բնութեան ե՛ւ մարդկային հասարակութեան մէջ, կը ժխտէին արտադրողական ուժերու դերը պատմական շրջաններու մէջ, կը ժխտէին նաեւ մարդկային միաքի կատարած նուաճումներու դերը: Անոնք կ'ընդունէին թէ ինչպէս լեարդը մաղձ կ'արտադրէ, այնպէս ալ մարդու ուղեղը կ'արտադրէ մտածում: Անոնք չէին ընդունիր թէ երբ մարդկային ուղեղի մտածումը զարգացողական բնոյթն ու պահանջը կը ներկայացնէ, ընդհանրանալով ժողովուրդի մէջ՝ կը դառնայ ուժ եւ այդ ուժն է որ պատմութեան անիւր շարժման մէջ կը դնէ: Միթէ՞ կարելի է ընդունիլ որ Փրանսական յեղափոխութիւնը երկնային հրամանով տեղի ունեցաւ, թէ ոչ իրերու անտեղիտալի պահանջները ներկայացնող մտածումներու ժողովրդականացումով: Այստեղ ուրեմն, կարելի չէ ժխտել բուրժուական փիլիսոփաներու եւ քաղաքական գործիչներու կատարած դերը բուրժուական յեղափոխութեան մէջ:

ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՌՈՒՍԻԱՆ(*)

18-րդ դարու Ռուսաստանը տիպիկ գիւղատնտեսական երկիր մըն էր. բնակչութեան մեծամասնութիւնը գիւղացիներ էին, որոնք անձնական ազատութենէն զրկուած՝ կապուած էին հողին: Հողատէրեր էին պետութիւնը, կալուածատէրերն ու վանքերը. այդ պատճառով գիւղացիներն ալ բաժնուած էին երեք խումբի. պետական գիւղացիներ, կալուածատիրական, կամ պարզապէս նորտ գիւղացիներ եւ վանքապատկան գիւղացիներ: 1764-ին վանքապատկան հողերը դարձան պետական սեփականութիւն եւ յանձնուեցան կալուածավարական կոլլեգիային, որով վանքապատկան գիւղացիները կոչուեցան կալուածավարական գիւղացիներ: Բոլոր գիւղացի-

(*) Մեքէ մեր ուսումնասիրութեան Առաջին հատորին մէջ երբ հանգամանօրէն անդրադարձել եմք Ռուսիոյ տնտեսութեան եւ դատակարգային պայքարներու շուրջ, կրկնութեմէ խուսափելու համար այս անգամ պիտի բաւականանամք բոլորիկ ակնարկով: Տես Ա. հատոր, էջ 239-460:

ները պարտաւոր էին գլխահարկ վճարելու պետութեան: Ճորտ դիւղացիներէն գլխահարկ կը հաւաքէր կալուածատէրը՝ ինքը, որ իր ճորտերու տէրն ու տիրակալն էր: Կալուածներ ունենալու իրաւունքը բացառապէս ազնուականներուն էր վերապահուած, որոնք 18-րդ դարուն՝ Ռուսաստանի տիրապետող դասակարգը կը ներկայացնէին: Սակայն 18-րդ դարու սկիզբը Պետրոս Ա.ի թագաւորութեան ժամանակ (1689-1725) ազնուականները դեռ ազատ չէին, ինչպէս նաեւ մնացեալ բոլոր դասակարգերը. անոնք պարտաւոր էին ծառայելու ռազմական կամ քաղաքացիական գործերու, պարտականութիւն մը՝ որ զանոնք շատ կը նեղէր: Ճորտութեան բնոյթ կը կրէր նաեւ քաղաքի կամ աւանի բնակչութիւնը. անոնք եւս գլխահարկ վճարելու էին: Պետրոս Ա.ի օրով քաղաքի բնակչութիւնը պաշտօնապէս բաժնուած էր զանազան դասերու. վաճառականներ, արհեստաւորներ եւ սեւագործ բանուորներ. արհեստաւորներն ալ ստորարժանուած էին կիլիտերու՝ համբարութիւններու: Առանձնաշնորհեալ դասակարգը կազմողներն էին հոգեւորականները, որոնք պետութեան համար Աստուծոյ կ'աղօթէին եւ զերծ էին հարկերէ:

Ճորտատիրական Ռուսաստանը 18-րդ դարու սկիզբները տընտեսապէս յետամնաց երկիր էր, որովհետեւ կղզիացիներ էր միջագոյսին առեւտրական կեդրոններէն եւ Ատլանտեան օվկիանոսէն: Անհրաժեշտ էր իրեն համար ճամբայ բանալ դէպի ծովը: Ռուսաստանը հարուստ էր հում նիւթերով, որոնց պէտք ունէր Արեւմտեան Եւրոպան: Ամենամօտիկ ճամբան, որ Ռուսաստանը պիտի կապէր եւրոպական գնորդ պետութիւններուն, Բալթիկ ծովն էր, բայց ան ալ փակուած էր Լեհաստանի եւ Շուէտի հսկողութեամբ: Պետրոս Ա. առաջնորդուելով առեւտրական կապիտալի շահերով Շուէտի հետ պատերազմի բռնուեցաւ: Ասիկա հիւսիսային մեծ պատերազմն էր որ տեւեց 21 տարի (1700-1721) եւ ատով յաջողեցաւ ելքի ճամբայ բանալ դէպի Ֆինլանտայի Ռիկայի ծովածոցերը. իսկ յետոյ՝ նէվա գետին վրայ հիմնեց պետութեան նոր մայրաքաղաքը՝ Սէնթ Պետրսպուրկը:

Ռուսաստանի ներքին առուտուրը մասամբ կեդրոնացեր էր քաղաքներու մէջ, մասամբ ալ տօնավաճառներու մէջ:

ԱՐԳԻՒՆԱՅԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ռուսաստանը 18-րդ դարը թեւակոխած պահուն թոյլ չափով զարգացած արդիւնաբերութիւն ունէր: Արտադրութիւնը տնային բրնոյթ ունէր, քաղաքներու մէջ դերիշխող էր արհեստը, այսինքն՝ սպասարանքով աշխատելու ձեւը. կօշկակարը պատուէրի համաձայն կօշիկ կը կարէր, գերձակը նոյնպէս իրեն տրուած պատուէրի համա-

ձայն հաղուստ կը պատրաստէր: Պետրոս Ա.ի ժամանակ Պետրսպուրկի մէջ արդէն մէջտեղ եկած էին նոր արհեստանոցներ, ինչպէս կառք պատրաստողներ, թամբադործներ, կազմարարներ, ժամագործներ եւ այլն: Գիւղերու մէջ կը զարգանար գլխաւորապէս տնայնագործութիւնը, որովհետեւ գիւղացիները միմիայն իրենց հողագործութեամբ չէին կրնար իրենց բաւարար սնունդ հայթայթել եւ միեւնոյն ատեն պետութեան հարկ վճարել:

Արդիւնաբերական խոշոր ձեռնարկութիւններ սկսան 18-րդ դարու վերջերը երբ երեւան եկան ճորտային գործարաններ, եւ ազնուականական գործարաններ. առաջիններու վարիչներն էին առեւտրականները. ասոնք պետութեան թոյլտուութեամբ փախչող գիւղացիները, բանակէն արձակուած զինուորները, մուրացիկներն ու թափառաշրջիկներու ճորտի հանդամանքով կապեցին իրենց գործարաններուն, իսկ ազնուականները իրենց գործարանին համար արդէն պատրաստի աշխատաւորներ ունէին — գիւղացիները:

Արդիւնաբերական զարգացման համար Պետրոս Ա.ի ժամանակ շատ բարձր մաքսեր զրուեցան արտասահմանէն ներածուող այն ապրանքներուն վրայ, որոնց նմանը սկսեց էր արտադրուիլ Ռուսաստանի մէջ: Այդ շրջանին՝ երկու հարիւրէն աւելի գործարաններ կային Ռուսաստանի մէջ: Սկսեց էր կազմուիլ պրոլետարիատը:

ԿԱԼՈՒԱԾԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Կապիտալիզմի զարգացումն ու ազնուականներու պահանջի աճումը ուժեղ չափով անդրադարձան ճորտական տնտեսութեան վրայ: Դրամ պէտք էր յարաճուն պահանջները բաւարարելու համար: Կառավարական տնտեսավարութիւնը կու տար միայն ցորեն ու վարսակ, բայց ասոնք, ճանապարհներու վատ ըլլալուն հետեւանքով՝ արտածման ծախսերը չէին փակեր: Դրամ ստանալու նպատակով կալուածատէրերը կը կրճատէին սեփական վարուցանքը եւ դիւղացիներէն դրամական վարձք կը պահանջէին. ասոր հետեւանքով մէկ կողմէն տնայնագործական արտադրութիւնը կը զարգանար, միւս կողմէն գիւղացիները զոնէ ժամանակաւորապէս ուրիշ աշխատանքի կը դիմէին: Կալուածատէրերէն մէկ քանին սկսան իրենց տնտեսութիւնը արդիւնաբերական զիծի վրայ փոխադրել՝ զրազուելով ողելից ըմպելիքներու՝ մասնաւորապէս օղիի արտադրութեամբ: Այնպէս կը թուէր թէ ցորենի արտադրութիւնը երկրորդական կարգին անցնելու էր:

Սակայն 18-րդ դարու վերջերը Անգլիոյ մէջ արդիւնաբերական յեղաշրջման հետեւանքով ուժեղացաւ ռուսական ցորենի պահանջը: Այս հանդամանքը մեծապէս կալուածատէրերու աչքին՝ բարձրացուց

հարաւի եւ հարաւ-արեւելքի հողերու արժէքը: Սուրբ արժէք ստացաւ Սեւ Մովսէս Գրեկոսը՝ որովհետեւ այդ ծովու նաւահանգիստներու միջոցով կարելի էր կազմակերպել ցորենի վաճառքը: Այդ ատենները ուս ազնուականութիւնը ձեռնամուխ եղաւ իր անտեսութեան զարգացումին: Նեղուելով իրեն համար սահմանուած պարտադիր պաշտօնավարութենէն, հետզհետէ ծանրացնելով իր ազդեցութիւնը պետական ապրանքներու վրայ, վերջապէս 1762-ին, բոլորովին ազատուեցաւ այդ պարտաւարութիւններէն եւ սկսաւ յափշտակել պետական հողերը: Ազնուականութեան ճնշման տակ՝ Ռուսաստանը 18-րդ դարու ընթացքին մի քանի անգամ պատերազմ մղեց թուրքիոյ դէմ՝ Սեւ Մովսէս հիւսիսային ափունքներուն տիրանալու համար, եւ մեծ զոհեր տալով վերջապէս յաջողեցաւ զրաւել հարաւային մասը եւ հաստատուիլ Պրիմի մէջ: 1801-ին ալ զրաւեց Վրաստանը: Վրաստանի լեռնականներու առաջին ազդատամբութիւնը պայթեցաւ 1804-ին եւ անողորմար ճզմուեցաւ 1805 թուին: 19-րդ դարու առաջին քառորդին գիւղացիական ազդատամբութիւնները կրկնուեցան մի քանի անգամ, բայց բոլորն ալ անյաջող:

Ռուսական գաղութարարութիւնը արագացուց վրացական Ֆէոդալիզմի քայքայումը՝ նոյն ատեն անխախտ պահելով ճորտատիրական իրաւակարգը: Ռուսական իշխանութեան հաստատուելէն յետոյ՝ ազնուականներու կողմէ գիւղացիութեան շահագործումը ո՛չ միայն չմեղմացաւ, այլեւ աւելի ուժեղացաւ:

19-րդ դարու Բ. քառորդին, Աղէքսանդր Ա. ի եւ Նիկոլայ Ա. ի թագաւորութեան օրերուն, ցարական Ռուսաստանը՝ տարածելով իր իշխանութեան թևերը Անդրկովկասի մէջ, իր տիրապետութեան տակ առաւ նմանապէս Պարսկաստանի ենթակայ հայկական շրջաններու՝ Ղարաբաղի, Երևանի եւ Նախիջևանի իշխանութիւնները:

Եւրոպայի՝ մասնաւորապէս Անգլիոյ կողմէն ցորենի սաստիկ պահանջը պատճառ եղաւ ցորենի դինի անհամեմատ բարձրացման. ասոր վրայ կալուածատէրերը աւելի ընդարձակեցին վարուցանքի հողերը եւ աւելի սաստկացուցին գիւղացիներու անխիղճ շահագործումը՝ դուռ բանալով արիւնայի ապստամբութեանց:

ԱԶՆՈՒԱԿԱՆԱԿԱՆ ՌՈՒՍԻԱՆ

Ռուս ազնուականները 1762 թուին, երբ ազատագրուեցան պարտադիր ծառայութենէ (Մեծն Պետրոս զանոնք բաւական նեղ դրութեան մէջ դրած էր) հետզհետէ զրաւեցին պետական ապարատը. իրենց ուզած մարդն էր որ զահ կը բարձրացնէին: Անոնք ամենէն շատ իրաւունքներ ձեռք բերին Կատարինէ Բ. ի թագաւորութեան

օրերուն (1762-1796): Կատարինէի ամուսինը Պետրոս Գ. միայն մէկ տարի թագաւորեց (1761-1762) եւ սպաննուեցաւ: Այդ կիներ իր մուսնոյն սպաննութեան համար բնաւ սուղ չըբաւ, բաւական էր որ փառքով կը բազմէր ցարական գահին վրայ: Ասոր օրով պետութեան իրական ղեկավարն էր իշխան Պոտեմկինը, որ ուղեց շարք մը բարենորոգութիւններ մտցնել ազնուականներու շահերուն ու ցանկութիւններուն համաձայն: Նահանգները կառավարելու գործը յանձնուեցաւ նահանգապետներուն եւ ոստիկանապետներուն, իսկ այդ երկու կարեւոր պաշտօնները բացառապէս կը տրուէր ազնուականներուն: 1785-ին Կատարինէ ցարուհին մասնաւոր «չնորհազրով» հաստատեց ազնուականներու իրաւունքները. այսինքն՝ անոնք ազատ էին պետական պարտադիր ծառայութենէ, ազատ էին ամէն տեսակի տուրքերէ, ազատ էին դատական հետապնդումներէ եւ բացարձակ տէրն էին իրենց ճորտերուն:

Ազնուականներու կողմէ «Մեծ» յորջորջուած Կատարինէ Բ. ի դարը կը հանդիսանար ազնուականութեան տիրապետութեան ոսկեդարը:

Կատարինէի գահակալութեան շրջանը մեծ մասով պատերազմներով անցաւ, պատերազմներ՝ Լեհաստանի եւ թուրքիոյ դէմ: Լեհաստանի քաղաքական ինքնուրոյնութիւնը ոչնչացաւ 1772-1795-ի տարիներուն. այդ պետութիւնը բաժնուեցաւ Ռուսիոյ, Պրուսիոյ եւ Աւստրիայի միջեւ: Իսկ թրքական պատերազմները, որոնց ձեւական նպատակն էր Բալքանեան սլաները ազատագրել թրքական լուծէն, իրական նպատակը՝ Վուփորն ու Դարդանէլը զրաւելով իջնել Միջերկրական Մովր, ցորենի արտահանման ճամբան բանալու համար, Անգլիոյ ընդդիմադրութեամբ՝ երազուած արգիւնքը չտուին:

ՊՈՒԳԱԶՈՎԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Ճորտերու ատելութիւնը կալուածատէրերու դէմ հետզհետէ կ'ուժեղանար: Գիւղացիական խռովութիւնները անպակաս էին. յաճախակի տեղի կ'ունենային կալուածատէրերու սպաննութեան դէպքեր: Չափազանց մեծ ծաւալ ստացաւ մասսայական բնոյթ կրող գիւղացիներու փախուստը դէպի ծայրագաւառները: Փախչող գիւղացիները այդ տեղերու մէջ կը կազմէին խաղախներու միութիւններ եւ առանց ուղերու կը ծառայէին պետութեան գաղութարար ձգտումներուն:

Ազնուականական պետութեան հանդէպ նոյնքան խորունկ դայրոյթով լեցուած էին նաեւ ծայրագաւառներու մէջ ապրող ազդուութիւնները, որոնց հողերը զրաւուած էին եւ իրենք ինկած էին ցարական անհանդուրժելի լուծին տակ: Նոյնպէս ծայրայեղ ատելութեամբ

լեցուած էին Ուրալի լեռնային գործարաններու մէջ սովամահութեան զնով աշխատող բանուորները, որոնք բռնութեամբ կապուած էին այդ գործարաններուն եւ կտրուած էին իրենց ընտանիքներէն:

Այս բոլոր հանդամանքները վերին աստիճանի լարուած դրութիւն ստեղծեց էին թէ՛ բազկացուցիչ աղբուծիւններու եւ թէ՛ գիւղացիական-բանուորական շրջաններուն մէջ: Ահա այդ շրջանին էր, որ 1773-ին հրապարակ իջաւ Պուզաշովը՝ որպէս Պետրոս Գ. ցարը (որ արդէն սպաննուած էր նախորդ տարին իր կնոջ՝ Կատարինէի հրամանով): Պուզաշովը ամբողջ երկու տարի զարմանալի իր յաղթանակներով Ռուսիան առաւ սարսափի շղթաներու մէջ, բայց վերջ ի վերջոյ պարտուեցաւ, զոհ զնաց մատնութեան եւ 1775 թուին Մոսկուայի մէջ դատապարտուեցաւ մահուան:

Պուզաշովի ապստամբութեան անյաջողութեան պատճառները՝ ռազմական գործողութեանց ընթացքին իր կատարած սխալները չէին միայն, անոնց հետ կային ուրիշ կարեւոր պատճառներ ալ. շարժումը տարերային էր ու անկազմակերպ, անոր մէջ կար դասակարգերու խայտարակութիւնը. հոն մտած էին ընկերային տարրեր խմբաւորումներ — խազախներ, գիւղացիներ, գործարանային բանուորներ, որոնց շահերն ու շահերու կապուած նպատակները նոյն ուղեգծով համաձուլուած չէին: Ապստամբութիւնը անզերպանցելի արուեստ է, որ ունի իր որոշ նպատակը, իր գերիշխող ծրագիրը, որուն առջեւ կը շքանան խմբաւորումներու գատորոշուած շահերը: Եւ Պուզաշովի յարուցած ապստամբութիւնը այդ տեսակէն չէր. ահա թէ ինչո՞ւ ան ճգմուեցաւ կառավարութեան ուժով:

Բայց Պուզաշովի ապստամբութիւնը ապագայ յեղափոխական շարժման համար ծառայեց որպէս պատմական դաս:

ԺԸ. ԳԱՐՈՒ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

Պուզաշովեան շարժումը չկրցաւ փշրել ճորտատիրական լուծը, բայց 18-րդ դարու Ռուսաստանը, նոյն դարու վերջին քառորդին՝ Պետրոս Ա.ի Ռուսաստանին չէր նմաներ: Չարգացք էին կապիտալիզմի տարրերը, զգալի չափով մեծցեց էին քաղաքները: Արդիւնաբերութիւնը հսկայական քայլերով սկսեց էր յառաջդիմել: Ճապրեկաներու եւ գործարաններու թիւը հասեց էր երեք հազարի. այդ համեմատութեամբ կրնանք դիւրաւ ենթադրել թէ աճած էր նաեւ պրոլետարներու թիւը: Աճեց ու ծաւալեց էր նոյնպէս ներքին շուկան, մանաւանդ՝ երբ պետութիւնը 1754-ին, վերցուց ներքին մաքսերը:

18-րդ դարուն որոշ յառաջդիմութիւն կատարուեցաւ նաեւ

լուսաւորութեան ասպարէզին մէջ: Ազնուական վարժարաններէն եւ ուսումնարաններէն զատ՝ 1755-ին, Մոսկուայի մէջ հիմնուեցաւ առաջին ռուսական համալսարանը:

Արտասահմանէն Ռուսաստան սկսան թափանցել զանազան գիրքեր: Բուրժուազիայի եւ ազնուականութեան յառաջդիմական խաւերը հետզհետէ կը համոզուէին որ Ռուսաստանը պէտք է ընթանայ արեւմտեան պետութիւններու ուղիով:

ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Արդէն իսկ Կատարինէ Բ.ի հրախրած յանձնաժողովին մէջ ճառեր կ'արտասանուէին, որոնցով կը դրուատուէին Ադամ Սմիթի հետեւողութեամբ՝ առուտուրի ազատութիւնը: Բուրժուազիայի ամենափայլուն ներկայացուցիչներու թիւին կը պատկանէին ազնուականութեան առաջաւոր շերտերէն ելած երկու մարդիկ. անոնցմէ մէկն էր Ն. Նովիկովը (1744-1818): Նովիկով կը պայքարէր ճորտատիրական առանձնաշնորհումներու դէմ, հրատարակելով երգիծաբանական պարբերաթերթեր: Ան դրախանութ մը ունէր, ուր կը ծախէր իր գիրքերը եւ օտար լեզուներէ ռուսերէնի թարգմանուած գիրքերը: Ասկէ զատ ան անմիջական օգնութիւն ցոյց կու տար սովէն տառապող գիւղացիներուն: Իր գործունէութեան համար Նովիկով Շլիսէլպուրկի բերդին մէջ բանտարկութեան պատիժ ստացաւ, պատիժ մը՝ որ քայքայեց իր Ֆիզիքականը:

Բուրժուազիայի հայեացքներու միւս խոշոր ներկայացուցիչը Ա. Ն. Ռադիչչեւն էր (1748-1802), որ աւարտեց էր Լայպցիգի համալսարանը: Ռադիչչեւը իր ամբողջ կեանքով դրաղեցաւ դրական գործունէութեամբ: Անոր նշանաւոր գործերն են «Ազատութիւն» բանաստեղծութիւնը եւ «Ճանապարհորդութիւն Պետրսպուրկէն Մոսկուա»: Այս գործերու հեղինակը բուն յարձակում կը դործէր ցարական բռնակալութեան եւ ճորտատիրական առանձնաշնորհումներու դէմ: Իր արտայայտած յեղափոխական յանդուզն միտքերուն համար ձերբակալուեցաւ եւ աքտորուեցաւ Սիպերիա, ուր մնաց վեց տարի: Ազգկասնողը Ա.ի թագաւորութեան ժամանակ (1801-1825) Ռադիչչեւը ներում ստացաւ, սակայն, ան չուզեց հաշտուիլ զինքը շրջապատող իրականութեան հետ եւ անձնասպանութեամբ վերջ տուաւ իր կեանքին:

Այսպէս վերջացաւ ազատական բուրժուական գաղափարներու առաջին ընդհարումը՝ ճորտատիրական Ռուսաստանի հետ:

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԵԾ ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆԸ (1789-1795)

ԵՒ 1792-Ի ԿՈՄՈՒՆԱՆ

(Համառոտագրութիւն դէպքերու ժամանակագրական կարգով)

ԺԸ. դարու կիսուն, բացարձակ միապետութիւնը, որ ծնած էր Ֆէոդալիզմի քայքայումի ընթացքին եւ առանձինն էր որ կ'օժանդակէր վաճառականական կապիտալիզմին, ծծելով կենսունակութիւնը բոլոր դասակարգերուն՝ բացառելով իրեն նեցուկ եզոզ եկեղեցին եւ խոշոր հողատիրութիւնը, այժմ դէմ առ դէմ կը դանուէր նոր դասակարգի մը՝ բուրժուազիային:

Ֆրանսայի հողին մէկ հինգերորդը կը պատկանէր Թագաւորական Տան, մէկ հինգերորդը՝ եկեղեցիին, մէկ հինգերորդը՝ ազնուականութեան: Մեծ կալուածատէրերը երկրագործութեան համար ոչինչ կ'ընէին, անոնք միայն իրենց պատկանած վարձքերն ու պահանջները կը դանձէին եւ զանոնք կը սպառէին հաճոյքով: Մշակութիւնը — ինքնին խեղճուկ ու նախնական — կը կատարուէր գիւղացիներու ձեռքով, որոնք բնակչութեան մեծամասնութիւնը կը կազմէին: Անուանապէս, անոնցմէ շատերը ճորտ ըլլալէ դադարած էին, բայց անոնք որպէս «սեփականատէր», պարտաւոր էին իրենց կալուածատիրոջ եւ եկեղեցական լորտերուն վճարել ֆէոդալական տուրք, տասանորդ եւ գլխահարկ ու կապուած մնալու էին իրենց հողին: Միջին հաշուով՝ գիւղացին իր ստացած հարկը Ֆրանկին վաթսուն ֆրանկը վճարելու էր ի հաշիւ պարտական եղած տուրքին, տասանորդին եւ գլխահարկին: Ազնուականները միայն գլխահարկ կը վճարէին, մէկ հարկերորդը իրենց եկամուտին: Տարեկան հազարներ կը մեռնէին սովէն: 1700-էն մինչեւ 1715 թուականը մէկ միլիոն մարդիկ մեռան: Սոս օւտելը սովորական երեւոյթ էր դարձեր: Սեւ հաց եւ ջուրը՝ արքայական ճաշ էր:

Առևտուրը, արդիւնաբերութիւնը եւ տուրքի դրութիւնը իւրաքանչիւր թաղամասի մէջ ենթարկուած էին թագաւորի պաշտօնեային: Քաղաքներու մէջ արդիւնաբերութիւնը յառաջ կը տարուէր անային անասնութեամբ կամ փոքր գործատեղերու միջոցով, որոնք կիլիտերու-համբարներու կապուած էին եւ ենթակայ էին թագաւորի նախարարին կանոններուն: Մանուֆակտուրայի տէրերը արիւնաքամ տուրքերէն, խեղճուած պարտքերու մէջ եւ ճակատած թագաւորական նոր մոնոպոլի արժանացած գործատէրերու մրցումին, այլևս նոյն յարգանքը, նոյն նուիրուածութիւնը չունէին հանդէպ Արքունի-

քին: Նոր մանուֆակտուրայի տէրերը հաւասարապէս դժգոհ էին, որովհետեւ ենթարկուած էին թագաւորի կամայականութեան, չունէին իրենց ցանկացած ազատութիւնը:

Ամենահարուստ վաճառականն անգամ՝ կեցած էր նոյն հասարակաց դիժին վրայ, ուր որ կեցած էր ամենաղքատ գիւղացին. ասոնք բոլորը կը պատկանէին հասարակ ժողովուրդին: Հողերու կանութիւնն ու ազնուականութիւնը կը կազմէին իշխող դասակարգը, որուն թիւը կը հասնէր 250 հազարի, իսկ Ֆրանսայի բնակչութիւնը 18 միլիոն էր: Այս մասին Մարքս շատ իրաւամբ ըսած է հետեւեալը. — «Պարազիտներու այդ սարսափելի դասակարգը ճարպի նման պատած էր Ֆրանսայի հասարակութեան մարմինը, եւ զոցեր էր անոր ամէն մէկ ծակոտիկը»:

1750-էն ի վեր իրերը տաղնապալի կերպարանք առած էին: Վաճառականութիւնը կը ձգտէր ընդարձակել իր գործառնութիւնը, անոր հետ մանուֆակտուրայի տէրերը կ'ուզէին փշրել իրենց ձեռքերու շղթաները, մինչ անդին՝ անդլիական ապրանքները կ'ողողէին երկրի շուկան. մէկ կողմէն սովն էր, միւս կողմը՝ պետական սնանկութիւնը: 173 տարիներու ընթացքին առաջին անգամն էր որ կը դումարուէր պարլամենտը — Երեք Դասակարգերու Համագումարը: Թագաւորական արքունիքը դրամ կ'ուզէր. բուրժուազիան դեմոկրատական ազատութիւն եւ տուրքի դրութեան թեթեւացում կ'ուզէր, իսկ գիւղացիները կ'ուզէին ազատ հող եւ ֆէոդալական տուրքերու ջնջում:

Այժմ համառոտագրենք դէպքերը իրենց ժամանակագրական կարգով:

1789, Մայիս 5. — Կը դումարուի պարլամենտը. առանձնաշնորհեալ կարգերը կը պնդեն զայն հասարակ ժողովուրդէն անջատել «մինչեւ որ մենք սահմանադրութիւնը ձեւաւորենք»: 595 ներկայացուցիչներէն 365-ը փաստաբաններ էին, 179 պաշտօնակալներ, 30 վաճառականներ եւ 21 մշակողներ:

Յուլիս 11. — Թագաւորը կը հրաժարեցնէ դեմոկրատականօրէն ընտրուած Ֆինանսի նախարարը՝ Նէքքըրը: Երկիւղը կը սկսի: Բանուորները կը կազմակերպեն թագային խորհուրդներ. դէնք կը փնտտեն:

Յուլիս 13. — Թագապետական խորհուրդները կ'արշաւեն Դուինատունը, եւ պատգամաւորներէն կ'որոշեն մնալուն յանձնախումբեր Փարիզի 60 թաղամասերէն՝ որպէս միլիցիա, որ գործելու է թագապետական խորհուրդներու հսկողութեան տակ: Ամէն մէկ միլիցիական խումբ ունենալու է 800 քաղաքացիներ:

Յուլիս 14. — Թագապետական խորհուրդները կը զրաւեն 30 հազար հրացան, թնդանօթներ եւ սաղմամթերք: Զինուորները կը

մերժեն կրակ բանալ անոնց վրայ: Կը գրաւուի Բաստիլը — քաղաքական յանցաւորներու հռչակաւոր բանտը: Լաֆայէտի գլխաւորութեամբ կը կազմուի Ազգային Պահակազօրքը:

Յուլիս 15-31.— Գիւղացիները կ'այրեն զգետկները եւ կալուածամուրհակները:

Օգոստոս 4.— Ֆէոդալական պարտքերը «կը ջնջուին» միայն անուանապէս: Մարդկային իրաւունքներու Յայտարարութիւն. Ազատութիւն, Սեփականութիւն, Ապահովութիւն եւ ընդդիմադրութիւն՝ բռնութեան: Սեփականութիւնը որպէս «անբռնարարելի եւ նուիրական իրաւունք»: Մամուլի եւ խօսքի ազատութիւն, եւ այլն...:

Հոկտ. 5.— Մնունդի հարցը կը դժուարանայ. թղթադրամները անարժէք են. կիները ցոյց կը կազմակերպեն եւ հաց կը պահանջեն ու կը մտնեն պալատը. նոյնպէս կը պահանջեն որ թագաւորը վերսաշէն վերագառնայ Փարիզ:

Դեկտ. 14.— Թագապետական խորհուրդներ կը հիմնուին ամբողջ Ֆրանսայի մէջ: Եկեղեցական կալուածները կը գրաւուին:

1790.— Հողեւորականութիւնը պետութեան հաւատարիմ մընալու երզում կ'ընէ: Կը ներմուծուի երզուեակներու դատաւարութեան սխտէժը: Բաստիլի առումի տարեդարձին՝ թագաւորը կ'երզնու հաւատարիմ մնալ սահմանադրութեան: Կրօնական ապստամբութիւն:

1791.— Սահմանադրութիւնը թագաւորին կու տայ միայն վետոյի եւ գործադիր իշխանութեան սահմանափակ իրաւունք, բայց բանուորներուն համար կը մերժէ Ազգային Ժողովին մէջ ներկայացուցիչներ ունենալու իրաւունքը: Յետադիմական շարժումը կը սկսի: Բուրժուազիան կ'ահաբեկի բանուորական կազմակերպութիւններէն, զանոնք ճգմելու փորձերը կը ձախողին: Հրովարտակով կը յայտարարուի որ գիւղացիները Ֆէոդալական պարտքերը վճարելու են. գիւղացիական ապստամբութիւններ: Տնտեսական դրութիւնը յուսահատական: Խռովութիւններ՝ հացի շուրջ: Ֆինանսի նախարարը կը փախչի:

1792.— Պրուսիա իր գաշնակիցներով պատերազմ կը յայտարարէ Ֆրանսայի դէմ: Միջամտութեան եւ յեղափոխութեան պատերազմներու շրջանը կը սկսի:

Օգոստոս 3.— Քառասուն երեք հատուածները կը պահանջեն որ թագաւորը դահընկեց ըլլայ:

Օգոստոս 10.— Փարիզի Կոմունան:

Սեպտեմբեր.— Յեղափոխական բանակները յաղթական վարժի մէջ:

1793, Յունուար.— Լուի ԺԶ. կը գլխատուի:

Փետրուար.— Բրիտանիա եւ Հոլանտա կը միանան գաշնակիցներուն՝ ընդդէմ Ֆրանսայի: Ազգային Ժողովը պատերազմ կը յայտարարէ բոլորին դէմ:

Մարտ 10.— Ժիրոնիստներու նախարարութիւնը Յեղափոխական Ատեն կը հաստատէ. մահապատիժ անոնց համար, որոնք գրքուած օրէնքներուն դէմ կը դաւադրեն. իսկ գրուած օրէնքներու հիմքըն էր սեփականատիրութեան պահպանում: Ասով Փարիզի Կոմունան կ'իյնար հակասական գիրքի մէջ:

Զինուորական պարտութիւն:

Մայիս 18.— Ազգային Ժողովը կը փորձէ ճգմել Կոմունան եւ յետոյ՝ կը ձերբակալէ բանուորներու առաջնորդ Հէպըրտը: Ազգային Ժողովը կ'անցնի Ժագորինեաններուն ձեռքը:

Յուլիս.— Մարտա, «Ժողովուրդի բարեկամը» եւ Ժագոպինեաններու առաջնորդը կը սպանուի Շարլոզ Կորաէյի ձեռքով:

1793-ի Ապրիլէն 1794 Յուլիս.— Տէնօրի ախրապետութեան շրջանը. Ժագոպինեանները եւ Ռոպէսպիէր:

Մարտ, 1794.— Նոյնիսկ «Զախակողմեան» Ժագոպինեանները կը վախնային բանուորներու իշխանութենէն եւ անոնց առաջնորդ Հէրբէտէն: Կոմունան արգիլուեցաւ եւ Հէրբէտը գլխատուեցաւ: Ռոպէսպիէրը գլխատել աուաւ նաեւ Գանտոնը:

Յուլիս 27.— (Տէրմիտորի 9-րդ օրը) Ռոպէսպիէրը կը զըլխատուի: Հանրապետական բանակները յաղթական: Յետադիմական շրջան:

Ներքին պայքարներ.— 1789-էն 1795-ի տարիները ցոյց կու տան որ յեղափոխութեան ընթացքին Ֆէոդալական սխտէժը անցած է պատմութեան կարգը եւ երեւան եկած է նոր դասակարգը, — բուրժուազիան, որ կեցած է Ժողովուրդի դէմ, բանուորութեան շահերուն հակառակ: Բանուորներու ուժով յաղթական բուրժուազիան, այժմ անցեր է բանուորութեան անհաշտ թշնամիի դերին մէջ:

Բուրժուական յեղափոխութենէն վերջն էր որ իւտոպիական սոցիալիստները երեւան եկան, որոնք սկսան քարոզել թէ՛ իրական ազատութիւն, հաւասարութիւն ու եղբայրութիւն կը հաստատուի այն ատեն երբ արտադրութիւնը կը կազմակերպուի ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան սկզբունքով:

Գ Լ ՈՒ Խ Գ .

Ֆ Ի Ա Ն Ս Ա Կ Ա Ն
Մ Ե Ծ Յ Ե Ղ Ա Փ ՈՒ Թ Ի Թ Ի Ի Ն Ը

Յ Ե Ղ Ա Փ ՈՒ Թ Ի Թ Ի Ի Ն Ա Ն Խ ՈՒ Ս Ա Փ Ե Լ Ի ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Նախագիտելիքներու առաջին էջին վրայ մենք պարզեցինք արդէն Ֆրանսայի ԺԸ. դարու ներքին խռովայոյց դրութիւնը: Ընթերցողին յիշողութիւնը թարմացնելու համար անմիջապէս աւելցնենք որ Ֆրանսան բաժնուած էր դասերու: Առաջին դասը կազմուած էր արքունիքի անդամներէն — արքունականներէն, բարձրաստիճան հոգեւորականներէն եւ ասոնց կապուած մեծահարուստ վաճառականներէն: Երկրորդ դասը կազմուած էր առեւտրականներէն, մանուֆակտուրայի տէրերէն ու մանր հողատէրերէն: Երրորդ դասը կազմուած էր հասարակ ժողովուրդէն, որուն մէջ կը մտնէին արհեստաւորները, աշխատաւորները, եւ զիւղացիները: Այս երրորդ դասին մէջ սկսեք էր յեղափոխական լարուած տրամադրութիւն մը, որ դարձեւ էր իրապէս սպանական՝ իրերու վատթարացման հետեւանքով:

Տագնապալի պայմաններու ներքեւ 1789, Մայիս 5-ին արքայանիստ Վէրսայի մէջ գումարուեցաւ դասերու զլխաւոր ժողովը:

Առաջին հանդիսաւոր նիստի բովանդակ տեւողութեան, թագաւորին եւ նախարարներու ճառերը եկան ընդգծելու արքունիքի արհամարհական վերաբերմունքը՝ դէպի երրորդ դասը՝ հասարակ ժողովուրդը: Նորութիւններ ներմուծել ուղղորդելու հասցէին ուղղուեցան սպանալիքներ: Թագաւորը՝ Լուզովիլոս ԺՁ. յոխորդազին յայտարարեց. «Ի՞նչ, պարոնայք, պէտք է զայրոյթով մերժէք այդ վտանգաւոր նորութիւնները»: Ասով յայտնի էր, որ պալատական շրջաններուն մէջ որոշուած էր վերջ տալ երրորդ դասի լարուածութեան եւ պահպանել հին՝ բռնապետական կարգերը:

Բայց հասարակ ժողովուրդը՝ այդ երրորդ դասը, կատակերգութիւն խաղալու միտք չունէր: Ան պատրաստուած էր յեղափոխութեան: Յունիս 17-ին անիկա յայտարարեց որ ինք Ազգային մարմին է, իսկ անմիջապէս յետոյ՝ հրաւիրեց Հիմնադիր ժողովը եւ առաջարկեց միւս երկու դասերու պատգամաւորներուն՝ միանալ իրեն: Կառավարութիւնը փութով շարք մը միջոցներու զիմեց արդիւնելու Ազգային ժողովի նիստերը: Յունիս 20-ին, երրորդ դասու պատգա-

մաւորները՝ երկրի յարաճուն յեղափոխական տրամադրութենէն քաջալերուած՝ ուրիշ ժողովատեղի չունենալով՝ հաւաքուեցան գնդակախաղի դահլիճին մէջ եւ հոն երգում ըրին չցրուիլ մինչեւ սահմանադրութիւն մշակելը: Ժողովրդական ամբոխները խանդավառութեամբ կը դիմաւորէին երրորդ դասու պատգամաւորները: Թագաւորը ուղեց այդ ժողովը ցրուել. յատուկ լիազօր մը զրկեց հոն: Լիազօրուած պաշտօնեան դահլիճէն ներս մտածին պէս սպանացող ձայնով յանդիմանեց ժողովականները եւ զոչեց. — «Ձեզ յայտնի է թագաւորին կամքը, ես՝ թագաւորի կամքով Ձեզի կը հրամայեմ անմիջապէս ցրուիլ»: Միւս օր, երրորդ դասու ներկայացուցիչը, զուսպ կատաղութեամբ չուշացաւ անոր տալ հետեւեալ պատասխանը. — «Մենք այստեղ հաւաքուած ենք ժողովուրդի կամքով եւ որոշած ենք ո՛չ մէկ պարագայի տակ չցրուիլ՝ մինչեւ լրացնենք մեր աշխատանքը: Միայն սուրիններու ուժն է որ պիտի կրնայ ցրուել մեզ, բայց ասոր հետեւանքն ալ ոչ ոք կրնայ այժմէն զուշակել: Յայտնեցէք այս այն մարդուն՝ որ ձեզ որպէս պատգամախօս՝ զրկեք է այստեղ»:

Այդօրինակ հաստատակամութիւնը ինչպէս եւ հրամայական եղանակը կը բղթէին այն համոզումէն, որ յեղափոխութիւնը արդէն սկսեք էր եւ այդ յեղափոխութիւնը պատրաստուած էր վերջին եւ վճռական կռիւի բռնուելու հին աշխարհին հետ:

Յ Ե Ղ Ա Փ ՈՒ Թ Ի Թ Ի Ի Ն Ը Փ Ա Ր Ի Ձ Ի Ե Ի Գ Ա Ի Ա Ռ Ն Ե Ր ՈՒ Մ Ե Ձ

Փարիզը վերածուեցաւ յեղափոխութիւնը կազմակերպող կեդրոնի: Իշխան Օրլէանցիի պալատին կից Պալէ Ռոյալ այդին Փարիզի բնակչութեան համար դարձաւ շարունակական հաւաքոյթներու վայր: Յեղափոխական գործունէութեան մասին նախապատրաստութեան հրահանգներն ու ամէն կարգի լուրերը այստեղէն ծագում կ'առնէին ու կը տարածուէին դարմանալի արագութեամբ, մինչդեռ կառավարութիւնը արտաքուստ որպէս թէ անտեղեակ իրադարձութիւններէն, միջոցներ չէր ձեռք առներ ցրուելու Հիմնադիր ժողովը, սակայն աննկատելիօրէն զօրքեր կը հաւաքէր եւ կը պատրաստուէր յեղափոխութիւնը խեղդելու համար:

Յունիս 11-ին, թագաւորը պաշտօնազուրկ ըրաւ Նեկկերը՝ Ֆինանսի նախարարը: Յուլիս 12-ին, Փարիզը ապստամբեցաւ: Ժողովրդական մասսաները արուարձաններէն յառաջացան քաղաքի կեդրոնը: Ամբոխը յարձակեցաւ զէնքերու պահեստանոցին վրայ ու տակն ու վրայ ըրաւ դայն, սպա քանդեցին քաղաքի ուղեփակները, ուր մաքսեր կը գանձուէին: Յուլիս 14-ին ամբոխը ուղղուեցաւ դէ-

պի Բաստիլ, որ կը ծառայէր որպէս բանտ՝ յեղափոխականներու համար: Զինուորները միացան ապստամբներուն, որոնք զրաւեցին Բաստիլը, ազատեցին բանտարկեալները եւ քար ու քանդ ըրին այդ բերդը:

Այդ օրերուն, խոշոր բուրժուազիան՝ ինքնապաշտպանութեան նպատակով եւ ժողովրդական շարժումէն ահաբեկ՝ Փարիզի մէջ կազմակերպեց կոմունան՝ քաղաքային ինքնավարութեան մարմին մը՝ բուրժուական կազմով: Հին ոէժիմին ծառայող վարձուած զինուորները հեռացուեցան: Նեկկերը վերստին պաշտօնի կոչեցին:

Փարիզի փողոցները զրաւուած էին զինուած գունդերով: Ժողովուրդը ցատումով լի՝ իր ձեռքով դատաստան կ'ընէր ու կը պատժէր իշխանութեան ներկայացուցիչներն ու գործակալները:

1789-ի Հոկտեմբեր 5-ին, Փարիզի անօթի բանուորները իրենց կիներուն հետ գացին Վերսալլ եւ ստիպեցին որ թագաւորը հիմնադիր ժողովի հետ փոխադրուի Փարիզ: Անոնք կը կարծէին թէ երբ թագաւորը Փարիզ տեղափոխուի, հակայեղափոխական ելոյթները կը վերջանան եւ աւելի աժան ցորեն կը ներմուծուի քաղաք:

Յեղափոխական շարժումը անցաւ դաւանները, գիւղերը. թագաւորի կառավարութեան յենարանները խորտակուած էին. այլև յեղափոխութեան դէմ կռուող ուժեր չէին մնացեր: Բուրժուազիան ամենուրեք կը կազմէր իր զօրագունդերը: Քաղաքներու մէջ կը հիմնուէին նոր իշխանութեան մարմիններ, մշտական կոմիտէներ, զորս կը ղեկավարէին միլիցան, ազգային զօրագունդը եւ կը վարէին այն բոլոր գործերը, որոնք կը վերաբերէին խաղաղութեան եւ պարենաւորման ճիւղերուն:

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ

Գիւղացիական շարժումը լայն չափերու էր հասեր: Այդ շարժումը կ'ուղղուէր դէպի քաղաքները եւ տաղնապի կը մատնէր բուրժուազիան: Լիոն, Տրուա եւ Շալոն քաղաքներու բուրժուազիան ազգային զօրագունդը շարժման մէջ կը դնէր ճնշելու գիւղացիական նորակազմ կառավարութիւնները: Գիւղացիները կ'ոչնչացնէին քաղաքային ուղեփակները՝ ուր ներմուծուող ապրանքներէն մաքսեր կը վանձուէին, կ'աւերէին ազնուականներու կալուածները, Ֆէոդալական բերդերը, կը վառէին բերքերը, կը սպաննէին անասունները, խկ երբեմն ալ՝ իրենց կալուածատէրերը: 1789-ի Յուլիսի կէսը նշանաւոր է այն բանով, որ գիւղացիական ապստամբութիւնը տարածուած էր ամենուրեք:

Գիւղացիական շարժումը յեղափոխութիւն չէր, այլ թալան, աւազակութիւն, աւերածութիւն եւ հրդեհում. ան չէր խնայեր ո'չ բուրժուա հողատէրերուն, ո'չ ազարակներու վարձակալներուն, ո'չ վանքերուն, ո'չ ալ հոգևորականներուն:

Գիւղացիական շարժումը ընդգրկեց ամբողջ Ֆրանսան: Առանձին սաստկութեամբ ան պայթեցաւ արեւելեան շրջաններուն մէջ: Հիմնադիր ժողովը, որ այնքան մեծ ուշադրութիւն կու տար քաղաքական խնդիրներուն, չափազանց յուզուած էր. չէ՞ որ այնտեղ նրստած էր կալուածատէր պատգամաւորներու ամբողջ կէսը: Ահա թէ ինչո՞ւ իրենք կալուածատէրերը Օդոստոս 4-ի գիշերուայ նիստին աճապարեցին հրաժարիլ իրենց Ֆէոդալական իրաւունքներէն եւ բոլոր Ֆրանսացիներու համար սահմանեցին հաւասարութիւն: Բայց այդ յայտարարութիւնը գիւղացիներու օգտին չէր ծառայէր: Օդոստոս 11-ին հրապարակուեցաւ հրովարտակ մը, որ գիւղացիները կը դնէր 29 տարիներու անվճար պարտքերու անյապաղ վճարման հարկադրանքին տակ: 1789 թուի Օդոստոս 11-ի եւ 1790 թուի Մարտ 15-ի հրամանագրերը աւելի խթանեցին գիւղացիական շարժման սաստկութիւնը: Կալուածատէրերէն ոմանք փախան ու ապստամբեցան քաղաքները, ուրիշներ անցան արտասահման:

ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԳՆՈՒԽ

Բուրժուազիան, անցնելով իշխանութեան գլուխը ամէն կերպով աշխատեցաւ պետութիւնը ազատել Ֆրանսական քառակն: Այդ նպատակին հասնելու համար լուծուեցաւ եկեղեցական կալուածներու ազգայնացման հարցը: Ազգայնացում ըսելով պիտի հասկնանք պետականացում: Եկեղեցական անշարժ կալուածներու ազգայնացումով հրապարակ ելան թղթագրամներ, որոնք շրջանառութեան մէջ կ'ընդունուէին որպէս հնչուն դրամ: Մօտաւոր հաշուով երկրի հողերու 20 տոկոսը անցաւ պետութեան ձեռքը, եւ պետութիւնը սկսաւ այդ հողերը խոշոր մասերով վաճառքի հանել՝ անոնց արժէքը մաս առ մաս վճարելու կարճ ժամկէտներ նշանակելով: Այդ պայմաններու հետեւանքով հողը կ'անցնէր քաղաքային եւ գիւղական (կուլակային) բուրժուազիայի եւ շահադէտներու ձեռքը: Գիւղի չքաւոր ու միջակ շերտերը, գիւղացիութեան լայն մասսաները, ի հարկէ, չէին կրնար օգտուիլ այդ օրինականացումէն: Այս եղանակով բուրժուազիան, յանուն «սրբազան» սեփականութեան մաքուր եւ անսասան պահպանման՝ եկաւ արդարացնել եկեղեցական հողերու զրաւումը իր օգտին: Առով շահագործման սխառէմը կը փոխուէր, բայց իր բնոյթը կը մնար նոյն ուղեղով զբաղ:

ԻՐԱՆՈՒՆՔՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ
1791 ԹՈՒԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հիմնադիր ժողովի «Մարզու եւ քաղաքացիի իրաւունքներու յայտարարութիւնը» եւ 1791-ի սահմանադրութիւնը այդ շրջանի բուրժուական ոգին կը պատկերացնեն: Այդ «յայտարարութիւնը» կը ծանուցանէր Ֆէոդալական կարգերու վերացումը, իսկ սահմանադրութիւնը կը հաստատէր Ֆրանսայի մէջ մէկ պայտտով սահմանադրական միապետութիւն: Բուրժուազիան ոչնչացուց դասերը, արտօնութիւնները, տիրապետները, վերջուց նէկրոններու ստրկութիւնը, հրեաներու, բողոքականներու համար սահմանուած ճնշումները եւ հաստատեց երզուեալ ատենակալներու դատարան եւ հրապարակային դատավարութիւն: Թագաւորը եւ անոր կողմէն նշանակուած նախարարները կը համարուէին գործադիր իշխանութիւն, իսկ օրէնսդրական իշխանութիւնը կը պատկանէր ժողովրդական ներկայացուցիչներու պալատին — Օրէնսդիր ժողովին: Թագաւորը վետոյի իրաւունք ունէր, բայց այդ իրաւունքը կը ջնջուէր եթէ երկու անգամ փոխուած օրէնսդիր ժողովները պնդէին իրենց նախկին որոշման վրայ: Բիւրոկրատական հին սպարափոխութիւնը գաւառներու մէջ հաստատուեցաւ ինքնավարութիւն: Ֆրանսան բաժնուեցաւ 83 ինքնավար մասերու, որոնք կը կոչուէին գետերու, լեռներու եւ այլ անուններով: Անուղղակի հարկերու եւ կապալներու սխտէժը վերացուեցաւ եւ ուղղակի հարկ դրուեցաւ հողի, տուներու եւ ձեռնարկութիւններու համար:

1789-ի յայտարարութիւնը աւելի արմատական էր, քան թէ 1791-ի սահմանադրութիւնը: Առաջինը պարտաւորիչ բնոյթ չունէր, մինչ երկրորդը՝ 1791-ի սահմանադրութիւնը իրաւական որոշ կանոններ սահմանող օրէնք մըն էր: Բուրժուազիան 1789 թուականի փորձէն դաս առած՝ կ'աշխատէր ամբացնել իր դիրքը եւ միջոցներ ձեռք առնել յեղափոխական ժողովուրդի դէմ:

Համաձայն 1791-ի սահմանադրութեան՝ քաղաքացիները կը բաժնուէին երկու մասի. գործունեաներ եւ անպէտքներ: Ընտրական իրաւունքի կը մասնակցէին միայն գործունեայ քաղաքացիները (արական սեռէ 25 տարեկան եղողները), երկար ատեն նոյն տեղւոյն մէջ բնակողները եւ երեք օրուայ աշխատավարձի չափ ուղղակի հարկ վճարողները: Իսկ պատգամաւոր կրնային ընտրուիլ միայն անոնք՝ որոնք 50 Ֆրանկէն աւելի հարկ կը վճարէին եւ անշարժ կալուածքի տէր էին: Չուր տեղը չէր որ Հիմնադիր ժողովի անդամներէն մին ըսած էր. «Ով որ սեփականութիւն մը չունի, հասարակութեան անդամ չէ. կառավարութիւնն ու օրէնսդրութիւնը սեփականատէրերու հետ գործ ունին»:

Մինչդեռ 1789-ի յայտարարութիւնը կը պնդէր թէ՛ «բոլոր քաղաքացիները իրաւունք ունին իրենց ներկայացուցիչներու միջոցով մասնակցիլ օրէնքներու հրատարակման գործին եւ ճնշումներուն դէմ բողոքել ու դիմադրել»: Այժմ, սակայն, բուրժուազիան կու դարձազմական ուժով ճնշել ամէն մէկ բողոք ու դիմադրութիւն: Մաքսիմիլիան Ռոբեսպիէրը՝ յեղափոխութեան յետագայ առաջնորդը, իրաւունք ունէր ըսելու. «Ատիկա զեմոկրատի չէ, այլ արիստոկրատիա, բոլոր տեսակներէն ամենասանտանէին, հարուստներու արիստոկրատիա, եւ ահա այդ արիստոկրատիայի լուծին տակ դուք կ'ուզէք դնել ժողովուրդը, որ նոր է ազատագրուած Ֆէոդալական արիստոկրատիայի լուծէն»:

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հիմնադիր ժողովի օրէնսդրական ձեռնարկութիւններէն այնպէս կ'երեւէր որ խոշոր բուրժուազիան կը վախնար ապստամբ ժողովուրդէն եւ ահա՛ բանուորական օրէնսդրութիւնը: 1790-ի գարնան, բանուորները երբ իրենց անգոհացուցիչ աշխատավարձերու յաւելման պահանջ դրին գործատէրերէն եւ դիմեցին գործադուլի, բուրժուազիան նախ խոստումներով զրադեցուց զանոնք, ապա 1791 Յուլիս 14-ին հրապարակեց նոր օրէնք մը, որ կ'արդիւյէր ամէն տեսակի բանուորական միութիւններ եւ գործադուլներ, հակառակ պարագային՝ օրէնքին անսաստոցներու կը սահմանէր տուգանք եւ բանտարկութիւն: Եւ այդ օրէնքը ի գորու մնաց Ֆրանսայի մէջ մինչեւ 1864 թուականը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱԿՈՒՄԲՆԵՐԸ

Այդ ատենները կուսակցութիւններ իրենց ուրոյն ծրագիրներով ու կանոնադրութիւններով գոյութիւն չունէին: Քաղաքական հոսանքներու միջեւ կը նշմարուէին բացարձակ միապետութեան (հին թագաւորականները), երկպալատանի սխտէժով չափաւոր միապետութեան եւ մէկ պալատականի՝ Սահմանադրական միապետութեան կողմնակիցները: Հիմնադիր ժողովի ժամանակաշրջանին համեմատաբար թոյլ չափով կը ներկայանային չքաւորութեան շահերը պաշտպանող խմբաւորումներ: Քաղաքական խնդիրները քննելու համար պատգամաւորներն ու իրենց համախոհները նախապէս կը հաւաքուէին ակումբներու մէջ (ասոնք քաղաքական ընկերութիւններ էին), որոնք խոշոր դեր կը կատարէին յեղափոխական եւ հակալեզափոխական ուժերը կազմակերպելու գործին մէջ:

Ամենամեծ հռչակը կը վայելէր «Սահմանադրութեան Բարեկամներու Ընկերութեան Ակումբը», որ հիմնուած էր 1791-ի Փետրուարին: Անոր ժողովները տեղի կ'ունենային Փարիզի Յակօրինեան վանքին մէջ, ուրիշ առաւ ան Յեղափոխական Ակումբ անունը: Իր գոյութեան առաջին շրջանին, Յակօրինեան ակումբը Սահմանադրական միապետութեան կողմն էր, սակայն յեղափոխութեան զարգացման ընթացքին հոն զերիշխող զարձան դեմոկրատ-հանրապետականները, որոնք յետոյ ակումբէն վճռուեցին բոլոր միապետականները: Ասոնք կ'արտայայտէին մանր բուրժուազիայի տրամադրութիւնը:

1791-ի Հոկտեմբեր 12-էն սկսած այս ակումբը իր նիստերը դռնբաց յայտարարեց իսկ 1792ի Սեպտեմբերին պաշտօնապէս զարձաւ Յակօրինեաններու Ազատութեան եւ Հաւասարութեան Ընկերութիւն: Այդ ակումբը դաւաճներու մէջ ունէր բազմաթիւ մասնաճիւղերու ցանց մը, որոնք կեդրոնի տուած հրահանգները կը կատարէին հաւատարմօրէն: Յակօրինեաններու ականաւոր առաջնորդն էր փաստաբան Մաքսիմիլիան Ռոպէսփիէր (1758-1794):

Յակօրինեան Ակումբէն դուրս նետուած սահմանադրականներն ու չափաւոր միապետականները կազմեցին իրենց ընկերութիւնը 1789 թուի Ակումբը Ֆէյխաններու վանքի շէնքին մէջ. սակէ առին իրենց անունը — Ֆէյխաններ: Ասոնց ծրագիրն էր ուժեղացնել ճնշող միջոցները յեղափոխական ելոյթներու դէմ:

Մեծ ժողովրդականութիւն կը վայելէր Կորդելլերներու Ակումբը, որու շուրջը հաւաքուած էին դեմոկրատիայի տարրեր խումբերը: Այդ Ակումբը կը պաշտպանէր «մարդու եւ քաղաքացիի իրաւունքները», «չեզոքացուած քաղաքացիներու շահերը»: Յետագային, Յակօրինեաններու զիկտատուրայի շրջանին, այդ Ակումբը Հեքերտիստներու պաշտօնատեղին զարձաւ: 1794-ի զարնան՝ սպաստմբական անյաջող փորձէ մը յետոյ՝ շքացաւ: Կորդելլերներու ազդեցիկ անդամներն էին փաստաբան Դանտոն (1749-1774) Կամիլ Դէմուլէն (1760-1794), Բժիշկ Մարա (1744-1793) եւ լրագրող Հերեր (1757-1794):

ԱՐՔՈՒՆԻՔԻ ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ, ՀԱԿԱՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Սոչոր բուրժուազիան, որ հին կարգերու դէմ պայքարած ատեն դիմեց ժողովրդական մասսաներուն եւ անոնց ուժով իշխանութեան զլուխն անցաւ, յեղափոխութեան ծաւալման վախէն, սկսաւ նոյն մասսաներուն դէմ պայքարիլ եւ նոյնիսկ կանգ չառաւ ճնշիչ

միջոցներու դիմել եւ դաշինք կնքել միապետութեան հետ: Հիմնադիր ժողովը անհանդիստ չէր ըլլար թագաւորին եւ արքունիքին բացորոշ հակադիմադրական գործունէութենէն, որքան ժողովրդական յեղափոխութեան զարգացումէն:

Յեղափոխութիւնը հրապարակ հանեց իր առաջնորդները: Յեղափոխութեան ամենախոշոր տրիրուններէն մին էր Մարատը, հին կարգերու այդ կատաղի թշնամին, «ժողովուրդի բարեկամը», որ ունեւոր դասակարգերու շահերուն կը հակադրէր շքաւոր խաւերու շահերը: Ընդ յատակեայ անդուլ աշխատանք կատարող, բուրժուազիայի ամենատեսլի մարդը, յեղափոխութեան անձնուրաց զինուոր Մարատը շարունակ կը զգուշացնէր, որ արքունիքի մէջ հակադիմադրական դաւադրութիւններ կը պատրաստուին, որ թագաւորը կըրնայ փախչիլ արտասահման, ուր այդ ատենները կը հաւաքուէին ու կը կեդրոնանային Փրանսական փախստական զաղթականները թագաւորին եղբայրները, իշխանները, տիտղոսաւոր աղնուականները, զօրավարները, բարձրաստիճան հոգեւորականները եւ յեղափոխութենէն փախչող սպանները: Եւ Մարատի զգուշացումները անհիմն չէին: 1791-ի Յունիսին, թագաւորական ընտանիքը փորձեց փախչիլ արտասահման, սակայն ճանապարհին, Վարեն անուն փոքրիկ քաղաքին մէջ Լուդովիկոսը ճանչցան եւ զայն ամօթահար ու զլխիկոր վերադարձուցին Փարիզ:

Երբ բանուորներն ու մանր-բուրժուական տարրերը պահանջեցին տապալել փախստական թագաւորը, որ մտադրած էր դաւաճաններու եւ օտարականներու օգնութեամբ արեան մէջ խեղդելու Ֆրանսան — Հիմնադիր ժողովը այդ պահանջին պատասխանեց մերժումով. «Լուդովիկոս ժՁ. թագաւորը չէ փախեր, — պատասխանեց ժողովը, — այլ դաւադրական միջոցներով առեւանգեր են»: Բայց այդ փաստը համոզեցուցիչ չէր: Կորդելլերներու նախաձեռնութեամբ 1791-ի Յուլիս 17-ին, Մարսեան դաշտին մէջ ցոյց մը կազմակերպուեցաւ, ուր հազարաւոր մարդոց ստորագրութեամբ խնդրագիր մը մշակուեցաւ թագաւորը դատի ենթարկելու համար: Զինու զօրութեամբ ցոյցը ցրուեցաւ: Լաֆայէզի հրամանատարութեամբ՝ ազգային պահակազօրքը հրացաններով յարձակեցաւ անդէն ցուցարարներու վրայ: Քանինք սպաննուեցան, ցուցարարները փախան:

Թագաւորական պալատը հակադիմադրական դաւադրութիւններու կեդրոնատեղի էր զարձեր: Հին կարգերը վերականգնելու անյաջող փորձերէն եւ թագաւորի վիժած փախուստէն յետոյ, յայտնի էր որ միակն ելքի ճամբայ մը մնացեր էր, այն է՝ վերջնականապէս հրաժարիլ հին կարգերէն. մանաւանդ որ խոշոր բուրժուազիան ամէն կերպով կ'աշխատէր քաղաքականապէս հաշտ ապրիլ թագաւոր

րական իշխանութեան հետ: Անոր ղեկավարները — Միրարօ, Բալլի, Լաֆայետ, Բարնոլ և ուրիշներ — որպէս «արքայական դեմոկրատիայի» կողմնակիցներ, մի քանի անգամ փրկած էին թագաւորի և անոր կնոջ կեանքը յեղափոխական ամբոխի ձեռքէն. այժմ անոնք Լոանդուն պալատը կը մղէին մամուլով՝ սահմանադրական միապետութեան գաղափարը ժողովրդականացնելու համար:

ՀԱԿԱՅ ԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒ ԳԱՂՈՒԹՐ

Սակայն, թագաւորը՝ ազնուական և եկեղեցական շրջանակներու ճնշման տակ՝ յամառօրէն կը շարունակէր իր քաղաքականութիւնը, իր յոյսը դրած՝ հակայեղափոխական դադուքին վրայ, որուն թիւը օրէ օր կը կրկնապատուէր Կոպլէնցի, Վորմսի, Էտտէնհայմի, Տոսրինի և այլ գերմանական քաղաքներու մէջ, օրական միջին հաշուով 80-100 հոգի: 1791-ի վերջերը Կոպլէնցի մէջ դադթողներու թիւը հասաւ 20,000-ի: Այստեղ փախստականները ղինուորական ջոկատներ կազմակերպեցին Փարիզ արշաւելու համար: Յեղափոխութիւնը խեղդելը շատ դիւրին կ'երեւէր, ոչինչ, դիւրին գործ մը. յեղափոխութեան ղեկավարները կախաղան բարձրացնել, գիմադրել փորձողները զնդակահարել, սարսափ տարածել ժողովուրդի մէջ և ասա գործը վերջացաւ... Բարց Փարիզ արշաւելու համար զէնք պէտք էր, ուղմամթերք պէտք էր, դրամ պէտք էր: Եւ մարդիկը սկսան փնտռել այդ դրամը: Դիմեցին կապիտալիստներուն, հաշուի կ'առնէին անհատական միջոցները, բարձրաստիճան պաշտօնեաներու ոռճիկները. բայց անոնցմով ոչինչ կրնային ընել: Դիմեցին թագաւոր անձնաւորութեանց: Ռուս թագուհի Կատարինէ Բ.ը մէկ անգամէն պետական դանձարանէն մէկ միլիոն 500,000 ուրլի նուիրեց: Դրամական օգնութիւն ցոյց տուին նաև Սպանիոյ և Պրուսիոյ թագաւորները: Բարց ի'նչ ըսել, որ փախստականները ստացուած դրամները շտայլօրէն կը ծախսէին իրենց հաճոյքին համար, մինչ միւս կողմէն ամէն տեսակի բարիքներ կը խոստանային օտար երկրացիներուն՝ նոյնիսկ Ֆրանսական հոգերը անոնց տալու պայմանով, մէկ կողմէն ալ կապ կը պահէին ներքին հակայեղափոխականներու և փնասարարներու հետ:

ՕՐԷՆՍԿԻՐ ԺՈՂՈՎ (1791-1792)

Երկուք ու կէս տարի գոյութիւն ունեցող Հիմնադիր Ժողովը ամէն կերպ աշխատեցաւ իրեն ենթարկել թագաւորական իշխանութիւնը և հաշտուիլ Ֆէոդալական ոռմանախղճին ու եկեղեցիին հետ: Ընտրովի դարձուց քահանաներու պաշտօնը. անոնք երդում ընելու էին հաւատարմօրէն ծառայելու սահմանադրութեան: Անով կրօնքի

սպասաւորները բուրժուական միապետութեան գործակատարները դարձան: Բայց այդ Հիմնադիր Ժողովը չբաւրներու, բանուորներու և զիւղացիներու հանդէպ մեղմացուցիչ օրէնքներ չսահմանեց:

1791 թուի Հոկտեմբեր 1-ին բացուեցաւ Օրէնսդիր Ժողովը: Անոր անդամներու մեծագոյն մասը (766 անդամներէն 600 հոգի) կողմնակից էր չափաւոր միապետութեան, քաղաքական այն իրաւակարգին՝ զոր յաղթական բուրժուազիան էր ստեղծեր:

Հիմնադիր Ժողովի հետ բազդատած՝ Օրէնսդիր Ժողովի կազմը աւելի ձախ հակեցաւ: Մանր բուրժուազիան իր ձայները տուաւ ձախերուն: 145 պատգամաւորներ կը պատկանէին արմատական քաղաքական խմբակցութիւններուն:

Օրէնսդիր Ժողովի մէջ ձախ կողմի նստարանները գրաւած էին պատգամաւորներու այն խումբը, որ յետոյ՝ Ժերմոնիստական անունը ստացաւ: Ժերմոնիստները կը ներկայացնէին հարաւային և արեւմտեան Ֆրանսայի առեւտրա-արդիւնարեւրական բուրժուազիայի շահերը: Անոնց առաջնորդն էր Համայնագիտարանի աշխատակից մաթեմատիկոս և քնազէտ Կոնդորսէն, որ բուրժուական ազատութիւններու, կանանց իրաւահաւաստութեան, գաղութներու մէջ ապրող նեկրոններու ազատագրութեան և պարտաւորիչ ու ձրի կրթութեան կողմնակից էր:

Մանր բուրժուազիան և բանուոր դասակարգը (այս դասակարգը տակաւին դասակարգային խոր գիտակցութեան չէր հասեր ու կը հետեւէր մանր բուրժուազիային) շատ թոյլ չափով ներկայացուած էին Օրէնսդիր Ժողովին մէջ: Անոնց առաջնորդներն էին Դանտոնը, Ռորէպիէրը և Մարատը, որոնք նոյն Ժողովին մէջ աթոռ չէին գրաւած. բայց ժողովուրդին մէջ պրոպականդ կը մղէին հակայեղափոխականներու, շահագէտներու և սահմանադրութեան հաւատարիմ մնալու համար երդում չընող եկեղեցականներու դէմ:

Օրէնսդիր Ժողովի աջ կողմի նստարանները գրաւած էին սահմանադրական միապետութեան կողմնակիցները (Ֆէլիանները), որոնք կը ներկայացնէին հարուստ կապալառուներու, ցորենի շահագիտութեամբ զբաղողներու, պանքաներու տէրերու և մեծաքանակ առեւտրականներու շահերը:

Փարիզի վրայ արշաւանք պատրաստող դադթականները իրենց լարուած գործունէութեամբ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն՝ ներքին հակայեղափոխութեան աշխուժացումը հարկադրեցին որ Օրէնսդիր Ժողովը լճաւական միջոցներու դիմէ: Այժմ հարց կը ծագէր մէկ հարուածով ոչնչացնել արխատկրատիան, խոռվարարները և զրթ-դոհները: Օրէնսդիր Ժողովը բռնադրաւուած յայտարարեց դադթողներու զոյքերը և որոշեց անոնց հոգերը ծախել զիւղացիներուն:

Նոյնպէս ժողովը որոշեց դադարեցնել դանձարանէն ոսճիկ տալ չեր-
զուած հոգեւորականներուն եւ անոնց վրայ խիստ հսկողութիւն հաս-
տատակց: Օրէնսդիր ժողովի որոշումները թագաւորը Վետոյի են-
թարկեց: Պարզ էր, որ հակայեղափոխութիւն մը կը պատրաստուէր
պալատական շրջաններուն մէջ: Թագաւորի գաղտնի գիւանդիտու-
թիւնը կը ղեկավարուէր «Աւստրիական կոմիտէի» կողմէն, որու
նիստերը տեղի կ'ունենային պալատին մէջ Լուզովիկոսի կնոջ՝ Մա-
րի Անթուանէթի նախագահութեամբ:

1792-ի Ապրիլ 20-ին Օրէնսդիր ժողովը պատերազմ յայտարարեց Աւստրիայի դէմ:

Պատերազմի հարցին շուրջ Փրանսական հասարակութեան մէջ միանուազ կարծիք չկար, բայց գլխաւոր կողմերը՝ բոլորն ալ այդ պատերազմին հետ կապուած կը տեսնէին ինչ որ նպաստաւոր հան-
դամանք: Թագաւորին կողմնակիցները՝ բոլոր միապետականները կը կարծէին որ պատերազմի հետեւանքով Ֆրանսայի մէջ կը վերականգ-
նեն հին կարգերը: Իսկ ժերոնդիստները կը կարծէին որ պատերազմը աւելի կը հրահրէ մասսաներու հայրենասիրութիւնը եւ ան կը դառնայ ժողովրդական, որ անհանդիստ տարրերը բանակին մէջ կը մտնեն, որ թագաւորի իշխանութիւնը կը թուլնայ, որ ճամբայ կը բացուի նոր շուկաներու գրաման, որ կ'ոչնչանայ Անգլիոյ հետ կնքուած անշահաւէտ առևտրական պայմանագիրը:

Պատերազմի դէմ էին Յակօրինեանները, որոնք ժերոնդիստնե-
րուն վրայ վստահութիւն չունէին. անոնք կը վախնային որ հակայեղա-
փոխութիւնը կը յաղթանակէ եւ յեղափոխութիւնը կը պարտուի: Անոնք քաղաքացիական պատերազմ կը պահանջէին, կ'առաջարկէին ոչնչա-
ցնել յեղափոխութեան բոլոր թշնամիները բուն իսկ Ֆրանսայի ներ-
սը:

Պատերազմը սկսաւ: Բանակը թէեւ դեռ չէր կազմակերպուած եւ կը ղեկավարուէր ի նպաստ միապետութեան տրամադրուած ըս-
պայութեան ձեռքով, բայց ուժեղ էր իր յեղափոխական ոգեւորու-
թեամբ. բազմաթիւ կամաւորներ կը միանային բանակին: Ռազմական գործողութիւններու յաջողութիւնը կախուած էր գիւղացիական մաս-
սաներու տրամադրութենէն եւ հայրենիքի համար կռուելու պատ-
րաստակամութենէն: Օրէնսդիր ժողովը Հիմնադիր ժողովի որոշում-
ները գիւղացիական հարցի շուրջ, վերատեսութեան ենթարկեց եւ շատ փոփոխութիւններ ըրաւ ի նպաստ գիւղացիներուն:

Առաջին կռիւներու ընթացքին, պարզ էր որ Ֆրանսան պատ-
րաստուած չէր պատերազմի: Բանակին կրած պարտութիւնը հրճ-
ուանք կը պատճառէր հակայեղափոխականներուն: Օրէնսդիր ժողո-
վը պահանջեց կտրուկ միջոցներ ձեռք առնել երկրի պաշտպանու-

թեան համար եւ Փարիզի մէջ 20,000նոց զօրաբանակ մը կազմակեր-
պեց ճակատ զրկելու համար: Բայց Լուզովիկոս չտուաւ իր համա-
ձայնութիւնը: Ժիրոնդիստներու նախարարութիւնը հեռացուց ու
կազմեց յետադիմական կառավարութիւն: Բանակի հրամանատար
զօրավար Լաֆայէդը զօրավիշ կեցաւ թագաւորի վտանգաւոր ձեռ-
նարկին:

Հակայեղափոխութեան յարաճուն աշխուժութեան ազդեցու-
թեան տակ եւ յեղափոխութեան կորուստի վտանգին դէմ Օրէնսդիր
ժողովը աւելի վճռական կը դառնար: Յեղափոխական մասսաներու
ճնշման տակ բուրժուազիան յայտարարեց յեղափոխութիւնն ու հայ-
րենիքը վտանգուած: Ժողովը թոյլատրեց քաղաքային ինքնավարու-
թիւններուն զէնք բաժնել բոլոր քաղաքացիներուն: Այդ ամբողջ շար-
ժումին ընթացքին Փարիզի կոմունայի հատուածները կարեւոր դեր
կատարեցին: Անոնք հրապարակային յայտարարութիւններով նիստեր
կ'ունենային: Ժիրոնդիստները Յուլիս 20-ին փորձեցին ազդեցութիւն
ի գործ զնել թագաւորին վրայ՝ ժողովրդական շարժում սարքելով:
Յուցարարները ներս խուժեցին Տեուիլլըրի արքայական պալատը:
Ժիրոնդիստները ամէն կերպով կ'ուզէին պաշտպանել թագաւորը:
Յուցարարները ստիպեցին որ թագաւորը կարմիր դրակը գլխին՝ գա-
ւաթը պարպէ ժողովուրդի կենացը: Լուզովիկոս հարկադրուեցաւ
խոնարհիլ, բայց ան իր դիրքը չէր ուզեր զիջիլ եւ շուտեց հաստատել
հակայեղափոխականներու մասին Օրէնսդիր ժողովի տուած որոշում-
ները: Ընդհակառակը՝ գաղտնի բանակցութիւններով ան կը պահան-
ջէր որ օտար հրամանատարութիւնը արագացնէ ռազմական գործո-
ղութիւնները: Երկրի թագաւորը կը դաւաճանէր իր հայրենիքին:

Արքունիքի բացորոշ դաւաճանութիւնը, թշնամի բանակի ան-
անթիւնը, երկրի ներսը կատարուած վնասարարութիւնները, ասոնք
բոլորը նպաստեցին յեղափոխական ոգեւորութեան վերելքին, ամբա-
պնդեցին յեղափոխական վճռականութիւնը: Սկսաւ յեղափոխական
ուժերու զօրահաւաքը, յեղափոխական խմբաւորումներու միացումը:

Օգոստոս 5-ին Փարիզի հատուածները, բանուորները, արհես-
տաւորները եւ դաշնակից ընկերութիւնները միահամուռ կերպով ար-
տաշայտուեցան յօգուտ ապստամբութեան. ուրիշ ելքի ճամբայ չը-
կար...:

Թուով քառասուն հատուածներէն երեսունը պահանջեցին Լու-
զովիկոս ժ.Պ.ի տապալումը: Օրէնսդիր ժողովը ժիրոնդիստներու
ղեկավարութեամբ՝ երկգլխի պատասխաններով փորձեց գործը ձգ-
ձգել եւ հատուածներու պահանջը յանձնեց յատուկ յանձնաժողովի
քննութեան: Այս ձգձգումները մօտեցուցին ապստամբութեան ժամը:

1792, ՕԳՈՍՏՈՍ 10-Ի ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆԸ

1792 Օգոստոս 9-ի զիշերը սկսաւ յեղափոխութիւնը: Այդ յեղափոխութիւնը զլուխ հանեցին Փարիզի պրուետարիատն ու մանր բուրժուազիան՝ Յակոբինեաններու ղեկավարութեամբ: Բազմաթիւ զինուած ամբոխները թմբուկներով սկսան քալել դէպի քաղաքի կեդրոնը եւ գրաւեցին քաղաքային ինքնավարութիւնը: Բանուորական հատուածներու ներկայացուցիչները քաղաքային խորհրդարանի շէնքէն ներս մտան եւ ստիպեցին որ բուրժուական ղեկավարները չէնքէն հեռանան եւ իրենք յայտարարեցին յեղափոխական կոմունայի հաստատումը: Կոմունայի կազմին մէջ մտան՝ ծառայողներ, ազատ մտաբուեցող տէր մարդիկ, մանր ձեռնարկութիւններու սեփականատէրեր եւ բանուորներ: Օգոստոս 10-ի առաւօտուն ապստամբ ամբոխները ներս խուժեցին արքայական պալատը՝ Տէյլուիլի, զոր կը պաշտպանէին զուիցերիական վարձկան հրացանակիրներն ու ազգային զօրագունդը: Ազգային զօրագունդը թաղաւորը պաշտպանելու փորձ չբարաւ, իսկ զուիցերիացի զինուորները աննշան դիմադրութենէ մը յետոյ պալատը յանձնեցին ապստամբներուն: Թաղաւորը իր ընտանիքով պատսպարուեցաւ Օրէնսդիր Ժողովին հովանիին ներքեւ: Ժիրոնդիստներուն փորձերը թաղաւորը փրկելու համար՝ ապարդիւն անցան: Փարիզի կոմունան պահանջեց առանց այլեւայլի թաղաւորը իր ընտանիքով բանտարկել եւ զրկել զայն թաղաւորական իշխանութենէն: Լաֆայէդ հրամանատարը փորձեց յարձակիլ Փարիզի վրայ, բայց ընդհանուր դիմադրութեան հանդիպելով փախաւ արտասահման:

ՓԱՐԻԶԻ ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԱՆ

Յեղափոխական անցուդարձերը կը ղեկավարէր Փարիզի Կոմունան: Անոր պահանջին համաձայն՝ Օրէնսդիր Ժողովը որոշեց զուեմարել ազգային համադումար եւ ընդհանուր ընտրական իրաւունքի վրայ կազմեց ժամանակաւոր կառավարութիւնը (Ժամանակաւոր Գործադիր Կոմիտէ) Ժիրոնդիստական կարգով Ժիրոնդիստները կառավարութեան կազմին մէջ առին Դանտոնը իր արդարադատութեան նախարար:

Փարիզի կոմունան խիստ միջոցներ ձեռք առաւ փախստականներու դէմ — հրամանագիր հանեց ձերբակալել զանոնք. յետոյ՝ բացարձակապէս արգելած էր եկեղեցական թափօրներ կազմակերպելը, քահանայական զրեւտով փողոցներու մէջ երեսնալը. ան նոյնպէս փակել տուաւ վանքերը «արխատոկրատիայի որջերը», եւ գրաւեց արխատոկրատներու դոյքերը՝ պատերազմի պէտքերուն համար:

Ժիրոնդիստները չէին համարձակեր սեւէ քայլ առնելու Կոմունայի յեղափոխական ձեռնարկներուն դէմ:

Ժիրոնդիստները կռթնած առեւտրա-արդիւնարեական ուժեղ շրջաններու հոգածութեան վրայ, Յակոբինեաններու, Փարիզի Կոմունայի եւ բուն իսկ Փարիզի ղեկավարութիւնը թուլացնելու նպատակով՝ ուղեցին Ազգային համադումարը գումարել Փարիզէն հեռու տեղ մը, ուրիշ գաւառի մը մէջ: Անոնք մեծ յոյս ունէին զաւտական Ֆրանսայի վրայ. իրենք կ'առաջադրէին «Ֆրաիւրալիզմի» — «Դաշնակցային» զաղափարը: Սակայն Փարիզի Կոմունան ճիշդ ժամանակին ձեռք առաւ միջոցներ՝ յետադիմութիւնը կանխելու համար: Երեսուն կոմիտարները զրկուեցան զաւտներն ու բանակին մէջ, հակա-յեղափոխութեան դէմ պայքար կազմակերպելու եւ յեղափոխական պրոպականդա մղելու համար: Դանտոնը հիմնարկութիւններէն կը վոնտէր թաղաւորական իշխանութեան կողմնակիցները, սապոդատ ընդդէմը եւ կասկածելի դիմակաւորները: Իսկ Մարատը իր Ժողովուրդի Բարեկամ թերթով՝ անդադար կը յայտարարէր աշալուրջ ըլլալ, եւ պաշտպանել Կոմունան, որ կը ներկայացնէր չքաւոր ժողովուրդի կամքը:

Հակա-յեղափոխականները տեսնելով որ Փարիզի յանցագործները անխնայ դատի կը քաշուին ու կը դատապարտուին մահուան, խլացուցիչ ոռոնց մը բարձրացուցին: Ֆրանսայի արեւմտեան ծայրագաւառներուն մէջ չերգուած հոգեւորականութիւնը կառավարութեան դէմ զաւաղրական խումբեր կը կազմակերպէր:

Վանդիայի մէջ հոգեւորականներն ու կալուածատէրերը «Զօրութիւն Քրիստոս»ի անուան տակ զիւղացիական ապստամբութիւն մը կազմակերպեցին, որ տարածուեցաւ մերձակայ շրջանները:

Վանդիական խռովութեան յաջողութիւնը անով կը բացատրուի որ, այդ տեղի զիւղացիութիւնը բաղկացած էր առաւելապէս կուլակներէ, մանր սեփականատէրերէ եւ վարձակալներէ: Այդ խռովութիւնը վտանգաւոր բնոյթ ստացաւ 1793-ին: Ապստամբութեան յաջողութեան կը նպաստէին արտաքին պատերազմը եւ փախստական հակա-յեղափոխականներու աջակցութիւնը: 1793-ի վերջերը Վանդիացիները ջարդուեցան:

Դաւաղրութիւններ կը պատրաստուէին զանազան տեղերու մէջ:

Պալատի փաստաթուղթերու հետազօտութիւնը եկաւ հաստատել որ Լուդովիկոս ԺԶ. զազտնի յարաբերութիւններ կը վարէր զաղթական հակա-յեղափոխականներու հետ եւ անոնց հակայական չափով նիւթական օժանդակութիւն էր տուեր՝ ի հաշիւ Ֆրանսական պետական դանձարանին:

Օգոստոս 19-ին թշնամու զօրքերը մտան Ֆրանսական հողը:

Օգոստոս 23-ին գրաւուեցաւ Լոնդոնի բերդը, յետոյ՝ Վերդունը: Փարիզը վերածուեցաւ զօրաբանակի: Ժողովուրդը կը զինուէր: Քաղաքի շուրջը խրամատներ կը փորէին, պաշտպանողական զիբքեր կը կառուցէին: Կը խօսէին հակախեղափոխականներու դաւազութեան մասին: Լուր տարածուած էր որ բանտերու մէջ, որոնք որջեր էին դարձեր արխատկրատներու եւ հոգեւորականներու համար, սկսեր է խռովութիւն: Սեպտեմբեր 2-ին եւ 3-ին ժողովրդական ամբոխները ներս խուժեցին եւ սկսան անխնայ կոտորել բանտարկուած հակախեղափոխականները: Աւելի քան հազար կալանաւորներ զսճ դարձան ժողովրդական վրէժխնդրութեան: Այնուհետեւ ժողովուրդը կը պահանջէր կործանել Տամպլը — այն ամրոցը, ուր բանտարկուած էր թագաւոր Լուդովիկոսը: «Դեռ բանտ մը կայ, զոր պէտք է մաքրել»: այս էր ժողովուրդի պահանջը:

Կոմունայի ձեռք առած եռանդուն եւ արագ միջոցները, անոր խիստ քաղաքականութիւնը ապարդիւն չանցան: Շուտով նկատելի խաղաղութիւն մը հաստատուեցաւ երկրի ներսը: Արտաքին վտանգն ալ սկսաւ նուազիլ: Աւատրիայի եւ Պրուսիոյ մրցակցութիւնը, դաշնակից պետութիւններու բանակի վատ կազմակերպումը, վատ մատակարարումը, թիկունքային ուժի անբաւարարութիւնը, սովը՝ որ յառաջացեր էր Ֆրանսայի սահմաններուն մէջ զտնուող զօրքերուն մէջ, ասոնք բոլորը քայքայած էին թշնամիին ուժերը: Միւս կողմէն՝ աւելի ուժեղացեր էր Ֆրանսական զինուորներու յեղափոխական ոգեւորութիւնը, բանակը կը մեծնար յեղափոխականօրէն տրամադրուած երիտասարդներով, իսկ յեղափոխական գաղափարները համակրական արձագանգ կը գտնէին թշնամի բանակի զինուորներուն մէջ:

Փարիզի Կոմունայի հատուածները յանձն առած էին զօրքին մատակարարել հագուստ, ճերմակեղէն եւ կօշիկներ. կազմակերպեր էին հաց հայթայթելու գործը (ցորենը աղալ, փուռերու մէջ հաց պատրաստել, բաշխել եւ այլն): Նոյնպէս կը հսկէին քաղաքի բնակչութեան պարենաւորմանը, բանակի համար կը ցուցակազրէին կամաւորներ:

Յեղափոխական Ֆրանսան յափշտակողական քաղաքականութիւն չունէր. հրաման կար թալանող զինուորը զնդակահարել: Ֆրանսան պարզած էր սառապող ժողովուրդներու ազատագրման դրօշակը:

1792, Սեպտեմբեր 20-ին, Ֆրանսական բանակը վերջնականապէս կանգնեցուց թշնամիին յարձակումը: Նոյն տարուան աշունը Ֆրանսայի հողաբաժինը ազատուեցաւ թշնամական զօրքերէն:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐ

Ազգային ժողովը բացուեցաւ 1792 թ. Սեպտեմբեր 21-ին: Ժողովի անդամներու մէջ ընտրուած էին Ժիրոնդիստներու եւ Յակորինեաններու ամենաականաւոր ներկայացուցիչները: Այդ ժողովին մէջ աւելի զատորոշուեցան ու անջատուեցան քաղաքական խմբաւորումները: Ժողովի 745 պատգամաւորներէն 165 հոգի՝ կը պատկանէին Ժիրոնդիստներուն, որոնք զբաւած էին աջ կողմի նստարանները: Ժողովի աշխատանքներուն կը մասնակցէին Ժիրոնդի յայտնի առաջնորդները՝ Բրիսսոն, Վերնիոն, Կոնդորսէն, Ինարը, Պետիոնը, եւ այլն: Ժողովի ձախ կողմը նստած էին Յակորինեանները կամ Մոնղանեարները (այսինքն բառացի իմաստով՝ «Լեռնականները»): Լեռնական անունը անոնք ստացեր էին անոր համար, որ զբաւած էին, ամենէն բարձր՝ առաստաղին տակ շարուած նստարանները): Չախ թեւի ղեկավարներն էին՝ Դանտոնը, Մարատը, Ռորէսփիէրը, Կամիլ Դեմուլէնտը եւ Սան Ժիւստը:

Ժիրոնդիստներու եւ Յակորինեաններու մէջտեղը՝ կեդրոնական դիրք բռնած էին այն պատգամաւորները, որոնք քաղաքական որոշ ծրագիր չունէին. ասոնք կը կազմէին «ճահիճը» եւ իրենք ալ կոչուեցան «ճահիճի Դողդուներ», որոնք կը հակէին մերթ աջ, մերթ ձախ: Սկիզբէն «ճահիճը» իր ձայները կը տրամադրէր Ժիրոնդին, իսկ յետոյ ան սկսաւ պաշտպանել Յակորինեաններու ծրագիրը:

ԺԻՐՈՆԴԻՍՏՆԵՐՆ ՈՒ ՅԱԿՈՐԻՆԵԱՆՆԵՐԸ

Ազգային ժողովի աշխատանքներու սկզբնական շրջանին իսկ՝ ընդհարումները սկսան Ժիրոնդիստներու եւ Յակորինեաններու միջեւ: Մանր բուրժուազիան, որ քաղաքականապէս աւելի հասունցած էր ու վճռական, ճակատեցաւ առեւտրա-արդիւնաբերական բուրժուազիային: Յակորինական ահումբը դարձեր էր մանր-բուրժուական ղեմոնրատիայի քաղաքական կեդրոնը: Յակորինեաններու ազդեցութիւնը կ'աճէր Փարիզի Կոմունայի եւ անոր հատուածներուն մէջ:

Ժիրոնդիստները ամէն կերպով կ'աշխատէին տակարացնել Կոմունայի ազդեցութիւնը եւ յատուկ պահակախումբ կազմակերպել դաւառական բուրժուաներէն միմիայն Ազգային ժողովին համար: Վայելելով «ճահիճի» աջակցութիւնը, ժողովի մեծամասնութիւնը՝ Ժիրոնդիստները իրենց արբանեակներուն կուտային ղեկավար պաշտօններ, իսկ միւս կողմէն ժողովի կոմիսարները հալածանքի կ'ենթարկուէին այն տեղերուն մէջ, ուր ուժեղ էր Ժիրոնդիստներու ազդեցութիւնը: Փարիզի՝ մանաւանդ դաւառներու մէջ Ժիրոնդիստները

կատաղի կերպով կը հետապնդէին Յակոբինեանները: Շրջաններէն մէկուն մէջ տեղւոյն գլխաւոր խորհուրդը հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ. — «Իբրեւ դժբախտութիւններու եւ անկարգութեանց գլխաւոր պատասխանատուներ՝ մենք ի լուր կը յայտարարենք որ Ռոբէսփիէներն են, Մարատներն ու Դանտոնները, որոնք ազգին՝ սնանելու համար դիակներէն դատ ուրիշ ոչինչ կուտան»:

Հակառակ այդ հալածանքին, սակայն, Յակոբինեաններու ժողովրդականութիւնը օրէ օր կ'աճէր: Ազգային ժողովի նորակազմ պահակախումբն անգամ (այն որ ժիրոնդիստները կազմակերպելէին) վարակուեցաւ Յակոբինեաններու խանդավառութեամբ:

ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՀԱՊԱՏԻԺԸ

Երկու կուսակցութեանց ընդհարումները սուր հանգամանք ըստացան թաղաւորի խնդրոյն շուրջ: Ժիրոնդիստները կ'ուզէին թաղաւորին կեանքը խնայել եւ անոր դատը յանձնել յատուկ ատենակալներու քննութեան, մինչդեռ Յակոբինեանները կը պնդէին որ դործը տրուելու է Ազգային ժողովին: «Ես կը պահանջեմ, — դռնաց Ռոբէսփիէր, — Ֆրանսացիներու վերջին բռնակալը, որ կը գլխաւորէ եւ իրարու կը միացնէ բոլոր դաւադրութիւնները, դատապարտել մահապատիժի՝ իր չարագործութիւններուն համար: Ժողովը որքան յետաձգէ այս կարեւոր հարցի լուծումը, այնքան պատեհութիւն կուտայ որ չարագործը հնարէ նոր դաւադրութիւններ եւ հրահրէ թաղաւորականներու յոյսերը: Լուրդովիկոսը պէտք է մեռնի, որպէսզի հայրենիքը ապրի»:

Ժիրոնդիստները շատ աշխատեցան ու փորձեցին թաղաւորը ազատել մահապատիժէն: Ազգային ժողովը ներկայացուած փաստերու հիման վրայ ձայներու մեծամասնութեամբ («Ճահիճի Դողոջ»ները Յակոբինեաններու յարեցան) թաղաւորը դատապարտուեցաւ մահուան: Ֆրանսայի բնակչութիւնը դոհունակութեամբ ընդունեց բռնակալի գլխատումը (1793):

ԸՆԴՀԱՐՈՒՄ ՄԱՆՐ ԵՒ ԽՈՇՈՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՄԻՋԵՒԻ

Ուրիշ հարց մը եւս մէջտեղ ելաւ, որ լարուածութիւն յառաջացուց ժիրոնդիստներու եւ Յակոբինեաններու միջեւ. ատիկա ալ պարենաւորման կնճռոտ խնդիրն էր: 1782-93-ի տարիներուն Ֆրանսան ամենածանր անտեսական ճղնաժամը կ'ապրէր: Պետական Ֆինանսները խախուտ դրութեան մէջ էին. ազգային դոյքերու վաճառումը բաւական չեղաւ գոցելու պետական պարտքը: Արդիւնարեութեան լճացումը, ներմուծուող հում նիւթերու պակասը, ցորենի

պակասութիւնը, պատերազմիկ երկիրներու հետ վարած առուտուրի դադարումը, ապրանքներու, մասնաւորապէս առաջնակարգ անհրաժեշտութեան առարկաներու սղութիւնը, ասոնք բոլորը շատ ծանր կ'անդրադառնային քաղաքի չքաւորներու դրութեան վրայ: Անօթի մարդոց ընդվզումները անդիմադրելի դարձեր էին: Փարիզի մէջ ամբոխները կը կողոպտէին պարենաւորման կրպակները, հացի փուռերն ու խանութները: Սովալլուկ ժողովուրդը կը պահանջէր խիստ միջոցներ ձեռք առնել ցորենի շահագէտներու դէմ, որոնք նոր բուրժուա դասակարգ մը կը կազմէին: Մարատը կ'առաջարկէր այդ շահագէտները դատի կանչել՝ որպէս պետական դաւաճաններ: Անխուսափելի դարձեր էր հացի եւ առաջնակարգ կենսամթերքներու վրայ հաստատուն դիրներու առաւելագոյն սահմանումը: Բայց առաւելագոյնի (մաքսիմում) գնորտման կողմնակից չէին բոլոր Յակոբինեանները: Մաքսիմումի մէջ անոնք վտանգ կը տեսնէին, որ կը սպառնար մանր խանութպաններուն եւ ցորեն արտադրող զիւղացիներուն: Ահա թէ ինչո՞ւ յաղթեց ազատ առուտուրի սկզբունքը: 1792 թ. Դեկտեմբերին, Ազգային ժողովը իր հրամանագրով հրապարակեց ազատ առուտուրի օրէնքը, որուն դէմ սանձութիւն փորձողները պիտի ստանային մահապատիժ:

ԿԱՏԱՂԻՆԵՐԸ

Յակոբինեաններու առաջարկած կիսամիջոցները — ցորենի պաշարներու հաշուառում կատարել, շահագէտները հետապնդել — ասոնք զոհացում չտուին ժողովրդական զանգուածներուն: Ժողովուրդի մէջէն դուրս եկան յեղափոխականներ, որոնք կ'ուզէին պատերազմ յայտարարել ո՛չ միայն թաղաւորականներուն ու ժիրոնդիստներուն դէմ, այլ բուրժուական սկզբունքին դէմ: Դժգոհութիւնը հետզհետէ կ'ուժեղանար: 1792-93-ի ձմեռը Փարիզի արուարձաններու բանուորները, արհեստաւորական եւ զիւղացիական չքաւոր խաւերը հրապարակ հանեցին իրենց առաջնորդները, որոնք արհամարհական անուններով կը ճանչցուէին. ոմանք զանոնք կը կոչէին անարխիստներ, ուրիշներ՝ աւելի խորշեցուցիչ անունով՝ կատաղիներ: «Կատաղիներ» անունով յայտնի էին քաղաքի եւ դիւրի չքաւոր խաւերու շահերը արտայայտող այն ձախ դեմոկրատները, որոնք թէ՛ Փարիզի եւ թէ՛ դաւառներու մէջ արմատական յեղափոխութեան պրոպականդա կը մղէին շահագիտութեան դէմ ընդհանրապէս եւ կը պահանջէին առաւելագոյն պատիժ — մահապատիժ: Անոնք կը պընդէին, որ «պատուութիւն ըսուածը ուրիշ բան չէ, եթէ ոչ դատարկ ստուեր մը, երբ մարդոց դասակարգ մը կրնայ անպատիժ մնալով

ճնշել եւ սովամահ ընել միւս դատակարգը, այն դատակարգը՝ որ բարիքներ արտադրող է»։ Կատաղիները զուրս եկան ո՛չ միայն ժիրոնդիստներու դէմ, այլեւ Յակոբինեաններու դէմ. եւ արդէն զարմանք չառթեց երբ Ռոբէսփիէրի 1793 թ. Փետրուար 25-ին Յակոբինեաններու ահուժըին մէջ իր արտասանած ճառով կատաղիները անուանեց «աղատութեան թշնամիներ», որոնք կը խախտէին սեփականութեան հիմքերը։ Ռոբէսփիէրի տեսակէտով՝ «ժողովուրդը պէտք է ապրտամբի ո՛չ թէ իրեն համար շաքար ու հաց ձեռք բերելու, այլ սրիկաները ոչնչացնելու նպատակով»։ 1793 թ. Մարտի 18-ին, Ազգային ժողովը վերջնական հրովարտակով մահապատիժ սահմանեց անոր՝ որ կ'առաջարկէ ազրարային կամ որեւէ մէկ այլ օրէնք՝ ուղղուած հողային, առեւտրական կամ արդիւնարեւական սեփականութեան դէմ։

Սոյն հրովարտակը արդէն ապացոյցը կու տար որ բուրժուազիան հաստատեր էր իր դիկտադուրան, բայց այդ դիկտադուրան սկիզբէն իսկ կը յայնարեւելք իր զզուելի նեխածութիւնը։ Մարքս այս առթիւ գրած է հետեւեալը. «Այսպիսով հնչեց քաղաքացիական պատերազմի ահադանդը այնպիսի վայրկեանի մը, երբ հարց էր յարուցուած այն շահերու մասին, որոնք գրդեր էին ժողովուրդը՝ դիմելու ապստամբութեան։ Լեռը (ձախ թիւր՝ Յակոբինեանները) կ'երթար ժողովրդական մասսաներու կուսակցութեան հետ. այնտեղ էին ե՛ւ ջղուտ ձեռքերը, ե՛ւ եռանդը, ե՛ւ անձնուիրութիւնը։

ՅԵՂԱՓՈՒՍՏՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական պետութեանց միակցական յարձակման հետեւանքով 1793 տարուայ պարենաւորման ճգնաժամը աւելի սաստկացաւ։ Ֆրանսական զօրքերը հարկադրուած լքեցին Պելճիզան, զոր գրաւած էին 1792-ի վերջերը։ Պելճիզական ճակատի հրամանատար զօրավար Դիոմուրեն, որ քաղաքական ձգտումներով միապետական էր, այժմ Աւստրիացիներէն պարտուելէն յետոյ՝ Ազգային ժողովի կոմիսարները մատնեց ու անցաւ թշնամիին կողմը։ Շուտով պարզ եղաւ որ Անգլիան եւս պիտի յարէր հակաֆրանսական միակցութեան. ան չէր մոռցեր Ֆրանսայի աջակցութիւնը՝ Ամերիկայի ազատազրական շարժումին։

Յեղափոխութեան սկիզբի օրերէն Անգլիան արդէն հաշտ աչքով չէր նայեր Ֆրանսայի՝ այն առարկութեամբ որ Անգլիոյ մէջ լեցուած էին յեղափոխականները, որոնք պատրաստ էին տեւորական գործեր կատարելու։ Օգոստոս 10-ի յեղափոխութենէն եւ Լուզովիկոսի զըլխատումէն յետոյ մանաւանդ՝ անգլիական կառավարութեան թշնա-

մութիւնը աւելի սաստկացաւ, այնպէս որ ան սկսաւ աշխատիլ յեղափոխութեան դէմ ուղղուած պատերազմին մասնակից դարձնել եւրոպական բոլոր պետութիւնները՝ իրեն վերապահելով ռազմական եւ քաղաքական զեկավարութիւնը։ Ասոր վրայ Ֆրանսան Անգլիայէն պահանջեց վերցնել Ֆրանսական քաղաքացիներու եւ Ֆրանսական առտուրի դէմ գործադրուող ճնշումները, եւ բացատրութիւն տալ անգլիական սպանադինման պատրաստութիւններու մասին։ Անգլիան, պատասխանի փոխարէն Լոնտոնէն վճռեց Ֆրանսական դեսպանը։ 1793 Փետրուար 23-ին Ֆրանսա պատերազմ յայտարարեց Անգլիոյ դէմ։ Անգլիա յաջողեցաւ իր կողմը գրաւել Սպանիան, ապա՝ Սարտենիան եւ Հոլանտան։ Այդ հանգամանքներու տակ Ֆրանսան իր արեւելեան եւ հարաւային սահմաններէն պաշարուած էր. իսկ ինքը՝ Անգլիան, իրրեւ ծովային պետութիւն, ծովէն կը սպառնար Ֆրանսայի։

Յեղափոխական ռազմական հրամանատարութիւնը պատերազմի ընթացքին վճռական միջոցներ ձեռք առաւ բանակը վերակազմելու։ Նոյն տարիին (1793) Փետրուարին՝ հրապարակուեցաւ պարտադիր զօրահաւաքը։

Հրամանատարութեան կազմէն Ազգային ժողովը զուրս հանեց նախկին ազնուականութեան ներկայացուցիչները, անոնց տեղը նշանակելով ոչ-արտօնեալ դասէն կլած յեղափոխական սպաներ։ Բանակի վերակազմութեան համար արտակարգ աշխատանք տարաւ Յակոբինեան Կաթնոն, որ անդամ էր հասարակական փրկութեան կոմիտէին եւ կը վարէր երկրի պաշտպանութեան գործը։ Ան էր որ կազմակերպեց 14 բանակներու կազմակերպման գործը՝ երկաթեայ կարգապահութեամբ։ Ան մեծ ուշադրութիւն տուաւ զինուորներու քաղաքական դաստիարակութեան ճիւղին։ Յակոբինեաններու քաղաքական դաստիարակութեան ճիւղին։ Յակոբինեաններու այս եռանդուն ձեռնարկները զայրոյթ կը պատճառէին ժիրոնդիստներուն, որոնց զաւանտութեանց շնորհիւ թշնամիին բանակը նորէն մտաւ Ֆրանսական հողը։ Վանդէական խռովութիւնը երթալով աւելի կ'ուժեղանար։ Յաճախակի կը կրկնուէին կոմիսարներու դէմ ուղղուած տեւորիստական մահափորձերու դէպքերը։

ԺԻՐՈՆԴԻՍՏՆԵՐԸ ՀԱՎԱՅԵՂԱՓՈՒՍՏՆԵՐԸ ԿՈՂՄԸ Կ'ԱՆՑՆԻՆ

Երկրի պաշտպանութեան գործը յանձնուած էր Հասարակական Փրկութեան Կոմիտէին, որու ինը հոգիէ բաղկացած կազմը հաստատուած էր Ազգ. ժողովի կողմէ։ Յատուկ հրովարտակով ժողովը պարտադիր փոխառութեան սխտէմ մը որդեգրեց մեծ եկամուտ ունեցող

անձերուն համար եւ որոշեց վաճառել փախստականներու գոյքերն ու հողերը: Ուրիշ հրովարտակով մը ժողովը չունենոր ու աղքատ խաւերու համար պետութեան հաշուոյն ընկերային ապահովութիւն սահմանեց եւ ատոր հետ միասին հաստատեց մայրութեան պաշտպանութեան ճիւղ մը: Գործադրկութեան դէմ պայքարելով՝ Կոմունան ձեռնարկեց գործադուրկներու հաշուառումին եւ անոնց համար հասարակական աշխատանքներ սահմանեց:

Ժիրոնդիստները բացայայտ կերպով անցան հակայեղափոխականներու կողմը: Անոնք կը փորձէին Փարիզի դէմ հանել գաւառները, Կոմունան ենթարկել լուծարքի եւ փակել Յակորինեաններու աւուարը: Ժիրոնդիստները կ'ուզէին վերջնականապէս վերցնել Փարիզի կեդրոնական ղեկավարութիւնը. Փարիզը դառնալու էր հասարակ գաւառ մը:

Ժիրոնդիստներու դէմ ատելութեամբ լեցուած էր Մարատը, որ շարունակ կը յիշեցնէր թէ «յեղափոխութիւնը գլուխ հանողներն եղած են բանուորները, արհեստաւորները եւ գիւղացիները, եւ մենք զանոնք չենք կրնար ստնակոխել: Ժիրոնդիստները կը մեղադրէին Մարատը, որ քաղաքական պատերազմ կը սերմանէր, որ գիշատիչ դադան էր ու կը լսփէր Ֆրանսացիները: Պահանջեցին զայն դատի կանչել եւ անոր մահապատիժ սահմանել: Դատարանը Մարատը զըլխատման պատիժի արժանի յանցանքի մէջ բռնող փաստ չգտաւ ու զայն ազատ արձակեց: Ժիրոնդիստները այդ ատեն որոշեցին Մարատէն ազատուիլ տեղորով: 1793 թ. Յուլիս 13-ին, Շարլոտա Կորդէն դաշոյնի հարուածով սպաննեց Մարատը:

Ժիրոնդիստները այնուհետեւ ձերբակալեցին Կոմունայի ամենէն ականաւոր գործիչ՝ Յակորինեաններու արմատական մասի ներկայացուցիչ՝ Հէրբերը:

1793 ՄԱՅԻՍ 31-Ի ԵՒ ՅՈՒՆԻՍ 2-Ի ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

Ապրիլի վերջերը, Ժիրոնդիստներու առաջնորդ Պէտիոնը հրատարակեց իր հռչակաւոր նամակը, որ կոչ կ'ընէր ժողովուրդին, կոտորել յեղափոխականները: «Փարիզցիներ՝, արթնցէք ձեր թմբած վիճակէն եւ ոչնչացուցէք այն թունաւոր միջատները, որոնցմէ կը փախչին հարուստ եւ խաղաղասէր մարդիկ՝ լքելով Փարիզը»: Այս տողերով կը վերջանար այդ գրգռիչ՝ հակայեղափոխական առաջնորդի նամակը:

Յակորինեան ակումբը հաշուի առնելով որ ժիրոնդիստները հակայեղափոխութեան ուղին են բռնել, յատուկ կոչով դիմեց իր գաւառային մասնաճիւղերուն: «Այո՛, եղբայրներ ու բարեկամներ, հա-

կայեղափոխութիւնը այժմ Ազգային Ժողովի ներսն է մտեր: Ոտքի ելլենք, այո՛, ոտքի ելլենք ու ձերբակալենք մեր յեղափոխութեան բոլոր թշնամիներն ու կասկածելիները»: Անխուսափելի դարձաւ նոր ապստամբութիւնը: Ժիրոնդիստ Ինարը, որ կը նախագահէր Ազգային Ժողովին, կը սպառնար որ եթէ ժողովի իրաւասութեան դէմ որեւէ ոտնձգութեան փորձ ըլլայ, Փարիզը փոշի կը դառնայ: Միւս կողմէն՝ Ռոբէսփիէրը Յակորինեան ակումբին մէջ կը հրաւիրէր ժողովուրդը ապստամբելու: Կոմունայի զլխաւոր խորհուրդի վերհսկողութեամբ կազմակերպուեցաւ գործողութիւններու կոմիտէ: Բանուորները զինուեցան:

Ժողովրդական զանդուածները կը պահանջէին Ազգ. Ժողովէն արտաքսել Ժիրոնդիստները: Փարիզի Կոմունան ու անոր մասնաճիւղերը կը ղեկավարէին շարժումը: Մայիս 31-ին զինուած ամբոխները ժողովին դիմեցին եւ դարձեալ պահանջեցին վտարել եւ ձերբակալել Ժիրոնդիստ պատգամաւորները:

Այդ օրը ամբոխները ցրուեցան իրենց հետ տանելով խոստումներ: Զինուած ամբոխները Յունիս 2-ին դարձեալ պաշարեցին Ազգ. Ժողովի շէնքը: Ժողովին ներկայացուած պահանջներուն մէջ կային հետեւեալները.— Կառավարութիւնն ու պետական ապարատը զտել, չքաւորներուն զրութիւնը բարելաւելու համար հարուստները հարկատուութեան ենթարկել, աժան ցորեն եւ հաց մատակարարել Փարիզին. հասարակական աշխատանքները կազմակերպել, եւ այլն: Ժողովին ուղղուած դիմումը կուզար արդարացնելու յեղափոխութիւնը: Մասաները կ'ազաղակէին.— «Ազատութեան ջահը կը մարի, ազատութեան սիւները խախտ դարձած են, հակայեղափոխականները գլուխ կը բարձրացնեն: Թող անոնք դողան. որտու՞մը կը պայթի եւ զանոնք փոշի կը դարձնէ: Ժողովուրդը յողնած է. փրկեցէք զայն, եթէ ոչ՝ ան ինքզինքը կը փրկէ»:

Ազգ. Ժողովի պահակախումբը՝ Ազգային զօրաբանակը անցաւ ժողովուրդի կողմը: Մարտիա՞ծ՝ «Ճահիճը» Յակորինեաններու հետ քուէարկեց յօդուտ Ժիրոնդիստներու արտաքսման: 29 ականաւոր Ժիրոնդիստներ ձերբակալուեցան, յանձնուեցան յեղափոխական ատենին եւ դատապարտուեցան մահուան: Մայիս 31-էն Յունիս 2-ի յեղափոխութիւնը վերցուց Ազգային Ժողովի մէջէն խոշոր բուրժուազիայի ազդեցութիւնը եւ հաստատեց մանր բուրժուազիայի յեղափոխական դիկտատուրան:

1793-Ի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Յակորինեաններու դիկտատուրայի ժամանակաշրջանին Ազգային Ժողովի օրէնսդրական հիմնական գործերէն մէկն էր նոր սահմա-

նադրութիւնը, որու մշակման աշխատանքը սկսած էր Ժիրոնդիստներու օրով: 1793-ի այդ նոր սահմանադրութեան մէջ կենսադործուած էին բուրժուա-դեմոկրատական հետեւեալ սկզբունքները. — Պիտի պահպանունի մասնաւոր սեփականութիւնը, հանրապետութիւնը եւ ընդհանուր ընտրական իրաւունքը (բացառելով կանանց իրաւունքը), օրէնսդիր կորպուսի (մարմնի) դէմ կը կազմուի օրէնսդրական իշխանութիւն, որու 600 պատգամաւորները պէտք է ընտրուին միայն մէկ տարիով. քաղաքականական պաշտօններ ստանձնողները կ'ընտրուին քաղաքային ժողովներու մէջ. բոլոր քաղաքացիները կ'ենթարկուին հարկատուութեան. ընդհանուր զինուորագրութիւն. զինուորական շրջանակներու մէջ բոլորովին կը վերցուի մտրակի դործածութիւնը. Թրանսան կը պատասպարէ այն օտարականները, որոնք ազատութեան պայքարի բերումով արտաքսուած են իրենց հայրենիքէն: Կարևորագոյն օրէնքները կը հաստատուին ժողովուրդի կամքը առնելով — ռեփերանտումով: Սահմանադրութիւնը ինքը եւս՝ պէտք է հաստատուի ռեփերանտումի միջոցով:

ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՄ ՏԵՌՈՐԸ

Ինչ խօսք, սակայն, որ այդ սահմանադրութիւնը կեանքի մէջ իրականութիւն դառնալէ շատ հեռու մնաց:

Դեմոկրատական իշխանութիւն կազմակերպելու համար կատարուած աշխատանքը վիժեցաւ՝ հակայեղափոխական միացեալ ուժերու եւ թշնամի բանակներու դրոհի հետեւանքով: Յեղափոխութեան պաշտպանութիւնը Փրագներէ աւելի՝ արտակարգ միջոցառումներ կը պահանջէր:

Տապալուած Ժիրոնդը քաշուեցաւ գաւառները. այնտեղ ան ձեռնարկեց քաղաքացիական կռիւի: Բանտէն փախած Ժիրոնդիստները (Պիտիոնտ, Բրիսսոն, Լուվէն եւ ուրիշներ) կը դրդուէին հարաւային եւ արեւմտեան շրջաններու բնակչութիւնը: Արգիւնարեւրական քաղաքներու մէջ (Լիոն, Մարսէյլ, Բորդօ եւ այլն) քաղաքային խորհուրդներէն կը վտարէին Յակոբինեանները: Լիոնի մէջ իշխանութիւնը գրաւեցին միապետականները: Կորսիկան բոլորովին անջատուեցաւ: Ութսուն երեք շրջաններէն վաթսուներ շարունակ կը կուռէին Ազգային Ժողովի դէմ: Վանդէական խռովութիւնը կը տարածուէր: Անդլո-սպանական նաւատորմի դրաւեց թուլոն նաւահանդիստը, ան ալ ուղղակի Ժիրոնդիստներու հրաւերով: 1793 թ. Ապրիլ 10-ին, Ազգային Ժողովը յեղափոխական վարչակարգի մասին հրովարտակ մը հրապարակեց եւ քանի որ ռազմական դրութիւնը կը շարունակուէր, ժամանակաւորապէս ընդհատեց սահմանադրութեան գործար-

կումը: Վերակազմուեցաւ հասարակական փրկութեան կոմիտէն, որպէս բարձրագոյն մարմին՝ օժտուած արտակարգ իշխանութեամբ: Այդ կոմիտէին կ'ենթարկուէր 12 կոլեգիաներէ (միակցական մարմիններէ) կազմուած յեղափոխական կառավարութիւնը. այդ կոլեգիաները կազմակերպուած էին նախարարութիւններու փոխարէն եւ կը գործէին Կոմիտիէ ղեկավարութեան տակ: Անոր կողքին հաստատուեցաւ հասարակական ապահովութեան կոմիտէն, որ կը ղեկավարէր յեղափոխութեան պաշտպանութեան վերաբերեալ ձեռնարկները, եւ իրաւասութիւն ունէր յանցաւորները ձերբակալելու եւ արտակարգ որոշումներ տալու:

Հակայեղափոխութեան եւ սպիկուլացիայի (չահադիտութեան) ինչպէս եւ մաքսիմումի (առաւելագոյնի դնորշման) դէմ մղուած պայքարի մէջ մեծագոյն դեր կը խաղար Յակոբինեաններու կազմակերպած յեղափոխական առեանը: Ան պարզացուց դատական պրոցէսը (ընթացքը) եւ դատապարտուածներու համար միմիայն մէկ պատիժ սահմանեց. — գլխատում: Ամբողջ իշխանութիւնը կեղերոնացեր էր Յակոբինեաններու ղեկավարութեան ներքեւ աշխատող այդ մարմիններուն մէջ: Իսկ յեղափոխական իշխանութեան լիազօր ներկայացուցիչի դեր ունէին Ժողովի կոմիսարները, որոնց կից հիմնուած էին «յեղափոխական յանձնաժողովներ». ասոնք կը վարէին իրենց տեղերու մէջ այնպիսի դործեր՝ ինչպէս էին խուզարկութիւնները, ձերբակալութիւնները, ապարատի գտումն ու վերակազմութիւնը, բանակներու պարենաւորումը, հին պաշտամունքի, արիստոկրատիզմի, երգում շքնող հոգեւորականութեան դէմ ուղղուած պայքարը եւ ասոնց նման գործեր: Տնտեսական ծանր պայմանները եւ հանրապետութեան անկախութեանը սպառնացող ներքին ու արտաքին վտանգները ստիպեցին որ Յակոբինեանները դործադրեն կեղերոնացած դիկտատուրայի եւ տեռորի սիստէմը:

Տէնորը ոչ միայն քաղաքական նշանակութիւն ունեցող միջոց էր, այլև ան պէտք է ապահովէր մաքսիմումի վերաբերեալ այն օրէնքի գործադրումը, զոր ընդունած էր Ազգ. Ժողովը 1793 թ. Սեպտեմբեր 29-ին: Այդ օրէնքով առաջնակարգ անհրաժեշտութեան բոլոր ապրանքները — կենսամթերքները, խմիչքները, հազուատեղէնը, պիտանի հում նիւթերը — որոշ չափի, որոշ զինի ենթարկուած էին: Իսկ աշխատանքի վարձատրութիւնը մէկ ու կէս անդամ աւելի էր քան ինչ որ էր 1790 թուի աշխատանքի վարձատրութիւնը:

Մաքսիմումը միջոց մըն էր, որ կ'ապահովէր չքաւոր բնակչութեան անհրաժեշտ պէտքերը: Բայց ի՞նչ հետեւանք ունեցաւ այդ օրէնքը. Յակոբինեանները կրցա՞ն դործադրել զայն:

Յեղափոխութեան թշնամիները ամէն կերպով կ'աշխատէին

մաքսիմուսի այդ օրէնքը վերածել մեռեալ տառի: Վաճառականները դադարեցուցին առուսուրը: Ապրանքները շուկաներէն անհետացան: Քաղաքը բերուած ցորենի քանակը օրէ օր կը նուազէր, թէեւ կառավարութիւնը կը շարունակէր ցորենի բռնադրաւումը՝ վճարելով որոշուած գիները: Յորենը դարձաւ սեւ շուկայի շահագէտներու ապրանք: Յեղափոխական ատեանները խստիւ կը պատժէին ձերբակալուած շահագէտները:

1793 թուի Սեպտեմբերին, ժողովը հրատարակեց «կասկածելիներու» օրէնքը: «Կասկածելիներ էին բռնապետութեան կողմնակիցները, Ֆետերալիզմի շատազովները (ժիրոնդիստները), այն անձերը, որոնք չէին կրնար ապացուցել իրենց քաղաքական հաւատարմութիւնը, ազնուականները՝ որոնք յեղափոխութեան հանդէպ անհաշտ դիրք ունէին, փախտականները, երզում ընող եւ երզում չընող հոգեւորականները: Տեոքը այն միակ միջոցն էր, որով կարելի էր թըշնամիները ծունկի բերել եւ բարելաւել երկրի տնտեսական դրութիւնը: Գիկտատուրայի հետեւողական քաղաքականութիւնը, յեղափոխութեան պաշտպանութեան համար գործադրուած եռանդը, թագուհի՝ Մարի Անթուանէթի մահապատիժը, դաւաճան զօրավարներու, շահագէտներու եւ ժիրոնդիստներու գլխատումը, ասոնք իրապէս իրենց ազդեցութիւնը ներդրածեցին: 1793-ի վերջերը երկրի արտաքին դրութիւնը փոխուեցաւ: Բանակը անցաւ յարձակման: Յեղափոխական հրամանատար Հօշը, որ նախկին ձիապան մըն էր, էլզասի մէջ խուճապի մատնեց Աւստրիական զօրքերը: Նոյն տարուայ Գեկտեմբերին, զօրավար Բոնապարտը (այս մարդը յետոյ կայսր եղաւ) դրաւեց թուրքը եւ այնտեղէն դուրս քշեց անգլիական նաւատորմիդը: Վանդէայի եւ Լեննի ու ուրիշ տեղերու ապստամբութիւնները ճզմուեցան:

Տեոքը ոչ ոքի կը խնայէր: Գիլիոդիին (գլխատելու մեքենայ) դանակի տակ մեռան ժիրոնդիստները, անոնց հետ նաեւ յայտնի գիտնականներ ու քաղաքական գործիչներ, որոնք Յակոբինեաններու հետ դաշնակցած՝ կռուեր էին բացարձակապետութեան դէմ:

ՅԱԿՈՒԲԻՆԵԱՆՆԵՐՈՒ ԳԻԻՂԱՑԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Արմատականօրէն ջնջուելով Ֆէոդալիզմի մնացորդները՝ Յակոբինեան գիկտատուրան գիւղացիական հարցը լուծեց այնպէս՝ ինչպէս գիւղացիութիւնը կը պահանջէր: Ֆրանսացի գիւղացին դարձաւ սեփականատէր եւ հնարաւորութիւն ստացաւ ընդարձակելու իր հողերը: Ազգային գոյքի, ինչպէս նաեւ ազնուականներու հողերը բաժնուեցան հողազուրկ եւ սակաւահող գիւղացիներուն ու գինուորներուն

միջեւ: Այսպէս վերջացաւ ազրարային յեղափոխութիւնը, որ Լենինի բացատրութեամբ՝ հրաշքի արագութեամբ նորոգեց երկրի տնտեսական հիմքը:

ՅԵՂԱՓՈՒՅԻՆԵԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Յակոբինեան գիկտատուրան յատկանշական է նաեւ անոր համար, որ անիկա դուռը բացաւ Ֆրանսայի կուլտուրական յառաջդիմութեան. դպրոցներու թիւը կրկնապատկուեցաւ, հաստատուեցաւ աշխարհիկ ուսում, արմատախիլ եղան դպրոցական սերտողութեան (սքոլաստիկայի) աւանդութիւնները՝ եւ սկսան ընդհանուր դրագիտութեան աշխատանքները: Յակոբինեան թերթերու թիւը բազմացաւ. յեղափոխական գրականութեան թիրաժը (տպաքանակը) ամէն ամիս սկսաւ բարձրանալ. հանրամատչիի դարձան գրադարանները, ընթերցարանները, թանգարանները: Ազգային ժողովը երկու կարող պատգամաւորներ որոշեց, որպէսզի կազմեն ու հրատարակեն Ֆրանսական հանրապետականներու հերոսական սխրագործութիւններու ժողովածոյ մը, որ պիտի փոխարինէր խունկի ծխով սեւցած կրօնական գիրքերը: Հարիւր ութսուն հազար օրինակով հրատարակուած այդ ժողովածոն տարածուեցաւ ամենուրեք, դպրոցներու մէջ, աւուսններու մէջ, բանակին մէջ, քաղաքային եւ գիւղական ինքնավարութիւններու մէջ:

Յակոբինեան գիկտատուրան յամառ պայքար կը մղէր նաեւ նոր կենցաղի համար: Արիստոկրատիայի բծախնդիր վարուելակերպի փոխարէն սահմանուեցաւ հանրապետական պարզ, ընկերական շարժում: Հազուատներու ձեւը նոյնիսկ փոխուեցաւ. հին կարգերու հանդէպ տածուած ատելութիւնը ուղղուած էր նաեւ ազնուականներու հագուստի ձեւերուն: Փոխադարձ յարաբերութեանց մէջ կը տիրէր պարզութիւն: Սալոնական բարքերը վճռականապէս հրապարակէն չբացան:

Յեղափոխութիւնը այս բոլոր նորութեանց հետ զուգընթաց՝ կը ստեղծէր նաեւ իր ուրոյն արուեստը: Սոցիալական նոր ապրումները կը յայտնագործուէին յեղափոխական երաժշտութեան մէջ, զբոսականութեան ու զեղարուեստին մէջ:

Նոր տօները կը յեղափոխականացնէն ժողովրդական զանգուածները: «Կազմակերպեցէք ընդհանուր հանդիսաւոր տօնակատարութիւններ՝ ամբողջ հանրապետութեան համար, կազմակերպեցէք յաճախակի տօներ՝ առանձին վայրերու համար»: այսպէս կը յանձնարարէր Ռոբէսպիէրը: Փարիզի տաճարներէն մէկը վերածուեցաւ մեծ մարդոց դամբարանի (պանթէոնի):

Յեղափոխութիւնը վճռականապէս կը հրաժարէր եկեղեցական ասանդութենէն: Ասիկա յեղափոխութեան ամենէն արմատական, ամենէն յանդուզն քայլն էր: 1793-ի վերջերը, Ազգային ժողովը հաստատեց նոր յեղափոխական օրացոյց, որ նոր տարեթիւ կը մտցնէր քրիստոնեայ աշխարհին մէջ: Անոր երակէտը դարձաւ հանրապետութեան հիմնարկումի օրը՝ 1792 Սեպտեմբեր 22-ի օրը: Այդ օրէն կը սկսէր Նոր Տարին: Տարին նշանակուած էր դասական հռոմէական թուանշաններով եւ բաժնուած էր 12 ամիսներու՝ իւրաքանչիւրը 30 օրով: Իսկ տարուան մնացեալ 5-6 օրերը յայտարարուած էին լրացուցիչ օրեր: Ամիսներ միացուած էին չորս եղանակներու համաձայն՝ չորս խումբերու: Ամիսներու անունները կը համապատասխանէին իւրաքանչիւր ժամանակի բնորոշ յատկութիւններուն:

- Աշնան ամիսները — վանդեմյէր — խաղողաքաղի ամիս .
- Բրիւմէր — մառախուղներու ամիս .
- Ֆրիմէր — եղիամի ամիս :
- Զմբան ամիսները — Նիվոզ — ձիւնի ամիս .
- Պլեուվիոզ — անձրեւներու ամիս .
- Վանտոզ — քամիներու ամիս :
- Գարնան ամիսները — Ժերմինալ — սերմերը ծլելու ամիս .
- Ֆլորիալ — ծաղիկներու ամիս .
- Պրէրիալ — մարգարիտներու ամիս :
- Ամբան ամիսները — Մեսիդոր — Հունձքի ամիս .
- Թէրմիտոր — շոգիի ամիս .
- Ֆրեուկտիդոր — պտուղներու ամիս :

Յեղափոխութեան օրացոյցը պահեց իր գոյութիւնը մինչեւ Նաբոլէոն Ա.ի ժամանակաշրջանը: Եկեղեցական տօներու տեղը բռններ էին յեղափոխական տօները, ինչպէս՝ Բաստիլի առումը, Ֆետեբացիայի տօնը, եւ այլն:

Նոր տօներու հետ որդեգրուեցաւ նաեւ քաղաքացիական կրնունքներ կատարելու սովորութիւնը: Յաճախ նորածինները կը մկրտուէին յեղափոխական առաջնորդներու անուններով, ինչպէս Ռոբէսփիէր, Մարատ, եւ այլն: Կը գործածուէին նաեւ հնաւանդ անուններ: Ազգային ժողովի անդամ Ծոմէտի առաջարկով՝ կրօնական պաշտամունքի փոխարէն հաստատուեցաւ բանականութեան պաշտամունքը (ապաքրիստոնէացում): Այս պաշտամունքը փորձ մըն էր կաթողիկէ եկեղեցւոյ դէմ մղուած պայքարէն անցնելու կրօնական նախապաշարումներու դէմ ուղղուած պայքարին: Աշխատաւորական շըրջաններուն մէջ լայնօրէն կը տարածուէին անաստուածութեան դադափարները: Երբ Փարիզի Կոմունայի որոշումով փակուեցան բոլոր կաթողիկէ եկեղեցիները, ատիկա ճնշուած մասսաներու պահանջի

արդիւնքն էր, այն մասսաներուն՝ զորս կը յիմարացնէր եւ կը շահագործէր եկեղեցին: Սակայն, բանականութեան պաշտամունքին հակառակ էին Ռոբէսփիէրն ու Դանտոնը: Անոնք չէին բաժնէր Ծոմէտի եւ Հիբերի քթիզովը (անկրօնութիւնը) եւ անհրաժեշտ կը համարէին պահպանել կրօնը՝ որպէս հասարակական ապահովութեան երաշխիք եւ մասսաները հնադանդ պահելու միջոց: Ռոբէսփիէրի նախաձեռնութեամբ բանականութեան պաշտամունքը փոխարինեց «բարձրագոյն էակ»ին երկրպագելու պաշտամունքը: Ասով կը նորոգուէին կաթողիկական աստուածապաշտութեան ծէսերը:

Յեղափոխութիւնը առանձին հոգատարութիւն յատկացուց ժողովրդական մասսաներու լուսաւորութեան ու կուլտուրայի վերելքի գործին: Դաստիարակութեան վերաբերող խնդիրներով կը պարագէին յեղափոխութեան առաջնորդներն ու գործիչները: Սան Ժիւստը (1767-1794), որ Հասարակական Փրկութեան Կոմիտէի անդամ էր, ստեղծեց դաստիարակութեան նոր մեթոտ մը: Երեխաները մինչեւ իրենց հինգ տարին լրանալը կը մնան իրենց մայրերուն մօտ, անկէ վերջ կը յանձնուին հանրապետութեան: Մանկութենէն անոնք կը վարժուին կարգապահութեան. կեանքի համար տոկուն ու բանիմաց սերունդ մը կը պատրաստուի: Հինգ տարեկանէն մինչեւ տասը տարեկան հասակը տղաները կը սորվին ուսումնական հիմնարկներու մէջ, ուր կը զարգանան անոնց Ֆրիզբական ու հոգեկան ուժերը: Տասն մինչեւ տասնվեց տարեկանին, անոնք կ'ուսումնասիրեն գիւղատնտեսութիւնը, կ'աշխատին գիւղական դաշտերուն վրայ, կը վարժուին ռազմական գործին: Անոնք դիտեն վազել, ցատկել, լողալ եւ անսխալ գէնք գործածել: Տղան տասնվեց տարեկանին արդէն՝ երկաթեայ ֆիզիքականով եւ թրծուած կամքով պատրաստուած է եւ կ'ընդունի բանուորի հազուստ: Դառնալով չափահաս՝ պատանին բանակին մէջ կ'ընդունուի հայրենիքը պաշտպանելու պատրաստակամութեամբ: Աղջիկները կը դաստիարակուին տունին մէջ: Այս շրջանին հաստատուեցան մասնագիտական դպրոցներ: Այդ. ժողովը ծրագրեց դպրոցներու մէջ ուսանողներուն ապրուստը հայթայթել հասարակական զանձարանէն: Նոյնպէս Փրանսական գիտնականներու միջոցով հաստատեց չափերու եւ կշիռներու մեթրական սխտէմը, որ ահագին դործնական նշանակութիւն ունեցաւ եւ մեծ ազդեցութիւն գործեց մատեմատիկական մտածողութեան զարգացման վրայ:

ՊԱՅԲԱՐ ՅԱԿՈՒԻՆԵԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ

Յեղափոխութեան յաջողութիւնն ու ժողովրդականացումը նըպատեցին յեղափոխական շարժումին ծաւալմանը: Պետական ապարատը կը դռնուէր Յակոբինեաններու ձեռքին մէջ: Հասարակա-

կան Փրկութեան Կոմիտէն կը գլխաւորէր նախ Դանտոնը, ապա անոր յաջորդեց Ռորէսփիէրը՝ 1793 Յուլիս 10-ին: Յեղափոխական իշխանութեան բարձրագոյն ներկայացուցիչները Ազգային Ժողովի կոմիտարներն էին: Գաւառներուն մէջ ամենուրեք եռանդապիւն կը դործէին յեղափոխական կոմիտէները, որոնք անխնայ պայքար կը մղէին աս կամ այն անկիւնները սլքտացող հակայեղափոխականներուն դէմ: Քաղաքացիական ճակատներու մէջ համեմատական խողաղացումը, իսկ արտաքին ճակատներու վրայ՝ ռազմական յաջողութիւնները 1794 թուի դարնան՝ պառակտում յառաջացուցին մինչեւ այդ ատեն միասնական ուժով կառավարող կուսակցութեան մէջ:

Պարենաւորման ճգնաժամի կապակցութեամբ սուր բնոյթ ըստացան Յակոբինեաններու միջեւ եղած տարաձայնութիւնները: Կուսակցութեան ներսը ձայներ կը լսուէին. ոմանք կը պահանջէին տեւորը դադրեցնել եւ յայտարարել յեղափոխական շրջանը աւարտած: Մանր բուրժուազիան անկարող էր յեղափոխութեան տնտեսական խնդիրները լուծել՝ ժողովրդական լայն մասսաներու պահանջի համաձայն: Յակոբինեաններու վճռական ձեռնարկները՝ ոչնչացնելով Ֆէոդալիզմի մնացորդները եւ ապահովելով երկրի պաշտպանութիւնը թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին թշնամիներէն, բարենպաստ պայմաններ ստեղծեցին կապիտալիստական արտադրութեան դարձացման համար: Յակոբինեաններու շրջանակին մէջ ժողովրդականութիւն ձեռք բերած էին այն կոչերը, որոնք կը հրաւիրէին դաշինք կնքել նոր բուրժուազիայի հետ, յեղափոխութեան ընթացքին շահադիտական խողովակով հարստացած այդ դասակարգին հետ:

ԴԱՆՏՈՆԻՍՏՆԵՐԸ

Յակոբինեանները բաժնուեցան երեք հատուածներու: Աջակողմեան հատուածին գլուխը կանգնած էր Դանտոնը, որ կը ներկայացնէր նոր բուրժուազիայի շահերը: Դանտոնիստներու շուրջը հետըզհետէ կը հաւաքուէր Փրանսական հակայեղափոխութիւնը: Դանտոնը, համոզուած էր որ արդէն հասեր է գիկտատուրայի սխառմբ վերջընելու եւ տեւորը դադրեցնելու ժամը: Դանտոնիստները մանաւանդ թշնամաբար կը վերաբերուէին Ազգ. Ժողովի այն միջոցառումներուն, որոնք ուղղուած էին հարուստներուն դէմ: Դանտոնիստները ամէն կերպով կ'աշխատէին վիժեցնել շահադիտութեան, մաքսիմալի եւ բռնադրաւումներու վերաբերեալ օրէնքները: Անոնք բացորոշ կերպով կը պաշտպանէին առեւտրականները եւ կը պահանջէին ցրուել յեղափոխական բանակը: Անոնց ծրագիրը կուզար ոչնչացնելու այն բոլոր յեղափոխական նուաճումները, որոնք կը համապատասխանէին ժողովրդական հոծ զանգուածներու պահանջներուն:

Դանտոնը կողմնակից էր մասնաւոր սեփականութեան: Ան Ազգային Ժողովին առջեւ առաջարկեց՝ սեփականութեան իրաւունքները խախտողներուն մահապատիժ սահմանել: — «Յիէք ազդարարենք, — կ'ըսէր Դանտոնը, ազդարարենք որ ամէն տեսակի սեփականութիւն — հողային, անհատական ու արդիւնարերական — պէտք է ընդմիշտ անձեռնմխելի մնայ»: Դանտոնիստները հակեցան Ժիրոնդիստներու կողմը: Նախապէս Ժիրոնդիստները, այժմ ալ Դանտոնիստները եւ ուսուցուն արշաւ սկսան Փարիզի Կոմունայի դէմ: Դանտոնը կ'առաջարկէր բանակէն ու դաւառներէն ետ կանչել կոմիսարները եւ լուծարքի ենթարկել յեղափոխական վարչակարգը, հաշտութիւն կնքել արտաքին թշնամիին հետ եւ բանտերէն ազատ արձակել բոլոր հակայեղափոխականները: Երբ իշխանութիւնը Ռորէսփիէրիստներու ձեռքն անցաւ, Դանտոնը սկսաւ կատաղի յարձակում դործել Ռորէսփիէրի վրայ: Իր թերթը՝ «Հիմ Կորդիլլերը» մեծ ժողովրդականութիւն եւ աջակցութիւն կը վայելէր յետադիմականներու շրջանակներու մէջ:

ՌՌՐԷՍՓԻԷՐԻՍՏՆԵՐԸ

Կեդրոնական թելի ղեկավարն էր Մաքսիմիլիան Ռորէսփիէրը, որ Յակոբինեաններու ղեկատուութեան ժամանակաշրջանին կը գլխաւորէր յեղափոխութիւնը: Ռորէսփիէրը յեղափոխական մանր բուրժուազիայի եւ գիւղացիութեան առաջնորդն էր: Ան դէմ էր հակահրօնական շարժման: Հետապնդելով հանդերձ չեղուած քահանաները, Ռորէսփիէրը կը ժխտէր հոգեւորականութիւնը իր ամբողջութեամբ հրապարկէն չքացնելու անհրաժեշտութիւնը: Հակայեղափոխութեան դէմ մղած պայքարին մէջ ան անկաշառ էր եւ անխնայ: Տնտեսական ձեռնարկներու եւ ազրարային հարցի շուրջ Ռորէսփիէրի քաղաքականութիւնը կրկնակ զգուշութեամբ կ'ընթանար՝ հաշտարար բնոյթով: Գլխաւորելով բոլոր հետեւողական-հանրապետական-բուրժուական տարրերու միութիւնը՝ Ռորէսփիէրը քաղաքականութեան ասպարէզին մէջ կը խուսափէր ծայրայեղութենէ եւ կ'աշխատէր հաւասարակշռութիւն պահպանել աջակողմեաններու եւ ձախակողմեաններու միջեւ:

Իր դործունէութեան առաջին շրջանին Ռորէսփիէրը՝ գլխաւորելով յեղափոխութիւնը, ժողովրդական մասսաներու հետ էր եւ անոնց հետ ըլլալով էր, որ յաղթանակ տարաւ: Այդ յաղթանակէն յետոյ, սակայն, Ռորէսփիէրը ետ քաշուեցաւ յեղափոխութենէն եւ ըսկըսաւ բացայայտօրէն գործել աշխատաւորութեան դէմ: Ռորէսփիէրը յենած էր միջակ կարողութեան տէր բուրժուազիայի վրայ, որ տըրամադիր էր խոչոր բուրժուազիայի շահերուն համապատասխան քա-

դաքաղանութիւն վարել, բայց անընդունակ էր այդ քաղաքականութիւնը լրիւ կենսագործելու:

Ռորէսփիէի ծրագիրը այդ շրջանին, քիչ կը տարբերէր սովորական բուրժուա-հանրապետական ծրագիրներէն, մանաւանդ արտաքին քաղաքականութեան, ձախ կուսակցութիւններու հանդէպ եւ սեփականութեան խնդրի նկատմամբ բռնած դիրքին մէջ: Ռորէսփիէ-րը կը պահանջէր շարունակել պատերազմը, ուժեղացնել տեռորը, նոյն ատեն կը մերժէր տնտեսական հաւասարութիւնը եւ հողերու վերաբաժանումը: Ռորէսփիէրը անողոք կռիւ կը մղէր «կատաղիներու» դէմ: Վերջիններու առաջնորդ՝ Ժակ-Ռուն Ենթարկուած էր հալածանքներու եւ յարձակումներու: Ժակ Ռուն վերջ ի վերջոյ բանտարկուեցաւ եւ բանտին մէջ անձնասպան եղաւ: Ռորէսփիէրը այդ արժատական, ճշմարիտ յեղափոխականի մահովը ազատուեցաւ ուժեղ թշնամիէ մը:

ՀԷՔԵՐՏԻՍՏՆԵՐԸ

Յակորինեաններու ձախ թեւը, որ Ռորէսփիէի սիստէմին դէմ դուրս եկաւ, կը կազմէր Հէբերի, Շոմէպի եւ Կլոքսի կողմէ ղլխաւորուած խմբակը — Հէբերտիստներու խմբակը — որ կը ներկայացընէր Փարիզի մանր բուրժուազիայի պրոլետարականացած շերտերը, քաղաքային արհեստաւորները, մանր գործատեղիներու տէրերը եւ բանուորները:

Բայց պէտք է ըսել թէ՛ Հէբերտիստներն ալ բաժնուած էին աջ ու ձախ թեւերու: Աջերու խմբակը (Հէբեր-Շոմէպ) կը պնդէր թէ «չքաւորները յեղափոխութենէն ոչինչ չեն շահած, բացի իրենց աշխատութեան մասին դանդատելու իրաւունքէն»: Աշխատելու է «աշխատաւորը դնել այնպիսի դրութեան մէջ, որ ան օրին մէկը սեփականատէր դառնալու յոյսն ունենայ»: Շոմէպը կ'առաջարկէր եկամտային հարկի դրութիւն հաստատել, հասարակական աշխատանքներ կազմակերպել անգործներուն համար, իրականացնել ընկերային ապահովութիւնը, Փարիզի բնակչութեան տրամադրել աժան ցորեն քաղաքային ինքնավարութեան հաշուոյն, հարուստներէն խլել ձեռնարկութիւնները եւ յանձնել պետութեան ձեռքը, ունեւոր զիւղացիներէն բռնագրաւել պարէն եւ ցորեն, պայքար մղել բարքերու ապականութեան դէմ, վերակառուցել ժողովրդական լուսաւորութեան գործը՝ հաշուի առնելով բնակչութեան կրթական պահանջները: Իբրեւ անխորնայ տեռորիստներ եւ հետեւողական անկրօններ, Հէբերտիստները կ'արտայայտէին մանր, նիւթապէս անապահով մտաւորականութեան նարոզնիկական տրամադրութիւնները: Չախակողմեան Հէբերտիստ-

ները (Կլոտսի խումբը) կը ներկայացնէին մանր արհեստաւորները, խանութպանները եւ բանուորներու որոշ խաւերը. ասոնք անխլխանական տրամադրութիւն ունէին: Անոնք համոզուած էին որ Փրանսացիները ընտրեալ ազգ են, որոնք կատարեցին աշխարհի մեծագոյն յեղափոխութիւնը: Փրանսացիները ազազային պիտի ոչնչացնեն բոլոր ազգութիւններու եւ պետութիւններու հակամարտութեանց ծնունդ տուող սահմանները եւ ժողովուրդներու միացումով պիտի ստեղծեն համաշխարհային ընտանիք մը, ուր պետութիւնը ինքնին կը վերնայ: Պետութիւնը ծնած է դասակարգէն. երբ դասակարգերը կը վերցուին, պետութիւնը այլեւս կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքը: Բայց այս Հէբերտիստները սոցիալական որոշ ծրագիր չունէին:

ՅԱԿՈՒԻՆԵԱՆՆԵՐՈՒ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Յակորինեաններու ներսը ծնունդ առնող այս հոսանքներն էին որ հիմքը դրին կուսակցութեան պառակտումին: Ակներեւ էր որ կուսակցութիւնն այլեւս ի վիճակի չէր զեկապարելու յեղափոխական իրադարձութիւնները: Անոնք շատ ետ կը մնային յեղափոխական մասսաներու պահանջներուն ընդառաջելու միասնական պարտաւորութիւններէն:

Փրանսական յեղափոխութիւնը անցաւ մի քանի շրջաններէ: Առաջին տարիներուն, հին կարգերու կործանումէն յետոյ՝ իշխանութեան զլուխ անցած խոշոր բուրժուազիան ձեռք առաւ այն բոլոր միջոցները, որոնք պիտի նպաստէին իր դիկտատուրան ապահովելու համար: Նախ իրեն նեցուկներ փնտոց զիւղացիական շրջաններու մէջ.— Կուլակները. յետոյ՝ նեցուկներ փնտոց միապետականներու շրջաններու մէջ.— Հակայեղափոխականները, որոնք հին ուժիւր կ'ուզէին վերականգնցնել: Բայց այդ քաղաքականութիւնը ապիկար դուրս եկաւ ու ան՝ իշխանութիւնը զիջեցաւ մանր բուրժուազիային, որ արժատականօրէն եւ անողոքաբար մաքրեց հաշիւները Ֆէոդալական մնացորդներուն, հին կենցաղին, միապետութեան եւ եկեղեցիին հետ: Մանր բուրժուազիան կարողացաւ լուծել ազրարային հարցը եւ բռնադրաւուած հողերը յանձնեց զիւղացիութեան ձեռքը: Ան կըրցաւ կազմակերպել հանրապետութեան յաջող պաշտպանութիւնը եւ յափշտակողական պատերազմը փոխեց յեղափոխական պատերազմի: Իր բոլոր միջոցառումներուն մէջ ան յենած էր ժողովրդական զանդուածներու ուժին վրայ: Բայց այդ մանր բուրժուազիան դարձեալ հիմնական խնդիրները լուծելու անկարող ըլլալով պատրաստեց իր անխուսափելի անկումը:

Ծրանասական յեղափոխութիւնը բուրժուական յեղափոխութիւն էր. ան իրականացուց բուրժուազիայի ծրագիրը: Ծարժման գլուխը կանգնող դասակարգը բուրժուազիան էր: Պրոլետարիատն ու հասարակութեան այն հատուածները, որոնք բուրժուազիային չէին պատկանիր, կամ տակաւին չունէին այնպիսի շահեր՝ որոնք համաձայնէին բուրժուազիայի շահերուն, անոնք 1793-էն մինչև 1794 տարեթիւը կը կուռէին բուրժուական շահերուն համար, թէեւ ոչ բուրժուական եղանակով:

Յակոբինեաններու քաղաքական կղզիացումը տրուած պայմաններու ներքեւ անխուսափելի կը դառնար: Բնակչութեան զանազան խաւերը բացայայտ կերպով ցոյց կուտային իրենց դժգոհութիւնը: Ոռոշոր բուրժուազիան, որ եռանդաւին կուռեցաւ Ֆէոդալական ռեժիմի դէմ եւ ժողովուրդի ուժով տապալեց բացարձակապետութիւնը, հիմա ալ հետամուտ էր ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք բարենպաստ ըլլալու էին կապիտալիստական տնտեսութեան եւ խոշոր արդիւնաբերութեան զարգացման համար: Ան ամէն կերպ կը ձգտէր վերջ տալ տեռորի սխտէմին, վերջացնել մաքսիմումի օրէնքը, նոյնպէս բոլոր այն որոշումները, որոնք կը խախտէին իր առևտրական շահերը եւ կը չբացնէին ազատ մրցման սկզբունքները: Անոր մէջէն դուրս եկած էին այն նոր հողատէրերը, որոնք կը գործադրէին հողի շահագործման կապիտալիստական եղանակները:

Գիւղացիութիւնը, մանաւանդ անոր ունեւոր ու միջակ խաւերը, բաւարարութիւն ստացեր էին յեղափոխութենէն: Յակոբինեաններու ազդարարային օրէնքը, որ առանց որեւէ փրկանքի վճարման՝ ուղղապես ֆէոդալական պարզակներն ու ազնուական-կալուածատէրերը, որ ճշգրիտ բաժնեց համայնական հողերը, յեղափոխութեան կողմը դրուեց գիւղացիական մասսաներու համակրանքը: Յեղափոխական բանակի տարած յաղթանակը, մեծ մասով գիւղացիներու շնորհիւ էր: Գիւղացիները, առանց տրտունջ յայտնելու կը կատարէին զինուորական պարտաւորութիւնները. անոնք շատ սիրով իրենց երիտասարդները կը տրամադրէին յեղափոխական հասարակարգի պաշտպանութեան գործին: Յակոբինեաններու ղեկատուութեան օրով գիւղացիները պատեհութիւն ունեցան զնելու այն հողերը, զորս կառավարութիւնը բռնազրուած էր ազնուական-գաղթողներէն: Այժմ իր նպատակին հասած գիւղացիութիւնը պահպանողական ուժ դարձաւ. ան սկսաւ դժգոհիլ յետադային՝ աւելի մեծ շարժումներու հասնող զօրահաւաքը, ցորենի անբնդհատ բռնազրուումները, ցորենի պարտադիր ցած գիները այս բաները իր շահերուն չէին համապատասխաներ, այդ պատճառով գիւղացիութիւնը՝ որ աւելի հարստանալ կ'ուզէր, երես դարձուց յեղափոխութենէն, լքեց քաղաքի հետ ու-

նեցած դաշնակցութիւնը: Այսպիսով գիւղերու մէջ կ'ուժեղանար խոր դժգոհութիւնը Յակոբինեաններու կառավարութեան հանդէս:

Միւս կողմէն, քաղաքի բնակչութիւնը (մանր բուրժուազիան եւ բանուոր դասակարգը), որ ուժեղ աջակցութիւն ցոյց տուած էր կառավարութեան, ամենէն աւելի ենթարկուած էր աղէտներու եւ զրկանքներու, եւ սակայն, զուր տեղը կը սպասէր ընկերային բարենորոգումներու: Այսպիսով կ'աճէր յետադիմութիւնը:

1794-ի դարնան, Յակոբինեանները, զուրկ որեւէ աջակցութենէ, մեկուսացած վիճակի մէջ էին: Անոնք կառչած էին հին ոգիով իտէալականացած պետութիւն մը հիմնելու զազափարին, աննկուն պետութիւն մը, պահանջներով՝ չափաւոր, հասարակ, խնայասէր մանր սեփականատէրերու պետութիւն մը:

Ռորէսփիէրը, որ Յակոբինեաններու ամենաուժեղ մասը կը ղլխաւորէր եւ կառավարական խումբը կը ղեկավարէր, աջակողմեան Դանտոնիստներու հետ դաշնակցելով կուռ յայտարարեց Հէբերտիստներուն դէմ: Հէբերտիստները փորձեցին ժողովրդական ապստամբութիւն յառաջացնել, բայց այդ փորձը անյաջողութեան մատուցաւ: Յոգնած, յեղափոխութենէն հրաժարուած, քաղաքական դուռնափոխութեանց անորոշ գրութեան մէջ ինկած, կտոր մը հացի համար առօրեայ պայքար մղելու մտահոգութեամբ ծանրաբեռնուած եւ, վերջապէս ընկերային յեղափոխութեան յաջողութեան նկատմամբ իրենց հաւատքը կորսնցուցած մասսաները անտարբեր մնացին Յակոբինեաններու ներկուսակցական պայքարի հանդէս: 1794 թուի Մարտի 27-ին Հէբերտն ու իր կողմնակիցները մեռան գիլետինի զանակին տակ:

Ապրիլ 5-ին նոյն վախճանն ունեցան նաեւ Դանտոնիստները, որոնց ելոյթները վերջին ժամանակները առանձնապէս յետադիմական շեշտուած բնոյթ ունէին: Դանտոնիստներու դէմ կուռելու ատեն Ռորէսփիէրը կոթնած էր Փարիզի Կոմունայի վրայ, որ ենթարկուած էր կատաղի յարձակումներու՝ Դանտոնի եւ իր զինակիցներու կողմէն:

Գիլետինի միջոցով ուղղապես կուռակցութեան արժատական թեւը, Ռորէսփիէրը Դանտոնիստներու մահէն յետոյ ինքն եւս զրկուեցաւ նոր բուրժուազիայի կողմէն աջակցութիւն ստանալու հնարաւորութենէն, այն չափաւոր բուրժուազիայի՝ որ կարօտ էր խաղաղութեան եւ կը փափաքէր ազատութիւն՝ կապիտալիստական կուռակման համար, ու երաշխիք՝ յեղափոխութեան ճամբան շարունակուելուն դէմ: Այդպիսով՝ Ռորէսփիէրը ինքզինքը քաղաքականապէս մեկուսացուց: Նման պարագաներու տակ պարզ էր որ Ռորէսփիէրը ինքն ալ դատապարտուած էր տապալուելու:

Զգալով սպառնացող վտանգը՝ Յակոբինեանները 1794-ի Ապր-

րիլի 15-ին (յեղափոխական օրացոյցի հաշուով ժեքմիսայ ամսու 26-ին) փորձեցին յենակէտ ճարել «ճահիճ»ի ունեւոր բնակչութեան շրջանակին մէջ: Ականաւոր Ռորէսփիէրիստ Սէն ժիւստը հասարակական փրկութեան կոմիտէի անունով առաջարկեց երկրի խաղաղութեան համար կրճատել բռնազբաւումները, դադարեցնել տեղափոխական հազարներու վերաբերմամբ, պահել միայն քաղաքական յանցաւորներու տեղափոխումը, եւ մեղմացնել բոլոր այն միջոցառումները, որոնք կը դաշխին ունեւոր դասակարգերու, ազգային դոյքեր ձեռք բերողներու շահերուն:

ԹԷՐՄԻՂՈՐԻԱՆԱԿԱՆ ՌԷԱԿՑԻԱՆ

Սէն ժիւստի առաջարկը, սակայն, ապարդիւն անցաւ: Խոշոր բուրժուազիան կը պատրաստուէր իշխանութիւնը զբաւելու: «ճահիճ» այլեւս իր իսկական դէմքը ծածկելու պէտք չէր զգար: Միւս կողմէն՝ բանուորութիւնը չէզոքութիւն կը պահէր: Երբ բանուորներուն ապստամբութեան կոչ կ'ուղղուէր, անոնք կ'ըսէին — «Մենք անօթի կը մեռնինք, մինչդեռ դուք մեզ կ'ուղէք կշտացնել կախաղաններով»:

Փարիզի Կոմունան Եոմէտի Հէրերտիստներու անկումէն յետոյ պատշաճ ղեկավարութիւն չունեցաւ: Յակոբինեան ձախ տարրերը ենթարկուեցան «դոման»: Իրերու լարուած դրութիւնը կը մօտենար իր վախճանին: Հասարակական փրկութեան կոմիտէի անդամներու մէջ ալ տեղի ունեցաւ պառակտում. այստեղ ձախակողմեաններ, որոնք կողմնակից էին տեղափոխութեան, միացան աջակողմեաններուն՝ ընդդէմ Ռորէսփիէրի:

1794 թ. Թէրմիդորի 8-ին (Յուլիս 26-ին) Ռորէսփիէրը առաջարկեց որ Ազգային Ժողովը յայտարարէ դիկտատուրա, ոչնչացնէ յեղափոխութեան թշնամիները, զտում կատարէ կոմիսարներու միջեւ եւ Հասարակական Անվտանգութեան Կոմիտէն ենթարկելով Հասարակական Փրկութեան Կոմիտէին՝ հաստատէ Ժողովի միասնական կառավարութիւն:

Յակոբինեան ակումբը ու Կոմունան Ռորէսփիէրի կողմն էին: Բայց անոնց թուլութիւնը, տիրող պառակտումը, հակառակորդներու միացումը եւ Փարիզի բանուորներու անտարբերութիւնը ամէն ինչ արգելեցին: Թէրմիդորի 9-ին, Ազգ. Ժողովը աջակողմեան թշնամիներու ճնշման տակ «ճահիճ»ի օգնութեամբ որոշեց Ռորէսփիէրը իր ընկերներով Յեղափոխական Ատեանին յանձնել:

Մասսաները Ռորէսփիէրը պաշտպանելու փորձ չըրին: Փարիզի Կոմունայի կոչը, որ ապստամբութեան կոչ էր, արձագանազ չզբտաւ: Թէրմիդորի 10-ին, Ռորէսփիէրը, Սէն ժիւստը եւ ուրիշներ՝

գլխատուեցան: Սկսած է յետադիմութեան եւ սպիտակ տեղափոխման անակաշըջանը: Ետեւումը կը գլխաւորէր «ճահիճ»ը: Վերջացաւ Փարիզի Կոմունան, անոր տեղն անցաւ 12 թաղապետութիւններէ կազմուած մարմին մը: Ողջ մնացող պատգամաւոր-ժիրոնզիստները վերադարձան ու մտան Ազգ. Ժողովին մէջ: Յակոբինեան ակումբը տակն ու վրայ ըրին: Մաքսիմուսը ամբողջովին վերցուցին: Յեղափոխութեան պատմութեան մէջ դասակարգային պայքարի զարգացման «վերընթաց» դիժը վերջացեր էր. այժմ եկած էր բուրժուական յեղափոխութեան զարգացման «վարընթաց» դիժը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՏԱՐՈՒԱՅ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՐՉԱԿՈՅՏԸ (ԴԻՐԵԿՏՈՐԻԱՆ)

Փարիզի արուարձաններու անօթի բանուորները 1795-ի դարնան տարերային ապստամբութիւններով կը պահանջէին հաց եւ 1793-ի սահմանադրութիւնը: Յակոբինեաններու մնացորդները կ'ենթարկուէին սարսափելի հալածանքներու եւ յարձակումներու: Ֆրանսայի բոլոր քաղաքներու մէջ կը տիրէր սպիտակ տեղափոխումը, որ աւելի շատ զոհեր տարաւ, քան կարմիր տեղափոխումը: Թաղաւորականներն ու վերադարձող փախստականները ամենուրեք անկարգութիւններ կը սարքէին եւ կը փորձէին յեղաշրջում, այսինքն՝ հիմնել քաղաքակապետութիւն: Ազգ. Ժողովը աւարտեց իր աշխատանքները՝ մշակելով նոր սահմանադրութիւն մը, որ կոչուեցաւ Հանրապետութեան Երեք Տարուայ Սահմանադրութիւնը: Ընդհանուր ընտրական իրաւունքի օրէնքը վերցուեցաւ: Օրէնսդրական իշխանութիւնը կը պատկանէր երկու պալատներու՝ Աւագներու Խորհուրդին եւ Հինգ Հարիւրի Խորհուրդին: Գրութիւնը կայուն պահելու համար Ազգ. Ժողովի երկու երրորդ պատգամաւորներու տեղը միայն մէկ երրորդը որպէս նոր անդամներ ներս առնուեցան: Գործադիր իշխանութիւնը յանձնուեցաւ Վարչակոյտին, որ կը բաղկանար հինգ հոգիներէ: Վարչակոյտը կը նշանակէր նախարարներն ու բանակներու հրամանատարները, ան էր, որ կը վարէր երկրի արտաքին քաղաքականութիւնը եւ կը ներկայացընէր դերադոյն իշխանութիւնը: Երեք տարուայ Սահմանադրութիւնը կ'ապահովէր խոշոր բուրժուազիայի քաղաքական տիրապետութիւնը: Քաղաքի չքաւոր զանգուածները զրկուեցան քաղաքական իրաւունքներէն: Մաքսիմուսի վերացման եւ կենսամթերքներու սղութեան հետեւանքով բանուորներու եւ չքաւոր խաւերու դրութիւնը անտանելի կը դառնար:

Վարչակոյտի կառավարութեան օրով սկսաւ բուրժուական հասարակութեան եռուզեռոտ կեանքը: Բուրժուազիան մտած էր իր զեր-

իշխանութեան ճամբան ու կը յառաջանար, հոգ չէ թէ անդին՝ մասսաները սովամահ կ'ըլլային: Ո՞վ էր մնացեր հրապարակին վրայ, որ իր անձը զոհելու պատրաստակամութեամբ ժողովուրդը առաջնորդէր դէպի արմատական յեղափոխութիւն:

ԳՐԱԿԻՒՍ ԲԱՔԵՈՓՐ

Վարչակոյտի իշխանութեան թունդ ժամանակն էր, երբ կոչեր արձակուեցան յեղափոխական պայքարը վերսկսելու եւ նոր յեղափոխութեամբ իրերու դրութիւնը հիմնապէս յեղաշրջելու համար: Շարժումը ուղղուած էր հարուստներու դէմ, երեք տարուայ սահմանադրութեան դէմ: Այս շարժման զեկավարն էր Ֆրանսուայ էմիլ Գրակիւս Բարէոֆը (1760-1797): «Գրակիւս» անունը Բարէոֆը իւրացուցած էր ի յիշատակ յայտնի հին հռոմէական տրիբուններուն(*) (ատենակալներուն): Ինքը՝ Բարէոֆը, հետեւեալ ձեւով կը բացատրէր իր անուանափոխութիւնը. — «Ես ինձ համար ընտրած եմ որպէս հովանաւորներ՝ հռոմէական հանրապետութեան ամենապնդիւ քաղաքացիները, որոնք բուն ցանկութիւն ունէին իրենց երկրին մէջ հաստատելու ընդհանուր բարօրութիւն: Այդ ուղեգծով եւ բարոյական նպատակ ունեցեր եմ անոնց նման նոյնքան ուժեղ շարժում նուիրուել ընդհանուր բարօրութիւն հաստատելու նուիրական գործին: Միապետութեան, արիստոկրատիայի եւ Փանատիկոսութեան բոլոր հիմքերը երկրի երեսէն ջնջելու համար՝ մենք հանրապետական անուներ տրուած ենք մեր տեղերուն, մեր քաղաքներուն, մեր փողոցներուն: Բայց ի՞նչ է այսօրուայ իրականութիւնը. փոխան մէկ բռնակալի՝ կը տեսնենք տասնեակ բռնակալներ»:

Բարէոֆը երկրաչափ էր. իր գործի բերումով երբ կը շրջէր գիւղերը՝ եկաւ այն համոզումին, որ ընկերային անարադարութեանց ազդիւրը հողային յարաբերութիւններու անհաւասարութիւնն է: Ինքը՝ որպէս պաշարաւոր մտքի տէր յեղափոխական՝ մասնակցեր էր Բաստիլի առումին եւ շատ մօտ կանգնած էր Յակօրինեաններուն. իսկ 1792-1793-ի տարիներուն՝ ան դարձաւ «ազրարային օրէնքի» եւ հողերու հաւասար բաշխումի կողմնակից: Բարէոֆը կը հրատարա-

(*) Տրիբունները հին Հռոմի այն պաշտօնեաներն էին, որոնք կը պաշտպանէին պլէբիական (ոսմիկ ժողովուրդի) շահերը: Գրակիւս եղբայրները (Տրիբերիոս եւ Կայոս) տրիբուններ եղած ժամանակ, Բ. դարուն (Ն. Ք.) կը պայքարէին յօգուտ հողային բարեկարգութիւններու:

կէր «ժողովրդական Տրիբուն» թերթը, որ սուր յարձակումներ կ'ընէր Թէրմիդորականներու վրայ եւ անվերապահօրէն կը դատապարտէր անոնց գործած հասարակական աններելի ոճիրները: Իր յանդուգն յայտարարութիւններուն համար 1795-ի դարնան ձերբակալուեցաւ, իսկ նոյն տարուան Հոկտեմբերին ազատ արձակուեցաւ, բայց աննահանջ ոգիով շարունակեց իր լրագրական աշխատանքը: Բուռնարոտիի, Դարտէի եւ ուրիշ ընկերներու հետ կազմակերպեց Հաւասարներու Ընկերութիւնը եւ մշակեց ապստամբութեան ծրագիր մը — «Հաւասարներու դաւադրութիւնը»: Դաւաճան Գրիգէլի ամբօրինավարական գրգռիչ ելոյթներու հետեւանքով՝ 1796-ի Մայիսին, Բարէոֆն ու իր ընկերները ձերբակալուեցան եւ գլխատուեցան (1797 Մայիս 27-ին):

Սկիզբէն, Բարէոֆը համոզուած էր որ Ռոբէսփիէրի տապալմամբ նոր յեղափոխութիւնը կը սկսի: Սակայն Թէրմիտորիական ուժակցիւն, սպիտակ տնտօրը Բարէոֆը տարին հակառակ համոզումի: — «Պէտք է քաջութիւն ունենալ խոստովանելու որ, — գրած էր Բարէոֆը, — վերջիվերջոյ մենք թոյլ տուինք որ հակայեղափոխութիւնը յաղթանակէ»: Այս խոստովանութենէն կը սկսի շրջադարձ մը Բարուվիգմի պատմութեան մէջ, ինչպէս նաեւ մերձեցում մը՝ Բարուվիստներու եւ Յակօրինեաններու միջեւ: Բարէոֆը կը քարոզէր քաղաքական ազատութեան տիրապետութիւն, իշխանութեան դրաւում եւ ապա՝ աշխատաւորութեան տնտեսական ազատագրում: Բարուվիստները չարիք կը համարէին մասնաւոր սեփականութիւնը, իսկ հարուստները՝ ժողովուրդի անարդ թշնամիները: Բարէոֆ շարունակ կը կրկնէր. — «Յեղափոխութեան նպատակն է ոչնչացնել ընկերային անհաւասարութիւնը եւ հաստատել ընդհանրական բարօրութիւն: Մենք կը ձգտինք... հաւաքական-համայնական սեփականութեան: Կորչի՛ հողի մասնաւոր սեփականութիւնը, հողը ո՛չ ոքի կը պատկանի»: Բարէոֆը դարձաւ իրաւազուրկներու, ընչազուրկներու տրիբունը: Անոր թերթը՝ ժողովրդական Տրիբունը իրապէս կը պաշտպանէր ժողովուրդի իրաւունքները: Ան աշարջութեամբ կը հետեւէր Թէրմիտորիական ուժակցիւնի զարգացման ընթացքին եւ կը տեսնէր սպառնացող վտանգը, նոյն ատեն կը պարզաբանէր Ժիրոնդիստներու պատգամաւորներուն Ազգ. ժողովի մէջ մտնելու նշանակութիւնը եւ անխնայ կը խորազանէր Թէրմիտորի հաստատած «կարգերը»: — «Կ'ըսեն թէ ամէն ինչ կ'ընթանայ դէպի լաւը, — կը գրէր Բարէոֆը. — Այո՛, ճիշդ է այդ՝ արիստոկրատներու եւ ազատութեան թշնամիներուն համար: Սակայն ի՞նչ է ողբալի վիճակը այն խեղճուկ բանուորին, որ օրական միայն չորս Փրանկի համար 14 ժամ կ'աշխատի»:

Բարէոֆը նոր ապստամբութիւն կը քարոզէր: Ան համոզուած

էր որ 24 միլիոն Ֆրանսական բնակչութիւնը պատրաստ էր ապստամբելու :

Բուրժուազիան քայլ առ քայլ կը հետեւէր Բարէոֆին : Ան մի քանի անգամ ինկեր էր թշնամիներու ձեռքը եւ բանտարկուած էր : Վերջին անգամ, երբ ան բանտարկուեցաւ, մեծ ուրախութիւն պատճառեց բուրժուազիային : Իսկ օր մը, երբ ոսկի երիտասարդութիւնը թատրոնին մէջ կ'այրէր ժողովրդական Տրիբունին համարները, բուրժուական հանդիսականներու հրճուանքը աննկարագրելի էր :

Թէրմիտորի ժամանակաշրջանին թագաւորականներու ապստամբութիւնը պատճառ եղաւ որ Ազգային ժողովը հակի դէպի «ձախ» : Ժողովը ձախակողմեան հատուածները սիրաշահելու համար 1795-ի Հոկտեմբեր 18-ին, Բարէոֆը բանտէն ազատ արձակեց : Բայց յեղափոխական Բարէոֆը թատերական ձեւակերպութեամբ կաշառուողներէն չէր. ան շուտով կազմակերպեց «Հաւասարներու Ընկերութիւնը», որուն մէջ մտան Բարուպիտներուն հետ նաեւ Յակորինեանները :

Բարէոֆ կը ձգտէր բոլորովին ոչնչացնել բուրժուական սեփականատիրութիւնը եւ հիմնել կոմունիստական հասարակարգ՝ ճնշուած մասսաներու յեղափոխութեան միջոցով :

Բարէոֆի ծրագիրը հետեւեալ կէտերը կը պարունակէր. 1) Աշխատանքն ու սպառումը պէտք է ըլլան ընդհանուր՝ բոլորին համար. 2) Ոչ ոք իրաւունք ունի իւրացնելու հողային եւ արդիւնաբերական միջոցներու սեփականութիւնը. 3) Ճշմարիտ հասարակութեան մէջ պէտք է ըլլան ո՛չ հարուստներ եւ ո՛չ ալ աղքատներ. 4) Յեղափոխութեան նպատակն է՝ ոչնչացնել անհաւասարութիւնը եւ հաւասար աշխատանքի եւ հաւասար վայելքի սկզբունքով յաւերժացնել ընդհանուր երջանկութիւնը :

1796-ին Վարչակոյտի կառավարութիւնը արգիլեց «Հաւասարներու Ընկերութեան» գործունէութիւնը, որով ընկերութիւնը եղաւ ընդլատակեայ կազմակերպութիւն՝ դաւադրական ծրագրով : Մայիս 8-ի գաղտնի ժողովին մէջ պատրաստուեցան ապստամբութեան մանրամասնութիւնները. այն է՝ պատնէշով չըջապատել Սանտ Անթուանի արուարձանը, զբաւել Մոնմարդրի բարձունքը, կազմակերպել զինուորական ջոկատներ, եւ անձնուրացներու զօրաբանակ, զինել բանուորները, ձերբակալել օրէնսդիր մարմինը եւ սպաննել Վարչակոյտի բոլոր անդամները :

«Հաւասարներու դաւադրութիւնը» ձախողեցաւ ո՛չ միայն Գրիզէլի դաւաճանութեան պատճառով, այլեւ անոր համար՝ որ անիկա պաշտպանութիւն չգտաւ մասսաներէն. բանուոր դատակարգը փոքրաթիւ էր եւ չափազանց թոյլ, իսկ զիւղացիութիւնը մէկ կողմ

քաշուած մնաց ու չխառնուեցաւ Բարուպիտական շարժման մէջ, մինչ անդին բանակն ալ ուրիշ բացասական ազդեցութիւն ունէր յեղափոխական շարժման վրայ, որովհետեւ ան՝ ամբողջ Ֆրանսայի ժողովուրդի ուշադրութիւնը զբաւած էր իր յաջող արշաւանքներով :

«Հաւասարներու դաւադրութիւնը» երբ խորտակուեցաւ եւ անոր առաջնորդները Բարէոֆի հետ գլխատուեցան, զրեթէ նոյն ատեն Փարիզի մէջ յայտնի դարձան Իտալիոյ մէջ Նաբոլէոն Բոնապարտի փայլուն յաղթանակները, որոնք ամբապնդեցին Դիրէկթորիայի (Վարչակոյտի) կառավարութեան հեղինակութիւնը :

Բարուպիզմը կրնանք ըսել թէ՛ գործնականին մէջ առաջին փորձը կը հանդիսանայ իրականացնելու կոմունիստական զաղափարները : Անիկա ԺԹ. դարու յեղափոխական-կոմունիստական շարժման նախադուռը բացաւ :

ՌԱԶՄԱ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԷՆ
ՅԵՏԱԴԱՐՁ ԴԷՊԻ ՖԷՆՊԱԼԻԶՄ
ՖՐԱՆՍԱՅԻ ՄՂԱԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Վարչակոյտի իշխանութեան ժամանակաշրջանին Ֆրանսան յաջողութեամբ կը շարունակէր պատերազմները : Ֆրանսական զօրքերը նուաճեցին Պելճիքան, Հոլանտան, զբաւեցին ձեկնովայի ծովափը ու Գերմանիոյ ձախ հոնոտեան երկրամասերը, զբաւեցին Սալոյիան ու Նիցցան : 1795-ի սկիզբէն, Պրուսիան՝ զբաղած ըլլալով Լեհաստանի բաժանման խնդրով՝ դուրս եկաւ պետութեանց միակցութենէն եւ ճանչցաւ Ֆրանսական հանրապետութիւնը : Ամենամեծ եւ ուժեղ ցամաքային պետութիւնը, որ կը շարունակէր պատերազմը Ֆրանսայի դէմ, մնացեր է Աւստրիան : Ֆրանսական զօրքերը Բոնապարտի հրամանատարութեամբ՝ յաղթութեամբ աւարտեցին Իտալիոյ նուաճումը եւ այնտեղ հիմնեցին նոր՝ Ֆրանսայի դաշնակից՝ «քոյր հանրապետութիւններ», ուրկէ անոնք շարժեցան դէպի Վիեննա : Դեռ Աւստրիայի մայրաքաղաքը չհասած՝ 80 քիլոմէթր հեռաւորութեան վրայ Բոնապարտը զինադադար կնքեց Աւստրիացիներու հետ եւ ապա՝ նպաստաւոր դաշնագիր : Գալով Անգլիոյ, ան իր աշխարհագրական դիրքով եւ ուժեղ նաւատորմի զով՝ անխոցելի մնաց պատերազմի ընթացքին : Բոնապարտի բոլոր փորձերը Անգլիան նուաճելու դժով՝ վերջացան անյաջողութեամբ : Այդ փորձերէն մին էր Հոշի արշաւանքը դէպի Անգլիա՝ իրլանտական ապստամբութեան աջակցելու նպատակով եւ իրեն՝ Բոնապարտի զօրարշաւը դէպի Եգիպտոս. երկուքն ալ յաջող ելք չունեցան :

Բայց յեղափոխութիւնը բարենպաստ պայմաններ ստեղծեց Ֆրանսայի կապիտալիստական զարգացման համար : Երկրի տնտեսա-

կան փլուզումին վերջ տրուած էր. ընդարձակուած էին մշակելի հողերը. կը զարգանար անասնաբուծութիւնը. կը բարձրանային ցորենի եւ հողի դիւները: Տնտեսական աշխուժացումը արտայայտուեցաւ նաեւ արդիւնաբերութեան ասպարէզին մէջ: Յեղափոխութեան շնորհիւ բարձրացած նոր դասակարգերը կը վախճային ժողովրդական յեղափոխութենէն եւ նոյն ատեն չէին ցանկար որ «հին կարգերը», հին տէրերը վերադառնան: Պաշտպանութեան կարօտ՝ նոր բուրժուազիայի անկայուն դրութիւնը կը բարձրացնէր յաղթական բանակին եւ անոր զօրավարներու հեղինակութիւնը՝ քաղաքական գործերու մէջ:

Յրանսական զօրքերը իրենց արշաւանքներու ժամանակ կ'ապրէին պարտուած երկիրներու հաշտոյն: Նարոլէոն Բոնապարտ խտրական պետութիւններուն մէջ (Պլեմոնտ, Միլան, Ճենովա, Պապի շրջանը) ահագին ռազմատուգանքներ հաւաքեց եւ անոնց օգնութեամբ կազմակերպեց բանակի պարենաւորման ու մատակարարման գործը: Այդպիսի ռազմատուգանքներով Բոնապարտը օժանդակեց Յրանսայի Ֆինանսական բարելաւումին: Պատերազմները կ'ուժեղացընէին բուրժուազիայի անտեսական գերիշխանութիւնը, անոր համար ձեռք կը բերէին առատ հում նիւթեր ու վաճառքի շուկաներ. ասով կը նպաստէին արդիւնաբերութեան զարգացումին: Բուրժուազիան կը հարստանար՝ սպասարկելով բանակին: Իսկ զօրքերը դէպի նորանոր յաղթանակներ տանող զօրավարները, այդ բուրժուազիայի աննման «հերոսները» կը դառնային... Հապա Նարոլէոն Բոնապարտը... Ան արդէն կիսաստուած կը համարուէր:

Յրանսայի մէջ կ'ուժեղանային միապետութեան վերականգման կողմնակիցները, որոնք իրենց ներկայացուցիչներն ունէին օրէնսդրական պալատներուն մէջ: Փարիզի մէջ թագաւորական դաւադրութիւնը արագօրէն լուծարքի ենթարկողն եղաւ այն զօրավարը, որ Բոնապարտը զրկեր էր Իտալիայէն: Այս գործը Բոնապարտի պատիւը աւելի բարձրացուց եւ դայն ներկայացուց թունդ հանրապետական: Հանրապետական կառավարութիւնը՝ հաշուի առնելով բանակի ուժն ու ազդեցութիւնը, կը պատրաստուէր իշխանութիւնը յանձնել զինուորական զիկտատորի ձեռքը: Այդ դերը ստանձնեց զօրավար Նապոլէոն Բոնապարտ (1769-1821):

Բոնապարտիղմը երեւան եկաւ դասակարգերու անկայուն հասարակչութեան հետեւանքով՝ իրրեւ արդիւնք այն քաղաքականութեան՝ որ կը ձգտէր ժողովրդականութիւն վայելող զօրավարի զիկտատուրայի օգնութեամբ լուծարքի ենթարկել յեղափոխութիւնը եւ հաստատել բուրժուազիայի քաղաքական գերիշխանութիւնը: Բոնապարտի անձնական զիկտատուրան կը ներկայացնէր այն բուրժուազիայի դասակարգային քաղաքականութիւնը, որ եռանդուն կեր-

պով իր շահերը կը ծածկէր «ժողովուրդի շահերու» զիմակին տակ: Բոնապարտիղմը կոթնած էր Փրանսական բուրժուազիայի եւ պահպանողական զիւղացիութեան վրայ, որոնք սարսափահար եղած էին յեղափոխութեան ուրուականէն եւ կ'ուզէր կառավարել երկիրը տէրտէրներու ու բիւրոկրատիկ ապարատի օգնութեամբ: Բուրժուազիայի եւ զիւղացիութեան համար հայրենասիրութիւնը կը ներկայացնէր սեփականութեան զգացումի իտէալականացած ձեւը:

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻԻ ԲՐԻԻՄԵՐԻ 18-Ը

1799 թուի Նոյեմբեր 9-ին (յեղափոխական օրացոյցով ութնեւորդ տարիի Բրիւմէրի — Հոկտեմբերի — 18-ին) Բոնապարտը՝ իրեն հաւատարիմ զինուորներու զլուին անցած՝ ցրուեց երկու պալատները, վերցուց Վարչակոյտը (Գիւրէկթորիան) եւ հիմնեց Հիւպատոսութիւն՝ երեք հոգիներէ բաղկացած: Բոնապարտը դարձաւ առաջին Հիւպատոսը, կեդրոնացնելով ամբողջ իշխանութիւնը իր ձեռքին մէջ: Իր պաշտօնավարութիւնը տեւելու էր տասը տարի: Ան իրաւունք ունէր նշանակելու նախարարները, վարչական պաշտօնէութիւնը, իրաւունք ունէր հրատարակելու օրէնքներ եւ կարգադրելու երկրի բովանդակ ռազմական ուժերը՝ իր ուղած եղանակով:

Պատերազմական յաջողութիւնները շուտով ամբապնդեցին Բոնապարտի դիրքը: Բոնապարտը կամակատարն էր այն նոր արդիւնաբերական բուրժուազիայի, որ անգլիական իր ուժեղ մրցակիցի հետ պայքարելու համար պէտք ունէր պետական օգնութեան: Ասոր հետ միասին, Բոնապարտը յեղափոխութեան ժամանակ բռնադրաւուած եկեղեցական գոյքերն ու ազնուական փախստականներու հողերը զիւղացիներու եւ բուրժուազիայի հաստատ սեփականութիւնը դարձուց: Ասոր հետեւանքով՝ բնականաբար Բոնապարտը արդիւնաբերական բուրժուազիայի եւ զիւղացիական շրջաններու մէջ շատ զօրեղ պաշտպանութիւն ապահովեց իրեն համար: 1802ին, առաջին Հիւպատոսի իշխանութեան ժամանակաշրջանը յայտարարեց ցմահ, իսկ երկու տարի յետոյ՝ ընդհանուր քուէարկութեան միջոցով կայսր հռչակուեցաւ Նապոլէոն Ա. անունով (մինչեւ 1815):

Նապոլէոնի կայսրութիւնը շարունակական պատերազմներու ժամանակաշրջան է. այդ պատերազմներու նպատակն էր՝ կործանել Անգլիոյ քաղաքական եւ տնտեսական գերիշխանութիւնը: Նապոլէոնի ռազմական արկածախնդրութիւնը պիտի վերջանար միմիայն եւրոպական շուկաներու զբաւումով յօդուտ Փրանսական արդիւնաբերութեան՝ որ արագօրէն կը զարգանար, որովհետեւ երեւան եկած էին մեքենայական արտադրութեամբ մանր եւ խոշոր գործարաններ: Նա-

պոլէոնի նուաճած ու բռնօրէն իրեն դաշնակից դարձուցած երկիրները, պարտաւորուած էին խստիւ՝ կատարել 1806-ին յայտարարուած եւրոպական ցամաքամասի Բլոկէյտի սիստէմի (խափանարար դրութեան) պահանջը. այդ սիստէմը անգլիական ապրանքներու առջեւ կը փակէր եւրոպական շուկաներու դռները: Բլոկէյտի հիմնական նպատակն էր հաստատել Ֆրանսայի տնտեսական դերիշխանութիւնը եւ նուաճուած երկիրները վերածել Ֆրանսական գաղութներու: Ֆրանսական առուտուրը անսանձ կերպով ապահովելու նպատակով՝ Նապոլէոնը ոչնչացուց Թրիէստի, Վենետիկի եւ Հոլանտայի վաճառաչահ քաղաքներու նշանակութիւնը: Բոլոր ապրանքներու վրայ կը դրուէին կրկնապատիկ մաքսեր, միայն Ֆրանսական ապրանքները մաքսէ ազատ էին. անգլիական ապրանքները կը բռնազբաւուէին եւ նոյնիսկ հրոյ ճարակ կ'ըլլային: Այդ հետապնդումներու սաստկացման հակառակ՝ լայնօրէն կը զարգանար անգլիական ապրանքներու մաքսանենդութեամբ կատարուող առուտուրը: Ֆրանսական արդիւնարեութիւնը՝ իր տեխնիկական ցած մակարդակի պատճառով՝ չէր կրնար մրցիլ անգլիական մաքսանենդութեան գիծով յառաջ տարած առուտուրին հետ: Ֆրանսան երբեք ի վիճակի չեղաւ իր ապրանքներով բաւարարել եւրոպական շուկաներու պահանջները:

Նապոլէոնը, Անգլիան տնտեսական կղզիացումի ենթարկելով հանդերձ՝ Ֆրանսական բուրժուազիայի դերիշխանութիւնը ամրապնդելու նպատակով՝ կը նպաստէր, որ նուաճուած երկիրներու մէջ հին կարգերը խորտակուին եւ հաստատուի սահմանադրական ռեժիմ, բուրժուական իրաւակարգ: Գահընկէց ընելով Ֆէոդալական միապետները, Նապոլէոնը անոնց տեղը կը նստեցնէր իր ազգականները, որոնք բնակչութեան համար ծանր վարչաձեւ կը հաստատէին: Ֆրանսական բանակի ուժով ստեղծուած բուրժուական պետութիւնները — Գերմանիան եւ Իտալիան — վերածուած էին Ֆրանսական ապրանքներու սպառման շուկաներու: Բայց իրերը այդ դրութեամբ չէին կրնար շարունակուիլ, եւ ահա երեւան եկաւ եւրոպական բուրժուազիայի դիմադրութիւնը՝ Նապոլէոնի ռազմական կայսրութեան դէմ: Այդ բուրժուազիան անխուսափելիօրէն պէտք է անցնէր Ֆէոդալական կառավարութիւններու կողմը, որպէսզի ազատուէր Ֆրանսական արդիւնարեութեան դերիշխանութենէն եւ կործանէր Նապոլէոնի կայսրութիւնը: Այդ շարժումը ճարպիկօրէն օգտագործեց Անգլիան, որ բացառիկ յամառութեամբ կը շարունակէր պատերազմական արշաւը: Ան մի քանի անգամ եւրոպական պետութիւններու հետ միակցութիւններ կազմեց, բայց անոնց կրած պարտութիւններէն բնաւ չյուսահատեցաւ: Նապոլէոնի տարած փայլուն յաղթանակները Ֆրանսայի սուրին գրեթէ ամբողջ Եւրոպան: Աւստրիացիները Ռուսերու հետ մի-

ասին ջարդուեցան Աւստրիացի մօտ 1805ին: Պրուսիական զօրքերը ոչնչացան Ենի մօտ 1806-ին: Նապոլէոնի յաղթական զօրքերու գրոհումին առջեւ անձնատուր եղան պրուսիական բոլոր անառիկ կարծուած բերդերը: Նապոլէոնը գրաւեց Բերլինը: Այդ ատենները Ռուսաստանը խախտեց Նապոլէոնի հաստատած բլոքէյտը եւ սկսաւ ներածել անգլիական ապրանքներ: Նապոլէոն ահապին բանակի մը գլուխն անցած 1812-ին արշաւեց Ռուսաստան: Անյաջողութեամբ վերջացած այդ արշաւանքը եկաւ ամրապնդելու Անգլիոյ դիրքը եւ մեծապէս բարձրացուց անոր ազդեցութիւնը՝ Եւրոպայի մէջ: Անգլիան կրցաւ հզոր միակցութիւն մը կազմել Ֆէոդալական պետութիւններու հետ: 1813 եւ 1814-ի տարիներուն, Անգլիան, Ռուսաստանն ու Պրուսիան Նապոլէոնը Գերմանիայէն ետ մղեցին դէպի Ֆրանսա եւ հարկադրեցին որ ան գահէն հրաժարի: Անոնք Ֆրանսայի մէջ վերականգնեցին Բուրբոններու թագաւորութիւնը՝ յանձին Լուդովիկոս ԺԸ. Թագաւորին, որ Լուդովիկոս ԺՁ. ի յեղափոխութեան ատեն գլխատուած թագաւորին եղբայրն էր: Այսպիսով սկիզբ առաւ վերակառգման ժամանակաշրջանը:

Նապոլէոն հռչակուած է որպէս պատերազմական հանճար, սակայն այդ հանճարը շատ տղէտ էր քաղաքական տնտեսադիտութեան մէջ: Ան չէր դիտեր որ զինուորական ուժը ժամանակի մը համար կրնայ զսպել՝ կամ իրեն հպատակեցնել ընկերային զարգացողական ուժերը, բայց այդ զսպումը, այդ հպատակեցումը յաւիտենական չի կրնար ըլլալ:

Ֆրանսական բուրժուազիայի տնտեսական դերիշխանութիւնը ո'չ թէ Եւրոպայի՝ այլ նոյնիսկ իր հայրենիքին՝ Ֆրանսայի մէջ չէր կրնար զինուորական ուժով յաւերժանալ, երբ անխիղճ շահագործման ենթակայ ճնշուած ժողովրդական զանգուածներ կային հոն:

Շարունակական պատերազմները ցնցեցին Ֆրանսայի գիւղացիական տնտեսութիւնը, աւերեցին գիւղերը, դժգոհութիւն յառաջացուցին մասսաներուն մէջ:

Անոնք որ խելայեղօրէն կը ծափահարէին Նապոլէոնը, երբ ան գլորուեցաւ անդունդը, տանջուող մասսաները արհամարհանքով դիտեցին անոր անփառունակ անկումը:

ԳԼՈՒԽ Գ.

1848-Ի ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԾՐՋԱՆԸ

ՆԱԽԱԳԻՏ ԵՒ ԻՔՆԵՐ
(Համառոտագրութիւն)

Նապոլէոն Բոնապարտի կայսրութեան վերջնական խորտակումը պատեհութիւն տուաւ որ յաղթական պետութիւնները Ֆրանսական յեղափոխութեան նուաճումները լուծարքի ենթարկելու գործին ձեռնամուխ ըլլան: 1814-ին Վիեննայի մէջ եւրոպական պետութեանց ներկայացուցիչներու գոնկրէսը, որ շարունակուեցաւ մինչև 1815-ի տարին, ծայր աստիճան յետադիմական տրամադրութիւն ունէր եւ կը ձգտէր վերականգնել հին յարաբերութիւններն ու սահմանները, որոնք յեղափոխութեան ժամանակ փոխուած էին: Բայց այդ ծրագիրը կարելի չէր ամբողջութեամբ իրագործել, որովհետեւ իրերու դրութիւնը փոխուած էր. Ֆէոդալիզմի մնացորդները վերջնականապէս ոչնչացեր էին իրենց տեղը զիջելով կապիտալիստական հասարակութեան: Ֆրանսայի մէջ պահուեցաւ բուրժուական սահմանադրութիւնը Լուզովիկոս ԺԸ-ի թագաւորութեամբ: Անկէ յետոյ՝ պետութիւնները սկսան Եւրոպայի քարտէսը վերածել: Նախ փորձեցին հարցը լուծել ազգային սկզբունքի ուղեղիծով, բայց սկզբունքը նկատի չառնուեցաւ: Լեհաստանը բաժնուեցաւ Ռուսիոյ, Պրուսիոյ եւ Աւստրիոյ միջև: Բելճիդան եւ Հոլանտան միացած՝ կազմեցին մէկ պետութիւն: Գերմանիոյ մէջ ստեղծուեցաւ 38 մանր-պետութիւններու դաշնակցութիւնը: Իտալիան մի քանի մանր պետութեանց միջև բաժնուած մնաց:

Եւրոպայի մէջ թագաւորող ռէակցիային պահակ կանգնած էին Աւստրիան, Պրուսիան եւ Ռուսիան, որոնց միապետները Ռուսիոյ կայսր Ալեքսանդր Ա.ի առաջարկով «հին կարգերը» պահպանելու համար կազմեցին Սրբազան Դաշնակցութիւնը, որ յանուն «քրիստոնէական սիրոյ եւ սուրբ կրօնի», պէտք է պաշտպանէր Եւրոպան՝ «ոճրագործ յեղափոխութենէն»:

Բուրբոններու վերականգնումը Ֆրանսայի մէջ կը նշանակէր որ ամբողջ Եւրոպայի մէջ յաղթանակեր էր Նապոլէոնի կայսրութեան անկումէն յետոյ սկսուած յետադիմութիւնը՝ ռէակցիան:

Անգլիա.—

Յեղափոխական Ֆրանսայի դէմ մղուած պատերազմները, որոնց մէջ Անգլիան գործունեայ եւ մեծ մասնակցութիւն ցոյց տուած էր, երբեք չզանգաղեցուցին անգլիական կապիտալիզմի զարգացումը: Պետական պարտքը, որ կապուած էր պատերազմական ծախքերու հետ, աւելի եւ աւելի ուժեղացուց կապիտալիստները, քանի որ անք պետութեան դրամ փոխ կուտային մեծ տոկոսներով:

ԺԹ. դարու սկիզբը ձեռնարկութիւններու դէմ բանուորներու պայքարի ընթացքին յառաջացան բանուորներու առաջին միաւորումները — Թրէյտ Ինիքլնները — որոնց սարքած գործադուլներու հետեւանքով, կառավարութեան կողմէ ենթարկուեցան դաժան հետապնդումներու: 1824-ին, բանուորները յաջողեցան գործադրուած ճնշումները մեղմացնել:

ԺԹ. դարու սկիզբը պարլամենտը մեծ իրաւունքներ ունէր: Համայնքներու Տունը սահմանափակեց այդ իրաւունքը: — Ամբողջ փաստական իշխանութիւնը կ'անցնէր Համայնքներու Պալատին, թագաւորին ձգելով սոսկ վեթոյի իրաւունքը:

ԺԹ. դարու անգլիական բուրժուազիան քաղաքական կռուի կը պատրաստուէր յանուն ընտրական իրաւունքի: Անգլիոյ մէջ երկու խոշոր կուսակցութիւններ կային, որոնք կը ներկայացնէին երկու դասակարգեր: Անոնցմէ մէկն էր «Թորի»ներու կուսակցութիւնը, որոնք հողատէրերու շահերը կը ներկայացնէին. միւսը՝ «Վիգիթու» կուսակցութիւնը, որ կը ներկայացնէր բուրժուազիան: Այդ կուսակցութիւնները իրենց անունները ստացեր էին փոխադարձուած անարգանքով. — «Թորի» կը նշանակէր աւագակներ, «Վիգիթ» կը նշանակէր դաւադիրներ: Յետոյ՝ առաջաւոր բուրժուա մտաւորականութիւնը կազմեց երրորդ կուսակցութիւնը — արմատականներու կուսակցութիւնը: Այս պատկերը կը ներկայացնէին Անգլիոյ մէջ քաղաքական խմբակները պարլամենտական բարեկարգութեան շուրջը տեղի ունեցող պայքարի ընթացքին: Պայքարը կապուած էր 1815 թուին արդիւնաբերական այն ճգնաժամին, երբ ցորենի օրէնքներ սահմանուած

էին: Օգտուելով բանուորներու դժգոհութենէն, արգիւնաբերական բուրժուազիան զանոնք իր կողմը դրաւեց: Պայքարը արտայայտուեցաւ նախ ժողովրդական հաւաքոյթներով, ապա՝ պարլամէնտին մատուցուած խնդրագրերով: Պարլամէնտը մերժեց ընդառաջել բոլոր խնդրագրիներուն: 1819ին Մանչեստրի մէջ գումարուեցաւ հակայական հաւաքոյթ մը: Զինուորները յարձակեցան ու ցրուեցին այդ հաւաքոյթը: 17 անդէն բանուորներ սպաննուեցան եւ 400 հոգի վիրաւորուեցան: Պայքարը տեւեց տարիներով: Այնպէս կը թուէր թէ Անգլիան եւս պիտի հետեւէր Ֆրանսական յեղափոխութեան:

Վերջապէս պայքարի շրջանը աւարտեցաւ 1832-ին, երբ արգիւնաբերական բուրժուազիան յաղթանակեց:



Այս շրջանին երեւան եկան Իւքոպիստ սոցիալիստները: 1835-ին հրապարակ իջաւ Չարտիզմը, որու մասին էնգէլսը գրած է — «Չարտիզմը ճիշդ է, որ եղած է գլխաւորապէս բանուորական շարժում, բայց այն ժամանակ ան տակաւին չէր բաժնուած արմատական մանր բուրժուազիայէն: Բանուորներու արմատականութիւնը բուրժուազիայի արմատականութեան հետ ձեռք ձեռքի տուած կ'ընթանար:

Ֆրանսա .—

Բուրժուաներու վերականգման ատեն փախստական ազնուականները երբ վերադարձան, համոզուած էին որ յեղափոխութեան յառաջացուցած փոփոխութեանց վերջը եկած է արդէն: Երբ Լուզովիկոս ԺԼ-ի մահէն յետոյ դահլը բարձրացաւ Կարլ Ժ. անուան տակ «փախստականներու թագաւոր» Կոմս Դ'Արտուանը, հակայեղափոխական շարժման վտանգը մեծցաւ: Իրարու յաջորդեցին յեղափոխական շարժումները:

- 1815-1830 վերականգման շրջան:
- 1830 Փարիզի Յուլիսեան Յեղափոխութիւնը:
- 1830-1848 Յուլիսեան Միապետութիւնը:
- 1831 Նոյեմբեր .— Լիոնի առաջին ապստամբութիւնը:
- 1834 Ապրիլ .— Լիոնի երկրորդ ապստամբութիւնը:
- 1848 Փետրուար 24-էն Մայիս 4-ը .— Յեղափոխութիւն Ֆրանսայի մէջ: Պրոլետարիատի եւ բուրժուազիայի պայքարի սկիզբը: Յեղափոխութիւն Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ:
- 1848 Փետրուար 23-24-ին .— Փարիզի Յեղափոխութիւնը:
- 1848 Փետրուար 25-ին .— Հանրապետութեան եւ աշխատանքի իրաւունքի հռչակումը:

1848 Փետրուար 27-ին .— Ազգային սրահաստանոցներու կազմակերպման մասին հրովարտակը:

1848 Փետրուար 28-ին .— Լիւքսէմպուրկեան յանձնաժողովի կազմութիւնը:

1848 Մարտ 17-ին .— Փարիզի յեղափոխութեան ցոյցը:

1848 Մարտ 13-ին .— Յեղափոխութիւն՝ Վիեննայի մէջ:

1848 Մարտ 13-18-ին .— Յեղափոխութիւն Բեռլինի մէջ:

1848 Մայիս 4-էն Յունիս 27 .— Ֆրանսայի Սահմանադիր Ժողովը եւ պրոլետարիատի ու բուրժուազիայի միջեւ պայքարի ուժեղացումը: Հակայեղափոխութեան յաղթանակը Պրազայի եւ Նէապոլիտանական թագաւորութեան մէջ:

1848 Մայիս 15-ին .— Փարիզի պրոլետարիատի ելոյթը Սահմանադիր Ժողովի դէմ: Երկրորդ զինուած ապստամբութիւնը Վիեննայի մէջ:

1848 Յունիս 21-ին .— Ազգային արհեստանոցները ցրուելու, ոչնչացնելու մասին հրովարտակը:

1848 Յունիս 23-27 .— Պրոլետարիատի Յունիսեան ջախջախումը:

1848 Յունիս 27-էն 1849 Մայիս 29 .— Սահմանադիր Ժողով: Ֆրանսայի բուրժուա հանրապետութեան ամրապնդումը: Հակայեղափոխութեան յաղթանակը Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ:

1848 Դեկտեմբեր 10 .— Լուի Բոնապարտը նախագահ կ'ընտրուի:

1848 Հոկտեմբեր 30-ին .— Յեղափոխական Վիեննան գրոհուածով կը վերջանայ:

1849 Մայիս 29-էն 1851 Դեկտեմբեր 2-ին .— Օրէնսդիր Ժողով: Լուի Նապոլէոն յեղաշրջման կը պատրաստուի:

1849 Մայիս-Յունիս .— Դրէզդէնի, Պֆալցի եւ Բադէնի ապստամբութիւնները:

1849 Յունիս 13-ին .— «Լերան» ապստամբութիւնն ու պարտութիւնը: Ֆրանկֆուրտի պարլամէնտը կը ցրուի:

1850 Մայիս 31-ին .— Ընդհանուր ընտրական իրաւունքը կը վերցուի:

1851 Դեկտեմբեր 2-ին .— Լուի Բոնապարտի յեղաշրջումը:

1852 Դեկտեմբեր 2-ին .— Երկրորդ Կայսրութեան հաստատումը:

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ

Փրանսայի մէջ Յուլիսեան միապետութիւնը միայն պրոլետարիատի շարքերուն մէջ չէր որ վրդովանք կը յառաջացնէր: Փրանսայի արիստոկրատ դասակարգի կամապաշտ տիրապետութիւնը աւելի դժգոհութիւն կը պատճառէր բուրժուազիայի միւս խումբերուն, որոնք ընտրական սեղմիչ օրէնքներու հետեւանքով քաղաքական կեանքի մէջ մասնակցութիւն չունէին:

Դժգոհները կը պահանջէին փոխել ընտրական օրէնքը: Բայց այդ պահանջները միատեսակ չէին, որովհետեւ անոնք ընկերային տարբեր խաւերէ գուրս կուգային: Արդիւնաբերական խոշոր բուրժուազիան պալատներուն մէջ փոքրամասնութիւն ըլլալով՝ կռուուր ձայն չունէր: Փինանսական բուրժուազիան կը կողոպտէր երկիրը եւ միայն փշրանքներ կը հրամայէր արդիւնաբերական բուրժուազիային, որ պատրաստ էր Լուզովիկ Ֆիլիպի միապետութեան հետ դորժակցիլ եթէ միայն ընտրական օրէնքը փոխուէր եւ ինք պատեհութիւն ունենար հասնիլ իշխանութեան զլուխը: Միւս կողմէն, միջակ բուրժուազիան կը ձգտէր հանրապետութեան, բայց հակառակ էր սոցիալական բարեկարգութեան:

Բուրժուազիայի ամենաձախ թիւը կը բռնէին ղեմուկրատ հանրապետականները, մանր բուրժուական մտաւորականներու այն խումբակը, որ իր պահանջներով կ'անջատուէր կոմունիստներէն: Անոնք կողմնակից էին 1793-ի սահմանադրութեան, կը պահանջէին ընկերային բարեկարգութիւններ՝ որպէսզի բարելաուի հասարակութեան խոնարհ խաւերու զրութիւնը. միայն մէկ բան մնալու էր որպէս սրբութիւն, այդ ալ սեփականութեան իրաւունքն էր:

1839-ի անյաջող ապստամբութենէն յետոյ՝ դադրեցան դաւադրութիւնները եւ տեղադրուական փորձերը: Գործարանային եւ արհեստաւորական պրոլետարիատի յեղափոխական մասը մնացեր էր առանց առաջնորդի, որովհետեւ այդ առաջնորդները բոլորն ալ ձերբակալուած էին: Բուրժուազիայի ընդդիմադիր հատուածը անկարող եղաւ բան մը ընել: «Երկիր մէջ կարգ ու կանոնը երկարատեւ ապահովուած է», յայտարարեց նախարարապետ Գիզոն, Փետրուարեան յեղափոխութենէն երկու տարի առաջ. բայց ի՞նչ կ'ըսէր գերման բանաստեղծ Հայնէն. — «Փրանսայի մէջ հրաշալի, խաղաղ հանդարտութիւն մը կը տիրէ: Անգոյն, քնաթաթախ ու յօրանջող է աշխարհը:

Չմեռնային դիշեր է, ամէն ինչ հանդիստ է: Միայն միանուագ կաթկըթոց մը կը լսուի: Անոնք տոկոսներն են որ կաթիլ կաթիլ կ'իյնան շահագործող հարուստի կապիտալին վրայ»:

Սակայն այդ «քնաթաթախ, յօրանջող աշխարհի» վերմակին տակ բանուորական մասսաներուն մէջ յեղափոխական նոր ուժեր կը խմորուէին...

Ծածկուած կատաղութիւնը երբեմն հրապարակ կ'իջնէր. նորանոր մահափորձեր կը կատարուէին Լուի Ֆիլիպի դէմ: Բաւական էր մի քանի ցնցում, որպէսզի Յուլիսեան միապետութիւնը կործանուէր: 1845-ի տարին Փրանսայի բերքը շատ վատ էր: Յաջորդ տարին ատոր վրայ աւելցաւ գետնախնձորի հիւանդութիւնը. իսկ գետնախնձորը քաղաքի բնակչութեան դրեթէ միակ կերակուրն էր: Փրանսայի զանազան մասերու մէջ, անօթութեան հետեւանքով յառաջ եկան խռովութիւններ: Կառավարութիւնը դիմեց պատժական խիստ օրէնքներու: 1847-ին բռնկեցաւ համաբնակչական ծանր արդիւնաբերական ճգնաժամ, որ պրոլետարիատի համար սարսափելի էր: Այդ ճգնաժամը հարուածեց նաեւ արդիւնաբերական բուրժուազիան՝ որուն համար աւելի անտանելի դարձաւ Ֆինանսական արիստոկրատի բռնակալութիւնը: Հասարակութեան վարի խաւերու շարժումները արդիւնաբերական բուրժուազիային քաջութիւն կը ներշնչէին, քանի որ ինք կ'ընար օգտուիլ այդ շարժումներէն՝ սարսափի մասնելով կանաւարութիւնը, բայց միւս կողմէն, կը վախնար այդ շարժման յեղափոխական հեռանկարէն: Ահա թէ ինչո՞ւ արդիւնաբերական բուրժուազիան յեղափոխութենէն խուսափելու նպատակով միմիայն բարենորոգումներ կը պահանջէր, այսինքն՝ ընտրական իրաւունքի ընդլայնում: Այդ պահանջներուն Գիզոն կը պատասխանէր. «Հարըստացէք, աշխատեցէք, տուրքեր հաւաքեցէք եւ դուք ընտրողներ կը դառնաք»: Կառավարութեան անդրդուելիութիւնը ստիպեց որ պարլամենտական ընդդիմադիր հոսանքը օժանդակութեան համար դիմէ երկրին, այսինքն՝ բանուորներու եւ մանր բուրժուազիայի չապահովուած մասին: Դիմումի համար ընդդիմադիր հոսանքը յարմար ձեւը ընտրեց բանգուէտները՝ հասարակական ճաշկերոյթները, որոնց ժամանակ քաղաքական ճառեր կ'արտասանուէին: Այդ պահուն փողոցներուն մէջ խաղաղ ցոյցեր կազմակերպուելու էին: Այդ ընդդիմադիր հոսանքը ո'չ յեղափոխութիւն կ'ուզէր, ոչ ալ հանրապետութիւն, այլ միայն ընտրական բարեկարգութիւն: Բայց յեղափոխական տրամադրութիւնները երթալով աւելի լայնօրէն կը տարածուէին մասսաներուն մէջ:

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ՕՐԵՐԸ

Այսպիսի պայմաններու մէջ եկաւ 1848-ի Փետրուար ամիսը ողջունելու Ֆրանսան: Փետրուար 22-ին Փարիզի մէջ նշանակուած էր բանգուէտ. նոյն ատեն պէտք է բանուորներու եւ ուսանող երիտասարդներու հսկայական ցոյց մը տեղի ունենար: Ատոր ընդդիմանալ՝ կը նշանակէր յեղափոխութեան դուռ բանալ: Բուրժուազիան ետ քաշուեցաւ, երբ կառավարութիւնը բանգուէտը արդիւնէց: Բանգուէտը տեղի չունեցաւ, բայց Փետրուար 22-ի առտուն կանուխ՝ բանուորներն ու արհեստաւորները մեծ խումբերով մէկ անգամէն լեցուեցան Փարիզի փողոցները: Ուսանողներու խումբերն եկան ու անցան այդ բաղձութեան գլուխը՝ դռնէնով. — «Անկցի Գիզոն, կեցցէ ռեֆորմը»: Յուցարարները քալեցին դէպի Փարիզի կեդրոնը: Շուտով ընդհարում տեղի ունեցաւ կառավարական զօրքերու հետ: Յուցարարները կողոպտեցին դէնքերու խանութները եւ գինուեցան. իսկ իրիկունը արուարձաններուն մէջ կառուցուեցան պատնէշներ: Կառավարութիւնը ինքզինքը պաշտպանելու համար առաջ քաշեց խոշոր ու միջակ բուրժուազիայէն կազմուած ազգային զօրագունդը: Սակայն այս վերջինը չուզեց կրակ բանալ ժողովուրդին վրայ, իսկ անոր քանի մը մասերը միացան ապստամբներուն: Ազգային զօրագունդը համոզուած էր որ շարժման վերջնական նպատակն էր ընտրական ռեֆորմը եւ Գիզոնի կառավարութեան տապալումը: Լուի Ֆիլիպը վճռեց հրաժարեցնել Գիզոն: Այդ լուրը անմիջապէս տարածուեցաւ ամբողջ քաղաքին մէջ: Կռիւր զաղբեցաւ: Երեկոյեան, Փարիզի լուսաւորուած փողոցներու մէջէն կը քալէր արուարձաններու բանուորութիւնը՝ երգելով «Մարսէյէզը»: Զինուորներու ջոկատ մը, որ կը պաշտպանէր կառավարական մէկ շէնքը, կտրեց խաղաղ կերպով քաղաքագութեան ճամբան: Զոկատի պետին հետ բանակցութեան ժամանակ, անյայտ անձնաւորութիւն մը, որ գուցէ կառավարութեան մէկ պատրաստուած զործակալն էր, կրակ բացաւ. ասոր հետեւեցաւ մասսայի վրայ ուղղուած՝ ջոկատի համազարկը: Բազմաթիւ մարդիկ սպանուեցան ու վիրաւորուեցան: Ողջ մնացողներէն ո՛չ մէկը փախուստի դիմեց: Սկսաւ սարսափելի կռիւր: «Վրէ՛ժ» կը գոչէին բանուորները: Զինուորներու ջոկատը անյայտացաւ: Հսկայական թափօրը սպաննուածներու դիակները վերցնելով, մինչեւ կէս դիշեր՝ սկսան շրջիլ փողոցները: Առաւօտեան դէմ մի քանի փողոցներ գրեթէ ամբողջապէս ծածկուած էին պատնէշներով: Զանազան քաղաքամասերու մէջ սկսան արիւնալի ընդհարումներ: Յեղափոխական ժողովուրդը կռուի եռանդով լեցուած՝ կը մօտենար Թիյուլերի պալատին: Թաւառը հազիւ կրցաւ հրաժարականը ստորագրել եւ փախուստի դի-

մելով՝ ազատել իր կեանքը: Ժողովուրդը պալատը դրակեց: Բաստիլի հրապարակին վրայ ծաղրական կոչերով թագաւորին դահը խարոյկի վրայ վառեցին: Ինչպէս 1830 թուին, այս անգամ ալ բուրժուազիան փութաց յաղթութեան արդիւնքները օգտագործել իր դասակարգային շահերուն:

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Զինուած պրոլետարիատի ճնշման տակ միապետութիւնը տապալուած յայտարարեցին եւ կազմեցին ժամանակաւոր կառավարութիւն մը, որուն մէջ բանուորներու կողմէն երկու ներկայացուցիչներ մտան, Լուի Բլանը եւ բանուոր մեխանիկ Ալբերը: Այսպիսով իսկական յաղթողները կառավարութեան տասնմէկ պաշտօնեաներուն քով միայն երկու հոգի կրցան ունենալ: Փետրուարեան յաղթութենէն յետոյ՝ ասիկա առաջին խարբեայութիւնն էր ուղղուած պրոլետարիատին. ասոր հետեւեցան խարբեայութիւններու ամբողջ շարք մը: Զընայած ժամանակաւոր կառավարութեան մէջ մեծամասնութիւն կազմողները արդիւնաբերական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին, բայց զինուած եւ իր պահանջները բարձրագոյն յայտարարող պրոլետարիատի դոյութեան փաստը անհրաժեշտ կը դարձնէր յարմարողական եւ համաձայնողական քաղաքականութիւնը: Այդ իսկ պատճառով ժամանակաւոր կառավարութեան մէջ ղեկավարող դերը կը կատարէին երկու մարդիկ, մէկը մանր բուրժուազիայի՝ խանութպաններու եւ արհեստաւորներու առաջնորդ Լեդրու Ռոլանը եւ միւսը՝ աւելի աջ հակած՝ բանաստեղծ Լամարթինը: Աշխատանքի ու կապիտալի միջեւ պայքարի վճռական ժամուն՝ այս երկուքն ալ անցան կապիտալի կողմը:

ԹԱՔՈՒՆ ՊԱՅՔԱՐ ԲՈՒՐՇՈՒԱԶԻԱՅԻ ԵՒ ՊՐՈՒԵՏԱՐԻԱՏԻ ՄԻՋԵՒ

Փարիզի իրական տէրերը բանուորներն էին, որոնք գրաւելով կառավարութեան շէնքը զինուած ուժով կը պաշտպանէին յեղափոխութիւնը: Անոնք կը սպասէին որ ժամանակաւոր կառավարութիւնը յայտարարէր հանրապետութիւն. սակայն ժամանակաւոր կառավարութիւնը իր գլուխը կը պահէր յեղափոխական բարբառներէն ետեւ, այնպէս հաւաստիացնելով որ ինքը արդէն նախապատուութիւն կուտայ հանրապետական կառավարութեան ձեւին: Նոյն ատեն Փարիզի պրոլետարիատի առաջնորդներէն մէկը՝ Ռասպէլը, բանուորներու ներկայացուցչութեան գլուխն անցած, պրոլետարիատի անունով հրամայեց ժամանակաւոր կառավարութեան՝ յայտարարել հանրապետութիւն. — «Եթէ այդ չիրագործուի երկու ժամուան մէջ, — յայտա-

բարեց Ռասպէլը, — ես կը վերադառնամ 200,000 մարդու գլուխ ան-
 ցած»։ Տակաւին երկու ժամուան ժամկէտը չլրացած՝ Փարիզի բոլոր
 փողոցներու պատերուն վրայ կը փայլէին խոշոր տառերով գրուած՝
 «Ֆրանսական Հանրապետութիւն, Ազատութիւն, Հաւասարութիւն,
 Եղբայրութիւն»։ Ընդհանուր իրաւունքի հիման վրայ յայտարարուե-
 ցաւ հանրապետութիւն։ Բայց ի՞նչպիսի հանրապետութիւն. այսինքն
 այն՝ որ իշխանութիւնը Ֆրանսական արխտոկրատիայէն կ'անցնի
 բուրժուազիայի աւելի լայն խաւերո՞ւն. սոցիալիստական հանրապե-
 տութի՞ւն... այսինքն այն՝ որ այդ հանրապետութեան պէտք է ու-
 ղեկցի ընկերային կարգերու արմատական փոփոխութիւնը՝ ինչպէս
 կը պահանջէին Փարիզի բանուորները։ Հանրապետութիւն յայտա-
 րարուած օրն իսկ՝ ժողովուրդը բանուորական արուարձաններէն
 յեղափոխական կարմիր դրօշակներով, կարմիր թաշկինակներով եւ
 կարմիր ժապաւէններով գլխարկնին զարդարած՝ ներկայացաւ կա-
 ուավարութեան եւ պահանջեց՝ պետական եռագոյն դրօշակը մէկ կողմ
 դնել եւ անոր տեղը բարձրացնել յեղափոխութեան խորհրդանիշ՝ կար-
 միր դրօշակը։ Ժամանակաւոր կառավարութիւնը շատ լաւ կը հասկը-
 նար թէ ի՞նչ կը նշանակէր պատնէշներու դրօշակն ընդունիլը։ Բայց
 Ֆրանսացի բանաստեղծը՝ Լամարթինը, իր ամբողջ բանաստեղծական
 պերճախօսութիւնը գործադրեց որպէսզի համոզէ բանուորները՝ պա-
 հել եռագոյն դրօշակը։ Եւ... որպէս երջանիկ յիշատակ ժողովրդա-
 կան յեղափոխութեան վերջին արարուածին, եռագոյն դրօշակի կո-
 թին ամբացուցին կարմիր վարդակապ մը։ Ասիկա ուրիշ տեսակ խա-
 բէյութեան եղանակ մըն էր, որ յաջողեցաւ։ Բայց այդ յաջողութիւ-
 նը տակաւին վերջնական յաղթանակ մը չէր ապահոված, որովհետեւ
 բանուորական զինուած խումբեր զարձեալ շրջապատեցին ժամանա-
 կաւոր կառավարութեան շէնքը (Ռատուշան)։ Անոնցմէ մէկը՝ պա-
 տանի բանուոր Մարշը, ներս մտաւ ու զոչեց, — «Քաղաքացիներ,
 այժմ դուք անմիջապէս աշխատանքի անցնելու էք, յայտարարելու
 էք աշխատանքի իրաւունքը։ Այս է ժողովուրդի կամքը. ան կը սպա-
 սէ»։ Յետոյ՝ Լամարթինի առարկութեան՝ պատասխանեց հեզման-
 քով. — «Բաւական են պարապ ֆրագները»։ Կառավարութիւնը ստիպ-
 ուած էր ազդարարել, որ ինք պարտաւորուած է բոլոր քաղաքացի-
 ները ապահովել աշխատանքով, որուն համար պիտի կազմակերպուին
 ազգային արհեստանոցներ։

Փետրուար 28-ին բանուորները զարձեալ լեցուեցան փողոցնե-
 րը։ Անոնց դրօշակներուն վրայ գրուած էին իրենց պահանջները. —
 Աշխատանքի նախարարութիւն։ Տասժամեայ բանուորական օր։ Մար-
 դը մարդու շահագործելու սխտէմի վերացում։ Աշխատանքի նախա-
 րարութեան փոխարէն կազմուեցաւ Կառավարական Բանուորական

Յանձնաժողով։ Այսպիսով՝ զինուած պրոլետարիատի ճնշման տակ
 կառավարութիւնը որպէս թէ բանուորներուն զիջումներ կ'ընէր։ Սա-
 կայն այդ զիջումներն ալ ան վարպետութեամբ կ'օգտագործէր պրո-
 լետարիատի պարտութիւնը նախապատրաստելու համար։ «Կառավա-
 րական Յանձնաժողովի» նախագահներ նշանակուեցան Լուի Բլանը եւ
 Ալբէրը։ Յանձնախումբի նիստերը տեղի ունենալու էին Լուքսեմբուր-
 գի պալատին մէջ։

Այս մասին Մարքսը կ'ըսէ. — «Ի տարբերութիւն ամէն տեսակի
 սովորական պետական իշխանութենէն, նշանակուած նախագահներու
 տրամադրութեան տակ ո՛չ պիտոճէ կար, ո՛չ ալ գործադիր իշխա-
 նութիւն։ Անոնք իրենց գլխով պիտի կոտրէին բուրժուական հասա-
 րակութեան գլխաւոր հիմքերը»։ Լուքսեմբուրգի յանձնաժողովը ան-
 պտուղ աշխատանքի մատնուած էր. այդպիսի մարմինի մը գոյու-
 թեամբ կառավարութիւնը պարապ յոյսեր կը ներշնչէր բանուորու-
 թեան համար, նպատակ ունենալով ապացուցանել, որ Լուի Բլանի
 զաղափարները անմիտ էին եւ անոր ծրագիրը՝ անգործնական։

1847-ին արդիւնաբերական ճշմարտութիւն շատ սուր բնոյթ ստա-
 ցաւ յեղափոխութեան ազդեցութեան տակ։ Ամբողջ Ֆրանսայի մէջ,
 անհամեմատ արագութեամբ բարձրացաւ անգործներու թիւը։ Մի-
 այն Փարիզի մէջ 1848 թուին, աւելի քան 200,000 բանուորներ փո-
 ղոց նետուեցան։ Անգործներու ամբոխը ամէն կողմէ կը քայլեր դէպի
 «Ազգային արհեստանոցները», որոնց ղեկավար նշանակուած էր ա-
 մենամոլոխանդ յետադիմականներէն մէկը, յանձին հանրային աշխա-
 տանքներու նախարար Մարին։ Նման արհեստանոցներ կազմուեցան
 նաեւ Լիոնի մէջ, Մարսէյի, Նանթի եւ Ռուանի մէջ։ Տարբեր պրո-
 ֆէսիաներու բանուորներ՝ օրական երկու Ֆրանկով պէտք է կատա-
 ռէին ոչ արտադրական դժուարին աշխատանքներ, հողին կապուած
 աշխատանքներ։ Բայց հարցին դէժ կողմը այն էր, որ բոլոր անգործ-
 ները զբաղեցնող աշխատանքի պահանջ չկար. այդ պատճառով վերջ
 ի վերջոյ շարաթական աշխատանքի օրերու թիւը իջաւ 2-ի, ըստ ո-
 բում, ո՛չ աշխատանքային օրերու համար կը վճարէին մէկ մէկ Ֆր-
 րանկ։ Փինանսական ճշմարտութիւն եւ մանր բուրժուազիայի քայքայման
 շրջանին, ազգային արհեստանոցները ընդհանուր դժգոհութիւն կը
 պատճառէին։

«Աշխատանքի պէս բանի մը համար պետական թոշակ — ահա
 թէ ինչ է այս սոցիալիզմ ըսուածը. այսպէս կ'արտայայտուէր մանր
 բուրժուազիան ազգային արհեստանոցներու հանդէպ՝ զսպելով իր
 դժգոհութիւնը։ Միւս կողմէն զիւղացիութիւնն ալ զբողոսած էր, ո-
 ղովհետեւ կառավարութիւնը զիւղացիութեան գրամները կը ծախսէր
 ձրիակերներ պահելու համար։ Եւ իրօք, կառավարութիւնը փոխանակ

զբաժանակներու, արդիւնաբերողներու եւ վաշխառուներու հարկերը աւելցնելու, հարկերու ամբողջ դրութիւնը դրաւ գիւղացիութեան վրայ: Բայց կառավարութեան այս քաղաքականութիւնը աննպատակ չէր. ան կ'ուզէր պրոլետարիատը միւս բոլոր դասակարգերէն մեկուսացնել, նախ՝ գիւղացիութիւնը լարել պրոլետարիատի դէմ, անկէ վերջ՝ շատ գիւրին էր վերջինին հաշիւը մաքրել:

Ժամանակաւոր կառավարութիւնը ատով ալ չբաւարարուեցաւ: Ան փորձեց պրոլետարիատը երկու մասի բաժնել: Ազգային արհեստանոցներու մէջ զինուորական կարգեր հաստատուեցան: Կառավարութիւնը կը կարծէր, որ ստեղծելով բանուորական բանակ մը, զայն պիտի գործածէր ուղղակի բանուորութեան դէմ:

Այս անգամ «ազգային արհեստանոցներու» մասին կազմած ծրարադրին մէջ բուրժուազիան սխալեցաւ. ան իր ձեռքով ստեղծեց խռովութեան բանակ մը: Սակայն յաջողութեամբ պսակուեցաւ բուրժուազիայի մէկ ուրիշ փորձը: Ան կազմակերպեց 2A գումարտակ, (20,000 մարդ) ռազմական ուժ ներկայացնող զօրագունդ մը, որ կազմուած էր 16-20 տարեկան կամուր երիտասարդներէ:

Ասոնք օրական կը ստանային 2 Ֆրանկ: Այդ զօրաբանակին մէջ մտած էին բազմաթիւ Լուսիններ պրոլետարներ, որոնք նայած իրենց ընկերային վատ շրջապատին՝ բարոյապէս անկայուն տարրեր էին:

Այդ զօրաբանակի սպանները բուրժուական երիտասարդութենէն էին:

Այսպիսով շարք մը խարերայութիւններով ժամանակաւոր կառավարութիւնը պրոլետարիատը կղզիացուց եւ բուրժուական հանրապետութեան յաղթանակը ապահովեց: Ժամանակաւոր կառավարութիւնը նկատի ունենալով պրոլետարիատի հանդէպ գիւղացիութեան լարուած տրամադրութիւնը, Սահմանադիր ժողովի ընտրութիւններու օրը նշանակած էր Ապրիլ 9-ին: Յայտնի էր որ գիւղացիութիւնը պիտի ընտրէր հակայեղափոխականները: Փարիզի մօտաւորապէս 200 ահուճներու մէջ յեղափոխական առաջնորդներն ու թերթերը, բանուորական մասսաներն ու մանր բուրժուազիան կը պահանջէին ժողովի ընտրութիւնները յետաձգել եւ գիւղական շրջանները բանիմաց «քաղաքացիներ» զրկել, որպէսզի անոնք հարկ եղած լուսարանութիւններով գիւղացիական բնակչութեան հոգեբանութիւնը փոխեն ի նպաստ յեղափոխութեան: Այդ պահանջը կը պաշտպանէր բանտէն նոր ազատուած Բլանքին: Մարտ 17-ին, Բլանքին յեղափոխական բանուորական ահուճներու եւ մի շարք ուրիշ առաջնորդներու հետ կազմակերպեց ցոյց մը, որուն կը մասնակցէին 200,000 հոգիներ: Անոնք կը պահանջէին ընտրութիւնները յետաձգել եւ զօրքը Փարիզէն դուրս հանել: Սոյն ցոյցին նախընթաց օրը բուրժուական

ազգային զօրաբանակի ջոկատները ցոյց կազմակերպեցին ընդդէմ ժամանակաւոր կառավարութեան: Անոնք կ'աղաղակէին. «Թող կորսուին կոմունիստները: Մահ Լեդրեու Ռոլանին», եւ կը պահանջէին ժամանակաւոր կառավարութենէն՝ դուրս նետել բոլոր ձախկողմեան անդամները:

Այս դէպքը Մարտ 17-ի ցոյցին նախատեսուած բնոյթը բոլորովին փոխեց. բան մը, որուն չէր սպասեր Բլանքին: Ցոյցը փոխանակ ժամանակաւոր կառավարութեան դէմ դալու, դուրս եկաւ յանուն անոր պաշտպանութեան: Ցուցարարներու շարքէն կը գոչէին. — «Կեցցէ՛ Լեդրեու Ռոլանը, կեցցէ՛ ժամանակաւոր կառավարութիւնը»: Չուր տեղը Բլանքին ջանք կը թափէր գործը դնել իր ցանկացած գծին վրայ եւ կառավարութեան ուղղած իր խիստ ճառով կը պահանջէր ընտրութիւնները յետաձգել եւ անյապաղ վճռական ընկերային բարեկարգութիւններ ներմուծել: Լուի Բլանք, որ կ'աշխատէր ժամանակաւոր կառավարութեան մէջ խաղաղութիւն պահպանել, հակառակ դիրք բռնեց Բլանքի դէմ: Այդպիսով ցուցարարներու տրամադրութիւնը փոխուեցաւ եւ ատոր հետեւանքով ժամանակաւոր կառավարութեան դիրքը ամրացաւ եւ իշխանութիւնը իր ձեռքին պահեց մինչեւ Սահմանադիր ժողովը: Ընտրութիւնները միայն երկու շաբաթով յետաձգուեցան: Կառավարութիւնը զազանաբար դէպի Փարիզ կը քաշէր իր բանակը:

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Մայիս 4-ին գումարուեցաւ Ազգային Սահմանադիր ժողովը: Ժողովի 900 անդամներէն 700ը բուրժուական հանրապետութեան կողմնակիցներ էին, իսկ 200ը միապետականներ. հանրապետականներու մէջ կային սոցիալիստներ, որոնց թիւը մի քանի տասնեակի կը հասնէր:

Ժողովուրդի ծոցէն դուրս եկած հասարակ մարդիկ պատգամաւոր չընտրուեցան: Ընտրուածները միայն «պարոններն» էին: Այդ ատենները Փարիզի մէջ ապրող ռուս հրապարակագիր Հէրցէնի բացատրութեամբ «պարոնները» Ֆրանսայի վիճակը կը տնօրինէին «չափանիշ ունենալով կերպասավաճառի արշընը եւ նպարավաճառի կը շիւքը»:

Ժամանակաւոր կառավարութիւնը, ի հարկէ հրաժարեցաւ, անոր տեղը ընտրուեցաւ զօրծաղի յանձնաժողովը, որուն մէջ այլեւս աթոռ չունեցան ո՛չ Լուի Բլանք ոչ ալ Ալբէրը: Ասով վերջ տրուեցաւ Փետրուարեան յեղափոխութեան պատրանքներուն: Այդ պահուն,

Փարիզի պրոլետարիատը, որ չափազանց ուշ խելքի եկաւ, երբ հասկըցաւ իր գլխին զարնուած խարեբայութիւնները, տարեբայնօրէն ոտքի ելաւ սոցիալական յեղափոխութեան պաշտպանութեան համար:

ԲԱՑՈՐՈՇ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԵՒ ԲՈՒՐՃՈՒԱԶԻԱՅԻ ՄԻՋԵՒԻ

Մայիս 15-ին հսկայական բազմութիւն մը շարժեցաւ դէպի այն շէնքը, ուր տեղի կ'ունենային Ազգային ժողովի նիստերը: Մարդիկը ներս խուժելով, խարուած ժողովուրդի անունով Ազգային ժողովը յայտարարեցին ցրուած: Տեղւոյն վրայ ալ նոր ժամանակաւոր կառավարութիւն կազմեցին՝ պրոլետարիատի վստահութիւնը վայելող առաջնորդներէն: Դեռ հազիւ թէ Ռատուշայի մէջ նոր կառավարութիւն կազմեր էին, երբ ահագանգով կանչուած ազգային եւ նորակազմ զինուորական ջոկատները հասան եւ սուիճներու ուժով ապստամբները ցրուեցին: Ապստամբութեան առաջնորդները՝ Բլանքին, Ռասպէլը, Ալբէրը եւ անոնց նման ուրիշները ձերբակալեցին ու անմիջապէս փակեցին յեղափոխական ակումբները: Լուքսեմպուրկեան յանձնաժողովը ցրուեցին, ոչնչացուցին այն բոլոր զիջումները՝ ինչ որ աւրուած էր բանուոր դասակարգին: Մայիս 15-ի ապստամբութենէն պրոլետարիատը դուրս եկաւ գլխատուած. ան զրկուած էր իր առաջնորդներէն:

ՅՈՒՆԻՍԵԱՆ ՕՐԵՐԸ

Մայիս 15-ը ցոյց տուաւ թէ ո՛ր կողմն էր ուժերու գերակշռութիւնը: Բուրժուազիան այլեւս պէտք չունէր պրոլետարիատը հաճոյացընելու: Ընդհակառակը՝ Ազգային ժողովի մեծ մասը կը ցանկար, որքան կարելի է չուտ, պրոլետարիատը դարձեալ քաշել ապստամբութեան ճակատի վրայ, որպէսզի միանգամ ընդ միշտ՝ ջախջախէ հարուածով մը վերջ դնէ անոր ոտնձգութեան փորձերուն: Եւ ահա այդպիսի զրգոխէ միջոց մը եղաւ ազգային արհեստանոցներու փակումը: Հարիւր հազար բանուորութիւն՝ նետուեցաւ փողոց: Բանուորներուն մնացեր էր կամ անօթի մեռնիլ կամ կռիւր վերսկսիլ: Ան ուրիշ ելք չունէր, կ'ըսէ Մարքսը: Յունիս 22-ի իրիկունը, Փարիզի փողոցներուն մէջ կը քալէր սարսափելի կերպով յուզուած հսկայական բազմութիւն մը կազմուած բանուորներէ եւ բանուորուհիներէ, որոնք կ'աղաղակէին. «Հաց կամ գնդակ», «Ազատութիւն կամ մահ»: Ոչ ոք զանոնք կանգնեցնելու փորձ չէր ըներ: «Մենք անոնց պատեհութիւն

կուտանք որ կեղրոնանան տեղ մը», — այսպէս յայտարարեց զօրավարներէն մէկը, «անկէ յետոյ կը յարձակինք եւ դանոնք կ'ոչնչացունենք: Այս անգամ այդ անդամները մեր ձեռքէն չեն կրնար ազատիլ»: Յունիս 23-ի ցերեկը եւ Յունիս 24-ի գիշերը, բանուորները իրենց ընտանիքներով արուարձաններու եւ անոնց կից փողոցներու մէջ պատնէշներ կը կառուցէին: Յունիսի 24-ին, երբ բուրժուազիայի կարծիքով շարժումն արդէն բաւականին ծաւալեր էր, Սահմանադիր ժողովը պատերազմական դրութիւն յայտարարեց եւ դիկտատոր նշանակեց զօրավար Կալէնեակը, որ ապստամբներուն դէմ հանեց կանոնաւոր զօրքը, — ազգային եւ պահեստի ջոկատները: Սկսաւ արիւնուշտ դիկտատուրան, որ «միւրճուեցաւ մինչեւ իր կոկորդը՝ արեան մէջ եւ անկէ դուրս գալով միւրճուեցաւ մինչեւ իր կոկորդը՝ խայտառակութեան մէջ» (Հերցէն): Երեք օր անընդհատ փողոցներու մէջ այնպիսի կատաղի կռիւներ տեղի ունեցան, որոնց նմանը երեք յեղափոխութիւն ապրած Փարիզը չէր տեսեր:

Մանր բուրժուական ուսանող երիտասարդութիւնը, Փարիզէն յաճախ 100-200 մղոն հեռու տեղերէն եկած զիւղացիութիւնը՝ Կալէնեակի զօրքերուն հետ կը կռուէին ապստամբներուն դէմ: Այդ բոլորին դէմ միս միմակ, առանց զէնքի, երեք օր անօթի ու ծարաւ՝ պրոլետարիատը անկարագրելի հերոսութեամբ կը պաշտպանէր իր արուարձաններու դիրքերը: Բանուորները քայլ առ քայլ կը նահանջէին, առանց խուճապի դիմելու. կը նահանջէին մէկ զիւրքէն ու կ'անցնէին պատնէշներու յաջորդ շարքին վրայ: Յունիսի 26-ին, ցերեկուայ ժամը 2-ին, վերջապէս ինկաւ ապստամբութեան վերջին յեռարանը՝ Սէն Անթուանի արուարձանը: Կռիւր վերջացաւ: Սկսաւ դատաստանը: Գերիները անխնայ կը գնդակահարէին եւ անոնց դիակները կը նետէին Փարիզի կոյուղիներուն մէջ. կը խուժէին տուները եւ կը սպաննէին անոնց բանուորները: Պատնէշներու վրայ սպանուածներու թիւը մօտաւորապէս հաշոււրուած է 15,000: Մօտ 20,000 մարդիկ ձերբակալուեցան, որոնցմէ 6000ը քստորուեցան Հարաւային Ամերիկայի վատառողջ վայրերը, ուր անոնք զամուսնեցան ստրկական տաժանակիւր աշխատանքի:

Համաձայն անդլիական մամուլի տուեալներուն՝ սպանուածներու թիւը կը հասնի մինչեւ 60,000ի, իսկ ձերբակալուածներունը՝ 25,000ի: «Վա՛յ անոր, — կը գրէր Լուի Բլանը, — որ կը համարձակէր բարեգութ խօսք մը արտասանել: Նոյնիսկ ծնողներուն արգիւուած էր ողբալ իրենց զաւակներուն մահը»: Իսկ Հերցէն կը գրէր. «Վա՛յ անոնց որ այդ ժամերը կը մոռնան, կը ներեն»:

ՅՈՒՆԻՍԵԱՆ ԶԱԽՋԱԽՈՒՄԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Չնայած պրոլետարիատի ջանքախուսելուն, Յունիսեան ապրուստամբութեան նշանակութիւնը մեծ եւ պատմական է: Այդ առթիւ Կ. Մարքսը ըսած է. «Յունիսեան ապստամբութիւնը առաջին մեծ կռիւն էր ժամանակակից հասարակութեան երկու դասակարգերու միջեւ: Բուրժուական կարգերու պահպանման ու տապալման կռիւն էր այդ կռիւր: Բուրժուակալի կողմէն դրդուած Յունիսեան ապստամբութիւնը վերջացաւ պրոլետարիատի պարտութեամբ: Այո՛, պրոլետարիատը ինկաւ. ինկաւ պատուով՝ համաշխարհային պատմական մեծ պայքարին մէջ. բայց այդ անկումը որպէս եղակի երկրաշարժ մը, ցնցեց ո՛չ միայն Ֆրանսան, այլ ամբողջ Եւրոպան»:

Լոնտոնի Եղբայրական Դեմոկրատներու Միութիւնը, որ յեղափոխական գաղթականներու կազմակերպութիւնն էր, Անգլիոյ բանուորներուն ուղղած իր կոչով կը գրէր. «Կարմիր հանրապետութեան դրօշակը՝ ամբողջ Եւրոպայի պրոլետարիատի դրօշակն է: Սէն Անթուանի արուարձանի կարմիր դրօշակը պոկել ու մէկ կողմն նետել, դեռ չի նշանակեր յաղթել: Այն հաւատքը՝ որու խորհրդանիշն է այդ դրօշակը, միայն Փարիզի մէջ չի սահմանափակուիր: Ան կ'ապրի ու կ'աճի այն բոլոր անկիւններուն մէջ, ուր կը կեդրոնանայ բուրժուական արդիւնաբերութիւնը եւ անոր կապուած անխիղճ շահագործումը բանուորութեան: Եւ մէկ պարտութիւն, նոյնիսկ յիսուն պարտութիւններ չեն կրնար կասեցնել անոր վերջնական յաղթանակը»:

ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Բանուոր դասակարգի եւ անոր առաջնորդներուն հետ իր հաշիւները մաքրելէն յետոյ՝ Սահմանադիր ժողովը, Հերցէնի բացատրութեամբ այդ «բարկացած խանութպաններու ժողովը» հանրապետութեան սահմանադրութեան մշակման գործին անցաւ: Սահմանադրութիւնը նախ եւ առաջ վերջ գրաւ «սոցիալական իւքոպիաներուն»․ «Աշխատանքի իրաւունքը» սահմանադրութենէն ջնջուեցաւ: Տասներկու ժամուայ բանուորական օրուայ տեւողութեան օրէնք սահմանեց: Ընդհանուր ընտրական իրաւունքի հետ մէկտեղ՝ «բուրժուական ազատութիւններ», որոնք երբեք պրոլետարիատի համար օգտակար չէին․ օրինակ՝ Փարիզի մէջ մէկը լրագիր հրատարակելու համար 24,000 Փրանկ դրաւական դնելու էր: Այս օրէնքով, բնականաբար բանուորական թերթերու հրատարակութիւնը կը դադրէր: Ըստ սահմանադրութեան, օրէնսդիր իշխանութիւնը կը պատկանէր 750 հոգիներէ կազմուած պալատին — Օրէնսդիր ժողովին, որ կ'ընտրուէր երեք տարուայ պայմանաժամով: «Կարմիր ուրուականի» վախը ստիպեց որ

Սահմանադիր ժողովը գործադիր իշխանութեան՝ այսինքն յանձին նախագահին, դերը եւ նշանակութիւնը աւելի ուժեղացնէ: Նախագահը կ'ընտրուէր ընդհանուր քուէարկութեամբ, ասով ան Օրէնսդիր ժողովէն անկախ կը դառնար: Անոր պաշտօնավարութեան շրջանը միայն չորս տարի էր: Բայց ան օժտուած էր այնպիսի իրաւասութիւններ ապահովող կամայականութեամբ, որ կրնար բանակը եւ հսկայական բիւրոկրատական ապարատը իր անձնական հայեցողութեամբ ղեկավարել: Անոր տրուած էին այն բոլոր նախապայմանները, որով ան կարող էր ոչնչացնել հանրապետութիւնը եւ միապետական յեղաշրջման յաջողութիւնը ապահովել:

Առաջին նախագահը ընտրուեցաւ Լուի Բոնապարտը, որ Նապոլէոն Բոնապարտի եղբոր որդին էր, Մարքսի բնութագրով «մեր դարու ամենատխմար մարդը»: Լուի Բոնապարտի ի նպաստ քուէարկեց զիւղացիութիւնը, որովհետեւ զիւղացիները կը յիշէին Նապոլէոն Առաջինի իրենց տուած շնորհները:

«Նապոլէոնը զիւղացիներու համար ո՛չ թէ անձնաւորութիւն էր, այլ ծրագիր․ ատոր համար անոնք դրօշակներով ու նուագներով դացին ընտրութեան տեղը․ անոնք կը գոչէին․ «Այլեւս հարկեր չկան, անկցին հարուստները, անկցի հանրապետութիւնը, կեցցէ՛ կայսրը» (Մարքս):

ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Օրէնսդիր ժողովը գումարուեցաւ Մայիս 29-ին: Հոն միապետականները զերակչուող դիրք ունէին․ 700 պատգամաւորներէն 450ը միապետականներ էին, բայց անոնք երեք հատուածի բաժնուած ըլլալով մէկզմէկ կը թուլացնէին: Այդ հատուածներն էին՝ Բուրբոններու տոհմի կողմնակիցները (Լէժիտիմիստները*), Օրլէանական տոհմի կողմնակիցները (Օրլէանիստները) եւ Նապոլէոնի կողմնակիցները (Բոնապարտիստները): Այդ հատուածները հողատէրերու, Ֆինանս կապիտալի տէրերու եւ առեւտրական բուրժուակալի ներկայացուցիչները ըլլալով կը միանային ընդդէմ հանրապետութեան եւ կը կազմէին «Միակարգ կուսակցութիւնը», պարզապէս Օրէնսդիր ժողովի

(*) «Լէժիտիմ» ֆրանսերէն կը նշանակէ օրինական: Լէժիտիմիստ կը կոչուէին Բուրբոններու կողմնակիցները, անոնց կարծիքով Բուրբոններու տոհմն էր քաղաքական գահի օրինական տէրը, իսկ միւս տոհմերը, որոնք գահ են բարձրացրել յեղափոխութեան շնորհիւ, օրինական տէրեր չեն:

բաւական ուժեղ ձախ թելի երկու հարիւր պատգամաւորներուն ղէմ պայքարելու համար: Զախ թելը 1793 թուի յեղափոխականներու օրինակով իրեն տուած էր «Լեբան կուսակցութիւն» անունը. ան իր շարքերուն մէջ շատ քիչ սոցիալիստներ ունէր, մեծամասնութիւնը մանր բուրժուազիայի ներկայացուցիչներ էին: Օրէնսդիր Ժողովին մէջ «ձախերը» անգոր էին պայքարելու «Միակարգ կուսակցութեան» ղէմ: 1849 թուի Յունիսի 13-ին, «Լեբան կուսակցութիւնը» փորձեց ապստամբութիւն պայթեցնել եւ յեղաշրջում յառաջ բերել: Կուսակցութիւնը նախագահը կը մեղադրէր այն բանին համար, որ ան չնայած սահմանադրութեան արգելիչ օրէնքին, զօրքեր էր զրկեր օտար երկիր մը՝ որպիսին էր Իտալիա՝ այն տեղի ապստամբութիւնը խեղդելով Հոռովի Պապին օգնելու համար:

Յունիսի ջախջախումով արինաքամ եղած Փարիզի պրոլետարիատը «Լեբան կուսակցութեան» շօթանդակեց. «Լեռը» ջախջախուեցաւ. անոր անդամներուն մէկ մասը արտասահման փախաւ, միւսը դատի ենթարկուեցաւ. ասով «Միակարգ կուսակցութիւնը» պատհանութիւն ունեցաւ իր ռէակցիան ուժեղացնելու: «Յանուն սեփականութեան, յանուն ընտանիքի, յանուն կրօնի»՝ հետզհետէ կը վերցուէին «ազատութիւնները», դպրոցները կը զրուէին հոգեւորականութեան հակողութեան ներքեւ եւ Ֆրանսայի զանազան մասերուն մէջ կը յայտարարուէր պատերազմական վիճակ: 1850-ի Մայիսին, ընդհանուր ընտրական իրաւունքը վերցուեցաւ: Քուէ կրնային տալ միայն անոնք, որոնք երեք տարի շարունակ նոյն տեղւոյն մէջ ապրած էին:

Չայնէ կը զրկուէին բոլոր անոնք, որոնք իշխանութիւնը վերաւորելու յանցանքով դատի ենթարկուած էին, նոյնպէս անոնք՝ որոնք մասնակցեր էին գաղտնի ընկերութիւններու: Նոյնպէս ընտրական իրաւունքէն զրկուեցաւ Թիէրի որակումով «ստորին ամբոխը»՝ բանուորական մասսան, որ աշխատանք փնտռելու համար ստիպուած էր շարունակ հոս ու հոն տեղափոխուիլ: Ասով քուէարկողներու թիւը երեք միլիոն պակսեցաւ: «Միակարգ կուսակցութիւնը» կը հրճուէր:

1851-ի ԴԵԿՏԵՄԲԵՐ 2-Ը

Լուի Բոնապարտը զինքը շրջապատող հակադիր քաղաքական տարրեր խմբաւորումներու միջեւ, երբեմն, Օրէնսդիր Ժողովին առջեւ կը ստորնանար, նայած յարաբերութիւններու փոփոխութեան: Գահին տիրանալու նպատակին մէջ ան հաշուի կ'առնէր իր հակառակորդներու թուրութիւնը եւ այն ուժերը՝ որոնք կրնար վստահիլ: Թէ՛ բանակին եւ թէ՛ աստիճանաւորներու շրջանակին մէջ բոլոր պատասխանատու պաշտօնները տուած էր իրեն ծառայելու պատրաստ արկա-

ծախնդիրներուն: Զօրքն ու բիրտկրատին անոր կողմն էին: Անոր կողմն էր նաեւ գիւղացիութիւնը. իսկ պրոլետարիատն եւ մանր բուրժուազիան, որոնցմէ զիմադրութիւն կարելի էր սպասել, արդէն անդամալոյժ եղած էին: Բացի այդ՝ Լուի Բոնապարտը եթէ ընդհանուր ընտրական իրաւունքը վերահաստատէր, կը յուսար թէ զանոնք ալ իր կողմը կրնար գրաւել: Բոնապարտի նախագահութեան չորս տարին արդէն կը լրանար: Համաձայն սահմանադրութեան՝ նախագահը չորս տարի պաշտօնավարելէ վերջ չէր կրնար վերընտրուիլ: Բոնապարտը ուզեց սահմանադրութիւնը փոխել, բայց ձախողեցաւ. Օրէնսդիր Ժողովի մեծամասնութիւնը սահմանադրութեան փոփոխման ղէմ արտայայտուեցաւ, որովհետեւ նոր յեղափոխական շարժման վտանգ կար: Այդ ատեն՝ կայսերական թագի սիրահար նախագահը վճռեց յեղաշրջման միջոցին դիմել: 1851-ի Դեկտեմբեր 2-ի գիշերը ձերբակալուեցան Օրէնսդիր Ժողովի անմենէն ազդեցիկ անդամները, ինչպէս նաեւ պրոլետարիատի եւ դեմոկրատիկ մանր բուրժուազիայի այն ներկայացուցիչները, որոնք վստահաւոր կը թուէին: Ռազմական տեսակէտէն Փարիզի ամենէն կարեւոր կէտերը բռնուեցան զինուորական ջոկատներով: Իսկ առաւօտուն՝ Փարիզի բնակչութիւնը պատերուն վրայ տեսաւ ու կարգաց նախագահին փակցնել տուած թաուցիկները, որոնք կը յայտնէին տեղի ունեցած յեղաշրջումը: «Ֆրանսական ժողովուրդի անունով» Օրէնսդիր Ժողովը յայտարարուած էր լուծուած եւ ընդհանուր ընտրական իրաւունքը վերահաստատուած: Յայտարարուած էր նաեւ, որ Փարիզի եւ մօտակայ տասը շրջաններու մէջ հաստատուած էր պաշարման դրութիւն:

Բոնապարտի հաշիւները ճիշդ էին. զիմադրութիւն ցոյց տուող չկար: Մի քանի հանրապետականներ ապստամբութեան կոչ ուղղեցին Սէն Անթուանի արուարձանի բանուորներուն. բայց անոնք հետեւեալ պատասխանը տուին. «Ի՞նչ կ'ուզէք մեզմէ: Չէ՞ որ 1848-ի Յունիսին մեր զէնքերը խլցիք, եւ մեզ կոտորել տուիք»...

Եղան պատնէշներ կառուցելու առանձին փորձեր, բայց անոնք առանց մեծ զժուարութեան ճնշուեցան. ճնշուեցան նաեւ ապստամբութեան բոլոր փորձերը այս կամ այն շրջանին մէջ: Սկսաւ անխնայ ձերբակալութիւնը: Ամբողջ Ֆրանսայի մէջ մինչեւ 50,000 մարդիկ ձերբակալուեցան, որոնց կէսը քսոցուեցան Հարաւային Ամերիկա: Ամիս մը յետոյ՝ Բոնապարտը վերականգնեց հիւպատոսութեան 8-րդ տարուայ սահմանադրութիւնը եւ այդպիսով իշխանութիւնը վերածեց միանձնեայ իշխանութեան: Իսկ պետական յեղաշրջման տարեդարձին՝ 1852 թուի Դեկտեմբեր 2-ին, հրամայեց որ զինքը կայսր հռչակեն՝ Նաբոլէոն Գ. անունով (Նաբոլէոն Բ. կ'անուանէին Նաբոլէոն Ա. ի որդին, որ չկրցաւ թագաւորել):

Պաշարման դրութեան ճնշման տակ Համաժողովրդական քր-
ւէարկութիւնը (ռէֆէրանդում) բացարձակ մեծամասնութեամբ (7
միլիոն 481,000 ձայնով) կայսրութիւն հաստատեց: Այսպէս, պրուս-
տարիատի Յունիսեան ջախջախումէն յետոյ՝ բուրժուական Հանրա-
պետութիւնը վերածուեցաւ Նապոլէոն Գ.ի կայսրութեան գլխուորա-
կան (կայսերական) միապետութեան, որ կռթնած էր զօրքի սուրինե-
րու եւ ռախկանութեան ուժին վրայ:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Նարոլէոնի կայսրութիւնը եկաւ բուրժուազիան զրկել իր քա-
ղաքական իշխանութենէն, բայց այդ գործը կապուած էր բուն իսկ
բուրժուազիայի շահերուն: Բուրժուազիային համար անհրաժեշտ էր
նախ եւ առաջ՝ «բուրժուական կարգ ու սարքը ապահովել»: «Կարմիր
վտանգը» կարելի էր հեռացնել միմիայն ուժեղ գործադիր իշխանու-
թեան ձեռքով: Բացի այդ՝ բուրժուազիան քաղաքական իշխանութե-
նէն հեռանալով աւելի պատեհութիւն կ'ունենար աւելի ազատ կեր-
պով շահագործելու միւս դասակարգերը: Բուրժուական Հանրապե-
տութեան ասեմ իր քաղաքական իշխանութեան այդ շահագործումը
այլեւս կարելի չէր վարապետել: Եւ իրապէս, երկրորդ կայսրութեան
չըջանին տեղի ունեցաւ Ֆրանսական բուրժուազիայի տնտեսական
հսկայական աճումը:

Այսպիսով՝ Նարոլէոն Գ.ի կայսրութիւնը կը ներկայացնէր
ազգային-բուրժուական միապետութիւն, որուն մէջ ազգային վարա-
զոյրով ծածկուած էր միւս դասակարգերու հանդէպ բուրժուազիայի
տնտեսական տիրապետութիւնը:

Այստեղ պէտք չէ մոռնալ նշելու նաեւ այն՝ որ այս շրջանի ըս-
կիզրին տեղի ունեցաւ նաեւ մանր բուրժուազիայի ռոտակոխումը,
ինչ որ կը նպաստէր խոշոր բուրժուազիայի անարգել վերելքին:

ՅԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Գերմանիան Յեղափոխութենէն Առաջ

Ֆրանսայի Փետրուարեան յեղափոխութիւնը Եւրոպայի շարք
մը երկիրներու մէջ յեղափոխական պրոթիւկումներ յառաջացուց: Ա-
նոր ազդեցութիւնը առանձնապէս ուժեղ էր Գերմանիոյ եւ Իտալիոյ
վրայ: Գերմանիոյ մէջ ինչպէս քաղաքական, նոյնպէս ալ տնտեսա-
կան պայմանները աւելի բարդ էին, քան Ֆրանսայի մէջ: Ֆրանսայի
մէջ իշխանութիւնը կեդրոնացած էր եւ այդ պայմաններու տակ՝ Փա-
րիզի մէջ յառաջացած յեղափոխութիւնը վճռական նշանակութիւն եւ

ազդեցութիւն կ'ունենար ամբողջ երկրին համար: Իսկ Գերմանիան
բաժնուած էր 36 պետութիւններու, որոնց միջեւ եղած կապը, ա-
ռանձին պետութիւններու ներկայացուցիչներէ կազմուած՝ դաշնակ-
ցային աէյմի միջոցով, շատ թոյլ էր: Այդ պետութիւններէն գլխա-
ւորներն էին Պրուսիան եւ Աւստրիան: Վերջինը իր մէջ առած էր, մի
շարք սլաւոնական ցեղերէն գատ, նոյնպէս Հունգարիան եւ Իտալիոյ
հիւսիսային մասը՝ Լոմբարդիան: Ֆրանսայի հետ բաղդատելով, չենք
յիշեր աւելի շատ զարգացած Անգլիան: Գերմանիան տնտեսապէս շատ
յետամնաց երկիր էր, ուր զերիշխող էր գիւղատնտեսութիւնը: Քա-
ռանական թուականներուն, Պրուսիոյ ազգաբնակչութեան միայն 28
առհարիրը քաղաքներու մէջ կը բնակէր: Աւստրիոյ քաղաքային բը-
նակչութիւնը աւելի քիչ էր եւ նոյնիսկ քաղաքներու բնակչութեան 20
առ հարիրը կը պարապէր գիւղատնտեսութեամբ: Գիւղացիութիւնը
օրէնքով որպէս թէ անկախ կը համարուէր, բայց Պրուսիական գիւ-
ղացիութեան միայն աննշան մասն էր, որ հողատէր էր. միւսները
վարձակալներ էին եւ կամ՝ հողատէր դուքսին կամ իշխանին համար
աշխատողներ: Նախքան Ֆրանսական յեղափոխութիւնը, Ֆրանսայի
գիւղացիութեան նման գերման գիւղացիութիւնն ալ Ֆէոդալական եւ
պետական պարհակներու ծանր լուծին տակ կը տքնէր: Նախքան 1848
թուականը, գերմանական գիւղացիութեան կեանքին մօտիկ ծանօթ-
ները կը նկարագրէին այդ գիւղացիութեան մէջ անբեւեակայելի չքա-
ւորութեամբ տառապողներու եւ բացարձակ իրաւագուրկներու ողբա-
լի դրութիւնը:

«Գիւղացիները սիստեմատիկօրէն անօթի կը պահուին», կը գրէ
այդ դրութեան ծանօթներէն մէկը: —«Աւստրիական գիւղացիները
տարւոյն մէջ միայն մէկ կամ երկու անգամ միսի երես կը տեսնեն եւ
կը կարծեն թէ ան արքայական ուտելիք մըն է», կը գրէ մէկ ուրիշը:
Եւ պէտք չէ մոռնալ նշելու որ այս գրողները Ֆէոդալական կարգերու
կողմնակիցներն են: Գիւղացիները պատրաստ էին պայքարելու Ֆէո-
դալական ճնշումներու դէմ, բայց անոնց մէջ տակաւին քաղաքական
հասկացողութիւնը զարգացած չէր, անոնք նոյնիսկ դասակարգային
խորացած գիտակցութիւն չունէին, որպէսզի ձգտէին կալուածատի-
րական հողերու զրաման եւ Ֆէոդալական շրթաններու փշրումին. ա-
նոնք նոյնիսկ՝ յեղափոխութիւնը կը համարէին «անկարգութիւն»:

Երկրի արդիւնաբերութիւնը մեծ մասով արհեստաւորական եւ
տնայնագործական բնոյթ ունէր: Արհեստաւորական արտադրութիւնը
զեռ կը պահէր համբարային (կիրտական) սիստէմը:

Գերմանիոյ պրոլետարիատի մեծամասնութեան մէջ ինքնակա-
լական-կալուածատիրական միապետութիւնը, հիմք ունենալով գիւ-
ղատնտեսութեան կիսաճորտային եւ արհեստի դերակալութիւնը, մի

չարք կալուածատիրական արտօնութիւններով տակաւին ամուր էր: Ամբողջ Գերմանիոյ մէջ կը թագաւորէր ուխակցիան՝ ոստիկանական սխտէմով:

Երեսնական եւ քառասնական թուականները Գերմանիոյ համար արդիւնաբերական յեղաշրջման ժամանակ էին: Եթէ քսանական թրւականներու սկիզբին ամբողջ Գերմանիոյ մէջ միայն երկու շոգեմեքենայ կար, 1874 թուին, միայն Պրուսիոյ մէջ շոգեմեքենաներու թիւը կը հասնէր 1500-ի: Քառասունական թուականներուն Պրուսիոյ մէջ 78,000 արդիւնաբերական ձեռնարկութիւններ կային, ուր 500,000 բանուորներ կ'աշխատէին: 1835 թուին, Գերմանիոյ մէջ շինուեցաւ առաջին երկաթուղագիծը: 1840-ին երկաթուղագիծերու երկարութիւնը եղաւ 540 քիլոմետր: Իսկ 1848-ին՝ 5500 քլմ.: Սոչոր ձեռնարկութիւններէն ամենէն առաջ հրապարակ իջան հիւսուածեղէնի ճարտարաբուեստն ու ատաղձագործութիւնը:

Սոչոր արդիւնաբերութեան աճման հետ կ'աճէր եւ կ'ամրանար արդիւնաբերական բուրժուազիան: Բայց անոր յառաջդիմութեան արգելք էր կալուածատիրական-ինքնակալական միապետութիւնը: Ներքին շուկայի բացակայութիւնը, Ֆէոդալական ծանր տուրքերու հետեւանքով գիւղացիութեան քայքայումը, տարրեր պետութեանց միջեւ դոյութիւն ունեցող մաքսային մրցակցական բաժանուածութիւնը, — այս բոլորը առեւտուրի եւ արդիւնաբերութեան զարգացման խոչնդոտ կը հանդիսանային: Այդ բանը առաջ կը բերէր աղգային ազատամիտ շարժում մը՝ բուրժուազիայի մէջ, որ քաղաքական-տնտեսական ունեւորման եւ Գերմանիոյ միացումը կը պահանջէր: Բուրժուազիայի ճնշման տակ 1839 թուին, ստեղծուեցաւ մաքսային դաշնակցութիւն, որ եկաւ վերցնել ինը գերմանական պետութիւններու միջեւ մաքսային անջատուած սահմանները: Հետզհետէ գերմանական միւս պետութիւններն ալ եկան, միացան այդ դաշնակցութեան: Այսպիսով՝ բուրժուազիայի եւ ազնուականութեան միջեւ եղած հակասութիւնները Գերմանիոյ մէջ շարժող գլանի վրայ կը դնէին բուրժուական յեղափոխութիւնը: Բազմանդամ մանր բուրժուազիան, իր կաշիին վրայ կը զգար ծնունդ առնող կապիտալիզմի ճնշումը եւ միեւնոյն ատեն կը տառապէր կալուածա-ինքնակալական կարգերուն մէջ՝ իր իրաւազրկութենէն:

Յանձին իր մտաւորականութեան, ան տարուած էր «ազատութիւններու» եւ հանրապետութեան շուրջ դարձած երեւակայութիւններով, բայց առանց սոցիալական երազներու: Այդ մտաւորականութիւնը էնդէլսի ակնարկումով՝ «ապստամբութիւն կը քարոզէր ճոռմարանութեամբ»: Բայց անմիջապէս որ ապստամբութիւնը ծանր ճգնաժամի կը մօտենար, մանր բուրժուաները վտանգի առջեւ սար-

սափի կը մատնուէին: Նախ եւ առաջ զանոնք կը սարսափեցնէին այն հետեւանքները, որոնք պիտի վտանգէին իրենց հասարակական գիրքը, իրենց սեփականութիւնը եւ իրենց կեանքը: Ահա թէ ինչո՛ւ մանր բուրժուազիան կը հեռանար յեղափոխութենէն: Ան յոռետես էր յեղափոխութեան հանդէպ, որովհետեւ անոր միայն վատ կողմերը կը տեսնէր. ատոր համար ան Դրէզդէնի մէջ օգնեց կառավարութեան դորքերուն՝ ընդդէմ ապստամբներուն:

Ճիշդ էր, խոչոր արդիւնաբերական զարգացումը, կը ստեղծէր տակաւին փոքրաթիւ, Փարբիկա-գործարանային պրոլետարիատը: Մանր արտադրութենէն խոչորին անցնիլը, ինչպէս այդ տեղի ունեցաւ Անդլիոյ եւ Ֆրանսայի մէջ, չափազանց ծանր կ'անդրադառնար արհեստաւորներու եւ բանուորներու վրայ: Անոնք կը ճնշուէին կըրկնակի շահագործումով. անոնց մէկ կողմն էր Ֆէոդալական պետութիւնը, միւս կողմը՝ նորածագ կապիտալիզմը:

ՍԻԼԷԶԻԱՅԻ ԶՈՒԼՀԱԿՆԵՐՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Այդպիսի կրկնակ շահագործման ինքնատիպ օրինակ էր Սիլէզիայի ջուլհակներու դրութիւնը: Քանի որ այստեղ հողը շատ քիչ բերք կուտար, գիւղացիները կանուխէն օժանդակ աշխատանք կը ճարէին, մանելու եւ հիւսելու արտադրութեան մէջ: Այդ արտադրութիւնը տեղի կ'ունենար տուներու եւ կամ փոքրիկ գործատեղիներու մէջ: Բայց երբ խոչոր մեքենաներով եւ սարքաւորումներով Սիլէզիայի մէջ հիւսուածեղէնի ձեռնարկութիւններ երեւան եկան, բաղմաթիւ տնայնագործ ջուլհակներ առանց աշխատանքի մնացին: Անոնց դժուարին դրութենէն օգտուելով, ձեռնարկուները ջուլհակները կը վարձէին շատ չնչին աշխատավարձով, որ Սմերիկեան դրամի հաշուով օրական (14 ժամուայ աշխատանք) 4 սէնթի կը հասնէր: Բայց այդ ջուլհակները նոյն ատեն «թղուկ» գիւղացիներ էին. այսպէս կը կոչուէին անոնք՝ չնչին հողաբաժիններ ունենալուն պատճառով: Այդ պայմաններու ներքեւ այդ եղիկի էակները պարտաւոր էին մէկ կողմէն պետութեան հարկ վճարել, միւս կողմէն ալ հողատիրոջ բաժին մը տալ հողի անտեսանելի արդիւնքէն: Այստեղ ուրեմն, անոնց լուծը կ'ըլլար երեքպատիկ, որու գլուխը կանգներ էին պետութիւնը, կապիտալիստը եւ կալուածատէրը:

Ջուլհակները առանձնապէս ատելութեամբ լեցուած էին դէպի Յվանցիհեր Փարբիկանները: Բանուորներու այն բողոքին, թէ իրենց տրուած աշխատավարձը նոյնիսկ ղետնախնձոր գնելու համար բաւական չէ, Յվանցիհերները կը պատասխանէին, որ ջուլհակները կրնան ուղածուն չափ խոտ ուտել, քանի որ խոտը առատ է: Սիլէ-

զիսյի ջուլհակներու շրջանակին մէջ տարածուած փոքրիկ երգը կը նկարագրէր ջուլհակներու դառն վիճակը եւ անէձք կը թափէր Փարբրիկանտներու գլխին: Հետեւեալն է այդ երգը:—

Այստեղ Յվանցիհերներն են՝	Ինծի կ'ըսեն.—
Դահիմներն են.	Համբերէ
Անոնց օգնականներն՝	Ու լռէ:
Իրենց ծառաներն են:	Երբ դժգոհես,
Անօթի եմ,	Քեզ համար՝
Կ'աշխատիմ,	Մէկ նամբայ կայ յարմար.
Քրտիմք կը քափեմ:	Ուրիշը անհանգիստ մի՛ ըմեր,
	Գնա՛, մեռիք:

Բրէսլավի մօտ, Պետերսվալդ գիւղին մէջ Յվանցիհերներու տան առջեւ 1844 թուի ամառը, բանուորները խուճրով հաւաքուած՝ այդ երգը կ'երգէին: Նոյն պահուն՝ բանուորներէն մէկը գործատիրոջ ծառաներուն կողմէն ենթարկուեցաւ սաստիկ խարաղանումի: Յուզուած բանուորները յառաջացան դէպի Փարբրիկանտի տունը, եւ մի շարք պահանջներ ներկայացուցին. պահանջները ծաղրանքով մերժուեցան: Բանուորները դրոհ տալով գրաւեցին Յվանցիհերներու տունը, ջարդ ու փշուր ըրին պահեստները, աւերեցին նկուղները, կտորակեցին թանկարժէք կահկարասիները, հոս ու հոն նետեցին ու կոխկրտեցին ապրանքները: Յվանցիհերները փախան:

Ապստամբութեան լուրը տարածուեցաւ արագութեամբ:

Ապստամբներուն միացան մօտակայ գիւղերու ջուլհակները:

Երեք հազարի հասնող վիթխարի ամբոխը գիւղէ գիւղ կ'անցնէր, սարսափ կը պատճառէր Փարբրիկանտներուն, հիացում՝ գիւղացիներուն: Բայց քաղաքէն զրկուած զօրքերը ապստամբութիւնը ճշգրտեցին: Չօրքին դիմադրելու ատեն ապստամբներէն 21 հոգի սպանուեցան եւ 30 հոգի մահացու կերպով վերաւորուեցան:

Ապստամբները, սակայն, խուճապի չմատնուեցան: Կացիններուով, մահակներով անոնք յարձակեցան գիւղերուն վրայ եւ գանոնք դուրս քշեցին գիւղէն:

Տեղական Փարբրիկանտի տունը կրակի տուին, աւերակ դարձուցին: Յաջորդ օրը, սակայն, գիւղերական նոր ջոկատներ եկան ու գրաւեցին գիւղը: Այս անգամ՝ իրենց հետ բերած էին 4 թնդանօթ եւ հեծելազօրք: Ջուլհակներու մէկ մասը մերձակայ լեռները ապաստանեցաւ, մնացեալներէն շատերը դատի ենթարկուեցան ու դատապարտուեցան տաժանակիր աշխատանքի:

ԲԱՆՈՒՈՐ ԳԱՍԱԿԱՐԳԸ

Ջուլհակներու ապստամբութեան եւ ուրիշ բազմաթիւ ժողովրդական յուզումներու անյաջողութիւնը կը բացատրուի բանուոր դասակարգի թուլութեամբ (բանուորութիւնը ամբողջ գերման ադաբնակչութեան շնչին մէկ մասը կը կազմէր), ծրագրի եւ զեկափարութեան բացակայութեամբ եւ ապստամբներու սոցիալական անզոյն կազմով: Մինչեւ 1848-ի տարին, գերման պրոլետարիատը մեծ մասամբ արհեստաւորական վարպետներէն կազմուած էր եւ ենթարկուած էր համաքարային (կիրտական) գաղափարախօսութեան ուժեղ ազդեցութեան: Արդիւնաբերութեան աճման հետեւանքով արհեստաւորներու դրութեան վատթարացումը, անոնց մէջ կը ժողովրդակաշնացնէր նախակապիտալիստական արտադրութեան վերադարձի ճշգրտումը, մեքենաներու ոչնչացման նշանաբանը եւ ռէակցիոն կիրտական կազմակերպութիւններու վերականգնումը՝ աշկերտի, վարպետացուի, վարպետի աստիճաններով, աշկերտի պարտաւորութիւններով եւ վարպետացուի հետազօտական ճամբորդութիւններով: Այդ ճամբորդութիւնը արհեստաւորի արհեստը աւելի որակաւորելու եւ զարգացնելու ձեւ մըն էր. արհեստաւորը ձեռական աշխատանքի ժամանակ պէտք կը զգար աշխատանքի նոր ձեւերու, մանաւանդ երբ այդ ձեւերը կը գործադրուէին ուրիշ կիրտերու մէջ հմուտ վարպետներու միջոցով: Արհեստաւորներու այդ թափառումը՝ մէկ շրջանէն միւրը, մէկ քաղաքէն մէկ ուրիշ քաղաք, իրապէս կը բարձրացնէր վարպետացուներու որակը եւ նոյն ատեն կ'օժանդակէր դանազան փրոֆէսիոնալ բնոյթ կրող միութիւններու կազմութեան: Յաճախ այդ միութիւնները յեղափոխական ուղեգծի կը հետեւէին եւ իշխանութեան կողմէ կը հետապնդուէին եւ յետոյ՝ ընդլատակեալ կազմակերպութիւններ կը դառնային:

ԷՄԻԿՐԱՆՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոստիկանական հետապնդումէն բանուորներն ու վարպետացուները ստիպուած էին Գերմանիայէն փախչիլ արտասահման, գլխաւորապէս Փարիզ, Լոնտոն եւ Բրուսէլ: Այդ տեղերը անոնք դառնալով քաղաքական գաղթականներ կը ծանօթանային ուտոպիստ-սոցիալիստ գաղափարներուն, խմբակներ եւ միութիւններ կը կազմէին ու կ'աշխատէին Գերմանիոյ մէջ սոցիալիստական պրոպականդ մղել: Շատերը ամէն վտանդ յանձն առնելով հայրենիք կը վերադառնային իրենց հետ բերելով Ֆուրիէի եւ Օվէնի գաղափարները:

Քաղաքական գաղթականութիւնը կը կեդրոնանար Չուիցերիոյ եւ Փարիզի մէջ, ուր կը հաւաքուէին եւրոպական բոլոր երկիրներու

յեղափոխականները եւ այնտեղ ալ բազմաթիւ միութիւններ կը կազմէին գլխաւորաբար մտաւորական կազմով: Գերմանական դաղթային միութիւններ՝ «Երիտասարդ Գերմանիա», «Վոնտաւածներու Միութիւնը», «Մարդու Իրաւունքներու Միութիւնը», ասոնք սկիզբէն մըտաւորական կազմակերպութիւններ էին: Գերմանիայէն բանուորական դաղթականութեան ուժեղացումը այդ միութիւններու կազմը կը փոխէր պրոլետարականի, կ'օժանդակէր անոնց յեղափոխականացման, ազգայնական սկզբունքներէն հրաժարուելուն, միջազգային ողիով անոնց վերակառուցման եւ ճամբայ կը բանար որ անոնք սերտօրէն կապուին Բլանքիստներու գաղտնի խմբակներու հետ: Ամենէն մեծ ազդեցութիւնը ձեռք բերած էր Փարիզի մէջ Գերմանացի արհեստաւորներու կազմած ճշմարիտներու Միութիւնը, որ իր կազմով բանուորական ըլլալով՝ իր կազմակերպութիւններն ունէր Լոնտոնի, Չուիցերիոյ եւ Պելճիգայի մէջ: «Ճշմարիտներու Միութեան» անդամները յարաբերութեան մէջ կը մտնէին տեղական բանուորական կազմակերպութեանց հետ: 1839-ի Մայիս 12-ի անյաջող ապստամբութենէն յետոյ՝ այս միութիւնը ջախջախուեցաւ, բայց անոր առանձին անդամները նոյն միութեան պրոպականտի գիծը շարունակեցին:

«Ճշմարիտներու Միութեան» հիմնադիրն եղած է Վիլհելմ Վայտլինգը (1808-1871):

Վ.Ի.Լ.Է.Լ.Մ Վ.Ա.Յ.Ս.Ի.Ն.Գ

Բուրժուա պատմաբանները Վիլհելմ Վայտլինգի մասին գերադոյն արհամարհանքով խօսած ատեն՝ զայն կը կոչեն «ընկեցիկ» կամ «ապօրինի» ծնունդ. որովհետեւ Ֆրանսացի սպայ մը իր տան ծառայող գերմանուհի սպասուհիին հետ կը յարաբերի եւ այդ յարաբերութեան ծնունդը կ'ըլլայ Վիլհելմ Վայտլինգը: Այս «ապօրինի» զաւակը կը մեծնայ կարիքի եւ չքաւորութեան մէջ: Նախ դերձակութիւն կը սորվի, թափառող վարպետացու կը դառնայ, վեց տարի կը թափառի ամբողջ Գերմանիոյ մէջ: Ան իր ամբողջ կեանքին մէջ եղաւ թափառական պանդուխտ. չըջեցաւ, եւ ճանչցաւ Եւրոպան ու Ամերիկան: Երկար ատեն ապրեցաւ Փարիզի, Չուիցերիոյ, Լոնդոնի եւ Բրուսէլի մէջ, ուր ծանօթացաւ Մարքսի եւ Էնգէլսի շուրջը հաւաքուած կոմունիստներու հետ: Իր կեանքի վերջին տարիները անցուց Ամերիկայի մէջ: Յաճախ իր հակահառապարական ելոյթներուն եւ բանուորներու մէջ ագիտացիա ու պրոպականդ մղելուն համար այս կամ այն երկրէն կը վտարուէր: Վայտլինգը 1848-ին մասնակցեր է Բեռլինի յեղափոխութեան. դորժօն մասնակցութիւն ունեցեր է զանազան ընկերութիւններու, խմբակներու եւ ամերիկեան Ծուրիյէ-

րիստներու կազմակերպութեանց մէջ: Վայտլինգի գրիչին կը պատկանին շարք մը տեսաբանական երկասիրութիւններ, ուր ան կը քննադատէ գոյութիւն ունեցող կարգերը, ապա կը բնութագրէ ապագայ կոմունիստական հասարակարգը:

Մարքսը Վայտլինգի վրայ մեծ յոյս ունէր: Ահա թէ ան ինչ գրած է անոր մասին. — «Եթէ բազաւտենք չոր ու երկչոտ գերմանական քաղաքական դրականութիւնը գերմանական բանուորներու այս աննման, փայլուն առաջնորդի գործերուն հետ, բուրժուազիայի բերնով «թղուկ» ու «գաճաճ» անուանուած Վայտլինգը իսկապէս հսկայ մըն է ինքնին»:

Հակառակ Սէն Սիմոնի, Ծուրիյէրի, Օվէնի եւ ուրիշ ուտոպիստ սոցիալիստներու՝ Վայտլինգը բոլորովին կը ժխտէր տիրող դասակարգերու օժանդակութեամբ կոմունիզմի իրագործման տեսութիւնը:

Արհեստաւորական վարպետացուներու տրամադրութիւնները արտայայտելով, Վայտլինգը կ'ենթադրէր, որ սոցիալիստական յեղափոխութիւնը կը կատարուի Լուսացին պրոլետարիատի ուժերով, միշտ յեղափոխութեան պատրաստ՝ աղքատացած բանուորներու ծոցէն դուրս եկող առաջնորդներու միջոցով: Վայտլինգը իր յոյսը գրած էր թշուառացած բանուորներու տարերային յեղափոխութեան վրայ: Չուր տեղը չէր որ անոր մտքին մէջ շարունակ դրոշմուած էր 40 հազար զոհերու եւ աւազակներու միջոցով յեղափոխական յաջողութիւն մը ապահովելու դադափարը. ան կը կարծէր, որ այդպիսիներն արդէն իրենց հոգեբանութեամբ մասնաւոր սեփականութեան թշնամիներն են. միայն թէ անոնց առաջնորդը պիտի գիտնայ յեղափոխութեան յաղթանակէն յետոյ՝ գրութիւնը հաստատել ընկերային ներդաշնակութեան վրայ: Յեղափոխութեան յաջողութիւնը բացարձակապէս խելացի եւ վճռականութիւն ունեցող անեսական առաջնորդներէն կախուած է:

Այսպէս, բուրժուական ուտոպիստներու խաղաղ միջոցառումներու փոխարէն, խաղաղ ճամբով կոմունիզմի անցնելու փոխարէն, Վայտլինգը որպէս հիմնական նախադրեալ՝ կ'առաջադրէր չքաւորութեան յեղափոխական պայքարի գաղափարը. ան շարունակ կը պնդէր թէ բանուոր դասակարգի ազատագրումը ո՛չ դուրսէն պիտի դայ, ո՛չ ալ երկիրէն. բանուորութիւնը իր սեփական ուժերով, ինքն իր ձեռքով ինքզինքը պիտի ազատագրէ: Բայց Վայտլինգը իր ուսմունքին կրօնական տեսակ մը գունաւորում կուտար, չնայած որ ինք հոգեւորականութեան հանդէպ բացասական վերաբերմունք ունէր:

Ան հետեւեալ ձեւով կը պատկերացնէր նոր հասարակութեան՝ կոմունիստական հասարակութեան յառաջացումը:

— «Նոր մեխա մը կուզայ, որպէսզի իրագործէ առաջինին

(Քրիստոսինը ըսել կ'ուզէ . Լ. Մ.) ուսմունքը : Այդ մեսիան կը փշրէ
Հին Հասարակութեան փտած շէնքը, արցունքներու աղբիւրը կ'ուղղէ
զէպի մոռացութեան ծովը ու դրախաը երկինքէն կը փոխադրէ եր-
կիր, երկիրը դրախա կը դարձնէ :

Պատրաստութիւնը արժանավայել կերպով ընդունելու զայն : Ի՞նչ
նշանով մենք զինքը կրնանք ճանչնալ . . . : Ահա ի՞նչ նշանով .— Ան կու
զայ պարզ, հասարակ մարդու հագուստով, առանց շքանշանի, ա-
ռանց առաջնորդող աստղերու . կուզայ հպարտ ատելութեամբ զէպի
Մամոնայի հրապոյրները եւ իր սիրտը բացած մարդոց տառապանք-
ներու առջեւ : Հարստութեան բարձունքէն կ'իջնէ ազքատութեան ան-
զունդը, դժբախտներու ամբոխին մէջ, եւ իր արցունքները կը խառ-
նէ անոնց արցունքներուն հետ : Բայց իրեն յանձնուած իշխանութիւնը
ան իր ձեռքին մէջ չի պահեր . իր յանդուգն գործը վերջացնելէն յե-
տոյ կը հրաժարի իր իշխանութենէն : Այն ատեն՝ հասարակութեան
վրայ չ'իշխեր անհատի մը կամքը, այլ բոլորին ընկերային սէրը, ըն-
կերային զխտութիւնը : Եւ մեծագոյն մեսիան ինքը՝ խաղաղ համես-
տութեամբ այդ նոր իշխանութեան կ'ենթարկուի : Այդ կ'ըլլայ անոր
զործերու պսակը եւ այդ նշանով ամբողջ աշխարհը կը ճանչնայ երկ-
րորդ Մեսիան, որ աւելի մեծ է քան առաջինը :

Այսպիսով, երկրորդ Քրիստոսը, ըստ Վալտլինգի, կոմունիզմի
մունենտիկը կը հանդիսանայ, իսկ կոմունիզմը նախնակա՞ն քրիստո-
նէութեան նման ըլլալու է : Ան սպառնալից կը պատկերացնէ որպէս կո-
մունիստական հասարակութիւն, ուր ո՛չ մէկ իշխանութիւն զոյու-
թիւն ունենալու է, այլ միայն վարչութիւն, ո՛չ մէկ օրէնք, այլ մի-
այն պարտականութիւն, ո՛չ մէկ պատիժ, այլ միայն բուժում :
Վալտլինգը կապիտալիստական հասարակութեան մէջ տիրող շարե-
քի արմատը կը նկատէր դրամը, «որու շնորհիւ է որ կը պահպանուին
այդ նողկալի կարգերը» : Դրամի ոչնչացումը ան կը պատկերացնէր
ո՛չ թէ կապիտալիզմի վերացման հետեւանք, այլ որպէս կապիտա-
լիզմի լուծարքի սկզբնական շրջան :

Վալտլինգի քննդատութիւնը, ուղղուած՝ դեմոկրատիայի եւ յե-
ղափոխութեան բուրժուական ըմբռնումին, անտարակոյս ազդեցու-
թիւն ունեցեր է Մարքսի վրայ : Վալտլինգի սոցիալիզմը կարծես մի-
ջին օղակն էր որ կը կապէր Ուտոպիստներու մանր բուրժուական սո-
ցիալիզմը Մարքս-էնգէլսի պրոլետարական սոցիալիզմին հետ :

«ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆՆԸ»

«Ճշմարտներու Միութեան» առանձին անդամներու յեղափո-
խական պրոպականտան Արեւմտեան Եւրոպայի զանազան արգիւնա-
բերական կեդրոններու մէջ յառաջացուց նոր կազմակերպութիւններ :

Այդ միութիւնը երբ լուծուեցաւ, անոր անդամները Փարիզէն ցրուե-
ցան զանազան տեղեր : Այդ կազմակերպութիւններէն 1847 թուին
Մարքսի եւ Էնգէլսի ջանքերով կազմուեցաւ «Կոմունիստներու Միու-
թիւնը» : Անոր կանոնադրութեան առաջին յօդուածը հետեւեալ կեր-
պով կ'որոշէր Միութեան նպատակը .— «Բուրժուազիայի տապա-
լուծը, պրոլետարիատի իշխանութիւնը, հին՝ հակամարտութեան վը-
րայ յենած բուրժուական հասարակարգի ոչնչացումը եւ նոր՝ առանց
դասակարգերու ու մասնաւոր սեփականութեան հասարակարգի հաս-
տատումը» : Անմիջապէս երբ Փարիզի մէջ ծագեցաւ Փետրուարեան
յեղափոխութիւնը, Մարքս ու Էնգէլսը կոմունիստներու Միութեան
կեդրոնական կոմիտէի միւս անդամներուն հետ տեղափոխուեցան Փա-
րիզ՝ յեղափոխական շարժումներու կեդրոնը, ուր անոնք հրատարա-
կեցին կոչ մը, որուն մէջ շարադրուած էր Գերմանիոյ կոմունիստնե-
րու պահանջները, դեմոկրատական պահանջներու հետ շաղկապուած
բանուորական պահանջներ : Դեմոկրատական պահանջներ, ինչպէս
Գերմանիոյ միացումը եւ անբաժան հանրապետութեան մը կազմու-
թիւն, ընդհանուր ընտրական իրաւունք, ձրի դատաւարութիւն, Ֆէ-
ոդալական բոլոր պահանջներու ոչնչացում : Բանուորական պահանջ-
ներ՝ ինչպէս արքունական եւ Ֆէոդալական կալուածքներու բանքա-
ներու եւ հազորակցութեան միջոցներու ազդայնացում . Գերմանիոյ
մէջ ստեղծել այնպիսի պայմաններ՝ որոնց ներքեւ հարստութիւն ար-
տադրող միլիոնաւոր շահագործուողներ կարող ըլլան իրենց սպրանք-
ները ձեռք բերել :

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ

1847-ի Նոյեմբերի վերջերը կոմունիստներու Միութեան երկ-
րորդ համագումարը հաւանութիւն տուաւ որ Մարքս եւ Էնգէլս ի-
րենց առաջադրած մանիֆէստի նախագիծը պատրաստեն : 1848 թուի
Փետրուարին կոմունիստներու Միութեան անունով հրատարակուե-
ցաւ կոմունիստ կուսակցութեան Մանիֆէստը, որ լոյս տեսաւ Փե-
տրուարեան յեղափոխութենէն մի քանի օր առաջ : Այդ պատճառով
ալ՝ 1848-ի յեղափոխութեան վրայ շօշափելի ազդեցութիւն չունեցաւ :
Ատկէ զատ կար նաեւ ուրիշ պատճառ մըն ալ . Ֆարբիկա-գործարա-
նային պրոլետարիատը այդ ժամանակ փոքրաթիւ էր եւ չափազանց
չատ տարուած էր Ուտոպիական սոցիալիզմի զաղափարներով, ատոր
համար չէր կրնար կոմունիստական Մանիֆէստի հիմնական դրոյթ-
ները իւրացնել :

Մանիֆէստը չորս գլուխներէ կազմուած է : Ա. — Բուրժուա-
զիան ու պրոլետարիատը : Բ. — Պրոլետարներն ու կոմունիստները :

Գ.— Սոցիալիստական եւ կոմունիստական գրականութիւնը: Գ.— կոմունիստներու վերաբերմունքը դէպի դանազան՝ յեղափոխական կազմակերպութիւնները:

Նախընթաց հասարակութեան ամբողջ դրաւոր պատմութիւնը դասակարգային պայքարի պատմութիւն է, ճնշողներու եւ ճնշուողներու պատմութիւնը: Անոնց պայքարը «ամէն անգամ կը վերջանար ամբողջ հասարակութեան յեղափոխականօրէն վերակառուցումով, կամ պայքարող դասակարգերու միատեղ կործանումով»: Բուրժուազիայի շրջանին, պայքարը աւելի պարզ կը դառնայ:

Հասարակութիւնը բաժնուած է երկու մեծ բանակի, երկու իրարու դէմ կանգնած դասակարգերու՝ բուրժուազիան եւ պրոլետարիատը: Միջնադարեան քաղաքներու մէջ Ֆէոդալիզմի աւերակներէն ելած բուրժուազիան հարստացաւ Ամերիկայի յայտնագործման, գաղութարարութեան եւ դէպի Արեւելեան Հնդկաստանի եւ Չինաստանի շուկաները տանող ճամբաներու տիրացման հետեւանքով: Առեւտուրի եւ նաւազնացութեան զարգացումը արագացուցին Ֆէոդալական հասարակութեան քայքայումը: Նախկին Ֆէոդալական համաբային արտադրութեան եղանակը չէր կրնար բաւարարել ապրանքներու ուժացած պահանջը: Մանուֆակտուրան հրապարակէն կը հեռացնէր համաբուրժուանը, գործարանը հրապարակէն կը հեռացնէր մանուֆակտուրան: Նախկին տէրերու տեղը բռնեցին արդիւնաբերող միլիոնատէրերը՝ ժամանակակից բուրժուազիան: Բուրժուազիան Ֆէոդալիզմի բոլոր մնացորդները ոչնչացնելէն յետոյ՝ նոր սահմանադրական պետութեան մէջ իրեն համար բացառիկ քաղաքական իշխանութեան տիրացաւ: Ժամանակակից պետական իշխանութիւնը ոչ այլ ինչ է, այլ միայն կոմիտէ մը, որ կը վազէ բուրժուազիայի հասարակական գործերը: Բուրժուազիան կը կործանէ Ֆէոդալական-նահապետական յարաբերութիւնները, արդիւնաբերութեան կղզիացած «ազգային» ճիւղերը, արտադրութեան գործիքներու եւ հաղորդակցութեան միջոցներու արագ կատարելագործումով կը մտնէ յետամնաց երկիրները եւ զանոնք քաղաքակրթուած Արեւմուտքի շահերուն կը ծառայեցնէ:

Մէկ խօսքով՝ ան նոր աշխարհ մը կը ստեղծէ իրեն համար:

Իր դասակարգային տիրապետութեան ժամանակ բուրժուազիան վիթխարի արտադրողական ուժեր հրապարակ կը հանէ, բայց խնդրոյն հասարակական կողմը այն է որ բուրժուազիան այդ ուժերը չի կրնար սանձահարել եւ վերջ ի վերջոյ անոնք կը սպառնան իր գոյութեան: Բուրժուազիան կը ծնի իր գերեզմանափորը՝ ժամանակակից պրոլետարիատը:

Սովորական ապրանքի պէս, բանուորը ենթակայ է մրցման բոլոր պատահականութիւններուն, շուկայի բոլոր տատանումներուն: Մեքենաներու եւ աշխատանքի բաժանման շնորհիւ, բանուորը մեքենայի պարզ մասը կը դառնայ, միատեսակ պարզ շարժումներ ընող մասը, որ վարդապետութեան կարիք չունի: Այս հանգամանքը պատճառ կը դառնայ որ բանուորի աշխատավարձը կը ճատուի: Բանուորները եթէ չուզեն գործել անդոհացուցիչ աշխատավարձով, անոնց տեղը կ'անցնին կիներն ու երեխաները: Բանուորները բուրժուական դասակարգի ստրուկներն են. զանոնք կը ստրկացնեն մեքենաները, հսկիչները եւ իրենք՝ բուրժուա ձեռնարկուները:

Արդիւնաբերութեան յետագայ զարգացումը կը ստուարացնէ պրոլետարիատի շարքերը, որոնց շահերը նոյն գիծին վրայ կուգան, քանի որ մեքենայական արտադրութիւնը կը ջնջէ աշխատանքի զանազան ճիւղերու միջեւ եղած տարբերութիւնը: Բանուորներու բաշխումը ձեռնարկուներու հետ «հասարակութեան երկու դասակարգերու բաշխման բնոյթ կը ստանայ: Բանուորութիւնը միութիւններ կը կազմակերպէ, գործադուլի կը դիմէ, անոր պայքարը երբեմն ապստամբութեան կը փոխուի, երբ կառավարութիւնը օղնութեան կը փութայ բուրժուազիային: Բանուորութիւնը այդ ատեն կը համոզուի որ դասակարգային պայքարը քաղաքական պայքար է: Պրոլետարիատը կը ստեղծէ իր քաղաքական կուսակցութիւնը, որ զարգացման ընթացքին կրնայ ուժեղանալ եւ ձեռք բերել շարք մը գիջումներ: Բայց ուշ կամ կանուխ՝ պրոլետարիատի պայքարը բուրժուազիայի դէմ կը փոխուի բացորոշ յեղափոխութեան եւ պրոլետարիատը բռնի ուժով բուրժուազիան տապալելէ յետոյ՝ հիմը կը դնէ իր ուրոյն իշխանութեան:

Այդ պայքարին մէջ կոմունիստները շարժման յաւաքապահները, պրոլետարիատի առաջաւոր մարտիկները պէտք է հանդիսանան: Կոմունիստներն են ամբողջական շարժման ընդհանուր շահու պաշտպանները, միջազգային պրոլետարական համերաշխութեան անկուն նեցուկները: Անոնց նպատակն է բուրժուազիայի տապալումը եւ պրոլետարիատի քաղաքական իշխանութեան նուաճումը:

«Հին բուրժուական հասարակութեան տեղը, անոր դասակարգերուն ու դասակարգային հակամարտութիւններով՝ կը բռնէ աշխատաւորներու ընկերակցութիւնը, ուր իւրաքանչիւր մարդու ազատ զարգացումով պայմանաւորուած կ'ըլլայ բոլորի ազատ զարգացումը: Կոմունիստները ամենուրեք կը պաշտպանեն ամէն մէկ յեղափոխական շարժում, որ ուղղուած է գոյութիւն ունեցող հասարակական եւ քաղաքական յարաբերութիւններու դէմ: Այդ բոլոր շարժումներուն մէջ անոնք բացէն ի բաց կը յայտարարեն որ իրենց նպատակին կարող են

Հասնիլ գոյութիւն ունեցող հասարակական կարգերու միայն բռնի տաղարման ճանապարհով: Թող դեղան տիրող դասակարգերը կոմունիստական յեղափոխութեան առջեւ: Պրոլետարները այդ ժամանակ միայն իրենց շղթաները կը կորսնցնեն, բայց ձեռք կը բերեն ամբողջ աշխարհ մը: «Պրոլետարներ բոլոր երկիրներու, միացէ՛ք»: Այս կոչով կը վերջանայ կոմունիստական Մանիֆէստը:

ՄԱՐՏԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Մոյն քաղաքական բաժան բաժան եղած հանդամանքին եւ դասակարգային յարաբերութիւններու բարդ պայմաններու մէջ էր, որ Գերմանիոյ մէջ յառաջացաւ 1848-ի յեղափոխութիւնը: 1846-ի սովոր եւ յաջորդ տարուայ տնտեսական ճգնաժամը այն աստիճան սրեցին դասակարգային յարաբերութիւնները, որ Փարիզի Փետրուարեան յեղաշրջման լուրը ստանալուն պէս Գերմանիոյ զանազան մասերուն մէջ սկսան յեղափոխական բռնկումները: Բուրժուազիան կը պահանջէր սահմանադրութիւն, մամուլի եւ հաւաքոյթներու ազատութիւն: Գերմանիոյ միացում: Նոյն պահանջները իրենց ելոյթներով կը պահանջէին մանր բուրժուազիան եւ պրոլետարիատը: Գիւղացիներու զանգուածները կը հաւաքուէին «իրենց փեթակներէն քշուած մեղուներու պէս», կը յարձակէին ազնուականներու ապարանքներուն վրայ եւ բռնադրակելով կ'այրէին իրենց համար ատելի փաստաթուղթերը: Մարտ ամսուան մէջ ամբողջ Գերմանիան յեղափոխական օղակի մէջ առնուած էր, այդ իսկ պատճառով 1848-ի գերմանական յեղափոխութիւնը կոչուեցաւ «Մարտեան յեղափոխութիւն»: Անոր համար վրձնական նշանակութիւն ունեցան երկու գլխաւոր պետութեանց մէջ տեղի ունեցած դէպքերը, որովհետեւ երկուքն ալ 1814-1815 թուականին Վիեննայի Գոնկրէսէն սկսած, յետադիմութեան բոյնն էին:

ՎԻԵՆՆԱՅԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Վիեննայի մէջ յուզումները սկսան Փարիզեան յեղափոխութեան լուրը առնուածին պէս: Բուրժուազիան՝ կառավարութեան առաջարկեց «սիստէմը փոխել»: Մարտ 13-ին, ուսանող երիտասարդութիւնն ու բանուորութիւնը հսկայական բազմութեամբ մը դուրս եկան եւ բռնեցին գլխաւոր փողոցները: Ամենուրեք կը լսուէին — Անկցի՛ Մետերնիխը(*), «կեցցէ՛ սահմանադրութիւնը»: Կառավարութեան զբը-

(*) Մետերնիխը Աւստրիայի արտաքին գործոց նախարարն էր 1809էն 1848:

կած զօրքերը կրակ բացին ամբոխին վրայ ու ցրուեցին զայն: Մասսան կ'աշխատէր իրեն հետեւող հեծելակազորքին դէմ պատնէշներ շինել: Քիչ վերջ, ամբոխը դարձեալ հաւաքուեցաւ եւ այս անգամ քաղեց դէպի կայսեր պալատը, զոր կը պաշտպանէին թնդանօթներով եւ չորս հազար զինուորներով: Հրաման արուեցաւ կրակ բանալ եւ մասսան ցրուել. բայց հրետանին անշարժ մնաց: Կառավարութիւնը շուարած՝ զիջումներու անցաւ: Մետերնիխը, որ երեսուն տարիներէ ի վեր համերոպական յետադիմական ուժերը կը ղեկավարէր, ստիպուած՝ հրաժարականը ստորագրեց ու փախաւ Անգլիա: Կառավարութիւնը խոստացաւ ժողովրդական ներկայացուցչութիւն հրաւիրել եւ համաձայնեցաւ զինուած թողուլ ուսանողները, որոնք կազմակերպեցին «Ակադեմական լեգէոնը»: Ասիկա Վիեննայի յեղափոխութեան զինուած ուժը դարձաւ: Նոյն ատեն՝ բուրժուազիան ալ կը զինուէր: Ան ազգային պահակազօրքը կազմակերպեց «ազատութիւնը պաշտպանելու» եւ «ամբոխի վտանգաւոր ելոյթներէն կարգը» պահպանելու համար: Տակաւին Մարտի 13-ին զինուած բուրժուազիայի անջատ ջոկատները կը կրակէին բանուորներուն վրայ: Ապրիլ 25-ին կայսրը սահմանադրութիւն «չնորհեց»... եւ ի՛նչ սահմանադրութիւն...: Սահմանադրութիւն մը, որ ընտրական իրաւունքը քննութեան կ'առնէր, արիստոկրատական վերին պալատ մը կը պահէր եւ օրէնսդիր պալատներուն որոշումներուն վրայ կայսեր անսահման իրաւունք կու տար Վէրթո յայտարարելու: Մայիսին երկու անգամ փորձ եղաւ «Ակադեմական Լեգէոն»ը ցրուելու: Պարզ էր, որ կառավարութիւնը մըրտադիր էր մարտեան խոստումները ջուրին տալ: «Ակադեմիական Լեգէոնը» եւ Վիեննայի բանուորութիւնը միասին զինուած ապստամբութիւն յայտարարեցին, որուն հետեւանքով թագաւորը Վիեննայէն փախաւ: Կառավարութիւնը ստիպուեցաւ ընտրական իրաւունքի հիմունքներով սահմանադիր ժողով հրաւիրել: Բայց եղածը զրգուած ամբոխը հանդարտեցնելու եւ յետոյ զայն քնացնելու փորձ էր: Այս անգամ ալ հին ձեւի ընտրական սիստէմը աննշան փոփոխութեամբ շարունակուեցաւ եւ բանուորներու քաղաքական իրաւունքները սահմանափակուեցան: Աւստրիոյ ենթակայ ժողովուրդներու ազգային շարժումը սկսուած յեղափոխութիւնը աւելի խթանեց: Հունգարիան ինքնուրոյն սահմանադրութիւն կը պահանջէր, երբ Վիեննայի մէջ յաղթող ոչակցիան սպառնական դիրքի անցած էր, ինքն ալ անկախութիւն յայտարարեց: Միւս կողմէ, Սլաւոնական ժողովուրդները գերմանացիներու եւ հունգարացիներու դէմ ցցուեցան: Փրակայի մէջ համապլաւոնական դոնկրէս գումարուեցաւ, ուր քննութեան առնուեցաւ Սլաւոնական պետութիւն կազմելու խնդիրը: Իսկ անդին՝

Հոմբարդիայի իտալացի ազգաբնակչութիւնը Աւստրիայէն բաժնուեցաւ եւ անկախութիւն յայտարարեց:

ԲԵՐԼԻՆԻ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

Նոյն ատեն Պրուսիայի մէջ բռնկեցաւ յեղափոխութիւն մը: Փարիզի փետրուարեան ղէպքերու լուրը պատճառ եղաւ որ ժողովրդական յուզումը օրէ օր աճէր: Քաղաքի Տիրդարդէն այգիին մէջ տեղի կ'ունենային բազմամարդ հաւաքոյթներ, ուր ժողովուրդը պահանջներ կը մշակէր թագաւորին ներկայացնելու համար: Փարիզի յեղափոխութեան ատեն ժամանակաւոր կառավարութեան մէջ մտեր էր բանուոր Ալբէրը: Այս լուրը դերման բանուորները խանդավառութեամբ քննութեան կ'առնէին. ինչո՞ւ իրենք եւս նոյնը պիտի չընէին...: Բազմաթիւ դործազուրկներ զօրծ կը պահանջէին: Մարտ 14-ին, Բերլինի մէջ տարածուեցաւ Վիեննայի յեղափոխութեան յաղթանակի լուրը: Ժողովրդական յուզումը կ'աճէր: Մասսայի եւ զօրքի միջև տեղի ունեցան ընդհարումներ. մի քանի մարդիկ սպանուեցան, շատեր վիրաւորուեցան: Թագաւորը մայրաքաղաքի այդ ղէպքերէն վախնալով եւ մտածելով որ յեղափոխութիւնը դուցէ կը ծաւալի ամբողջ Գերմանիոյ մէջ, Մարտ 18-ին երկու հրովարտակ հրատարակեց՝ հրաւիրելով դասակարգերու ներկայացուցիչները եւ նոյն ատեն յայտարարելով որ ցեմգուրը վերցուած է: Այդ հրովարտակները բաւական էին որ Բերլինի բուրժուազիան ցնծութեամբ ծափահարէր: Պալատին առջև հսկայ բազմութիւն մը հաւաքուեցաւ, որ համաձայն լրագրի մը արտայայտութեան, «կազմուած էր վայելուչ եւ օրինակելի մարդոցմէն»: ասոնք հրճուանքի աղաղակներով կ'ողջունէին պատշգամբ կանգնած թագաւորը: Միայն մոռայլ ղէմքերու խմբակ մը կանգնած էր հեռուն՝ եւ բնաւ չէր մասնակցեր ընդհանուր հրճուանքին: Ատիկա բանուորներու խմբակն էր: Նախարարներէն մէկը, դժգոհ այդ բանուորներու ցուրտ վերաբերմունքէն, խօսքը անոնց ուղղելով ըսաւ. — «Ի՞նչ կ'ուզէք, սիրելի քաղաքացիներ, թագաւորը ձեզի շատ աւելին է տուեր, քան ինչ որ կը պահանջէիք»: Բայց պարոն նախարարը հետեւեալ պատասխանը ստացաւ. — «Ա՛յ դու, ծերուկ, դուն ոչինչ չես հասկնար... մեզի ոչի՛նչ, բացարձակապէս ոչինչ տուած են»: Նոյն օրուան ղէպքերը փաստեցին բանուորներու այդ խօսքերու ճշմարտութիւնը: Հաւաքուած բազմութիւնը երբ նախարարի հաւաստիացումին համաձայն՝ պահանջեց որ պալատը պաշտպանող զինուորական պահակները ցրուին, յանկարծ հրապարակի վրայ երեւցաւ հեծելազօրաց ջոկատ մը, որ մերկացուած սուրբերով յարձակեցաւ հաւաքուած բազմութեան վրայ: Նոյն ատեն պա-

լատի զօրանոցներէն թմրկահարութեամբ դուրս եկաւ զինուորական վաշտ մը եւ սուիններով սկսաւ ցրուել հաւաքուած բազմութիւնը: Այդ բանը ապստամբութեան ազգանշանը դարձաւ: Անբեւեակայելի արագութեամբ Բերլինը ծածկուեցաւ պատնէչներով: Բանուորները թալանի ենթարկեցին զինախանութները: Ով որ զէնք չկրցաւ ունենալ, ձեռք առաւ կացին մը, բահ մը, կամ երկաթէ ձող մը: Ահագանգը կը հնչէր անդադար եւ Բերլինի շրջակայքէն կը հաւաքուէին զինուած մարդիկ: Իրիկուան ղէմ՝ զօրքերը յարձակման դիմեցին. սկըսաւ 13 ժամ տեւող յամառ կռիւ մը: Առաւօտուն՝ յոգնած զօրքերը նահանջեցին ղէպի կեդրոն: Առաւօտեան ժամը 7-ին, լոյս տեսաւ թագաւորի հրովարտակը: Այդ հրովարտակով թագաւորը իր «սիրելի բերլինցիներուն» կը խոստանար իր զօրքերը ետ քաշել, եթէ ժողովուրդը նախ պատնէչները թողու եւ հեռանայ, որովհետեւ «սխալ է նենդամիտ այլազգիներու գրգռութեանց հետեւիլը»: Թագաւորին պատրաստած ծուղակը պարզ կ'երեւնար: Ի պատասխան այդ հրովարտակին, պատնէչներէն սկսաւ հրացանաձգութիւնը: Երբ լուր տարածուեցաւ որ ապստամբները կը պատրաստուին գրոհ տալ պալատին վրայ, սարսափը շղթայեց թագաւորի հոգին: Ան յիշեց 1792 թուի Օգոստոս 10-ի Փարիզը: Թագաւորը անմիջապէս հրաման ըրաւ զինուորներուն՝ հեռանալ քաղաքէն: Ատիկա Բերլինի բանուորներուն յաղթանակն էր, քանի որ անոնք պատնէչներուն վրայ կռուողներուն մէջ ճնշող մեծամասնութիւն էին:

Մայիս ամսուայ ընթացքին դումարուեցաւ Ազգային ժողովը: Ժողովն իր մեծամասնութեամբ կազմուած էր արհեստաւորներէ, կալուածատէրերէ եւ բուրժուազիայէն, ասոնցմէ զատ մի քանի տասնեակ զիւղացիներէ եւ երեք բանուոր-արհեստաւորներէ: Վիեննայի պէս այստեղ ալ բուրժուական «քաղաքացիական բանակ» կազմուեցաւ, որու հրամանատար ընտրուեցաւ ոստիկանութեան պետը:

ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Յեղափոխութեան յաջողութիւնները Աւստրիոյ եւ Պրուսիոյ մէջ, կարեւոր հարց դարձուցին Գերմանիոյ միացումը: Մարտի վերջերը Մայնի վրայի Ֆրանկֆուրտի մէջ «նախապարլամենտ» դումարուեցաւ: Նախապուրժուական մեծամասնութիւնը, յեղափոխութեան հեռանկարէն սարսափած՝ կը մտածէր թէ ի՛նչպէս ընելու է որ «սահմանադրական զիծէն» չհեռանայ, ատոր համար միշտ կը մերժէր մանր բուրժուական փոքրամասնութեան առաջարկները: Նախապարլամենտը որոշեց ամբողջ Գերմանիոյ ազգաբնակչութեան կողմէ ընդհանուր քուէարկութեամբ Մայիսին սահմանադիր ժողով դումարել:

Հանրապետականները դժգոհ մնալով այստամբութիւն յառաջացուցին, որ ամենայն խստութեամբ ճզմուեցաւ: Մայիս 18-ին սահմանադիր պարլամենտը դումարուեցաւ Ֆրանկֆուրտի մէջ, ուր մշակուելու էր համագերմանական սահմանադրութիւնը: Այստեղ ալ մեծամասնութիւնը բուրժուական ներկայացուցիչներ էին, որոնք ամենէն աւելի ու ամենէն շատ յեղափոխութեան շարունակութենէն կը վախնային: Մանր բուրժուազիայի ձախ թելը, որ թոյլ էր, չունէր ո՛չ քաղաքական, ո՛չ ալ սոցիալական ծրագիր:

ՌԷԱԿՑԻԱ

Այսպիսով պրոլետարիատի եւ յեղափոխական մանր բուրժուազիայի յաղթանակի պտուղը բուրժուազիան վայելեց: Ինչպէս նախադուշակած էին Մարքսն ու էնգէլսը «Ազատական բուրժուազիան իշխանութեան տիրանալով, այդ իշխանութիւնը անմիջապէս ուղղեց բանուորութեան դէմ: Անոր գլխաւոր գործը դարձաւ յեղափոխութեան վտանգէն պաշտպանել «հասարակութեան խաղաղութիւնը, անձի ու սեփականութեան անձեռնմխելիութիւնը»: Բուրժուազիան արդէն կը տեսնէր որ պրոլետարիատը շարժելու նշաններ ցոյց կուտար: Բերլինի եւ Վիեննայի բանուորները սկսան պրոֆէսիոնալ միութիւններ կազմակերպել եւ գործադուլներով իրենց գրութեան բարելաման ձգտիլ: Գործատէրերը ստիպուած եղան իրենց դրութեան բարելաման ձգտիլ: Գործատէրերը ստիպուած եղան բանուորական օրը 14 ժամէն կրճատել եւ 10 ժամի իջեցնել, աշխատավարձը բարձրացնել եւ գործազուրկներու համար աշխատանքի ճիւղ հաստատել: Պրոլետարիատի այս շարժման մէջ մեծ դեր ունեցան Կոմունիստական Միութեան անդամները, որոնք վերադարձեր էին պանդխտութենէ եւ ցրուած էին ամբողջ Գերմանիոյ մէջ:

Ասոնցմէ մէկը, նախկին բանուոր-գրաշար Ստեփան Բորնը, ամբողջ Գերմանիոյ բանուորութեան միացման մեծ գործը գլուխ հանեց, ստեղծելով բանուորական միութիւններ: Բորնը 1848 թուի Օգոստոսին, յաջողեցաւ դումարել այդ միութիւններու ներկայացուցիչներու ղոնկրէսը ուր կազմուեցաւ «Գերմանական բանուորներու եղբայրութիւն» անունով համագերմանական բանուորական կազմակերպութիւնը: Ատիկա Գերմանիոյ առաջին բանուորական լայն կազմակերպութիւնն էր, որ ստեղծուած էր բանուորներու դասակարգային շահերու հիման վրայ եւ ունէր իր պաշտօնաթերթը: Իրերու այս վտանգաւոր վիճակը ստիպեց որ բուրժուազիան դաշնակցի ազնուականութեան հետ, որպէսզի միասնական ճակատով գործեն պրոլետարիատին՝ այդ «վատ տեսակի թափառական ճիւղներուն» դէմ: Մարտեան օրերէն

հազիւ մէկ շաբաթ անցած՝ 14,000 քաղաքացիներու ստորադրութեամբ թագաւորին խնդրագիր մը ներկայացուցին, որուն մէջ կ'ազերսէին որ թագաւորը զօրքերը վերադարձնէ Բերլին: Բուրժուական ազգային պահակազօրքը եռանդով կ'օգնէր կառավարական զօրքերուն՝ բանուորները պատժելու ժամանակ: Այսպէս, Յուլիսին, բուրժուազիան, կառավարական զօրքերու հետ միասին զինաթափ ըրաւ Բերլինի բանուորները, որոնք յարձակեր էին զինամթերանոցի վրայ եւ զրաւած էին բաւական զէնք եւ ռազմամթերք: Բանուորները իրենց զրաւած զէնքերը գործածելու պատահութիւն չունեցան: Վիեննայի մէջ Օգոստոսին բուրժուազիան դնդակահարեց բանուորները, որոնք կը բողոքէին աշխատավարձի կրճատման դէմ:

ՀԱՎԱՅ ԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Գերման բուրժուազիան երբ յեղափոխութենէն նահանջեց, ոչաւցիան, յանձինս ազնուականներու, սպաններու եւ աստիճանաւորներու, շուտով հաշուի առաւ պատեհ առիթը եւ անցաւ յարձակման, որ յաջող անցաւ, որովհետեւ Փէոդալական պարահաններու մասնակի վերացումով զիւղացիական շարժումները հանդարտած էին: Ռէակցիան ամենէն առաջ Աւստրիոյ մէջ յաղթեց, ուր ան կըցաւ օգտագործել գերմանացիներու, հունգարացիներու եւ սլաւոններու ազգային ատելութիւնները: Գերմանական զօրքերը ցրուեցին Փրակայի սլաւոնական գոնկրէսը: Հոկտեմբեր 31-ին սլաւոնական ջոկատներու օգնութեամբ զրաւեցին յեղափոխական Վիեննան՝ զոր մինչեւ վերջին վայրկեանը՝ հերոսաբար կը պաշտպանէին բանուորներն ու ուսանողները: Վիեննայի անկումէն յետոյ՝ գերմանական զօրքերը սլաւոններու հետ յարձակեցան Հունգարիոյ վրայ: Գրեթէ ամբողջ տարի մը հունգարացիք յամառ դիմադրութիւն ցոյց կուտային. միայն աւրստրիական կառավարութեան խնդրանք Նիկոլայ Ա.ի ուղարկած ռուսական բանակի միջոցով կարելի եղաւ «խաղաղեցնել» Հունգարիան: Բռնուած գերիները կը կախէին եւ կը դնդակահարէին, վիրաւորներն ու անդէնները անխնայ կը սպաննէին: Վիեննա ուղարկուած զօրքերը, որոնք իբր թէ ամբողի ձեռքէն բնակչութիւնը պիտի «պաշտպանէին», կը կողոպտէին տուները, կը բռնաբարէին ազնիւներն ու կիները: Կատարեալ բարբարոսութիւն...: Աւստրիոյ մէջ յեղափոխութիւնը վերջացաւ: Սահմանադիր ժողովը ցրուեցին, մինչ մարտեան անսահման միապետութիւնը վերականգնեցաւ:

Աւստրիական յեղափոխութեան պարտութիւնը խիզախութիւն ներշնչեց Պրուսիական ոչաւցիայի ուժերուն: Զօրքերը քալեցին դէպի Բերլին: Թագաւորական հրովարտակով Ազգային ժողովը լու-

ծուած յայտարարուեցաւ. մի քանի ընդդիմացող պատգամաւորները սուրիններով հեռացուցին: Սահմանադրութիւնը այնպէս մը փոխուեցաւ որ ո՛չ միահանձանութեան, ո՛չ հողատէրերու եւ ո՛չ ալ աստիճանաւորներու իշխանութեան վտանգ կը սպառնար: Ֆրանկֆուրտի պարլամենտը, որ սահմանադրութիւն կը մշակէր, կախուած մնաց օդին մէջ: Բուրժուական մեծամասնութիւնը, որ աւելի շատ կը վախնար յեղափոխութենէն քան թէ կառավարութեան ուձակցիայէն, վըճուականապէս մերժեց մանր բուրժուական փոքրամասնութեան առաջարկը՝ յատուկ բանակ կազմելու մասին, բանակ մը՝ որուն կրնար կռթնիլ պարլամենտը: Այնուհետեւ զօրքերը ցրուեցին Ֆրանկֆուրտի պարլամենտի անդամները, որոնք իրենց գրած անպտուղ ճառերը ձեռքերնին՝ հեռացան պարլամենտի չէնքէն:

Դարձեալ բանուորներն էին, որ պատրաստ էին իրենց կեանքը զոհել յեղափոխութեան համար: Ֆրանկֆուրտի պարլամենտի վերջին օրերուն մի շարք ապստամբութիւններ բռնկեցան Դրէզդէնի, Պֆալցի եւ Բադէնի մէջ: Դրէզդէնի ապստամբութեան զլուխն անցեր էին ռուս զաղթական Բակունին եւ Ստեփան Բորնը: Սոյն ապստամբութեան կը մասնակցէր նաեւ Էնդէլսը, որ այդ մասին կը գրէ — «Կըռիւր փողոցներուն մէջ շարունակուեցաւ չորս օր անընդհատ: Ապստամբներու ուժերը գրեթէ բացառապէս արդիւնաբերական շըրջաններու բանուորներէն կազմուած էին, բանուորներ՝ որոնք հերոսաբար կը կռուէին, արհամարհելով մահը»: Բադէնի եւ Պֆալցի մէջ ապստամբներուն միացան մանր խանութպաններն ու չքաւոր զիւղացիութիւնը: Սոյն ապստամբութիւններուն կը մասնակցէր նաեւ մանր բուրժուազիայի ամենայնեղափոխական մասը: Անոր մտաւորականութիւնը տեղ տեղ ղեկավար դեր կը կատարէր, սակայն երբեմն սարսափած՝ կը թուլացնէին շարժման թափը: Այդ ապստամբութիւնները երբ խեղդուեցան արեան մէջ, Գերմանիան մինչեւ վաթսուներկան թուականները ընկղմեցաւ ուձակցիայի խաւարին մէջ: Մարքան ու Էնդէլսը Գերմանիա վերադարձան յեղափոխութեան ամենատաք շրջանին: 1848-ի Յունիս մէկէն սկսան հրատարակել «Նոր Հոննոստան Լրագիրը», որ երկու նպատակ ունէր. մէկ կողմէն՝ Գերման բուրժուազիան դրդել կալուածատիրական-ինքնակալական պետութիւններու դէմ աւելի մեծական գործունէութեան գիմելու, միւս կողմէն՝ բացատրել պրոլետարիատին յեղափոխութեան մէջ անոր դասակարգային նպատակը եւ ոչնչացնել անոր մանր բուրժուական երազանքները: Տասնըվեց ու կէս ամիսներու ընթացքին՝ «Նոր Հոննոստան Լրագիրը» յեղափոխական գրօշակ մըն էր, որ գերմանական յեղափոխութեան ժամանակ ցոյց կուտար միակ ճիշդ ուղին: Մարքսը երկու անգամ դատական պատասխանատուութեան ենթարկուեցաւ եւ երկու

անգամին ալ՝ իր պաշտպանողական ճառով անմեղ հռչակուեցաւ: Լըրադըին նիւթապէս օժանդակող «դեմոկրատ» պարոնները իրենց օժանդակութիւնը դադարեցուցին: Լրագիրը փրկելու համար Մարքսը իր եւ կնոջ փոքրիկ խնայողութիւնը յատկացուց թերթին, բայց այդ չնչին միջոցները բաւական չէին եւ Մարքսը Քոլոյնէն դուրս եկաւ լրագրին համար դրամ հաւաքելու: Երբ վերադարձաւ Քոլոյն, ոստիկանութիւնը հրամայեց իրեն՝ հեռանալ Գերմանիոյ սահմաններէն: Մարքսը տեղափոխուեցաւ Փարիզ: Հոն ալ կը թագաւորէր ուձակցիան: Այնտեղէն ալ աքսորուեցաւ եւ յետոյ տեղափոխուեցաւ Լոնտոն: Կոմունիստներու Միութեան մէկ մասը անցաւ անտասահման, իսկ միւս մասը գիմեց ընդհատակեայ գործունէութեան: 1852-ի աշնան՝ Քոլոյնի մէջ կազմակերպուեցաւ ձեռքալալուած կոմունիստներու դատաւարութիւնը, որուն հիմք ծառայեցին գրգռիչ մատուցիւնը եւ կեղծ փաստաթուղթերը: Կոմունիստները դատապարտուեցան ցմահ բանտարկութեան: Ասով կոմունիստներու Միութիւնը հրապարակէն չբացաւ:

ԻՏԱԼԻԱՆ ՎԻԵՆԱՅԻ ԳՈՆԿՐԷՍԷՆ ՅԵՏՈՅ

Նարոլէոն Ա. ի կայսրութեան խորտակուելէն յետոյ՝ ուձակցիայի ազդեցութիւնը ամենէն շատ Իտալիան էր որ կը զգար: 1814-1815 թուականներուն Վիեննայի Գոնկրէսը Իտալիան վերականգնեց իր նախկին բաժին բաժին եղած դրութեամբ: Նարոլէոնի կողմէն վտարուած թագաւորութիւնները վերստին կեանքի կոչուեցան: Իտալիոյ հիւսիսային մասը (Լոմբարտո-Վենետիկեան մարզը) վերադարձուեցաւ Աւստրիոյ: Ամենախոշոր պետութիւնը Սարդինեան թագաւորութիւնն էր, որուն մէջ բացի Սարդինիա կղզիէն, կը մտնէին նաեւ Պիէմոնտը՝ ձէնովական ծովափով, Նիցցէն եւ Սալոյիան: Իտալիոյ հարաւային մասը կը բռնէր Սիկիլիաններու թագաւորութիւնը, որ մինչեւ այդ ժամանակ՝ Նէպոլիտական կը կոչուէր: Անոնցմէ դէպի հիւսիս՝ ինկած էր Պապական մարզը՝ Հռովմ քաղաքով, որուն իշխողն է կաթոլիկ կրօնապետը՝ Պապը. անոր կը պատկանէր նոյնպէս աշխարհիկ իշխանութիւնը: Բացի այդ՝ հրապարակ ելան շարք մը դքսութիւններ: Այդ բոլոր պետութիւններու մէջ ոչնչացուցին Ֆրանսական կարգերը եւ վերականգնեցին ազնուապետական կարգեր, ոստիկանութեան եւ հոգեւորականութեան ճշունմները: Նարոլէոնի օրինադիրքի վերացումէն յետոյ՝ մանր եւ փոքրաթիւ առեւտրա-արդիւնաբերական բուրժուազիան զրկուեցաւ այդ օրինադիրքով ձեռք ձգած քաղաքական իրաւունքներէն: Իտալիան երբ շարք մը մանր պետութիւններու բաժնուեցաւ, որոնք իրարմէ անջատ էին ո՛չ միայն քաղաքականա-

պէս, այլեւ մաքսային սահմաններով, մեծ հարուած տուաւ այն բուր-
ժուազիային, որ կը ձգտէր Իտալիոյ ազգային միացման. բան մը, ա-
մենէն անհրաժեշտ պայմանն էր առեւտուրի զարգացման համար:

Բայց ամէն մէկ զժգոհութեան արտայայտութիւն՝ յանցանք կը
համարուէր եւ կառավարութիւնները խստիւ կը պատժէին յանցա-
ւորները:

ԿԱՐՐՈՆԱՐԻՆ ԵՒ 1820-1821-Ի ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԻՒՆԸ

Ազգային ազատական շարժումը, որ ընդլայնուեցաւ աշխա-
տանքներու անցեր էր, զազանի ընկերութիւններ կազմակերպելով կը
զործէր: Այդ ընկերութիւններէն ամենէն մեծը Կարբոնարի Ընկերու-
թիւնն էր(*): Այս ընկերութեան նպատակն էր սահմանադրական մի-
ապետութեան տակ միացեալ Իտալիա մը ստեղծել: Ընկերութիւնը
Նէպոլի մէջ կազմակերպուեցաւ եւ իր ճիւղերը՝ այսպէս կոչուած
«Վէնտերը» շուտով տարածեց Իտալիոյ մէջ: Կարբոնարիզմը մեծ ուժ
դարձաւ այն ատեն, երբ իտալական պետութիւններու բանակներուն
մէջ վեցուեցաւ կազմակերպուեցան: Նարոլէոնի կայսրութեան կործա-
նումէն յետոյ՝ բանակը կորսնցուց իր արտօնեալ վիճակը: Մեծ մա-
սով այս ձեւով կը բացատրուի այն իրողութիւնը, որ վերականգնումի
ատեն բանակը սկսաւ իր մասնակցութիւնը բերել յեղափոխական
շարժման մէջ:

1820-ի սկիզբին սպանական զինուորական յեղափոխութեան
լուրը ուժեղացուց Կարբոնարներու զործունէութիւնը: Նոյն տարին
Յուլիսին, անոնց ղեկավարութեամբ ապստամբած գունդերը, առանց
զիմազրութեան հանդիպելու, մտան Նէպոլ: Թագաւորը ստիպուած
էր ընդունիլ սահմանադրութիւնը, որ կազմուած էր 1793-ի Ֆրանսա-
կան սահմանադրութեան ոգիով: Բայց Իտալիոյ զանազան մասերուն
մէջ տեղի ունեցող շարժումները ընդհանուր համաձայնութեան գիծ
չունէին: Նէպոլիտանական ապստամբութենէն միայն 8 ամիս յե-
տոյ, 1821 թուի Մայիսին Պիէմոնտի մէջ զինուորական ապստամբու-
թիւն ծագեցաւ: Սարդինական թագաւորութեան մէջ եւս սահմանա-
դրութիւն ներմուծուեցաւ յարեւմտան նէպոլիտականին: Բայց ար-
գէն ուշ էր: Պիէմոնտական յեղափոխութեան առաջին երկու շաբաթ-
ներու ընթացքին Աւստրիան գրաւեց Նէպոլը: Ասով նէպոլիտանա-
կան սահմանադրութիւնը ոչնչացաւ: Ատկէ երեք շաբաթ յետոյ՝ նոյն

(*) Կարբոնարի իտալերէն անվանումը կը նշանակէ. այս անունը
խորհրդանշական իմաստ ունէր:

Աւստրիոյ զինուած ուժերը ջարդեցին Սարդինական թագաւորական
զորքերը: Մահապատիժները, բանտարկութիւնները, աքսոր, ասոնք
ոչակցիայի ձեռքի այն միջոցներն էին, որոնցմով կը կռուէր ան՝ յե-
ղափոխական շարժման մասնակցողներուն եւ բոլոր կասկածելիներուն
դէմ: Բայց դարձեալ ընդլայնուեցաւ անցած այդ շարժումը չմեռաւ:
Գազանի ընկերութիւններ կը շարունակէին իրենց զործը: Անոնց զը-
խաւոր նշանաբաններէն մէկը դարձաւ՝ «Անկցին դերմանացիք»: 1831-ի
սկիզբին, Ֆրանսայի Յուլիսեան յեղափոխութեան ազդեցութեան տակ
Միջին Իտալիոյ մի քանի պետութիւններու մէջ յառաջացան շարք մը
յեղափոխական բռնկումներ, որոնք Աւստրիոյ օգնութեամբ շուտով
ճզմուեցան:

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐժՄԱՆ ԱՃՈՒՄԸ

Բաժան-բաժան եղած Իտալիան, 40-ական թուականներու մօտ
անտեսապէս աւելի յետամնաց երկիր էր, քան թէ Գերմանիան: Լեռ-
նաշղթաներով կտրտուած այդ երկրին մէջ, ճանապարհներու վատ
հաղորդակցութիւնը, առանձին պետութիւններու միջեւ մաքսային
բաժնուածութիւնը, ասոնք կը զժուարացնէին առեւտրական փոխա-
նակութիւնը: Արդիւնաբերութիւնը շատ դանդաղ կը զարգանար. զը-
րեթէ բացառապէս արհեստաւորական արտադրութիւնն էր գերիշ-
խողը: Ամենայնեղափոխական գասակարգը, բոլորովին իրաւազուրկ՝
մանր բուրժուազիան կը ներկայացնէր: Անոր վերնախաւը՝ մտաւո-
րականութիւնը, Ֆրանսական յեղափոխութեան զազափարներով
տարուած՝ կ'երազէր հանրապետութիւն մը՝ որ Իտալիան պիտի միա-
ցընէր եւ անոր ազատութիւն տար: Մանր բուրժուազիայի շարքերէն
դուրս եկան իտալական յեղափոխութեան այն ժամանակուան երկու
առաջնորդներ՝ Մաձինին (1805-1872) եւ Կարիբալլին (1805-1882):
Մաձինին զազանի նոր ընկերութիւն մը հիմնեց «Երիտասարդ Իտա-
լիա» անունով, որուն նպատակն էր Աւստրիացիները Իտալիայէն
վճռել եւ հաստատել ղեմովկրատիկ հանրապետութիւն: Ազգային ա-
զատագրական շարժումը աւելի ուժեղ կերպով սկսաւ նաեւ առեւտրա-
արդիւնաբերական բուրժուազիայի շրջաններուն մէջ: Տնտեսական
զարգացման նպատակով, անհրաժեշտ էր երկիրը Աւստրիական լու-
ծէն ազատել, երկաթուղիներ շինել եւ Իտալիոյ համար երկաթէ կօ-
շիկ պատրաստել, որպէսզի ան կարողանայ քալել փշախոտերու եւ
խիճերու մէջէն եւ հասնիլ բարօրութեան հանդրուանին:

Բուրժուազիայի քաղաքական ծրագիրն էր Իտալիան միացնել
եւ սահմանադրական միապետութիւն ստեղծել:

1848-ի ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ

Կը մօտենար, գերման բուրժուազիայի որակումով, «խելագար» 1848 թուականը: Ազատական եւ յեղափոխական շարժումներու աշխուժացումը Արեւմտեան Եւրոպայի շարք մը երկիրներու մէջ իր անդրադարձումն ունեցաւ նաեւ Իտալիոյ մէջ: «Երիտասարդ Իտալիոյ» ազիտացիան ընդգրկեց ամբողջ երկիրը: Լոմբարտիայի մէջ բռնկեցան յեղափոխական առաջին ելոյթները, որովհետեւ հոնտեղի բնակչութեան դժուարին պայմաններուն վրայ կը բարդուէր Աւստրիացիներու կողմէն ազգային ճնշումը: 1848 թուի Յունուարին աւստրիացիներու ժողովուրդին մը ծագեցաւ Փալէրմոյի մէջ, որ անմիջապէս իրեն կապեց Սիկիլիան: Թագաւորական զօրքերը կղզիէն քուսեցան դուրս եւ հոն կազմուեցաւ ժամանակաւոր կառավարութիւն: Մի քանի օր յետոյ՝ ապստամբութիւն բռնկեցաւ Նէապոլի մէջ: Թագաւորը ըստիպուած էր սահմանադրութիւն խոստանալ: Նէապոլի յեղափոխութեան ազդեցութեան տակ Սարդինիական թագաւորն ալ սահմանադրութեան պահանջին իր համամտութիւնը յայտնեց: Փարիզի Փետրուարեան եւ Վիեննայի Մարտեան յեղափոխութեան լուրը ստանալով յեղափոխական շարժումը շրջապէս ամբողջ Իտալիան: Յեղափոխութեամբ բռնկած Լոմբարտիայի, Սարդինիայի եւ Նէապոլիտանական զօրքերը Աւստրիական բանակը նահանջի մատնեցին: Լոմբարտիան համաժողովրդական քուէարկութեամբ որոշեց միանալ Սանդինիական թագաւորութեան: Վենետիկը, Աւստրիայէն անկախ, հանրապետութիւն հռչակեց: Պիոս Թ. Պապը, որ ատեն մը ազատական բուրժուազիայի շրջանակին մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր, Հռովմէն փախաւ, որովհետեւ ան չէր ուզեր որ «սուրբ եկեղեցւոյ հակառակ» պահանջներ առաջադրուին եւ նոր կարգեր հաստատուին: Հռովմը դարձաւ հանրապետութիւն, որուն գլուխն անցաւ Մաձինին: Կարիբալդին հանրապետութիւնը պաշտպանելու համար բազմաթիւ կամաւորներով ժողովրդական բանակ մը կազմեց: Ընդհանուր միտումը այն էր, որ Հռովմի հանրապետութիւնը պէտք է ամբողջ Իտալիոյ միացման կեդրոնը հանդիսանար:

ՌԷՍՊՈՆՍԻՆԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ինչպէս Գերմանիոյ, նոյնպէս Իտալիոյ մէջ ալ առաջին յաջողութեան հետեւեցաւ ձախողանքը, իսկ յետոյ՝ յեղափոխութեան տապալումը: Յեղափոխական շարժման մէջ միասնութիւն չկար. առեւտրա-արդիւնաբերական եւ մանր բուրժուազիայի միջեւ, սահմանադրական միապետութեան եւ հանրապետութեան կողմնակիցներու մի-

ջեւ պառակտում յառաջացաւ: Հանրապետականներու յաջողութիւններէն սարսափած առեւտրա-արդիւնաբերական բուրժուազիան գերազանց ունակցիայի կողմը անցնել: Մանր բուրժուազիան, յեղափոխութեան մե՛ծ թափ տալով հանդերձ՝ սոցիալական որոշ ծրագիր չունէր: Յեղափոխութեան ընթացքին՝ ան մասսաներու ուժը կ'ուզէր օգտագործել, բայց անոնց տնտեսական դրութիւնը բարելաւելու մասին բնաւ չէր մտածեր. իսկ պրոլետարիատին գալով՝ Իտալիոյ մէջ պրոլետարիատ դրեթէ գոյութիւն չունէր. միւս կողմէն՝ մութ ու ճնշուած գիւղացիութիւնը կրաւորական դեր առեր էր. յեղափոխական ելոյթներու ուժը քաղաքի շքաւորութիւնն ու ծովափնեայ քաղաքներու նաւահանգիստներու ազգարնակչութիւնն էր, որոնք յեղափոխութեան մէջ իրենց դասակարգային նպատակները ճշդիւ կերպով չէին կրցած տակաւին յայտնաբերել: Իրերու այս դրութեան հետեւանքով՝ իտալական յեղափոխութեան ընթացքին մէջ վճռական ու վնասակար բեկում յառաջացաւ, երբ Ֆրանսայի ու Գերմանիոյ հակայեղափոխութիւնը յաղթական դուրս եկաւ: Աւստրիական կառավարութիւնը իր երկրի ներսի յեղափոխութիւնը ճզմելէ վերջ, ազատուած զօրքերը ուղղեց դէպի Լոմբարդիա. անկէ յետոյ՝ դէպի Վիեննա: Լոմբարդիան եւ Վիեննան դարձեալ կցուեցան Աւստրիոյ:

Ֆրանսայի նախագահ Լուի Բոնապարտը, ուզելով իր կողմը դրաւել հոգեւորականութիւնը եւ դէպի կրօնը արամադրուած գիւղացիութիւնը, բացի այդ՝ երազելով, որ ինք Եւրոպայի մէջ իր հօրեղբոր՝ Նաբոլէոն Բոնապարտի դերը կրնար խաղալ, Ֆրանսայի զօրքերը Իտալիա զրկեց Հռովմի Պապը պաշտպանելու համար: Կարիբալդին ամբողջ երկու ամիս Ֆրանսացիներուն դէմ կռուելէն յետոյ՝ իր կամաւոր զօրքերով 1849-ին ստիպուած էր քաղաքը թողուլ եւ հեռանալ: Հռովմի մէջ տապալեցին հանրապետութիւնը եւ վերականգնեցին պապական իշխանութիւնը: Միեւնոյն ժամանակ Նէապոլիտանական թագաւորը Սիկիլիայի ապստամբութիւնը արեան մէջ խեղդելով ու չընչացուց սահմանադրութիւնը:

Իտալիոյ ազգային-ազատագրական շարժումը երրորդ անգամ ըլլալով ճզմուեցաւ: Ամբողջ երկրին մէջ ծայր տուին ձերբակալութիւններն ու մահապատիժները: Մաձինին եւ Կարիբալդին յեղափոխութեան մի քանի առաջնորդներու հետ գաղթականի ցուպը ձեռքերին՝ անցան արտասահման: Իսկ անոնք որ չկրցան փախչիլ, յեղափոխութեան մասնակիցելու իրենց յանցանքին համար զրկուեցան իրենց կեանքէն կամ ազատութենէն:

ԳԼՈՒԽ Դ.

ՓԱՐԻՋԻ ԿՈՄՈՒՆԱՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

(Համառոտագրութիւն դէպքերու՝ ժամանակագրական կարգով)

Կոմունը Ֆրանսայի մէջ տեղական կառավարութեան մէկ միաւորն է: Այդ միաւորը ըլլայ խոշոր քաղաքի մը կամ գիւղի մը թաղապետութիւնը իր քաղաքապետով կամ գիւղացիներու խորհուրդով, Կոմուն կը կոչուի:

Կոմուն բառը իր ետեւ յեղափոխական պատմութիւն մը ունի: Անիկա դրեթէ նոյն իմաստը ունի, ինչ որ ունի քամրն բառը (common) որ կը նշանակէ հասարակ կամ հասարակական. ինչպէս կ'ըսենք «հասարակ ժողովուրդ», «հասարակական իրաւունք», «հասարակաց հող» եւ այլն: «Հասարակաց ժողով», «հասարակաց շահ», «հասարակական օրէնք», ասոնք հին հասարակութեան՝ միջնադարեան կոմունաներու օրով դործածական ասացումքներ էին, որոնք 12-րդ եւ 13-րդ դարերուն երեւան եկած բուրժուազիայի պատմութեան մասը կազմեցին: Քաղաքներու առեւտրականներն ու արհեստաւորները — ասոնք հին դարերու բուրժուա գասակարգը կը կազմէին — երկարատեւ պայքար մղեցին Ֆէոդալական լորտերու եւ եպիսկոպոսներու անողոք շահագործումէն ազատելու համար: Հողատէր լորտերը, նոյնպէս եւ եպիսկոպոսները կը պահանջէին վարձագին, դիւսահարկ, եկեղեցական տուրք, տասանորդ, կը պարտադրէին աշխատանք, զինուորագրութիւն եւ քմահաճ տուգանքներ:

Առեւտրականներն ու արհեստաւորները ասոնցմէ ազատուելու համար շարունակեցին պայքարը, որպէսզի դործադրուի իրենց հասկըցած ձեւի արդարութիւնը, որպէսզի տէրը դառնան իրենց անձին ու ընտանիքին եւ ազատ ըլլան զէնք կրել պաշտպանութեան համար:

Երբ վաճառականութիւնը արագօրէն կ'ընդարձակէր իր դործառնութիւնը, քաղաքացիները, որպէսզի կարող ըլլան պաշտպանել իրենց մերժուած ու վտանգուած իրաւունքները, եւ ստանան նոր իրաւունքներ, մտածեցին միջոց մը. այն էր՝ անոնք միանալով կազմեցին Կոմունաներ, այսինքն՝ երդուեալ դաշինքով փոխադարձ օգնութեան ընկերակցութիւններ: Հողատէր լորտերը հրովարտակով

այդ ընկերութիւնները կը կոչէին կոմունաներ, կամ դաւադրական կազմակերպութիւններ: Կոմունա անունը ատոր համար յաճախակի՝ թէեւ ոչ անփոփոխ՝ դործածուած էր որպէս ժողովրդական դործարկութեան ձգտող մարմին մը, կամ աւելի պարզ՝ զինեալ թաղապետութիւն մը:

ԴԵՊՔԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ (1814-1817)

1814-1824.— Լուի ԺԸ. (1815-ի հարիւր օրերը): Նարոյէոն Էլպայէն կը փախչի: Պատերազմ: Կը պարտուի Վաթերլոյի մէջ:

1824-1830.— Չարլըզ Ժ.:

1830-1848.— Յեղափոխութիւն: Լուի Ֆիլիպ կ'ըլլայ թագաւոր: Յունիսի միապետութիւնը:

1848.— Յեղափոխութիւն: Փետրուարեան օրեր: Երկրորդ հանրապետութիւնը: Յունիսին Փարիզի պրոլետարիատը զինուած կըռիւ մը կը մղէ Փարիզի փողոցներուն մէջ: Չորս օրուայ կռիւր — Յունիս 22-26 — ծանօթ է «պաշարման վիճակ» անունով: Հանրապետական զիկատաւորա:

1849.— Լուի Նարոյէոն, Պոնաբարտի եղբօրորդին, հանրապետութեան նախագահ:

1851.— Լուի Նարոյէոնի պետական հարուածը: Ան կ'ըլլայ զիկատատոր եւ կայսր:

1851-1871.— Կայսր Նարոյէոն Գ.: Երկրորդ կայսրութիւնը:

1871.— Երրորդ հանրապետութիւնը:

Հողի վրայ երեք դասակարգեր կային: Ա.— Երկրէն փախչող եւ յետոյ վերադարձող ազնուականները, որոնց Չարլըզ Ժ. (1820-30) մէկ միլիար Փրանք վնասուց հատուցում տուաւ եւ անոնք վերստացան իրենցմէ բռնազրաւուած կալուածները: Բ.— Կապիտալիստ հողատէրերու նոր դասակարգը, որ կը շահագործէր վաճառականական բերքերը: Գ.— Գրեթէ 20 միլիոն անկախ գիւղացի սեփականատէրերը, որոնք ազատուեցին Ֆէոդալական պարհակներէն եւ եկեղեցւոյ տալիք տասանորդներէն ու գոհ էին:

Այժմ դառնանք նորէն 1870 թուականը:

1870 Յուլիս 15.— Ֆրանսան պատերազմ կը յայտարարէ Պրուսիոյ դէմ:

Յուլիս 27.— Միջազգային Բանուորներու ընկերակցութեան մանիֆէստը:

Օգոստոս 12.— Փարիզի բնակչութեան բոլոր քաջառողջ տղամարդիկը հրովարտակով կը կանչուին Ազգային Պաշտպանութեան Կոմիտէին միանալու:

Սեպտեմբեր 1.— Սեզանի պարտութիւնը: Նարոյնն պատե-
րագմական դերի:

Սեպտեմբեր 4.— Կը հռչակուի հանրապետութիւն: Ժամանա-
կաւոր կառավարութիւն կը կազմուի Ազատականներէ: Թագաւորա-
կանները կ'ըլլան ազգեցիկ անդամներ:

Սեպտեմբեր 10.— Ազգային միլիցիայի բանուորական հաս-
ուածները կասկածելով որ իրենք որպէս օգնական ոստիկանական ուժ
պիտի գործածուին, 20 թաղամասերու կողողներու պատգամաւորնե-
րով կազմեցին Կեդրոնական Կոմիտէ մը եւ յետոյ յայտարարեցին ի-
րենց գործունէութեան ծրագիրը:

Սեպտեմբեր 20.— Կը սկսի Փարիզի պաշարումը. կը տեւէ 135
օր. խստաշունչ ձմեռ, սով եւ համաճարակ:

Հոկտեմբեր 28.— Մէյըը կ'իյնայ: Մարշալ Բազէնը անձնատուր:

Հոկտեմբեր 30.— Կառավարութիւնը կը լիազօրէ Թիէրը զինա-
դադարի եւ անձնատուութեան բանակցութեան համար:

Հոկտեմբեր 31.— Բլանքի եւ Ֆլուրսի ապստամբ բանուորնե-
րը կը յարձակին քաղաքապետարանին վրայ եւ կը պահանջեն թաղա-
պետական ընտրութիւն եւ բանտարկուած ապստամբներու ազատ ար-
ձակումը: Կառավարութիւնը նախ կը հաւանի, ապա երկու պահանջ-
ներն ալ աննկատ կը թողու: Բանակցութիւնները կը ձախողին երբ
Բիզմարքի կառավարութեան ուղղուած վստահութիւնը կը խախտի:

1871 Յունուար.— Յունուար ամսուան սկիզբի օրերէն լսելի ե-
ղաւ ահեղ կոչ մը.— ձամբայ տուէ՛ք ժողովուրդի՛ն, ֆամբայ տուէ՛ք
Կոմունայի՛ն:

Յունուար 10.— Փարիզի կառավարիչը՝ Թրաշու, որ թաղաւո-
րական մըն էր, բացէն ի բաց յայտարարեց որ ինք 10,000 մարդիկ
պատրաստ էր զոհել գերմանացիներու պաշարումը վերցնելու համար:
Պատերազմի դաշտին վրայ երեք հազար մեռեալներ եւ վիրաւորներ
մնացին: Թրաշուն հրաժարեցաւ:

Յունուար 27.— Կնքուեցաւ զինադադար: Փարիզի մէջ միայն
չորս օրուայ ուտեստեղէնի պաշար մնացեր էր: Ուժգին էր ներքին հա-
կամարտութիւնը: Յունուար 22-ին, երկրորդ ապստամբութիւն մը տե-
ղի ունեցեր էր եւ ցուցարարները գնդակահարուած էին:

Յունուար 29.— Երրորդ զինուած փորձ մը «Ազգային Պաշտպա-
նութեան Կառավարութիւնը» տապալելու համար:

Փետրուար 13.— Պորտոյի մէջ Ազգային Ժողովի բացումը:

Մարտ 13.— Ազգային Ժողովը կը ստորագրէ Պրուսիոյ հետ
կնքած նախնական դաշնագիրը:

Մայիս 28.— Փարիզեան Կոմունան:

Փարիզեան Կոմունայի նախընթաց օրերու գէպերը:

Մարտ 18.— Ապստամբութիւն Փարիզի մէջ: Թիէրի կառավա-
րութեան փախուստը Վերսայլ: Իշխանութիւնը կ'անցնի Ազգային զօ-
րագունդի Կեդրոնական Կոմիտէին ձեռքը:

Մարտ 24.— Լիոնի մէջ կը յայտարարուի Կոմունա:

Մարտ 26.— Փարիզի մէջ Կոմունայի ընարութիւնները:

Մարտ 28.— Ազգային զօրագունդի Կեդրոնական Կոմիտէն իշ-
խանութիւնը կը յանձնէ Փարիզեան Կոմունային:

Մարտ 29.— Կոմունայի առաջին հրամանագիրները (նորակոչ-
ներու հաւաքումը կը յետաձգուի, նոյնպէս կը յետաձգուի բնակարա-
նային վարձքերու վճարումը: Լոմբարտի մէջ բռնապարւում իրերու
վաճառումը կը դադարեցուի) եւ Կոմունայի տասը յանձնաժողովներու
կազմակերպումը:

Ապրիլ 2.— Փարիզի եւ Վերսայլի միջեւ ռազմական գործողու-
թիւններ կը սկսին: Կոմունան հրամանագիր կը հանէ կրճատելու
պաշտօնեաներու բարձր ամսաթոշակները. կը նշանակէ առաւելագոյն
ամսաթոշակ: Երջաններուն մէջ աշխատանքի գրասենեակներու կազ-
մակերպումը:

Ապրիլ 3.— Կոմունան իր հրամանագրով կ'անջատէ եկեղեցին
պետութենէն: Նոյն հրամանագիրը կ'որոշէ որ ռազմաճակատներուն
մէջ ինկած քաղաքացիներու զաւակները Կոմունայի կողմէն որդե-
գրուին մասնաւոր հոգածութեամբ:

Ապրիլ 16.— Թիէրի կողմէն լքուած արհեստանոցները Կոմու-
նան իր հրամանագրով կը վերադարձնէ բանուորներուն:

Ապրիլ 20.— Հացագործներու փուռերուն մէջ գիշերային աշ-
խատանքները կը դադարեցուին:

Ապրիլ 25.— Հրամանագիր՝ լքուած շէնքերը բռնադրուելու
մասին:

Ապրիլ 27.— Հրամանագրով կ'արգելուի տուգանքի ենթարկել
բանուորներն ու ծառայողները:

Մայիս 1.— Կը կազմուի հասարակական փրկութեան կոմիտէ:

Մայիս 15.— Կոմունան կոչով մը կը դիմէ Ֆրանսայի խոշոր
քաղաքներուն՝ աջակցել Փարիզին:

Մայիս 21-18.— Փարիզի վերջին ճակատամարտը: Կոմունայի
անկումը: Ազգային պահակազօրքի վերջին ճակատը Փէր-Լաշէզի գե-
րեզմանատան մէջ: 147 հոգի գնդակի կը բռնուին: Բազմաթիւ մար-
դիկ կը սպաննուին ու կը վիրաւորուին: Այսպիսով կ'իյնայ ողբեր-
գութեան վերջին վարագոյրը:

ՓԱՐԻՋԻ ԿՈՄՈՒՆԱՆ

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ

1868-ի ամրան Փարիզը դարձեալ ճակատած էր այնպիսի քաղաքական եռուզեռոտ դրութեան մը, որուն նմանը տեսած չէր տասնընթեքը տարիներէ ի վեր:

Լուի Նաբոլէոն Բոնապարտ, պարտքով ծանրաբեռնուած, ճակատագրի բերումով այդ արկածախնդիրը, վերջապէս յաջողեցաւ 1851-ի Դեկտեմբեր 2-ին, ազատական հիմնարկութիւններ հաստատելու խոստումով իշխանութեան գլուխն անցնիլ Երկրորդ Կայսրութեան պալատին մէջ: Տասնընթեքը տարիներու ընթացքին, բացարձակ վեհապետական իշխանութիւնը իր դրոշմը թողած էր իր քաղաքականութեան, իր նկարագրին եւ նոյնիսկ՝ իր դէմքին վրայ: Տարուէ տարի Ապպլըրտի խղճալի լուսանկարները կը պարզէին կայսեր ջղայնութեան գործած Ֆիզիքական աւերները: Ճնշում կար մասսաներէն, որոնք այժմ կազմակերպուած էին եւ գիտակ էին իրենց կացութեան, ճնշում կար մտաւորական դասակարգէն, որոնք խարուած էին 1848-ի յաջողութիւններէն. ճնշում՝ Ֆինանսական պարոններու նոր դասակարգէն. ճնշում՝ իր կնոջմէն, գեղանի, յամառ եւ սնտոխապաշտ էօժէնիէն. ճնշում՝ իր ամենամօտ խորհրդատուներէն, որոնք համոզուած էին թէ՛ ինքնակալութիւնը պատրաստ էր փշրուելու բայց չէր ծռեր իրենց խորհուրդներով: Բոլոր այս ճնշումները ազդեր էին կայսեր վրայ եւ հարկադրեց էին որ ան դիմէր ամբոխավարութեան, այն ամբոխավարութեան՝ որ խառնաշփոթ շրջանին, այսինքն՝ 1849-ին, նպաստեց իրեն շահելու երկրի նախագահութիւնը:

Այն ատենները, Մոնտ-Մարտի բուլվարին հիւսիսային կողմը կար յայտնի սրճարան մը — Քաֆէ տը Մատրիտը, որ ժամագրավայրն էր հակակայսերական շարժման առաջնորդներուն, Քառասուն ութի վեթերաններուն եւ խմորուող յեղափոխութեան պատրաստուող մարտիկներուն: Հոն էր Ռոշֆորտը, պայթեւիք յեղափոխութեան Վոլթէրը, որ ո՛չ կը խմէր, ո՛չ ալ կը ծխէր: Հոն էր Կամպէտան, ճախակողմեան թելի ջատագովը, հոն էր նաեւ Դիլեկլէուզը, որ տարիներով բանտարկուեց էր, դատապարտուած էր թիարանի, մէկ բանտէն փոխադրուած էր միւսին, բայց իր յեղափոխականի պողպատեայ կամքը երբեք չէր ընկճուած: Քաֆէ տը Մատրիտ կը յաճախէր նաեւ Դիլեկլէուզի երբեմնի արհամարհուած հակառակորդը՝ Ֆիլիքս Փայատը, յեղափոխութեան մէկ ուրիշ ծերունի վեթերանը: Հոն կը յաճախէին նոյնպէս դաւադրական փորձառութիւն ունեցող շատ մը երի-

տասարդներ, որոնք պատրաստուող յեղափոխութեան առաջնորդներն ըլլալ կ'երազէին:

Այնտեղ տեղի կ'ունենար վիճարանութիւն՝ զանազան քաղաքական հարցերու շուրջ, քննարկ՝ թերթերու յայտարարութեանց շուրջ: Միայն մէկ բան պարզ էր, որ գրեթէ բոլորին ալ զգացումները կապուած էին հանրապետական Ֆրանսայի սրբազան հողին, 93-ի Ազատութեան, Եղբայրութեան ու Հաւասարութեան սկզբունքին: Բայց անոնք այդ ազատութիւնը, եղբայրութիւնը եւ հաւասարութիւնը նոյն իմաստով չէին ըմբռներ:

Այդ շրջանին, քաֆէներուն ու բանտերուն մէջ յեղափոխականները իրենց սովորական գործն ըրած էին խորհրդակցել եւ ծրագրել դաւադրական նպատակին ուղղուած գործնական միջոցներ: Ռաուլ Ռիկուլ ամէն տեղ էր յեղափոխական իր տեսութիւններով: Կրքոտ ու եռանդուն՝ արտասովոր կերպար մը, որ կ'ընդունէր թէ Ֆրանսական յեղափոխութիւնը իր նշանաբանը ընտրելու է եւ հետեւելու է տեռորիստ Հէպլըրտի, Մարատի եւ Շոմէտի: Գաղտնի ոստիկաններու եւ լրտեսներու հետքերուն հետեւող եւ անոնց զիմակները պատուող մարդ մըն էր ան, անմըցելի յեղափոխական մը: Մերունի Բլանքին՝ յեղափոխականներու դատաւորը, զայն կոչեց էր «փողոցի տղայ մը»...: Թէոֆիլ Ֆերրէ, անոր աշակերտն էր, սառնարիւն տեռորիստ մը, անվախ ու լրջախոհ, բայց զեռ շունէր Ռիկուլի անհողութիւնն ու անզրթութիւնը: Ֆերրէ, իր մանկութենէն ծծած էր կեանքի դառնութեան մրուրը, թշուառութեան ծնունդն էր ան, իր մէջ շատ կանուխէն ուսուցանեց էր վրէժխնդրութեան ոգին: Ան համոզուած էր, որ միայն Յակոբինեան տեռորը կրնար յազեցնել իր վրէժխնդրութիւնը: 1870-ին, դաւադրական փորձի մը առթիւ ձերբակալուեցաւ, բայց հարկ եղած ապացոյցներու չզոյութեան հետեւանքով աղատ արձակուեցաւ: Դատավարութեան ընթացքին ան չչմեցուց դատաւորները, երբ յայտարարեց. — «Դուք հիմա իշխանութիւն ունիք զիս դատապարտելու. գործածեցէ՛ք այդ իշխանութիւնը: Բայց երբ ե՛ս ունենամ այդ իշխանութիւնը եւ դուք իմ առջեւ ներկայանաք դատապարտեալի դերով, նոյնիսկ ձեր աստուածը ձեզ չկրնար ազատել»:

Այսպէս, կային նաեւ հարիւրաւոր երիտասարդ յեղափոխական մտաւորականներ. անոնց մէջ էր Էօթէն Վերմորէլ, Կորսիքացի Փասկալ Կրուսէտ, Ռանիի աշակերտ Վաշըրոն, որ կը կոչուէր Բլէմանսօ, բանաստեղծ Կատուլ Մենտէր եւ ուրիշներ:

Այստեղ պէտք է նշել թէ Սան Փլաթի բանտին մէջ Բլանքին պատրաստեց էր կարգապահութեան կանոնները իրենց ամբողջ խրատութեամբ իւրացնող մի շարք դաւադիրներ, որոնց մէջ էին Էօթէն Փէլլէտան, Թրիտոն, Ռէկնարտ, Անաթոլ Ֆրանս, Լոնկէ, Լաֆարկ

եւ շատ մը ուրիշներ: Այն վերջինները՝ Լոնկէ եւ Լաֆարկ ամուսնացան Մարքսի երկու դուստրերուն հետ:

Ասոնք բոլորը պատուաւոր ընտանիքներու զաւակներ էին, որոնք Բ. Կայսրութեան օրով իրենց նախասիրած գործը չէին կրնար գտնել: Անոնց դրած գործերուն մէջ կարմիր դրօշակ կը տեսնուէր: Անոնք կը կազմէին անդասակարգ ազնուականները — Մէնտարիները:

Երկրի տիրական իշխանութեան մէջ ժառանգական հակադրութիւն կար: Մէկ կողմէ կեցեր էին միջին դասու Փարմըրները եւ գաւառի վաճառականները, միւս կողմը կեցեր էր երկրի ճարտարարուեստականացումէն ծնած նոր դասակարգ մը, Փինանսական սակաւագետութեան ձգտող դասակարգ մը, որ կ'ուզէր տակաւին անտնացող հին կարգերը ի սպառ խորտակել՝ իր գործունէութեան շրջանակը աւելի եւ աւելի ընդարձակելու համար, իսկ երրորդ կողմը կեցեր էին դեռ եւս անխղճօրէն շահագործուող ընչազուրկ դիւղացիներն ու բանուորները: Երիտասարդ մտաւորականները, ուրեմն, կը տեսնէին այդ հակադրութիւնը եւ գիտէին թէ իրենք եւս ճնշման տակ ճակատեր էին այդ հակադրութեան արդիւնքին՝ բռնակալութեան: Անոնք ուժեղ ազգայնական ուժերի սննդաւորութեամբ՝ սորված էին ամէն բանէ առաջ սիրել իրենց հայրենիքը. բայց ի՞նչ կը ներկայացնէր իրականութիւնը...: Իրենց այդ սիրած հայրենիքը դարձեր էր Փինանսական շահաձուկերու գրախոր: Իրենց առաջարկուած ու խոստացուած էր ճոխութիւն, արդիւնաբերական առատութիւնը, որ կրնար բաւարարութիւն տալ բոլոր քաղաքացիներուն՝ անխտիր, բայց ի՞նչ կը տեսնէին...: Այն որ կ'աշխատէր, քրտինք կը թափէր ու կ'արտադրէր բոլոր պիտոյքները, կը մնար զրկուած, իսկ այն որ գործատէր էր կամ կալուածատէր, հարուստ էր կամ մեծատուն, դրամ կը զիզէր ու ճոխութեան մէջ կը լողար: Եւ այս երկրորդ դասու մարդիկը աննշան փոքրամասնութիւնը կը կազմէին երկրի բնակչութեան: Իսկ միւս կողմէն՝ արուեստի, գեղարուեստի, գրականութեան, դիտութեան ու փիլիսոփայութեան մէջ բոլոր ձեռներէցութիւնները, բոլոր փորձերն ու աշխատանքները կը ճզմուէին ամենուրեք ոստիկաններու տափակ ու ծանր մոյկերուն տակ:

Անոնք բնականօրէն իտէալական դժով պիտի յարէին այն ուղեգիծին, որ վերածնող ուժ էր, որ անարդարութեան եւ անզուժ շահագործումի ճիրաններուն մէջ տառապող ժողովուրդին արդար դատին կը ծառայէր, եւ անոնք յարեցան այդ նորարոյս ճիւղին.— Սոցիալիզմին:

Իննսուս երեքի հաւատոյ հանգանակը, «Յեղափոխական Կոմունա»ն անոնց մտքին մէջ լուսատու ջահ մը եղեր էր եւ անոնք անոր լոյսով կ'երարդէին տեսնել քաղաքակիրթ Փրանսայի փառքը:

Նոր Յակոբինեանիզմը եղաւ հաւատամքը ո՛չ միայն հին պրն-դազլուի յեղափոխականներուն՝ որպիսիք են՝ Դիլէկլէուզը եւ Փայատը, այլեւ մի շարք մարտական բուրժուա-հանրապետականներ եւ նոյնիսկ մաս մը այն գործաւորներէն, որոնք ինքզինքնին աւելի փառիզցիներ կը համարէին քան թէ պրոլետարներ:

Այն բուրժուա մտաւորականները, որոնք չէին կրնար հաշտուիլ բանուոր դասակարգի սոցիալիզմին հետ, բայց կը պահանջէին աւելի ուղղադատ ուժի մը՝ քան ինչ որ կ'ուզէին նոր Յակոբինեանները, արձանագրուեցան Բլանկիստներու կուսակցութեան՝ որպէս անդամներ:

Աւզուստ Բլանկիի անունը, անոր վարդապետութիւնն ու գործունէութիւնը զրեթէ կէս դարու ընթացքին տիրական դարձեր էր: Թէեւ ան իր կեանքի 28 տարիները բանտերու մէջ անցուցեր էր, բայց իր բանտային կեանքին մէջ իսկ՝ ան անդուլ անդադար կը զբաղէր յեղափոխական գործով: Բլանկին շարունակ զբաւոր հրահանգներ կը զրկէր դուրսը՝ իր հաւատարիմ տեղակալներուն:

Բլանկին, որու մասին գովեստով արտայայտուած էր եւ զայն անուանած էր «ճշմարիտ յեղափոխական մը», սոցիալիստ չէր: Ճիշդ է, որ ան էր «պրոլետարական դիկտատուրա»յի տէրմինի հեղինակը, բայց պրոլետարական դիկտատուրայի իր ըմբռնումը չէր հասներ մինչեւ անդասակարգ սոցիալիստական հասարակութեան աստիճանի ըմբռնումին, այլ միայն միջոց մըն էր ան՝ ազդու միջոց մը՝ խորտակելու կապիտալիստական շէնքը:

Բլանկին համոզուած էր որ յեղափոխական Փարիզն էր որ պրոլետարական դիկտատուրա հաստատելով ամբողջ Ֆրանսան յեղափոխական պիտի դարձնէր: Փարիզի համար տածած իր նախամեծարութիւնը մէկ կողմէն, միւս կողմէն՝ երկար տարիներու ընթացքին իր բանտարկեալի կեանքը պատճառ եղած էին որ ինք մասսաներէն անշատուած մնար եւ մասսաներու ուժը ստորազնահատէր:

Բլանկիզմի գլխաւոր թերին այն էր որ ան չկրցաւ զանազանել ասպտամբութիւնը յեղափոխութենէն եւ յայտնապէս մերժեց անոր մասսայական հիմքը: Լենին 1917-ին պէտք ունեցաւ հետեւեալ ձեւով բնորոշել ճշմարիտ յեղափոխութեան գիրքը ընդդէմ Բլանկիզմի.— «Ապստամբութիւնը պէտք է հաստատուի ո՛չ թէ զաւազրութեան մը վրայ, ո՛չ թէ կուսակցութեան մը վրայ, այլ զարդացած դասակարգի մը վրայ: Ասիկա առաջին կէտն է: Ապստամբութիւնը պէտք է հաստատուի ամբողջ ժողովուրդի յեղափոխական արշաւին վրայ: Ասիկա երկրորդ կէտն է: Ապստամբութիւնը պէտք է պայթի այն ատեն՝ երբ յեղափոխութիւնը իր շրջանակը ընդլայներ եւ բարձրացեր է իր ծայ-

րագոյն աստիճանին : Ատիկա ալ երրորդ կէտն է : Այս երեք պայմաններն են որ Մարքսիզմը կը գատորոշեն Բլանկիզմէն» :

Ֆրանսայի մէջ թէեւ ճարտարարուեստականացումը մեծ չափանիշով զարգացեր էր 19-րդ դարու վերջին քառորդին, բայց Փարիզի գործաւորները մեծ մասով արհեստաւորներ էին . տակաւին մեծաքանակ արտադրութեան կապուած գործարաններու մէջ աշխատող կազմակերպուած բանուոր դասակարգ գոյութիւն չունէր : 1866-ին, երբ Փարիզի բնակչութիւնը կը հաշուէր մէկ միլիոն 826 հազար հոգի, հոն կային 170,000 գործատեղիներ, 66,000 գործատէրեր, որոնք կ'աշխատցնէին 442,310 գործաւորներ, իսկ 106,000 հագուստի գործատեղիներու մէջ կ'աշխատէին 212,000 կիներ :

Սոյն թիւերը ցոյց կուտան որ Փարիզի բանուորները հարիւրներով եւ հազարներով մէկ քանի խոշոր գործարաններու մէջ ամփոփուած չէին . այս հանգամանքը արդէլք էր անոնք մասսայական կազմակերպութիւն մը յառաջացնելու ընթացքին : Ասոր հետ նկատի առնելու ենք նաեւ այն իրողութիւնը, որ այդ գործաւորները տակաւին քաղաքականապէս զարգացած չէին :

Ատիկա միայնակցութեան ու անդրադարձումի նշանն է :

Երեսուցական թուականներուն, նոր սոցիալիզմ մը երեւան եկաւ, նախնական թէեւ, բայց ամբողջապէս գատորոշուած Մէն Սիմոնի եւ Զուրիէրի Ուտոպիստական սոցիալիզմէն եւ քառասուցական թրուականներուն՝ Լուի Պլանքի աննպատակ մարտական սոցիալիզմէն : Այս նոր սոցիալիզմի յառաջապահն էր Պրուզոն :

Ոչ ոք կրնայ կասկածի ենթարկել այս մեծ խորհող մարդուն ժողովուրդին նուիրուածութիւնն ու եռանդը : Իր գործերը թարգմանուած են բազմաթիւ օտար լեզուներու — Անգլերէն, գերմաներէն, ռուսերէն, իտալերէն : Շատ մը օտար սոցիալիստներ ու մարդասէրներ — ինչպէս Թոլստոն եւ Մորիսը — խորապէս ազդուած են անոր միտքերէն : Քարլ Մարքս, անոր միայն մէկ գործը զնահատեր է — Ի՞նչ է Սեփականութիւնը, բայց ծաղրանքի ենթարկեր է անոր մէկ ուրիշ գործը .— Թշուառութեան Փիլիսոփայութիւնը :

Պրուզոնի գաղափարները բնական պտուղներն են այդ շրջանի ֆրանսական բանուորներու անտեսական գոյամիճակին, որուն հանգամանօրէն ծանօթ էր անոնց մէջ ապրած ըլլալուն հետեւանքով : Իր թէորիան կը յարմարէր արհեստաւորական հասարակութեան, որ նոր կը ճակատէր ֆինանսական կապիտալի շահագործումէն : Ասոր համար Պրուզոն թշուառութեան ակը գտած ըլլալ կը կարծէր, ոչ թէ արտադրութեան միջոցներու սխալ բաշխումին մէջ, այլ փոխանակութեան սխալ խնամակալութեան մէջ : Ան կը մտածէր թէ՛ հասարակութեան մը կազմակերպութիւնը պէտք է բազկանայ համադր-

ծակցական դաշնակցութենէ մը, որուն մէջ կը մտնեն փոխադարձ վարկային ընկերութիւններ : Այդ պատճառով Պրուզոնի սոցիալիզմը յաճախ անուանուած է փոխադարձական սոցիալիզմ : Իր թէորիայով՝ դաշնակցային տեղական այս ինքնավար միաւորները կը կազմեն կոմունաներ : Իր մէկ գիրքին՝ Բանուորութեան Կարողականութիւնը երկասիրութեան մէջ ան կը սորվեցնէ բանուորներուն թէ՛ «բանուորները իրենք՝ ամենակարող են եւ պէտք է որ իրենց ճակատագիրը իրենց ձեռքն առնեն եւ չնային դուրսը, չնային դէպի վեր» : Եւ բանուորները Պրուզոնի մէջ տեսան իրենց ուժին ու կարողութեան հասկիւն : — «Մասսաները, — կ'ըսէր Պրուզոն, — իմ գործերը չեն կարգար, բայց առանց կարգալու, անոնք զիս կը հասկնան» :

Կայսրը, անճարակ ու սկսնակ անտեսազէտ մը, տեսնելով որ Պրուզոնի գաղափարները լայն ժողովրդականութիւն կը շահին, Պրուզոնիզմի անվնաս մասերը ընդօրինակեց ու որոշ զիջումներ ըրաւ բանուորներուն : Կառավարութիւնը օգնեց որ կազմուին կոոպերատիւներ եւ դրամատուններու միջոցով ֆինանսաւորեց զանոնք : 1866 թուին տասներկու բանուորական փոխադարձ վարկային ընկերութիւններ կազմուեցան . Փարիզի մէջ եօթը խոշոր կոոպերատիւներ կային, իսկ գաւառներու մէջ՝ աւելի քան վաթսուն : Կայսրը կը կարծէր թէ իր այդ զիջումները կը դարձանէին հետզհետէ ուռճացող սրնտեսական անհանգստութիւնները : Բայց ան բնաւ չէր անդրադառնար, որ այդ զիջումները կ'ապացուցանէին իշխանութեան տկարութիւնը եւ ճամբայ կը բանային բանուորներուն՝ աւելին պահանջելու : Ատիկա «ոստիկանական սոցիալիզմ» էր, որ ծնունդ տուաւ 1864 Սեպտեմբեր 28-ին, Լոնտոնի մէջ Միջազգային Բանուորներու Ընկերակցութեան հիմնարկումին :

Կայսրը, կը կարծէր որ իր յաջողութիւնն ու ապահովութիւնը գաւառներէն կախուած էին : Ան զիտէր նաեւ, որ Փարիզիներուն քրքնելով վտանգը իրմէ չէր հեռացներ, քանի որ իր բարձրացումը սկըսաւ Փարիզի յեղափոխութեան շնորհիւ, որովհետեւ այդ յեղափոխութիւնն էր որ դուրս նետեց Լուի Ֆիլիպը : 1791-էն ստղին՝ ութը տարբեր կառավարութիւններ իշխեցին Ֆրանսայի, բոլորն ալ Փարիզի մէջ իրարու յաջորդող դէպքերու հրամայականին ազդումով : Կասկածելի էր որ գաւառները կայսեր օգնութեան փութային, եթէ Փարիզը յեղափոխուէր : Ուրեմն, կարելի է ըսել թէ Ֆրանսայի իշխող կայսրը տեսակ մը պատանդ էր Փարիզի մէջ : Տուիլլըրի պալատը շինուած էր Լուվրի պալատին հետ, որպէսզի յեղափոխութեան վտանգի առնն թաղաւորը իր անձը ազատելու համար կարենայ փախչիլ Փարիզէն :

1870-ին, Ֆրանսայի բնակչութեան երեք հինգերորդը հողա-

գործութեամբ կը զբաղէր: Ֆրանսայի 10 միլիոն քուէատուններէն 5 միլիոն 350,000-ը կ'ապրէին հողագործութեամբ, 3 միլիոն 205,000-ը կը գործէին արդիւնաբերական ձեռնարկութեանց մէջ, մէկ միլիոն 445,000-ը ունէին իրենց գործատեղիները (արհեստաւոր վարպետներ), որոնք ստորակարգ աշխատաւորներ չունէին: Փարիզէն դուրս, միայն մի քանի մեծ քաղաքներ կային ինչպէս Լիոնը եւ Մարսէլը, որոնց արդիւնաբերութիւնն ու երկաթուղիները կրկնապատկեր էին իրենց բնակչութիւնը: Ֆրանսան, ուրեմն, մանր հողատէր Փարմըրներու եւ արհեստաւորներու երկիր էր: Անոնց շահերը գլխովին հակառակ էին զարգացած փարիզցիներու շահերուն: Նարոլէոն Գ. հակառակ անոր, որ 1851-ին շատ խոստումներ ըրած էր զաւաններուն՝ անոնց դրութիւնը Փարիզի աստիճանին հասցնելու համար, բայց ոչինչ ըրած էր այդ ուղղութեամբ: Թէեւ ան կարմիր Փարիզի եւ կարմիր տեւորի տիրապետութեան վերջ դրած էր, բայց նոյն ատեն՝ զաւանացիները զինքը կը դատապարտէին այն բանին համար, որ անիկա միշտ Փարիզը բարձր դիրքի վրայ կը պահէր, եւ պարապ տեղը չէր որ անոնք զինքը կը կոչէին «Փարիզցի Պարոն»:

Ասով կը տեսնենք թէ երկու հակադիր զանգուածներ կանգնած էին դէմ դէմի. տնտեսապէս յետամնաց ու կայուն դաւառները եւ յառաջդիմական եւ արագորէն զարգացող Փարիզը. այս երկուքը մէկզմէկ կ'արհամարհէին եւ մէկը միւսը անքաղաքակիրթ կը կոչէին: Փարիզը կը ծաղրէր գաւառները եւ զանոնք կը կոչէր առանց անիւ սայլակներ՝ որոնք կը զանգաղեցնէին երկրի ընդարձակումն ու զարգացումը: Գաւառները կը դատապարտէին Փարիզը, որովհետեւ ան քաղաքակրթութիւնը կը մատնէր վաղանցուկ օտար աստուածներու: Անոնք չէին սիրեր փարիզցիներու թեթեւօլիկութիւնն ու ցուցամոլութիւնը, ինչ որ փարիզցիները կը կոչէին իմաստութիւն եւ զեղեցկութիւն: Քաղաքականապէս գաւառները պահպանողական էին, եւ երբ Բ. Կայսրութիւնը իր խոստումը չկատարեց, եւ աւելի զիջումներ ըրաւ կարմիր Փարիզին, մեծ հողատէրերը, զինակիրները եւ իրենց հրահրութեան ենթարկուած գիւղացիները վերադարձան իրենց նախկին դիրքերուն:

Ընդհանուր առմամբ մեծ հողատէրերն ու գիւղապետները կը հակէին Բուրբոններու Օրինականապաշտ ճիւղին, կողմնակից էին Լուի ՓՂ-ի վերահաստատման ռեժիմին. մինչ զինակիրներն ու ոստիկանները կը նախընտրէին Լուի Ֆիլիպի սերունդէն Օրլէանիստի սահմանադրական միապետութիւնը: Օրլէանականներուն մէջ կային շատ մը վաճառականներ եւ փրօֆէսիոնալ մարդիկ. այդպիսով անոնք աւելի մօտիկ էին չափաւոր հանրապետականներուն, քան թէ օրինականապաշտներուն: Բայց երկուքն ալ՝ Օրլէանականներն ու Օրինա-

կանապաշտները կ'ատէին կարմիր Փարիզը քան որեւէ բռնագրաւող միապետը:

Օրլէանականները, որոնք մասնաւոր դաշնագրութեամբ կապուած էին պահպանողական հանրապետականներուն, Փարիզի մէջ ունէին կարեւոր ներկայացուցիչ մը, յարմարագոյն թեկնածու մը. — Ատոլֆ Թիէրը:

Այս վտանգաւոր ու բանիմաց քաղաքադէտը, Թոլերանդի վերապրող աշակերտը, այս պատեհապաշտը, որ Լուի Ֆիլիպը դահ բարձրացուց 1830-ին եւ ինք եղաւ անոր ամենէն անյաջող նախարարը, նստած էր Փարիզի իր դղեակին մէջ եւ կը զբաղէր ազատական դրականութեան ուսումնասիրութեամբ իր ապագայ դիմակաւոր դիւանագիտութիւնը աւելի եւ աւելի նրբացնելու համար:

1869-ի ընտրութեանց շրջանն էր եւ Թիէր կ'ուզէր իր ընկիւքը որոշել, քանի որ կը կարծեր թէ ինք արդէն փարիզցիներու կուռքն էր դարձեր:

Կիզօ, այս մարդուն ժողովրդականութիւնը պատկերացնող անէկզոտ մը յօրինած է: Երեք բանուորներ կ'այցելին Թիէրին: Առաջինը կ'ըսէ. — «Մենք կը պատկանինք ամենէն անարդ պայքարութեան, զոր դուք միշտ նախատեր էք. սակայն մենք ձեզի քուէ պիտի տանք»: Երկրորդը կ'ըսէ. — «Մենք կ'ատենք Պապը, դուք անոր պաշտպան աշխարհական իշխանութեան կողմնակից էք, մենք ձեզի քուէ պիտի տանք»: Երրորդը կ'ըսէ. — «Մենք սոցիալիստ ենք, դուք սոցիալիստներուն անհաշտ թշնամին էք, բայց մենք ձեզի քուէ պիտի տանք»: Թիէր, զարմացած բացատրութիւն կ'ուզէ: Ասոր վրայ երեք բանուորները միարեբան կը պատասխանեն. — «Ո՛հ, Պ. Թիէր, ինչո՞ւ կը զարմանաք. մենք ձեզի քուէ պիտի տանք, որովհետեւ ամբողջ Ֆրանսայի մէջ չկայ ձեզ նման մէկը, որ կարող ըլլայ ամէն տեսակի կառավարութիւններ տապալել»:

Թիէր, որ 18-րդ դարու սկեպտիկութիւնը միացուցեր էր 19-րդ դարու արկածախնդրական պատեհապաշտութեան հետ, անզամ մը եւս որոշեց իր անամտութեամբ ու փառասիրութեամբ՝ Ֆրանսայի քաղաքական պատմութեան ընթացքը տանիլ իր ցանկացած ճամբուն մէջ:

Երկրորդ Կայսրութիւնը ինքնիր մէջ նեխած էր: Կայսեր ամենամօտիկ բարեկամները նոյնիսկ չէին գիտեր թէ անոր կեանքը որքան երկար պիտի տեւէր. միայն մէկ բան պարզ էր, որ ան այլեւս չէր կրնար նահանջել:

Թիէր, շատ մօտէն գործակցեր էր հանրապետականներու հին անգամներու հետ, որոնք որեւէ բան չէին ուզեր փոխել երկրի տնտեսական ներքնաշէնքին մէջ:

Փաստաբանները, բժիշկները, լրագրողներն ու զբաղէտները, որոնք բռնակալութիւնը կ'ատէին, բայց աւելի շատ կ'ատէին դասակարգային կռիւր, յարած էին դեմոկրատիին եւ անդէտ մնացեր էին բանուորական շարժման ընդդէմը: Անոնք որոշ ծրարքի չունէին, միայն իշխանապետութեան ընդդէմադիրներուն կողմնակից էին եւ այդ դիրքով ալ կը մնային: Ասոնցմէ դուրս մնացողներուն յարած էր թիւէրը, մեզմ' ընդդէմադիրի հանգամանքով: Իր երազն էր ըլլալ հանրապետութեան նախագահ: Կայրութիւնը եթէ ազատականներու վրայ յարձակէր, կը կորսնցնէր իր լաւագոյն բարեկամները՝ որոնք որպէս ժայռ կեցած էին ընկերային յեղափոխութեան ճամբուն վրայ:

Երբ կայրութեան փտախտը յայտնի եղաւ, ընդդէմադիր հատուածներու միջեւ խրամատը աւելի լայնցաւ: Անոնք որ դեմոկրատական հանրապետութիւն կ'ուզէին, անջատուեցան անոնցմէ՝ որոնք նայած պայմաններու հրամայականին, պատրաստ էին յարիւր ընկերային յեղափոխութեան: Այժմ այլեւս ուշ էր դորձածել ուրիշ աւելի ճարպիկ միջոցառումներ: Ոստիկանները գործաւորական շարժիկ հագնելով չէին կրնար խաբել յեղափոխական բանուորները: Երկրի իշխանութիւնը որպէսզի կարողանար իր թիկունքին ետեւ պահել միութիւն մը, միայն մէկ ճամբայ մնացեր էր. այն էր՝ հրահրել հայրենասիրութիւնը: Ֆրանսան վտանգի մէջ է, պէտք է Ֆրանսայի նուիրական հողը պաշտպանել. այս կարգախօսին առջեւ այլեւս բոլոր տարակարծութիւններն ու խնդիրները կը վերջանային:

1869-ին պատերազմը անխուսափելի էր Ֆրանսայի ու Գերմանիոյ միջեւ, որովհետեւ Բիզմարքը կ'ուզէր միացնել Գերմանիոյ բաժան բաժան եղած պետութիւնները եւ ստեղծել միազանգուած հզօր Գերմանիա մը, իսկ Ֆրանսայի կայսրը հայրենասիրութեան սիմէնթով կը ձգտէր իրարու միացնել քաղաքական հատուածները: Այդ երկուքին համար ալ՝ պատերազմը անհրաժեշտ միջոց էր:

Բայց դէպքերը տարբեր ընթացք առին Ֆրանսայի մէջ եւ տան հաշիւը շուկայի մէջ շանցաւ: Երկրի գործադիր իշխանութիւնը, որու ներկայացուցիչը ոստիկանութիւնն էր, օրինականութենէ դուրս եկաւ ու սկսաւ յարձակողականի: Սելազար Տրոպմէնի մէկ ոճիւրը, երբ ան կացինահար ընելով սպաննած էր բանուոր ընտանիքի մը անդամներ եւ զանոնք թաղած էր Պանտինի դաշտին մէկ ծակին մէջ, յառաջացուց ընդհանուր ժողովրդական յուզումնալից զբոսութիւն մը: Տրոպմէնը գլխատուեցաւ, բայց անոր գլխատումը չկրցաւ խաղաղեցնել ժողովուրդը, որ կը գոչէր — «Հապա մի'ւսը»...: Եւ ո՞վ էր այդ «միւսը»...: Այդ միւսը կայսեր քորդին էր, — Իշխան Փիէր Նաբոլէոն Բոնապարտ, որ կը կոչուէր «Գորսիկայի վայրի արջ»: Այս

մարդը քմահաճօրէն սպաննած էր ժողովրդական ձախ թեւի լրագրող մը — Վիկտոր Նուարը:

Կայսեր սեփական ընտանիքի մէկ անդամին այդ ոճիւրը անբեւեակայելի զայրոյթի փոթորիկ մը յառաջացուց: Յունուար 11-ին, Վիկտոր Նուարի յուզարկաւորութեան միացան 200,000 փարիզցիներ: Յաջորդ օրը, 2000 զինուած Բլանքիստներ Ռիկոլի առաջնորդութեամբ իրենց շքերթով ցոյց տուին որ կոուտներ կան, որոնք պատրաստ են զոհուիլ արդարութեան եւ իրաւունքի համար:

Այդ դէպքէն յետոյ՝ Փարիզը այլեւս հանդարտ չէր կրնար մընալ: Ներքին բանութիւնը մէկ կողմէն, արտաքին վտանգը՝ միւս կողմէն...

Փիէր Բոնապարտին դատաւարութիւնը տեղի ունեցաւ Մարտ 21-ին. 25,000 Փրանկ տուգանք...: Այդ ոչինչ էր:

Երկու օր վերջ ձերբակալուեցաւ Ռոշֆորը. ասիկա պարզապէս զբոսիչ փորձ մըն էր «կարմիր վտանգին» դէմ՝ ուժերը լարուած պահելու համար: Ֆլաուրսը սուր մերկացնելով կ'աղաղակէր — «Քաղաքացիներ՝ մեր տեղակալին՝ Ռոշֆորի ձերբակալութեամբ այսօր օրէնքն ու արդարութիւնը ոտնակոխուած են: Կոչ կ'ընեմ ձեզի, որ դէնք առնենք ու պաշտպանենք մեր սրբազան իրաւունքները»: Օլիվիէ, ազատական վարչապետը, թագաւորին խորհուրդ տուաւ Ռոշֆորը ազատ արձակել, քուէարկութիւնը իրեն նպաստ էր: Անօգուտ... Ընդհանրացաւ ձերբակալութիւնը. 450 ձախակողմեան առաջնորդներ ձերբակալուեցան, անոնցմէ 369 հօգի ազատ արձակուեցան, որովհետեւ զանոնք դատաւարտելու փաստերը կը պակսէին:

Մայիս 8-ի քուէարկութիւնը կայսեր համար յաղթութիւն էր: «Ազատական» կայրութիւնը ստացաւ 7 միլիոն 358 հազար 786 քուէ, ընդդէմ մէկ միլիոն 200,000 հակառակ քուէարկողներու, իսկ մէկ միլիոն 441,214 քուէարկողներ ձեռնպահ մնացին:

Քաջալերուած այս յաղթանակէն, կայսրը կրցաւ վնասուց հատուցում տալ տիրող դասակարգին, որուն կը պարտէր իր գոյութիւնը: Արդիւնաբերութեան դանդաղեցումին հետ գործատէրերը սկսան աշխատավարձերը կրճատել. ասով ցած աստիճանի իջաւ բանուորներու ապրուստի մակարդակը: Գործարանական պայմաններու տակ կազմակերպուած բանուորական միութիւնները գործադուլ յայտարարեցին: Ամենէն մեծ գործադուլն էր 1870 Յունուար 17-ին, Լիկրուստի պողպատի գործարանի գործադուլը, որ յաղթութեամբ վերջացաւ: Բանուորները շահեցան շնորհիւ Արֆոնս Աստի առաջնորդութեան եւ Միջազգայնականի ղեկավարութեան:

Միջազգայնականի պրէսդիժի բարձրացումը մտահոգութիւն կը պատճառէր կառավարութեան, որուն համար ան չուչացուց հար-

ուածը : Յունիս 22-ին , 38 առաջնորդներ՝ որպէս դաւադրական զաղտնի ընկերութեան մը կազմակերպիչները՝ ձերբակալուեցան եւ դատի կանչուեցան : Բայց դատախազը չկրցաւ շահիլ ժողովրդական համակրութիւնը : Շալէն , Ռոշֆորի պատրաստած պաշտպանողական ճառը կարդալէն յետոյ՝ դատարանին մէջ Փրանսացի հասարակութեան անունով յայտարարեց .— «Փրանսայի պրոլետարիատը հիւժուած է զրկանքներէն , զոհը դարձած է պարազիտներուն , դատապարտուած է գամուիլ անյոյս հողին : Բանուորներու արդարութեան պահանջները նենդութեամբ կը բաւարարուին աննշան դիջումներով : Կառավարութիւնը ինչով կը պատասխանէ անոնց դանդատներուն — բռնի ուժով : Մենք կը տառապինք տազնապններէն , անգործութենէն , աշխատավարձերու կրճատումէն , գործելու արագացման նոր սիստէմէն , իսկ դուք մեզի կը հրամայէք ձեր հաշտոյն մտածող տնտեսագէտներու Laissez-faire : Երբ մարդկային ապրուստի պայմաններ կ'ուզենք , մեր առջեւ կը մերկացնէք ձեր սուրերը : Այն ատեն , երբ բանուորներու ուժին առջեւ տեղի կու տաք , կը նահանջէք , կը նախատէք մեզ , մեզ կը կոչէք թալանիչներ , զողեր , սրիկաներ , մուրացիկներ : Բայց մենք ենք որ կը հողանք կառավարութեան ծախքերը , մենք ենք որ մեր արեան գինով կ'ապրեցնենք այն առանձնաշնորհեալ դասակարգը , որ առանց աշխատելու , սորված է վայելել կեանքի բարիքները : Մենք երդում ըրած ենք հաւատարիմ մնալ Միջազգայնականին : Իսկ դուք՝ որպէս արդիւնք ձեր վճիռին , պիտի տեսնէք որ մեր Միջազգայնականը ինքնին զաղափար է եւ ուժ , զոր կարելի չէ յաղթահարել զրպարտութեամբ ու դատապարտութեամբ : Մենք կը կորսնցնենք մէկը , բայց անոր տեղը լեցնելու կուզան հարիւրներ են հազարներ :

Թէեւ դատապարտեալներուն ծանր վճիռ տրուեցաւ , բայց Շալէնի պաշտպանողական ճառի արձագանգը քուէարկութեան վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ : Նարոյնն կայսեր շահածը բախտախաղով զրազողի մը շահածն էր , ո՛չ աւելի :

Յուլիս 15-ին Փրանսա պատերազմ յայտարարեց Պրուսիոյ դէմ : Միջազգայնականի Փարիզի ճիւղը յայտարարեց .— «Այս պատերազմը կայսերական նուաճողական պատերազմ է , իսկ բանուորներուն համար՝ մասսայական ոճրագործութիւն , մասսայական կոտորած» :

Միջազգային միւս ճիւղերը բաց թողուցին նման յայտարարութիւններ : Բերլինի ճիւղը «սրտով ու հոգով» յարեցաւ անոր : Քրունսվիքի մէջ բանուորները հսկայ ցոյցերով յայտարարեցին Փրանսայի բանուորներու հետ իրենց համագործակցութիւնը : Վաթսուն հազար սաքսոն բանուորներ ներկայացնող պատգամաւորներ՝ Շիմնիցի մէջ

յայտարարեցին .— «Մենք երջանիկ ենք եւ հպարտ , որ եղբայրական ձեռք կը մեկնենք Փրանսայի մեր բանուոր ընկերներուն : Մենք հաւատարմօրէն կը հետեւինք Միջազգայնականի կոչին .— «Բանուորներ բոլոր երկիրներու , միացե՛ք» : Մենք բնաւ պիտի չմոռնանք որ ամէն մէկ երկրի բանուորները մեր եղբայրներն են . իսկ ամէն մէկ երկրի բանակալները՝ մեր բռնակալները՝ մեր քշնամիները» :

Բայց . . . անոնք մոռցան . . . :

Հայրենասիրութեան հաշիշը թմրեցուց զանոնք . . . :

Մարքսը , սակայն , մեծ կարեւորութիւն տուաւ հրապարակուած յայտարարութեանց : Յուլիս 27-ին , Լոնտոնի մասնաճիւղի հաւաքոյթին ան ըսաւ .— «Այն վայրկեանին , երբ Փրանսա եւ Պրուսիա ոտքով դիլիով նետուեցան եղբայրասպան պատերազմի մէջ , Փրանսայի եւ Գերմանիոյ բանուորները խաղաղութեան եւ բարի կամեցողութեան պատգամներ փոխանակելով ցոյց տուին պատմութեան մէջ աննախընթաց այն փաստը , որ լաւագոյն ապագայի մը հետանկարը կը պարզէ : Ան հաստատեց որ իր տնտեսական թշուառութեամբ ու քաղաքական կատաղութեամբ ծերացած հին հասարակութեան ծոցէն դուրս կուգայ նոր հասարակութիւն մը , որու օրէնքներով միջազգային յարաբերութիւնները պիտի ըլլան խաղաղասիրական , որովհետեւ ամենուրեք նոր օրէնսդիր մարմինը պիտի ըլլայ աշխատող եւ ստեղծագործող նոյն դասակարգը — աշխատաւորութիւնը :

Փրանսական եւ գերման բուրժուազիայի կարծիքը նուազ թըշնամական չէր հանդէպ պատերազմին : Փրանսական հանրապետական տեղակալները միաձայնութեամբ մերժեցին քուէարկել ի նպաստ պատերազմական վարկերուն : Նոյնիսկ Թիէրը , որ ռազմամուլ մըն էր , յայտարարեց թէ՛ «Սխալ է քմահաճօրէն պատերազմ յայտարարելը , երբ մենք տակաւին պատերազմի պատրաստուած չէինք : Անհրաժեշտ էր նախ շահիլ ազգերու համակրանքը եւ մեր հասարակութեան հաւանութիւնը : Պատերազմը երկու մարդոց մենամարտը չէ» :

Այսուհանդերձ՝ պատերազմի ջղագարութիւնը վարակիչ հիւանդութեան պէս տարածուեցաւ եւ նոյն ջղագարութենէն առաւելապէս բռնուեցաւ Փարիզը : Ամբոլը փշրեց Թիէրի պալատի պատուհանները : Մարսէլէր կ'երգէին մեծ ոգեւորութեամբ : Սուրերը մերկացուեր էին . . . Բերլինը պիտի գրաւէին . . . :

Բայց ի՞նչ ըսել որ ճակատը մեկնող զինուորներու բարոյական կորույթ բարձր չէր . որոշ տեղեր անհանդստութեան նշաններ՝ նոյնիսկ զինուորական ըմբոստութեան ցոյցեր տեղի կ'ունենային :

Թիէրը իրաւունք ունէր . Փրանսան պատրաստուած չէր պատերազմի : Պաշտօնեաները ապականուած էին : Շատ մը զինուորականներ՝ Ալճերիայի մէջ պատերազմական կոիւններու ընթացքին՝ վատա-

սերուած, ապազգայնացած էին: Ձինուորները պէտէվիններ դարձեր էին եւ պաշտօնեաները՝ արարներ: Ո՛չ մէկը յարզանքի զգացում ունէր Ֆրանսական հայրենիքին ու պետութեան հանդէպ: Ֆրանսական բանակը այնքան անզոր էր ու ապականած՝ որքան այդ բանակի ծառայած կայսրութիւնը: Պատերազմական տենդոտ շրջանին, յեղափոխականներու շահած նախկին համակրութիւնը հետզհետէ աննշմարելի կը դառնար: Բոլորին ուշադրութիւնը ուղղուած էր Պրուսիացիները նուաճելու նպատակին: Նաբողէոն բռնապետն էր որ յարութիւն պիտի առնէր՝ Վաթէրլոյի պարտութեան վրէժը լուծելու համար: Բայց ռազմաճակատի լուրերը շատ վատ էին: Պալիքալօ, պատերազմական նախարարը, կառչած իր քողարկման սկզբունքին, լուր չէր տար բանակի անցուղարձէն. ան կ'ըսէր. — «Գէշ լուրերը յեղափոխութիւն կը ծնին»: Բայց Փարիզը տարածախնութեան խողովակով կը ստանար լուրերը եւ այդ լուրերը աննպաստ էին:

Օգոստոս 6-ին, նախարարութիւնը յաղթանակի սուտ լուր մը հրապարակեց, բայց շուտով պարզուեցաւ որ այդ յաղթանակը պարտութիւն էր: Օգոստոս 9-ին կառավարութիւնը իր կողմով հրաժարեցաւ, անոր տեղն անցաւ նոր կառավարութիւնը, որ որոշեց կայսրութիւնը պահել: Թիէր միացաւ դահլիճին: Բայց կայսրութեան անկումը մօտալուտ էր:

Օգոստոսի վերջերը Փարիզը հասկցաւ որ կայսրը եւ բանակի ընդհանուր հրամանատարը՝ ՄքՄահոնը, փորձելով միանալ Մէցի մէջ Պէզէնին, ինկած էին Սէզանի մէջ: Սեպտեմբեր 2-ին հաստատուեցաւ որ անոնք երկուքն ալ անձնատուր եղած են:

Սեպտեմբեր 4-ին, առտուն կանուխ՝ ժամը 1-ին, Պալիքալօ, վերջապէս Փարիզի մէջ յայտարարեց որ «Տասներութր տարիներու ընթացքին, ժողովուրդի վզին ծանրացած բեռը վար գլորուած էր օտար թշնամիի մը կողմէն»: Մինչ քաղաքը դեռ կը քնանար հանդարտութեամբ կամ չէր քնանար, փողոցի անցորդները պատերուն վրայ կը կարդային հետեւեալ յայտարարութիւնը.

«Ֆրանսացի քաղաքացիներ,

Երեք օրերու հերոսական կռիւներէ վերջ Մարաշախտ ՄքՄահոնի բանակը ընդդէմ 300,000 հոգիներէ բաղկացած թշնամիի բանակին հետ կռուելով, մեր մարդոցմէն 40,000 հոգի զերի բռնուած են: ՄքՄահոնի յաջորդող զօրավար Վիմպֆէնը վիրաւորուած է եւ ստորագրած է հաշտութեան պայմանագրութիւն:

Այս անգութ իրադարձութիւնը մեր քաջութիւնը չի կրնար ցընցել:

Փարիզը այսօր պաշտպանութեան դիրքի վրայ է:

Երկրի զինուորական ուժերը կը կազմակերպուին:

Քանի մը օրէն մեր մէկ նոր բանակը կը կանդնի Փարիզի պատերուն տակ, իսկ միւս բանակը՝ Սէնի ափերուն վրայ:

Ձեր հայրենասիրութիւնը, ձեր միութիւնը, ձեր ուժը, պիտի փրկեն Ֆրանսան:

Կայսրը պատերազմի մէջ դերի ինկած է: Մեր պատին է ան. պիտի փրկենք մեր պատիւը:

Կառավարութիւնը հասարակաց իշխանութեան հետ շաղկապուած՝ պիտի առնէ այն բոլոր քայլերը, ինչ որ կը պահանջէ դրութեան լուրջ հանգամանքը»:

Նախարարական կոնքուրդ

Սոյն ծանուցման տակ արդէն կը հասկցուէր կայսրութեան անկումը: Բայց Փարիզը աւելին կ'ուզէր. մարանշոյ հանրապետութիւնը, 1793-ի յեղափոխական պատերազմը — Մեծ Կոմունան...

ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Ֆրանկո-Պրուսիական պատերազմը վերջացաւ կայսերական Ֆրանսայի լիակատար ջախջախումով: 1870 Սեպտեմբեր 2-ին, Սեզանի մօտ 80,000-նոց Ֆրանսական զօրքը(*) Նաբողէոն Գ-ի գլխաւորութեամբ անձնատուր եղաւ թշնամիին:

Անկէ անմիջապէս յետոյ՝ Սեպտեմբեր 3-ին եւ 4-ին, Փարիզի մէջ տեղի ունեցաւ յեղաշրջում, որու հետեւանքով կայսրութիւնը տապալուեցաւ եւ հաստատուեցաւ բուրժուական հանրապետութիւն:

Սեպտեմբեր 4-ի յեղաշրջումը կատարուեցաւ միանշամայն տարերային կերպով: Ամենէն առաջ անիկա պաշտպանողական-հայրենասիրական բնոյթ ունէր: «Այժմ բոլոր Ֆրանսացիներուն առջեւ կարելոր հարց մը դրուած է — ետ մղել Պրուսիական զօրքերը». այս էր բոլորի համար օրուան կարգախօսը:

Փարիզի քաղաքային խորհրդարանին մէջ ժամանակաւոր կառավարութիւն հաստատուեցաւ, Գամբէտայի եւ Ժիւլ Ֆալլերի գլխաւորութեամբ: Ֆրանսան յայտարարուեցաւ հանրապետութիւն:

«Փարիզի բնակչութեան նպատակը չէ տապալել կայսրութիւնը, այլ միայն արձանագրել անոր անկումը». այսպէս կ'ըսէր Ժիւլ Ֆալլեր:

(*) Կառավարութեան կողմէ Փարիզի փողոցներու պատերուն վրայ փակցուած յայտարարութեան մէջ դրուած է միայն 40 հազար՝ որոշ դիտումով՝ որպէսզի ժողովուրդը բոլորովին չյուսահատի:

Նոր կառավարութիւնը պահպանեց չին գոյովիճակը: Կայսերական պաշտօնեաները կը շարունակէին իրենց սովորական աշխատանքը, վարչական, թագապետական եւ պետական ամբողջ ապարատը կը մնար անձեռնմխելի: Հակառակ անոր որ բանուորները պահանջեցին կառավարութեան կազմին մէջ մտցնել Բլանքին եւ Դելէկէտը, բայց չյաջողեցան. կառավարութիւնը իր կազմին մէջ ընդունեց միայն ձախակողմեան ընդդիմադիր հոսանքի մէկ ներկայացուցիչը, որ հոն երկար չմնաց, որովհետեւ ան շուտով համոզուեցաւ որ ինք անզոր էր որեւէ փոփոխութիւն յառաջացնել կառավարութեան քաղաքականութեան մէջ: Քառասուն մոլեռանդ մահմետական մոլլաներուն մէջ մէկ հատ քրիստոնեայ տէրտէր ինչ կրնար ընել...:

Նոր կառավարութիւնը պարզապէս թափուր մնացած աթոռները յատկացուցեր էր յայտնի թագաւորականներուն, դիմակաւոր յետադիմականներուն եւ մի քանի զաղջ արմատականներուն: Քաղաքային խորհուրդի նախագահն էր Փարիզի զինուորական կառավարիչը՝ Թրոշուն: Խօսելու եւ ճառելու գործը յանձնուեցաւ ազատական փաստաբաններուն: Արտաքին գործոց նախարար եղաւ Դոմէրի ծաղրանկարներէն մին ներկայացնող մարդ մը, անխորհուրդ, շատխօս ու լալկան մարդ մը՝ Ժիւլ Ֆալբը: Ժիւլ Սիմօնը եղաւ կըրթական նախարար, զաղջ արմատական մը: Էրնէսդ Պիկարտ, որ թշնամի էր կայսեր ամբոխավարական ձեւերուն, եղաւ Ֆինանսական նախարար: Ոստիկանական նախարար եղաւ ուրիշ բրիտանացի մը՝ Քէրատրին: Դորիանը եղաւ հասարակաց գործերու նախարար, որ Աէնդ Սիմօնի սոցիալիզմին հետեւորդ էր: Գամբէտտան շուտով մեկնեցաւ գաւառները՝ իր հոետորութեամբ նոր բանակներ կազմելու համար: Թիէրը մերժեց նախ՝ իր մասնակցութիւնը բերել կառավարութեան մը մէջ, որ իր կարծիքով օրինական չէր: Բայց իր դիրքը անբաղդատելիօրէն բարձր էր: Կառավարութեան մէջ ան բարեկամներ շատ ունէր, ի մասնաւորի՝ Ժիւլ Ֆալբը, ինչպէս նաեւ գաւառային պահպանողականները:

Նոր կառավարութիւնը ինքզինքը հռչակեց որպէս «Ազգային Պաշտպանութեան կառավարութիւն»: Սկզբնական շրջանին, այդ կառավարութեան վրայ հաւատք ունէին ո՛չ միայն լայն մասսաները, այլեւ յեղափոխական առաջնորդները: Բլանկին այդ առթիւ կը գըրէր.— «Այսօր թշնամիին դէմ այլեւս կուսակցութիւններ հրապարակ գալու չեն, ո՛չ ալ տարածայնութիւններ, Սեպտեմբեր 4-ի մեծ շարժումի բովէն ելած կառավարութիւնը իր մէջ կը մարմնացնէր Ֆրանսայի յեղափոխական միտքը ու ազգային պաշտպանութիւնը: Միայն մէկ թշնամի կայ.— ատիկա Պրուսիան է»: Ֆրանսայի մէջ

հայրենասիրութեան զաղափարը ծագում տաւ 18-րդ դարու մեծ յեղափոխութեան ատեն: Կոմունայի սոցիալիստներու միտքը եւ գործունէութիւնը ենթարկուեցան այդ հայրենասիրութեան: Բլանկին, անկասկած յեղափոխական էր եւ սոցիալիզմի կողմնակից. իր հրատարակած թերթին համար աւելի պատշաճ անուն չդատա քան բուրժուական շովինիզմի ողբը.— «Հայրենիքը վտանգի մէջ է»:

Պրուսիական զօրքերը կը յառաջանային: Սեպտեմբեր 18-ին, անոնք պաշարեցին Փարիզը: Բանուորներու եւ մանր բուրժուագիւյթի ազդեցութիւնը պաշարուած մայրաքաղաքին մէջ կ'աճէր օրէ օր, մանաւանդ երբ բանուորական մասսաները սկսան զինուիլ քաղաքը պաշտպանելու համար:

Կառավարութիւնը՝ տեսնելով որ իրերու ընթացքը կ'ուզուի դէպի վտանգաւոր ճամբան, սկսաւ գաղտնի նախապատրաստութիւն տեսնել իր խայտառակ դաւաճանութիւնը դուրս հանելու համար: Բանուորները կը զինուէին թշնամիին դէմ կուռելու համար, վաղը երբ այդ թշնամին հեռանայ, այդ բանուորները իրենց զէնքը պիտի դարձնեն կառավարութեան դէմ: Հայրենասիրութեան հաշիշով զինովցած բանուորները վաղը սթափելով պիտի տեսնեն թէ Ֆրանսայի կառավարութիւնը հայրենիքի համար զոհուող բանուորներու կառավարութիւնը չէ, այլ տիրող դասակարգի կառավարութիւնը: Այսպէս, նոր կառավարութիւնը մէկ կողմէն կը սպառնար Պրուսիային՝ զէնքով զիմադրելու եւ կը յայտարարէր թէ — «Մենք մէկ մատնաչափ հող չենք տար թշնամիին, ոչ ալ քար մը մեր ամբողջներէն», միւս կողմէն՝ Ժիւլ Ֆալբը կը զրկէր Բիզմարկի մօտ՝ խաղաղութեան մասին բանակցելու համար: Խօսքով «ազգային պաշտպանութեան կառավարութիւնը» իրականին մէջ «ազգային դաւաճանութեան կառավարութիւն» էր: Ժամանակաւոր կառավարութեան գործունէութեան մէջ հիմնական ուղին այն էր, որ ինչպէս ըսինք, ան կը վախնար յեղափոխական ուժերու ծաւալումէն եւ կը ջանար ամէն զինով, նոյնիսկ դաւաճանութեան ու մատնութեան ուղիով վերջ տալ յեղափոխական շարժման: Եւ ճիշդ այդ քաղաքականութեամբ ալ ժամանակաւոր կառավարութիւնը ո՛չ թէ յաղթութեան մասին կը մտածէր, այլ ուղղակի պարտութեան կը պատրաստուէր: Պրուսիացիները օրըստօրէ պաշարուած Փարիզը զինուորական օդակի մէջ աւելի եւ աւելի կը սեղմէին, եւ ահա 1871 Յունուար 24-ին, Փարիզի ամբուրթիւններուն վրայ կը ծածանէին գերմանական դրօշակները: Կառավարութիւնը բանուորներէ եւ արհեստաւորներէ կազմուած ազգային զօրաբանակի անվարժ եւ վատ զինուած ջոկատները հասցնեպով կը զրկէր կռիւի ճակատը զանոնք ոչնչացնելու նպատակով: Ժամանակաւոր կառավարութեան անդամ զօրավար Թրուշու կ'ըսէր.—

«Թող մեծ ճակատամարտը տեղի ունենայ, թող քսան կամ երեսուն հազար հոգի կոտորուին, այն ատեն՝ Փարիզը անձնատուր կ'ըլլայ»: Բայց ինք՝ Թրուշուն, իր բանակով հանդարտ նստած՝ տեղէն չէր շարժեր:

Այս հանգամանքներու բերմամբ կառավարութեան հանդէպ սաստիկ դժգոհութիւն յառաջացաւ, դժգոհութիւն մը, որ ուղղակի ապստամբութիւններու դուռ բացաւ: Ապստամբութիւններու նշանաբաններն էին «Կոմունա» եւ «պատերազմ՝ մինչեւ վերջին շնչաւորը»: Այդ շարժման մէջ գործօն մասնակցութիւն ունէին վերադիտող կոմիտէները, որոնք իրենց կազմով մանր-բուրժուական կազմակերպութիւն էին. անոնք կազմուած էին Փարիզի 20 շրջաններու բնակչութենէն, զանոնք իրարու միացնողն էր Կեդրոնական Կոմիտէն: Այս վերադիտող կոմիտէները կը վարէին ժողովուրդի բնակարանային եւ պարենաւորման գործերը:

Տեղի ունեցող անցուղարձերուն մէջ աւելի խոշոր դեր կը խաղար ազգային զօրաբանակը: Սեպտեմբեր 4-ի յեղաշրջումի օրէն սկսեալ, անիկա դադրեցաւ արտօնեալներու զօրաբանակը ըլլալէ, անոր կազմին մէջ կը մտնէին բանուորները, արհեստաւորները եւ չքաւոր տարրերը: Ամէն մէկ զինուորին կը վճարուէր օրական մէկ ու կէս Ֆրանկ: Այդ զօրաբանակը իր շարքերուն մէջ ունենալով աւելի քան 300 հազար մարդ՝ յայտնապէս պատկառելի ուժ մը կը ներկայացնէր: Փարիզի պաշարման ժամանակ ընտրուեցաւ ազգային զօրաբանակի կեդրոնական կոմիտէ, որ կը գլխաւորէր ազգային զօրաբանակի դաշնակցութիւնը: Անիկա, ըլլալով Փարիզի բանուորական բնակչութեան զինուած ուժերու կեդրոնը, թէպէտեւ ոչ առանց տատանման, յետագայ դէպքերու ժամանակ հրապարակ կ'իջնէր որպէս յեղափոխական շարժման ղեկավար:

Յեղափոխութեան միւս կեդրոններն էին ժողովրդական ահոււմները, որոնց մէջ աշխոյժ քննարկներ տեղի կ'ունենային պաշտպանութեան, քաղաքականութեան վերաբերեալ բոլոր խնդիրներու շուրջ եւ բացէն ի բաց կը խօսէին ժամանակաւոր կառավարութեան տապալման մասին: Այդ տեղերը քննութեան կ'առնուէր նաեւ աշխատավարձի, ինչպէս նաեւ բնակարանային ճղնաժամի եւ պարէնի պահասութեան դէմ պայքարելու խնդիրները: «Յեղափոխութեան Ահոււմը», որ համամարդկային լայն ծրագիր էր մշակեր, կ'առաջադէր համաշխարհային միասնական հանրապետութեան դադափարը եւ կը պահանջէր անպայման Կոմունա հիմնել: Նոյն պահանջը հետըզհետէ աւելի եւ աւելի եռանդով կը շեշտուէր եւ աւելի յաճախակի կը լսուէր բոլոր ահոււմներուն մէջ: Այդ ահոււմներու մղած յուզական շարժման հետեւանքով օրըստօրէ կ'ուժեղանային յեղա-

փոխական տրամադրութիւնները: Ժամանակաւոր կառավարութիւնը գուշակելով սպառնացող վտանգի յառաջացումը, սկսաւ փակել բոլոր ժողովրդական ահոււմները եւ սաստկացնել յեղափոխականներու հալածանքները: 1871-ի Յունուար 28-ին կառավարութիւնը որոշեց յանձնել Փարիզը եւ նախնական խաղաղութիւն կնքել պրոստիացիներուն հետ՝ Ազգային Հիմնադիր Ժողովի ընտրութիւնները կատարելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բիզմարքի հետ բանակցելու ատեն ժամանակաւոր կառավարութիւնը պարտաւորութիւն ստանձնեց կարճ ժամանակի ընթացքին՝ մինչեւ Պրուսիայի հետ կնքած զինադադարի վերջնաալը, Ազգային Ժողովը գումարել՝ խաղաղութեան պայմանները հաստատելու համար: Ժամանակաւոր կառավարութիւնը պատրաստուելով կնքելու ստորնացուցիչ խաղաղութիւն մը՝ նկատի կ'առնէր զիւղացիութեան տրամադրութիւնը: Ազգային Ժողովի ընտրութիւնները կը կատարուէին «յանուն խաղաղութեան» կամ «յանուն պատերազմի» նշանաբաններով: Ֆրանսայի զիւղացիութիւնը կը պահանջէր ամէն զնով խաղաղութիւն կնքել. ան զայրոյթով լեցուած էր հանդէպ Փարիզի բանուորներուն, որոնք տակաւին կ'ուզէին երկիրը պաշտպանել եւ պատուաբեր պայմաններով խաղաղութիւն կնքել: Գիւղացիները ազգային պատիւի մասին չէին ուզեր մտածել իսկ: Այսպիսով խաղաղութեան նշանաբանը, զոր բուրժուազիան եւ միապետականները հրապարակէր էին, զիւղացիութեան կողմէն հաւանութեան արժանացաւ, եւ ահա միապետականները Ազգային Ժողովի մէջ մեծամասնութիւն կազմեցին: Որոշուած էր Ազգային Ժողովը գումարել վտանգի բոյնէն՝ Փարիզէն հեռու՝ Պորտոյի մէջ: Պորտոյի մէջ հաւաքուած 750 պատգամաւորներէն 450-ը բացայայտ միապետականներ էին: «Ռամիկ զիւղացիներու» այդ յետադիմական ժողովի առաջին որոշումներէն մէկն այն էր, որ Թիէրը նշանակուի նոր կառավարութեան ղրուխ եւ Պրուսիայի հետ կնքուած խաղաղութիւնը վաւերացուի, չնայած անոր ծանր պայմաններուն: Այդ դաշնագրի համաձայն՝ Ֆրանսան Պրուսիային կու տար երկաթով եւ քարածոխով հարուստ Ալզաս-Լորէն նահանգները եւ պարտաւորութիւն կը ստանձնէր պատերազմական տուգանք վճարել ոսկիով՝ հինգ միլիար Ֆրանկ:

Ազգային Ժողովը որդեգրեց նաեւ շարք մը օրէնքներ, որոնք ուղղուած էին Փարիզի ազգային զօրաբանակի եւ չքաւոր խաւերու դէմ: Զօրաբանակի անդամներուն օրական մէկ ու կէս Ֆրանկի վը-

ճարումը որոշուեցաւ դադարեցնել, որոշուեցաւ նաեւ երկու շաբաթ-
ուան ընթացքին՝ ընակարանային վարձքերը վճարել եւ մուրհակ-
ները վերցնել:

Երբ Ազդային ժողովը փոխադրուեցաւ Վերսայլ, Վերսայլը
վերածուեցաւ հակայեղափոխական ուժերու կեդրոնի: Պարզ էր որ
ռէակցիան կը պատրաստուէր յարձակիլ յեղափոխական Փարիզի
վրայ: Այդ հանդամանքներու տակ պէտք էր ուժեր պատրաստել
պաշտպանութեան համար: Այդ ուժերու նախապատրաստութեան
համար կազմակերպչական կեդրոն դարձաւ ազգային զօրարանակի
կեդրոնական կոմիտէն:

Վերսայլի կառավարութիւնը թիէրի գլխաւորութեամբ վճռեց
յարձակում դործել Փարիզի վրայ: Մարտ 17-ին, կառավարութիւնը
հրահանգեց զօրավար Լէկոնտին զինաթափ ընել ազգային զօրարա-
նակը: «Ֆրանսայի մէջ տեղի ունեցած իւրաքանչիւր յեղափոխու-
թենէն յետոյ՝ բանուորները միշտ զինուած են եղեր, ուստի պետա-
կան ղեկի մօտ կանգնած բուրժուազիայի համար առաջին պատուի-
րանն էր՝ բանուորները զինաթափ ընել» (Էնզելս):

1871 թ. ՄԱՐՏ 18-Ի ՅԵՂԱՇՐՋՈՒՄԸ

Մարտ 18-ին սկսած յարձակումը վերջացաւ բոլորովին ա-
նըսպասելի եղանակով. կառավարութիւնը պարտուեցաւ եւ ամօ-
թահար ու խայտառակ կերպով փախաւ Փարիզէն: Կառավարութեան
զօրքերը փոխանակ կառավարութեան կողքին կենալու դաւաճանե-
ցին անոր եւ միացան ազատամբած Փարիզի ազգային պահակազօր-
քերուն: Մարտ 19-ին Կեդրոնական կոմիտէն իր առաջին ազգարա-
րութիւնը ուղղեց փարիզիներուն հետեւեալ կոչով.

«Ժողովուրդին»

«Քաղաքացիներ,

«Փարիզի ժողովուրդը թօթափեց այն լուծը, զոր բռնօրէն կը
փորձէին դնել իր վզին:

«Հանդիստ եւ անհողող, զիտակցելով իր ուժին, ան առանց
վախնալու եւ առանց որեւէ զրգռիչ քայլ առնելու, սպասեց այն
ժամուն՝ երբ խելքը կորսնցուցած անամօթ մարդիկ յանդգնեցան
ձեռք բարձրացնել մեր սուրբ հանրապետութեան վրայ:

«Այս պահուն բանակին մեր եղբայրները մերժեցին ձեռք դնել
մեր ազատութեանց տապանակին վրայ:

«Շնորհակալութիւն բոլորին. եւ այսօր, Փարիզն ու Ֆրան-
սան միասին կրնան յայտարարուած Հանրապետութեան մը հաստա-
տուն հիմնադրումը իրականութիւն դարձնել, կազմելով այն եզակի

ու միակ կառավարութիւնը, որ միանգամ ընդ միշտ պիտի փակէ
արշաւանքներու եւ քաղաքացիական պատերազմներու ախտաժէտ
չրջանը:

«Պաշարման վիճակը վերցուած է:

«Այսօր Փարիզի ժողովուրդը իր հատուածներով կանչուած է
կատարելու իր կոմունական ընտրութիւնները:

«Ամէն մէկ քաղաքացիի ապահովութիւնը երաշխաւորուած է
Ազդային Պահակազօրքի համադորձակցութեամբ:

«Հօթէլ տի Վիլ, Մարտ 19, 1871:

Ստորագրուած.—

«Assi, Billoray, Ferrat, Babick, Moreau, C. Dupont, Var-
lin, Boursier, Mortier, Lavalette, Gouhier, Jourde, Rousseau, Lul-
lier, Blanchet, Fabre, Grollard, Barroud, Geresme, Pougeret».

Առաջին անգամն էր որ բանուորներն ու մանր բուրժուազիան
կը զբաւէին պետական իշխանութիւնը: Կոմունայի անդամ Արթիւր
Արնու կը գրէր.— «Բնակչութեան այդ հսկայ զանգուածը բնաւ չէր
ճանչնար այն մարդիկը, որոնք իրերու բերմամբ անցեր էին քա-
ղաքային վարչութեան կազմին մէջ: Վարչութեան մէջ մտած մար-
դոց անունները յայտնի չէին ոչ ոքի, որովհետեւ անոնք միայն մէկ
անուն ունէին.— Ժողովուրդ: Ազգային պահակազօրքի կեդրոնական
կոմիտէն վճռականութիւն ցոյց չէր տար ի պատասխան թիէրի զբը-
զբուիչ գործերուն ու արտայայտութեանց՝ անիկա կոչեր կ'ուղղէր
Փարիզի բնակչութեան՝ չափաւորութիւն եւ վեհանձնութիւն պահ-
պանել եւ հեռու մնալ քաղաքացիական կռիւի աղիտարեր ուղիէն:
Լենին, այդ ատենի Փարիզի պրոլետարիատի մասին ըսած է.— «Փա-
րիզի պրոլետարիատը պէտք էր բնաջինջ ընէր իր թշնամիները, մինչ-
դեռ ան կ'աշխատէր բարոյսպէս ազդել անոնց վրայ. ան անտեսեց
քաղաքացիական կռիւին մէջ զուտ ռազմական գործողութիւններու
կարեւորութիւնը եւ փոխանակ Վէրսայլի վրայ վճռական յարձակում
գործելու եւ Փարիզի մէջ իր տարած յաղթանակը աւարտելու, ան
յապաղեցաւ եւ ժամանակ տուաւ որ Վէրսայլի կառավարութիւնը
մութ ուժերը հաւաքէ եւ պատրաստէ մայիսեան արիւնալի շաբաթը»: Եւ
Լենինի այս նկատողութիւնը շատ ճիշդ է, եթէ նոյնիսկ ընդու-
նինք թէ՛ Փարիզի պրոլետարիատի յաղթանակի աւարտումով Ֆը-
րանսայի ընկերային յեղափոխութիւնը չէր յաղթանակեր, քանի որ
տակաւին այդ երկրի անտեսական, ընկերային պայմանները հասուն-
ցած չէին: Յեղափոխութիւնը պայթեցնողը Փարիզի պրոլետարիա-
տը չէր, այլ յետադիմական ուժերն էին որ դաւաճանութեամբ ու
բռնութեամբ յառաջացուցին ընդհանուր զրգուրութիւնը, այդ պարա-

դային՝ երբ համբերութեան բաժակը լեցուած էր, յեղափոխութիւնը այլևս խնայելու չէր ո՛չ ոքի. ան հիմնովին ջախջախելու էր յետադիմութեան երեւելի եւ աներեւոյթ բոլոր բոյները: Այն ատեն յեղափոխութիւնը փոխանակ միայն 2 ամիս մնալու իր յաղթական դիրքին վրայ, կրնար երկու տարի մնալ, ու այդ երկու տարիներու ընթացքին՝ կրնար ապաղայ յեղափոխութեան շուտափոյթ յաջողութեան ճամբայ պատրաստել. եւ այդ՝ ո՛չ միայն Ֆրանսայի, այլևս ուրիշ երկիրներու պրոլետարիատին համար ալ: Փարիզի պրոլետարիատը երբ հարկադրուած ոտքի ելաւ եւ յաղթեց, անմիջապէս պարտաւոր էր պետական հին ապարատը հիմնապէս քանդել, զայն փոշիացնել, անկէ վերջ մտածելու էր նոր շէնքի կառուցման մասին: Ի հարկէ, կարելի չէ ըսել թէ՛ ան այդ շէնքի կառուցումը պիտի կրնար վերջացնել ամբողջութեամբ՝ առանց մեծ դժուարութեան, բայց կրնար անոր հիմքերը դնել ու ամրացնել: Եւ եթէ անխուսափելի աննպաստ պայմանները դային վերջ տալ իր աշխատանքին, գոնէ շէնքին հիմքերը կը մնային հողին տակ. իսկ ապազային՝ յեղափոխական փորձառութեամբ զինուած պրոլետարիատը շատ դժուարութիւն պիտի չքաշէր ծածկող հողը մէկ կողմ նետել եւ արդէն իսկ զրուած հիմքերուն վրայ հաստատել պրոլետարական դիկտատուրայի շէնքը:

Ահա թէ ո՛ւր էր սխալը:

Կեդրոնական կոմիտէն, փոխանակ խուճապի մատնուած փախչող թշնամիին վրայ վճռական յարձակում գործելու, պաշտպանողական դիրք բռնեց եւ սկսաւ կոմունայի ընտրութիւններու պատրաստութիւն տեսնել: Ընտրութեանց օրը նշանակուած էր Մարտի 22-ը: Որպէսզի ընտրութիւններուն օրինական բնօրէն տրուէր, Կ. կոմիտէն ուզեց որ Փարիզի 20 շրջաններու գլուխը կանգնած պաշտօնեաները՝ որոնք Վերսայլի կառավարութիւնը միայն կը ճանչնային, մասնակցին կատարուելիք ընտրութեանց: Ասիկա արդէն գլուխ գործոց սխալ մըն էր: Այդ սխալին հետեւանքն այն եղաւ որ հակայեղափոխականները բացէն ի բաց հրապարակ իջան. Մարտ 21-ին կոչերով դիմեցին ընակչութեան եւ ցոյցեր կազմակերպեցին՝ «Անկցի Կեդրոնական կոմիտէն», «Կեցցէ Ազգային Ժողովը» նշանաբաններով: Այդ «կարգ ու կանոնի» բարեկամներու երկրորդ հակայեղափոխական ցոյցը վերջացաւ ազգային պահակազօրքերու եւ ցուցարարներու ընդհարումով: Կ. կոմիտէն դարձեալ ներդաւաճ գտնուեցաւ ցուցարարներու հանդէպ: Մարտ 23-ին, Վերսայլի գործակալներու ղեկավարութեամբ կազմակերպուեցաւ ապստամբութիւն մը, որուն միացան ազգային պահակազօրքի գումարտակներէն երկուքը. թէպէտ այդ ապստամբութիւնը ճգնուեցաւ շուտով, բայց գործակալները շարունակեցին

իրենց հակայեղափոխական աշխատանքը՝ առանց Կեդրոնական կոմիտէի խստութեան հանդիպելու:

Մարտ 19-ին թիէրը կոչ մը հրատարակեց ուր գրուած էր.

— «Բոլոր քաղաքացիական եւ զինուորական պաշտօնեաները ոչ մէկ հրահանգ պէտք է կատարեն, ոչ մէկ կարգադրութիւն՝ առանց Վերսայլ գտնուող օրինական կառավարութեան հրամաններուն: Սոյն հրամանադրին անաստօղները որպէս դաւաճաններ՝ կը դատապարտուին մահուան»:

Կը տեսնենք թէ թիէրը աւելի վճռական էր, աւելի խիստ՝ քան թէ Կեդրոնական կոմիտէն:

Շուտով բուրժուազիան սկսաւ փախչիլ Փարիզէն: Կեդր. կոմիտէն փոխանակ արդիւլելու անոնց փախուստը, աւելի դիւրացուց: Ասիկա ուրիշ մէկ սխալն էր:

Փարիզ մնացող շինովնիկները դիմեցին սաւոյնաժի: Փարիզը կտրուեցաւ պարէնի ազրիւրներէն: Հեռադարձունն ալ դատապարտուած էր անգործութեան: Փարիզը ամբողջապէս կտրուած էր գաւառներէն: Սովն ու անգործութիւնը սպառնալից չափերու հասան. Կեդրոնական կոմիտէն շարք մը միջոցառումներ ձեռք առաւ աշխատաւորներու դրութիւնը բարելաւելու համար: Այդ միջոցներուն կարեւորները հետեւեալներն էին. — գրաւի դրուած իրերը պիտի վերադարձուէին իրենց տէրերուն առանց վճարումի. բանուորական ընտանիք մը՝ երբ իր բնակարանի վարձքը չէր կրնար վճարել, փողոց չէր կարելի նետել, ներում կը շնորհուէր քաղաքական յանցագործներուն. մամուլի եւ հաւաքօթի ազատութիւն. երկրի պաշարողական դրութիւնը վերցուած: Այս վերջին որոշումները յեղափոխական շրջանին համաձայն չէին: Կայսերական ռեժիմի ատեն քաղաքական յանցագործներու ներումը հասկնալի էր. անոնք յեղափոխական էին ու ներման արժանի. բայց յեղափոխական շրջանի յանցագործները, դաւաճաններ էին, որոնց ներելը հակայեղափոխութիւնը քաջալերել էր: Գալով մամուլի եւ հաւաքօթի ազատութեան, այդ եւս վտանգաւոր էր կոմունային:

ԿՈՄՈՒՆԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱԶՄԸ

Մարտ 26-ին սկսան կոմունայի Խորհուրդի ընտրութիւնները: Ընդամէնը 98 պատգամաւորներ ընտրուեցան: Ընտրութիւններուն մասնակցեցան ընտրողներու 50 առ հարիւրը, այսինքն՝ ցուցակադրուած 485,569 հողիներէն միայն 229,167 քաղաքացիներ քուէ տրւին: Ընտրուած կոմունայի սոցիալական կազմը հետեւեալն էր. — Բանուորներ՝ 33. մանր պաշտօնեաներ՝ 15. ազատ ասպարէզի տէր

անձեր՝ 38. մանր ձեռնարկատէրեր՝ 4, ուրիշներ՝ 8: Աշխարհահայ-
 եացքի տեսակէտէն Կոմունայի կազմը նոյնպէս խայտարակէտ էր. Պը-
 բուրոնիստներու կողքին Կոմունայի մէջ կային Բլանկիստներ ալ,
 միջազգայնականի Փրանսական հատուածի անդամներ, ինչպէս նաեւ
 մանր բուրժուական դեմոկրատներ՝ Յակոբինեաններ, որոնք ինք-
 զինքնին կը դաւանէին որպէս 93-ի Փրանսական յեղափոխութեան
 ջատագովներ: Սոցիալիստները փոքրամասնութիւն կը կազմէին: Այս
 էր Կոմունայի կազմախօսական պատկերը:

Կոմունան իր կազմով կը ներկայացնէր բանուորներու եւ մանր
 բուրժուակիայի յեղափոխական դաշինքը: Ընտրութիւններէն երկու
 օր յետոյ՝ Մարտ 28-ին, Կեդրոնական Կոմիտէն իշխանութիւնը յանձ-
 նեց նորընտիր Կոմունային, որ բնակչութեան տուաւ հետեւեալ ազ-
 դարարութիւնը. — «Կոմունան այժմ կազմուած է, զուք այլեւս ձեր
 բախտին տէրն էք. ձեր ձեռքով ստեղծուած կառավարութիւնը ձեր ա-
 ջակցութեամբ պիտի դարմանէ այն բոլոր վնասները, ինչ որ հին կա-
 ռավարութիւնը պատճառեւ է քաղաքին: Այսօրուրնէ ճնշուած ար-
 դիւնաբերութիւնը, կանգ առած աշխատանքը, ջլատուած առուտուրը
 նոր եւ ուժեղ թափ կը ստանան»:

Մարտ 29-ին, Կոմունան ընտրեց զործադիր յանձնաժողով՝ 20
 հոգիներէ բաղկացած եւ 9 նախարարութիւններ — կոմիսարիատներ.
 — ուղղական, Ֆինանսական, աշխատանքի եւ փոխանակութեան,
 հասարակական ապահովութեան (միլիցիա), պարենաւորման, ար-
 տաքին յարաբերութիւններու, հասարակական ծառայութիւններու
 (քաղաքային տնտեսութեան), ժողովրդական կրթութեան եւ արդա-
 րագատութեան: Նախարարութիւններէն շատերուն գլուխը նշանա-
 կուած էին բանուորներ, ինչպէս, հասարակական ծառայութեան կո-
 միսարիատը գլուխը՝ ակնագործ Ֆրանկէլը, ժողովրդական կրթու-
 թեան կոմիսարիատի գլուխը՝ Վարլէնը: Նախարարութիւնները պա-
 տասխանատու էին Կոմունային:

Գործողութեան որոշ ծրագիրը չունենալով եւ միասնական դե-
 կավարութեանէ զուրկ ըլլալով՝ Փարիզի Կոմունան իր խայտարակէտ
 կազմով եւ քաղաքական տարբեր հայեացքներով պիտի անցնէր պրո-
 լետարական վիթխարի շարժման գլուխը: Բուրժուակիայի դէմ մղած
 պայքարին մէջ յաղթանակը կարելի էր որ անցնէր Կոմունայի կողմը
 եթէ շարժումը ղեկավարուէր կուռ եւ միաձոյլ պրոլետարական կու-
 սակցութեան կողմէն: Այսօրինակ կուսակցութիւնը պիտի ըլլար մար-
 տական կուսակցութիւն, յեղափոխական կուսակցութիւն, կուսակ-
 ցութիւն մը՝ որ կարողանար թրծուած ու մարզուած պրոլետարները
 հանել կռիւի ճակատը՝ յանուն պրոլետարական իշխանութեան, կու-
 սակցութիւն մը, որ կարողանար հասկնալ յեղափոխական միջոցոր-

տի բարդ պայմանները եւ բաւականաչափ ճկուն ըլլար, որ կարողա-
 նար խուսափիլ բազմազան խութերէն եւ համարձակօրէն դիմէր դէ-
 պի իր նպատակը: Բայց այդպիսի կուսակցութիւն մը չկար Փարիզի
 մէջ, չկար միազոյն գաղափար, եւ չկար միասնական ուժ...:

ԿՈՄՈՒՆԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԷՆԻԹԻԻՆԸ

Բանուորներու եւ մանր բուրժուակիայի դիկտատուրան, այդ
 նոր իշխանութիւնը, ծանր պայմաններու տակ սկսաւ իր աշխատան-
 քը: 1871-ի Ապրիլ 12-ին, Մարքսը կը գրէր Կուզէլմանին. — «Ես կը
 հաւատամ որ Փրանսական յեղափոխութեան մօտակայ քաղաքակա-
 նութիւնը խիստ եւ վճռական պէտք է ըլլայ. բիւրոկրատական ազ-
 մական մեքենան ոչ թէ մէկ ձեռքէն միւսին պիտի յանձնուի, ինչպէս
 որ կտտարուած է մինչեւ հիմա, այլ պէտք է այդ մեքենան քարդել,
 փշրել. եւ ճիշդ այդ է սկզբնական պայմանը ամէն մէկ իսկական ժո-
 ղովրդական յեղափոխութեան համար, ինչ որ տեղի ունենալու է Եւ-
 րոպայի ցամաքամասին մէջ»:

Նոյն միտքը կ'արտայայտէ Լենինը, երբ կը գրէ. — «Ձարդել
 բուրժուական պետութեան մեքենան, փշրել զայն, ահա ժողովուրդի
 իրական շահերը, ահա ժողովուրդի մեծամասնութեան՝ բանուորնե-
 րու եւ դիւզացիութեան մեծամասնութեան շահերը, ահա չքաւոր
 դիւզացիներու եւ պրոլետարիատի «ազատ դաշինքի» սկզբնական
 պայմանը. իսկ առանց այդ դաշինքին՝ դեմոկրատիան կայուն, հաս-
 տատուն չի կրնար ըլլալ եւ անհնարին բան է սոցիալիզմի վերակա-
 ունցումը»:

Առաջին իսկ քայլերէն ակներեւ դարձաւ որ պետական հին ա-
 պարատը իր դասակարգային էութեամբ խորապէս անհաշտ թշնամի
 էր նոր յեղափոխական իշխանութեան:

Այժմ տեսնենք թէ այդ նոր իշխանութիւնը ի՞նչ նորութիւններ
 ներմուծեց, ի՞նչ գործունէութիւն ունեցաւ:

Նախ պէտք է յիշատակել այն հրամանագիրը, որով կը վեր-
 ցուէր մշտական զօրքի դրութիւնը, որուն կը փոխարինէր ժողովուր-
 դի ընդհանուր զինուածութիւնը: Զինուորական պաշտօնեաները ըն-
 տրոզի ըլլալու էին: Զինուորական պաշտօնեաներու թոշակը հաւա-
 սար ըլլալու էր որակեալ բանուորի աշխատավարձին հետ: Ասով կը
 վերցուէին բոլոր արտօնութիւնները, որոնք կապուած էին բարձր
 պաշտօններու հետ: Լենին, այս մասին գրած է հետեւեալը. — «Ամէն
 մէկ ուզած ժամանակ առանց բացառութեան բոլոր պաշտօնեաները
 ընտրելը կամ զանոնք ուրիշներով փոխարինելը, անոնց թոշակը հա-
 սարակ աշխատաւորի աշխատավարձին հաւասարեցնելը — այդ հա-

սարակ եւ ինքնին հասկնալի դեմոկրատական միջոցառումները, որոնք պաշտօնէութեան, բանուորներու եւ գիւղացիութեան մեծագոյն մասի շահերը կը միացնեն, նոյն ատեն կը ծառայեն որպէս կամուրջ մը, որ կապիտալիզմէն կը տանի դէպի սոցիալիզմ»:

Կոմունայի ուրիշ կարեւոր ձեռնարկն էր եկեղեցւոյ անջատումը պետութենէն եւ եկեղեցական սեփականութեան ազդայնացումը: Ատոր կապակցութեամբ յայտարարուեցաւ նաեւ դպրոցական լայն բարենորոգում. կը վերցուէր կրօնի դասաւանդութիւնը եւ կը հաստատուէր ձրի ու պարտադիր կրթութեան սխառէմը:

Կարեւորագոյն յատկանիշը, որով Կոմունայի պետական ապարատը կը տարբերէր բուրժուական իշխանութեան ապարատէն, այն էր, որ Կոմունան կը ներկայացնէր ե՛ւ օրէնսդիր մարմին ե՛ւ դործադիր մարմին: Կոմունան բոլորովին հեռացաւ իշխանութեան բաժանման բուրժուական սկզբունքէն. ան բուրժուական պարլամենտ չէր ներկայացներ, այլ միասնական աշխատող ընկերութիւն մը:

Կոմունան անմիջականօրէն կապուած էր աշխատաւորական լայն մասսաներուն հետ եւ ատոր համար էր որ ան կրնար իր խնդիրները դիւրաւ լուծել: Կոմունայի անդամ Արնուն, կը գրէր հետեւեալը. — «Այլեւս ո՛չ ոստիկանութիւն կար, ո՛չ ալ դատարաններ: Քաղաքային պաշտօնասենեակներուն մէջ, նախարարութեանց մէջ, զանազան հիմնարկներու մէջ հսկիչ մարմիններէ զատ ո՛չ մէկ ղինուած ուժ կար, ո՛չ փողոցներուն, ո՛չ ալ արուարձաններուն մէջ. բայց եւ այնպէս, Փարիզը երբեք չէր վայելած նման կատարեալ խաղաղութիւն: Այնտեղ չկար նաեւ ո՛չ մէկ յանցագործ»:

Տնտեսական մարզին վրայ արտադատուեցաւ Կոմունայի մանր բուրժուական կազմը, որ կը ներկայացնէր սոցիալիզմի եւ բանուորական շարժման ցած մակարդակը: Կոմունայի տնտեսական քաղաքականութիւնը վճռականութեան բնոյթ չունէր: Կոմունան շարք մը տնտեսական միջոցառումներու ղիմեց չքաւորութեան, բանուորներու եւ մանր բուրժուակիւսի օգտին: Այսպէս՝ աշխատանքի եւ փոխանակութեան կոմիսարիատը՝ որուն գլուխն անցեր էր ակնագործ-բանուոր Ֆրանկէլը, շատ մը կարեւոր հրամանագրեր ստորագրեց աշխատանքի պաշտպանութեան մասին: Այդ հրամանագրերն ընդհանրապէս այն էր որ հացագործի խանութներուն մէջ կ'արդիւուէր դիշերային աշխատանքը — քայլ մը որ վաղուց ի վեր կը պահանջէր հացագործներու միութիւնը: Անկէ վերջ, կոմիսարիատը օրակարգի խնդիր ըրաւ անդործութեան դէմ պայքարելու հարցը: Ատոր համար ան քաղաքի շրջաններուն մէջ աշխատանքի զբառնեալներ հաստատեց, միւս կողմէն բացաւ կարի արհեստանոցներ,

կազմակերպեց արտէլներ ինչպէս նաեւ վերանորոգման եւ կառուցման հասարակական աշխատանքներ:

Կոմունան նոյնպէս յայտարարեց տուգանքները արդիւող հրամանագրերը: Հրամանագրերին մէջ ըսուած էր որ «տուգանքները փաստօրէն ոչ ալ ինչ են, բայց եթէ աշխատավարձի քողարկուած կըրճատում: Նմանօրինակ պատիժները, թէ՛ իրենց էութեամբ եւ թէ՛ իրենց ձեւով անբարոյական են: Կոմունան կ'արդիւ թէ՛ մասնաւոր եւ թէ՛ հասարակական ձեռնարկութիւններու վարչութիւններուն՝ տուգանքի ենթարկել իրենց բանուորներն ու ծառայողները եւ այդպիսով կըճատել անոնց աշխատավարձը»:

Կոմունայի անվճռականութիւնը բացայայտ եղաւ այն իրողութեամբ որ ան չհամարձակեցաւ խախտել սեփականութեան իրաւունքը: Ֆրանսական դրամատունը իր 3 միլիար արժէքներով մնաց անձեռնմխելի: «Եթէ Կոմունան տիրանար դրամատունին, Ֆրանսական ամբողջ բուրժուակիւս ամէն միջոց պիտի գործածէր ազդելու վէրսայի կառավարութեան վրայ՝ պահանջելով որ ան խաղաղութիւն կնքէ Կոմունայի հետ» (Էնդելս):

Ձգտելով թեթեցնել աշխատաւորներու դրութիւնը Կոմունան կըճատեց, փոքրագոյնին հասցուց պետական ծախքերը, այդ նկատմամբ ալ՝ մնայուն-մշտական դօրքը եւ ոստիկանութիւնը, հրապարակէն վերցուց, եւ անոնց փոխարէն ստեղծեց ազդային պահակազօրք եւ երեւակայութեամբ զինուած ժողովուրդ մը: Մարքսը իրաւունք ունէր երբ առիթով մը կը գրէր. — «Կոմունան կըճատելով խոշոր ծախքերը, իրականացուց բուրժուական բոլոր յեղափոխութիւններու նշանաբանը. — Էժան կառավարութիւնը»:

ԿՈՄՈՒՆԱՅԻ ԵՒ ՎԵՐՍԱՅԼԻ ԿՌԻԻԸ

Այն ատեն՝ երբ յեղափոխական Փարիզը կը համախմբէր իր ուժերը ռէակցիայի դէմ պայքարելով դաւառը անտարբեր կը մնար դէպի այդ պայքարը: Թէեւ գաւառական խոշոր կեդրոններու մէջ (Լիոնի, Մարսէյի, Թուլուզի մէջ) շարք մը ապստամբութիւններ բռնկեցան, բայց բոլորն ալ անյաջողութեամբ վերջացան եւ գաւառներէն ո՛չ մէկը էական օղնութիւն հասցուց Փարիզին: Այդպիսով Փարիզը մեկուսացած, առանձնացած էր գաւառէն եւ զիւղացիական քնակչութեան հիմնական մասսաներէն, այդ հանգամանքը Փարիզի Կոմունայի ամենաթոյլ կողմն էր: Կոմունան փորձեր ըրաւ դաշինք կնքելու այդ մասսաներուն հետ, սակայն չյաջողեցաւ: Յեղափոխութիւնը իր հիմնական նպատակով, ուժեղ եւ ցնցող արձագանգ չունեցաւ երկրի մէկ ծայրէն միւսը. ան փարիզեան յեղափոխութիւն էր. —

Փրանսական յեղափոխութիւն չէր. Փրանսական յեղափոխութիւն կ'ըլլար այն ատեն, երբ Կոմունան Փարիզը զբաւելէ վերջ քանի որ թշնամին խուճապի մատնուած էր, իր յարձակումը չէր դադարեցներ. պէտք է հալածէր թշնամին, ժամանակ տալու չէր որ ան իր ուժերը հաւաքէր: Վէրսայի մէջ կառավարութիւն մը կար, անուանական կամ օրինական, այդ չէր հարցը. Ֆրանսայի ժողովուրդը այդ կառավարութեան կը նայէր: Կոմունան պէտք էր եւ կրնար զբաւել Վէրսայը: Ենթադրենք թէ կառավարութիւնը Վէրսայէն ալ փախչէր ու հաստատուէր Պորտոյի մէջ, Կոմունան պիտի շարունակէր իր յարձակողական արշաւը... յարձակում, յարձակում, յարձակում, ո՛չ մէկ դադար: Այդ յարձակողական արշաւն էր որ ոտքի պիտի հանէր ժողովրդական զանգուածները, որոնք պիտի փութային համախրմբուիլ Կոմունայի շուրջը: Թշնամին սարսափեցնել եւ սարսափը քարացնել անոր սրտին մէջ, ան այլեւս օժանդակող ուժ չկրնար փրկուել: Ժողովուրդը ուժին կը հաւատայ, փախչողին ու վախկոտին օգնութեան չերթար: Փարիզի Կոմունան յարձակողական ճակատէն շուտով անցաւ պաշտպանողականի՝ երբ տակաւին իրեն դէմ յարձակողական ճակատ կազմուած չէր: Փարիզի Կոմունան Փարիզի պատերուն մէջ ամփոփուած՝ եթէ երկար ատեն իր գոյութիւնը պահէր իսկ՝ պիտի չկրնար իր կողմը զբաւել Ֆրանսայի բանուորա-գիւղացիական մասսաները:

Մի քանի կոչերով՝ Կոմունան փորձեց գիւղացիութեան համար պարզել պայքարի իմաստը, Վէրսայի կառավարութեան էութիւնն ու դաւաճանութիւնը, գիւղացիութեան ի նպաստ Կոմունայի առաջադրանքները: «Փարիզը հող կը պահանջէ գիւղացիներու համար»: «Հողի արդիւնքները կը պատկանին հողը մշակողներուն. ո՛չ թէ այն պարագիտներուն, որոնք սորված են ուրիշներու աշխատանքովը ապրիլ»: Այս տողերը կային հրատարակուած կոչերուն մէջ, որոնց խմբագրութիւնը յանձնուած էր կին Բակունիստ՝ Անդրէ Լէոյի: Բայց եւ այնպէս Փարիզի այդ ուղղութեամբ աշխուժութիւնը բաւարար չէր գաւառն ու գիւղացիութիւնը Կոմունայի կողմը զբաւելու համար, իսկ այդ պարագան չափազանց նպաստաւոր էր Թիէրիի համար: Թիէրիի ձեռքերը կապուած չէին, ան ազատ էր եւ ազատօրէն կրնար գործել. ան իր գործակալները կը զրկէր այս կամ այն դաւառը՝ Կոմունայի մասին զանազան սուտերով ու զրպարտութիւններով միտքեր թունաւորելու համար: Իր կոչերէն մէկուն մէջ ան կը գրէր հետեւեալը. — «Քաղաքացիներ, սպաններ եւ զինուորներ, մեր հայրենիքը այս մութ ուժերու սպանալիքին տակ է. այժմ ժամանակն է որ լարէք ձեր ուժերը Ֆրանսայի սրբազան հողը իր նախկին սրբութեան մէջ պահելու համար: Սրբիկաներու խումբ մը ճիզ

կը թափէ որ մեր զժբախտ երկրի փլատակներուն վրայ ծուլութիւն, ցոփութիւն, աւազակութիւն եւ մարդասպանութիւն թաղաւորեն»: Եւ այդ զրպարտութիւնները ապարդիւն չանցան: Թիէր իր բանակը ստուարացնելու համար գիւղերէն մեծ թիւով զինուորներ հաւաքեց: Բայց՝ գիւղացիներէն զատ ան իր բանակը կ'ուժեղացնէր, Բիզմարքի թոյլտուութեամբ, այն զինուորներով, որոնք սլոուսիական պատերազմի ատեն գերի ինկած էին: Այս եղանակով Թիէր իր բանակը կարճ ժամանակի ընթացքին կրցաւ հասցնել մինչեւ 130 հազար զինուորներու: Պարզ էր, ուրեմն, որ Կոմունան կեցած էր լաւ զինուած ու կատարելապէս կազմակերպուած թշնամի մը առջեւ:

Նոյնը չէ կարելի ըսել Կոմունայի ազգային պաշտպանութեան զօրաբանակի մասին: Հակառակ անոր որ այդ զօրաբանակի շարքերուն մէջ աւելի քան 200 հազար մարդիկ հաւաքուած էին, որոնց հետ էին անձնագոհ, Կոմունայի ջերմ հաւատաւոր մարտիկներ, — այդ բանակը իր կոչման բարձրութեան վրայ կանգնած չէր: Բանակը չունէր փորձուած ռազմական կազմակերպիչներ ու ղեկավարներ. որեւէ ծրագիր գոյութիւն չունէր զինուած ուժերը կազմակերպելու գործին մէջ: Շատ խեղճուկ էր անոր մատակարարման գործը: Ամենէն մեծ պահասը այն էր, որ միասնական ղեկավարութիւն չկար:

Ապրիլ 2-ին, Վէրսայցիները Փարիզի վրայ յարձակում գործեցին, բայց նահանջեցին, ազգային պահակազօրքը բացառիկ հերոսութիւն ցոյց տուաւ, կարճատեւ հերոսութիւն մը: Յաջորդ օրը պահազօրքը նախորդ օրուայ յաջողութենէն քաջալերուած՝ այս անգամ իրենք յարձակեցան վէրսայցիներու վրայ: Բայց այդ յարձակումը վերջացաւ կոմունարներու պարտութեամբ, չնայած որ անոնք արտակարգ եռանդով մտած էին այդ յարձակողական կռիւին մէջ: Շատ ու շատ կոմունարներ սպաննուեցան ու վիրաւորուեցան, իսկ անոնք որ գերի ինկան, բոլորն ալ անխնայ գնդակահարուեցան: Այդ պարտութեան յաջորդեցին նոր անյաջողութիւններ...:

1871-ի Ապրիլին, Մարքսը կը գրէր Վիլհէլմ Լիբկնէխտին. — «Եթէ փարիզցիները պարտութիւն կը կրեն, ատիկա, ըստ երեւոյթի, իրենց մեղքն է, բայց այդ մեղքը յառաջացեր է չափազանց մեծ եւ աներեւակայելի ազնուութեամբ: Կեդրոնական կոմիտէն եւ յետոյ՝ Կոմունան ժամանակ տուին զարշիլի հրէջ՝ Թիէրին կեդրոնացնելու թշնամական ուժերը: Անոնք երկու պարագաներու մէջ յիմար դաժնուեցան. Առաջին. — Որպէսզի իրենք չմեղադրուին իշխանութիւնը բռնի զբաւելու մէջ, սկիզբէն իսկ՝ ամենաթանկագին վայրկեաններ կորսնցուցին այն ատեն՝ երբ Վանդամիան հրատարակին մէջ ոչակցիան պարտուեցաւ եւ յետագիժմականները փախուստի ճամբան բռնեցին. անոնք անհրաժեշտ էր առանց ժամանակ վատնելու

յարձակէին Վէրսայի վրայ: Երկրորդ՝ անոնք չուզեցին քաղաքացիական կռիւի սկսիլ եւ թոյլ տուին որ թիէրը ինքը սկսի այդ կռիւը: Ասով Կոմունան, յարձակողական դիրքէն երբ անցաւ պաշտպանողական դիրքին, փութացուց իր պարտութիւնը:

«Փարիզի մէջ կատարուող անցուղարձերու մասին, դուն շատ ավելցփեղ բաներ կը գտնես լրագրական սիւնակներու մէջ, դուն պէտք չէ որեւէ գրուածին հաւատաս. այդ ամէնը սուտ եւ խաբէութիւն է: Բուրժուական զբոսանքներու ստորնութիւնը ասկէ առաջ երբեք այսքան փայլուն կերպով չէր արտայայտուած»:

Վէրսայցիներու տարած յաղթանակը թեւ տուաւ անոնց եւ Ապրիլի վերջերը անոնք ուժեղ յարձակում գործեցին ռազմագիտական տեսակետով կարեւոր Իսսի ամրութեան վրայ, զոր զբաւելով կարելի էր ուղղակի Փարիզի մօտենալ: Մայիս 8-ին անոնք յաջողեցան զբաւել այդ ամրութիւնը: Սոյն յաղթանակը Փարիզի Կոմունան մատնեց բացառիկ ծանր դրութեան:

Այս անյաջողութիւններու կապակցութեամբ ազգային պահակազորքի հրամանատար Կլեոզերին պաշտօնանկ եղաւ ու ձերբակալուեցաւ. անոր տեղը նշանակուեցաւ Ռոսսէլը, որ արդէն Մայիս 9-ին, Իսսի մօտ կրած պարտութեան հետեւանքով հրաժարական տուաւ ու անհետացաւ: Հրամանատար նշանակուեցաւ հին յեղափոխական Դէլէկլիուզը, որ Մայիս 10-ին, հետեւեալ յայտարարութիւնը հրատարակեց.

— «Կոմունան զիս ընտրեց որպէս Պատերազմական Նախարար: Այնպէս մտածուած է որ պատերազմական նախարարութիւնը ներկայացնելու է ոչ թէ նախկին զինուորականութիւնը, այլ քաղաքացիական տարրը: Եթէ ես միմիայն իմ սեփական կարողութիւնը նըկատի առնէի, պիտի չուզէի ստանձնել այս պատասխանատու եւ վտանգաւոր պաշտօնը, բայց ես հաշուի առի ձեր հայրենասիրութիւնը, որ պիտի դիւրացնէ իմ գործը: Դրութիւնը գիտէք թէ շատ լուրջ է. այն սոսկալի պատերազմը, զոր կը մղեն մեզ դէմ միապետական ռէժիմի մնացորդներուն հետ դաշնակցած Ֆէոդալ ազնուականները, արդէն մեզի շատ սուղի նստաւ. մենք շատ զոհեր տուինք, թանկագին կեանքեր. բայց եւ այնպէս, թէեւ ես այդ տիրազղեցիկ կորուստները կը յիշատակեմ, երբ կը նայիմ դեղածիծաղ ապագային՝ որ կը բացուի մանուկներուն առջեւ, նոյնիսկ եթէ մենք չկրնանք մեր ցանած սերմերուն հունձքը վայելել, ես տակաւին մեծագոյն խանդավառութեամբ կ'ողջունեմ Մարտ 18-ի Յեղափոխութիւնը, որ Յրանսայի եւ ամբողջ Եւրոպայի առջեւ բացաւ այնպէս պայծառ հեռանկար մը որու մասին մենք երեք ամիս առաջ ազօտ յոյս մը իսկ չունէինք: Ուրեմն, քաղաքացիներ, ամէն բան կախուած է ձեզմէ,

թշնամիին առջեւ ձեր քաջարի կեցուածքէն: Մեր պարիսպները այնքան ամուր են որքան ձեր բազուկները, որքան ձեր սրտերը. եւ դուք տղէտ ալ չէք, դուք գիտէք թէ կը կռուիք ձեր ազատութեան համար, ընկերային հաւասարութեան համար. դուք գիտէք նաեւ թէ այդ ազատութիւնն ու ընկերային հաւասարութիւնը շատ յաճախ մեզի խոստացուած բայց միշտ ալ հեռացուած է ձեզմէ: Այժմ, այս պատմական շրջանին, եթէ Վէրսայցիներու զնդակները ծակծկեն ձեր կուրծքը, դուք վստահ եղէք որ պիտի ստանաք ձեր անդին զոհողութեանց վարձատրութիւնը, այսինքն՝ աշխարհի եւ Յրանսայի ազատութիւնը, ձեր տուներու ապահովութիւնը, ձեր կիներուն եւ զաւակներուն կեանքի անվտանգութիւնը: Ուրեմն, դուք պիտի յաղթէք. ամբողջ աշխարհը որ կը գիտէ ձեզ եւ կը ծափահարէ ձեր հերոսական ջանքերը, պատրաստուած է մեծ հանդիսութեամբ տօնել ձեր յաղթանակը՝ որ բոլոր ժողովուրդներուն յաղթանակն է: Թոյլ մի՛ տաք որ վախն ու կասկածը մօտենան ձեզի. մենք պիտի յաղթենք: Յաւէտ կեցցէ Համաշխարհային Հանրապետութիւնը: Կեցցէ՛ Կոմունան:

ՇԱՐԼԸԶ ԴԵԼԷՎԵՆՈՒԶ — Յայտարարութիւն Ազգային Պահակազորքին, Մայիս 10, 1871

Յաւալի է ըսել որ Կոմունայի ամենալայն ժողովրդականութիւն վայելող այս առաջնորդը՝ Դէլէկլիուզը դրութիւնը չկրցաւ փրկել: Ամենայարմար պատեհութիւնը արդէն վաղուց հեռացեր էր: Անհրաժեշտ էր ձեռք առնել բացառիկ եւ վճռական միջոցներ, բայց Կոմունան չէր համարձակեր անոնց դիմել: Փոխանակ կռուելու Փարիզի մէջ վխտացող մատնիչներու եւ լրտեսներու դէմ, փոխանակ վերջնական վճռականութեամբ լուծարքի ենթարկելու վնասարար հրոսակախումբերը, որոնք զբաւեր էին ապարատի ղեկավար պաշտօնները, Կոմունան սահմանափակուած էր կոչերով ու յորդորներով: — Մենք հանրապետականներ ենք, մենք դեմոկրատներ ու սոցիալիստներ ենք, ուստի մենք պիտի չօգտագործենք այն միջոցները, ինչ որ կը գործածէին այն վայրի անասունները (վերսայցիները): Մենք կը կառավարենք երկիրը բանականութեամբ, ո՛չ թէ տէնօրով»: Բայց երբ դէպքերը տարբեր հանգամանք ստացան, երբ վէրսայցիներու վայրագութիւնները կոմունարներու վերաբերմամբ վերջին սահմանակէտին հասան, Կոմունան ստիպուեցաւ փոխել իր տեսակէտը տէնօրի նկատմամբ: Մայիս 15-ին Կոմունան պատանդներու մասին հրամանագիր մը հանեց, որով կը յայտարարէր. — «Այլեւս պէտք չէ խնայել այդ անարդ ու զգուշի արարածներուն, որոնք մեր գլխին փորձանք բերին դաւաճանութեամբ եւ քաղաքա-

ցիական կռիւով, այս է մեր ըսածը: Մարդեր չեն անոնք, այլ վազ-
րեր են, որոնք գազանացած կը յարձակին անդէն գոհին վրայ եւ կը
սիրեն լողալ արեան մէջ»:

Որովհետեւ դրութիւնը երթալով կը վատթարանար, ուստի
Կոմունան 34 ձայներու մեծամասնութեամբ որոշեց կազմակերպել
Հասարակական փրկութեան կոմիտէ, որուն յանձնեցին հակայեղա-
փոխութիւնը արմատախիլ ընելու գործը: Այդ հողին վրայ Կոմու-
նայի ներսը տարակարծութիւններ երեւան եկան: Կոմունայի ան-
դամներու մէկ մասը կը յայտարարէր, որ Կոմունան պէտք չէ իր
լիազօրութիւնները յանձնէ դիկտատուրական լիազօրութիւններով
օտաուած մարմինին՝ որ ընտրուած էր կոմիտէէն: Այդ տարակար-
ծութիւններու հետեւանքով Կոմունայի անդամներէն 22-ը՝ միջազ-
գայնականները, Կոմունայի կազմէն դուրս եկան եւ Մայիս 16-ին
թերթերով յայտարարեցին թէ իրենք այլեւս Կոմունայի նիստերուն
չեն մասնակցիր եւ կը մեկնին իրենց շրջանները՝ գործնական աշ-
խատանք կատարելու համար:

Հասարակական փրկութեան կոմիտէն մեծ եռանդով փարեցաւ
իր գործունէութեան ուղեգծին: Առաջին անգամ սկսաւ պայքարիլ
դասալքութեան դէմ: Կորսային լրտեսներն ու վնասարարները, կը
խափանէին Կոմունայի դէմ գրգռիչ յօդուածներ տպող թերթերը,
անխնայ կը գնդակահարէին պատանդները: Բայց այդ բոլոր միջոց-
ները ուշացած միջոցներ էին, որոնք Կոմունան չէին կրնար փրկել:
Ամէն կողմէ թշնամիներով շրջապատուած՝ ան դատապարտուած էր
կործանման: Մայիս 15-ին, Կոմունան հրապարակեց իր վերջին կոչը.

— «Փարիզը պայմանաւորուած է մահուան հետ... Անոր ամ-
բողութիւններուն ետեւ պարիսպներ կան, պարիսպներուն ետեւ պատ-
նէշներ կան, պատնէշներու ետեւ տուններ կան, որոնք հսկայ ուժի
առջեւ միայն կը բանան իրենց դռները, իսկ այդ ճգնաժամին՝ կա-
րելի է զանոնք պայթեցնել եւ օդը հանել ու թշնամիին չյանձնել:
Մենք հիմա հրացաններու եւ թնդանօթներու կը դիմենք եւ ձեզի ալ
կոչ կ'ընենք որ դիմուիք: Ոտքի ելէ՛ք, Ֆրանսայի քաղաքներ»:

ԿՈՄՈՒՆԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Վէրսայցիները կամաց կամաց կը մօտենային դատապարտեալ
քաղաքին: Վերջին ընդհանուր յարձակման օրը որոշուած էր Երեք-
շաբթի օր՝ Մայիս 23-ին:

Կոմունան յուսահատական վերջին փորձ մը ըրաւ միացեալ
ճակատով դիմադրութեան պատրաստուելու համար: Ծանուցում մը
դրուեցաւ պաշտօնաթերթին մէջ, որ Կոմունայի նիստը պիտի դու-

մարուէր Չորեքշաբթի օր, Մայիս 17-ին, կէսօրէն վերջ ժամը 2-ին
եւ բոլոր անդամները ներկայ ըլլալու են: Ներկայ եղան 66 անդամ-
ներ, որոնցմէ 15-ը փոքրամասնութեան խումբին կը պատկանէին,
հակառակ անոր որ անոնք նախորդ օրը բողոքելով դուրս եկած էին
Կոմունայէն: 14 բացականերէն մէկն էր Բէսլէյը, որ հրաժարած էր
Թիէրի տունը կործանելու հրամանագրին հետեւանքով: մէկը ար-
դէն փախեր էր, չորսը ձերբակալուած էին Կոմունայի հրամանով:
Յամենայն դէպս, Կոմունայի այդ նիստը այդքան մեծամասնութիւն
կազմող անդամներ չէր ունեցար: Ժողովի ընթացքին փոքրամասնա-
կանները ենթարկուեցան խիստ քննադատութեան՝ որովհետեւ անոնք
հակառակ էին Երրորդ Յօդուածին՝ որ կը ստորադասէր Կոմունան՝
Հասարակական Ապահովութեան կոմիտէին: Ռիկոլը կը գլխաւորէր
մեծամասնականները, որոնք անշեղ դիրքով կեցեր էին ընդդիմա-
դիրները լուծարքի ենթարկելու իրենց առաջադրութեան վրայ: Ռի-
կոլը խորհրդարանէն դուրս հանեց Փայտը եւ Դէլէկլեուզը եւ ու-
ղեց իմանալ անոնց կարծիքը: Ինք կ'ուզէր որ փոքրամասնականները
անմիջապէս ձերբակալուին: Բայց Փայտան ու Դէլէկլեուզը նկատե-
լով որ այդպիսի քայլ մը այդ ճգնաժամային վայրկեանին կրնար
բարդութիւններ յառաջացնել, չհամաձայնեցան Ռիկոլի առաջադ-
րանքին, մանաւանդ որ Ազգային Պահակազօրքն ալ Կոմունային հա-
կակիր էր: Ռիկոլը համակերպեցաւ. բայց ժողովին մէջ մեծամաս-
նականները պահանջեցին որ փոքրամասնականները իրենց ստորադ-
րութեամբ յետս կոչեն իրենց բողոքագիրը: Այդ տաք վիճարանու-
թեան ատեն՝ Բիլորարին՝ Հասարակական Ապահովութեան մէկ ան-
դամը, այլայլած ներս մտաւ աղաղակելով.— «Ռապպի փողոցի վա-
ռօզի պահեստանոցը պայթեր է եւ դուք խօսելով կը զբաղիք...»:
Ասոր վրայ ժողովականները ցրուեցան:

Պայթումը աւելի սարսափելի էր քան աւերիչ: Ամբողջ կրի-
նէլը իր շրջակայքով վնասուած էր: Պողոտային վրայ լեցուած էին
ապակիի կտորներ ու փամփուշտներ: Բոցի հսկայական սիւն մը
բարձրացեր էր օդին մէջ: Յնցուած էր Փարիզի կէս մասը: Տասնեակ-
ներով մարդիկ մեռած էին եւ շատերը՝ վիրաւորուած: Ապացոյց մը
չկար հաստատելու թէ ի՞նչ բանէն յառաջացեր էր այդ պայթումը,
մասնիչի մը, վնասարարի մը դո՞րձն էր ան թէ՛ անդառնուած մը
արդիւնքը, դժուար էր որոշել: Բայց ընդհանուրի կասկածը դաւադ-
րութեան մը կողմը հակած էր: Այդ դէպքը պատճառ եղաւ որ մե-
ծամասնականները աւելի սաստկացնեն Յակոբինեան յեղափոխական
տէճօրը: Փոքրամասնականները իրենց պայքարը շարունակելով հան-
դերձ՝ այլեւս չէին կրնար անտեսել 1871-ի յեղափոխութեան հիմնա-
դիրներուն հանդէպ իրենց պարտաճանաչութիւնն ու լոյալութիւնը:

Մայիս 18-ին, խիստ հսկողութեամբ միջոցառումներ ի գործ դրուեցաւ ամէն մէկ յեղափոխական յարկարածնի մէջ, բան մը, որ զրեթէ բացառիկ պատերազմական վիճակ յայտարարելու գոյն ունէր: Հասարակական Ապահովութեան կոմիտէն ինը թերթեր խափանեց: Իսկ Ռիկոլը կը պատրաստուէր հաստատել Յեղափոխական Ատեան: Յաջորդ օրը Կոմունան յայտարարեց որ բոլոր զոգերը, դաւադիրները, վնասարարներն ու տրուած հրամաններուն անսաստողները անխտիր՝ Յեղափոխական Ատեանի առջեւ պիտի բերուին եւ անոնց պատիժը պիտի ըլլայ ո՛չ թէ բանտարկութիւն՝ այլ անյապաղ զնդակահարութիւն: Զերբակալուած էին 84 լրտեսներ ու վնասարարներ: Յեղափոխական Ատեանը առանց տատանուելու՝ զանոնք զնդակահարել տուաւ: Քաղաքին մէջ եթէ կային վնասարարութեան ծրագիր որոճացողներ՝ իրենց սարսափէն դատապարտուեցան անգործութեան: Այսպէս, ներքին վտանգը հեռացեր էր, բայց արտաքին վտանգը՝ թշնամին, կը սպառնար Փարիզի:

Դէլէկլեուզը պատերազմական նախարարութեան պաշտօնատան մէջ նստած՝ քաղաքի պաշտպանութեան ծրագրի մասին կը մտածէր: Դոմբրովսկիի տեղեկատուութիւնը կարելի չէր ժխտել. այո՛, թըշնամին եթէ Փարիզ մտած չէր, բայց Փարիզը առած էր կրակէ օդակի մէջ: Զինուորական պաշտօնեաներ եկած էին հրահանգներ ստանալու: Սպայակոյտը չէր ուզեր ահազանգը հնչեցնել՝ ժողովուրդը խուճապի չմատնելու համար:

Դուրսը, Փարիզի փողոցներուն մէջ սովորական կեանքն էր որ կը դառնար: Փարիզցիները կարծես հոգ չէին ըներ թէ Փարիզի վախճանը կը մօտենար, որովհետեւ անոնք գիտէին թէ՛ ինչ որ ըլլալու էր իրենք չէին կրնար արգելիլ: Կիրակի օրերը բոլոր թատրոնները լեցուած էին բազմութեամբ: Մայիս 21-ի Կիրակի կէսօրին, Թուիլլըրի պարտէզներուն մէջ փարիզցիները հազարներով հաւաքուած էին մեծ նուազահանդէսին ներկայ ըլլալու եւ հաճոյանալու համար: Անդին, 300 մեթր հեռուն՝ վերսայցիներու արձակած թընդանօթներու ոռմբերը կը պայթէին Շանս-էլիզէի յատակին վրայ եւ հասարակ ժողովուրդը կարեւորութիւն չէր տար մօտեցող սարսափելի փոթորիկին: Նուազահանդէսէն յետոյ՝ պաշտօնեայ մը, բեմ բարձրանալով յայտարարեց. — «Քաղաքացիներ, Պարոն Թիէրը խոստացեր էր որ երէկ Փարիզ պիտի մտնէր: Պարոն Թիէրը տակաւին Փարիզ չէ մտեր ու երբեք պիտի չկրնայ մտնել. ես կը հրաւիրեմ ձեզ, որ յաջորդ կիրակի օր դարձեալ հաւաքուիք հոս, որովհետեւ մենք մասնաւոր նուազահանդէս մը պիտի ունենանք այրիներու եւ որբերու անունով»:

Բայց վերսայցիները ժամէ աւելի էր, Փարիզ մտեր էին արդէն:

Իրիկուան մօտ 70 հազար մարդիկ կը մտնէին Փարիզ, բնակչութեան մեծ մասին անձանօթ: Ժամը 8-ին, երկու զօրասիւններ պարիսպներուն մէջ, մէկը յամբաքայլ կը յառաջանար դէպի աջ, միւսը՝ դէպի ձախ: Ո՛չ մէկ ընդդիմադրութիւն. ամէն ինչ տեղի ունեցեր էր լուսութեամբ:

Աստի, Հասարակական Ապահովութեան կոմիտէի մէկ անդամը, իր ձիով վեր վար կը շրջէր ստուգելու վերսայցիներու մուտքի մասին տարածուած լուրը: Գիշերուան ժամը 11-ին, ան մտաւ Բէթովէն փողոցը, որ մութ էր ու ամայի: Յանկարծ մութին մէջ նըշմարեց շարժուող ստուերներ: Իր ձին սայթաքեցաւ ու ինք ինկաւ: Թաց էր դեռինը, բայց այդ օրը անձրեւ չէր եկած... փողոցը լեցուած էր արիւնով. մարդիկ սպաննուած էին եւ դիակները վերցուած: Շարժուող ստուերները վրայ հասան եւ ձերբակալեցին զինքը: Վերսայցիներ էին անոնք... Ատրճանակի մի քանի պայթիւններ... «Կեցցէ՛ Կոմունան», լսուեցաւ այդ ատեն ու Աստին թաւալեցաւ արեան լճին մէջ:

Ժամը երեքին Փարիզի 15-րդ եւ 16-րդ շրջանները իրենց զրոները բացեր էին թշնամիին առջեւ, 1,500 հողի առանց հրացան արձակելու անձնատուր եղեր էին: Ատիկա յուսահատութեան նշան էր:

ՄկՄահոն եկաւ Թրոկստէրօ. իր զինուորական կեդրոնատեղին հաստատեց հոն: Քիչ վերջ՝ Թիէրը հասաւ ժպտելով. գիւսյին ժպիտ... Գոմարուեցաւ պատերազմական խորհուրդ: Արշաւանքը շարունակուելու էր: Բայց Թիէրը մէկ վախ ունէր: Ան կը կասկածէր թէ յեղափոխականները ականներ զետեղած էին նկուղներուն եւ ներքնայարկերուն մէջ, ատոր համար զինուորներուն թելադրեց դանդաղ եւ զգոյշ շարժիլ հետախոյզներու առաջնորդութեամբ:

Դէլէկլեուզը ամբողջ գիշերը անքուն նստած էր Հօթէլ տի Վիլի մէջ: Հասարակական Ապահովութեան Կոմիտէն ժողով ունէր, միայն Բիլիորէյը ներկայ չէր: Եւ մեր յեղափոխականները թաղուեցան ծանր խորհրդակցութեան մէջ... խորհրդակցեցան եւ խորհրդակցեցան...: Անոնք տակաւին լաւատես էին, յուսալից... բայց առտուան ժամը երկուքին՝ Դոմբրովսկին հասաւ, շնչասպառ, վիրաւոր, կուրծքէն արիւնը կը հոսէր: Ան հաստատեց տարածուած տխուր լուրերու ստուգութիւնը: Կոմիտէն այնպէս կարծեց թէ Դոմբրովսկին նպատակ ունէր գիրենք սարսափեցնել եւ անձնատուութեան առաջնորդել եւ յիշեցին Վէյսէրի պատահարը: Ասոր վրայ Դոմբրովսկին, այդ նկատողութենէն նախատուած զգալով՝ գոչեց. — «Ի՛նչ, կոմիտէն զիս մատնելի մը տե՞ղը կը դնէ... իմ կեանքը Կոմունային կը պատկանի»:

Դէլէկլեուզը յուզուած դուրս գնաց պահ մը եւ յետոյ՝ վերա-

դառնալով խմբադրեց հետեւեալ յայտարարութիւնը, զոր տպուելով պիտի փակցուէր Փարիզի դեռ եւս ազատ մնացած փողոցներուն մէջ :

— «Բաւական է միլիտարիզմը. այլեւս չքանչանակակիր զինուորական պաշտօնեաներ չկան: Ճամբայ տուէք ժողովուրդին, իրական մարտիկներուն, մերկ բաղուկներուն: Հնչած է յեղափոխական պատերազմի ժամը: Ժողովուրդը գիտական ուղղափարութենէ չի հասկնար, բայց երբ ան իր ձեռքին հրացան ունի եւ իր ոտքերուն տակի քարերը փշրելով խրամներ կը բանայ, ան չի վախնար միապետական դպրոցներն աւարտող ուղղափարներէն: Ձէնքի դիմեցէք, քաղաքացիներ, զէնքի դիմեցէք: Այժմ ժամանակը հասած է որ դուք ընտրութիւն ընէք ձեր առջեւ բացուած երկու ճամբաներէն մէկուն կամ միւսին, դուք կամ պիտի յաղթէք եւ կամ պիտի իյնաք վերսայցի կղերականներու եւ յետադիմականներու ձեռքը, այն սրիկաններուն՝ որոնք բացէն ի բաց Ֆրանսան յանձնեցին Պրուսիացիներուն եւ կ'ուզեն որ իրենց դաւաճանութեան փրկագիրն մենք վճարենք: Եթէ դուք կը փափաքիք որ այս վերջին շարժուն՝ Ֆրանսայի լաւագոյն զաւակներու երակներէն հոսած արիւնը աւազուտին մէջ չկորսուի, եթէ դուք կը փափաքիք ապրիլ ազատ ու արդարակորով Ֆրանսայի մէջ, եթէ դուք կը փափաքիք խնայել ձեր զաւակներուն եւ թոռներուն ձեր կրած տառապանքն ու թշուառութիւնը, դուք մէկ մարդու պէս ոտքի ելլելու էք դիմաւորելու թշնամին, որ մոռցած իր ոճիրները՝ պատրաստուած է իր լուծը դնելու ձեր վզին: Քաղաքացիներ, ձեր ներկայացուցիչները պիտի կռուին ձեր կողքին, պիտի մեռնին ձեր կողքին: Բայց յանուն փառապանծ Ֆրանսայի, որ մայրն է ժողովրդական յեղափոխութեանց, հայրենիքը արդարութեան եւ համերաշխութեան այն իտէալներուն՝ որոնք ամբողջ աշխարհի մարդկութեան օրէնքներու հիմնաքարերը պիտի ըլլան, այո՛, յանուն այդ Ֆրանսայի, դուք պիտի քալէք հերոսական գրոհումով այդ անարգ թշնամիին դէմ: Ձեր յեղափոխական անպարտելի ուժով դուք պիտի ապացուցանէք, որ Փարիզը կրնայ ծախուիլ, բայց Փարիզը կարելի չէ ընկճել ոչ ալ պարտութեան մատնել: Կոմունան կը վստահի ձեզի, դուք ալ վստահեցէք Կոմունային»:

Յեղափոխականները իրենց ուժը կեդրոնացուցին Փարիզի Ծրք թեմական շրջանը եւ ամբացուցին Թուրլըները, հոն բերին հրետանիները եւ Սան-Պլորէնտին եւ Ռոյէլ փողոցներուն մէջ շինեցին պատնէշներ: Սպայակոյտը ժամը 5-ին դատարկեց պատերազմական նախարարութեան պաշտօնատունը, որ մօտ էր թշնամիի գօտիին եւ փոխադրուեցաւ Հոթէլ տի Վիլ:

Վերսայցիները, սակայն զգոյշ՝ բայց վստահ քայլերով կը յառաջանային եւ դիւրութեամբ կը մտնէին հոն, ուրտեղ բնակչու-

թիւնը Կոմունայի համակիր չէր: Լրտեսները հարկ եղած տեղեկութիւնները նախապէս տուած էին արդէն: Եւ պէտք է ըսել թէ՛ Փարիզի շատ մը թեմական շրջանները բուրժուական հոգեբանութեամբ՝ հակառակ էին Կոմունային: Ազգային Պահակաղորդէն դուրս շատ սակաւաթիւ փարիզցիներ զէնքի դիմած էին Կոմունան պաշտպանելու համար: Կոմունան թիկունքային ուժ չունէր:

Որպէս պաշտօնական մարմին՝ Կոմունան լուծուած էր: Այսուհանդերձ՝ Երկուշաբթի առտուն, 20 անդամներ հաւաքուեցան Հոթէլ տի Վիլ. հոն էր Փայատը, աւելի պաշտօնական դիրքով՝ քան որ էր առաջները. անսովոր դուարթութիւն մը կը ճառագայթէր իր դէմքէն: — «Բարեկամներս, — ըսաւ աւ, — մեր վերջին ժամը կը մօտենայ: Ո՛հ, ես ինձ համար հող չեմ ըներ. իմ մարդերս ճերմկեր են եւ իմ կոչումը աւարտած է: Ի՞նչ վախճան ինձ համար փառապանծ պիտի ըլլայ քայ պատնէշին վրայ կռուելով մեռնիլը: Բայց երբ իմ շուրջը կը տեսնեմ երիտասարդ զուլիներ, կը դողամ յեղափոխութեան ապագային համար. անոնք շատ կանուխէն պիտի մեռնին եւ Յեղափոխութեան յաղթանակը պիտի չտեսնեն»: Այս խօսքերէն վերջ ան խոյացաւ դուրս՝ դէպի կռիւի ճակատը: Պատմութիւնը անոր անունը պիտի չմոռնայ...:

Նոյն ատեն ներս մտան շարք մը Բլանկիստներ: Ռիկուլ, Ֆէրրէ եւ Թրինգուէտ առաջարկեցին բոլոր կամուրջները պայթեցնել եւ քաշուիլ Սիտէ կղզին եւ հոն կռուիլ մինչեւ իրենց վերջին շունչը: Բայց պահ մը զանց առնուեցաւ այդ ծրագրին դործադրութիւնը. դեռ անուրիկ տեղեր կային, դեռ կռուողները բոլորովին բնաջնջուած չէին. պէտք էր մնալ, պէտք էր կռուիլ:

Նոյն օրը Թիէր իր կազմած Ազգային Ժողովի ուղերձով արդարութեան, կարգ ու կանոնի, մարդկութեան եւ քաղաքակրթութեան յաղթանակը կը դրուատէր ծափահարութեանց մէջ, եւ իր բարեկամ Ժիւլ Ֆավրին կը հեռագրէր, — «Ծիշդ այսօր վերադարձայ Փարիզէն, ուր ակննատես եղայ սարսափելի տեսարաններու: Եկո՛ւր, իմ սիրելի բարեկամս, եկո՛ւր որ միասին վայելենք մեր յաղթանակի փառատօնը»:

Բայց կռիւը դեռ վերջացած չէր: Կարգ մը տեղերու մէջ կը բարձրանային պատնէշներ, իսկ անոնց վրայ կը ծածանէին կարմիր դրօշակներ: Պատնէշներ բարձրացած էին Լա Շափէլի, Պուտտ-Շամոնի, Բէլվիլի, Մէնիլմոնտանի, Բաստիլի, մասնաւորապէս Սէն Դէնիսի արեւելեան կողմը մինչեւ Սէն Միշէլ բուլվարը: Յիսուն որակեալ որմնադիրներ կը դործէին եռանդալին Սէն Դէնիսի պատնէշները շինելու համար: Այն որ շարաթներու գործ էր, կը լրանար մի քանի ժամէն: Կիներ, երեխաներ, բոլոր հաւատաւորները լծուած էին մեղուաջան աշխատանքի: Հոթէլ տի Վիլի պաշտօնատունը կը հաս-

նէին ամէն կողմերէ անդեկութիւններ: Պաշտօնեաները զրաղած էին ուսումնասիրելու ուղղմական քարտէզներ, փութով զրկելու էին հրահանգներ: Դէլէկլեուզը հանդիստ չունէր. կը ստորագրէր հրամաններ եւ քաջալիրիչ յորդորներ... — «Քաղաքացիներ՝, փարեցէք ձեր զէնքերուն: Ամէն մէկ տուն թող ամրոց մը ըլլայ. ամէն մէկ փողոց՝ անառիկ բերդ մը: Թշնամիին ուսմբերը այնքան վտանգաւոր չեն, որքան ձեր յուսահատութիւնը: Դուք յաւիտեան պիտի չապրիք. վերջապէս օր մը պիտի մեռնիք, բայց լաւ է, որ փառքով մեռնիք յեղափոխութեան համար, արդարութեան ու ազատութեան համար: Դուք պիտի չլքէք բանուորներու սրբազան դատը: Պաշտպանողականէն անցէք յարձակողականի: Թողէք որ արիստոկրատները, առանձնաշնորհեալները եւ մարդկութեան դահիճները մնան պաշտպանողական զիծի վրայ: Ինչ որ ըրիք Մարտ 18-ին, նոյնը կրնաք ընել դարձեալ: Ժողովուրդի ուժը անպարտելի է, մենք կը յաղթենք»:

Կիներու գումարտակը Փլաս Պլանչի մէջ հերոսական կռիւ մղեց ամբողջ չորս ժամ, յետոյ նահանջեց Փլաս Պիկալի պատնէշները: Կիները հոն երկու ժամ եւս կռուեցան. անհաւասար ուժերու կռիւ: Թշնամին բազմաթիւ էր եւ լաւ զինուած: Վերջ ի վերջոյ՝ երբ իրենց փամբուշտները սպառեցան, հերոսուհիները անձնատուր եղան: Ոչ ոքի կեանքը խնայուեցաւ, բոլորն ալ զնդակահարուեցան: Թիէրի հրամանն էր այդ. — «Սպաննեցէք անձնատուր եղողները, մենք զերինք չենք կրնար պահել»:

Մոնտրուօի մէջ ապաստանած էին 400 կոմունարներ, որոնք դիւցազնարար կը կռուէին. անառիկ էր անոնց դիրքը: Թշնամին, պահ մը դադրեցուց կռիւը եւ դիմեց խորամանկ միջոցի մը. կեղծ հրամանագիր մը հասցուց կռուողներուն. հրամանագիր մը կոմունայէն, որ կը հրահանգէր անձնատուր ըլլալ: Կոմունարները շփոթեցան: Ի՞նչ անցեր դարձեր էր... Ինչո՞ւ անձնատուութիւն...: Բայց կոմունայի հրահանգը կարելի չէր անտեսել...: Մարդիկը անձնատուր եղան... բայց անմիջապէս անոնք հասկցան որ իրենք թակարդուած էին...: Աւա՛ղ, սակայն, արդէն ուշ էր: Չորս հարիւր կոմունարները զընդակի բռնուեցան: Անոնց հետ էին հինգ կիներ եւ չորս երեխաներ: Թշնամին զանոնք եւս կեցուց փոռուած դիակներուն քով եւ զնդակահարեց:

Մինչ թշնամին այսպէս անխնայ կը զնդակահարէր իր ձեռքն ինկած յեղափոխականները, Ռիկոլի համբերութեան բաժակը կը լեցուէր: Բանտերուն մէջ կային ձերբակալուած լրտեսներ, դաւադիրներ, կռիւներու ատեն զերի ինկածներ. անոնց հաշիւը մաքրելու էր: Վերջիններուն մէջ էր թշնամի բանակի մէկ հազարապետը՝ Ծոտին: Ռիկոլը զայն անձամբ կանչեց հարցաքննելու:

Ռիկոլ. — Դուք էիք որ Հոթէլ տի Վիլի հրապարակը մաքրելու գործը ստանձնեք էիք, անանկ չէ՞:

Ծոտի. — Ես որպէս զինուոր՝ ինձ արուած հրամանը կատարելու էի:

Ռիկոլ. — Եւ այդ հրամանին կատարուած էր կիներ ու երեխաներ սպաննելու գործը. անա՞նկ է:

Ծոտի. — Կռիւի մէջ ես չէի կրնար ամէն մէկ զինուորի հրացանի ուղղութիւնը փոխել:

Ռիկոլ. — Բայց դուք այժմ կը յուսաք իր որոշումը փոխել... դուք միայն հինգ վայրկեանի կեանք ունիք:

Ծոտի. — Բայց ես սրտով ու հոգով հանրապետական եմ:

Ռիկոլ. — Այո՛, Թիէրն ալ հանրապետական է, Վերսայլցիներն ալ հանրապետական են, որոնք հազարներ սպաննեցին եւ վաղը մեզ ալ պիտի սպաննեն...: Քալէ՛՛ այժմ:

Ծոտի. — Բայց Ռիկոլ, ես կին ունիմ, զաւակներ ունիմ. ես դերի կ'ըլլամ ձեզի, կ'ընեմ, ինչ որ կը հրամայէք, միայն խնայեցէք ինձի:

Ռիկոլ. — Մարդոց՝ կարելի է խղճալ. բայց ձեզ նման հրէշներուն խղճալ՝ Կոմունայի դաւաճանել է: Գալով ձեր կնոջ ու զաւակներուն՝ Կոմունան զանոնք աւելի լաւ կը հողատարէ քան թէ դուք:

Եւ Ռիկոլ իր ատրճանակով սպաննեց Ծոտին, իսկ միւսները գնդակահարել տուաւ:

Մայիս 24-ի օրը, Հոթէլ տի Վիլի մէջ մեծ աշխուժութիւն կար: Նախքան Կոմունայի հեռանալը, որոշուած էր չէնքը կրակի տալ: Մեծ սրահին մէջ պառկող վիրաւորները կը հեծեծէին ցաւատանջ: Երկու պաշտօնեաները կը հսկէին Դոմբրովսկիի վրայ, որ արդէն մահամերձ էր: Դէլէկլեուզ, ուժասպառ եւ նոյնպէս մահամերձ՝ նրստած էր աթոռին վրայ, կը գրէր, կը գրէր շարունակ: Ան չէր կրնար խօսիլ, իր ձայնը զրեթէ մարած էր բայց կամօք ուժով աննկուն՝ փարած էր իր աթոռին: Տարօրինակ կերպարանքներ կ'երեւնային իր աչքերուն: Կոմունայի անդամները անխլած էին իրենց յեղափոխականի մօրուքը. պաշտօնեաները հանած էին իրենց համազգեստը եւ հազած էին զործաւորի շապիկ, զործաւորի տափաստ. ստուերոտ կերպարներ, որոնք իրարու ետեւ կուղային իրեն տալու ամբաստանութեան վաւերաթղթեր, որով կը պարզուէր թէ մահապատիժը անխուսափելի էր:

Ռանլիէ, Հոթէլ տի Վիլի զինուորական կառավարիչը, երբ ներս մտաւ ու տեսաւ որ մարդիկը ծպտուած են, սպառնաց զանոնք զնդակահարել՝ եթէ անմիջապէս չանցնին իրենց պարտականութեան

զլուխը... Պարտականութեան դրոշմ... բայց ո՞ւր մնացեր էր այդ պարտականութեան դաշտը... Ամէն ինչ անյոյս էր... :

Մայիս 25-ի օրը աւելի տխուր էր :

Լորտ Լիոնդ, բրիտանական զեսպանը, որ վերսայլցիներու հետ Փարիզ մտած էր, հետեւեալը գրած է Արտաքին Պաշտօնատան ուղղած իր զեկոյցին մէջ. — «Փարիզի վիճակը սոսկատեսիլ է : Այն դեռ չերբ երբ ես հոն էի, Փարիզը դարձեր էր դժոխային հնոց : Հրդեհ՝ ամէն ուղղութեամբ. դիակներ՝ ամէն փողոցի մէջ փռուած : Մթնոլորտը լեցուն է ծուխով ու դարչելի հոտով եւ սակայն թնդանօթները կը դռան. հրացանաձողութիւն՝ ամենուրեք : Մարդիկ կը փախչին, բայց չեն դիտեր ո՞ւր... : Ամէն տեսակ սրտաճմլիկ ձայներ, խլացուցիչ աղմուկ, օգնութեան կոչեր : Կը յուսամ թէ այդ դրութիւնը կը վերջանայ շուտով» :

Բայց զեսպանին յոյսերը այնքան շուտ չիրականացան :

Ուրիշ լրագրող մը այդ օրերու նկարագրութիւնը գրած է, որուն ձեռագիրներուն մէջ կը գտնենք հետեւեալ տողերը.

— «Ի՞նչ խրճիթներ, ի՞նչ նկուղներ, ի՞նչ զնդաններ ու բանտեր գթութեան զգացում կրնային արթնցնել այս կատղած գազաններուն մէջ : Պարկեշտ մարդու մը սիրտը ինչպէ՞ս կրնայ հրճուիլ տեսնելով հազարաւոր դիակներ փռուած փողոցներուն մէջ. դիակներ՝ ծերերու, երիտասարդներու, կիներու եւ երեխաներու. դիակներ՝ ծակծրկուած զնդակներով. դիակներ՝ որոնք սկսած են նեխիլ, լճացած արեան փոսերուն մէջ : Դիտել այդ դիակները առանց դուրսի զգացումի, այդ կը նշանակէ ծափահարել այդ գազաններու սարսափելի ոճիրները : Մայիս 24-ին ես տեսայ 8 կոմունարներու զնդակահարումը : Ոճրագործ էին անոնք... դատուեցա՞ն անոնք... ապացուցուեցա՞ւ անոնց ոճիրը... եթէ ինձ ընկերացող վերսայլցի սպան տեսնէր իմ հողիս մէջ ոռնացող ցասումի փոթորիկը, անտարակոյս ես ալ զոհը կը դառնայի այդ գազանին : Ես ուղեցի հեռանալ այդ դժոխային փողոցներէն... բայց ամէն տեղ նոյն փռուած դիակները, նոյն արիւնը, նոյն դարչահոտութիւնը, նոյն ծուխը, նոյն հրդեհումը... եւ ի՞նչ անբերեակայելի բան... : Ահա երզի մը ձայնը կը հասնի ահանջիս. —

- «Ո՞վ բռնակալ, ահա բարձրացեր ես,
- Գահիդ վրայ հպարտ՝ բազմեր ես.
- Այն արիւնը, զոր դուն
- Որպէս կատղած անասուն՝
- Թափել տուիր
- Անկարեկիր՝
- Լճեր է կազմեր... :
- Այժմ վար իջիր,

Խմէ այդ արիւնը կարմիր... :

Խմէ ու զինովցիր»... :

Վերջին բառերուն յաջորդեց կոչ մը. — «Կեցցէ՛ կոմունան»... : Հրացանի երկու-երեք պայթիւններ, ու ձայնը մարեցաւ... :

Թիէրի նպատակն էր ո՛չ միայն յեղափոխականները բնաջնջել, այլեւ յեղափոխութեան գաղափարը արմատախիլ ընել սերունդներու մտքին մէջէն. ատոր համար ան հրաման ըրած էր չինայել ո՛չ ոքի. ո՛չ կռուողին, ո՛չ անձնատուր եղողին, ո՛չ ծերին, ո՛չ հիւանդին, ո՛չ յղի կնոջ եւ ոչ ալ երեխային : Իսկ յեղափոխականները զիտէին այդ այդ իսկ պատճառով՝ անոնք կը նախընտրէին հերոսի նման կռուիլ ու հերոսի մահով մեռնիլ : Եւ պէտք է ըսել թէ կոմունարները իրական հերոսներ էին :

Ռիկոլը մնացեր էր միս մինակ, բայց նոյն մարդն էր ան. հըպարտ, ինքնապատահ ու աննահանջ : Անիկա նախ զնաց Պանթէոն, պատնէշներու վրայ կռուողներուն հրահանգ տալու : Պատնէշները լեցուած էին դիակներով : Ուղուեցաւ դէպի Գէյ-Լուսսակ փողոցը : Հոն սենեակ մը վարձեց կեղծ անունով : Վերսայլցիները նոյն ատեն կը մտնէին այդ փողոցը, անոնցմէ մին ճանչցեր էր զինքը : Ռիկոլ, այդ սենեակին մէջ գտաւ իր զինակից մէկ ընկերը՝ Սլոմը : «Սպասէ հոս, — ըսաւ անոր Ռիկոլը, — Վերսայլցիները զիս կը հետապնդեն. եթէ անոնք քեզ ինձ հետ տեսնեն, քեզ ալ կը սպաննեն. դո՛ւն պիտի ապրիս» : Այս ըսելով վար իջաւ : Զինուորները մտած էին ներս եւ լեցուած էին սրահին մէջ : «Զիս կը փնտռէք, — ըսաւ անոնց, — ահա ստիկ ես եմ, Ռատլ Ռիկոլը» : Զինուորները յարձակեցան անոր վրայ ու սկսան հարուածել : Ենթասպայ մը քաշեց ատրճանակը եւ իրարու ետեւ կրակեց : Ռիկոլ ինկաւ գոչելով. — «Կեցցէ՛ կոմունան» : Ենթասպան դարձեալ կրակեց անոր անկենդան մարմինին : «Գնդահահարեցինք, որովհետեւ փախչիլ փորձեց, — ըսաւ ան, — սասնկ մարդիկ համբերութիւն չունին ներկայանալու պատերազմական ատեանին» : Ինչքա՞ն ասպետական չքմեղանք :

Զինուորները քաշեցին Ռիկոլի դիակը ու նետեցին փողոցին ճիշդ մէջտեղը՝ նախկին մատեմատիկայի փրոֆէսորի տան պատուհանին տակ : Երջակայքի կանայք յարձակեցան մեռնողի դիակին վրայ անլուր նախատինքներով. հանեցին անոր կօշիկները, պատուեցին հագուստները եւ զայն բոլորովին մերկ՝ ձգեցին փողոցին մէջ, ուր մնաց երկու օր :

Ֆէրրէն անցաւ Ռիկոլի տեղը. ան եղաւ յեղափոխական դատա-

խաղ: Տակաւին կոմունարներու ազդեցութեան շրջանակներուն մէջ զերի բնուած լրտեսներ ու հակայեղափոխականներ կային. անոնց մէջ էր յայտնի մատնիչ Վէյսսէտը: Ֆէրրէն, առանց ժամանակ կորսնցնելու՝ նախ իր ձեռքով սպաննեց Վէյսսէտը եւ անոր դիակը նետեց Սէն գետը, յետոյ՝ զնդակահարել տուաւ միւսները: Ապա կրակի տուին Հոթէլ ար Վիլը եւ կոմունարները ցրուեցան՝ ամէն մէկը կռուելով մեռնելու պատրաստակամութեամբ: Դէլէկլեուզը մէկն էր անոնցմէ, որ կը քալէր դիակներու եւ տեղացող զնդակներու մէջէն: Կռիւի վերջին ժամը: Սպառեցան իր ատրճանակի զնդակները: Ինկաւ: Իր դիակը 3 օր վերջը դտնուեցաւ:

Ռանվէ, որ Բերվիլի 19-րդ թաղամասի յեղափոխական առաջնորդը եղեր էր, հրապարակեց վերջին կոչը. — «Մահու եւ կեանք ժամը. դիմադրել մինչեւ վերջին շունչը եւ դիմադրելով մեռնիլ... կեցցէ՛ կոմունան»:

Բայց այդ վերջին փորձը աւելի եղերական եղաւ. կոտորուեցան ամէնքը. դիակներ, դիակներ, դիակներ:

Ամենավերջին կռիւը տեղի ունեցաւ Փէր Լա Շէզի դերեզմանատան մէջ, Ֆէրրէյի ղեկավարութեամբ: Հարիւր քառասունեօթը կոմունարներ զնդակահարուեցան եւ անոնց դիակները անթաղ մնացին օրերով:

Մէկ շաբթուան մէջ 20 հազար հոգի զնդակահարուեցան եւ ասով վերջացաւ Փարիզի կոմունայի պատմական ողբերգութիւնը. — Մայիս 28, 1871...:

ԹԻԷՐԻ ՀԱՍՏԱՏԱԾ ԿԱՐԳ ՈՒ ՍԱՐԳԸ

Երբ Փէր Լա Շէզի դերեզմանատան մէջ վերջին ժամուն կոմունարները ինկան հրացանազարի՝ Փարիզը բնական աղէտէն զարնուած քաղաքի մը կերպարանքն ունէր: Գալարուելով բարձրացող ճննճերահոտ ծուխը ծածկեր էր հրդեհուած տունները: Արեան լճակներ, քանդուած փողոցներ, զնդակներով ծածկուած դիակներ, աւերուած պատնէշներ եւ աղբակոյտեր: Հրաման ելած էր որ բոլոր զէնքերը յանձնուին եւ Մայիս 29-ի առաւօտուն զիզուած հրացաններ կ'երեւնային փողոցներուն մէջ, ոչ ոք զիտէր ո՞ր տեղէն:

Քաղաքի արեւելեան կողմը մութ էր ու կնքուած: Լուսութեան մէջ միայն զինուած պահակներ կը շրջէին, որոնց համար տրուած էր տեսնուած կասկածելին զնդակահարել:

Բայց արեւմտեան կողմը սկսած էր քաղաքի «բնականոն» կեանքը: Փողոցները լուսաւորուած էին, բացուած էին քաֆէները, ուր Յունիս 3-ին, դարձեալ կը լսուէին խնդուքի ու երգի ձայներ:

Փարիզը մնացեր էր պատերազմական դրութեան մէջ. բաժնրւած՝ չորս զինուորական թաղամասերու: Փութանակի մահապատիժը տակաւին օրինական: Լէտմիօ, քաղաքի զինուորական հրամանատարը, հրաման ըրած էր որ այն տունները՝ ուրկէ հրացան արձակուած էին, խուզարկութեան ենթարկուին եւ բնակիչները զնդակահարուին: Արգիլուած էին ժողովրդական հաւաքոյթները: Արգիլուած էր քարիւղի վաճառումը: Միայն արտօնեալ թերթերը կրնային ծախուիլ փողոցներուն մէջ: Թափառող կիները արձանագրուելու էին որպէս պոռնիկ:

Զրպարտութեան առջեւ ո՛չ ոք մպահով կը զգար ինքզինքը: Մէկը եթէ մի քանի կասկածելիներ ներկայացնէր կառավարութեան կը վարձատրուէր:

Լրտեսները կը վխտային ամենուրեք: Ամէն ոք թէ՛ կասկածող էր եւ միւս կողմէն՝ կասկածելի: Ծառեր սորված էին շարք մը կասկածելիներու անունները գրել ու զրկել ոստիկանութեան: Մայիս 30-էն 13 Յունիս, 399,825 ամբաստանագրեր մտան ոստիկանութեան գրասենեակը, մեծ մասով անստորագիր: Մարդիկը վտանգաւոր անձերուն անունները նշանակեր՝ բայց իրենց անունը ամբաստանագրին տակ չէին ստորագրեր:

Զինուորական մարմիններու առանց այլեւայլի մասսայական ջարդարարութիւնները կը շարունակէին: Լա Ռոզէտի մէջ երկու օրուայ ընթացքին 1900 հոգի զնդակահարեցին, իսկ Մադասի մէջ՝ 400 հոգի: Արեան վտակներ կը հոսէին դէպի Սէն գետը:

Վերսայլի բանտերը լեցուած էին բանտարկեալներով: Թիէր, 20,000 բանտարկեալներ լեցուց հին նաւերու մէջ եւ զանոնք զրկեց Ալճերիա: Ճամբան 1179 բանտարկեալներ մեռան: Բայց դեռ կային 36,000 բանտարկեալներ, որոնք դատուելու էին...: Թիէր, «այս անզգամներուն համար ժամանակ վատնելու չէ», ըսաւ եւ հրամայեց բոլորը բնաջնջել եւ խմբովին փոսերու մէջ թաղել:

Փարիզի բանտերը նոյնպէս խճողուած՝ վերածուած էին դրժոխքի: Մասնաւորապէս Սատորի կայարանը, որ բանտի վերածուած էր, ուր 1300 բանտարկեալներ կային, մեծ մասով կիներ: Մասսայական կոտորած հոս՝ ինչպէս նաեւ միւս բանտերուն մէջ:

Բայց այս խողխողուած մարդոց ու կիներուն համար գերեզման չկար. տասնեակներով փոսերուն մէջ կը լեցնէին ու կը թաղէին: Տեղ տեղ դիակները խոր չէին թաղուիլ ու բաց կը մնային, ու արեւուն տաքութեան առջեւ կ'ուռէին, կընեխէին: Գարշահոտութեան հետ ընկերացան միլիոնաւոր թունաւոր ճանճեր: — «Այս զգուելի էակներու դիակները աւելի վտանգաւոր են քան ինչ որ էին ապստամբները», ըսաւ Թիէր եւ հրաման ըրաւ մաքրագործումի, որովհետեւ

համաճարակի վախ կար: Գերեզմանոցներուն մէջ խորունկ փոսեր փորեցին ու հոն լեցուցին դիակները, բայց երբ տեսան որ ատիկա շատ ժամանակ կ'անէր եւ երկար աշխատանք կը պահանջէր, իւրտա Շամունտի վրայ հսկայ խարոյկ մը պատրաստեցին ու սկսան դիակները վառել...: Օրերով եւ շաբաթներով դարչահոտ ծուխը ծածկեր էր Փարիզի արեւելեան կողմը:

Նոյն տարուայ (1871) Սեպտեմբերին, Մարքսը կը գրէր. — «Ո՛չ խաղաղութիւն, ո՛չ ալ զինադադար կարելի էր կնքել Ֆրանսայի դործաւորներուն եւ անոնց արտագրանքը իւրացնողներուն միջեւ: Ոճրագործ զինուորականութեան երկաթէ ձեռքը կրնայ ժամանակի մը համար լուծի տակ պահել ճնշուած դասակարգը: Բայց պատերազմը դարձեալ պիտի պայթի, պիտի պայթի յաջորդաբար եւ տարակոյս չկայ թէ վերջի վերջոյ ո՛վ պիտի յաղթէ. յափշտակող փոքրամասնութիւնը, թէ աշխատաւոր մեծամասնութիւնը: Մէկ բան պարզ է այժմ, Ֆրանսական բանուորութիւնը ժամանակակից պրոլետարիատի յառաջապահն է»:

ՄԱՐՔՍԸ ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Միջազգայնականը անմիջական մասնակցութիւն չունէր Մարտ 18-ի ապստամբութեան նախապատրաստութեան գործին մէջ: Բայց պէտք է ըսել որ թէ՛ Մարտ 18-ի եւ թէ՛ Փարիզի Կոմունայի ամբողջ գործունէութիւնը կարելի չէ բաժնել Միջազգայնականի գործունէութենէն: Ինտերնացիոնալը նախքան Կոմունայի կազմութիւնը, տարիներու ընթացքին՝ աշխատած էր կազմակերպելու բանուորական շարժումը եւ զայն հասցնելու պատշաճ բարձրութեան: Այդ իմաստով՝ Ինտերնացիոնալը նախապատրաստեր էր այս գետինը, որուն վրայ Հնարաւոր եղաւ Կոմունան ստեղծելու գործը: Մարքսը Փարիզեան Կոմունան զնահատեր է որպէս համաշխարհային պատմական նշանակութիւն ունեցող փաստ:

Բանուոր դասակարգի հերոսութիւնը, յեղափոխութեան հանդէպ անոր աննկուն հաւատարմութիւնը հիացում պատճառած էին Մարքսին: Մարքսը հետեւեալ տողերը գրած է Կոմունարներու մասին. — «Ինչպիսի՞ ճկունութեան, ինչպիսի՞ պատմական նախաձեռնութեան, ինչպիսի՞ անձնագոհութեան ընդունակութիւն ունին այդ Փարիզցիները: Վեց ամիս տեւող սովէն ու տանջանքէն յետոյ՝ որոնք աւելի ներքին դաւաճանութեան արդիւնք էին, քան արտաքին թշնամիի գործ, անոնք կ'ապստամբէին Պրուսիական սուրիններու առջեւ, կարծես թէ Ֆրանսայի ու Գերմանիոյ միջեւ պատերազմ չկար, կարծես թէ թշնամին կանգնած չէր Փարիզի պարիսպներու մօտ:

Պատմութիւնը տակաւին նմանօրինակ հերոսութեան դէպք մը արձանագրած չէ»:

Բանուոր դասակարգի հերոսութեամբ հիացած՝ Մարքսը նոյն ատեն խոր վերլուծման ենթարկած է Փարիզեան Կոմունայի հարուստ փորձը: Այդ փորձէն ան դասեր հանած է համաշխարհային բանուորական շարժման համար: Հիմնական կէտը, որուն վրայ ուշադրութիւն դարձուցեր է Մարքսը, այն էր, որ Կոմունան բանուոր դասակարգի կառավարութիւնն էր: Կոմունան այդ նպատակակէտն էր, որուն համար բանուորները կը կուռէին կապիտալիստներուն դէմ: Փարիզի բանուորները իրենց հերոսական գործով փաստեցին այն իրողութիւնը, որ բանուոր դասակարգի ազատագրումը անհնարին բան է, երբ բանուորութիւնը չէ գրաւած պետական իշխանութիւնը եւ անոր չէ տուած իր ուզած քաղաքական ձեւը»:

«Կոմունայի զաղտնիքը այն էր որ, — կը գրէ Մարքսը, — ան արդիւնքն էր արտադրող դասակարգի եւ շահագործող դասակարգի միջեւ մղուած պայքարին. արդէն վաղուց ի վեր ձգտում մը կար փնտոելու քաղաքական այն ձեւը, որ կրնար զլուխ հանել աշխատանքի տնտեսական ազատագրումը: Կոմունան կը ցանկար ոչնչացնել դասակարգային սեփականութիւնը, որով աշխատաւորներու ստեղծած հարստութիւնները կը կուտակուին պարագլխներու մօտ: Կոմունան կ'ուզէր սեփականազրկողները սեփականազրկումի ենթարկել: Պետական ապարատը փշրել — ահա թէ ինչն է նախապայմանը Եւրոպայի ցամաքամասին մէջ տեղի ունեցող ամէն մէկ իսկական ժողովրդական յեղափոխութեան համար: Ֆրանսական յեղափոխութեան մօտալուտ վերելքը այն ըլլալու է, որ ռազմական մեքենան — բիւրոկրատիկ ռազմական մեքենան — ո՛չ թէ մէկ ձեռքէն խլելու եւ յանձնելու է միւսին, այլ այդ մեքենան պէտք է ջարդել ու փշրել: Իսկ եւ իսկ այդպէս էր մեր Ֆրանսացի հերոս ընկերներու կատարած գործը»:

Հին պետական ապարատի այդ կործանումը Կոմունան կատարեց հետեւեալ կերպով. — Ան ոչնչացուց հին զօրքը եւ ոստիկանութիւնը եւ որդեգրեց ժողովրդական միլիցիայի դրութիւնը: Պաշտօնեաներն ու դատաւորները ընտրովի էին. պարտականութեան թերացման պարագային, անոնք պաշտօնանկ կ'ըլլային. զանոնք կը փոխարինէին նոր ընտրուածներ: Եկեղեցին անջատուած էր պետութենէն եւ եկեղեցական կալուածները բռնադրաւուած: Փարիզի Կոմունայի փորձի հիման վրայ Մարքսը եկաւ այն եզրակացութեան, որ Կոմունան՝ որպէս պրոլետարիատի տիրապետութեան քաղաքական ձեւ՝ պէտք է ըլլար ո՛չ թէ պարլամենտական հիմնարկութիւն, այլ գործարար կոլլեգիա մը (համաժողով) որ իր մէջ կը միացնէ թէ՛ օրէնսդիր եւ թէ՛ գործադիր իշխանութիւնը: «Կոմունայի հաստատած կար-

զերը ո՛չ թէ կը քայքայէին, այլ, ընդհակառակը, կը կազմակերպէին եւ կ'ուժեղացնէին ազգութեան միասնութիւնը: Բայց այդ իմաստով հանդիսանալով ազգային կառավարութիւն, Կոմունան նոյն ատեն միջազգային էր բառին բուն իմաստով: Կոմունան Ծրանսան կը միացնէր ամբողջ աշխարհի բանուորներուն հետ»:

Մասնանշելով Կոմունայի այդ ծառայութիւնները՝ Մարքսը կը քննէր նաեւ անոր սխալները: Այդ սխալներու կարգին ամենէն առաջ պէտք է նշել այն, որ Կոմունան իր թշնամիներու վերաբերմամբ շատ մեծահոգի էր եւ համբերատար, անվճռական եւ խղճահար. ան չուզեց քաղաքացիական կռիւ սկսիլ, «կարծես թէ հրէշային ճիւղա թիէրը արդէն այդ կռիւը չէր սկսեր, երբ կը փորձէր զինաթափ ընել Փարիզը»: «Կեդրոնական Կոմիտէն ճակատագրական սխալ մը ըրաւ, — կը գրէ Մարքսը. — Կոմիտէն պէտք է առանց ժամանակ վատնելու յարձակէր Վերսայլի վրայ. այդ ատեն Վերսայլը բաւականաչափ միջոցներ չունէր ինքզինքը պաշտպանելու համար. ասով Կոմունան մի անգամ ընդ միշտ՝ վերջ կը դնէր թիէրի եւ անոր կալուածատիրական ժողովի դաւերուն»: Մարքսը նոյնպէս, կը տեսնէր որ Կեդրոնական Կոմիտէն չափազանց շուտ հրաժարեցաւ իր լիազօրութիւններէն՝ իր տեղը Կոմունային զիջելու նպատակով: Ապստամբութիւնը արագութիւն, վճռականութիւն եւ միասնականութիւն կը պահանջէ, այնպէս որ այս ժամանակ սխալ էր ընտրութիւններով զբաղիլը, այլ պէտք էր արագ շարժիլ՝ թշնամիին վրայ յարձակում գործելու համար: Այս բոլորին հետ միասին բանուորական Փարիզը իր Կոմունայով, պէտք է մեծարուի՝ որպէս նոր աշխարհի փառազարդ նախակարապետը: Անոր նահատակները յուշարձան են կանգնեցուցեր ամբողջ աշխարհի բանուորներու վեհ սրտին մէջ: Իսկ անոր դահլիճները՝ պատմութիւնը արդէն դամաճ է խայտառակութեան սիւնին, ուրկէ զանոնք չեն կրնար ազատել նոյնիսկ՝ տէրտէրներու ազօթքները:

ԼԵՆԻՆԸ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Փարիզի Կոմունայի փորձին շատ մեծ նշանակութիւն կուտար Լենինը: Ինչպէս Մարքսը, այնպէս ալ Լենինը կ'ուսումնասիրէր այդ փորձը ոչ միայն որպէս հետազօտող, այլ որպէս գործօն յեղափոխական, որ պէտք է իր հանած եղբակացութիւնները գործածութեան դնէ բանուոր դասակարգի մղած պայքարի նոր ու գատորոշուած պայմաններու մէջ: Եւ պէտք է ըսել, մասնաւորապէս Լենինը փայլուն կերպով գործածեց Փարիզեան Կոմունայի տուած դասերը եւ անոնցմով կրցաւ ուսական յեղափոխութեան յաղթանակը շահիլ եւ ապահովել անոր տեւականութիւնը:

Որո՞նք են այն եղբակացութիւնները, զորս Լենինը հանեց Փարիզի Կոմունայի փորձի ուսումնասիրութեան հիման վրայ:

Հիմնական եղբակացութիւնը կը պատկանի պրոլետարիատի զիկտատուրայի խնդրին: Լենինը փաստեց որ սոսկ բուրժուազիան տապալել դեռ չի նշանակեր կոմունիստական կարգեր հաստատել: Բուրժուական հասարակութեան կործանումին պէտք է հետեւի անցողիկ տեւական ժամանակաշրջան մը, որու դասակարգը պէտք է յեղափոխական մեթոտներով, քայլ առ քայլ, քանդէ կապիտալիստական հասարակարգի արմատները եւ կազմէ նոր՝ կոմունիստական հասարակարգ: Իսկ այդ գործը կարող է կատարել միայն ու միայն պրոլետարական զիկտատուրան:

«Յառաջընթացումը, այսինքն դէպի կոմունիզմ տանող դարդացումը — այսպէս կ'ըսէ Լենին — կ'ընթանայ պրոլետարիատի զիկտատուրայի ուղիով եւ ուրիշ կերպ, ուրիշ ուղիով չի կրնար ընթանալ»:

Փարիզեան Կոմունան, Լենինի տեսութեամբ, անցողիկ շրջանի պետութեան նոր տիպարն էր: — «Մենք կանգնած ենք Փարիզեան Կոմունայի ուսերուն վրայ, — կ'ըսէ Լենին, — այդ միտքը պարզելու համար պէտք է ցոյց տալ այն ընդհանուր գիծը, որ Սորհրդային իշխանութիւնը կը կապէ Կոմունայի հետ»: Այդ ընդհանուր գիծը, Լենինի տեսակէտով կը ցուցնէ հետեւեալ կէտերը. 1) Պետական իշխանութեան բռնի գրաւումը պրոլետարիատի կողմէն, 2) Ոստիկանութիւն ու զօրքը վերցնել եւ անոնց տեղը դնել ամբողջ ժողովուրդի զինուածութիւնը, եւ 3) Արտօնեալ դասու պաշտօնեաները հեռացնել եւ անոնց տեղը դնել բանուոր դասակարգի անձնուէր ծառայողները: Այդ բոլորը անցողիկ շրջանի պրոլետարական պետութեան անհրաժեշտ գործերն են: Սովետները ըստ Լենինի, կը վերարտադրեն պետութեան այն տիպարը, ինչ որ մշակեր է Փարիզեան Կոմունան: «Սորհրդային իշխանութիւնը պրոլետարիատի զիկտատուրայի զարգացման երկրորդ համաշխարհային պատմական շրջանն է»:

ԱՆՏԵՍՈՒԱԾ ՏԵՍԱԿԷՏ ՄԸ

Մարքս, Փարիզի Կոմունայի ձախողանքը կը վերադրէ սխալ ռազմավարութեան, այսինքն այն՝ որ Կեդրոնական Կոմիտէն փոխանակ ընտրութիւններով զբաղելու, յարձակելու էր Վերսայլի վրայ երբ թիէրը տակաւին հաւաքած չէր իր ուժերը: Լենինն ալ դրեթէ նոյն միտքերը կ'արտայայտէ: Անտարակոյս, կշռադատ վերլուծումով քննարկուած այդ անառարկելի սխալը պատճառ եղաւ որ Փարիզի Կոմունան այնքան շուտ վերջանար: Բայց մենք պահ մը ենթա-

դրենք թէ՛ Կոմունան ճիշդ պատե՛հ առթին՝ յարձակում գործէր ու Վերսայլի կառավարութիւնը տապալէր, պիտի կրնա՞ր յաւերժացնել իր գոյութիւնը, պիտի կրնա՞ր կոմունիստական հասարակարգ հաստատել Ֆրանսայի մէջ: Այս հարցումին կարելի չէ հաստատական պատասխան տալ եւ այդ՝ ո՛չ միայն անոր համար, որ Ֆրանսան չըջապատող պետութիւնները կապիտալիստական պետութիւններ էին, որոնք անխուսափելիօրէն պիտի յարձակէին Ֆրանսայի վրայ տապալելու անոր վտանգաւոր ռեժիմը, որ կրնար նոյն հրդեհը յառաջացնել նաեւ իրենց երկրին մէջ, այլեւ անոր համար, որ կապիտալիզմը գերեզմանող պրոլետարիատը տակաւին այնքան զարգացած չէր որ բուրժուական պետական ապարատը քանդել, փոշիացնելէ յետոյ՝ հաստատէր ու յաւերժացնէր իր գիկտատուրան: Այստեղ ուրեմն, անտեսուած կէտ մը կայ. կարելոր կէտ մը: Ի՞նչ է ան: Այդ՝ մարդկային բնութիւնն է. մարդկային կազմախօսական դրութեան մէջ հարիւրաւոր դարերու ընթացքին բոյն դրած ու արմատացած այն ուժեղ զրգիւրը, որ մարդուն կը ստիպէ ունենալ իր անհատական սեփականութիւնը, իր տունը, իր արտը, իր կալուածը: Գերետիրական, աւատապետական եւ կապիտալիստական դարաշրջանները իրարու կապող միագոյն հանգոյցը անհատական սեփականատիրութիւնն է, որ կաղապարեր է նոյն ուղղութեան հետեւող մարդկային բնութիւնը: Ռուս բոլշեւիկները Փարիզի Կոմունայի սխալները չգործեցին, բայց այսօր, յիսուն տարի անցնելէն վերջն իսկ, տակաւին կոմունիստական հասարակարգ հաստատուած չէ խորհրդային երկիրներուն մէջ. հաստատուածը կոմունիստական սկզբունքներու հետեւող ռեժիմ մըն է, խորհրդային ռեժիմը՝ որ կապիտալիստական հակադիր եզրը կը ներկայացնէ, ամուր, հաստատուն, անպարտելի. ատոր ըսելիք չըկայ, բայց խորհրդային քաղաքացիները — անշուշտ բացառութիւններ կան, որոնք իրական կոմունիստներ են եւ անոնց անեսական նրբիրուածութեան ու հսկողութեան շնորհիւ է որ այդ ռեժիմը կանգուն մնացեր է ու կը զարգանայ — մեծ մասով տակաւին «ԻՄՍ»ի ձգտումը փոխած չեն. «Ես»... «Իմս»... «ես»... «իմս»...:

Տեսանք, այո՛, տեսանք կարգ մը խորհրդային պատասխանատու մարդիկ, որոնք պաշտօնով զրկուած էին կապիտալիստական երկիրները եւ յանկարծ հրաժարեցան իրենց պաշտօնէն եւ որպէս բռնութեան ռեժիմէն ազատուած գերիներ՝ քաղաքական աքսորականի յատուկ ապահովութիւն խնդրեցին պատկան կապիտալիստական պետութեանէն՝ ինչ որ սիրով ստացան անշուշտ...: Այդ մարդիկը ինչո՞ւ այդ քայլը առին: Այստեղ դարձեալ երեւան կուզայ մարդկային բնութեան դրդիչ դերը: Մարդիկը կապիտալիստական երկրին մէջ տեսան ճոխութիւն, «ազատութիւն», վայելք, հարստանալու ան-

սահման պատեհութիւն: Ի՞նչ կար իրենց խորհրդային երկրին մէջ. ընդհանուրի շահուն եւ ընդհանրական յառաջգիժութեան սեւեռեալ նպատակ եւ երկաթեայ կարգապահութիւն. ու մարդկային բնութիւնը՝ այդ թունաւոր օձը, զիրենք առաջնորդեց դասալիքի ճամբան:

1947-ին Ամերիկահայերէն 250 հոգի՝ որպէս հայրենադարձ՝ խանդավառութեամբ մեկնեցան Հայաստան: Հոթէլ Դիպլոմատի մէջ ինչպիսի հրաշունչ ճառեր արտասանեցին անոնք: — «Մենք կ'երթանք մեր կեանքի վերջին օրերը մեր հայրենիքին մէջ անցնելու եւ հօն մեռնելու: Հոգ չէ թէ մեզ փողոցներուն մէջ պառկեցնեն, մենք աւելի երջանիկ պիտի զգանք ինքզինքնիս, քան թէ այս կապիտալիստական երկրին մէջ»: Հայաստանի կառավարութիւնը ո՛չ միայն զիրենք փողոցները չթողուց, այլեւ տեղացի աշխատաւորները թողուց հին տուներու մէջ՝ սպասողական վիճակով եւ իրենց տրամադրեց նոր, հանդստաւէտ բնակարան. եւ որովհետեւ անոնք Ամերիկայի մէջ բանուորական կեանք ապրած էին, դանոնք կապեց հանգստեան թոշակի: Բայց այս մարդոցմէ ոմանք, 17 տարի հայ աշխատաւորութեան հացը ուտելէն յետոյ՝ զժգոհեցան, դանդատեցան, ձգեցին իրենց հայրենիքը ու վերադարձան Ամերիկա: Ինչո՞ւ...: Այս հարցման պատասխանը դարձեալ նոյնն է. — Մարդկային բնութիւնը: Այս մարդիկը սա վերջին տարիներուն երբ տեսան թէ Ամերիկահայերը ամէն տարի տասնեակներով օդանաւերով կը թռչին, որպէս պատուարժան թուրիստ Հայաստան կ'այցելեն գրպաննին ուռած տղարներով, ահա մարդկային բնութեան խաճնող ախտան կը մխուի իրենց միտին մէջ: «Ինչո՞ւ եկանք հոս: Եթէ մնայինք Ամերիկայի մէջ, մենք ալ ասոնց նման կը հարստանայինք, մենք ալ որպէս թուրիստ կուզայինք, կը տեսնէինք մեր հայրենիքը, անոնց պէս մենք ալ գովեստով կը խօսէինք Հայաստանի շինարարութեանց մասին, քանի որ հօն պիտի չմնայինք, ատանկով կը յարգուէինք, կը պատուրուէինք ու կը վերադառնայինք Ամերիկա եւ հօն ալ որպէս հայրենասէր՝ բեմերուն վրայ կը ծափահարուէինք: Հիմա կ'ի՞նչ մնացեր է մեզի. մուրացկանի դեր: Մենք այժմ Ամերիկայի մեր բարեկամներուն պիտի դրենք, պիտի խնդրենք որ մեզի նուէր մը զրկեն»: Եւ այս դասալիքները երբ Ամերիկա կը վերադառնան, բոլորովին մոռցած 17 տարի առաջ իրենց խանդավառ արտայայտութիւնները, ինչպիսի՞ զգուելի պատկերներով կը ներկայացնեն զիրենք հիւրընկալող մեր հայրենիքը: Այստեղ դարձեալ մարդկային բնութիւնն է, որուն առջեւ նահանջեր է դադափարը:

Փարիզի Կոմունան ձախողեցաւ, որովհետեւ Ֆրանսացիին մարդկային բնութիւնը չէր փոխուած. անոր մէջ սեփականատէրը դառնալու ձգտումը աւելի ուժեղ էր քան թէ հաւասարութեան վերա-

ցական դադափարը: Փարիզի Կոմունան եթէ վերսայլը գրաւէր իսկ, դուցէ մի քանի տարուան համար երկար կեանք ունենար, բայց դարձեալ պիտի տապալուէր, որովհետեւ Ֆրանսայի ժողովուրդը Կոմունայի յաղթանակը ծափահարելէ վերջ երբ տեսնէր որ այդ Կոմունան իմսը կը ջնջէ ու անոր տեղը կը դնէ «մերիմը», այդ «մերիմը» շատ խորթ պիտի հնչէր իր ականջին: Ան պիտի չսիրէր հաշտուիլ այդ դադափարին հետ: Ատոր համար բնաւ տարօրինակ չէ, որ հին կարգերու ներքեւ բոլորովին ընչազուրկ բանուորը, որ իր ամբողջ հողիով դժգոհ է բայց չի համարձակիր ո՛չ զանդատիլ՝ ո՛չ ալ ընդլզիլ, յեղափոխութեան ատեն կը դառնայ պահանջկոտ ու չի զոհանար տրուածով. ան չի սիրեր համբերել որպէսզի իրերը զարգանան եւ «իմս»ը նոյնանայ «Մերիմ»ին հետ:

Մարդկային բնութիւն, այդ ապսխարտ բան մը չէ, այլ մարդուս ոսկորներուն ծուծին մէջ մտած մղիչ՝ գործօն ուժ է: Զուր տեղը չէ որ բուրժուա տեսարանները սոցիալիզմը անիրականացալի կը գտնեն, որովհետեւ կը դաւանին թէ մարդկային բնութիւնը կայ, ան յաւիտենական է ու անփոփոխ:

Այո՛. մարդկային բնութիւնը կայ, դարերէ ի վեր կազմուած ու արմատացած է մարդուն մէջ. այս կէտը անհերքելի է. այստեղ կը համաձայնինք բուրժուա տեսարաններուն հետ, բայց չենք համաձայնիր այն մտքին հետ, որ այդ մարդկային բնութիւն կոչուածը յաւիտենական է եւ անփոփոխ: Մարդկային բնութիւնը արդիւնքն է միջավայրի անտեսական, ընկերային անհաւասար պայմաններուն. երբ փոխուին այդ պայմանները, կը փոխուի նաեւ մարդկային բնութիւնը: Բայց պէտք է զիտնալ որ այդ փոփոխութիւնը քանի մը օրերու, կամ քանի մը տարիներու գործը չէ: Մարդկային բնութիւնը հագուստ մը չէ, զոր մարդիկ կարենան փոխել մէկ օրէն միւսը. այդ մարդուս ուղեղին մէջ կազմուած մասնայատուկ օրգանիզմի մը գործն է. այդ օրգանիզմն է որ պիտի փոխուի. իսկ այդ փոփոխութիւնը տեղի կ'ունենայ յաջորդող սերունդներու ընթացքին. միայն թէ պրոլետարական զիկատատուրան զիկ-զակ ճամբաներէ քալելու չէ. ան խտապահանջ ուսուցիչի մը նման լարուելու է ժողովուրդին հետ: Անիկա արուեստին, գիտութեան ու գրականութեան պիտի տայ զուտ պրոլետարական բնոյթ. ո՛չ մէկ շեղում, ուրիշ ո՛չ մէկ բաղադրութիւն: Որեւէ շեղում, որեւէ տեսակի հնոտի նիւթի խառնում՝ մարդոց հողերանութեան մէջ յետադարձ շարժում կը յառաջացնէ: Կ'անցնի մէկ սերունդ, անոր կը յաջորդէ երկրորդը, երկրորդին կը յաջորդէ երրորդ սերունդը, տակաւին մարդկային բնութիւնը կը շնչէ, կենդանութեան նշան ցոյ կուտայ. կուգայ չորրորդ սերունդը. մարդկային բնութիւնը հոգեվարքի մէջ է, ան այլեւս զրգոխչ ուժ չունի. կուգայ

հինգերորդ սերունդը, այս անգամ ան դարձած է հեղուկ ու լեցուած է կոմունիստական կաղապարին մէջ եւ կը ներկայացնէ նոր տեսակի մարդկային բնութիւն մը, որ այլեւս մարդուն թոյլ չի տար ըսելու ես, այլ՝ մենք: Եւ մարդը այս անգամ չըսեր՝ «իմս ըլլալու է», այլ բնական կարգով՝ «մերն է», պիտի ըսէ:

Տնտեսական ու քաղաքական յեղափոխութեան հետեւելու է մտքի յեղափոխութիւնը: Եւ այս հիմնական փոփոխութիւնը, որ դրերու քարացուցած մարդոց հողերանութիւնը կը հալեցնէ եւ նոր կաղապարի մէջ կը ձուլէ, կը պահանջէ սխտեմատիկ աշխատանք, համբերութիւն՝ առանց շեղումի, կարգապահութիւն՝ առանց ցնցող բռնութեան, միշտ շեշտել հինի թերիները՝ առանց յետադարձ քայլի, քննադատութիւն՝ առանց դատապարտութեան:

Մարդկային բնութիւնը փոխել... այդ կը նշանակէ մարդկային միտքին ու հողերանութեան վրայ հակադրող արտաքին ազդակները ամբողջապէս անհետացնել: Գործունէութեան այդ ճամբուն մէջ գրականութեան մարդը ամենէն կարեւորն է: Պրոլետարական գրականութիւնը պիտի ըլլայ զուարիւն, բիւրեղացած պրոլետարական գրականութիւն: Երբ վերցուած են ազգերն իրարմէ անջատող պարիսպները, — եւ այդ պարիսպները պիտի վերցուին, նոյն ձեւով չեն կրնար մնալ, ինչպէս քանդուելու վրայ են Սորհրդային Միութեան մէջի ազգերու պարիսպները — գրականութեան մէջ գործածուած լեզուն ճիւղը պիտի ըլլայ այն հաստարուն ծառին՝ որ Միջագգայնականութիւն կը կոչուի: Ասով ըսել չենք ուզեր թէ անցեալի արժէքները պէտք է անտեսել. ո՛չ երբեք. անցեալի արժէքները ամփոփուած ազգային թանգարանին մէջ, պիտի վերադնահատուին բաղադրական զիծով, ցոյց տալով անոնց դասակարգային բնոյթը: Ասով ազգային մշակոյթը կը զատորոշուի միայն իր լեզուական գոյնով, իր իմաստը, իր բովանդակութիւնը կը դառնայ միջազգային:

Ամէն ատեն յիշելու է Ամերիկեան մէկ ասացուածքը՝ որ կ'արտայայտէ գրամատիրական կարգերու հողերանութիւնը. — «Հայրեմասիրութիւնը սրիկաներու վերջին ապաստանարանն է: Այդ գոյնի ապաստանարանը պէտք է քանդել ու փոշիացնել՝ ընկերային յեղափոխութեան վերջնական յաղթանակը ապահովելու համար: Այն ատենն է, որ մարդկային բնութիւնը հիմնապէս փոխուած՝ եսի սեւ ու կարծր պատեանէն դուրս կուգայ ու կը դառնայ մասնիկը համամարդկային եսին:

ՎԵՐՋ Բ. ՄԱՍԻՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Մեր սոյն ուսումնասիրութեան այս Գ. Մասը կը բաղկանայ երեք գլուխներէ :

Առաջին գլուխը կ'ընդգրկէ դասակարգային պատմութեան այն շրջանը, որ կը սկսի 70-ական թուականներու վերջերքը եւ կը տեւէ մինչեւ 1914-ի իմպերիալիստական պատերազմի սկիզբը :

Երկրորդ գլուխը կ'ընդգրկէ բանուորական շարժման պատմութիւնը 1914-էն մինչեւ 1939 թուականը :

Այնտեղ դրուած է կապիտալիստական ընդհանուր ճգնաժամի շրջանը եւ համաշխարհային սոցիալիզմի ծնունդի պատկերաւորումը :

Երրորդ գլուխը կը ներկայացնէ կազմակերպուած բանուորութիւնը երկրորդ աշխարհամարտի վաղորդայնին՝ 1939-էն 1960 թուականը :

Աւելորդ է նշել, որ մենք ստիպուած ենք շատ հակիրճ նշումներով բաւարարուիլ եւ չմտնել մանրամասնութեանց մէջ :

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԾՐՋԱՆԸ

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՈՐՊԷՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՎԵՐՋԻՆ ԾՐՋԱՆԸ

ԺԹ. դարու վերջին քառորդին Եւրոպան ու Ամերիկան կապիտալիզմի զարգացման նոր փուլը մտան: «Ալգային» անտեսութիւններու արտադրողական ուժերը սկսան արագութեամբ աճիլ: Հսկայական չափերով մեծցաւ քարածուխի եւ երկաթի հայթայթումը, անագի ու պողպատի արտադրութիւնը: Տեխնիկան կը կատարելագործուէր աւելի ու աւելի աչքառու կերպով. երեւան կուզային նոր մեքենաներ, ելեքտրական մուրճեր, թուրքիններ, հսկայ մոթորներ եւ այլն: Վիթխարի չափերով տարածուեցաւ երկաթուղային ցանցը, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ աճեցաւ առեւտրական նաւատորմի թոներով որոշուող տարողութիւնը: Մանրութեան կեդրոնը արդիւնաբերական մէկ ճիւղէն անցաւ միւսին. հիւսուածեղէնի արդիւնաբերութիւնը՝ որուն վրայ մեծցաւ Անգլիոյ արդիւնաբերական կապիտալը, տեղի տուաւ ծանր ճարտարարուեստին:

Տեխնիկական յառաջդիմութեան եւ արդիւնաբերութեան աճման հետ միասին տեղի կ'ունենար արտադրութեան ու կապիտալի համակեդրոնացում: Մանր ձեռնարկութիւններ չկրնալով դիմանալ խոշոր ձեռնարկութեանց մրցումին, հետզհետէ կ'ոչնչանային: Արդիւնաբերական ասպարէզի ղեկավարները, որոնք տիրացեր էին տեխնիկայի նորագոյն միջոցներու եւ իրենց կապեր էին հազարաւոր բանուորական ձեռքեր՝ հիմներ էին վիթխարի ձեռնարկութիւններ:

Բաժնետիրական ընկերութիւնները, այդ նոր ժամանակի զաւակները, իրենց դործարանին մէջ անսահման կապիտալ կը կուտակէին: Արդիւնաբերութիւնը, առուտուրը, սակարանը, նոյնիսկ դիւզատնտեսութիւնը, երբեք իրենց արամադրութեան տակ այնպիսի միջոցներ չէին ունեցեր, ինչպէս ունեցան նորագոյն կապիտալիզմի այդ շրջանին: Փոխուեցան Պանքաներու դերն ու նշանակութիւնը: Պանքաները, իրենց արամադրութեան տակ շտեմնուած հսկայ զբամազըլուիս դիզելով սկսան սակարանին մէջ հեղինակաւոր դիրքի հասնիլ եւ վարկային ճանապարհով արդիւնաբերութեան տիրապետել: Նախապէս, եթէ պանքաները արդիւնաբերական ձեռնարկութիւններէն

հետու կանդնած էին, այժմ անոնք դրամատոնային միաւորումներ կազմելով՝ գործարաններու, երկաթուղիներու եւ հանքերու տէրերը կը դառնային: Պանքայի կապիտալը այսպիսով կը միանար արդիւնաբերականին հետ եւ կը կազմէր Ֆինանսական կապիտալը:

Նախկին անջատ անջատ գործող ձեռնարկութիւնները, արտադրութեան համակերպողական պրոցէսին մէջ մենատիրական միաւորումներ կազմելով երեւան եկան քրքրատներ, սէնտիֆաներ, կումբի-նատներ, եւ ասոնք սկսան մրցիլ իրարու դէմ:

19-րդ դարու վերջերը արդիւնաբերութեան վերելքի եւ 1900-1903-ի ճգնաժամէն յետոյ՝ մոնոպոլիստները գերագոյն նշանակու-թիւն ստացան, որոնք կապիտալիզմի զարգացման նոր դարապուր-բացին եւ տնտեսական նոր կեանքի հիմքը դարձան:

Մոնոպոլիստական միաւորներու աշխատանքը չէր սահմանա-փակուեր «ազգային պետութիւններու սահմաններուն մէջ»: Հայրենի-քի մէջ իրենց կապիտալները խոշոր շահոյթ չէին ապահովեր, ատոր համար անոնք սկսան նոր տեղեր փնտռել՝ յետամնաց ժողովուրդները շահագործելու համար: Այդ պատճառով Ասիոյ եւ Ափրիկէի մէջ գա-ղութային տիրապետութիւններ ձեռք բերելու խնդիրը բուրժուական պետութիւններու քաղաքականութեան ամենէն էական խնդիրներէն մէկը դարձաւ, իրերու բնական ընթացքի բերումով:

Մէկ երկու տասնամեակի ընթացքին՝ արդիւնաբերական կա-պիտալիզմը փոխուեցաւ մոնոպոլիստական կապիտալիզմի: Կապի-տալիզմի այս նոր ու վերջին փուլն է որ կը կոչուի իմպերիալիզմ:

Մոնոպոլիստական կապիտալիզմի բնոյթի առանձնայատկու-թիւններու բացատրութիւնը Լենինին կը պատկանի: Լենին, «Իմպե-րիալիզմը Որպէս Կապիտալիզմի Նորագոյն Էտապը» գրքին մէջ (դրո-ւած 1916-ին) ցոյց տուաւ որ իմպերիալիզմը նոյն ինքը՝ կապիտա-լիզմն է, զարգացման այն աստիճանին հասած կապիտալիզմը, երբ մոնոպոլներու եւ Ֆինանսական կապիտալի տիրապետութիւնը յայտ-նագործուեցաւ կապիտալի արտահանումով. այդ ատեն միջազգային թրքտաները ձեռնարկեցին աշխարհի բաժանումի գործին եւ խոշորա-գոյն կապիտալիստական երկիրներու միջեւ աշխարհի բաժանումը վերջացաւ: Լենինը, կապիտալիզմի նոր ձգտումները ուսումնասիրե-լով, այդ ձգտումներու զարգացման մէջ յայտնաբերեց հակասութիւն մը: Ան կը պարզէ, որ մէկ կողմէն կը յառաջանան աւելի ու աւելի կատարեալ տնտեսական ձեւեր, միւս կողմէն՝ նոյն պրոցէսը Ֆինան-սական կապիտալի հողին վրայ կը ստեղծէ Ֆինանսիստներու փոքրիկ խմբակներու տիրապետութիւն. այսինքն՝ սարկացնել եւ շահագոր-ծել մանր ու թույլ ազգերը հարուստ եւ ուժեղ ազգային պետութիւն-ներու միջոցով եւ բռնի կերպով վատթարացնել անոնց տեխնիկական

յառաջդիմութիւնը. ասիկա կապիտալիստական մոնոպոլիզացիայի անհրաժեշտ հետեւանքներէն մէկն է: Իր ժամանակին գործունեայ եւ եռանդուն դասակարգը կը վատասերուի եւ կ'ըլլայ պարագիտ, իսկ կապիտալիստական երկիրներէն մէկ քանին ուղղակի յետամնաց եր-կիրներու վաշխառուները կը դառնան: Նորագոյն կապիտալիզմը պա-րպիտացման կ'ենթարկուի: Մոնոպոլիստական կապիտալը ապրանք-ներու գիները բարձր պահելու նպատակով, արհեստականորէն կը պակսեցնէ արտադրութիւնը, կ'ոչնչացնէ արտադրողական արժէք-ները եւ չ'ուզեր նոր տեխնիկական գիւտեր գործարկել: Այսպիսով՝ կապիտալիզմի զարգացման նոր փուլը՝ իմպերիալիստականը՝ նոյն ատեն կը դառնայ վերջին հանգրուանը, ուրկէ իր տեղը պարտի գի-ջիլ սոցիալիզմին:

Իմպերիալիզմի շրջանը՝ լայնորէն զարգացած բուրժուական «ազատութիւն»ներու շրջանն է: Իմպերիալիստական պետութիւնը իւրացուցեր է գեմոկրատական անունը: Դեմոկրատիա կը նշանակէ ժողովրդապետութիւն. բայց բուրժուական նոր հասարակութեան պայմաններուն մէջ գեմոկրատիան դարձեր է գեմոկրատիա՝ տիրող դասակարգին համար միայն: Բուրժուական գեմոկրատիայի միջոցով Ֆինանսական կապիտալը պետութեան մէջ կ'իրադրծէ իր գիկտա-տուրան: Ատոր համար ատիկա ձեռնտու վարագոյր մըն է, որուն ե-տեւ ան կ'իշխէ միս-մինակ: Ան կը գինէ ու կուռի ճակատ կը հանէ միլիոննոց բանակներ, իր դնած աստիճանաւորներու օգնութեամբ կ'իշխէ սակարանին եւ յառաջ կը տանի այն քաղաքականութիւնը՝ ինչ որ իրեն կը նպաստէ:

Իմպերիալիստական շրջանին հասարակութիւնը կը մխրճուի հակասութեանց կծիկին մէջ: Անոր մէկ դասակարգը արտասուվոր ա-րագութեամբ կը մեծցնէ իր հարստութիւնները, իսկ միւս դասակար-գը աւելի խորը կ'ընկղմի կարիքի ու թշուառութեան մէջ:

Ազգային եկամուտէն բանուոր դասակարգի բաժինը անշեղ կերպով կը սլակի: Բայց կապիտալիզմը երբեք յետս չի կոչեր իր ազատութեան հրովարտակը. ամէն մարդ ազատ է յառաջդիմելու, զարգանալու եւ հարստանալու. պատեհութիւնները առանձնաշնորհ-եալներու համար չեն: Ազատութիւն եւ հաւասարութիւն, կապիտա-լիստական հասարակութեան հիմքը կը կազմեն, ու բանուորները կը վազեն անոնց ստուերին ետեւ, իսկ իւրացումը կը մնայ որպէս մաս-նաւորներու իրաւունքը: Դասակարգային հակասութիւնները սրուա-ծութեան ծայր աստիճանին կը հասնին: Պրոլետարիատին ու բուր-ժուազիայի միջեւ բացուած անդունդը աւելի կը խորանայ: Կապի-տալիզմը կ'իյնայ փապուղիի մէջ: Այդ փապուղիէն դուրս դալու միակ ելքը այն է, որ գառամած ու որդնոտած կարգերը ամբողջովին ոչըն-

չանան եւ պրոլետարիատը դրաւ իշխանութիւնը: Այո՛, միայն պրոլետարիատն է, որ պիտի կրնայ տնտեսութիւնը եւ սոցիալական կեանքը կազմակերպել սոցիալիստական հիմունքներով: Այսպիսով իմպերիալիզմի շրջանը կը դառնայ սոցիալիստական յեղափոխութեան նախօրեակը:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Քաղաքներու մէջ արդիւնաբերութեան աճման եւ ճարտարաուեստի հսկայ յաջողութիւններու հետ իմպերիալիզմի շրջանին զիւղատնտեսութիւնն ալ սկսաւ կապիտալիստական ձև առնել: Խոշոր տնտեսութեան մէջ սկսաւ գործարկութեան դրուիլ մեքենայական տեխնիկան: Այդ բոլորի հետեւանքով բերքատուութիւնը նկատելի չափով բարձրացաւ: Առանձնապէս բնորոշ է Գերմանիոյ զիւղատնտեսութեան զարգացումը: 1883-1887էն մինչեւ 1908-1912 տարիներու ժամանակաշրջանին, հաճարի, ցորենի, վարսակի եւ գետնախնձորի բերքատուութիւնը բարձրացաւ 75 տոկոսով: Գերմանական խոշոր տնտեսութիւնները 1882 թուին ունէին 836 շոգեզութան, իսկ 1914-ին անոնց թիւը բարձրացաւ 3000-ի: 1882 թուին՝ անոնք ունէին 18,600 հնձող մեքենայ, 1914-ին ունեցան 301,425 հնձող մեքենայ:

Սակայն զիւղատնտեսութեան մէջ կապիտալիզմի զարգացման «պրուսիական ուղին» (Լենինի որակումն է աս), որ բնորոշ էր Հին Աշխարհի համար, նուազ յառաջդիմական էր քան Ամերիկեանը: Մ. Նահանգներու մէջ զիւղատնտեսութիւնը արագօրէն կապիտալիստականի վերածուեցաւ, որովհետեւ հոն հին ձեւի կալուածատիրութիւնը չկար ինչպէս որ կար Եւրոպայի մէջ: Միացեալ Նահանգներու մէջ առաջին օրէն սկսաւ Փարմային ազատ տնտեսութիւնը որ կապ չուէր Եւրոպայի միջնադարեան խառնաշփոթութեան ու ճորտատիրական մնացորդներուն հետ: Ամերիկայի զիւղատնտեսութիւնը բռնադրաւելով ամերիկեան բնիկներու հողերը, այնպիսի արագ քայլերով զարգացաւ որ Եւրոպան շատ ետ մնաց. ան միայն ուժ տուաւ բերքատուութեան բարձրացումին:

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՈՒԱԾ ՊԱՅՔԱՐԸ

Կապիտալը մուտք գործեց համաշխարհային տնտեսութեան բոլոր անկիւններուն մէջ: Չտահմանափակելով ազգային նեղ ու անզոհացուցիչ շրջանակի մէջ, ան ազահութեամբ թեւերը դուրս կը նետէր դրաւելու սպառման նոր շուկաներ: Ասոր հետ մէկտեղ ազրարային երկիրները հետզհետէ կը դառնային կապիտալիստական երկիր-

ներ: Կապիտալիզմը տնտեսապէս յետամնաց երկիրները կը զրկէր իրենց ինքնուրոյնութենէն, կը ստրկացնէր Ասիոյ եւ Ափրիկէի ժողովուրդները, աւազակաբար օգտագործելով ամէն մէկ հնարաւորութիւն՝ յաւելիալ արժէք կուտակելու համար: Մէկ կողմէն դադութային շուկաները կ'ողողէին եւրոպական ապրանքներով, միւս կողմէն «գաղթական կապիտալով» անգթօրէն կը շահագործէին բնիկներու աժան բանուորական ուժը, որու գործածութեամբ եւրոպական արդիւնաբերութեան համար կ'ապահովէին աժան հում նիւթեր, որոնց նմանը Եւրոպայի մէջ չէին կրնար գտնել:

Պաղութային ընդարձակման քաղաքականութեան ճամբան առաջին անգամ Անգլիան ձեռք առաւ: Դեռ 19-րդ դարու 80-ական թրւականներուն, երբ դաղութիւնը ձեռք ձգելու շրջանը նոր կը սկսէր, անգլիական դաղութիւններու տարածութիւնը հինգ անգամ աւելի էր քան մայր երկրի տարածութիւնը: Անգլիոյ ետեւէն սկսան շարժիլ Ֆրանսան, Ռուսիան, Գերմանիան, Մ. Նահանգները եւ Ճապոնը: Այդ պետութիւններէն իւրաքանչիւրը կը ձգտէր դրաւել ազատ հողերու տարածութիւն մը միայն իրեն համար ապահովելու այդ երկրի հարստութիւնն ու աշխատաւորական ուժը շահագործելու իրաւունքը:

Գերմանիան միւս եւրոպական պետութիւններէն բաւականին ուշ սկսաւ դաղութային թայանի քաղաքականութիւնը: Գերմանական ուժեղ կապիտալը ներքին շուկայէն դուրս գալու ելքի ճամբայ սկսաւ փնտռել այն ատեն՝ երբ աշխարհի բաժանումը գրեթէ վերջանալու վրայ էր: Այս հանգամանքը միջազգային քաղաքականութեան բնագաւառին մէջ շարք մը ընդհարումներու պատճառ եղաւ: Գերման կապիտալիստները, ազգային արդիւնաբերութեան արագավազ յառաջդիմութենէն դրդուած՝ աւելի եւ աւելի հաստատակամութեամբ յարձակողական կը դառնային:

Սկսաւ դաղութային պայքարը, որուն խառնուեցան համաշխարհային բոլոր պետութիւնները: Այդ պայքարի ընթացքին՝ մրցող պետութիւնները իրենց դաղութային շահը նկատի առնելով այս կամ այն խմբաւորումները կը կազմէին եւ իրարու հետ շատ թէ քիչ երկարատեւ համաձայնութիւններով կը զաշնակցէին փոխադարձ պաշտպանութեան համար:

1878 թուին, Գերմանիոյ եւ Աւստրիոյ միջեւ կնքուեցաւ դաշինք մը: 1882 թուին, անոնց միացաւ Իտալիան, որ կ'երազէր դրաւել թունուղը. նոյն նպատակը ունէր Ֆրանսան: Այսպիսով ծնունդ առաւ «եռեակ դաշնակցութիւնը», որուն մէջ զլիաւոր դերը կը խաղար Գերմանիան:

Աւելի ուշ՝ Անգլիոյ զլիաւորութեամբ պետութեանց ուրիշ միակցութիւն մը յառաջացաւ: Այդ միակցութիւնը կազմուեցաւ Անգլ-

լիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ միջեւ: Ֆրանսայի եւ Ռուսիոյ միջեւ արդէն դաշինք մը կնքուած էր 1892-ին, երբ Ֆրանսան իմպերիալիստական նպատակով կը քալէր դէպի Հեռուոր Արեւելք եւ Պարսկաստան: Այդ երկու պետութեանց «բարեկամութիւնը» դարձեր էր մընայուն, շնորհիւ այն վարկերուն, որոնցմով Ֆրանսական բուրժուազիան դրամական խողովակով օգներ էր ռուսական իմպերիալիստներուն: Ռուսիան Ֆրանսայի դրամական օժանդակութեամբ էր որ կըրցաւ վերջացնել Սիպերիոյ երկաթուղաղիծը դէպի Մէրվ եւ Թաշքէնդ: Այսպէս, «եռեակ դաշնակցութեան» (Գերմանիա, Աւստրիա եւ Իտալիա) դէմ ցցուեցաւ «եռեակ համաձայնութիւնը» (Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա): 80ական թուականներուն Անգլիոյ եւ Ռուսիոյ յարաբերութիւնները լարուած էին Պարսկաստանի եւ Աֆղանիստանի խճխճուած խնդիրներով: Բայց ի վերջոյ այդ հակամարտութիւնը վերցուեցաւ Գերման սպառնալիքին հետեւանքով:

Անգլիական եւ Գերմանական բուրժուազիայի քաղաքական պայքարը իր էութեամբ անտեսական պայքար էր: Գերմանական ապրանքները ըլլալով աւելի որակաւոր՝ միջազգային շուկայէն դուրս կը հանէին անգլիական արտադրութիւնները: Անգլիական արդիւնաբերողները թէ՛ արտաքին եւ թէ ներքին շուկայի մէջ կը պայքարէին դերաճող գերմանական մրցման դէմ: Այդ հանդամանքը եւ գողութեային պայքարը անգլիական իմպերիալիստները կը հակադրէին դաշնակցիլ այսպիսի պետութեանց հետ, որոնց բուրժուազիայի շահերը նոյնպէս այս կամ այն ձևով կը տառապէին Գերմանիոյ անտեսական անձան ազդեցութենէն:

90ական թուականներուն եւրոպական, ամերիկեան եւ ճարտնական բուրժուազիաներու գաղութային քաղաքականութեան հողին վրայ ծաւալապաշտական ձգտումները շարք մը իմպերիալիստական պատերազմներու դուռ բացին: Օրինակի համար՝ չին-ճարտնական պատերազմը (1894-1895), սպանո-ամերիկեան պատերազմը (1898), անգլո-բայերական պատերազմը (1898-1902): Ասոնց վրայ պէտք է աւելցնել եւրոպացիներու յարձակումը Չինաստանի վրայ: 1900-1902-ի պատերազմներուն՝ ձարոնը եւ Մ. Նահանգները իրենց ազդեցութեան շրջանակը աւելի լայնցուցին: Անգլո-բոյերական պատերազմով անգլիացիները տիրացան հարաւ-ափրիկեան երկու հանրապետութեանց՝ Օրանժ եւ Թրանսվալին, որոնք հարուստ էին ոսկիի ու ադամանդի հանքերով: Այդ հանրապետութեանց մէջ բնակչութիւն հաստատած բոյերները — հոլանտական գաղթականները — յամառ դիմադրութիւն ցոյց տուն անգլիական իմպերիալիստներուն, այնպէս որ անգլիացիները սախպուած եղան այդ դիմադրութիւնը կոտ-

րելու համար 200,000 զօրք կեղրոնացնել Հարաւ: Ափրիկէի մէջ եւ իրենց երկաթէ թաթը դնել անոնց վրայ:

Չինաստանի մէջ եւրոպացիները միասնաբար յարձակեցան եւ խորակեցին չինական ազգայնականներու պահպանած զոց դոները եւ Չինաստանի հարկադրեցին վճարել վնասուց հատուցում:

Այդ պատերազմները փոխեցին միջազգային պայմանները: Միջազգային ներհակ շահերը հետզհետէ աւելի շատցան ու բարդ կերպարանք առին: Ամէն մէկ պետութիւն կը սպառնար նոր պատերազմով լուծել իր առջեւ ներկայացած կնճոռոտ հարցը: 1905-1906 եւ 1911 թուականներուն երեւան եկան Մարոքի ճգնաժամային հարցերը: Մարոքի այն մասը, որ Ֆրանսայի խնամակալութեան տակ էր, Գերմանիան ալ կ'ուզէր մտնել հոն՝ երկաթի հանքերը ազատօրէն շահագործելու համար: 1912-1913 թուականներուն Բալքաններու մէջ եռեակ զինակցութիւնը եւ եռեակ համաձայնութիւնը, երկու կողմերն ալ իրենց Ֆինանս կապիտալի գերիշխանութիւնը հաստատել կ'ուզէին եւ պատրաստ էին իրարու վրայ յարձակիլ: Սլովոն ժողովուրդները նախ պատերազմեցան Թուրքիոյ հետ, յետոյ՝ իրարու դէմ: Բալքանեան պատերազմները համաշխարհային պատերազմի գետին պատրաստեցին, որովհետեւ պատերազմող ժողովուրդներու ետեւ կանգնած էին խոշոր իմպերիալիստական պետութիւնները:

ՄԻԼԻՏԱՐԻՉՄԻ ԵՒ ԾՈՎԱՅԻՆ ՈՒԺԻ ԱՃՈՒՄԸ

Բաղխումի սպառնալիքը կը ստիպէր որ բոլոր երկիրները կըրկնապատկէին իրենց պատերազմական պիւտճէն: Աւստրիոյ ռազմական պիւտճէն երեք անգամ աւելցաւ: Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի ռազմական պիւտճէն նոյնպէս կրկնապատկուեցաւ: Բուրժուական կառավարութիւնները պարլամենտի միջոցով էր որ կ'անցնէին ռազմական ծախքերու յատուկ որոշումները: Կը մեծնային ցամաքային բանակները, զինադրժարանները դիշեր ցերեկ կ'աշխատէին արտադրելու կործանարար զէնքեր: 1913-ին, Գերմանիան իր ցամաքային զօրքերու թիւը հասցուց մինչեւ 800,000-ի: Ֆրանսական բուրժուազիան երկամեայ զինուորական ծառայութեան օրէնքը փոխեց եւ նոր օրէնքով հաստատեց երեքամեայ զինուորական ծառայութիւնը: Այդ նոր օրէնքով Ֆրանսական խաղաղ ժամանակուայ բանակին վրայ աւելցաւ 150,000 մարդ:

Միլիտարիզմի զարգացման զուգընթաց կը զարգանար նաեւ ծովային ռազմականութեան ճիւղը: Այդ դիմին վրայ առաջին տեղը կը զբաւէր Անգլիան: 19-րդ դարու երկրորդ կիսուն, բրիտանական բուրժուազիայի տիրապետութիւնները ապահովելու համար, Անգլիոյ

ծովային ուժերը կը պահուէին այն աստիճանի վրայ, որ կայսրութեան նաւատորմիղը գերակշռելու էր ուրիշ երկու ամենաուժեղ ծովային պետութեանց նաւատորմիղներու դումարը: Գերմանական նաւատորմիղը երբ արագութեամբ կ'աճէր, Անգլիան աւելի ու աւելի թափ կուտար նաւաշինութեան: 20-րդ դարու սկիզբին, եւրոպական միւս պետութիւններն ալ աշխուժիւ նուիրուեցան նաւաշինութեան գործին:

Այստեղ պէտք չէ մոռնալ նշելու, որ ռազմական հարկերու բեռը կը ծանրանար պրոլետարիատի եւ զիւղացիութեան ուսերուն վրայ. անոնք թէ՛ իրենց մեծցուցած զուակները պիտի տրամադրէին զինուորական ծառայութեան համար եւ թէ՛ նոյն ատեն պիտի հողային պատերազմական ծախքերը: Եւ ինչո՞ւ. որպէսզի զիրենք անխղճօրէն շահագործող բուրժուազիայի տիրապետող զիրքը անսասան մընար, եւ դեռ աւելին, — որպէսզի ան կարենար նոր երկիրներ գրաւել եւ նոր ժողովուրդներ ստրկացնել:

ՀՈՂԱՏԷՐԵՐՈՒ ԵՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐՈՒ ՇԱՀԵՐՈՒ ՍԵՐՏ ԱՃՈՒՄԸ

Իմպերիալիստական շրջանին դասակարգային ուժերու խմբաւորումներու մէջ տեսակ մը տեղաշարժ կատարուեցաւ: Նախապէս, եթէ հողատէրերը կը պաշտպանէին Ֆէոդալական կարգերը եւ իրենց շահերը կը բաժնէին բուրժուազիայի շահերէն, զիւղատնտեսութիւնը երբ կ'ապիտալիստական ձեւ առաւ, հողատէրերը, մանաւանդ միջին դասու հողատէրերը, քաղաքական ելոյթներու մարզին վրայ սկսան կ'ապիտալիստներու հետ համակերպ ընթանալ: Միայն որոշ դասու խոշոր հողատէրեր, միացած Պահպանողական կուսակցութեան հետ, կը շարունակէին թշնամարար վերաբերուիլ դէպի կ'ապիտալիզմի զարգացումը: Սակայն հողատիրական դասակարգը, չնայած իր եւ բուրժուազիայի շահերու մասնակի հակասութեան՝ ժամանակի ընթացքին՝ դարձաւ բուրժուազիայի մէկ թելը:

Մարքսը իր «Իրենումբերի 18» ուսումնասիրութեան մէջ կը գրէր — «Ուշոր հողային սեփականատիրութիւնը, հակառակ իր ֆէոդալական սովորոյթներուն եւ իր տոհմային գոռոզութեան՝ նորագոյն հասարակական զարգացման ազդեցութեան տակ, ամբողջապէս բուրժուականացեր է»: Երկու դասակարգերու շահերու սերտ աճումը հիմնուած էր զիւղատնտեսութեան արտադրողականութեան աճման վրայ: Հողատէրերը, արգիւնարբողներուն նման սկսեցին հետաքրքրուիլ շուկաներու գիներով (ուսական կալուածատէրերը իրենց ցորենը կ'արտածէին արտասահման): Նոյն ատեն, յառաջացան երկու կարեւոր երեւոյթներ: Առաջինը այն էր, որ նախապէս հողի վարձակալը աշխատանքով կը վճարէր իր վարձած հողի վարձագինը,

նոր պայմաններու տակ, ան այժմ կը վճարէր զրամով: Իսկ այդ գըրամը կուգար ուրիշներու աշխատանքի շահագործումէն. այսինքն՝ բուրժուական հասարակութեան մէջ գործադրուող սխառմէն՝ յաւելիալ արժէքի մասէն: Երկրորդ երեւոյթը այն էր, որ հողատէրերու եւ գործարանատէրերու շահերը երբ կը միանային, անոնք երկուքը միատեղ պայքար կը մղէին բանուոր դասակարգին դէմ: Այս հանգամանքները վերջնականապէս ամրապնդեցին բուրժուազիայի եւ հողատէրերու կապը: Ատոր շնորհիւ գերմանական կայսրութիւնը իմպերիալիզմի շրջանին՝ ազնուական հողատէրերու (Եունկէր հողատէրեր) եւ բուրժուազիայի միջեւ հաստատուեցաւ քաղաքական դաշնակցութիւն: Նոյն երեւոյթը տեղի կ'ունենար Անգլիոյ մէջ: Ռուսաստանի մէջ պետական կազմը յենած էր կալուածատէրերու վրայ, որոնք յաճախ հրապարակ կուգային բուրժուազիայի հետ միասին:

Արգիւնարբողներու, հողատէրերու եւ Ֆինանսիստներու շահերը երբ այսպէս սերտօրէն միացան իրարու, փոխուեցաւ պետութեան սոցիալական էութիւնը եւ ատոր հետեւանքով ալ՝ Երկրորդ Ինտերնացիոնալի զիրքը դարձաւ երեւուն: Այժմ աւելի եւ աւելի բացայայտօրէն հրապարակ կուգար միանական շահու տիրապետութիւնը, այսինքն՝ միացեալ սեփականութեան շահը, որ կը հակադրուէր ամբողջ աշխատաւոր մարզկուրթեան շահերուն: Հասարակութիւնը բաժնուեցաւ երկու բանակի: Միջին դասակարգերը (զիւղացիութիւնը, մտաւորականութիւնը) իմպերիալիզմի շրջանին, կայսրնութիւն չեն ցուցարբեր: Անոնք կը կորսնցնեն իրենց տնտեսական անկախութիւնը եւ Ֆինանս. կ'ապիտալի առջեւ կը սկսին ենթակայի դեր խաղալ: Գերմանական պատեհապաշտ Բերնշտայնի պնդումներուն հակառակ՝ հասարակութեան մանր բուրժուական շերտերը կը պրոլետարականան: Այսպիսով իմպերիալիզմի շրջանին դասակարգային հակասութիւնները աւելի կը սրուին: Պետական իշխանութիւնը այլեւս չի քաշուի հրապարակ իջնել բռնի միջոցներով: Պետական ապարատը անընդհատ կը կատարելագործուի, որպէսզի լաւագոյն եւ աննկատելի ձեւով իրագործէ Ֆինանսական, արգիւնարբերական եւ հողատիրական սակաւապետութեան տնտեսական զիկտատուրան: 19-րդ դարու երկրորդ կիսուն եւ 20-րդ դարու սկիզբին սոցիալիստները եւ ոչ սոցիալիստները ստիպուած էին ընդունիլ գործադիր իշխանութեան ուժի հսկայական աճումը: Պետական իշխանութեան զիկտատուրան, բռնակալական էութիւնը իր երեք գլուխով ու մէկ հասակով կանգնած էր հպարտ, բայց ատով իսկ՝ իր անկումն ու կործանումը մօտեցուց: Բուրժուական պետութեան այդ բռնակալական մեքենան կործանողը պիտի ըլլար բուրժուական հասարակութեան ծոցին մէջ հասակ նետած պրոլետարիատը:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԱԳ ԱՃՈՒՄԸ

Եւրոպական կապիտալիստական պետութիւններէն ո՛չ մէկը այնպէս արագընթաց չէր յառաջանար կապիտալիստական զարգացման ճամբուն մէջ, ինչպէս Գերմանիան: Ֆրանկֆուրտի դաշնագրութեամբ, որ ստորագրուեցաւ Փրանքո-պրուսիական պատերազմը վերջանալէն յետոյ, Գերմանիան ստացաւ հինգ միլիաո Փրանք, որպէս վնասուց հատուցում եւ նոյն ատեն Ալզաս-Լորէնի երկաթի ու քարածուխի հարուստ շրջանները: Բացի այդ՝ Փրանքո-պրուսիական պատերազմը առանձնապէս զարկ տուաւ գերման անջատ պետութեանց միացումին: Միացումը տեղի ունեցաւ այնպիսի դաշնագրութեամբ մը, որ իրարու կը կապէր մէկ կողմէն պրուսիական թագաւորը, միւս կողմէն՝ գերմանական 21 պետութիւնները եւ երեք ազատ քաղաքներու իշխանութիւնները: Այդ կերպով վերցուեցաւ արդիւնաբերութիւնը կասեցնող գլխաւոր վտանգը. հրապարակ իջաւ միացեալ՝ Գերմանիա մը, որ ուժեղ թափով մտաւ տնտեսական վերելքի շրջանը: Կայսերական Գերմանիոյ հնարագէտ վարչապետ Բիզմարքը, իր շարք մը բարեկարգութիւններով ո՛չ միայն ոչնչացուց համաբարային կարգերը եւ կապիտալիզմի զարգացումը արդիւնակող Ֆէոդալիզմի մնացորդները, այլև Փրանսական դրամով եւ երկաթի ու քարածուխի հանքային հարստութեանց օգնութեամբ գերմանական կապիտալը գրաւ վիթխարի աճման ուղիին վրայ:

Դեռ 1895 թուին, Գերմանիոյ ազգային եկամուտը (կլոր թիւով) հաւասար էր 11 միլիաո մարքի. 1914 թուին, պատերազմէն առաջ աւելցեր էր դրեթէ երկու անգամ՝ 21 միլիաո մարքի. ասով ան կը գերազանցէ Անգլիան: Գերմանական տնտեսութեան զարգացումը պատճառ եղաւ որ երկիրը դառնայ դաղթային երկրամաս: 1882 թուին, Գերմանիա ունէր 45 միլիոն բնակչութիւն. 1914 թուին բնակչութեան թիւը հասաւ 66 միլիոնի: Նոյն ժամանակաշրջանին, արտադրութեան մի քանի ճիւղերու մէջ (քարածուխ, բամբակ) հաւասարեցաւ Անգլիոյ, իսկ անադի արտադրութեան մէջ գերազանցեց զայն:

Որքան կը զարգանար կապիտալիստական տնտեսութիւնը, նոյնքան արագութեամբ կը զարգանար մետաղագործութեան ճիւղը, առանձնապէս ծանր արդիւնաբերութիւնը: «Մարդկութիւնը աւելի մեծ ախորժակ կը ցուցնէ դէպի անագը, քան թէ դէպի այլերը», այդպէս ըսեր էր իմպերիալիզմը հետազօտողներէն մէկը՝ Մ. Պավլովիչը: Գերմանական ճարտարարուեստը շուկայ կը հանէր վիթխարի քանակութեամբ արտադրութիւն: 1860 թուին, եթէ Գերմանիան երկաթի ու պողպատի արտադրութեան ճիւղին մէջ չորրորդ տեղը կը բռնէր, 1870-ին բռնեց երկրորդ տեղը, իսկ 20-րդ դարու սկիզբին բռնեց

երկրորդ տեղը. առաջին կարգի վրայ մնացին Միացեալ Նահանգները: Նոյնպիսի արագ թափերով յառաջ կ'ընթանար նաեւ անոր քիմիական եւ ելեքտրո-տեխնիկական արդիւնաբերութիւնը: Գերմանական քիմիական գործարանները իրենց ձեռքն առին անջնջելի ներկեր պատրաստելու համաշխարհային մենաշնորհը:

Գերմանիան հսկայական նուաճումներ ունեցաւ փոխադրական ճիւղին մէջ: Փրանքո-պրուսիական պատերազմի ժամանակէն մինչև 1912 թուականը, ամբողջ Գերմանիան առնուած էր երկաթուղային ցանցի մէջ. իսկ այդ երկաթուղային ցանցը այնպիսի ձեւով սարքաւորուած էր որ, կառավարութիւնը, ի պահանջել հարկին, չորս կողմերէն զօրքեր կ'ընար անմիջապէս կեդրոնացնել ուղուած տեղը: Գերման նաւերու տարողութիւնը նոյնպէս հինգ անգամ աւելցաւ: 1813 թուին, գերման նաւերու տարողութիւնն էր 80,000 թոն: 1913 թուին այդ տարողութիւնը բարձրացաւ 4 միլիոն 580,000 թոնի: Ասկէ կարելի է նկատել թէ Գերմանիան որքան բազմացուցեր էր իր նաւերը:

Արդիւնաբերական աճման համապատասխան կը մեծնար նաեւ Գերմանիոյ արտաքին առուտուրը: Քառորդ դարու ընթացքին՝ մինչև իմպերիալիստական պատերազմը, Գերմանիոյ արտաքին առուտուրը երեք անգամ աւելի աճեցաւ, մինչ նոյն ժամանակաշրջանին՝ ամերիկեանն ու անգլիականը միայն երկու անգամ, իսկ Փրանսականը՝ հազիւ թէ մէկ ու կէս անգամ:

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՈՒՇ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՊԱՅՔԱՐԻՆ

Վերեւ նկարագրուած այդպիսի արագ տնտեսական աճման համար Գերմանիոյ տնտեսական պայմանները Եւրոպայի ցամաքամասին մէջ չուտով չափազանց նեղ հանդիսացան: Ներքին շուկան արդէն չէր կրնար արտադրուած բոլոր ապրանքները սպառել: Հսկայական չափերու հասած արտադրական միջոցներու արտադրութիւնը նոյնպէս կը գերազանցէր երկրի կարիքները: Բացի այդ, գերմանական արդիւնաբերութեան առջեւ ծառայաւ հում նիւթերու կենսական հարցը՝ երբ երկաթի հանքերու սեփական պաշարը վերջանալու ըսպառնալիքին տակ էր: Նավթը միայն արտասահմանէն կը ստացուէր: Այդ իսկ պատճառաւ գերման պուրժուազիան մինչև 19-րդ դարու 80-ական թուականները կերպով մը բաւարարուելով ներքին շուկայով, 90-ական թուականներէն սկսեալ ստիպուած էր գաղթային նրաւաճումներու ճանապարհը բռնել: Բայց քանի որ այդ ատեն համաշխարհային ընդարձակ ցամաքամասերու մեծազոյն բաժանումները

գրաւած էին միւս պետութիւնները, դերմանական երիտասարդ եւ առողջ կապիտալը ինկած էր շատ նեղ գրութեան մէջ: Գերման բուրժուազիայի համար միայն մէկ ճամբայ կը մնար ելքի համար.— անցնիլ յարձակողականի: Եւ դերմանական բուրժուազիայի յարձակողական քաղաքականութիւնը սկսաւ այլեւս օրէնք ու սահման չըճանչնալ: Անցեր էին այն ժամանակները, երբ Բիզմարք, սեւեռեալ նպատակ ունենալով դերման պետութեանց միացումով ուժեղ Գերմանիա մը ստեղծելու ծրագիրը, չէր ուզեր կայսերական ղեկավարութեան ներքեւ առնել ավերիկեան այն երկիրները, որոնք ձեռք բերուած էին մասնաւոր ձեռներէջութեամբ: «Ափրիկէն Անգլիոյ գերեզմանը պիտի ըլլայ», ըսեր էր հեռատես Վարչապետը. ան չէր ուզեր որ Անգլիոյ բացած գերեզմանին քով Գերմանիան եւս իր գերեզմանը բանար: Բիզմարքի օրով Գերմանիան զաղթային նախարարութիւն չունէր. այժմ, երբ ան անցեր էր յարձակողական դիրքերու, ուրեմն, պիտի ունենար պատկանեալ նախարարութիւնը: 1907 թուին Գերմանիոյ մէջ յառաջացաւ զաղութներու նախարարութիւն: Գերմանիան սկսաւ յամառ պայքար մղել մէկ կողմէն Ֆրանսայի դէմ Մարոքի մէջ, միւս կողմէն Անգլիոյ դէմ՝ Հարաւային Ափրիկէի մէջ: Ինք երբ մտեր էր Ափրիկէ, կ'ուզէր անկէ հեռացնել թէ՛ Ֆրանսան եւ թէ՛ Անգլիան, անոնց հետ նաեւ Պելճիքան: Բայց Գերմանիոյ նպատակը միայն Ափրիկէն չէր. Ափրիկէն հում նիւթերու հարուստ շտեմարանն էր. իրեն պէտք էր տարազազործուած ապրանքներու համար սպառման լայնածաւալ շուկաներ: Իսկ այդ շուկաները կը գտնուէին Հեռաւոր Արեւելքի մէջ: Գերմանացի միսիոնար մը սպաննուեցաւ Չինաստանի մէջ: Ատիկա պատրուակ մըն էր որ Գերմանիան մտնէր Չինաստան: 1908 թուին, Գերմանիան յաջողեցաւ դրաւել շինական կարեւոր շրջաններէն մէկը — Քիա-Չաոն: Հաստատուելով Չինաստանի մէջ, Գերմանիոյ նպատակն էր յառաջանալ դէպի Մերձաւոր Արեւելք: Այդ ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ էր Թուրքիան ստրկացնել: Եւ ահա ծնաւ Համպուրկ-Պաղտատ երկաթուղային գծի շինութեան ծրագիրը: Եթէ իրականանար այդ ծրագիրը եւ Պաղտատը դառնար դերմանական գաղութ, Գերմանիոյ համար այլեւս դիւրին էր ձեռքել շնդկական Ուկրաինայի շուրքերը եւ մտնել Հնդկաստան: Գերմանական կապիտալի պայքարը անգլիականին դէմ հետզհետէ սուր հանդամանք կ'առնէր եւ մէջտեղ կը հանէր խճխճուած հարց մը, որուն լուծումը միայն իմպերիալիստական պատերազմը պիտի տար:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ, ՈՐՊԷՍ ԵՌԻՆԿԵՐՆԵՐՈՒ ԵՒ ԲՈՒՐժՈՒԱԶՆԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄ

Գերմանիան դաշնակցային պետութիւն էր, որ քաղաքականապէս ինքնուրոյն մանր պետութիւնները եւ միաւորները միացուցեր էր կայսերական թագի ներքեւ: Համակայսերական սահմանադրութեան հիման վրայ դերմանական կայսրութեան գլուխը կանգնած էր Պրուսիոյ թագաւորը, որ կը կրէր գերմանական կայսեր տիտղոսը: Կայսեր կը պատկանէր միջնադարային յարաբերութիւններու ղեկավարի իրաւունքը, ան իրաւունք ունէր նաեւ հրաւիրել եւ արձակել դաշնակցային խորհուրդն ու համադերմանական պարլամենտը (Ռայխստակը). անոր կը պատկանէր նոյնպէս բանակի հրամանատարութիւնը, ինչպէս նաեւ իր հայեցողութեամբ օտար պետութեանց հետ քաղաքական դաշնագրութիւն կնքելու իրաւունքը: Ամենամեծ պաշտօնը վարողն էր համակայսերական պետական վարչապետը, որ պատասխանատու էր միայն կայսեր առջեւ: 1867-էն մինչեւ 1890 թուականը Հիւսիսային Գերմանական միութեան, ապա գերմանական կայսրութեան վարչապետը Բիզմարքն էր, որ իր ուժեղ կամքի պատճառով «երկաթեայ» վարչապետ կը կոչուէր: Այս մարդն էր որ գերմանացիներու յաղթութիւնը ապահովեց Ֆրանքո-պրուսիական պատերազմին մէջ: Այս մարդն էր դարձեալ որ գլուխ հանեց Միացեալ Գերմանիայի ծրագիրը: Բիզմարքի դիկտատուրան հաստատուած էր Գերման պետութեան մէջ հսկայական չափով արմատացած երկիրներու (խոշոր հողատէրերու) շահու հիմքին վրայ: Բիզմարքը ինքը, երկիրներու դասին կը պատկանէր: Բուրժուազիայի հանդէպ ան համաձայնական քաղաքականութեան կը հետեւէր պարզ անոր համար, որ ան կը տեսնէր թէ եւրոպական պետութեանց մրցակցութեան ճամբուն մէջ բուրժուազիան այնքան կարեւոր դեր կը կատարէր որքան ուժեղ բանակ մը:

Դաշնակցային խորհուրդը, որուն մէջ կեդրոնացեր էր կառավարական կեդրոնական իշխանութիւնը, կազմուած էր դաշնակցութեան մէջ մտնող գերմանական բոլոր կառավարութեանց պատուիրակներէն: Դաշնակցային խորհուրդը իրաւունք ունէր պարտադիր որոշումներ տալ, նմանապէս ցրուել Ռայխստակը եւ պատերազմ յայտարարել: Ռայխստակը կ'ընտրուէր ընդհանուր քուէարկութեամբ (ընտրական իրաւունքէն կ'օգտուէին 25 տարեկանէն վեր տղամարդիկ, բացի զինուորականները): Ռայխստակի ընդունած օրինադձերը օրէնք կը դառնային այն ատեն՝ երբ կայսրը եւ դաշնակցային խորհուրդը կուտային իրենց համաձայնութիւնը: Առանձին պետութիւն-

ներու մէջ կային պատգամաւորներով ընտրուած օրէնսդիր մարմիններ :

Գերմանական կայսրութեան գլուխը կանգնած էր Պրուսիան, որ զբաւած էր ամբողջ կայսրութեան կէսէն աւելի ցողամաս մը : Պրուսիան իրապէս ամբողջ Գերմանիոյ բախտը տնօրինողն էր : Պրուսիոյ քաղաքական իշխանութիւնը կը պատկանէր յետագիմականօրէն տրամադրուած խոշոր հողատէրերուն (Եունկերներուն) : Եունկերները իրենց իշխանութիւնը տարածեր էին նաեւ Պրուսիայէն դուրս : Այդ ծաւալուն իշխանութեան շնորհիւ Բիզմարք կրցաւ ստեղծել միացեալ Գերմանիա մը :

Եունկերներու հետ իշխանութեան մասնակից էին նաեւ Ֆինանսական եւ արդիւնաբերական բուրժուազիան : Սակայն բուրժուազիայի եւ եունկերութեան միջեւ շահերու որոշ հակասութիւն կար : Այն պարագային, երբ բուրժուազիան զազուծներ զբաւելու ետեւն էր, եունկերները այդ քայլին մէջ վտանգ մը կը տեսնէին, որովհետեւ երբ զազուծներ կը զբաւելէին եւ անոնց մէջ գիւղատնտեսութիւնը կը զարգանար, գերման գիւղատնտեսութեան արտադրութեանց գիները կը նուազէին : Վերջ ի վերջոյ, սակայն, խոշոր հողատէրերը համոզուեցան որ հաշտուելու էին իմպերիալիստներուն հետ : Եունկերութիւնն ու բուրժուազիան սկսան միասին աշխատիլ Գերմանիոյ ռազմական մեքենան կատարելագործելու համար : Հողատիրական, ինտուստրիալ եւ Ֆինանսական արիստոկրատիան միացան եւ սկսան պայքարիլ համաշխարհային շուկային մէջ իրենց դէմ կանգնած մըրցակիցներուն հետ : Այդ միացման մեծապէս օժանդակեց բանուոր դասակարգի դէմ անոնց մղած միասնական պայքարը :

Գերմանական եունկերներու ոստիկանական պետութիւնը ամբողջովին կը գտնուէր Ֆինանսական, արդիւնաբերական եւ հողատիրական արքաներու քաղաքական միութեան իշխանութեան տակ : Կապիտալիստական զարգացման այդ շրջանին, Գերմանիոյ մէջ կ'իշխէր միապետական ռեժիմը :

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼՈՅ ՄԷՁ

19-րդ դարուն, Անգլիոյ մէջ ընտրական բարեկարգութիւնները եկան աւելի ընդարձակել քուէարկողներու շրջանակը, բայց շատ քիչ փոխեցին անգլիական պարլամենտական կարգը : 19-րդ դարու վերջերը, պարլամենտի մէջ իշխանութեան համար կը պայքարէին երկու կուսակցութիւններ՝ պահպանողականները եւ ազատականները, ճիշդ այնպէս, ինչպէս նոյն դարու սկիզբը իրարու դէմ կը մրցէին վիքերն ու թորիները : Յետագային պայքարող կուսակցութիւններուն միա-

ցաւ բանուորական կուսակցութիւնն ալ : 1867 թուին, պարլամենտական ռեֆորմէն յետոյ (որով ընտրական քննութիւնը թեթեւցաւ, մանաւանդ քաղաքի բնակչութեան համար) մինչեւ նոյն դարու վերջերը, իշխանութիւնը չորս անգամ պահպանողականներու՝ չորս անգամ ալ ազատականներու ձեռքն անցաւ : Անգլիան պահպանողական կառավարութիւնով թեւակոխեց 20-րդ դարը, բայց 1905 թուին, ազատականները դարձեալ յաղթեցին եւ իշխանութիւնը իրենց ձեռքը պահեցին մինչեւ 1914 թուականը :

Պարլամենտի գլուխն անցնողները հողատիրութեան շահերու ներկայացուցիչ պահպանողականներն էին՝ թէ արդիւնաբերողներու շահերը պաշտպանող ազատականները՝ այդ միեւնոյնն էր, անգլիական արտաքին քաղաքականութիւնը կը մնար անփոփոխ՝ նոյնը :

Անգլիական իմպերիալիստական քաղաքականութեան մէջ նոր զարգացումն բացաւ պահպանողական Գիլզայէլին (Լորտ Բիկոնսփիլտը), որ 70-ական թուականներուն անցեր էր պարլամենտի գլուխը : Այս մարդն էր որ Սուէզի ջրանցքը կառուցանելու աշխատանք տարաւ . այս մարդն էր զարձեալ, որ Անգլիոյ միացուց Հնդկաստանէն Աֆղանիստան տանող կարեւոր անցքը եւ յետոյ՝ Սուէզէն Հնդկաստան տանող ճանապարհին վրայ գտնուող Սոկատրու կղզին զբաւեց առանց դժուարութեան : Անգլիոյ յափշտակիչ քաղաքականութիւնը շարունակեց արմատական Չեմբըլէյնը՝ որ ի վերջոյ պահպանողական դարձաւ : Գաղութներու նախարար եղած ատեն (1895 թուին) Չեմբըրլէյնը կառավարութեան առջեւ զբաւ կարեւոր հարց մը . այն էր՝ բրիտանական կայսրութեան սահմանները ընդարձակել եւ անոր զազուծները միացնել որպէս առեւտրական միաւոր մը : Չեմբըրլէյնը այսպէս կը ձեւակերպէր անգլիական իմպերիալիզմի սկզբունքներն ու քակտիկան, որով կը մերկացնէր պարլամենտի իրական դասակարգային էութիւնը . «Մեր (այսինքն պարլամենտի) ամենէն կարեւոր խնդիրը գիւղատնտեսական, արդիւնաբերական եւ առեւտրական ձեռնարկութիւնները զարգացնելը եւ անոնց օժանդակելն է» : Այսպէս էր Չեմբըրլէյնի հաւատոյ հանգանակը : Պետական բոլոր գլխաւոր ձեռնարկութիւնները առեւտրական խնդիրներով կը զբաղէին : Արտաքին գործոց եւ զազուծներու նախարարութիւնները կ'աշխատէին գլխաւորապէս նոր շուկաներ գտնելու եւ հիները պահպանելու խնդիրներուն վրայ : Ռազմական եւ ծովային նախարարութիւնները զբաղած էին գրաւուած շուկաներու պաշտպանութեան նախադատրաստութեամբ եւ արտասահմանի հետ առեւտրական յարաբերութիւններու հսկողութեամբ : Նոյնիսկ ժողովրդական կրթութեան վարչութիւնը, իր նախահաշիւը պատրաստած ատեն, կը մատնանշէր այն անհրաժեշտութեան մասին, որ նոր սերունդը պէտք է պատրաստել այն ա-

ուևտրական գիտելիքներով, որոնք անհրաժեշտ են ժամանակակից առևտրական մրցակցութեան համար:

Անդլիական պարլամենտը, համաձայն երկրի սահմանադրութեան՝ պետութեան գերագոյն իշխանութիւնը, այսինքն օրէնսդիր հիմնարկութիւնը կը հանդիսանայ: Պարլամենտի գործադիր օրդանը կը համարուի նախարարներու դահլիճը: Իրականութեան մէջ, սակայն, պարլամենտի գերագոյնութիւնը սոսկ ձևաբանութիւն էր, որ կը վարադուրէր դահլիճի (կարինէթի) դիկտատուրան: Կառավարութիւնը (այսպէս կ'անուանէին Անդլիոյ մէջ նախարարներու կարինէթը) կը կազմուէր պարլամենտական այն կուսակցութեան անդամներէն, որ Ներքին պալատին մէջ ապահոված էր ձայներու մեծամասնութիւնը: Իրաւականօրէն թագաւորն էր որ կը նշանակէր նախարարները, որոնք անոր ձեռքը կը համբուրէին պաշտօն ստանձնելէ առաջ, իսկ փաստօրէն՝ վարչապետն էր որ կը մատնանշէր թեկնածուները եւ միապետը կը հաստատէր:

Այսպիսով պարլամենտը եւ նախարարներու կարինէթը կը վարէին քաղաքականութիւնը այն կուսակցութեան, որ պարլամենտին մէջ մեծամասնութիւն կը կազմէր: Վարչապետը՝ յենած զինքը առաջ քաշող կուսակցութեան՝ բոլոր միջոցները ձեռք կ'առնէր որպէսզի իր կուսակցութիւնը կազմակերպչական միասնութիւնը չկորսընցնէր: Ան կ'ունենար յատուկ կուսակցական գործակալներ, որոնք պարլամենտի պատգամաւորներուն կը թելադրէին ե՛րբ եւ ի՛նչ բանի պէտք է քուէ տալ: Վարչապետը երբեմն նոյնիսկ կը սպառնար պատգամաւորներուն պարլամենտը ցրուելու:

Այն որ իրը թէ ժողովրդական ներկայացուցչութիւն էր բուրժուական իրաւագիտութեան ստուգարանական բառարանին մէջ, իրականին մէջ բուրժուազիայի եւ հողատէրերու տիրապետութեան ծառայող գործիք էր: Համայնքներու պալատը, որ երբեմն արիստոկրատական հիմնարկութիւն էր, 19-րդ դարու ընթացքին՝ թագաւորէն ու լորտերէն իշխանութիւնը խլելով աւելի բուրժուական կը դառնար եւ Ֆինանսական բուրժուազիայի շահերու ներկայացուցիչը կը հանդիսանար: Բանուորական մասսաները պարլամենտական կարգերէն ոչինչ կը ստանային:

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ ԵՐՐՈՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ֆրանքո-պրուսիական պատերազմի ժամանակէն սկսած մինչև 1875 թուի սահմանադրութեան համաձայն, Ֆրանսան կը հանդիսանար որպէս հանրապետական երկիր: Անոր քաղաքական կեանքի այդ

չրջանը կը կոչուի Երրորդ Հանրապետութիւն(*): Հանրապետութեան գլուխը կանգնած է նախագահը, որ Ազգային ժողովի մէջ կ'ընտրուի 7 տարուայ ժամանակով: Ազգային ժողովը ըսուածը պատգամաւորներու պալատին եւ ձերախոյտի միացեալ ժողովն է: Օրէնսդիր իշխանութիւնը կը պատկանի այդ Ազգային ժողովին: Միապետական իշխանութիւնը վերականգնելու կողմնակիցները (թագաւորականները) հանրապետութիւնը կործանելու քանի մը փորձեր ըրին, բայց չյաջողեցան: Որպէս յետադիմական առաջնակարգ ուժ՝ Ֆրանսայի մէջ հրապարակի վրայ էր կղերականութիւնը: Զուր տեղը չէր որ հանրապետականներու առաջնորդ Գամբէտան ի լուր աշխարհի յայտարարեց օր մը. — «Մեր իրական թշնամին կղերականութիւնն է»: Վերջ ի վերջոյ, հանրապետական բուրժուազիան յաղթեց թէ՛ միապետականներուն եւ թէ՛ կղերականներուն:

Պահպանողականներու պայքարը ընդդէմ արմատականներու, երբեմն շատ սուր կերպարանք կ'առնէր: Պահպանողականներու մէջ կը մտնէին միապետականներն ու հանրապետականներու մէկ մասը, իսկ արմատականներու միացած էին բուրժուազիան եւ սոցիալիստական հակումներով տողորուած մտաւորականութիւնը: Այդ երկու հատուածներու պայքարը իր ծայրագոյն աստիճանին հասաւ Դրէյֆուսի խնդրով: 90-ական թուականներուն, զօրավար Դրէյֆուս ամբաստանուեցաւ որպէս գերմանական լրտես եւ դատապարտուեցաւ ցմահ աքսորի: Անմեղ այդ հրէայ սպայի դատապարտութիւնը կեղծ փաստաթուղթերու հիման վրայ, զինուորական շրջանակներու անամօթ գործն էր: Դրէյֆուսի գործը, որ խիստ եւ երկարատեւ պայքար յառաջացուց, 1906 թուին վերջացաւ՝ արմատականներու եւ սոցիալիստներու յաղթանակով ու Դրէյֆուսի ազատումով: Սոյն պայքարին մէջ Էմիլ Զոլան յանդուզն կերպով շատ կարեւոր դեր խաղացաւ:

Ֆրանսայի բուրժուա-դեմոկրատական կառավարութիւնը երբեմն բացարձակ անկարողութիւն կը ցուցաբերէր, իսկ երբեմն ալ վճռականապէս չէր ցանկանար որեւէ ֆինանսական կամ քաղաքական բարեկարգութիւններու տեղի տալ, որովհետեւ այդ ռեֆորմները կրնային խոշոր կապիտալի շահերուն վնասել: Երրորդ հանրապետութեան շրջանը ֆինանսական կապիտալի իշխանութեան շրջանն էր: Խոշոր պանթաներու եւ հիմնադրամներով հարստացած սակարանի հզօրութիւնը այնքան ուժեղ էր, որ անոնց զեկաւարները կարող էին տապալել ամէն մէկ կառավարութիւն որ կը համարձակէր մտածել

(*) Առաջինը կը հաշուրուի 1792 թուին յայտարարուած հանրապետութիւնը, երկրորդը՝ 1848 թուի հանրապետութիւնը:

իրապէս դեմոկրատիկ յառաջդիմական ձեւի եկամտային հարկի մասին :

Երրորդ Հանրապետութեան շրջանի սոցիալական եւ քաղաքական յարաբերութիւններու իրական ընդթր հասկնալու համար չափազանց ուշադրաւ է Քլեմանսոյի նախարարութիւնը (1906-1909) : Քլեմանսոյի ժամանակաշրջանը սոցիալիստ Ժորէսի արտայայտութեամբ, սոցիալական պահպանողականութեան ժամանակաշրջանը հնդիսացաւ : Քլեմանսոն, մինչեւ 1900-ական թուականներուն, անհուն պայքար կը մղէր աջակողմեան թշնամիներու դէմ՝ կղերականներու եւ միապետականներու դէմ : Դրէֆուսի դործին մէջ արմատականներու յաղթանակը մեծ մասով իր գործն էր . ինքն էր որ թեւ ու թիկունք կեցաւ իմիլ Զոլայի : Բայց երբ 1905-ին Ռուսաստանի յեղափոխութիւնը ցնցեց Եւրոպան եւ Ֆրանսայի բանուորութեան տրամադրութիւնը հակեցաւ դէպի յեղափոխական ուղին, Քլեմանսոն իր քաղաքականութեան ընթացքը մէկ անգամէն փոխեց : Յետագային անոր ամբողջ դործունէութիւնը ուղղուած էր պայքարելու բանուոր դասակարգի դէմ : Երբ զինուորները կը կրակէին բանուորներուն վրայ, Քլեմանսոն կ'ուրախանար տեսնելով զնոսաներու առջեւ բանուորներու փռուած դիակները : Եւ այդ «սոցիալիստ» Քլեմանսոն էր : Ֆրանսայի թէ՛ կառավարութիւնը եւ թէ պարլամենտական հիմնարկները կանգնած էին Ֆրանսական կապիտալի շահերու պաշտպանութեան տեսակէտի վրայ : Եւ այդ հանգամանքը դեռ եւս 1905-1906 տարիներուն, սոցիալիստ կուսակցութեան ձախ շրջանակներուն մէջ յառաջացուց հիասթափութիւն :

ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Անգլիական եւ գերմանական կապիտալիստներու իրարու հետ պայքարի տարիներուն, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները անսովոր արագութեամբ կը յառաջդիմէին : Գերմանիոյ եւ ճարտնի հետ միասին Մ. Նահանգներու երկիրը կը դառնար յառաջադէմ կապիտալիստական երկիրներէն մէկը : Մեծ չափերու հասնող քարածուխի հանքերը (ասոնք համալխարհային պաշարի երկու երրորդը կը ներկայացնէին), երկաթի հանքերը, ատաղձի անհատնում պաշար ներկայացնող անասնոց անտառները, նավթի անսպառ երակները, մեծաքանակ ջրային ուժերը, ասոնք դարձան հում նիւթի եւ էներժիի խարխիս՝ որուն վրայ աճեցաւ Մ. Նահանգներու մշակողական արդիւնաբերութիւնը : Իմպերիալիստական պատերազմի ժամանակ անաղի արտադրութիւնը Մ. Նահանգներու մէջ, համալխարհային արտադրութեան հետ համեմատած՝ քանակական գերակշռութեան

դիրք ունէր : Իսկ երկաթուղիներու ցափնցը... կրնանք ըսել թէ ամբողջ աշխարհի մէջ տարածուած երկաթուղիներու ցանցին կիսուն հաւասար երկաթուղացանց ունէր եւ այժմ ալ ունին Միացեալ Նահանգները : Նավթի արդիւնաբերութեան մէջ ատեն մը Ռուսաստանը աւելի յառաջադէմ էր քան Ամերիկան, բայց 20-րդ դարու առաջին տասնամեակին՝ Մ. Նահանգները դարձեալ ստանձնեցին նավթի արդիւնաբերութեան գերակշռութեան իրաւունքը :

Ամերիկան հողագործական երկիր ըլլալէ դադրեցաւ եւ եղաւ գերազանցապէս ճարտարարուեստական երկիր եւ վերջնականապէս ազատագրուեցաւ Եւրոպական տնտեսական կախուածութենէն :

1904 թուին բաժնետիրական ընկերութիւնները սկսան կապիտալիստական ձեռնարկութիւններու հիմնական ձեւը ստանալ : Անոնց պատկանող դործատեղիներու եւ գործարաններու մէջ կ'արտադրուէր երկրի արդիւնաբերութեան 70 առ հարիւր տոկոսով արտադրութիւններ : Թրքստներու կապիտալը 1908 թուին հասաւ 35 միլիառ տոլարի : Թրքստները մոնոպոլի ենթարկեցին երկաթի եւ պողպատի արտադրութիւնը եւ կազմեցին պողպատի թրքստ . ուրիշ թրքստ մը՝ նավթի թրքստը, որ նավթի արտադրութիւնն ու նավթի վաճառքը մոնոպոլի ենթարկեց . եւ այսպէս ուրիշ շատ մը թրքստներ :

90-ական թուականներու վերջերը Մ. Նահանգները աքտիւ իմպերիալիստական քաղաքականութեան հակեցան : Մոնրոյի(*) վարդապետութիւնը՝ «Ամերիկան ամերիկացիներու համար» նոր նշանակութիւն ստացաւ : Նախապէս Մ. Նահանգները կը բողոքէին Եւրոպացիներուն դէմ, որոնք կը խառնուէին ամերիկեան ներքին գործերուն : Այժմ ամերիկեան իմպերիալիստները ամբողջ մայր ցամաքի տնտեսական ու քաղաքական ստրկացման քաղաքականութիւնը որդեկրեցին եւ սկսան իրենց պայմանները թելադրել հարաւ-ամերիկեան հանրապետութիւններուն : 1898 թուին, ամերիկո-սպանական պատերազմով Մ. Նահանգները գրաւեցին Քուպա կղզին, անոր հետ՝ Ֆիլիպեան կղզիները . ասով իրենց դիրքը ամբացուցին Պաղատական Ուիկիանոսին մէջ : Ֆիլիպեան կղզիները Մ. Նահանգներու համար եղան տեսակ մը ռազմական կայան՝ յառաջանալու դէպի Չինաստան, որ վաղուց ի վեր զրգոսած էր ամերիկեան կապիտալի ախորժակը : Նախագահ Թէոտոր Ռուզվելթ (1901-1909), որ ատեն մը Ափրիկէի մէջ վայրի դադաններ կ'որսար, նախագահութեան շրջանին ալ սկսաւ որսալ նոր երկիրներ, երբ ձեւակերպեց ամերիկեան իմպերիալիզմի

(*) ձէյմս Մոնրո Միացեալ Նահանգներու 5-րդ նախագահն էր 1758-1831 : 1817-ին նախագահ ընտրուեցաւ եւ 8 տարի պաշտօնավարեց :

համար նոր ծրագիր մը. այն էր — «Խաղաղական Ովկիանոսի տիրապետութիւնը պէտք է պատկանի միայն ու միայն Միացեալ Նախագ-ներուն» : «Միայն պատերազմով, — կ'ըսէր ան, — մենք պիտի կըր-նանք ձեռք բերել այն առնական յատկութիւնները, որոնք անհրա-ժեշտ են կեանքի պայքարին մէջ» :

Այդ տիրապետութիւնը ապահովելու համար անհրաժեշտ էր ամենակարճ ճամբայ մը գտնել Ատլանտեան Ովկիանոսէն անցնելու Սաղաղականը : Հսկայական ծրագիր մըն էր այդ, որու իրագործման համար ամերիկեան իմպերիալիզմը Փանամայի ջրանցքը փորելու աշ-խատանքին նուիրուեցաւ : Եւ այդ ջրանցքը բացուեցաւ 1914 թուին : Փանամայի ջրանցքը ո՛չ միայն ապրանքաշրջանառութեան տեսակէ-տէն տնտեսական առաւելութիւն մը կ'ապահովէր Մ. Նահանգներուն համար, այլև Վաշինկթընի երկրին կուտար ռազմագիտական ամե-նակարեւոր դիրքաւորում մը. ան երկու ովկիանոսներու վրայ իր զարգացուցած նաւատորմիդները կրնար միացեալ ուժով շարժման մէջ դնել Արեւելքէն Արեւմուտք, կամ՝ Արեւմուտքէն Արեւելք :

Փանամայի ջրանցքի միջոցով ամերիկեան արդիւնաբերութիւ-նը իրեն համար ջրային նոր ճամբայ մը բացաւ, այդպիսով մի քանի հարիւր հազար քիլոմետրերով կրճատեց չին ճամբաները : Այդ ժա-մանակէն սկսեալ Սաղաղական Ովկիանոսի առուտուրը աստիճանա-բար սկսաւ Մ. Նահանգներու ձեռքն անցնիլ. իսկ հանդամանքը ար-դէն ճամբայ կը բանար որ ծովերու իշխանութիւնն ալ Անգլիայէն փո-խանցուէր տուարի կայսրութեան :

1. — ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԻԱՆ

Ռուսաստանի կապիտալիստական զարգացումը Արեւմտեան Եւ-րոպայի համեմատութեամբ դանդաղ քայլով կ'ընթանար : Գիւղացիա-կան ռեֆորմէն անմիջապէս յետոյ՝ արդիւնաբերութիւնը ժամանակա-ւոր ճզնաժամի ենթարկուեցաւ : Տուժեցին այն արտադրութիւնները, ուր ռեֆորմէն առաջ կ'իշխէր ճորտական աշխատանքը, այն է՝ եր-կաթագործական գործարանները եւ դինուորական հագուստ պատ-րաստող գործարանները : Թոյլտուութիւն ստանալով ձգելու գործա-րանական ծանր աշխատանքը՝ բանուորները մեծ խումբերով կը հե-ռանային Ուրալի գործարաններէն ու կ'երթային ուրիշ տեղեր : Օրի-նակ՝ Պէրմի նահանգի մէկ գաւառէն հեռացաւ ամբողջ բանուորա-կան բնակչութեան երեք չորրորդը : Անոնք չնչին դիներով կը ծախէին իրենց տուները, բանջարանոցները, երբեմն ալ պարզապէս կը լքէին ամէն ինչ, միայն թէ հեռանան զարչելի գործարանէն : Հեռացող բանուորներուն փոխարինող ձեռքեր չկային, ատոր համար արդիւնա-բերութիւնը սկսաւ քայքայուիլ :

Գիւղացիական տնտեսութիւնը հետզհետէ կը վերածուէր ապ-րանքային տնտեսութեան եւ ատով իր մէջ կը զարգացնէր այն բոլոր հակասութիւնները, որոնք յատուկ են կապիտալիստական տնտեսու-թեան : Այդ հակասութիւնները իրենց ամբողջութեամբ կը նպաստէին գիւղացիութեան կազմալուծմանը, անոր «ապագիւղացիացմանը» . անոնք գիւղացիութեան մէջ նոր դասակարգեր կը ստեղծէին — այն է՝ գիւղական բուրժուազիա, ունեւոր գիւղացի եւ գիւղական պրոլետա-րիատ . միւս կողմը՝ հողաբաժին ունեցող վարձու բանուորներ, — միաժամանակ պահպանելով միջանկեալ օղակը՝ միջակ գիւղացիու-թիւնը : Գիւղացիական տնտեսութեան բոլոր խմբաւորումներուն մէջ սկսաւ շեշտուիլ «գրամի ուժեղ իշխանութիւնը» :

2. — ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԱՌՈՐՈՒՄՆԵՐԸ 1861-ԷՆ ՅՅՏՈՅ

Ռուսիան, գիւղացիական ռեֆորմէն քիչ յետոյ՝ ինքնին կը ներ-կայացնէր երկիր մը, ուր զարգացող կապիտալիստական տնտեսու-թիւնը տարօրինակ կերպով կը շարունակուէր չին ինքնակալական-ճորտատիրական պետութեան տարրերուն հետ : Այդ անցողական շըր-ջանին ռուսական հասարակութիւնը բաւական խայտաբղէտ պատկեր կը ներկայացնէր իր քաղաքական խմբաւորումներու մէջ արտացոլա-ցընելով այս կամ այն դասակարգի շահերուն համապատասխանող գա-նազան հոսանքներ : Ինքնակալական միապետութեան կողմնակիցնե-րու խումբը կը կազմէր ազնուական կալուածատիրական հարուստ ե-րեւելիներու վերնախաւը : Ազատական-միապետական գաղափարները կը տարածուէին միջին ազնուականութեան եւ բուրժուազիայի լայն շրջանակներուն մէջ, որոնք կը ձգտէին թոյլտուութիւն ստանալ՝ կա-ռավարական գործերուն մասնակից դարձնելու իրենց ընտրած ներ-կայացուցիչները : Ազատական-դեմոկրատական խմբաւորման մեծա-գոյն մասը կը կազմէր մանր ազնուականութիւնը, որուն համար ամե-նաընդունելի վարչաձեւը հասարակական դանազան խմբաւորումներէն ընտրուած լայն ներկայացուցչական մարմինն էր : Միւս խմբաւորումն էր արմատական սոցիալիստական մտաւորականութիւնը : Ասոր իտէ-ալն էր գոյութիւն ունեցող քաղաքական եւ տնտեսական կարգերը ու-չընչացնել : Եւ այս խումբն էր որ սկսաւ կռիւր սոցիալիստական ա-պագայի համար, թէեւ անոր սոցիալիզմը Արեւմտեան Եւրոպայի իւ-տոպիստական ճապաղ սոցիալիզմն էր : Այս բոլորին հետ մէկ բան ստոյգ էր. այդ հասարակական-քաղաքական մտքի բոլոր հոսանքները անանցանելի խրամատներով իրարմէ բաժնուած չէին, այլ մէկը միւ-սին հետ խառնուելով կը ստեղծէին նոր հոսանքներ :

3.— ՀԵՐՑԷՆԸ

60-ական թուականներուն յեղափոխական շարժման հիմնադիրները հանդիսացեր են երկու մեծ մարդիկ. անոնցմէ մին էր Ա. Ի. Հերցէնը (1812-1870), միւսը՝ Ն. Գ. Չերնիշևսկին (1828-1889) :

Հերցէնը Մոսկուայի հարուստ կալուածատէր Յակոբովի եւ դերմանուհի Հաագի զաւակն է, որ աւարտեր էր Մոսկուայի համալսարանը : Ծատ կանուխէն տարուեցաւ Սէն Սիմոնի իտէալներով եւ Ռուսաստանի մէջ սոցիալիզմի առաջին նախակարապետներէն մին եղաւ : Իր որդեգրած գաղափարները իրեն մէջ ուռճացուցին խոր ատելութիւն՝ ամէն մէկ կամայականութեան ու բռնութեան դէմ : Ան դարձաւ յեղափոխական : Աքսորուեցաւ Պէրմ, յետոյ՝ Վլատա եւ Վըլատիմիր : Հինգ տարի աքսորի կեանքը ապրելէ վերջ վերադարձաւ Մոսկուա, ուր յարեցաւ Ստանկևիչի խմբակին, եւ ծանօթանալով Հեղձիկի եւ Ֆոյէրբախի փիլիսոփայութեան, սկսաւ գրական աշխատանքով զբաղիլ : 1847 թուին, գնաց Ֆրանսա : Փարիզի մէջ ան ականատես եղաւ 1848-ի Յունիսեան ջարդին : Յեղափոխութեան անյաջողութիւններէն Հերցէնը հասաւ այն եզրակացութեան՝ որ «ղառամեալ Եւրոպան ի վիճակի չէր լուծելու ընկերային հարցը» :

Հերցէնը որքան շատ յուսախարուած էր Արեւմտեան Եւրոպայէն նոյնքան մեծ հաւատք ունէր դէպի Ռուսաստանը : Ռուսաստանի մէջ քանի որ հողի համայնական սեփականութիւն գոյութիւն ունէր, իր կարծիքով՝ հոն աւելի շուտ պիտի իրականանար սոցիալիստական ծրագիրը :

1850-ին Հերցէնը անցաւ Լոնտոն, հոն հաստատեց տպարան մը եւ սկսաւ հրատարակել երկշարթաթերթ մը — «Կոկոլ» (Ջանգ) : Ծորտատիրական իրաւունքի դէմ պայքարը իր թերթին գլխաւոր նպատակը դարձաւ : Ան կը պնդէր որ «մեզի համար ազատութիւն չըկայ, որքան ատեն որ ճորտատիրութեան անէծքը ծանրացեր է մեր գլխուն վրայ» :

Հերցէնը առաջինն էր որ բարձրացուց պայքարի մեծ դրօշակը՝ դիմելով մասսաներուն եւ առանց երկիւղ կրելու անցաւ յեղափոխական դեմոկրատիայի կողմը ընդդէմ լիբերալիզմի : Հերցէնը կ'աշխատէր գլուխ հանել ռուս գիւղացիներու ազատագրումը, ուրկէ պիտի յառաջանար սոցիալիստական դարգացումը. ան բանուորութեան դերը նկատի չէր առներ : Հերցէնի թերին այս կէտին մէջ էր :

4.— ՉԵՐՆԻՇԵՒՍԿԻՆ

60-ական թուականներուն յեղափոխական երիտասարդութիւնը արդէն համամիտ չէր Հերցէնի տեսակէտներուն, մասնաւորապէս տաքսիկայական խնդիրներու մէջ, բայց աւելի համակիր էր միւս ականաւոր գործիչին՝ Չերնիշևսկիին, զոր Մարքսը անուանած էր ռուս ամենամեծ գիտնականն ու քննադատը :

Չերնիշևսկին քահանայի որդի էր. իր կրթութիւնը ստացեր էր Սարաթովի հոգեւորական հիմնարկութեան մէջ. շատ գիրքեր կարդացեր էր եւ գիտէր տասը օտար լեզուներ : Փետերսպուրկի համալսարանը աւարտելէն յետոյ՝ երեք տարի Սարաթովի գիմնադիայի մէջ դասատու եղաւ, ապա Փետերսպուրկի զինուորական դպրոցին մէջ գրականութեան ուսուցիչ եղաւ : Ֆոյէրբախի մատերիալիստական տեսութիւնները պաշտպանող իր մէկ ճառը ժողովրդական Լուսաւորութեան նախարարութեան կողմէ հաւանութեան շարժանացաւ : Հըրաժարելով ուսուցչական պաշտօնէն, նուիրուեցաւ լրագրական աշխատանքի : Ան անդադար կը մերկացնէր պահպանողական եւ ազատական հնացած հայեացքները եւ փաստելով բուրժուական գիտութեան կեղծիքը, հասարակութիւնը կը դատախարակէր յեղափոխական ոգիով : Ասոր վրայ Երակոյտը Չերնիշևսկին զրկեց քաղաքացիական իրաւունքներէն եւ զայն աքսորեց Սիպերիա, ուր ան 21 տարի մնալէ ետք իրեն թոյլատրուեցաւ վերադառնալ Աստրախան, ապա տեղափոխուիլ իր հայրենի քաղաքը, Սարաթով, ուր կնքեց իր մահկանացուն :

Չերնիշևսկիի սոցիալիստական տեսութիւնները կաղապարուած էին Ֆրանսական իւտոպիստ սոցիալիստներու ազդեցութեան տակ, բայց ան չմնաց այդ ազդեցութեան օղակին մէջ, այլ դուրս եկաւ անկէ եւ մօտեցաւ գիտական սոցիալիզմի՝ յեղափոխական ուղիին. եւ այդ այն ատեն՝ երբ մարքսիզմը տակաւին չէր տարածուած Ռուսաստանի մէջ : Ասոր համար Չերնիշևսկին Հերցէնը մոռցնել տուաւ եւ չահեցաւ լայն ժողովրդականութիւն :

5.— «ՆՐԻՏԱՍԱՐԴ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ» .
ԿԱՐԱԿՈՋՈՎԸ, ՆԵՉԱՅԵՒԸ, ՏԿԱԶՈՎԸ

60-ական թուականներուն, ռուս յեղափոխական պատմութեան մէջ աւելի լուրջ տեղ կը բռնէին ուսանողական խմբակները, որոնք կը կազմէին հանրապետականներու ծայրայեղ անհաշտ հատուածը, որոնք հակառակ էին կիսամիջոցներու եւ իւրացուցեր էին Չերնիշևսկիի Հերցէնի ուղղած նամակի մէջ արտայայտած այն միտքը, թէ անտանելի դրութենէ ազատուելու միակ միջոցն է «դիմել կացիմիս» :

Մոսկուայի ուսանողական խմբակ մը Չայնչեւսկիի գլխաւորութեամբ 1862-ին հրատարակեց «Երիտասարդ Ռուսաստանը»: Ասոր հեղինակներու ծրագիրն էր հանրապետական-դաշնակցային միութիւն կազմել, կիները իրաւական տեսակէտով հաւասարեցնել տղամարդոց, կազմակերպել հասարակական գործարաններ եւ խանութներ, ձրի ու պարտադիր ուսում տալ բոլոր երեխաներուն: Այդ կարգերը հաստատելու համար անոնք կ'ընդունէին թէ պէտք է արեւնալի յեղափոխութիւն, յեղափոխութիւն մը՝ որ բնաջինջ ընելու է կայսերական կուսակցութեան բոլոր կողմնակիցները: Տնտեսական եւ հասարակական կեանքի նոր հիմնարկներ հաստատելու համար ժողովրդական կուսակցութիւնը պէտք է իշխանութիւնը գրաւէ եւ հաստատէ տեւական դիկտատուրա:

Մոսկուայի ուրիշ մէկ ուսանողական խմբակի մէջ, ուսանողները որոշեցին Ալեքսանդր Բ. ցարը սպաննել: Մահափորձը անցաւ անյաջող, իսկ տեւորիստ Կարակոզովը, սարսափելի տանջանքներու ենթարկուելէ վերջ կախազան բարձրացաւ:

60-ական թուականներու վերջերը Փետերսպուրկի ուսանող Նեչայելը քաղաքական խմբակ մը կազմակերպեց, պայքարելու ցարական կառավարութեան դէմ: Նեչայելը մօտ էր Բակունինին, բայց իր յեղափոխական գործունէութեան ծրագրին մէջ մեծ տեղ տուած էր քաղաքական պայքար մղելու անհրաժեշտութեան:

Նեչայելը մօտէն ծանօթ էր յեղափոխական գրող Տկազովի, որ նոյնպէս անհրաժեշտ կը համարէր կազմակերպել դաւադրական խումբ՝ յեղափոխական մտաւորականութեան նախաձեռնող փոքրամասնութենէն եւ գրաւել իշխանութիւնը: Տկազովը ծանօթ էր Մարքսի գործերուն, նոյն ատեն՝ հակառակ էր Բակունինի անարխիզմին, բայց Մարքսի տեսակէտները այնքան ազճատուած ձեւով իւրացուցեր էր որ Պլեխանովը անոր հայեացքները որակեց որպէս «պարզացուած բակունիզմ»:

6.— ԲՈՒՆՏԱՐ ՆԱՐՈՂՆԻԿՆԵՐԸ ԵՒ ՊՐՈՊԱԿԱՆՏԻՍՏ ՆԱՐՈՂՆԻԿՆԵՐԸ

70-ական թուականներուն յեղափոխականօրէն տրամադրուած երիտասարդութեան առջեւ շարք մը խնդիրներ դրուած էին. ի՞նչ ուղիով կատարուելու է սոցիալական յեղաշրջումը Ռուսաստանի մէջ, որո՞նք են ատոր հետ կապուած յեղափոխական անելիքները, յեղափոխական աշխատանքի համար ինչպիսի՞ գործնական ձեւ պէտք է ընդհանրացնել: Ռուս երիտասարդութիւնը ահա այս հարցերու պատասխանները կը փնտռէր: Տաքտիկայական բնոյթ կրող այդ պա-

տասխանները նարոզնիկներու մէջ յառաջացուցին երկու թեւ: Անոնցմէ մէկը ընդունեց յիւզացիական յեղափոխութեան զազաւարը — անարխիստ Բակունինի ծրագիրը, այն Բակունին, որ երիտասարդութիւնը կ'ուզէր տանիլ «ժողովուրդի մէջ»՝ յիւզացիութիւնը դէպի ապստամբութիւն հրահրելու համար: Պիւզացիական համայնքի ներսը գոյութիւն ունի բունտարական Ստենկօ-Ռազինեան, Պուզաչովական հոսանք, այնտեղ է որ պէտք է սպասել ուսս ժողովուրդի ապստամբութիւնը: Պետութիւնը կը խանդարէ համայնքի զարգացումը, ան պէտք է վերցուի, եւ անոր տեղն անցնի համայնքներու ազատ դաշնակցութիւնը: Հասարակական այդօրինակ իտէալի ձգտելով, այլեւս պէտք չկայ պայքարիլ քաղաքական ազատութեան համար. ատիկա սոսկ խաբէութիւն է բուրժուազիայի կողմէն:

Միւս հոսանքի ներկայացուցիչները ժողովուրդին կը դիմէին ո՛չ թէ ապստամբութեան կոչով, այլ տեսական սոցիալիստական պրոպականդայի միջոցով պատրաստելու ժողովուրդը առաջադրուած խնդիրները ըմբռնելու համար: Այս տեսակէտի կողմնակիցները կոչուեցան «Լափրիստներ», յեղափոխական Լափրովի անունով: Լափրովի «պատմական նամակներուն» մէջ կը զարգացնէր այն տեսութիւնը, որ զարգացած մարդը, «քննադատօրէն մտածող անհատը» իր զարգացումը ստացեր է ժողովուրդի կատարած անդուլ աշխատանքի շնորհիւ, ուրեմն ան պարտաւոր է իր ամբողջ կեանքով նուիրուիլ այդ ժողովուրդին: Այսպիսի անհատ մը, անպայմանաւ կ'ունենայ իր համակիրները, որոնց թիւը տարիներու ընթացքին՝ կը հասնի տասնեակ հազարներու եւ ահա կը յաղթանակէ սոցիալական յեղափոխութիւնը: Լափրիստները բանուորներուն կարեւորութիւն կուտային, բայց զանոնք կը համարէին որպէս միջնորդներ:

7.— ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԷՋ, ՀՈՂ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

1874 թուի գարնանը ուսս յեղափոխական երիտասարդութիւնը կը տեսնէր որ արդէն ժամանակը հասեր է մտնելու ժողովուրդին մէջ: Միայն պէտք էր նախապատրաստել այն ամէնը ինչ որ անհրաժեշտ էր այդ բանի համար: Եւ այդ անհրաժեշտ բանը Փիլիքական աշխատանքի ընտելանալն էր: Ահա թէ ինչո՞ւ այդ երիտասարդները սկսան մտնել արհեստանոցները եւ սորվիլ կօշկակարութիւն, հիւսնութիւն, փականագործութիւն, եւ այլն: Ահաւաստի փոքրիկ շէնք մը խոհանոցով. կահաւորութիւնը աղքատիկ, անկողինները՝ սպարտական. ներս մտնողի քթին կը հասնի կաշիի, մոմախառն կպրածիւթի հոտը. կօշկակարանոցն է ան: Երեք երիտասարդ ուսանողները

լծուած են աշխատանքի: Անոնցմէ մէկը յատկապէս զբաղած է երկ-
տակ հաստ ներքան փակցնելով երկարաճիտ կօշիկներուն. ներքանի
այդ երկու կտորներու միջեւ պէտք է պահել անցազիր եւ դրամ. ո՛վ
զիտէ, նայած պարագային՝ անոնք պէտք են: Պատուհանին մօտ կը-
ռացած՝ նստած է երիտասարդ աղջիկ մը. ան շապիկներ, տափառներ
եւ ծխախոտի քսակներ կը կարէ իր ընկերներուն համար, որոնք պատ-
րաստ են պրոպականդի գործով երթալ ժողովուրդի մէջ: Աշխատող
դէմքեր, բոլորն ալ լուրջ, առոյգ, պայծառ ու երիտասարդ: Անոնք
շատ քիչ կը խօսին, որովհետեւ ժամանակ վատնել չեն ուզեր. եւ ար-
դէն ի՞նչ պիտի խօսին, երբ ամէն ինչ պարզ է իրենց համար: Նոյնը
կը նկատուի փողոցներուն մէջ, երբ անոնք իրարու կը հանդիպին. շա-
ղակրատութիւն չկայ. միայն հետեւեալ հարցումները կը կրկնուին.
«Ո՞ր երթալու էք», կամ «ո՞ր շրջանը ուղևորելու էք». իսկ տըր-
ուած պատասխանները. — «Վոլգայի շրջանը», «Ուրալ»...:

Այս ձևի պրոպականդան ծաւալեցաւ 37 նահանգներու մէջ:
Այդ աշխատանքով տարուած էր ուս երիտասարդութեան լաւագոյն
մասը: Բայց ի՞նչ ըսել որ սոցիալիստական պրոպականդի հանդէպ ան-
տարբեր էր զիւղացիութեան կուլակային շերտը, որ թշնամի ըլլալով
հողատէր ազնուականութեան՝ պատրաստ էր օժանդակելու քաղաքա-
կան յեղափոխութեան, բայց չէր կրնար ընդունիլ հողի համայնական
սեփականութիւնը: Գալով հողազուրկ զիւղացիներուն, անոնք եւս,
նայած իրենց չքաւոր վիճակին, երիտասարդ պրոպականտիստներուն
չէին համակրիր. — «Մենք ուտելիք բան չունինք, — կ'ըսէին անոնք,
— ձեր պրոպականդան մեր անօթի ստամոքսին ոչինչ կուտայ»: Այս-
պիսով խորտակուեցան երիտասարդ պրոպականտիստներու յոյսերը:
Ամենէն կարեւորը դպրոցներ բանալն էր, բայց այդ ալ ունէր իր
դժուարութիւնները. տեղական իշխանութիւնը խոշոր արգելքներ կը
յարուցանէր ու եթէ ծանր զոհողութիւններով անոնք կը յաջողէին
դպրոցի նմանող հիմնարկ մը հաստատել, անմիջապէս վրայ կը հաս-
նէր ձերբակալութիւնը:

1876 թուին Դեկտեմբեր 6-ին Փետերսպուրկի մէջ կազանսկա-
յա հրապարակին վրայ տեղի ունեցաւ քաղաքական ցոյց մը, որ Ռու-
սիոյ մէջ առաջին ցոյցն էր, ուր պարզուեցաւ կարմիր դրօշակը: Յոյ-
ցը բազմամարդ չէր. հազիւ 250 հոգիներ մասնակցեցան ցոյցին. մի-
այն թէ ան կարեւոր կը համարուի այն բանին համար, որ անիկա քա-
ղաքական պայքարի խորհրդանշանը դարձաւ:

Ազիտացիայի միջոցով զիւղացիական ապստամբութիւն յա-
ռաջացնելու փորձերը երբ անյաջող անցան, Նարոդնիկները ստիպուե-
ցան «չրջիկ» ազիտացիայէն անցնիլ «նստակեաց» պրոպականդային:
Անոնք թէ՛ անհատապէս եւ թէ՛ խմբովին բնակութիւն կը հաստատէին

զիւղերու մէջ իրրեւ ուսուցիչներ, զիւղատնտեսներ, բժիշկներ եւ ար-
հեստաւորներ ու զիւղացիներու մէջ պրոպականդ կը մղէին: Նարոդ-
նիկական շարժման պատմութեան այդ նոր շրջանին էր որ հրապա-
րակ իջաւ «Հող եւ Ազատութիւն» կոչուած Նարոդնիկական յեղափո-
խական կազմակերպութիւնը, որու մասին գնահատական հետեւեալ
տողերը արձանագրեց յեղափոխութեան աննման ռահվիրան՝ Լենի-
նը. — «Հող եւ Ազատութիւն» կազմակերպութիւնը սոցիալ դեմոկրատ-
ներուն կտակեց ցարիզմի դէմ վճռական պայքար յայտարարող՝ մար-
տական կեդրոնացած կազմակերպութեան գաղափարը»:

8. — ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ ԾԱՐԺՄԱՆ ԱՆՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Չնայած որ 70-80-ական թուականներուն Ռուսաստանի յեղա-
փոխական հոսանքները գունաւորուած էին բազմազան գաղափարա-
կան երանգներով, այն ատենուան յեղափոխական շարժումը ընդհա-
նուր անուն մը ունէր. — «Նարոդնիկութիւն»: Նարոդնիկական գա-
ղափարախօսութեան գլխաւոր յատկանիշները պէտք է համարել նախ՝
պատմութեան սուրբնիկսիլիստական (ենթակայական) ըմբռնումը.
այսինքն՝ կարծիքներն են որ կը կառավարեն աշխարհը, շատ դարգա-
ցած անհատներն են որ կը կերտեն պատմութիւնը: Նոյն միտքը իր
ատենին արտայայտեց անգլիացի մեծանուն հեղինակը՝ Թոմաս Գար-
լայլ (1795-1881), երբ իր հեղինակած գործերով փաստել ուզեց թէ՛
«պատմութիւնը մեծ մարդոց կենսագրութիւնն է»: Նարոդնիկներու
այդ տեսութեանէն կը բխէր մտաւորականութեան տուած անոնց
գերզնահատումը: Երկրորդ կէտը այն էր որ անոնք համոզուած էին
թէ՛ զիւղացիական համայնքը կը հանդիսանայ այն բջիջը, որ իրրեւ
հիմք պիտի ծառայէ Ռուսիոյ սոցիալիստական վերակազմութեան հա-
մար: Իսկ երկրորդ կէտը այն էր, որ անոնք կը կարծէին թէ կապի-
տալիզմը որպէս խորթ երեւոյթ մը՝ Ռուսաստանի մէջ նախադրեալ-
ներ չունի դարգացման համար: «Յեղափոխական Նարոդնիկութիւնը»
Լենինը բնորոշած է որպէս Գիւղացիական Յեղափոխական կուսակ-
ցութիւն, կուսակցութիւն մը, որուն հիմնական նպատակն եղած է
վճռական, անձնագոհ պայքար մղել Ռուսաստանի ճորտատիրութեան
եւ ինքնակալութեան դէմ:

Ինքնակալութեան դէմ պայքարելու ատեն՝ Նարոդնիկները յե-
նակէտ չգտան յանձինս որեւէ որոշ դասակարգի մը: Անոնք բանուոր
դասակարգի պատմական դերի նշանակութիւնը մեծ մասով չէին ըմ-
բռներ եւ շատ քիչ բան ըրին բանուորութիւնը կազմակերպելու հա-
մար. զիւղացիութեան վերաբերմամբ անոնք յուսախարուեցան, իսկ

բութուական ազատականներն ալ միմիայն նիւթական օժանդակութիւն կ'ընէին քաղաքական յեղափոխութեան օգտին: Նարողներէն ետ ալ մեկուսացումը անյաջողութեան կը դատաւարաւորէր անոնց շարժումը: Նարողներէն շարժման անյաջողութեան հիմնական պատճառներէն մէկն ալ այն էր, որ Նարողներէն չէին հասկցած Ռուսիոյ ապագայ յեղափոխութեան բնոյթը: Անոնք քաղաքական յեղաշրջման միջոցով կ'ուզէին պայմաններ ստեղծել սոցիալիզմին անցնելու համար, մինչդեռ 70-80-ական թուականներուն Ռուսաստանի մէջ նախապայմաններ չկային սոցիալիստական արտադրութեան համար. եւ այն յեղափոխութիւնը, որ յառաջիկային պիտի բռնկէր, պէտք է հանդիսանար բութուական-գեմոկրատական յեղափոխութիւն:

9.— ՌՈՒՍԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

1892 թուին կնքուեցաւ Փրանկո-ռուսական դաշինքը: Ռուսիա իր նոր դաշնակիցէն հսկայական վարկ ստացաւ: Երկու դաշնակից երկիրներն ալ գոհ մնացին: Ֆրանսան իր կապիտալները գործածութեան դնելու շահաւէտ տեղ դտեր էր. իսկ Ռուսիա այդ կապիտալներու շնորհիւ սկսաւ թափ տալ իր ճարտարարուեստի զարգացումին: Իր կողքին ունենալով հզօր դաշնակից մը, Ռուսիա խառնուեցաւ Չին-ճարտարական գործերուն, իր վերահսկողութիւնը հիմնեց Մանչուրիայի մէջ, Չինաստանի վրայով դէպի Վլատիվոստոկ երկաթուղիի գիծ երկարեց — չին-արեւելեան երկաթուղագիծը, որ առանձին գծով գնաց դէպի հարաւ. 1898 թուին, երբ Գերմանիան Բիաօ-Չաոն գրաւեց, Ռուսաստանն ալ անմիջապէս յետոյ՝ Չինաստանէն վերցուց Արեւելեան Ասիոյ ամենակարեւոր գիրքը — Փորթ Արթիւրը՝ Բուսան-թուան թերակղզիին վրայ:

Սակայն զեռ 20-րդ դարու սկիզբները, ռուսական իմպերիալիզմը կազմակերպուած չէր: Անոր կազմաւորման արդեւք էին Ֆէոդալիզմի կայանքները, որոնք կը կաշկանդէին կապիտալիզմի ձեռքերն ու ոտքերը: Բայց այսուամենայնիւ ռուսական կապիտալիզմը անբնական էր որ մնար շղթայակապ վիճակի մէջ. ան հարկ էր շարժէր, մտնէր մոնոպոլիստական փուլը: Ծիշդ է, Ռուսաստանը իր սեփական ուժերով այդ քայլը չառաւ, այլ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Գերմանիոյ մոնոպոլիստական կապիտալի օժանդակութեամբ կրցաւ ոտքի կանգնիլ: Բայց ռուսական իմպերիալիզմը ուրիշներու ենթակայ ըլլալով հանդերձ՝ նոյնքան զազանացած ու զիշատիչ եղաւ, ինչպէս էին իր աւագ եղբայրները:

Ռուսական արդիւնաբերութիւնը թրքստի ճամբան մտնելու նախապատրաստուեցաւ 1900-1902 տարիներուն երեւան եկած ճըզ-

նաժամով, այն մեծ փլուզումով՝ որու նմանը Ռուսաստանը երբեք չէր տեսեր: Ռուս արդիւնաբերական ձեռնարկութեանց տէրերը կը ձգտէին մոնոպոլիստական միաւորներ կազմել, անոնց այդ նպատակը իրականացնելու նպատակով հանգամանքը արդէն ներկայացեր էր, որովհետեւ ռուսական արդիւնաբերութեան համակերպողները հասեր էր այն ստաիճանին, որ կապուած էր բաժնետիրական եւ օտարերկրեայ միացեալ կապիտալի խոշոր զերին հետ:

Ռուսական իմպերիալիզմը վերջնականապէս կազմուեցաւ 1904-1912 տարիներու ընթացքին: Այդ ժամանակներուն էր որ ռուսական ինտուստրիայի վճռական ճիւղերուն մէջ մոնոպոլիստական սիստեմը տիրապետող դարձաւ: Կազմուեցան պանքաներու մոնոպոլիստական միութիւններ, որոնք արդիւնաբերութիւնները ենթարկեցին իրենց հսկողութեան, նոյն առեւն կ'ուժեղանար ռուսական կապիտալի արտահանումը եւ անոր հետ՝ ռուսական սէնտիկատներու մասնակցութիւնը երկիրներու եւ շուկաներու բաժանման ու վերաբաժանման մէջ:

Ռուսաստանը այսպիսով իւրայատուկ իմպերիալիստական քաղաքականութեան ուղի մը բռնեց: 1904-1912 տարիներուն ռուսական այդ քաղաքականութեան արդիւնքն էր ռուս-ճարտարական պատերազմը, Մանչուրիայի եւ Մոնկոլիայի յափշտակումը, Ազգանիստանի ու Պարսկաստանի շուկաներու նուաճումը: Ռուսաստանը կամաց կամաց կը քալէր դէպի Հնդկական Ովկիանոս, բան մը, որ վախ կը ներշնչէր ծովերու թագուհիին՝ Անգլիոյ: Դեռ 1900-ին, ռուս Ֆիւնանսիստները Պարսկաստանին տուին մեծ փոխառութիւն մը երկուք ու կէս միլիոն ստէրլինկ: Յետագային անոնք Պարսկաստանէն շատ կարեւոր զիջումներ ստացան: Ռուսաստանի եւ Անգլիոյ միջեւ տարիներէ ի վեր սուր լարուածութիւն մը գոյութիւն ունէր, որ յառաջ կը տարուէր խուլ պայքարով: Այդ պայքարը հարթուեցաւ 1907 թուին, երբ երկու պետութեանց միջեւ կայացաւ համաձայնութիւն մը, որով Պարսկաստանը բաժնուեցաւ ազդեցութեան շրջաններու:

Բացի Հեռուոր Արեւելքէն, Պարսկաստանէն եւ Ազգանիստանէն, Ռուսաստանը կը հետաքրքրուէր Վոստոքի եւ Դարդանէլի խնդրով: Ռուս կապիտալիստներու ձգտումն էր գրաւել Կ. Պոլիսը եւ նեղուցները եւ նետուիլ Միջերկրական Ծովը: Յորենի արտահանութեան ամենէն կարճ ու ապահով ճամբան էր այդ: Ռուսական իմպերիալիզմը իր քաղաքականութիւնը կը վարագուրէր կրօնական եւ մարդասիրական նպատակներով. Կոստանդնուպոլսոյ Այա-Սոփիա մզկիթին վրայ (Բիւզանդական հին տաճարին վրայ) իսլամական մա-

Հիկի փոխարէն պիտի ծածանէր Քրիստոսի խաչը եւ քրիստոնեայ
հպատակները պիտի ազատուէին թրքական բռնակալութենէն: Այդ
հպատակներու կարգին էին տաճկահայերը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բուրժուա պատմաբաններու գրած պատմութիւնները աչքէ
կ'անցնեմ, մասնաւորապէս Առաջին աշխարհամարտի շուրջ: Գրեթէ
բոլորն ալ նոյն զիծով կ'ընթանան: Նոյն պատերազմին նախորդող եւ
անոր յաջորդող զէպքերու արձանագրութիւն՝ առանց անդրադառնա-
լու այդ պատերազմին տնտեսական դրդիչ ազդակներուն: 1914 Յու-
նիս 28-ին Աւստրիոյ դահաժառանգ՝ Արքիդուքս Ֆրանսիս Ֆերդի-
նանդ՝ Սերպիացի ուսանողի մը կողմէ կ'ըսպաննուի Պոսնիայի մայ-
րաքաղաքին՝ Սերայէվոյի մէջ: Աւստրիա հատուցում կը պահանջէ,
Սերպիա կ'իյնայ նեղ դրութեան մէջ: Ֆրանսա եւ Անգլիա Սերպիոյ
պաշտպան կը կենան: Աւստրիա պատերազմ կը յայտարարէ: Գերմա-
նիա կը կենայ Աւստրիոյ կողքին. «Աւելի քան երբեք, ճիշդ ժամանակն
է», կ'ըսէ ան ու կ'ըսկի ընդհանուր պատերազմը: Ռուսիա կ'անցնի
զօրահաւաքի: Գերմանիան պատերազմ կը յայտարարէ Ռուսիոյ դէմ:
Գերմանիան Լուքսեմպուրկի եւ Պելճիքայի վրայով կը մտնէ Ֆրան-
սա: Թուրքիան ալ կը մտնէ պատերազմի մէջ: Պալքանեան ազգերէն
մէկ երկուքը կ'անցնին Գերմանիոյ կողմը, միւսները՝ դաշնակիցնե-
րու կողմը: 1915 Մայիս 23-ին, Իտալիան կը միանայ դաշնակիցնե-
րուն: 1817-ի Ապրիլին, Ամերիկայի Միացեալ Նահանգները կը նետ-
ուին պատերազմի մէջ, երբ արդէն Արեւելեան ճակատին վրայ քայ-
քայուած են ուսական բանակները: Ամերիկեան թարմ ուժերը երբ
կը հասնին՝ թշնամիին ուժերը մէկ առ մէկ կը սկսին քայքայուիլ:
Նոյեմբեր 11-ին Լոնտոնի մէջ կը կնքուի ընդհանուր զինադադար:
Ահա այս է Առաջին աշխարհամարտի ուրուադիծը, որուն վրայ կը
հիմնեն բուրժուամիտ պատմաբանները իրենց գրած պատմութիւնը:
Այդ պատերազմի ընթացքին ութը միլիոն մարդիկ մեռան ճակատներու
վրայ, իսկ 25 միլիոն մարդկային էակներ զոհ գացին պատերազմի հե-
տեանը եղող ազէտներուն: Եթէ պատմաբանը գերմանացի է, այդ ա-
հաւոր նախճիբին պատասխանատուութիւնը կը բառնայ Անգլիոյ վրին,
որովհետեւ «ան էր որ կ'ուզէր սովահար ընել գերման ժողովուրդը»:
Իսկ եթէ այդ պատմաբանը անգլիացի է կամ Ֆրանսացի՝ ամբողջ պա-
տասխանատուութիւնը կը բառնայ Գերմանիոյ վրին, որովհետեւ «ան
էր որ կ'ուզէր ստրկացնել փոքրիկ ազգերը եւ տիրապետել աշխար-
հին»: Բայց երբ այդ պատմաբանը ամերիկացի է, ան իր պատմու-
թիւնը պիտի գրէ «անկողմնակալ ոգի»ով, պատասխանատուութիւնը

վերադրելով սկիզբէն իսկ՝ կռուի բռնուող բոլոր պետութիւններուն
եւ իր եզրափակումը պիտի ընէ հետեւեալ բառերով. — «Մ. Նահանգ-
ները ուզեցին չէզոքութիւն պահել, հակառակ անոր որ Գերմանիան
ընկղմեց Լուսիտանիա նաւը 1915-ի Մայիսին եւ սպաննեց բազմա-
թիւ ամերիկեան քաղաքացիներ: Ան պատերազմի մէջ մտաւ, այդ
պատերազմը շուտով վերջացնելու համար, եւ ատով ան խնայեց մի-
լիոններու կեանքը: Իսկ որպէսզի աշխարհը ազատ մնայ այդ օրինակ
պատերազմէ մը, մեր նախագահը՝ Ուուորո Ուիլսոնը, կազմեց հաշ-
տարար Ազգերու Լիկան»... բայց... Ամերիկան հոն չմտա...:

Այժմ այս երեք պատմաբաններէն ո՞ր մէկն է անկեղծը, ո՞ր
մէկն է ճշմարիտը:

Այս հարցման պատասխանն է. — Ո՛չ մէկը:

Պարզե՞ք ինչի՞րը:

Անտոլոր արագութեամբ աճող գերման արդիւնաբերութիւնը
կը պահանջէր մէկ կողմէն հում նիւթեր, միւս կողմէն իր ապրանք-
ներուն համար սպառման շուկաներ: Իրեն համար կեանքի ու մահ-
ուան խնդիր էր ելքի ճամբայ մը բանալ զէպի ծովերը: Բայց ծովե-
րու բանալիները Անգլիոյ ճիրաններուն մէջ բռնուած էին: Գերմանիոյ
համար Պալթիկ ծովը լիճ մըն էր, քանի որ Քիէլի ջրանցքը բանալէն
վերջն իսկ՝ պահակի նման անոր բերնին քով կեցեր էր Անգլիան: 90-
ական թուականներու վերջերը Գերմանիան ճորտատիրական կաշկան-
դիչ կապանքները փշրելով կապիտալիստական երկիր դարձաւ եւ ան-
միջապէս հետեւեցաւ զազդութային քաղաքականութեան: Ան դազութ-
ներ հաստատեց Ամերիկէի արեւելեան եւ արեւմտեան մասերուն մէջ-
իւր ոտքերուն կայան ունեցաւ Չինաստանի մէջ՝ նուաճելով Քիաո-
Չաոն: Բայց այդ զազդութները ո՛չ միայն բաւարարութիւն չէին տար
իրեն, այլեւ տնտեսական անսանձ մրցակցութեան մէջ անոնք անա-
պահով դրութեան մէջ էին: Գերմանիան կ'ուզէր Հեռաւոր Արեւելքի
մէջ լայնածաւալ խարխիսներ ապահովել իր ապագայ յառաջխաղաց-
քին համար: Այդ իսկ պատճառով ան յղացաւ հսկայ ծրագիր մը. —
Համպուրկը Պաղտատի հետ երկաթուղային զիծով կապելու ծրագիրը:
80-ական թուականներէն սկսած՝ Անգլիոյ եւ Ռուսաստանի մի-
ջեւ յարաբերութիւնները լարուած էին: Անգլիա կ'ուզէր Ռուսիոյ
դէմ հանել երիտասարդ եւ զօրաւոր թշնամի մը՝ որպիսին էր Գեր-
մանիան: Գերմանիոյ յղացած ծրագիրը կարելի էր օգտագործել. ահա
թէ ինչո՞ւ ան միջնորդեց որպէսզի Գերմանիան ձեռք բերէ Համպուրկ-
Պաղտատ երկաթուղիի շինութեան մենաշնորհը, խորհելով որ Գեր-
մանիան այդ զիծի կառուցումով Պարսկաստանի մօտէն պիտի սպառ-
նար Ռուսիոյ, որով այդ երկուքը պիտի կռուէին իրարու հետ, իսկ
ինք պիտի օգտուէր անոնց տկարացումէն: Գերմանիա, սակայն, որ

չահ շունչեր անմիջապէս Ռուսիոյ հետ թշնամանալու, իր երկաթուղազիծը փոխանակ Պարսկաստանի մօտեցնելու՝ ուղղեց զէպի Պարսից ծոցը, ուրիշ պիտի մտնէր Հնդկական Ուլկիանոսը: Անգլիա հասկըցաւ իր սխալը: Գերմանիան կը սպառնար թէ՛ Հնդկաստանի եւ թէ Ֆրանսական Հնդկաչինի: Համպուրկ-Պաղտատ երկաթուղիի շինութիւնը պիտի աւարտէր 1914-ին: Միւս կողմէն, Գերմանիան արեւելք եւ արեւմտեան իր դադութները իրարու միացնել կ'ուզէր երկաթուղային դիժով, որուն համար Պելճիքայի կառավարութենէն 1906-ին արտօնութիւն ստացաւ այդ դիժը անցնել պելճիգական Գոնկոյէն: Նոյն ատեն, Անգլիան եւս մտահոգուած էր Ափրիկէի հիւսիսային եւ հարաւային իր դադութները (Եգիպտոս-Օրանժ-Թրանսվալ) իրարու միացնել երկաթուղային դիժով: Օրանժ-Թրանսվալի պատերազմը շատ սուղի նստած էր Անգլիոյ վրայ. Գերմանիոյ շինել ուղած երկաթուղազիժը արդէլք էր իր ծրագրին: Գերմանական երկաթուղազիժի կառուցումը, որուն հետեւանքով՝ թէ՛ Անգլիոյ, թէ՛ Ֆրանսայի եւ թէ Իտալիոյ շահերը կը վտանգուէին Ափրիկէի մէջ, պիտի վերջանար 1914-ին: Գալով Զինաստանի հոգամասին, Գերմանիան, հաստատուելով Քիւս-Չաոյի մէջ, կը սպառնար թէ՛ ձափոնի, թէ՛ Անգլիոյ, թէ՛ Ռուսիոյ եւ թէ՛ Ֆրանսայի շահերուն: Գերմանական ասրանքները, աժան եւ սրակաւոր, ամենուրեք կը փնտռուէին: Բացի այդ՝ Գերմանիան համեմատաբար աւելի բարձր գին կը վճարէր իրեն պէտք եղած հում նիւթերուն՝ քան թէ միւս կապիտալիստական երկիրները: Գերմանիան փոքրիկ դադութներ ունէր նաեւ Հարաւային Ամերիկայի մէջ: Միացեալ Նահանգներու մէջ երեք միլիոն գերմանացի դադթականներ կային, որոնք ամերիկեան քաղաքացի ըլլալով հանդերձ՝ համարեա թէ գերման գործակալներ էին. Գերմանիան գանոնք ի պահանջել հարկին՝ կրնար օգտագործել...

Այսպէս, ուրեմն, Անգլիոյ մեծագոյն ու միակ թշնամին Գերմանիան էր. Անգլիա ուր որ մտած էր, կամ ուր որ քայլերը կ'ուղղէր, Գերմանիան կը հետեւէր իրեն: Իրերու լարուած գրութիւնը հասած էր այն աստիճանին, որ յիսուն տարիներէ ի վեր շարունակուող զինեալ խաղաղութիւնը պէտք էր վերջանար 1914-ին: Անգլիան կ'ուզէր որ պատերազմը պայթէր նախքան գերմանական երկու գլխաւոր երկաթուղազիժերու շինութեան աւարտումը: Գերմանիոյ համար եւս 1914-ը յարմարագոյն տարի մըն էր պատերազմի համար: Ֆրանսան իր արեւելեան ճակատը լաւ ամրացուցեր էր, իսկ պելճիգական սահմանադրուիւթ թողուցեր էր անպաշտպան, բայց վերջերս սկսեր էր այդ սահմանադրուիւթ ամրացնել. այդ ամրացման գործը պիտի վերջանար 1914-ին: Ուրեմն, այդ թուականէն առաջ Գերմանիան Լուքսենպուրկի եւ Պելճիգայի վրայով պիտի յարձակէր Ֆրանսայի վրայ:

Գալով Անգլիոյ, Անգլիան, իրլանտական ապստամբութեան հետեւանքով քաղաքացիական պատերազմի ճգնաժամը կ'ապրէր, որով պատերազմի մէջ ան իր ամբողջ ուժը չէր կրնար կեդրոնացնել: Իսկ Ռուսիոյ մասին՝ Գերմանիան այնքան չէր մտահոգուեր, որովհետեւ անոր ուժը չափեր էր 1905-ի ռուս-ճարոնական պատերազմի ատեն: Բացի այդ՝ ան գիտէր որ Ռուսիոյ ընկերային հակամարտութիւնը պիտի թոյլ չտային որ Ռուսիա գերակշիռ դորութեամբ անմիջապէս նետուէր կռիւի ճակատին վրայ: Այսու տեսանք թէ տնտեսական անհաշտ շահերով իրարմէ բաժնուած իմպերիալիստական պետութեանց երկու ճակատներուն վրայ շարուած էին վառօդով լեցուն տակառները, եւ երկու կողմերն ալ կը սպասէին անհամբեր՝ որ կայծ մը դար ու բոքնկեցնէր զանոնք: Եւ այդ կայծը դուրս եկաւ Սերպիացի ուսանողի մը ատրճանակի փողէն:

Գերմանիան իր թշնամիներու ուժը կշռելէն վերջ մեծ վտահոթիւն ունէր իր կազմակերպած ռազմական մեքենային վրայ: Ունէր մեքենայացած բանակներ, մարզուած զինուորներ, ունէր նոր զէնքեր, եւ պատերազմի ընթացքին ապշեցուց իր թշնամիները իր արագ յարձակողականով: Իր նաւատորմիդը տկար էր բաղդատմամբ անգլիականին, բայց իր զեփիւնները, իր գործածութեան դրած թունաւոր կաղը, եւ յետոյ՝ իր օդանաւերը ու երկարաձիգ թնդանօթները նեղ դրութեան մատնեցին թէ՛ Ֆրանսան եւ թէ Անգլիան: Արեւելեան ճակատին վրայ ռուսական բանակները նախնական յաջողութիւններ ունեցան, բայց յետոյ՝ նահանջեցին: Գերմանիան ամենէն աւելի կը նեղուէր Մ. Նահանգներու ռազմական պիտոյքներու դաշնակիցներուն հայթայթած օժանդակութենէն: Ռազմաթերք, դրամ, ուտելիք, ամէն ինչ կը հասնէր Ամերիկայէն: Գերմանիան ուղեց Մ. Նահանգները եւս քաշել պատերազմի մէջ, որպէսզի արդէն իսկ տկարացած իր թշնամիները զրկուէին հարկ եղած պաշարաւորումներէն, եւ յաջողեցաւ: Տարակոյս չկար որ Գերմանիան եթէ վերջնական յաղթութիւնը պիտի չկրնար ապահովել, պիտի կրնար առ նուազն երկու կամ երեք տարի եւս պատերազմը շարունակել, եթէ համաշխարհային զէպք մը չգար ցնցել ամբողջ աշխարհը եւ նոյն ատեն փութացնել գերման պարտութիւնը: Այդ համաշխարհային պատմական զէպքը Ռուսական Հոկտեմբերեան Յեղափոխութիւնն էր: Բայց ի՞նչ բնի որ Ամերիկան այդ յաղթութիւնը իրեն կը վերադրէ, իր հանճարեղ հրամանատարին՝ Չորսվար Փըրչիսին: Ի՛հ, պուրժուական պատմութեան մէջ շատ սխալներ արձանագրուած են, այս մէկն ալ թող արձանագրուած մնայ ուրիշներու կարգին, որովհետեւ ամերիկեան բարձրացող իմպերիալիզմը կ'ուզէր որ այդ ձեւի արձանագրութիւն մը դրոշմուած մնար պատմութեան մէջ: Բայց մեզի համար ան-

հերքելի իրողութիւնը կայ ու կը մնայ նոյնը. Գերմանիան կորսըն-
ցուց պատերազմը ո՛չ թէ ամերիկեան անկախութեան հետեւանքով,
այլ ուսական յեղափոխութեան յառաջացուցած հակազգեցութեան
պատճառով: Արեւելեան ճակատի գերման բանակները վարակուած
էին ուսական յեղափոխութեան շունչով: Գերմանիան այդ բանակ-
ները չէր կրնար ու չկրցաւ փոխադրել արեւմտեան ճակատին վրայ,
վախնալով որ այն ճակատի զինուորները եւս կը վարակուին նոյն յե-
ղափոխութեան շունչով: Արեւմտեան ճակատի գերման բանակները
լսած էին որ Ռուսաստանը ծունկի եկեր էր, բայց թէ ինչո՞ւ արեւել-
եան ճակատի բանակները իրենց օղնութեան չէին դար. այդ շուտ-
րումէն սկսաւ անոնց նահանջը, յետոյ՝ պարտութիւնը:

ՀԱՅԵՐԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Հայերու մասնակցութիւնը իմպերիալիստական պատերազմին՝
հայ քաղաքական գործիչներու ծիծաղելի տխմարութեան ամենա-
փայլուն ապացոյցն է. տխմարութիւն մը, որու ձեռքով գրուեցաւ մեր
հայկական ողբերգութեան պատմութիւնը: Գայլերը երբ իրարու կո-
կորդ կը պատռէին աւազակութեան համար, հայերը անոնց մէջ կը
մտնէին իրենց ազատութիւնը գտնելու երազով: Կամաւորական շար-
ժումը, զոր Գաշնակցութիւնը սկսաւ, պատճառ դարձաւ տաճկահա-
յերու սարսափելի սպանդին:

Այստեղ հարկ է անդրադառնալ հայ յեղափոխութեան շուրջ՝
հարեւանցի կերպով նշելով այն իրողութիւնները, որոնք ցարդ վարա-
դուրուած կը պահուին պատասխանատուներու ջերմ հայրենասիրու-
թիւնը կասկածի չենթարկելու համար:

Անշուշտ սխալ է յայտարարել՝ թէ թրքական բռնակալութեան
ներքեւ անբնականոն երեւոյթ մըն էր հայկական յեղափոխութիւնը,
որովհետեւ ուր որ բռնութիւն կայ, ուր որ ճնշում ու հարստահարու-
թիւն կայ, այնտեղ կը խմորուի յեղափոխութիւնը: Եւ Տաճկաստանի
մէջ կար այդ բռնութիւնը, կար այդ ճնշումն ու հարստահարութիւնը,
հետեւաբար՝ յեղափոխութիւնը շատ բնականօրէն պիտի խմորուէր
ու պայթէր, կամ տեղական ուժերով եւ կամ զբախն՝ յեղափոխական
զաղափարներու ընդհանրացումով: Բայց նոյնքան սխալ եւ անըզու-
նելի է երբ կուսակցականներ կան, որոնք մինչեւ այսօր ալ՝ կը ջա-
նան փաստել, որ հայ յեղափոխութիւնը անշեղ մամբայէ մը փախց
եւ եքէ ան իր նպատակին մէջ անյաջողութեան մատնուեցաւ, ատոր
պատճառը պէտք է փնտռել շրջապատի աննպաստ պայմաններու մէջ:

«Աննպաստ պայմաններ» որակումը հասկնալի է. բայց այն՝
ինչ որ կը հաւաստիացուի ուղիղ մամբայի մասին, այդ է անհասկը-

նալին: Հայ յեղափոխականը երբ զէնքը ձեռքին լեռ կը բարձրանար,
շատ ազօտ գաղափար մը ունէր յեղափոխութեան մասին, հետեւաբար
կատարելապէս զիտակ չէր իր բարձր ու իտէալական կոչումին: Ի-
րեն համար Հայաստանի ազատութեան գաղափարը Հայաստանը թըր-
քական տիրապետութենէն ազատուած տեսնելու երազային սահմանին
մէջ ամփոփուած՝ այդ սահմանէն անդին չէր անցներ: Ապաստանիլ
մէկ քանի անառիկ վայրերու մէջ, ասպատակել հոս ու հոն, մի քանի
թուրք զիւղեր սարսափի մատնել, ընդհարում ունենալ թրքական զոր-
քերու հետ ու յետոյ քաշուիլ, ձգելով հայ անպաշտպան ու անզէն
ժողովուրդը թրքական բորբոքած վրէժխնդրութեան առջեւ, ահա հայ
յեղափոխութիւններու յեղափոխական գործունէութիւնը: Զօրավար
Սմբատ, մէկը դաշնակ հայդուկներէն, որ յետոյ Սորհրդային Հա-
յաստան մեկնեցաւ եւ հոն մեռաւ — յապաղած զիտակցութեան հա-
սած հայրենասէր մը — օր մը ինծի պատմեց շահեկան դէպք մը, որ
լուրջ խորհրդածութեան առարկայ է: «Մի օր, խմբովին նստած էինք
սարի մը գագաթը, — այսպէս սկսաւ ան իր պատմութիւնը, — երբ
տեսանք որ մի քուրդ փայտեր շալակած քայլում էր ձորի միջից դէպի
իր գիւղը: Մեր խմբի անգամներից մէկը ինձ հարցրեց. — Զօրավար,
խփե՞մ: — Ո՞րի՞ր, պատասխանեցի: Նա իր հրացանը ուղղեց, նշան
առաւ ու կրակեց: Քուրդը ընկաւ թաւալվոր՝ իր շալակած փայ-
տերի խուրձին տակ»: Ահա ձեզի յեղափոխականի գործ... Եւ այս
դէպքը կարելի չէ ըսել թէ բացառիկ բան մը եղած է: — «Նման դէպ-
քեր շատ անգամ պատահած են, — ըսաւ Զօրավարը, — բայց չզիտեմ,
ինչո՞ւ այդ մէկը շատ խոր դրոշմուած է իմ յիշողութեանս մէջ»: Սեղ-
ճուկ քուրդ մը, որ նոյնիսկ աւանակ մը չէ ունեցեր եւ ինք՝ իր շալա-
կով տուն տանիլ ուզած է վառելիք փայտերը եւ ահա կ'իյնայ յեղա-
փոխականի գնդակով: Կը կարդամ Աղան Ենկոյեանի «Հարազատ
պատմութիւն Տարօնի» գիրքը, որ կը պարունակէ Բողեանի յուշերը:
Ինչքա՞ն սարսափելի պատկերներ կան հոն, որոնք կը պարզեն դաշ-
նակ յեղափոխական առաջնորդներու «յեղափոխական» գործունէու-
թիւնը, գործունէութիւն մը՝ որ հայ յեղափոխութիւնը կը կապէ գա-
տապարտութեան սրինին: Երեւակայեցէ՛ք, Մեծ Եղեռնի օրերուն, երբ
Մուշի ժողովուրդը կոտորուելու վրայ է, դաշնակ առաջնորդները
միայն իրենց անձը ազատել ուզեր են եւ իրենց ատրճանակները ուղ-
ղեր են իրենց հետեւիլ ուզող ժողովուրդին: Անոնք ժողովուրդին հետ
մեռնելու քաջութիւնն ալ չեն ունեցեր, եւ սակայն, յեղափոխական
եղեր են:

ՄԵՆ ԵՂԵՌՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ(*)

Հայկական իրականութեան մէջ Հայ յեղափոխական կուսակցութեանց կարգին՝ միայն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնն եղած է որ որոշակի քաղաքական եւ սոցիալիստական ծրագիրով հրապարակ իջած է: Այժմ ներկայացնենք այդ ծրագրի յատկանշական մասերը.

— «Մարդկութեան ահապին մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր, արդիւնաբերող զստակարգի կատարեալ ազատագրումը ամէն շահագործումից ու սեփականազուրկ ստրկական դրութիւնից, որոնց ան ենթակայ է կապիտալիստ, սեփականատէր ու իշխող փոքրաթիւ զստակարգի կողմից — կը լինի միմիայն այն ժամանակ, երբ արդիւնաբերողները կը լինեն տէր արդիւնաբերութեան բոլոր ուժերի ու միջոցների, որպիսիք են հողը, գործարանը, հանքերը, հաղորդակցութեան ու նիւթական յարաբերութեան բոլոր միջոցները, եւ այլն:

«Ազատումն արդիւնաբերող զստակարգի՝ նշանակում է ազատումն ամէն մարդու, երկու սեռին էլ պատկանող, նշանակում է հասարակական-անտեսական կատարեալ ազատութիւն՝ ամբողջ մարդկութեան:

Ներկայ քաղաքակիրթ մարդկութեան հասարակական՝ կապիտալիստական կոչումով՝ կազմակերպութեան պայմաններն իրենց զարգացման ընթացքում իրենց արզանդից, իրենց ձեւերի միջից բրնական կերպով ծնունդ են տուել ու առաջացրել սեփականատիրութեան նոր ձեւի ամէն մտաւոր ու նիւթական տարրերը: Այդ նոր ձեւն է՝ արդիւնաբերութեան բոլոր միջոցների ու արդիւնքի սեփականութեան հաւաքական, համայնական ձեւը, որով նրանք կը լինեն ընդհանուր սեփականութիւն արդիւնաբերող հասարակութեան:

Իր այդ պատմական նպատակն ու գործն ի կատար ածելու համար ամէն քաղաքակիրթ երկիրներում արդիւնաբերող զստակարգը պէտք է կազմակերպուի իրբեւ քաղաքական ինքնաձանձու ու ինքնուրոյն կուսակցութիւն եւ իր տրամադրութեան տակ գտնուած ամէն հասարակական ու քաղաքական միջոցները ի գործ դնելով եւ բոլոր երկիրներից իրար հետ միանալով, ձգտէ կատարել կոմունիստական,

(*) Այս մասին ես հանգամանօրէն արտայայտուած եմ 1916-ին, երբ եռանդագիմ յառաջ կը տարուէր կամաւորական շարժումը: Կապոյտ Տեառակներու Ա. եւ Բ. բրոշուրները 500-ական տպաքանակով հրատարակուեցան, բայց ամբողջ Ամերիկայի մէջ միայն 20 օրինակ սպառեցաւ. միւսները մեր-տան վառարանին մէջ փոշիացան: Իմ վարձատրութիւնն եղաւ նախատիմ եւ դատապարտութիւն. այնքան բոցավառուած էր ամերիկահայերու հայրենասիրութիւնը:

սոցիալական յեղափոխութիւնը: Այդ յեղափոխութեամբ արդիւնաբերող զստակարգն իր ձեռքը կը զցէ քաղաքական ղեկը, խլելով այն ներկայումս իշխող զստակարգից, վերջ կը դնէ տարրեր զստակարգերի գոյութեան եւ նրանց մէջ եղած զստակարգային կոխիւն եւ կը հաստատէ սոցիալիստական հասարակական կազմակերպութիւն»:

Հնչակեան ծրագիրը այնուհետեւ կ'անցնի ժողովուրդին հետ կապուած կենսական հարցին՝ ազատութեան հարցին:

— «Հայ ժողովուրդը ներկայումս գտնուած է միապետական-քաղաքական կարգերի տակ, որոնց կառավարական, հարկային ու ֆինանսական սխտէմները աւերիչ են նրա համար. նա գտնուած է նաեւ այնպիսի տնտեսական շրջանում, երբ մի կողմից սկսել են ծագել արդիւնաբերական կապիտալիստական ձեւեր եւ միւս կողմից շարունակ ընկնում ու քայքայում են տնտեսական, նահապետական կերպերը: Այդ բոլոր պայմանների շնորհիւ է որ, Հայ սոցիալիստ-աամ-կալարականի համար սոցիալիստական-հասարակական կազմակերպութեան իրագործումը հայութեան մէջ՝ յայտնուած է հեռուաւոր նպատակ եւ նրա գործունէութեան ու ձգտումների առաջ ներկայանում է մէկ ուրիշ անմիջական պահանջ, իրբեւ մօտակայ նպատակ: Ահա հէնց այդ մօտակայ նպատակն է, որ գործնականապէս դրուած է Հայ սոցիալիստ-աամ-կալարականի, Հայ յեղափոխականի առջեւ, Հնչակեան Կուսակցութեան առջեւ:

Այդ մօտակայ նպատակը կայանում է հետեւեալում. — Յեղափոխել ու ոչնչացնել միապետական կարգերը, փրկել Հայ ժողովրդին իր ընդհանուր ստրկական դրութիւնից, տալ նրան քաղաքական կարելիութիւն միջամտելու քաղաքական զործերում, վերացնել այն խոշընդոտները, որոնք արդեւ են լինում նրա տնտեսական զարգացման, առհասարակ նրա կուլտուրական առաջընթացի, ստեղծել քաղաքական պայմաններ, որոնք աշխատաւոր զստակարգին միջոց տան ազատ կերպով արտայայտելու իր ձգտումներն ու պահանջները, աւելի եւ աւելի բարելաւելու աշխատանքի ծանր պայմանները, զստակարգային զիտակցութիւն ձեռք բերելու ու կազմակերպուելու իրբեւ ինքնուրոյն քաղաքական մարմին՝ եւ ղիւրացնելու նրա այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պէտք է ամէն տրամադրելի հասարակական պայմանների միջոցով, նպաստեն նրա առաջխաղացութեան դէպի հեռուոր նպատակը — Սոցիալիզմը»:

Ութսուն տարի առաջ երբ Հնչակեան Կուսակցութիւնը այսպիսի ծրագրով հրապարակ կ'իջնէր, ատիկա ինքնին բոլորովին նոր ու աննախընթաց երեւոյթ մըն էր Հայ իրականութեան մէջ:

Այժմ տեսնենք թէ կուսակցական գործունէութեան մասին Հնչակեան Կուսակցութիւնը ի՞նչ ուղի էր ընտրած: Կուսակցութեան

պաշտօնաթերթ «Հնչակ»ի 1888-ի թիւ 9 եւ 10 համարներուն մէջ կը գտնենք հետեւեալ նշանակալից մասերը.

— «Սկսելու եւ յաջողութեամբ պատկելու համար յեղափոխական դործը թուրքաց Հայաստանում, յեղափոխական կուսակցութիւնը պէտք է կանխապէս որոշէ ու կանոնաւորէ իր գործունէութեան նախադիժը: Ունենալով որոշ նպատակ, որի համար նա ղիմուած է յեղափոխական ծանր գործունէութիւն, յեղափոխական կուսակցութիւնը պէտք է կանխապէս որոշէ այդ գործունէութեան բոլոր միջոցները ու կերպերը: Կուսակցութիւնը պէտք է իմանայ, որ իր մղած մարտն ընդդէմ է այնպիսի մի մարմնի, որ ունի կանոնաւոր, կարգապահ կազմակերպութիւն. — Թուրք կառավարութիւնն ու նրա գօրքը: Այդպիսի կազմակերպութեանը յեղափոխական կուսակցութիւնը անկարող է պահանջուած գործութեամբ ղիմադրել, թէկուզ նա լինի բազմանդամ եւ ուժեղ թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս, եթէ նա չէ կազմակերպուած խիստ կանոնների, կարգապահութեան եւ ընդհանուր համբարաշխութեան հիման վրայ: Այդ կուսակցութեան գոյութիւնն իսկ կարուած է գրա կազմակերպութեան որպիսութիւնից:

«Աչքի առջև ունենալով այն պայմանը, որ յեղափոխական կուսակցութեան գործունէութիւնը հակակառավարական է եւ այդ հիման վրայ, կարելիին չափ խուսափելու համար կառավարական հալածումներից, պարտաւորուած է լինել գաղտնի, ուրեմն եւ այդ կուսակցութեան կազմակերպութիւնը վիճակուած է նոյն ուղին ընտրելու, լինելու գաղտնի:

«Գործունէութեան ասպարէզը լինելով թուրքաց Հայաստանը, բնականաբար կազմակերպութիւնն էլ պիտի այնտեղ հաստատուէ: Յեղափոխական շրջաններ պէտք է կազմուեն երկրի որքան կարելի է շատ կէտերի վրայ. այսպէս ասած, պէտք է երկիրը ծածկեն իրենց ցանցով: Այդ բոլոր շրջանները պատկանելով յեղափոխական կուսակցութեան, պէտք է իրար հետ սերտ կապակցութիւն ունենան, ո՛չ միայն բարոյապէս, որ գլխաւորաբար ստեղծում է նրանց բոլորի նպատակի նոյնութիւնը, այլեւ նիւթական եւ գործակցական ընդհանուր յարաբերութիւններով:

«Ընդհանուր ապստամբութիւնը բարձրացնելու համար պէտք է կազմել առաւել կամ նուազ մեծ զնդեր: Բայց ամենազլխաւորն է որոշել, թէ ի՞նչ եղանակով եւ ի՞նչ ժամանակներ պէտք է կամ անհրաժեշտ է գործադրել այդ ուժերը, որպէսզի նրանց կատարելիքը լինի նպատակայարմար, այսինքն՝ ուղղակի ծառայէ գործի յաջողութեան: Եթէ ապստամբական զնդերը միմիանցից անջատ են ու անկախ, չեն ենթարկուած մէկ ընդհանուր ղեկավարութեան եւ իւրաքանչիւրն ինքնուրոյնաբար կղզիացած է մէկ անկիւնում — նրանք

դատապարտուած են անգորութեան: Եթէ լինելով այդպիսի դրութեան մէջ՝ նրանցից երբեմն մէկը, երբեմն միւսը մասնաւոր ու ինքնուրոյն կռիւ կամ կռիւներ է մղում — նա կազմալուծում է յեղափոխական ուժերը. նա ոչինչ օգուտ չի բերում, նա վնասում է գործին: Եթէ նրանք ձուլուած չեն մէկ ընդհանուր կազմակերպութեան մէջ, եթէ մէկ ընդհանուր, կանխապէս որոշուած նախագծով չեն պատրաստուում ու գործում, եթէ մէկ ընդհանուր նախագծի հակառակ՝ նրանք՝ ամէն մէկն իր վայրում՝ միաժամանակ չեն կատարում իրանց յարձակողական կամ պաշտպանողական կռիւը թշնամու նկատմամբ, ենթադրելով իսկ որ այս կամ այն պարագային, այս կամ այն զնդի առանձնակի մղած մասնաւոր կռիւը լինի նոյնիսկ յաղթական իրա համար — նրանք, ապստամբական զնդերը, այդպիսով դուր տեղը վատնում ու կորցնում են իրանց ուժերը, տկարացնում են, եթէ ոչ աւելի, ընդհանուր ապստամբութեան գործութիւնը, վտանգ են կրում յուսահատուելու իրանք իսկ եւ ժողովուրդին էլ յուսահատեցնելու գործի յաջողութեան վերաբերմամբ:

«Մի կողմ ենք թողնում անմիջական ինքնապաշտպանութեան պահանջը կամ նոյնիսկ քաղաքական հանդամանքների ստիպողականութեան տակ առաջ եկող ու անխուսափելի՝ մասնակի կամ աշխարհագրական որեւէ լոկ մի շրջանի՝ դէպքերն, ընդհարումները, կազմուած շարժումները, որոնք այդպիսի պարագաներում իշխում են յեղափոխականների կամքին եւ շեղում ընդհանուր կանոնից ու նախագծից:

Ընդհանուր նախադիժն այն է, որ ապստամբութիւնը պէտք է լինի համաժողովրդական, պէտք է կրէ ընդհանուր կերպարանք: Երկրի աշխարհագրական այլեւայլ, կարելիին չափ շատ կէտերում հայկական ապստամբական գորագնդերը միաժամանակ, մէկ ընդհանուր յատկագրով համաձայն եւ մէկ ընդհանուր կեդրոնական ղեկավարութեան տակ պէտք է մղեն կռիւը թշնամու դէմ, ապստամբական հոսանքի մէջ զցելով նաեւ հայ ժողովրդի, կարելիին չափ մեծ մի մասը եւ այդ միացած ուժերով հարուածել թշնամուն ամէն կողմերից՝ իրանց ձեռքը զցելով նրա նիւթական այլեւայլ ուժերը, նրա հասարակական հիմնարկութիւնները, երկրի հազորակցութեան միջոցները, որպէս նաեւ երկրի, որքան կարելի է բազմաթիւ, ամուր դիրքերը, այլ եւ այլ վայրերը, քաղաքները, եւ առհասարակ ձգտելով տիրանալ ամբողջ երկրին:

«Յեղափոխականները այդ ապստամբութեան եւ այդ յեղափոխութեան միջոցին պէտք է գործածեն ամէն տեսակ զէնքեր ու միջոցներ, որոնք կարող են նրանց ձեռքին ծառայել թշնամու ուժերը գերազանցելու, կազմալուծելու եւ յաջողութեամբ հարուածելու այդ

ուժերը. զէնքեր ու միջոցներ, որոնք երաշխաւորութիւն ու դրաւա-
կան լինեն յեղափոխութեան յաղթանակի»:

Այս բոլորը, սակայն, որպէս մեռեալ տառեր մնացին թղթերու
վրայ՝ դարակներու մէջ: Անշուշտ Հնչակեան Կուսակցութիւնը մե-
ղաւոր չէր. ան նպատակ չունէր հաստատելու հայկական բռնակալու-
թիւն մը ճնշելու թուրք ժողովուրդը, ոչ ալ ծրագրեր էր բռնագրաւե-
լու հարուստներու ինչքերն ու կալուածները. նախ պիտի հաստատու-
ուէին ռամկավարական կարգեր, երկիրը պիտի մտնէր ճարտարաբ-
ուեստական ճամբուն մէջ, եւ պիտի սկսէր դասակարգային պայքարը,
որու ընթացքին պիտի անհետանային ցեղային, ազգային ու կրօնա-
կան ատելութիւնները, անկէ վերջն էր որ պրոլետարիատը պիտի դի-
մէր դէպի Սոցիալիզմ: Հնչակեան Կուսակցութիւնը չէր կրնար մէկ
անգամէն տգիտութեան եւ նախապաշարումներու ատաղձներով քա-
րացած ամբոխային հոգեբանութիւնը յեղաշրջել: Ան ունեցաւ սո-
ցիալիստական ուղեգիծով առաջնորդուող ժիրայրներու նման տիտան
հերոսներ, բայց անոնց դործերն ու պրոպականդան որեւէ զրական
արգիւնք չյառաջացուցին իրենց ապրած ժամանակին ու միջավայրին
մէջ: Եւ ինչո՞ւ չնշել այն իրողութիւնը նաեւ, որ հայկական յեղա-
փոխութիւնը սկիզբէն իսկ՝ միադոյն չեղաւ. չունեցաւ նոյն նպա-
տակը, չունեցաւ նոյն զեկտօրութիւնը: Հրապարակ իջան նոր կու-
սակցութիւններ. Գաշակցութիւնը գիմեց տեւորի ու ասպատակային
կռիւի ուղեգիծին, Վերակազմեալները՝ թունդ ազգայնականներ,
Հնչակեան Կուսակցութիւնը քայքայելու երդումով՝ կռիւ յայտարա-
րեցին Սոցիալիզմի դէմ եւ արգէն իսկ մշուշապատ հայ ժողովուրդի
միտքը մատնեցին շուարումի: Այդ հոսանքները, սակայն, տեսնելով
որ անյաղթելի դժուարութեանց առջեւ են, հայ յեղափոխութեան
նպատակը կապեցին ազերսանքի շուանով եւրոպական կապիտալիս-
տական պետութեանց խղճին: Ասով հայ յեղափոխութիւնը մտաւ
փակուղիի մէջ եւ իրարու դէմ կեցան միմիանց անհաշտ աջ ու ձախ
թեւեր: Հնչակեանները, ըլլալով ձախ թեւի ներկայացուցիչները,
կը պաշտպանէին այն գաղափարը, որ հայութեան ազատագրումը զուտ
ազգային հարց ըլլալէ աւելի՝ սոցիալական հարց է, որու լուծումը
կապուած է սոցիալական ուժերու զարգացման պրոցէսին հետ: Գա-
լով աջ հատուածի ներկայացուցիչներուն, անոնք բացարձակապէս
զուրկ էին իրերու խորը թափանցելու կարողութենէն: Նախ որ հայ
կղերը հետեւելով հայ հարուստ դասակարգին, հակառակ էր արմա-
տական յեղափոխութեան եւ ժողովուրդը կապուած էր հայ հոգեւո-
րականին: Երկրորդ, որ ամենէն կարեւորն էր, այդ մարդիկը չէին
անդրադառնար այն իրողութեան՝ որ իրենք կռթնած էին խարեպա-

տիր ստուերի մը, աւելի ճիշդն է ըսել՝ ուղղակի հայ ժողովուրդի
թշնամի բանակատեղիին. որովհետեւ եւրոպական կապիտալիստական
պետութեանց շահերը եւ թրքական բռնակալութեան շահերը համակ-
ցուած ըլլալով այդ պետութիւնները չէին ուզեր որ հայութիւնը իր
ազատութեան տիրանար:

Այս կէտը դարերով մութ մնացած է եւ տակաւին մութ կը մը-
նայ, որուն համար կ'արժէ հակիրճ լուսարանութիւն մը:

Աւատապետական կամ կէս աւատապետական երկիր մը իր տըն-
տեսական դրութեան համաձայն՝ իր ուրոյն պետական կազմը պիտի
ունենայ. այն է՝ կամ բացարձակ միապետութիւն, կամ սահմանադր-
րական միապետութիւն. առաջինը՝ երբ այդ բացարձակ իշխողն է հո-
ղատէր՝ ազնուական դասակարգը. երկրորդը՝ երբ բուրժուազիան
արգէն հրապարակ իջած է եւ կրցեր է պետութեան մէջ ձայն ունե-
նալ: Երկիր մը, ուր տակաւին ճորտատիրական կարգեր գոյութիւն
ունին, այդ երկիրը հանրապետական կառավարութիւն չի կրնար ու-
նենալ: Թուրքիան, եթէ ոչ ամբողջովին՝ բայց կրնանք ըսել թէ կի-
սովին ճորտատիրական երկիր մըն էր, ուր իշխողն էր ազաներու,
էֆէնտիներու, պէկերու եւ մեծ հողատէրերու դասակարգը: Եթէ հոն
հանքերը շահագործման դրուէին, գործարաններ բացուէին, բնչա-
զուրկ մշակներն ու հողագուրկ զիւղացիները նոր կեանքի պատեհու-
թիւններէն օգտուելու երազէն տարուած՝ պիտի գինուորագրուէին
այդ հանքերուն ու գործարաններուն մէջ աշխատելու համար. եւ դեռ
աւելին, այդ մշակներն ու զիւղացիները որպէս ազատ քաղաքացի-
ներ՝ իրենց քուէարկելու իրաւունքով ձայն պիտի ունենային պետու-
թեան օրէնսդիր բաժանմունքին մէջ: Ազաներու, պէկերու եւ մեծ հո-
ղատէրերու դասակարգը այդօրինակ պետական սխտէմ չէր կրնար
ընդունիլ: Անոնք իրենց տիրապետութիւնը յաւերժացնելու համար
երկիրը կ'ուզէին պահել անտեսապէս յետամնաց դրութեան մէջ: Եւ
ի՞նչ էր եւրոպական կապիտալիստական պետութեանց նպատակը.—
Գրեթէ նոյնը: Անոնք եւս կ'ուզէին Թուրքիան պահել անտեսապէս յե-
տամնաց վիճակի մէջ, որպէսզի հոնկէ ներածէին իրենց պէտք եղած
հում նիւթերը, եւ երկիրը վերածէին իրենց ապրանքներու սպառման
շուկայի: Այստեղ կը տեսնենք թէ եւրոպական կապիտալիստական
պետութեանց եւ ազաներու, պէկերու եւ խոշոր հողատէր դասակար-
գի խնամակալ թրքական բռնակալութեան շահերը կուղային նոյն գի-
ծին վրայ եւ կը նոյնանային: Եւրոպական պետութիւնները շատ լաւ
կը ճանչնային հայ ժողովուրդի կենսունակութիւնն ու ստեղծագոր-
ծական կարողութիւնը. անոնք գիտէին թէ հայերը եթէ ազատ ու ան-
կախ հայրենիք մը ունենան, շուտով իրենց երկիրը պիտի վերածեն
ճարտարարուեստական երկրի. երկիր մը, որ ո՛չ միայն եւրոպական

առեւտրական կապիտալի առջեւ պիտի փակէր իր դռները, այլեւ իրենց ձեռքէն պիտի խլէր Միջին Արեւելքի սպառման շուկաները: Ահա թէ ինչո՞ւ անոնք սոսկ մի քանի պետական մարդոց բերնով պղատոնական համակրութիւն մը ցոյց տուին հայերուն, եւ ազատ Հայաստանի մը երազը կախուած պահեցին օդին մէջ: Իսկ համաւերոպական առաջին պատերազմին, այդ երազը քշիկ մը իրականացման մօտեցուցին, երբ հայերը իրենց փոքրիկ դաշնակիցը հաշուեցին: Մեր հայ քաղաքագէտներն ու յեղափոխական առաջնորդները չէին ուզեր ըմբռնել որ կապիտալիստական պետութեանց ծառայող անհատները որպէս մարդ՝ եքէ մարդկային խիղճ ունին, բայց որպէս պետական մարդ՝ այդ խիղճը չունին: Ուստիս Ուիլսըն, որպէս մարդ՝ մարդկային խիղճ ունէր որ գծեց Հայաստանի սահմանները, բայց նախագահ Ուիլսընը նոյն մարդը չէր: Ան չուզեց ամերիկեան նաւատորմիդը շարժման մէջ դնել՝ իր գծած սահմաններով Հայաստան մը ստեղծելու համար:

Բայց մենք մի քանի տարիներով ետ երթանք դէպի 1908 թուականը, այն պատմական թուականը, երբ հռչակուեցաւ այսպէս կոչուած՝ Օսմանեան Սահմանադրութիւնը.— Արդարութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն...: Անտարակոյս, քանի որ երկրի տնտեսական կարգերը փոխուած չէին, եղածը բռնադրօնիկ պատուաստում մըն էր, բայց նոյն ատեն՝ ժողովուրդներու հոգեբանութեան վրայ ազդող նոր երեւոյթ մը կրնանք նկատել զայն:

Դաշնակցութեան փառքի օրերն էին... ինքն էր որ իքթիհատ ու թերաֆֆը կուսակցութեան հետ միացած Սահմանադրութիւն էր բերեր ժողովուրդին: Ի՞նչ հանդիսութիւններ, ի՞նչ համբոյրներ, ի՞նչ զիրկընդխառնումներ... Դաշնակ խմբապետներ ու գործիչներ, եկան լեցուեցան գաւառները: Տեսանք Քէփքըն Պոնափարտեանն ու «ընկեր» Աւոն Սարրերդի մէջ, ընկեր Սմոն՝ Քոլի մէջ: Մեծ պետութեան մը հռչակաւոր հրամանատարը այնքան հպարտ, այնքան սիգաճեմ չէր երեւնար, որքան այդ մարդիկը: Պէխերնին ոլորած, յեղափոխականի փափախն իրենց գլխին, տասնհարուածեան ատրճանակն իրենց ուսին, մտրակն իրենց ձեռքին, փայլուն ու երկար մոյկերը քաշած մինչև իրենց ծունկերը, անոնք հիացում կ'ազդէին զիրենք զիտողներուն: Թուրք ժողովուրդը, որպէս օրինապահ ու լռակեաց ժողովուրդ մը՝ երբ կը տեսնէր որ իր կրօնաւորները, իր մեծերը նոր զրութեան համակերպեր էին, ինքն ալ կը հետեւէր անոնց: Դաշնակցութիւնը, եթէ հեռատեսութեամբ հետեւողական մնար իր որդեգրած նոր քաղաքականութեան, նոր դարաշրջան մը բացած կ'ըլլար ու կը քաւէր բոլոր մեղքերը: Եւ իրապէս նոր դարաշրջան մը բաց-

ուելու վրայ էր: Հայը, որպէս Օսմանեան քաղաքացի, զինուոր տալու էր պետութեան. այդ օրինադիծն ալ անցաւ. հայ երիտասարդներ մասն Օսմանեան բանակին մէջ: Թուրք տիրող դասակարգը կրօնը իրեն յենարան չինած՝ զարբուր ընթացքին, մահմետական մոլեռանդութեամբ թունաւորեր էր թուրք ժողովուրդը եւ սորվեցուցեր էր անոր՝ որ իսլամը ապրելու է կեալուրի քրտինքով, որ կեալուրին հետ կարելի չէ եղբայրանալ, որ կեալուրը իրաւունք չունի զէնք կրելու եւ ձի հեծնելու, որ վերջապէս՝ կեալուրը պէտք է անիծեալ նկատել եւ անոր հետ վարուիլ ըստ այնմ: Եւ իրականութիւն է, որ թուրք ժողովուրդը ինքնաբերաբար առանց իր կրօնաւորներու կամ մեծամեծներու դրդումին, առանց անոնց հրահանգին՝ որեւէ ատեն, որեւէ տեղի մէջ չէ յարձակեր, չէ կոտորեր հայ ժողովուրդը: Այդպիսի դէպք մը երբեք չէ արձանագրուած հայ ժողովուրդի դերութեան շրջանի պատմութեան մէջ: Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն յետոյ՝ հայը այլեւս կեալուր չէր, այլ դարձեր էր վաքանտալ — հայրենակից: Այդ նոր գրութեան մէջ այլեւս անկախ եւ ազատ Հայաստանի խնդիր մը իրերու հոլովոյթին յանձնուելու էր եւ նկատի առնուելու էին երկու խիստ կարեւոր կէտեր: Առաջինը՝ պահպանել հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութիւնը. երկրորդը՝ սիստեմատիկ աշխատանքով իրարու մօտեցնել կրօնական կամ ազգայնական ոգիով միմիանց անհաշտ ժողովուրդները: Երկրորդ կէտը բացարձակապէս անհրաժեշտ էր հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութիւնը պահպանելու համար: Այսպիսով, խաղաղութեան հովանիին տակ կը սկսէր երկրին տնտեսական զարգացումը, որուն մէջ պատմական մեծ դեր պիտի խաղար հայ ժողովուրդը: Երկրի տնտեսական զարգացման հետ կ'ըսկըսէր դասակարգային շեշտաւորումը, որ իր կարգին՝ երկրի հորիզոնէն կամաց կամաց կը հեռացնէր կրօնական ու ազգայնական մշուշը: Բայց ի՞նչ ըրաւ Դաշնակցութիւնը: Մէկ կողմէն՝ երբ ան կը սիրաբանէր թուրք կուսակցութեան հետ, միւս կողմէն՝ եռանդազին լծուած էր հայերը զինելու եւ ապստամբութեան պատրաստելու գործին: Պատմենք զաւելտալի դէպք մը, որ վէպ չէ, այլ իրողութիւն: Այս տողերը գրողը ներկայ էր Պոլսէն եկող նոր կուսակալի ընդունելութեան առթիւ սարքուած այն փառաւոր հանդիսութեան՝ որ տեղի ունեցաւ Սարրերդ-Մէլլերի մէջ՝ 1908-ի Սեպտեմբերին: Ծովածաւալ բազմութիւն մը՝ մեծ մասով հայերէ բազկացած, կը դիմաւորէր ժէժօն թուրք կուսակալը: Եւ ահա, որպէս յարգանք, որպէս հայկական պատիւ՝ հայ դպրոցականները կուսակալին առջեւ յանկարծ սկսան երգել:

Դաշնակցական խումբ գնանք մեք Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում:

Անդրանիկը քաջ իր ընկերներով՝
Կուզէ պատերազմ, կը սպասէ գարնան :

Կուսակալը, մօրուքը շոյեց պահ մը, ապա չկրնալով ինքզինքը դսպել՝ «Անայի՛ւյ, — ըսաւ, — պու նէ՞ Անդրանիկ, պու նէ՞ պատերազմ»... (Չարմանայի բան. այս ի՞նչ Անդրանիկ, այս ի՞նչ պատերազմ է) : Դաշնակ չէ՞Քր փորձեց չքմեղացնող պատասխան մը տալ. — «Պէ՛յ է՞Քէնտի, — ըսաւ, — մենք տակաւին նոր կարգերու երգեր չունինք, ատոր համար հայ տղաքը հին տխուր օրերու երգը երգեցին : Բայց մենք անցեալը ի սպաս թաղած ենք, այլեւս ո՛չ Անդրանիկ, ո՛չ ալ պատերազմ, այլ եղբայրութիւն» : Չգիտեմ, կուսակալը համոզուեցա՞ւ թէ ոչ, բայց գիտեմ թէ նոր թափով եռացող կեանքը տարբեր հեռանկար կը պարզէր : Այժմ տանք այդ շրջանին պատկանող մի քանի իրողութեանց հարեւանցի պատկերաւորումը :

Սահմանադրութենէն յետոյ՝ Պոլսոյ մէջ Ֆրէնկեան վաճառատունը հայ թերթերով կը ծանուցանէր գերմանական Մանիխըր եւ տասնհարուածեան ատրճանակներու ազատ վաճառումը : Այդ վերջին տեսակի ատրճանակները կարելի էր կոչել հրացան, որովհետեւ իրենց պատեանը ատրճանակին կցուելու յարմարութեամբ շինուած ըլլալով՝ ատրճանակը կը վերածուէր հրացանի : Երբեք չափազանցութիւն ըրած չենք ըլլար, երբ ըսենք թէ Խարբերդ նահանգին մէջ չկար հայ մը, որ այդ ատրճանակը Պոլսէն ապսպրած ու ստացած չըլլար : Եւ երեւակայեցէք որ Օսմանեան թղթատարութիւնն էր որ այդ ատրճանակ-հրացանները հաւատարիմ ծառայութեամբ Պոլսէն կը բերէր ու կը յանձնէր իրենց տէրերուն, հայ-թուրք եղբայրութիւնը ամբողջելու համար...

1910-ին, Չարսանճազի հողային հարցը դրուեցաւ Օսմանեան պարլամենտին մէջ : Հայ երեսփոխանները մասնաւորապէս հայ գիւղացիներու իրաւունքի պաշտպանութիւնը նկատի առին եւ անտեսեցին թուրք ու քուրդ գիւղացիները, որոնք նոյնպէս հողազուրկ ճորտեր՝ նոյնքան ճնշուած էին խոշոր հողատէր պէկերու կրունկներուն տակ, որքան հայ գիւղացիները :

Պայթեցաւ Պալքանեան պատերազմը. չնայած որ թուրքիան չարաչար պարտուեցաւ այդ պատերազմին մէջ, բայց հայու մը քիթը չարիւնոտեցաւ, որովհետեւ հայ զինուորը դասալիք չեղաւ եւ կողք կողքի կռուեցաւ թուրք զինուորին հետ :

Ատանայի ջարդի մասին կը խօսին. բայց ո՞վ էր անոր պատասխանատուն. — Ատանայի առաջնորդը՝ Մուշեղ Վարդապետ Սերոբեանը, այդ անխորհուրդ ու արկածախնդիր կղերականը, որ զինուո-

րական զունդեր կազմակերպելու աշխատանք տարած էր, եւ մահմետական ամբողջ դրդուելու առիթ որոնող եւ անհամբեր դարձած թուրք պաշտօնեաներու իրաւունք տուած էր, որ անոնք բարձրաձայն յայտարարեն. — «է՛հ, հայեր, մենք չենք մեռած, որ ձեռնածալ նստինք եւ դիտենք մեր գերեզմանը փորոզները» : Եւ անոնք սկսան ջարդարարութիւնը, ու Մուշեղ Վարդապետը փախաւ Ատանայէն...

Համաշխարհային պատերազմը սկսելուն պէս Դաշնակցութիւնը ձեռնարկեց կազմակերպելու կամաւորական շարժումը : Դաշնակ երեսփոխան Պաստրմաճեան, անցնելով հայ կամաւորներու դուխըր ապստամբութեան դրօշակ բարձրացուց իր կառավարութեան՝ Օսմանեան կառավարութեան դէմ... եւ սկսաւ Մեծ Եղեռնը :

Թուրքիան պատերազմի մէջ մտաւ 1914-ի Օգոստոսին, իսկ հայկական ջարդն ու տեղահանութիւնը սկսաւ 1915-ի Ապրիլին : Այդ երկու թուականներու միջեւ ութը ամիսներու ժամանակաշրջան մը կայ. թէ ինչ բաներ տեղի ունեցան այդ ժամանակաշրջանին, մենք այդ մասի պատմութեան արձանագրութիւնը կը թողունք մեր ապրող ազգանուէր յեղափոխականներուն, որոնք մինչեւ այսօր իսկ՝ չեն ըմբռնած մեզ հետաքրքրող իրադարձութեան դատակարգային բնոյթը եւ տակաւին կը քալեն քաղաքական մուրացկանութեան ճամբայէն, առանց անդրադառնալու որ մենք այսօր ունինք հայութեան ապագայի փառքը կերտող խարխալ մը, աշխատանքի կոթողներով հրաշակերտ Խորհրդային Հայաստանը, անդամը Խորհրդային մեծ Միութեան, որմէ կախուած է ամբողջ մարդկութեան ազատագրումը իմպերիալիզմի կապանքներէն :

ԳԼՈՒԽ Բ.

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄԸ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵՐՈՒ ՄԻՋԵՒ (1914-1939)

1. — ԹՐԷՅՏ ԻՆՆԻԸՆՆԵՐԸ Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ (1914-1918)

Ա. աշխարհամարտի սկզբնական շրջանին Թրէյտ Իննիըններու Միջազգային Դաշնակցութիւնը ամուր հիմքերու վրայ հաստատուած չըլլալով՝ կրնանք ըսել թէ սոսկ անուանական կազմակերպութիւն մըն էր: Անոր նախագահը՝ Լէկիլըն, ատեն մը աշխատեցաւ որ զանազան երկիրներու Թրէյտ Իննիըններու առաջնորդները համախմբուին մէկ ճակատի վրայ, պատերազմի պարագային իրենց զիրքը ճշգելու համար, բայց ի վերջոյ՝ յայտարարեց — «Յանցանքը մերը չէ որ մեր կազմակերպութեան մէջ խզում յառաջացաւ: Ուրիշ ուժեր կան, որոնք կ'որոշեն իրերու ընթացքը, դործաւոր դասակարգը անոնց հետ կապ չունի. մեր դերն է հետեւիլ, ո՛չ թէ առաջնորդել»: Նոյն ձեւի արտայայտութիւններ ունեցան Գամպըրսը, Մէրտընը եւ բոլոր միւս աշխատաւորական առաջնորդները, որոնք անցան իւրաքանչիւրը իր պատկանած կապիտալիստական կառավարութեան շահերու պաշտպանութեան դործին: Միջին դարուն տիրող դասակարգը կրօնական հաշիշով կը գինովցնէր ամբոխները եւ զանոնք կը տանէր պատերազմի ճակատը, կապիտալիստական դարաշրջանին աւելի զարգացած տիրող դասակարգը ուրիշ տեսակի հաշիշ մը սկսաւ դործածել ամբոխները գինովցնելու համար. — Հայրենասիրութիւնը: Բայց ի՞նչ էր հայրենիք ըսուածը, որո՞ւն կը պատկանէր այդ հայրենիքը, եւ յետոյ՝ ո՞ր մէկ հայրենիքի ժողովուրդ էր որ հարկադրուած էր յարձակել ուրիշ հայրենիքի մը կապուած ժողովուրդի վրայ, երբ ամէն մէկը ունէր իրեն բաւարարութիւն տուող անտեսական սեփական աղբիւրները՝ որոնք եթէ ընկերային ձեւով դասաւորուած ըլլային ո՛չ մէկ անհատ զրկուած ու դժգոհ կը մնար: Այս հարցումներուն պատասխան չկայ. միայն մէկ խլացուցիչ ազդակ կը լսուի. — «Հայրենիքը վտանգի տակ է, ամէն ինչ պէտք է անտեսել՝ եւ նուիրուիլ հայրենիքի պաշտպանութեան գործին»:

Այսպէս եղաւ Առաջին աշխարհամարտի շրջանին: Թրէյտ Իննիըններու Միջազգային Դաշնակցութիւնը բաժան-բաժան եղաւ: Անոնց առաջնորդները բացայայտօրէն դաւաճանեցին բանուորական գառին, երբ իւրաքանչիւրը կեցաւ իր կառավարութեան կողքին՝ օգնելով որ կոտորուին միւս ճակատի բանուորները: Ասոր հետեւանքը այն եղաւ, որ միջազգային Թրէյտ Իննիըններու երեք կեդրոններ երեւան եկան. Մէկը Բերլինը, որ կեդրոնական պետութեանց միութիւններու կեդրոնը եղաւ. երկրորդը՝ Փարիզը, որ զաշնակիցներու Թրէյտ Իննիըններու կեդրոնը եղաւ, իսկ երրորդը՝ Ամսթերամը, որ չէզոք երկիրներու Թրէյտ Իննիըններու կեդրոնն եղաւ:

Պատերազմը պայթելուն պէս պատերազմող երկիրներու կապիտալիստները սկսան դասակարգային համերաշխութեան ծրագիրներ մշակել, որպէսզի բանուորներու քաղաքական եւ Թրէյտ Իննիըններու առաջնորդները իրենց պատկանեալ կառավարութեան պատերազմական մեքենային միացնեն ամբողջապէս: Անոնք այդ բանը ըրին այնպիսի եզանակով, որ բանուորները մնան զուտ օգնողի դերով եւ զուրս չզան այդ դերէն, չկրնան չահագործել պատերազմական կացութիւնը՝ իրենց դասակարգային դիրքը ուժեղացնելու համար:

Պելճիգայի մէջ էմիլ Վանդըրվէլդ, Միջազգային Սոցիալիստ Բիւրոյի նախագահը, բուրժուական կառավարութեան գահընթի անդամ եղաւ եւ այնպէս ըրաւ որ Սոցիալիստ Կուսակցութեան եւ Թրէյտ Իննիըններու առաջնորդները անբաժան հոգատարները դարձան պայթող պատերազմին: Ֆրանսայի մէջ պատերազմը սկսելէն անմիջապէս վերջ, Մարտի Ամբատ եւ Ժիւլ Գէտ, նոյնպէս մտան կառավարութեան գահընթի մէջ: Ժիւլ Գէտը երկար ատեն է ի վեր «ուղղափառ» մարքսիստ էր եւ բուն պայքար կը մղէր աջ թեւի վերատեսչականներուն դէմ: Ի վերջոյ Այբըրդ Թոմաս, Բ. Միջազգայնականի յայտնի դէմքերէն մէկը, միացաւ Ֆրանսական գահընթի եւ եղաւ ռազմամթերքի նախարար: Այսպիսով սոցիալիստները կազմեցին նուիրակն միութիւն մը բուրժուական կառավարութեան կողքին:

Ռուսիոյ մէջ Մենշևիկները եւ ուրիշ պատեհապաշտական խմբակցութիւնները իրենց դործօն մասնակցութիւնը արամազրեցին իմպերիալիստական պատերազմին, բայց ցարական կառավարութիւնը շատ քիչ կարեւորութիւն ընծայեց անոնց եւ յայտնապէս չուզեց ընդունիլ անոնց համագործակցութիւնը որպէս պաշտօնական օժանդակութիւն: Ռուսիոյ պնդողութիւն պաշտօնատարները երբ իրենց ձեռքն ունէին տեղորի սարսափելի դէնքը եւ մաստաները բռնի ուժով կրնային շղթայել պատերազմական մեքենային, այլեւս պէտք չունէին դասակարգային համերաշխութեան: Իտալիոյ մէջ, երբ երկիրը 1915-ին պատերազմի մէջ մտաւ, Սոցիալ Դեմոկրատիայի աջ թեւի առաջ-

նորդները չուսով լքեցին իրենց կեղծ ընդդիմադիրի դիրքը և Թրէյտ Իւնիւրնի բիւրոկրատիի հետ միացան կառավարութեան մեքենային: Աւստրիոյ մէջ սոցիալ դեմոկրատները անմիջապէս բարեկամական ձեռք երկարեցին պատերազմի հրձիգներուն: Գերմանիոյ մէջ, ուր պատերազմի նախօրեակին բանուորական միութիւնները սուր պայքար սկսեցին իրենց դործատէրերուն դէմ, Քայդերական կառավարութիւնը արդէն Սոցիալ Գեմոկրատ կուսակցութիւն ու Թրէյտ Իւնիւրնները առած էր իր ձեռքին մէջ: Պատերազմը պայթելուն պէս, երբ մի շարք բանուորական միութիւններ սկսան դանդաղել իրենց վզին դրուած դժուարութեանց մասին, կառավարութիւնը խոստումներով հանդարտեցուց զանոնք: 1918-ին, երբ գերմանացի դործաւորները Ռուսական Յեղափոխութեան ազդեցութեան տակ ուղեցին Քայդերական կառավարութիւնը տապալել, Շայտմընտ և ուրիշ Սոցիալ Գեմոկրատներ առնուեցան դահլիճին մէջ՝ բանուորներու սպառնական շարժումը գլխատելու համար: Ճարտնի մէջ կառավարութիւնը Սուզուբի Թրէյտ Իւնիւրնի առաջնորդները հրապուրեց և անոնց միջոցով բանուորութիւնը առաւ իր հրամանատիրութեան տակ:

Անգլիոյ մէջ, պատերազմի շուկները սկսելուն պէս, Թրէյտ Իւնիւրնի Գոնկրէսը և Աշխատաւորական կուսակցութիւնը յայտարարեցին «արդիւնաբերական զինադադար», պատերազմի տեսողութեան ընթացքին: Նախ Աքքուիտի կառավարութիւնը եկաւ, յետոյ՝ անոր յաջորդեց Լոյդ ձորճի կառավարութիւնը: Արթիւր Հենզլերը ասնոր հետ ուրիշ Թրէյտ Իւնիւրնի առաջնորդներ՝ մտան կառավարութեան դահլիճին մէջ:

Միացեալ Նահանգներու մէջ կառավարութիւնը և դործատէրերը շատ ճարպիկ կարգադրութիւնով մը Գամպրբսի մեքենան և աջ թեւի Սոցիալիստները կապեցին պատերազմական կառքին:

Պատերազմիկ երկիրներու մէջ տիրող դասակարգը ինչ որ կը սպասէր դործաւորներէն, յաջողութեամբ կրցաւ ձեռք բերել: Ի՞նչ էր իր սպասածը. առաջին՝ պատերազմի մասնակցութեան պարտաւորութիւնը միացնել հայրենիքի պաշտպանութեան գաղափարին հետ, որպէսզի բանուորները բնական դաւանին միացեալ ջարդարարութիւնը: Երկրորդ՝ պատերազմի ընթացքին մէկ կողմէն դասակարգային պայքարը լուծարքի ենթարկել և ընկերային խաղաղութիւն հաստատել, միւս կողմէն՝ բանուորները ամբողջապէս ընտելացնել հաւատարիմ ծառայութեան: Եւ իրապէս ալ՝ բանուորութիւնը գառնուկ դարձաւ կապիտալիստական առիւծին առջև: Գործադուլը նրկատուեցաւ հակաօրինական. Թրէյտ Իւնիւրններու կանոններն ու պայմանները դարձան անարժէք: Գործադուլային ճգնաժամի ատեն կառավարութիւնն էր որ հարկ եղած միջամտութիւնն ու կարգադրու-

թիւնը պիտի ընէր: Ասով բանուորները բանութեան տակ կապուած մնալու էին իրենց դործին: Այս ձեւի հասկացողութիւնը թէև պատերազմի տեսողութեան շրջանին համար էր, բայց ան տեսակ մը օրէնք դարձաւ յետագային համար:

Բանուորներու պայքարող ուժերը շղթայելու նոյն ձեւերը որդեգրուեցան միւս պատերազմիկ երկիրներու մէջ: Միացեալ Նահանգներու մէջ հաճոյակատար Գամպրբսի շուրջ հաւաքուած բիւրոկրատները քայլ մը առաջ անցան. անոնք համաձայնեցան որ մենաշնորհեալ արդիւնաբերական հիմնարկներու անկազմակերպ բանուորներու մէջ կազմակերպական աշխատանք պիտի շտանին և իրերու դրութիւնը պիտի պահեն նոյնը: Ասանկով 1918 Մայիս 29-ին հաստատուեցաւ Պատերազմական Աշխատաւորական Մարմին մը, որու անդամներն եղան բանուորական առաջնորդները: Այս բոլորին հետ կառավարութիւնը խոստացաւ որ պատերազմէն վերջ բանուորական միութիւններու ազատութիւնը պիտի չկաշկանդուի:

Ո՞Վ ԷՐ ԵՄԱՆՈՂԸ, Ո՞Վ ԷՐ ԿՈՐՍՆՑՆՈՂԸ

Պատերազմը սկսելէն անմիջապէս յետոյ՝ պատերազմիկ երկիրներու կապիտալիստները սկսան ամենէն անգույթ ձեւի շահագործման ազատ թողուած արշաւանք մը: Անոնց համար ոսկեղէն պատեհութեան գուռ էր բացուեր տասնապատկելու իրենց շահն ու հարստութիւնը: Բայց որպէսզի ժողովուրդն ալ կարողանան թմբեցնել, բանուորներու աշխատավարձերը բարձրացուցին անհաւատալի չափանիշով, թողունք որ կապիտալիստներու և բանուորներու շահու համեմատութիւնը ինքնին անբաղդատելի էր: Բանուորները պատրանքն ունէին կարծելու թէ իրենց աշխատավարձը բարցրացեր էր, բայց իրապէս ան մնացեր էր գրեթէ նոյնը, որովհետև կենսամթերքի գիները եռապատիկ բարձրացեր էին և կառավարութիւնը կը մերժէր ըստանձնել գիներու ազդու հսկողութիւնը: Ասանկով, ինչ որ կապիտալիստները բանուորներուն կուտային, միւս կողմէն իրենց տուածը շահարժինով ևս կ'անէին:

Գերմանիոյ, Պելճիգայի, Ֆրանսայի, Իտալիոյ, Աւստրիոյ և ուրիշ երկիրներու մէջ կապիտալիստները մէկզմէկ կը դերազանցէին խոչորագոյն շահեր ապահովելու մէջ: Հոգ չէ թէ պատերազմի դաշտին վրայ հարիւր հազարաւոր զիակներ կը փուռէին, մարդիկ միայն մէկ բանով կը հետաքրքրուէին — ոսկիով լեցնել իրենց զանձարանները: Ռուսիոյ մէջ անկարեկիր կապիտալիստները ցարական բիւրոկրատներու հետ կը խարէին զինեալ ուժերը այն աստիճան, որ անոնց կուուելու կարողութիւնը կը մկրատուէր: Ճարտնի մէջ անգույթ շա-

հարկուծիւնը դուռ բացաւ 1918-ի բրինձի ընդհանուր ապստամբական շարժումին, որմէ իշխող դասակարգը իրապէս սարսափած, հարկադրուեցաւ որոշ զիջումներ ընել ժողովուրդին: Բանուորները, թէեւ առանց առաջնորդի մնացեր էին, բայց դարձեալ մարտական շարժման ողնայարը կը ներկայացնէին: Մեծն Բրիտանիոյ մէջ, պատերազմը այնպիսի վիթխարի շահեր ապահովեց կապիտալիստներուն համար, որ Անգլիան տեսած չէր: Չորս միլիաո ոսկի ստերլինկ շահոյթ պատերազմի շրջանին, ասիկա մարդոց երեւակայութեան սահմանէն դուրս շահոյթ մըն էր: Իսկ Միացեալ Նահանգները... Աշխարհի ոսկիներու աղբիւրները ուղղուեցան դէպի Ընթրլ Սեմի երկիրը, ուր 20 հազար նոր միլիոնատէրեր աւելցան:

Այս դրութեան տակ բանուորները ամենուրեք շատ մեծ դժուարութեան հանդիպեցան իրենց ապրուստի բնականոն պայմանները ապահովելու մէջ: Անոնց առաջնորդները արդէն ստորադրած էին զործազուլներու արդելիչ օրէնքը եւ զբաղած էին ամէն կերպով համոզելու զործաւորները, որ անոնք ամէն կարգի զոհողութիւն ընելու էին պատերազմը շահելու համար: Բայց ճնշող կացութիւնը կը հրամայէր որ բանուորները իրենց անմիջական իրաւունքները պաշտպանելու համար զիմեն իրենց միակ զէնքին՝ զործազուլին, հակառակ թրէյտ Իւնիւրներու առաջնորդներուն, զործատէրերուն ու կառավարութեան, որոնք միասնաբար երդուած էին ճնշել զիրենք:

Փրանսայի մէջ, երբ անարխո-սենտիկալիստները ձախողեցան ընդհանուր զործադուլի իրենց ծրագրած շարժումին մէջ, ինքնին կազմուեցաւ հակապատերազմական փոքրամասնութիւն մը Մետաղագործ Բանուորներու Միութեան կողմէ, որ պատերազմի տեսն զեկավարեց շարք մը զործազուլներ: Սպանիոյ մէջ — Սպանիա չեզոք պետութիւն էր — 1916-էն 1917 շորս ընդհանուր զործազուլներ տեղի ունեցան: Գերմանիոյ մէջ անպաշտօն շատ մը փոքր զործազուլներ եղան պատերազմի նախօրեակին, որոնք աւելի լայն շրջանակներով երեւան եկան պատերազմի շրջանին: 1917-ի Յունուարին, Բելքիւնի մէջ պայթեցաւ զինագործարաններու մեծ զործադուլը շարքային բանուորներու նախաձեռնութեամբ: Ռուսական Յեղափոխութիւնը շատ մեծ ազդեցութիւն զործեր էր գերման պրոլետարիատի վրայ: 1917-ի Դեկտեմբերին, անխահանքի բանուորներու զործադուլը եւ 1918-ի Յունուարին՝ զինագործարաններու ընդհանուր քաղաքական զործադուլը, երկուքն ալ տեղի ունեցան այնպիսի տեսն՝ երբ բանուորական միութեանց առաջնորդները եղբայրացի էին պատերազմի հրձիգներուն հետ եւ ողի ի բռին կը յորդորէին բանուորները՝ անսալ հայրենիքի պաշտպանութեան ձայնին: Աւստրիոյ մէջ ալ 1915էն 1916 թուին, պատերազմի շրջանին ցանցառ թուով զործազուլներ տեղի ունեցան, ո-

րոնք Ռուսական Յեղափոխութենէն յետոյ մարտական զիրքերու անցան: 1918-ի Յունիսին, Վիեննայի մէջ պայթեցաւ ընդհանուր զործադուլ մը, որ վերջացաւ բանուորներու յաղթանակով:

Մեծն Բրիտանիոյ մէջ ընդդիմադրական գլխաւոր ուժը երեւան եկաւ Գործարաններու Մատակարարներու շարժումով, որու ղեկավարներն էին ձախ թեւի գիտակից բանուորները, որոնք խոր ատելութեամբ լեցուած էին բանուորական դատի դաւաճան առաջնորդներու դէմ: Առաջին զործադուլը տեղի ունեցաւ 1915-ի Մարտին: 1917-ի Յուլիսին, Հարաւային Վոլսի անխահանքի բանուորները հսկայ զործադուլ մը կազմակերպեցին, որուն մասնակցեցան 300,000 բանուորներ: Այս զործադուլը վերջացաւ ի նպաստ բանուորներուն:

Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ կը տեսնենք նոյն ընդհանուր երեւոյթը: Գամպըրսի մեքենան թէեւ տրամադրուած էր կառավարական ծառայութեան, բայց շարքային բանուորները ձախ թեւի Սոցիալիստներու, Սենտիկալիստներու եւ Ֆարմըր-Լէյպըրայտներու առաջնորդութեամբ տասնըութը ամիսներու ընթացքին՝ 6,800 զործազուլներ կազմակերպեցին, որոնք վերջացան բանուորներու յաղթանակով: Այդ շրջանին IWW կազմակերպութիւնը, որ ամբողջ Ամերիկան սարսափի կը մատնէր իր աննահանջ մարտական զործունէութեամբ, պատերազմի տեսն խոշոր զործազուլներ կազմակերպեց ատաղձագործարաններու մէջ, պղինձի ճարտարարուեստին մէջ եւ նաւամատոյցներուն վրայ: Ամերիկեան կապիտալիստները կառավարութեան միջոցով կատաղի հալածանքի մը սկսան այս մարտական կազմակերպութեան դէմ: Նախ ուղեցին հսկայ դուժարով մը կաշառել անոր առաջնորդը, այն միակնի հսկան՝ Ուիլիլմ Զէյվուտը, որ Ամերիկայի աշխատաւորական պատմութեան մէջ նշանակելի գիրք գրաւողներէն մին էր:

Ամերիկայի մէջ IWW գրեթէ (Industrial Workers of the World) ամերիկացիները սովոր էին թարգմանել I Want War-ով (Ես պատերազմ կ'ուզեմ), որովհետեւ այդ կազմակերպութեան զործազուլները մարտական ճակատի վրայ կ'ուղղուէին զործազուլներ էին:

Ընդհանուր առմամբ թրէյտ Իւնիւրնի շարժումը պատերազմի ընթացքին քանակական աճում ունեցաւ մարտական շարքային տարբերու ջանքերու շնորհիւ: Մ. Նահանգաց մէջ 1914-ին AFL-ի անդամներու թիւն էր 2,020,671. Իսկ 1918-ին այդ թիւը բարձրացաւ 2 միլիոն 726,478-ի: Բայց եթէ անոր առաջնորդները բանուորներու շահը հետապնդող քաղաքականութեան հետեւէին, ապահովարար մի քանի միլիոններ պիտի միանային թրէյտ Իւնիւրներուն: Փրանսայի մէջ բանուորական միութիւնները պատերազմի տեւողութեան ընթացքին գրեթէ չբացան. պատերազմէն յետոյ էր որ նորէն սկսան կազմակեր-

պուլի: Գերմանիոյ մէջ Գերման Սոցիալ Դեմոկրատական միութիւնները 1914-ին ունէին 2,521,303 անդամներ. 1916-ին անոնց անդամներու թիւը իջաւ 944,713-ի: Անգլիոյ մէջ պատկերը քիչ մը տարբեր էր սակայն: Բրիտանական Թրէյտ Իւնիքըներու Գոնկրէսը 1915-ին ունէր 2,689,957 անդամներ. պատերազմի ընթացքին անոր անդամներու թիւը փոխանակ նուազելու, աւելցաւ. 1918-ին ան ունէր 4,532,185 անդամներ: Ասոր պատճառը կրնանք նկատել այն՝ որ Անգլիոյ գործազուլները մեծ մասով յաջող վերջաւորութիւն ունեցան: Անգլիական կապիտալիստները աւելի խորամանկ էին եւ հետատես բանուորները խարելու գծով:

Անգրադառնալով համաշխարհային Թրէյտ Իւնիքընի շարժումին, առաջաւոր 20 երկիրներու մէջ — բացառելով Ռուսիան — 1914-ին, Թրէյտ Իւնիքըններու անդամներուն թիւն էր 13,222,000. 1918-ին այդ թիւը բարձրացաւ 21 միլիոնի:

ԲԱՆՈՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏԸ

1914-ին, երբ պատերազմը պայթեցաւ, Սոցիալիստ կուսակցութիւնները եւ Թրէյտ Իւնիքընի բիւրոկրատին իրենց շովինիստական ամբողջութեամբ եւ կազմակերպչական հսկողութեամբ շատ ուժեղ էին բանուոր դասակարգը բարոյալքելու եւ զայն հեռացնելու հակապատերազմական դիրքաւորումէն: Բայց երբ պատերազմի դաշտին վրայ հարիւր հազարաւոր զիակներ փոռուեցան ու պատերազմական զիծերուն ետեւ միլիոնաւոր մարդիկ անտանելի դժուարութեանց ենթարկուեցան, նախ դժգոհութեան՝ ապա ապստամբութեան ուղին սկսաւ ծաւալիլ մասսաներու մէջ: Ասոր յատկանշական ապացոյցը այն եղաւ, որ բազմացան գործազուլները, որոնք եկան առ ոչինչ համարել «արդիւնարեական յինադադարը» եւ բանուորական դաւաճան առաջնորդներու կնքած «սրբազան միութիւնը»: Պատերազմի շարունակութեան ընթացքին, այդ գործազուլները անհեցան ո՛չ միայն քանակով, այլեւ իրենց ուժգնութեամբ. պարզ էր որ անոնք կը յայտարարէին թէ յեղափոխութեան փոթորիկը մօտ ատենէն պիտի պայթէր եւ բանուորութիւնը հաշուետուութեան կանչելու էր կապիտալիստական սխտէմը՝ որ աշխարհը վերածեր էր սպանդանոցի եւ ժողովուրդները առաջնորդեր էր թշուառութեան գիրկը:

Պատերազմի ընթացքին յեղափոխական բանուորները փորձեցին վերստեղծել Ինտերնացիոնալը եւ վերսկսիլ հակապատերազմական պայքարը, որ վերատեսչականները ոչնչացուցեր էին: Ասիկա պատերազմի ատենուայ նշանակալից մէկ երեւոյթն էր, որ երեւան եկաւ մի շարք խորհրդաժողովներով, որոնք տեղի ունեցան մէկը՝ Զիմմէրլալ-

տի մէջ 1915-ի Սեպտեմբերին, միւսը՝ Քիէնտալի մէջ՝ 1916- Ապրիլին: Այդ պատմական քոնֆէրանսներու մէջ ներկայ էր Լենինը, որ կ'աշխատէր որդեգրել տալ յեղափոխական Բուլճերիկներու քաղաքականութիւնը, որ շուտով ցարական Ռուսիոյ մէջ յաղթանակելով պիտի ցնցէր ամբողջ աշխարհը: Այդ քոնֆէրանսները բանուոր դասակարգին առջեւ բացին զարգացման այն ուղին, որով 1919-ին՝ կազմուեցաւ Կոմունիստ Ինտէրնացիոնալը եւ 1921-ին՝ Բանուորական Միութեանց Կարմիր Միջազգայնականը:

Այդ շրջանի յատկանշական փոթորիկը, որ պայթեցաւ Անգլիոյ մէջ 1916-ի Զատիկին՝ Իրլանտայի ապստամբութիւնն էր: Այս ողբերգական կռիւը մէկ օղակն էր 700 տարիներէ ի վեր Իրլանտայի ժողովուրդի այն պայքարին, զոր ան կը մղէր անգլիական տիրապետութեան դէմ՝ յանուն ազատութեան: Շարժման առաջնորդն էր ձէյմս Գանալլի, բանուոր մը, Ամերիկայի IWWի նախկին կազմակերպիչը: Անիկա բացառիկ սաղանդով օժտուած յեղափոխական Մարքսիստ մըն էր, որ արտասովոր հմտութեամբ կ'առաջնորդէր ապստամբութիւնը: Շարժման կեդրոնատեղին էր Լիպլըտի Հոլը, իրլանտական Փոխադրական Բանուորներու Միութեան ակումբը: Ապստամբութիւնը սկսաւ Ապրիլ 24-ին եւ ճգմուեցաւ Ապրիլ 29-ին: Ապստամբները միայն հինգ օր Տըպլինի տէրը դարձան, բայց զայն չկրցին պահել: Մի քանի օր վերջ, բրիտանական կառավարութիւնը գլխատել տուաւ Քոնալլին, Փէրսին եւ միւս առաջնորդները: Վիրաւորուած Քանալլին պատգաբակով տարուեցաւ գլխատման վայրը եւ հոն գլխատուեցաւ:

Բանուորներու եւ զիւղացիներու հակապատերազմական ուղին իր ծայրագոյն կէտին հասաւ ցարական Ռուսիոյ մէջ: Հոն, աշխատաւոր մասսաները փշրելով սոցիալ դեմոկրատ դաւաճաններու եւ կեղծ առաջնորդներու պատանէչները, այնպիսի ուժգին հարուած մը տուին կապիտալիզմին, որ խորտակեցին անոր հիմքերը: Հարուած մըն էր ան, որուն ազդեցութիւնը տակաւին կը թաւալի աշխարհի բոլորտիքը՝ յարաճուն ուժգնութեամբ:

2. — ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆԸ 1917-ԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ (1917-1921)

1917-ի Ռուսական Յեղափոխութիւնը բանուորներու եւ զիւղացիներու բունցքներով երկու խորտակիչ հարուածներ տուաւ ցարական կապիտալիստական ռեժիմին: Առաջին հարուածով կործանեցաւ Ռոմանովներու բացարձակապետութիւնը եւ կապիտալիստները կարծեցին թէ՛ իրենք անցեր են իշխանութեան գլուխը: Ասիկա յեղափոխութեան բուրժուա-դեմոկրատական շրջանն էր որ կարճ տևողու-

թիւն ունեցաւ: Անոր յաջորդեց Նոյեմբեր 7-ի պրոլետարական յեղափոխութեան հարուածը, որով բանուորներն ու զիւղացիները տապալեցին բուրժուազիան եւ բանուոր դասակարգը դրին իշխանութեան գլուխը: Ասիկա պրոլետարական, կամ աւելի ճիշդն է բան՝ Սոցիալիստական Յեղափոխութիւն էր:

Լենին, յեղափոխութեան այդ աննման առաջնորդը, արդէն կանխատեսեր էր իրերու այդ շրջանառութիւնը, այդ իսկ պատճառով ան իրեն յատուկ ուղղամտութեամբ կրցաւ յեղափոխութեան յաղթանակը խելի բուրժուազիայի ձեռքէն ու յանձնել բանուորական-զիւղացիական սովետներուն, Կոմունիստ Կուսակցութիւնը գնելով առաջնորդողի դերին մէջ:

Ո՛ր էր Ռուսական Յեղափոխութեան յաջողութեան դադանիքը: Պէտք էր պարզել այս կէտը: Ռոմանովեան միապետութիւնը, որ կռթնած էր Ֆէոդալական հողատիրութեան սիստէմին, ներսած էր իր ամբողջ էութեամբ, իսկ նորելուկ բուրժուազիան ալ տակաւին այնքան զօրաւոր չէր: Այս հանդամանքներու ներքեւ երբ պատերազմն ալ վրայ հասաւ եւ բանուորական եւ զիւղացիական մասսաները ենթարկուեցան մէկ կողմէն մասսայական կոտորածի, միւս կողմէն՝ աներեւակայելի շահագործումներու եւ ճնշման, ընկերային ուժերը Լենինի գլխաւորած կուսակցութեան առաջնորդութեամբ սողորուեցան յեղափոխական ոգիով ու գրոհ տալով խորտակեցին նախ ցարական ռեժիմը, ապա ռուս բուրժուազիայի անուժ իշխանութիւնը: Ռուսական Յեղափոխութեան ուրիշ մէկ նպատաւոր հանգամանքը այն էր, որ Սոցիալ Դեմոկրատներն ու Մենշեւիկները այնքան զօրաւոր չէին, որ կարողանային պահպանել եւ ազատել ռուսական կապիտալիզմը՝ ինչպէս անոնց եղբայրներն ըրին Եւրոպայի ու Ամերիկայի մէջ: Անոնք շարաշար պարտուեցան բանուորներէն, որովհետեւ այդ վերջինները բախտաւորուած էին ունենալու Լենինի նման հանճարեղ առաջնորդ մը, որ ոչ միայն երկրի հակայեղափոխական ուժերը ջախջախեց, այլ եւրոպական եւ ամերիկեան կապիտալիստական պետութեանց դաւադրութիւնները ի դերեւ հանեց:

ԹԻԲՅՑ ԻՒՆԻԸՆԸ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

1917-ի Յունուարին Փեթրոկրատի եւ Մոսկուայի խոշոր գործադուլներուն յաջորդեց Փետրուարեան Ռուսական յեղափոխութիւնը: Փետրուար 18-ին Փեթրոկրատի մէջ Փիւտիլովի Մետաղագործարանի մեծ գործադուլը տեղի ունեցաւ, որ յետոյ փոխուեցաւ ընդհանուր քաղաքական գործադուլի՝ զինեալ ապստամբութեան ընդթիով: Զինուորները մերժեցին կրակ բանալ յեղափոխական գործադուլաւորներ-

րու վրայ: Փետրուար 27-ին (Մարտ 12) Յար Նիկոլան ինկաւ: Բուրժուական յեղափոխութիւնը շահեցաւ:

Գուրս եկաւ կապիտալիստական կառավարութիւնը Աղեքսանդր Քէրէնսկիի գլխաւորութեամբ: Նոր կառավարութիւնը չէր ձգտեր սոցիալիստական կարգեր հաստատելու, ո՛չ ալ նպատակ ունէր վերջ տալու պատերազմին. ընդհակառակը՝ յենած Մենշեւիկներուն, կ'ողէր շարունակել իմպերիալիստական պատերազմը եւ նոյն ատեն՝ սուելի ծանրացնել կապիտալիստական լուծը բանուորներու եւ զիւղացիներու վրին: Ասոր հետեւանքն այն եղաւ որ, տանջուած մասսաները Կոմունիստ Կուսակցութեան գլխաւորութեամբ եւ Լենինի առաջնորդութեամբ տապալեցին բուրժուազիայի իշխանութիւնը եւ Նոյեմբեր 7-ին հաստատեցին պրոլետարիատի զիկտատուրան — սովետներու — իշխանութիւնը:

Բուրժուա-դեմոկրատական յեղափոխութեան յաջորդող ամիսներուն, այսինքն՝ 1917-ի Մարտ ամիսէն սկսեալ Թրէյտ Իւնիլընները արագօրէն սկսան աճիլ: Սկզբնական շրջանին, համաձայն Լոզովըսկիի՝ միայն երեք Թրէյտ Իւնիլըններ կային ամբողջ Ռուսիոյ մէջ՝ 1500 անդամներով: 1917-ի Յունիսին, կազմակերպուած բանուորներու թիւը հասաւ 1,475,429-ի: 1918-ի Յունուարին՝ 2,532,000: 1919-ի Յունուարին՝ 3,638,000, իսկ 1920-ի Ապրիլին՝ 4,326,000: Կային երեսուներեկու արհեստակցական միութիւններ, բայց բանուորներու ընդհանուր սովետը մտադրեց անոնց թիւը պակսեցնել 23-ի եւ բոլորը առնել արդիւնաբերութիւնը արագացնելու եւ զարգացնելու միանուագ սկզբունքով՝ միայն մէկ միութեան շրջանակի մէջ:

ԳՈՐԾԱԴՈՒԼ, ԳՈՐԾ-ԳՂՈՒԽ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ

Նոյեմբերեան Յեղափոխութիւնը, երբ խորտակեր էր կապիտալիստական շէնքը եւ բացեր էր Սոցիալիզմի ճամբան, ատանկով Թրէյտ Իւնիլըններն ու Կոմունիստ Կուսակցութիւնը տարեր էր միանուագ կազմակերպութեան եւ տուեալ պայմաններու յարմարադոյն քաղաքականութեան պահանջին առջեւ: Այս կէտին մէջ Թրէյտ Իւնիլընները ենթարկուելու էին յեղափոխական փոխակերպութեան: Ինչպէս կապիտալիստական երկիրներու մէջ, նոյնպէս Ռուսիոյ մէջ բանուորներու միակ զէնքն էր գործադուլը: Ռուս բանուորները այդ զէնքը գործածեցին 1905-ին եւ 1917-ին: Գործադուլը կապիտալիստական սիստէմին տակ ուղղուած էր գործատէրերուն դէմ, բայց երբ ռուս բանուորներն ու զիւղացիները հերոսական մարտնչումներով հաստատե-

ցին Սոցիալիստական կառավարութիւն եւ տէր զարձան արաազրութեան բոլոր միջոցներուն, այլեւս անոնք չէին կրնար մտածել պայքարիլ իրենց սեփական կառավարութեան դէմ: Փետրոկրատի եւ Մոսկուայի Թրէյտ Իւնիընները Հոկտեմբեր 28-ին (1917) գործադուլի կոչ ըրին բանուորներուն եւ ղիմեցին զինեալ ապստամբութեան. բայց երբ շահեցան յաղթանակը, անմիջապէս յետս կոչեցին գործադուլը եւ վերագարձան իրենց գործի գլուխը, որովհետեւ գործարանները իրենց կը պատկանէին, կառավարութիւնը իրենց սեփական կառավարութիւնն էր, հետեւաբար խելագարուած ըլլալու էին որ ղիմէին սպառնալի: Անոնք բազմաթիւ զիրքեր կարգալու պէտք չունէին, համոզուելու որ զարգացնելով իրենց արդիւնաբերութիւնը՝ կը բարելաւուէր իրենց անտեսութիւնը, կը բարձրանար իրենց ապրուստի մակարդակը: Կեանքը անոնց դասատուն էր եւ ռուս բանուորները ուշիմ աշակերտներ էին: Անոնց այդ ուղիղ զիրքաւորման խոր գիտակցութեան ապացոյցը երեւան եկաւ այն ճգնաժամային տարիներուն, երբ Մենշեւիկներն ու հակայեղափոխական խմբաւորումները ամէն կերպ աշխատեցան բանուորները զրգուել եւ գործադուլի մղել անդամալուծելու համար տակաւին տկար սովետ արդիւնաբերութեան ճիւղերը եւ անոնց հետ տապալիլ յեղափոխութեան կառուցած շէնքը: Պատերազմի առիթով երկրի արդիւնաբերութիւնը քայքայուած էր, սովը տարածեր էր իր թեւերը ամենուրեք. այդպիսի դրութեան մէջ երբ ժողովուրդը ոտքի կենալու էր, բուժելու էր բացուած վէրքերը եւ արդիւնաբերութիւնը նորագոյն ձեւի զարգացման ղիմին վրայ տանելու էր, բանուորներուն համար խնեթութիւն պիտի ըլլար գործադուլով ոտնակոխել իրենց շահերը:

Այս հանգամանքներու տակ գործադուլը Սովետ բանուորներուն համար ինքնին կը դառնար անիմաստ, ատոր համար անոնք զարգացուցին խորհրդատուներու եւ բանակցութիւններու տեխնիկան՝ հարթելու այն փոքրիկ դժուարութիւնները, որոնք մեծ մասով երեւան կուզային բիւրոկրատական հակումներէ: Այսուհանգերձ, 1920 թուին, արձանագրուած են 43 գործադուլներ, որոնք ի վերջոյ ցանցառ թիւ մը կազմեցին: Գործադուլները 10. Միութեան մէջ երբեք սպորինի չեն նկատուած: Գործարանի վերակացուն, բիւրոկրատական կամայականութենէ տարուած՝ յաճախ ոտնձգութիւններ կը փորձէր բանուորներու իրաւանց դէմ, այս վերջինները բնականօրէն պիտի ղիմէին գործադուլի, երբ կը տեսնէին որ իրենց միութեան կանոնները կ'ոտնակոխուէին: Այդ պարագային Կոմկուսը քննութեան կ'առնէր հարցը եւ կը պատժէր վերակացուն: Խորհրդային Միութիւն այցելող պահպանողական բանուորական առաջնորդները երբ կը տեսնեն որ գործադուլը գրեթէ անգործադրելի դարձեր է, կը ցնցուին, կը

զարմանան: Ասիկա կը պարզէ անոնց Փարիսեցիի կեղծաւորութիւնը: Անոնք չեն ուզեր ընդունիլ որ գործադուլները սոցիալիստական ռեժիմին ներքեւ անհրաժեշտ չեն:

Բուրժուամիտ Թրէյտ Իւնիընի առաջնորդները ուրիշ քննադատութիւն մըն ալ ունին, գործ-գլուխի քննադատութիւնը: Կապիտալիստական երկրի մէջ գործարանի բանուորը երբ գործ-գլուխի գծով կ'աշխատի, բնականաբար որքան կարելի է պիտի ջանայ արագ գործել եւ շատ արտադրել՝ աւելի դրամ շահելու համար, մինչդեռ իրապէս գործարանատէրն է որ այդ եղանակով ալ կը շահագործէ բանուորի աշխատանքը: Սոցիալիստական երկրին մէջ ինչո՞ւ որդեգրուած է գործ-գլուխի սխտէմը, քանի որ կապիտալիստական ձեւի շահագործում մը չկայ: Ահա անոնց քննադատութիւնը: Բայց այս մարդիկը բանուորական առաջնորդ ըլլալով հանդերձ՝ իրենց երկրի բանուորներու դրութիւնը չեն ուսումնասիրած: Կապիտալիստական գրութեան տակ, երբ բանուորը գործ-գլուխի դժով արագ կը գործէ եւ շատ քանակութեամբ կ'արտադրէ, ճիշդ է որ որոշ ժամանակով համեմատաբար բարձր աշխատավարձ կը ստանայ, բայց այդ պարագային տակ ալ՝ դարձեալ գործարանատէրն է որ կը շահի, բանուորը կը կորսնցնէ: Գործարանատէրը իր ստացած ապրանքներուն պահանջին համաձայն ապրանքները արագութեամբ արտադրել տալէն յետոյ՝ բանուորները կը նետէ փողոց եւ կամ՝ անոնց կ'առաջարկէ աւելի ցած աշխատավարձ: Բանուորը ուրիշ երկրներունը չունի. ան փողոց չ'ուզեր մնալ եւ ախմայ կ'ընդունի առաջարկուած սակագինը: Խորհրդային ռեժիմի տակ տարբեր են պայմանները. հոն շահագործողներ չկան, հետեւաբար գործ-գլուխի սխտէմը ո'չ թէ բանուորին վրտանդ կը սպառնայ, այլ ընդհակառակը՝ ան անհրաժեշտութիւն մը կը դառնայ ինքնին՝ առաւելագոյն չափով զարգացնելու արտադրողականութիւնը, ընդարձակելու արդիւնաբերութիւնը եւ բարձրացնելու բանուորին ապրուստի մակարդակը:

Անարխիստները ուրիշ առարկութիւն մը ունին: Անոնք կ'ըսեն թէ՛ Թրէյտ Իւնիընը կապիտալիստական սխտէմի յատուկ կազմակերպութիւն է, որ կոչուած է պաշտպանել բանուորներու առօրեայ շահերը. սոցիալիստական երկրին մէջ անոնք այլեւս աւելորդ կազմակերպութիւն կը դառնան: Երբ շահագործող դասակարգը հրապարակէն հեռացած է, այլեւս պէտք չի մնար այդօրինակ դասակարգի մը դէմ պայքարի պատրաստուող կազմակերպութեանց: Այս առարկութիւնը ըստ երեւոյթին՝ տրամաբանական է, բայց ըստ էութեան՝ անհիմն: Կոմունիստները կ'ընդունին թէ բանուորները պէտ է կազմակերպուին, պէտք է ամուր պահեն իրենց կազմակերպութիւնը ո'չ թէ միայն պայքարի համար, այլ զազափարի եւ նպատակի գործունէու-

թեան միասնականութիւնը անսայթաք ուղիղ դժի վրայ պահելու համար :

ԹԻԷՅՏ ԻԻՆԻԸՆՆԵՐԸ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻԻՆԸ
ԵՒ ՊԵՏՈՒԹԻԻՆԸ

Սոցիալիստական սիստէմի տակ բանուոր դասակարգի եւ գիւղացիական կազմակերպութեանց գործը ամենամօտ ներգաշնակութեամբ կապուած ըլլալով մէկը միւսին հետ, արդէն հաստատած կ'ըլլան փոխադարձ օրգանական միաւորներ: Սկզբունքով եւ քաղաքական տեսակէտով անհեթեթութիւն պիտի ըլլայ եւ անհերքելիօրէն հակասական՝ եթէ անոնցմէ մէկը ձգտի անկախութեան եւ իր շահերը տանի հակոտնեայ ճակատի վրայ, բան մը որ կը խախտէ սոցիալիստական հիմնարկութեանց հաւասարակշռութիւնը: Իւրաքանչիւր կազմակերպութիւն գործելու իր որոշ անկախութիւնը պահելով հանդերձ՝ մասը կը կազմէ ընկերային մեխանիզմի լայն ներգաշնակութեան: Եթէ անոնց մէջ երբեմն մանր վէճեր ու ընդհարումներ պատահին, մենք զանոնք կը վերադրենք ո՛չ թէ ներհակ շահերու, այլ պարզապէս կազմակերպչական թերիներու, բիւրոկրատական հակումներու եւ անփորձառութեան: Բացարձակապէս սխալ է ուրիշ կերպ մեկնարանելը:

Կոմունիստ Կուսակցութիւնը, որ կազմուած է բանուոր դասակարգի եւ անոր գաշնակիցներու առաջուոր տարրերէն, քաղաքական գործունէութեան վճռական ճակատին վրայ սովետական պրօլետարական դիկտատուրայի առաջնորդող օրգանն է, ան սովետական ներքին եւ արտաքին քաղաքականութեանց վճռորոշիչ կեղծոնական ուժն է: Ռուսաստանի մէջ քրէյտ իւնիքցիները, որոնք ընդհանրապէս կազմակերպուած ու դաստիարակուած են կոմունիստներու ձեռքով, եւ կ'առաջնորդուին Լենինեան ըմբռնումով, մեծ դեր ունին Կոմունիստ Կուսակցութեան քաղաքական գործունէութեան գաշտին վրայ: Կուսակցութեան անդամները մեծ մասով բանուորներն են, քրէյտ իւնիքցիստները: Անոնց երկուքին ալ համագումարներուն կը մասնակցին եղբայրական պատգամաւորներ: Ասով կը պարզուի քրէյտ իւնիքցիներու եւ Սովետական պետութեան յարաբերութեան ներգաշնակութիւնը: Թրէյտ իւնիքցիները գործօն գեր ունին քաղաքական կեանքի բոլոր ճակատներուն վրայ: Անոնց պաշտօնեաները եւ անդամները կառավարութեան, արդիւնաբերութեան, բանակին եւ ուրիշ սովետական հիմնարկութեանց մէջ կ'ըլլան առաջնորդող ուժեր:

Կոմունիստ Ինտէրնացիոնալը Սովետական քրէյտ իւնիքցիներու գերը 1928-ին հետեւեալ կերպով սահմանած է. — «Կապիտալիստա-

կան սիստէմի տակ բանուորական կազմակերպութիւնները իրենց ուրոյն զէնքերով կը պայքարին մենատիրական կապիտալի եւ անոր պաշտպան պետութեան դէմ: Պրօլետարական դիկտատուրայի ներքեւ անոնք փոխակերպուելով եղած են պետութեան գլխաւոր լծակը, Կոմունիզմի զպրօցը, որ պրօլետարական մասսաներուն կը սորվեցնէ արտադրողութեան սոցիալիստական վարչակառուցութիւնը, ասանկով անոնք պետական ապարատի մասերը դարձեր են, կ'ազդեն անոր բոլոր ճիւղերուն, մշտապէս կը պահպանեն բանուոր դասակարգի եւ գիւղացիութեան առօրեայ շահերը եւ պետութեան մէջ կը պայքարին բիւրոկրատական հակում ունեցողներուն դէմ: Այսպիսով քրէյտ իւնիքցիները եղած են պրօլետարական անտեսութեան եւ պետական կազմակերպութեան ոգնայարը»:

3. — ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԱՇԽԱՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԳԵՐՄԱՆ ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆԸ (1918-1920)

Առաջին աշխարհամարտը եկաւ նշել համաշխարհային կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սկզբնառումը: Մենատիրական կապիտալիզմը, կամ իմպերիալիզմը, կապիտալիստական սիստէմի հիմնական ու հակասական ժառանգութիւններով հասած էր լարուածութեան այն աստիճանին, ուրկէ անխուսափելիօրէն պիտի սկսէր իր վայրէջքն ու կործանումը: Զարգացեր էին արտադրողական ուժերը, մինչ միւս կողմէն կը կծկուէին կապիտալիստական շուկաները եւ շրջադարձային անտեսական ճգնաժամերը յառաջացուցեր էին տեսակ մը տակնուվրայութիւն՝ որ պատճառ եղած էր մասսայական անգործութեան եւ արդիւնաբերական կայունութեան: Գործաւորներու շահագործումը հասած էր իր ծայրակէտին եւ գործազուրները սկսեր էին աճիլ աննախընթաց թափով: Մենատիրական կապիտալիստ խմբաւորումները կենաց մահու պայքարի սկսան մէկը միւսին դէմ եւ նոյն ատեն՝ նուազ կապիտալիստ մրցակիցներու դէմ: Կապիտալիստական պետութեանց միջեւ մղուած պատերազմները համաշխարհային սպանդներու դուռ բացին, սպանդներ՝ որոնց նմանը մարդկութիւնը տեսած չէր: Գաղութային եւ կիսագաղութային ժողովուրդները ենթարկուեցան աննախընթաց շահագործումի ու ճնշման, որոնք յառաջացուցին յեղափոխութիւններ եւ հեռարձակ բռնակումներ: Սկսաւ պրօլետարական յեղափոխութեան դարաշրջանը, որուն յառաջապահը եղաւ Ռուսական յեղափոխութիւնը: Միջազգային բանուոր դասակարգին համար, նախապէս, Սոցիալիզմը ցնորական երազ մըն էր, աղօտ յոյս մը, այժմ ան դար-

ձաւ իրականութիւն՝ աշխարհի մէկ վեցերորդ մասին վրայ: Իրականութիւն, այո՛, եւ մշտատեւ իրականութիւն:

Առաջին աշխարհամարտին, հրապարակ իջաւ աւելի ուժեղ, աւելի երիտասարդ ուրիշ իմպերիալիստ պետութիւն մը, որ աշխարհի ոսկիներու մեծագոյն մասը յափշտակեց եւ դարձաւ կապիտալիստական պետութեանց ընդհանուր հրամանատարը: Ամերիկեան իմպերիալիզմն էր ան:

ՀՈՀԷՆՅՈՒԵՐՆԵԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Գերման գործաւորները, որոնք ենթարկուեցան Թրէյտ Իւնիւրններու եւ Սոցիալ Դեմոկրատ քաղաքական առաջնորդներու դաւաճանութեան, կամաց կամաց սկսան արթննալ եւ աշխատեցան խորտակել իրենց դաւաճան պաշտօնատարներու ղեկավարութիւնը: 1915ի պատեհապաշտ Սոցիալ Դեմոկրատ կուսակցութիւնը 1917-ին, եղաւ Անկախ Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութիւն Կառուցկիական կեդրոնական թեւի կազմակերպութիւն մը: 1916-ին, կազմուեցաւ ձախ թեւի կուսակցութիւնը, Միջազգայնականներու, կամ Սպարտակուսներու կուսակցութիւնը՝ առաջնորդութեամբ Ռոզա Լուքսեմպուրկի, Քարլ Լիպնիցի, Ֆրանզ Մէհրինի եւ Քլարա Յէտկինի: Սոյն կազմակերպութիւնը 1918-ին եղաւ Կոմունիստ Կուսակցութիւն: Այս ճեղքուածքները լրջօրէն այլասերեցին Թրէյտ Իւնիւրններու օրդանական միութիւնը:

Նոյն ատեն, պատերազմի շրջանին, շարք մը գործադուլներ իրարու յաջորդեցին, մասնաւորապէս զինագործարաններու մէջ: 1915-17ին, 601 գործադուլներ տեղի ունեցան: Լէկիւրն Թրէյտ Իւնիւրնի առաջնորդները այդպիսի շարժումներուն հակառակ էին: Այդ պարագային էր որ յանկարծ Ռուսական Յեղափոխութիւնը եկաւ լուսաւորել գերման խաւարչտին մթնոլորտը: Գերման գործաւորները արթնցան: Յեղափոխութեան շունչը տարածուած էր ամենուրեք: 1918 Յունուար 6-ին, մասսայական հսկայ ցոյց մը տեղի ունեցաւ, բողոքելու գերման զինուորական առաջնորդներուն դէմ, որոնք Բըրէտտ-Լիթովսկի մէջ շատ ծանր պայմաններ դրած էին Ռուս ժողովուրդի ուսերուն վրայ՝ խաղաղութեան դաշնագրութեան կնքուելու ատեն: 1917-ի Ապրիլին մեծ գործադուլ մը տեղի ունեցաւ, որուն մասնակցեցան 300 հազար բանուորներ: 1918-ի Յունուարին աւելի հսկայ գործադուլ մը՝ անգործութեան մատնեց զինագործարանները. մէկ միլիոն բանուորներ մասնակցեցան այդ գործադուլին: Սոյն պայքարներու ընթացքին՝ գերման շարքային բանուորները սկսան կազմել բանուորական խորհուրդներ՝ Ռուսական Սովետներու ձեւով:

Անոնց կեդրոնն էր Բէրլինը: Անոնք սկսան իրենց գործունէութիւնը տարածել աւելի հեռուները՝ Թրէյտ Իւնիւրններու մէջ:

1918-ին, կեդրոնական պետութիւնները Արեւմտեան ճակատին վրայ ծանր պարտութիւններ կրեցին: Յուսահատական ժամուն, գերման պատերազմական առաջնորդները հրաման ըրին որ գերմանական նաւատորմիդը դուրս գայ Քիէլի ջրանցքէն եւ յարձակի Բրիտանական զլխաւոր նաւարաժնին վրայ: Բայց գերման ծովային զինուորները չանսացին տրուած հրամանին. անոնք չուղեցին մեռնիլ Հայրենիքի փառքին համար: Նոյեմբեր 2-ին, անոնք պարզեցին ապրտամբութեան դրօշակը եւ կազմեցին իրենց Սովետը: Շանթի հարուած մըն էր ան, որուն հետեւեցաւ յեղափոխական ալիքներու շառաչիւն տարածումը: Մէկ շարթուայ ընթացքին Գերմանիոյ բոլոր քաղաքներու մէջ կազմուեցան բանուորներու եւ զինուորներու սովետներ:

Յեղափոխութեան հոսանքը իր ծայրագոյն ուժգնութեան հասաւ Նոյեմբեր 9-ին: Հոհէնցոլէրնեան կառավարութիւնը Բադէնի Իշխան Մաքսի զլխաւորութեամբ, երբ տեսաւ սարսափելի փոթորիկի յառաջացումը, փութաց մի քանի քաղաքական խայծեր նետել բանուորներու առջեւ. Սոցիալիստ Շայտմընը եւ ուրիշ Սոցիալ Դեմոկրատները դահլիճի անդամակցութեան կոչուեցան: Բայց այդ խարեպատիր ձեւակերպութիւնը փոթորկոտ ովկիանոսը չկրցաւ հանդարտեցնել: Յայտարարուեցաւ ընդհանուր գործադուլ: Հին կառավարութիւնը հրաժարեցաւ, Քայլերը փախաւ Հոլանտա: Այնպէս կը թուէր թէ երկար ատենէ ի վեր սպասուած յեղափոխութիւնը դարձեր էր կատարուած իրողութիւն:

Գերման գործաւոր դասակարգը, երբ քաղաքական իշխանութիւնը իրապէս առած էր իր ձեռքին մէջ, եթէ Լենինեան սկզբունքով ղեկավարուող առաջնորդներ ունենար, ապահովարար Գերմանիոյ մէջ եւս կապիտալիզմը վերջ կը գտնէր եւ, ինչպէս ուս բանուորներն ըրին, Գերմանիան ալ կը մտնէր Սոցիալիզմի ուղին: Գերման բանուորներու յեղափոխական խանդավառութիւնը, անոնց մարտական գործունէութիւնը, հակայեղափոխական ուժերու քայքայուածութիւնը եւ սովետական ձեւը՝ որուն հետեւեցան բանուորները, ասոնք բոլորը հնարաւորութիւն ստեղծեր էին որ գերման ընկերային յեղափոխութիւնը վերջնականապէս յաղթանակէր ու մնար իր յաղթանակի դիրքի վրայ՝ իր կողքին ունենալով Սովետ Ռուսաստանի նման յաղթական ու հզօր դաշնակից մը: Բայց Սոցիալիզմը Գերման Սոցիալ Դեմոկրատ պահպանողական առաջնորդներուն համար միմիայն Փրազարանութեան ծառայող անիրականանալի դադափար մըն էր: Անոնք կը մտածէին թէ կապիտալիզմի կոչտ մասե-

րը կարելի է մկրատել, մի շարք ախորժելի բարեկարգութիւններ ներմուծել եւ աշխարհով կապիտալիզմը ազատել պրոլետարական յեղափոխութենէն:

Բանուորները կազմեցին Կոմիսարներու Խորհուրդ մը՝ վեց անդամներէ բաղկացեալ: Անոնցմէ երեքը — Էրբրտ, Շայտման եւ Լէնդսպրրկ, կը պատկանէին աջ թեւին (մեծամասնական սոցիալիստներ) միւս երեքը — Հասսի, Դիտտմըն եւ Բարտ, կեդրոնական խորհուրդումէն (անկախներ): Այս վեց հոգիները լիազօրութիւն ունէին գործելու մինչեւ որ Սովետներու Ընդհանուր Գոնկրէսը դումարուէր: Այդ գոնկրէսը դումարուեցաւ Բէրլինի մէջ՝ Դեկտեմբեր 16-ին, որոշելու Գերմանիոյ մէջ հաստատուելիք կառավարութեան ձեւը: Կոմունիստները պահանջեցին պրոլետարական դիկտատուրա: Բայց աջ թեւի սոցիալիստները եւ թրէյտ իւնիընի ամբողջ կազմը դիտմովին հակառակեցան եւ մեծամասնութեամբ մերժեցին ընդունիլ սովետական սխառտմը եւ որոշուեցաւ Սահմանադիր ժողով դումարել 1919-ի Յունուար 19-ին: Սոյն շարժման նշանակութիւնը այն էր որ պատեհապաշտներու մեծամասնութիւնը երկիրը կը յանձնէր կապիտալիստներուն: Կեդրոնական թեւի անդամները երբեուն դիրք բռնեցին, անոնք երբեմն հակեցան դէպի աջ՝ երբեմն դէպի ձախ եւ վերջնական յաղթութիւնը տուին աջ թեւին:

Նոյն ատեն, նենդամիտ Լիկիընը, որ Սոցիալ Դեմոկրատներու կուսակցութեան հրամայողն էր, իր սեփական Թրէյտ Իւնիընի եղանակով վերաբերուեցաւ եւ գերման յեղափոխութիւնը ծախեց պնակ մը բանջարապուրի համար: Ան պահանջեր էր ութ ժամեայ աշխատօրի օրէնքի վաւերացում եւ գործատէրերը հաւանք էին: Այլ ինչ հարկ կար յեղափոխութեան, երբ ատիկա բանուորական յաղթանակ էր արդէն:

ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ ԳԵՌ ԿԸ ՄՆԱՆ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ

Գերման առաջաւոր բանուորները քաղաքական եւ տնտեսական ղեկիներուն վրայ սոցիալիստ պատեհապաշտներու մատնութեան ենթարկուած ըլլալով հանդերձ՝ դարձեալ փորձեցին Սոցիալիստական Յեղափոխութիւնը տանիլ իր վերջնական նպատակին: Գերման կառավարութիւնը անուանապէս սոցիալ դեմոկրատական էր, բայց իր իսկական ընդթով յետաշրջական էր: 1919-ի Յունուարին, յայտարարուեցաւ ընդհանուր գործադուլ: Ասոր վրայ, Բերլինի ստալկանապետ Իքորնը, որ անկախ Սոցիալ Դեմոկրատ էր, որպէս կասկածելի մարդ՝ պաշտօնանկ եղաւ: Բանուորները զէնքի դիմեցին ա-

ռաջնորդութեամբ Սպարտակուս խումբին, որ 1918-ի Դեկտեմբերին եղած էր Գերման Կոմունիստ Կուսակցութիւն: Անկախ Սոցիալիստներու ձախ թեւը անցաւ յեղափոխութեան կողմը: Մէկ քանի օրուան մէջ յեղափոխականները զբաւեցին Բերլինի երկաթուղային կայարանը, հեռագրատունը, կազի, ջուրի եւ ելեքտրական հիմնարկները եւ ուրիշ կարեւոր կայաններ ու շէնքեր: Կոիւր տարածուեցաւ ուրիշ քաղաքներու մէջ:

Սոցիալ Դեմոկրատական ժամանակաւոր կառավարութիւնը հաւատարիմ սոցիալ դեմոկրատական քաղաքականութեան, կապիտալիզմի կաշին փրկելու համար բանակի յետադիմական նախկին բոլոր պաշտօնեաները զօրաշարժի ենթարկեց եւ զանոնք դրաւ Սոցիալ Դեմոկրատական մատնիչ Նոսքէյի հրամանատարութեան տակ: Գաւառներէն հաւաքուեցան զինուորական ջոկատներ, որոնց օգնութեամբ յաջողեցան վերջապէս յեղափոխական շարժումը արեան մէջ խեղդելու եւ յայտարարելու «անխոհեմ» բանուորներուն՝ որ դրութեան տէրերը հայրենիքի տէրերն են եւ անոնք որոշած են երբեք չդիջիլ:

Բայց յեղափոխական բանուորները դեռ չէին յուսահատած. 1919-ի Մարտին, անոնք ուրիշ ընդհանուր գործադուլ մը յայտարարեցին, ստիպելով որ կառավարութիւնը յեղափոխական ուղին որդեգրէ ու հեռանայ յետադիմական գծէն: Բանուորները կը պահանջէին Նոսքէյի, Շայտմընի եւ Էրբրտի ձերբակալութիւնը, անմիջապէս վերսկսիլ զիւսանագիտական յարաբերութիւն՝ Սովետ Ռուսաստանի հետ եւ ազատ արձակում՝ քաղաքական բանտարկեալներուն: Բերլինի Սովետի կողով գործադուլը սկսաւ Մարտ 3-ին եւ շուտով ծաւայուն հանդամանք ստացաւ: Կոմունիստները շատ կարեւոր դեր ունէին անոր մէջ: Բայց շարժումը մէկ շարաթէն ստուերի պէս անհետացաւ Նոսքէյի եւ ձէնէրալ Վոն Լուտվիցի ջոկատներու կատաղի յարձակման առջեւ: Շարժման ամենաուժեղ կեդրոնը մնաց Միւնիխը, ուր բանուորները իրենց պաշտպանողական դիրքը կրցին պահել մինչեւ Մայիս 1- անկէ յետոյ՝ այդ քաղաքի փողոցներն ալ ներկուեցան արիւնով: Այդ կոիւններէն վերջն էր որ Յունուար 15-ին Ռոզա Լիւքսէնպուրի եւ Քարլ Լիբկնիխտ ձերբակալուեցան եւ բանտ առաջնորդուած ատեն անդթօրէն սպաննուեցան: Մանօթ մարդասպանները մնացին անպատիժ:

Ազգային ժողովի ընտրութիւնները սկսան 1919-ի Յունուար 21-ին: Բուրժուա կուսակցութիւնները Վէյմարի ժողովին մէջ մեծամասնութիւն կազմելով յաղթանակեցին, բայց որպէսզի Սոցիալ Դեմոկրատները իրենց կողքին սիրաշահուած պահեն, Սոցիալիստ Շայտմընը ընտրեցին նախագահ, իսկ Էրբրտը՝ վարչապետ:

ՎԷՅՄԱՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՅԵՏԱԴԻՄԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Աջ թեւի սոցիալիստները, որպէսզի արժատապէս ճզմեն ու շքացնեն Սոցիալիստական յեղափոխութիւնը, վերհաւաքեցին կայսերական բանակի ամենէն յետադիմական պաշտօնեաները եւ զանոնք կանգնեցուցին յեղափոխական բանուորներուն դէմ: Այս ոճրածին կարգադրութեան բնական հետեւանքն եղաւ սարսափելի շրջադարձ մը որ կանխատեսուած չէր: 1920-ի Մարտ 12-ին, յետադիմական ուժերը ձէնէրալ Վոն Լոււվիցի (Նոսքէյի զինուորական սերելին) եւ Տր. Վոֆֆէնկ Քէպպի հրամանատարութեան տակ, մտան Բերլին, գրաւեցին քաղաքը ու յայտարարեցին միապետութեան վերահաստատումը: Վէյմարի կառավարութիւնը չկրնալով ինքզինքը պաշտպանել, գիշերանց, փախաւ Դրէզդէն, յետոյ՝ Շտուտկարտ:

Գերման դեմոկրատին վտանգի տակ էր: Հանրապետութեան նախագահը ջղայնացած՝ ընդհանուր զործադուլի կոչ բրաւ բանուորներուն, որոնք նախ քան այդ կոչը՝ արդէն սկսեւ էին զործադուլը: Կայծակի արագութեամբ զործադուլային շարժումը տարածուեցաւ Գերմանիոյ մէկ ծայրէն միւսը: Սոցիալ Դեմոկրատներու աջ ու կեդրոնի անդամները, եւ Կոմունիստ Կուսակցութիւնը, ինչպէս նաեւ բուրժուա դեմոկրատ կուսակցութիւնը, բոլորն ալ իրենց ուժերը տրամադրեցին զործադուլին օգնելու համար: Անոնց միացան թրէյտ Իւնիընները, նոյնիսկ «դեղին» իւնիընները:

Ձէնէրալ Վոն Լոււվիցը փորձեց զինու. զօրութեամբ զործադուլը ճզմել, բայց մարտական բանուորները մնացին անյողզող: Մարտ 17-ին Քէպպը հրաժարեցաւ եւ փախաւ Շուէտ. յաջորդ օրը անոր հետեւեցաւ Վոն Լոււվիցը: Բայց եւ այնպէս զործադուլը շարունակուեցաւ քանի մը օր եւս, մինչեւ որ յետադիմական շարժման վտանգը բոլորովին հեռացած նկատուեցաւ Գերմանիոյ հորիզոնէն:

Գերման բանուորները հերոսական պայքարով փրկեցին դեմոկրատին, բայց ի՞նչ ըսեւ, որ Վէյմարի կառավարութիւնը վտանգը անցածին պէս, փոխանակ լուծարքի ենթարկելու զինուորական քիթը, զայն դրաւ յարձակման ճակատի վրայ ընդդէմ մարտական բանուորներուն: Երկրի միակ թշնամիները Կոմունիստներն էին, զանոնք պէտք էր մաքրել. եւ մաքրագործումը յառաջ տարուելու էր սէնսուրով: Կառավարութիւնը սկսաւ խուզարկել տունները եւ ձերբակալուած կոմունիստները առանց դատաստանի հրացանի բռնել:

Մայրահեղ յետադիմական այդ քաղաքականութիւնն էր որ պապային համար հող պատրաստեց Հիթլերի գմին:

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ

Առաջին աշխարհամարտը Կեդրոնական Եւրոպայի մէջ յառաջացուց ի խնդիր ազգային ազատագրութեան՝ ուժգին յեղափոխական պայքարներ, որոնք պատճառ եղան որ մաս մը ժողովուրդներ տէրը դառնան իրենց ճակատագրին: Անոնց կարգին էին Լեհաստանը եւ Չեխոսլովաքիան. ասոնք ենթարկուած էին իմպերիալիստական կայսրութեանց — Ռուսաստանի, Գերմանիոյ եւ Աւստրիոյ: Այդ ընդհանուր շրջանակին մէջ, զանազան երկիրներու՝ ի մասնաւորի Աւստրիոյ մէջ տեղի ունեցան յեղաշրջող ընդվզումներ, որոնք 1918-ի Հոկտեմբեր 5-ին, տապալեցին Հապսբուրկեան միապետութիւնը: Տարակոյս չկայ, որ բանուորները զայրացած պատերազմի յառաջացուցած աւերներէն եւ ներշնչուած Ռուսական Յեղափոխութենէն, պիտի կրքնային յեղափոխական կառավարութիւն հաստատել Աւստրիոյ մէջ, եթէ տիրապետող Սոցիալ Դեմոկրատներու կուսակցութիւնը չի յօժարէր բաւականանալ բուրժուական յեղափոխութեամբ: Սոցիալ Դեմոկրատները այստեղ եւս դաւաճանեցին իրենց սկզբունքին, երբ փոխանակ յեղափոխականացած բանուորները առաջնորդելու ընկերային յեղափոխութեան ուղիով դէպի սոցիալիզմը, անոնք թեքուեցան աջ եւ օգնեցին բուրժուազիային:

Միակ երկիրը, ուր պրոլետարական յեղափոխութեան շարժումը իր ցանկալի բարձրութեան հասաւ, Հունգարիան էր: 1918-ի Հոկտեմբերին, բուրժուական յեղափոխութիւնը կատարուեցաւ Թրէյտ Իւնիըններու ղեկավարութեամբ. այդ ատենները անոնց անդամներու թիւն էր 721,437: 1918-ի Դեկտեմբերին կազմուեցաւ Կոմունիստ Կուսակցութիւնը: Մաւալուն յուսահատութեան եւ մասսաաներու քաղաքական մարտունակութեան զերծող ճնշման տակ, հունգարացի բանուորները 1919, Մարտ 21-ին, տապալեցին Քարոլիի կապիտալիստական կառավարութիւնը եւ հաստատեցին պրոլետարական դիկտատուրան: Այս յեղաշրջման մէջ առաջնորդող կուսակցութիւնը Սոցիալիստ կուսակցութիւնն էր, որ միացած էր Կոմունիստ Կուսակցութեան հետ: Նոր կառավարութեան առաջնորդն էր յայտնի Կոմունիստ մը — Բէլա Գուն:

Բանուորներու կառավարութիւնը ապրեցաւ մինչեւ Օգոստոս ամիսը: Վիէնայի աջ թեւի սոցիալիստները հակառակ էին նոր կառավարութեան, նոյնպէս Հունգարիոյ յետադիմականները: Քունի կառավարութեան յաջորդեց սոցիալ դեմոկրատական կառավարութիւնը, բայց ան ալ կործանեցաւ յետադիմական Ռումանիոյ, Չեխոսլովաքիայի եւ Չրանսայի միացեալ զինուորական ուժով: Գերման Սոցիալ Դեմոկրատներու թունաւորման զործի պտուղն էր ան:

4.— ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ԱԼԻԻՔԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ (1918-1921)

Առաջին աշխարհամարտին հետևող տարիներու յատկանշական երեւոյթն է բանուոր դասակարգի միջազգային բմրոտացման շարժումը, որ երեւան եկաւ մէկ կողմէն պատերազմի պատճառած աւերածութենէն, միւս կողմէն Ռուսական Յեղափոխութեան տուած շատ բնականօրէն հասկնալի ներշնչումէն: Մի քանի երկիրներու մէջ բանուոր դասակարգի յարձակողականը կապիտալիստական սխտէ՝ մին վրայ՝ հասաւ յեղափոխական կէտին, իսկ ուրիշ շատ մը տեղեր՝ այդ շարժումը յայտնաբերուեցաւ մարտական հսկայ գործադուլներով: Ամենուրեք, բացի Ռուսաստանը, ընդհանուր երեւոյթը նոյն կերպարանքն ունէր. բանուորները հարկադրուած էին կառուիլ աջ թեւի բիւրոկրատին, համազործակցելով պետութեան եւ գործարանատէրերու հետ, կը փորձէր տկարացնել եւ դաւաճանել աշխատաւորութեան պայքարը. իսկ ձախ թեւի սոցիալիստները աշխարհ ուժեղ չէին, որ կարենային ստանձնել մարտական բանուորներու առաջնորդութիւնը: Ասով կը տեսնենք թէ այդ ընդհանուր շրջանը կը վերջանայ միջազգային կապիտալիստներու հուժկու հակաշարձակողականով:

ԻՏԱԼԱԿԱՆ ՖԱՇԻՉՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Իտալիան յետ պատերազմեան շրջանին յեղափոխական բոցավառ շարժման կեդրոն դառնալու երեւոյթ ունէր: Մասսաներու լարուած գոյնութիւնը իր գլուխը ցցեց 1920-ի Սեպտեմբերին՝ 500 հազար մետաղագործ բանուորներու գործադուլով: Երբ մերժուեցան աշխատավարձի իրենց պահանջները, բանուորները որոշեցին գործարաններէն դուրս չգալ եւ նստուկ ձեւով գործադուլը շարունակել: Կառավարական ուժով անոնք փողոց նետուեցան: Ասոր վրայ բանուորները զինուած՝ անցան յարձակողականի, դրուեցին ձուլարանները, մեքենագործարանները եւ ընդհանուր մետաղի գործատեղիները: Իտալիոյ համայն բանուորութիւնն ու գիւղացիութիւնը գործադուլաւորներուն համակիր էին: Բանուորները անցեր էին իրապէս յեղափոխական գործունէութեան: Ճիւղիտտի կառավարութիւնը չուարած՝ անել զբուրթեան մէջ էր, հասած էր սոցիալիստական յեղափոխութեան ժամը:

Իտալական կապիտալիզմի այդ անկերպանցելիօրէն ճգնաժամային վայրկեանին, Սոցիալ Դեմոկրատ պատեհապաշտները որոնք

կը ղեկավարէին թէ՛ Սոցիալիստ Կուսակցութիւնը եւ թէ՛ Թրէյտ Իւնիընները, ինչպէս ամէն տեղ կապիտալիստական աշխարհին մէջ, չուտով օղնութեան հասան իրենց պատեհանին մէջ կծկուած գործատէրերուն: Զախակողմեան տարրերը պահանջեցին որ Աշխատաւորական Դաշնակցութիւնը եւ Սոցիալիստ Կուսակցութիւնը ընդհանուր խորհրդաժողով մը ունենան եւ զբութեան արմատական լուծում մը տան: Անոնց կարծիքով՝ արմատական լուծումը, երկրի իշխանութիւնը աշխատաւոր դասակարգին յանձնելն էր: Բայց Թիւրատիի, Սէրրատիի եւ Դ'Արակոնայի նման սոցիալ ղեմոկրատներ բացարձակապէս հակառակ արտայայտուեցան եւ որոշեցին սկսուած կռիւր վերջացնել բանուորներու պահանջը գոհացնելով: Կառավարութիւնը հաւանեցաւ այդ առաջարկին եւ գործարանատէրերն ալ խոստացան ցանկացուած զինուորները ընել: Գործադուլը յետս կոչուեցաւ եւ խոստումները մնացին օդին մէջ:

Ասիկա գերմանական ձեւ մըն էր, որով կը ծախուէր բանուոր դասակարգի իրաւունքը: Իտալիոյ Թրէյտ Իւնիընի անդամներու թիւը 1918-ին 249,039 էր. 1920-ին այդ թիւը բարձրացաւ 2,320,163ի. անկէ յետոյ դահաւիճք անկում մը յաջորդեց: Քառս մը յառաջացաւ բանուորական շարքերուն մէջ, որոնք յեղափոխական քայլ մը առնելէ վերջ՝ նահանջեր էին: Տիրող ընդհանուր շփոթութեան ու յուսախաբութեան մէջ գործատէրերը անցան ուժեղ հակաշարձակողականի: 1922-ին, Մուսոլինին գրին կառավարութեան գլուխը, եւ այս մարդը կրցաւ ջախջախել Թրէյտ Իւնիըն շարժումը եւ ամբացնել Փաշխատական լուծը իտալական ժողովուրդի վրին: Ողբերգական պարտութիւն մը, որ կը հարկադրուէր բարենորոգչական սոցիալիստ առաջնորդներու կողմէն: Կոմունիստ Կուսակցութիւնը որ կազմուեցաւ 1921-ին, այնքան զօրաւոր չէր որ վերջ տար այդ գոյնային կացութեան:

ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԵՒ ՀԱԿԱՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Ֆրանսայի Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութիւնը յետ պատերազմեան շրջանին անդամական գերաճում ունեցաւ ինչպէս ուրիշ երկիրներու աշխատաւորական կազմակերպութիւնները ունեցան նոյն աճումը: Այս պարագան պատճառ եղաւ որ բանուորներու մէջ աւելի ուժեղանայ իրենց իրաւունքներուն համար կռուելու ոգին: Անոր անդամներու թիւը 1912-ին 400,000 էր. 1918-ին այդ թիւը բարձրացաւ 1,200,000-ի, իսկ 1919-ին երկու միլիոնի: Բանուորները կ'ուզէին ընդհանուր բարեկեցութիւն մը ապահովել եւ

աղատուիլ սարսափելի պատերազմին հետևող թշուառ պայմաններէն: Պատերազմի ընթացքին՝ Ֆրանսան կորսնցուցեր էր 1,300,000 հոգի, իսկ վիրաւորուածներ՝ 4,500,000 հոգի: Ինչպէս շատ մը երկիրներու բանուորական միութիւնները սկսեր էին շարժիլ, Ֆրանսայի բանուորական միութիւնները եւս միասնական ճակատով ոտքի ելան եւ 1918-ի Սեպտեմբերին Լիոնի համազումարին մէջ պատրաստեցին «վերակառուցման» իրենց ծրագիրը: Ի՞նչ էր այդ ծրագիրը: Արտադրողներու եւ սպառողներու հսկողութեան տակ ազգայնացնել արդիական տնտեսութեան բոլոր մեծ ճիւղերը, ցամաքային եւ ծովային փոխադրական միջոցները, հանքերը, իւղը եւ խոշոր վարկային կազմակերպութիւնները: Արդիւնաբերութիւնը ղեկավարելու համար ստեղծել Աշխատաւորական Տնտեսական Խորհուրդ մը: Այս ծրագիրը իրագործելու համար աջակողմեան առաջնորդները յեղափոխական ուղիին չէին ուզեր մօտիկնալ, անոնց ընտրած միջոցն էր խաղաղ քաղաքական գործունէութիւն:

Ֆրանսայի կապիտալիստները պատերազմի ատեն բարեսիրաբար մեծ մեծ խոստումներ ըրին, փայլուն, սուկեղօծ խոստումներ, բայց պատերազմէն յետոյ՝ մոռցան ամէն ինչ ու հեզնանքով աչքէ անցուցին աջակողմեան առաջնորդներու մշակած ծրագիրը:

Եւ ահա սկսան գործադուլները: Նախ երկաթուղիի բանուորները գործադուլի ելան, ապա 1920-ի Մայիսին, յայտարարուեցաւ ընդհանուր գործադուլ: Այդ շարժման գլխաւոր նպատակն էր նախ եւ առաջ Ֆրանսայի երկաթուղիներու ազգայնացումը: Այս անգամ խոր բաժանում յառաջացաւ Ֆրանսական աշխատաւորական շարժման մէջ: Յեղափոխական փոքրամասնութիւնը, կոմունիստ կաստոն Մոմսոյի առաջնորդութեամբ կողմնակից էր վճռական կռիւի, բայց մեծամասնութիւնը Սոցիալ Դեմոկրատ բարենորոգչական առաջնորդներու ղեկավարութեամբ հակառակ դիրք բռնեց: Գործադուլին մասնակցեր էին մետաղագործները, երկաթուղիի բանուորները, ատաղձագործները, շինարարութեանց բանուորները, նաւամատոյցի բանուորները, կազի գործաւորները եւ ուրիշներ, թուով մէկ միլիոն: Հսկայական գործադուլ մըն էր եղածը, որ տեւեց տասը օր:

Ֆրանսայի կապիտալիստները հանդիստ բաղձած էին իրենց թիկնաթոռներուն վրայ, քանի որ իրենց գործակալները՝ Սոցիալ Դեմոկրատները ողի ի բռին՝ լծուած էին գործի: Եւ գործադուլը վերջացաւ ծիծաղելի անյաջողութեամբ, կատարեալ ֆիասկօ մը:

Գործադուլի արդիւնքն եղաւ եղերական. ընդհանուր յուսալքութիւն: Բացի այն՝ որ ձախ թեւի առաջնորդները ձերբակալուեցան ու բանտարկուեցան, բանուորական միութիւնն ալ քայքայուեցաւ, երկու միլիոն անդամներէն մնացին միայն 600,000 հոգի:

ՔՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՌԵԱԿ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱԽՈՂԱՆՔԸ

Բրիտանական բանուորները քուեցան 1914-ի պատերազմի մէջ ճիշդ այն ատեն, երբ կազմուած էր Հանքագործներու, Երկաթուղիի եւ Փոխադրական Գործաւորներու եռեակ դաշնակցութիւնը, որ կը բաղկանար երկու միլիոն հոգիներէ: Բրիտանական միութիւնները իրենց որդեգիր եւ ոչ-որդեգիր անդամներով, 1914-ին, 4 միլիոնի թիւ մը կը ներկայացնէին. 1919-ին այդ թիւն եղաւ վեց ու կէս միլիոն, իսկ 1920-ին, 8 միլիոն 344,000: Ասիկա վիթխարի ուժ մըն էր, որ եթէ միադոյն նպատակ եւ միաձեւ ու վճռական գործունէութեան անշեղ ուղեգիծ ունենար, անոր առջեւ կը չբանար կապիտալիստական պետութեան ուժը: Բայց խնդրին տարօրինակ կէտն այն էր որ ընտրութեանց ատեն Աշխատաւորական Կուսակցութիւնը (Լէյպըր Փարթին) հաղիւ թէ երկուք ու կէս միլիոն քուէ կը ստանար: Ասոր պատճառը այն էր, որ Սոցիալ Դեմոկրատները, Թրէյտ Իւնիքըններու առաջնորդները, ղեկին իւնիքընները, դէպի ձախ հակող իւնիքընները եւ փոքրաթիւ կոմունիստները իրարմէ տարբեր ծրագիր ունէին եւ կը հետեւէին բոլորովին տարբեր գործելակերպի: Անոնց մէջ սոցիալ դեմոկրատները, Թրէյտ Իւնիքըններու առաջնորդներն ու ղեղին իւնիքընները հակառակ էին թշնամութեան. անոնք կ'ուզէին համազորձակցիլ կապիտալիստներուն հետ: «Երբ մենք պատերազմի մէջ դաշնակցեցանք գործատէրերուն հետ, խաղաղութեան ատեն ինչո՞ւ պիտի կռուինք, երբ օրինական միջոցներ ունինք բանուորներու իրաւունքը պաշտպանելու համար», այսպիսի պրոպականդով անոնք կ'ուզէին հանդարտեցնել անհամբերութեան նշաններ յայտնարերող բանուորները:

Իրերը այս դրութեան մէջ ըլլալով հանդերձ՝ յետ պատերազմեան շրջանին, սկսան գործադուլները: Առաջին մեծ գործադուլը 1919-ին նաւաշինարաններու գործադուլն էր, որուն հետեւեցաւ երկաթուղիի բանուորներու գործադուլը, ապա՝ ամխահանքի բանուորներու գործադուլը. այս վերջինները կոչ ըրին Փոխադրութեան եւ Երկաթուղային Միութեան բանուորներուն՝ միացեալ ճակատով պայքարելու համար: Լոյս ձորճի կառավարութիւնը սպառնաց զենքի ուժով կոտրել եռեակ դաշնակցութեան գործադուլը: Սոյն սպառնալիքին վրայ փոխադրութեան եւ երկաթուղային բանուորական միութեանց առաջնորդները վար դարձուցին իրենց պոչը ու հեռացան ճակատէն: Աժխահանքի բանուորները 13 շաբաթ առանձին պայքարելէ վերջ պարտուեցան: Անոնց պարտութեամբ տիրող դասակարգը աւելի ամբարտաւան դարձաւ եւ կրճատեց բանուորներու աշխատավարձերը:

ՅԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՒ ՄԷՁ

Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ պատերազմի շրջանին շատ քիչ կարեւորութիւն տուին բանուորները՝ իմպերիալիստական պատերազմի պահանջներուն, եւ չմնացին մարտական գործադուլներէն եւ զարգացուցին իրենց կազմակերպչական քաղաքականութիւնը, հակառակ անոր՝ որ Գամպըրը պահպանողական ուղին էր բռնէր: Պատերազմէն յետոյ՝ անոնք շարունակեցին իրենց յարձակողականը: AFL-ը 1914-ին 2,020,671 անդամ ունէր, 1920-ին այդ թիւը բարձրացաւ 4,078,740-ի:

Սկսաւ խոշոր գործադուլներու շարք մը, որոնք բոլորն ալ անյաջողութեամբ վերջացան, որովհետեւ բանուորութեան առաջնորդները խարեպատիր միջոցներով դաւաճանեցին բանուորական շահերուն: 1924-ին, AFL-ը 1,212,941 անդամ կորսնցուց:

Լատին Ամերիկայի մէջ Առաջին աշխարհամարտի եւ Ռուսական Յեղափոխութեան աղբյուրութեան տակ Թրէյտ Իւնիքընի շարժումը զարգացաւ աննախընթաց թափով. տեղի ունեցան գործադուլներ, որոնք հանդիպեցան զինեալ ընդդիմութեան ու անդուծ ջարդարութեան: Պուէնոս-Ալքէսի մէջ — Արճէնթինա — 1,500 բանուորներ կոտորուեցան 1919-ի Յունուարին: Փաթակոնիայի մէջ գործադուլի տակն երկու հազար բանուորներ կոտորուեցան 1921-ի Յունիսին: Երեք հազար բանուորներ մորթոտուեցան Չիլիի գործադուլին մէջ 1925-ի Յունիսին: Հինգ հարիւր գործադուլաւորներ սպանուեցան Էգուատորի մէջ՝ 1925-ի Նոյեմբերին: Հազար 500 գործադուլաւորներ խողխողուեցան Միացեալ Պտուղի Ընկերութեան (Ամերիկեան ընկերութիւն) գործակալներու ձեռքով՝ Գոլոմպիայի եւ Գուպայի մէջ 1928-ի Դեկտեմբերին, երբ այդ երկու տեղերուն մէջ պանանչասի գործաւորները իրենց ողբալի վիճակին չհանդուրժելով յանդգներ էին դիմելու գործադուլի:

Լատին Ամերիկեան Իւնիքըններու ամենէն նշանակելի գործը, սակայն, Մէքսիկոյի մէջ էր, ուր անոնք խիստ կարեւոր դեր ունեցան Մէքսիկոյի Յեղափոխութեան ընթացքին: Այդ շրջանին Կոմունիստ Կուսակցութիւններ կազմուեցան Լատին Ամերիկեան երկիրներուն մէջ, ուր հետզհետէ կ'աճէր Եանքի իմպերիալիզմի դէմ առելութիւն մը՝ զոր մարեցնելու համար Գամպըրսի գործակալներ Աշխատաւորական Համ-Ամերիկեան Դաշնակցութիւն մը հրապարակ հանեցին: Այդ կազմակերպութեան նպատակն էր քայքայել բանուորական-արմատական միութիւնները եւ Մ. Նահանգներուն իմպերիալիզմի նուաճողական քաղաքականութեան ճամբան նախապատրաստ-

տել: Եւ, այնք է ըսել թէ մարդիկը յաջողեցան մասամբ, որովհետեւ Լատին Ամերիկայի երկիրներու տիրող դասակարգն ու կառավարութիւնները ամերիկեան կապիտալիզմին առջեւ աղերսարկուի դերի մէջ էին:

ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԻԶՄԸ ԱՍԻՈՑ ՄԷՁ

Առաջին աշխարհամարտի նախօրեակին, արհեստակցական միութեան շարժումը բացի ձարոնէն շատ տկար էր Ասիոյ մէջ: Բայց պատկերը փոխուեցաւ պատերազմէն յետոյ. այդ փոփոխութիւնը յառաջացաւ Ռուսական Յեղափոխութեան շունչով:

Ձարոնի մէջ պատերազմը եկաւ ընդարձակել արդիւնաբերութիւնը եւ նոյն համեմատութեամբ մեծցնել բանուոր դասակարգը եւ զայն տանիլ ապրուստի պայմաններու վաթարացման ճամբուն վերայ: 1914-էն 1919 տարիներու ընթացքին ձարոնի գործարաններու թիւը 14 հազարէն բարձրացաւ 44 հազարի. իսկ գործարանային բանուորներու թիւը 854 հազարէն մէկ միլիոն 777 հազարի: 1914-ին, միայն 50 գործադուլներ տեղի ունեցան, իսկ 1918-ին գործադուլներու թիւը բարձրացաւ 417-ի: Ռուսական Յեղափոխութիւնը շատ խոր ազդեցութիւն գործեց էր ձարոնի գործաւոր դասակարգին վերայ: 1918-ի Օգոստոսին բրինձի բանուորներու ապստամբութիւնը, մեծագոյն ապստամբական դէպքը կը համարուի ձարոնի ժողովուրդի պատմութեան մէջ: Ուսանողները, զիւղացիները եւ ժողովրդական հոծ զանգուածներ մասնակցեցան շարժումին: 1920-ին, առաջին անգամ ըլլալով Մայիս 1-ը տօնուեցաւ ձարոնի մէջ: ձարոնի Կոմունիստ Կուսակցութիւնը կազմուեցաւ 1922-ին: 1923-ին 150 հազար արհեստական միութեան անդամներ կային ձարոնի մէջ:

Ֆիլիպեան կղզիները — ամերիկեան դադուծ — նախ քան առաջին աշխարհամարտը, Ասիոյ մէջ արհեստակցական փոքրիկ միութեանց կեդրոն էին: Այդ ցրուած խումբերը 1919-ի Մայիսին միացան եւ Փէտերասիոն դէլ քրաքայո դի Ֆիլիպինաս անունին տակ մէկ կազմակերպութիւն եղան 100 հազար անդամներով:

Հնդկաստանի մէջ, պատերազմի շրջանին երբ արդիւնաբերութիւնը ընդարձակուեցաւ, անոր հետ աճեցաւ նաեւ գործարանային բանուորներու թիւը, որ 1914-ին 951,000 էր, եւ 1922-ին եղաւ 1,361,000: Աշխատաւոր զանգուածներու ապրուստի պայմանները անբերեալայիլիօրէն վաթարացած էին. Ռուսական Յեղափոխութեան ազդեցութեամբ բանուորները սկսան կազմակերպուիլ ու անցնիլ գործի: 1917-1918-ի ամիսներուն գործադուլի ալիքները այնպիսի արագութեամբ բարձրացան ու տարածուեցան որ Հնդկաստանը

այդպիսի բան տեսած չէր նախագէս: Կառավարութիւնը այդ գործադուլները դիմաւորեց անդլիական դէնքերով: Ամբիցարի գործադուլին մէջ 579 մարդիկ սպանուեցան եւ 1,300 հոգի վիրաւորուեցան: 1920 թուին, տեղի ունեցան 200 գործադուլներ, որոնց մասնակցեցան 1,500,000 բանուորներ:

Մինչեւ 1921-ին, Հնդկաստանի մէջ ո՛չ կոմունիստ կար, ո՛չ ալ սոցիալիստ, անկէ վերջն էր որ Թրէյտ Իւնիւրները հակեցան կոմունիստական ուղղութեան եւ այդ շրջանին էր հնդիկ բանուորներու գրութիւնը քիչ մը բարւոքուեցաւ:

Զինաստանի մէջ ալ Թրէյտ Իւնիւրնի շարժումը Ռուսական Յեղափոխութեան ազդեցութեան տակ ոստումներով զարգացաւ: Զին գործաւոր դասակարգը իր հուժկու բազուկը բարձրացուց 1919-ի Մայիս 4-ին, երբ մտաւ Մարքսիզմ-Լենինիզմի ուղին: Շանկհայի, Թանկհանի եւ Շանկինտիէնի բանուորները առաջին անգամ ըլլալով՝ յայտարարեցին քաղաքական գործադուլ՝ ընդդէմ իմպերիալիստական շահատակութեանց: Սէն Նաթ-Մինը, այդ ատենի ժողովրդական յեղափոխական շարժման առաջնորդը, որ Լենինի մէկ բարեկամն էր, աւելի ուժեղացուց Թրէյտ Իւնիւրներու կազմակերպութիւնը:

Կոմունիստները, ինչպէս բոլոր ասիական երկիրներուն, Զինաստանի մէջ եւս յառաջագահները դարձան Թրէյտ Իւնիւրնի շարժումին: 1921-ի Յուլիսին կազմուեցաւ Կոմունիստ Կուսակցութիւնը Մաս-Յէ-Թունկի առաջնորդութեամբ: Կուսակցութիւնը իր ամբողջ ուշադրութիւնը դարձուց բանուորները կազմակերպելու գործին շուրջ, տարուած այն համոզումով՝ որ բանուորութիւնն էր յեղափոխութեան առաջնորդող ուժը: Զինացի ժողովուրդը ստրուկը դարձեր էր եւրոպական կապիտալիզմին. ստրկութեան այդ շղթաները պիտի փշրէր Զին բանուորութիւնը:

Համա-Զինական Աշխատաւորական Քոնֆէրանսը առաջին անգամ գումարուեցաւ Քանթոնի մէջ 1922-ին, ուր ներկայ էին 162 պատգամաւորներ՝ որոնք կը ներկայացնէին 300,000 գործաւորներ՝ 12 քաղաքներու մէջ կազմակերպուած 200 բանուորական միութիւններէն:

ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԻ ԱՃՈՒՄԸ (1914-1921)

Հակառակ աջ թելի իւնիւրնի առաջնորդներու գաւաճանութեան՝ որ յայտնարեւոյցուեցաւ կապիտալիստական բոլոր երկիրներու մէջ, բանուորները կրցան մասնակի յաջողութիւններ ապահովել՝

1914-էն մինչեւ 1921: Վիճակագրական որոշ թիւեր չկան, բայց Լարվինի տուած տեղեկութեան համաձայն բանուորական միութիւններու անդամներու ընդհանուր թիւը ամբողջ աշխարհի մէջ կը հասնէր 46 միլիոնի, 1920 թուին: Այս շրջանին յատկանշական երեւոյթը այն է որ երկուք ու կէս միլիոն կիներ եւս կազմեր էին Թրէյտ Իւնիւրներ՝ կապիտալիստական երկիրներու մէջ: Անոնց այդ կազմակերպութիւնը դարձեալ պէտք է ըսել որ կոմունիստներու ջանքերով կատարուած էր: Գասակարգային պայքարին մէջ կիները եւս կարող էին մտնել: Կիները անբազաւտելիօրէն հսկայական ու պատմական դեր ունին. անոնք են որ պիտի դաստիարակեն ու մարզեն նոր սերունդը. դարձեալ անոնք են, որ աւելի ու աւելի կը շահագործուին ու կը տանջուին կապիտալիստական իրաւակարգի տակ:

Կոմունիստները ուրիշ մարզի վրայ նոյնպէս մեծ դեր կատարեցին. անոնք էին որ կազմակերպեցին երկրագործական աշխատաւորները եւ գրասենեակներու ճերմակ օձիկաւոր գործաւորները, որովհետեւ կապիտալիստական շահագործումը նոյնն էր ամենուրեք. ասկէ զատ՝ ընկերային յեղափոխութիւնը պիտի կատարուէր քաղաքի, գիւղի եւ գրասենեակի գործաւորներու միացեալ ուժերով:

1920-ի Օգոստոսին, Ամսթերտամի մէջ գումարուեցաւ երկրագործական բանուորներու Միջազգային Գոնկրէսը, որ կը ներկայացընէր ութը միլիոն հոգի հետ կապուած աշխատաւորներ: Երկրագործական աշխատաւորները այդ ատեն խիստ կարեւոր դեր ունէին բանուորական շարժման մէջ, երբ նկատի առնենք Սովետ Ռուսաստանը, Գերմանիան, Իտալիան, Սպանիան, Պալքանները եւ մի քանի գաղութային երկիրներ: Գերմանիան կը ներկայացնէր լաւագոյն օրինակը յաջողապէս կազմակերպելով ճերմակ օձիքաւոր գործաւորները — ուսուցիչներ, քեֆնիշըմներ, գրասենեակի գործաւորներ, պահեստանոցներու գրադիրներ, եւ այլն:

ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ — 1919-1920

1919-ի տարին պատերազմէն յոգնած ու զզգուած կապիտալիզմի վերակառուցման տարի մը եղաւ: Կապիտալիզմը մի քանի նոր միջազգային կազմակերպութիւններ հիմնեց եւ զանոնք իրարու հակեց իր քայքայուած սխառէմը վերակազմելու համար: Այդ կէտին մէջ ամենէն կարեւորը վերակազմակերպումն էր Երկրորդ Ինտերնացիոնալին, որ Առաջին Աշխարհամարտի պայթելու ատեն կտոր կտոր եղած՝ գրեթէ ոչնչացեր էր: Երկրորդ Ինտերնացիոնալը 1914-ին, գովելի ծառայութիւն մատուց կապիտալիզմին, երբ կրցաւ փշրել բան-

ուորներու հակա-պատերազմեան դիմադրութիւնը, իսկ պատերազմի ընթացքին յարեցաւ այն կուսակցութիւններուն, որոնք հաւատարմօրէն օգնեցին որպէսզի բանուորները կապիտալիստներուն համար սպանդանոց առաջնորդուին:

Այժմ կապիտալիստ պարոնները ճակատեր էին երեք հիմնական եւ ստիպողական դործերու: Անոնցմէ առաջինն էր ետ մղել պըրօլետարական յեղափոխութիւնը, որ կը սպառնար համաշխարհային կապիտալիզմի դոյուլթեան: Երկրորդ դործն էր զոցել տնտեսական ու քաղաքական այն ճեղքումները, որոնք յառաջացեր էին պատերազմի հետեւանքով: Երրորդ դործն էր անխախտ հիմքերու վրայ դընել այն շահոյթները՝ որոնք ձեռք բերուած էին պատերազմական յաղթանակով՝ Անդլո-Ֆրանս-Ամերիկո-Ճարմանական իմպերիալիստներու կողմէն: Զարմանալին այն էր որ բոլոր երկիրներու Սոցիալ Գեմոկրատներն ալ իմպերիալիստներու կողքին՝ նոյն նպատակները կը հետապնդէին:

ԱԶԳԵՐՈՒ ԼԻԿԱՆ

Պատերազմի յաղթականներուն համար իրենց իմպերիալիստական նպատակները իրագործելու գլխաւոր միջոցներէն մին էր Ազգերու Լիկան, որու կազմակերպիչն եղաւ Վուտրօ Ուիլսընը՝ Վերսալի դաշնագրութիւնը կնքուած ատեն: Լենին, շատ իրաւամբ Վերսալի դաշնագրութիւնը կոչած է «Աւազակներու խաղաղութեան դաշնագրութիւն»: Այդ դաշնագրութիւնը, որ ստորագրուեցաւ 1919-ի Յունիսին, պատերազմի պատասխանատուութիւնը ամբողջապէս կը ձեռքէր Գերմանիոյ եւ իր դաշնակիցներուն վրայ, Արգաս-Լորէնը կուտար Ֆրանսայի, եւրոպական հողամասերը կը մկրատէր Գերմանիայէն, կը զբաւէր անոր գաղութները եւ դայն կը դնէր վնասուց հատուցումներու լեռնակուտակ պարտքի տակ: Բայց այդ դաշնագրութիւնն էր որ Երկրորդ Համաշխարհային պատերազմի սերմերը ցանց, սերմեր՝ որոնք պիտի աճէին, մեծնային եւ հրապարակ հասնէին նոր հրէշ մը — Հիթլերը:

Ազգերու Լիկան, որ վերջացաւ 1939-ին, իր դոյուլթեան ընթացքին պարզապէս յաղթական դաշնակիցներու շահերը մշակող թըրակտորը եղաւ: Այդ թրակտորը վարողներն էին Անգլիան եւ Ֆրանսան: Մ. Նահանգները չմասն Ազգերու Լիկային մէջ, որովհետեւ Ամերիկեան կապիտալիստական մոնոպոլիստները չէին ուզեր որ կաշկանդուի իրենց ազատութիւնը:

Լենին եւ Բուլշեւիկները Ազգերու Լիկան կը դաւանէին որպէս իմպերիալիստական հիմնարկութիւն, բայց վերատեսչական Սոցիալ

Գեմոկրատները խանդավառուած ողջունեցին զայն եւ սրտանց նեցուկ կեցան անոր: Լիկայի համա-կապիտալիստական, հակակոմունիստական նպատակները ճիշդ ու ճիշդ կը յարմարէին իրենց ըմբռնումներուն: Եւ ատոր համար զարմանալի չէր որ կառավարութեանց մէջ պատուաւոր աթոռներ գրաւեցին անոնք:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Միջազգային Աշխատաւորական կազմակերպութիւնը, որպէս Ազգերու Լիկայի մեքենայի մէկ մասը, իր յայն քոնֆէրանսը ունեցաւ Ուաշինկթընի մէջ, 1919-ի Հոկտեմբերին: Հռչակաւոր աջակողմեան սոցիալիստ մը՝ Ալպըրդ Թոմասը, եղաւ անոր ղեկավարը: Այդ կազմակերպութիւնը ունէր երեք թեւեր. տեսակ մը երրորդութիւն. մարդիկը իրական քրիստոնեայ էին. Հայր Աստուած, Որդին Աստուած, Հոգին Սուրբ Աստուած: Հայր Աստուծոյ տեղը բռներ էին կապիտալիստները, Որդին Աստուծոյ տեղը բռներ էր կառավարութիւնը, իսկ Հոգին Աստուծոյ տեղը բռներ էին Ալպըրդ Թոմասի միջնորդութեամբ՝ բանուորները:

Միջազգային Աշխատաւորական կազմակերպութիւնը (ՄԱԿը) կըցաւ վերապրել, երբ Ազգերու Լիկան մեռաւ, որովհետեւ անոր տեղն անցաւ Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը (ՄԱԿը)... Եւ ՄԱԿը ՄԱԿին մէկ հատուածը զարծեր է այս օրերս: Ազգերու Լիկային մէջ իշխող էին Անգլիան եւ Ֆրանսան, ՄԱԿի մէջ իշխողն է ամերիկեան իմպերիալիզմը, որ հակառակ ՄԱԿի կանոնադրութեան՝ սանձարձակ կը շարունակէ իր ոտնձգութիւնները եւ յարձակողականը բոլոր այն շարժումներուն դէմ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կը սպառնան իրեն եւ խոչընդոտ կը հանդիսանան իր աշխարհակարական ձգտումին: Անոր նեցուկներն են մէկը՝ Միջազգային Աշխատաւորական կազմակերպութիւնը, երկրորդը՝ Երկրորդ Ինտերնացիոնալը, երրորդը՝ Թրէյտ Ինիլըններու Միջազգային Վերակազմեալ Դաշնակցութիւնը: Այս երեք կազմակերպութիւնները ո՛չ միայն Ամերիկայի՝ այլ եւ միւս կապիտալիստական երկիրներու պետութեանց ալ նեցուկներն են:

ԵՐԿՐՈՐԳ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԵՎ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ Ինտերնացիոնալը, ինչպէս ըսինք, կտոր կտոր եղաւ Ա. Աշխարհամարտին եւ պատերազմի ընթացքին գերեզմանուեցաւ, բայց պատերազմէն յետոյ՝ գերեզմանէն յարութիւն առաւ:

Երկրորդ Ինտերնացիոնալը վերակազմուեցաւ 1919-ի Փետրուարին՝ Պեռնի մէջ: Պեռնի Գոնկրէսին ներկայ էին 26 երկիրներէն

102 պատգամաւորներ : Չախ թեւի կազմակերպութիւնները այդ Գոնկ-
րէսին շմասնակցեցան : Գոնկրէսը իր ամբողջ սրտովն ու հողիովը
որդեգրեց Ազգերու Լիկայի սկզբունքները, թշնամական զիրք բռնեց
Սովետներու հանդէպ, բայց այդ թշնամանքը գործադրութեան ճամ-
բան տանելու հարցը թողուեցաւ միւս Գոնկրէսին : Պրուսէլը որոշ-
ուեցաւ Ինտերնացիոնալի կեդրոնատեղին :

Կեդրոնական թեւի անդամները, — Կառուցկի, Լէզլիբուր, Լոնկէ
եւ ընկերութիւն, ներկայ էին Պեռնի Գոնկրէսին : Բայց այս բառա-
խաղով զբաղող Սոցիալիստները բանուորները յեղափոխական ուղիէն
չեղեցնելու համար ուրիշ դեր պիտի խաղային : Անոնք 1921-ի Փետրը-
րուարին Վիեննայի մէջ գոնկրէս մը գումարեցին ու կազմեցին երկուք
ու կէս Ինտերնացիոնալը, բայց երկու տարի վերջ անոնք վերադար-
ձան Երկրորդ Ինտերնացիոնալի օջախը :

ԹՐԷՑՏ ԻԻՆԻԸՆՆԵՐՈՒ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻԻՆԸ

Միւս կազմակերպութիւնը, հակա-կապիտալիստական քաղա-
քաքականութեամբ, որ կազմուեցաւ 1919-ին՝ Թրէյտ Իւնիւրներու
Միջազգային Ֆետերացիան էր, որ լուծուած էր Առաջին Աշխարհա-
մարտին : Այս կազմակերպութիւնն ալ վերակազմութեան առաջին
քայլն առաւ Պեռնի մէջ 1919-ի Փետրուարին գումարած իր քոնֆե-
րանսով, ուր հակաճառութիւններ միայն եղան պատերազմի պատաս-
խանատուութիւնը այս կամ այն կողմին վերադրելու շուրջ : Միակ
կարեւոր գործը, զոր Թրէյտ Իւնիւրներու առաջնորդները գլուխ հա-
նեցին, այն էր որ անոնք որոշեցին Ամսթերտամի մէջ գումարել ընդ-
հանուր գոնկրէս մը՝ 1919-ի Յուլիսին :

Ամսթերտամի Գոնկրէսը համաշխարհային Թրէյտ Իւնիւրնի ա-
ռաջին Գոնկրէսն էր որ իրարու մօտ կը բերէր 14 երկիրներու 91
պատգամաւորները, որոնք կը ներկայացնէին 17,740,000 անդամներ :
Պատգամաւորներ եկած էին Մեծն Բրիտանիայէն, Գերմանիայէն, Մ.
Նահանգներէն, Ֆրանսայէն, Աւստրիայէն, Չեխոսլովաքիայէն,
Հոլանտայէն, Պելճիքիայէն, Շուէտիայէն, Տուրքիայէն, Նորվեգիա-
յէն, Լուքսեմպուրկէն, Չուիցերիայէն եւ Սպանիայէն : Բացակայ էին
Սովետ Ռուսաստանի եւ Արեւելիան Եւրոպայի երկիրներու ներկայա-
ցուցիչները : Պարզ էր, որ աշխարհի Թրէյտ Իւնիւրներու նոյնիսկ կէս
մասը չէին ներկայացնէր Ամսթերտամի Գոնկրէսի պատգամաւորնե-
րը : Որով բացայայտ կ'ըլլար այն իրողութիւնը, որ Թրէյտ Իւնիւրնի
չարժուած բաժնուած էր երկու մասի՝ Սոցիալ Դեմոկրատներու դա-
ւաճանութեամբ :

Ամսթերտամի Գոնկրէսը առաջին անգամ ըլլալով մշակեց կա-
նոնաւոր սահմանադրութիւն մը, որ շատ հեռու էր շովինիստական
ձգտումները համադրելէ : Սոցիալ Դեմոկրատները այստեղ եւս մնա-
ցին իրենց առաջնորդողի զիրքին վրայ մինչեւ որ պայթեցաւ Երկ-
րորդ Աշխարհամարտը :

9.— ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ

ԿԱՐՄԻՐ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՀԻՄՆԱՐԿՈՒՄԸ (1919-1921)

Առաջին Աշխարհամարտի նախօրեակին, Լենին հասկցաւ որ երբ
աջ թեւի Սոցիալ Դեմոկրատները կը մերժէին կոուիլ պատերազմի
դէմ, ատուլ արդէն աշխատաւորական շարժումը կը բաժնուէր. անոր
այդ համոզումը հաստատուեցաւ ի վերջոյ՝ երբ այդ ղեղին սոցիա-
լիստները դաւաճանեցին Ռուսական Յեղափոխութեան : Պատմականօ-
րէն այդ բաժանումը յառաջացաւ սոցիալիզմի համար յեղափոխական
կոուռոյներուն եւ այն պատեհապաշտ տարրերու միջեւ, որոնք կապի-
տալիզմի շրջապատին մէջ միայն իրենց շահերը կը հետապնդէին, ի
մնաս բանուորութեան : Սոյն ընդհանուր դրութեան արդիւնքն այն
եղաւ որ 1919-ին կազմուեցաւ Կոմունիստական Ինտերնացիոնալը,
երբ յեղափոխական ալիքները ծածկեր էին Եւրոպան, երբ կապիտա-
լիստները Վերսայլի մէջ իրենց տիրահոշակ խաղաղութեան դաշնա-
գրութիւնը կը պատրաստէին եւ երբ կապիտալիզմի գործակալները՝
պատեհապաշտ սոցիալ դեմոկրատները զբաղած էին վերակառուցե-
լու իրենց քաղաքական եւ Թրէյտ Իւնիւրնի միջազգային կազմակեր-
պութիւնները՝ Պեռնի եւ Ամսթերտամի մէջ :

Կոմունիստ Ինտերնացիոնալը կամ «Կոմինտերն»ը կազմուեցաւ
Մոսկուայի մէջ 1919-ի Մարտի 2-6 օրերուն՝ մասնակցութեամբ 19
կուսակցութեանց ու խմբաւորումներու, որոնք ամբողջ սրտով ու հո-
գիով իւրացուցեր էին Լենինի տեսութիւնները : Այս նոր կազմակեր-
պութիւնը, որպէս ժառանգորդը Առաջին Ինտերնացիոնալին, յայ-
տարարեց որ՝ «Սկսած է նոր դարազլուխը, դարազլուխը կապիտա-
լիզմի կործանումին եւ դարաշրջանը՝ Պրոլետարական Կոմունիստա-
կան Յեղափոխութեան» : Գոնկրէսը մշակեց երկու ուղեգիծ. մին ան-
միջական, միւսը՝ վերջնական : Անմիջական քաղաքականութեան ու-
ղեգիծն էր կապիտալիզմէն ձեռք բերել բոլոր հնարաւոր զիջումները.
վերջնական քաղաքականութեան ուղեգիծն էր գերեզմանել կապիտա-
լիզմը եւ կառուցել նոր Սոցիալիստական հասարակութիւնը պրոլե-
տարական գիկատտուրայի հիմքերուն վրայ :

1919-ի Նոյեմբերին, Բերլինի մէջ կազմուեցաւ երիտասարդա-
կան Կոմունիստ Ինտերնացիոնալը :

Կոմունիստ Ինտերնացիոնալի կազմութեամբ Համաշխարհային աշխատաւորական շարժման եւ ընդհանուր աշխարհի պատմութեան մէջ յայտնարեւոյցաւ մեծ շրջադարձ մը: Կապիտալիզմը այլևս խուսափում չունէր, ան ճակատեր էր Համաշխարհային վճռակազմ մասսայական շարժումի մը դէմ, որուն գլուխը անցեր էր յեղափոխական պրոլետարիատը իր Կոմունիստ կուսակցութիւններով, եւ որչաժ էր միանգամընդմիշտ վերջ տալ կապիտալիստական անդութ շահագործութեանց, անոր մշակած տգիտութեան ու նախապաշարումին, անոր անսանձ բռնակալութեան եւ ոճրային պատերազմներուն:

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ

ԿԱՐՄԻՐ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ (ԱՄԿԻ) ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Անմիջապէս երբ բանուոր դասակարգի շարքերուն մէջ ճեղքուածք յառաջացաւ, զանազան երկիրներու յեղափոխական բանուորները չուղեցին ենթարկուիլ Գամպըրսի նման յետադիմական բանուորական առաջնորդներու լուծին, ոչ ալ յօժարեցան մտիկ ընել պատեհապաշտ ու խարերայ Սոցիալ Դեմոկրատներու ամբոխավարական Փրազները: Սովետական Թրէյտ Իւնիւրները իրենց առաջին Գոնկրէսին մէջ ուժգնօրէն շեշտեցին միջազգային նոր Թրէյտ Իւնիւրնի մը կազմակերպութեան անհրաժեշտութիւնը: 1918-ին, երբ Սովետներու մէջ այդպիսի տրամադրութիւն մը արթնցեր էր, նոյն տրամադրութեամբ տարուած էին նաեւ ուրիշ երկիրներու բանուորները: Հետեւաբար, քանի որ յեղափոխական ուժերը քաղաքականապէս բիւրեղացեր էին Կոմունիստ Ինտերնացիոնալի մէջ, անոնք սկսան ամբապնդուիլ Թրէյտ Իւնիւրնի դաշտին վրայ: Քաղաքական պայքարին միանալու էր անտեսական պայքարը: 1920-ին Մոսկուայի մէջ հիմնուեցաւ Թրէյտ Իւնիւրներու Միջազգային Խորհուրդը, որուն մանիֆեստը ստորագրող կազմակերպութիւններու պատգամաւորները կը ներկայացնէին ինը միլիոն բանուորներ: Այդ կազմակերպութիւններն էին Սովետ Թրէյտ Իւնիւրները, Իտալիոյ Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութիւնը, Սպանիոյ Աշխատաւորութեան Ազգային Համադաշնակցութիւնը, Պուլկարիոյ Սէնտիքայիստներու Միութիւնը, Ֆրանսայի Կոմունիստ Թրէյտ Իւնիւրնը, Անգլիոյ ձախ թելի միութիւնները, Գերմանական Սէնտիկայիստներու Միութիւնը եւ Նորվեգիոյ միութիւնները: Միջազգային Խորհուրդը ձեռնարկեց իր պրոպականդի ուղեգրիժին, որուն յատկանշական մասը կը կազմէր Կոմունիստ Կուսակցութեան առաջնորդութեամբ յառաջ տանիլ դասա-

կարգային պայքարը եւ անհաշտ կռիւ մղել դասակարգերու համերաշխութեան դադարարին դէմ:

1921-ին, Թրէյտ Իւնիւրներու Միջազգային Խորհուրդը իր շրջանակը աւելի ընդարձակած ըլլալով Աշխատաւորական Միութեանց Կարմիր Ինտերնացիոնալ (ԱՄԿԻ) անունն առաւ:

ԱՄԿԻ-ի կապուած էին հետեւեալ թիւերով բանուորներ, Ռուսաստան՝ 6,500,000, Գերմանիա՝ 2,500,000, Իտալիա՝ 3 միլիոն, Ֆրանսա՝ 500,000, Մեծն Բրիտանիա՝ 500,000, Միացեալ Նահանգները՝ 500,000, Սպանիա՝ 800,000, Աւստրիա՝ 600,000, Լեհաստան՝ 250,000: Բոլորը միասին՝ 15 միլիոն 150 հազար յեղափոխական ոգիով կուուելու պատրաստ բանուորներ:

Ա.Մ.Կ.Ի.Ի ԵՐԱԳԻՐԸ

Աշխատաւորական Միութեանց Կարմիր Ինտերնացիոնալի ծրարարին մէջ կը գտնենք հետեւեալ երեք կարևոր յօդուածները.

Ա.— Կազմակերպել աշխարհի բանուորական զանգուածները կապիտալիզմը իր հիմքէն խորտակելու, աշխատաւորները ազատելու տիրական դարձած ճնշումէն ու շահագործումէն եւ հաստատելու սոցիալիստական հասարակակարգ:

Բ.— Յառաջացնել ծաւալուն շարժում եւ պրոպականդ մղել համաձայն այն սկզբունքներուն, որոնք կապուած են յեղափոխական դասակարգային պայքարին, ընկերային յեղափոխութեան պրոլետարական դիկտատուրային եւ մասսայական յեղափոխական գործունէութեան՝ անշեղ նպատակ ունենալով ոչնչացնել կապիտալիստական սխտէժը եւ բուրժուական պետութիւնը:

Գ.— Կուուիլ այն ապականող կեղին դէմ, որ կը մաշեցնէ Համաշխարհային բանուորական շարժման կենսունակութիւնը, կուուիլ բուրժուակրայի հետ հաշտուողական քաղաքականութեան դէմ, քաղաքականութիւն մը՝ որ դասակարգային համերաշխութեան եւ ընկերային խաղաղութեան անունով բանուորներու դասակարգային գիտակցութիւնը կ'անդամալուծէ, կուուիլ այն անհեթեթ դադարարին դէմ, որ կ'ընդունի թէ կապիտալիզմէն սոցիալիզմ տանող ճամբան խաղաղութեան կամուրջէն կ'անցնի:

Դ.— Իրարու միացնել Համաշխարհային աշխատաւորական միութեան շարժման յեղափոխական տարրերը վճռական կռիւ մղելու Միջազգային Աշխատաւորական Կազմակերպութեան դէմ, որ կապուած է Ազգերու Լիկային եւ Ամստերտամի Միջազգային Թրէյտ Իւնիւրներու դէմ որոնք իրենց ծրարով ու գործունէութեամբ բուրժուակրայի պատնէշներն են դարձեր:

Գոնկրէսը որոշեց կազմակերպչական աշխոյժ աշխատանք տանիլ կազմակերպելու կիները, նէկրոները, երիտասարդները, անորակ եւ կէս որակաւոր բանուորները, որոնք արհամարհուած մնացեր էին որակաւոր բանուորներու կողմէն:

Ա.Մ.Կ.Ի.—ի գոնկրէսին մէջ երկու վիճելի հարցեր կային, որոնք հարթուեցան առանց պառակտում յառաջացնելու: Առաջին հարցն էր յետադիմական իւնիւրներու մէջ գործելու խնդիրը: Մի շարք ծայրահեղ սոցիալիստներ, կը պնդէին որ այդպիսի իւնիւրներու մէջ գտնուող արմատական տարրերը պէտք է դուրս հանել եւ պայքարը աւելի սաստկացնել: Գոնկրէսը, սակայն, եկաւ այն եզրակացութեան, որ յետադիմական իւնիւրներու դէմ պայքարը շարունակելով հանդերձ՝ պէտք է անոնց մէջ ներսէն փորելու աշխատանք տանիլ արմատական տարրերու միջոցով: Գոնկրէսը նոյնիսկ յանձնարարեց որ կարմիր ինտէրնացիոնալի անդամները մտնելու են այդ յետադիմական իւնիւրներու մէջ՝ աշխատելով փոխել անոնց գործելակերպը:

Երկրորդ հարցն էր Կոմինտէրնի հետ յարաբերութեան խնդիրը: Անարխո-սէնտիկալիստները կը հակառակէին քաղաքական կազմակերպութեանց հետ գործակցելու ուղեգծին: Մ. Նահանգներու IWW կազմակերպութիւնը նոյն ուղեգծին կը հետեւէր. դատրին տնտեսական կռիւ, բայց ո՛չ քաղաքական պայքար: Գոնկրէսը եկաւ այն որոշման, որ քաղաքական պայքարը անբաժանելի մասը կը կազմէ տնտեսական պայքարին, որ բուրժուական կուսակցութեանց հետ պէտք չէ նոյնացնել Կոմինտէրնը, որուն հետ կապուելու էր անխղճի կապով: Բայց նկատի ունենալով որ այս երկու ինտէրնացիոնալներու օրկանական կապակցութիւնը տեսակ մը շփոթութիւն կարող է յառաջացնել դեռ եւս կոմունիզմը իւրացնելու տեսակէտէն անպատրաստ մասսաներուն մէջ, որոշուեցաւ միայն համագործական գիծ մը պահել, ո՛չ թէ կազմակերպութեան առաջնորդութիւնը յանձնել Կոմինտէրնի:

ԱՆԱՐԽՈ-ՍԷՆՏԻԿԱԼԻՉՄԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

ԱՄԿԻ-ի գոնկրէսը 1922-ին, նշեց այն կարեւոր իրողութիւնը, որ անարխո-սէնտիկալիստներու շարժումը այլեւս վերջացեր էր իր տեղը գիջելով Կարմիր Ինտէրնացիոնալին: Կարգ մը սէնտիկալիստներ, սակայն, 1923-ին Բերլինի մէջ հաւաքուելով շորթեցին Առաջին Ինտէրնացիոնալի անունը եւ վերակազմեցին Միջազգային Բանուորներու Ընկերակցութիւնը: Այս նոր կազմակերպութիւնը, քանի որ ամէն նորութիւն հետաքրքրութիւն կ'արթնցնէ — ունեցաւ իր ճիւղերը

Ղերը Գերմանիոյ, Սպանիոյ, Իտալիոյ, Դանիմարքայի, Չեխոսլովակիայի, Շուէտի, Արժէնթինայի, Չիլիի եւ Մէքսիկոյի մէջ: Անոր անդամներու թիւը 1924-ին հասաւ 393,000-ի, բայց տարուէ տարի անոնց թիւը փոխանակ աւելնալու, հետզհետէ պակսեցաւ. իսկ 1955 թուին, Սէնտիկալիստ Ինտէրնացիոնալի ստուերը միայն մնացեր էր Փարիզի եւ Պուէնոս Այրէսի մէջ:

ԱՄԿԻ-Ի ԳՈՐԾԻ ԾԱԽԱԼՈՒՄԸ

Կարմիր Ինտէրնացիոնալի յառաջացուցած ամենէն նշանակելի նորութիւնն էր գործադուլային ռազմավարութեան ուսմունքն ու զարգացումը: Պահպանողական Թրէյտ Իւնիւրնի առաջնորդները առհասարակ գործադուլ յայտարարած են յանպատրաստից, առանց նկատի առնելու ժամանակը, պայմանները եւ գործունէութեան եզանակը: Յաճախ գործարանատէրերը իրենք գործադուլ սարքել կուտային իրենց ապրանքներուն գիները բարձրացնելու համար. երբ տոկոսով բանուորներու աշխատավարձը կը բարձրացնէին, տասը տոկոսով՝ իրենց ապրանքներու գիները. ասով անոնք ոչ միայն մեծ շահոյթ կ'ապահովէին, այլեւ ժողովուրդը կը զրկուէին գործադուլուորներու դէմ, որպէս պատասխանատու՝ կենսամթերքներու գիներու բարձրացումին:

ԱՄԿԻ-ի Գոնկրէսը խորապէս ուսումնասիրելով գործադուլի հարցը դժեց կշռադատ գործունէութեան ուղեգիծ մը, որ հիմնապէս կը տարրերէր նախնական եւ պատեհապաշտական հին ուղեգծէն: Գործադուլային ռազմավարութիւնը զարգացնելու համար տեղի ունեցան մասնաւոր քոնֆէրանսներ շատ մը երկիրներու մէջ: Այս գծով մեծ հեղինակութիւն մըն է Ա. Լազովսկին:

6.— ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՒԻՒԸ ԸՆԴԴԵՄ ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԵԱՆ (1921-1926)

1922-ին, երբ Փաշիզմը Իտալիոյ մէջ իշխանութեան գլուխն անցաւ եւ Գերմանիոյ մէջ 1923-ի Հոկտեմբերեան յեղափոխութիւնը պարտուեցաւ, Եւրոպայի մէջ գործատէրերը զրութիւնը այնպէս սարքաւորեցին որ կրցան պատերազմի վաղորդային յեղափոխական ալիքները կասեցնել եւ փրկել կապիտալիստական սխտէմը՝ բացառելով Ռուսաստանը: Ի հարկէ, անոնք այդ յաջողութիւնը չէին կրնար ապահովել առանց աջ թեւի Սոցիալ Դեմոկրատներու դաւաճանութեան: Այլապէս, տարակոյս չկար որ բանուորներու յեղափոխական ոգին ամբողջ կեդրոնական եւ Արեւելեան Եւրոպան պիտի տանէր Սոցիալիզմին:

Պատերազմի գործած ակերներէն յետոյ գործատէրերը կապիտալիզմը իր ոտքերուն վրայ կանգնեցնելու համար Սոցիալ Դեմոկրատներուն հետ կողք կողքի աշխատեցան դասակարգային համերաշխութեան ճամբուն վրայ: Անդլիոյ մէջ, Աշխատաւորականներն ու Ազատականները 1924-ին, կազմեցին առաջին «կարճատեւ» Աշխատաւորական կառավարութիւնը. Գերմանիոյ մէջ Սոցիալ Դեմոկրատները, Ազատականները եւ կաթոլիկները համագործակցարար պահպանեցին Վէյմարի հանրապետութիւնը, Ֆրանսայի մէջ Չափ Պլուքը, ներառեալ սոցիալիստները նոյնպէս իրենց հսկողութեամբ վերանորոգեցին կապիտալիզմի ուժերը. Դանիմարքայի մէջ հաստատուեցաւ սոցիալ դեմոկրատական բարեկամական կառավարութիւն մը. Լեհաստանի մէջ Սոցիալ Դեմոկրատները համերաշխեցան յետադիմական Փիլսոտտսկիի հետ. Իտալիոյ մէջ սոցիալիստները նոյնիսկ պաշտօնապէս համերաշխութեան դաշինք կնքեցին Մուսոլինիի հետ: Համերաշխութեան զինով նոյն շարժումը զարգացաւ նաեւ Աւստրիոյ, Պելճիզայի, Հոլանտայի եւ Չեխոսլովաքիայի մէջ:

Կապիտալիստներու եւ սոցիալ դեմոկրատներու այս միացեալ գործակցութիւնը, որ կը կատարուէր ի վնաս բանուորներուն, աւելի ու աւելի սերտացաւ Ամերիկեան տոլարներու ներխուժումով, տոլարներ՝ որոնք Եւրոպայի երկրուն կապիտալիզմը դարձեալ կանգնեցուցին հպարտ ճակատով իր ոտքերուն վրայ: Այս իրողութիւնը պատճառ եղաւ որ Կոմինտէրնը 1925-ի իր Գործադիր Կոմիտէի նիստին մէջ ընէ իր հռչակաւոր յայտարարութիւնը թէ՛ Եւրոպական կապիտալիզմը յաջողած է իրադրուել «մասնակի, յարաբերական եւ ժամանակաւոր հաստատունակութիւն մը»: Այս հաւասարակշռեալ գրութիւնը, սակայն, ճակատագրուած էր տեսելու մի քանի տարիներ միայն:

Այդ տարիներու ընթացքին սոցիալ դեմոկրատներու եւ գործատէրերու միջեւ կայացած դասակարգային համերաշխութեան ամենէն էական երեւոյթը արդիւնաբերութեան մէջ բացիոնալիզմի (բանավարութեան) ներմուծումն էր: Բացիոնալիզմի ներմուծումը սելով պիտի հասկնանք — արդիւնագործութեան ուժի շարժում, հիմնուած՝ աշխատօրի երկարաձգումին վրայ, յետժամեայ աշխատանքի վրայ, հանգստի դադարաձգողներու կրճատման վրայ, գործ զուլս աշխատանքի գործարկութեան վրայ, Պոնէսի(*) սխ-

(*) Պոնէսը — կամ շահարամիքը — տեսակ մը խայծ էր, գոր գործարանատէրերը վերջերս սկսան նետել բանուորներու առջեւ զանազան գործի կապիտալիստներու համար: Գործատէրը իր տարեկան շահոյքէն իրեն յարմար նկատած շահարամիքը կը բաշխէր իր գործարանի բանուորներուն, որոնք շատ բնականօրէն պատ-

տէմին վրայ եւ բանուորական միութեան հսկողութիւնն ու ուժը տկարացնելուն վրայ:

Այսպիսի մեղապարտ բացիոնալիզացիայի արշաւին զէմ Կոմինտէրնը եւ Աշխատաւորական Միութեանց Կարմիր Ինտէրնացիոնալը սկսան դասակարգային կռիւ մղել բանուորներու իրաւունքներու պաշտպանութեան համար, որովհետեւ գործատէրերը իրենց գողնալու մասնագիտութեան միացուցեր էին նաեւ այսպնելի կեղծիքն ու խարզախութիւնը:

բանքը կ'ունենային կարծելու որ գործարանը որոշ չափով իրենց ալ կը պատկանի, հետեւաբար այլեւս գործադուլի դիմելու կարիք չմնար:

Գործարանատէրերը բացիոնալիզմի գծով ուրիշ աւելի նեղամիտ միջոց մըն ալ գտան. անոնք դիմեցին բանուորներուն: Գործարանին մէջ դրին քելագրամներու արկը մը հետեւեալ յայտարարութեամբ. — «Անոնք որ արտադրութեան արագացման նպատակով թելագրանքներ ունին, իրենց ստորագրութեամբ՝ զբաւոյր թող ձգեն սոյն արկի մէջ: Գնահատուած թելագրութեանց աւերքը պիտի վարձատրուին»:

Թող ինձ ներէ ընթերցողը, որ իմ անձնական փորձառութեամբ պատկերացնեմ տարօրինակ իրողութիւն մը: Երկար տարիներով (1922-1932) եւ Շիգակայի կոշիկի մէկ գործարանին մէջ կ'աշխատէի գործգլուխի գծով: Ինձ յանձնուած մեքենան կը կոչուէր *լէստինկ մըշին*, որ իմ ձեռքերու եւ ոտքի նպատակայարմար շարժումներով կը ձեւաւորէր կոշիկներու կրունկն ու փէքը: Նոյն քիփի մեքենաներու վրայ ինձ նման հինգ բանուորներ ալ կային: Գործատէրը իւրաքանչիւր գոյգ կոշիկի համար կը վճարէր 4 սենթ: Ես ֆիշ մը դանդաղաշարժ գործուոր մը ըլլալով՝ օրական 300 գոյգ կոշիկ կը ձեւաւորէի, որով օրական իմ շահածը կ'ըլլար 12 տոլար, շաբաթական՝ 72 տոլար: 1931-ին, Ամերիկայի տնտեսական սուր տագնապի շրջանին, մեր գործարանին մէջ եւս դրուեցաւ գործնական քելագրամներ հաւառող արկը մը: Այստեղ պէտք է ըսել թէ կոշիկի արտադրութեան համար աշխատանքի բաժանման նիւթը կան, որոնք — գէշ ներկայիս — արագացման հնարաւորութիւն չունին, բայց մեր գործողութեան նիւթը արագացման ենթարկուողներէն մէկն էր: Զուր տեղը աշխատեցայ խորհուրդ տալ իմ ընկերներուն, որ հետու մնան լարուած քակարգէն: Ցանկարժ մեր արտադրութիւնը արագացաւ առանց աւելորդ ուժ ու շարժում գործածելու: Ի՞նչ էր եղածը: *Լէստինկ մըշին*ի վրայ գործող բանուորը աջ ու ձախ կոշիկները պիտի ձեւաւորէր եւ ամէն անգամ աջի ու ձախի փոփոխութեան առեւ պիտի փոխէր մեքենայի ուղղութիւնը եւ կոշիկի փէքը ձեւաւորող *վալբերները* (մանիկաներ պողպատեայ երկու գոյգ կցակներ): Սոյն փոփոխութիւնը ամէն անգամ՝ մի քանի վայրկեաններ կը խլէր: Այժմ բանուորներէն մին միայն աջ կոշիկը պիտի ձեւաւորէր միւսը՝ ձախը. ասով կը խնայուէր մեքենայի ուղղութիւնն ու վայրերներու փոխելու ժամանակը: Սոյն քելագրամը ընդմէջ էր բանուոր մը՝ որ իրրեւ վարձատրութիւն ստացաւ 20 տոլար: Իսկ բանուորը... Գործատէրը 1 գոյգի համար որոշեալ 4 սենթի սակագինը կրճատեց եւ եղաւ 3 սենթ, վեց ամիս յետոյ՝ 2 սենթ: Նախապէս ես որ օրական 300 գոյգ կոշիկ կը ձեւաւորէի, այսինքն՝ 600 կոշիկ, այժմ կը ձեւաւորէի 800 կոշիկ, գոյգի հաշուով 400 գոյգ կոշիկ: Բացիոնալիզմի պարզ օրինակ մը յօգուտ գործատիրոջ, ի վնաս բանուորին... եւ... բանուորի խելացի քելագրամովը...:

ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԵՋ

Կօչիկի գործարանին մէջ արագացման ճամբուն վրայ մեր տուած պարզ օրինակէն ընթերցողը անշուշտ կրցաւ հասկնալ թէ մեր գործատէրը ո՛րքան բթամիտ էր որ տարիներով չէր կրցած ալդպիսի հասարակ միջոց մը մտածել գործը արագացնելու համար եւ ամենէն վերջը իր աչքերը բացաւ եւ հետեւեցաւ իր գործաւորի թելադրանքին :

Տանք ուրիշ օրինակ մը՝ զոր վիպական կարելի է կոչել, բայց իրական է :

Կօչիկի արդիւնաբերութեան սկզբնական շրջանին, կօչիկի երեսի կաշին ներբանի կաշին ամբացնելու համար բանուորը ձեռքի ունելիքի նմանող գործիքով կաշին պիտի քաշէր եւ մէկ մէկ մանր դամերով փայտեայ կաղապարին վրայ անցուած ներբանին պիտի դամէր: Այդ դժուարին ու հոգածութիւն պահանջող գործողութիւնը առնուազն 20 վայրկեան կը պահանջէր: Նէկրօ բանուոր մը հնարեց մեքենայ մը, որ այդ գործողութիւնը կը վերջացնէր մէկ վայրկեանի մէջ: Գործատէրը նէկրոյի այդ հրաշագործ գիւտը դրամական մեծ խոստովով իւրացուց ու նէկրոն անյայտացաւ. ո՛չ ոք գիտցաւ թէ ան ի՞նչ եղաւ, եթէ սպաննուեցաւ ո՛ր թաղուեցաւ իր գիտկը...: Այդ մեքենան մինչեւ այսօր ալ կը կոչուի նիկրը-հէդ մըշիմ (նէկրօ գլուխ մեքենայ): Ասիկա ուրիշ օրինակ մըն է, որ ցոյց կուտայ թէ արդիւնաբերութեան մէջ բացիոնալիզացիան ի՞նչ դիւային միջոցներով յառաջ տարուած է, բան մը, որուն մէջ գործատիրոջ անգործութեամբ ժանդոտած ուղեղը գործ չէ ունեցեր: Ամէն տեղ եւ ամէն ատեն, բանուորները եւ կամ վարձուած մտաւորականներն ու գիտնականներն եղեր են որ հնար մը գտած են գործը արագացնելու համար:

Արդիւնաբերութեան բացիոնալիզացիայի արշաւը Մ. Նահանգներուն մէջ սկսաւ 1920-էն յետոյ, երբ վերջ գտաւ Պալթիմօր եւ Օհայիօ երկաթուղային 500 հազար բանուորներու գործադուլը, որմէ ծնաւ «Պալթիմօր Օհայիօ ծրագիրը»: Ի՞նչ էր այդ ծրագիրը: Միաւ է բանուորները անջատել պատկանեալ ընկերութենէն, անոնք ընկերութեան բաժնեկիցներն են. անոնք պիտի աշխատին գործը արագացնել, ուրկէ ամենէն աւելի օգտուողներ պիտի ըլլան իրենք՝ բանուորները: Աշխատավարձերը մեքենաբար պիտի բարձրանան, աշխատօրերու ժամերը պիտի պակսին, գործարանի պայմանները պիտի բարելաւուին, անգործութիւնը պիտի վերնայ: Սոյն պրոպա-

կանտով յառաջ տարուած շարժումը ծաւալեցաւ նաև Գանատայի մէջ:

Ամերիկեան Աշխատանքի Դաշնակցութեան (AFL) բիւրոկրատները, անմիջապէս որդեգրեցին բացիոնալիզացիայի առաջարկը որպէս փրկարար միջոց: Հետեւելով գործատէրերու պրոպականդին, AFL-ի համագումարը 1925-ին որդեգրեց «աշխատավարձի նոր քաղաքականութիւն մը», որուն համաձայն բանուորներու աշխատավարձը պիտի աւելնար արագ արտադրողականութեամբ, ժամանակի եւ նիւթեղէնի խնայողութեամբ: Աշխատաւորական բիւրոկրատները զարգացուցին «աշխատանքի աւելի բարձր ռազմավարութիւն մը», որ հիմնուած էր մասսայական արտադրութեան եւ դասակարգային համերաշխութեան վրայ, ուրկէ մեքենաբար պիտի բարձրանար բանուորներու ապրուստի մակարդակը: Բիւրոկրատները բարձրազարակ յայտարարեցին որ դասակարգային կոիւր այլեւս վերջացեր էր եւ բանուորները ձեռք ձեռքի տուած գործատէրերուն՝ անոնց հետ պիտի քաշին դէպի վարդազոյն հօրիզոնները:

Բայց իրապէս ի՞նչ պատահեցաւ բացիոնալիզացիայի արշաւին ատեն. բանուորներու ընդհանուր դրութիւնը աւելի վատթարացաւ: Այդ տարիներու ընթացքին, մինչ գործատէրերը լեռնակուտակ շահեր ապահովեցին, բանուորներու աշխատավարձը աննշան աստիճանով բարձրացաւ, միայն որակաւոր բանուորները առատօրէն վարձատրուեցան: Գործատէրերը այդ աշատութիւնը ըրին ո՛չ թէ որակաւոր բանուորները քաջալերելու նպատակով, այլ ուղղակի բանուորներու մէջ հատուածականութիւն եւ լարուածութիւն յառաջացնելու նպատակով: Որակաւոր բանուորներն էին որ պիտի առաջնորդէին հասարակ բանուորները. երբ առաջինները դո՛հ էին, վերջինները դժգոհութեան մէջ պիտի տառապէին եւ սակայն ոչինչ պիտի կրնային ընել: Ասանկով թէ՛ Մ. Նահանգներուն եւ թէ՛ Գանատայի բանուորներու բարոյական ուժը խորտակուեցաւ: Ամերիկայի աշխատաւորական պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տարիներու ընթացքին Թրէյտ Իւնիլըններու թիւը գրեթէ նոյնը մնաց: 1923-ին, AFLի անդամներու թիւն էր 2,926,468, 1929-ին՝ 2,933,546 եղաւ: Վեց տարիներու ընթացքին՝ աննշան աճում մը:

Սամուէլ Գամպլըսը մեռաւ 1924-ին, անոր յաջորդեց Ուիլիլմ կրիլը, աւելի յետադիմական՝ քան Գամպլըսը: Այս մարդը եկաւ յայտարարել որ Թրէյտ Իւնիլընները այլեւս պայքարելու պատճառ չունին, երբ իրականացեր էր գործատէրերու հետ կնքուած եղբայրութիւնը. միայն թէ ասկէ վերջ պէտք է արդիւնաբերութիւնը արագացնել, բանուորներու շահաբաժինը աւելցնելու համար:

Գատարկուած էին պահեստի ապրանքներուն ամբարները. մէկ

կողմէն պէտք էր զանոնք լեցնել. միւս կողմէն՝ պատերազմէն աւերուած եւրոպական երկիրները կենսամթերքներու հսկայական պահանջ ունին, այդ պահանջներուն պէտք էր բաւարարութիւն տալ, եւ քաշել եւրոպացիներու ոսկիները: Ատոր համար ուժգին թափ տրուեցաւ բանաւարական գծին: Բայց երբ ամբարները լեցուեցան ու ապրանքներուն պահանջները նուազեցան, սկսաւ տնտեսական տաղնապը՝ որուն վարիչն եղաւ Հըրրերտ Հովրը: Բաղմացան սնանկութիւնները, գոցուեցան գործարաններէն շատերը. նոյնիսկ պանքաներէն ոմանք փակեցին իրենց դռները: Սոչոր շանաձուկերը մնացին, փոքրերը անյայտացան: Փակուեցան բազմաթիւ վաճառատուներ՝ որոնք վերածուեցան զանազան անուններով եկեղեցիներու: Քրիստոսի աշակերտները անոնց մէջ կը հաւաքէին անգործներն ու թշուառները եւ զանոնք կը մխիթարէին պնակ մը ապուրով եւ կտոր մը հացով: Անգործներու թիւը 1930-ին հասեր էր 18 միլիոնի: Սոչոր քաղաքներու մէջ յուսահատ ամբոխները սկսեցին անհանգստութեան նշաններ ցոյց տալ եւ սեղմել իրենց բռունցքները: Մօտեցեր էր ժամը, որ անոնք բարձրացնէին այդ բռունցքները, երբ հրատարակ իջաւ ամերիկեան կապիտալիզմի ազատարարը՝ Ֆրենկլին Դեղանօ Ռուզվելթը, որ երգուած էր կռուիլ բոլոր իզմերուն դէմ — Փաշիզմի դէմ, նացիզմի դէմ եւ... կոմունիզմի դէմ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

Յատկապէս այժմ ներգոյութիւն կը խնդրենք մեր ընթերցողներէն, որ այստեղ ստիպուած ենք բանալ փակագիծ մը, ուր պիտի ներկայացնենք հարեւանցիօրէն քանի մը յուշեր, որոնք կապ ունին մեր ուսումնասիրութեան նիւթին հետ:

Այս տողերը գրողը, որ Ամերիկայի իր պանդխտութեան գրեթէ ամբողջ ժամանակաշրջանը անցուցեր է բանուորութեամբ(*), գործեր է հիւսուածեղէնի գործարաններու մէջ, կօշիկի գործարաններուն մէջ, ընդարձակածաւալ ապրանքներու մատակարարման գործով զբաղող աշխարհահռչակ հիմնարկութեան մը մէջ՝ որպէսին է Sears Rubuck ընկերութիւնը, իսկ ամենէն վերջը՝ երկրորդ Աշխարհամարտին՝ Mare Island (Ֆալիֆօրնիա) պետական նաւաշինարանին մէջ եւ անձնական փորձառութեամբ տեսած եւ ուսումնա-

(*) Ամերիկայի մէջ իմ բանուորական կեանքը իր յարակից պատկերներով նկարագրուած է «Բանուորի մը Յուշատարը» անուն անտիպ գործիս մէջ, որուն ձեռագիրը դեռ եւս պահուած կը մնայ տպագրութեան սպասող երագի մը դարակից մէջ:

սիրած է արդիւնաբերութեան մէջ գործարկութեան դրուած անիշխանական ձեւին դէմ բանաւարական սիստէմի ընթացառումը: Նախորդ էջերէն մէկուն մէջ արդէն որպէս յաւելեալ ծանօթութիւն՝ մենք պարզեցինք Շիզակոյի կօշիկի գործարանի մէջ հասարակ գործի մը արագացման դրուազը, որ տեղի ունեցաւ վարձատրուած բանուորի մը «Թելազբանքով»: Այժմ անցնինք ներկայացնել միւս երեք գործատեղիներու պատկերները, որոնք այսպէս թէ այնպէս՝ կ'օժանդակեն պարզարանել մեր առաջագրած նիւթը:

Հիւսուածեղէնի Գործարանը. — Հիւսուածեղէնի գործարանին մէջ եթէ բանուորը գործ-վրուխի գիծով կը գործէ, իր վրիտն վերեւ արտաքին մղիչ ուժ մը չունի, որ հարկազրէ իրեն արագ գործել. այդ մղիչ ուժը իր մէջն է — շատ դրամ վաստակելու ցանկութիւնը: Ան շատ արագ շարժելու է. պէտք չէ թոյլ տալ որ մեքենան կանգնի: Հիւսող բանուորը դէմ առ դէմ զանուոյ երկու Լաւերու (ոստայնակի մեքենայ) մէջտեղ կանգնած պիտի հսկէ ու պիտի գործէ: Նայած ասուի տեսակին, ամէն մէկ մեքենայ երեք կամ չորս մագոյ ունի, որոնց իւրաքանչիւրին մէջ կայ տարբեր գոյն թելով լեցուած մասուրայ մը: Բանուորը մագոյները փոխած պահուն պէտք է արագ շարժի, երկու երկվայրկեանէն աւելի ժամանակ առնելու չէ: Իսկ առէջի մէկ թելը կտրուած ատեն, նոյնպէս արագ շարժելու է, արագ հանգուցելու է թելը, գոյն անցնելու է կախուած ասպէն, յետոյ՝ սանտրի ատամէն. նոյն ատեն ուշագրութիւն ընելու է որ միւս մեքենան՝ մասուրաներէն մէկուն սպառումով անշարժ շմնայ. որովհետեւ պէտք է ըսել՝ մեքենաները շատ արագ կը գործեն, մէկ վայրկեանին՝ 120 հարուածով: Որպէսզի ընթերցողը զաղափար մը կազմէ բանուորի արագաշարժութեան շուրջ, այստեղ կուտամ անձնական օրինակ մը: Ես, ի բնէ ըլլալով զանդաղաշարժ բանուոր մը, իմ շարաթական վաստակը կ'ըլլար առ առաւելն 24 տոյար, մինչդեռ ինձ մօտ գործող արագաշարժ բանուորը կը ստանար շարաթական 40 տոյար. այդ կը նշանակէր թէ անոր արագաշարժութիւնը իրեն կ'ապահովէր 16 տոյարի դուժար մը, որ արհամարհելի գումար մը չէր:

Հիւսուածեղէնի գործարանին մէջ միմիայն բանուորի արագաշարժութեան կապուած, չէր արդիւնաբերութեան արագացումը, որովհետեւ նկատի առնելու է նաեւ մեքենաներու կատարելագործումը, զոր գործարանատիրոջ մտքի հնարաղիտութեան արդիւնքը պէտք չէ նկատել. ատիկա դարձեալ վարձուած մեքենագէտի մը գիտն է: Բայց թողունք այդ կէտը: 1915-ին, ինչպէս ըսինք, բանուորը երկու լումերու կը հսկէր. 1919-ին այնպիսի հիւսող մեքենաներ (լումեր) գործածութեան դրուեցան որ, բանուորն այլեւս մագոյները փոխելու գործ չունէր. մագոյի մէջի մասուրայի թելը վերջացածին պէս,

ակնթարթի մը մէջ պարապ մասուրան վար կ'իյնար ու լեցուածք անոր տեղը կ'անցնէր: Ասով՝ մէկ բանուորին տրուեցաւ վեց մեքենայան միայն պիտի հսկէր եւ պիտի հանդուցէր առէջներուն կտրուած թելերը, բան մը, որ այնքան յաճախակի չէր պատահեր: Իսկ առէջներու իւրաքանչիւր թելին վրայ դրուած էր ունելիքի ձեւով բարակ պողպատեայ մասեր, որոնց ծայրերը կը շօշափէին առէջին ներքեւ եւ ու առաջ շարժուող երկու զլանիկներու մակերեսը: Առէջի մէկ թելը կտրուածին պէս, այդ լեզուակը կ'իյնար երկու զլանիկներուն միջեւ ու մեքենան կը դադրէր գործելէ: Բանուորը իսկոյն կը մօտենար, արդէն կ'երեւնար կտրուած թելին տեղը, դայն կը հանդուցէր ու մեքենան շարժման մէջ կը դնէր: Մեքենաներու այս կատարելագործումով շատ բանուորներ նեաուեցան փողոց:

Շիգակոյի Sears Rubuck գործատեղիին մէջ.— Միայն երկու օր կրցայ գործել. ուժասպառ եւ սարսափահար՝ որպէս «ազատ» բանուոր նեաուեցայ դուրս: Հետաքրքրական, նոյն ատեն գաւեշտական գրուագ մը:

Sears Rubuck ընկերութիւնը Ամերիկայի ամենամեծ Mail-orderի ընկերութիւնն է, որ ո՛չ միայն Ամերիկաներու եւ Գանատայի, այլեւ աշխարհի զանազան կողմերէն եկած զանազան ապրանքներու եւ մեքենաներու ապագրանքներ կը ստանայ եւ անոնց թղթատարութեան կամ այլ միջոցներով գոհացում կուտայ:

Ի՞նչ էր ինձ տրուած գործը:

Զիս կեցուցին երկու բացուած խոռոչներու առջեւ, որոնց ճակատին դրուած էին M եւ P նշանատառերը: Ապսպրուած ապրանքներով լեցուած կողովները ելեքտրականութեամբ շարժուող զլաններու վրայ շարուած անընդհատ կուղային անցնիլ առջեւէս: Ես առանց ժամանակ կորսնցնելու անմիջապէս անոնց մէջէն պիտի ջոկէի M եւ P նշանատառերը կրող կողովները եւ սահեցնէի համապատասխան խոռոչներէն մէկուն կամ միւսին մէջ. ուրիշ նշանատառեր կըրող կողովները զլաններու վրայով կ'երթային միւս բանուորներուն: Ինձ նման դանդաղաշարժ բանուորի մը համար անտանելի ու տանջալի գործ էր այդ: Անընդհատ ծռիլ, կողովները վերցնել ու սահեցընել խոռոչներէն ներս՝ առանց մէկ վայրկեան շունչ առնելու, ես նման գործ մը՝ նոյնիսկ չէի երեւակայեր... Եթէ քիչ մը դանդաղէի, կողովները կը շրջուէին իրարու վրայ, կը յառաջանար սարսափելի խառնակութիւն մը: Գլխիս վերեւ ելեքտրական հովահարը կը դառնար, բայց ան իմ քրտինքները չէր կրնար ցամքեցնել: Նոյնիսկ չէի կրնար նայիլ շուրջս, տեսնելու թէ միւս բանուորները ի՞նչպէս կը գործէին:

Նախքան գործի սկսիլս, երբ ինձ ցոյց տուին խոռոչներուն քով լայնարեքան խողովակ մը, որ միզարանի տեղ կը ծառայէր եւ ուրիշ մէզի անախորժ հոտ մը կը բուրէր, եւ ըսին որ այդ բնական պէտքը զրացած պահուս ստորով ելեքտրական կոծակը սեղմելու էի, որպէսզի այդպիսի պարապաներու տակ շրջուն օդնական բանուորներէն մին հասնէր եւ մէկ վայրկեանի համար միզելու ազատութիւն տար ինձի, եւ արդէն ապշեցայ... Բայց ի՞նչ ընելու էի. մարդիկը խղճացեր՝ ու ինձի գործ էին տուեր:

Հապա միւս բնական պէտքը հոգալու հա՞րցք... Ատիկա բացարձակապէս արգիլուած էր. բանուորը սպասելու էր, մինչեւ որ կէսօրուայ հանգիստի փողը հնչէր... Այդ գոթիային տեղ մըն էր...:

Աստուած իմ, ինչպէ՞ս կը տոկային այդտեղի բանուորները: Անշուշտ վարժուած են անոնք... Խորհեցայ որ դուցէ առաջին օրն ըլլալուն համար ես այնքան տանջուեի էի, ես ալ կրնայի վարժուիլ: Երկրորդ օրը՝ գրեթէ ուժասպառ վիճակով կրցայ գործը լրացնել...: Ո՛չ, անկարելի էր. ես հոն չէի կրնար գործել...: Դիմեցի ընկերութեան գրասենեակը, պարզեցի գործելու անկարողութիւնս: Ինձ ըսին որ մէկ շաբաթէն պիտի ստանամ իմ աշխատավարձը: Եւ... ստացայ այդ աշխատավարձը... միայն 8 տոլար...:

Պետական նաւաշինարանը.— Մէկ ծայրահեղութենէն միւսը: Մէկ կողմը ուժղին թափ կը տրուի արդիւնաբերութեան բացիռնալիզացիային, միւս կողմը կը տիրէ ժամանակի ու նիւթականի մըսխումն ու անարխիան:

Պարզենք գրութիւնը իր մերկութեամբ:

1942-ին էր որ Ֆրեզնոյէն փոխադրուեցայ Մէր Այլընտ (Վըրլէյօ) եւ առանց դժուարութեան՝ գործ ունեցայ պետական նաւաշինարանին մէջ, ուր պատերազմի ատեն օրական երեք բաժանումով՝ 24 ժամ կը գործէին 45,000 բանուորներ:

Առաջին անգամ զիս յանձնեցին որպէս աշկերտ՝ «վարպետ»ի մը: Ես մասնագիտութիւն մը չունէի: Տարիներ առաջ Շիգակոյի Coyn Electric դպրոցը յաճախեի էի — Պիզնիսային հաստատութիւն մը — եւ անկէ որպէս էլէկտրիկ էնժինէր՝ շրջանաւարտ ելած էի, բայց թէ ի՞նչ էի սորվեր, ես ալ չէի գիտեր: Դպրոցի անօրէնութիւնը զիս տարաւ մէկ դասարանէն միւսը եւ երեք ամիս յետոյ՝ ձեռքս տուին ոսկեզօծ վիպական մը եւ դուրս հանեցին: Մարդիկը գործարան բացեր՝ շրջանաւարտ կ'արտադրէին, կուրքը՝ 200 տոլար: Միամիտ մարդոց դրամը կ'առնէին, մէկ դասարանէն միւսը կ'առաջնորդէին զանոնք եւ աճապարանքով դուրս կը հանէին, այնքան շատ էին յաճախողները:

Ազատ երկիր... Ամէն մարդու ազատութիւն տրուած է, բաւական է որ ան գողութեան, աւազակութեան ու խարդախութեան համար օրինական տրամադրութեանց սահմանին մէջ կը մնայ:

Անտարակոյս, եթէ ես քիչ մը հնարագէտ ըլլայի, իմ այդ վկայականով կրնայի լաւ դործ ունենալ պետական նաւաշինարանին մէջ, որուն դռները բաց էին բոլոր քաղաքացիներուն համար, ստուգում չկար թէ ներկայացողը իր շրթունքով արտայայտած մասնագիտութեան դժով քանի՞ տարիներու փորձառութիւն ունէր. բայց ես ներկայացայ որպէս հասարակ բանուոր. ահա թէ ինչու՞ որակաւոր «վարպետ» մը աշկերտ եղայ եւ դործիքներու տոպրակը շալկած՝ հետեւեցայ իրեն: Առաջին օրը նորոգուելիք թորփիլանաւու մը մէջ, աջ ու ձախ, ծուռ ու մուռ սանդուխներէ իջանք, ծռելով ու շտկուելով բազմաթիւ երկաթեայ դռներէ անցանք ու իջանք ինքնին ըսուք, նաևի մեքենահանութիւնը շարժման մէջ դնող շոգեկաթասներու վայրը: Մարդը պիտի դործէր, ես ալ իրեն պիտի օգնէի...: Բայց մեր «վարպետը» դործելիք չունէր. ձեռքին բռնած կապոյտ թուղթի մեծկակ կտորի մը վրայ ձեռմակ դժերով յատակագիծ մը՝ ժամերով աչքերը սեւեռած էր անոր եւ յայտնի էր՝ թաղուած էր խոր ուսումնասիրութեան մէջ. ես ալ լուռ ու մունջ՝ զինքը կը դիտէի: Կատարեալ զուեշտախաղ մը: Կարծեմ վարպետս յոգնեցաւ կամ ձանձրացաւ իր ձեռքի յատակագիծը ուսումնասիրելէն, ոտքի ելաւ եւ «գուք տեղ մը պահուրտելով ժամանակ անցուցէք» ըսաւ ու մեկնեցաւ...: Տեղ մը պահուրտելով ժամանակ անցնե՞լ... Ա՞յդ ըլլալու էր իմ գործը...: Չարչարանքի օր մը անցուցի... Որքան դանդաղ կը սահէին ժամերը... Նոյնը եղաւ երկրորդ օրը, երրորդ օրը... եւ... ամբողջ շաբաթը: Իմ գործի ժամերն էին կէսօրէն վերջ ժամը 4-էն մինչեւ կէս գիշեր: Առանց դործելու, յոգնած, ջարդուած տուն կը վերադառնայի: Ութը ժամ, հոս ու հոն, մթին խոտջներու մէջ նստիլ, պահուրտիլ ու ժամանակ սպաննել, ստիկա տանելի բան չէր: Համբերութիւնս հատաւ, զիմեցի իմ գործատեղիի (խողովակներու յարկարաժինն էր ան — փայլի շափը) ընդհանուր սնօրէնին. — «Ինձի գործ մը, որ զիս զբաղուած պահէ», ըսի իրեն: Տնօրէնը հարց ու փորձ չբրաւ. զիս տարաւ հսկայ շէնքի ընդարձակ սրահին մէկ անկիւնը գտնուող Ռազինի տեղը, ուր ուրիշ երեք բանուորներ կը գործէին:

Պէտք է ըսել թէ մարտանաւերուն մէջ ամենէն շատ գործածուածները, ես նկատեցի որ, աւելի բազմաթիւ էին խողովակները քան թէ մեքենաները: Կտաւաքարով պատած թիթեղէ խողովակներ, երկաթէ, պողպատէ, զինգէ, նիքրէ, քրոմէ ու պղնձէ խողովակներ, բազմազան ձեւերով, լայն ու նեղ տրամագծով խողովակներ: Այդ

խիկ պատճառով՝ խողովակներու հետ կապուած բանուորները նաւաշինարանի ուրիշ ճիւղերու բանուորներուն հետ համեմատած՝ ամենամեծ թիւը կը ներկայացնէին, համարեա՝ 15,000 հոգի:

Իմ նոր գործատեղին, ձմեռը տաքուկ՝ ամառը՝ նեղիչ էր:

Անդնդախոր սիմէնտէ շինուած խոռոջի մը վերեւ վանդակապատ աշտարակի մը վրայ գետեղուած էր հսկայական պղնձէ կաթսայ մը, որուն մէջ լեցուած ռազինը(*) կ'եռար օդային կազի բոցերու շունչով: Ծատ երկար խողովակները՝ իւրաքանչիւրին վարի բերանը փայտեայ խցիկ մը ամբարցուած՝ կը գետեղուէին այդ խոռոջին մէջ. իսկ կարճ խողովակները նոյնպէս մէկ ծայրերնին փայտեայ խցիկներով՝ կը շարուէին աշտարակին բոլորտիքը: Մեր գործըն էր եռացած կաթսայի մէջէն ռազինը լեցնել խողովակներուն մէջ: Յաջորդ օրը, երբ ռազինը կը սառէր, վարպետները կուզային, կը վերցնէին իրենց պատկանած խողովակները եւ անոնց կուտային պահանջուած ձեւը: Առանց ռազինի՝ մեքենան խողովակը կը կոտրէր, կը փճացնէր: Խողովակները ձեւ առնելէն յետոյ՝ դարձեալ կը բերուէին մեղի. մենք ուժեղ բոցարձակ, գործիքով (Torch) անոնց մէջի ռազինը կը հալեցնէինք եւ կը կուտակէինք սիմէնտէ յատակին վրայ:

Գործս քիչ մը դժուար էր, բայց դժգոհ չէի. արագացնելու հրամայական պահանջ չկար, եւ գործի ընկերներս ալ, ազնիւ, բարի ու ընկերային մարդիկ էին. մէկը հայ՝ երկուքը նէկրոներ: Գործի ժամերը շատ դիւրաւ կը սահէին, յոգնածութիւն չէի զգար, բայց կամաց կամաց, շարաթներ ու ամիսներ անցնելէն յետոյ՝ հոգիս սկսաւ պղտորուիլ անդիմադրելի խորհրդածութիւններով: Այն՝ ինչ որ կը տեսնէի հոն, առասպելական էր, ապշեցուցիչ էր, անհաւատարի էր. բայց ի՞նչ ըսել որ իրականութիւն էր:

Զի բաւեր ըսել կամ զրել թէ՛ պատերազմը կապիտալիստ դասակարգի հսկայական շահու ամենամեծ աղբիւրն է, մարդ պէտք է մտնէ ռազմական արդիւնարբերութեան մէջ, որպէսզի հասկնայ այդ ճշմարտութեան ամենախայտառակ կերպարանքը:

Ես մասնաւորապէս հետամուտ ըլլալով իմացայ որ մեր գործածած ռազինի փառուտը (454 կրամ) 40 սէնթ է: Ներս բերուած ամէն մէկ տակառի վրայ նշանակուած էր 500 փառուտ: Ուրեմն, կառավարութիւնը իւրաքանչիւր տակառին կը վճարէր 200 տոլար:

(*) Ռազինը փայտէն պատրաստուած տեսակ մը բիրեղ խժժ է, որ ներս կը բերուէր խոշոր տակառներով: Բանուորները գանձէ կը բանային, ռազինը կը կուտրտէին ու կը լեցնէին կարսային մէջ:

Ըսենք որ, ձեւ առած խողովակներէն դուրս բերուած ուղիներ կա-
րելի էր տասն անգամ նորէն գործածել, որովհետեւ ան բլրերդի պէս
մաքուր էր, չէր փճացեր: Բայց ի՞նչ կը տեսնէի... Սիմէնտին վրայ
դիզուած ուղիներ բեռնատար օթոներու մէջ լեցնելով, կը տանէին
ու կը թափէին ծովը, եւ ներս կը բերուէին երկոտասնեակներով նոր,
չբացուած ուղիներ տակառներ: Մէկ ամսուայ ընթացքին՝ հաշիւ ըրի
որ 150 տակառ ուղիներ կը սպառուէր ու կը փճանար դուր տեղը. այդ
կը նշանակէր 30 հազար տոլար շահոյթ: Երեսուն հազար տոլար՝
միայն մէկ նաւաշինարանէն շահոյթ, հապա միւս նաւաշինարան-
ները...: Եւ այդ ուղիների ընկերութի՞ւնն էր որ պատերազմին պի-
տի հակառակէր, այն ընկերութիւնը, որ գիշերը ցերեկին խառնած
ուղիներ պիտի հայթայթէր հայրենիքի պաշտպանութեան սիրոյն...
միլիոններ դիզելու համար:

Բայց միմիայն ուղիների մսխումը չէր որ աչքիս կը զարնէր.
նոյն երեսոյթը աւելի ահաւոր չափանիշով կը պարզուէր խողովակ-
ներու կողմը: Որակաւոր արհեստաւոր վարպետները կրնայի դա-
տորոշել, իրենց գործերէն. անոնք սակաւաթիւ էին. անոնց ձեւա-
ւորած խողովակներէն մէկ հատն իսկ չէր փճանար, մէկ կողմ չէր
նետուեր. այդ վարպետ կոչուածներէն մեծ մասը, վերեւ նկարագ-
րուած իմ նախկին «վարպետ» իս նման անճարակ մարդիկ էին, որոնց
ձեւաւորել փորձած խողովակները իրարու ետեւ կը նետուէին ան-
կիւն մը: Իմ նախկին «վարպետը» նորէն հանդիպեցաւ ինձի: Իր
ձեռքի յատակագիծով 3 մեթր երկար խողովակ մը ձեւաւորել կ'ու-
զէր: Ութն անգամ իր բերած խողովակը լեցուցինք ուղիներով եւ
ութն անգամ անյաջող դուրս եկաւ. իններորդին՝ ուրիշ վարպետի
մը միջոցով ան կրցաւ ամբողջացնել իր գործը:

Սողովակները կոտորուած վիճակով կը բարդուէին անկիւնը
եւ կը բարձրանային մինչեւ ձեղունը, ապա անոնք կը բեռցուէին եր-
կաթուղիի վազոններուն մէջ եւ գուցէ կը տարուէին նոյն ընկերու-
թեան՝ որ խողովակներ կը հայթայթէր կառավարութեան:

Նիւթականի եւ ժամանակի անխնայ վատնում... բայց ո՞վ էր
մտահոգուողը, ո՛չ ոք, ո՞վ էր տուժողը — ժողովուրդը: Կարծես
այդ բոլորը տեղի կ'ունենային մտածուած ձեւով, որպէսզի կապիտա-
լիստական ընկերութիւնները միլիոններ դիզէին: Հապա եղած գո-
ղութիւնները... Գործաւորները ինչ որ կարելի էր դնել իրենց
զրպանը, կը գողնային: Դրօշակներու գործատեղին աշխատող հայ
կին մը, օր մը պատմեց ինձի որ գողութիւններու առասպելականը
տեղի կ'ունենար հոն: Կիները, արժէքաւոր կտորները կը փաթտեն
եղեր իրենց ներքնազգեստին տակ ու կը տանին տուն: Գողութիւնը,

ուրեմն, ընդհանրացած էր ամէն մէկ յարկարաժնի մէջ: Դրացի մը
ունէի, որ կը գործէր ներկարարներու մէկ յարկարաժնին մէջ: Այս
մարդը որ իր ինքնաշարժով կ'երթեւեկէր նաւաշինարան, իր կարա-
ժը լեցուցեր էր թիթեղատուփերով լեցուն ներկերու տեսակներով եւ
բազմաթիւ գործիքներով: Վերակացուները չէին տեսներ եղած գո-
ղութիւնները... Այո՛, կը տեսնէին, բայց չէ՞ որ իրենք եւս նոյն
գողութեամբ կը դրողէին: Եւ այդ գողերը մէկ կողմէն իրենց անյազ
ընչաքաղցութիւնը կը գոհացնէին, միւս կողմէն՝ կ'օգնէին կապիտա-
լիստներուն: Որքան շատ ըլլար գողութիւնը, նոյնքան կ'ուսճանար
պիտանի ապրանքներու պահանջը եւ նոյն ատեն կը մեծնար մեծա-
ւորներու շահարաժինը, որովհետեւ յայտնի էր որ անոնք կառավա-
րութեան կապուած ընկերութեանց հետ իրենց դանձելիք դումարնե-
րը սակարկութեամբ սպահնում էին: Եւ յուսալ որ այս մարդիկը
պատերազմի դէմ պէտք է արտայայտուէին... ի՞նչ միամտութիւն...:

Ճիշդ է, որ կանոնաւորութիւն մը կը պահպանուէր պետական
նաւաշինարանին մէջ, բայց ատիկա սոսկ ձեւականութիւն էր: Ամէն
մէկ բանուոր՝ գործի սկսելէ առաջ պատին վրայ հաստատուած ժա-
մացոյցի միջոցով կնքահարելու էր իր քարզը, նոյնը ընելու էր իր
գործի ժամերը վերջացած՝ տուն վերադառնալու պահուն: Բայց
ճարպիկ գործաւորներ կային, որոնք կամ իրենք իրենց ձեռքով կը
կնքահարէին իրենց քարզը եւ գաղտուկ կը վերադառնային տուն
եւ աշխատանքի ժամանակը լրանալու մօտ նորէն կուզային իրենց
քարզը կնքահարելու, եւ կամ՝ նոյնը ընել կուտային իրենց մէկ բա-
րեկամին ձեռքով, նոյն ծառայութիւնը փոխարինելու խոստումով:
Ո՛չ ոք կը հետաքրքրուէր թէ այդ գործաւորը ինչո՞ւ ներկայ չէր եւ
ո՞ւր էր: Գործի վերակացուները կը տեսնէին այդ, բայց աչք կը
գոցէին, որովհետեւ իրենց համար նպաստաւոր էր որ գործը դան-
դաղէր, ուշանար եւ իրենք ապահովէին երկար ատենի համար իրենց
իւզոտ ամսաթոշակները: Օր մը մեր յարկարաժնի վերակացուն, որ
ուշադրութեան առած էր իմ գործելու եղանակը, մօտեցաւ ինձի եւ
— «Ինչո՞ւ դուք ձեզ կը նեղէք» ըսաւ կարեկցական ձայնով — «կա-
մաց կամաց գործեցէ՛ք, նայեցէ՛ք միւս գործողներուն: Այս գործը
երբ շուտ վերջանայ, դուն եւ ես հոս գործ չունինք»: Ասկէ աւելի
բաց խոստովանութի՞ւն...:

Պետական նաւաշինարանին մէջ ուրիշ կանոն մըն ալ կար ի
նպաստ բանուորներուն, ամէն մէկ բանուոր մէկ ամսուան ընթացքին
եթէ հիւանդանար երկու օրուան աշխատավարձը պանձելու իրա-
ւունք ունէր: Գործաւորներէն շատերը այդ իրաւունքը կը գանձէին
կամաւոր հիւանդութեամբ. այլապէս զայն կը կորսնցնէին, մինչ
հաւատարմօրէն ծառայողները այդ կեղծիքին չէին սիրեր դիմել:

Պատերազմը վերջանալուն պէս 30 հազար բանուորներ ազատ արձակուեցան, բայց զիս պահեցին, որովհետեւ գնահատուած րէ- քորս ունէի. հինգ տարուան մէջ մէկ օր հիւանդութիւն պատրուա- կելով տուն չէի մնացեր եւ սրտանց ու աշխուժով գործեր էի: Վեր- ջապէս սա պատերազմ մըն է, մտածեր էի ես, որուն մէջ մտած են իմ սիրած Ս. Միութիւնը եւ իմ հայրենիքը: Մայրուած ընելով ես անուղղակի կերպով դաւաճանած կ'ըլլամ Սորհրդային Միութեան եւ իմ հայրենիքիս: Ինծի տունն հաճելի եւ դիւրին գործ մը — պահեստանոցի վերհսկիչի գործը: Եէնքի մը ընդարձակ սրահին մէջ լեցուած էին ամէն տեսակ գործիքներ, մոթորներ, գրամեքենա- ներ, ուստիոներ, ելեքտրական կազմածքներ եւ ինձ անծանօթ մեծ ու փոքր հովահարներ: Իմ գործն էր զանոնք դասաւորել, ցուցա- կադրել եւ եթէ մէկը ներկայանար բան մը առնելու, ցոյց տալու էր արտօնագիր մը. ես արձանագրելու էի մարդուն անունը ու տրուած գործիքը: Աչք պտտցնելով այդ դիզուած իրեղէններուն վրայ՝ ես ապշեցայ. անհամար կոշուելու չափ բազմաթիւ՝ եւ խելքի պտոյտ տալու չափ բազմազան էին անոնք: Այդպիսի բան ես տեսած չու- նէի: Կառավարութիւնը անոնց բոլորին փոխարէէքը ուղղուած գնով վճարած էր եւ անոնք այլեւս անպէտք էին ու անուրդով պիտի ծախ- ուէին: Միլիոնաւոր տոլարներ արժող ապրանքներու կուտակում մը: Իսկ ինձ յանձնուած պահեստանոցը միակ պահեստանոցը չէր, անոր նման՝ աւելի մեծ ու ճոխ ուրիշ երկու պահեստանոցներ եւս կային Մէր Ալլընտի մէջ, որոնց այցելած էի զանազան առիթներով: Ամերիկայի հարստութիւնը, իսկապէս որ, եթէ ծովը լեցուի, ծովը կը ցամքեցնէ, կը մտածէի ես: Բայց առանց ծովը լեցուելու, այդ հարստութիւնը ինքնին պիտի ցամքէր արդէն: Ամէն օր նաւային պաշտօնեաներ՝ արտօնագիր մը իրենց ձեռքը, կուզային, պահես- տանոցի մէջէն կը ջոկէին իրենց ուզածը, ես անոնց անուններն ու առածները արձանագրելով քաղաքավարութեամբ ճամբու կը դնէի: Յաճախ արտօնագրին մէջ արձանագրուած մէկ գործիքին տեղ՝ մար- դիկը չորս հատ եւս կը վերցնէին: Պաշտօնեաներէն մին՝ համաձայն իր ձեռքի արտօնագրին, մէկ գրամեքենայ պիտի առնէր, վերցուց երկու հատ եւս, անոնց հետ ալ ելեքտրական ղեղեցիկ հովահար մը: Ամօթէս կամ վախէս, առարկութիւն չըրի: Գողերուն հետ վիճիլ չըլլար, ըսի ինքնիրենս. արձանագրութիւնը կը յանձնեմ պաշտօ- նատունը, թող անոնք հարցաքննեն մարդը: Այդպէս կը պահանջէր խոհեմութիւնը:

Օր մը, խոթողաղէմ, հաստափոր պաշտօնեայ մը ներս մտաւ իր ծառային հետ: Յայտնի էր, որ նաւային բաժնի բարձր պաշտօ- նատարներէն մէկն էր: Արտօնագիր չունէր ան. հոս հոն նայեցաւ,

եւ ծառային մէկ առ մէկ ցոյց տուաւ իր ուզած իրերը: Մօտեցայ իրեն ու — «Ներեցէ՛ք», ըսի, «կրնա՞մ ունենալ ձեր արտօնագիրը եւ ձեր անունը. ինձ պատուիրուած է արձանագրութիւն պահել»: Վերջին բառերը հազիւ արտասանած էի, ուժգին ապտակ մը երե- սիս: — «Անիծեա՛լ, դուն ս՞ով կ'ըլլաս որ ինձմէ արտօնագիր եւ ա- նուն կը պահանջես», ըսաւ ու պատրաստուած էր երկրորդ ապտակ մըն ալ իջեցնել, երբ ես հեռացայ քովէն: Ես այդպիսի ապտակ կե- բած չէի կեանքիս մէջ: Ամբողջ աշխարհը մթազնեցաւ աչքերուս առջեւ: Նոյն օրը դիմեցի կեդրոնական պաշտօնատեղին եւ բողոքեցի ընդհանուր տիրեկտորին: Մարդը, փոխանակ ցաւ յայտնելու, սաս- տիկ բարկացաւ. — «Դուք ինչպիսի ապուշ մարդ էք», ըսաւ, «ու- չադրութիւն չըրի՞ք անոր թեւի նշաններուն ու գլխարկին: Անիկա մեր ծովակալն է, Առմիրալ Սմիտը: Գացէ՛ք ձեր տեղը, ուրիշ առ- թիւ այդպիսի յիմարութիւն մի ընէք»: Բայց ուրիշ ատենուան հա- մար ժամանակ շարուեցաւ ինծի, որ նման յիմարութիւն ընէի. եր- կու օր վերջ, առանց որեւէ պատճառի՝ զիս դուրս նետեցին...:

Գողութեան, խարդախութեան ու ապականութեան այդ մղրո- տած միջավայրին մէջ ուրիշ ի՞նչ վարձատրութիւն կարելի էր սպա- սել:

Պատերազմի տեւողութեան ընթացքին՝ ինձ մտերիմ ամերի- կացի մը, ազնիւ ու պարկեշտ մարդ մը, որ լաւ արհեստաւոր էր եւ խողովակներու գործատեղին կ'աշխատէր, գործը ձգեց, հեռացաւ ու մտաւ Ռիչմընտի Քայլըր ընկերութեան նաւաշինարանը. — «Մէր Ալլընտը անկէլանոց է», ըսաւ մարդը. «եթէ ես հոս մէկ տարի եւս մնամ, կը խենթեմ»: Եւ մարդը իրաւունք ունէր:

Ես այդ մարդէն էր որ իմացայ շարք մը հետաքրքրական ու կարեւոր տեղեկութիւններ՝ Քայլըր նաւաշինարանի մասին: Այդ ըն- կերութիւնը կառավարութեան համար մարտանաւեր կը պատրաստէր Ռիչմընտի մէջ: Այստեղ 10,000 բանուորներով մարտանաւ մը ծովը կ'իջեցնէին ինը ամիսէն, մինչդեռ մեր պետական նաւաշինարանին մէջ 45,000 բանուորներ մէկ տարիէն հազիւ թէ նոյն տեսակի մար- տանաւ մը կրնային լրիւ ամբողջացնել: Փամանակի եւ նիւթականի ինչքա՛ն վիթխարի մսխում: Պատերազմը վերջանալուն պէս վերջա- ցա՞ւ այս մսխումը...: 1963 թուին, Փոլ Տրելլէզ ձերակուտականը բուն բողոք ներկայացուց ձերակոյտին մէջ եւ ըրաւ շարք մը ցըն- ցող մերկացումներ: Օղանաւային, նաւային եւ բանակի բաժան- մունքներուն տարեկան տասնեակ միլիոններով յատկացումներ կ'ըլ- լան, ըսաւ մարդը եւ այդ հսկայական գումարները կը մսխուին: Եւ ձերակուտականը փաստեր տուած էր, որոնք իրապէս ապշեցուցիչ էին: Գնուած են, ըսեր էր ձերակուտականը, սահագին քանակու-

թեամբ ձեռքի գործիքներ, ելեքտրական կազմածներ, որոնց գործածութեան բնաւ պէտք չէ զղացուած ու ասոնք այժմ կը ծախուին շատ չնչին գինով: Գործիքներ՝ որոնց երկոտասնեակին շուկայի գինը 3 տոլար է, անոնց համար արդէս քէ վճարուած է 28 տոլար եւ այժմ անոնք աճուրդով կը ծախուին 75 սէնթի: Եւ այսպէս շատ ու շատ փաստեր...: Ո՞վ լսեց, ո՞վ ուշադրութիւն դարձուց...: Մարդը միայն մէկ անգամ խօսեցաւ, ապա՝ սպառնալիքի տակ բերանը դոցեց ու լռեց...: Մինչ անդին՝ պետական պարտքը տարուէ տարի կ'աւելնայ: Ներկայիս՝ Մ. Նահանգներու պետական պարտքն է 310 միլիարտ տոլար...: Երէկ՝ Քորէայի պատերազմն էր, այսօր՝ Վիեթնամի պատերազմն է, որ 1965-էն ի վեր կը շարունակուի. վաղը եքէ՛ այդ պատերազմը դադրի, Ամերիկան պիտի սկսի ուրիշ պատերազմ մը, որովհետեւ ամէն տեղի, ամէն ատենուան համար պատերազմի անհրաժեշտութիւնը արգարացնող պատրուակը նոյնն էր ու նոյնը պիտի մնայ. — Կոմունիստական յարձակողականի վտանգը:

Այժմ, սիրելի ընթերցող, բացուած փակադիժը կը փակեմ ու կը սկսիմ շարունակել իմ ուսումնասիրութեան թելը:

ԲԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ, ԳԵՐՄԱՆԻՈՅ
ԵՒ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՁ

Աշխարհի սոցիալիստներն ու կապիտալիստները հիացմամբ կը նայէին Մ. Նահանգներու կատարած հրաշագործութեան, որ «նոր կապիտալիզմի» դարաշրջան մը բացեր էր բացիոնալիզացիայի գիծով եւ ժամանակ չկորսնցուցին անմիջապէս ընդօրինակելու եւ գործարկութեան դնելու գայն: Գերման Սոցիալ Դեմոկրատները մասնաւորապէս, խանդավառուած էին բացիոնալիզացիայի հեռանկարով: Թարնավ, Թրէյտ Իւնիթնի համբաււոր տեսարանը ըսաւ. — «Այժմ մենք պէտք է գանազանենք կապիտալիզմի դարգացման երկու դարաշրջանները. մէկը բրիտանական կապիտալիզմի շրջանն է, որ ընդարձակման հաւանականութիւններու սահմանի մէջ ամփոփուած էր, միւսը ամերիկեան կապիտալիզմի շրջանն է, որ ամենավերջին տեխնիքական յառաջդիմութեան հիմունքով կրնայ անվերջ ընդարձակուիլ ու զարգանալ: Առաջին դարաշրջանին՝ Մարքսն ու Լասալը երեւան եկան: Երկրորդ դարաշրջանին՝ Փորտը հրապարակ իջաւ եւ ան յազթեց Սոցիալիստ Մարքսին»: Գերման Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութեան համագումարին, որ տեղի ունեցաւ Քիէլի մէջ 1927-ին, սոցիալիստներու անուանի առաջնորդը՝ Հիլֆերտինկ յայտարարեց. — «Այժմ մենք կապիտալիստական նոր շրջանառութեան մը մէջ ենք, շրջանառութիւն մը, ուր վերջ գտած են վտանգաւոր մրցումներն ու

շուկայի կոյր օրէնքներու իշխանութիւնը եւ հոն այլեւս տիրական դարձած է անտեսութեան կապիտալիստական բնականոն կազմակերպութիւնը»: Իսկ Կաուցկիլի եւ Բերնշտայնի նման վերատեսչականները յայտարարեցին որ ներկայ սխառէմը «կազմակերպուած կապիտալիզմի եւ գեր-իմպերիալիզմի» սխառէմն է:

Մեծն Բրիտանիոյ մէջ վերատեսչականները եւս յարեցան բացիոնալիզացիային, որպէս նոր եւ աւելի զօրաւոր խարխիս դատակարգային համերաշխութեան համար: Բանուորական միութեան առաջնորդները այդպիսով համապորձակեցեցան գործարանատէրերուն հետ աւելի ու աւելի շահագործելու բանուորները: Իսկ արտադրողական արագութիւնը, որ տարածուեցաւ գրեթէ արդիւնաբերական բոլոր ճիւղերուն վրայ, պակսեցուց բանուորներու աշխատավարձերը եւ վատթարացուց անոնց ապրուստի պայմանները ու յառաջացուց 1929-1932-ի անտեսական ճգնաժամը: Նոյն այդ շրջանին Թրէյտ Իւնիթնիներու անգամներու թիւը փոխանակ աւելնալու՝ պակսեցաւ:

Բացիոնալիզացիան Սոցիալ Դեմոկրատներու շողշողուն պրոպականդով երբ այնքան դրաւիչ հեռանկար մը կը պարզէր, առատութեան, ճոխութեան հեռանկարը, իր զանազան ձեւերով տարածուեցաւ միւս կապիտալիստական երկիրներու մէջ — Ֆրանսայի, Իտալիոյ, Ճարմանի, Չեխոսլովաքիայի, Պեկինգայի, Սքանտինաւիայի եւ Աւստրալիոյ մէջ:

ԱՄԿԻ-Ի ԴԵՐԸ ԳԱՂՈՒԹԱՑԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՁ

Աշխատաւորական Միութեանց Կարմիր Ինտերնացիոնալը Կոմիտեանի նման իր գլխաւոր ուշադրութիւնը կեդրոնացուց Ասիոյ, Լատին Ամերիկայի եւ Արիւիկէի զաղութային եւ կիսազաղութային երկիրներուն վրայ: Արդէն 1921-ի առաջին Գոնկրէսին մէջ ԱՄԿ Ինտերնացիոնալը Լենինի շուշուղ կոչ ըրաւ որ «Թուրքիոյ, Հնդկաստանի, Քորէայի, Չինաստանի, Եգիպտոսի եւ ուրիշ երկիրներու բանուորները, որոնք շարաշար կը շահագործուէին կապիտալիզմի ճիրաններուն մէջ, մտնեն Կարմիր Թրէյտ Իւնիթնիներու կղաւթական ընտանիքի մէջ՝ միացեալ ուժերով տապալելու համար բուրժուազիայի համաշխարհային տիրապետութիւնը եւ անոր աւերակներուն վրայ հաստատելու աշխատաւորներու եւ ճնշուածներու արդիւնաբերական եղբայրութիւնը»:

ԱՄԿԻ-ի բոլոր գոնկրէսներուն մէջ զաղութային հարցը ամենէն կարեւոր ու կեդրոնական հարցն էր դարձեր: Չնայած մեծ զբոուարութեանց, բոլոր երկիրներէն պատգամաւորներ ներկայ կ'ըլլա-

յին համագումարներուն: Ամէն տեղ հաստատուած էր Ինտերնացիոնալի բերքօ, որուն կապուած էին նորակազմ Թրէյտ Իւնիընները, եւ անոնք էին որ կը տանէին դասակարգային պայքարը:

Այս բոլորին մէջ ԱՄԿԻ-ի կազմակերպութիւնը հիմնականապէս թէ՛ սկզբունքով եւ թէ՛ գործելակերպով՝ կը տարբերէր Թրէյտ Իւնիըններու Միջազգային Դաշնակցութենէն (ԹԻՄԴ): ԱՄԿԻ գաղութային երկիրներու մէջ իմպերիալիզմի դէմ մղուած պայքարը ամենէն կարեւորը կը նկատէր ո՛չ միայն այդ երկիրներու շահագործուող մասսաներու շահերու տեսակէտով, այլեւ իմպերիալիստական պետութեանց մէջ դասակարգային կռիւը աւելի ուժեղացնելու տեսակէտով, որովհետեւ համաշխարհային կապիտալիզմը յայտնապէս իր խարխիսները նետած է գաղութներու մէջ: ԹԻՄԴ կազմակերպութիւնը, սակայն, այդ ուղեգիծին հակառակ էր. ան կ'ընդունէր թէ՛ երբ կապիտալիստական երկիր մը ուրիշ տեղեր գաղութներ կը հաստատէ, ատով կը թեթեւցնէ իր երկրի բանուորներու բերք: Ատով այդ կազմակերպութիւնը սահմանափակուած մնաց եւրոպական ցամաքամասին մէջ:

7.— ՊԱՅՔԱՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ԵՒ ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐԸՆԻ
ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ (1919-1926)

Իմպերիալիզմի ծնունդ առած օրէն սկսեալ կապիտալիստներու հիմնական քաղաքականութիւնը եղած է շարքային բանուորներու մէջ գոյութիւն ունեցող հողերանական եւ այլ տարբերութիւնները օգտագործել, շահագործել անոնց տկարութիւնը եւ կործանել անոնց միասնականութիւնը թէ՛ քաղաքական եւ թէ՛ անտեսական գետիներու վրայ: Կապիտալիստներու այդ քաղաքականութիւնը աւելի բացայայտ պարզուեցաւ երբ բանուորական շարժումը սկսաւ ծաւալիլ եւ ուժեղանալ: Անոնք իրենց գործակալներու միջոցով քաղաքական, ձեռագործական, սեռային, ազգային, ցեղային եւ կրօնական խնդիրներով աշխատեցան բաժնել բանուորական մասսաները եւ շատ գիւրաւ յաջողեցան, որովհետեւ անոնք իրենց քով ամբարձած էին ոսկին, ոսկիի պահապան պետութիւնները եւ ոսկիին կապուած մարդկային բնութիւնը:

1919-1926-ի բրիտանական ընդհանուր գործադուլը, գործատէրերու կազմակերպած բաժանումները աշխատաւորական շարժման մէջ իրապէս որ լուրջ հանգամանք առած էին: Չհաշուելով քաղաքական ճակատի վրայ միջազգային բաժանումները, գոյութիւն ունէին չորս ինտերնացիոնալներ — Աշխատաւորական Միութեանց Կարմիր Ինտերնացիոնալը (ԱՄԿԻ), Թրէյտ Իւնիընի Միջազգային Դաշնակ-

ցութիւնը (ԹԻՄԴ), Անարխօ-Սենտիկալիստ Ինտերնացիոնալը եւ Քրիստոնէական (Կաթողիկէ) Թրէյտ Իւնիըններու Ինտերնացիոնալը: Ասոնցմէ դուրս կային նաեւ ուրիշ բանուորական միութիւններ, որոնք չէին հասած միջազգային կազմակերպութեան աստիճանին:

Այս բազմութիւ եւ խորացած բաժանումներուն դէմ երբ նկատի առնենք գործատէրերը, կը տեսնենք թէ՛ անոնց մէջ կազմուած է միջազգային ընկերակցութիւն մը, ուր բոլորովին անհետացեր են կրօնական, սեռային, ազգային կամ այլ տարբերութիւնները:

ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐԸՆԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐԸ

Թրէյտ Իւնիըններու միութեան հարցը ամէն անգամ լուրջ ուշադրութեան առնուած է բոլորին կողմէ, բայց ո՛չ մէկ ատեն լուծում գտած է: Ասոր զլխաւոր պատճառը կարելի է նկատել Սոցիալ Դեմոկրատներու եւ Կոմունիստներու միջեւ եղած բաժանումը: Բանուորը ինքնիրեն կը տրամաբանէ հետեւեալ կերպով. — «Սոցիալ Դեմոկրատները եւ Կոմունիստները բանուոր դասակարգի անտեսական ազատութեան համար կ'աշխատին, ինչո՞ւ անհաշտ են իրարու հանդէպ, ինչո՞ւ չեն միանար: Եթէ անոնք բաժանման հասկնալի պատճառ մը ունին, ուրեմն, իմ պատկանած միութիւնն ալ պատճառ մը ունի եւ չի կրնար միանալ միւս ինտերնացիոնալ միութեան»: Անտարակոյս շատ միամիտ տրամաբանութիւն է այս. բայց ի՞նչ ըսել որ բանուորները տակաւին հասած չէին այն դասակարգային գիտակցութեան՝ որով պիտի կարողանային ճշդել պատասխանատուները: Սոցիալ դեմոկրատներն ու կոմունիստները իրարու հետ չէին միանար, որովհետեւ չէին կրնար միանալ. անոնք չեն կրնար միանալ որովհետեւ նոյն դասակարգային շահուն պաշտպանութեան գիծին վրայ կեցած չեն: Սոցիալ դեմոկրատները Փրազներու վարպոյրին ետեւ՝ կեցած էին տիրող դասակարգի շահերու պաշտպանութեան գիրքին վրայ, իսկ կոմունիստները վարպոյր չունէին. անոնց խօսքերուն ու գործերուն միջեւ տարբերականութիւն չէր նշմարուեր. անոնց խօսքերուն կ'ընկերանար գործը, որովհետեւ կոմունիստները կեցած էին զտարիւն՝ դասակարգային պայքարի գիծին վրայ:

Ուրեմն, սխալած չենք ըլլար երբ ըսենք թէ՛ ուրիշ շարք մը աննպաստ պայմաններու հետ բանուորներու դասակարգային գիտակցութեան պակասը եւս խոշոր գեր ունէր բանուոր դասակարգի ուժերը բաժան բաժան պահելու գործին մէջ:

Իրարմէ բաժնուած չորս ինտերնացիոնալներէն զատ կային նաեւ ազգային գետնի վրայ կազմուած բանուորական միութիւններ, ազգայնական ժանգոտած տրամադրութիւններով: Այսպիսի միութե-

Թիւններ կազմուեցան Սոցիալ Դեմոկրատներու ձեռքով՝ Աւստրիոյ մէջ՝ Առաջին Աշխարհամարտի նախօրեակին:

Մ. Նահանգներուն մէջ, ուր օտարածին բանուորները Ամերիկայի բանուորութեան 60 տակոսը կը կազմէին, առեն մը Թրէյտ Իւնիըններու մէջ չէին ընդունուեր. վերջերք միայն, երբ անոնք ամերիկեան քաղաքացի դարձան, ընդունուեցան բանուորական միութեանց մէջ, բայց անոնց ճակտին վրայ կարծես դրոշմուած կը մնար «Կատտէմ ֆորիմէրը» (անիծեալ օտարականի) նախատալից անունը: Օտարածին բանուորներուն հետ, հաւասարապէս արհամարհելի էին նաեւ նեկրոները, որոնց քաղաքական իրաւանց շարժումը իր ամենայն ուժգնութեամբ՝ սկսաւ 1965 թուին:

Այս բոլորին վրայ աւելցնելու ենք նոյնպէս գործատէրերու կազմած բանուորական միութիւնները (company unions): Միացեալ Նահանգներու մէջ գործարանատէրերը, իրենք իրենց ձեռքով ուղղակի կազմակերպեցին, Ֆինանսաւորեցին իրենց գործարաններու բանուորները եւ այդ միութիւնները կանոնաւորեցին իրենց ասպետական հրահանգներով: Անոնք գործատէրերուն համար ամենէն վստահելի միութիւններն էին: Այս շարժումը սկսաւ 1886-ին, բայց 1900 թուականէն վերջն էր որ կապիտալիստները, տեսնելով որ բանուորներուն մէջ կը ծաւալէր յեղափոխական ոգին, աւելի հոգածու կերպով վերարբուեցան այդ ծրագիրին հետ, իսկ Առաջին Աշխարհամարտէն յետոյ՝ չնայած որ AFL-ը իրենց թիկունքին կանգնած էր, ամէն միջոց գործածեցին իրենց ուրոյն միութիւնները բազմացնել եւ անոնց շրջանակին մէջ առնել անկազմակերպ բանուորները: 1918 թուին այդօրինակ միութիւններու թիւն էր 250, մէկ միլիոն անդամներով. 1927-ին անոնց թիւը բարձրացաւ 900-ի, իսկ անդամներու թիւը երեքուկէս միլիոնի: Այդ կը նշանակէր թէ գործատէրերը երեք ու կէս միլիոն զինուորներ ունէին, որոնք պատրաստ էին կռուիլ յեղափոխական բանուորներու դէմ: Համիտեան բռնակալութիւնը կազմէր էր իր Ենիշերիներու բանակը, ամերիկեան կապիտալիստները կազմեցին իրենց Քրեմլընի Իւնիըններու բանակը, որ սարսափ տարածելու ընդթ ունէր:

ՊԱՅՔԱՐ՝ ԹՐԷՅՏ ԻԻՆԻԸՆԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1921-ին, Աշխ. Միութեան Կարմիր Ինտերնացիոնալը, համաձայն իր ծրագրին, յառաջ տարաւ աշխոյժ եւ յարատեւ արշաւ մը Թրէյտ Իւնիընի շարժման ամբողջական միութեան համար: Աշխատաւորական համերաշխ գործակցութեան նպատակին ուղղուած իր պայքարը կ'արտայայտէր պրոլետարական յեղափոխութեան ոգին: Ասոր ճիշդ հակառակ բեւեռին վրայ կեցած էին Թրէյտ Իւնիըններու

Միջազգային Ֆետերացիայի պահպանողական առաջնորդները, որոնք իրապէս կը ծառայէին բուրժուազիայի շահերուն:

Կարմիր Ինտերնացիոնալը ամէն երկրի մէջ աշխատեցաւ բազմացուած միութիւնը իրականացնել, բայց ամէն տեղ ան հանդիպեցաւ նոյն զժուարութեան, նոյն յամառ ընդդիմութեան: Միութիւն՝ դասակարգային համերաշխութեան սկզբունքով՝ այո՛, միութիւն միմիայն դասակարգային պայքարի ուղեգիծով՝ ոչ: Մարդիկը պարզապէս ըսել կ'ուզէին՝ միութիւն՝ կապիտալիզմը յաւերժացնելու համար, բայց ոչ-միութիւն՝ սոցիալիստական յեղափոխութեան համար: Բերլինի մէջ 1923-ին ընդհանուր գոնֆերանս մը դուժարուեցաւ միութեան նպատակով. Երկրորդ Ինտերնացիոնալի եւ Թրէյտ Իւնիըններու Միջազգային Ֆետերացիայի պատգամաւորները յայտարարեցին որ՝ «Ընդհանուր միութիւնը կ'իրականանայ միայն այն ատեն, երբ բոլոր կոմունիստները դուրս կը վտարուին բանուորական միութիւններէն»:

Կարմիր Ինտերնացիոնալը փոքրիկ յաջողութիւն մը ունեցաւ անդլիական Թրէյտ Իւնիըններու հետ, երբ 1925-ին կազմուեցաւ Անգլո-Ռուսական Պորհրդատու Կոմիտէն, միջազգային միութիւն մը յառաջացնելու վճռական նպատակով: Անգլիոյ աշխատաւորական միութեանց բիւրոկրատները այդպիսի անսովոր զիջում ընելու յօժարեցան երկու պատճառով. առաջին՝ որովհետեւ Անգլիոյ բանուոր դասակարգին մէջ յեղափոխական ոգին ուռճացեր եւ պատրաստ էր պայքարելու. երկրորդ՝ որովհետեւ Մեծն Բրիտանիան աչք ունէր իր ճիրանները երկարել չոն շահու աղբիւրներ ապահովելու համար: Անգլիական բուրժուամիտ աշխատաւորական առաջնորդները չէին ուզեր խաւաճեւել իրենց տէրերու քաղաքականութիւնը:

Անգլո-Ռուսական Պորհրդատու Կոմիտէն ուժեղ ազդեցութիւն ուզեց բանեցնել Ամսթերտամի Ինտերնացիոնալի վրայ համաշխարհային Թրէյտ Իւնիընի միութիւնը իրականութիւն դարձնելու համար: Դրութիւնը այն աստիճան ձգտեալ վիճակ ստացաւ որ նոյնիսկ Միացեալ Նահանգներու մէջ AFL-ը ահուզողի մասնուեցաւ: Ամսթերտամի Ընդհանուր Պորհուրդը, բրիտանական ինիըններու առաջնորդները քննադատեց իրենց հաշտուողական քաղաքականութեան համար եւ մերժեց ընդառաջել կատարուած առաջադրութեան: «Ո՛չ մէկ համաձայնութիւն», եղաւ իր պատասխանը: Մի քանի ամիս յետոյ՝ 1926-ի Մայիսին, յայտարարուեցաւ բրիտանական ընդհանուր գործադուլը, որ ուժգին երկրաշարժի նման ցնցեց անգլիական իմպերիալիզմը: Ինչպէս պիտի տեսնենք, այդ պայքարի ընթացքին Անգլո-Ռուսական Պորհրդատու Կոմիտէն, որ իր գոյութիւնը այլեւս չէր կրնար պահել, լուծուեցաւ:

8.— ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ (1926)

Հինգ միլիոն բանուորներով յայտարարուած այն ընդհանուր գործադուլը, որ 1926-ի Մայիսին, Մեծն Բրիտանիոյ քաղաքական ու տնտեսական շէնքերը հիմքերէն ցնցեց, համաշխարհային կապիտալիստական սիստէմի ընդհանուր տազնապի դարդացման արտայայտութիւնն էր: Պայթումը տեղի ունեցաւ կապիտալիստական սիստէմի ամենէն զգալուն մէկ հատուածին՝ Մեծն Բրիտանիոյ մէջ, որովհետեւ այդ կայսրութիւնը երկար ատենէ ի վեր սկսեալ էր կորսնցնել, իր տիրապետող վաճառականական միաւորութիւնը եւ աշխարհի շուկայի մէջ զիջել իր դիրքը աւելի աշխոյժ ու երիտասարդ մրցակիցներու՝ որպիսիք էին Միացեալ Նահանգները, Գերմանիան, Ճարտնը եւ ուրիշներ, ներառեալ բրիտանական զերիշխանութեան ներքեւ գրտնուող երկիրները: Առաջին պատերազմին «յաղթական» Անգլիան, այժմ կը տառապէր եւ ինկած էր այսպիսի դրութեան մէջ, ուրկէ դուրս գալու համար ելք մը փնտռած ատեն, ահա կը պայթէր մեծ փոթորիկը — ընդհանուր գործադուլը:

1880-ական թուականներէն սկսած համաշխարհային կապիտալիստական տնտեսութեան մէջ Մեծն Բրիտանիան արդէն բռնած էր վայրէջքի ճամբան, երբ իր դէմ ելած էին ուժեղ իմպերիալիստական հակառակորդներ: Անգլիական բանուորներու ապրուստի մակարդակը իջած էր ցած աստիճանի վրայ: Ատոր հետեւանքով տեղի ունեցաւ 1889-ի հռչակաւոր գործադուլը: 1911-14-ին տեղի ունեցաւ նաստիներու, երկաթուղային բանուորներու եւ անխահանքի բանուորներու գործադուլը, որուն մասնակցեցան երկու միլիոն գործաւորներ, որոնք յետոյ կազմեցին Եռեակ Դաշնակցութիւնը: Հին ճեղքուածքները հազիւ թէ զոցուեր էին եւ ահա պայթեցաւ 1926-ի գործադուլը:

Ընդհանուր ամամբ, պատերազմէն յետոյ, կապիտալիզմը յաջողեալ էր իրագործել «մասնակի, յարաբերական եւ ժամանակաւոր» կայունութիւն մը եւ Միացեալ Նահանգները մտեր էին հիւժախտաւոր ճոխութեան մէջ: Բայց այդպէս չէր Անգլիան. ան երկար ատեն սկսեալ էր տառապիլ արդիւնաբերութեան թուլացումով: 1913-ին, Անգլիան 89 միլիոն թոն անուխ կ'արտադէր, բայց 1924-ին միայն 60 միլիոն 650,000 հազար թոն անուխ կրցաւ արտադել: Երբ արդիւնաբերութիւնը կը կազար, միւս կողմէն կ'աւելնար անգործներու թիւը: Կառավարութիւնը իր ընկերային ապահովագրութեամբ բանուորներու թշուառութիւնը չէր կրնար մեղմել: Անգլիան՝ գործի վրայ եղողները եւս կը տառապէին, որովհետեւ գործատէրերը կ'ուզէին կրճատել աշխատավարձերը եւ աւելցնել աշխատուող ժամերը: 1925-

ին, վարչապետ Պոլտփին բացէն ի բաց յայտարարեց. — «Այս երկրի բանուորները պէտք է համակերպին աշխատավարձի կրճատումներուն՝ եթէ կ'ուզեն օգնել որ մեր արդիւնաբերութիւնը կանգնի իր ստաբերուն վրայ»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՓՈՒԹԱՑՆՈՂ ԴԵՊՔԵՐԸ

Մեծն Բրիտանիոյ արդիւնաբերական սիստէմին մէջ տնտեսական դժուարութեանց ծանրութեան կեդրոնը անուխի արդիւնաբերութիւնն էր: Բացառելով պատերազմի ժամանակաշրջանը, այս արդիւնաբերութիւնը շղթայուած էր օտար շափաղանցեալ մրցակցութեամբ եւ անուխի գործածութիւնը փոխարինող վառելանիւթերու դերածուծով, եւ Անգլիոյ տնտեսական տազնապը արդէն յառաջացեր էր այդ հանդամանքէն: Ածխահանքի բանուորները իրենց ապրուստի մակարդակը մարդկային հասկնալի աստիճանին վրայ պահելու համար, իրենց իրաւունքներուն պաշտպանութեան դիմին վրայ խնդրանքներու մերժումին հետեւանքով անցեր էին յարձակողականի: Եւ պէտք է ըսել թէ՛ անոնք 1911-14-ի շրջանին կրցան գոհացուցիչ նուաճումներ ընել, այնպէս որ Առաջին Աշխարհամարտին՝ գործատէրերուն եւ բանուորներուն միջեւ բաղխումի առիթ չներկայացաւ. իրերը ընթացան բնական հունէն: Պատերազմի վաղորդայնին, սակայն, իրերու դրութիւնը փոխուեցաւ: Կապիտալիստները անմիջապէս երբ իրենց գլուխը ազատեցին երկանաքարերու մէջէն, դարձան կատաղած վազրեր:

Այդպէս եղած է տիրող՝ պարագիտ դասակարգը՝ ամէն մէկ դարաշրջանին մէջ: Անոնք, թողունք խիղճը, եթէ երախտապիտական զգացում ունենային, ու մտածէին թէ՛ իրենց զաւակներուն կաթ ու սնունդ ճարողները, իրենց ճոխ սեղաններուն համադամ կերակուրներ պատրաստողները, իրենց փառաւոր կահկարասիքներ հայթայթողները, իրենց շքեղ պալատները կառուցանողները, զիրենք դուարձացընող երզիչները, պարողները, նուազածուններն ու դերասանները, իրենց ճոխութիւններն ու պերճանքները հոգատարողները, իրենց գանձարանները ոսկիներով լեցնողները, ասոնք բոլորը եղած են ընկերային աշխատանքի լծուած հովիւները, դիւղացիները, մշակողները, մասնագէտները, արհեստաւորներն ու բանուորները, այն ատեն՝ անոնք դուցէ պիտի կրնային իրենց մարդ ըլլալու դիտակցութեան ապացոյցը տալ: Մարդակերպ հրէշները, սակայն, շատ հեռու էին նման մտածումներէն. անոնց գործն է քրտինք ու արիւն ծծել եւ սփռուած դիակներու համայնապատկերով հրճուիլ: Խիղճ, ասպետական վեհանձնութիւն, լայնախոհութիւն, ազնուութիւն, անյիշա-

չարութիւն, ասոնք միայն բանուորներու քով կարելի է տեսնել: Բանուորները երբ նեղ դրութեան մասնուին իրենց թշնամիին ձեռքով, չեն սողար, կը համակերպին, չեն ազաչեր՝ կը լռեն: Իսկ երբ իրենք իրենց թշնամին ընճած են եւ եւ կը տեսնեն զայն ազաչողական գիրքի մէջ, կը մոռնան ամէն ինչ, կը հաւատան անոր խոստումներուն՝ կարծելով թէ ան եւս մարդ է, կը բռնեն անոր ձեռքէն եւ զայն ոտքի կը կանգնեցնեն, հոգ չէ թէ յետոյ՝ վերահասու կ'ըլլան իրենց սխալին՝ որ իրենք պէտք էր այդ թշնամիին գլուխը ջախջախէին ու փշրէին անոր սղնայարը, որպէսզի ան այլեւս խօսելու եւ շարժելու կարողութիւն չունենար: Եւ անոնք նման դասն փորձառութիւններ ունենալով հանդերձ՝ դարձեալ կը կրկնեն այդ սխալը: Եւ մինչեւ այսօր, բանուորական առաջնորդներէն ոմանք դեռ եւս կը շարունակեն հաւատարացնել որ այդ թշնամիին հետ կարելի է ապրիլ խաղաղ համակեցութեամբ:

Իայց թողունք այս խորհրդածութիւնները եւ անցնինք, շարունակելով մեր ձեռնարկած ուսումնասիրութեան թելը:

Նախապատերազմեան շրջանի գործադուլներէն յետոյ՝ պատերազմի ժամանակ եւ անկէ վերջ՝ երեք տարիներու ընթացքին, տեսակ մը զինագաղար եղաւ. 1921-ին հանքագործներն ու հանքատէրերը դարձեալ ուժգին բաղխում մը ունեցան: Հանքագործները դարձեալ գործադուլ յայտարարեցին, անոնք թէ եւ պայքարի ճակատին վրայ առանձին մնացին, պատեհապաշտներն ու աշխատաւորական միութեանց բիւրոկրատները թոյլ չտուին որ միւս Իւնիւրները միանան հանքագործներուն, բայց երկարատեւ իրենց պայքարներով բանուորները կրցան նորոգել տալ իրենց նախկին համաձայնագիրը եւ պահել 1911-14-ի ապրուստի եւ գործի պայմաններու գոյալիճակը:

1921-ի համաձայնութեան ժամկէտը կը լրանար 1925-ի Յուլիսին: Երբ այդ քրիթիքական ժամկէտը եկաւ, ամպերը դարձեալ բարձրացան Անգլիոյ երկնակամարին վրայ եւ տասը ամիս յետոյ սկսաւ պատմական մեծ ու ընդհանուր գործադուլը:

Ի՞նչ էր որ պատճառ եղաւ այդ վիթխարի գործադուլին:

Անգլիական բանուորութեան գրեթէ 30 տոկոսը մատնուած էր անգործութեան, իսկ գործի վրայ եղողներուն ալ գործատէրերը կը հարկադրէին որ ընդունին իրենց պայմանները. — Եօթը ժամեայ աշխատօրուայ ընդունուած օրէնքը փոխել ութը ժամեայ աշխատօրի եւ աշխատավարձերը կրճատել 15-48 առ հարիւր: Ածխահանքի բանուորները մերժեցին ընդունիլ առաջարկուած պայմանները: Հանքատէրերը մնացին անդրդուելի. անոնք պատրաստ էին ածխահանքերը բոլորովին փակուած յայտարարել, որովհետեւ ածուխը լեռնակուտակ բարձրացր էր ածխահանքերու բերաններուն առջեւ եւ շուկա-

յի վրայ պահանջ չկար: Դրութիւնը նոյնն էր Գերմանիոյ, Պելճիգայի եւ Ֆրանսայի մէջ:

Թրէյտ Իւնիւրնի Գոնկրէսի Կեդրոնական Խորհուրդը քուէարկեց ի նպատակ ածխահանքի բանուորներուն: Հանքատէրերը յայտարարեցին որ մինչեւ Յուլիս 30-ի օրը եթէ իրենց պայմանները չընդունուին, հանքերը պիտի գոցուին: Այդ ճգնաժամային դրութեան մէջ Պուլտիինի կառավարութիւնը որպէս անաչառ ու անկողմնակալ միջնորդ՝ Թագաւորական Յանձնախումբ մը կազմեց դրութիւնը ուսումնասիրելու համար եւ բացէն ի բաց ազգարարեց հանքատէրերուն որ հանքերը պիտի շփակուին: Բանուորները կառավարութեան այդ քայլը իրենց յազմանակի նախադրամանը համարելով, եռանդով փարեցան իրենց գործադուլի ծրագիրին, եւ որոշեցին իրենց պահանջներէն մագաչափ չզիջիլ: Իրողութիւնը, սակայն, այն էր որ կառավարութիւնը տեսնելով գործադուլային ծաւալուն նախապատրաստական աշխատանքները, կ'ուզէր խոստումներով ժամանակ շահիլ պայթելու պատրաստուող գործադուլը ձախողեցնելու մտադրութեամբ:

Յուլիսին յաջողող ամիսները Պուլտիինի կառավարութեան համար հակա-գործադուլային գործողութեանց յատկացուած ամիսներ եղան: Անակնկալ պատահարները զիմազրաւելու համար սկսան աշխոյժ պատրաստութիւններ. հաստատուեցան վայրաշարժներու կայարաններ. հաւաքուեցան բեռնատար օթոններ, մարդատար օթոններ եւ զօրահաւաքի ձեռնարկուեցաւ կազմելու գործադուլ աւրողներու բանակներ: Փառք անգործներու անհամար բազմութեան, գործադուլ աւրողները շուտով արձանագրուեցան կազմուած բանակին, որ կը կոչուէր OMS — Մատակարարման Հաւասարակշռութեան Կազմակերպութիւն:

Մինչ կառավարութիւնը աշխուժիւ լծուած էր այս գործողութեանց, որոնց ընդթը յայտնի էր, Թրէյտ Իւնիւրնի պատեհապաշտ առաջնորդները երկերեսանի քաղաքականութեան կը հետեւէին. մէկ կողմէն կը սիրաբանէին գործատէրերուն հետ, միւս կողմէն, քանի որ չէին կրնար գործադուլը կասեցնել, ստուերի պէս կը հետեւէին մասսայական շարժումին, նոյն առեւն կը հակառակէին Եռեակ Գաշնակցութեան վերահաստատումին եւ կ'ուզէին սահմանափակել Կեդրոնական Խորհուրդի հեղինակութիւնը:

1926 Մարտ 11-ին, Թագաւորական Յանձնախումբը մէկ կողմ նետելով իր «անկողմնակալի» դիմակը, եկաւ յայտարարել որ ածխահանքերու եւ ծանր արդիւնադրձական աղբիւրներու հակողութիւնը կառավարութիւնը ստանձնած ըլլալով, գործադուլ կը նշանակէ ապրտամբութիւն՝ ուղղակի կառավարութեան դէմ:

Կառավարութիւնը ամէն կերպով կ'ուզէր արգիլել գործադու-
լը, բանուորները անհամբեր՝ պատրաստ էին շարժելու: Ասոր վերջ-
նական արդիւնքն այն եղաւ որ Մայիս 3-ի կէս գիշերին, յայտարար-
ուեցաւ ազգային ընդհանուր գործադուլի հրամանը: Աձխահանքի
բանուորներն արդէն գործադուլի վրայ էին, անոնց միացան մէկ մի-
լիոն բանուորներ: Գործադուլային երկրորդ ակիբը բարձրացաւ Մա-
յիս 11-ին. երեք ու կէս միլիոն բանուորներ գուրս եկան գործարան-
ներէն: Հիանալի էր բանուորներու ցոյց տուած միասնական ոգին.
որակաւոր բանուորները կողք կողքի կեցեր էին հասարակ բանուոր-
ներու հետ: Նոյնիսկ զբասնեակներու ճերմակ օձիքաւոր գործա-
ւորները միացան գործադուլին: Դադար առին երկաթուղիները, հան-
րակառքերը, թաքսիներու երթեւեկութիւնները, լրագիրները: Անգ-
լիական հզօր իմպերիալիզմը բոլորովին անդամալոյժ եղած՝ հոգե-
վարքի հոնդիւններ կ'արձակէր: Անոնք որ կ'արհամարհէին բանուոր-
ութեան ուժը, այժմ կը տեսնէին թէ որքան սահմակեցուցիչ ու ան-
ուելի էր այդ ուժը:

Կառավարութիւնը իր ձեռքի տակ մնացած ուժերով սկսաւ
յարձակուժ գործել գործադուլաւորներու վրայ: Նախ գործադուլ աւ-
րող բանակը շարժման մէջ դրաւ, մասնաւորապէս ուտեստեղէններ
հոս ու հոն փոխադրելու համար, ապա զինուորներուն հրաման ը-
րաւ սարսափեցնել գործադուլաւորները, բայց կրակ չբանալ անոնց
կրօնքին, միայն ռատիոններով հնչեցուց «քաղաքացիական պատերազ-
մի» ահազանգը: Եւ իրօք քաղաքացիական պատերազմը կը թուէր
անխուսափելի. երեք ու կէս միլիոն գործադուլ արողներու բանակը
կառավարութեան զօրքերուն հետ պիտի ճակատէր հինգ միլիոն գոր-
ծադուլաւորներուն դէմ: Ամենէն աւելի ահ ու դողի մատնուած էին
բիւրոկրատիկ ու պատեհապաշտ բանուորական առաջնորդները, ո-
րոնք չէին կրցած իրենց տէրերու ծառայութիւնը լրիւ կատարել եւ
այժմ ալ չէին կրնար բանուորները համոզել որ վերագառնան իրենց
գործին: Այդ առաջնորդները այնքան ժանդոտած հոգեբանութեամբ
տարուած էին, որ Սովետ բանուորներու զրկած 350,000 ստերլինկ
ոսկիի օգնութեան նուէրը մերժեցին ընդունիլ եւ ետ վերագարձուցին:

Ազգային ընդհանուր գործադուլը եթէ մի քանի օր տեւողու-
թեամբ սոսկական բողոքի գործադուլ մըն է, անտարակոյս իր էու-
թեամբ յեղափոխական գէնք մըն է, որ ազգանշանը կուտայ բանուոր
դասակարգին եւ կապիտալիստ դասակարգին միջեւ խմորուող քաղա-
քական բաղխումին: Երբ կազմակերպուած աշխատաւորութիւնը երկրի
արդիւնաբերութիւնը կը կանգնեցնէ, կառավարութեան իրաւունքը որ-
պէս այդ երկրի իշխողը, երկու դասակարգերու ներկայացուցիչները

խորհրդաժողովի հրաւիրել եւ անոնց փոխադարձ զիջումներով հար-
ցը կարգադրել ու վերջացնել է: Պոլտվինի կառավարութիւնը, սա-
կայն, այդպէս չըրաւ. ան ուղղակի կեցաւ կապիտալիստ դասակարգի
կողմը եւ յարձակուժն ըսաւ բանուորութեան դէմ: Անոր միացան
Թրէյտ Իւնիլընի առաջնորդները: Այդ երկուքին ալ նպատակը նոյնն
էր. անպայմանական անձնատուութիւն. բանուորները պէտք է անձ-
նատուր ըլլային իրենց տէրերուն — կապիտալիստներուն: Բայց
բանուորները Սոցիալիստական կառավարութիւն հաստատելու նը-
պատակ չունէին, անոնց միակ նպատակն էր բարելաւել իրենց ապ-
րուստի պայմանները: Այն պահուն, երբ գործադուլի պատեհապաշտ
առաջնորդները շուարած էին իրենց ընկիւններուն մէջ, կառավարու-
թիւնը հրահանգեց անոնց, որ ռատիոններու միջոցով յայտարարեն
թէ գործադուլը վերջացած է եւ բանուորները վերագառնալու են ի-
րենց գործի գլուխը: Եւ կառավարութեան հլու կամակատարները
դաւաճանեցին իրենց պաշտպանած դասակարգին: Շփոթութիւն յա-
ռաջացաւ գործադուլաւորներուն մէջ: Նախ երկաթուղային բանուոր-
ները անձնատուր եղան, ապա՝ կարգաւ միւսները: Զուր տեղը կո-
մունիստները եւ ձախակողմեան փոքրամասնականները կ'աղաղա-
կէին որ եղածը բացայայտօրէն մատնութիւն էր. ռատիոններու կողը
աւելի ազդու էր քան թէ մի քանի անհատներու խեղդուկ ձայնը:

Բանուորներու այս պարտութեամբ գործատէրերու դիրքը ա-
ւելի ուժեղացաւ: Անոնք նոր օրէնք մը անցուցին. — «Թրէյտ Իւնիլըն-
ներու Օրինագիծը», որու տրամադրութեան համաձայն վերջնակա-
նապէս կ'արգիլուէր ընդհանուր գործադուլը: — Այն որ գործադուլ
կազմակերպելու փորձ կ'ընէր, պիտի դատապարտուէր երկու տար-
ուայ բանտարկութեան: Թրէյտ Իւնիլընները իրաւունք պիտի չունե-
նային իրենց դանձարանին մէջ անձեռնմխելի հիմնադրամ պահել,
անդամատուրքերը գանձուելու էին միմիայն պաշտօնեաներու ամսա-
թոշակները հոգալու համար: Այդ արգելիչ օրէնքը մասնաւորապէս
չեչուած էր անոր համար որ բանուորները գործադուլի տեսն նիւ-
թական նպաստ ստանալու յոյս չունենային: Այդ օրէնքը կ'արգիլէր
նոյնպէս, որ բանուորները պատկանին Աշխատաւորական Կուսակ-
ցութեան:

Այդ ձախող գործադուլին ամենէն եղբրական հետեւանքը այն
եղաւ, որ Անգլո-Ռուսական Սորհրդատու Կոմիտէն կազմալուծուե-
ցաւ: Իսկ գործադուլը աւերելու համար կազմակերպուած բանակի
բանուորները, որոնք դաւաճանի դիրք բռնած էին իրենց եղբայրնե-
րուն հանդէպ, մնացին անգործութեան սիւնին կապուած իրենց հին
վիճակին մէջ:

9.— ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ (1929-1932)

Կապիտալիզմը բոլոր երկիրներուն մէջ միշտ ունեցած է փոփոխակիօրէն շրջանային արդիւնաբերական աշխուժութիւն եւ անտեսական ճգնաժամ: Շրջանային ճգնաժամերը կը յառաջանան այն ատեն՝ երբ կապիտալիստական արտադրողականութիւնը կը զարգանայ, մինչ շուկայի սպառման պահեստը կը պակսի: Արդիւնաբերութեան մէջ վայրէջքը կը շարունակուի, մասսայական ձեւով գործաւորները դուրս հանելով եւ յաւելեալ ապրանքներու փճացումով. այն ատեն արտադրողական ուժերը սպառման պահանջներէն աւելի ցած աստիճանի վրայ կ'իջնեն: Անկէ յետոյ կը սկսի նոր շրջանառութիւնը կրկնուիլ: Անգլիա, Մ. Նահանգները, Գերմանիա, Ճարման եւ ուրիշ կապիտալիստական երկիրներ այդ շրջանային ճգնաժամերն ունեցեր են, այնպէս որ անոնք ստացեր են միջազգային բնոյթ:

1929-1932-ի անտեսական ճգնաժամերու սաստկութիւնը պարզեց հետեւեալ իրողութիւնները.— որ իմպերիալիստական պատերազմը իր հետեւանքներով աւելի արագացուց կապիտալիզմի քայքայումը եւ աշխարհի հաւասարակշռութեան անկայութիւնը, որ ան ծընունդ տուաւ նոր պատերազմներու եւ նոր յեղափոխութիւններու, որ այլեւս կապիտալիզմը չէր ներկայացներ աշխարհի անտեսութեան միակ եւ համապարփակ սիստէմը, որ կապիտալիստական անտեսական սիստէմին քով սոցիալիստական սիստէմը՝ որ օրէ օր կ'աճէր, կը բարգաւաճէր եւ իր գոյութեամբ կը պարզէր կապիտալիզմի նեխածութիւնը, արդէն բացեր էր նոր դարաշրջանի դուռը, որ իմպերիալիստական պատերազմը եւ Սորհրդային Միութեան յաղթութիւնը դադութային եւ կախեալ երկիրներու մէջ հաստատուած իմպերիալիզմի հիմքերը խախտեր էին, որ, վերջապէս, իմպերիալիզմի իշխանութիւնը այդ երկիրներու մէջ սկսեր էր տեղի տալ զարթնող ժողովուրդներու յեղափոխական գրոհումներուն առջեւ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐՈՒ ԱՒԵՐՆԵՐԸ

Տնտեսական մեծ ճգնաժամը նախ սկսաւ Լեհաստանի եւ Պալքաններու մէջ, բայց ան սոսկալի ալիքաւորումով տարածուեցաւ, երբ 1929-ին Մ. Նահանգներու սակարանին դռները խորտակեց: Անկէ յետոյ ան արագօրէն արշաւեց կապիտալիստական աշխարհին մէկ ծայրէն միւսը: Մ. Նահանգներու տնտեսական շէնքը, որ տեւական ճոխութեան ու հաստատունակութեան հոչակ ունէր, 1929-ի հարուածին տակ ջախջախուեցաւ: 1932-ի վերջերը աւելի քան 160 միլիառ տոլար արժող սակարանը սնանկացաւ. հիմնական արդիւնաբերու-

թեան մէջ արտադրութիւնը 50 տոկոսով պակսեցաւ. 5761 պանքաներ փակեցին իրենց դռները, Փարմային արտադրութիւնները ութուկէս միլիառ տոլարէն իջան չորս միլիառ տոլարի աշխատավարձերը կըրճատուեցան 45 տոկոսով. իսկ 1933-ին 18 միլիոն բանուորներ՝ անգործութեան մտրակով քշուեցան փողոցները: Ամերիկայի աշխատաւորական մասսաներուն մէջ նման երեւոյթ տեսնուած չէր: Նոյն երեւոյթը տիրական էր նաեւ Գանատայի մէջ, ուր արդիւնաբերութիւնը նոյնպէս անգամալուծուած էր, փողոցները քշուած էին երկու միլիոն բանուորներ:

Գերմանիոյ մէջ նոյնպէս տնտեսական ճգնաժամը աւերիչ դերի մէջ էր: Արդիւնաբերական ընդհանուր արտադրութիւնը նուազեր էր 45 տոկոսով: 1932-ին կառավարական վիճակագրութիւնը ցոյց կուտար որ 5,250,000 ամբողջապէս անգործ բանուորներ կային, բայց իրապէս անգործներու թիւը կը հասնէր ութը միլիոնի: Արէնդ, գերման Սոցիալ Դեմոկրատներու թերթը յայտարարեց որ 17 միլիոն անձեր Գերմանիոյ մէջ նպաստընկալներու շարքը մտեր էին եւ ամիսը կը ստանային միայն երեքէն չորս տոլար: Իսկ աշխատանքի վրայ մնացող բախտաւոր բանուորները, որոնք 1929-ին 42 մարք շաբաթավարձ կը ստանային, 1932-ին այդ աշխատավարձը մկրատուեցաւ մինչեւ 21 մարքի:

Մեծն Բրիտանիոյ մէջ արդիւնաբերութեան արտադրութիւնը կըճատուեցաւ 25 տոկոսով: Էտոն կ'ըսէ որ Անգլիոյ մէջ արդիւնաբերութեան վայրէջքը համեմատաբար աւելի դանդաղ ըլլալուն՝ պատճառը այն էր որ այդ երկիրը Առաջին Աշխարհամարտէն ետք երբեք չկրցաւ իր ուժերը հաւաքել, եւ մտած էր ճգնաժամային դրութեան մէջ երբ վրայ հասաւ մեծ տաղնապը: Պաշտօնական վիճակագրութեան համաձայն՝ 1929-ին, անգործներու թիւն էր 1,165,000. 1932-ին այդ թիւը եղաւ 2,970,000. այս թիւին վրայ պէտք է աւելցընել 800,000 անգործներու թիւը, որ դուրս կը մնայ պաշտօնական ցուցակէն: Ասոնցմէ զատ կային նաեւ մէկ կամ երկու միլիոն բանուորներ՝ որոնք բացառիկ՝ կարճ ժամերով կը գործէին: Աշխատավարձերը նոյնպէս մեծ չափով կըճատուած էին:

Տնտեսական ճգնաժամը մեծ հարուած տուաւ նաեւ Ճարման: 1932-ին՝ 2,840,000 ամբողջական ժամերով գործող բանուորներ ունէր Ճարմանը, իսկ երեք միլիոն բանուորներ՝ որոնք մասնակի ժամերով կ'աշխատէին: Կառավարութիւնը բոլորովին անգործ բանուորներուն համար նպաստաբաշխ սիստէմ չունէր: Ֆրանսայի մէջ 1932-ի Յունիսին կային 2,300,000 անգործ բանուորներ եւ 5,618,800 մասնակի ժամերով գործողներ: Նոյն դրութիւնը տիրական էր Իտալիոյ,

Աւստրիոյ, Լեհաստանի, Չեխոսլովաքիոյ, Պեյճիզայի, Սլոնիոյ, Սքանտինաւիոյ, Աւստրալիոյ եւ ուրիշ կապիտալիստական երկիրներու մէջ: Տնտեսական ճգնաժամը հարուածեց նաեւ գաղութային եւ կիսագաղութային երկիրները: Չինաստանի, Հնդկաստանի եւ Ասիական միւս երկիրներու մէջ անգործներու թիւը անհամեմատ բարձր աստիճանի հասաւ. գիւղացիական արդիւնաբերութիւնը դրեթէ անզամալուծուած էր եւ մասսայական թշուառութիւնը՝ տարածուած ամենուրեք: Լատին Ամերիկայի մէջ տնտեսական տաղանապը հասեր էր եղերական աստիճանի. այդ երկիրներու արդիւնաբերութիւնն ու օտար առուտուրը մկրատուած էին 50-80 տոկոսով:

ՍՈՎԵՏՆԵՐՈՒ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Մինչ կապիտալիստական երկիրներու մէջ տնտեսական տագնապը ժողովրդական հոծ զանգուածները ընդհանուր թշուառութեան ու շուարումի մատնած էր, անդին՝ սոցիալիզմը իր տնտեսական գերաճող վերելքով հակապատկեր մը կը ներկայացնէր, հակապատկեր մը՝ որ ցոյց կուտար սոցիալիստական սիստէմի անվիճելի գերազանցութիւնը: Կապիտալիստական արտադրութիւնը բոլորովին կորսնցուցեր էր իր ուժգնութիւնը, մինչդեռ Խորհրդային Միութեան արտադրողութիւնը 81 առ հարիւր աճեր էր եւ այդ՝ ակնբախ հակադրութիւն մըն էր, որ կը ցցուէր կապիտալիստական աշխարհի դիմաց: Խորհրդային Միութիւնը լրացուցեր էր իր Ա. հնգամեայ ծրագիրը եւ մտեր էր երկրորդ հնգամեակի շրջանը. 64 միլիարդ ռուբլի գրած էր ծանր արդիւնաբերութեան, փոխադրական միջոցներու զարգացման եւ երկրագործութեան մէջ: Մինչդեռ կապիտալիստական աշխարհին մէջ տասնեակ միլիոններով բանուորներ մատնուած էին անգործութեան: Խորհրդային Միութեան մէջ՝ արագօրէն աճող արդիւնաբերական սիստէմը ո՛չ միայն ամէն մարդու գործ կը հայթայթէր, այլեւ կը շեշտէր աշխատուոր ձեռքերու պակասը:

Փտախտաւոր կապիտալիզմի եւ ծաղկող սոցիալիզմի միջեւ յառաջացած պատմական հակադրութիւնը աշխարհի կապիտալիստները եւ անոնց խնկարկու սոցիալ դեմոկրատ գործակալները շուարումի մատնեց, որովհետեւ անոնք մարդկային շահագործման եւ ճնշման ծառայող կապիտալիստական սիստէմին առջեւ ծնկաչոք՝ վաղուց յայտարարած էին որ Սովետական սիստէմը փամանակավրէպ սիստէմ է, որ դատապարտուած է ձախողանքի. այժմ, սակայն, անոնք կը տեսնէին որ այդ սիստէմը նոր ու փառաւոր դարազուլուս մը կը բանար մարդկութեան համար եւ բոլոր տանջուողներն ու շահագործուողները իրենց յոյսի աչքերը յառած էին անոր:

ԱՆՕԹՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԿՈՒԻՒ՝ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ

1929-1932-ի տարիներուն, առաջաւոր 15 երկիրներու մէջ 18 հազար 794 գործազուլներ տեղի ունեցան, որոնց մասնակցեր էին 8,515,000 բանուորներ. այդ գործազուլներու ընթացքին աշխատութեան կորուստը եղաւ 84,768,700 օր: Ասոնցմէ 1468 գործազուլները տեղի ունեցան Անգլիոյ մէջ, 2700ը՝ Մ. Նահանգներու մէջ, 3601 գործազուլներ Ֆրանսայի մէջ, 1304՝ Գերմանիոյ մէջ, 688 Չեխոսլովաքիոյ մէջ, 6988՝ Ճարմանի մէջ, 1533՝ Չինաստանի մէջ եւ 580՝ Հնդկաստանի մէջ: Սոյն գործազուլներուն մեծ մասին առաջնորդներն էին ձախակողմեան տարրերը, Աշխատաւորական Միութեանց Կարմիր Ինտերնացիոնալի (ԱՄԿԻ) ուժերը: Այդ գործազուլներուն մէջ ամենէն աչքառու եւ կարեւոր գործազուլներն էին անխահանքերու, հիւսուածեղէնի եւ երկաթուղիներու բանուորներու գործազուլները: Գործազուլներէն շատերը իրենց դէմ կանգնած դատն զինուած ոստիկաններ եւ զինուորներ, որոնք չէին խնայեր բանուորներուն, որովհետեւ պետութիւնը կեցած էր կապիտալիստներու կողքին՝ անոնց շահերը պաշտպանելու դերով:

Թրէյս Իւնիլընի Միջազգային Ֆետերասիոնի առաջնորդները հակագործազուլային քաղաքականութեան կը հետեւէին եւ ամէն միջոց կը գործածէին շարքային բանուորները գործազուլներէն հեռու մնալու համար, մինչդեռ գործատէրերը ամէն տեղ կը կրճատէին աշխատավարձերը եւ ալ աւելի կ'ուզէին վատթարացնել գործաւորներու դրութիւնը: Նոյն քաղաքականութեան կը հետեւէր նաեւ Սոցիալ Դեմոկրատներու աջ թեւը, ամէն մէկ կապիտալիստական երկրի մէջ: Մաթիու Վոլըր, Ամերիկայի AFL-ի փոխ նախագահը, մեծ խանդավառութեամբ ողջունեց այն աննախընթաց իրողութիւնը, երբ մէկ միլիոն երկաթուղային բանուորները սիրայօժար ընդունած էին 10 տոկոսով աշխատավարձի զեղջը՝ առանց գործազուլի դիմելու:

Այդ ընդհանուր ճգնաժամերու շրջանին, մինչ Սոցիալ Դեմոկրատները իրենց ազդեցութեան տակ առած էին բանուորական միութեանց մեծ մասը եւ զանոնք հեռու կը պահէին դասակարգային կոուլի ճակատէն, միայն ԱՄԿԻ-ն էր որ մնացեր էր որպէս բանուորներու հարազատ ու հաւատարիմ առաջնորդը: Ան էր որ Անգլիոյ, Մ. Նահանգներու եւ Գանատայի մէջ կազմակերպեց քաղցարչաւներ, որոնք ի վերջոյ հասարակաց ցոյցերուն տուին քաղաքական պայքարի բընոյթ: Հուլիի կառավարութիւնը Ամերիկայի անգործները զրազեցուց մասնակի գործերով եւ շատերը քնացուց նպաստներով: 1929-ին, Մեծն Բրիտանիոյ մէջ երկրորդ աշխատաւորական կառավարութիւնն էր որ գործի դուլիս կ'անցնէր: 1931-ին Բրիտանական Նաւարածնի

նաւաստիները գործադուլ յայտարարեցին: Սպանիոյ մէջ 1931-ին, բուրժուական յեղափոխութիւնը պսակուեցաւ յաջողութեամբ: Ճարոնի մէջ 1932-ին տեղի ունեցան ապստամբական ցոյցեր՝ զինեալ ուժերու մէջ, որոնք կը բողոքէին Չինաստանի ուղղուած արշաւանքին դէմ: Չինաստանի մէջ ուժղնութեամբ յառաջ կը տարուէր հակայեղափոխական ուժերուն դէմ սկսուած պատերազմը:

Այս բոլոր իրադարձութեանց ընթացքին, Հիթլեր կը պատրաստէր իր ծրագիրը, այսինքն՝ հաշտեցնել գործատէրերն ու բանուորները, վերջ տալ դասակարգային կռիւնն եւ ամէն ինչ ենթարկել պետական հսկողութեան: Ատիկա նացիզմն էր:

10.— ՊԱՅՔԱՐ ՖԱՇԻՉՄԻ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԷՄ (1929-1939)

Փաշիզմը՝ Ֆիննսական կապիտալի ամենէն իմպերիալիստ տարրերու կազմակերպած ծայրայեղ շովինիստական, ամենէն յետադիմական եւ բաց ճակատով տեւորիստական զիկտատորութիւն մըն էր, որ իր զանազան ձեւերով կը տարրերէր զանազան երկիրներու մէջ. բայց անոր ընդհանուր ձգտումը նոյնն էր. այսինքն՝ բռնի ուժով տապալել բուրժուական կառավարութիւնը, վերջ տալ հասարակական ձեւի ազատութեանց, վերջ տալ բանուորներու քաղաքական կուսակցութեանց, Թրէյտ Իւնիքներու եւ համագործակցական ընկերութեանց: Մեծ մոնոպոլիստները երբ տեսան թէ բուրժուա-դեմոկրատական ձեւերով ու մեթոտներով չեն կրնար յաւերժացնել իրենց գերակայ իշխանութիւնը, ձեռք առին բռնութիւնն ու Փաշիզմի ամբոխավարութիւնը, տնտեսական տագնապը միանգամ ընդմիշտ իրենց գլխէն հեռացնելու համար:

Փաշիստական շարժումը յառաջացաւ Առաջին Աշխարհամարտին հետեւող յեղափոխական ճգնաժամէն, երբ յետադիմականները իրենց զիկտատորաները հաստատեցին Հունգարիոյ, Լեհաստանի, Պուլկարիոյ, Ռումանիոյ, Յունաստանի եւ Եւրոպայի Արեւելեան եւ Կեդրոնական երկիրներու մէջ: Փաշիզմը առաջին անգամ յաղթանակեց Իտալիոյ մէջ 1922-ին, երբ Մուսոլինի զրութեան միահեծան տէրը դարձաւ: Ճարոնի Փաշիզմը հրապարակ իջաւ երբ այդ երկրի իշխողները 1931-ին արշաւեցին Մանչուրիա: Պարզ էր որ Փաշիզմը կապիտալիզմի ընդհանուր տագնապի արդիւնքն էր. կապիտալիստները ուրիշ ելքի ճամբայ չունէին 1932-ին, զիրենք չլիթայող դժուարութիւններէն ազատուելու համար: Բայց մասնաւորապէս 1933-ին, երբ Հիթլեր Գերմանիոյ մէջ իշխանութեան գլուխ անցաւ, Փաշիստական արշաւը սոսկալի բռնութեան հանգամանք առաւ: Յետադիմականներու նպատակն էր ամբողջ Եւրոպան, ապա բովանդակ աշ-

խարհը առնել Փաշիստական ռեժիմի տակ: Մարդկութիւնը այդպիսով պիտի ճակատէր աւերիչ պատերազմի մը եւ Փաշիստական ստրկութեան:

Յետադիմական այդ մեծ յարձակողականին առջեւ հարիւրաւոր կոմունիստ բանուորներ սպաննուեցան եւ հաղարաւորներ բանտարկուեցան: Հիթլերի դիրքի ուժեղացումին հետ ուժեղացաւ նաեւ Մուսոլինի ռեժիմը՝ Իտալիոյ մէջ:

Սոցիալ Դեմոկրատները եւ Մարքսիզմ-Լենինիզմի հետեւողները համաձայն իրենց հիմնական սկզբունքներու տարրեր բնոյթին, իրարու հակառակ դիրք բռնեցին Փաշիստական վտանգին դէմ: Աջակողմեան Սոցիալ Դեմոկրատները, որոնց տեսութիւնը ու քաղաքական դաւանանքը հիմնուած էր այն ենթադրութեան վրայ որ կապիտալիզմը տրամաբանական, տեւական հիմք ունեցող հասարակական շէնք մըն է, զոր պէտք է պահել ամէն գնով, կը ձգտէին կտորել բանուորներու զիմադրական-յեղափոխական ողին եւ Փաշիստներուն ճամբան հարթել: Չուր տեղը չէր որ Կոմունիստները այդ ատեն զանոնք անուանեցին «Սոցիալ Փաշիստներ»: Սոցիալ Դեմոկրատները Թրէյտ Իւնիքներու առաջնորդներուն հետ ընկերակցարար մասնակցեցան զանազան Փաշիստ եւ Փաշիստական գոյնի կառավարութեան խաչակրութիւններուն եւ ամօթալի դաշինք կնքեցին իտալական Փաշիստներուն եւ գերմանական նացիներուն հետ:

Միւս ճակատին վրայ, յեղափոխական Կոմիտները եւ Աշխ. Միութեան Կարմիր Ինտերնացիոնալը, մահացու թշնամիները կապիտալիստական սխտէմին, համաշխարհային բանուորներու ռազմական ողիով լեցուած՝ անընդհատ պայքար մղեցին Փաշիզմի ըսպառնալիքին դէմ: Անոնք էին որ բոլոր մեծագոյն ճգնաժամերուն մէջ համաշխարհային բանուորական շարժման տուին էական առաջնորդութիւնը: Եւ այդպիսով հակա-Փաշիստական, հակապատերազմական պայքարը տարածուեցաւ բոլոր երկիրներու մէջ:

ՆԱԽ ՎԵՐ ԱՌՆԵՆՔ ԳԵՐՄԱՆԻԱՆ

Մենք նախապէս ըսինք որ 1929-32 տարիներուն Գերմանիոյ մէջ տնտեսական տագնապը շատ ճնշիչ հանգամանք առած էր եւ գերման կապիտալիստները տակաւին կը կրէին Վէրսայի Դաշնադրութեան ծանր լուծը: Գերմանիան գեռ չէր վճարած պատերազմական վնասուց հատուցման իր պարտքերը, եւ ամենէն զէչն այն էր որ ան կորսնցուցեր էր եւրոպական եւ զաղութային երկրամասերը, որոնք իր շնչերակներն էին: Այդ տագնապալից դրութեան մէջ, ա-

հարեկ պրոլետարական յեղափոխութենէն, գերման մեծ կապիտալիստները միակ ելքի ճամբան գտան Փաշիզմի մէջ. այսինքն՝ բռնի ուժով խեղդել աշխատաւորական շարժումը, հաստատել յետադիմական դիկտատուրա մը՝ եւ պատրաստուիլ իմպերիալիստական յարձակողական պատերազմի մը: Սոցիալ դեմոկրատներն արդէն կոտորած էին բանուորներու յեղափոխական ոգին, հետեւաբար ներքին ճակատին վտանգ չկար: Սոցիալ դեմոկրատները 1918-ին դաւաճաներ էին ընկերային յեղափոխութեան: Այն ատեն զինուորական պաշտօնեաները Նոսթէի շուրջը հաւաքուելով անխնայ զնդակահարեր էին յեղափոխական բանուորները եւ պատրաստեր էին կործնել Հիթլերի մասսայական կազմակերպութեան: Նացի Կուսակցութիւնը սկզբնական շրջանին շատ աննշան կուսակցութիւն մըն էր, բայց անսովոր արագութեամբ ծաղկեցաւ ու բազմաթիւ անդամներով ընդարձակուեցաւ: 1929-32 տարիներու տնտեսական տագնապի շրջանին. 1928-ին միայն 800 հազար քուէ շահեցաւ այդ կուսակցութիւնը. իսկ 1932-ին, շահեցաւ 13 միլիոն 618 հազար 547 քուէ: Հիթլերի ամբողջատրութեան գրաւութեամբ եւ Գրուպսի Ֆինանսական օգնութեամբ անոր շուրջը գունդագունդ հաւաքուեցան սեփականազրկուած քաղաքային միջակօրեայ դասակարգերը, թշուառացած գիւղացիները եւ սովալլուկ ու յետամնաց բանուոր դասակարգի հոգեբանութեամբ քայքայուած տարրերը:

Հիթլերի ստեղծած շարժումին աճման գլխաւոր պատճառը Սոցիալ Դեմոկրատներու բռնած բացասական դիրքն էր: Անոնք ո՛չ միայն 1918-ին դաւաճանեցին ընկերային յեղափոխութեան, այլեւ անկէ յետոյ ալ՝ շարունակ իրենց հոգածութեան առարկան ըրին Վէյմարի կառավարութիւնը եւ դասակարգային համագործակցութեան անփոփոխ ծրագիրը:

Սոցիալ Դեմոկրատներու հետ քայլ առ քայլ գործակցեցան Թրէյտ Իւնիքնի պատեհապաշտ աջ թեւի առաջնորդները:

Կոմունիստ Կուսակցութիւնը, իրնչստ թէլմանի գլխաւորութեամբ եւ կարմիր թրէյտ իւնիքնի կազմակերպութիւնը միասնաբար ժողովուրդին պարզեցին դասակարգային համագործակցութեան դատարկաբանութիւնը եւ հրաւէր կարգացին միասնական ճակատով պայքարիլ Փաշիզմի դէմ: Ամբողջ երկիրը պատրաստուելու էր ընդհանուր գործադուլի, երբ նացիները կազմակերպեցին սոսկալի դաւադրութիւն մը, 1933-ի Փետրուար 27-ին Ռայխստակի շէնքը հրդեհին յանձնեցին եւ այդ գործը վերագրեցին կոմունիստներուն: Ասիկա պատճառ եղաւ որ գերման ժողովուրդը լարուի կոմունիստներուն դէմ: Կոմունիստ Կուսակցութիւնը հռչակուեցաւ ապօրինի. յայտնի

կոմունիստներ ձերբակալուեցան, ոմանք զնդակահարուեցան: Հիթլեր յաղթական էր...:

ՖԱՇԻՍՏՆԵՐԸ ԿԸ ՏԻՐԱՆԱՆ ԱՒՍՏՐԻԱՅԻ

1934-ի Փետրուարին, երբ Հիթլեր Գերմանիոյ ղեկը առած էր իր ձեռքը, Հիթլերի օրինակին հետեւող Փաշիստներն ալ Աւստրիոյ իշխանութեան ղեկը առին իրենց ձեռքին մէջ: Քաղաքական այդ իրադարձութեանց ընդհանուր ձեւը գրեթէ նոյնն էր. կապիտալիստական սխառէմը մխրճուած էր խոր տագնապի մէջ, խոշոր կապիտալիստներու յոյսը ուղղուած էր Փաշիզմին, բանուորները պատրաստուած էին կռուիլ, եւ Սոցիալ Դեմոկրատիան, «փոքրագոյն շարիքին» նախապատուութիւն տալու քաղաքականութեամբ՝ յարած էր կապիտալիզմին եւ կ'ուզէր բանուորները խաղաղեցնելով զանոնք կապել իրենց տէրերուն:

Աւստրիական մեծ կայսրութիւնը Առաջին Աշխարհամարտէն յետոյ՝ քայքայուած էր, մնացած էր միայն չոր չէնք մը՝ վեց միլիոն բնակչութեամբ եւ կը ղեզերէր պարբերական տագնապներու մէջ: Բանուորները շատ լաւ կազմակերպուած էին, իսկ Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութիւնը երկրի ամենէն զօրաւոր կուսակցութիւնն էր, որ 72 ներկայացուցիչներ ունէր պարլամենտի մէջ: Աւստրիոյ Սոցիալ Դեմոկրատիան Օթթօ Պոէրի եւ Ալէքէի գլխաւորութեամբ «Աւստրո-Մարքսիզմի» մասնախտուկ տիպարը կը ներկայացնէր, Քրազարանութեամբ արմատական՝ գործունէութեամբ յետադիմական տիպար մը: Ինչպէս Գերմանիոյ եւ ուրիշ տեղերու մէջ, նոյնպէս Աւստրիոյ մէջ աւստրիական մարքսիստները, երբ պարագան ներկայացաւ որ ցուցադրելու էին իրենց յեղափոխական նկարագիրը, հակեցան պատեհապաշտութեան կողմը՝ հետեւելով Թրէյտ Իւնիքնի բիւրոկրատիկ առաջնորդներուն: Աւստրիական Փաշիստ դիկտատոր Դոլֆուս, քայքայեցուած այս անողնայար մարդոց բռնած գիրքէն 1933-ի Մարտին, լուծուած յայտարարեց պարլամենտը եւ հաստատեց Փաշիստական դիկտատուրա: Միայն սակաւաթիւ կոմունիստներն էին, որոնք մնացին պայքարի ճակատին վրայ ու երբ անոնք կոչ ըրին ընդհանուր գործադուլի, այդ գործադուլային շարժումը սկսաւ 1934-ի Փետրուարին, շարժում մը՝ որ չորս օր հաղիւ տեւեց, եւ ճզմուեցաւ Փաշիստական ուժերու կրունկներուն տակ: Ի վերջոյ, ինքը՝ Օթթօ Պոէր, հրապարակաւ ընդունեց որ «Վիէննայի բանուորները անտարակոյս կը շահէին, եթէ Բանուորներու Պաշտպանութեան Մարմինները մնային իրենց գիրքերուն վրայ ու չի նահանջէին»:

Բայց որո՞նք էին անոնց նահանջը փութացնողները: Օթօ Պո-
յէր այս հարցումին լուսթեամբ կը պատասխանէ, որովհետեւ ինք ալ
զիտէ որ պատասխանատուութիւնը կ'իյնայ Սոցիալ Դեմոկրատնե-
րուն վրին:

Կապիտալիստական դեմոկրատին Փաշիգմի յառաջխաղացքին
առջեւ պահ մը չլծուած մնաց. Փաշիգմի անմիջական նպատակն ու
գործերը ծափահարելի էին, ինչպէս օրինակ՝ Կոմունիզմի դէմ առ-
նուած կտրուկ միջոցները, բանուորական կազմակերպութիւնները
ոչնչացնելու փորձերը, բայց առեղծուած մը կար, որուն լուծումը
չէին կրնար տալ «դեմոկրատ» կապիտալիստները. այդ ալ պատե-
րազմի հեռանկարն էր: Գերմանիան, Իտալիան եւ ձարոն տենդպին
պատերազմի կը պատրաստուէին: Ի՞նչպէս կարելի էր մտնել այդ
պատերազմին մէջ առանց ժողովուրդները ոտքի հանող զազափա-
րական ուղեգծի: Ահա այս հարցն էր, որ կը շուարեցնէր մեր պարոն
կապիտալիստները: Ուրեմն, պարզ էր որ անոնց հակառակութիւնը
Փաշիգմին, իմպերիալիստական շահու նկատառումին կապուած էր:
Ամբողջ սրտով ու հոգիով Փաշիգմի հակառակ եզոզներն էին Մարք-
սիստ-Լենինիստները, Կոմունիստները: Ժողովրդական հակա-յարձա-
կողական շարժում մը յառաջացնելու էր Փաշիգմի վտանգը հեռաց-
նելու համար:

Առաջին հիմնական քայլը առաւ Խորհրդային Միութիւնը, երբ
1934-ի Սեպտեմբերին մտաւ Ազգերու Լիկային մէջ, ուրիշ դուրս ե-
կեր էին Փաշիստական պետութիւնները: Խորհրդային Միութեան
ներկայացուցիչը՝ Լիթվինով, ամէն կերպ աշխատեցաւ կազմելու
միջազգային հակա-Փաշիստ ճակատ մը, որ միակ միջոցն էր արգի-
լելու երկրորդ աշխարհամարտը... Բայց Միացեալ Նահանգները
զարձեալ չուզեցին մասնակցիլ Ազգերու Լիկայի ժողովին:

Կոմունիստներու երկրորդ մեծ քայլը այն եղաւ որ 1935-ի
Յուլիս-Օգոստոս ամիսներուն, Կոմինտէրնի եօթներորդ գոնկրէսին
մէջ որոշում անցուցին Փաշիգմը կործանելու նպատակով կազմել
ժողովրդական ճակատ ամէն մէկ երկրի մէջ եւ այդ ճակատին վրայ
համախմբել բանուորները, զիւղացիները, մտաւորականները, ա-
ռեւարականները եւ բոլոր քաղաքական խմբաւորումները, որոնք յօ-
ժար են կուսիլ յանուն խաղաղութեան՝ ընդդէմ Փաշիգմին:

Մարքսիստ-Լենինիստներու երրորդ մեծ քայլը այն էր, որ ա-
նոնք աշխատեցան հաստատել Թրէյտ Իւնիընի օրգանական միութիւն
մը, որ իր բոլոր ճիւղերով պիտի փորձէր հակա-Փաշիստ շարժում յա-
ռաջացնել Փաշիստական երկիրներու մէջ եւ այդպիսով արգիլել հա-
մաշխարհային երկրորդ պատերազմը:

11. — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱԿԱՏ ՖՐԱՆՍԱՅԻ, ՍՊԱՆԻՈՅ ԵՒ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԵՋ (1933-1939)

Առաջին անգամ երբ Հիթլեր իշխանութեան ղրուիսը անցաւ եւ
սկսաւ մէկ առ մէկ ճզմել աշխատաւորական կազմակերպուած ու-
ժերը, ամէն տեղ մեծ կապիտալիստները սկսան սնանիլ այն յոյսով,
որ այլեւս հասած է ժամը, ուր պիտի ոչնչանան բանուոր դասա-
կարգի կուսակցութիւններն ու միութիւնները, անոնց հետ նաեւ
պիտի ոչնչանայ սոցիալիստական նոր հասարակութեան մը երազը:
Հիթլերի յաղթական քայլերուն հետեւեցան Ֆրանսական Փաշիստնե-
րը, որոնք 1934 Փետրուար 6-ին, փորձեցին տապալել Ֆրանսական
հանրապետութիւնը եւ հաստատել Փաշիստական դիկտատուրա: Ա-
նոնց այդ փորձին հետեւեցաւ ընդհանուր գործադուլ մը, առաջին
յաղթական գործադուլը, որուն նմանը արձանագրուած չէր Ֆրան-
սական աշխատաւորական պատմութեան մէջ: Այդ յաղթութեամբ
բանուորներն ու իրենց դաշնակիցները յառաջացուցին այնպիսի հա-
կա-յարձակողական դիրքով ուժ մը, որ յաջորդող երեք տարիներու
ընթացքին՝ ո՛չ միայն կասեցուց Փաշիգմը, այլեւ նպաստեց Ֆրան-
սական աշխատաւորական շարժման յառաջխաղացքին եւ զայն տա-
րաւ մէկ յաղթանակէն միւսը:

Անսովոր երեւոյթ էր, որ Ֆրանսայի բանուորները կրցան
պարտութեան մատնել Փաշիստական ուժերը, մինչ Իտալիոյ, Գեր-
մանիոյ եւ Աւստրիայի բանուորները անկարող եղան ուժեղ դիմադ-
րութիւն ցոյց տալ եւ սպառնալիքի տակ շուտով ընկճուեցան: Այդ
իրողութեան բացատրութիւնը կարելի է տալ այն բանով որ Ֆրան-
սայի մէջ աջակողմեան Սոցիալ Դեմոկրատները չէին կրցած բան-
ուորութիւնը առնել իրենց աղղկցութեան տակ: Ֆրանսայի Սոցիա-
լիստ Կուսակցութիւնը այնքան զօրաւոր չէր որքան զօրաւոր էին
իր եղբայրակից կուսակցութիւնները Գերմանիոյ եւ Աւստրիոյ մէջ:
Ֆրանսայի մէջ զօրաւոր էին կոմունիստները եւ անարխո-սէնտիկա-
լիստները, որոնք առաջնորդող դեր ունէին Թրէյտ Իւնիըններու մէջ:
Եւ արդէն ամբողջ շարժման ընթացքին՝ ճախակողմեան Թրէյտ Իւ-
նիըններն էին որ վճռական դեր խաղացին: Ճիշդ է որ 1921-ին բա-
ժանում յառաջացաւ Աշխատանքի Ընդհանուր Համադաշնակցութեան
մէջ եւ յաջորդող տարիներուն անոնց միջեւ տեղի ունեցան սուր
պայքարներ, բայց 1936-ին Թուլուզի գոնկրէսին մէջ, շնորհիւ Կար-
միր Ինտէրնացիոնալի ջանքերուն, բաժնուած հաստատմանը միա-
ցան եւ կազմեցին վիթխարի ուժով միութիւն մը: Այդ միութիւնն էր
որ յաղթական դուրս եկաւ 1936-ի Մայիս եւ Յունիս ամիսներուն այն
գործադուլին մէջ, որուն մասնակցեցան երկու միլիոն բանուորներ:

Բանուորները ստացան 12 առ հարիւր յաւելում իրենց աշխատավարձերին վրայ, եւ յետոյ՝ մասսայական ուժեղ ճնշման տակ ազգայնացան երկաթուղիները, Ֆրանսայի դրամատուներ եւ զինագործարանները: Մէկ տարուայ ընթացքին՝ Թրէյտ Իւնիընի անդամներու թիւը մէկ միլիոնէն բարձրացաւ 5 միլիոն 400 հազարի:

ՀԱԿԱ-ՖԱՇԻՍՏ ՊԱՏԵՐԱԶՄ ՍՊԱՆԻՈՅ ՄԷՁ

1936 թուին, Սպանիոյ մէջ կազմուած էր ժողովրդական ձախատ, որուն մաս կը կազմէին Կոմունիստները, Սոցիալիստները, Անարխո-Սէնտիկալիստները, գիւղացիները, ազգայնականները, կաթողիկոսները եւ Ազատականները: 1931-ի հաստատուած Հանրապետութիւնը ըստ երեւոյթին՝ կ'երեւէր ամբակուռ ու մնայուն: 1936-ի Փետրուար 16-ի ընտրութեանց ատեն դեմոկրատական ուժերը 253 աթոռներ գրաւեցին Քոնկրէսի մէջ՝ ի դիմաց 153 յետադիմական ուժերու: Այլպահան տարրերով կազմուած մարմին մը, որ չունի կշռադատուած ծրագիր, չունի անշեղ եւ միակերպ գործելակերպի ուղեգիծ, չունի ղեկավար ուժ եւ անոր պահանջած հաւատարիմ հետեւողականութիւնը, այդ մարմինը ո՛չ միայն դատապարտուած է քայքայումի, այլեւ ենթակայ է յառաջացնելու այնպիսի եղբրական իրադարձութիւն մը, որ վտանգաւոր կ'ըլլայ ամբողջ հասարակութեան: Այդպէս եղաւ Սպանիոյ ժողովրդական ձախատի կազմակերպութիւնը: Կոմունիստները առաջարկեցին որ այն յետադիմականները, որոնք մտեր էին կառավարութեան ապարատին ու բանակին մէջ, ստիկանութեան եւ արդիւնարեքութեանց հսկողի դերին մէջ, պանքաներու եւ դպրոցներու մէջ, առանց այլեւայլի՝ ամբողջութեամբ մաքրագործուին: Բայց Լիպերայններն ու Սոցիալ Դեմոկրատները այդպիսի յեղափոխական քաղաքականութեան չէին սիրեր հետեւիլ: Եւ ատոր արդիւնքը եղաւ այն՝ որ յետադիմականները, որոնք կարեւոր դիրքեր գրաւած էին, ազատ էին զլուխ հանելու իրենց դաւադրութիւնը, եւ ահա հակա-յեղափոխական շարժումը: Զօրավար Ֆրանքօ, Մոլա եւ ուրիշներ, սկսան Փաշիստական յեղափոխութիւնը 1936, Յուլիս 17-ին: Հակայեղափոխութեան ակիբները շուտով ծաւալեցան ամէն կողմ: Սկսաւ քաղաքացիական պատերազմը:

Եւ այդ պատերազմը մղուեցաւ ամենակատաղի սաստկութեամբ: Սպանիոյ բանուորները, գիւղացիները եւ դանազան երկիրներէ եկող կամաւորները կը կուռէին անդերազանցելի հերոսութեամբ: Բայց անոնք ճակատեր էին վիթխարի ուժերու. իրենց զէմ կեցողը միայն Ֆրանքոն չէր, անոր միացեր էին Հիթլերը եւ Մու-

սոլինին, որոնք մեծ քանակութեամբ զինուորական ջոկատներով ու ռազմամթերքով կ'օգնէին Փաշիստ ապստամբներուն: Ատկէ զատ, Հանրապետականները տկար եւ բաժանուած առաջնորդներով հաշմանդամ՝ պատերազմի տեւողութեան ընթացքին, շատ աննշան օժանդակութիւն ցոյց կուտային: Քաղաքացիական այդ պատերազմին մէջ երկրի ներքին ուժերն էին որ պիտի ղեկավարէին կռիւր եւ այդ ուժերը կը պակսէին: Պատերազմի վերջերն էր միայն, որ Կոմունիստ Կուսակցութիւնը, Դոլորէզ Իբարուրիի եւ Եոզէ Դայգիի գլխաւորութեամբ յառաջացուց՝ ժողովրդական ճակատի շարժումը եւ ստանձնեց կռիւի ղեկավարութիւնը: Բայց աւա՛ղ, Մատրիալ ինկաւ ապստամբներու ձեռքը: Եւ այդ՝ այն ատեն, երբ Հիթլեր արդէն պատրաստուեալ էր բանալու Երկրորդ Համաշխարհային պատերազմի դուռը:

Սպանիոյ Հանրապետութեան տապալման հիմնական պատճառը այն էր, որ աշխարհի դեմոկրատական ուժերը Կոմունիստներու օրինակին չհետեւեցան եւ ճիշդ ատենին մարդոցմով, ռազմամթերքով ու օդանաւերով անհրաժեշտ օգնութիւնը չփութացուցին եւ թոյլ տուին որ Ֆրանքոն պէտք եղած օգնութիւնը ստանայ Փաշիստ Գերմանիայէն ու Իտալիայէն: Այդ մեծ ոճիրին գլխաւոր պատասխանատուները Եւրոպայի Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութիւններն էին: Երկրորդ Ինտէրնացիոնալը բոլորովին մերժեց միջազգային ճակատ կազմելով Հանրապետական Սպանիոյ օգնելու Կոմիտէին: Առաջարկը: Եւ նոյնիսկ աւելի եղբրական եղաւ, երբ Սոցիալ Դեմոկրատ Բլումը, որ Ֆրանսայի ժողովրդական ձախատի կառավարութիւնը կը գլխաւորէր, յայտարարեց իր շարագուշակ նշանաբանը — «Ոչ մէկ միջամտութիւն»: Այս քաղաքականութեան հետեւանքով Հանրապետական Սպանիան կը զրկուէր զբռնէր զէնք զնկով ինքզինքը պաշտպանելու իրաւունքէն: Ամերիկան հետեւեցաւ Ֆրանսայի. — «Ոչ մէկ միջամտութիւն»: Միայն Խորհրդային Միութիւնն եղաւ որ զէնքերով եւ ուրիշ միջոցներով օգնեց Հանրապետական կառավարութեան:

Սպանիոյ քաղաքացիական պատերազմին մէջ Հանրապետականներու պարտութեան մէկ բաժին պատասխանատուութիւնն ալ կ'իյնայ Թրէյտ Իւնիըններու անմիասնականութեան վրայ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՇԽԱՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՏ ԿԸ ՄՂԷ ՌԷԱԿՑԻԱՆ

Մասսայական այն լայնածաւալ շարժումը, որ 1932-էն 1944 տարիներուն՝ չորս անգամ յաջորդաբար Ռուզվէլտը Միացեալ Նահանգներու նախագահական աթոռին վրայ գրաւ, թէեւ ըստ էութեան

թեան ժողովրդական ճակատի շարժում մը չէր ինչ որ էր ուրիշ երկիրներու մէջ, բայց կրնանք ըսել թէ տարերայնօրէն գրեթէ նմանօրինակ շարժում մըն էր: Ան հրապարակ իջաւ 1929-32-ի տարիներուն տնտեսական սարսափելի ճգնաժամէն եւ որպէս բանուոր դասակարգի հակա-յարձակողական ուժեղ շարժում՝ իր քաղաքական դաշնակիցներուն հետ ճակատեցաւ խմորուող ծայրահեղ ռէակցիային:

Բազմաթիւ սնանկութիւններ կը յաջորդէին իրարու, սնանկութիւն՝ ո՛չ միայն պանքաներու եւ կախեալ ընկերութեանց, այլեւ անհամար ֆարմըրներու եւ միջակորեար դասու պատկանող մարդոց: Մէկը մի քանի տուններ կամ խանութներ ունէր, որոնց վարձակալները իրենց վարձքը չէին կրնար վճարել, իսկ ինք ալ ինկած էր պարտամուրհակներու (մորթիէյճներու) ցանցին մէջ: Պանքան գրաւեց անոր տուներն ու խանութները եւ մարդը սնանկանալով մըտաւ անգործ պրոլետարներու շարքը: Նոյն վիճակին ենթարկուած էին ֆարմըրները, որոնց ֆարմային արտադրութիւններուն համար սպառման չուկայ չկար: Մարդիկը պանքային իրենց պարտքը չէին կրնար վճարել ու կորսնցուցին իրենց արտը, այգին ու պարտէզը: Պանքաները ի՞նչ պիտի ընէին իրենց գրաւած շէնքերն ու հողերը, որոնք եկամուտ չէին բերեր: Զանոնք ծախել հնարաւոր չէր. ո՞վ պիտի գնէր չէնք մը կամ արտ մը, երբ ան եկամուտ չունէր: Գրութիւնը վատ էր ո՛չ միայն տանակերներուն, խանութպաններուն ու ֆարմըրներուն համար, այլեւ առաւելապէս պանքաներուն ու գործարանատէրներուն համար: Այդ սարսափելի կացութիւնը երկար չէր կարող շարունակուիլ, ելքի ճամբայ մը գտնելու էր, քանի որ յուսահատ ամբոխները սկսեւ էին անհանգստութեան նշաններ ցոյց տալ: Անդին, կեցեք էր առողջ ու կայտառ երիտասարդ հսկայ մը — Սորհրդային Միութիւնը, որու սահմաններուն մէջ ապրող ժողովուրդները տնտեսական նոր կեանքով կը ծաղկէին ողելութեամբ եւ կը յառաջդիմէին առատութեան տանող ճամբուն մէջ: Ամերիկայի ճընչուող մասսաները կը նայէին այդ հսկային եւ կը մտածէին պատրաստուիլ կեանքի ու մահուան պայքարին: Ուրեմն, մէկը պէտք էր որ կապիտալիզմը ազատէր ընկերային յեղափոխութեան սահմանը ցուցիչ վտանգէն: Տիրող դասակարգը ամէն ստան, երբ նեղ դրութեան մատնուած է, հրապարակ հանած է ժողովուրդի համակրութիւնը գրաւող ազատարար մը, որ հող չէ թէ ի՛նչ գինով՝ կրցած է հանդարտեցնել արթնցնող ամբոխները: Այդ դասակարգը իր նեղ դրութեան մէջ, ինքը՝ որեւէ զիջում չուզեր ընել, որովհետեւ մէկ կողմէն ան կ'ուզէ ծածկել իր պարտուողականութիւնը, որպէսզի ամբոխները չքաջալերուին նոր պահանջներ ընելու դժով, միւս կողմէն՝ ան կը փափաքի ապահովել միջնորդ մը՝ ապագային հաւանա-

կանօրէն պայթելիք խոռվութիւնները դադրեցնելու համար: Եւ Ամերիկայի կապիտալիստները ամբողջ պատասխանատուութիւնը բառնալով Հուլիի վզին, հրապարակ հանեցին Ֆրէնքլին Դէլանօ Ռուզվելթը:

Հակառակ անոր որ Ռուզվելթը, հարուստ մարդ մը եւ խպերիալիստ մը, մասնաւորապէս սկզբնական շրջանին կեցաւ ժողովուրդի համակրական շարժման գլուխը, որովհետեւ որպէս ղեմակրատ՝ շատ փայլուն խոստումներ էր ըրեր: Իր Նոր Ուղեգիծը շատ մը յետադիմական կէտեր ունէր եւ առաջին մի քանի տարիներուն նեցուկ եղաւ մենատիրական կապիտալի խոշոր հատուածներուն, սակայն եւ այնպէս ժողովուրդի ղեմակրատական հոսանքները կարեւոր դեր խաղացին մասնաւորապէս 1935-էն սկսած, երբ անոր Նոր Ուղեգիծը տարին հակա-ֆաշիստ ճակատին վրայ: Բայց Ռուզվելթ չքաջուեցաւ նոյն ատեն յայտարարել որ ինք թշնամի էր բոլոր իզմերուն. թշնամի էր Ֆաշիզմին, Նացիզմին եւ... Կոմունիզմին: Յամենայն դէպս, Ամերիկայի նոր նախագահին ընկերային բարեկարգութեան խոստումները մասամբ իրականացան բանուորներու, ֆարմըրներու եւ միջակորեար դասակարգի տարրերու հարկադրիչ ճնշումներով. բան մը՝ դր կ'ատէին մտնող խոստումները:

Կային Ամերիկեան ուժեղ կապիտալիստներ, որոնք շատ երջանիկ պիտի ըլլային տեսնելու Միացեալ Նահանգներու մէջ բացուած նոյն ուղին, ինչ որ բացուեր էր Նացի Գերմանիոյ մէջ, բայց անոնք չուտով համոզուեցան որ իրենց անկարող էին այդ բանը ընել: Ատոր մէկ պատճառը այն էր որ Մ. Նահանգներուն մէջ ճգնաժամային պայմանները այնքան խոր չէին որքան Գերմանիոյ մէջ: Ուրիշ մէկ պատճառն ալ այն էր որ Մ. Նահանգներու մէջ Սոցիալ Դեմոկրատները այնքան զօրաւոր չէին որ ամերիկեան պրոլետարիատը առնէին իրենց ազդեցութեան տակ. ատոր համար կարելի չէր այդ սոցիալիստներու օգնութեամբ Ամերիկայի բանուորութեան ղեմադրական ոգին ընկճել ֆաշիզմի սպառնալիքին դէմ: Ամերիկեան բանուորները շատոնց փշրեր էին Սոցիալ Դեմոկրատներու շղթաները եւ սկսեւ էին ուժեղ կազմակերպուած պայքար մղել մենատիրական կապիտալի դէմ:

Թէեւ Կոմունիստ Կուսակցութիւնը համեմատաբար փոքր էր եւ հազիւ 35,000-էն 75,000 անդամ ունէր, այդ շրջանին, բայց անոր ազդեցութիւնը ուրիշ ճախակողմեան տարրերու հետ, շատ զօրաւոր էր աշխատաւորական շարժման վրայ: Եւ պէտք է ըսել թէ Կոմունիստ Կուսակցութիւնն էր որ մարտական բանուորներով կազմակերպեց այն ահազու բանուորական միութիւնը որ ծանօթ է CIO անունով. (Congress of Industrial organizations): Այն միութեան

առաջին ու մեծ գործը եղաւ կազմակերպել Սան Ֆրանչիսկոյի շրջանի մեծ գործադուլը, որուն մասնակցեցան 125,000 հոգի: Այդ գործադուլին մարտական առաջնորդն էր Հէրբ Պրիճըս, որ տարիներ յետոյ շատ հայաճուեցաւ, եւ եղաւ ատեն մը, երբ յետադիմականները որպէս Կոմունիստ՝ զայն Ամերիկայէն դուրս հանել ուզեցին, բայց չյաջողեցան:

Գեր-յետադիմական Կրինը (AFL-ի նախագահը) ամէն կերպ աշխատեցաւ CIO-ի միութեան առջեւ արգելիչ ժայռեր գլորել անոր յառաջխաղացքը կասեցնելու համար, սակայն իր բոլոր ջանքերը անցան անյաջող: Այդ կազմակերպութիւնը մեծ ժողովրդականութիւն չահեցաւ երկու պատճառով. առաջին՝ որ ան արհամարհուած բանուորներուն մօտեցաւ եւ զանոնք առաւ միութեան մէջ. ինչպէս էին նէկրոնները. երկրորդ՝ որ անոր կազմակերպած գործադուլները առանց բացառութեան՝ յաջողութեամբ պսակուեցան: 1934-ին այդ միութիւնը ունէր միայն 200,000 անդամ, 1939-ին անոր անդամներու թիւը բարձրացաւ երեք միլիոնի: Այդ մարտական կազմակերպութեան աշխոյժ գործունէութեան հետեւանքով էր որ Ռուզվելթի վարչութիւնը ընկերային ապահովագրութեան օրէնքը հաստատեց:

12.— ԹՐԷՅՏ ԻՆԻՒՐՆԻ ՅԱՌԱՋԳԻՄՈՒԹԻՒՆԸ ԱՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՁ (1921-1939)

Այժմ տեսնենք թէ Թրէյտ Իւնիւրնի շարժումը ի՞նչպէս ձեւաւորուեցաւ Ասիոյ մէջ՝ մինչեւ Երկրորդ Աշխարհամարտը: Այդ ընդարձակածաւալ մասին մէջ ինչպէս ընդհանրապէս զաղութային աշխարհին մէջ, Բրիտանական, Ֆրանսական, Հոլանտական, Ճարոնական, Սպանական եւ Ամերիկեան իմպերիալիստները բոլորն ալ կը հետեւէին նոյն անշեղ քաղաքականութեանց, արգիլել արդիւնաբերական սիստեմներու զարգացումը, տեղական շուկաները ենթարկել իրենց իմպերիալիստական շահերու մենատիրութեան, անխղճօրէն շահագործել բանուորները՝ անկարկութեանց եւ հանքերու մէջ եւ բոնի միջոցներով ճզմել աշխատաւոր մասսաներու կազմակերպման փորձերը եւ թոյլ չտալ որ անոնք փոքր ի շատէ բարելաւեն իրենց տնտեսական եւ քաղաքական պայմանները: Իմպերիալիստական այդ բարբարոս ուժի մի հետեւանքով զաղութային երկիրներու ժողովուրդները կ'ապրէին աննկարագրելի թշուառութեան մէջ: Այդպիսի պայմաններու տակ Թրէյտ Իւնիւրնի շարժումը շատ դժուարութեամբ կրնար աճիլ ու զարգանալ: Կային համաքարային միութիւններ, որոնք կ'ապրէին իրենց պարսպապատ շրջանակներու մէջ: Բանուորներուն մեծ մասը անկարկութեանց վրայ վարձու աշխատաւորներ էին, կա-

յին նաեւ հիւսուածեղէնի բանուորներ, ածխագործներ եւ կրկաթուղիի բանուորներ, այդ զրազումները իմպերիալիստական ձեռնարկութեանց կապուած էին: 1921-ին ԱՄԿ-ի կազմակերպութիւնը Լեւինեան ուղիով շատ մեծ աշխատանք տարաւ կազմակերպելու Թրէյտ Իւնիւրնիներ՝ Չինաստանի, Հնդկաստանի, Ինտոնէզիայի, Բուրմայի, Հնդկաչինի, Քորէայի, Ֆիլիպեաններու եւ ուրիշ Ասիական գաղութային եւ կիսագաղութային երկիրներու մէջ, ուր արդէն մտած էր Ռուսական Յեղափոխութեան զարթեցուցիչ շունչը: ԱՄԿ-ի եւ Կոմինտէրնի ջանքերով 1929-ի վերջերը կազմուեցաւ Համա-Մարդային Իւնիւրնի Լիկան, որու կեդրոնը եղաւ Հանքով, Չինաստանի մէջ: Սկզբնական շրջանին Երկրորդ Ինտէրնացիոնալը, Ամբաստերտամի Ինտէրնացիոնալը, եւ իմպերիալիստները կարեւորութիւն չտուին սկսուած շարժումին, բայց յետոյ՝ երբ տեսան թէ շարժումը լայն ու ծաւալուն հանգամանք առած է, սկսան կազմակերպուած աշխատաւորութիւնը հակամարտ ուժերու բաժնելու նըպտակով նոր տեսակի բանուորական միութիւններ կազմել, որոնք ենթարկուած էին կառավարութեան հսկողութեան:

ՉԻՆԱԿԱՆ ԹՐԷՅՏ ԻՆԻՒՐՆԻ ԵԱՐԺՈՒՄԸ

Չինական Թրէյտ Իւնիւրնի շարժումը Չինական Ժողովրդական յեղափոխութեան արդանդէն ծնաւ եւ 25 տարի կոտուեցաւ այդ յեղափոխութեան համար մինչեւ որ իր լիակատար հասունացման մէջ յաղթահարեց: 1950-ին հաստատուեցաւ Չինաստանի Ժողովրդային Հանրապետութիւնը:

Առաջին աշխարհամարտէն ծնաւ Ռուսական Յեղափոխութիւնը որու յաղթութիւնը պսակուեցաւ Սոցիալիստական Սովետական Միութեան հաստատումով. երկրորդ աշխարհամարտը իր ետեւէն բերաւ Չինական Յեղափոխութիւնը, որու հետեւանքն եղաւ Չինական Ժողովրդային Հանրապետութիւնը: 1957-ին Բուրմայի վարչապետը Ենու՝ ծիծաղելի մարզարէութիւն չէր որ ըրաւ, երբ ամբողջ իմպերիալիստ աշխարհին յայտարարեց. — «Չզուշութեամբ նետեցէք ձեր քայլերը, եթէ պայթի երրորդ համաշխարհային պատերազմը, համայն աշխարհը պիտի անցնի Կոմունիստական տիրապետութեան տակ:

Չինական Թրէյտ Իւնիւրնի կազմակերպչական շարժումը սկսաւ 1922-ին, Ռուսական Յեղափոխութեան շունչով: 1925-ին կազմուեցաւ Համա-Չինական Աշխատաւորական Դաշնակցութիւնը:

Չինաստանի մէջ օրական 12-20 ժամ աշխատող բանուորներու աշխատավարձն էր 15-25 սէնթ. գործարաններուն եւ հանքերուն

մէջ կ'աշխատցնէին 6-7 տարեկան երեխաներ: Չին բանուորական մի-
ութիւնները առաջին առիթով բուն պայքար մղեցին այդ անդուծ
չահագործման ձեւերուն դէմ: անոնց առաջնորդներն էին Կոմունիստ-
ները:

Այդ շրջանին Չինաստանի մէջ քաղաքացիական կռիւներն ու
իմպերիալիստներու միջև մղուած պատերազմները խառնուած էին
իրարու հետ: 1924-ին, Կոմունիստ Կուսակցութիւնը եւ Քոմունիստ-
կը — վերջինը չինական բուրժուա-յեղափոխական Սըն-Եաթ-Սէնի ա-
ռաջնորդութեամբ — կազմեցին միացեալ ճակատ մը եւ սկսան զինու-
որութեամբ կռուիլ յետադիմական Ֆէոդալ լորտերու դէմ, հաստա-
տելու համար հանրապետական ուժիմ՝ ամբողջ երկրին մէջ: Ժողո-
վրդական մասսաները ընդառաջեցին այս շարժումին՝ արտասովոր
խանդավառութեամբ: Տեղի ունեցան զործադուլներ եւ գիւղացիա-
կան յեղափոխութիւններ եւ աճեցաւ թիւը ազգային բանակներու, ո-
րոնք յառաջդիմեցին արագութեամբ:

Սոյն մասսայական շարժումներուն մէջ նշանակալից տեղ կը
գրաւէր Հոնկ-Քոնկի եւ Քանթոնի զործադուլը, որուն մասնակցեցան
250,000 բանուորներ: Անոր յաջորդեց Ծանկհայի ընդհանուր զործա-
դուլը, որ տեղի ունեցաւ 1927-ի Փետրուարին: Այս հռչակաւոր զոր-
ծադուլը թէեւ շատ մը նախնական տնտեսական պահանջներու գիծին
վրայ էր, բայց անով կ'արտայայտուէր ժողովուրդի վճռական կամ-
քը, որ կ'ուզէր մի անգամ ընդմիջու փշրել բրիտանական, ճարտական
եւ այլ իմպերիալիստներու լուծը: Գործադուլը տարածուեցաւ Չի-
նաստանի բոլոր կողմերը եւ տեւեց ամիսներով: Կարգ մը տեղեր, ա-
նիկա ապահովեց կարելոր յաղթութիւններ ի նպաստ բանուորնե-
րուն, որոնք գունդ-գունդ կը դիմէին Թրէյտ Իւնիւրներուն, որոնց
անդամներու թիւը Հանքով Գոնկրէսին մէջ, 1927-ին, կը ներկայա-
ցընէր 2,800,000 հոգի: Անոնց վրայ աւելցնելով գիւղացիներու ըն-
կերակցութիւնները, ընդհանուր անդամներու թիւը կը հասնէր ինը
միլիոն 500,000-ի:

Սըն-Եաթ-Սէն, ազատական մը եւ բարեկամը Պորհրդային Մի-
ութեան, մեռաւ 1925-ի Մարտին: Անոր վրայ յետադիմականները
ահաբեկած ըլլալով բանուորներու եւ գիւղացիներու յեղափոխական
ոգիէն, սկսան որոճալ հակայեղափոխական ծրագիր մը: 1927-ի Ապ-
րիլին, Չանկ Քայ Չէքը, որ կը ներկայացնէր խոշոր հողատէրերը,
վաշխառուները եւ խոշոր իմպերիալիստները, կազմակերպեց սպըս-
տամբութիւն մը՝ Կոմունիստ Կուսակցութեան, Թրէյտ Իւնիւրներու
եւ գիւղացիական կազմակերպութեանց դէմ: Տասնեակ հազարաւոր
մարտական բանուորներ եւ գիւղացիներ զնդակահարուեցան եւ շա-
տեր՝ միջնադարեան մեթոտներով տանջալի մահուան դատապարտը-

ւեցան աննկարագրելի անգթութեամբ: Մանկամարդ աղջիկներ, ո-
րոնք խոպոպիկաւոր մազեր ունէին, որպէս մարտական՝ տեղն ու տե-
ղը կը զնդակահարուէին: Կը զլխատուէին թուցիկներ ցրուողները.
Իսկ կոմունիստները կը մորթոտուէին եւ անոնց մարմինը կտոր կտոր
եղած՝ կը նետուէին հոս ու հոն: 1927-ին Չանկ Քայ Չէքի դահիճները
37,985 բանտարկեալներ մորթեցին բանտերուն մէջ, իսկ 1928-ին՝
7930 հոգի խարոյկներու վրայ վառեցին: Ամբողջ աշխարհի յառաջ-
դիմական աշխատաւորութիւնը բողոք բարձրացուց այդ անմարդկա-
յին անգթութեանց դէմ, բայց իմպերիալիստական «քաղաքակիրթ»
պետութիւնները, ո՛չ միայն լուծութիւն պահեցին, այլեւ նիւթապէս
օժանդակեցին այդ հրէշին:

Յաջորդ երկու տասնեակ տարիներու ընթացքին, պատերազ-
մական դրութիւնը անասելի դժուարութեան մատնած էր Չինաստա-
նի Թրէյտ Իւնիւրնիդը: Չանկ Քայ Չէքի տեղորին վրայ աւելցաւ
ճարտական իմպերիալիզմի յարձակողական սանձարձակ արշաւը, որ
երկիրը վերածեց դժոխային վիճակի: Ճարտեցիները, որոնք իրենց
արշաւը սկսան 1931 թուին, դայն աւելի սաստկացուցին 1937-ին: Ա-
նոնց բարբարոսական յարձակումներուն առջև չինացի ժողովուրդը
այլեւս չէր կրնար կազմակերպութեան մասին մտածել: Թրէյտ Իւ-
նիւրները ճգմուեցան, մի քանիները միայն մնացին, անոնք ալ անցան
ընդյատակեայ զործունէութեան:

Չանկ Քայ Չէք, Չինաստանի այն մասին մէջ՝ զոր առած էր իր
իշխանութեան տակ, ստեղծեց նոր կազմակերպութիւն մը — Չինա-
կան Աշխատաւորական Ընկերակցութիւնը (ՉԱԸ): Ասիկա կիսա-Քա-
շիստ կազմակերպութիւն մըն էր, որուն անդամակցութիւնը ամէն
մարդու համար պարտադրիչ էր: Այդ կազմակերպութիւնը կը ղեկա-
վարուէր կառավարութեան կողմէ. անոր անդամները պարտաւոր էին
հալածել կարմիրները: Երկրորդ Աշխարհամարտէն յետոյ՝ ՉԱԸ-ը
614,000 անդամներ ունէր, որոնք կեցեր էին Չանկ Քայ Չէքի բանա-
կին ետև, որպէս թիկունքային ուժ:

Նոյն ատեն, բանուորներն ու գիւղացիները, Քանթոնի շրջանին
մէջ, Կոմունիստ Կուսակցութեան առաջնորդութեամբ, որ կը զլխա-
ւորէր հռչակաւոր Մաօ Յէ Թունկը, կը շարունակէր 1927-ին սկսուած
երկար պատերազմները՝ յանուն ազգային անկախութեան ու ազա-
տութեան. պատերազմ՝ յետադիմական ուժերուն դէմ մինչև 1936
թուականը, պատերազմ՝ ճարտական իմպերիալիզմին դէմ մինչև
1945 թուականը, պատերազմ՝ հրէջ Չանկ Քայ Չէքի ուժերուն դէմ
մինչև 1950-ի վերջնական յաղթութիւնը: Չինական յեղափոխական
կռուող ուժերը 25 տարիներու ընթացքին՝ անցան անյաղթելի դժ-
ուարութիւններու եւ սարսափելի վտանգներու մէջէն, հերոսական

կուր մղեցին յամառ ու աննահանջ ողիով: Անոնց ամենէն վիպական գործը երեք հազար մղոնի «երկար արշաւն» էր, Չինաստանի մէկ ծայրէն միւսը, արշաւ մը՝ որ ճակատած էր անհամեմատ մեծ զինուորական ուժերու եւ առասպելական բնական դժուարութիւններու: Ժողովրդական ուժերը, որոնք ամփոփուած էին Չինաստանի ազատագրուած մէկ երկրամասին մէջ, միայն 90 միլիոն բնակչութիւն ունէին իրենց կողքին, եւ այդ 90 միլիոն մարդոց կամքով անոնք կրցան 650 միլիոն բնակչութիւն ունեցող երկիր մը գրաւել եւ հոն հաստատել ժողովրդային հանրապետութիւն: 1940-ին, Ենանի գոնկորէսին մէջ Չինաստանի յեղափոխական Ընդհանուր Աշխատաւորական Միութիւնը յայտարարեց հետեւեալը. — «Այժմ մեր գործն է կազմակերպել սահմանադրութիւն շրջաններու ընդ որոնք բանուորները՝ դիմադրողական պատերազմի ու ազգային վերակառուցման գործին անձնուիրական ողիով մասնակցութեան համար: Որպէսզի մենք կարենանք ապահովել մեր վերջնական յաղթանակը, պէտք է աւելի եւ աւելի սաստկացնենք երկաթեայ տիսիրլինը եւ աշխատանքի արտադրողականութիւնը. պատերազմը պէտք է անդամարուծութեան տանի երկրի տնտեսութիւնը: Մենք պէտք է թէ՛ կուրիք եւ թէ՛ արտադրութեան ուժ տանք: Մենք պէտք է բարձրացնենք բանուորներու քաղաքական, կուլտուրական եւ տեխնիկական մակարդակը եւ ուժեղացնենք գործաւորներու եւ զինուորներու եղբայրական կապը: Չինուորը պէտք է հպարտանայ իր զինուորական ծառայութեամբ, բանուորը նոյնքան հերոսական ծառայութիւն ունի որքան զինուորը»: Այս յայտարարութենէն կարելի է որոշապէս հասկնալ թէ Չինական Թրէյտ Իւնիընի անդամները որքա՞ն յառաջ գացեր էին դասակարգային զիտակցութեան եւ ընկերային յեղափոխութեան յաջողութիւնը երաշխաւորող միջոցառումներու կշտադատութեան մէջ, այնպէս որ կրնանք ըսել թէ չինական յեղափոխութիւնը յանկարծակիօրէն յայտնադործուած պայմաններու բերումով եւ ժողովրդական մասսաներու կոյր հետեւողականութեամբ չընթացաւ. ան վարէն սկսաւ եւ վարիչներու առաջնորդութեամբ յաղթանակեց: Ան իրապէս պրոլետարական յեղափոխութիւն էր:

Չինական յեղափոխութիւնը ունեցաւ իր ռազմական եւ քաղաքական մարզի մեծագոյն հանճարը՝ յանձին Մաօ Յէ Թունի, այն մեծ մարդուն, որ անշեղ ու յարատեւ այն համոզումը ունէր թէ՛ նոյնիսկ երկրադործական երկրի մը մէջ, որպիսին էր Չինաստանը, ուր պրոլետարիատը շատ աննշան փոքրամասնութիւն մը կը ներկայացնէր, դարձեալ բանուորութիւնն էր որ յեղափոխութիւնը պիտի առաջնորդէր: Պրոլետարական ղեկավարութեան այս սկզբունքը գործնականօրէն բացայայտուած էր ո՛չ միայն ամենէն առաջաւոր

բանուորները համախմբելով Կոմունիստ Կուսակցութեան մէջ, հիմնելով Թրէյտ Իւնիըններ, բանակին մէջ ուժեղացնելով պրոլետարական տարրերը, եւ բանուորին մէջ մշակելով զիւղերու եւ զիւղաքաղաքներու բնակիչները ղեկավարելու եւ զանոնք առաջնորդելու կարողութիւնը, այլեւ ամենէն առաջ եւ ամենէն վեր՝ կառուցել եւ առաջնորդողի դերին մէջ դնել Կոմունիստ Կուսակցութիւնը՝ Մարքսիզմ-Լենինիզմի սկզբունքներով: Մաօ Յէ Թունիը Մարքսի եւ Լենինի գործերը շատ խոր ուսումնասիրած էր եւ լրիւ համոզուած էր որ Չինաստանի մէջ աւելի շուտ կոմունիստական հասարակարգ կարելի էր հաստատել, որովհետեւ, առաջին՝ Չինաստանի ժողովուրդը եւրոպական կապիտալիստական պետութեանց անխիղճ շահատակութիւններու խալթոցները իր կաշիին վրայ կրած ըլլալով անոնց հանդէպ լեցուած էր ատելութեամբ ու զղուանքով. երկրորդ՝ չինական բուրժուազիան շատ տկար էր, իսկ Չանկ Քայ Չէքը իր սոսկալի անդթութիւններով աւելի խորացուցեր էր բուրժուական ուժիմի հանդէպ ժողովուրդի մէջ բոյն դրած ցուրտ զգացումը. երրորդ՝ չինացի ժողովուրդի արեան մէջ քրիստոնէական կրօնի հաշիշը մտած չէր եւ այդ ժողովուրդը աւելի գործնական կեանքին կապուած էր քան երազային մտապատկերներու. չորրորդ՝ Չինաստանի մէջ դասակարգերու երանգաւորումներ չկային, որ ժողովրդական ուժերը բաժնէին անհաշտ հակամարտութիւններով: Չինաստանի Կոմունիստ Կուսակցութիւնը, ուրեմն, հակառակ անոր որ ինք գրեթէ ամբողջապէս կտրուած էր քաղաքներէն, այսուհանդերձ՝ յեղափոխութեան համար կուսող ուժերու մեծ մասը հաւաքած էր զիւղացիական եւ մանր բուրժուական տարրերէն. բանուորները կը կազմէին փոքրամասնութիւնը:

1938 Յունիս 24-ին, կուսակցական համագումարին մէջ կուսակցութիւնը յայտարարեց. — «Չինաստանի Կոմկուսը չինական բանուոր դասակարգին Մարքսիստ-Լենինիստ Կուսակցութիւնն է: Անոր պատմական միտան է չինական ժողովուրդի ամբողջական ու լիակատար ազատութիւնը, որովհետեւ բանուոր դասակարգի ազատագրութեան ճամբով է որ ամբողջ մարդկութիւնը պիտի կրնայ ազատագրուիլ կապիտալիստական լուծէն»: Նոյն իմաստով շարադրուած է Կոմկուսի Մահմանադրութեան առաջին յօդուածը, որ ընդունուեցաւ 1945 Յունիս 11-ի համագումարին. — «Չինաստանի Կոմկուսը չինական բանուոր դասակարգի կազմակերպուած յառաջապահն է, անոր դասակարգային կազմակերպութեան ամենարարձադոյն ձեւը: Կանգնած ըլլալով չին ժողովուրդի շահերու պաշտպանութեան ճակատին վրայ, ներկայիս անոր անմիջական գործն է պայքարիլ՝ Չինաստանի մէջ Նոր Դեմոկրատիստ իրականացնելու համար, իսկ վերջ-

նական նպատակն է Ձինաստանի մէջ հաստատել Կոմունիստական հասարակարգ» :

Իսկ 1949 Սեպտեմբեր 27-ին որդեգրուած Ձինական ժողովրդ- դային Կառավարութեան Կազմակերպչական Օրէնքի Առաջին Յօդ- ուածը կը յայտարարէ .— «Ձինաստանի ժողովրդային Հանրապետու- թիւնը ժողովրդային Դեմոկրատական Դիկտատուրայի պետութիւնն է, որուն ղեկավարող ուժն է բանուոր դասակարգը: Այդ պետութիւ- նը հիմնուած է բանուորներու եւ գիւղացիներու ամբակազմ դաշ- նակցութեան վրայ, յենուած՝ բոլոր դեմոկրատիկ դասակարգերու եւ երկրին մէջ զտնուող զանազան ազգութեանց պատկանող խմբաւո- րումներուն՝ որոնք հաւատարմօրէն կը հետեւին երկրի սահմանեալ օրէնքներուն: Իսկ այդ օրէնքները միայն մէկ անշեղ ուղեգիծ ունին . այն է՝ հեռու մնալ զիկզակ ճամբաներէ . չխնայել հակայեղափոխա- կաններուն . կապիտալիստական պետութեանց առջեւ ո՛չ մէկ զի- ջում, ո՛չ մէկ համաձայնողական քայլ, որ կրնայ դուր բանալ բուր- ժուական մեքենայութեանց ու ներածութիւններու ներխուժումին» : Ահա Լենինեան այս ոգիով էր որ չինական Թրէյտ Իւնիւրնի շարժումը միացաւ Ձինաստանի Կոմկուսին ու յառաջ տարաւ կռիւր, մինչեւ որ յեղափոխութիւնը յաղթանակեց բազմաթիւ զոհերու գինով :

ՀՆԳԱՍՏԱՆԻ ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ուսական Յեղափոխութենէն յետոյ՝ Ասիական Թրէյտ Իւնիւր- նի յառաջխաղացքին մէջ Հնդկաստանը կարեւոր դեր խաղցաւ : Երկու համաշխարհային պատերազմներու ընթացքին՝ երկրի ճարտարա- ուեստը, հակառակ բրիտանական սեղմումներուն, նշանակելի չա- փով բարձրացաւ : 1939-ին պողպատի արդիւնաբերութիւնն էր 700,000 թոն . 1945-ին ան եղաւ 1,500,000 թոն : Նոյն համեմատութեամբ Հնդկաստանի մէջ աճեցաւ բանուորներու թիւը : Բանուորներու գրու- թիւնը շատ վատ էր . շարաթը 100 ժամ կը գործէին անոնք եւ կը ստա- նային աննշան աշխատավարձ մը, որ հազիւ թէ կը բաւէր զանոնք սովամահութենէ ազատելու համար : Ամէն տարի, գրեթէ առանց բա- ցառութեան տեղի կ'ունենային 175 գործազույներ : 1928-ին գործա- զույներու հետեւանքով Հնդկաստանի արդիւնաբերութիւնը 31 մի- լիոն 647,404 աշխատօրերու կորուստ ունեցաւ : Համա-հնդկական Թրէյտ Իւնիւրնի Գոնկրէսը, հիմնուած 1920 թուականին, իր անդամ- ներու թիւը կը հաշուէր 10,00 հոգի, 1929-ին ունեցաւ 190,000 ան- դամներ, իսկ 1945ին՝ անդամներու թիւը բարձրացաւ մօտաւորապէս կէս միլիոնի :

Հնդկական Թրէյտ Իւնիւրնի շարժումը բրիտանական իշխանու-

թեանց պատժական խիստ միջոցառումներու տակ էր որ կ'աճէր : Ա- նոր պատմութիւնը տեսակ մը ողբերգութիւն է, — կրկնուած ոճիրներ, բանտարկութիւններ, խոչտանդումներ, — մեծ մասով գործադրուած տեղական յետադիմական առաջնորդներու ձեռքով : Թէ ի՛նչ միջոց- ներով Անգլիոյ կապիտալիստները կը սիրաշահէին Հնդկաստանի ցե- ղապետները, ատիկա դուրս կը մնայ մարդկային երեւակայութենէն : Լոնտոնի լորտերը նոյնիսկ իրենց կիները կը տրամադրէին հնդիկ ցե- ղապետներուն, զանոնք գործակալի դերին մէջ պահելու համար :

Հնդկական Թրէյտ Իւնիւրնի շարժման զօրավիւզ չեղաւ Անգլիոյ Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութիւնը, կամ ըսենք՝ անգլիական Լէյ- պըր Փարթիի . ընդհակառակը՝ երկուքն ալ ամէն կերպ աշխատեցան ընկճել հնդիկ բանուորներու դիմադրական ոգին՝ որ սկսեք էր ար- թըննալ ընդդէմ բրիտանական իմպերիալիզմին : Միակ օժանդակու- թիւնը, զոր ստացաւ այդ շարժումը, Կոմունիստ Կուսակցութենէ էր, որովհետեւ իրապէս Կոմունիստ Կուսակցութիւնն էր որ ստեղծեց եւ ուժեղացուց Թրէյտ Իւնիւրնի շարժումը :

Սկզբնական շրջանին, հնդկական բանուորական շարժումը օր- դանական եւ գործօն մասը կը կազմէր հնդիկ ժողովուրդի ընդհանուր ազգային ազատագրական շարժման, շարժում մը, որու առաջնորդն էր հնդիկ երիտասարդ բուրժուազիան, որ կ'ուզէր փշրել բրիտանա- կան իմպերիալիզմի լուծը եւ Հնդկաստանը դարձնել անկախ : Այդ շարժման գլուխը անցեր էր Կանտին : Անոր հիմնած Գոնկրէս Փար- թիին նեցուկ եղան բանուորներն ու գիւղացիները : Բայց այդ կուսակ- ցութիւնը սոսկ իր քաղաքական նպատակները կը հետապնդէր եւ կա- րեւորութիւն չէր տար բանուորները կազմակերպելու գործին . թէեւ ան կարեւոր դէնք մըն էր բրիտանական իշխողներուն դէմ :

ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԻԶՄԸ ՈՒՐԻՇ ԱՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՄԷՁ

Ասիական միւս երկիրներուն մէջ — Հնդկաչին, Ինտոնեզիա, Քորէա, Պուրմա, Մալայիա, Ֆորմոզա, Ֆիլիպեաններ, եւ այլն — բոլորն ալ ենթարկուած իմպերիալիստական անխիղճ շահագործման, բանուորական կազմակերպութիւնները ազատօրէն աճելու եւ զարգա- նալու հնարաւորութիւն չունէին, այնքան սաստիկ էր անոնց վրայ գործադրուած ճնշումը : Այդ երկիրներուն մէջ տեղական ժողովուրդ- ները ստորագաս էակներ կը նկատուէին . անոնց գոյութիւնը պարզա- պէս կը նկատուէր որպէս շահու աղբիւր՝ եւրոպական եւ ամերիկեան իմպերիալիստներուն համար : Բանուորներու գործազույններուն՝ կա- ռավարութիւնը կը պատասխանէր դէնքով, ատոր համար գործազույ- ները երբեմն կը փոխուէին ապստամբութեան : 1926-ին, Ճափայի եւ

Սուսամթրայի դործադուլային ապստամբութիւնները հոլանտական իմպերիալիստները վայրենաբար ճգմեցին զէնքի ուժով: Միայն Ֆիլիպեան կղզիներու մէջ Թրէյտ Իւնիլընի շարժումը քիչ մը զօրաւոր էր, ան ալ՝ չնորհիւ Կոմունիստ Կուսակցութեան հոգատար առաջնորդութեան: Միւս տեղերու մէջ բանուորական միութիւններ կային թէեւ, բայց անոնք ենթարկուած էին իմպերիալիստական հսկողութեան:

13.— ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆԻ ՊԱՅՔԱՐԸ ԼԱՏԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ (1918-1945)

Կեդրոնական եւ Հարաւ. Ամերիկեան երկրամասը, որ կ'երկարի Մ. Նահանգներէն մինչեւ Բարեյուսոյ Գլուխը, գրեթէ ինը միլիոն քառակուսի մղոն տարածութեան վրայ, 170 միլիոն բնակչութեամբ կը ներկայացնէ կազմակերպուած 20 պետութիւններ, որոնք երկարատեւէ մը ի վեր ենթարկուած են եղեր իմպերիալիստներու արշաւանքներուն ու աւարտութեան: Լատին Ամերիկան, ամբողջութեամբ ռազմազայտ մը եղած էր միմիանց անհաշտ իմպերիալիստական պետութեանց — Մ. Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ, Գերմանիոյ, Ճարմնի եւ Իտալիոյ — համար: Այդ 20 երկիրներու վիճակը կիսազաղութային էր: Իմպերիալիստական պետութեանց միջեւ մղուած երկար ու սուր պայքարներուն մէջ Միացեալ Նահանգները՝ ուրիշ անունով «Եւանքի իմպերիալիզմը» մնաց ամենէն հուժկուն, որ կամաց կամաց իր հակառակորդները հեռացուց եւ հաստատեց իր անվիճելի դերիշխանութիւնը: Բայց դրութիւնը նոյնը չմնաց. Մ. Նահանգներու զէմ ցցուեցան Փաշիստական Առանցքի պետութիւնները — Գերմանիա, Ճարմն եւ Իտալիա: Հիթլէրի մեծագոյն նպատակն էր դրաւել Լատին Ամերիկան:

1810-1826-ի տարիներու շրջանին, Լատին Ամերիկեան ժողովուրդները յեղափոխական երկար ու դժուարին կռիւներ մղեցին ըմպանիոյ, Փորթուգալի, Տրանսայի, Հոլանտայի եւ Անգլիոյ զէմ եւ շահեցան իրենց ձեւական ազատութիւնը: Բայց ազատութեան անունով հրապարակ իջնող այդ հանրապետութիւնները երբեք անկախ դիրքի տիրացած չէին, այլ ենթարկուած էին իմպերիալիստական պետութեանց, ի մասնաւորի՝ Մեծն Բրիտանիոյ եւ Մ. Նահանգներուն: Մի քանի փոքր երկիրներ — Փորթո Ռիքօ, Հոնուրաս, Կուաչա, Մարթենիկ եւ այլն — մնացին իրական զաղութներ:

Այս ընդարձակածաւալ երկրամասի երկիրները նոյն տեսակի կեցութեան յատկանշական գիծեր կը յայտնարեին, ինչպէս իմպերիալիստական տիրապետութեան տակ գտնուող միւս ռեժիմները:

այսինքն՝ խեղճուկրակ զարգացած ճարտարարուեստներ, արտադրութիւնն ու առուտուրը օտար շահարկուններու եւ բռնապետերու ձեռքերուն մէջ, մէկ կամ երկու բերքի պայմանագրական հողագործական սխտէմ, քաղաքական ղեկաւարտութիւն ռեժիմ, հարստութեան ծայրայեղ կուտակում մասնաւորներու, եւ թշուառութիւն՝ ժողովրդական մասսաներուն, խտիւ ճնշում մասսայական այս փորձերուն, որոնք ուղղուած են դրութեան բարելաւմի նպատակին, ընդհանուր ժողովուրդի անդրազիտութիւն եւ սովահարութեան մօտեցող զոյավիճակ թէ՛ ճարտարարուեստի կապուած բանուորներուն եւ թէ՛ երկրագործութեամբ զբաղող ղեկացիներու մէջ: Ամբողջ Լատին Ամերիկայի մէջ կը տիրէ նոյն թշուառութիւնը, որպիսին տիրող է Հնդկաստանի եւ Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ:

Լատին Ամերիկայի մէջ Թրէյտ Իւնիլընի շարժումը երկար եւ յուսահատական կռիւ մղեց մէկտեղէն միւսը հաստատուն արմատ ձեռքելու համար, որովհետեւ իր զէմ կանգնած էին կազմակերպուած հողատէրերը իրենց զաշնակիցներով եւ օտար իմպերիալիստները իրենց բոլոր կերպարներով: Այս երկիրներուն մէջ առհասարակ աշխատաւորները իրենց դործատէրերուն հետ խաղաղ միջոցներով համաձայնած չէին, այլ մղած էին երկար ու դժուար կռիւներ, արիւնալի կռիւներ: Անոնց մէջ չենք հաշուեր անկախութեան համար մղուած յեղափոխական կռիւները, այլ հարիւրաւոր ուրիշ գասակարգային կռիւներ՝ որոնք տեղի ունեցան այս կամ այն անջատ երկիրներու մէջ: Պոլիվիան ունեցաւ 60 յեղափոխութիւններ՝ 74 տարիներու ընթացքին. Վենեզուելան՝ 50, 70 տարիներու ընթացքին. Փարակուէյն ունեցաւ 100 յեղափոխութիւններ՝ իր սեփական կառավարութիւնը կազմելէն յետոյ ու նոյն երեւոյթը կը տեսնենք միւս բոլոր երկիրներու մէջ՝ Մեքսիկոյէն մինչեւ Արժանթին:

ՊԱՆ-ԱՄԵՐԻԿԱՆ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Լատին Ամերիկեան Թրէյտ Իւնիլընները — Չիլիի, Արժանթինի, Քուպայի, Մեքսիկայի եւ մի քանի ուրիշ երկիրներու մէջ — արդէն արմատ բռներ էին 20-րդ դարէն սկսեալ: Բայց այդ շարժման իրական աճումը սկսաւ Առաջին Աշխարհամարտէն յետոյ եւ շարունակեց աւելի արագ աճիլ մինչեւ երկրորդ Աշխարհամարտը: Այդ շրջանին Լատին Ամերիկայի մէջ զարգացան զաղութային եւ կիսազաղութային արդիւնարեութիւններ — ինչպէս այն անկարգութիւնները, որոնք արտածման համար կ'արտադրէին սուրճ, շաքար, պանանէս եւ այլն: Ատոնց հետ զարգացան նաեւ մետաղներու հանքագործութիւնը, երկաթուղիները, նաւահանգիստները, փոխադրական ճամբաները. ա-

սով պրոլետարներու բանակն ալ սկսաւ ստուարանալ : Բանուորները երբ բազմացան՝ Թրէյտ Իւնիւրնները աւելի զօրացան եւ ծնունդ տուին քաղաքական կազմակերպութեան : Կանխագոյն շրջանին Լատին Ամերիկայի աշխատաւորական շարժումին՝ մինչեւ Առաջին Աշխարհամարտը՝ ղեկավարներն էին Անարխիստները եւ Անարխո-սենտիկալիստները, որոնք քաղաքական գործունէութեան չէին հաւատար, եւ ճիշդ ատոր հետեւանքով ալ ուժեղացած հալածանքին չկրնալով դիմադրել, օրինական նկատուած Թրէյտ Իւնիւրններուն տեղի տուին . իսկ ասոնք միանալով կազմեցին Պան-Ամերիկեան Աշխատաւորական Դաշնակցութիւնը, որուն առաջին գոնկրէսը գումարուեցաւ 1918-ին, Լորէտոյի մէջ : Այս կազմակերպութիւնը տխրահռչակ յետադիմական Մաթիու Վոլի առաջնորդութեամբ մտաւ նախ Գամպլըսի, յետոյ՝ Կրինի (AFL) հովանաւորութեան տակ : Ան ունեցաւ հինգ գոնկրէսներ, վեցերորդը որոշուած էր գումարել 1930-ին, Հաւանայի մէջ, բայց այդ տեղի չունեցաւ :

Այս կազմակերպութեան գործունէութիւնը թուղթի գործունէութիւն էր : Լատին Ամերիկայի բանուորութիւնը ո՛չ մէկ դրական արդիւնք ձեռք բերաւ անոր առաջնորդութենէն, որովհետեւ զայն գըլխաւորողները իմպերիալիստներու գործակալներն էին :

ԱՄԿԻՆ ԼԱՏԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Ամսթերտամի Ինտերնացիոնալը Երկրորդ Ինտերնացիոնալի իմպերիալիստական ոգիով շատ քիչ ուշադրութիւն դարձուց Լատին Ամերիկայի մէջ իրական բանուորական միութիւններ կազմելու գործին շուրջ, բայց երբ պատահականօրէն ուշադրութիւնը կեդրոնացուց՝ տեսաւ որ Լատին Ամերիկան՝ Ամերիկեան Աշխատանքի Դաշնակցութեան (AFL) պահեստանոցին վերածուեր է : Այդ ատեն էր որ Աշխատաւորական Միութեանց Կարմիր Ինտերնացիոնալը (ԱՄԿԻ) մտաւ Լատին Ամերիկայի մէջ ու սկսաւ գործել, աշխոյժ կռիւ մղելով AFL-ի եւ Պան-Ամերիկեան Աշխատանքի Դաշնակցութեան դէմ : Լատին Ամերիկայի մէջ ձախակողմեան տարրեր չէին պակսեր . անոնք առաջնորդի մը կը սպասէին, եւ երբ այդ առաջնորդը ներս մտաւ, անոնք բոլորուեցան անոր շուրջը, կազմեցին ձախակողմեան բանուորական միութիւններ, եւ յառաջ տարին շատ մը գործադուլներ, որոնք պսակուեցան յաջողութեամբ : 1929-ի Մայիսին, ԱՄԿԻ-ի Լատին Ամերիկեան ուժերը ընդհանուր գոնկրէս մը գումարեցին Մոնթեվիտէոյի (Ուրուկուէյ) մէջ եւ միասնական ճակատով կազմակերպուեցան նոր մարմինի մը մէջ, որուն անունն էր՝ Քոնֆետերասիոն Սինտեկալ Լատինո Ամերիկանօ (Լատին Ամերիկեան Սէնտիկալիստական

Համադաշնակցութիւն) : Այս մարմինը եղբայրական կապով միացած էր Մոսկուայի ԱՄԿԻ-ի հետ : Անիկա կազմակերպուեցաւ այնպիսի ատեն մը, երբ Լատին ամերիկեան աշխատաւորական շարժումը իր ճղնաժամային վայրկեանները կ'ապրէր : Մի քանի ամիս յետոյ՝ 1929-1932-ի տնտեսական հուժկու տազնապը եկաւ եւ իր թեւերը տարածեց ամբողջ երկրամասին վրայ : Այդ երկիրներու երիտասարդ եւ աշխոյժ Կոմունիստ Կուսակցութեան հետ միասին՝ ԲՍԱ-ը մարտական կռիւներ մղեց պաշտպանելու բանուորները տնտեսական տազնապի ճիրաններէն : Գործադուլներ տեղի ունեցան Պրագիլի, Քուպայի, Մեքսիկոյի, Ուրուկուէյի, Արժանթինի, Քոլումպիոյ եւ ուրիշ երկիրներու մէջ : Այս գործադուլները ահաբեկիչ պայմաններու ներքու փոխուեցան ապստամբութեան : Սոյն տարիներուն, ամենէն նշանակելի կռիւներէն մէկն էր 1933-ի Օդոստոսին, Քուպայի ընդհանուր գործադուլը, որ Կոմունիստ Կուսակցութեան գլխաւորութեամբ փոխուեցաւ ապստամբութեան : Այդ գործադուլը պսակուեցաւ յաջողութեամբ : Մկատոյի զիկտատուրան տապալեցաւ եւ հաստատուեցաւ նոր կառավարութիւն մը, որ ութը-ժամեայ աշխատօրի օրէնք դրաւ եւ յայտարարեց ժողովրդական ազատութիւն . ազատութիւն մամուլի, ազատութիւն հաւաքոյթի :

1933-ի վերջերը, տնտեսական տազնապի աւերածութեան դէմ մղուած կռիւն յաջողեց ուրիշ կռիւ մը . Կռիւ՝ Փաշիզմի դէմ : Հիթլեր եւ Մուսոլինի կ'աճապարէին իրենց ուժերը կեդրոնացնել՝ հաստատուելու Լատին Ամերիկայի մէջ : Անոնց բարձրադաշակ ըսպառնալիքը Մ . Նահանգներու դէմ էր : Անոնց նպատակն էր գրաւել Փանամայի ջրանցքը : Յետադիմականներու մեծ մասը, հոգեւորականները ընդհանրապէս, Փաշիզմի դրօշակակիրները դարձան : Յայտնի էր որ Լատին Ամերիկան ռազմադաշտի մը վերածուելու վրայ էր, ռազմադաշտ մը՝ ուր պիտի մղուէր Փաշիզմի դէմ սկսուած համաշխարհային մեծագոյն կռիւը :

Եանքի իմպերիալիզմը սկսաւ արագ շարժիլ եւ խորամանկ միջոցներու դիմել, Լատին Ամերիկան իր ճիրաններուն մէջ պահելու համար : 1933-ի Մարտին, Նախագահ Ռուզվելթ յայտարարեց իր «բարի դրացնութեան» քաղաքականութիւնը, որու նպատակն էր վարադուրել ամերիկեան իմպերիալիզմի նուաճողական ոգին : Անկէ յետոյ՝ Ռուզվելթ ճամբորդեց Հարաւային Ամերիկա, գնաց Մոնթեվիտէօ, որ կարմիրներու կեդրոնատեղին էր եւ սկսաւ իր ամբոխավարական ուղերձները հրամցնել ժողովուրդին : Անոր «բարի դրացնութեան» քաղաքականութիւնը ամերիկեան իմպերիալիզմը արմատախիլ չէր ընել, այլ՝ ժամանակաւորապէս կը դադրեցնէր ամերիկեան զինեալ միջամտութիւնները Լատին Ամերիկեան հանրապետութեանց քա-

ղաքական կեանքին մէջ: Ասոր հետեւանքն այն եղաւ որ Ռուզվելթ մեծ ժողովրդականութիւն շահեցաւ Լատին Ամերիկայի դեմոկրատական մասսաներուն մէջ՝ բացառելով տեղական իշխանները: Ռուզվելթի բարի դրացնութեան քաղաքականութիւնը ո՛չ միայն Լատին Ամերիկեան երկիրներու մասսաներուն համակրութիւնը շահեցաւ, այլևս վերմանական, իտալական եւ ճարտնական Փաշիստներուն առջեւ փակեց մուտքի ճամբան, որով անոնք չկրցան հող գտնել Կեդրոնական եւ Հարաւային Ամերիկայի մէջ: Այդ քաղաքականութիւնը, ուրեմն, նըպաստաւոր էր միայն Ամերիկեան Իմպերիալիզմին: Ռուզվելթի դիմակաւոր իմպերիալիստական քաղաքականութեան կը նպաստէր ուրիշ հանգամանք մը եւս. այդ ալ Փաշիստներուն դէմ մղուած ընդհանուր ժողովրդական մասսաներու կռիւն էր:

1935-ի Յուլիոս-Օգոստոս ամիսներուն, Կոմունիստ Ինտերնացիոնալը իր եօթներորդ գոնկրէսին մէջ հրատարակեց իր պատմական նշանաբանը. այն է — համաժողովրդական ճակատով միասնական կռիւ՝ Փաշիզմի դէմ: Այս նշանաբանը՝ որ հրատարակուեցաւ ու տարածուեցաւ ռազմապիտական բախտորոշ այն օրերուն, երբ Փաշիզմը իր յաղթական արշաւը կը պատրաստէր, իր խորունկ եւ վերամղիչ ազդեցութիւնն ուեցաւ ինչպէս շատ մը երկիրներու, նոյնպէս եւ Լատին Ամերիկայի մէջ:

14. — ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՖԱՇԻՍՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՁ (1918-1939)

Մենատիրապաշտ գործատէրերը, ուր որ Փաշիզմը հաստատել կ'ուզէին, կ'աշխատէին ամէն կարգի միջոցներով գործաւոր դասակարգը բարոյալքել, դայն կազմալուծել եւ անոր վրայ դնել մշտատեւ հսկողութիւն մը: Այդ նպատակին հասնելու համար անոնք գտան աշխատաւորական կազմակերպութեան ձեւ մը, որ օգնելու էր իրենց յետադիմական ծրագիրին: Այս Փաշիստ աշխատաւորական մարմինները, որոնք զանազան երկիրներու մէջ իրարմէ կը տարբերէին, բոլորին ալ հիմնական գիծը նոյնն էր. ա. — Անոնք կազմակերպուած էին առանց պրոլետարական բնոյթի: Բ. — Անոնց արգելուած էր գործադուլը: Գ. — Անոնք պետութեան կողմէն ենթարկուած էին խիստ հսկողութեան. որեւէ ընդվզում խտրու կը պատժուէր: Դ. — Անոնք որեւէ իրաւունք չունէին որեւիցէ առիթով սակարկութիւն ընել գործատէրերու հետ: Ե. — Անոնց սկզբունքն ըլլալու էր մերժել դասակարգային կռիւր եւ ընդունիլ կապիտալի եւ աշխատուծի միջեւ շահերու ներդաշնակութեան պահպանումը:

Ռուսական յեղափոխութեան ջախջախիչ հարուած տալու նը-

պատակով գործատէրերը կը ձգտէին ամբողջապէս բնաջնջել Թրէյտ Իւնիքըները, հող չէ թէ անոնք կոմունիստներուն համակիր էին կամ ոչ: Իրենք պէտք ունէին միայն ու միայն հլու հպատակ՝ իրենց ծառայող գործաւորական միութեանց: Եւ անոնք ստեղծեցին այդ միութիւնները:

ՖԱՇԻՍՏ ԻՒՆԻՐՆԵՐԸ ԻՏԱԼԻՈՅ ՄԷՁ

Մուսոլինի, թէեւ 1922-ին իտալական կառավարութիւնը առաւ իր ձեռքին մէջ եւ իր կոնակը տուաւ Փաշիստ աւազակներուն, որոնք ռատիականական եւ զինուորական պաշտպանութեան տակ կը թափառէին հոս ու հոն, կը սպաննէին բանուորական առաջնորդները, կը հրդեհէին անոնց ահուճրները, բայց ան դարձեալ չէր կրնար չբացընել Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութիւնը:

Սկզբնական շրջանին, Մուսոլինի, Փաշիզմի յառաջապահը ըլլալով հանդերձ, տակաւին չէր գիտեր թէ պետական հսկողութեան տակ ինչպիսի՞ միութիւններ կարելի էր հաստատել, որ ոչնչանային արձատական միութիւնները: Առաջին շորս տարիներուն, տկարացուց պարլամենտի հեղինակութիւնը, թոյլ տուաւ որ բայց ճակատով Թրէյտ Իւնիքըներ կռուին. անոնց մէջէն ճանչցաւ ամենէն կատաղի ու եռանդոտ առաջնորդները եւ զանոնք իրարու ետեւ յանձնեց տեւորիստներուն: Նոյն ատեն իր ուղած ձեւի Թրէյտ Իւնիքըներ հիմնեց, որոնց միացան նախկին իւնիքըներու անդամները: 1924-ի Նոյեմբերին, Փաշիստ Թրէյտ Իւնիքըները կազմեցին մէկ ընդհանուր կազմակերպութիւն — Փաշիստական Համադորձակցութեանց Դաշնակցութիւն: Այս կազմակերպութեան հետ երևան եկաւ ուրիշ զօրաւոր մարմին մը, գործատէրերու մարմինը — Արդիւնաբերական Ընդհանուր Համադաշնակցութիւնը: Այս երկու կազմակերպութիւնները, առաջինը՝ 2 միլիոն 766,000 անդամներով, երկրորդը իր հարստութեամբ եւ զինուորական ուժով, դարձան Փաշիստ պետութեան երկու պողպատեայ հուժկու բազուկները:

ՆԱՅԻ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՁ

1933-ի Յունուարին, Հիթլէր երբ զերմանական պետութեան գլուխն անցաւ եւ փոթորկարեր ջոկատներով ճգմեց Թրէյտ Իւնիքընի շարժումը, առաջին օրերուն՝ պահ մը վարանեցաւ, խորհելով թէ իր յախուռն ծրագրին մէջ պիտի չյաջողէր, բայց յետոյ՝ քաջալերուած Սոցիալ Դեմոկրատներու ցոյց տուած համակրութենէն, հետեւեցաւ Մուսոլինիի օրինակին. Մայիս 11-ին կազմակերպեց Աշխատաւորական ձակատը — ենթադրական բանուորական կազմակերպութիւն մը

— եւ անոր գլուխը կանգնեցուց նացի քաղաքագէտ մը — Տոքթ. Լիցը:

Հիթլէր, նախ հետեւեցաւ Մուսոլինիի քայլերուն եւ ստեղծեց հորիզոնական գիծով երկու համադաշնակցութիւններ, բանուորներու համադաշնակցութիւնը եւ գործատէրերու համադաշնակցութիւնը, բայց վախնալով որ առաջինը կերպով մը կը մօտենար դասակարգային կռիւին, կմախքի վերածեց գործաւոր դասակարգը եւ հիմնեց Աշխատաւորական ձախտը, անկերպարան մարմին մը: Այսպիսով բոլոր «արդիւնարեւոյնները», գործատէրերը եւ գործաւորները, հողատէրերն ու հողագործները, բոլորն ալ համախմբեց միայն մէկ կազմակերպութեան մէջ, որ կը ներկայացնէր նացի պետութիւնը եւ ինքեղաւ այդ պետութեան ղեկավարը: Այդ Աշխատաւորական ձախտը ունեցաւ 28 միլիոն անդամներ, որոնց բոլորին նպատակը նոյնն էր — «Գերմանիան ամէն բանէ առաջ, ամէն բանէ վեր, Գերմանիան»:

Աշխատաւորական ձախտը պայմանագրութիւն կնքելու իրաւունք չունէր, ո՛չ ալ կրնար սակարկութիւն ընել. ամէն ինչ կախում ունէր անհատ կապիտալիստներու քմահաճոյքէն: Գործադուլը կը նըկատուէր ըմբոստութիւն՝ պետութեան դէմ:

Նացի ռեժիմը խոշոր գործատէրերու ծայրագոյն ձեւի դիկտատուրան էր. ֆինանս կապիտալի իշխանութիւնը:

ԿԼԵՐԱԿԱՆ ՖԱՇԻՉՄԸ ԱԻՍՏՐԻՈՅ ՄԷՋ

Աւստրիոյ մէջ Փաշիգմը բացայայտօրէն կղերական խառնուածք ունէր: Վատիկանը այն հաւատքը տարածեւ էր որ երկրային դրախտը պատրաստողները մենատէր կապիտալիստներն են: Աւստրիական կղերական Փաշիգմը, Մուսոլինիի եւ Հիթլէրի հիմնած Փաշիգմին նման, կը ջատագովէր աշխատաւորական շարժման ամբողջական ուղնչացումը, չբացումը՝ դեմոկրատական ազատութեանց, ջնջումը՝ պարլամենտական կառավարութեան եւ հաստատումը այն հիմնարկութեան՝ որ կը նուիրագործէ բանուորներու անսահման շահագործումը ըլլայ հողերու վրայ, ըլլայ գործարաններու մէջ:

Դոլֆուսի կառավարութիւնը համաձայն էր Կաթոլիկ Եկեղեցւոյ առանձնաշնորհեալ դիրքին: Նոյն Վատիկանի ազդեցութեան տակ Դոլֆուսի կառավարութիւնը անհետացուց Սոցիալ Դեմոկրատական Իւնիթները եւ զանոնք փոխարինեց Կաթոլիկ Թրէյտ Իւնիթներով: Աւստրիոյ բանուորները, սակայն, դաժան պայմաններու տակ՝ մարտական ոգիով յաջողեցան կազմել ընդյատակեայ կազմակերպութիւններ, եւ անոնցմով յառաջ տարին շարք մը գործադուլներ: Բայց դրութիւնը յանկարծ փոխուեցաւ, երբ Հիթլէրի ուժերը 1938 Մարտ 12-ին

արշաւեցին ու Աւստրիան առին իրենց ճանկին մէջ: Տարի մը յետոյ՝ 1939 Մարտ 15-ին, Հիթլէրի Վեյմարյան գրաւեց նաեւ Չեխոսլովաքիան եւ ոչնչացուց այդ երկրի Թրէյտ Իւնիթները:

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆԸ ՖՐԱՆՔՈՅԻ ՍՊԱՆԻՈՅ ՄԷՋ

Սպանական հանրապետութիւնը Սոցիալ Դեմոկրատական Ինտերնացիոնալի «ոչ-միջամտութիւն» քաղաքականութեան օգնութեամբ դիկտատոր Ֆրանքոն երբ յաջողեցաւ տապալել, անմիջապէս հաստատեց Ֆալանկիստ Կուսակցութեան հիմնաքարերով իր Փաշիստական սիստէմը: Սպանական Փաշիգմը նոյնպէս զօրաւոր կղերական տարրեր ունէր իր մէջ — Կաթոլիկ Եկեղեցւոյ խստագոյն նուիրապետութիւնը, որ միացած էր ժանդոտած յետադիմութեան հետ: Այդ երկրին մէջ եւս հաստատուեցաւ անուանականօրէն «աշխատաւորական միութեան» սիստէմը՝ պետական հսկողութեան տակ, որուն զբաղմունքը կեցած էր եւ մինչեւ այսօր ալ կը մնայ նոյն մարդը — Ֆրանքոն:

Այսուհանդերձ, պէտք է ըսել թէ բանուորական շարժումը ըմպանիոյ մէջ բոլորովին չկազմալուծուեցաւ. Կոմունիստ Կուսակցութեան առաջնորդութեամբ ցոյցեր տեղի ունեցան 1947-ին Պասքի մէջ, իսկ 1951-ին՝ ընդհանուր գործադուլ յայտարարուեցաւ Պարչիւնայի մէջ: Ֆրանքոն ճզմեց բոլոր շարժումները, բայց այդ չի նշանակեր թէ ան դիակնացուց Սպանիոյ բանուորութիւնը:

ՖԱՇԻՍՏ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՃԱԲՈՆԻ ՄԷՋ

Երկու աշխարհամարտերու միջեւ եղած շրջանին, ձաբոնի աշխատաւորական շարժումը շատ սուր հալածանքներու ենթարկուեցաւ: Երկիրը, իր բուրժուական անկատար յեղափոխութեամբ, կը տառապէր ուժեղ ֆէոդալ հողատէրերու կրունկներուն տակ: Իշխող դասակարգերը շատ խոր ատելութեամբ կը նայէին բանուորական կազմակերպութեանց: 1900-ին օրէնքը ոճիր կը նկատէր Թրէյտ Իւնիթն կազմակերպելու օրէնք փորձ. ոճիր էր նաեւ գործադուլը: Իսկ 1925-ի օրէնքով, ոստիկանութիւնը կրնար արգելել ժողովրդական օրէնք հաւաքոյթ: Կայսեր ուղղուած քննադատութիւնը ենթակայ էր խիստ պատիժի: 1920-1938 տարիներուն՝ 60,000 անձեր ձերբակալուեցան արմատականութեան յանցանքով: Միայն 1932-ին 14,000 ձերբակալութիւններ եղան «վտանգաւոր մտածումներու» արգելիչ օրէնքով: Կոմունիստ Կուսակցութիւնը, որ վերակազմուեցաւ 1926-ին, ենթարկուեցաւ խաչակրութեան եւ 1933-ին բոլորովին հրապարակէն անհետացաւ իր անունն իսկ:

Սոցիալ Դեմոկրատիան ձաբոնի մէջ, նախքան Երկրորդ Աշխարհամարտը, նկատելի ուժ էր. յետոյ բաժնուեցաւ մասերու. ամենէն վերջը՝ 1932-ին, կազմուեցաւ Սոցիալ Մասսաներու կուսակցութիւնը: Նոյն տարին Կոմունիստ Կուսակցութիւնը եւս կազմուեցաւ բայց Երկրորդ Աշխարհամարտին ենթարկուեցաւ հալածանքի:

ձաբոնական Աշխատանքի Դաշնակցութիւնը, որ 1921-ին Երեւան եկաւ Բարեկամական Սիրոյ Ընկերակցութեան ծոցէն, վերակազմուեցաւ 1931-ին, եւ մնաց միակ կազմակերպուած աշխատաւորական մարմինը: Բայց աս ալ անցաւ պահպանողական Սոցիալ Դեմոկրատներու Բունճի Սուղուքի քիթի պղծութեան տակ:

Ինչպէս Գերմանիոյ, Իտալիոյ եւ Աւստրիոյ մէջ, նոյնպէս ձաբոնի մէջ կապիտալիստները յարեցան Ֆաշիզմին. անոնք այլեւս պէտք չունէին Սոցիալ Դեմոկրատներու աջակցութեան: Հիթլէրի օրինակին հետեւելով կազմեցին փոթորկարեր ջոկատներ:

1937-ին ընաձնջեցին ձախակողմեան Թրէյտ Իւնիքները, իսկ 1940-ին լուծեցին Սոցիալ Մասսաներու Կուսակցութիւնը եւ կառավարութիւնը իր ուզած ձևի ընկերութիւն մը հիմնեց — Արդիւնաբերական Հայրենասիրական Ընկերութիւնը — որ Սամպօ անունով ծանօթ է պատմութեան մէջ:

Սամպոն նացիական ձեռով աշխատաւորական ճակատ կը ներկայացնէր: Անոր շնորհիւ աշխատաւորութեան եւ կապիտալիստներու միջև ծագած վէճերը կ'անհետանային, անոր զբօշակին տակ բոլոր ձաբոնցիները Կայսերական Գահին չլու եւ հաւատարիմ ծառաներ կը համարուէին: Սամպոյի մէջ բանուորները պատ էին հիմնել իրենց կոոպերաթիւ մարմինները, որոնց ղեկավարն էր գործատէրը: 1941-ին Սամպոն ունեցաւ 4,500,000 անդամներ, որոնց անունով պատգամաւորներ զրկուեցան Ֆաշիստ Գերմանիա եւ Իտալիա: 1943-ին այդ կազմակերպութիւնը ունէր վեց միլիոն անդամներ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԹՐԷՅՏ ԻՆՆԻՐՆՆԵՐԸ ԵՒ ՍՈՑԻԱԼԻՉՄԸ (1917-1939)

Այժմ մենք հասանք նոր հասարակարգի մը առջև. սոցիալիստ Սովետական երկիրը: Հետաքրքրական է ուսումնասիրել այդ երկրի Թրէյտ Իւնիքներու գոյութեան իրաւունքը, քանի որ կապիտալիստական երկիր մը չէ ան, բանուորական միութիւնները որո՞ւ դէմ պիտի պատրաստուին, որո՞ւ դէմ պիտի կռուին: Կարեւոր հարցումներ են ասոնք, որոնց պէտք է պատասխանել:

Երբ ուսւ բանուորներն ու գիւղացիները 7 Նոյեմբեր 1917-ին Հին Ռուսաստանի քաղաքական ղեկը իրենց ձեռքն առին, երկրի արդիւնաբերութեան ապարատը գրեթէ անարժէք վիճակի հասեր էր:

Մի քանի ճարտարաբուեստները բոլորն ալ հին ձեռով, սեփականութիւններն էին զոնապան իմպերիալիստական խմբաւորումներու. իսկ մեքենաները տեսակ տեսակ՝ օտար գործարաններու արտադրութիւններ էին: Ամբողջ արդիւնաբերական սիստէմը՝ որպէս արդիւնք իմպերիալիստական եւ քաղաքացիական պատերազմներու, կը մնար աւերեալ դրութեան մէջ: Երկրագործութիւնը եւս աւերեալ վիճակի մատնուած էր եւ սովը տարածեր էր իր թեւերը: Այդ սարսափելի կացութիւնը տակաւին աւելի կը վատթարանար անով՝ որ բանուորները բացարձակապէս արդիւնաբերութիւնը ղեկավարելու փորձառութիւնը չունէին, մինչ նախկին փորձառու մասնագէտ մարդիկ՝ կամ հեռացեր էին կրկրէն եւ կամ յայտարարած էին գործադուլ: Արդիւնաբերական արտադրութիւնը նախապատերազմական շրջանին համեմատած՝ ինկած էր քսան տոկոսով: Սովամահ եղան տասնեակ հազարներով մարդիկ, կիներ ու երեխաներ: Կապիտալիստ աշխարհին մէջ ո՛չ մէկ օգնութիւն կարելի էր սպասել. ընդհակառակը՝ իմպերիալիստները հետզհետէ աւելի կը սաստկացնէին տնտեսական պլոքէյտը եւ կ'աշխատէին տապալել դեռ եւս մանուկ Սոցիալիստ երկիրը՝ զինուորական միջամտութիւններով:

Հակառակ սակայն այս դժոխային պայմաններուն եւ յուսահատեցուցիչ դժուարութիւններուն, սովետական Ժողովուրդը բոլջելիկ անձնուրաց առաջնորդներու ղեկավարութեամբ, յաջողեցաւ կառուցանել արդիւնաբերական նոր սիստէմ մը: Անոնք ընկճեցին ներքին հակալեզակփոխութիւնը եւ յառաջապահները զարձան նոր Սոցիալիստական հիմնարկութեանց. անոնք մարզեցին հազարաւոր մեքենադէտներ եւ միլիոնաւոր որակաւոր բանուորներ, միջնադարեան յետամնաց հողագործութիւնը վերածեցին արդիական զարգացած երկրագործութեան եւ իրենց սեփական աղբիւրներով կառուցին բարձրօրէն զարգացած արդիւնաբերական ընդարձակածաւալ մարմին մը: 1928-ին Սորհրդային Միութիւնը երկրի արդիւնաբերութիւնը հասցուց նախապատերազմական շրջանի աստիճանին, 1935-ին ան եղաւ Եւրոպայի մէջ արդիւնաբերական ճամբու առաջնորդող երկիրը. իսկ ներկայիս՝ հակառակ Երկրորդ Աշխարհամարտի յառաջացուցած սոսկալի աւերածութեանց, Սովետ Միութիւնը արդիւնագործական արտադրութեան մէջ Մ. Նահանգներու հաւասար աստիճանի վրայ էր կանգնած, իսկ զիտական տեխնիկային զարգացման մէջ՝ Միացեալ Նահանգները մատնած է շնչասպառ մրցումի, որովհետեւ ինք մրդոններով անցեր է յառաջ: 1935-ին, Սոցիալիզմը արդէն իր ամուր հիմքերը հաստատած էր Սորհրդային Միութեան մէջ, այժմ այդ երկիրը կը մօտենայ Սոցիալիզմին վեր՝ հասարակութեան աւելի բարձր սանդխամատին — Կոմունիզմին:

Այս շրջանին, ո՛չ միայն զարգացաւ երկրի արդիւնաբերութիւնը, այլև ընդհանուր անտեսութեան զարգացումով բարձրացաւ բանուորներու եւ գիւղացիներու ապրուստի մակարդակը, կրճատուեցան աշխատատեղերը: Այդ մեծ յեղափոխութեան շնորհիւ մարդէն մարդու շահագործման բոլոր ձեւերը անհետացան, գործարանի, գրասենեակի եւ դաշտի աշխատուորները իրենց սեփական քաղաքական ճակատագիրի տէրերը դարձան:

Անտարակոյս, եթէ Ստալինի փոխարէն ուրիշ առաջնորդ մը ըլլար գրութեան ղեկավարը, առաջնորդ մը՝ որ հաւատարմօրէն հետեւէր Լենինի տակտիկային ու սկզբունքներուն, Սորճրդային Միութիւնը աւելի բարձր աստիճանի մը կը հասնէր, կը խնայուէր տասնեակ հազարաւոր զոհերու կեանքը, զոհեր՝ որոնցմէ ամէն մէկը մէկ մէկ ուժանակներ էին խորհրդային երկիրներու զիմակաւոր՝ Բերիայի նման «կոմունիստներու» մութ գործերն ու մեքենայութիւնները յօդս հանելու համար: Թերեւս այդ առաջնորդը կարող ըլլար խնայել նաեւ Երկրորդ իմպերիալիստական Պատերազմի անհաշիւ ու սոսկալի աւերներն ալ:

Ստալինի հաստատած բիւրոկրատին՝ ինքնին հակասութիւն մը կոմունիզմին, որ համայնակաւ եսը կը ստորադասէր անհատական եսին եւ փորձեց ոստումով մը հասնիլ կոմունիզմին, մեծագոյն հարուածը տուաւ խորհրդային տնտեսութեան. միլիոնաւոր արջառներ ու ոչխարներ մորթուուեցան եւ վնասարարները՝ անցան ընդլստակեայ գործունէութեան: Բայց դարձեալ՝ հակառակ այդ բոլոր դիւային աննպաստ հանգամանքներուն, Սոցիալիզմի կառքին լծուած Հերոս ժողովուրդները կառքը առանց խորտակելու, անցուցին ճահիճներու եւ արեան լիճերու մէջէն: Եւ այդ հերոս ժողովուրդներու հաստատակամ առաջնորդներն եղան խորհրդային երկիրներու Թրէյտ Իւնիլըները: Իրենց էր երկիրը, իրենցն էր գործը եւ անոնք փրկեցին իրենց երկիրը, փրկեցին իրենց գործը:

ԹՐԷՅՏ ԻԻԻՆԻԸՆՆԵՐՈՒ ԿԵՐԸ

Սովետներու Թրէյտ Իւնիլըները կազմակերպուած էին մէկ ընդհանուր մարմինի մէջ, որուն անունն էր՝ Թրէյտ Իւնիլըներու Համա-Միութեան կան Կեդրոնական Սորճուրդ (ԹԵ ՀՄԿՍ): Այս կազմակերպութիւնը ո՛չ միայն յեղափոխութեան ատեն վճռական դեր խաղցաւ, այլև նոյն դերը խաղցաւ Յեղափոխութենէն յետոյ՝ երկրի արագ ճարտարարուեստականացման ճամբուն մէջ: Սովետ աշխատուորական կազմակերպութեանց հիմնական գործն էր պաշտպանել բանուորներու տնտեսական շահերը եւ զարգացնել անոնց մշակութա-

յին միջոցները: Այդ բանը ընելու համար անոնք ստանձնեցին առաւելագոյն արտադրողականութեան զարգացման պատասխանատուութիւնը: Եւ ատիկա հնարաւոր էր միայն սոցիալիստական այն երկրին մէջ, ուր չկար արդիւնաբերական անհատական սեփականութիւն, չըկար շահագիտութիւն, ուր արտադրութեան աճող արդիւնքը ամբողջութեամբ պատկանէր արտադրողներուն: Կապիտալիստական երկրի մը մէջ բանուորներուն համար արտադրութեան պատասխանատուութիւնը ստանձնել կը նշանակէ գործատէրերուն քսակը պարարտացնել եւ աշխատուորական շարժումը անդամալուծել դասակարգային համերաշխութեան գործառնութեամբ:

Սովետներու մէջ թէեւ արդիւնաբերութեան ղեկավարութիւնը ուղղակի պետութեան ձեռքն է, բայց բանուորական միութիւնները կը կազմեն անոր մղիչ ուժը, այդ երկուքին միջեւ վէճ կամ անհամաձայնութիւն գոյութիւն չէր կրնար ունենալ, որովհետեւ պետութեան ղեկավարները իրենք՝ բանուորական խորհուրդներ են:

Թրէյտ Իւնիլըները ո՛չ միայն արդիւնաբերութեան համար կառավարիչներ եւ էնփիներական դասընթացքի թեկնածուներ կը հայթայթեն, այլև կը պատրաստեն որակաւոր բանուորներ: Անոնք ունին մասնաւոր դպրոցներ, որոնց մէջէն միլիոնաւոր որակաւոր բանուորներ դուրս կուգան, բան մը, որ կապիտալիստական երկիրներու մէջ գոյութիւն չունի:

Թրէյտ Իւնիլըներու ուրիշ մէկ գործառնութիւնն ալ Սովետական արդիւնաբերութեան անշեղ կարգապահութիւն հաստատելն է: Յեղափոխութենէն անմիջապէս յետոյ՝ երբ բանուորները տակաւին անվարժ էին եւ գիտակցած չէին իրենց պարտականութեանն ու իրաւունքներուն, քիչ մը դժուար էր կարգապահութիւնը պահելը, բայց տակաւ երբ անոնք գործնականօրէն հասկցան թէ գործը իրենց կը պատկանի, այդ կարգապահութիւնը եղաւ ինքնակամ ու բնական:

Սովետ Թրէյտ Իւնիլըները ուրիշ կարեւոր գործառնութիւն մը ունին, որուն նմանը գոյութիւն չի կրնար ունենալ կապիտալիստական քառասային-անիշխանական տնտեսութեան մէջ. այդ ալ ծրագրուած արտադրողութիւնն է: Պրոլետարական խորհրդաժողովներու մէջ պետական եւ կոմկուսի ներկայացուցիչներով կը մշակուին հընդամեայ ծրագիրները: Հնգամեայ ծրագիրը իրականացնողները բանուորները իրենք են, հետեւաբար Թրէյտ Իւնիլըները իրենք կշռաւոր ձայն ունին այդ խորհրդաժողովներուն մէջ: Բանուորները իրենք են, որ կ'որոշեն հնգամեայ ծրագիրը եւ անոր իրականացման հնարաւոր միջոցառումները: Սորճրդային Միութեան հնգամեայ ծրագիրները երբ բոլորն ալ իրենց ժամանակին գերակատարուած են եղեր, ատոր պազտիքը բուն իսկ բանուորներու ինքնակամ ու եռանդուն աշխա-

տանքին մէջ է : Բուրժուական մամուլը, որ ամէն տեսակի սուտերով կ'ուզէր վարկարկել սովետական տնտեսութիւնը, հնգամեայ ծրագիրներու գերակատարումը սովորաբար կը վերագրէր բռնութեան : Պէտք է ըսել որ բուրժուական մամուլի տեղեկատուութեան մէջ որոշ ճշմարտութիւն մը կար, բայց ան ամբողջական ճշմարտութիւնը չէր : Ճիշդ է որ տեղ տեղ բռնութիւն գործածուած է բանուորներու վրայ, գործը արագացնելու համար : որոնք են եղած, սակայն, այդ բռնութիւնը գործադրողները, այդ է կարեւոր հարցը : Այդ բռնութիւնը գործադրողներն եղած են կամ այն քէլէկէտոզները որոնք արտագրութիւններու քանակին աւելի կարեւորութիւն տուած են քան թէ որակին եւ ուղած են շքանշաններ ստանալ, եւ կամ Բերիայի նման դիմակաւոր կոմունիստները, որոնք բանուորներուն վրայ բռնութիւն գործածելով զանոնք ուզեր են ուղղակի ապստամբութեան մղել պետութեան դէմ : Բայց ասոնք մասնակի երեւոյթներ պիտի նկատենք ո՛չ թէ ընդհանրացած իրականութիւն : Ստալինեան բիւրոկրատին, իր բռնութեան զէնքերը ուղղած էր աւելի շատ կասկածելի մտաւորականութեան՝ քան թէ բանուորութեան դէմ : Մենք գիտենք որ ամէն տեղ Ո՛. Միութեան մէջ, զուրս եկած են բազմաթիւ հարուածային բանուորներ : սխալ է յայտարարել՝ թէ անոնք բռնութեան արդիւնք են եղեր : Նոյնպէս, ամխահանքի բանուորներու մէջ երեւան եկած Ստալինովեան շարժումը, ասիկա եւս կարելի չէ ենթադրել որ բռնութեան արդիւնք է եղեր : Կայ նաեւ ուրիշ յատկանշական օրինակ մը, որ կ'ապացուցանէ թէ բանուորները նոյնիսկ հակառակ եղած են գործի դանդաղեցման : 1937-ին, Թրէյտ Իւնիլըններու Համամիութենական կեդրոնական Սորհուրդի ընդհանուր քարտուղարն էր Ն. Մ. Թամսկի : Այս մարդը զուցէ անկեղծօրէն հակառակ էր բանուորներու միջեւ յառաջ տարուած գործի արագացման մրցումին . ան կը պնդէր որ բանուորները գործի արագացման դիմում երբ միմիանց հետ կը մրցին, այդպիսով երբեմն պատճառ կ'ըլլան մեքենաներու խանգարումին . ատկէ զատ՝ արտադրուած ապրանքներն ալ որակաւոր դուրս չեն գար : Ան կը հրահանգէր որ բանուորները նկատի առնելու են արտադրութիւններու որակը, ոչ թէ գործի արագութիւնը : Բանուորները Թամսկիի մէջ տեսնել կարծեցին տեսակ մը սապողածի ձգտում, եւ զայն գործէն ազատ արձակեցին եւ անոր տեղը ընտրեցին Մ. Շէվրընիքը :

Բուրժուա լրագրողները այս կամ այն անկիւնէն իրենց երկրին նպատաւոր լուրեր կը հաւաքեն եւ զանոնք խեղաթիւրելով կը հրամայեն հասարակութեան, նպատակ ունենալով միայն մէկ բան — փաստել կապիտալիստական զրութեան գերազանցութիւնը եւ սոցիալիստական զրութեան ստորազատութիւնն ու թերութիւնները :

բայց այդ մարդիկը չեն մտնեար այն կարեւոր կէտերուն, որոնք կը փաստեն սոցիալիստական զրութեան գերազանցութիւնը ըլլայ տնտեսական, ըլլայ բարոյական հողի վրայ : Եթէ մենք չթուենք ուրիշ առաւելութիւնները, այլ վեր առնենք միայն մէկ առաւելութիւն՝ այդ կը բաւէ . Խորհրդային Միութեան մէջ գոյութիւն չունի պարագիտ դասակարգ, այլ գոյութիւն ունի մէկ դասակարգ, աշխատաւորական դասակարգը, որ իր բոլոր ճիւղաւորումներով — գործարաններու եւ հանքերու աշխատաւորներ, հողի աշխատաւորներ, գրասենեակներու աշխատաւորներ, պետական ապարատի աշխատաւորներ, մտաւորական աշխատաւորներ — կազմէր է սոցիալիստական, սովետական պետութիւնը : Մեր թուած աշխատաւորական ճիւղերը թէեւ անջատ անջատ կը գործեն, բայց անոնք խրամատներով բաժնուած պարօպապատ շրջանակներու մէջ չեն, այլ անքակտելի կապով կապուած են իրարու հետ : Սովետ վիպասանն ու գիտնականը գիրքերով չըջապատուած՝ իրենց գրասեղաններուն փակած չեն, անոնք շատ յաճախ՝ կը մեկնին գիւղերը, կը լծուին հողային աշխատանքի . կ'ապրին գործնական կեանքը, կ'ուսումնասիրեն այդ կեանքի զժուարութիւնները եւ կը մտածեն զանոնք թեթեւցնելու միջոցներուն վրայ : Ասով վերացական գաղափարները կը շաղկապուին գործնական կեանքի գաղափարներուն հետ, եւ բոլորին գործունէութիւնը կը կապուի բանուորագիւղացիական պետութեան տնտեսական ու կուլտուրական զարգացման կեդրոնացեալ նպատակին հետ :

Անդրադառնալով այժմ Սովետներու Թրէյտ Իւնիլըններուն, կը տեսնենք թէ անոնք երբ մէկ կողմէն արդիւնարեւրական արտադրութեանց արագութեան թափ կուտան, միւս կողմէն սիստեմատիկ կերպով կը բարելաւուին իրենց գործի պայմանները, բաւական է որ երկրին մէջ չկան արիւն ծծող գործատէրեր, վաշխատութեամբ զբաղող պանթաներ կամ հողի մշակներուն աշխատանքը շահագործող անխիղճ հողատէրեր : Սովետ Թրէյտ Իւնիլընները միմիայն իրենց բաժին ինկած պարտականութեանց սահմանափակուածութեան մէջ չեն մնար, անոնց հոգածութեան գլխաւոր առարկան ոչ միայն ազգային ընդհանուր արտադրութեան աճումն է, այլեւ արդիւնարեւրութեան եւ երկրագործութեան զարգացումը, ազգային պաշտպանութիւնը, կրթութիւնը, կուլտուրական յառաջդիմութիւնը եւ բնկերային ապահովութիւնը : Այդ բոլոր կողմնակի գործերուն հետեւելու համար անոնք կ'աշխատին աշխատաւորներու աշխատավարձքը աւելցնել եւ աշխատօրերու ժամերը կրճատել : Եւ այդ որոշումները կը տրուին ո՛չ թէ վերին մարմինի, այլ ուղղակի Թրէյտ Իւնիլըններու կողմէն : Իսկ ընդհանուր ազգային արտադրութեան բանուորներու բաժինը գիտական հաշուարկութեամբ կ'որոշուի բանուորական միութեանց եւ կառու-

վարութեան ներկայացուցիչներու միջև տեղի ունեցած համաձայնութեամբ:

ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սովետ Թրէյտ Իւնիընները կապիտալիստական երկիրներու Թրէյտ Իւնիըններէն կը տարբերին շատ մը գործառնութիւններով, որոնցմէ ամենէն աչքառուն է ընկերային ապահովութեան սխտէմը: Այս ապահովագրութիւնը բանուորին բոլոր զժուարութիւնները հոգատարելու կը ծառայէ: 1927-1928-ին, 1,600,000,000 ուրբի յատկացուած էր ընկերային ապահովութեան համար. 1932-ին 4 երկիրին 323 միլիոն ուրբի, իսկ 1936-ին՝ 8 երկիրին 875 միլիոն ուրբի: 1933-ին ընկերային ապահովութեան ամբողջ սխտէմը, որ նախապէս Աշխատանքի Նախարարութեան ձեռքն էր, փոխանցուեցաւ Թրէյտ Իւնիըններու Համամիութենական կեդրոնական Խորհուրդին:

Սովետ Թրէյտ Իւնիըններու ուրիշ մէկ կարեւոր գործառնութիւնն ալ, գործարաններու եւ հանքերու ընդհանուր քննութիւնն էր, որ կ'ապահովէր բանուորներու կեանքը: Այդ քննութիւնը կը կատարուէր ամէն տարի, ծայրայեղ հոգատարութեամբ:

Սովետ Թրէյտ Իւնիըններու գործառնութեան մասը կը կազմէր նաեւ բանուորներու քաղաքական դաստիարակութեան գործը: Սովետ բանուորները շարժող մեքենաներ չէին, անոնք մարդկային էակներ էին, անոնք պէտք է գիտնային թէ ինչպէ՛ս կը գործեն եւ ինչո՛ւ կը գործեն: Ահա թէ ինչո՛ւ հաստատուեցան Լենինեան մասսայական դպրոցներ, գրադարաններ, լսարաններ, գիշերային դաստիարակչական ակումբներ եւ թատրոններ:

ՍՈՎԵՏ ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆՆԵՐՈՒ ԿԱԶՄԸ

Սովետ Միութեան մէջ Թրէյտ Իւնիընները հիմնուած են ճարտարարուեստական ծրագրի վրայ. այսինքն՝ արդիւնաբերական որոշ ճիւղի մը կապուած բանուորները կը պատկանին նոյն բանուորական միութեան, ներառեալ գրասենեակներու գործուորները: 1937-ին, Ս. Միութեան մէջ կային 163 Թրէյտ Իւնիըններ՝ 23 միլիոն անդամներով, որոնք կը կազմէին ամբողջ երկրին գործող անձերու 84 տոկոսը:

Սովետ Թրէյտ Իւնիընները ամբողջապէս հիմնուած են դեմոկրատական սխտէմի վրայ: Թրէյտ Իւնիըններու Համամիութեանական կեդրոնական Խորհուրդը, զանազան միութեանց կեդրոնական կոմիտէները, միութեանց սահմանային կոմիտէները, գործարանական եւ

տեղական կոմիտէները, գործատեղիներու կոմիտէները, ասոնք բոլորը կ'ընտրուին զաղանի քուէարկութեամբ եւ ենթակայ են յետս կոչման: Եւ որպէսզի պաշտօնեաները բիւրոկրատական հակումներ չյայտնաբերեն, անոնց գործը ըրած են անվճարովի:

Սովետ Թրէյտ Իւնիընները մասնաւոր ուշադրութիւն դարձուցին նաեւ կին բանուորներու վրայ: Սովետ արդիւնաբերութեան՝ ինչպէս սովետ կառավարութեան մէջ, ամէն մէկ ձեւի դրաղում բաց է կիներուն առջև: Չկայ գործ մը, որ բացառապէս այր մարդոց յատկացուած հոշակուի: 1936-ին 4,492,000 կին բանուորներ կային արդիւնաբերական զանազան ճիւղերու մէջ եւ անոնք ունեցեր են նշանակելի գործունէութիւն:

Սովետ Թրէյտ Իւնիընները մասնաւոր ուշադրութիւն դարձուցին նաեւ երիտասարդ բանուորներու կարիքներուն ու պահանջներուն վրայ, եւ անոնք ունեցան իրենց սեփական ներկայացուցիչները ամէն մէկ առաջնակարգ արդիւնաբերական կոմիտէներուն մէջ:

Սովետ Թրէյտ Իւնիընները չէին կրնար աչքաթող ընել գիւղացիները: Ատիկա Կոմունիստ Կուսակցութեան քաղաքական գիծն էր, բանուորներու եւ գիւղացիներու դաշնակցութիւնը: 1930-ին, Թրէյտ Իւնիընները 280 հազար բանուորներ տրամադրեցին հաւաքական տնտեսութեանց մէջ գիւղացիներուն օգնելու համար:

ՍՈՎԵՏ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋՆՈՐԳՈՂԻ ԳԵՐԻՆ ՄԷՋ

Առաջին Ինտերնացիոնալի շրջանին (1864-1876) աշխարհի բանուոր գասակարգի առաջնորդն էր Բրիտանական բանուորութիւնը: Երկրորդ Ինտերնացիոնալի շրջանին (1889-1914) աշխարհի բանուոր գասակարգի առաջնորդն էր Գերման բանուորութիւնը: Երրորդ Ինտերնացիոնալի շրջանին (1919-1943) եւ անկէ վերջ, աշխարհի բանուոր գասակարգի առաջնորդն եղաւ Սովետ Ռուսաստանի բանուորութիւնը: Եւ այդ՝ երկու պատճառով, առաջին՝ որովհետեւ ուսումնասիրողները առաջին անգամ ըլլալով խորտակեցին կապիտալիստական աշխարհի անառիկ կարծուած բերդը՝ իր պարիսպներով: Երկրորդ՝ որովհետեւ անոնք եղան որ ամբողջ աշխարհի բանուորներուն առջև բացին տնտեսական ազատութեան երաշխաւորուած լուսատու եւ ուղիղ ճամբան:

ԳԼՈՒԽ Գ.

**ՀԱՄԱԹԻԱՐՀԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՉՄԸ
ԸՆԴԴԷՄ
ՀԱՄԱԹԻԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻՆ
(1919—1955)**

1.— ԹԻՔԵՑ ԻԻՆԻՇՆՆԵՐԸ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ
(1939—1945)

ԵՐԿՐՈՐԳ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ: (ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները, երկուքն ալ մեզի ծանօթ աշխարհի կապիտալիստական սխտեմէն յառաջացած ճգնաժամի արտայայտութիւններն էին: Երկուքին ալ ծնունդ տուողը իրարու հետ մրցող իմպերիալիստական խմբաւորումներու աշխարհակալական ձգտումն էր: Բայց այդ երկու պատերազմներու միջև կար հիմնական տարբերութիւն մը: Առաջինը, իր էութեամբ զուտ իմպերիալիստական-յետաշրջական պատերազմ էր. կուռող երկու կողմերը իրարու ձեռքէն յափշտակել կ'ուզէին այս կամ այն երկրամասերը: Աւազակները կը կուռէին աւազակներու դէմ: Առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ, սակայն, ամբողջ աշխարհի տնտեսական, քաղաքական ու ընկերային սխտեմը հիմքէն ցնցուեցաւ: Այդ ցնցումէն յառաջացան համաշխարհային նշանակութիւն ունեցող երեք իրազարձութիւններ: Առաջինը Ռուսական Յեղափոխութիւնն էր, որ աշխարհի մէկ վեցերորդ մասին վրայ եկաւ, հաստատեց սովետական սոցիալիստական իշխանութիւնը, նոր տեսակի պետութիւն մը, նոր տեսակի հասարակակարգ մը, որ չունենալով ներքին որեւէ հակասութիւն՝ յառաջդիմած էր ոստումներով: Երկրորդ իրազարձութիւնը Ֆաշիզմի երևոյթն էր, որ առաջին անգամ իր զլուխը ցոյց տուաւ Իտալիոյ մէջ: Մուսոլինի, երբ տեսաւ որ Ա. պատերազմէն յետոյ՝ Իտալիան առիւծներու բաժինէն միայն քոստ

կատուի մը բաժինն էր ստացեր, կ'ուզէր հին Հռովմէական կայսրութիւնը վերականգնել՝ նորագոյն և անառիկ բերդերով: Միւս կողմէն, տասը տարի վերջ՝ Գերմանիան, իր զարգացած տեխնիկայով և զերակչող արգիւնարերութեամբ սեղմուած իր պատեանին մէջ, Ա. պատերազմին իր կորսնցուցած զազութիւններուն համար դաշնակիցներուն դէմ վրէժխնդրութեամբ լեցուած՝ հետեւելով Մուսոլինիի, Գերմանիոյ մէջ ևս հիմնած էր իմպերիալիզմի վերջին աշտարակը և կը սպառնար Մ. Նահանգներուն՝ Հարաւ Ամերիկայի մէջ, Անգլիոյ և Յրանսայի՝ Եւրոպայի և Արիւիկէի մէջ: Իսկ անդին կար ձարոնը, որ Ասիոյ՝ մասնաւորապէս Չինաստանի մէջ Փրանսական, ուսսական, անգլիական ու ամերիկեան ազդեցութեանց տակ ընկճուած կը զգար, նոյնպէս յարած էր Փաշիզմին, և կը պատրաստուէր կեանքի ու մահուան կռիւին: Եւ այսպէս ուրեմն, երեք առաջաւոր պետութիւններ՝ իրենց արբանակներով կազմեր էին Ֆաշիստական ճակատը զժոխազէմ ու անհաշտ:

Երրորդ իրազարձութիւնը այն էր որ Ա. պատերազմի դաշնակիցներէն ցարական Ռուսաստանը ո՛չ միայն հրապարակէն անհետացեր էր, այլ անոր տեղն անցեր էր սարսափելի պետութիւն մը, Ոորհրդային Միութիւնը, որուն հետ անկարելի էր հաշտուիլ: Ուրեմն, մնացեր էին նախկին երեք դաշնակիցները, — Անգլիան, Յրանսան և Մ. Նահանգները: Անոնց միակ յոյսն ու նեցուկը, ժողովուրդներու մէջ տարածուած հակա-Ֆաշիստ շարժումն ու մտայնութիւնն էր:

Այստեղ կը տեսնենք խոշոր տարբերութիւնը: Աշխարհը փոխան երկուքի՝ բաժնուած էր երեք մասերու, երեք ճակատներու. սոցիալիստական ճակատ, որու զլուխը կանգնած էր Ս. Միութիւնը, Ֆաշիստական իմպերիալիզմի ճակատ, որուն վրայ կանգներ էին Իտալիա, Գերմանիա և Ճարոն, և ղեմուկրատական իմպերիալիզմի ճակատ, որուն վրայ կանգներ էին Անգլիա, Յրանսա և Մ. Նահանգները: Երկրորդ և երրորդ ճակատայինները թէև միմեանց անհաշտ էին նուաճողական զիծով, բայց իրարու կը մօտենային զաւաիարական զիծով. ասոնք երկուքն ալ թշնամի էին առաջին ճակատի վրայ կանգնող Ս. Միութեան՝ մասնաւորապէս, իսկ յեղափոխական բանուորութեան՝ ընդհանրապէս: Այստեղ երևան կուզար զժուարալուծելի հարց մը՝ ղեմուկրատական իմպերիալիստներուն համար, որովհետեւ իրենց դէմ կանգներ էին երկու վտանգաւոր թշնամիներ, մին սոցիալիզմը, միւսը՝ Ֆաշիզմը: Բայց անմիջականօրէն նուաճողական պատերազմի պատրաստուողը սոցիալիզմը՝ կամ յստակ անունովը ըսենք՝ Ս. Միութիւնը չէր, այլ Ֆաշիզմն էր: Ճիշդ էր որ իրենք ևս Ֆաշիստական ռէժիմին սրտով ու հոգիով

կողմնակից էին, որովհետեւ իրենք եւս կ'ուզէին յեղափոխական բանուորութիւնը ջախջախել եւ սոցիալիստական պետութիւնը հիմնադրող կործանել: Բայց Փաշխտական ռէժիմը հաստատելով հնարաւոր չէր հաշտուիլ Փաշխտ երրորդութեան հետ. պատերազմը դարձեալ անխուսափելի էր. իսկ այդ պարագային՝ իրենք պիտի ճակատէին ուրիշ դժուարութեան մը, ներքին դժուարութիւն մը՝ որուն յաղթահարել անկարելի էր. ժողովուրդներու դեմոկրատական տարրերը ամէն տեղ համախմբուած էին հակա-Փաշխտ ճակատի վրայ: Ինչպէս կարելի էր իրենց իսկ թոյլտուութեամբ ամբացած այդ ճակատը պատռել եւ նոյն ատեն պատերազմը շահելու յոյսին կապուիլ: Ուրեմն, երկու շարեաց փոքրագոյնն էր հաշտուիլ իրականութեան հետ եւ աշխատիլ սիրաշահիլ Խ. Միութիւնը եւ անով ապահովել հակաՓաշխտ ուժերու օժանդակութիւնը: Բայց այստեղ պէտք է մոռնալ նշել, որ այս մարդիկը նախ քան երկու շարեաց փոքրագոյնին հետ հաշտուիլը, ամէն միջոց գործածեցին որ Փաշխտ առանցքը նախ յարձակի Խ. Միութեան վրայ եւ կործանէ սովետներու իշխանութիւնը: Այդ պատերազմին մէջ Փաշխտական ուժերը անտարակոյս պիտի տկարանային, իսկ իրենք շատ դիւրաւ ծունկի պիտի բերէին զանոնք, եթէ անոնք պատերազմի ճակատը փոխելու յիմարութիւնը փորձէին: Նախապատերազմական շրջանին, կապիտալիստական պետութեանց միջեւ դիւանդոսութիւնը միմեանց ներհակ նպատակներու շուրջը կը դառնար: 1933-34 տարիներուն, Փաշխտ պետութիւնները պարզեցին իրենց յարձակողական ծրագիրը Չինաստանի, Եթովպիոյ, Աւստրիոյ, Չեխոսլովաքիայի եւ Լեհաստանի դէմ: Արեւմտեան պետութիւնները շրջափակեցին անոնց, մեզմ վերաբերմունք ցոյց տուին, յուսալով որ Հիթլեր իր դաշնակիցներուն հետ պիտի յարձակէր Խ. Միութեան վրայ, մանաւանդ՝ երբ Խ. Միութեան մէջ սկսեք էր տեսակ մը տակնուվրայութիւն, իրարու ետեւ կը դնուէին հարուէին բոլշեւիկ ականաւոր առաջնորդներ ու բազմաթիւ մտաւորականներ: Արեւմտեան պետութիւնները այդ մեզմ վերաբերմունքը ցոյց տուին այն ատեն՝ երբ իրենք զինուորական տեսակէտով շատ ուժեղ էին: Անոնց գործած աւերիչ ոճիրները այն էր, որ 1938 Սեպտեմբեր 30-ին, Միւնիխի տխրահռչակ համաձայնութեամբ Գերմանիոյ ծախսեցին Չեխոսլովաքիան, մինչ Խ. Միութիւնը կ'առաջարկէր յառաջացող պատերազմը արգիլելու մտքով՝ կազմել հակաՓաշխտ միջազգային ճակատ, առաջարկ մը, որ յամառ մերժումի հանդիպեցաւ: Մարդիկը Ինչպէս կրնային հանդուրժել, որ Խ. Միութեան պրէստիժը բարձրանար եւ իրենք մնային հետեւողական դիժի վրայ:

Հիթլեր, տեսնելով որ պայմանները նպաստաւոր էին, առանց վարանելու հնչեցուց մեծ պատերազմի փողը եւ յարձակեցաւ Լե-

հաստանի վրայ: Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա 1939 Սեպտեմբեր 3-ին, պատերազմ յայտարարեցին Գերմանիոյ դէմ: Մ. Նահանգներու կառավարութիւնը նախ չէզոք դիրք բռնեց. մեծ կապիտալիստները՝ տարակոյս չկար որ Ա. պատերազմի սկզբնական շրջանի իրենց շահադիտական հին դերը կ'ուզէին խաղալ, այսինքն՝ պատերազմական պիտոյքներ վաճառել կռուող կողմերուն եւ եւրոպական սովիներով լեցնել իրենց դանձարանները: Բայց ձարոն՝ Փըրլ Հարպըրի անակրնկալ յարձակումով զայն քաշեց պատերազմի մէջ: Ասով լայնցաւ պատերազմական դօտին:

Այս բոլոր իրադարձութեանց նախօրեակին, կար ուրիշ կարեւոր հանգամանք մը որ կը փոխէր պատերազմի բնոյթը: Աշխարհի դեմոկրատ ժողովուրդները հակառակ էին պատերազմին. անոնք իրենց դիմադրութիւնը կը շարունակէին Չինաստանի, Եթովպիոյ, Յունաստանի եւ ուրիշ երկիրներու մէջ: Անոնց խաղաղասիրական ձգտումներուն ամենաուժեղ պաշտպանն էր Խ. Միութիւնը, որ սկզբունքով չէր հաշտուեր իմպերիալիստական պատերազմին մասնակցելու մտքին հետ, եւ կ'աշխատէր բուրժուա դեմոկրատական երկիրները բերել ժողովրդական ընդդիմադրութեան միջազգային միացեալ ճակատի վրայ: Խ. Միութիւնը, երբ իր այդ ծրագիրը չկրցաւ իրականացնել, 1939 Օգոստոս 21-ին, ոչ-յարձակողական դաշինք կնքեց Գերմանիոյ հետ: Այս բանը տեղի ունեցաւ պատերազմի յայտարարութենէն 10 օր առաջ: Խ. Միութեան առած քայլը շատ հեռատես ու խելացի քայլ էր: Երբ իմպերիալիստական պետութիւնները վճռած էին անպատճառ պատերազմով վերջացնել իրենց անհաշտելի վէճերը, ինք այդ իմպերիալիստական պատերազմին մէջ մտնելու կարիք չունէր: Բայց ասով դեմոկրատ իմպերիալիստներու թշնամական զգացումը Խ. Միութեան դէմ՝ աւելի սաստկացաւ:

Հիթլերի մեքենայացած բանակները մի քանի շաբաթներու ընթացքին նահանջի մատնեցին դաշնակիցներու միացեալ ուժերը: Դրութիւնը հետզհետէ կը դառնար յուսահատական: Փաշխտական բանակները դրաւած էին Պելճիզան, արշաւեր էին Ֆրանսա եւ կը պատրաստուէին նաւաչէն կամուրջով անցնիլ Անգլիական ցամաքը: Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա, իրենց տաղնապալից կացութեան մէջ ազատարար մը կը փնտռէին, եւ այդ ազատարարի դերը կը տեսնէին ո՛չ թէ Մ. Նահանգներու, այլ Խ. Միութեան մէջ, որ իրենց աւազակային կողոպուտին մէջ բաժին չէր ուզեր վերցնել: Եւ անոնք սկսան բանակիցիլ Խ. Միութեան հետ ամէն զիջողութեան դնով՝ զայն քաշելու այն պատերազմին մէջ, որ իրենց համար կորսուած պատերազմ էր: Անգամ մը որ Արեւելեան ճակատին վրայ Սովետները զբաղեցնէին Փաշխտական բանակները, իրենք ժամանակ եւ պա-

տեսութիւն կ'ունենային ուժեղացնել Արեւմտեան ճակատը, ուրկէ Մ. Նահանգներու օգնութեամբ կարելի կ'ըլլար սկսիլ նոր յարձակողական մը:

Եւ ա՛հա եղաւ ինչ որ կը սպասուէր: Հիթլեր, Յունիս 22, 1941-ին, յանկարծ յարձակեցաւ Ս. Միութեան վրայ: Ինչո՞ւ ան ստանակից կնքուած ոչ-յարձակողականի դաշնագրութիւնը: Այս հարցը մինչեւ այսօր լուսարանուած չէ յտակօրէն: Ոմանք զայն կը նըկատեն իսկական դաւաճանութիւն մը: Ոմանք կը հաւաստիացնեն որ Հիթլեր Սովետներէն պահանջեց Ռեքրանական հողէն անցնելու թոյլտուութիւն՝ միանալու իտալական Փաշիստական բանակին, բայց Սովետները մերժեցին ընդունիլ այս ստորնացուցիչ առաջարկը: Իսկ ոմանք ալ կը փաստեն որ այդ յարձակումը հետեւանք էր դաշնակիցներու եւ Ս. Միութեան միջեւ վերջին պահուն տեղի ունեցած բանակցութիւններուն: Հիթլեր, մտածելով որ Ս. Միութիւնը հակաֆաշիստ ուժերու հրամայականին եւ դաշնակիցներու դիմումներուն տեղի տալով վերջի վերջոյ պիտի մտնէր պատերազմի մէջ, ինք սկսաւ յարձակողականը: Բայց Boston Post պարբերաթերթը 1942-ի Սեպտեմբեր, Հոկտեմբեր եւ Նոյեմբերի թիւերուն մէջ մեզի կուտայ պատմութեան մէջ չգրուած վիպական դէպքի մը նկարագրութիւնը, ուր պարզ կը դառնայ թէ՛ Հիթլեր արդէն կանուխէն ծրարած էր նման յարձակում մը: Այդ դէպքի պատմութեան համառոտագրութիւնը հետեւեալն է:

Հիթլեր, Գերման լրտեսական գործակալութեան (Կէսթափոյի) միջոցով վաղուց ծանօթ էր Ստալինեան բիւրոկրատիի դէմ յարուած ընդդիմադիր ուժերու գործունէութեան, որ ըստ երեւոյթին՝ քաղաքացիական պատերազմի նախապատրաստութիւն կը նշանակէր: Այդ ընդդիմադիրներու մեծաւորը՝ Թրոցկին, արդէն աքսորուած էր Երկրէն, բայց անոր հետևորդները, իրենց աջ ու ձախ թեւերով կը մընային Մոսկուայի եւ ուրիշ սովետական գլխաւոր կեդրոններու մէջ: Իրերու այդ գոյամիճակը Հիթլերը կրնար օգտագործել իր նուաճողական քաղաքականութեան ի նպաստ: Գերման Կէսթափոյի մէկ-երկու անդամները, որպէս եռանդուն կոմունիստներ՝ մտած էին Ռուսական Չէկայի մէջ. իսկ ռուսական Չէկայի մէկ-երկու անդամներ՝ մտած էին Գերման Կէսթափոյի մէջ: Երկու կողմերուն համար ալ՝ անհնարին բան չէր այդ: Եւ ա՛հա կը սկսի երկու կողմերու լրտեսական գործողութիւնը: Գերման լրտեսները ռուսական Չէկայի միջոցով կը լրտեսեն Սորհրդային երկրի ներքին գաղտնիքները եւ իրենց յատուկ միջոցներով զանոնք կը հաղորդեն Գերման կառավարութեան: Միւս կողմէն՝ Ռուս Չէկայի անդամները Գերման Կէսթափոյի միջոցով կը լրտեսեն Գերմանիոյ ներքին գաղտնիքները եւ զանոնք կը

հաղորդեն Ստալինի վարչակազմին: Երկու կողմերը իրարու անծանօթ են եւ կը գործեն իրարմէ անկախ ու խիստ գաղտնի: Գերման լրտեսները ռուսական Չէկայի խողովակով Ձինովիէվի, Քամինէվի, Բուխարինի եւ ընկերներու կեզմուած ձեռագիրներով դաւադրական ծրագիրներ շօշափող տեղեկագրեր կ'ուղարկեն Գերման Կէսթափոյին: Հոն ռուս Չէկայի լրտեսները ծանօթանալով իրադարձութեանց, իսկոյն իրենց միջոցներով այդ տեղեկութիւնները կը հաղորդեն Ստալինի: Նացի կառավարութիւնը, որ ինքն եղած է այդ մեքենայութիւնը սարքողը, դիտակ աճէն բանի, թոյլ կուտայ այդ տեղեկագրերու արտահանումը: Ա՛հա այդ առասպելական հնարագիտութեան հետեւանքով սկսաւ Ստալինեան մաքրագործումը: Լենինի րատի մէջ Կիրովի սպաննութիւնը կայծ մը եղաւ որ բռնկեցուց Ստալինի պատրաստած վառօդի տակաւոր: Տասնեակ հազարաւոր բոլշեւիկ մտաւորականներ թատերական դատաւարութեամբ զնդակահարուեցան եւ բազմաթիւ մարդիկ աքսորուեցան: Հիթլեր, իր ծրագիրը իրագործելով կը կարծէր թէ այնքան ընդդիմադիր տարրեր ունեցող երկիր մը յանկարծակի յարձակման մը դիմադրելու ուժ չունէր, ատոր համար պարագան ներկայացածին պէս, սկսաւ այդ յարձակումը:

Որքան ճիշդ է այս պատմութիւնը (աւելի քան քսանհինգ մեծադիր էջերով գրուած պատմութիւն մը) դժուար է ըսել, դժուար է նոյնպէս վճռականօրէն հաւաստիացնել թէ՛ այս մէկուն կամ այն միւսին ենթադրութիւնն է հիմնականը. մենք այս կէտի լուսարանութիւնը կը թողունք ապագայի պատմագիրին, որովհետեւ շատ մը վարագորուած իրողութիւններ կան, որոնք ներկայիս տակաւին յարմար չեն նկատուիր հրապարակուելու, անցեալի ու ներկայի քաղաքականութիւններու միջեւ ցցուն հակասութիւններու յայտնարարութեամբ մտքերու մէջ շփոթութիւն չյառաջացնելու համար: Միայն մէկ կէտ կ'ուզենք նշել ու շեշտել. այսինքն այն՝ որ նոյնիսկ 1941-ի Դեկտեմբերին, երբ Մ. Նահանգները մտան պատերազմի մէջ, դաշնակիցներն արդէն պատերազմը կորսնցուցեր էին եւ երբեք հաւանականութիւն չկար անոնց համար շահիլ՝ եթէ Սորհրդային Միութիւնը իր վիթխարի ուժով չ'մտնէր այդ պատերազմին մէջ: Ինչպէս Նաբոլէոն 1812-ին յառաջացաւ մինչեւ Մոսկուա, բայց յետոյ՝ չնչսպառ հաղիւ կրցաւ իր կաշին ազատել, նոյն բախտը վիճակուեցաւ Հիթլերի, միայն սա տարբերութեամբ՝ որ Սովետները Հիթլերի հորդաններ իրենց երկրի սահմաններէն դուրս հանելով չի բաւականացան, այլ զանոնք հալածեցին մինչեւ անոնց բերդաքաղաքը՝ Բերլինը եւ իրենք եղան առաջին անգամ յաղթական շքերթով հոն մտնողները: Արեւմտեան իմպերիալիստական պետութիւնները չըր-

Թունքային գովասանքներ շոսյլեցին Սովետ Ժողովուրդի դիւցազնական գրոհումներուն, բայց նոյն ատեն չմոռցան իրենց ներքին անհաշտ ատելութիւնը, զոր յետ-պատերազմեան շրջանին յայտնաբերեցին պաղ պատերազմի յայտարարութեամբ ու շարունակութեամբ:

Պատերազմի տաք շրջանին, Սովետներու դաշնակիցները երեք անգամ ցոյց տուին իրենց նենգամտութիւնը որ հոմանիշ էր դաւաճանութեան: Առաջին փաստական պարագան այն էր, որ երբ նացի բանակները սկսան արշաւել Սովետական սահմանէն ներս, դաշնակիցները համարեա թէ հանդիսատեսի դիրքին վրայ կեցան եւ ուժեղ հակաշարժակողականի շանցան: Երկրորդ պարագան այն էր որ երբ երկրորդ ճակատ մը բանալու հարց էր յարուցուեր, Չրըչիլ հակառակեցաւ Սովետական առաջարկին՝ որ երկրորդ ճակատը կ'ուզէր որ բացուէր Նորմանտիէն, մինչ Չրըչիլ կը պնդէր այդ ճակատը բանալ Պալքաններէն: Ինչո՞ւ... որովհետեւ այդ աղուէս զիւանագէտը երկու նպատակ կը հետապնդէր. առաջին՝ Պալքանները հեռու պահել Խորհրդային Միութեան ազդեցութենէն. երկրորդ՝ տիրանալ Ռուսմանիոյ նախկին հարուստ աղբիւրներուն: Երրորդ պարագան պարզուեցաւ Հեռուոր Արեւելքի մէջ, ուր պատերազմի թատերամին վրայ, Խորհրդային բանակը պատրաստ էր ջախջախելու Փաշխտ ձարոնի ուժերը: Միացեալ Նահանգները որպէսզի Ասիական ցամաքամասին վրայ չկողբացնեն Սովետներու ազդեցութիւնը եւ իրենց վերապահեն յաղթանակողի եւ առաջնորդողի պատիւը, աճապարեցին ատոմական ուժերը ձգել Հիւրոշիմայի եւ Նակասաքիի վրայ՝ չուտով ծունկի բերելու համար ձարոնը, որուն հետ բարեկամացան՝ յետ պատերազմեան շրջանին:

Ընթերցողը թող ներէ մեզի, երբ այս տողերը գրողը իր անձնական փորձառութենէն տայ շահեկան ու փաստական օրինակ մը:

1943-ին, պատերազմի ամենատաք շրջանին էր, երբ ես կը գործէի Մէր Այլընտի պետական նաւաշինարանը, այդ այն ատենն էր, երբ Ամերիկեան թերթերը ճոճոական ներբողականներ կը հիւսէին Սովետական քաջարի զինուորներու մասին: Օր մը, իմացանք որ Սովետական մարտանաւ մը եկած էր հոն, նորոգութեան համար: Այդ մարտանաւը երկուք ու կէս ամիս իր կողը փակցուց քարափին, բայց երբեք թոյլ չտրուեցաւ որ սովետ նաւաստիները դուրս գան այդ մարտանաւէն ու պտտին Ամերիկեան նաւաշինարանին մէջ: Երկուք ու կէս ամիս, սովետ նաւաստիները բանտարկուած մնացին ու չթոյլատրուեցաւ որ անոնք ոտք դնեն ամերիկեան ցամաքին վրայ. չէ՞ որ անոնք փառաբանուած հզօր դաշնակիցի մը նաւային զինուորներն էին. ի՞նչ վտանգ կը սպասուէր անոնցմէ, լրտեսու-

թի՞ւն... բայց ի՞նչ բան կար լրտեսելու... դադանիք կորզե՞լ... Բայց ի՞նչ դադանիք կրնային գողնալ անոնք, երբ ամէն մէկ յարկարածնի գործ բաժնուած էր բազմաթիւ ճիւղերու եւ իւրաքանչիւր ճիւղ այնքան մեքենայացուած էր ու պարզ՝ որ դադանիք չունէր:

Ի՞նչքան լաւ բարեկամութիւն է աս... ի՞նչքան անկեղծ դաշնակիցի վերաբերմունք է աս, մտածեցի ես...

Իմպերիալիստական պետութեան մը հետ սոցիալիստ պետութեան մը դաշնակցութիւնը... անկշիռ հակասութիւն...:

Բայց... թողունք ասոնք ու շարունակենք աշխատաւորական պատմութեան գիծը, որ մեր ուսումնասիրութեան գլխաւոր մասը կը կազմէ:

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Փաշխտ պետութեանց զինուորական անսանձ արշաւանքներու առաջին գործերէն մէկն եղաւ Եւրոպայի եւ Ասիայի մեծ մասերուն մէջ Թրէյտ Իւնիւրներու բնաջնջումը: Իրապէս Թրէյտ Իւնիւրնիզմը Խ. Միութեան սահմաններէն մինչեւ Անգլիական Նեղուցը ոչնչացեր էր, միայն Չուիցերիոյ եւ Շուէտի մէջ, որոնք «չէզոք երկիրներ» էին, ան կը պահէր իր գոյութիւնը: Բացառութիւն էր նաեւ Ֆիլլանտան, Հիթլերի դաշնակից երկիրը, ուր Սոցիալ Դեմոկրատական իւնիւրները թոյլատրուած էին պահել իրենց Ֆիդիքական ձեւական կազմը: Խ. Միութեան այն երկրամասերը որ Փաշխտներու արշաւանքին ենթարկուեցան, այդ տեղերուն մէջ եւս Թրէյտ Իւնիւրները արմատախիլ եղան: Նոյն ձեւի կազմալուծումը տեղի ունեցաւ Ֆիլիպեաններու մէջ, Ինտոնէզիայի եւ ուրիշ ասիական երկիրներու մէջ՝ ճարտնական արշաւանքներու հետեւանքով:

Ֆրանսայի կազմակերպուած բանուորութեան ճակատագիրը ուրիշ բան չէր կրնար սպասել Փաշխտներէն: Հիթլեր, Ֆրանսայի իր գրաւած մասերուն մէջ իր առաջին գործն ըրաւ Թրէյտ Իւնիւրները անմիջապէս ոչնչացնել. իսկ 1940-ին, իր արբանեակ Վիլիի կառավարութիւնը պաշտօնապէս լուծուած յայտարարեց Աշխատաւորական Համադաշնակցութիւնը, իսկ 1941-ի Հոկտեմբերին այդ խամաճիկ կառավարութիւնը Charte du Travail անունով Փաշխտական «միութիւն» մը կազմեց, որ կ'արգիլէր գործազուր եւ կը գործէր պետական խիստ հսկողութեան տակ:

Պատերազմի ատեն, Փաշխտներու գրաւած երկրամասերուն մէջ բանուորները բառին իսկական իմաստով գերիներ դարձեր էին, անգոհացուցիչ աշխատավարձք եւ շարաթը 100 ժամուայ ծանր աշխատանք:

Նացիոնալ-սոցիալիստական մասերուն մէջ բանուորները որքան որ կրնային, կազմեցին իրենց Թրէյս Իւնիքները կոմունիստներու նախաձեռնութեամբ: Ընդ յատակեայ այս բանուորական միութիւնները, կմախքի վերածուած թէեւ, բայց եռանդազին կը գործէին աշխատելով աւելի եւ աւելի ընդաձակել դիմադրական շարժման շրջանակը: Անոնք յառաջ կը տանէին շատ մը ապօրինի գործունէութիւններ, ներառեալ սապօղաթներ ու գործադուլներ, բոլորն ալ ուղղուած նացի ուժերին դէմ: 1939-էն 1944, Ֆրանսայի արտադրողականութիւնը 50 տոկոսով կրճատուեցաւ: Շատ մը միութեան առաջնորդներ, ինչպէս երկաթուղիի բանուորական միութեան առաջնորդ՝ Սիմարդ, թուղթի արդիւնաբերական միութեան առաջնորդ՝ Կրէնէթ, հիւսուածեղէնի միութեան առաջնորդ՝ Վէրդերիոս, կաշիի արդիւնաբերական միութեան առաջնորդ Միշէլ, քիմիական արդիւնաբերական միութեան առաջնորդ՝ Պուլմարէ, եւ ասոնց հետ շատ մը ուրիշներ՝ գնդակահարուեցան Նացիներու ձեռքով: 1943-ին, 75 հազար բանուորներ եւ կոմկուսի անդամներ զընդակահարուեցան անխնայ: Երկուք ու կէս միլիոն Ֆրանսացի բանուորներ փոխադրուեցան Գերմանիա, ուր լծուեցան ստրկական աշխատանքի:

Դրութիւնը նոյն պատկերը կը ներկայացնէր Իտալիոյ մէջ, ուր Մուսոլինիի դէմ ընդդիմադրական շարժումը սկսած էր 1926-ին: Այստեղ եւս բանուորական միութիւնները իրենց ընդհատակեայ գործունէութեամբ կոմկուսի հետ, բազմաթիւ զոհեր տալու դիմով լրծուած էին հակապատերազմական աշխոյժ գործունէութեան, որ ուժեղ թափ ստացաւ 1943-էն յետոյ, երբ բանուորները կազմակերպեցին ընդհանուր գործադուլներ՝ որոնք վերածուեցան 1944-45-ի գինուած ապստամբութեան:

Սորճրդային Միութեան գրաւուած մասերուն մէջ, Պուլկարիոյ, Յոնաստանի, Եուկոսլաւիոյ, Լեհաստանի, Չեխոսլովաքիայի, Նորվեգիոյ եւ ուրիշ եւրոպական երկիրներու մէջ ընդհատակեայ Թրէյս Իւնիքներու շարժումը ճգմելու նացիական ազդու միջոցառումներուն բանուորները պատասխանեցին հերոսական գործերով: Ճարտնի մէջ ալ, չնայած Փաշիստ կառավարութեան վայրենի հալածանքներուն, բանուորները չընկճուեցան ստրկական լուծի տակ: Նոյն երեւոյթը կը տեսնենք Ֆիլիպիններու, Հնդկաչինի եւ Ասիոյ զանազան երկիրներու մէջ: Չինաստանի մէջ դեմոկրատական Թրէյս Իւնիքները ամենէն զորաւոր ազգակներն էին, որոնք հերոսաբար կը կռուէին թէ ճարտնական իմպերիալիզմի եւ թէ Շանկ քաՇէկի դէմ:

ՀԱԿԱՅԱՇԻՍՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ՀԱԿԱՏԻ ՅԱՐԳԱՐՈՒՄԸ

Փաշիզմի դէմ ճակատող դաշնակից երկիրներու բանուորները Երկրորդ Համաշխարհային Պատերազմին տրամադրեցին իրենց ամբողջ ուժն ու կորովը, մասնաւորապէս՝ երբ Ս. Միութիւնը մտաւ այդ պատերազմին մէջ: Անոնք հաւատացեր էին որ այդ պատերազմը դեմոկրատի պատերազմն էր, իրենց սեփական պատերազմը, զոր պէտք է շահիլ ամէն գնով: Առաջին պատերազմին, հակառակ սոցիալ դեմոկրատներու պրոպականդին, անոնք այդ հաւատքը չունեցան եւ կռուեցան ճնշման տակ:

Երկրորդ աշխարհամարտին բանուորներուն միացան Փարմըրները, միջին դասակարգը եւ փոքր կապիտալիստները: Բայց դաշնակից երկիրներու խոշոր բուրժուազիան վարանոտ հետեւողականութիւն մը ունէր. բանուորներու աջակցութեան մէջ ան կը տեսնէր ապագայ բանուորական յեղափոխութեան հեռանկարը: Փաշիստական պետութեանց դէմ մղուած պատերազմը պէտք է շահիլ, այո՛, բայց յետո՞յ... Ի՞նչպէս կարելի պիտի ըլլար հանդարտեցնել իրաւապահանջ բանուորները, որոնց հերոսական գրոհումներով էր շահուած այդ պատերազմը: Ահա այս հարցն էր որ կը տանջէր մեծ կապիտալիստներու ուղեղը: Անոնք ամենէն շատ կը վախնային Ս. Միութեանէն. Ի՞նչպէս պիտի վերաբերուէին այդ սոցիալիստ պետութեան հետ: Անոնք ամէն մեքենայութիւն սարքեցին պատերազմի ընթացքին, որպէսզի Սովետները ամբողջապէս ընկճուին, մնան շնորհընկալի դերին մէջ եւ իրենք անոնց հարկադրեն իրենց նախասիրած բուրժուա-դեմոկրատական ուժերը, ուժեր մը՝ որ զիրենք պիտի փրկէր անխուսափելիորէն յառաջացող տնտեսական տագնապէն: Անոր պիտի մօտենային «բարեկամարար», պիտի քանդէին «Երկաթե վարագոյրը», երկրէն ներս պիտի մտնէին եւ պիտի շահագործէին անոր կոյս հարստութեանց ազդիւրները եւ թշուառացած ժողովուրդի աշխատանքը: Բայց Ի՞նչ ըսել որ սարքուած բոլոր մեքենայութիւնները ձախողեցան: Սորճրդային Միութիւնը, վեց միլիոն 115 հազար պատերազմական զոհեր տալով հանդերձ՝ չընկճուեցաւ, ռազմադիտական նահանջէ մը վերջ անցաւ ուժեղ յարձակողականի, իր կարմիր Բանակով զրաւեց Արեւելեան ու Կեդրոնական Եւրոպան եւ մըտաւ Բերլին: Անսպասելին էր որ տեղի ունեցաւ. ասով Փաշիստական արամադրութեամբ լեցուած կապիտալիստները կձկուեցան իրենց կաշիին մէջ: Անոնց միակ յոյսը կապուած մնաց 1941 Օգոստոս 14-ի Առլանտեան Դաշինքին, որ ապագային Միացեալ Ազգերու կազմակերպութեան խարխիւր պիտի կազմէր:

ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹԻՒՆՆԵՐԸ ԳԱՇՆԱԿԻՑ
ԱՆՋԱՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՁ

Մեծն Բրիտանիոյ մէջ ի դէպս Հիթլերի արչաւանքի սպառնալիքին, Կոմունիստներն ու ձախ թեւի Թրէյտ Իւնիընի ուժերը պահանջեցին որ Ֆաշիզմի դէմ կուտելու համար Միւնիխեան Չէմբրըլէյնի կառավարութեան յաջորդելու է ժողովրդական կառավարութիւն մը: Ամբողջ կազմակերպուած աշխատաւորութիւնը այդօրինակ պահանջ չէր դնէր. այդ իսկ պատճառով իշխող գասակարգը ձախակողմեան տարրերը խաբելու համար, Չէմբրըլէյնը պաշտօնէն հեռացուց եւ անոր անզը տուաւ Չըրչիլին, որ Թորիի կուսակցութիւնը կը ներկայացնէր: Այս մարդը իր կառավարութիւնը կազմեց միակցական (coalition) հիմքով, դահլիճին մէջ առաւ քանի մը Աշխատաւորական Կուսակցութեան անդամներ՝ միշտ վեր պահելով Թորիի մեծամասնութիւնը:

Ընդհանուր առմամբ Բրիտանական Թրէյտ Իւնիընները պատերազմը շահելու նուիրուած ջանադրութեամբ ուշադրութիւն դարձուցին պատերազմական պիտոյքներու եւ կենսամթերքներու արագ արտադրութեան: Այդ նպատակին համար անոնք որդեգրեցին ոչ-գործազուլի սկզբունքը, չնայած որ ատանկով կը նպաստէին գործատէրերու ուռճացած շահերուն: Անոնք նոյնպէս կազմակերպեցին Միացեալ Արտադրութեան Կոմիտէներ, որոնց թիւը հասաւ 4,500-ի: Թրէյտ Իւնիընները երբ այսպէս եռանդալին նուիրուած էին պատերազմի յաջողութեան գործին, կառավարութիւնն ալ իր կողմէն կը քաջալերէր անոնց կազմակերպչական շրջանակի ընդլայնումը: Կանանց Թրէյտ Իւնիըններու թիւը 1938-ի թուական բաղդատմամբ՝ 1944-ին, կրկնապատկուեցաւ, իսկ ամբողջ Թրէյտ Իւնիընի անդամներու թիւը հասաւ 7 միլիոն 500 հազարի:

Բանուորական միութեանց ձախ թեւը աւելի գործօն էր պատերազմի շրջանին: Ան ո՛չ միայն պատերազմական յաջողութեան գորավիզ էր, այլև ուշադրութիւն դարձուցեր էր նաև բանուորներու ապրուստի մակարդակի բարձրացման, մինչ աջ թեւի իւնիընները, աւելի հայրենասէր ձեւանալով աչքաթող ընել կ'ուզէին բանուորներու ապրուստի մակարդակը բարձրացնելու հարցը, զոր կը ստորագասէին ամէն դնով պատերազմը շահելու նպատակին:

Միացեալ Նահանգները պատերազմի մէջ մասն երբ ձարոն 1941, Դեկտեմբեր 7-ին յարձակեցաւ Փըրլ Հարպըրի վրայ: Նախ քան այդ յարձակումը, Թրէյտ Իւնիընները եւ ամերիկեան ժողովուրդը ֆինանսապէս եւ ռազմամթերքով լիառատ օգնութիւն կը փութացնէին Ֆաշիզմի դէմ կուտող պետութիւններուն, բայց ընդհանուր

կերպով կ'ուզէին պատերազմէն հեռու մնալ: Փըրլ Հարպըրի կանխամատածուած դէպքը, դրութիւնը փոխեց, ամերիկեան ժողովուրդը մտաւ պատերազմի մէջ:

Ամերիկեան բանուորութիւնը նոյն ուղին բռնեց, ինչ ուղի որ բռնած էր անգլիական կազմակերպուած բանուորութիւնը: Չախակողմեան ուժերը հակառակ ուղեգծի շահուեցան. կուր ֆաշիզմի դէմ էր, ուրիշ կերպ վարուելու արդարացուցիչ հիմք չկար: Կազմուեցան աւելի քան հինգ հազար կոմիտէներ, որոնք կը հսկէին արտադրողութեան կանոնաւորութիւնն ու արագութիւնը նոյն աստիճանին վրայ պահելու համար: Աշխատաւորութիւնը սիրայօժար ընդունեց նաև ոչ-գործազուլի սկզբունքը, բայց ձան-Լուիզ, ամխահանքի բանուորներու միութեան Նախագահը, դուրս եկաւ ոտքով գլխով ստրկանանալու հաւատարմական պարտաւորութենէն եւ մի քանի կարեւոր գործազուլներ վարեց, որոնք պսակուեցան յաջողութեամբ: Պատերազմը հսկայական շահոյթներ կ'ապահովէր գործատէրերուն, իսկ՝ փշրանքներ միայն կը նետէր բանուորներուն եւ արիւն թափող բանուորներու ընտանիքներուն: Պատերազմի տեւողութեան 55 ամիսներու ընթացքին Ամերիկայի մեծ քորպորէշնները 62 միլիառ տոլար շահոյթ ունեցան. մինչդեռ 1933-էն մինչև 1939, անոնց շահոյթը հազիւ թէ կը հասնէր 18 միլիառ տոլարի: Գործաւորներու շահածը այն եղաւ որ պատերազմի շրջանին, Թրէյտ Իւնիընները թուական աճուով ունեցան. AFL-ը, որ 4,247,443 անդամ ունէր 1940 թուին, 1945-ին այդ թիւը բարձրացաւ եօթնուկէս միլիոնի, իսկ CIO-ն, որ 3,810,318 անդամ ունէր, այդ թիւը նոյն շրջանին բարձրացաւ հինգ ու կէս միլիոնի:

Քաղաքական թատերաբեմին վրայ կազմակերպուած աշխատաւորութիւնը Ռուզվելթի կառավարութեան մէջ միակցական ճիւղ հաստատելու իրաւունք ունէր: Մղուածը ժողովրդական պատերազմ էր եւ բանուորութիւնն էր անոր յաղթութիւնը ապահովող հողին: Բայց ի՞նչ ըրաւ Ռուզվելթի կառավարութիւնը. երրորդ կարգի մարմին մը հաստատեց — Միացեալ Աշխատաւորական Յաղթանակի Կոմիտէն. այս մարմինը եօթը անդամներէ կը բաղկանար. երեքը՝ AFL-էն, երեքը՝ CIO-էն եւ մէկ անդամը Երկաթուղային Բանուորներու միութենէն: Այդ մարմինը պատերազմի տեւողութեան ընթացքին սոսկ խորհրդակցական իրաւասութեամբ իր գոյութիւնը պահեց, առանց քաղաքական ազդեցութեան: Պատերազմը վերջանալուն պէս, ան ստուերի նման անհետացաւ: Տիրող դասակարգը չէր ուզեր որ բանուորական կուսակցութիւն մը երևան դար:

Սորհրդային Միութեան մէջ Թրէյտ Իւնիընները ո՛չ միայն կառավարական բոլոր բաժանմունքներուն մէջ ներկայացուցիչներ

ունէին, այլեւ իրենք կը վարէին պատերազմական տնտեսութեան գործառնութիւնները: Անոնց ամբողջ ապարատը նուիրուած էր արտադրողութիւնը զարգացնելու եւ արտադրութիւններու քանակը աճեցնելու գործին: Այն գործարանները, որոնք Հիթլերի արշաւանքի ատեն փոխադրուեցան երկրի խորերը՝ ապահովութեան համար, Թրէյտ Իւնիւրններու գերմարդկային ջանքերուն շնորհիւ, երբեք ժամանակ չկորսնցուցին եւ սկսան իրենց լիակատար արտադրողութեան: Հսկայ գործարան մը 45 օրուան մէջ Լենինկրատէն փոխադրուեցաւ Ուրալի կողմերը եւ սկսաւ գործել: այդ հրաշքի նմանող գործ մըն էր, զոր հասարակ մահկանացուները զլուխ չէին կրնար հանել: Եւ Հրրբրտ Հուվրը, Ամերիկայի նախկին նախագահը, ի տես այդ ամենուն, շուշացաւ յայտարարել որ «Սովետները ամերիկեան օգնութիւնը հասնելէ առաջ՝ արդէն կատեցուցեր էին գերման յառաջնադասը»:

Սովետ Թրէյտ Իւնիւրնները ստանձներ էին նաեւ ուտեստեղէնի, վառելիքի, բնակարանի եւ հազուատեղէնի մատակարարման կազմակերպուած աշխատանքները: Անոնք էին որ կենսամթերքներու գիները կ'որոշէին եւ աշալուրջ կը հսկէին որ կառավարութեան օրէնքները ճշգիւ գործադրուին, աշխատատեղիներէն բարելաւման եւ երկրի ապահովութեան համար:

Կապիտալիստական երկիրներու մէջ բանուորները երկու ճակատի վրայ ստիպուած էին կռուիլ, Փաշիստական ճակատը, ուր կեցեր էր արտաքին թշնամին, ներքին ճակատը, ուր կեցեր էր իր դասակարգային թշնամին: Բայց Խ. Միութեան մէջ բանուորներու կռիւր մէկ ճակատի վրայ էր. անհետացեր էր ներքին թշնամին. դասակարգային կռիւի վախ չկար:

Բայց թէ ինչո՞ւ Սովետ Թրէյտ Իւնիւրններու առաջին քայլը ճախողեցաւ բանուորական միութիւնները միջազգային գիծի վրայ համախմբելու ջանքերուն մէջ, ասոր պատճառը կը գտնենք Ամերիկայի AFL-ի յետադիմական առաջնորդներու ախտաւոր մտայնութեան մէջ:

2.— ՅԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆԸ (1944-1950)

Առաջին համաշխարհային պատերազմը վերջացաւ յաղթանակով, Երբ Գերմանիան անպսիւստական կերպով անձնատուր եղաւ 1945-ի Մայիսին եւ ճարոն՝ նոյն տարուած Օդոստոսին: Փաշիստ պետութեանց աշխարհակալական փորձը ճախողած էր գեմոկրատական մասսաներու հերոսական դիմադրութեամբ: Այդ յաղթութիւնը

չահուած էր 25 միլիոն զոհերու, 32 միլիոն վիրաւորեալներու եւ անհաշիւ նիւթական կորուստներու զինով: Ամբողջ մարդկութիւնը հրճուանքի մէջ էր որ իր զլխէն հեռացեր էր Փաշիստական գերեւորութիւնը:

Աշխարհի գեմոկրատիկ մասսաները, սակայն, յաղթութենէն զինովցած, իրենց զէնքերը վար չզրին ու չվերադարձան իրենց վաղեմի դրութեան, ընդհակառակը՝ գիտակ որ կապիտալիստական մեծղի յետադիմական ուժեր տակաւին գոյութիւն ունին աշխարհի մէջ, անոնք շարունակեցին կռիւր ընդհանրապէս քաղաքական միջոցներով, իսկ ի պահանջել հարկին՝ զէնքի ուժով: Առողջ արամարանութեամբ՝ բացի անոնցմէ որոնք տակաւին կը հետեւէին Սոցիալ Դեմոկրատներու եւ կրօնականներու խաբկատիւր Փրազներուն, անոնք տարին պայքարը ընդդէմ ընկերային սխտէմին, որ վարակուած էր Փաշիզմի ախտով: Եւ ահա սկսան յեղափոխական ալիքները բարձրանալ ու զարնուիլ կապիտալիզմի ճակատին:

Աշխատատեղիներու մասսաներու յեղափոխական մեծ յարձակողականը Երկրորդ Աշխարհամարտէն յետոյ՝ սկսաւ Եւրոպայի եւ Ասիոյ մէջ, ուրտեղի ժողովուրդները ամենէն շատ տուժեր էին պատերազմի արհաւիրքներէն: Սկսուած յեղափոխական շարժումը միջազգային որեւէ կազմակերպութեան կոչով չէր որ երեւան եկած էր, ան տարերային էր ու ինքնարեքական, ծնունդը՝ տեղական պայմաններու եւ ընդհանուր միջազգային դրութեան: Այդ մեծ շարժման սրտի ուժերը կը կազմէին բանուոր դասակարգը եւ զիւզացիութիւնը, իսկ անոնց յառաջապահներն էին Կոմունիստները, որոնք հաւատարմօրէն կ'արտայայտէին զարթնող ժողովուրդներու յեղափոխական տրամադրութիւնները: Միւս կողմէ, այդ ճգնաժամային դրութեան տակ կանգնած էին կապիտալիստական սխտէմի պաշտպան ուժերը. անոնք էին աջակողմեան Սոցիալ Դեմոկրատները եւ Վատիկանի գործակալները: Անոնք աճապարեցին օգնութեան հասնիլ բուրժուա քաղաքական այն առաջնորդներուն, որոնք շուտաւ էին իրենց ընկիւղները մէջ եւ իրապէս աջակողմեան Սոցիալ Դեմոկրատներն ու Կաթոլիկ մեծաւորներն էին, որ Արեւմտեան Եւրոպայի մէջ կապիտալիզմը դուրս հանեցին յառաջացող քառուն:

Յետ պատերազմական շրջանին, յեղափոխական մասսայական շարժումը Եւրոպայի մէջ — Արեւելեան Գերմանիոյ, Լեհաստանի, Չեխոսլովաքիայի, Եոսլոուրաւիայի, Պուլկարիոյ, Հունգարիոյ, Ռումանիոյ եւ Ալպանիոյ մէջ — հիմնեց «ժողովրդային գեմոկրատները»՝ ուժեղ հակամարտով զէպի սոցիալիստական սխտէմը, մինչ Խստոնիա, Լատվիա եւ Լիտվանիա յարեցան Խ. Միութեան եւ կազմեցին Սովետներ: Եւրոպայի մէջ 600 միլիոն ժողովուրդի գրեթէ կէսը

անցաւ սոցիալիստական դրութեան տակ : Որպէս Ֆաշիստական կառավարութիւններ՝ մնացին միայն Սպանիան եւ Փորթուգալը : Աւրստրիոյ եւ Արեւմտեան Գերմանիոյ մէջ զաշնակիցները իրենց բանակներով արգելեցին այդ տեղերու յեղափոխական պոռթկումը : Մեծն Բրիտանիոյ մէջ Աշխատաւորական Կուսակցութիւնը 1945-ին յաղթանակը տարաւ , բանուորութիւնը քնացնող յաղթանակ մը , որովհետեւ բրիտանական մասսաները տակաւին միամտօրէն կը հաւատային թէ Ատլիի , Բիվլընի , եւ Մորիսընի պէս ոչ-սոցիալիստ առաջնորդները՝ երկիրը բանական ուղիով պիտի տանէին դէպի Սոցիալիզմ :

Ասիան , իր 1,400,000,000 բնակչութեամբ յեղափոխական հըսկայական շարժման թատերաբեմ էր դարձեր : Այդ ընդարձակ երկրամասին վրայ զազուեթային եւ կիսազազուեթային բնոյթ ունեցող ուժերը հիմնականօրէն հակա-իմպերիալիստական յեղափոխութեան ճամբան էին մտեր : Ժողովուրդները սկսած էին կռուիլ ազգային ազատութեան ու անկախութեան համար : Ասիական հակա-իմպերիալիստական շարժումը ընդգրկել էր մարդկային սեռի կէսէն աւելին : Այդ լայնածաւալ ցամաքամասի բոլոր երկիրները նետուած էին ազատութեան համար մղուող կռիւին մէջ : Քաղաքացիական պատերազմներ եւ ուրիշ ձեւի կռիւներ կը մղուէին Չինաստանի , Հնդկաստանի , Ինտոնէզիոյ , Հնդկաչինի , Բուրմայի , Մալայի , Գորէայի , Ֆիլիպիններու , Սէյլանի եւ ուրիշ երկիրներու մէջ : Ծարձնի մէջ Ամերիկեան զինեալ ուժերու ներկայութիւնը եթէ չըլլար , յեղափոխութիւնը այնտեղ եւս երեւան պիտի դար ու յաղթանակէր : Ամերիկեան քաղաքական հեռատեսութեամբ էր որ ծարձնը իր ճիրաններուն մէջ պահէր եւ զայն «դեմօկրատական» պարբնայով ուժեղացուց որպէս Հեռաւոր Արեւելքի մէկ զաշնակիցը :

Երկար ատենէ ի վեր Ասիոյ ճնշուած ժողովուրդներու յեղափոխական շարժումները ցնցեցին Մեծն Բրիտանիոյ , Ֆրանսայի , Հոլանտայի , Ծարձնի եւ Մ . Նահանգներու հաստատած զազուեթային սիստէմի հիմքերը :

Աշխարհի կապիտալիստները ահուղողի մատնուեցան . անոնք Ֆաշիստական անձրեւէն հազիւ ազատուած էին , ահա բռնուեցան յեղափոխական կարկուտին : Եւ ի՞նչ յեղափոխութիւն . . . Ընկերային յեղափոխութիւն , յեղափոխութիւն մը , որ իր չըջանակին մէջ կ'առնէր 900 միլիոն ժողովուրդ :

Սարսափի ենթարկուած կապիտալիստները մտածեցին որ ժամանակ կորսնցնելու չէին , մասնաւորապէս Մ . Նահանգներու մեծփոր կապիտալիստները , որոնց յիշողութեան մէջ թարմ էր Ա . Համաշխարհային պատերազմին հետեւող անտեսական սուր տազնապը :

Ի՞նչ պիտի ըլլար այժմ . . . Այս Երկրորդ պատերազմին հետեւող տազնապը աւելի ահաւոր պիտի ըլլար անտարակոյս : Եւ այդ մարդիկը ուժեղ հակա-յարձակողականի ճամբայ մը գտան , քսուէն ազատուելու միակ ճամբան . — Պաղ պատերազմը : Իսկ այդ պաղ պատերազմի հանճարեղ հնարիչն եղաւ միմոս մը , որ բախտի բերումով Ամերիկայի նախագահական աթոռին վրայ էր բազմեր , — Հէրի Թրումէնը :

ՁԻՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի յառաջացուցած կարեւորագոյն իրողութիւնն եղաւ 1949-ի Չինական Յեղափոխութիւնը եւ 1950-ին , Չինական Ժողովրդական Հանրապետութեան հաստատումը : Պատմենք եղածը :

1936-ի զինադադարով քաղաքացիական պատերազմը դադրեցաւ Չինաստանի մէջ , բայց Շանկ Քայ Շէքը , կռթնած Վոլ Ստրիտի , նորէն սկսաւ իր դաւաճանութիւնը : 1946-ին , Մ . Նահանգները որպէս միջնորդ՝ ուղեց վերջ տալ այդ քաղաքացիական պատերազմին եւ հոն զրկեց ձէնէրալ ձորճ Մարշըլը : Ամերիկեան քաղաքականութեան նպատակը , սակայն , զործը խաղաղութեամբ վերջացնել չէր . ան կ'ուզէր պատուաւ Չինաստանը առնել իր իշխանութեան տակ : Ծորճ Մարշըլը փոխանակ հաշտութեան մասին կարգադրութիւն բնելու , աւելի քաջալերեց աւաղակարարոյ Շանկ Քայ Շէքը , որով 1946-ին ամբողջ Չինաստանը քաղաքացիական պատերազմի թատերաբեմ դարձաւ : Շանկ Քայ Շէք վստահ էր որ չուտով կրնար բնաջընջել կոմունիստական ուժերը , որովհետեւ իր բանակը ամերիկեան նորագոյն զէնքերով՝ երեք անգամ աւելի մեծ թիւ կը ներկայացնէր քան թէ ժողովրդական Ազատարար Բանակը : Կոմունիստներու ուժերը շատ խեղճուկ սարքաւորում ունէին . անոնք օդանաւեր չունէին . չունէին նաեւ նորագոյն զէնքեր եւ ռազմամթերք , բայց իրենց հետեւ ունէին ուժ մը՝ որ անպարտելի էր . — Չինաստանի յեղափոխական ժողովուրդը : Չորս տարի տեւող քաղաքացիական պատերազմի ընթացքին ժողովրդական Ազատարար Բանակը ջախջախեց Շանկ Քայ Շէքի զինուորական ուժը , փճացուց անոր 8 միլիոն 700 հազարնոց բանակը եւ զբաւեց ահաղին քանակութեամբ ռազմամթերք : Հոկտեմբեր 1 , 1949-ին յայտարարուեցաւ Չինաստանի Ժողովրդական կեդրոնական կառավարութիւն , եւ Մաօ-Յէ-Թունկը որպէս նախագահ : 1950-ի վերջերը , ամբողջ Չինաստանը անցաւ ժողովուրդի իշխանութեան տակ : Շանկ Քայ Շէքը իր կաշին ազատելով ասպատանեցաւ Ֆորմոզա :

Չինական յեղափոխութիւնը յաղթեր էր: Համաշխարհային կապիտալիզմը ուրիշ աւելի սոսկալի հարուած մըն էր, որ կ'ընդունէր: Չորս միլիոն քառակուսի մղոն տարածութիւն ունեցող ընդարձակ երկրամաս մը, 600 միլիոն բնակչութեամբ կը կարուէր կապիտալիստական շահագործման շրջանակէն:

Մաօ-Յէ-Փունկ, Չինական ժողովրդական Կառավարութեան առաջնորդը, հետեւեալ յատկանշական յայտարարութիւնն ըրաւ. — «Այժմ հաստատուած է ժողովրդական ղեմակրասիի ղեկատարան՝ հիմնուած զիւղացիներու եւ բանուորներու անքակտելի դաշնակցութեան վրայ, առաջնորդ ունենալով Կոմունիստ Կուսակցութեան միջոցով բանուոր դասակարգը: Չինական ժողովրդային Հանրապետութիւնը թէև իր սկզբնական շրջանառութեան Ռուսական Յեղափոխութեան դասական Սովետական ձեւին չի հետեւեցաւ, բայց ան ուղղուեցաւ նոյն նպատակին»: Մաօ-Յէ-Փունկ որոշակի յայտարարեց. — «Մեր յեղափոխութեան անշեղ նպատակն է Չինաստանը վերածել ճարտարարուեստական երկրի, եւ Նոր Գեմոնիքսիէն անցնել դէպի Սոցիալիստական ու Կոմունիստական հասարակութեան, որպէսզի հնարաւոր ըլլայ բոլորովին ջնջել դասակարգերու դոյութիւնը եւ յառաջացնել համաշխարհային Կոմունիզմը»:

Չինաստանի մէջ արդիւնաբերական բանուոր դասակարգը տակաւին շատ փոքր էր, բայց Թրէյտ Իւնիընը շատ կարեւոր դեր կատարեց ժողովրդական յեղափոխութեան մէջ, որովհետեւ ան կ'առաջնորդուէր Մարքսիզմ-Լենինիզմի պրոլետարական սկզբունքներով:

Այստեղ պէտք է ըսել թէ Չինական Յեղափոխութիւնը իր ծընունդի ու զարգացման ընթացառումով՝ շատ մը կէտերու մէջ կը տարբերի Ռուսական Յեղափոխութենէն: Ռուսիա եւրոպական երկիր է. որչափ որ ան ցարական ռեժիմի ներքեւ տնտեսապէս եւ քաղաքական գետնի վրայ տարբեր էր եւրոպական միւս երկիրներէն, բուրժուական ազդեցութիւնը միշտ ուժեղ եղած է հոն: Ռուս մտաւորականները, որոնք յետոյ յեղափոխական ասպարէզ իջան, մեծ մասով ազդուած էին բուրժուական փիլիսոփայութենէն: Ռուսական յեղափոխութիւնը սկզբնական շրջանին, բուրժուական յեղափոխութիւն էր. Ա. Պատերազմի յառաջացուցած պայմաններու բերումով եւ բուլշեւիկներու առաջնորդութեամբ՝ անիկա փոխուեցաւ պրոլետարական: Ռուս բանուորութիւնն ու զիւղացիութիւնը հետեւեցան այդ յեղափոխութեան, որ յաղթանակեց: Չինաստան Եւրոպայէն հեռու էր. չինացի ժողովուրդը բուրժուական ազդեցութեան տակ չինկաւ, այլ ինկաւ եւրոպական կապիտալիստական անխիղճ շահագործման լուծին տակ. ան բուրժուական սիստէմի փայլուն կողմերը չառնաւ, տեսաւ միայն անոր դժոխային դէմքը: Չին բուրժուազիան խիստ տկար էր.

թուական տեսակէտով չինական պրոլետարիատն ալ բնակչութեան աննշան մասը կը կազմէր: Երբ Չինական Յեղափոխութիւնը սկսաւ, յեղափոխական ուժը ներկայացնողն էր ընչազուրկ զիւղացիութիւնը, որ անցեր էր պրոլետարիատի տեղը: Այդ իսկ պատճառով՝ եթէ չինական յեղափոխութիւնը սկզբնական շրջանին բուրժուական անուանենք, ան իր հողերանութեամբ պրոլետարական էր: Երբ Չանկ Քայ Չէքը հրապարակ իջաւ, այդ յեղափոխութիւնը իր իսկական պրոլետարական բնոյթովը երեւան եկաւ: Հինգ տարիներու ընթացքին չինացի ժողովուրդը պրոլետարական յեղափոխութեան մէջ թրծուեցաւ, իւրացուց անոր սկզբունքները, նմանողութեան բնազդով կամ զգացումներով չէր որ անոր հետեւեցաւ, այլ ուղղակի այդ յեղափոխութեան ղեկավարող ուժը դարձաւ: Այսօր, եթէ մէկը մօտենայ չին ժողովուրդին եւ ըսէ թէ՛ կապիտալիստական պետութեանց հետ կարելի է խաղաղ համակցութեամբ ապրիլ, եւ կամ՝ բուրժուական պետական սիստէմը աւելի յառաջդիմական է քան սոցիալիստականը, այդ ժողովուրդը կը զիւսահարուի, որովհետեւ ան իր կաշիին վրայ կրեր է կապիտալիզմի հարուածները եւ յետոյ՝ ամբողջ հինգ տարի, տեսեր էր Չանկ Քայ Չէքի բարբարոսութիւնները:

3.— ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԹՐԷՅՏ ԻՆՆԵՐՆԵՐՈՒ ՖԵՏԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ (1945)

1941-ին կազմուած էր Անգլո-Սովետ Թրէյտ Իւնիըն կազմակերպութիւն մը, որ երկար կեանք չունեցաւ: Երբ պատերազմը կը շարունակուէր եւ դաշնակիցներու յաղթանակի հեռանկարը կը նմարուէր հորիզոնին վրայ, աշխատաւորական միութեան հարցը ղեմակրատական տարբերուն համար հրատապ դարձաւ: Անգլիոյ բանուորական միութեան գոնկրէսը, ընդառաջելով զանազան երկիրներէ եկող պահանջին, ուղեց որ 1943-ի Նոյեմբերին Թրէյտ Իւնիըններու ընդհանուր խորհրդաժողով մը գումարուի Լոնտոնի մէջ, հող պատրաստելու համար միջազգային բանուորական կազմակերպութեան մը, որուն գործը պիտի ըլլար շարունակուող այս պատերազմը յաղթութեամբ վերջացնել, եւ ապագայի համար ալ՝ ի սպառ արդիւն պատերազմը: Պատերազմի տաք շրջանին, ծրագրուած այդ խորհրդաժողովը տեղի չունեցաւ: Որոշուեցաւ քոնֆերանսը գումարել 1945-ի Փետրուար 6-ին: Եւ այդ քոնֆերանսը գումարուեցաւ 204 պատգամաւորներով: Բանուորներու ամենամեծ հաւաքոյթն էր որ տեղի կ'ունենար. այնտեղ կը պահուէին միայն Գերմանիոյ ու Ճարմնի պատգամաւորները: Յատկանշական էր Ասիոյ, Արիւրկէի եւ Լատին Ամերիկայի պատգամաւորներու ներկայութիւնը:

Քոնֆերանսի գլխավոր հարցն էր նախ՝ շահիլ պատերազմը, կոչ ընելով որ ամէն տեղ բանուորները ուժ տան պատերազմական պիտոյքներու արտադրութեան: Նացի երկիրներու մէջ բանուորական կազմակերպութեանց ընդյատակեայ գործունէութեանց մասին տեղեկատուութիւնները գոհացուցիչ էին: Քոնֆերանսը մասնաւոր ուշադրութիւն կեդրոնացուց պատերազմի տեսողութեան ընթացքին բարելաւել բանուորներու ապրուստի ու գործի պայմանները: Նոյնպէս պահանջեց լիակատար աղատութիւն խօսքի, հաւաքոյթի, կրօնական դաւանանքի, թրէյտ Իւնիւրնի կազմակերպութեան եւ ընկերային ապահովութեան: Մասնաւորապէս պահանջ գրուեցաւ որ Միացեալ Ազգերու կազմակերպութիւն մը հրատարակ գայ եւ հոն թրէյտ Իւնիւրնը ունենայ իր ներկայացուցիչը:

Այս բոլոր խնդիրներու շուրջ ընդհանուր համաձայնութիւն կայացաւ, բայց երբ հարցը եկաւ թրէյտ Իւնիւրններու միջազգային նոր կազմակերպութիւն մը յառաջացնելու շուրջ՝ աջ ու ձախ տարակարծութիւններ երեւան եկան: Միեւնոյն ուժգին հակառակողն էր Ամերիկայի AFLE-ի ներկայացուցիչը, որ կը ներկայացնէր յետադիմական հոսանքը: Երկար փիճաբանութենէ վերջ որոշուեցաւ որ 41 հոգինոց յանձնախումբ մը կազմուի որ մշակէ Համաշխարհային թրէյտ Իւնիւրններու Ֆետերասիոնի սահմանադրութիւնը: Սոյն յանձնախումբին ամենէն կարեւոր գործը պիտի ըլլար պահանջել որ Սան Ֆրանչիսքոյի մէջ գումարուելիք Միացեալ Ազգերու Քոնֆերանսին մէջ յանձնախումբը ունենայ իր պաշտօնական ներկայացուցիչը եւ Ընդհանուր Ժողովին մէջ աթոռ մը:

Սոյն Ֆետերասիոնի ընդհանուր պատկերէն կարելի էր հետեցրնել որ Մ. Նահանգներու եւ բրիտանական կառավարութիւնները միասնաբար մասնաւոր ձեւականութիւններով կ'ուզէին ամլութեան մտանել նոր կազմուելիք համաշխարհային աշխատաւորական միութեանց Ֆետերասիոնը:

ՓԱՐԻՋ. — ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1945 Մայիս 23-ին, Յաղթանակի Օրէն երկու շաբաթ յետոյ՝ նախապատրաստական աշխատանք տանող կոմիտէն կոչ մը հրատարակեց երկրորդ համաշխարհային աշխատաւորական քոնֆերանսի մը, որ տեղի ունեցաւ Փարիզի մէջ Սեպտեմբեր 25-ին եւ վերջացաւ Հոկտեմբեր 8-ին, 1945: Հոկտեմբեր 3-ի նիստին, քոնֆերանսը փոխուեցաւ Գոնկրէսի: Հոն արձանագրուած կային 346 պատգամաւորներ՝ 56 երկիրներէ, որոնք կը ներկայացնէին 67 միլիոն կազմակերպուած բանուորութիւն: Այնտեղ էր նաեւ Քրիստոնէական թրէյտ Իւնիւրննե-

րու Միջազգային Ֆետերասիոնի մէկ ներկայացուցիչը: Հոն էին դադութային եւ կիսադադութային երկիրներու պատգամաւորները՝ իրենց խորհրդականներով: Մասնաւորապէս հրաւիրուած էր Ամերիկայի AFLE, բայց այդ մեծ Ֆետերասիոնը մերժած էր բերել իր մասնակցութիւնը: Ամերիկեան Աժխահանքերու Բանուորական Միութիւնն ալ բացակայ էր, բայց Երկաթուղիներու եղբայրութիւնները՝ պահանջական թէեւ՝ զրկած էին երկու պատգամաւորներ:

Մեծադոյն կազմակերպութիւնները, որոնք իրենց ներկայացուցիչներով հոն էին, հետեւեալներն էին.— Պ. Միութիւնը կը ներկայացնէր 28,124,000 կազմակերպուած բանուորութիւն, Մեծն Բրիտանիա 6,600,000, Միացեալ Նահանգները (CIO) 6,000,000, Իտալիա 5,200,000, Ֆրանսա 5,100,000, Լատին Ամերիկա 4,000,000, Լեհաստան 1,011,000, Չեխոսլովակիա 1,500,000, Ռումանիա 1,267,000, Շուէտ 1,087,000, Մեքսիկա 1,000,000, Հունգարիա 888,000, Չինաստան 800,000, Ֆրանսական Կաթուղի Միութիւնը՝ 750,000, Եուկոսլավիա 662,000, Աւստրալիա 625,000, Քուպա 557,000, Նիդէրլանդներ 500 հազար:

Փարիզի քոնֆերանսի կարեւոր գործը այն եղաւ որ թրէյտ Իւնիւրններու Համաշխարհային Ֆետերասիոնի սահմանադրութիւնը մշակեց: Մշակուած սահմանադրութեան ինչ ինչ յօդուածներու շուրջ Բրիտանական եւ այլ պահանջողական տարրեր, աշխատեցան անհիմն առարկութիւններով մտքերը շփոթել, բայց վերջ ի վերջոյ միաձայնութեամբ ընդունեցին զձուած սահմանադրութիւնը եւ Հոկտեմբեր 3-ին, անոր գործադրութեան յատակագիծը պատրաստելու գործը յանձնուեցաւ նոյն օրը փոխուած գոնկրէսին:

Համաձայն որդեգրուած սահմանադրութեան Ֆէտէրասիոնի կեդրոնը պիտի ըլլար Փարիզ. Գոնկրէսները պիտի գումարուէին երկու տարին մէկ անգամ: Բանուորական փոքր կազմակերպութիւնները ձայնէ չզրկելու համար որոշուեցաւ որ 200 հազար անգամ ունեցող միութիւնը գոնկրէսներուն մասնակցի մէկ պատգամաւորով:

Ֆէտէրասիոնը կը գլխաւորէր Կեդրոնական Պորհուրը, որ կ'ընտրուէր Գոնկրէսէն: Ան ունէր 185 անդամներ եւ ունէր երկու բազուկներ. մին՝ Գործադիր Բիւրօ, միւսը՝ Գործադիր Կոմիտէ:

Փարիզի Գոնկրէսը թրէյտ Իւնիւրններու Համաշխարհային Ֆէտէրասիոնի համար մշակած սահմանադրութեան մէջ դրած էր հետեւեալ յօդուածները.

«Ա.— Ամբողջ աշխարհի բանուորները կազմակերպել թրէյտ Իւնիւրններու շրջանակին մէջ առանց նկատի առնելու ցեղային, ազգային, կրօնական կամ քաղաքական դաւանանքներու տարբերութիւնները:

Բ. — Ընկերային եւ անտեսական հողի վրայ նուազ զարգացած երկիրներու բանուորներուն տալ անհրաժեշտ օժանդակութիւնը, որ պէտքի անոնք եւս կազմեն իրենց Թրէյտ Իւնիքըները :

Գ. — Աննահանջ պայքար մղել բնաջնջելու համար կառավարական ամէն տեսակի Փաշխտական ձեւերը եւ ամէն Փաշխտական յայտնադործումները, հոյ չէ թէ անոնք ի՞նչ դիմակի տակ կը գործեն եւ ի՞նչ անունով հրապարակ կուզան :

Դ. — Կոուիլ պատերազմի դէմ, պատերազմի պատճառներուն դէմ եւ աշխատիլ ապահովելու հաստատ ու մնալուն խաղաղութիւն մը,

Որպէսզի կարելի ըլլայ յետամնաց երկիրներու հարստութեանց աղբիւրները լիովին օգտագործման վիճակի վրայ դնել եւ անոնց արդիւնաբերութիւնը զարգացնել միջազգային հնարաւոր եղած լայն ու անշահախնդիր համագործակցութեամբ,

Որպէսզի կարելի ըլլայ յառաջ տանիլ պայքարը յետադիմութեան դէմ եւ լիովին գործարկուին բոլոր ժողովուրդներու ազատութիւններն ու ղեմակրատական իրաւունքները :

Ե. — Միջազգային բոլոր գործակալութեանց մէջ ներկայացնել համաշխարհային աշխատաւորութեան շահերը, գործակալութիւններ՝ որոնց բաժին ինկած է կազմակերպուած քաղաքակիրթ աշխարհի կնճոռտ հարցերը լուծելու պատասխանատուութիւնը՝ Միացեալ Ազգերու միջեւ կայացած խորհրդածոյութիւններու համաձայնութեամբ : Եւ Թրէյտ Իւնիքըներու Համաշխարհային Ֆէտէրատիօնը այդ միջազգային մարմիններուն մէջ պիտի ունենայ իր ներկայացուցիչը :

Զ. — Կազմակերպել եւ միասնական ճակատի վրայ բերել բոլոր երկիրներու Թրէյտ Իւնիքըներու հասարակաց պայքարը,

Ընդդէմ բանուորներու անտեսական ու ընկերային իրաւունքներու եւ ղեմակրատական ազատութեանց վրայ գործադրուած ամէն տեսակի ոտնձգութիւններուն,

Որպէսզի բանուորները ապահովուին գործազրկութեան վրտանդէն,

Որպէսզի բանուորները յառաջդիմական ուղիով բարելաւեն իրենց աշխատավարձերը, աշխատաժամերը, գործի պայմանները եւ ապրուստի մակարդակը,

Որպէսզի բանուորները իրենց ընտանիքներով լիակատար ապահովութիւն ունենան ընդդէմ անգործութեան, հիւանդութեան, արկածի ու ծերութեան,

Որպէսզի որդեգրուին ու գործածութեան դրուին ամէն կարգի այլ միջոցառումներ, որոնք կ'օգնեն բանուորներու ընկերային ու անտեսական բարեկեցութեան :

Է. — Ծրագրել եւ կազմակերպել Թրէյտ Իւնիքընի անդամներուն համար կրթական հիմնարկութիւն մը, որուն գործը պիտի ըլլայ միջազգային աշխատաւորական միութեան շրջանակը աւելի ընդարձակել ու ամրապնդել եւ բանուորներու մէջ արթնցնել անձնական պատասխանատուութեան դիտակցութիւնը՝ ի խնդիր բանուորական միութեան նպատակի իրագործման :

Թրէյտ Իւնիքըններու Համաշխարհային Ֆէտէրատիօնը (ԹԵ ՀՖ) իր առաջադրած ուղեգծին հետեւելու անհրաժեշտ մը, իր գործը կը հաստատի հետեւեալ սկզբունքներու վրայ. —

Ա. — Լիակատար ու անշեղ ղեմակրատի բոլոր երկիրներու Թրէյտ Իւնիքըններու եւ անոնց քովնտի աշխատակցող խմբաւորումներու միջեւ :

Բ. — Պահել մշտական հաղորդակցութիւն Թրէյտ Իւնիքընի կազմակերպութեան հետ իրենց գործի օժանդակութեան համար :

Գ. — Թրէյտ Իւնիքընի գործի շուրջ փորձառութեան սխտէմատիկ տեղեկատուութեան փոխանակութիւն՝ նպատակ ունենալով ուժեղացնել միջազգային աշխատաւորական շարժման համերաշխութիւնն ու ներգաշնակութիւնը :

Դ. — Բանուորներու կազմակերպութեանց գործերու համակարգումը իրենց միջազգային նպատակներն ու որոշումները իրականացնելու համար :

Ե. — Արտագաղթի եւ ներգաղթի ատեն օգնել բանուորներուն եւ պաշտպանել անոնց շահերը :

Այս ընդհանուր ուղեգծին հետեւելով Գոնկերէսը եւ Գործադիր կոմիտէի յաջորդական ժողովները շարք մը յայտարարութիւններ ու որոշումներ հրապարակեցին պահանջելով ղեմակրատական խաղաղութեան պայմաններ Միացեալ Ազգերու միջոցով եւ իրաւատուութիւն կազմակերպուած աշխատաւորութեան կողմէ ներկայացուցիչի մը մասնակցութիւնը խաղաղութեան համար դուժարուող խորհրդածոյութիւններու մէջ : Սոյն պահանջներուն կցուած էին նաեւ ուրիշ քաղաքական պահանջներ. — Դատապարտել Ֆրանքոյի Սպանական դիկտատուրան, վերահաստատել ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքները, օժանդակել անտեսապէս յետամնաց երկիրներու արդիւնաբերութեան զարգացման առանց չահագործման նախապատրաստութեան, դուրս միջազգային թրջստներու եւ մոնոպոլիստներու սանձարձակ շահատակութիւնները եւ դատապարտել ցեղային խտրականութիւնն ու անոր ընկերացող ցեղային հալածանքը :

Ֆէտէրատիօնի այն ձեւի անտեսական քաղաքական մօտեցումը կարեւորագոյն խնդիրներու շուրջ, շատ բնականօրէն գործատէրերուն եւ անոնց խնկարկու աջակողմեան Սոցիալ Դեմոկրատներուն

դայրոյթ կը պատճառէր, ատոր համար անոնք ամէն կերպ աշխատեցան պառակտում յառաջացնել: Ամենէն մեծ թշնամին Ամերիկայի AFL կազմակերպութիւնն եղաւ, բանուորական միութիւն մը որ բացայայտօրէն կը դաւաճանէր բանուորութեան: Նոր կազմակերպութիւնը քայքայելու անոր փորձերը գերազանցեցին կապիտալիստներու ջանքերը: Ան ուզեց վերապրեցնել նախկին Միջազգային Թրէյտ Ինիւրններու Դաշնակցութիւնը, որ 1945-ին մեռած էր արդէն եւ AFL-ը նոյնիսկ անոր յուղարկաւորութեան ներկայացուցիչ մը չկրէր զրկել:

1948-ին, պահպանողական առաջնորդները քաջուեցան Ֆէտէրասիոնէն: Իսկ Թրէյտ Ինիւրններու Քրիստոնէական Միջազգային Ֆէտէրասիոնը, որ մասնակցեր էր Փարիզի Քոնֆէրանսին, առաջարկեց որ ինք կապուէր նորակազմ մարմինին հետ, պայմանաւ որ պահէր իր անկախութիւնը: Անոր առաջարկը մերժուեցաւ եւ ան շարունակեց պահել իր գոյութիւնը Լատին Ամերիկայի շարք մը երկիրներու մէջ:

4.— ԹՐԷՅՏ ԻՆԻՒՐՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ (1944-1947)

Թրէյտ Ինիւրններու Ֆէտէրասիոնը միջազգային բանուորական միութեան արտայայտութիւնն էր որ երեւան եկաւ Երկրորդ Աշխարհամարտէն յետոյ: Աշխատաւորական այս միութեան ծաւալումը գործնականօրէն բացայայտուեցաւ բոլոր այն երկիրներուն մէջ ուր որոշ չափով մտած էր արդիւնաբերական զարգացումը: Ան հին Ֆէտէրասիոնի շարունակութիւնը չէր, այլ գերակայ մարմին մըն էր ո՛չ միայն քանակական եւ որակական տեսակէտով, այլեւ յօրինուածքով, կոուելու տակտիկայով, սկզբունքներով եւ զեկամարութեամբ:

Ամենէն կարեւոր Թրէյտ Ինիւրնիզմի հատուածները որ ծաղկեցան Երկրորդ Աշխարհամարտէն յետոյ՝ ժողովրդական հանրապետութիւններու բանուորական միութիւններն էին՝ Արեւելեան Եւրոպայի մէջ. Ինչպէս Չեխոսլովաքիան, Լեհաստանը, Արեւելեան Գերմանիան, Ռումանիան, Պուլկարիան, Եուկոսլաւիան, Հունգարիան եւ Ալպանիան:

Արեւելեան Գերմանիոյ մէջ, ուր հաստատուեցաւ Գերման Դեմոկրատական Հանրապետութիւն, բանուորները վերակառուցին իրենց Թրէյտ Ինիւրնները մէկ տարիով աւելի կանուխ՝ քան Արեւմտեան Գերմանիան, որ Անգլո-Ֆրանս-Ամերիկեան հսկողութեան տակ էր: 1947-ին, Գերմանական Ազատ Ֆէտէրասիոնը 5 միլիոն անդամ ունէր: Չեխոսլովաքիան, որու Թրէյտ Ինիւրններու կեդրոնա-

կան Խորհուրդը 1944-ին, 2 միլիոն անդամ ունէր, 1947-ին ունեցաւ 3 միլիոն 75 հազար անդամներ: Թուական նոյն աճումը կը տեսնենք Լեհաստանի, Եուկոսլաւիայի, Հունգարիոյ, Ռումանիոյ եւ միւս ժողովրդական հանրապետութեանց մէջ: Այս բոլոր իրադարձութեանց յատկանշական երեւոյթը այն է որ, նախքան երկրորդ աշխարհամարտը, այդ երկիրներու բանուորական միութիւնները թէ տկար էին եւ թէ իրարմէ բաժնուած քաղաքական դիժերով: Պատերազմէն յետոյ, սակայն, Սոցիալիստ եւ Կոմունիստ Կուսակցութեանց առաջնորդութեամբ երբ բոլորն ալ ժողովրդային հանրապետութեան դրութեան յարեցան, վերջ տրուեցաւ պատեհապաշտներու գործունէութեան ու անհետացաւ բաժանում յառաջացող քաղաքական դիժը: Դեմոկրատական-ժողովրդական հանրապետութիւնները եզրայրական կապով միացած իրարու, սկսան դարձանել իրենց վերջերր ու հիմնել նոր հասարակարկը — սոցիալիստական հասարակարկը:

5.— ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

ԹՐԷՅՏ ԻՆԻՒՐՆԻԶՄԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ (1944-1947)

Արեւմտեան Եւրոպայի մէջ Հիթլերի արիւնոտ կրօնկներուն տակ Թրէյտ Ինիւրնիզմը բնաջնջուած էր: Բանուոր դասակարգը առաջնորդ չունէր, հրապարակի վրայ երեւցած առաջնորդները, առհասարակ սոցիալ գեմոկրատներ՝ անցեր էին կապիտալիզմի պաշտպանութեան պաշտօնին:

Իտալիա.—

Իտալիոյ Թրէյտ Ինիւրնները սկսան ծաղկել երբ դաշնակից ուժերը 1943-ին մտան Իտալիա: Աշխատաւորական շարժման բնագարձակումը ազդակ մը եղաւ բնդհանուր գործադուլներու եւ ապրտամբութեանց, որոնք տեղի ունեցան 1943-1944 տարիներուն: 1944 Յունիս 4-ին Հռոմի հռչակաւոր Դաշնազիրը ձեւակերպած էր հաստատելու Իտալիոյ մէջ Թրէյտ Ինիւրնի միութիւնը: Սոյն միութեան օժանդակեցին կոմունիստները, սոցիալիստները եւ քրիստոնեայ գեմոկրատները: Սոցիալիստ Կուսակցութիւնը եւ Կոմունիստ Կուսակցութիւնը արդէն 1934-ին դաշնագրութիւն մը կնքեր էին՝ միասնական պայքար մղելու Մուսոլինիի Փաշիզմին դէմ:

Հռոմի Դաշնազիրը Թրէյտ Ինիւրնի միութիւնը իրականացուց առանց նկատի առնելու քաղաքական կարծիքներու կամ կրօնական դաւանանքներու տարբերութիւնները: Միացեալ Կազմակերպութիւնը գործելու էր դեմոկրատական ուղեգծով, ապահովելով բաղկացուցիչ

տարրերու տեսութեանց ու քննադատութեանց ազատ արտայայտութիւնը: Այդ նոր Ֆէտէրասիոնը անկախ էր քաղաքական կուսակցութիւններէն եւ պետութեանէն: Ան կը կոչուէր Բոնֆէտէրագիոնէ ձէնէրալի Իտալիանսօ տէլ Լալարօ: Մինչ պատերազմը Հիւսիսի կողմը կը շարունակուէր ՔՃԻԼ-ը իր համաժողովը ունեցաւ Նափոլիի մէջ 1945-ի Յունուարին. այն ատեն իր անդամներու թիւն էր 1 միլիոն 300 հազար: Համաժողովին մէջ յայտնի էր որ Կոմունիստները առաջնորդող տարրը կը ներկայացնէին: Պատերազմէն յետոյ՝ 1947-ի Յունիսին, երբ Ֆլորէնսի մէջ գումարուեցաւ ընդհանուր համազումարը, կազմակերպութիւնը իր մի քանի յաջող գործադուլներով երբ շահած էր ժողովուրդի համակրութիւնը, իր անդամներու թիւը բարձրացաւ հինգ ու կէս միլիոնի:

Այսպէս էր Իտալիոյ մէջ Թրէյտ Իւնիլընի դրութիւնը՝ պաղ պատերազմի նախօրեակին:

Ֆրանսա .—

Ինչպէս Իտալիոյ եւ եւրոպական ցամաքամասի միւս երկիրներուն, նոյնպէս Ֆրանսայի մէջ գործաւոր գասակարգի մեծամասնութիւնը յետ պատերազմեան շրջանը կը մտնէր Կոմունիստ Կուսակցութեան առաջնորդութեամբ: Մինչ Կոմունիստները մէկ միլիոն անդամ ունէին, Սոցիալիստները հազիւ թէ այդ թիւին մէկ երրորդը կրնային լրացնել իրենց անդամներով:

Ֆրանսայի Աշխատաւորական Համադաշնակցութիւնը, որ պատերազմէն յետոյ 6 միլիոն անդամ ունեցաւ, իր ուշադրութիւնը կեդրոնացուց վերահաստատելու երկրի արտադրողութիւնը եւ բարձրացնելու բանուորներու ապրուստի մակարդակը: Կոմունիստները, մասնաւորապէս լծուած էին գործի յառաջադրուած ծրագիրը իրականացնելու համար: Մի քանի արդիւնարեքական ճիւղեր ազգայնացան: Կազմուած էր Ազգային Տնտեսական Պորհուրդ մը, որ կ'ուզէր ազգայնացնել արդիւնարեքութեան կարեւոր ճիւղերը: Բայց Ֆրանսայի մէջ կար ուժեղ բազուկ մը, որ իրերու ընթացքը կ'ուզէր տանիլ իր ցանկացած ուղեգծին: Վտանգաւոր էր Ֆրանսան թողուլ կոմունիստներու ձեռքը: Այդ ուժեղ բազուկը Ամերիկայի Մ. Նահանգներու բազուկն էր որ իրեն կապած էր ո՛չ միայն Վիշիի Փաշիստներու հետեւող գործառնէրը, այլեւ սոցիալիստները, ժողովրդական Հանրապետական Կուսակցութիւն անունին տակ ծածկուող յետադիմականները եւ Կաթոլիկ Կուսակցութիւնը: Ահա այդ ուժեղ բազուկն էր որ ժայռեր գլորեց Ֆրանսայի առջեւ եւ թոյլ չտուաւ որ ան իր ճամբան բանայ երթալու դէպի ապահովագոյն հանդրուանը — սոցիալիզմը:

Այսպէս էր ընդհանուր դրութիւնը Ֆրանսայի մէջ երբ 1947-ին սկսաւ պաղ պատերազմը:

Գերմանիա .—

Յետ-պատերազմեան Գերմանիոյ վերակառուցման համար Ամերիկեան կառավարութեան քաղաքականութիւնը Թրէյտ Իւնիլընի շարժումը արդիւլել չէր, այլ զայն սահմանափակել այնպիսի ձեւով, որ ան համաձայնէր իր շահերուն ծառայելու ուղեգծին: Ան ամէն գինով աշխատեցաւ եւ յաջողեցաւ որ Կոմունիստները Թրէյտ Իւնիլըններու մէջ առաջնորդողի դեր չունենան, Գերման աշխատաւորական շարժումը միացեալ ճակատ չկազմէ, Արեւմտեան Գերմանիան անջատուի Արեւելեան Գերմանիայէն եւ Գերմանիոյ մէջ կապիտալիզմի գոյութիւնը զերծ մնայ սպառնացող վտանգէն: Մ. Նահանգներու ծրագիրին հոգիով ու սրտով համաձայն էին ուժասպառ Ֆրանսան եւ շնչասպառ Անգլիան: Այս երեքն ալ Թրէյտ Իւնիլընի հանդէպ լեցուած էին վախով ու ատելութեամբ:

Արեւմտեան Գերմանիոյ աշխատաւորական շարժման վրայ գրուած սեղմումները Ամերիկացիներու գործն էր: Հիթլեր, երբ 1945, Մայիս 7-ին անձնատուր եղաւ, Գերմանիոյ մէջ հաստատուեցան չորս գօտիներ. Արեւմտեան երեք գոտիներու հրամանատարն էր Մ. Նահանգները, Ֆրանսան սոսկ ստուեր մըն էր, իսկ Անգլիան՝ շատ դէժ կերպով վնասուած՝ անկարող էր դէմ կենալ յոխորտացող Ամերիկայի իշխանական դիրքաւորումին: Ուստի, Թրէյտ Իւնիլընի ճակատադիրը կը մնար Ամերիկեան զօրավարներու ձեռքը:

Հիթլերի ուժի մը խորտակելէն անմիջապէս վերջը, գերման բանուորները սկսան շարժիլ վերակազմելու իրենց Թրէյտ Իւնիլընները: Կոմունիստները այս շարժման մէջ արտասովոր դեր ունեցան: Բայց Արեւելքի ու Արեւմուտքի մէջ բանուորները պատկան իշխանութիւններէն տարբեր վերաբերմունքի հանդիպեցան: Սովետական հսկողութեան տակ Արեւելեան գոտին մէջ ամէն տեսակ օժանդակութիւն արուած էր բանուորներուն վերակազմելու իրենց բանուորական միութիւնները, իսկ Արեւմտեան գոտին մէջ, ուր իշխող էին Ամերիկեան զօրավարները, բացայայտօրէն արգելքներ կը յարուցուէին Թրէյտ Իւնիլըններու վերակազմութեան համար: Ասոր արդիւնքն այն եղաւ որ 1946-ի Մայիսին, Սովետ գոտի մէջ Թրէյտ Իւնիլընի անդամներու թիւը հասաւ երկու միլիոնի, իսկ 1947-ին հինգ ու կէս միլիոնի, մինչ Արեւմտեան երեք գոտիներու մէջ կազմակերպուած Թրէյտ Իւնիլըններու անդամներու թիւը 1946-ին 600 հազար էր, 1947-ին բարձրացաւ մէկ միլիոն 160 հազարի:

Ամերիկայի զինուորական կառավարութեան պետերը հակառակ էին մասնաւորապէս չորս գոտիներու բանուորական միութեանց ընդ-

Հանուր գաշնակցութեան գաղափարին եւ ճիշդ ատոր համար ալ՝ չէին քաջալերեր Արեւմտեան Գերմանիոյ մէջ բանուորական միութեանց աճումն ու զարգացումը: Թրէյտ Իւնիլընները երբ բազմանալին անոնք գասակարգային դժով կրնային միանալ Արեւելեան Գերմանիոյ Թրէյտ Իւնիլըններու հետ, ասով կը յառաջանար գերման բանուորութեան՝ որ կը նշանակէ գերման ժողովուրդին ընդհանուր միութիւնը, որուն առաջնորդներն ըլլալու էին Կոմունիստները: Առաջին անգամ այդպիսի փորձ մը եղաւ Բրիտանական զոնի մէջ կաշայած 1947-ի քոնֆէրանսին, բայց Ամերիկեան զօրավարները ամէն միջոց զորժածեցին արդիւնլու համագերման բանուորական միութեանց համագործակցութիւնը: Անոնց մեծ աջակցութիւն տուին Գերման Սոցիալ Դեմոկրատները մէկ կողմէն, իսկ AFL-ը միւս կողմէն: Ասով Մ. Նահանգները Արեւմտեան Գերմանիոյ մէջ հոգ պատրաստեցին պաղ պատերազմին համար:

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՐՈՊԱՅԻ
ԱՅԼ ՏԵՂԵՐՈՒ ՄԷՁ

Եւրոպայի կապիտալիստական երկիրներէն՝ Մեծն Բրիտանիա, որ պատերազմի հետեւանքով շատ տուժեր էր, մէկ բանով բախտաւոր էր որ Ֆաշիստական գրաման գօտիէն դուրս մնացեր էր. ասով աշխատաւորական շարժումը կործանումէն ազատուեցաւ: Թրէյտ Իւնիլընները շարունակեցին աճիլ. 1945-ին անոնց անդամներու թիւն էր 6,375,000. 1947-ին, այդ թիւը բարձրացաւ եօթ ու կէս միլիոնի: Բրիտանական բանուորական շարժման մէջ ձախակողմեան թեւի ազդեցութիւնը շատ մեծ էր: Ճիշդ ատոր համար Կոմունիստ կուսակցութիւնը չկրցաւ ուժեղանալ: Երկրորդ անգամ ըլլալով աշխատաւորական կառավարութիւնը զորժի գլուխ անցաւ, որ թէեւ ազգայնացուց շարք մը արդիւնաբերական ճիւղեր, բայց բանուորութեան վիճակը չկրցաւ բարելաւել, մինչ կապիտալիստները հակառակն շահեր ապահովեցին:

Նորվեկիա, Տանիմարքա, Հոլանտա, Պելճիքա եւ Լուքսեմպուրկ, որոնք Հիթլերի գրաման գօտիին մէջ էին պատերազմի ատեն, անոնց Թրէյտ Իւնիլըններն ու քաղաքական կուսակցութիւնները փճացան: Պատերազմէն յետոյ՝ կոմունիստները կրցան նկատելի նուաճումներ ընել, բայց գաշնակից բանակները աջակողմեան Սոցիալ Դեմոկրատներուն եւ Վատիկանի հետ կասեցուցին անոնց յառաջխաղացքը: Կոմունիզմը անոնց համար դարձեր էր սոսկատեսիլ ուրուական մը:

Ֆաշիստական երկու երկիրները, Սպանիա եւ Փորթուգալ,

որոնք դուրս մնացեր էին պատերազմէն, իրենց յետադիմական ուժ-ժիժով արդէն ցամաքեցուցեր էին յեղափոխութեան ակերը:

Ֆիլլանտան, որ Հիթլերի գաշնակից էր եւ կը պահէր իր սոցիալ դեմոկրատական իւնիլընները, շատ մեծ փոփոխութիւն չունեցաւ: Իսկ Աւստրիոյ մէջ, ուր Թրէյտ Իւնիլընները անցեալի ուժեղ պատմութիւն մը ունէին, Սովետներու օժանդակութեամբ շատ զօրացան. անոնց անդամներու թիւը 1948-ին, բարձրացաւ մէկ ու կէս միլիոնի: Բայց այնտեղ եւս Սոցիալ Դեմոկրատական հսկողութիւնը եկաւ արգելակել կոմունիստներու զորժունչութիւնը:

Պատերազմի ատեն Շուէա, որ «չէզոք» երկիր մըն էր նացիներու ազդեցութեան տակ, Թրէյտ Իւնիլընի աճման մէջ նշանակելի աճում չունեցաւ, որովհետեւ Սոցիալ Դեմոկրատները զաղջ քաղաքականութեան կը հետեւէին եւ բանուորները կը պահէին մշուշապատ միջոցառման մէջ: Նոյն երեւոյթը կը տեսնենք նաեւ Չուիցերիոյ մէջ, որ նոյնպէս «չէզոք» երկիր էր:

6.— ԱՍԻՈՅ ՄԷՁ ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆԻՉՄԻ ԾԱՂԿՈՒՄԸ
(1845-1947)

Ճարտնական իմպերիալիզմը 1945-ի Օգոստոսին երբ հիմնովին տապալեցաւ, Ասիոյ նման ընդարձակածաւալ երկրամասին մէջ յառաջացան փոփոխութիւններ՝ ըլլայ քաղաքական, ըլլայ ազգային ազատագրական՝ ըլլայ Թրէյտ Իւնիլընիզմի զարգացման տեսակէտէն:

Չինաստան.—

Ճարտնական իմպերիալիզմի խորտակումով Չինական Կոմունիստ կուսակցութիւնը, Չին բանուորներու, գիւղացիներու եւ մտաւորականներու հերոսական առաջնորդը, ո՛չ միայն ժողովրդական ուժերը միասնական կուուի ճակատին վրայ բերաւ ընդդէմ եւրոպական իմպերիալիզմին ու Շանկ Քայ Շէքի, այլև զարգացուց Թրէյտ Իւնիլընի շարժումը, եւ Հարպինի Քոնֆէրանսով դայն միացուց Բանուորական Միութեանց Համաշխարհային Ֆէտէրատիոնին: Նոյն ատեն ժողովրդական զինուորական ուժերը իրենց վերջնական հարուածը տալու պատրաստուեցան ջախջախելու Շանկ Քայ Շէքի բանակը: Հորպինի Քոնֆէրանսի նպատակն էր ամբողջապէս փչրել ամերիկեան իմպերիալիզմի եւ Չինաստանի մէջ անոր զորժակալներու լուծը եւ հաստատել դեմոկրատական ժողովրդային հանրապետութիւն:

Հնդկաստան.—

Հնդիկ ժողովուրդի յանուն ազգային ազատագրութեան մղած երկարատեւ կռիւէն յետոյ՝ 1947-ի Փետրուարին, կայացաւ Մաունտ-

բատանի համաձայնութիւնը, որով Հնդկաստանը կ'ազատուէր Անգլիական լուծէն եւ Գանատայի նման կը դառնար Բրիտանական Կայսրութեան զաշնակից տէրութիւն մը:

Կատարուած յեղափոխութիւնը Հնդկական բուրժուական շարժման հետեւանքն էր, որուն հետեւեցաւ Հնդկաստանի մէջ Թրէյտ Իւնիքըններու ծագումը:

Ճարոնի.—

Ճարոնական իմպերիալիզմի խորտակումը թէև յառաջացաւ Մ. Նահանգներու, Զինատանի եւ Խ. Միութեան միացեալ ուժերով, բայց Մ. Նահանգներու կառավարութիւնը յետ պատերազմեան չըջանին կրցաւ Ճարոնի տիրապետութիւնը առնել իր ձեռքը եւ անոր հսկողութիւնը յանձնել Ամերիկեան Փաշխտներու սիբեւիին՝ ծայրայեղ յետադիմական Զօրավար Դրիլլադ Մըկ Արթըրին:

Այս մարզուն առաջին դործն եղաւ նախ՝ պահպանել Ճարոնական կայսրութեան սխառմը, բայց որպէսզի ցոյց տայ ժողովուրդին՝ թէ Հին դրութիւնը փոխուած է եւ անոր յաջորդեր է դեմոկրատական սխառմ մը, Վաշինկարնի հրահանգով յայտարարեց խօսքի ու հաւաքոյթի ազատութիւն: Այդ չըջանին էր որ Սոցիալիստ եւ Կոմունիստ կուսակցութիւնները հրապարակ եկան եւ սկսան դործել: Նոյն չըջանին էր նաև, որ բանուորական շարժումը սկսաւ արագօրէն ծաւալել եւ կազմուեցան նոր Թրէյտ Իւնիքըններ: 1947-ին անոնց անդամներու թիւն էր 4 միլիոն. 1948-ին անոնց թիւը բարձրացաւ ինը միլիոնի:

1947-ին, Ճարոնական Թրէյտ Իւնիքընները երկու մեծ ճիւղի բաժնուեցան. անոնցմէ ամենամեծն էր Ճարտարարուեստական Իւնիքըններու Գոնկրէսը (Սէնրէցու) որ կը համապատասխանէր Ամերիկայի CIO-ին. անոր ղեկավարներն էին ձախակողմեան առաջնորդներ — ինչպէս Քացուսի Քիքունամի որ նախագահն էր եւ Քագուեռչի Դորաչի եւ Եանոս Սաքակուչի քարտուղարներ: Երկրորդ ճիւղն էր Ճարոնական Աշխատաւորական Ֆէտէրատիոնը (Սոնդոմիի) որ կը համապատասխանէ Ամերիկեան յետադիմական AFL-ի. ասոր ղեկավարներն էին Քամաքիչի Մացուսքոյի նման աջակողմեան Սոցիալ Դեմոկրատներ:

Կոմունիստները աշխատեցան այս երկու հատուածները միացնել, բայց չի յաջողեցան: Զօրավար Մըկ Արթըր մօտէն կը հետեւէր ասնուած քայլերուն, եւ շնորհիւ ամերիկեան տոլարի քաշողական ուժին եւ տեղական յետադիմական տարրերու օժանդակութեան, ան ոչ միայն յաջողեցաւ անոնց միջև բացուած խրամատը աւելի լայնցրնել եւ խորացնել, այլև իրարու յաջորդող դործադուլները դատապարտել ձախողանքի:

Ինտոնէզիա.—

Պատերազմէն առաջ Ինտոնէզիայի մէջ շատ տկար էր բանուորական շարժումը: Բանուորները օրական 12 ժամ՝ ութը սէնթի կ'աշխատէին: Ճարոնացիները երկրէն քուելէն յետոյ կազմուեցաւ Թրէյտ Իւնիքըններու Ֆէտէրատիոն՝ 1946-ին: Յաջորդ տարին, Ֆէտէրատիոնը ունեցաւ մէկ միլիոն 222 հազար 207 անդամներ: Հոլանտական կառավարութիւնը փորձեց բանուորական միութիւնները ջախջախել, բայց չյաջողեցաւ: Բանուորներու ապրուստի մակարդակը սկսեց էր բարձրանալ: 1949-ին, Հոլանտական լուծը փչրեց ժողովուրդը եւ կղզին եղաւ անկախ:

Փաբիստան.—

Փաբիստան 1948-ին Հնդկաստանէն անջատուեցաւ եւ կղաւ անկախ: Արգիւնարերութեան դարգացումով, դարգացաւ նաև բանուոր դասակարգը որ ունեցաւ իր Ֆէտէրատիոնը:

Բուրմա.—

Բուրմայի մէջ Թրէյտ Իւնիքընի շարժում կար 1930 թուականին: Ճարոնական արշաւանքի ատեն չքացաւ շարժումը. 1945-ին կազմուեցաւ Թրէյտ Իւնիքընի Գոնկրէսը 25,000 անդամներով:

Սէյլան.—

Բրիտանական իմպերիալիզմի ներքեւ Սէյլանի բանուորական միութիւնը տկար էր. 1949-ին, ան ուժեղացաւ 189 հազար անդամներով: Երկիրը այժմ անուանական անկախութիւն ունի Բրիտանական հասարակապետութեան չըջանակին մէջ:

Քորէա.—

Քորէայի բանուորները 36 տարի ճնշուեցան Ճարոնական իմպերիալիզմի լուծին տակ, յետոյ սկսան կազմակերպուիլ զաղտնի: Երկրորդ Աշխարհամարտէն վերջ Հիւսիսային Քորէայի մէջ կազմուեցաւ Հիւսիսային Քորէայի Թրէյտ Իւնիքընի Ֆէտէրատիոնը 700 հազար անդամներով: Ատիկա սովետական դօտին էր: Հարաւային Քորէայի երկու Ֆէտէրատիոններ կային 300 հազար անդամներով:

Մալայեան կղզիները.—

Բրիտանական կառավարութիւնը Մալայեաններու մէջ ճանչցաւ անոնց Թրէյտ Իւնիքըններու Ֆէտէրատիոնը, որ 1948-ին 300,000 անդամներ ունէր: 1952-ին սկսաւ անկախութեան կոխը, որ ընդհատումներով դեռ կը շարունակուի:

Ֆիլիպեաններ.—

Ֆիլիպեաններու մէջ Թրէյտ Իւնիքընի շարժումը սկսած էր 1918-ին: 1935-ին հաստատուեցաւ Ազգային Ֆէտէրատիոն, որ բնաջնջուեցաւ Ճարոնական արշաւանքի ատեն: Ժողովուրդը հերոսաբար դիմադրեց Ճարոնցի արշաւողներուն այն ատեն՝ երբ Զօրավար

Մըկ Արթըր օգանաւով կը փախչէր Ֆիլիպեաններէն: 1946-ի Յուլիսին, երկիրը Մ. Նահանգներէն անկախ եղաւ ձեւականօրէն: 1948ին, 450,000 կազմակերպուած բանուորներ կային, որոնցմէ 300 հազարը տնկարկութեամբ պարապող բանուորներ էին: Անկէ յետոյ կազմուեցան երկու Ֆէտէրատիօններ, մին Բանուորական Կազմակերպութեանց Գոնկրէսը, միւսը՝ Ֆիլիպեան Բանուորներու Ֆէտէրատիօնը:

Հնդկաչին (Վիէթ-Նամ) .—

Հնդկաչին Փրանսական դադութ էր: Առաջին անգամ Թրէյտ Իւնիընը կազմուեցաւ 1928-ին: Ճարտնական գրաւման տակն բանուորները պարտիզանական կռիւներ մղեցին հերոսաբար ճարտնցիներուն դէմ: Անկէ յետոյ սկսաւ անկախութեան պատերազմը ՀօՇի-Մինհի դիտարկութեամբ: 1946-ին, բանուորները կազմեցին իրենց Թրէյտ Իւնիընի Գոնկրէսը, որ 250,000 անգամ ունէր: Ֆրանսան, յոգնած քաշուեցաւ: Հիւսիսային Վիէթնամը կոմունիստ կառավարութիւն ունեցաւ. հարաւային Վիէթնամի մէջ մտաւ Վաշինկտոնի կառավարութիւնը, որ մինչեւ այսօր կը շարունակէ պատմութեան մէջ նմանը շտեմնուած բարբարոսական կռիւր: Ամբողջ երկիրը կը լողայ արեան ու աւերումի մէջ. ո՛չ մէկ նշոյլ բանուորական միութեան: Կեանքի ու մահուան կռիւն է որ կը մղուի հոն:

Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ ամենէն կարեւոր Թրէյտ Իւնիընի շարժումը երեւցաւ Իրանի մէջ: Թուսեհ Կուսակցութիւնը կոմունիստներու առաջնորդութեամբ 1944-ին կազմակերպեց Միացեալ Թրէյտ Իւնիըններու Սորհուրդը, 300 հազար անգամներով: Առաջին անգամն էր որ Իրանի մէջ այդպիսի կազմակերպութիւն մը հրապարակ կ'իջնէր: Թուրքիոյ եւ Սուրիոյ մէջ նման կազմակերպութիւն գոյութիւն չէր կրնար ունենալ՝ խստադէմ դիկտատուրայի եւ տնտեսական յետամնաց պայմաններու հետեւանքով: Միայն Պաղեստինի — Իսրայէլի նորակազմ պետութեան մէջ Թրէյտ Իւնիընը աճեցաւ եւ ունեցաւ 241,794 անգամներ: Բայց այդ պետութիւնը Ամերիկեան իմպերիալիզմի խարխալը դարձաւ իրերունական բերումով:

7.— ԹՐԷՅՏ ԻՒՆԻՐՆԻՉՄԸ ԵՐԿՈՒ ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՒ, ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԻՇԵԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՓՐԻԿԷՒ ՄԷՁ (1945-1947)

Երկրորդ աշխարհամարտին հետեւանք յեղափոխական ծաւալուն ալիքաւորումի որպէս օրգանական մասը՝ Թրէյտ Իւնիընիզմի շարժումը համաշխարհային հանդամանք ստացեր էր: Եւ տարիկա նշանակելի էր մասնաւորապէս յետ պատերազմեան շրջանին, երբ տակաւին «պող պատերազմը» չէր ապականած այդ շարժումը: Թրէյտ

Իւնիընի շարժումը զարգացաւ գործնականապէս բոլոր երկիրներու մէջ, մասնաւորապէս Եւրոպայի եւ Ասիոյ մէջ, ուր պատերազմը աւերներ էր գործեր: Միւս երկրամասերուն մէջ թէեւ բանուորական շարժումը նոյնպէս կ'արձանագրէր իր գոյութիւնը, բայց անոր յառաջխաղացքը նկատելիօրէն դանդաղ էր:

Գանատա .—

Գանատայի Թրէյտ Իւնիընները երեք շորրորդ մասով միացեր էին Մ. Նահանգներու AFL-ի, CIO-ի, Հանքագործներու եւ Երկաթուղային Եղբայրութեանց հետ: Գանատայի մէջ կային երեք դըլ-խաւոր կեդրոնական բաժանումներ, Արհեստաւորական եւ Աշխատաւորական Գոնկրէսը (AFL) 558,722 անգամներով 1955-ին, Գանատական Աշխատաւորական Գոնկրէսը (CIO) 360,782 անգամներով եւ Քուէպէքի Կաթոլիկ Անտիկանները՝ 100,312 անգամներով: 1940-ին Գանատական միութեանց ընդհանուր անգամներու թիւն էր 400,000, իսկ 1955-ին, 600,000: Գրութեան յատկանշական կէտն այն էր, որ Գանատական միութիւնները թէեւ Թրէյտ Իւնիըններու Համաշխարհային Ֆէտէրատիօնի հանդէպ լարուած տրամադրութիւն չունէին, բայց քանի որ անոնց կեդրոնական գրասենեակները Մ. Նահանգներու մէջ էին, անոնց մեծ մասը Ամերիկեան իմպերիալիզմի ազդեցութեան տակ էր:

Լատին Ամերիկան .—

Լատին Ամերիկեան երկիրները պատերազմի ընթացքին, դաշնակիցներուն հօւժ նիւթ մատակարարող երկիրներ եղան, որոնք կեցեր էին դեմօկրատական ճակատի վրայ: Այդ հօւժ նիւթերն էին ուտելիք, ճարտարարուեստական բերք եւ զանազան հանքային ձոյլեր: Պատերազմի տարիներուն, երբ օտար ապրանքներու ներմուծումը դադրեցաւ, Լատին Ամերիկայի մէջ սկսաւ ճարտարարուեստական արդիւնաբերութիւնը: Բայց պատերազմը դադրելուն պէս ճարտարարուեստի գործարանները փակուեցան: Լատին Ամերիկեան պատերազմի տակն իր վաճառած ապրանքներէն զոյսցած դուժարները սկսաւ արտահանել՝ պէտք եղած ապրանքները ներածելու համար: Մ. Նահանգներու կապիտալիստները ո՛չ միայն իրենց տուած գրամները բաղադրեալ տոկոսով եւ կ'առնէին, այլեւ պատեհութիւն ունեցան բարեկամաբար ներս մտնելու տեղւոյն վրայ իրենց շահատակութիւնները յառաջ տանելու համար, մասնաւանդ որ իրենց թշնամի մրցակիցները՝ Գերմանիա, Ճարտն եւ Իտալիա, քշուած էին դուրս: Անդին, 1938-էն 1948 տարիներուն, Լատին Ամերիկայի մէջ շահատակութեան դրած գրամազուլիսը 774 միլիոն փաունտստէրլինկէն իջած էր 314 միլիոն փաունտի, մինչ Մ. Նահանգներու կապիտալը կ'աւելնար երկու միլիաո տոբարէն մինչեւ չորս ու կէս

միլիաո տոլարի: Այսպիսով Լատին Ամերիկայի երկիրները ինկան Ամերիկեան իմպերիալիզմի տնտեսական իշխանապետութեան տակ: Իրերու այս դրութեան հետեւանքով Լատին Ամերիկայի ժողովուրդներն ալ թշուառութեան մատնուեցան, որովհետեւ կենսամթերքներու գիները բարձրացան. անդործութիւնը քրոնիկ հանդամանք ստացաւ: Ահա այդ շրջանին էր որ ստատկացաւ բանուոր դասակարգի եւ գիւղացիութեան պայքարը, քանի որ անոնք ստիպուած էին կազմակերպուիլ իրենց վիճակը բարւոքելու նպատակով: Չիլիի, Քուպայի, Կուաթէմալայի, Պուլիվիայի, Քոլոմպիայի, Մէքսիկոյի, Արժանթինայի եւ Պրագիլիայի մէջ յետադիմական կառավարութեանց ազդեցութեան տակ, բանուորներն ու գիւղացիները սկսան կազմակերպուած պայքար մղել որով քիչ մը բարելաւուեցաւ իրենց դրութիւնը, թէեւ ո՛չ կատարեալ զոհացուցիչ չափով:

Աւստրալիա.—

Աւստրալիայի Թրէյս Իւնիւրնի շարժումը սկսած էր շատ կանուխէն. անոր առաջնորդները կազմակերպեցին Ամերիկայի IWW մարտական կազմակերպութիւնը: Յատկանշական իրողութիւն է որ Աւստրալիայի Թրէյս Իւնիւրնի Սորհուրդը գործօն բաժին ունեցաւ կազմելու Թրէյս Իւնիւրններու Համաշխարհային Ֆէտէրասիոնը: Ան ունէր մէկ ու կէս միլիոն անդամներ, որոնց աշխոյժ գործունէութեան շնորհիւ էր որ այդ երկրամասի բանուորները շարաթը միայն 46 ժամ կ'աշխատէին. յետոյ վերածեցին շարաթը 40 ժամի:

Նիւ Զէլանտ.—

Նիւ Զէլանտի բանուորական շարժումը յար եւ նման էր Աւստրալիայի բանուորական շարժման: Այստեղ եւս աջակողմեան Սոցիալ Դեմոկրատները առաջնորդող զեր ունէին, բայց ձախակողմեան տարրերը որոշ պարագաներու մէջ կը չհղոքացնէին անոնց ազդեցութիւնը: Նիւ Զէլանտի Թրէյս Իւնիւրնը 1945-ին ունէր 165,000 անդամներ, 1946-ին 190,000 իսկ 1948-ին անդամներու թիւը հասաւ 250 հազարի:

Օրանժ, Թրանսվալ.—

Հարաւային Ափրիկէի Թրէյս Իւնիւրնները տարբեր պատմութիւն ունին քան միւս Բրիտանական իշխանութեան կապուած երկիրներու բանուորական միութիւնները: Այնտեղ կան սեւամորթ բանուորներ եւ ճերմակներ: Այս վերջինները իրենց յատուկ իւնիւրններն ունին, որոնց մէջ արգիլուած է սեւամորթներու մուտքը: Անգլիական իմպերիալիզմը կը քաջալիւրէ շովինիստական այդ ձգտումը, որ կուզայ բանուորներու մէջ խորացնել անհաշտելի խրամատը: Բայց սեւամորթ բանուորները մարդ են, մարդկային զգացում ու գիտակցութիւն ունին եւ անոնք եւս սկսած են արթննալ ու շարժիլ:

Արթնցող Ափրիկէի ժողովուրդները.—

Ափրիկէի ընդարձակ երկրամասին վրայ ապրող շատ ժողովուրդներ, որոնք երկար ատեն ճնշուած էին Բրիտանական, Ֆրանսական, Հոլանտական, Գերմանական, Պելճիզական, Սպանական, Փորթուգալական եւ յետոյ՝ Ամերիկեան իմպերիալիստներէն, այժմ արդէն արթնցած՝ կը դարգացնեն իրենց պայքարի միջոցներն ու զէնքերը՝ ի խնդիր ազգային անկախութեան: Գլխաւոր ուղեգիծով, Ափրիկէի մէջ յառաջացած այդ հսկայական շարժումը, կարելի է նմանցընել Ասիական շարժումին: Բոլոր այս ժողովուրդները ոգի ի բուն կ'աշխատին մէկ կողմ նետել կապիտալիստ պարագիտները եւ հաստատել իրենց սիրած ոչժիւրը: Երկրորդ Համաշխարհային Պատերազմը, որպէս մեծագոյն շարիք՝ երբ իր հետ բերաւ անհաշիւ աւերածութիւն ու պատճառ դարձաւ բազմամիլիոն զոհերու, նոյն ատեն կրնանք ըսել թէ ան եղաւ նաեւ մեծագոյն բարիք մը, երբ իր ետեւէն բերաւ ազգային գաղութային յեղափոխութիւններու շարժում մը ամէն ուր որ բռնութիւնն ու անխիղճ շահագործումը իրենց բոյնն էին դրեր: Ինչպէս ամէն տեղ գաղութային աշխարհին մէջ, նոյնպէս Ափրիկեան ժողովուրդներն ալ սկսան հարուածել իրենց իմպերիալիստ շահագործողներն ու հարստահարողները ամուր հիմքերով կառուցելով իրենց կռիւի ու պաշտպանութեան բերդը — բանուորական միութիւնը:

Ափրիկէի իմպերիալիստական արշաւանքը մարդկային սեռի պատմութեան մէջ ամենասոսկալի ողբերգութիւններու մէկ հատուածը կը կազմէ: Ամբողջ շորս դարեր, տասնհինգերորդ դարու կէսէն մինչեւ ժԹ. դարու կէսը, Եւրոպական եւ Ամերիկեան տնկարկութեան տէրերը արշաւեցին Ափրիկէ՝ ի խնդիր գերիներու: Գերեզմանութեան ճամբուն վրայ 60 միլիոն ժողովուրդ ցրուեցին հոս հոն կամ սպաննեցին անխնայ: Վերջէն կապիտալիստները մտածեցին որ իրենց համար աւելի շահաբեր էր յափշտակել Ափրիկէի հարուստ հողերն ու հանքերը եւ ժողովուրդը շահագործել իրենց տեղւոյն մէջ: ԺԹ. դարու վերջի քառորդին, անոնք սկսան գործադրել աւելի սոսկալի բռնարարում մը: Եւրոպական վեց առաջաւոր պետութիւններ մտան Ափրիկէ եւ սովալլուկ զայլերու նման իրարու հետ կռուելով գրաւեցին այդ ընդարձակածաւալ երկրամասին 80 առ հարիւր բաժինը: Անգլիա, Ֆրանսա եւ Պելճիզա, առաջին անգամ առիւծի բաժինները վերցուցին, վերջը մտան Գերմանիա եւ Իտալիա: Ափրիկեան ժողովուրդները, մեծ մասով նէկրոններ, յուսահատ, կատաղութեամբ կռուեցան այդ աւազակներուն դէմ, բայց պարտուեցան շարաշար:

Իմպերիալիստները կողոպտելով Ափրիկէի երկրագործական, անտառային ու հանքային հարստութիւնները հաստատեցին այնպիսի

անմարդկային շահագործման դրութիւններ, որոնց նմանը տեսնուած չէ թէ հին՝ եւ թէ արդի ժամանակներուն մէջ: Բնիկները զրկուելով իրենց հողերէն ու ապրուստի պայմաններէն, խարազանի ու բանու- թեան տակ կը գործէին տնկարկութեանց, անտառներու կամ հան- քերու մէջ օրական 16-էն 18 ժամ եւ կը ստանային միայն մի քանի պղնձադրամներ: Ո՞վ ուշագրութիւն կը դարձնէր որ այդ խեղճերը ճանճերու նման կը մեռնէին հիւանդութիւններէն ու անբաւարար սննդառութենէն եւ անոնց ինքնատիպ կույտուրան կը շոգիանար օ- տար ճնշման տակ:

Եւրոպայի Սոցիալիստները, մեծ մասով երկրորդ ինտերնա- ցիոնալի առաջնորդները, ո՛չ միայն անտարբեր էին այդ հրէշային անդթութեանց հանդէպ, այլև կը ծափահարէին եռանդազին՝ որ կապիտալիստները եւրոպական քաղաքակրթութիւնը կը տարածէին Ափրիկէի խաւարակուռ անկիւններուն մէջ: Եւ այդ դրութիւնը, որ տիրական էր Եգիպտոսէն մինչեւ Հարաւային Ափրիկէ, եւ արեւել- քէն-արեւմուտք, շարունակուեցաւ մինչեւ որ 1917-ի Ռուսական Յե- դափոխութեան յաղթանակով ժողովուրդները հասկցան թէ իրենց պատմական գործն էր զազութային եւ կիսազազութային երկիրներու տանջուող մասսաներուն հետ միացած կռուիլ հասարակաց թշնա- միին՝ իմպերիալիզմին դէմ:

Այսօր, Ափրիկէն կ'եռեւեփի յեղափոխութեան կրակով. յեղա- փոխութիւն՝ որ բացօրնշակի հակա-իմպերիալիստական բնոյթ ու- նի: Գերանող յեղափոխական այդ շարժումը, որ տարածուած է ա- մենուրեք, ինքնածին չէ, տարերային չէ, ունի իր գործօն ազդակ- ները. — Ափրիկէի մէջ պրոլետարիատի աճումը, իմպերիալիզմի ծանր ճնշման տակ Ափրիկեան ժողովուրդներու քաղաքական գիտակ- ցութեան հասունացումը, Ռուսական Յեղափոխութեան ներշնչող ազ- դեցութիւնը, Ասիոյ դազութային ժողովուրդներու յաղթական պայ- քարներու օրինակները եւ կոմունիզմի առաջնորդող լուսարձակը: Ափրիկեան հակա-զազութային շարժումը համաշխարհային կապի- տալիստական սխտէմի ընդհանուր ճգնաժամի նախնական շարք մը բացայայտութիւններէն մէկն է: Գազութարարութիւնը մահամերձ վիճակի ենթարկուած է թէ՛ Ափրիկէի, թէ՛ Ասիոյ եւ թէ՛ Լատին Ամերիկայի մէջ:

8.— ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾԱԳՈՒՄԸ (1947-1949)

Համաշխարհային Բ. Պատերազմը սկսաւ երկու հակամարտ խմբաւորումներ ներկայացնող պետութեանց միջեւ. մէկ կողմը կեցեր էին Ֆաշիզմի ներկայացուցիչները — Գերմանիա, Իտալիա եւ Ճարոն

իրենց փոքր դաշնակիցներով. ասոնք անցան անսպասելի անմիջական յարձակողականի: Միւս կողմը կեցեր էին դեմոկրատիզմի ներկայա- ցուցիչները — Անգլիա, Ֆրանսա եւ յետոյ՝ Մ. Նահանգները, որոնք անցեր էին պաշտպանողական ճակատի վրայ: Բայց այդ պատերազմը Փաշիզմի-դեմոկրատիզմի պատերազմ չէր, այլ իր էութեամբ իմպե- րիալիստական պատերազմ էր: Երկու կողմի պետութիւնները կ'ու- գէին իրենց համար ապահովել աշխարհի տիրապետութիւնը: Դեմոկ- րատական ճակատի պետութիւնները նախքան պատերազմը, կ'երա- գէին որ Ֆաշիստական ուժերը պիտի կործանէին սովետական սեփ- մը, որուն համար նախնական զիջումներ ըրին Գերմանիոյ: Բայց Գերմանիան իր յարձակողականը փոխանակ արեւելք ուղղելու, ուղ- ղեց դէպի արեւմուտք: Դեմոկրատ դաշնակիցները ամէն միջոց գոր- ծածեցին եւ պայմաններու օժանդակութեամբ Ս. Միութիւնը առին իրենց կողքին՝ սնուցանելով նոյն երազը. — Ս. Միութիւնը այդ պա- տերազմին մէջ թէ՛ պատերազմի հարուածներուն եւ թէ՛ ներքին հա- կայեղափոխութեանց պայթումներու հետեւանքով պիտի քայքայ- ուէր, պիտի էլնար շնորհնկալի դերին մէջ եւ իրենք անոր պիտի պարտազրէին իրենց շահերու համապատասխան պայմանները: Բայց պատերազմը բոլորովին հակառակ արդիւնք տուաւ: Պորճրային Միութիւնը յաղթական դուրս եկաւ. առաջին անգամ ան էր որ խու- ճապի մատնեց նացի բանակները եւ մտաւ Բերլին: Այժմ դեմոկրատ դաշնակիցներուն առջեւ կը ծառանար ամենադժուարին հարցը. ի՞նչ ընելու էր Սովետ Միութեան, երբ անոր պրէստիժը բարձրացեր էր ամբողջ աշխարհի մարդկութեան առջեւ: Եւ շուարած կապիտալիս- տական աշխարհի նայուածքը ուղղուեցաւ դէպի տուրաններու կայս- րութիւնը — Ամերիկայի Միացեալ Նահանգները: Մարդիկը շատ լաւ գիտէին որ առանց Ս. Միութեան հերոսական գրոհումներուն եւ առանց համաշխարհային հակա-Փաշիստ ուժերու օժանդակութեան, իրենք պատերազմը կորսնցուցեր էին, բայց այս խոստովանութիւնը չէին ուզեր ընել. ատիկա պարտուողականութեան հոմանիչ էր: Ի- րենց համար յաղթականը Ամերիկան էր եւ Ամերիկան պիտի ըլլար յետ-պատերազմական շրջանին զիրենք անել գրութենէն ազատողը: Իսկ Ամերիկան ինքը՝ արդէն անել գրութեան մէջ էր: Առաջին պա- տերազմին հետեւող տնտեսական տաղնապը իր յիշողութենէն ջրն- ջուած չէր. ի՞նչ պիտի ըլլար այժմ, երբ պայմանները բոլորովին փոխուած էին: Եւրոպան թշուառացած էր, շահագործման աղբիւր- ները պղտորուած էին, յեղափոխութիւնները վարակիչ հիւանդու- թեան նման տարածուած էին ամենուրեք: Պաղաղութիւն՝ կը նշա- նակէր մահ. բայց կապիտալիզմը անձնասպանութեան չէր ուզեր դի- մել: Եւ ահա հրապարակ իջաւ Հէրբի Թրումէնը 1947, Մարտ 12-ին,

իր համարաւոր վարդապետութեամբ: Ան 200 միլիոն տուրքի փոխատուութիւն մը բրաւ Յոյն եւ Թուրք կառավարութիւններուն, որոնք Ֆաշիստական դոյնով զիկատաւորանք հաստատելէն իրենց երկիրներուն մէջ: Ասոր արդիւնքն այն եղաւ որ Թուրքիան իրեն կապեց իսկ միւս կողմէն՝ Յունաստանի ժողովրդական ղեմովորտին սպաննեց, բան մը, որ Բրիտանական Աշխատաւորական կառավարութիւնը երեք տարիներու ընթացքին՝ չէր կրցած ընել:

Թրումէնի վարդապետութիւնը Միացեալ Նահանգներու յետպատերազմեան շրջանի նուաճողական քաղաքականութեան վտանգաւոր ու շարաշուք ղիմագիծն էր որ կը մերկացնէր: Ամերիկան, ամենէն հօր կապիտալիստական պետութիւնը, աշխարհի տէրն ու տիրականը ըլլալու էր: Ինք արդէն ստանձներ էր հրամայողի դերը եւ կը թելադրէր աջ ու ձախ՝ զանազան ժողովուրդներուն — ինչպէս յոյներուն պարագան էր — թէ ինչպիսի կառավարութիւն կրնան կամ չեն կրնար ունենալ: Առաջին յարձակողականը սկսաւ նախ Եւրոպայի մէջ, յետոյ անցաւ ուրիշ տեղեր: Ֆրանսայի, Իտալիոյ եւ Պելճիզայի մէջ կոմունիստները պատկանեալ կառավարութեան դահլիճին մէջ աթոռներ էին զբաւեր, միակցական կառավարութիւն էին կազմեր: Ամերիկան հրամայեց որ կոմունիստները դուրս հանուին եւ երեք երկիրներն ալ դուրս առնուի իրեն հրամանը կատարեցին: Ամերիկան, իր ղեկավարին միջոցով, նոյն փորձը բրաւ Չեխոսլովաքիայի, ուղելով տապալել անոր ժողովրդական կառավարութիւնը, բայց ձախողեցաւ: փոխան կոմունիստներուն՝ բուրժուայ նախարարները դահլիճէն հրաժարեցան: 1948-ի Ապրիլին, երբ Իտալիոյ մէջ խաչածեւոյ ընտրութեանց տաժանելի օրերը կը մօտենային, Մ. Նահանգներու կառավարութիւնը իր նաւատորմիզը կանգնեցուց Իտալիոյ առջեւ որպէսզի բռնի ուժով արգիլէ ձախակողմեան ուժերու քաղաքական յաղթութիւնը: Եւ ասոնք Ամերիկայի տիրապետական ամբարտաւան քաղաքականութեան սկզբնական քայլերն էին, զորս Վաշինկտոնը կ'առնէր այնքան անխոնջ վճռակամութեամբ:

Թրումէնի վարդապետութեան հետեւեցաւ ուրիշ յարձակողական շարժում մը, այս անգամ՝ Ֆինանսական հողի վրայ: Ասիկա՝ Մարշլիան ծրագրի յայտարարութիւնն էր: 1947, Յունիս 5-ին, Ամերիկայի Պետական Քարտուղար Ճորճ Մարշլը Մ. Նահանգներու կողմէն առաջարկեց Եւրոպայի զանազան կապիտալիստական երկիրներուն, իւրաքանչիւրին պահանջին համաձայն փոխատուութիւն՝ որպէսզի անոնք կարողանան վերականգնեցնել իրենց արդիւնարբութիւնը եւ հասնին բնականոն տնտեսական դրութեան: Ասիկէ աւելի ասպետական վերարեւմուճիկը ո՞վ կրնար երեւակայել: Յաջորդող 4 տարիներու ընթացքին՝ Ամերիկան փոխատուութեան զծով եւրո-

պական երկիրներուն տուաւ 12 միլիառ տուրք: Այժմ տեսնենք թէ այդ փոխատուութիւնը ի՞նչ իրադարձութիւններ կրնար յառաջացնել եւ յառաջացուց: Մենք զիտենք թէ Ամերիկեան կառավարութիւնը դրամ չունի, անոր պանծարանը կը լեցուի ժողովրդային հարկատուութեամբ: Կառավարութեան պիտոճէն հոգացողը ժողովուրդն է: Ամերիկայի կառավարութիւնը, ուրեմն, այդ 12 միլիառ տուրքի գումարը պիտի առնէր Ամերիկեան պանծարանէն եւ անոնց պիտի վերագարձնէր քաղաքեալ տոկոսներով: Եւ որպէսզի կարենար իր պարտքը մաս առ մաս վճարել, բնականաբար պիտի բարձրացնէր ժողովուրդի հարկերու սակագիրը: Առանկով երբ պետական պարտքը կը բարձրանար, այդ կը նշանակէր որ ժողովուրդն էր որ կ'իյնար պարտքի տակ: Իսկ եւրոպական երկիրները ի՞նչ պիտի ընէին իրենց փոխ առած դրամները: Անոնց զործարանները աւերուած էին, արդիւնարբական ազդիւրները՝ ցամքած, ուրեմն անոնք իրենց գնումները պիտի ընէին Ամերիկայէն: Ասիկէ կը յառաջանային հետեւեալ իրադարձութիւնները. (ա) — Ամերիկեան դրամը դարձեալ կը վերագառնար Ամերիկա ու այս անգամ կը մտնէր Ամերիկեան կապիտալիստներու պանծարանը. (բ) — Եւրոպական պահանջներուն դոհացում տալու համար Ամերիկեան բանուօրներուն զործ կը հայթայթուէր. (Անոնք պիտի զործէին, աշխատավարձը պիտի ստանային որպէսզի կարողանային իրենց վրայ դուրս առնուած հարկերը վճարել). (գ) — Ամերիկեան կառավարութիւնը ասով կ'իյնար Ֆինանս. կապիտալի ազդեցութեան տակ. (դ) — Եւրոպական երկիրները իյնալով շնորհնակալի դերին մէջ, կ'ենթարկուէին Ամերիկայի հրամանատարութեան. (ե) — Ամերիկեան կառավարութիւնը իրեն ենթարկելով եւրոպական երկիրները, անոնց միջոցով տիրական դիրք կ'ապահովէր Միացեալ Ազգաց Կազմակերպութեան մէջ: Այս կէտերը նկատի առնելով կրնանք բսել թէ՛ Ճորճ Մարշլը հնարագէտ հանձար մըն էր, որ Վոյ Ստրիտի առջեւ մէկ կողմէն նոր յաղթանակներու դուռ կը բանար, միւս կողմէն՝ նոր պատերազմի մը վտանգը ստեղծելով պատերազմական տեսական արդիւնարբութեան ճամբան կը հարթէր:

Սկիզբէն Վաշինկտոնի կառավարութիւնը այնպէս ձեւացուց որ ինք պատրաստ էր նաեւ փոխատուութիւն ընել Խ. Միութեան եւ միւս ժողովրդային-ղեմովորտական կառավարութիւններուն, բայց Մոլոթով՝ 1947-ի Յուլիսին, երբ առաջարկեց որ փոխատուութեան յօժարող երկիրներու ղեկիչխանութիւնն ու տնտեսական շահերը արտաքին սոնձգութիւններէն բացարձակապէս ապահովուած ըլլալուն, այն ատեն ջուրը ձգուեցաւ անոնց փոխատուութեան խնդիրը: Եւ ահա ձեղքուածք յառաջացաւ հակա-Ֆաշիստ այդ դաշնակցու-

թեան մէջ, որ շահած էր Երկրորդ պատերազմը: Այդ ճեղքուածքէն ծնաւ նոր տեսակի պատերազմ մը. — Պաղ պատերազմը:

Պաղ պատերազմի առաջին ազդանշանը տրուեցաւ Գերմանիոյ մէջ:

Պատմենք կատարուած իրադարձութիւնը(*):

Բ. պատերազմէն յետոյ՝ ինչպէս բտինք, Գերմանիան բաժնուած էր երկու զոներու. Արեւելեան զոնը՝ Սովետներու հսկողութեան տակ, Արեւմտեան զոնը՝ դաշնակիցներու — Ամերիկայի, Անգլիոյ եւ Ֆրանսայի զինուորական հսկողութեան տակ: Բերլինը նոյնպէս բաժնուած էր երկու մասի. Արեւելեան Բերլինը՝ Սովետներու թեւարկութեան տակ, Արեւմտեան Բերլինը՝ դաշնակիցներուն:

Թէ ինչո՞ւ Սովետները այդպիսի կնճռոտ համաձայնութեան մը յանգեր են սկզբնական շրջանին, երբ կրնային ամբողջ Բերլինը իրենց վերապահել, այդ մասին չխօսինք. անցնինք ներկայացնել յաջորդական ղէպքերը:

Բերլինը կը գտնուէր Արեւելեան զոնին մէջ, ուրեմն, Արեւմտեան Բերլինի եւ Արեւմտեան Գերմանիոյ հաղորդակցութիւնը տեղի կ'ունենար Արեւելեան Գերմանիոյ մէջէն: Ահա թէ ո՛ւր կը գտնուէր դրութեան կնճռոտ հանգամանքը:

Ամերիկեան զբաւման բանակի զինուորները, գինովնալով զլեւերը ու չատեն կը մտնէին Սովետական զոնը, տուներու դռները կը բաղտէին գեղանի աղջիկներով ու կիներով զուարճանալու համար, եւ որ աւելի այսպանելի էր, կը զբաղէին կողոպուտով, թալանով: Սովետ զոնին մէջ կը տիրէր կատարեալ կարգապահութիւն: Սովետ զինուոր մը եթէ կողոպուտի յանցանքով բռնուէր, խկոյն կը զընդակահարուէր(*): Սովետ զինուորականութիւնը քանիցս զիմուժ կատարեց դաշնակիցներուն, զազրեցնելու այդ ապօրինութիւնները: Բայց անոնց զիմուժները բնաւ նկատի չառնուեցան: Սովետները

(*) Սոյն տեղեկագրութիւնը հաղորդուեց Է. E. Harriman: Տեղեկագրութիւնը տպուած է U. S. News and World Report Շաբաթաթերթի 1947, նոյեմբեր 17-ի թիւին մէջ:

(*) Հակառակ, սակայն, այս խիստ կարգապահութեան, մաս մը հայ զինուորներ պարագաները օգտագործեցին կողոպուտով ու անցան Արեւմտեան զոնը եւ հոն պաշտպանուեցան Ամերիկացիներէն: Սովետները պահանջեցին անոնց յանձնուիլ, բայց Ամերիկեան զինուորականութիւնը զանոնք պահեց ու չյանձնեց: Այդ մարդիկը իրենց գործը շարունակեցին Արեւմտեան Գերմանիոյ մէջ. ուսմի՞ ամուսնացան Գերմանացի աղջիկներու կամ այրիներու հետ. իսկ յետոյ՝ համբաւուր խոհարար Մարտիկեանի միջնորդութեամբ փոխադրուեցան Ամերիկա:

հարկադրուած՝ խիստ միջոցներու զիմեցին, փակեցին մուտքի դռները եւ յամառօրէն անաստողները ձերբակալեցին ու յանձնեցին պատկան իշխանութեան: Տեղի ունեցան փոքր ընդհարումներ: Սովետ զինուորականները գառն փորձերով համոզուած՝ որ այլեւս անհնարին է կարգապահութիւն հաստատել կրկնակի զիմուժներով, յայտարարեցին որ սովետական զոնին մէջ ձերբակալուած օտար զինուորները պիտի չյանձնուին պատկան իշխանութեան, այլ պիտի դատուին ու պատժուին տեղական կառավարութեան օրէնքով. (սովետական զոնին մէջ հաստատուած էր Ժողովրդային Գեմոկրատական Հանրապետութիւն): Դաշնակիցները պատասխանեցին որ իրենք այդպիսի կառավարութիւն չեն ճանչնար. մինչպէս Ս. Միութիւնը պաշտօնապէս ճանչցած էր Պոնի կառավարութիւնը: Այստեղ արդէն կը ցցուէր ուրիշ անհաշուելի հակասութիւն մը:

Ամերիկեան ճարտիկ զիւանագիտութեամբ յաջողեր էր պայմանները հասունեցնել պաղ պատերազմի համար, որ սկսաւ եւ կը շարունակուի մինչեւ այսօր եւ պիտի շարունակուի մինչեւ որ անոր յաջորդէ տաք պատերազմը: Եւ տաք պատերազմը անխուսափելի է:

Բայց այժմ մենք պատկերացնենք իրերու յաջորդական օղակները:

Մարշլեան պլանի իրական նպատակն էր Ամերիկեան հրամանատարութեան տակ վերադինել կապիտալիստական Եւրոպան՝ ընդդէմ Սովետ Միութեան եւ Ժողովրդային գեմոկրատական կառավարութիւններուն: Ան նոյնպէս կը զիւրացնէր այն բոլոր միջոցները, որոնցով Ամերիկեան խոշոր ընկերութիւնները կը թափանցէին եւրոպական 16 երկիրներու տնտեսութեանց մէջ Մ. Նահանգներու ձուլած օգնութեան խողովակներով: Արեւմտեան Եւրոպայի երկիրները պատերազմի հետեւանքով մատնուած աւերածութեան, իրենց կապիտալիստական ուժիմներու տակ երբեք ի վիճակի չէին ընդգիմանալ ամերիկեան անաղմուկ յարձակողականին: Այս առթիւ ձան կրթըր շատ իրաւամբ զրութիւնը կը ներկայացնէ հետեւեալ ձեւով. — «Իմ համեստ կարծիքը այն է, որ առանց Ամերիկայի օգնութեան՝ Յունաստանի կառավարութիւնը տասը օր չէր կրնար գիմանալ: Ֆրանսայի եւ Իտալիոյ կառավարութիւնները եւս, երկու ամիս չէին կրնար զիմանալ կոմունիստական ուժերուն առջեւ, եթէ Ամերիկեան անոնց օգնութեան չի հասնէր իր նաւատորմիցով, իր զինուորներով եւ զբաւմով»: Միայն Մեծն Բրիտանիան էր որ Եւրոպական կապիտալիստական երկիրներուն հետ բաղդատելով, չնորհի իր աշխարհագրական դիրքին, պատերազմի տեսն թէ եւ չնշասպառեղեր էր, բայց երկիրը ազատ մնացեր էր ընդհանուր աւերածութենէն:

1949-ին, Մարշլբեան Պլանին հետեւեցաւ Հիւսիսային Ատլանտեան Ուխտը: Ատիկա հակա-սովետ զինուորական դաշնակցութիւն մըն էր որ ձեւ կ'առնէր: Ամերիկեան ճշման տակ Մարշլբեան Պլանի երկիրները զինուորական նպատակներու համար աւելի շատ դրամ կը վատնէին, քան ինչ որ կ'ընդունէին Մ. Նահանգներէն:

Թրումէնի Վարդապետութեան, Մարշլբեան Պլանի եւ Հիւսիսային Ատլանտեան Ուխտի ամբողջ ծրագիրն էր պաշտպանողական ճակատ կազմել առասպելական «կարմիր վտանգին» դէմ, կոթնելով ատոմական ուժերի Ամերիկեան մոնոպոլին: Միացեալ Նահանգներու մէջ զինուորական յատկացումները զիթխարի համեմատութեան հասան: Այդ ամբողջ պատրաստութեանց նպատակն էր ընկճել Ս. Միութիւնը:

Միացեալ Նահանգները, իմպերիալիստներու ատոմական ուժերի հայրենիքը, իրենց նուաճումի ու պատերազմի ծրագրի որպէս մէկ մասը, որդեգրեցին ազգային ու նահանգային կառավարական այնպիսի օրէնքներ, որոնք յայտնապէս Փաշիստական բնոյթ ունէին: Բոլոր այդ անուամբ քայլերուն ընդհանուր նպատակն էր ստրկացնել բանուորներն ու դեմոկրատական մասսաները, որպէսզի անոնք որեւէ դիմադրութիւն չի փորձեն Վոյ Ստրիտի եւ կառավարութեան զինուորական յարձակողական քաղաքականութեան դէմ: Արտաքին ճակատը ապահոված էին արդէն: Խորհրդային Միութեան սահմաններուն մօտերը հաստատել էին օդանաւային կայաններ. այժմ կարելու էր արագ հասնել ներքին ճակատը, որուն համար անհրաժեշտ էր Փաշիզմը ժողովրդականացնել: Գոնկրէսի կողմէն վաւերացուած Թէֆտ Հարթլի օրէնքով չղթայեցին բանուորական միութեանց իրաւասութիւնները. հաստատեցին հաւատարմութեան ուխտի կանոններ. ով որ պետական-կառավարական ծառայութեան մէջ էր երգում ընելու էր որ ինք կոմունիստ չէր եղած ու կոմունիստներուն համակիր չէր եւ պարտաւոր էր զանոնք հալածել: Նոյն երդումը ընելու էին նաեւ դպրոցներու-համալսարաններու ուսուցիչները, կարելու էր զործարաններու մէջ գործողները: Չերբակալուեցան կոմունիստ կուսակցութեան առաջնորդները, այն փաստով որ անոնք բացէն ի բաց կը սորվեցնէին «կառավարութիւնը բռնի ուժով տապալելու» վարդապետութիւնը: Միջարտիզմը սկսաւ զարգանալ ու տարածուիլ Մ. Նահանգներու մէջ: Ատիկա ամերիկեան Փաշիզմն էր:

Աջակողմեան Սոցիալ Դեմոկրատները ամէն տեղ փութացին ամերիկեան իմպերիալիզմի օգնութեան. այն իմպերիալիզմը, որ հրապարակ էլեր էր սովետներու դէմ՝ անպատկառ սուտերով ու զրպարտութիւններով, զրգռիչ լուրերով ու ամբոխավարական վերադրումներով: Հնարեցին երկաթէ վարագոյր մը եւ գայն կախեցին

Ս. Միութեան սահմաններուն վրայ եւ իրենք՝ այդ երկաթէ վարագոյրին ետեւ անցած դարձածները սկսան պատկերացնել արտառոց գոյներով: Ոչ ոք չէր հարցնէր թէ քանի որ այդպիսի երկաթէ վարագոյր մը կախուած է Ս. Միութեան առջեւ, ամերիկեան թղթակիցները ո՞ր մուկի ծակերէն մտեր են ներս ու նկարեր են դէպքերն ու դէմքերը, այնքան հարազատօրէն, որպէսզի համոզեն զիւրահասան միամիտները: Հարցում ընել... ո՞վ կը համարձակէր նման հարցում մը ընել, երբ ամէն մարդ լրտես էր դարձեր, եւ կ'երազէր վարձատրուիլ տոլարով... Սկսեւ էր տոլարներու հեղեղը Ամերիկայի մէջ:

Կոմունիստ Ինտէրնացիոնալը 1943-ի Մայիսին լուծուած էր: Ատիկա Ստալինի գործած խոչոր սխալներէն մէկն էր: Այդ աղիտարեր զիջում մըն էր կապիտալիստական իմպերիալիզմին առջեւ, զիջում մը, որ չփոթութիւն կը յառաջացնէր ո՛չ միայն կոմունիստ կուսակցութեանց շարքայիններու մէջ, այլեւ ընդհանուր ժողովրդական այն զանգուածներուն մէջ, որոնք երեւութապէս անտարբեր՝ բայց ներքնապէս հետաքրքրութեամբ կը հետեւէին անոր շարժումներուն: Այսու հանդերձ՝ կոմունիստները եւ ձախակողմեան տարրերը պայքարի ճակատը լքած չէին. անոնք հակառակելով Մարշլբի Պլանին եւ իմպերիալիստական յարձակողական ծրագրին, դարձեալ կոնկրէտ ձեւ մը առին երոպական ինք գլխաւոր կոմունիստ կուսակցութեանց այն համաժողովին մէջ, որ կայացաւ 1947-ի Սեպտեմբերին՝ Լեհաստանի մէջ: Այդ կուսակցութիւնները կը ներկայացնէին հետեւեալ երկիրներու կոմիւնիստ հաւաքականութիւնը. Ս. Միութիւն, Պուլկարիա, Լեհաստան, Չեխոսլովաքիա, Իտալիա, Ֆրանսա, Եուգոսլաւիա, Ռումանիա եւ Հունգարիա: Նոյն քոնֆէրանսին մէջ այդ կուսակցութիւնները կազմեցին կոմունիստ Ինֆորմատիոնի Բիւրօ (Կոմինֆորմ) որուն գործն էր իրենց միջեւ ապահովել համազոր-ժակցութեան կապ մը: Պէտք է ըսել թէ այս կոմինֆորմը ինք երկիրներէն դուրս ճիւղեր չունեցաւ. գրեթէ սոսկ անուանական գոյութիւն մը պահեց, առանց պատմական նշանակութիւն ունեցող գործունէութեան:

Այս բոլոր իրադարձութեանց ընթացքին սոցիալիստ եւ կոմունիստ կուսակցութեանց միջեւ Մարշլբեան Պլանի եւ ամերիկեան իմպերիալիստական ծրագրի շուրջ սուր տարբերութիւնները անդադարձան բանուորական կազմակերպութեանց վրայ: Աջակողմեան սոցիալ դեմոկրատները այս դրութիւնը թարգմանեցին որպէս Թրէյտ Իւնիւրններու բաժանում: Մարդոց հետապնդած նպատակն ալ այդ էր արդէն: Անոնք ջրաւականացան բաժնել քաղաքական ճակատը, ձեռնամուխ եղան բաժնել նաեւ բանուորական ճակատը: Եւ իրաւ ալ

ամենուրեք նկատելի եղաւ նոյն տխուր իրականութիւնը: AFL — CIO-ի վերին առաջնորդները առաջինները հանդիսացան, որոնք ի նպաստ վոյ Ստրիտի իմպերիալիզմին՝ բաժան բաժան բրին բանուորական միութիւնները Եւրոպայի, Ասիոյ եւ Լատին Ամերիկայի մէջ, իսկ Ամերիկայի Մ. Նահանգներու մէջ անոնք իրենց վատ գործունէութիւնը վարագուրելու համար բանուոր դասակարգի եւ խաղաղութեան պաշտպանութեան գիմակը հաղան:

9. — ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՍԻՈՅ ՄԷՁ. (1945-1950)

1945-ի Օգոստոսին, երբ Երկրորդ Համաշխարհային պատերազմը վերջացաւ Ասիոյ մէջ, նոյն ատեն սկսաւ պաղ պատերազմը, որովհետեւ անմիջապէս պատերազմը դադար առնելուն պէս սկսան գաղութային ազատագրական պատերազմներ ու քաղաքական կռիւններ: Ամերիկայի Վոյ Ստրիտը եռանդազին փորձեց իր գերիշխանութիւնը հաստատել այս ընդարձակ երկրամասին վրայ, ուր իրեն սպասարկելու էին յետադիմական ուժերը: Ասիոյ մէջ պաղ պատերազմը նոյնը չէր, ինչ որ էր Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ. ան իր ընդթող նոյնիսկ մէկ Ասիական երկրէն միւսին մէջ՝ որոշ տարբեր գոյն ունէր: Բայց ամէն տեղ ան աշխարհի տիրապետութեան ձգտող ամերիկեան արշաւի օրգանական մասը կը կազմէր, ամենուրեք ան կ'աշխատէր ոչնչացնել Թրէյտ Իւնիթներու միութիւնը, եւ ամէն տեղ ան ունէր իր զօրաւոր նեցուկները — աջակողմեան Սոցիալ Դեմոկրատները՝ ամերիկեան իմպերիալիզմի գործակալները:

ՉԻՆԱԿԱՆ ՆՈՐ ԹՐԷՅՏ ԻՆՆԻԸՆՆԵՐԸ

1946 թուին, երբ Շանհի Քայ Շէքը ամերիկեան զրդուժով Չինաստանի մէջ ժողովրդական ազատարար ուժերու ղեկավար կոմունիստ կուսակցութեան ղէմ քաղաքացիական պատերազմը կը շարունակէր, ատիկա արդէն ինքնին պաղ պատերազմի մէկ ձեւն էր: Վոյ Ստրիտը այդպիսով կ'ուզէր Չինաստանը վերածել արբանեակ երկրի մը: Ամերիկեան իր դիտաւորութիւնը պարզեց երբ մտաւ Քորէայի մէջ, բայց ամօթահար պարտութեամբ դուրս եկաւ այն տեղէն, իրեն խարխիս պահելով Հարաւային Քորէան, որ մինչեւ այսօր ամերիկեան իմպերիալիզմին ծառայութեան կապուած է: Բայց Ամերիկեան աւելի զէչ բախտ ունեցաւ Չինաստանի մէջ: Շանհի Քայ Շէքը, ամերիկեան իմպերիալիզմի այս «վաղող շունը» — ինչպէս չինացիները կը կոչէին զինքը, չկրցաւ իրականացնել Ամերիկայի ծրագիրը. իր տարածած աւերածութեանց ծնունդն եղաւ Չինաստանի ժողովրդա-

յին Հանրապետութիւնը: Այժմ արդիականացած Չինաստանի մէջ վիթխարի յառաջդիմութիւն կը կատարուէր. հոն հիմնուած ըլլալով զէպի Սոցիալիզմ գիմող նոր հասարակութիւն մը, երկիրը արագութեամբ կը սուրար զէպի ճարտարարուեստականացում: Չինաստանի արդիւնաբերական արտադրողութիւնը քառապատկուած էր, ցորենի արտադրութիւնը 90 առ հարիւր աւելցած: Քսաներորդ դարու ամենէն նշանակալից երեւոյթը այն էր որ արհամարհուած Չինաստանը, որ քանի մը տարի առաջ բրիտանական, ամերիկեան եւ ճարոնական իմպերիալիստները ոտքի հարուածով մէկ կողմ նետեր էին, աշխարհի մեծ պետութիւններէն մէկն եղած էր, ան ալ՝ երկու տարուայ ընթացքին:

Բնականօրէն, Թրէյտ Իւնիթները նոր յեղափոխական Չինաստանի հասարակութեան մէջ մեծ դեր կատարեցին՝ անոր քաղաքական կեանքի զարգացման, արդիւնաբերութեան վերհանդուրթեան աճումին, երկրի պաշտպանութեան եւ աշխատաւորական զանդուածներու ապրուստի մակարդակի բարձրացման գործին մէջ:

1953-ին, երբ Փէքինի մէջ յառաջդիմական Թրէյտ Իւնիթներու համաժողովը տեղի ունեցաւ, քսան երկիրներէն 831 պատգամաւորներ ներկայ էին, որոնք կը ներկայացնէին 12 միլիոն 200 հազար անդամներ:

Թրէյտ Իւնիթներու Համաշինական Ֆէտէրասիոնը, Փէքինի համաժողովի ատեն ունէր 150 միլիոն անդամներ, զիտակից, մարդուած, մարտական անդամներ: Այդ Ֆէտէրասիոնը իր սահմանադրութեան մէջ դրած է հետեւեալ գործերու ուղեկիծը. — «Ազգային վերակառուցման շրջանին, Չինաստանի Թրէյտ Իւնիթներու ամենէն կարեւոր գործերն են ուժեղացնել եւ անքակտելիօրէն ամրացնել զիւրացիներու եւ բանուորներու դաշնակցութիւնը, դաստիարակել բանուորները եւ զանոնք հասցնել զիտակցութեան այն աստիճանին, որ անոնք բնական պարտաւորութեամբ յարգեն պետութեան յայտարարած օրէնքները եւ աշխատանքի կանոններն ու ընդհանուր կարգապահութիւնը. եռանդով աշխատել արտադրութեան զարգացման համար, աշխատանքի արտադրողութեան յարատեւ աճման համար, պետութեան մշակած արտադրողական ծրագիրներու զերակատարման համար, երկրի արագ ճարտարարուեստականացման համար, որովհետեւ Չինաստանը այդ ճամբով է որ պիտի երթայ զէպի սոցիալիզմ եւ յետոյ՝ զէպի կոմունիզմ»:

Բանուորներու Հրատարակչական Մամուլը, որ կը դռնուի Թրէյտ Իւնիթներու համաշինական Ֆէտէրասիոնի հսկողութեան տակ, տարեկան 339 տարբեր անուններով զիրքեր ու բաղամթիւ պարբերաթերթեր կը հրատարակէ, իւրաքանչիւրը 36 միլիոն տպաքա-

նակով: Ծրագրուած է անդրադիտութիւնը բոլորովին վերցնել Զինաստանէն, յաջորդ հինգ տարիներու ընթացքին:

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀՆԳՎԱՍՏԱՆԻ ՄԷՋ

1947-ին, երբ Հնդկաստան տիրացաւ իր ձեւական անկախութեան, Մ. Նահանգներու մենատիրական կապիտալիստները արդէն պատրաստուելը էին իրենց հսկողութեան ենթարկելու այդ հսկայ, բազմամարդ եւ ռազմապիտական կարեւորութիւն ունեցող երկիրը: Անոնց սովորական զէնքերն էին դրամ, տնտեսական ներթափանցում եւ զինուորական միջամտութիւն: Առաջին անգամ, 1948-ի Յունիսին, Կանդհիի սպաննութենէն յետոյ՝ երբ Նէհրու Հնդկաստանի ղեկավարը դարձաւ, Հնդկաստան հակամէտ չէր զիմազրելու Միացեալ Նահանգներու գործունէութեան, բայց երբ տարիներ անցան, երկիրը աւելի եւ աւելի անկախ դիրքի տիրացաւ: Այս պարագան ունէր իր պատճառները — գործնականօրէն ամերիկեան գաղութ դառնալու վախը, նոր եւ աւերող ատոմական աշխարհամտրի սարսափը, Հինդկաստանի մէջ Բրիտանական շահարկումներու ազդեցութիւնը, որոնք թշնամի էին ամերիկացիներու ներխուժումին, եւ հնդիկ մասսաներու ուժեղ ճնշումը: Վերջապէս գործը հասաւ այն կէտին որ ամերիկեան իմպերիալիստները Հնդկաստանի նայեցան որպէս թշնամիի մը, որուն վրայ անմիջական յարձակում չէին կրնար գործել, զիմեցին ուրիշ միջոցի մը — անոնք զինեցին անոր մեծ, մարտական եւ թշնամի դրացին՝ Փաքիստանը:

Յետ-պատերազմեան տարիներուն, Թրէյս Իւնիլըններու Համահնդկական Գոնկրէսը, Հնդկաստանի աշխատաւորութեան աւանդական Ֆէտէրատիոնը, որ ձախակողմեան կազմակերպութիւն մըն էր, կոչաւ վերաբերմունքի ենթարկուած էր հնդիկ գործատէրերու եւ կառավարութեան ձեռքերուն մէջ: Ան կապուած ըլլալով Թրէյս Իւնիլըններու Համաշխարհային Ֆէտէրատիոնի հետ, սուր եւ յարատեւ պայքարի ճակատ յարդարեց ամերիկեան իմպերիալիզմի ռազմամոլ ծրագրին զէմ եւ նոյն ատեն անցաւ ճնշուած ու թշուառացած հնդիկ զիւղացիներու եւ բանուորներու տնտեսական շահերու պաշտպանութեան գործին: Կազմակերպուած աշխատաւորութեան այս դիրքը սիրելի չէր Նէհրուի Գոնկրէս Կուսակցութեան, որ սկզբնապէս հնդիկ բուրժուազիայի քաղաքական կազմակերպութիւնն էր, եւ այդ բուրժուազիան չէր համակրեր մարտական աշխատաւորութեան քաղաքականութեան պաղ պատերազմի կանխագոյն տարիներուն, երբ կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը անորոշ էր:

1949-ին մէկ քանի մեծ գործադուլներ բռնի ուժով ճզմուեցան. շատ մը գործադուլաւորներ սպաննուեցան, 25 հազար ձախակողմեան մարտական բանուորներ բանտարկուեցան: Հնդկաստանի Կոմունիստ Կուսակցութիւնը այդ շրջանին կը յայտարարէր հետեւեալը. — «Ճիշդ հնդիկ կառավարութեան հաւաստումով, առաջին երեք տարիներու ընթացքին կառավարութիւնը իր ոստիներէն 50 հազար հոգի բանտարկեց եւ 13 հազար հոգի սպաննեց: Եւ մենք զիտենք թէ հրապարակուած այս թիւերը ճշմարտութեան փոքրիկ մէկ մասը կը կազմեն»:

Կատարուած բնութեանց ու խժոժութեանց հետեւանքով համահնդկական Թրէյս Իւնիլընի Գոնկրէսը բաժան բաժան եղաւ: Կազմուեցան երեք ուրիշ միութիւններ. անոնցմէ մէկն էր Հնդկական Ազգային Թրէյս Իւնիլընի Գոնկրէսը, միւսները՝ Միացեալ Թրէյս Իւնիլընի Ֆէտէրատիոնը եւ Հինդ Մադդուր Սարհա: Առաջինը, արժանացած ըլլալով կառավարութեան եւ գործատէրերու շնորհին, ունեցաւ մէկ միլիոն 200 հազար անդամներ: Համահնդկական Գոնկրէսը եւ Ազգային Գոնկրէսը երկուքն ալ Կանդհիի կրաւորական (պասսիւ) ընդդիմադրութեան քաղաքականութիւնը որդեգրեցին, որ կը նշանակէր ոչ-մարտական գործունէութիւն՝ դասակարգային կուռի ընթացքին: Բայց բանուորներու դրութիւնը աւելի վատթար էր քան պատերազմէն առաջ:

Հնդկաստանի աջակողմեան Սոցիալ Գեմոկրատները, Երկրորդ Ինտէրնացիոնալի փրո-կապիտալիստական զիմին հետեւողականութեամբ, ընդհանրապէս կ'օժանդակէին ամերիկեան իմպերիալիզմի արշաւին, որքան որ կրնային ինքզինքնին արդարացնել հակա-իմպերիալիստ հնդիկ մասսաներու առջեւ: Անոնք նեցուկ եղան պաղ պատերազմին մէջ կանխագոյն շրջանի ամերիկեան քաղաքականութեան:

Նէհրուն ինքը, սոցիալիստ չէր, թէեւ ինքզինքը կը ներկայացնէր որպէս սոցիալիզմի հաւատաւոր, բայց Մարքսիզմը կը նկատէր իրբեւ նորաձեւութենէ հեռացած վարդապետութիւն մը: Ասանկով ան հսկեցաւ Խ. Միութեան խաղաղասիրական քաղաքականութեան: Սոցիալիստները հետզհետէ հակառակեցան Նէհրուի կառավարութեան, երբ ան յարատեւող քայլեր կ'անէր աշխարհի խաղաղութեան համար եւ ամերիկեան իմպերիալիզմի յարձակողականին զէմ: Գալով Կոմունիստ Կուսակցութեան, անիկա կուուելով հանդերձ Նէհրուի առանին քաղաքականութեան զէմ, միջազգային դետմի վրայ կ'օժանդակէր անոր խաղաղասիրական քայլերուն: Իրերու ընթացքը հասաւ այն աստիճանին, որ Հնդկաստան եւ Խ. Միութիւն 1955-ի Յունիսին, համաձայնեցան ջերմամիջուկային զէնքերու

ընդունին, Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէջ ժողովրդական Չինաստանի մուտքին, Ծորմողայի կցումին մայր երկրին՝ Չինաստանին եւ ընդհանրապէս, բոլոր ազգերու խաղաղ համակեցութեան քաղաքականութեան: Պէտք է ըսել թէ Հնդկաստան կարեւոր դեր կատարեց 1955-ի ձէնոյի քոնֆէրանսին մէջ՝ ձայնակցելով Խ. Միութեան:

Պազ պատերազմի ընթացքին, այսպէս էր Հնդկաստանի դրութիւնը. — ուժերու բաժանում եւ ընդհանուր անհարգարտութիւն...:

ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՃԱՐՈՆԱԿԱՆ ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆՆԵՐԸ

Միացեալ Նահանգներու կառավարութիւնը համաշխարհային տիրապետութեան համար իր ծրագրի մէկ մասը կազմեր էր յետպատերազմեան ճարտնը, իր 85 միլիոն բնակչութեամբ դարձնել արբանեակ պետութիւն մը, որպէս իր գլխաւոր մարտկոցը՝ ընդդէմ Խ. Միութեան եւ ժողովրդային Չինաստանի: Հակառակ անոր որ Մ. Նահանգներու առած քայլերուն դէմ ուժեղ պրոպականդա կը մղուէր, եւ ժողովուրդը կը պահանջէր մենատէրերու վերացումը, Ամերիկան չմտեցաւ Զեքացու մոնոպոլիստներուն եւ զանոնք պահեց ճարտնի տնտեսական տիրակալութեան դերին մէջ: 1953-ի վերջերը, հաշիւ եղած էր որ այս ընտանիքները իրենց ջոնտրոլին տակ առած էին ճարտնի ածուխի արտադրութեան 45 տոկոսը, նաւաշինութեան 65 տոկոսը, աւազանական ծծրմրի (ամոնիլըմ սըլֆայտի) 50 տոկոսը, պղնձի արդիւնարեութեան 60 տոկոսը, եւ այլն: ճարտնի մէջ կային 195,273 պատերազմական լորտեր, միլիտարիստներ, յետադիմական կառավարական պաշտօնեաներ. ասոնք բոլոր պէտք է մաքրագործուէին: 1951-ին, մասնակի մաքրագործում տեղի ունեցաւ. բայց անոնցմէ 177 հազար հոգի դարձեալ պահուեցան իրենց նախկին աթոռներուն վրայ, իսկ մնացեալներուն խոստում տրուեցաւ՝ «բարեօք կարգադրութիւն»:

Ամերիկեան Ֆինանսի արքաները 3 միլիառ տոլար շահարկութեան դրին ճարտնական արդիւնարեութեան մէջ: Միացեալ Նահանգները յառաջ տարին իրենց ասպատակութիւնները ճարտնական առեւտրական ասպարէզին մէջ ալ, մէկ կողմէն ժողովուրդը սիրաշահելու համար աջ ու ձախ ոգորմութիւն բաշխեցին, միւս կողմէն՝ ամբողջ երկիրը ծածկեցին զինուորական կայաններով: Ամերիկեան թերթ մը — New Times, իր թիւ 29-ին մէջ հետեւեալ տեղեկութիւնը կուտայ. — «1952-ին 32 օդանաւային կայաններ կը կառուցուէին ճարտնի մէջ, 14 նաւային կայաններ եւ 22 զինուորական-բանակային

կայաններ: Իսկ 1954-ին ճարտնի մէջ ամերիկեան կայաններու թիւը կը հասնէր 719-ի: Ամերիկան այսպիսի հսկայ կառուցումներու ատեն կը գործածէր ճարտնի բանուորները, որոնց կը վճարուէր օրական աշխատավարձը՝ 65 սէնթ: Նախապատերազմական շրջանին անոնց ստացած օրական աշխատավարձն էր միայն 25 սէնթ»: Այսու կը տեսնենք թէ ի՞նչպէս ամերիկացիները գովելի առատաձեռնութեամբ կը վերաբերուէին՝ ու կը վարձատրէին ճարտնի բանուորները, զանոնք սիրաշահելու համար:

Ամերիկեան պազ պատերազմի անխուսափելի մասը կը կազմէր Թրէյտ Իւնիւրներու մէջ ձախակողմեան տարրերու դէմ պայքարի սաստկացումը, եւ այդ տեղի ունեցաւ ճարտնի՝ ինչպէս ուրիշ երկիրներու մէջ: Ամերիկայի նպատակն էր ճարտնը «գեմոկրատական» երկիր դարձնել. այդ ծրագրին ետեւ կեցեր էին աշխուժեան սոցիալ գեմոկրատները եւ գործատէրերը, որոնք այդ գեմոկրատացման գործը յանձնէր էին Չօրալար Մըկ Արթըրին, այն մարդուն, որ պատերազմի տաք շրջանին, ճարտնական յարձակողականին առջեւ Ֆիլիպեան կղզիներէն նապաստակի պէս փախաւ, բայց յետոյ՝ ճարտնի զիկտատորը դարձաւ: Եւ սուուրի Մըկ Արթըրը գեմոկրատականացման գործը եռանդազին յառաջ տարաւ. 1950-ին ապօրինի հրաշակեց կոմունիստ կուսակցութիւնը, որ 1949-ի ընտրութեանց ատեն Սոցիալիստ կուսակցութեան շահած 4,129,848 քուէի դիմաց շահած էր 2,984,627 քուէ: 1950-ի Օգոստոսին, ան լուծեց նաեւ Թրէյտ Իւնիւրներու Ազգային Խորհուրդը, որ կապուած էր Թրէյտ Իւնիւրներու Համաշխարհային Ֆէտէրասիոնին: Ահա Մըկ Արթըրի ժողովրդավարութիւնը...:

Այստեղ եւս կը տեսնենք պազ պատերազմի հետեւանք՝ նոյն երեւոյթները. բանուորական միութեանց բաժանում, աշխուժեան եւ ձախակողմեան տարրերու հակամարտութիւն, մշուշապատ մը թնորթա եւ անհանդարտութիւն:

ՊԱՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՍԻՈՅ ՈՒՐԻՇ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Ասիոյ մնացեալ մասերուն մէջ պազ պատերազմի նոյն ընդհանուր երեւոյթն էր որ տիրական դարձեր էր. նոյն ամերիկեան իմպերիալիզմը, նոյն տեսակի գործակալները, որոնք կը փորձէին արմատահան ընել ազգային ազատագրական շարժումները ստրկացած ժողովուրդներուն եւ նոյն ատեն բաժնել, կոտորակել կամ բոլորովին ճզմել մարտական բանուորական միութիւնները, որոնք պատերազմէն յետոյ ծլեր՝ ծաղկեր էին ու կը գործէին կոմունիստներու եւ ուրիշ ձախակողմեան առաջնորդներու ղեկավարութեամբ: Պազ

պատերազմը արուեստականորէն ստեղծուած պատերազմ մըն էր որ սկսաւ ուղղակի կոմունիստներուն դէմ եւ կը շարունակուի նոյն արուեստական հրահրումով ամենուրեք: Բանուորները այդ պատերազմին մէջ տեղ տեղ կը նահանջեն սոցիալ դեմոկրատներու դաւաճանական առաջնորդութեան հետեւանքով, բայց որքան որ կը նահանջեն, նոյնքան կը խորանայ իրենց մէջ դասակարգային գիտակցութիւնը, որովհետեւ նահանջը աւելի կը վատթարացնէ իրենց զբրութիւնը եւ իրենք դառն փորձառական դասով կը համոզուին թէ ո՛վքեր առաջնորդեցին զիրենք այդպիսի նահանջի մը:

Առնենք ասիական մի քանի երկիրներ:

Ինտոնէզիան, 80 միլիոն բնակչութեամբ այս երկիրը պատերազմէն յետոյ ունեցաւ կազմակերպուած բանուորական միութիւն մը՝ Ինտոնէզիայի Թրէյտ Իւնիթներու Ֆէտէրատիոնը, որ միացած էր կարմիր ինտէրնացիոնալի հետ եւ ունէր 2 միլիոն 600 հազար անդամներ եւ յառաջդիմական առաջնորդներ: Սոցիալ Դեմոկրատները զիւային հնարքներ գործածեցին եւ վերջապէս յաջողեցան այդ հըսկայ բանուորական միութիւնը բաժնել երեք հատուածներու: Անգամ մը որ բաժանումը սկսաւ, անոր յաջորդեց կատաղի իրերամարտութիւնը: Այդ արդէն քայքայում կը նշանակէր, ինչ որ արդէն կ'երազէին իմպերիալիզմի գործակալները:

Նոյն երեւոյթը կը տեսնենք Մալայեայի մէջ, Ֆիլիպիններու մէջ. կազմակերպուածութիւն, բաժանում ու ապա ներքին կռիւ:

Երիտասարդ՝ ձախակողմեաններու առաջնորդութեամբ կազմուած բանուորական միութիւնը Փաքիստանի մէջ (Մ. Նահանգներու ուրիշ մէկ արբանեակը) 1950-ին բաժնուեցաւ երկու մասի, եւ բաժնուած մասերը սկսան կռուիլ իրարու հետ, ամերիկեան իմպերիալիզմի քաղաքական յաղթանակը ապահովելու համար: Բուրմայի մէջ Թաքին Նուի կառավարութենէն յետոյ Սոցիալ Դեմոկրատները Մեծն Բրիտանիոյ աջակցութեամբ կրակ բացին Բուրմայի ձախակողմեան Թրէյտ Իւնիթնի Գոնկրէսին դէմ եւ ստիպեցին որ ան դառնայ ընդլայնակալ կազմակերպութիւն մը՝ ենթակայ տեւական հալածանքի: Նոյն պատկերը կը տեսնենք Սէյլանի, Սիամի, Քորէայի, Հնդկաչինի մէջ: Ամէն ուր որ կոմունիստները մտեր ու կազմակերպեր էին բանուորները՝ իրենց իրաւունքները պաշտպանելու համար, Սոցիալ Դեմոկրատները իսկոյն կը հասնէին ու կը յառաջացնէին բաժանում, տակնուվրայութիւն, հատուածական կռիւ ու քայքայում: Իմպերիալիզմի ստեղծած պաղ պատերազմի զինուորներն եղած են սոցիալ դեմոկրատները մասնաւորապէս Ասիոյ մէջ: Այդ երկրամասին մէջ ամերիկեան իմպերիալիզմը ուրիշ վարձկան գործակալներ փնտռելու կարիք չունէր եւ չունի:

Լատին Ամերիկան՝ ամերիկեան իմպերիալիզմի ամենամեծ ներքնազաւառն է: Հետեւաբար, բնաւ զարմանալի չէ որ բանուորական կազմակերպութիւնները քանդել աշխատողներու ուշադրութիւնը կեղբոնացած էր Թրէյտ Իւնիթներու Համաշխարհային Ֆէտէրատիոնի վրայ: Վոյ Ստրիտը օտար երկիրներու մէջ շահարկութեան դրած կապիտալի 45 տոկոսը դրած է Լատին Ամերիկայի մէջ, ուրկէ կրցած է ապահովել Եանքի արդիւնաբերութեան համար անհրաժեշտ հում նիւթերը: Մ. Նահանգներու Վաճառականական Բաժանմունքի Պաշտօնատան յայտարարութեան համաձայն՝ Մ. Նահանգներու Լատին Ամերիկայի մէջ շահարկութեան դրած կապիտալը 1952 թուին, կը հասնէր 5,700,000,000 տոլարի, իսկ 1953 թուին այդ գումարը կրկնապատկուեցաւ եւ եղաւ 11 երկիլիոն 400 միլիոն տոլար: Այս ընդհանուր գումարին մէկ չորրորդը շահարկութեան դրուած էր իւղի սեփականութեանց մէջ: Լատին Ամերիկայէն ստացուած շահք պէտք է հաշուել 20-էն 50 տոկոսով: Դրութեան յատկանշական կողմը այն է որ Մ. Նահանգներու շատ մը գործատէրեր՝ կազմակերպուած բանուորութեան ձեռքէն ազատուիլ կ'ուզեն եւ իրենց գործարանները կը հաստատեն Լատին Ամերիկայի մէջ, ուր աշխատավարձը 30 տոկոսով աւելի աժան է: Բանուոր մը, եթէ Մ. Նահանգներու մէջ մէկ ժամուան համար 2 տոլար կը ստանայ, նոյն ճիւղին վրայ աշխատող բանուորը Լատին Ամերիկայի որեւէ մէկ երկրի մէջ կը ստանայ մէկ տոլար քառասուն սէնթ, եւ ատիկա առաւելագոյն աշխատավարձքն է: Այս փախուստի գիծը ամենէն աւելի տեսանելի է ամերիկեան այն գաղութին, զինուորական այն ամբողջին մէջ, որ ծանօթ է Փորթո-Ռիկո անունով: Վոյ Ստրիտը կ'ուզէ որ Լատին Ամերիկան ամէն գնով վերածուի նման գաղութի մը:

Երկրորդ Աշխարհամարտը վերջացածին պէս Միացեալ Նահանգներու կառավարութիւնը երբ պաղ պատերազմը սկսաւ աշխարհի մէջ, մասնաւոր ուշադրութիւն դարձուց Լատին Ամերիկայի վրայ: Լոմբարդո Թոյլդանօ, Լատին Ամերիկեան Աշխատանքի Համադաշնակցութեան նախագահը, կ'ըսէ — «Պատերազմի պատրաստութիւնը սկսած է: Լատին Ամերիկայի կառավարութիւններուն պաշտօնապէս հրահանգ տրուած է պատրաստուիլ երրորդ համաշխարհային պատերազմին: Պատերազմի անխուսափելիութեան հաւատքը կապուած է արագօրէն յառաջացող այն իրողութիւններէն երբ կը տեսնենք որ երկրորդ պատերազմէն շահուած բաները անհետացեր են, անհետացեր են նաեւ բոլոր տեսակի ազատութիւնները»: Միացեալ Նահանգները Լատին Ամերիկայի մէջ հետզհետէ կը խստացնէին

անտեսական վերհսկողութիւնը եւ ուրիշ միջոցներու հետ զինուորական դաշինք կը կնքէին ութը երկիրներու հետ. (միայն չորս երկիրներ այդպիսի դաշնագրութիւն չուղեցին կնքել)։ Անիկա ատով ալ չբաւականանալով Լատին Ամերիկայի դաշնագան երկիրներու մէջ կայաններ հաստատեց եւ Լատին Ամերիկայի յետադիմական կառավարութիւնները մեծ մասով խարազանի ուժով իր քաղաքականութեան սպասարկողի դերին կայեց ու անոնցմով իր հեղինակութիւնը բարձրացուց Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէջ։ Եանքի իմպերիալիզմը, սակայն, իսոյր արդելք մը կը տեսնէր Լատին Ամերիկան իրեն հպատակութեան ենթարկելու համար ծրագրուած պաղ պատերազմի յաջողութեան մէջ. այդ դժուարութիւնը կը ծնէր Լատին Ամերիկեան Աշխատաւորական Համագաշնակցութենէն (ԼԱԱՀ)։ Սոյն յառաջդիմական կազմակերպութիւնը ամբողջ Լատին Ամերիկայի զիւղացիներուն ու բանուորներուն բարօրութեան ի նպաստ՝ վճռական գործադուլներու եւ քաղաքական պայքարներու փայլուն արձանագրութիւն մը կազմեր էր։ Մէկտիկոյէն, Չիլիէն, Արժանթինայէն ու Քուպայէն զատ ԼԱԱՀ-ը կազմակերպեր էր նաեւ ամբողջ Լատին Ամերիկայի ազգային աշխատաւորական Ֆէտէրատիոնները։ Պատերազմի ատեն անիկա դարձեր էր տեղական խտացած Ֆաշիստներու դէմ կռուող հուժկու ուժ մը, որ իր պատմական պայքարներու մէջէն դուրս եկաւ աւելի ուժովցած՝ ժողովրդական զանգուածներու համակրութեամբ։ ԼԱԱՀ-ը մասնաւորապէս վտանգաւոր էր Եանքի իմպերիալիզմին համար, որովհետեւ աշխատաւոր մասսաներու խորացած թշուառութիւնը, մէկ կողմէն, միւս կողմէն՝ բարբարոս դիկտատորներու կրունկին տակ անոնց ենթարկուած քաղաքական ճնշումը աւելի ուռճացուցեր էին անոնց ատելութիւնը հանդէպ Միացեալ Նահանգներու կառավարութեան, որ երկրէն ներս կը մտնէր յայտնապէս դաշնակցած՝ իրենց թշնամիներուն հետ։ Լատին Ամերիկայի մէջ բանուորի մը տարեկան եկամուտը ուրիշ արդիւնարեւական երկիրներու բանուորի տարեկան եկամուտին հետ բաղդատած՝ հազիւ թէ անոր մէկ հինգերորդ մասին կը հաւասարէր. եւ երբ նկատի առնենք որ ժողովուրդի 80 տոկոսը անգրագէտ մնացեր էր, այն ատեն կրնանք երեւակայել թէ տիրող դասակարգը ի՞նչպէս վերաբերուած էր այդ ժողովուրդին հետ։ Քաղաքական ապրտամբութեան արեթի կոյտ մը, Լատին Ամերիկան, Բ. Աշխարհամարտէն յետոյ՝ ասիական յեղափոխութիւններէն սթափած՝ իմպերիալիստներուն կը նայէր անհանգստութեամբ։ Ճան Ֆոստըրը Դաւչըս, ի տես այդ ընդհանուր դրութեան՝ բացէն ի բաց արտայայտեց այն վախը, որ «Լատին Ամերիկան հաւանական է որ Զինատանի հետեւի»։

Նոյն ատեն Լատին Ամերիկայի մէջ միւս միակ կարեւոր կազմակերպութիւնը Արժանթինի մէջ Աշխատաւորական Ընդհանուր Ֆէտէրատիոնն էր, որ Ֆաշիստ Փէրոնի դիկտատուրայի հովանաւորութեան տակ, պարտադիր «աշխատաւորական ճակատ» կազմած, հակամարտ դերքի անցեր էր հանդէպ ԼԱԱՀ-ի եւ լուրջ ընդդիմադրութիւն չէր փորձեր Լատին Ամերիկայի մէջ ամերիկեան իմպերիալիզմի հետապնդած ծրագրի իրագործումին։

Վոյ Սորիտի իմպերիալիստներուն ամենէն ստիպողական պահանջն էր անդամաւուծել ԼԱԱՀ-ը կամ զայն ամբողջովին փճացնել. մարդիկը միլիտաներ դրած էին շահարկութեան համար եւ կ'ուզէին ապահովել այդ հսկայ գումարները եւ անոնց շահու աղբիւրները։ Այդ դործը գլուխ հանելու համար ամերիկեան իմպերիալիզմը իրեն օգնութեան կանչեց Ամերիկեան Աշխատաւորական Ֆէտէրատիոնը՝ AFL-ը։ Այս կազմակերպութիւնը, որ վաղուց ի վեր Լատին Ամերիկայի մէջ ամերիկեան կապիտալիստական քաղաքականութեան ուժեղ ջատաղովն էր հանդիսացեր, ուրախութեամբ ստանձնեց իրեն վստահուած գործը։ AFL-ը, որ տարիներով կարմիրներուն դէմ ամէն միջոցներով պայքար մղելէ չէր դադրած, նոյն ողիով սկսաւ պայքարիլ ԼԱԱՀ-ի դէմ, զայն յայտարարելով որպէս կոմունիստ կազմակերպութիւն։ CIO-ի առաջնորդները, որոնք 1938-ին կազմակերպեր էին ԼԱԱՀ-ը եւ բարեկամական կապով կապուած էին անոր հետ, յանկարծ փոխեցին իրենց դիրքը եւ միացան AFL-ի, կործանելու Լատին Ամերիկայի մարտական այդ պատուական եղբայր կազմակերպութիւնը։ Միացեալ Նահանգներու մէջ AFL-ը եւ CIO կազմակերպութիւնները մէկը միւսին թշնամի էին, բայց այդ թըշնամութիւնը արդելք չէր որ անոնք ձեռք ձեռքի տուած կռուէին Լատին Ամերիկայի յառաջդիմական աշխատաւորական շարժման դէմ՝ չլու կամակատար մնալով իրենց իմպերիալիստ տէրերուն։ Եւ այդ երկու մեծ կազմակերպութիւնները յաջողեցան իրենց ձեռնարկած գործին մէջ, շնորհիւ Մ. Նահանգներու Պետական Պաշտօնատան, որ 12 միլիոն տոլար տրամադրեց անոնց գործին յաջողութեան։ Լատին Ամերիկայի մէջ անոնց գլխաւոր գործակալն էր Մէրաֆինո Ռոմուլանդի, նախկին ամերիկեան պաշտօնատար մը։ Լատին Ամերիկայի բուրժուական բոլոր թերթերը, առանց բացառութեան՝ միացան քանդիչ արշաւին, որ վերջացաւ 1948-ին, երբ AFL-ի ղեկավարութեամբ Լիմա-Փէրուի մէջ գումարուեցաւ բանուորական խորհրդաժողով մը, ուր կազմուեցաւ Միջ-Ամերիկեան Բանուորներու Համագաշնակցութիւնը — ՄԲՀ։ Այս կազմակերպութիւնը, տիրահաշակ Պան-Ամերիկեան Ֆէտէրատիոնի ծնունդը, այնքան ժողովրդականութիւն չկրցաւ շահիլ, հակառակ թերթերու ուռուցիկ պրոպական-

տին եւ ամբոխավարական յայտարարութիւններուն : Թրէյտ Իւնիըն-ներու Համաշխարհային Երկրորդ Գոնկրէսին մէջ Լոմբարտո Թորէ-դանո, ԼԱԱՀ-ի նախագահը այսպէս արտայայտուեցաւ. — «Բոլոր յետադիմական թերթերը ազմկալի թմրկահարութեամբ յայտարարեցին որ մեր կազմակերպութիւնը արդէն գերեզմանուած է, իսկ իրենց նոր կազմակերպութիւնը, Ամերիկայի Աշխատանքի Գաշնակցութեան ուժով դարձած է առաջնորդող, տիրական կազմակերպութիւն մը : Մինչդեռ Միջ-Ամերիկեան Բանուորներու Համադաշնակցութիւնը սոսկ անուանական գոյութիւն մըն է զոր կը պահէ, մի քանի ցանցառ ճիւղաւորումներով» : Մէկսիկոյի մէջ այդ կազմակերպութիւնը բոլորովին ձախողեցաւ 1951-ին եւ անոր տեղը կազմուեցաւ նոր մը, — Բանուորներու Միջ-Ամերիկեան Գաւառային Կազմակերպութիւնը :

Յամենայն դէպս, իրողութիւն է, որ այս բաժանումները Լատին Ամերիկայի բանուորներուն մէջ յառաջացուցին աններդաշնակութիւն եւ թեքումներու առաջնորդող շփոթութիւն : Եւ արդէն Եանքի իմպերիալիզմի ուզածն ալ այդ էր : Իրենց ուրոյն ստուերային միութիւններ կազմելու ջանքերը երկրորդական էին, իրենց ամենաառաջին նպատակն էր տկարացնել կամ բոլորովին սպաննել ՄԱԱՀ-ը : Անոնց գլխաւոր թշնամիներն էին Կոմունիստները, որ կը համարձակէին կոուիլ ամերիկեան իմպերիալիզմի պատերազմական ծրագրին դէմ :

Ընդհանուր առմամբ, դիկտատորական ազգային կառավարութիւնները, ուրիշ յեառըջական ուժերու հետ AFL — CIO-ի կործանարար արշաւանքէն պատեհութիւն ունեցան իրենց հալածանքը սաստկացնել արմատական տարրերուն դէմ : Աշխարհի մէջ ո՛չ մէկ տեղ յառաջդիմական իւնիընները այնքան կատաղի հալածանքի չէին ենթարկուեր, որքան Լատին ամերիկեան երկիրներու մէջ : Անոնցմէ շատեր սպաննուեցան, եւ բազմաթիւ գործօն անդամներ բանտարկուեցան եւ ոմանք բանտերու մէջ չարչարանքի տակ մեռան : Գոլոմպիայի մէջ, Գոմինինկեան Հանրապետութեան մէջ, էլ Սալվատորի մէջ, Հայիթիի մէջ, Նիքարագուայի մէջ, Փարակուայի մէջ, Փէրուի եւ Վէնէզուէլայի մէջ Թրէյտ Իւնիընները հռչակուեցան ապօրինի : Արժանիքի եւ այլ երկիրներու մէջ անոնք ենթարկուեցան կառավարական ամենախիստ հակողութեան : Քուպայի մէջ, օրինակի համար, ՄԱԱՀ-ը զօրաւոր կազմակերպութիւն մըն էր 557,000 անդամներով, որ կը նշանակէր բանուորութեան 60 տոկոսը. կառավարութիւնը մէջ մտաւ, ձերբակալեց ու բանտարկեց յառաջդիմական առաջնորդները եւ անոնց տեղը նշանակեց իր ուզած մարդիկը :

Քուպայի յեղափոխութիւնը (*) ամերիկեան իմպերիալիզմի գործադրած բռնութեան ու անմարդկային շահատակութեանց պատուէն էր :

Ներկայիս Լատին Ամերիկան, բանուորութիւնը բաժան բաժան ընդունեցաւ դրախտն է, ուր կը մղուի սրազ պատերազմը մերթ լուս՝ մերթ շոնդալից եղանակով :

11. — ՊԱՅՔԱՐ՝ ԸՆԴԴԵՄ ԱՏՈՄԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1947-1955)

Երկրորդ Համաշխարհային Պատերազմին հետեւող տարիները ամենէն վտանգաւոր տարիներն էին, որոնց կը ճակատէր մարդկութիւնը. որովհետեւ ամերիկեան իմպերիալիզմն էր որ այս անգամ կը ձգտէր աշխարհը նուաճելու նպատակին : Անոր քաղաքականութիւնը պատերազմի քաղաքականութիւն էր, որուն վարիչներն էին խոշոր մեծատէրերը : Այս մարդիկը լաւ համոզուած էին որ գրամով 10 Միութիւնը չէին կրնար գնել, ինչպէս գնած էին ուրիշ կապիտալիստական երկիրները, ո՛չ ալ կրնային գայն վախցնել : Անոնք այն եզրակացութեան եկած էին որ, եթէ նոյնիսկ կարենային աշխարհը նուաճել եւ անոր վրայ հաստատել իրենց գերիշխանութիւնը, այդ բանը հնարաւոր էր միմիայն զէնքով : Այս կէտին մէջ Թրուամընի եւ Այզընհաուերի վարչութեանց քաղաքականութիւնը հիմնական զիծով նոյնն էր, երկուքն ալ ուժ կուտային այնպիսի ընթացքի մը, որ երրորդ պատերազմը կը դարձնէր անխուսափելի :

Մ. Նահանգներու քաղաքականութեան ամէն մէկ քայլը, ըլլայ արտաքին ըլլայ ներքին, կուզար նկարել այդ սարսափելի հեռանկարը : Թրուամընի վարդապետութիւնը, Մարչլլեան Պլանը, Ատլանտեան Ուխտը, ասոնք բոլորը պատերազմի քաղաքականութեան կը հետեւէին : Ամէն տարի, երկրի պաշտպանութեան անունին տակ 40 միլիառ տոլար զինուորական յատկացումներ կ'ըլլար, ինչո՞ւ . . . : Ինը տարիներու ընթացքին 50 միլիառ տոլար հաշուող ամերիկեան դրամ գուրս հանուեցաւ եւ տրուեցաւ այսպէս կոչուած՝ բարեկամ երկիրներու զինուորական պաշտպանութեան համար . . . Պաշտպանութի՞ւն, բայց որո՞ւն դէմ . . . ամերիկեան օդանաւային կայաններ կառուցուեցան աշխարհի գանազան տեղերու մէջ ամենէն զրգուիչ եղանակով եւ այդ օդանաւային կայաններու ցանցով պատեցին 10 Միու-

(*) Քուպայի յեղափոխութեան շուրջ եւ առանձին բաժին յատկացուցեր եմ իմ այս ուսումնասիրութեան Առաջին հատորին մէջ, ուր ընթերցողը կը գտնէ հետաքրքրական մանրամասն ծանօթութիւններ :

թիւնը ու ժողովրդային ղեմոկրատական երկիրները: Այդ կայաններու մէջ պահակ կեցուցիչն երկու միլիոն ամերիկեան զինուորներ... ո՞ր տեղէն կը սպասուէր վտանգը. Սորհրդային Միութեանէն... բայց ո՞վ իմացեր էր այնպիսի սպառնալիք մը այն երկրէն, որ պատերազմի ատեն 18 միլիոն զոհ տուաւ եւ ենթարկուեցաւ ամենասոսկալի աւերածութեան, թէեւ այժմ ան նողկանքով կը նայէր սպազայ պատերազմին եւ իր ամբողջ ուժերը տրամադրած էր բուժելու իր վէրքերը: Ամերիկեան իմպերիալիզմը այս հարցումներուն պատասխան չունէր տալիք. ան միայն իր ձեռքով վեր բարձրացուցեր էր ատոմական ուժերը եւ աշխարհի ժողովուրդներուն կ'ազդարարէր.— «Ե՛ս եմ ձեր աստուածը, ինձմէ զատ ուրիշ աստուած չի ճանչնաք»: Հին ատենուան Եհովան էր, որ իր միահեծան աթոռը ամպերու վրայէն վար առեր ու եկեր հաստատուեր էր ձերմակ Տան մէջ:

Միացեալ Նահանգներու ղեւանագիտական եւ զինուորական արտաքին քաղաքականութիւնը վու Ստրիտի ընդհանուր պատերազմական ծրագրի մասերը կը կազմէին: Անոր զանազան անկիւններն են.— Գաթան ու անհաշտ զիրքաւորում՝ ուսական գիծին (իմպերիալիստները անհասարակ կտրեղային Միութիւն չեն ըսեր այլ կ'ըսեն Ռուսիա. «Ռուսական պատուիրակը», «Ռուս կառավարութիւն»), «Թշնամի երկիրներուն» մէջ («Թշնամի երկիրներ» ըսելով մարդիկը ըսել կ'ուզեն սովետ կամ սոցիալիստ երկիրները) յառաջացնել քաղաքացիական պատերազմներ եւ «ազատագրել» գերիացած ժողովուրդները, (այդ մարդոց համար գերագոյն ազատութիւնը բուրժուական հասարակութեան մէջ միայն կարելի է տեսնել). Տալբսի սպառնալիքը՝ «անմիջապէս մասսայական հատուցման» համար. թոյլտուութիւն ընել որ բարձր պաշտօնատարներ բացէն ի բաց պատերազմը «արգիլելու» պրոպականտա մղեն (ասիկա անհրաժեշտ է մենատէրերու ռազմամոլութիւնը վարագործելու համար), վերազինել եւ վերանայիականացնել Գերմանիան եւ ձարոնը որպէս զինակիցներ, մին՝ Եւրոպայի միւսը՝ Ասիոյ մէջ, Ֆորմոզայի մէջ կապուած «չունը» Շանկ Քայ Շէքը ազատ արձակել՝ փութացնելու համար Ամերիկայի ներխուժումը՝ ժողովրդային Չինաստանի մէջ, ամերիկեան միջամտութիւնը Քորէայի եւ Հնդկաչինի պատերազմներուն մէջ, Ֆորմոզան յայտարարել Մ. Նահանգներու գաղութը, պահպանել Ամերիկայի մշակած զինուորական գաղնակցութիւնը Եւրոպայի մէջ Նաթոյով եւ Ասիոյ մէջ՝ Սենթոյով, նախագահ Այդընհատուրի այն յայտարարութիւնը թէ՛ Միացեալ Նահանգները յառաջիկայ պատերազմին ատոմական զէնքեր գործածելու է, ջրածնային ուժերի փորձերը, որոնք յամառօրէն յառաջ կը տարուէին հակառակ համաշ-

խարհային բողոքի ցոյցերուն, բոլոր ասոնք եւ ասոնց հետ զանազան ուրիշ քաղաքականութիւններ՝ ուղղուած էին պատերազմի նպատակին:

Սովետներու կողմէ յարձակման մը «վտանգը» պարզապէս երեւակայական վտանգ մըն էր, որ յայտարարուած էր արդարացնելու համար պատերազմական հրէշային պատրաստութիւններն ու այդ ուղղութեամբ յառաջ տարուած քաղաքականութիւնները: Սովետ Միութիւնը, իր սոցիալիստական ուժի մով իմպերիալիստական ճամբան չէր կրնար ընտրել. իր յառաջգիւթութեան ու զարգացման համար պատերազմը կործանարար ազդակ էր. իրեն պէտք էր խաղաղութիւն, ժողովուրդներու եղբայրութիւն. անոնցմով էր որ ան ո՛չ միայն խորհրդային ժողովուրդը պիտի տանէր բարօրութեան հանդրուանը, այլեւ ամբողջ մարդկութիւնը: Բայց ի՞նչ ըսել որ հասարակական կարծիքը ղեկավարողներն էին բուրժուական թերթերը, բուրժուա մտաւորականները, կրօնականները, դպրոցներու եւ համալսարաններու ուսուցիչները, բոլորն ալ տոլարի աստուծոյն խնկարկու գործակալներ:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Ամերիկեան իմպերիալիզմի յարձակողական գիծը ուղղուած գէպի պատերազմը եւ աշխարհի նուաճումը, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ ստեղծեց աւելի խոր սարսափ՝ քան ինչ որ Հիթլերը կրցաւ ընել սկզբնական շրջանին: Ինչո՞ւ... որովհետեւ այդ յարձակողական քաղաքականութեան գիծը յառաջ տանողն էր այնպիսի երկիր մը, որ շատ աւելի զօրաւոր էր քան Գերման-ձարոն-Իտալիա. երեք Փաշիստ երկիրներու միակցութիւնը, ուրկէ ծնունդ առաւ Երկրորդ Համաշխարհային Պատերազմը. երկրորդ՝ որովհետեւ ան զբրահաւորուած էր գեր-մահացու ատոմական զէնքերով. երրորդ՝ որովհետեւ ան շատ խոր հնարագիտութեամբ կրցեր էր իր ռազմամոլ ղեկավարութիւնը ծածկել խաղաղութեան եւ ղեմոկրատի պրոպականդայի վարագոյրին ետեւ, եւ չորրորդ՝ որովհետեւ պատերազմով կամ այլ պատճառներով թշուառացած երկիրները անկարող էին գիմազրել իրեն: Այսու հանդերձ սկսաւ խաղաղասիրական ուժեղ շարժում մը ժողովուրդներու մէջ, որոնք կը կռուէին խաղաղութեան համար եւ կը հաւատային թէ կարելի է ազդերու խաղաղ համակեցութիւնը՝ հակառակ անոնց միջեւ գոյութիւն ունեցող տարբեր ուժի մաներուն:

Նոյն ատեն համաշխարհային խաղաղութեան պաշտպանութիւնը հիմնականացնող շարք մը իրողութիւններ երեւան եկան: Առա-

Ղինը այն էր որ սոցիալիստական եւ ժողովրդական դեմոկրատական երկիրները յաջողեցան իրենց պաշտպանութեան մեքենան զօրեղացնել այնպիսի եղանակով, որ իմպերիալիստական իշխանութիւնները չէին համարձակեր սկսիլ յարձակողականի մը, որ յաղթութիւն չէր խոստանար: Երկրորդ իրողութիւնը, որ իրապէս շարժեցուցիչ էր, Չինաստանի յեղափոխութեան յաղթանակն էր. Չինաստան, իր 650 միլիոն բնակչութեամբ եղեր էր ժողովրդական Հանրապետութիւն: Ասով կ'ուժեղանար սոցիալիստական բանակը: Երրորդ իրողութիւնը, որ աւելի զայրացուց Ամերիկայի իմպերիալիստները, այն էր՝ երբ Նախագահ Թրումբըն յայտարարեց ամբողջ աշխարհի, որ Սովետները տիրացեր են ատոմական գաղանիքին: Այս իրողութիւնը իր հիմքէն կը խախտէր ամերիկեան իմպերիալիզմի գերակշռութիւնը, որովհետեւ սովետները ատով առած էին ատոմական ուժի մենաշնորհը: Այս վերջին իրողութիւնը իրապէս կատաղեցնող հանգամանք ունէր: Ամերիկեան իմպերիալիստները արար աշխարհի յայտարարած էին որ սովետներու հաստատած սոցիալիստական ուժիմը յետադիմական ուժիմ է, ուր յառաջդիմութիւնը բացարձակապէս անհնարին է, սովետներու յաջողութիւնները թուղթի վրայ գրուած երազներ են: Բայց ահա ի՞նչ կը տեսնէին... Սովետները եւս գտած էին ատոմական ուժերը. ատիկա անրնական իրադարձութիւն էր: «Հանճարները միմիայն կապիտալիստական ուժիմի տակ կը ծնին», ուրեմն պարզ էր, խնդրին մէջ գողի մը մատը կար. մէկը՝ ատոմական ուժի գաղանիքը գողցեր՝ փոխանցեր էր սովետներուն: Եւ մարդիկը, կաշառքով կամ էնտրիկով դառն երկու «գողեր», այր եւ կին — Յուլիոս Ռոզենպըրկ եւ Էթէլ Ռոզենպըրկ: Ամերիկեան իմպերիալիզմի գործակալն էր Տէյլիտ Կրինկլէս, Տիկին Էթէլի եղբայրը, որ մետասաներորդ ժամուն՝ խղճահարութենէ զրոգուած՝ խոստովանեցաւ որ իր վկայութիւնը սուտ էր: Երկու տարի այս անմեղ անձերը մահուան դատապարտուած՝ բանտարկուեցան Սինկ-Սինկի բանտին մէջ: Աշխարհի բոլոր կողմերէն բողոքներ ու դիմումներ կատարուեցան. նոյնիսկ Հռովմի Պապը՝ Պիոս XII, մասնաւոր խնդրանք ղրմեց Նախագահ Այզընհաուերի, բայց անօգուտ: Մ. Նահանգներու Գերագոյն Ատեանը մերժեց վերաքննութեան ենթարկել դատապարտեալներու դատը: 1953, Յունիս 17-ին, դատաւոր Վիլիերմ Դրկլէզ, ուրիշ երկու դատաւորներու՝ Ֆէլիքս Ֆրէնկֆուրտի եւ Պլէքի հետ, ուղեցին մահապատիւի գործադրութիւնը յետաձգել եւ քննել այն կարեւոր հարցը՝ թէ արդեօք դատաւոր Իրվինկ Քաֆմըն իրաւասութիւն ունէ՞ր մահուան վճիռ արձակելու դատապարտեալներուն՝ առանց Գերագոյն Ատեանի լիակատար նիստի միաձայն որոշման, մասնաւոր՝ երբ երեւան եկած էր նոր ու զգայացուց յայտնութիւն մը

Տէյլիտ Կրինկլէսի բերնով, որ կը խոստովանէր թէ՛ իր վկայութիւնը սուտ էր: Բայց այդ երեք պարկեշտ դատաւորներու ջանքերն ալ ապարդիւն անցան: Գերագոյն Ատեանի ղլխաւոր դատաւոր՝ Ֆրէտ Վինսթըն, Յունիս 18-ին, արտակարգ նիստ գումարեց եւ մեծամասնութեան քուէով որոշեց մահապատիւը անմիջապէս գործադրել յաջորդ օրը: Եւ եղաւ այն՝ ինչ որ կամիսաւ արդէն որոշուած էր: 1953 Յունիս 19-ին, Սինկ Սինկի բանտին մէջ Տէր եւ Տիկին Յուլիոս եւ Էթէլ Ռոզենպըրկները, երկուքն ալ ելեքտրական աթոռներու վրայ խանձուեցան ի փառս ամերիկեան իմպերիալիզմին:

Մահապատիւի գործադրութենէն երկու օր առաջ, ընդհանուր դատախազ Հըրպըր Պրաունզլէլ, Մ. Նահանգներու բանտերու ընդհանրի գերէկտորը՝ Ճէյմս Պէննէթը զրկեց երկու դատապարտեալներու մօտ, այն մտքով որ Էթէլ անոնք խոստովանին իրենց յանցանքը, մահապատիժը պիտի փոխուի բանտարկութեան: Բայց անոնց պատասխանը եղաւ հետեւեալը. — «Մենք քանի մը տարի աւելի երկար ազրելու սիրոյն՝ մեզի չենք ներեր ընկճուիլ բոնութեան առջեւ եւ ընդունիլ յանցանք մը, զոր գործած չենք: Այժմ թոյլ տուէք որ որպէս ազատ ամերիկացիներ՝ վերջին անգամ ըլլալով մեր ազատ խօսքի իրաւունքը պաշտպանենք եւ ըսենք թէ՛ մեզ նման երկու անմեղներու սպաննութիւնը ոճիւր եւ անարգանք է Ամերիկայի մեծ հանրապետութեան համար»:

Էթէլ դատապարտեալները ապրելու սիրոյն՝ իրենց չգործած յանցանքը խոստովանէին, իրաւ, զուցէ ներման արժանանալին, բայց ատով անոնք կը փաստէին Ամերիկայի տիրող դատաւարդի այն կարեւոր հաւատարացումը թէ՛ սովետները, անկարող որեւէ ստեղծագործութեան, զօղութեան խողովակով ստացեր են ատոմական ուժի գաղանիքը, որովհետեւ ամբողջ դաւադրութիւնն արդէն նոյն այդ նպատակին համար սարքաւորուած էր:

Բայց արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ՛ ամերիկեան իմպերիալիստները ջերմ հայրենասէր ըլլալով հանդերձ՝ ճշմարիտ քրիստոնեաներ ալ էին: Անցեալին, երկու մահապարտները, երբ ազատ քաղաքացիներ էին եւ իրենց ընտանեկան յարկը կ'ուզէին կազմել ամերիկեան «ազատ» երկնակամարին տակ, իրենց ամուսնութեան պսակադրութեան տեսն՝ զիրենք պսակող կրօնաւորը ազարարած էր Աւետարանի բերնով. — «Երբ Աստուած այր ու կին իրարու կը միացնէ, մարդիկ զանոնք բաժնելու չեն»: Եւ մարդիկը Յուլիոս Ռոզենպըրկը իր «կնոջմէն բաժնեցին», երկուքն ալ նոյն օրը, նոյն ժամուն վառեցին եւ իրենց պահեցին անոնց երկու զաւակները. մին՝ ինը, միւսը՝ տասնմէկ տարեկան:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Մինչ Թրուսի կառավարութիւնը պազ պատերազմին զարկ կուտար եռանդազին, անդին, Համաշխարհային խաղաղութեան համար յուզական շարժումը կը տարածուէր այնպիսի ուժգնութեամբ, որուն նմանը պատմութեան մէջ տեսնուած չէր: Համաշխարհային խաղաղութեան այդ ծաւալուն շարժումը կը բաղխէր Վոլ Ստրիտի աշխարհը նուաճելու ծրագիրներուն եւ վերջինին կը պատճառէր մեծ անհանգստութիւն մը: Վճռական կռիւ կը մղուէր Քորէայի շուրջ 1950-1953 տարիներուն: Այդ պատերազմը սկսեց էր Վոլ Ստրիտի խամաճիկ Սինկմըն Ռիի կառավարութիւնը, որուն նեցուկ էին Թրուսի մընի եւ Այդրնհաուրի վարչութիւնները: Անոնց Հասարակաց դիժն էր ընդարձակել պատերազմի շրջանակը եւ մտնել Ժողովրդական Չինաստան, կռիւի ընթացքին գործածել ատոմական ուժեր, բայց ձախողեցան, որովհետեւ ամբողջ աշխարհը բացայայտօրէն դէմ էր այդ ծրագրին: Վաշինկտոնի հրձիգները Միացեալ Ազգերու մէջ Համակիրներու մեծամասնութիւնը չկրցան շահիլ իրենց կողմը, որով ստիպուեցան ստորագրել զինադադարի դաշնագիրը: Ասիկա ամերիկեան իմպերիալիզմի խոշոր պարտութիւնն էր, որ ուրախութիւն պատճառեց ամերիկեան ժողովուրդի եւ Համայն մարդկութեան:

Համաշխարհային խաղաղասիրական ուժերը ուրիշ յաղթանակ մը եւս տարին, այս անգամ Փրանսական իմպերիալիզմին դէմ՝ Հնդկաչինի մէջ: Այդ երկրի ժողովուրդը հերոսաբար կռուելով պարտութեան մատնեց էր Փրանսացիները, բայց նոյն ատեն՝ պատրաստ էր խաղաղութիւն կնքելու: Այդ ատեն Միացեալ Նահանգները մէջ մտան եւ ուզեցին արգիլել խաղաղութեան համար առնուած քայլերը: Բայց Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսան Ամերիկայի դաշնակիցները մերժեցին հետեւիլ պատերազմը ընդարձակելու ձգտող Վոլ Ստրիտի քաղաքականութեան: 1954-ի Մայիսին, կնքուեցաւ զինադադար: Ասիկա ուրիշ յաղթութիւն մըն էր, զոր կը տանէին խաղաղասէր ուժերը:

Հնդկաչինի տագնապի հետքերուն հետեւեցաւ ուրիշ կնճառտ հարց մը, Չինաստանի ծովեզերքի մօտիկ Գիմոյ եւ Մացու կղզիներու հարցը: Ամերիկայի կառավարութիւնը Ֆորմոզան իր իշխանութեան հովանիին տակ առնելէն յետոյ՝ կ'ուզէր ատոմական ուժերով պաշտպանել այդ երկու կղզիները, որոնց համար Պետական Պաշտօնատունը վերջնագիր գրկեց ժողովրդական Չինաստանի: Կը մեծնար պատերազմի սպառնալիքը: Այս պարագային դարձեալ Հա-

մաշխարհային խաղաղասիրական ուժերն եղաւ որ կեցուցին պատերազմի հրձիգներու քայլերը:

Այս բոլոր իրադարձութեանց զուգընթաց՝ երեւան եկաւ նոր երեւոյթ մը. — այսպէս կոչուած՝ չէղոք երկիրներու խաղաղասիրական ուժերու շարժումը: Այս «երրորդ խումբի» շարժումը թէեւ ամբողջապէս պատրաստուած չէր խաղաղութեան հիմնական սկզբունքները պաշտպանելու գործին, այսու հանդերձ՝ զայն կարելի է նկատել որպէս խաղաղութեան նպաստող օժանդակ թեւ մը: Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ շատ մը ուրիշ երկիրներու ռազմամոլները այնքան հաշտ աչքով չէին նայեր այդ շարժումին: Կապիտալիզմի նախկին գաղութային ամբողջներուն մէջ խաղաղութեան ու չէղոքութեան շարժումը հասնելով իր բարձրագոյն կէտին, աւելի հիմնաւորուեցաւ երբ Ասիոյ եւ Արիւիկէի ազգերը 1955-ին զուսմարեցին Բանդունկի Քոնֆէրանսը, որ կը ներկայացնէր մարդկային սեռի մեծամասնութիւնը: Այս բոլոր իրադարձութեանց ընթացքին, երբ մէկ կողմէն խաղաղութեան ձգտումը կ'ուռճանար ու կը տարածուէր, միւս կողմէն ամերիկեան դիւանագիտութեան պրէստիժը կ'իյնար ամենացած աստիճանի վրայ:

Այսպէս էր ընդհանուր դրութիւնը երբ 1955-ի Յուլիսին, Ժընէվի մէջ կը գումարուէր Չորս Մեծերու — Մ. Նահանգներու, Խորհրդային Միութեան, Բրիտանիայի եւ Ֆրանսայի — քոնֆէրանսը: Վոլ Ստրիտի ծրագիրը Համաշխարհային Հասարակական կարծիքին եւ զինուորական գործունէութեան ճակատին առջեւ դրեթէ սնանկացած էր: Աշխարհի բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը, բեռնաւորուած սպառազինման հարկերու եւ ատոմական պատերազմի սարսափին տակ, հաստատօրէն կը պահանջէր խաղաղութիւն: Պատերազմական դաշնակցութեանց այս սխառէմը, զոր Մ. Նահանգները այնքան բազմաձախ եղանակով եւ ժրջանօրէն կառուցեց էին, ցնցուած էր իր հիմքէն: Անցնող մի քանի տարիներուն խաղաղասիրական շարժման կեդրոնական պահանջն էր մեծերու միջեւ միջադրային քոնֆէրանսի մը գումարումը: Այդրնհաուրի կառավարութիւնը, վախնալով այդպիսի քոնֆէրանսի մը ելքէն, նախ բուռն կերպով ընդդիմացաւ, փախուստի ճամբաներու դիմեց, բայց վերջի վերջոյ տեսնելով որ իր խաղաղասիրական դիմակը ամբողջ աշխարհի առջեւ վար պիտի իյնար, տեղի տուաւ:

Ժընէվի քոնֆէրանսին մէջ ամերիկեան իմպերիալիզմը, իր ներկայացուցիչը ունենալով Նախագահ Այդրնհաուրը, խաղաղութեան շուրջ երկար խորհրդակցութեանց ընթացքին, իր պատերազմի սպառնալիքի քաղաքականութենէն նշանակելի չափով նահանջեց: Մէկ կողմ դնելով իր նախապէս ծանուցած ատոմական վերջնազրե-

բը, Այդընհատուր, ինքզինքին պատուաւոր դիրք մը տալ ուզեց յայտնապէս յայտարարելով որ իր կառավարութիւնը կեցած է «խաղաղասիրական» քաղաքականութեան առաջին ճակատին վրայ, բայց նոյն ատեն՝ ամբողջս կառչեցաւ Վոլ Ստրիտի իմպերիալիզմի ամբարտաւան պահանջներուն: Այդընհատուրի վարած դիւանագիտութեան գլխաւոր նպատակներէն մին էր, եթէ կրնար, անհետացնել աշխարհի մէջ տարածուած այն վախը՝ որ Մ. Նահանգները մարդկութիւնը կ'առաջնորդէր ատոմական սարսափելի պատերազմի մը: Ան ատով կ'ուզէր վերահաստատել Մ. Նահանգներու խաղաղասէրի համբաւը, որ վերջերս շատ դէշ կերպով վնասուած էր:

Ժընէվի Քոնֆէրանսը լուծեց այն շատ մը հիմնական հարցերը, որոնք համաշխարհային պատերազմի սպառնալիքի բնոյթը կը կրէին, ինչպէս, Գերմանիոյ վերամիացումը, սպառազինման արշաւի դադարեցումը, ատոմական զէնքերու արդիւումն ու փճացումը, Ժողովրդական Ձինաստանի մուտքը Միացեալ Ազգերու կազմակերպութեան (ՄԱԿ-ի) մէջ, Ֆորմոզայի ամերիկեան գրամման լուծարքը, Մ. Նահանգներէն դուրս կառուցուած ամերիկեան օդանաւային ու նաւային կայաններու վերացումը, եւայլն: Այստեղ չենք նշեր կապիտալիզմի եւ սոցիալիզմի միջեւ գոյութիւն ունեցող այն անհաշտելի հակամարտութիւնը, որ կախուած էր, տակաւին կախուած է եւ միշտ ալ կախուած պիտի մնայ միջնորդութիւն մէջ, մինչեւ որ կապիտալիզմը գերեզմանուի եւ անոր գերեզմանին վրայ ծածանի սոցիալիզմի դրօշակը: Յամենայն դէպս, Ժընէվի Քոնֆէրանսի գլխաւոր դործը այն եղաւ որ չորս Մեծերը հաւանեցան որպէսզի վերել յիշուած հարցերը եւ ուրիշ կնճռոտ հարցերը կարգադրուին խորհրդաժողովներով՝ ոչ թէ ատոմական պատերազմով: Ասով կը հերքուէր Վոլ Ստրիտի պատերազմի անխուսափելիութեան սպառնալից տեսութիւնը:

Ժընէվի մէջ Վոլ Ստրիտի պատերազմական ծրագիրը արգելակուած էր: Ասիկա յոյժ կարեւոր դործ մըն էր, հոգ չէր թէ նոյնիսկ եթէ Ժամանակաւոր եղած ըլլար: Ան պատերազմի վտանգը չէր անհետացուցած բոլորովին. այդ վտանգը կայ ու կը մնայ որքան ատեն որ իմպերիալիզմը գոյութիւն ունի: Ժընէվի Քոնֆէրանսը անով օգտակար եղաւ որ, նախ՝ անիկա տնտեսական ու քաղաքական կառուցողական աշխատանքներու ճամբաները յարգարեց եւ յետոյ՝ ուժեղացուց համաշխարհային խաղաղասիրական ուժերու զարգացումն ու յոխորտացող իմպերիալիզմի վրայ գործադրելիք ճնշումը: Եւ արդէն, այդ ճնշումն է որ վերջ պիտի տայ պաղ պատերազմին:

Թրէյտ Իւնիըններու Ֆէտէրասիոնի Ինտէրնացիոնալ Գոնկրէսը (ԹԵՖԻԳ) եւ Թրէյտ Իւնիըններու Համաշխարհային Ֆէտէրասիոնը (ԹԵՀՖ) ասոնք երկուքն ալ միջազգային բանուորական միութիւններ էին, պաղ պատերազմի ընթացքին՝ կեցած էին հակառակ բեւեռներու վրայ. առաջինը ընդհանրապէս կը հետեւէր ամերիկեան իմպերիալիզմի ծրագրին, վերջինը սիստէմատիկ կերպով կը հակառակէր անոր: Համաձայն Երկրորդ Ինտէրնացիոնալ քաղաքականութեան՝ ԹԵՖԻԳ-ը, համաշխարհային պատմութեան ամենէն քրիտիկական շրջանին, իրեն միակ թշնամին կը նկատէր ձախակողմեան տարրը, մասնաւորապէս Ժողովրդական դեմոկրատին եւ սոցիալիզմը: Ան նեցուկ կեցեր էր Թրումընի Վարդապետութեան, Մարչլլեան Պլանին, Ատլանտեան Ուխտին, Քորէյայի պատերազմին, Հնդկաչինի պատերազմին, Մալայեայի մէջ իմպերիալիստներու ջարդարարութեան, Գերմանիոյ վերա-սպառազինման, Ֆորմոզայի ամերիկեան գրաւումին եւ ատոմական զէնքերու արդիւման ու փճացման համար Վոլ Ստրիտի մերժումին: Այդպիսով այդ միջազգային կազմակերպութիւնը ամբողջ աշխարհի բանուոր դասակարգի կենսական շահերը ոտքի տակ կ'առնէր ճիշդ նոյն բանուորութեան անունով:

Այս պրօ-իմպերիալիստական քաղաքականութեամբ ԹԵՖԻԳ-ը Վոլ Ստրիտի պատերազմական ծրագրին հետեւելով հանդերձ՝ ընտրած էր նենգամիտ գիծ մը՝ բանուորութիւնը քնացնելու համար. այն էր — տկար ձայնով զանդատիլ սպառազինման հսկայ յատկացումներու օրինագիծերուն, բողոքել սպրուստի պայմաններու սղութեան դէմ, քննադատել բանուորական միութիւնները պատերազմական կառքին լծելու քաղաքականութիւնը եւ դատապարտել բանուորներու քաղաքացիական ազատութեանց սեղմումի փորձերը: Այս կազմակերպութեան դործը, ինչպէս ընդհանրապէս Բ. Ինտէրնացիոնալինը, ուրիշ բան չէր այլ միայն տեսակ մը դաւաճանութիւն՝ աշխատաւորական Ֆրազներով վարագուրել մոնոպոլիստներու իմպերիալիստական պատերազմի պրոպականդայի դիժը: Բայց ԹԵՖԻԳ-ը իր ամենացած ատիճանին իջաւ, երբ սկսաւ սիստէմատիկ կերպով ամէն միջոց ի դործ դնել պտակտելու Թրէյտ Իւնիըններու Համաշխարհային Ֆէտէրասիոնը (ԹԵՀՖ-ը) շատ մը անջատ երկիրներու մէջ, ինչպէս Ֆրանսայի, Իտալիոյ, Գերմանիոյ, Մ. Նահանգներու, Ասիոյ եւ Լատին Ամերիկայի մէջ: Պաղ պատերազմի ընթացքին, անոր քաղաքականութեան ամբողջ առանցքը կը կազմէր միացեալ ճակատ կազմել ամերիկեան մենատիրական կապիտալի հետ

ընդդէմ խաղաղասէր եւ դեմոկրատիկ ուժերուն, ի պաշտպանութիւն՝ կապիտալիստական սխտէմին:

Այս միջազգային կազմակերպութիւնը ըլլալով ամերիկեան յարձակողական իմպերիալիզմի պոչը, շարունակ տարուած էր ակալիտմեան սոցիալ դեմոկրատիայի աւանդական ոգիով անցնող 40 տարիներու ընթացքին: Ֆաւալի է ըսել որ անոր առաջնորդներն եղած են ամերիկացիներ՝ Մինիի եւ Վոլթըր Ռուիթերի պէս մարդիկ. ատոր համար է որ ան մնացեր է բրածոյացած ու չէ կրցած փոխուիլ: Եւ այդ մարդիկը հետեւած են փոխ նախադահ Նիքսընի ծերակուտական Նոլէնտի եւ Մըկ Արթըրի: Զարմանալի չէ, ուրեմն, երբ անոնք պարծանքով կը յայտարարեն. — «Մովետները խաղաղութեան պրոպականտով Ամերիկայի աշխատաւորութիւնը այնքան հեշտիւ չեն կրնար հրապուրել»:

Ամերիկեան աշխատաւորական առաջնորդները իրենց յետադիմական-յարձակողական դիրքին վրայ կը մնան, ոչ թէ անոր համար որ բանուորները եւ ամերիկեան ժողովրդական զանգուածները պատերազմ կ'ուզեն (ընդհակառակը՝ անոնք դէմ են պատերազմին) այլ անոր համար որ այդ առաջնորդները իշխանապետական ձեւով կը ղեկավարեն բանուորական միութիւնները եւ կարող են բռնաբարել անոնց անդամներու քաղաքական դաւանանքն ու կարծիքները: «Կարմիրները պէտք է վտարուին իւնիւրններէն» . եւ ասիկա պարապ սպառնալիք չէ: Իսկ ո՞վ է այդ սպառնալիքին հետեւ կեցողը — «Հակա-ամերիկեան գործունէութեանց կոմիտէն», որ ժամանակակից դարուն գաղափարի հաւատաքննութեան ատեան մը հաստատած է: Վա՛յ անոր, որ այդ ատեանին առջեւ կը կանչուի...:

Երբեւիցէ Թեմիթ-ի եւրոպական բաժնի առաջնորդները, խաղաղասէր մասսաներու ճնշման տակ կը թեքուին դէպի ձախ՝ կամ դէպի «չէզոքութիւն», ամերիկեան աշխատաւորական իմպերիալիստները անմիջապէս կը հասնին եւ զանոնք կարգի կը հրաւիրեն. անասատղները կը վտարեն դուրս: 1953-ի Յուլիոսին, Ստոքհոլմի մէջ երբ այդ կազմակերպութեան համաշխարհային երրորդ գոնկրէսը գումարուեցաւ, հոն բրիտանական պատգամաւորները առաջարկեցին խաղաղութեան խորհրդակցութիւններ սկսիլ Մովետ Միութեան հետ, ամերիկացիները բուն կերպով հակառակեցան եւ այդպիսի քայլ մը անուանեցին «նուաստացուցիչ»: Բրիտանական պատգամաւորութեան առաջնորդը՝ Սըր Վէնսէն Թիւօըն, որ եւրոպական Թեմիթ-ի նախագահն էր, այլեւս չի վերընտրուեցաւ, անոր տեղն անցաւ Մինիի կերպարը, Օմար Բէքու, Պեյճիգայէն: Նոյն բանը տեղի ունեցաւ 1955-ին, Վիէնայի Գոնկրէսին մէջ, ուր շատ մը եւրոպացիներ ամերիկեան աշխատաւորական դիկտատորները հռչակե-

ցին որպէս պատերազմի հրճիղներ: Ինչպէս Մ. Նահանգներու կառավարութիւնը գերաճող դժուարութեանց առջեւ էր Միացեալ Ազգերու կազմակերպութիւնը իր հսկողութեան ենթարկելու ջանքերուն մէջ, այնպէս էին նաեւ աշխատաւորական տեղակալները, որոնք տարուէ տարի կը տեսնէին որ ամերիկեան իմպերիալիզմի գաւազը՝ Թեմիթ-ը փոթորկոտ գոնկրէսներու կը ճակատի:

Միւս կողմէն, սակայն Թրէյտ Իւնիւրններու Համաշխարհային Ֆէտէրատիոնը (ԹեՀՖ-ը) պազ պատերազմի սկիզբէն իսկ՝ եռանդազին պայքար մղեց յանուն խաղաղութեան եւ ամերիկեան իմպերիալիզմի աշխարհի տիրապետութեան ծրագիրներուն դէմ: Ան էր որ, որպէս անդամ Համաշխարհային Խաղաղութեան Խորհուրդին, ոչ միայն իր բոլոր անդամները մարտական ոգիով պահեց պայքարի ճակատին վրայ, այլեւ խաղաղասիրական շարժման շրջանակը ընդլայնելով, շատ մը պարագաներու տակ ամերիկեան իմպերիալիզմը նահանջի մատնեց:

ԹեՀՖ եւ իր համակիր բանուորական միութիւնները յարատեւ պայքար մղեցին Վոլ Ստրիտի իմպերիալիզմի նուաճողական ծրագրին դէմ, Քորէայի եւ Հնդկաչինի մէջ անոր վարած պատերազմներուն դէմ: Անոնք անողոք պայքարի արշաւանք պատրաստեցին ատոմական եւ ջրածնային ուժերու պատրաստութեան ու գործածութեան դէմ: Յետոյ՝ անոնք գործօն աջակցութիւն տուին Ասիոյ, Աֆրիկէի ու Լատին Ամերիկայի մէջ ազգային, ազատագրական շարժումներուն: Ամէն ուր որ այս կազմակերպութիւնը գորաւոր էր, ուղղամտները կը հանդիպէին ուժեղ դիմադրութեան: Անոնց այս գործունէութեան հետեւանքով էր իմպերիալիստները իրենց գործակալներու միջոցով աշխատեւ են, կ'աշխատին եւ միշտ պիտի աշխատին բանուորական միութիւնները բաժնել իրենց թիկունքը ապահովելու համար: Ահա թէ ինչո՞ւ պազ պատերազմը այսօր կը մղուի նաեւ աշխատաւորական շարքերուն մէջ: Բայց բանուորները ուշ կամ կանուխ՝ պիտի զիտակցին որ պազ պատերազմի ջատագովները աւելի շատ՝ բանուորութեան դիմակաւոր առաջնորդներն են. անոնց այդ դիտակցութիւնն է որ վերջ պիտի տայ պազ պատերազմին նախ բանուորական միութեանց, ապա՝ քաղաքական շրջանակներու մէջ:

13.— ԹՐԷՅՏ ԻՒՆԻԸՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ,
ԴԵՄՈԿՐԱՍԻ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Համաշխարհային աշխատաւորական շարժումը իր երկար ու չեղափոխական պատմութեան ընթացքին, կառուցեր է շատ մեծ եւ հուժկու կազմակերպութիւններ — քաղաքական կուսակցութիւններ,

Թրէյտ Իւնիւրններ, համագործակցական մարմիններ եւ ուրիշ դանակարգային խմբաւորումներ — բոլորն ալ արդիւնաբերական բանուորներու շարքերէն: Սխալ է, ատոր համար, երբ ոմանք կը ջանան հաւաստիացնել թէ՛ անկէ վերջ դասակարգային պայքարը դործատէրերուն հետ, յառաջ տարուելու է խաղաղասիրական խորհրդակցութիւններով եւ բարեկամական հաշտուողականութեամբ, որովհետեւ ներկայիս՝ աշխատաւորական առաջնորդները զբաղիրներ են, վիճակագրական պաշտօնեաներ եւ փաստաբաններ: Ասոր ճիշդ հակառակը, աշխատաւորական շարժումը պէտք է զօրեղացնէ եւ կրկնապատկէ իր ուժերը եւ աշխատի բանուոր դասակարգի ծոցէն ծնած եւ բանուորական պայքարներու մէջ թրծուած մարտիկներ դնէ առաջնորդողի դիրքին վրայ: Ասիկա անհրաժեշտ է, որովհետեւ իշխող դասակարգը թէեւ աշխարհի մէկ երրորդը կորսնցուցեր է, քանի որ այդ մասը անցեր է սոցիալիզմի դրօշին տակ եւ այժմ ճակատեր է բանուորական միութեանց ուժեղացած շարժումին, բայց Խակաւին ան տէրն է հսկայական ուժի մը, զոր չէ կարելի արհամարհել: Նաեւ, դասակարգային կռիւի պատմութեան դասերը պէտք է համոզեն բանուորները, որ շահագործողները աւելի պիտի նախընտրեն իրենց տաղանապալի շրջանին, անդթօրէն գործածել իրենց ամբողջ իշխանութիւնն ու ուժը, քան թէ զիջիլ յառաջացող բանուորներուն: Այն՝ ինչ որ Հիթլերը ըրաւ Եւրոպայի բանուորական շարժումին, մեզի կը սորվեցնէ թէ կապիտալիստական երկիրներու մէջ բանուորական շարժման ծաւալուն շրջանակը միայն՝ ապահովութիւն չի տար բանուորութեան յազմանակին, երբ այդ բանուորութիւնը յարձակման կ'ենթարկուի: Բանուորները պէտք է պատրաստուին դասակարգային կռիւին՝ ռազմազիտական դիրքեր ապահովելու հեռատեսութեամբ. պէտք է սրեն իրենց գէնքերը, որպէսզի կռիւի պահուն՝ իրենք պաշտպանողական դիրքերու վրայ չ'մնան, այլ ուղղակի անցնին յարձակողականի եւ թշնամին մատնեն խուճապի:

ՉԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Կազմակերպել չկազմակերպուած բանուորները. ասիկա կայ ու կը մնայ որպէս կենսական եւ հիմնական նշանաբանը աշխարհի գիտակից բանուորներուն համար: Չկազմակերպուած միլիոնաւոր բանուորներու կազմակերպութիւնը իր մէջ ունի վճռորոշիչ գործօն դերեր. առաջին՝ որ այդ բանուորները հրամայական անհրաժեշտութեամբ պէտք ունին Թրէյտ Իւնիւրնիզմի պաշտպանութեան. երկրորդ՝ որ համաշխարհային կազմակերպուած աշխատաւորութիւնը ստիպո-

ղականօրէն կը պահանջէ ուժերու յաւելում ու կեդրոնացում՝ իր միջազգային տնտեսական եւ քաղաքական ճակատի վրայ:

Անկազմակերպ բանուորները կազմակերպելու հարցը երկու դարէ ի վեր, Թրէյտ Իւնիւրնի կենսական հարցերէն մէկն եղած է, բայց այսպէս թէ այնպէս՝ պայմանները նպաստաւոր չ'են եղած: Առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ՝ երբ Ռուսական Յեղափոխութեան շնորհիւ զարգացաւ բանուորական միութեան շարժումը, այդ հարցին մասնաւոր ուշադրութիւն տրուեցաւ: Իսկ Բ. պատերազմէն վերջ երբ Թրէյտ Իւնիւրնիզմի շրջանակը աւելի ընդարձակուեցաւ եւ Թրէյտ Իւնիւրնները սկսան գործել պրոլետարական կուսակցութեանց հետ, այն ատեն բոլոր բանուորները կազմակերպութիւններու մէջ առնելու թէնորիան մտաւ գործնականացման ճամբան: Կապիտալիստական աշխարհի մէջ անորակ բանուորներու հրահայտական զանգուածներ կան, որոնք մնացեք են անկազմակերպ վիճակի մէջ: Միայն տնկարկութեան շրջաններու մէջ չկազմակերպուած բանուորներու թիւը կը հասնի մօտաւորապէս 90 միլիոնի. եւ ասոնք պրոլետարական բանակի կարեւոր մասը կը կազմեն:

Պատմականօրէն, այն Թրէյտ Իւնիւրնները, որոնք Բ. Ինտէրնացիոնալի կը հետեւին, իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցեր են արդիւնաբերական բանուորներուն, մասնաւորապէս որակաւոր բանուորներուն վրայ եւ անտես առած են անորակ բանուորներն ու Փարմային գործաւորները: Անտես առնուած են նաեւ նէկրոներն ու Մ. Նահանգներու մէջ օտարածին բանուորները: Կին գործաւորները, որոնք կապիտալիստ երկիրներու մէջ բանուոր դասակարգի 30 տոկոսը կը կազմեն, նոյնպէս բոլորովին անտեսուած են: Կին բանուորներու անտեսումը իր որոշ պատճառն ունի: Պահպանողական Թրէյտ Իւնիւրններու նենգամիտ առաջնորդները չ'են ուզեր կիները կազմակերպել, որովհետեւ անոնք հիւսնալի կուուողներ են եւ յետոյ՝ անոնք են որ ընդունակ են յեղափոխական ոգիով դաստիարակել իրենց զաւակները: Ճիշդ ատոր համար ալ կապիտալիստական կառավարութիւնները եւս հակառակ են կիներու իւնիւրնականացման: Վերջին երեսուն տարիներու ընթացքին որոշ յառաջդիմութիւն մը կը տեսնուի կիները կազմակերպելու գործին մէջ: Բայց այդ գործը տակաւին անկատար է. օրինակի համար, Մ. Նահանգներու մէջ, ուր 19 միլիոն 500 հազար կին բանուորներ կան, միայն 2 միլիոն կիներ կը պատկանին Թրէյտ Իւնիւրններու:

Չկազմակերպուած գործաւորներու երրորդ դասը կազմողներն են դպրոցներու ուսուցիչները, կառավարական գործաւորները, զբասնեակներու գործաւորները, փոստ-հեռագրական, հեռաձայնի եւ շարժանկարներու գործաւորները. ասոնք կազմակերպելը ամենէն

դժուարին գործն է. նախ՝ անոր համար որ անոնք լաւ կը վճարուին, երկրորդ՝ անոր համար՝ որ կառավարութիւնը ամենախիստ հսկողութիւնը կը պահէ անոնց գլխուն վերեւ:

Չկազմակերպուած բանուորներու այս քաթէկորեաներուն մէջ երիտասարդութիւնը կը կազմէ ամենէն կարեւոր հատուածը: Սոցիալ Գեմոկրատիայի ամենամեծ մեղքն է որ ան ամենուրեք արհամարհանքով անտեսած է պրոլետարիատի այն կենսական հատուածը: Աշխատաւորական շարժումը երբեք այնքան կարիք չէ ունեցեր երիտասարդութեան կուռղ ոգիին, անոր ուժին ու խանդավառութեան, որքան ներկայիս:

Համաշխարհային կազմակերպուած աշխատաւորութիւնը ամէն կարողական միջոցներն ունի արագութեամբ կրկնապատկելու իր ուժը, եթէ սխառմամտիկ կերպով ձեռնարկէ կազմակերպելու երկու սեռին պատկանող անկազմակերպ բանուորները: Կազմակերպչական աշխատանքները յառաջ տանելու համար բանուորական միութիւնները ունին այն անհրաժեշտ ատաղձը, որ դրամ կը կոչուի, բայց միութեանց առաջնորդները իրենց՝ յաւելեալ հիմնադրամները փոխանակ արդիւնաբեր նպատակի գործածելու, միշտ մտածեր են զանոնք աւելցնել եւ նոյնիսկ՝ ինչպէս ամերիկեան բանուորական միութիւնները կ'ընեն, անոնք այդ հիմնադրամները կապիտալիստական ձեռնարկութեանց յատկացուցեր են խոշոր շահոյթներ ապահովելու համար: Մաս մը Թրէյտ Իւնիթներու Ֆինանսական գրութիւնը այնքան բարձրացրէ է որ սխալած չենք ըլլար երբ զանոնք կոչենք դրամատիրական ընկերութիւններ: AFL — CIO, եւ անկախ՝ երկաթուղային բանուորներու միութիւնը, միասնաբար իրենց զանձարանին մէջ ունին 64 միլիոն տոլար. հանքագործներու միութիւնը ունի 45 միլիոն տոլար. կառապաններու միութիւնը՝ 41 միլիոն տոլար. ելեքտրական բանուորներու միութիւնը՝ 26 միլիոն տոլար. ինքնաշարժի բանուորներու միութիւնը՝ 27 միլիոն տոլար. կանանց հազուատեղէնի բանուորներու միութիւնը՝ 13 միլիոն տոլար: Այս գումարներուն մէջ չենք հաշուեր այն հսկայ 300 միլիոն տոլարի գումարը, որ բանուորական միութեանց կազմէ դրուած է որպէս «բարօրութեան հիմնադրամ»: 1954-ին, Հազուատեղէնի Բաղադրեալ Բանուորներու Միութիւնը կուտակուած դրամագլուխ ունէր 370 միլիոն տոլար եւ կապուած էր 10 ապահովագրական ընկերութեանց հետ, երկու պանքաներու հետ եւ ուրիշ կայուածներու հետ: Ասոնք կը կազմեն տեսակ մը Թրէյտ Իւնիթնական կապիտալիզմ: Ամերիկեան Թրէյտ Իւնիթներու կանխիկ դրամական գումարէն զատ՝ հաշուըրուած է մօտաւորապէս 2 միլիառ տոլար՝ ամբողջ կայուածներու եւ պիզնէսի գործառնութեանց արժէքը:

Ինչպէս կը տեսնենք, մարդիկը դրամ կուտակելու մասին կը մտածեն աւելի՛ քան թէ անկազմակերպ բանուորները կազմակերպելու եւ զանոնք դաստիարակելու մասին: Միայն Թրէյտ Իւնիթներու Համաշխարհային Ֆէտէրատիոնն էր որ իր յառաջդիմական տարրերով այդ ուղղութեամբ յառաջ կը տանին կազմակերպչական աշխատանքներ, որոնք, սակայն, ամէն տեղ կը հանդիպին աջակողմեան սոցիալ դեմոկրատներու հակապրոպականտին:

ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԲԻՒՐՈՎՐԱՍԻԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Թրէյտ Իւնիթնի դեմոկրատի համար տասնեակ տարիներով պայքար մղուած է աշխատաւորական շարժման մէջ: Թրէյտ Իւնիթները, ինչպէս սոցիալ դեմոկրատ կուսակցութիւնները բոյններ եղեր են գործատէրերու սիրական բարագիտ եւ բիւրոկրատ առաջնորդներու համար, որոնք իրենց պաշտօնական դիրքը սխառմամտիկ կերպով գործածեր են իւնիթնի անդամ բանուորներու դասակարգային գիտակցութիւնը թմբած պահելու համար: Հարիւրաւոր, եթէ չըսենք հազարաւոր գործադուլներ եւ ուրիշ պայքարներ, խոշոր վնասներով կորուստի մատնուած են պարզ անոր համար, որ բանուորներուն արգիլուած է իրենց կամքով եւ ուժերով իրենց պայքարը տանիլ ցանկալի ուղեգիծով:

Պատեհապաշտներ, պատեհութեան բերումով կամ խարդախութեամբ, կեղծիքով կամ ամբոխավարութեամբ երբ տեղաւորուած են բանուորական միութեանց պաշտօնատան մէջ, զարձեր են ցկեանս բռնապետներ եւ սովորաբար գործատէրերու ու պետութեան օժանդակութեամբ պահած են իրենց պաշտօնը մինչեւ որ ծերանալով զըլորուած են իրենց գերեզմանին մէջ: Բիւրոկրատին էր իշխողը Թրէյտ Իւնիթներուն մէջ, բայց ոչ դեմոկրատին: Այդպէս էր գրութիւնը Գերմանիոյ, Անգլիոյ եւ ուրիշ երկիրներու մէջ: Բայց ո՛չ մէկ տեղ բիւրոկրատական ախար բանուորական միութեանց մէջ այնքան խոր վէրքեր չէ բացեր, որքան Միացեալ Նահանգներու մէջ, ուր Գամպլըբներն ու Կրիմները թագաւորեցին 70 տարի, աւազակներու եւ գողերու պաշտպանութեան տակ:

Ընթերցողին զաղափար մը տալու համար այստեղ կ'արժէ յիշատակել Միացեալ Նահանգներու մէջ բանուորական միութեանց առաջնորդներու տարեթուականները: Հէրրիսըն (երկաթուղային եղբայրութեան նախագահ) 70 հազար տոլար: Ճան Լուիզ (Աժխահանքի բանուորներ) 50 հազար տոլար: Բէք (կառապաններու միութիւն) 50 հազար տոլար: Մկղանըլտ (պողպատի բանուորներ) 40 հազար տոլար: Մինի (AFL եւ CIO-ի նախագահ) 50 հազար տոլար: Մէրէչի

(չինութեան աշխատաւորներ) 30 հազար տուար: Գուրինսկի (տիկնանց հազուստեղէնի բանուորներ) 23 հազար չորս հարիւր տուար: Այս թուականներուն վրայ կ'աւելնան ճանապարհորդական եւ այլ լիսուս ծախսերը: Ասոնց քով վեր առնենք բրիտանական թրէյտ Իւնիլըններու պետերու տարեթուականը, որոնք անհամեմատ աւելի ցած են: Թիուսըն (Թրէյտ Իւնիլըն գոնկրէտի ընդհանուր քարտուղար) կը ստանայ տարեկան 5,600 տուար: Թիֆֆին (փոխադրական միութիւն) 4,760 տուար: Քէմպէլ (երկաթուղային բանուորներու միութիւն) 4,800 տուար: Հորնըր (աճխահանքի բանուորներու միութիւն) 3,500 տուար: Ասոնց ճանապարհորդական եւ այլ ծախսերը կը տըրուին սահմանեալ չափանիշով, ո՛չ աւելի՝ ո՛չ պակաս: Այստեղ կը տեսնենք թէ Մ. Նահանգներու բանուորական միութեանց բարձրատիճան պաշտօնեաները մէկ մէկ թաղաւորներ են, որոնք կոչուած են պետական պաշտպանութեան ներքեւ ցկեանս թաղաւորել:

Բիւրոկրատիզմի շարքը ներկայ շրջանին, մասնաւորապէս վտանգաւոր է բանուորներուն համար մի քանի նախնական պատճառներով. (ա) — Կապիտալիստական բոլոր երկիրներու մէջ այժմու տեսակի աշխատաւորական միութեանց մեծ աճումը բիւրոկրատներուն աւելի իշխանութիւն կուտայ գործադրելու իրենց հակաբանուորական քաղաքականութիւնը. (բ) — Թրէյտ Իւնիլըններու մէջ բիւրոկրատական տիրապետութիւնը եղած է աջակողմեան սոցիալ դեմոկրատական քաղաքականութեան հիմնական մասը, որովհետեւ միայն այդ միջոցով է որ կարելի կ'ըլլայ շղթայել բանուորներու մարտականութիւնը եւ բանուորական միութիւնները անդամաւուծել դասակարգային համերաշխութեան քաղաքականութեամբ. (գ) — Թրէյտ Իւնիլըններու այսքան մեծ եւ ուժգին թափով աճման հետ երբ աշխարհի քաղաքական դրութիւնն ալ ձգտեալ վիճակ կը ստանայ, այն ատեն աւելի անհրաժեշտ կը դառնայ որ գործատէրերն ու կառավարութիւնը առաջուրնէ աւելի իրենց հսկողութիւնը կեդրոնացնեն աշխատաւորական շարժման վրայ՝ աշխատաւորական տեղակալներու եւ Թրէյտ Իւնիլըններու պահպանողական բիւրոկրատներուն միջոցով: Այսօր, շատ մը պարագաներու տակ, ռազմասէր բանուորական առաջնորդներ, մասնաւորապէս Մ. Նահանգներու մէջ Պետական Պաշտօնատան գործակալներն եղած են: Այս մարդիկը բանուորներու շնորհիւ հասած են իրենց բարձր պաշտօնին եւ բանուորներու տուած դրամներով կը ստանան մեծկակ ամսաթոշակը, բայց փոխանակ բանուոր դասակարգին ծառայելու, գործնականին մէջ կը ծառայեն տիրող դասակարգին: Ասոր մէջ ո՛րքան յանցաւոր են բիւրոկրատները, նոյնքան մեղաւոր են բանուորները՝ որոնք չեն գիտակցիր իրենց իրաւունքին եւ ուժին: Բռնապետները չեն ծնիր, կը պատրաստուին.

այո՛, անոնք կը պատրաստուին ժողովուրդի ձեռքով, այն ժողովուրդին՝ որ ոչխարի համակերպութեամբ կը քալէ եւ կ'անդիտանայ այն ճշմարտութիւնը՝ որ ինք անպարտելի ուժ ունի: — «Իողացէ՛ք բռնակալներ, երբ մարդ մէկ անգամէն ձեռք կը քաշէ իր գլխէն, տէրը կը դառնայ ուրիշի մը գլխուն»: Երբ ճնշուած ժողովուրդները Մաքիավէլիի այս կոչը կրկնեն, այն ատեն բռնակալները նստաստակ կ'ըլլան եւ բիւրոկրատները կ'անհետանան: Տիրող դասակարգը ահա այդ սարսափի թելադրանքովն է որ սխտէմատիկ աշխատանք կը տանի իր գործակալներու միջոցով:

Այստեղ պէտք է ըսել որ սոցիալիստական եւ ժողովրդական դեմոկրատի երկիրներու մէջ եւս բանուորական միութիւնները ազատ չեն բիւրոկրատական ձգտումով առաջնորդուող մարդոցմէն: Լենին, մասնաւորապէս երբեք չյոգնեցաւ կուուելու անոնց դէմ:

14. — ԹՐԷՅՏ ԻՆՆԻՐՆԻՉՄԸ ԿԸ ՀԱԿԻ ԴԵՊԻ ՁԱՆ

Վերջին 40 տարիներու ընթացքին, աշխարհի բանուորներուն համար ամենէն աչքառու եւ գերազոյն կարեւորութիւն ունեցող իրողութիւն մը երեւան եկաւ ու մտաւ իր զարգացման ուղին. ատիկա վայրէջքն է սոցիալ դեմոկրատիային, որ հանդիսացած էր որպէս առաջնորդող ուժ՝ միջազգային աշխատաւորական շարժումին: Այս շրջանին, առաջնորդութեան ծանրութեան կեդրոնը կը շարժի արագութեամբ դէպի ձախ, դէպի կոմունիստները եւ դէպի ուրիշ մարտական տարրերը: Սոյն հիմնական գիծը բացորոշ կերպով կ'երեւի թէ՛ քաղաքական եւ թէ՛ Թրէյտ Իւնիլընական գաշտերուն մէջ: Նախքան համաշխարհային Ա. Պատերազմը եւ Ռուսական Յեղափոխութիւնը, աջակողմեան սոցիալ դեմոկրատները կապիտալիստական երկիրներու մէջ բանուորներու քաղաքական եւ արդիւնաբերական կազմակերպութեանց առաջնորդներն էին, բայց անկէ յետոյ՝ անոնք իրենց ռազմավարական դիրքը կորսնցուցին, եւ համաշխարհային աշխատաւորութեան առաջնորդութիւնը անդիմադրելիօրէն անցաւ յեղափոխական ձեռքերու՝ զխաւորապէս կոմունիստներու ձեռքերուն մէջ: Այս իրողութիւնը կ'ապացուցուի անով, որ Թրէյտ Իւնիլըններու Համաշխարհային Ֆէտէրատիոնը (ԹԵՀՖ) վերջերս յայտնաբերեց իր թուական ուժի գերազանցութիւնը, իր անդամներու թիւը հասաւ 88 միլիոն 600 հազարի, մինչդեռ Թրէյտ Իւնիլըններու Ֆէտէրատիոնի Ինտէրնացիոնալ Գոնկրէսը (ԹԵՅԻԳ) հազիւ թէ իր շրջանակին մէջ կրցաւ պահել 5A միլիոն անդամներ:

ԱԶԱԿՈՂՄԵԱՆ ԹՐԷՅՏ ԻՆՆԻՇՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ինչպէս կապիտալիստական երկիրներու դիմաց կեցեր էին սոցիալիստական եւ ժողովրդական դեմոկրատի երկիրները, նոյնպէս ալ աջակողմեան սոցիալիստ դեմոկրատի առաջնորդութեան տակ գտնուող Թրէյտ Իւնիւրնները կեցեր էին Մարքսիզմ-Լենինիզմի սկզբունքներու հետեւողական գիծի վրայ ընթացող Թրէյտ Իւնիւրնները: Ասիկա կը նշանակէ որ առաջիններուն ճակատագիրը կապուած է կապիտալիստական սիստէմի ճակատագրին հետ: Կապիտալիզմը երբ տագնապի մատնուի, սոցիալ դեմոկրատիան ալ կը մատնուի տագնապի, նոյն տագնապին կը մատնուին նաեւ անոր կապուած Թրէյտ Իւնիւրնները:

Ժողովրդական դեմոկրատի եւ սոցիալիզմի երկիրները մահացու հարուած տուին ո՛չ միայն կապիտալիստական սիստէմին, այլեւ սոցիալ դեմոկրատիային, եւ անոր հովանաւորած Թրէյտ Իւնիւրնիզմին: Մեծ Թիւով պարկեշտ գործաւորներ հետզհետէ դուրս կուգան այդ նեխած իւնիւրններէն ու կը միանան ձախակողմեան իւնիւրններուն: Այսօր, 65 միլիոն կազմակերպուած բանուորներ դուրս կը մնան ԹեմիՊ-ի հսկողութենէն: Նոյնպէս խոշոր կորուստ է իմպերիալիստներու իշխանութիւնը հարուածող գաղութային սիստէմի քայքայումը: Գաղութները, իմպերիալիզմի շրջանը սկսելէն ի վեր, համաշխարհային կապիտալիզմի սիւներն եղած են, ատոր համար անոնց մէջ ազդային ազատագրական յեղափոխութիւնը կապիտալիստական սիստէմին ամենամեծ սպառնալիքն է դարձեր այժմ: Այդ սպառնալիքը ուղղուած է նաեւ սոցիալ դեմոկրատիային: Սոցիալ դեմոկրատները, իրենց երկար ժամանակուայ պրո-իմպերիալիստական օրիէնտացիայի հետեւողութեամբ, երբեք չաշխատեցան գաղութային եւ կիսագաղութային այդ մեծ շրջաններուն մէջ Թրէյտ Իւնիւրններ հաստատել, վախճալով որ ատանկով վտանգ կը ստեղծեն իրենց իմպերիալիստ տէրերուն: Այդ շրջաններու կորուստով իրենք՝ սոցիալ դեմոկրատները, շատ քիչ կորուստի դժուարութիւն ունեցան: Իրենց իրական կորուստը այն եղաւ որ այդ շրջաններուն մէջ կապիտալիստական սիստէմը կը տկարանար մէկ կողմէն, իսկ միւս կողմէն կ'ուժեղանային ձախակողմեան Թրէյտ Իւնիւրններն ու քաղաքական կուսակցութիւնները: Ներկայիս, աջակողմեանները կատաղի ջանքեր կը թափեն հիմնաւորելու իրենց ուժերը Ասիոյ, Լատին Ամերիկայի եւ Աֆրիկէի մէջ. բայց կարելի չէ ամբակուռ աշխատաւորական շարժում մը կազմակերպել գործատէրերու հոգածութեան հիմունքով եւ իմպերիալիստական կառավարութեանց քաղաքական ուղեգծի հետեւողականութեամբ: Աշխարհի գաղութային եւ

կիսագաղութային այդ շրջանները իրաւապէս կոմունիստական եւ ուրիշ ձախակողմեան կուսակցութեանց ու Թրէյտ Իւնիւրններու երկրամասերն են. անոնց գործունէութեան դաշտերը:

Աջակողմեան սոցիալ դեմոկրատիան ո՛չ միայն չքացաւ սոցիալիստական օրիէնտացիայի հետեւող երկիրներու մէջ եւ չղթալուցաւ գաղութային աշխարհի մէջ, այլեւ լրջօրէն տկարացաւ իր սեփական հայրենիքի հողերուն՝ եւրոպական կապիտալիստական երկիրներուն մէջ: Այս իրողութիւնը մասնաւորապէս ցցուն կերպով կ'երեւի այն երկիրներուն մէջ ուր կապիտալիստական տագնապը ամենէն շատ ազդու է: Սոյն տկարացնող ուղին կարելի չէ յետաշրջել այդ երկիրներուն Միացեալ Նահանգներու կողմէն տրուած հսկայ նպաստներով, որոնցմէ մէկ մասն ալ կը տրուի սոցիալ դեմոկրատներուն: Սոցիալ դեմոկրատիան նոյնպէս չի կրնար իր իւնիւրններով ու կուսակցութիւններով այդ երկիրներուն մէջ հիմնել ամբակազմ կազմակերպութիւն մը որ կարողանայ արգիլել սոցիալիզմի անդիմադրելի ու յարատեւ յառաջխաղացքը:

Ֆրանսայի եւ Իտալիոյ մէջ կոմունիստները եւ ձախակողմեան սոցիալ դեմոկրատները որոշապէս չահած են Թրէյտ Իւնիւրններու եւ բանուոր դասակարգի մեծամասնութեան քաղաքական առաջնորդութիւնը: Այս առթիւ Վուտթօ Վէյթ կ'ըսէ. — «Ֆրանսայի Սոցիալիստները բանուոր դասակարգի համակրութիւնը չեն վայելեր այնքան՝ որքան կը վայելէին նախքան պատերազմը... Այժմ քաղաքային ծառայողները, ուսուցիչները եւ փրոֆեսիոնալ դասակարգի ստորին խաւի պատկանողներն են որ Սոցիալիստ կուսակցութեան յարած են: Իսկ Իտալիոյ մէջ կուսակցութեան աջ թեւը երբեք բանուոր դասակարգի համակրութիւնը չի վայելեր»: Այսպէս եղած է կորուստը, որովհետեւ այդ երկիրները ամենէն աւելի ծանր աստիճանով ենթարկուեցան կապիտալիստական տագնապին, եւ աջակողմեան Սոցիալ Դեմոկրատները երբեք աշխատանք չտարին ճնշուած բանուորութեան վիճակը բարելաւելու ճամբուն մէջ: Արեւմտեան Գերմանիոյ մէջ նոյնպէս հակառակ սոցիալ դեմոկրատներու եւ դաշնակից զինուորական իշխանութեանց միացեալ ջանքերուն, ընդդիմադրութեան հոսանքը իր մարտական ոգիով մնաց գերման բանուորներու մէջ. բան մը, որ պարզուեցաւ մի քանի հսկայ գործադուլներով: Նոյն երեւոյթը կը տեսնենք Մեծն Բրիտանիոյ եւ ուրիշ երկիրներու՝ մինչեւ իսկ ձարոնի մէջ. ամենուրեք բանուորները կը հակին ձախ օրիանդացիայի կողմը: Աջակողմեան Սոցիալ Դեմոկրատիայի ուժեղ ամբողջները կը մնան այն երկիրները, որոնք այնքան սաստիկ կերպով ենթարկուած չեն կապիտալիզմի ընդհանուր տագնապին: Այսպիսի երկիրներ են Սքանտինաւեան, բայց ամենէն վերելը՝ Միացեալ Նա-

հանգնեցրը: Այս վերջինը՝ Մ. Նահանգները եւ իր դրացին՝ Գանատան, ունին Մինիի Թրէյտ Իւնիւրն բիւրօկրասին, որուն ներցուկներն են մասսայական Թրէյտ Իւնիւրնները եւ աշխարհի ամենէն հարուստ եւ ամենէն պահպանողական Սոցիալ Դեմոկրատները: Իսկ ամենուն համար նպաստաւոր հանգամանքն այն էր որ Ամերիկան պատերազմին մէջ մտաւ ուշ ատեն եւ պատերազմէն դուրս եկաւ որպէս յաղթական հրամանատար՝ առանց ծանր կորուստի, եւ անմիջապէս սկսաւ պաղ պատերազմը. երկրին մէջ հսկայ յատկացումներով զարգացուց պատերազմական ճարտարարուեստը: Առատ զործ, առատ զրամ: Միլիոնատէրերը միլիառատէր զարձան եւ բազմացան միլիոնատէրերը: Ֆրեզնոյի նման քաղաքի մը մէջ 38 հայ միլիոնատէրեր երեւան եկան. աներեւակայելի, անհաւատալի բան: Ամէն մարդ հեւ ի հեւ սկըսաւ վազել տոլարներու ետեւ: Խելագար վազք մը: Բայց երեւութական այս ճոխութեան ու առատութեան տակ զժգոհութեան հոսանքը կ'ուռճանայ հետզհետէ, որովհետեւ ամերիկեան զրամը առատանալով կորսնցուցեր էր իր զնոզական արժէքի երկու երրորդը, որու հետեւանքով ծայր աստիճան բարձրացեր են կենսամթերքներու եւ ապրանքներու գիները: Բանուոր մը, եքէ գործ ունի, շարաթական աշխատավարձը կը ստանայ միջին հաշուով 100 տոլար, բայց անոր ըստացածը իրապէս 33 տոլար է: Ժողովրդական կապիտալիզմ, կը դռնին բուրժուա տնտեսագէտները, բայց եղածը ժողովրդական պատրաից ունայնամտութեան պատկերացումն է: Վերելքի այն սանդուխը, որուն վրայ այսօր արագութեամբ կը բարձրանայ Ամերիկեան կապիտալիզմը, գրուած է սարսափելի խորունկ անդունդի մը վրայ: Ան որքան բարձրանայ, նոյնքան ահաւոր պիտի ըլլայ անոր թաւալընոր անկումը:

ՈՐԱԿԱՒՈՐ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՏԿԱՐԱՑՈՂ ԳԻՐՔԸ

Համաշխարհային կապիտալիզմի ընդհանուր տագնապի խորացումը իր կազմալուծող ազդեցութիւնը գործազրկելով Սոցիալ Դեմոկրատիայի, ինչպէս նաեւ ԹեմիՊ-ի վրայ, նոյն ատեն կը տկարացնէ որակաւոր բանուորներու դերը արդիւնաբերութեան եւ Թրէյտ Իւնիւրնի շարժման մէջ: Աւանդականօրէն ավակողմեան Սոցիալ Դեմոկրատները իրենց զիրքը հաստատած են աշխատաւորական շարժման մէջ ամենէն պահպանողական այս տարրերուն վրայ: Որակաւոր բանուորները, ինչպէս Լենին կը խօսի անոնց մասին, «նեղմիտ, անձնասէր, քարսիրտ, կծծի, ազահ եւ մանր բուրժուական տարրեր են, որոնք կազմեր են աշխատաւորական արիստոկրատիւն. անոնք իմպերիալիստական մտածողութիւն ունին, իմպերիալիստներէն կաշառ-

ուած եւ ապահանուած են եւ այդպիսով գլխաւոր յենարանը զարձեր են Երկրորդ Ինտերնացիոնալին:

Բայց որակաւոր բանուորները Սոցիալ Դեմոկրատիայի համար նպաստաւոր իրենց ամբուլթիւնները հետզհետէ կը կորսնցնեն: Ասոր գլխաւոր պատճառն այն է, որ անոնք արդիւնաբերութեան մէջ, մասնաւորապէս քրքաւացած (մենակալութեան վերածուած) արդիւնաբերութեանց մէջ մեծ չափով կորսնցուցեր են իրենց տիրապետող դիրքը: Անցած է այն ժամանակը, երբ ճարտարարուեստի գործող ուժը կը բաղկանար երկու խաւերէ. առաջինը բարձրորակ մեքենագէտներն էին, որոնք կեցեր էին ամենավերին սանդխամասին վրայ, իսկ միւսները՝ անորակ հասարակ բանուորներ էին, որոնք կեցեր էին սանդուխի ոտքերուն քով: Այժմ, տեխնիկայի զարգացումով, որակաւոր բանուորներու գործը պարզացուած ճիւղերու բաժնուած, յանձնուած էր հասարակ բանուորներու, որոնք կէս-որակաւոր բանուորներ զարձեր էին եւ մեքենաներ կը վարէին ձեռքի խաղալիքներու պէս: Համաձայն Մ. Նահանգներու կառավարական վիճակագրութեան՝ 1910-1950 տարիներուն, մինչ առու որակաւոր բանուորներու թիւը 14 առ հարիւրէն բարձրացաւ 18 առ հարիւրի, կէս որակաւորներու թիւը 10 առ հարիւրէն բարձրացան 25 առ հարիւրի. իսկ միւս կողմէն՝ անորակ բանուորներու թիւը 18 առ հարիւրէն պակսեցաւ եւ իջաւ 5 առ հարիւրի: Որակաւոր բանուորները բոլորովին չանհետացան, բայց անոնք կորսնցուցին նախապէս ունեցած իրենց մենատիրական դիրքը: Այս իրողութեան հետ նկատի առնելու ենք նաեւ արդիւնաբերական ճիւղերու մեքենայացումը: Այսպիսով, որակաւոր բանուորները այլեւս Սոցիալ Դեմոկրատներու պահեստի բանակէն կը բաժնուին ու կը մտնեն ձախ թելի ճամբան:

Երկրորդ պատճառը այն է, որ որակաւոր բանուորներու դիրքը երբ կը նուազի արդիւնաբերութեան մէջ, նոյն ատեն կը նուազի նաեւ անոնց աշխատավարձը: Անոնց եւ անորակ բանուորներու աշխատավարձերու միջեւ եղած լայն միջոցը հետզհետէ կը նեղնայ: Այս իրողութիւնը բացայայտօրէն կը պարզուի Մ. Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ, գերմանիոյ, Ֆրանսայի եւ ուրիշ տեղերու մէջ: Մ. Նահանգներու մէջ, օրինակի համար, 1907-ին որակաւոր բանուորներու աշխատավարձը անորակ բանուորներու աշխատավարձէն երկու անգամ բարձր էր: Եթէ անորակ բանուորը շարաթը կը ստանար 20 տոլար, որակաւոր բանուորը կը ստանար շարաթական 40 տոլար: 1947-ին, անորակ բանուորին աշխատավարձը բարձրացաւ շարաթական 30 տոլարի, իսկ որակաւոր բանուորինը՝ փոխանակ 60 տոլար ըլլալու, եղաւ շարաթական 45 տոլար. այդ կը նշանակէ ո՛չ թէ երկու անգամի տարբերութիւն՝ այլ միայն մէկ ու կէս անգամի տարբերու-

թիւն: Իսկ կապիտալիստական ուրիշ առաջաւոր երկիրներու մէջ՝ ինչպէս Մեծն Բրիտանիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ, այդ տարբերութիւնը աւելի նուազ էր, 17-էն առ առաւելն 20 ան հարիւր միայն:

Որակաւոր բանուորները, բնականաբար, դժգոհ են այս իրադարձութենէն, բայց զանդատելէ զատ ոչինչ կրնան ընել: Կապիտալիստական սխառտէր իր ծոցէն կը ծնի շատ մը հակասութիւններ, որոնք ի վերջոյ՝ կը սպառնան իր գոյութեան: Եւ այս հակասութիւնը մէկն է անոնցմէ: Սոյն հակասութեան հետեւանքով աջակողմեան սոցիալ դեմոկրատիան կը տուժէ, որովհետեւ դժգոհ որակաւոր բանուորները չունենալով պայքարելու որեւէ պատեհութիւն՝ ստիպուած կը թեքուին դէպի ձախ:

Երրորդ ճամբան, ուրկէ որակաւոր բանուորները կը հեռանան Սոցիալ Դեմոկրատներէն այն է, որ անոնց ազդեցութիւնը կը տկարանայ նաեւ թրէյտ Իւնիթնի շարժման մէջ: Կէս դար առաջ, որակաւոր բանուորները աշխատաւորական շարժման բոլոր ճիւղերուն մէջ տիրապետող տարրը կը ներկայացնէին: Արդարեւ այդ ատենները, անոնք կապիտալիստական երկիրներու մէջ իրենց նախաձեռնութեամբ (հարցը տարբեր էր զազութային երկրամասերուն մէջ) թրէյտ Իւնիթները հիմնականապէս որակաւոր բանուորներու կազմակերպութիւններ էին: Անոնց առաջնորդները գիտակցաբար եւ սինիքորէն, գործատէրերու շնորհին արժանանալով, համաձայնութիւններ կ'ըստորագրէին ի նպաստ որակաւոր բանուորներուն եւ ի միասն անկազմակերպ մասսաներուն: Բայց այդ դրութիւնը որեւէ արդիւնաբերական առաջաւոր երկրի մէջ նոյնը չէ այժմ: Վերջին տասնեակ տարիներուն երբ արդիւնաբերական իւնիթնիզմը հրապարակ իջաւ եւ կէս որակաւոր եւ անորակ բանուորները (ինչպէս նաեւ ճերմակ օձիքաւոր բանուորները) մտան իւնիթներու մէջ, ծանրութեան կեդրոնը բացայայտօրէն որակաւոր բանուորներէն փոխադրուեցաւ կէս որակաւորներու մէջ: Ասանկով աշխատաւորական միութեան շարժումը արհեստաւորական ճակատէն անցաւ դասակարգային ճակատին վրայ — յառաջդիմութիւն մը, որ ազիտարներ էր Երկրորդ Ինտերնացիոնալին եւ անոր հովանաւորած Իւնիթներու բիւրոկրատի շահերուն:

15. — ԹԻԷՅՑ ԻՒՆԻԸՆԻԶՄԻ ՍՈՅՒԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

Ամբողջ աշխարհի բանուորութիւնը այժմ ճակատած է քաղաքական ու անտեսական ամենէն հրատապ հարցերուն, որպիսիք են խաղաղութեան եւ աթոմական պատերազմի համար պայքարը, Փաշիզմի սպառնալիքին դէմ դեմոկրատի համար պայքարը. հետզհետէ

աստիկացող կապիտալիստական շահագործման դէմ թշուառացած մասսաներու ապրուստի մակարդակը բարւոքելու պայքարը, մենատիրական իմպերիալիզմի դէմ զազութային ժողովուրդներու ազատութեան պայքարը, եւ Վոլ Ստրիտի աշխարհակալութեան սպառնալիքին դէմ բոլոր ժողովուրդներու ազգային անկախութեան պայքարը:

Այս նախնական պայքարներուն կը հետեւի ամենամեծ ու վըճուական պայքարը — պայքար կապիտալիզմի դէմ՝ Սոցիալիզմի յաղթանակին համար: Վերջինը, ներկայ ժամանակաշրջանին կեդրոնական միակ քաղաքական հարցն է, որ օրէ օր աւելի եւ աւելի տիրական կը դառնայ Սոցիալիզմի համար նպաստաւոր պայմաններու գոյատուրին զուգընթաց: Համաշխարհային Սոցիալիզմը անխուսափելի է: Անիկա այն մեծ նպատակն է, որուն ձգտած են շարունակ՝ աշխարհի բանուորական զանգուածները հակառակ սոցիալ դեմոկրատական յետադիմական առաջնորդներուն, որոնք ներելի ու աններելի միջոցներով աշխատած են ու կ'աշխատին զանոնք ետ կեցնել:

Աշխարհի բանուորները կը մղուին դէպի Սոցիալիզմ՝ երկու հիմնական ու ստիպողական դրդումներով. առաջին, որովհետեւ անոնք այլեւս չեն կրնար ապրիլ մեռնելու վրայ եզող կապիտալիստական սխառտէր յառաջացուցած վատթարացնող պայմաններու տակ. երկրորդ՝ որովհետեւ անոնք Մարքսիզմ-Լենինիզմի լոյսով կը տեսնեն թէ ինչպէս աշխարհի բնակչութեան մէկ երրորդը Սոցիալիզմին փարած՝ արտակարգ յաջողութիւններ ապահոված է եւ ուղղուած է իր գերազոյն նպատակակէտին՝ Կոմունիզմին: Անոնք այդ պայժատիրականութեան ի տես՝ ամբողջապէս յափշտակուած՝ այլեւս չեն կրնար հանդարտ մնալ ու լսել ժահրահոտ զանկերու քարոզները:

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐՈՒ ԹՇՈՒԱՌԱՑՈՒՄԸ

Կապիտալիստական սխառտէրի ներքեւ, բանուորներու արտադրողական կարողութիւնը հսկայական չափով բարձրացած է, բայց ինչ ըսել որ լեռնակուտակ արտադրութիւնը արտադրողներու սեփականութիւնը չէ, այլ սեփականութիւնն է այնպիսի մարդոց, որոնք այդ արտադրողական աշխատանքին մէջ բաժին չունին, բայց կը շահագործեն ուրիշներու աշխատանքը: Պատմականօրէն կապիտալիզմը շողիի ուժը, ելիքտրականութիւնը, մեքենականութիւնը եւ ընդհանուր ճարտարարուեստականացումը աշխարհի բնակչութեան մէկ աննշան մասին շահերուն ծառայեցուցեր է: Ժողովրդական մասսաները տակաւին պէտք ունին նախնական կարիքներու: Փարիզի նման կապիտալիստական մեծ քաղաք մը, օրինակի համար, երբ մենք քննութեան առնենք, պիտի տեսնենք որ տուններու կէսէն աւելին, իրենց

մասնաւոր արտաքնոցները չունին, զրեթէ երեք շորրորդը առանց բաղնեսենակի են, եւ մէկ շորրորդը նոյնիսկ վազուն ջուր չունին: Իսկ եթէ նկատի առնենք գաղութային եւ կիսագաղութային երկիրները, որոնց մէջ կ'ապրի աշխարհի բնակչութեան 70 տոկոսը, պիտի տեսնենք որ անոնց միայն 5 տոկոսը ճարտարարուեստականացեր է: Կապիտալիզմը չէ կրցեր կամ չէ ուզեր մասսայական արտադրութեան անհաշիւ կարողականութիւնները տրամադրել ժողովրդական զանդուածներու գործածութեան համար: Այս գործերը Սոցիալիզմն է, որ պէտք է ընէ:

Ինչպէս Մարքսը հարիւր տարի առաջ շեշտեր է, կապիտալիստական սխտէմը, յաւելեալ արժէքի կողոպուտի վրայ հիմնուած՝ անտեղիտալի սկզբունքով կը գործէ մի քանի կապիտալիստներու հարստացման եւ բանուորական հսկայ մասսաներու թշուառացման համար: Այդ թուականէն սազին, աշխարհի տնտեսութեան ամբողջ պատմութիւնը կապիտալիստական տիրապետութեան տակ, եկած է հաստատել Մարքսի հիմնական վերլուծման անառարկելի ճշմարտութիւնը: Ահա թէ ինչո՞ւ այսօր, Մարքսիզմը աշխարհի ճակատագիրը վրձնող կարողական ազդակ մը դարձեր է:

Գալով Ափրիկէի, Ասիոյ, Լատին Ամերիկայի եւ ուրիշ գաղութային եւ կիսագաղութային շրջաններու բնակչութեանց, որոնք մարդկային սեռի երկու երրորդը կը կազմեն, կապիտալիստական սխտէմը անոնց համար անողոք աւերածութեան դուռ բացեր է, մասնաւորապէս տասնիններորդ դարու վերջին քառորդէն, երբ իմպերիալիզմը սկսաւ իր յառաջխաղացքը: Անոնց նախնական արդիւնաբերութիւնները փճացան, անոնց կապիտալիստական գոյն առած տնտեսութիւնը անդամալուծուեցաւ, անոնց երկիրներու անկախութիւնը կործանեցաւ եւ բանուոր դասակարգի ապրուստի մակարդակը քուեցաւ սովամահութեան աստիճանին վրայ: Այդ է պատճառը, որ այդ ընդարձակ երկրամասերու բնակչութիւնը լեցուած է յեղափոխական ոգիով:

Եւրոպայի զլխաւոր կապիտալիստական երկիրներու մէջ, մինչեւ Համաշխարհային Ա. Պատերազմը, օրավարձքի գիծով՝ մասնաւորապէս որակաւոր բանուորները մասամբ օգտուեցան, որովհետեւ իմպերիալիստական պետութիւնները գաղութային ժողովուրդները շարաշար շահագործելէ վերջ առատ փշրանքներ կը նետէին աջ ու ձախ: Բայց այդ պատերազմէն վերջ՝ 1929-1933-ի աւերիչ տնտեսական տաղնապը եկաւ կտրատել բանուորներու ապրուստի մակարդակը: 1936-ին Քուվինսկի յայտարարեց. — «Այսօր, Անգլիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ աշխատանքի պայմանները շատ աւելի վատ են քան ինչ որ էր 40 տարի առաջ: Բանուորներու զնոդութեան կարո-

ղութիւնը աւելի նուազեր է, մինչ գործի ուժգնութիւնը անհամեմատ աւելի բարձրացեր է»:

Ֆաշիզմը եւ Երկրորդ Համաշխարհային, պատերազմը աւելի ուժգին հարուած տուաւ Եւրոպայի բանուորներու ապրուստի մակարդակին: Նոյն հարուածը կրեցին Ճարոնի եւ կապիտալիստական երկիրներու բանուորները. զրեթէ բոլորն ալ նոյն դրութեան ենթարկուած են: Ծանր հարկեր, սղութիւն եւ ցած աշխատավարձք, ասոնք են կապիտալիստական երկիրներու մէջ բանուորներու բաժինները: Այս դրութեան պտուղներն են Ֆրանսայի, Իտալիոյ, Գերմանիոյ եւ Մեծն Բրիտանիոյ մեծ գործազուլները, որոնք ճամբայ կը բանան Սոցիալիզմին:

Ամերիկեան գործաւորները, որոնք աշխատաւորական շարժման արխտոկրասին կը ներկայացնեն կապիտալիստական սխտէմի տակ աւելի բարձր ապրուստի մակարդակի վրայ են կանգնած: Մ. Նահանգներու աշխատաւորական մասնաբաժնի վիճակագրութիւնը հետեւեալ պատկերը կուտայ մեզի, տոլարի հաշուով. Մ. Նահանգներու բանուորին տարեկան վաստակն է նուազագոյն՝ 1460 տոլար. Շուէտ՝ 780 տոլար, Մեծն Բրիտանիա՝ 775 տոլար, Տանիմարթա՝ 689 տոլար, Նորվեգիա՝ 590 տոլար, Պելճիզա՝ 582 տոլար, Իտալիա 235 տոլար: Ամերիկեան «բարձր» աշխատավարձքերը կապիտալիստական շնորհի արդիւնք չեն, այլ անոր համար են որ ամերիկեան գործատէրերը ամերիկեան բանուորներէն աւելի մեծ արտադրութիւն կը պահանջեն ու կը ստանան՝ գործի արագացման սխտէմով: Ամերիկեան բանուորը մեքենային հետ կը մրցի, անոր արդիւնաբերութեան մէջ ունեցած աշխատանքի կեանքը աւելի կարճ է:

Քառասուհինգ տարիքն անցնող բանուորին համար անկարելի է արդիւնաբերութեան մէջ գործ գտնել ու գործել: Գործնականին մէջ ամերիկեան բանուորները համեմատաբար աւելի զէչ կը վարձատրուին եթէ հաշուի առնենք անոնց արտադրած վիթխարի հարստութիւնը, եւ միւս կողմէն՝ ապրանքներու սղութիւնը: Շուէտի մէջ մէկ փառնտ կարագը 25 սէնթ է, Ամերիկայի մէջ մէկ փառնտ կարագը 85 սէնթ է. նոյն համեմատութեամբ են զրեթէ միւս կենսամթերքները: Հաշիւ եղած է որ հինգ հոգինոց ընտանիք մը Ամերիկայի մէջ առողջապահիկ բարուք կեանք մը ապրելու համար պէտք է ստանայ վեց հազար տոլար: Բայց ո՞վ նկատի կ'առնէ բանուորներու առողջապահական դրութիւնն ու բարուք կեանքը: Նիւ Եորքի մէջ, որ աշխարհի ամենահարուստ քաղաքն է, երկու միլիոն մարդիկ կ'ապրին անանկ յարկարաժիններու մէջ, որոնք 50 տարի առաջ քանդուելու էին, որպէս մարդկային բնակութեան անյարմար տեղեր: Իսկ ասոր վրայ երբ աւելցնենք թէ 400,000 ընտանիքներ կան որոնք նպաստի

վրայ են, այն ատեն պատկերը իրականութեան կը համապատասխանէ հարազատօրէն:

Ամերիկեան բանուոր դասակարգը նոյն պատմական փորձառութեան ճամբէն կը քալէ, ինչ ճամբով որ կը քալին բրիտանական, գերմանական ու ճարտնական բանուորները, որոնք օրէ օր կ'արթնան եւ կը պատրաստուին յեղափոխութեան:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԳՆԱՊԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ

Կապիտալիստական զարգացման ամբողջ ընթացքը իրերու բնականոն բերումով բանուորները կ'առաջնորդէ դէպի արմատականացում: Երկրորդ Համաշխարհային պատերազմէն յետոյ կապիտալիստական ընդհանուր տազնապը մեծ չափով խորացաւ: Այդ իրողութիւնը պարզուեցաւ երբ կապիտալիզմը Մոցլալիստական աշխարհին զիջեցաւ երկրագունդի հսկայական երկրամասը իր 900 միլիոն բնակչութեամբ, երբ իմպերիալիստական դադութարարութիւնը ենթարկուեցաւ յարաճուն քայքայումի, երբ աշխարհը բաժնուեցաւ տնտեսական երկու շուկաներու, որոնք կ'արդիւլէին կապիտալիստական ազատ առուտուրը, երբ աշխարհի կառավարութիւնները երկու իրարու անհաշտ ճակատ յարդարեցին եւ երբ կապիտալիստական պետութիւններու միջև յառաջացան առևտուրի եւ այլ թշնամական մրցակցութիւններ: Կապիտալիստական ընդհանուր տազնապը նոյնպէս աւելի ցցուն կերպով յայտնուեցաւ երբ կապիտալիստական երկիրներու մէջ բանուորներու վիճակը աւելի վատթարացաւ որովհետեւ ճնշումը սաստկացաւ անոնց սպորուտի մակարդակին վրայ, ճնշում՝ անոնց քաղաքացիական իրաւունքներու դէմ, անոնց աշխատատեղերու կազմակերպութեանց դէմ: Այս պարագան կապիտալիստական երկիրներու մէջ բանուոր դասակարգը կ'առաջնորդէ դէպի արմատական հոսանքը:

Ներկայիս, կապիտալիստական երկիրները սկսեք են արդիւնաբերական նոր վերելքի մը: Բայց ասիկա հիմնականօրէն սպառող շարժում մըն է, որ հիմնուած է անցնող պատերազմի վնասները դարմանելու եւ նոր պատերազմի մը պատրաստուելու ծրագիրին վրայ: Ընթացիկ այս ճոխութիւնը, սակայն, ժամանակաւոր է, անոր յաջորդելու է անտեսական սուր ճղնաժամ մը, որովհետեւ այժմ կապիտալիստական պետութիւնները վայրենաբար իրարու հետ կը մրցին պարսպաւորուած շուկաներու շուրջ: Անգործութիւնն արդէն լուրջ հարց է դարձեր դանազան երկիրներու մէջ, ներառեալ Մ. Նահանգներու մէջ, եւ ան կ'երթայ դէշէն յոռեղոյնին:

Տիրող մոնոպոլիստները շատ լաւ գիտեն որ իրենց կապիտալիստական սխտէժը արդէն կը մօտենայ կործանման եզրին. ատոր

համար անոնք յուսահատ ջանքերով ելքի ճամբայ մը կը փնտռեն աճող դժուարութիւնները վերցնելու համար: Եւ ահա հրապարակ իջաւ ամենարոյժ բժիշկ մը, անգլիացի անտեսագէտ մը՝ պարոն Մ. Քէյ-նէսը: Ի՞նչ է ասոր վարդապետութիւնը...: Ուժ տալ սպառողինման արշաւին եւ անգործները զբաղեցնող գործեր ստեղծել: Ամենէն առաջ եւ ամենէն աւելի Մ. Նահանգներն եղան Քէյնէսի վարդապետութեան հետեւողները: Անոնք սկսան սպառողինման աննախընթաց արշաւը, որուն համար պատրաստեցին պաղ պատերազմը: Տարեկան 40 երկիլիոն տոլարի յատկացում՝ սպառողինման մեքենային համար: Շինուեցան եւ դեռ կը շինուին հրացաններ, թնդանօթներ, ուժածիւղ օդանաւեր, ուղղամանաւեր, հրասայլեր (իրենք ալ գիտեն որ երբ աթոմական պատերազմը պայթի՝ այդ զէնքերը անգործածելի են) եւ բազմապիսի զէնքեր, որոնց համար հսկայական ամբարանոցներ կը կառուցուին անդադար: Եւ տակաւին այդ ալ բաւական չէ, անոնք վախնալով որ այս աշխարհը կը կորսնցնեն օր մը, այժմ կը փորձեն փոխադրուել ուրիշ մոլորակի մը՝ Հրատի մէջ: Անոնց համար առաջին կայանը Լուսինն է, Լուսինէն պիտի անցնին դէպի Հրատը: Բայց այս երազային ծրագիրին ցաւալի կողմն այն է, որ կոմունիստները իրենցմէ առաջ դուցէ Հրատի մէջ տեղաւորուին: Ուրեմն սարգ է որ այս երկրագունդի մէջ սկսուած կռիւը այս երկրագունդին վրայ պիտի վերջանայ մէկ կամ միւս կողմի յաղթութեամբ: Իսկ թէ ի՞նչ է նոր գործեր ստեղծելու գիծը...: Ահա կը շինուին նոր պողոտաներ, կը լայնցուին հինները, կը կառուցուին հեղեղատներն արդիւրոյ ամբարտակներ, կամուրջներ, հասարակական հսկայ շէնքեր, արուեստական լիճեր, զբօսայայրեր եւ քսան ոտք խորութեամբ ընդլայտակայ սպաստանարաններ՝ աթոմական պատերազմի պահուն «ժողովուրդը» պաշտպանելու համար (ժողովուրդը ըսելով պիտի հասկընանք կապիտալիստները իրենց ընտանիքներով ու ծառաներով եւ ծառաներու ծառայողներով): Բայց ինչպէ՞ս կը հոգացուին այս վիթխարի ծախսերը...: Ողջ թող մնայ Մ. Նահանգներու դաշնակցային կառավարութիւնը, ողջ թող մնայ Ամերիկայի ժողովուրդը: 1945-ին բոլոր նահանգներու պարտքի գումարն էր 406 երկիլիոն տոլար. 1954-ին, այդ գումարը բարձրացաւ 605 երկիլիոն տոլարի: Իսկ դաշնակցային կառավարութեան ազգային պարտքը, որ 1945-ին 185 երկիլիոն տոլար էր, 1954-ին եղաւ 300 երկիլիոն տոլար:

Ամերիկեան իմպերիալիստները շատ լաւ գիտեն որ, թէ՛ սպառողինման արշաւը եւ թէ՛ նոր գործեր ստեղծելու գիծը երկուքն ալ երկիրը անանկութեան կ'առաջնորդեն. բայց ուրիշ ի՞նչ կրնային ընել. «Ծովն ինկողը փետուրին կը փաթթուի», կ'ըսէ ժողովրդական առածը: Մարդիկը իրենց մահամերձի դալարումներուն մէջ ամէն ինչ կը

փորձեն եւ կը սպասեն հրաշքի մը՝ որ դալու եւ ազատելու է զիրենք։ Եւ ի՞նչ ըլլալու է այդ հրաշքը։ — Խորհրդային Միութեան կործանումը։ Բայց Խ. Միութիւնը փոխանակ կործանելու (Բ. Աշխարհամարտին անոր կործանումը անխուսափելի կը նկատէին) անոր պրէս-դիժը աւելի բարձրացաւ։ Ուրեմն երբ արտաքին ուժերը անկարող եղան փութացնելու սպասուած այդ կործանումը, նուրբ դիւանագիտութեան կը մնար այդ գործը։ Եւ ի՞նչ եղաւ այդ նուրբ դիւանագիտութեան նպատակը։ — Բարեկամութեան ճամբան, որ սկսաւ ընթանալ երկու զիժով։ Առաջինը՝ զանազան միջոցներով, նոյնիսկ զիջողութեան զինով՝ յառաջացնել լարուածութիւն՝ Խորհրդային Միութեան եւ Ժողովրդային Չինաստանի միջեւ։ Եւ անոնք մասամբ յաջողութիւն ապահովեցին, երբ Խ. Միութիւնը յօժարեցաւ աթոմական ուժերի դադարեցնելը չհաղորդել որեւէ պետութեան։ Եւ Սովետները աթոմական ուժերի դադարեցնելը չտուին ուրիշներու կարգին՝ նաեւ Ժողովրդային Չինաստանի։ Ասիկա ամենամեծ պատճառն էր, որ ցուրտ պաւորութիւն թողուց Մաօ-Յէ-Թունկի կառավարութեան վրայ, որ Խ. Միութեան այդ վերապահ կեցուածքին մէջ կը տեսնէր զերակայութեան զիրքի մը պահպանումը՝ որուն յայտնապէս յարած էր Ստալինի բերրոկրասին։ Երկրորդ նպատակն էր, Սովետներու մէջ տարածել կապիտալիստական երկրի քայքայիչ ապականութիւնները։ Երկու երկիրներու միջեւ սկսան մշակութային փոխադարձ յարաբերութիւններ...։ Բայց Ամերիկայի ազատութեան կոչը ուղղուած սոցիալիստ աշխարհին ռատիոյի վրայ՝ բնաւ չդադրեցաւ արձագանգելէ։ Radio Free Europe-ը միշտ կը գործէր...։ Բուրժուա հոգեբանները ուսումնասիրած էին որ քանի զեռ կոմունիզմի տիրապետութիւնը չէ եկած եւ տասնեակ սերունդներ անոր հաստատութեան տակ չեն ապրած, մարդկային բնութեան մէջ կոչտ անձնասիրութեան, այլամերժ սեփականատիրութեան, պերճանքի ու վայելքի սէրը չի մեռնիր։ Անոնք նոյնպէս զիտէին թէ Սովետները խորհրդային մշակոյթի բոլոր մարզերուն՝ արուեստի, գեղարուեստի, գրականութեան ու թատերգութեան մէջ զբոշմեր էին զատորոշուած պրոլետարական, Սոցիալիստական անջնջելի կնիք, եւ Ամերիկեան Ժողովուրդը թրծուած բուրժուական դաստիարակութեամբ Սովետներէն ո՛չ մէկ բան ունէր ընդօրինակելու, ընդհակառակը՝ սովետներու մէջէն էր որ դուրս պիտի գային ամերիկեան պերճանքէն ու ճոխութենէն հրապուրուող մարդիկ։ Սովետներէն մասնաւորապէս երիտասարդներն էին որ պիտի սիրէին ընդօրինակել ամերիկեան ազատ պարերը, ազատ երգերն ու խաղերը եւ անոնց հետ՝ զազրելի մոլութիւնները, որոնք անոնց «չզթայուած» հոգիներուն մէջ պիտի արթնցնէին հարստանալու եւ վայելելու անսանձ տենչանքը։ Մենք այժմ չենք զիտեր թէ մեր հնա-

րագէտ դիւանագէտները ո՛ր չափով յաջողած են իրենց այդ երկրորդ նպատակին մէջ, բայց զիտենք թէ կարգ մը մարդիկ, նոյնիսկ պատասխանատու պաշտօնեաներ խարուսիկ պատրանքներէ տարուած՝ թողուցին իրենց անունը ու մեծութիւն տուող սոցիալիստական հայրենիքը եւ քաղաքական ապստամբարանի արժանացան կապիտալիստական երկրի մը մէջ, ինչպէս է Ամերիկան։ Այդ դասալիքները թէեւ կարծեցեալ օժանդակութիւն մը տուին բուրժուական թունալից պրոպականտին, բայց ոչինչով կրցան մնասել Խ. Միութեան, այլ ընդհակառակը՝ անոնք օգնեցին անոր բերեղացումին։ Ախտաժէտ միքրոպները առողջ Ֆիզիքական կազմուածքի մը մէջ չէին կրնար ապրիլ։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՆԵՐՇՆՁՈՂ ՈՒԺԸ

Տնտեսական եւ քաղաքական վատթարացած պայմանները հիմնական ազդակներ են, որոնք բանուորներուն ցոյց կուտան Սոցիալիզմի ուղին. բայց անոնք միակ ազդակները չեն։ Ասոնցմէ զատ կայ նաեւ ուրիշ գործող ուժ մը։ Բանուորները պարզապէս ձեռնածալ չեն կրնար նստիլ եւ սպասել որ կապիտալիստական ճնշումը զիրենք գործի մղէ։ Բանուորներու մէջ կայ ամենէն աւելի յառաջադէմ հատուած մը, որ Սոցիալիզմը որպէս վերջնական նպատակ ընտրած սեւեռեալ մտքով, յարատեւօրէն եւ յամուօրէն կ'աշխատի այդ նպատակին համար, առանց նկատի առնելու տիրող պայմաններու դժուարութիւնները։ Այս հատուածը ձախակողմեան հատուած է, Մարքսիզմ-Լենինիզմի ուղեղիժին հետեւող հատուածը, որուն աշխոյժ գործունէութիւնը ներշնչում կուտայ Ժողովրդական լայն զանդուածներուն, որոնք պիտի ամիս, ստուար շարքերով կը դիմեն յեղափոխական ճակատին կողմը։

Խորհրդային Միութեան, Ժողովրդային Չինաստանի եւ ուրիշ Սոցիալիստ երկիրներու յեղափոխական օրինակը, որ ցոյց կուտայ անոնց արդիւնաբերութեանց զարգացումը եւ իրենց Ժողովուրդներու բարօրութիւնը, յեղափոխականի ազդու ներշնչումը կուտայ կապիտալիստական երկիրներու բանուորներուն եւ գաղութային երկրամասերու Ժողովուրդներուն, որոնք գործնական կեանքով կը համոզուին որ միայն կռիւով կրնան բարւոքել իրենց անտանելի դրութիւնը եւ հաստատել նոր կեանքի պայմաններով նոր հասարակարգ մը, ուր մարդիկ այլեւս անբան անասուն չեն նկատուիր, թընդանօթի միս չեն ըլլար, եւ մշտական ծառայութեան չեն կապուիր կապիտալիստ դասակարգի իշխաններուն։ Սոյն մեծ յեղափոխական օրինակի ներշնչող ուժը տարուէ տարի աւելի եւ աւելի կը դորանայ սոցիալիստ երկիրներու տնտեսական եւ քաղաքական արագընթաց ու անշեղ զարգացման հետ։

ԳԼՈՒԽ Դ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

1. — ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱԳԻԾԸ

Այժմ մենք վեր պիտի առնենք առանձնապէս Ամերիկայի Միացեալ Նահանգները, անտեսապէս ամենէն հարուստ եւ զինուորական տեսակէտով ամենէն սեփեղ կապիտալիստական այն երկիրը, որ այսօր իմպերիալիստական պետութեանց հրամանատարութիւնը ստանձնած է եւ ըստ այնմ ալ կը վարէ իր ներքին ու արտաքին քաղաքականութիւնը: Ո՞րքան հաստատուն է իր չէնքը, ո՞րքան ամրակազմ ու անփակտելի են անոր հիմքերը, ո՞րքան տոկուն են անոր սիւները, այս հարցումներուն պատասխանները պիտի գտնէ ընթերցողը մեր սոյն գլուխին ուսումնասիրութեան մէջ(*):

Մ. Նահանգներու անտեսութիւնը շարունակած է իր ընդարձակման ընթացքը 1963 եւ 1964-ին եւ շարունակած է ուժեղանալ 1965-ի առաջին կէսին: Ազգային ընդհանուր արտադրութեան հաւաքական գումարը 1962 տարուան գումարին վրայ աւելցած է 27.7 երկիւրիոն տոլար՝ 1963-ին եւ եղած է 583.9 երկիւրիոն տոլար. եւ 38.7 երկիւրիոն տոլար աւելցեր է 1964-ին եւ եղած է 622.6 երկիւրիոն տոլար: Իսկ Նախագահի Տնտեսական Պորհրդատուներու յանձնարար 1965-ի համար յայտարարած է 660 երկիւրիոն տոլար:

Վերջին տարիներու անտեսական դրութեան աճման շուրջ Գոնկրէսի Միացեալ Տնտեսական Կոմիտէն 1965-ի զեկոյցին մէջ հետեւեալ բացատրութիւնը տուած է. — «Այժմ մեր անտեսական վիճակագրութեանց արձանագրութիւնները անբաւարար են: Տնտեսութեան գործառնութիւնը պէտք է չափուի իր կարողականութեան չափանիշով: Հարցը այն չէ թէ ան ի՞նչ բրած է անցեալին մէջ, այլ այն՝ թէ ի՞նչ կարող է ընել ներկայիս: Մենք ստիպուած ենք նշել դարձեալ, որ այս չափանիշով տակաւին չատ բան պէտք է կատարուի: 1957-էն ի

(*) Քաղուածաբար համառոտագրուած է Labor Fact Book քիմ 17 հատորէն, որ խիստ խնամով պատրաստուած է Labor Research Association-ի կողմէ:

վեր, լայն խրամատ մը կայ բացուած այս երկրի ընդհանուր պահանջին եւ անոր օգտակար ապրանքներու եւ ծառայութեանց կարողական մատուցումին միջեւ: Այս քրոնիկ դանդաղեցումով՝ արդելակի կ'ենթարկուի սպառումը, շահարկութիւնը, խնայողութիւնները, ծառայութիւնն ու արտադրութիւնը: Եւ անտարակոյս ասիկա կ'ազդէ նաև մեր դժուարութեանց հաւասարակշռումին»:

Արդիւնաբերական արտադրութիւն. —

Դաշնակցային պահեստի մարմնին ներկայացուցած ցանկը ցոյց կուտայ որ արդիւնաբերական արտադրութիւնները (գործարանական, հանքային, կաղի եւ էլեկտրական ճիւղերը) տարուէ տարի որոշ աճում մը ունեցեր են. օրինակի համար, էթէ 1957-59 տարիներու արտադրութիւնը հաշուենք 100 տոկոս, 1962-ին, եղած է 118, 1963-ին 124, 1964-ին, 132, 1965-ին, 141 տոկոս:

1964-ի աճումը կարելի է վերագրել դաշնակցային եկամտային տուրքի կրճատումին. իսկ 1965-ի աճումը արդիւնքն էր 1964-ի վերջի ամիսներու գործադուլին, որու հետեւանքով օթոյի գործարաններն ու պողպատի գործարանները ուժեղ թափ տուին արտադրողութեան՝ դիզուած պահանջները զոհացնելու համար:

Կապիտալի ծախսերը. —

Նորակառոյց գործարաններու եւ սարքաւորմանց ծախսերը 1963-ին եղած է 39 երկիւրիոն տոլար. 45 երկիւրիոն տոլար՝ 1964-ին, իսկ 1965-ին՝ 50 երկիւրիոն տոլար: Այս երեք տարիներու ընթացքին, կապիտալի ծախսերը առհասարակ ուղղուած են եղեր նոր տեսակի մեքենայացման եւ գործարաններու արդիականացման:

Մեծ կառուցումներ եւ տնաշինութիւն. —

Ամէն տեսակի նոր կառուցումներու ծախսերը 1963-ին, հասած էին 62.5 երկիւրիոն տոլարի, 1964-ին 66 երկիւրիոն տոլարի, իսկ 1965-ին, 68 երկիւրիոն տոլարի, եւ կը սպասուի որ այդ վերելքը կը բարձրանայ, քանի որ արդիւնաբերական եւ վաճառականական շինարարութիւնները վայրէջքի նշան չեն ցուցներ:

Տնաշինութիւնը, սակայն, խնդրին տկար կողմը կը ներկայացնէ: Բնակարանային շինարարութիւնը երկու դիժով կարելի է պատկերացնել. մէկը այն է, որ դրամատիրական ընկերութիւններ 4-5-6 կամ 8 յարկարաժիններով բնակարաններ կը կառուցեն, իւրաքանչիւրը 100-էն մինչեւ 300 տոլար ամսական վարձքով: Հասարակ բանուորներ, կամ ընկերային ապահովագրութեան կապուած ընտանիքներ այդպիսի բնակարաններու մէջ չեն կրնար ապրիլ: Իսկ ան-

դին՝ անհամար տուններ կան, որոնք բացարձակապէս անյարմար են մարդկային բնակութեան, սակայն, դաշնակցային ու նահանգային կառավարութիւնները հազիւ թէ ուշադրութիւն կը դարձնեն այդ նշանակալի դրութեան՝ ան ալ բուն բողոքներու եւ մասսայական ցոյցերու ազդեցութեան տակ: Ամերիկայի մէջ այդպիսի ողորմելի բնակարաններու թիւը կը հասնի (Ֆարմային տուները չենք հաշուեր) 1,581,700-ի: Կառավարութիւնը միլիոններ կը ծախսէ հրթիռներու եւ զէպի յուսին սուրացող տիեզերական օդանաւերու համար, բայց խղճալի այդ բնակարանները նորոգելու համար 1964-ին տրամադրած էր միայն 26 միլիոն տոլար, իսկ 1965-ին 18 միլիոն տոլար:

Սպառողի վատնումը եւ պարտքերը .—

Սպառողներու ծախքերը այս շրջանին, կը տեսնենք որ տարուէ տարի բարձրացեր են: Վաճառականական մասնաբաժինը հաշիւ ըրած է որ 1963-ին, ապրանքներու եւ ծառայութեանց ծախքերու ամբողջական գումարը եղած է 376 երկիլիոն տոլար, իսկ 1964-ին, 400 երկիլիոն տոլար: Համաձայն Նախագահի Տնտեսական Խորհրդատուներու Յանձնաժողովին, Ամերիկայի արտադրութիւններու երկու երրորդը կը սպառի Ամերիկայի զնորդներու կողմէ: Այս զնորդներու միայն մէկ մասն է որ կանխիկ գնում կը կատարէ, մեծամասնութիւնը՝ կամ մասնավճարումով է եւ կամ պարտքով: Ամերիկայի մէջ սպառողը իր ծախքերը ընդարձակելէ բնաւ չի վախճար, որովհետեւ շատ մը դիւրութիւններ կ'ընծայուն իրեն, — վարկը եւ պարտքը: Մ. Նահանգներու մէջ 1964-ին, սպառողներուն տրուած վարկի գումարը բարձրացեր էր 76 երկիլիոն տոլարի, եօթը երկիլիոն տոլար աւելի քան նախորդ տարին, իսկ մասնավճարումներով եղած գնումներու գումարն էր 60 երկիլիոն տոլար, 6 երկիլիոն տոլար աւելի՝ քան նախորդ տարին:

Գիներու շրջանակը .—

Սպառման ապրանքներու գիները միշտ կը բարձրանան տարբեր համեմատութեամբ, նոյնպէս ծառայութիւնը, բժշկական հոգատարութիւնը եւ փոխադրութեան միջոցները: Բացի սննդեղէնէն, միւս ապրանքներու գիները նախորդ տարուէն շատ քիչ փոփոխութիւն կը կրեն, նայած սպառման շուկայի պահանջին:

Սպառման գինի ցուցակը (1957-59 տարիներուն 100 տոկոս հաշուելով) 1962-ին մեղի կը ներկայացնէ որ սպառման ապրանքներու գինը եղած է 105.4. 1963-ին՝ 106.7. 1964-ին՝ 108.2, իսկ 1965-ին եղած է 113.7:

Դադարները սուղի կը նստին .—

Տնտեսական Խորհրդատուներու Յանձնաժողովը Նախագահին մատուցած տնտեսական զեկոյցին մէջ հետեւեալ պարբերութիւնները արձանագրած է .— «Նոյնիսկ կարճատեւ փոքր դադարները շատ սուղի կը նստին մեր վրայ: Միացեալ Նահանգները յետ-պատերազմական շրջանին շատ գերազանցօրէն յաջողեցաւ մեր երկրի հորիզոնէն հեռացնել 1930-ի տնտեսական ճգնաժամի ուրուականի վերերեւումը, բայց ունեցաւ շորս դադարներ, որոնք միլիոնաւոր ամերիկացիներ մասնեցին անձնական դժուարութեանց: Սոյն դադարներու ընթացքին ազգային ընդհանուր արտադրութիւնը ինկաւ աւելի քան 3 առ հարիւր. իսկ անդործութիւնը բարձրացաւ 4 առ հարիւր: Անգործներու բանակին վրայ աւելցան 840 հազար մարդիկ, որոնք անգործութեան հատուցման նպաստ ընդունելու են: Թիւր այն ընտանիքներուն, որոնց եկամուտը 3 հազար տոլարէն պակաս էր, բարձրացաւ 400,000-ի:

Անգործութեան հարցը .—

—«Մեր ամենամեծ եւ ամենաառաջին առեղծուածը անդործութիւնն է» ըսաւ Նախագահ ձոնսըն 1965-ին, երբ ան կը կրկնէր երկու տարի առաջուայ Նախագահ Քէնըտի նոյնիմաստ յայտարարութիւնը, միայն թէ ձոնսըն աւելցուց հետեւեալ բառերը .— «Հակառակ վերջին բարենպաստ պայմաններուն, անգործութիւնն ու անգործութեան վտանգը անհանդուրժելի աստիճանով բարձր են»:

Մ. Նահանգներու Աշխատանքի Բաժանմունքը իր պատրաստած զեկոյցին մէջ նշեց որ թէեւ մէկ ու կէս միլիոն բանուորներ 1965-ին գործի վրայ դրուեցան, բայց անգործներու թուական նուազումը նշանակելի աստիճանին չիջաւ: Այժմ մենք ունինք 4 միլիոն անգործներ, որ կը նշանակէ միայն մէկ ու կէս տոկոսով պակաս՝ քան 1963-ի անգործներու թիւը: Իսկ եթէ նկատի առնենք սեղոնային գործերը եւ մասնակի ժամերու բանուորները, որոնք տարին 15 կամ 20 շաբաթ կը գործեն, պատկերը կը դառնայ իրապէս անդուհանցելի:

Շահեր՝ առատութեան մէջ .—

Մ. Նահանգներու Վաճառականական Յարկարժանումը մեղի տուած է հետեւեալ ցանկը, որ ցոյց կուտայ ընկերակցական շահերը՝ տուրքերը վճարելէն առաջ եւ վճարուելէն վերջ, բաժնետէրերու վճարածները եւ մնացած անբաժանելի շահը:

Ստորեւ նշանակուած թիւերը երկիլիոններով են:

Տարի	Ընկերակցական շահ	Տուրքերէն	Շահաբաժին	Անբաժանելի
	նախքան տուրքերը	յետոյ	վնարուած	շահ
1939	6.4	5.0	3.8	1.2
1945	19.0	8.3	4.7	3.6
1958	37.4	18.8	12.4	6.4
1959	47.7	24.5	13.7	10.8
1960	44.3	22.0	14.5	7.5
1961	44.2	21.9	15.2	6.7
1962	48.2	25.0	16.5	8.5
1963	51.3	26.7	18.0	8.7
1964	57.2	31.7	19.8	11.9

Սոյն ցանկէն կը տեսնենք որ տուրքերն ու շահաբաժինները վճարուելէն յետոյ դարձեալ միլիոններով գումարներ կը մնան քորբորէշըններուն՝ որպէս անբաժանելի, գուտ շահ:

Պէտք է մտնալ նշելու որ այդ քորբորէշըններու մեծաւորները դեմոկրատ-ժողովրդական մարզիկ են, որոնք իրենց ընկերութեան բաժնեթղթերը կը ծախեն նաև բանուորներու, եւ բանուորները իրենց կարգին՝ պատրանքը կ'ունենան կարծելու թէ իրենք եւս քորբորէշընի անդամներ են:

Ասով յառաջացեր է «ժողովրդական կապիտալիզմը»:

Կանխիկ դրամի հոսումը .—

Կանխիկ դրամի հոսումը ինքնին, թատերական՝ խթանիչ ազդակ մը եղած է պիզնէսի գործառնութիւնը աւելի արդիւնաւորելու համար: 1954 եւ 1962 տարիներուն՝ մէկ կողմէն շուրջ արժէքազրկումի (depreciation) թոյլատրած դեղջումները, միւս կողմէն ուռճացած կապիտալի շահարկութիւնները եկան ալ աւելի լեցնել կապիտալիստներու գանձարանները:

Կանխիկ դրամներու հեղեղը վերջին տասը տարիներու ընթացքին կրկնապատկուած է. 1954-ին, անոնց գումարն էր 32.7 երկիլիոն տոլար, 1964-ին, եղաւ 65.3 երկիլիոն տոլար:

American Federationist թերթը 1965 Յունուար մէկ թիւին մէջ գրած է հետեւեալը. — «Հսկայական չափով կանխիկ դրամի կուտակումը շահադիտական մեծ ընկերութիւնները դրած է խոշոր առեկծուածի մը առջև: Շահաբաժիններու վճարումները բարձրացեր են, գործարանի եւ սարքաւորման ծախքերը աւելցեր են եւ տակաւին շատ մը քորբորէշըններ ուրիշ անլուծելի հարցերու հետ, ի՞նչ կըրնան ընել իրենց գանձարաններուն մէջ կուտակուած դրամներով, այս հարցման շին կրնար պատասխանել»:

Այդ թերթը կը նշէ նաև որ 1953-էն ի վեր շահաբաժինները կրկնապատկուած են, աւելցեր են նաև աշխատավարձերը 67 տոկոսով եւ յայտնի է որ իրերու վերելքի այս ընթացաւորը գեո եւս շարունակուելու է:

«Սահմանափակ պատերազմներ», պիւտնէնք եւ տուրքեր .—

Քսան տարի առաջ Նախագահ Թրումբընի սկսած պաղ պատերազմը տակաւին կը շարունակուի: Երէկ Քորէայի պատերազմն էր, որ Ամերիկայի համար ձախող վերջաւորութիւն ունեցաւ. անոր յաջորդեց Քուպայի յեղափոխութիւնը, որուն առջև ամերիկեան իմպերիալիզմը նահանջեց: Այսօր ալ Վիեթնամի պատերազմն է, որուն մէջէն Վաշինկտոնի կառավարութիւնը որքան կ'աշխատի ճերմակ ճակատով գուրս գալ, իր մարմինը կը ներկուի Վիեթնամի հերոսներու կարմիր արիւնով: Անդին Դոմինիկեան Հանրապետութեան մէջ ամերիկեան զինուորական միջամտութեան փորձը կայ...: Պաղ պատերազմի կացութիւնը եւ զինուորական արկածային դրութիւնները յառաջ կը տարուին «ազգային պաշտպանութեան» վարագոյրին ետև եւ նոյն ատեն կը բարձրացնեն Մ. Նահանգներու դաշնակցային պիւտնէն:

ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԻՏՃՃԻ ԾԱՆՔԵՐԸ
(ԹԻՒԵՐԸ ՄԻԼԻԱՌՆԵՐՈՎ ԵՆ)

Վարչական պիւտնէ .—

	1964	1965	1966
Ազգային պաշտպանութիւն	54.2	52.2	51.6
Տիեզերքի խուզարկութիւն եւ տեխնիկա	4.2	4.9	5.1
Միջազգային գործեր	3.7	5.4	4.6
Վեթերաններու նպաստ	10.8	11.3	11.6
Տոկոս	5.5	5.4	4.6
Երկրագործութիւն	5.6	4.5	3.9
Բնական աղբիւրներ	2.5	2.7	2.7
Վաճառականութիւն եւ փոխադրութիւն	3.0	3.4	2.8
Առողջապահական, աշխատաւորական, նպաստ	5.5	6.2	8.3
Կրթութիւն	1.3	1.5	2.7
Ընդհանուր կառավարութիւն	2.3	2.4	2.5
Ափաւաքիայի յատկացում	—	—	0.1
Ուրիշներ	(0.8)	(1.0)	(0.1)
Փոխադրելի	99.4	100.9	100.6

Թրբրստի հիմնադրամներ .—

Փոխադրեալ	99.4	100.9	100.6
Ազգային պաշտպանութիւն	0.5	0.8	1.0
Վեթեւանական նպաստ, ծառայութիւն	0.7	0.6	0.5
Առողջապահական, աշխատանքային նպաստ	22.7	23.4	26.5
Վաճառականութիւն, երթեւեկ	3.5	3.9	3.7
Բնակարանի շինութիւն	1.9	0.2	0.8
Ուրիշ կարգադրութիւններ	(6.6)	(5.1)	5.6
Ընդհանուր գումար	135.3	134.9	138.7

Նախագահ ձոնսըն իր կառավարութեան պիւտճէն հաստատել է «հինգ սկզբունքներու» վրայ. Ա.— Բարձրացնել ազգային ուժականութիւնը, անտեսական յառաջդիմութիւնը եւ անհատական պատենութիւնը: Բ.— Հարկային սխտէժը տանելի ծանրութեան աստիճանին վրայ մնալու է երկրի անտեսական յառաջդիմութեան նպատեղու համար: Գ.— Կազմելու է Մեծ Հասարակութիւն մը, որ պէտք է ըլլայ յանդուգն հասարակութիւն մը: Դ.— Մեծ Հասարակութիւնը պէտք է ըլլայ գրասիրտ հասարակութիւն: Ե.— Մեծ Հասարակութիւնը պէտք է ըլլայ կարողակամ հասարակութիւն մը:

ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՊԻՒՏՃԷԻ ԸՆԿԱԼԱԳՐԵՐԸ
(քիւերը միլիաոներով)

Վարչական .—

	1964	1965	1966
Անհատական եկամտային տուրքեր	48.7	47.0	48.2
Քորորէչընի եկամտային տուրքեր	23.5	25.6	27.6
Մաքսային տուրքեր	10.2	10.7	9.8
Ուրիշ ազդիւրներ	7.1	7.9	8.8
Ընդհանուր գումար	89.5	91.2	94.4

Թրբրստի հիմնադրամներ .—

Գործառնութեան տուրքեր	16.8	16.7	17.7
Նահանգներէն — սպահովագրական — գիծ	3.0	3.0	2.9
Դաշնակցային գործաւորներէն	2.0	2.2	2.2
Տոկոս հիմնադրամներէն	1.6	1.7	1.9
Ուրիշ ազդիւրներ	6.8	6.9	8.0
Հիմնադրամներու գումար	30.2	30.5	32.7
Ընդհանուր գումար	119.7	121.7	127.1

Այս ցանկէն կը տեսնենք որ Մ. Նահանգներու դաշնակցային կառավարութիւնը երեք տարիներու ընթացքին երբեք չէ կրցած հաւասարակշռել իր պիւտճէն: Այս իրողութեան պատճառը պատերազմական յատկացումներն են, որոնք կառավարական պիւտճէին 77 տոկոսը կը գրաւեն:

Պաշտօնական վիճակագրութիւնները ցոյց կուտան նաեւ ուրիշ իրադարձութիւններ, ինչպէս՝ մոնոպոլը եւ կապիտալի կեդրոնացումը, միակցական ընկերութեանց կազմակերպութիւնները, ֆարմային տնտեսութեան վայրէջքը, տոլարի աստիճանական արժէքագրելումը, եւ քանութրներու դրութեան վատթարացումը:

2.— ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸՆԿԵՐՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եկամտի բաժանումը .—

Միացեալ Նահանգներու Վաճառականական Մասնաբաժինի 1963 տարուայ համար պատրաստած պաշտօնական վիճակագրութիւնը եկամտի բաժանման շրջանակով՝ հետեւեալ պատկերը ցոյց կուտայ մեզի. ընտանիքներ՝ որոնց տարեկան եկամուտը երկու հազար տուրքէն պակաս է, եւ ընտանիքներ՝ որոնց տարեկան եկամուտը 15 հազար տուրքը կ'անցնի:

Վաճառականական Մասնաբաժինի գործածած ընտանիք անունին տակ կը հասկցուի սպառող միւսուրներ — ընտանիքներ, որոնք երկու կամ աւելի անդամներէ կը բաղկանան եւ կամ բոլորովին առանձին սպրող անհատներ են:

6.700.000 ընտանիքներ կը ստանան տարեկան 2.000 տուրքէն պակաս
16.900.000 ընտանիքներ կը ստանան տարեկան 4.000 տուրքէն պակաս
28.600.000 ընտանիքներ կը ստանան տարեկան 6.000 տուրքէն պակաս
39.200.000 ընտանիքներ կը ստանան տարեկան 8.000 տուրքէն պակաս
46.400.000 ընտանիքներ կը ստանան տարեկան 10.000 տուրքէն պակաս
12.300.000 ընտանիքներ կը ստանան տարեկան 10.000 տուրք. եւ աւելի
4.600.000 ընտանիքներ կը ստանան տարեկան 20.000 տուրք. եւ աւելի

Վաճառականական Մասնաբաժինը իր պատրաստած այս ցուցակով կը ներկայացնէ չբաւոր ու միջին դասու ընտանիքները, բայց ան մեզի չի պարզեր թէ Միացեալ Նահանգներու 180 հազար բորբորէչըններու պետերը, որոնք 296 երկիրիտն դրամագլուխ ունին, տարեկան ի՞նչ շահ կը ստանան:

Ազգատուքիւնը Մ. Նահանգներու մէջ.—

Տնտեսական Խորհրդատուներու Յանձնաժողովը 1964-ին Գոն-կրէսին մատուցած իր Տարեկան Ձեկոյցին մէջ որոշակի յայտարարեց որ երբեք հնարաւոր չէ ճշգրիտ կերպով ներկայացնել թիւը այն ընտանիքներուն, որոնք նուազագոյն միջոցները չունին իրենց կեանքի բնական կարիքները հոգալու համար:

Լէոն Քէյսըրլինկ, յանձնաժողովի նախկին նախագահը, Յաւաքդիմութիւն Կամ Թշուառութիւն անունով գիրքին մէջ, որ լուրջ ուսումնասիրութիւն մըն է, կ'ըսէ որ տուրքին գնողական կարողութիւնը նկատի առնելով, այն ընտանիքներն ու առանձին անհատները որոնք տարեկան 3 հազար տուրք եկամուտ ունին, իրապէս անոնց ստացածն է 1.778 տուրք. անոնք որ կը ստանան 2 հազար տուրք, անոնց ստացածն է 1.220 տուրք. իսկ անոնք որ կը ստանան հազար տուրք, անոնց ստացածն է 630 տուրք: Ասոնք բոլորն ալ թշուառներու շրջանակին մէջ կը մտնեն եւ անոնց թիւը կարելի է հաշուել 20 միլիոն, որ կը նշանակէ Ամերիկայի բնակչութեան աւելի քան մէկ տասներորդը:

Տնտեսական Խորհրդատուներու Յանձնաժողովը (ՏՊՅ) իր 1962-ի Տարեկան Ձեկոյցով հետեւեալ պատկերը կը ներկայացնէ. թշուառութեամբ ապրող ընտանիքներու մէջ 11 միլիոն երեխաներ կան, որ կը նշանակէ Մ. Նահանգներու երիտասարդութեան մէկ վեցերորդը: Իսկ 1965-ի զեկոյցէն կը տեսնենք որ այդ թիւը բարձրացեր է 15 միլիոնի:

Նէկրո ընտանիքներու 44 առ հարիւրին տարեկան եկամուտը 3 հազար տուրքէն պակաս է:

Փարմային ընտանիքներուն 43 առ հարիւրը թշուառ են. իսկ նէկրո Փարմային ընտանիքներու 80 տոկոսը կ'ապրին ծայրահեղ թշուառութեան մէջ:

Ամերիկայի մէջ 4 միլիոն 200 հազար ծերեր առանձին կ'ապրին, տարեկան եկամուտ ունենալով միայն 1500 տուրք:

Մ. Նահանգներու Կանանց Բիւրոն 1965-ի տեղեկագրութեան մէջ կը պարզէ որ 16 տարեկանէն վեր 14 միլիոն կիներ կան, որոնք կապուած են ազքատ ընտանիքներու:

Բենիամին Հ. Պազտիկեան, իր Առատութեան մէջտեղը Ամերիկայի քառուոր անուն գրքին մէջ, հաշիւ մը կը ներկայացնէ որ ամէն 5 ամերիկացիներէն մէկը կ'ապրի ուտեստի, բնակարանի եւ բժշկական խնամքի նուազագոյն չափանիշով: Վիճակագրական թիւերու հիման վրայ, վեր առնելով կանխիկ եկամուտ ունեցող անձերը, ան գտած է որ Ամերիկայի մէջ 46 միլիոն մարդիկ ազքատ են, բառին իսկական իմաստով:

Երեխաներու համար իր նշանակած թիւը քիչ մը վար կը մնայ ՏՊՅ-ի 1965-ի տարուայ զեկոյցի թիւէն: Ան կ'ըսէ որ թշուառ ընտանիքներու մէջ կան մօտաւորապէս 14 միլիոն երեխաներ որոնք տժգոյն եւ յուսահատ կերպարանք մը ժառանգեցին, եւ իրապէս թուաւորուած են, մինչդեռ պատշաճ հոգատարութիւն մը կրթութեան հետ կրնար զանոնք փրկել:

Անիկա թշուառութեան շուրջ ուրիշ տեղեկագրողներու հետ համաձայն է, որ անդործութիւնը աւելի ծանրօրէն ճնշած է նէկրոները, քան թէ ճերմակները: Նէկրո անդործներու թիւը երկու անգամ աւելի է քան ճերմակներունը:

Ջրկանֆի կեանքը.— Լէոն Քէյսըրլինկ, իր Յառաքդիմութիւն Կամ Թշուառութիւն ուսումնասիրութեան մէջ, աւելի խորացնելով իր վերլուծողական տեսութիւնը, «գրկանքի կեանքը» Ամերիկայի մէջ ընդհանրացած է հսկայական չափի համեմատութեամբ, կը յայտարարէ ան եւ փաստական տուեալներով կ'ապացուցանէ որ 5 հազար տուրք եկամուտ ունեցողները եւս կ'անցնին թշուառներու կարգին, որովհետեւ անոնք ո'չ միայն գրկանքով կ'ապրին, այլեւ շարունակ ծանրաբեռնուած են պարտքի տակ: Ամերիկայի ամենափոքր մէկ քաղաքին մէջ 10-էն 15 փոխատու ընկերութիւններ կան, որոնք 8 կամ 10 տոկոսով գրամ փոխ կուտան: Ազքատ ընտանիք մը անոնց չկրնար դիմել, քանի որ եկամուտ չունի: Փոխառուներն, ուրեմն, եկամուտ ունեցողներն են, որոնք իրենց պարտքը հատուցանելու համար գրկանքով պիտի ապրին: Այդ հաշուով հեղինակը Մ. Նահանգներու մէջ թշուառներու թիւը կը ներկայացնէ 66 միլիոն: Եւ այս թիւը երբեք չափազանցութիւն չէ, երբ նկատի ունենանք որ Նախագահ Ճոնսոն, Գոնկրէսին մէջ 1965-ի Յունուարին բացորոշակի յայտարարեց — «Մենք այսօր, մեր այս բարքաւած, հարուստ երկրին մէջ 60 միլիոն խեղճեր ունինք, որոնք թշուառութեան մէջ գրկանքով կ'ապրին»:

Ափալաֆիայի մէջ.— Ափալաքիան լերանց շրջանը, որ կ'երկարի Փէնսիլվանիայի արեւելեան նահանգներէն դէպի հարաւ մինչեւ Ալաբամա, պաշտօնապէս ճանչցուած է որպէս Ափալաքիայի շրջան. անիկա Ամերիկայի թշուառութեան ամենասարսափելի պատկերը ներկայացնող երկրամասն է: Ան ունի դիւղական այնպիսի ազտոտ փողոցներ այլասերուած բնակչութեամբ, որոնց նմանը Եւրոպայի մէջ որեւէ տեղ կարելի չէ տեսնել: Այնտեղ կը տիրէ ամբողջական անդործութիւն, բնակչութիւնը կը նուազի, փոխանակ աճելու: 1964-ին, Ամերիկեան Գոնկրէսին մէջ հարց եղաւ այդ շրջանին

հարկ եղած օգնութիւն մը հասցնելու համար, բայց հարցը աննկատ առնուեցաւ. դրութիւնը, սակայն, վատթարացաւ: 1965-ին էր որ մէկ միլիառ տոլարի յատկացում եղաւ ժողովուրդը սովահարութենէ ազատելու համար: Բայց այդ գումարը դրութիւնը հիմնականապէս չփոխեց: Երեք միլիոն 800 հազար ընտանիքներէն երկու երրորդը թշուառ են ու թշուառ կը մնան: Ափալաքիայի շատ մը քաղաքներու մէջ առհասարակ ծերեր կը բնակին, որոնք կ'ապրին Ընկերային Ապահովութեան դրամով, ծերութեան թոշակով եւ կամ նպաստով: Արեւելեան Քէնտըքիի մէջ բաղմամբիւ երեսաններ կօշիկ չունին:

Նիւ Եորք Թայմզի թղթակիցը, Մարձորի Հընթըր, 1965-ի Մայիսին, հոն այցելելով երկար քննութենէ վերջ՝ ժողովուրդի դժբութիւնը կը նկարագրէ ողբալի դոյներով: Անգործութիւն, կմախքացած մարդիկ ու կանայք ամէն կողմ, իսկ դթութիւն հայցող երեխաներ՝ չեն դիտեր ո՛ր տեղերէն կը հաւաքուին ու անմիջապէս կը շրջապատեն լաւ հագուած այցելուն, որ կարծես ուրիշ մոլորակէ մը եկած է: Ան կը նկարագրէ Հէփիի Հէլօ կոչուած գիւղ մը, ուր տեղի բոլոր ընտանիքները կառավարութեան կողմէ զրկուած կապոցներով ուտեստեղէն ընդունելով կ'ապրին: Մարդիկ, որ ատենօք հանքերու եւ սղոցարաններու մէջ կը գործէին, այժմ անգործ են եւ յոյս չունին գործ գտնելու:

Մահուան պատճառը.— 1964, Հոկտեմբեր 9-ին, Նիւ Եորքի մէջ կայացաւ Ամերիկեան Հասարակական Առողջապահութեան Ընկերակցութեան համագումարը, ուր Նիւ Եորք քաղաքի առողջապահական յանձնակատար Տր. Ճէյմըս, իր ընդարձակ զեկոյցին մէջ յայտարարեց որ «թշուառութիւնը երրորդ առաջնորդող պատճառն է տեղի ունեցող մահերուն»: Ան ըսաւ որ միայն Նիւ Եորք քաղաքին մէջ ամէն տարի 14 հազար մարդկային էակներ կը մեռնին թշուառութեան պայմաններու բերումով. եւ այդ թշուառութեան մէջ կ'ապրին մէկ միլիոն 400 հազար Նիւ Եորքցիներ, կամ քաղաքի բնակչութեան մէկ հինգերորդը: Երեսաններու մահացումը աչքի զարնող երեւոյթ մըն է, ըսաւ Տր. Ճէյմս, «անմեղ ու խեղճուկ երեխաներ, որոնք հազիւ թէ իրենց աչքերը բացած կեանքին կը նային եւ ահա կը մեռնին... եւ երեք չափազանցութիւն չէ երբ ըսենք թէ այդ բոլոր մահերու պատճառը՝ թշուառութիւնն է»:

Առաջին Բայլը.— 1964-ին, Ամերիկեան Գոնկրէսը տնտեսական պատենութեան օրինագիծը որդեգրեց, օրինագիծ մը, որ թշուառութեան վրայ պիտի յարձակէր ու զայն երկրի սահմաններէն պիտի հեռացնէր բոլորովին: Նախագահ Ճոնսոն, դրուատելով այդ օրինագիծը, յայտարարեց.— «Միացեալ Նահանգներու քաղաքականու-

թիւնն է մեր ազգի մարդկային եւ Ֆինանսական աղբիւրները զօրաշարժի ենթարկել եւ այս հարուստ երկրի մէջէն ջնջել թշուառութեան տարակերպութիւնը. ահա այդ քաղաքականութեան հրամայականով որդեգրուեցաւ տնտեսական պատենութեան օրինագիծը, որուն նպատակն է պատենութեան դոնները բանալ ամէն մարդու առջեւ, պատենութիւն՝ կրթութեան ու մարզանքի, պատենութիւն՝ գործելու, պատենութիւն՝ ապրելու վայելուչ ու պատուաւոր կեանքով: Այս օրինագիծին անմիջական նպատակն է այժմ, ուժեղացնել, աւելցընել եւ համակարգել այն բոլոր ջանքերը, որոնք ուղղուած են այդ քաղաքականութեան»:

Բայց այդ օրինագիծը փայլուն բառերով խիստ սահմանափակ էր եւ գործնական ծրագիրներ չունէր երիտասարդութիւնը կրթելու եւ մարդելու համար, քաղաքային եւ գիւղական հասարակութեան բոլոր անդամներուն գործ հայթայթելու համար. ո՛չ մէկ ծրագիր՝ վայելուչ եւ պատուաւոր կեանք ապահովելու համար:

Ջրաղուծի պատենութեան նոր պաշտօնատուն մը բացուեցաւ Մարձընտ Երիվըրի գլխաւորութեամբ, որուն տրամադրուեցաւ 962 միլիոն տոլար թշուառութեան վրայ յարձակելու համար: Գոնկրէսը առաջին տարին 800 միլիոն տոլար տրամադրեց, մնացեալ 162 միլիոնը պահեց 1965 տարուան համար: Թշուառութիւնը յարձակման ենթարկուեցա՞ւ...:

Իր վերջին գրքին մէջ — «Թշուառութիւնը, իր արմատները եւ իր ապագան», (հրատարակուած 1965-ին) Տր. Հայմըն Լումէր, որոշակի կը շեշտէ որ Ճոնսոնի վարչութեան ծրագիրը խիստ սահմանափակ է հակա-թշուառութեան խաչակրութեան համար: Մէկ կողմ դնելով այդ ծրագրի ուրիշ թերի կողմերը, Լումէր կ'աւելցնէ.— «Երազիրը ամբողջապէս կ'անտեսէ երկու հիմնական կէտեր: Առաջինն ցոյց չի տար նոր գործեր ստեղծելու միջոցները: Երկրորդն անբացարձակապէս մէկ կողմ կը դնէ նէկրոններու թշուառութեան հարցը: Որքան ատեն որ այդ ծրագիրը այդպիսի կարեւոր հարցերու չի մօտենար եւ նուազագոյն ծախքերով հսկայական պահանջները կ'ուզէ փակել, վարչութեան հակա-թշուառութեան ծրագիրը կը մնայ որպէս սոսկ ձեւականութիւն»:

Տրամադրուած գումարը խիստ անբաւարար է այդպիսի մեծ գործի մը համար: Ինչպէս Լումէր կ'ըսէ.— «Ստուգիւ երբեք, երբեք չափազանցութիւն չըլլար երբ ըսենք՝ այդպիսի հսկայ պահանջ մը գոհացնելու համար տարեկան 25 միլիառ տոլար պէտք է յատկացնել»:

Այս գումարը բաղդատմամբ Մ. Նահանգներու սպառազինման յատկացուած լեռնակուտակ գումարին, գրեթէ կէսն է: Եւ Լումէր

կ'եզրակացնէ — «Իրողութիւնը պարզապէս այն է որ Ամերիկայի խոշոր պիզնէսը աւելի շատ կը հետաքրքրուի սպառազինման խնդրով՝ որուն մէջ մեծ շահ կայ, անոր համար ան յօժար է աւելի հսկայ գումարներ յատկացնել, բայց ընկերային բարօրութեան համար որեւէ գումարի յատկացում, աւելորդ ծախսարարութիւն է»:

Այստեղ պէտք է ըսել թէ Թրէյտ Իւնիլըն կազմակերպութիւնները եւս պաղ պատերազմի եւ «սահմանափակ պատերազմներ»ու համար միլիոններ յատկացուելուն հակառակ են: Այս առթիւ Յայտոյի AFL — CIO-ի պաշտօնաթերթը՝ News & Views, 1965 Յունուար 15-ի թիւին մէջ իրողութիւններ եւ քիւեր խորագրով յօդուածին մէջ հետեւեալը կը գրէ — «Նախագահ Ճոնսոն վերջերս հաւանած է որ 750 միլիոն տոլար վատնուին եւ մէկ հատ վիթխարի զինուորական փոխադրական օդանաւ կառուցուի: Այդ ալ բաւական չէ, կառավարութիւնը ծրագրած է աւելի քան մէկ միլիաո տոլար ծախսել երեք ուրիշ փոխադրական օդանաւեր կառուցելու նպատակով: Ասով ամբողջին գումարը կ'ըլլայ մօտաւորապէս երկու միլիաո տոլար: Այժմ բազմաթիւ պայքար գոնկրէսի անցեալ տարի յատկացուցած 784 տոլար գումարին հետ, որ պիտի գործածուի մեր երկրէն թըշուառութիւնը վերցնելու համար: Նախագահ Ճոնսոն գոնկրէսին տուած իր պատգամով յանձնարարեց որ այդ գումարը կրկնապատկելու է այս տարի: Այդ կը նշանակէ մէկ ու կէս միլիաո տոլար: Նախագահը նոյնպէս առաջարկեց մէկ ու կէս միլիաո տոլարի յատկացում՝ ուսանողներու եւ դպրոցներու համար:

«Կառավարութիւնը ամէն տարի 6 միլիաո տոլար կը ծախսէ միմիայն զինուորական հետախուզութեան համար, (Պէնտագոնը ծրագրած է 13 ու կէս միլիաո տոլար ծախսել յաջորդ տարի՝ զէնքերու արտադրութեան ու սարքաւորման համար):

«Ամերիկեան Թէլէֆոն եւ Թէլէկրաֆ Ընկերութեան Պէլ Թէլէֆոն սիստէմը յայտարարած է որ ամէն մեծ ընկերութիւն անցեալ տարի երկու միլիաո տոլար շահոյթ ունեցեր է:

«Ամփոփում — Կառավարութիւնը աւելի հսկայ յատկացումներ կ'ընէ զինուորական փոխադրական օդանաւեր շինելու եւ զարգացնելու համար, քան թէ հակա-թշուառութեան ծրագիրը իրագործելու համար:

«Դպրոցներու եւ ուսանողներու յատկացումին ի նպաստ առաջարկուած գումարը մէկ չորրորդ մասը կը կազմէ զինուորական հետախուզութեան համար կառավարութեան վատնած գումարին:

«Որեւէ ամերիկեան ընկերութեան զուտ շահը մէկ տարուայ ընթացքին, շատ ու շատ աւելի է քան ինչ որ կառավարութիւնը կ'ուզէ արամադրել՝ մեր երկրի թշուառութիւնը վերցնելու համար»:

ՀԱՐԱԻ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հարաւային նահանգներու անհատ աշխատուորին եկամուտը աւելի ցածր է ամերիկեան ընդհանուր միջակ չափանիշէն: Մ. Նահանգներու Վաճառականական Յանձնարածին 1965-ի Ապրիլեան վիճակագրութիւնը 1963-ին համար, ցոյց կուտայ, որ Միսիսիպիի եւ Արքանսասի նահանգներուն մէջ բանուորի եկամուտը եղած է ամենացածր: Հարաւարեւելեան նահանգներու մէջ եկամուտները համեմատաբար քիչ մը բարձր եղած են:

Ստորեւ կը դնենք պաշտօնական վիճակագրութեան մէկ մասը:

	Տոլար		Տոլար
Միսիսիպի	1.392	Նորթ Քարոլայնա	1.797
Արքանսաս	1.570	Ճորճիա	1.829
Սաութ Քարոլայնա	1.575	Ալապամա	1.640
Թէնըսի	1.758	Վէստ Վերձինիա	1.847
Քէնտըքի	1.774	Վիրձինիա	2.080
Լուիզիանիա	1.778	Փլորիտա	2.157

Վերելի թիւերը ցոյց կուտան ամէն մէկ նահանգի բանուորի միջին հաշուով զուտ եկամուտը՝ տուրքերը պակսեցուած հանգամանքով:

Աճանական եկամուտի տեսակէտէն, ամենէն բարձր եկամուտ ունեցողներն են երկու նահանգներ — Նէվադա (3.203 տոլար տարեկան) եւ Դէլաւէր (3.271 տոլար): Առաջինին մէջ ծաղկած է բախտախաղի ճարտարարուեստը, երկրորդին մէջ՝ Դու Պոնտ ընտանիքի առասպելական եկամուտը:

Քաղաքային բանուորական ընտանիքի պէտքերը —

Ամերիկեան բանուոր մը, որ չորս հոգինոց ընտանիք ունի, միջին հաշուով շաբաթական պէտք ունի 123 տոլարի, քաղաքային չափանիշով ապրելու համար: Տարին 52 շաբաթ հաշուելով, կ'ունենանք 6.396 տոլարի գումար մը:

AFL — CIO-ի հետազոտութեան դէպարտմնտը հաշիւ քրած է որ 20 զլխաւոր քաղաքներուն մէջ, 1964 տարուոյն համար քաղաքային բանուորական ընտանիք մը (4 հոգիէ բաղկացած) կը պահանջէ ուտելիքի համար տարին՝ 1.899 տոլար. տան վարձքի, էլեքտրական լոյսի, կազի եւ ջուրի վարկազրեքը (պիւրը) վճարելու համար 1.441 տոլար. հագուստեղէնի՝ 581 տոլար. բժշկական խնամքի 365 տոլար. երթեւեկութեան՝ 481 տոլար, ուրիշ ապրանքներ եւ ծառայութիւն-

ներ 764 տուրար ուրիշ կորուստներ՝ 322 տուրար եւ անձնական տուր-
քեր 555 տուրար: Ասոնց բոլորին գումարը կ'ընէ 6·417 տուրար:

Ի՞նչ է, սակայն, ամերիկեան բանուորութեան եկամտային
ընդհանուր պատկերը: Միայն Սիէտլ (Վաշինկտըն նահանգ) քաղա-
քի բանուորներն են որոնց տարեկան եկամուտն է 6·900 տուրար, յե-
տոյ կուգայ Հուստըն (Թէքսաս նահանգ) քաղաքը, որու բանուորնե-
րու տարեկան եկամուտն է 5·577 տուրար:

Անշուշտ նկատելի է քաղաքէ քաղաք ապրուստի պայմաններու
տարբերութիւնը, բայց ամենէն աժան կարծուած քաղաքներու մէջ
իսկ՝ այդ տարբերութիւնը երբեք չի կրնար կապիտալիստական երկրի
համանուազ պահանջները նուազեցնել:

Գործարանի բանուորը, երբ այսօր կը ստանայ շարաթական
80 տուրար, զարձեակ անկարող է իր ընտանիքի անհրաժեշտ պէտքե-
րը հոգալ, քանի որ ապրուստի պայմանները անհամեմատ չափով
բարձրացեր են: Պարզ է, ուրեմն, որ Ամերիկայի բանուորները, ո-
րակաւոր կամ անորակ, միլիոններով կեցեր են եկամտային նոյն
անդոհացուցիչ դեմնին վրայ: Հապա երբ նկատի առնենք մասնակի
ժամերով գործողները, որոնք ամբողջ տարին հաղիւ թէ կրնան 1560
տուրար վաստկիլ, որ կը նշանակէ շարաթը 30 տուրարի եկամուտ, այն
ստեն հարուստ Ամերիկայի մեծամասնութիւնը կազմող ժողովուրդի
ընտանեկան եւ անտեսական պատկերը աւելի պայծառ կ'ըլլայ:

Կիմ գործաւորները.—

Կիները Մ. Նահանգներու աշխատաւորական ուժի գերաճող եւ
կարեւոր մասը կը կազմեն: 1964-ին, հաշիւ եղած է որ 26 միլիոն
կիներ մտած են վարձու աշխատաւորներու շարքին մէջ: Պէտք է բռնել
որ գործատէրերը կիներուն աւելի պատեհութիւն կուտան գործե-
լու, քան թէ այր մարդոց, որովհետեւ անոնց աւելի պակաս աշխա-
տավարձք կը տրուի քան թէ այր մարդոց: Այր մարդուն տարեկան
վաստակը եթէ 4 հազար 200 տուրար է, կնոջ կը վճարուի 2,200 տուրար:

Հաւասար վեարման օրինագիծ.— 1963-ի Յունիսին, Մ. Նա-
հանգներու Գոնկրէսը հաւասար վճարման օրինագիծը վաւերացուց,
որ նպաստեց միայն 7 միլիոն բանուորուհիներու: Օրինագիծը նկատի
ունէր միայն գործարաններու բանուոր-բանուորուհիները. ասով
բացառութիւն կը կազմէին երկրագործութեան, պանդոկներու, ճա-
շարաններու, լուացարաններու եւ տուններու մէջ գործող կիները:
Այսու հանդերձ կարգ մը ընկերութիւններ զանազան միջոցներով նը-
կատի շառին այդ օրինագիծը եւ այր մարդիկը բաժնուած պահեցին
կիներէն:

Անգործ երիտասարդ բանուորներ.—

Մ. Նահանգներու աշխատանքի դէպարտմընթը 1965-ի Մարտին
Նախագահ Ճոնսընի միջոցով գոնկրէսին ներկայացուց հրատապ հարց
մը. ան կը յայտարարէր հետեւեալը.— «Այս օրերը, պատանիներու
եւ երիտասարդներու անգործութիւնը ծայր աստիճանի հասած է եւ
մեր առջեւ դրած է լուրջ առեղծուած մը, որ ապագային համար կա-
րող է վտանգաւոր բարդութիւններու առաջնորդել»: 1964-ին մօտա-
ւորապէս 2 միլիոն անգործ պատանիներ ու երիտասարդներ կային
Ամերիկայի մէջ, որոնք իրենց չքաւոր ընտանիքներու ենթարկուած
դժուարին դրութեան հրամայականին տակ ստիպուած էին գործ
փնտռել: Այս հարցի շուրջ գոնկրէսը երկար բարակ վիճարանու-
թիւններէ վերջ, բանական ու գործնական միջոց մը չկրցաւ գտնել,
միայն բաւականացաւ յանձնարարել գործատէրերուն, որ «բարեսի-
րաբար» իրենց դիմող երիտասարդներուն, ըլլան անոնք ճերմակ կամ
նէկրօ, մանչ կամ աղջիկ, զբաղելու գործ մը տան, գէթ մասնակի
ժամերով:

Անգործութեան ապահովագրութիւն.—

Բանուոր մը, երբ գործէն կը զրկուի, անոր օգնութեան կը
հասնի անգործութեան ապահովագրութիւնը: Բայց ի՞նչ կուտայ այդ
ապահովագրութիւնը. ամէն 5 տուրարին միայն 1 տուրար: Այսինքն՝
երբ բանուորը շարաթական 80 տուրար կը ստանար գործելու տուն,
անգործութեան պարագային ստանալու էր շարաթական 16 տուրար:
Որ այդ գումարով բանուորը իր կարիքը կրնար հոգալ կամ ոչ՝ այդ
մասին մտահոգուողը ինքը՝ բանուորն էր, ո՛չ թէ կառավարութիւնը:

Նուազագոյն օրավարձի օրէնդրութիւն.—

1964-ին դաշնակցային կառավարութեան մէկ օրինագիծով աշ-
խատանքի նուազագոյն օրավարձի չափանիշ մը որոշուեցաւ, այն է
1·25 տուրար ժամը: Այս օրինագիծը Թրէյտ Իւնիլըններու կողմէ քննա-
դատութեան առարկայ եղաւ. անոնք կը պահանջէին առնուազն ժամին
2 տուրար: Քսան նահանգներու մէջ այդ օրինագիծը գործադրութեան
չգրուեցաւ, միայն 15 նահանգներ այր մարդոց ու կանանց համար
ընդունեցին առաջարկուած օրինագիծը: Իսկ ճաշարաններու, պան-
դոկներու եւ լուացարաններու գործաւորները տարբեր շրջանակներու
մէջ մնացին: Ոմանք կը ստանային ժամին 75 սէնթ, ոմանք 50 սէնթ:
Ասոնց թիւը հաշուուած է մօտաւորապէս մէկ ու կէս միլիոն:

Գործէն վնասուածներ եւ մահեր .—

1953-էն ի վեր Մ . Նահանգներու մէջ գործի պահուիլն արկածով վնասուած բանուորներու թիւը առաջին անգամ ըլլալով մեծ համեմատութեամբ սկսաւ բարձրանալ : Համաձայն Ազգային Ապահովութեան Սորձուրդի վիճակագրութեան , 1962-ին , արկածով վնասուող բանուորներու թիւն էր 2 միլիոն , 1963-ին , այդ թիւին վրայ աւելցաւ 14·200 որով 1963-ի վնասուածներու ընդհանուր թիւը եղաւ 2 միլիոն 14 հազար երկու հարիւր : Իսկ 1965-ին , վնասուածներու թիւը հասաւ 2 միլիոն 50 հազարի : Երկրագործական մարդին վրայ պէտք է ըսել թէ արկածով վնասուող գործաւորներու թիւը հետզհետէ նուազած է : 1962-ին հողագործական աշխատանքի վնասուողներու թիւը եղած է 3·200 : 1963-ին միայն 3 հազար , իսկ 1964-ին 2 հազար 900 : Երկրագործական արդիւնաբերութիւնը միակ ճիւղն է , որ շատ սակաւ վնասուողներ տուած է :

Գալով գործի մէջ արկածով սպաննուած բանուորներուն , անոնց թիւը , համաձայն վիճակագրութեան , աւելի նուազեր է , քան թէ աւելցած : Ասիկա բանուորներու զոչուցութեան հետեւանքն է թէ՛ գործատէրերու կողմէ ի գործ գրուած հոգատարութեան՝ դժուար է ըսել , միայն մենք կը ներկայացնենք վիճակագրութեան ներկայացուած թիւերը : 1963-ին գործարաններու մէջ արկածով մեռնողներու թիւը եղած է 14·200 , 1964-ին 13·800 , իսկ 1965-ին 13·700 : Բայց նկատելի է որ երկրագործութեան մէջ արկածով կամ այլ պատճառներով սպաննուածներու թիւը աւելցած է : 1963-ին , 3·200 հոգի , 1964-ին՝ 3·300 , իսկ 1965-ին՝ 3·500 : Չոր վիճակագրութիւն է եղածը , հոն նշուած չէ թէ այդ մահուան արկածները ի՞նչպէս պատահած են :

Ածխահանքի ճիւղը տակաւին արդիւնաբերութեան ամենէն վըտանգաւորն է : 1952-ին , դաշնակցային կառավարութիւնը Հանքային Ապահովութեան Օրէնքով խիստ քննութեան ենթարկեց եւ ուղեց փակել վտանգաւոր համարուածները , բայց քննիչները կաշառուելով գրութիւնը մնաց նոյնը : 1964 Օգոստոս 17-ին գոնկրէսը նորէն նկատի առաւ այդ հարցը , բայց մարդոց կեանքը պաշտպանելու համար վճռական միջոցներու չզիմեց , որովհետեւ հանքատէրերը հսկայական ծախքերու կ'ենթարկուէին :

Մ . Նահանգներու Հանքերու Բիւրոյի տեղեկագրութեան .—

1962-ին 287 հանքագործներ մեռան արկածներու հետեւանքով : 1963-ին , 284 եղաւ մեռնողներու թիւը :

1964 , Ապրիլ 25-ին Վէստ Վիրճինիայի նահանգին Սարդիս քաղաքին մօտ Քլինկֆիլտ անուխի ընկերութեան մէկ հանքին մէջ մե-

թան-կազի բռնկումի հետեւանքով 42 հանքագործներ վայրկեանապէս սպաննուեցան , իրենց ետեւ թողելով 42 որբեւայրի կիներ եւ 40 երեխաներ՝ 10-էն 18 տարեկան :

Եւրթահ նահանգի Հէլլըր քաղաքին մօտ Քարպու Ֆիւէլ Ընկերութեան մէկ հանքին մէջ 1965 Դեկտեմբեր 16-ին մեթան-կազի բռնկումով 19 հոգի մեռան : Նոյն տարին հանքային արկածներու հետեւանքով մեռան 257 հոգի : Քէնտաքի նահանգին Փայքվիլ քաղաքին մօտ փոքր հանքի մը առաստաղը փլչելով 5 հանքագործներ ողջ ողջ թաղուեցան 800 ոտք խորութեան մէջ :

Բանուորներու վնասուց հատուցումը .—

Ամերիկայի ամէն մէկ նահանգ բանուորներու վնասուց հատուցման օրէնքներ ունի . համաձայն այդ օրէնքներուն , գործի մէջ վնասուած բանուորի աշխատավանձքին երկու կրորդը կանոնաւորապէս վճարուելու է վնասուող բանուորին : Բայց միջին հաշուով նահանգները նոյն չափանիշով վնասուց հատուցում չեն ըներ . ոմանք շարաթական միայն 25 տոլար կը վճարեն , ոմանք՝ 35 տոլար , իսկ ոմանք 45 տոլար : Նոյնիսկ շարաթական 45 տոլար վճարողները երկու կրորդի ճիշդ համեմատութիւն չեն պահեր : Դաշնակցային օրէնք մը չկայ , որ նոյն չափանիշով հատուցում պարտադրէ բոլորին : Դաշնակցային միաձեւ օրէնք մը կայ հանքատէրերուն ու գործատէրերուն համար . անոնք անպայման իրենց գործաւորները պէտք է ապահովագրած ըլլան : Վնասուած բանուորը այդ պարագային գործունի ապահովագրական ընկերութեան հետ . ընկերութիւնը ըստ քմացինչ հատուցում որ տալու յօժարի , բանուորը ընդունելու է : Ընկերութիւնները շատ յաճախ՝ շատ աննշան հատուցում մը միայն կ'ընեն , բանուորը անոնց դէմ դատարանով կռուելու ուժ չունի : Մ . Նահանգներու Աշխատաւորական Դէպարտմընտը վնասուց հատուցման որոշ չափանիշ մը յանձնարարեց բոլոր նահանգներուն , բայց այդ յանձնարարութիւնը նկատի չառնուեցաւ :

Փարմային բանուորներ .—

Մ . Նահանգներու մէջ , ուր կան 3 միլիոն 300 հազար Փարմեր , դժուար է ճշդել Փարմային բանուորներու թիւը , որ կը տարբերի տարուայ զանազան ամիսներուն : Յունուար ամսուան մէջ անոնց թիւը հաշուուած է 750·000 , իսկ Սեպտեմբերին՝ 2·500·000 : 1965-ի Մարտին , Փարմային բանուորներու թիւն էր 971·000 , տասը առ հարիւր պակաս՝ քան 1964 Մարտի թիւը :

Փարմային աշխատանքի օրերը մէկ տարուայ ընթացքին 150

որ պէտք է հաշուել, ո՛չ իսկ տարուան կէսը: Իսկ օրուայ գործի ժամերը՝ արշալոյսէն մինչեւ վերջալոյս:

1965-ի Ապրիլէն, հաշիւ եղած է որ Փարմային բանուորը որպէս աշխատավարձք՝ միջին հաշուով կը ստանայ ժամական մէկ տոլար 18 սէնթ: Անոր սենեակի եւ ուտելիքի ծախքն է շաբաթական \$38.75: Ենթադրենք թէ այդ բանուորը շաբաթը 6 օր եւ օրը 15 ժամ կը գործէ, անոր շաբաթական աշխատավարձքը կ'ըլլայ 106 տոլար 20 սէնթ: Այդ գումարէն եթէ պակսեցնենք սենեակի եւ ուտելիքի ծախսը՝ \$38.75, անոր կը մնայ 67 տոլար 45 սէնթ: Ենթադրենք նոյնպէս, որ այդ բանուորը կօշիկի, դլխարկի, հագուստի, ճերմակեղէնի, լուացարանի ծախս չունենար, ամբողջ տարուան մէջ 22 շաբաթներու ընթացքին՝ անոր տարեկան եկամուտը կ'ըլլայ 1483 տոլար 90 սէնթ. այս գումարով ան պիտի ապրի, իր ընտանիքը պիտի ապրեցնէ տարուան մնացեալ 30 շաբաթներու ընթացքին:

Գաղթական բանուորներ .—

Սիզոնային Փարմային բանուորներու մէկ շորորդը գաղթականներ են, որոնք կը շարժին մէկ աշխատանքի վայրէն միւսը: Քալիֆորնիա նահանգը մասնաւորապէս՝ տարին 180 հազար Փարմային բանուորներ ներս կ'առնէ Մեքսիկոյէն, սիզոնային գործերու համար: Քալիֆորնիայի մէջ աւելի քան 400 հազար անգործներ կան, բայց ազարակապանները դանոնք չեն կրնար գործածել նայած անոնց բարձր աշխատավարձքի պահանջին. իսկ Մեքսիկոցի աշխատուորներուն կը տրուի մէկ ժամուայ համար 95 սէնթ: Այդ բանուորներուն յատկացուած բնակարան կոչուած տեղերը խոզերուն միակ յատուկ է:

Այստեղ չմոռնանք նշել որ գաղթական մէքսիկացի բանուորներուն տրուած աշխատավարձքը համեմատաբար աւելի բարձր է քան Սաութհ Գարոլայնայի Փարմային բանուորներու ստացածը, որ է ժամին 47 սէնթ:

Փարթօ Բիկոցիները Մ. Նահանգներու մէջ .—

Ամերիկայի մէջ 893 հազար փորթօ-Բիկոցիներ կան, որոնք մեծ մասով կ'ապրին Նիւ Եորքի մէջ: Անոնք նէկրոններէն աւելի արհամարհուած, նէկրոններէն աւելի վատթար պայմաններու տակ կ'ապրին, հակառակ անոր որ անոնք ամերիկեան քաղաքացիներ են, հըլու, աշխատասէր եւ պարկեշտ քաղաքացիներ:

Փորթօ-բիկոցիները անորակ կամ կէս որակաւոր բանուորներ են, այդ պատճառով անոնցմէ հարիւրին տասը անգործ են. իսկ անոնք որ կը գործեն, անոնց տարեկան եկամուտն է 2.907 տոլար, մինչդեռ

Նիւ Եորք նահանգին մէջ ապրողի մը համար տարեկան նուազագոյն եկամուտն ըլլալու է 6548 տոլար:

Հէրալտ Թրիպլին թերթի թղթակիցը 1965, Փետրուար 1-ին երբ այցելած է այն «թշուառութեան որոգայթը», ուր բռնուած են փորթօ-բիկոցիները, սարսափելի գոյներով կը ներկայացնէ անոնց աներեւակայելիօրէն խղճալի գրութիւնը: «Արեւելեան Հարլէմի մէջ անոնց բնակած յարկարաժիններուն մէջ նոյնիսկ խոզերը չեն կրնար բնակիլ», կը գրէ թղթակիցը եւ կ'աւելցնէ .— «Երբեք պիտի չմոռնամ այն նկուղը, ուր 5 փորթօ-բիկոցիներ կը բնակին: Անոնցմէ մէկը միայն բացակայ էր, հագուստի գործարանը կը գործէր, երկուքը հիւանդ՝ պառկեալ էին իսկ մէկը փայտ մը ձեռքը պահակ կեցած էր անոնց զլխուն վերեւ: Պահակ՝ դիտէ՞ք ինչու... այնտեղ արջամուկեր կային, որոնք կը վազվզէին հոս հոն... Այդ արջամուկերը մէկուն ականջը կրծեր էին, միւսին քիթը: Երկուքն ալ թունաւորուած էին: Ես սոսկումէս քարացած մնացի... Իսկ սենեակի դարչահոտութիւնն ու աղտոտութիւնը սրտխառնուք կը պատճառէր: Ես չէի կըրնար երեւակայել թէ մերինին նման քաղաքակիրթ եւ հարուստ երկրի մը մէջ մարդիկ կան որ այդպիսի տեղեր կ'ապրին»:

Ամերիկեան թերթի թղթակիցին ամբողջ նկարագրութիւնը արտագրելու պէտք չկայ, այդքանը կը բաւէ: Ականջը խօսի Նախագահ ձոնսընին, որ միլիտոններ կը ծախսէ Վիէթնամի մէջ թոյլ շտաբու համար որ կոմունիստները Հարաւային Վիէթնամի «ղեմոկրատիան» կործանեն, մինչ անդին՝ հարուստ զեմոկրատական երկրի մը՝ Մ. Նահանգներու մէջ ամերիկեան քաղաքացիները արջամուկերու յարձակման կ'ենթարկուին եւ կը մնան անպաշտպան, մինչեւ իրենց կորողը խրուած՝ անտանելի թշուառութեան մէջ:

Փորթօ-բիկոցիները իրենք իրենցմով կազմած են Եղբայրական Օգնութեան Միութիւն մը, միւս կողմէն՝ նահանգային ու քաղաքային վարչութիւնները եւս, տարեկան նպաստներ կուտան թըլուստ փորթօ-բիկոցիներուն, բայց բոլոր այդ օգնութիւններն ու նպաստները աւագուտ անապատին մէջ ջուրի կաթիլներ են, որոնք իրենց ինկած տեղերը իսկոյն կ'անհետանան: Արմատական միջոց մը պէտք է ու դաշնակցային կառավարութիւնը մտահոգուած է միմիայն Հիւսիսային Վիէթնամի կոմունիստ ոչժիւմը կործանելու անչղ նըպատակով:

Նիւ Եորք նահանգին նէկրոններուն հարիւրին 10-ը նպաստ կը ստանան, իսկ փորթօ-բիկոցիներուն՝ հարիւրին քսան հինգը: Ասով կը տեսնենք թէ փորթօ-բիկոցիները մեծ մասով աւելի թշուառ են քան թէ նէկրոնները:

Ամերիկեացի հնդիկները .—

Այն ատենէն ի վեր, այսինքն 1600 թուականի սկզբնական շրջանին, երբ ճերմակ դաղթականները Հիւսիսային Ամերիկայի հողին վրայ ոտք դրին, ամերիկեան հնդիկները հալածուեցան ու քշուեցան դէպի Արեւմուտք եւ հարաւ արեւմուտք:

Քաղաքակրթուած ու քրիստոնեայ ճերմակները ի՛նչպիսի խաչակրութիւն ստեղծեցին հնդիկներուն դէմ, ի՛նչպիսի հրէշային միջոցներով կողոպտեցին անոնց կալուածները եւ կոտորեցին զանոնք անդթօրէն, այդ մասին տեղին չէ անդրադառնալ (*):

Միացեալ Նահանգներու մէջ 570.000 հնդիկներ կան որոնք նախկին ազատ բնիկներն եղած են այս երկրին եւ ապրած են տեսակ մը կոմունական կեանք իրենց ցեղապետներու առաջնորդութեամբ, այսօր դարձեր են ընչազուրկ եւ արհամարհուած արարածներ, մեծ մասով անգործ ու մատնուած թշուառութեան: Անոնք կ'ապրին կառավարութեան կողմէն վերապահուած շրջաններու մէջ պարսպաւորուած՝ ցեղային խտրականութեամբ: Ստան Ստայնըրը, որ այցելեց զանազան հնդիկներու շրջանները, իր զեկոյցով յայտարարեց որ անոնց աղքատութիւնն ու թշուառութիւնը Մ. Նահանգներուն կառավարութեան քաղաքականութեան հետեւանքն է: Հնդիկ ամբակազմ բնակչութեան 75 առ հարիւրը անգործ են: Հնդիկներու թշուառութիւնը հետզհետէ կը տարածուի եւ կը խորանայ այնպիսի համեմատութեամբ որ ան գուրս կը մնայ ընդհանուր հաշուառումէն: (The Nation — Յունիս 22, 1964):

Հնդիկներու բնակարանները եւ առողջապահական վիճակը .—

Հաշիւ եղած է որ հնդիկ ընտանիքներու 90 առ հարիւրը կ'ապրին խեղճուկ բնակարաններու մէջ: Բնակարան կոչուածները թիթեղով ծածկուած հիւղակներ են, որոնց մէջ առողջապահական կանոններ գոյութիւն չունին: Կառավարութիւնը 1964-ին 25 միլիոն տոլար յատկացուց հնդիկներու անտեսական զարգացումին համար, բայց այդ գումարը քառապատկուելու է բազմալի արդիւնքը ձեռք բերելու համար: Այսպէս յայտարարեց Մ. Նահանգներու հնդկական գործերու քննիչը Ֆիլէօ Նաչը, երբ ան Վաշինկտըն վերադարձին՝ տուաւ իր զեկոյցը: «Ախտերու եւ հիւանդութեանց բեռը շատ ծանր է», ըսան ան: «Մնուկի պակասը, բնակարաններու ապառուջ հանգաման-

(*) Այս մասին ես համգամաթիւն անդրադարձած եմ «Յո՞ երթաւ Ամերիկա» իմ ուսումնասիրութեան մէջ, որ հրատարակուած է 1958-ին:

քը, բժշկական խնամքի չգոյութիւնը, ասոնք հնդիկներու կեանքի տեսողութիւնը կ'արճեցուցեր՝ իջեցուցեր են 42-ի: Հազուադէպ է դտնել հնդիկ մը որ թեւակոխած է 60 տարիքը: Հնդիկ նորածին երեխաներէն միայն հարիւրին եօթանասունը կ'ապրին, միւսները՝ երեք տարին չլրացուցած՝ կը մեռնին:

ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՄՂՈՒԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԵՒ «ՄԷՏԻ ՔԷՐԸ»

Ո՛չ մէկ մարդ ճշգիւ մարդարէական գուշակութիւն կրնայ ընել թէ՛ եթէ Ռուզվելթի վարչութիւնը Սովետներու հետեւելով Ընկերային Ապահովութեան (Social Security) օրինադիժը շանցնէր ու յետոյ՝ Նախագահ Թրումընը եթէ պաղ պատերազմի դուռը չբանար, ի՞նչ պիտի ըլլար Ամերիկայի շահագործուող բանուորութեան դրութիւնը: Բայց Նախագահ Ճոնսոնը, 1965 Յունուար 7-ին, գոնկրէսին ուղղած իր պատգամով խիստ յատկանշական յայտնութիւն մը ըրաւ, որով ան պարզեց թէ՛ ո՛չ ընկերային ապահովութեան օրինադիժը, ոչ ալ լոյն կերպով հասկցուած պաղ պատերազմը չեն կրցած ժողովուրդի վիճակը բարելաւել: Ան ըսաւ. — «Ընկերային Ապահովութեան ամբողջական նպատակը կրնայ իրականանալ միայն այն ատեն, երբ մեր ձեռքացած քաղաքացիները հիւանդութեանց յառաջացուած ճնշող պայմաններէն հեռու պահելու համար նոր օրէնքներ պէտք է հրատարակուին»: Անոր այս առաջարկէն յառաջացաւ հասարակական բժշկական խնամքի (medical care) օրինադիժը, 1965-ի Յուլիսին:

Ի՞նչ է այս մէտի ֆէրի ծրագիրը:

Ընկերային Ապահովութեան տակ ապրող քաղաքացի մը, որ 65 տարեկան է կամ աւելի տարիքաւոր, 1966 Յուլիս 1-էն սկսեալ, եթէ հիւանդանոց փոխադրուի, 90 օրուան համար անոր հիւանդանոցի ծախքերը կը վճարէ կառավարութիւնը, պայմանաւ որ առաջին անգամ 40 տոլար վճարէ ինքը՝ հիւանդը եւ 60 օրէն յետոյ՝ մընացեալ 30 օրերուն համար, ամէն օր վճարէ 10 տոլար, որ կը նշանակէ 300 տոլար: Իսկ տան մէջ հիւանդապահուհի խնամքին տակ — առնուազն 3 օր հիւանդանոց մնալէն վերջ — 100 օրերու ծախքերը կը վճարէ կառավարութիւնը պայմանաւ որ 20 օրէն յետոյ՝ մնացեալ 80 օրերուն համար, հիւանդը ամէն օրուան համար վճարէ 5 տոլար: Իսկ այն որ հիւանդանոց չէ մտած ու իր տան մէջ հիւանդ կը մնայ, մասնակցելու է բժշկական քննութեան եւ բժշկի այցելութեանց ծախքերուն, առաջին անգամ վճարելով 20 տոլար, եւ մնացեալ օրերուն համար՝ հարիւրին 20 տոլար:

Ասկէ զատ որդեգրուած օրինագիծը ուրիշ տրամադրութիւն մըն ալ ունի մասնաւորապէս անոնց համար, որոնք կամաւորապէս կը մասնակցին բժիշկի եւ ուրիշ զեղօրայքի ծախքերուն՝ ամէն ամիս վճարելով 3 տոլար: Այդ հաշիւին մէջ առնուած է բժիշկի հոգատարութիւնը հիւանդանոցի կամ տան մէջ, ինչպէս նաեւ վիրաբուժի ծառայութիւնները, X ճառագայթի գործածութիւնը, արհեստական սրունքները եւայլն: Այդ պարագային, հիւանդը տարեկան վճարելու է 50 տոլար եւ մնացեալ ծախքերուն համար հարիւրին 20 տոլար:

Սոյն օրինագիծը գործադրութեան դրուիլ սկսելու առաջին ամսոյն՝ ապիւնքն 1966-ի Յուլիսին, արդէն ծայր տունը շարք մը անախորժութիւններ: Անցեալ օր թէլէվիզիոնի վրայ ներկայացուեցան շատ մը հետաքրքրական՝ նոյն ատեն վշտառիթ դէպքեր: Փէնսիլվանիա քաղաքի մէկ հիւանդանոցին մէջ տասնեակներով հիւանդներ, որոնք չէին կրցած վճարել օրինագիծի պահանջած ընթացիկ դրամները (առաջին անգամ 40 տոլար, եւ իւրաքանչիւր օրուան համար տասական տոլար), հիւանդ վիճակով դուրս հանուեցան հիւանդանոցէն:

Եւ ասոր անունը դրած են հասարակական բժշկական նպաստի օրինագիծ, որ մեծ ոգեւորութիւն ստեղծեց ժողովուրդի մէջ:

Չարմանալի չէր, ուրեմն, որ Ամերիկայի Բժիշկներու Ընկերակցութիւնը (American Medical Association) այնքան բուռն հակառակութիւն ցոյց չտուաւ սոյն օրինագիծի որդեգրման ատեն, ինչքան յամառ հակառակութիւն որ ցոյց տուաւ 14 տարի առաջ, երբ ժողովրդական քուէարկութեան կարիքներու ցանկին վրայ դրուած էր ընկերային բժշկութեան նպաստի հարցը (Social Medicine):

Ի՞նչ էր այդ հարցը:

Բժիշկները պետական ծառայողներ պիտի դառնային: Անհատական հիւանդանոցները պիտի ազգայնանային: Չրի բժշկական ծառայութիւն: Հիւանդ մը նուազագոյն չափով զեղօրայքի վճարում պիտի ընէր միայն: Իսկ բժիշկներու ամսաթոշակներու վճարման համար ամէն մէկ քաղաքացի՝ համաձայն իր նիւթական դրութեան՝ որոշ գլխահարկ մը վճարելու էր կառավարութեան: Ասով Ամերիկայի բժիշկները պիտի կորսնցնէին իրենց ազատ շահագործման մոնոպոլիա եւ պիտի դառնային վճարովի գործաւորներ: Անոնց եթէ առաջարկուէր 4 հազար տոլար ամսաթոշակ, անոնք դարձեալ պիտի չյօժարէին ընդունիլ ժողովուրդին ձրի ծառայելու այդ գործը, որովհետեւ ամէն մէկ բժիշկ ամիսը այդ գումարին կրկնապատիկը կամ եռապատիկը կրնայ գրպանել: Ահա թէ ինչո՞ւ Ամերիկայի Բժիշկներու Ընկերակցութիւնը այդ շրջանին, իրար անցաւ, եւ սկսաւ աշխոյժ պրոպականդի: Մարդիկը միլիոններ ծախսեցին, թերթերը

կաշառեցին, հնչեցուցին այն սարսփազդու ահազանքը, որ երկիրը կը դիմէր դէպի կոմունիզմ:

Բարեբախտաբար, տիրող պայմաններն ալ նպաստաւոր էին իրենց համար, որովհետեւ սկսեր էր պող պատերազմը: Եւ այդ մարդիկը յաջողեցան: Անոնք անտարակոյս կը յաջողէին նաեւ Մէտի Քէրի օրինագիծը ջուրը ձգելու գործին մէջ ալ, բայց անոնք նկատեցին որ իրենց ձեռքն ինկող հիւանդներու մորթը քերթելու անսանձ ազատութիւնը այդ օրինագիծով չէր կաշկանդուէր. ասոր համար մարդիկը սոսկ կաղկանձումներ արձակեցին ու լռեցին:

Այստեղ, պէտք է ըսել թէ ամերիկեան ժողովուրդը խորաթափանց ժողովուրդ չէ, այլ ենթարկուող՝ կարճատես ժողովուրդ է:

Ամերիկեան ժողովուրդը մինչեւ այսօր ալ՝ այն համոզումը ունի թէ՛ անցեալին, Սոշլի Մէտիսքնի եւ ի վերջոյ՝ Մէտիքնի Քէրի հակառակողը եղած է միմիայն Ամերիկայի Բժիշկներու Ընկերակցութիւնը: Ընչդ է, որ այդ ընկերակցութիւնը կեցած էր եւ կեցած է պայքարի առաջին ճակատին վրայ, բայց պէտք է զիտնալ որ անոր նկուզ կեցեր են վիթխարի եւ անպարտելի հաստատութիւններ՝ ինչպիսիք են, Ա.— Ապահովագրական ընկերութիւնները. Բ.— Պանքաները. Գ.— Նոյն ինքը՝ կառավարութիւնը:

Այժմ քննենք իւրաքանչիւրին հակառակութեան հիմքը:

Ա.— Ապահովագրական ընկերութիւնները հակառակ են Սոշլի Մէտքսքնին, որովհետեւ Ամերիկայի բնակչութեան դրեթէ 80 առ հարիւրը արկածի ու հիւանդութեան դէմ ապահովագրուած են եւ տարին միլիոնաւոր տոլարներով կը պարարտացնեն այդ ընկերութեանց գանձարանները, որոնց առջեւ կը գոցուին այդ յորդառատ եկամտային աղբիւրները, երբ հաստատուած կ'ըլլայ ընկերային ապահովութեան նպաստի սխտէմը:

Բ.— Պանքաները հակառակ են, որովհետեւ մէկը երբ կ'իյնայ բժիշկի մը ճիրաններուն մէջ, երբ միջակ կարողութեան տէր է, անոր անանկութիւնը անխուսափելի է: Մարդ մը երբ կը հիւանդանայ ու կը դիմէ բժիշկի մը, ան պէտք է լեցնէ հարցարան մը, ուր պարտի պարզել իր Փինանտական վիճակը, պանքաներուն մէջ ո՞րքան խնայած դրամ ունի, կալուած կամ տուն ունի՞, որքան կ'արժեն անոնք: Ամերիկացի բժիշկը աչքէ անցնելով հարցարանի հարցումներուն տրուած պատասխանները, երբ կը տեսնէ որ իրեն զիմողը չբաւոր մէկն է, պատրուակով մը զայն իր պաշտօնասէնեակէն դուրս կը հանէ. ան ներս կ'առնէ միայն խուզուելիք բուրդ ունեցող ոչխարները, որոնցմէ շատերը կը մօտենան անանկութեան: Մարդիկը ստիպուած պանքային կը դիմեն իրենց մէկ կալուածը, տունը եւ կամ իրենց մէկ եկամտային աղբիւրը գրաւի տակ դնելով դրամ փոխ առնելու՝ որ-

պէսզի կարողանան վճարել բժիշկին կուտակած պահանջազրերը: Առ-
շըլ Մէտիսընը կուգայ պանքաներու տոկոսային փոխառութեան
գործառնութիւնը պակսեցնել:

Գ.— Կառավարութիւնը ինքը հակառակ է, որովհետեւ որքան
մեծ ըլլայ բժիշկներու կողոպուտի եկամուտը, նոյնքան կը մեծնայ
անոնց եկամտային տուրքը: Քանի՛ քանի՛ բժիշկներ բռնուած են
խարդախութեան մէջ, որոնցմէ կառավարութիւնը զանձեր է ո՛չ
միայն չվճարուած եկամտային տուրքերը, այլև զանոնք մինչև 50
հազար տոլարի տուգանքի դատապարտեր է եւ առանց այլեւայլի
զանձեր է որոշուած տուգանքները: Առշըլ Մէտիսընով կառավարու-
թիւնը կը զրկուի եկամտային այդ ազբիւրներէն, եւ որ ամենէն գէշն
է՝ այդ պարագային ի՛նք պիտի մտածէ նոր ազբիւրներ հնարել՝ չը-
ռայութեան վարժուած պահանջկոտ բժիշկները գոհացնելու համար:

Այսպէս, ուրեմն, կը տեսնենք թէ կապիտալիստական առաջա-
ւոր երկրի մը մէջ, որպիսին է Ամերիկան, սարգերը իրենց ոստայն-
ները այս ու այն անկիւնը պատրաստեր են ճանճերը բռնելու համար:

3.— ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՉԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՀԱՄԵՄԱՏ
ԱՌՆՈՒԱԾ ՔԱՅԼԵՐԸ

Ատումական գեներու մրցումը

Երկրի պաշտպանութեան Քարտուզար Բարբրա Մըքնամըրա,
Զինուորական Ծառայութեան Կոմիտէին առջեւ յայտարարեց, որ
պատերազմի պարագային, երբ Ս. Միութիւնը ատումական ուժեր
ու նետակներ գործածէ 122 միլիոն ամերիկացիներ պիտի մեռնին
1970-ին: Ասիկա պիտի ըլլայ Մ. Նահանգներու զանգաղաշարժ քա-
ղաքականութեան հետեւանքը: «Հետեւարար», ըսաւ ան, «մենք
պէտք է 25 միլիոն տոլար ամէն տարի աւելի ծախսենք մեր երկրի
պաշտպանութեան համար, այն ատեն, հաւանական է որ 80 միլիոն
կեանքեր խնայած կ'ըլլանք: Բայց որոշ թիւով զիտնականներ, Հիրո-
չիմայի եւ Նահասաքիի դէպքերը վերջիշելով կ'ըսեն թէ «Ջերմամի-
ջուկային զէնքերուն դէմ պաշտպանութիւն անհնարին է: Սպառազին-
ման արշաւին մէջ երկու կողմերն ալ՝ Ամերիկան եւ Սովետ Միու-
թիւնը որքան կրկնապատկեն իրենց զինուորական ուժը այնքան կը
նուազեցնեն իրենց երկրի ապահովութիւնը: Եւ անոնց եղբակացու-
թիւնը հետեւեալն է.— «Եթէ մեծ պետութիւնները իրենց առջեւ
ցցուած ապահովութեան առեղծուածը լուծել կ'ուզեն միմիայն զի-
տութեան ու տեխնիկայի զարգացման միջոցով, մէկ խօսքով կործա-
նարար զէնքերը կատարելագործելու ճամբով, գրութիւնը աւելի կը
վատթարանայ»:

Ապագայի այդ սարսափելի հեռապատկերը աչքի առաջ ու-
նենալով Վոյթըր Միլիս, պատերազմի քաղաքական նշանակութիւնը
ուսումնասիրող ամենէն հմուտ ամերիկացին իր վերջին գիրքին՝ Սպա-
ռազինման վերջ տալի մէջ կ'ըսէ.— «Միակողմանի տեսութիւն է
Ջերմամիջուկային պատերազմի ատեն նկատի առնել միմիայն մեռ-
նողները. եթէ Ամերիկայի մէջ 80 միլիոն մարդիկ մեռնին, 120 մի-
լիոն մարդկային էակները ենթակայ պիտի ըլլան թունաւորման,
այրուածքներու, եւ զանազան ձեւի վէրքերու: Ամենէն մեծ ցնցող ի-
րականութիւնը, սակայն, այն է, որ Մ. Նահանգները, Սովետ Միու-
թիւնը եւ միւս առաջաւոր պետութիւնները իրենց բոլոր փայլուն
զիտնականներն ու բնագէտները, որոնք հասարակութեան բարօրու-
թեան կրնան ծառայել, լծած են կործանարար զէնքերը աւելի եւ
աւելի զարգացնելու գործին, որ ո՛չ մէկ դրական օգուտ ունի. անոր
պտուղներն են չարչարանք, աւերածութիւն, համատարած մահա-
ցում եւ հաւանականօրէն մարդկային սեռի բնաջնջում: Ծատերու հա-
մար անլուծելի առեղծուած է մարդկային ապահովութեան հարցը:
Այդ առեղծուածը կը հրապարակեն՝ սպառազինման արշաւը արդա-
րացնելու համար, մինչդեռ ան շատ դիւրութեամբ կը լուծուի կշռա-
դատ բանավարութեամբ. այն է՝ վերջ տալ Ջերմամիջուկային զէն-
քերու փորձառութեանց, ապօրինի հռչակել աթոմական զէնքերու
պատրաստութիւնը, փճացնել համատարած մահացման զէնքերը եւ
միջազգային կնճոտ խնդիրները կարգադրել Միացեալ Ազգերու
կազմակերպութեան միջոցով: Չէ՞ որ ՄԱԿ-ը կազմուած է այդ նպա-
տակին համար. խորհրդակցութիւն՝ ոչ թէ թշնամական լարուածու-
թիւն. բանական հասկացողութիւն եւ համաձայնութիւն՝ ո՛չ թէ պա-
տերազմ:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ

Մ. Նահանգներու Պաշտպանութեան բաժանմունքը մի քանի
ընկերութեանց ձեռքերուն մէջ կեդրոնացուցեր է զինուորական պայ-
մանագրութիւններ, որովհետեւ այդ ընկերութիւններն եղած են ամե-
նէն առաջ եւ ամենէն աւելի երկրի ապահովութեան խնդրով մտա-
հոգուողները...: 1964-ին, կառավարութիւնը 100 ընկերութեանց եւ
անոնց ստորակարգեալներուն յանձնած է զինուորական պայմանա-
գիրերով պարտադիր յանձնարարութիւններ: Անոնցմէ 25 ընկերու-
թեանց տրուած պայմանագրութիւնները 50 առ հարիւր տոկոսով ա-
ւելի են քան միւսներու ընդհանուր գումարը:
Յաջորդական երեք տարիներու ընթացքին, Լաքհա Օդանա-

ւային Քորպորէշընը, որ առաջին կարգին վրայ է, ստացեր է մէկ երկիրին 445 միլիոնի պայմանագրութիւն:

Անոր կը յաջորդէ Բոյինկ Ընկերութիւնը, որուն ապահոված պայմանագրութիւնն է մէկ երկիրին 365 միլիոն տոլար: Անկէ վերջ կուզայ ՄքՏանէլ Օղանաւային Ընկերութիւնը՝ մէկ երկիրին 157 միլիոն տոլարի պայմանագրութեամբ: Վերջը կուզայ Ամերիկեան Օղանաւաչինութիւնը, մէկ միլիոն, եւ Ընդհանուր Դայնամիկ Քորպորէշընը՝ 987 միլիոն տոլարի պայմանագրութեամբ:

Պաշտպանութեան Բաժինը հետախուզական եւ կատարելագործութեան գիծով խոշոր յանձնարարական պայմանագրութիւններ կեդրոնացուցեր է մի քանի ընկերութեանց ձեռքը, մինչ շատեր զրկուած են այդ պատահութիւններէն: Լոս Անճելըսի մէկ գերամատուներ, 1 Մարտ 1965-ին յայտարարեց որ Պաշտպանութեան Բաժինը հետախուզութեան ու կատարելագործութեան շուրջ պայմանագրութիւնները յանձնած է միայն հինգ ընկերութեանց, մինչ անդին քսան ուրիշ ընկերութիւններ կան, որոնք կրնային մասնակցել այդ կարեւոր գործին:

Այստեղ կը տեսնենք թէ միայն բանուորները չեն որ զրկանքի կ'ենթարկուին, կապիտալիստական ընկերութիւններն ալ ենթակայ են նոյն ճակատագրին:

ՓՈՐՁԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԳԻԼՈՂ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ եւ Սովետ. Միութեան միջեւ 1963 Օգոստոս 3-ին, Մոսկուայի մէջ կնքուեցաւ դաշնագրութիւն մը, որ ապօրինի կը հռչակէ ջերմամիջուկային փորձարկութիւնը միջնորդի մէջ, միջոցին մէջ եւ ջուրին մէջ: Սոյն դաշնագրութիւնը Մ. Նահանգներու Մերակոյտը վաւերացուց Սեպտեմբեր 24-ին եւ յետոյ՝ 100 ուրիշ ազգեր եւս ստորագրեցին այդ դաշնագրութեան տակ:

Յօդուած 1-ը կը յայտարարէ. — «Այս դաշնագրութիւնը ստորագրող կողմերը յանձն կ'առնեն արգելել եւ առաջ չտանիլ որեւէ ջերմամիջուկային գէնքերու փորձարկումն ու պայթումը իրենց օրէնսդրական ազդեցութեան սահմաններուն մէջ, ըլլայ այդ միջնորդին մէջ, կամ անոր սահմանէն անդին՝ միջոցին մէջ, ներառեալ իրենց ցամաքային երկրամասերու կից ջուրերը եւ բաց ծովերը»:

Բայց այդ դաշնագրութիւնը բացարձակապէս չէր արգելէր ջերմամիջուկային փորձերը. այդպիսի փորձեր կը թոյլատրուէին գեանին խորերը, որ տեղերէն դուրսի օդը չէր թունաւորուէր:

Այդ դաշնագրութիւնը նոյնպէս կը թոյլատրէ որ ստորագրող պետութիւններէն որեւէ մէկը իրաւունք ունենալու էր քաշուիլ պայ-

մանագրութեան պարտաւորութիւններէն, պայմանաւ որ երեք ամիս առաջ յայտնէր իր հեռանալու դիտաւորութիւնը եւ պարզէր թէ ինք այդ քայլը կ'առնէր իր երկրի գերազոյն շահերուն համար:

Ասիկա առաջին համաձայնութիւնն էր որ տեղի կ'ունենար երեք մեծերու միջեւ եւ յոյս կը ներշնչէր այն խաղաղասէր մարդոց, որոնք պետական մարդոց մէջ կը սիրէին տեսնել մարդասիրական ըզգացումներ:

Խաղաղութեան համաժողով. —

Խաղաղութեան եւ խաղաղ համակեցութեան քննարկումի համար Միջազգային Համաժողով մը դումարուեցաւ Նիւ Եորքի մէջ 1965 Փետրուար 17-20 օրերուն: Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն յետոյ՝ ամենէն նշանակալից ժողովն էր որ կը դումարուէր ժողովրդական ներկայացուցիչներու նախաձեռնութեամբ: Այնտեղ կը լսուէր նաեւ Հոովի Պապին պատգամը:

Համաժողովի բացումը կատարուեցաւ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի սրահին մէջ, ուր ուղերձներ ըրին ՄԱԿ-ի Ընդհանուր Քարտուղարը եւ Ընդհանուր Ժողովի նախագահը: Այս վերջինը հետեւեալ խօսքերով սկսաւ իր ուղերձը. — «Այս համաժողովին նպատակն է գտնել այն կտրուկ միջոցը՝ թէ մենք ինչպէ՛ս կրնանք հասնիլ խաղաղութեան. խաղաղութիւն՝ ոչ թէ պատերազմի միջնորդութեամբ, խաղաղութիւն՝ ո՛չ թէ տեսորի սարսափելի մեխանիզմի հրամայականին տակ, այլ բանավարութեան ճամբով խաղաղութիւն, մաքուր, պարզ եւ տեւական խաղաղութիւն»:

Համաժողովին մէջ, ուր 20 ազգեր իրենց ներկայացուցիչներով կը մասնակցէին եւ կային 2500 ժողովրդական հոսանքներու պատկանող մարզիկ, որեւէ բացորոշ որոշում չանցաւ. միայն ուղերձ ընողները համակիր արտայայտուեցան Ընդհանուր Քարտուղար Եուսթանի կոչին՝ Վիեթնամի պատերազմը համաձայնութեան գիծով վերջացնելու համար: Եւզինէ Չուբով, Խ. Միութեան Գիտութեան Ակադեմիայի Դիրեկտորը, Համաժողովին մէջ չքաշուեցաւ ըսել հետեւեալը. — «Ես իմ պարտականութիւնը կը համարեմ սոյն գերագոյն հաւաքոյթին յայտարարել որ Սովետական հասարակութիւնը խտորէն կը դատապարտէ Մ. Նահանգներու զինուորական միջամտութիւնը Վիեթնամի մէջ, բան մը՝ որ գործնականօրէն կը հակասէ Ամերիկայի խաղաղասիրական արտայայտութիւններուն»:

Համաժողովին քննարկած միւս հարցերն էին ազդերու վիճակետական իրաւունքը, միջազգային օրէնքը, զանազան երկիրներու մէջ տիրող թշուառութիւնը, ցեղային խտրականութիւնն ու ազատութիւնն ու ազատութիւնը, յետամնաց երկիրներու անտեսական օժան-

զակութիւնը, ՄԱԿ-ի ուխտադրի վերատեսուծիւնը, համաշխարհային կառավարչութիւնը, միջուկային զէնքերու բազմածին վասնզները, գերմանական առեղծուածը եւ միջազգային համադործակցութիւնը:

Համաժողովի թերի կողմն այն էր որ բանուորական միութեանց եւ ամերիկեան նեկրոներու առաջնորդները իրենց լիակատար կազմով ներկայ չէին հոն: Այնտեղ ներկայացուցիչ չունէր նաեւ Քուպան, Հիւսիսային Վիեթնամի Դեմոկրատական Հանրապետութիւնը, Արեւելեան Գերմանիոյ Դեմոկրատական Հանրապետութիւնը եւ Ժողովրդական Չինաստանը:

Վիեթնամի արքնցուցած խղճի խայթը —

Պաղատութեան եւ ազատութեան համար կազմուած Կիներու Միջազգային Լիկան, իր կազմակերպութեան 50-րդ տարեդարձը տօնեց 1965-ին: Լահէյի մէջ կազմուած էր այդ Լիկան՝ Ա. Համաշխարհային պատերազմի տարին, անկէ յետոյ՝ ենթարկուած էր կազմալուծեալ դրութեան: Ամերիկայի զինուորական միջամտութիւնը Վիեթնամի մէջ, եւ հոն կատարուած անպատմելի խժողութիւնները արթնցուցեր էին մարդկային խղճի խայթի զգացումը՝ ամենուրեք: Նոյն խղճի խայթը վերակազմեց ու գործունէութեան ճակատը առաջնորդեց Կանանց Միջազգային Լիկայի ամերիկեան հատուածը, որ սկսաւ աշխոյժ գործունէութիւն ցոյց տալ: 1964 Մայիս 7-ին 37 նահանգներէ 2500 կիներ հաւաքուեցան Վաշինկթընի մէջ եւ ազդու ցոյց կազմակերպեցին Սպիտակ Տան գիմաց: Անոնք կը բողոքէին սպառազինման զիծով վիթխարի զուամարներ մտնելուն դէմ, ՆԱՌՕ-ի անգամ 25 ազգերը զինելու ծրագիրին դէմ: Պետական Պաշտօնատան բարձրաստիճան մարզիկը, սակայն, պարապ խոստումներով ճամբու դրին զանոնք:

Կանանց Միջազգային Լիկան (ԿՄԼ) ծրագրած էր Լահէյի մէջ զուամարէլ քոնֆէրանս մը, 1964, Մայիս 12-14 օրերուն, այսինքն նոյն օրերուն՝ երբ Նաթօ-ն եւս պիտի դուժարէր իր խորհրդաժողովը նոյն քաղաքին մէջ: Հոլանտական կառավարութիւնը նախ մերժեց թոյլատրել Մ. Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ եւ Գանատայի կին պատգամաւորներուն մտնել երկրէն ներս, բայց յետոյ՝ փոխեց իր որոշումը, երբ հաւաստում տրուեցաւ որ կիները ոչինչ կրնային ընել: Եւ արդարեւ, հոն հաւաքուած 1,300 կիները, Նաթօ-ի շէնքին առջեւ կազմակերպած ցոյցէն զատ ոչինչ կրցան ընել:

Նոյն տարուան՝ 1964-ի վերջերք՝ Դեկտեմբերին, երբ Նաթօ-ի անդամ պետութեանց արտաքին գործոց նախարարները Փարիզի մէջ խորհրդաժողով կը զուամարէին, ԿՄԼ-ի միջազգային խումբերու ներ-

կայացուցիչները փութացին հոն, բողոքի ցոյցեր կազմակերպելու նպատակով: Մէկ օրէն, ԿՄԼ-ի երկու կին առաջնորդները անմիջապէս ձերբակալուեցան ու նետուեցան բանտ: Նոյն օրերուն՝ Նիւ Եորքի մէջ ձերբակալուեցան ԿՄԼ-ի երկու հիմնադիրները՝ Տիկին Դակմա Վիլսըն եւ Դոննա Ալէն, որպէս կոմունիստներ:

1965-ի Յունուարին, ԿՄԼ-ի 350 անդամներ Մերակոյաի Արտաքին Յարաբերութեանց Կոմիտէին առջեւ կանչուեցան Վիեթնամի մասին տարուած քաղաքականութեան շուրջ իրենց յառաջ տարած բողոքի շարժման բացատրութիւններ լսելու համար: Ամերիկացի այդ մայրերը առանց վարանումի պարզեցին իրենց քննադատութիւնը, որ Ամերիկան Վիեթնամի պատերազմին մէջ զուր տեղը արիւն կը թափէ եւ թոյլ չի տար որ Վիեթնամի ժողովուրդը իր ձեռքով տնօրինէ իր սեփական ճակատագիրը:

Ամերիկայի մէջ հակապատերազմական տրամադրութիւնները թէեւ զսպուած՝ բայց լայնօրէն տարածուած էին ո՛չ միայն կիներու եւ խղճմասանքի տէր խոհուն մարդոց մէջ, այլեւ ուսանողական շրջանակներու մէջ, որոնք կը տեսնէին թէ զինուորական ծառայութեան տարիքը կը թեւակոխէին շուտով եւ իրենք եւս պիտի մեկնէին ճակատը այն պատերազմին, որ բնաւ կապ չունէր իրենց հայրենիքի պաշտպանութեան հետ: Իրենք ի՞նչ հաշիւ ունէին Վիեթնամի մէջ: Բողոքներ, ցուցարարութիւններ բոլոր գլխաւոր քաղաքներուն մէջ: 1965-ի Ապրիլին, 20 հազար անձեր, մեծ մասով ուսանողներ Մ. Նահանգներու բոլոր կողմերէն, զիմեցին Վաշինկտոն՝ Վիեթնամի պատերազմը վերջացնելու նպատակով: Անոնք ընտրած չէին ապօրինի միջոցներէն տէնորը կամ բռնութիւնը, այլ օրէնքի թոյլատրած ճամբան, խաղաղ ցոյցը եւ խնդրանքը: Անոնք նախ զիմեցին ձերմակ Տան առջեւ, ապա պետական շէնքին զիմաց՝ գոնկրէսին խնդրանք մատուցանելու համար: Կառավարութիւնը պատերազմի հակառակ ցուցարարներուն դէմ հանեց «Իրական հայրենասէր» ցուցարարներ, որոնք Վիեթնամի պատերազմին մէջ դրած էին ճնշուած ազգերու ազատութեան ախոյեան գեմոկրատ Ամերիկայի պատիւը, այն Ամերիկան՝ որ աշխարհաքանդ կոմունիզմի դէմ կը կռուէր մարդկութիւնը անարգ ստրկութեան ազատելու համար: Պատերազմի հակառակ եւ պատերազմի ջատագով ցուցարարներու միջեւ տեղի ունեցան թեթեւ ընդհարումներ: Պաղը արդէն սկիզբէն պատրաստուած էր խնամքով: Կառավարութիւնը զինու. զօրութեամբ միջամտեց թէեւ շքանշաններով չվարձատրեց պատերազմի ջատագով ցուցարարները, որոնց կ'իյնար անախորժ ընդհարումի պատասխանատուութիւնը, որովհետեւ անոնք էին առաջին յարձակողները, բայց պատերազմի հակառակ ցուցարարները հռչակեց որպէս կոմունիստ, օ-

տար կառավարութեան գործակալներ, եւ իսկոյն ձերբակալեց անոնց գլխաւոր առաջնորդները: Չախողեցաւ այդ ցոյցն ալ:

Խաղաղութեան համար ուրիշ ուժեր:—

Բոլոր գլխաւոր քաղաքներու մէջ 1962-էն ի վեր կազմուած են դանազան կազմակերպութիւններ, որոնց նպատակն եղած է Ամերիկան ետ կեցնել յարձակողական քաղաքականութենէն: Այդ կազմակերպութիւնները ո՛չ միայն կոմունիստներուն հետ կապ չունին, այլ ընդհակառակը մղոններով հեռու են կոմունիստական գիծէն: Օրինակի համար Մէսէցուէցի խաղաղութեան համար քաղաքական գործունէութեան կոմիտէն, որ կազմուած է Հարվըրտ Համալսարանի փրոֆէսոր Ստուտ Հիւզի ջանքերով: Ասոր նման կան նաեւ տարբեր տարբեր անուններ կրող ընկերութիւններ, ինչպէս Ազատ Սօսքի Շարժումը, Ոչ-բռնութեան Գործողութիւն Խաղաղութեան Համար, Ճըլ-ժարիտ Դեմոկրատիզմի Լիկան, Հարաւային Ուսանողական Կազմակերպութեան Կոմիտէ, եւ ասոնց նման տասնեակներով ուրիշներ: Ասոնց հետեւողական կարգով կղերականները կուզան, որոնք առանց բացառութեան՝ պատերազմի դէմ են եւ կը սիրեն տեսնել հաստատուած՝ տեւական խաղաղութիւն մը:

Այս բոլոր կազմակերպութիւններն ու խաղաղասէր անհատները խաղաղութեան երազը որոճալով չեն բաւականանար, անոնք մերթ երկչոտ, մերթ ազդու դիմումներ կ'ընեն Նախագահին, նախագահի դահլիճին, դահլիճի անդամներուն, գոնկրէսին, գոնկրէսի անդամներուն, բայց ամէն ատեն անոնց ստացած պատասխանը հետեւեալն է. — «Մ. Նահանգներու կառավարութիւնը ամենաջերմ ախոյեանն է խաղաղութեան. բայց այդ խաղաղութիւնը ըլլալու է պատուաւոր խաղաղութիւն»:

Եւ ի՞նչ կը հասկնանք պատուաւոր խաղաղութիւն անունին տակ. — Կոմունիստ Հանոյի կառավարութիւնը պէտք է ծունկի գալ ու ապաւինի Ամերիկայի գթասիրութեան:

Խաղաղութեան համար երազող ու աշխատող կազմակերպութիւններն ու անհատները, սակայն, անառարկելի ճշմարտութիւն մը կայ, զոր կ'անդիտանան. այդ այն է, որ Մ. Նահանգներու օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնները ներկայիս՝ սոսկ անուանական մարմիններ են, Ամերիկայի Անրֆին եւ արտաքին քաղաքականութիւնը ղեկավարողը ամերիկեան զինուորականութիւնն է. միւս բոլոր հիմնարկութիւնները ուղղակի կամ անուղղակի կերպով ենթարկուած են անոր հրամաններուն: Ահա թէ ո՛ւր է ծածկուած կատղած շան գլուխը:

4.— ՆէկրՈՆԵՐԸ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Նէկրոնբու եկամուտները:—

Nation շարաթաթերթը եւ Ֆիսկ Համալսարանի Փրոֆ. Հէն-տըրսըն, մասնաւորապէս ուսումնասիրելով նէկրոններու տնտեսական գոյավիճակը, կը տեղեկագրեն որ Ամերիկայի մէջ նէկրո ընտանիքներու 60 առ հարիւրը տարեկան 4 հազար տոլարէն նուազ եկամուտ ունին քան սպիտակամորթ ընտանիքներու 28 առ հարիւրի ունեցած տարեկան եկամուտը:

Սպիտակամորթ ընտանիքներու աշխատավարձքի կամ թոշակի եկամուտը 1961-ին, միջին հաշուով՝ 5·570 տոլար էր, բայց ոչ-ճերմակներունը՝ միայն 2·908 տոլար էր: Ուրիշ խօսքով, ոչ-ճերմակներու տարեկան եկամուտը 52 առ հարիւր պակաս էր քան ճերմակներու եկամուտը: Եղած ուսումնասիրութեան եզրակացութիւնն է սպայէս. — «Ներկայիս նուազ եկամուտ ունեցող նէկրո ընտանիքներու եկամուտը կրկնապատկուած է, ինչպէս ճերմակներունը. ասով ճերմակներու եւ նէկրոններու միջև եղած եկամուտի տարբերութիւնը զրեթէ նոյն համեմատութեամբ կը մնայ անջատուած»: Այդ տարբերութեան հետեւանքով նէկրոնները նետուած են պայքարի ճակատին վրայ: Միայն այստեղ յոյժ շահեկան նշանակելի կէտ մը կայ, զոր կ'ուզենք պարզել, այդ այն է որ 1940-էն 1961 տարիներու ընթացքին կրկնապատկուած է թիւը այն նէկրոններուն, որոնք կէս-որակաւոր եւ ճերմակ օձիքաւոր բանուորներու շարքը մտեր են: Այս երեւոյթը նկատելի է Հիւսիսի նահանգներուն մէջ, իսկ Հարաւային նահանգներուն մէջ նէկրոններու տնտեսական գոյավիճակը շատ աննշան բարելաւում ստացեր է, որովհետեւ այդ նահանգներուն մէջ ցեղային խտրականութիւնը ուժեղ է, լաւ վճարուած գործերը նէկրոններուն չեն տրուիր:

Ամերիկեան նէկրոններու 50 առ հարիւրը կեդրոնացած են Հարաւի մէջ եւ Հարաւը ընդհանուր ազգային եկամուտին միայն 20 առ հարիւրը կը ստանայ: Այդ շրջաններու նէկրոններու տնտեսական դրութիւնը բարւոքելու համար անհրաժեշտ է վերցնել կրթութեան եւ մարդկային աշխատութի օգտագործման մէջ զոյութիւն ունեցող ցեղային խտրականութիւնը:

Գլխաւոր քաղաքներու մէջ. — Ազգային Քաղաքային Լիկան մասնաւոր ուսումնասիրութիւն կատարելով մեզի ցոյց կուտայ 11 գլխաւոր քաղաքներու մէջ նէկրո ընտանիքներու տարեկան միջին եկամուտը հետեւեալ կարգով. Նիու Օրլէանի մէջ՝ 2·977 տոլար. Ատլանտա-Ճորճիա նահանգ՝ 3·033 տոլար. Սէնտ Լուիզ՝ 3·622 տոլար.

Ֆիլատելիա՝ 4.291 տոլար. Տիգրոյիդ՝ 4.385 տոլար. Նիւ Եորք՝ 4.484 տոլար. Կէրի Հէմմըն — Ինտիանա նահանգ՝ 4.763 տոլար. Վաշինկտոն — (մայրաքաղաք) 4.785 տոլար. Քլէվլէնտ՝ 4.768 տոլար. Շիգակո՝ 4.786 տոլար. Լոս Անճէլըս՝ 5.163 տոլար:

Սոյն քաղաքներուն մէջ ճերմակ ընտանիքներու տարեկան եկամուտը միջին հաշուով 6 հազար տոլար է: Ո՛չ մէկ նէկրո ընտանիք այդ գումարը կը ստանայ:

ՆէկրՕ ԿԻՆ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ

1950 թուին Ամերիկայի նէկրո բանուորուհիներու թիւն էր 1.870.000, 1960-ին, այդ թիւը բարձրացաւ 2.445.000-ի: Մ. Նահանգներու Կանանց Բիւրոն վիճակագրական ցանկով ցոյց կուտայ որ 1950 եւ 1960 տարիներու ընթացքին ամէն 8 կին բանուորներէն մէկը եղած է ոչ-ճերմակ (անոնց մէջ կան փոքր թուով ամերիկեան հնդիկներ, արեւելքցիներ եւ էսքիմոցիներ, 93 տոկոսը նէկրոներ): 1961-ին, ոչ-ճերմակ եւ նէկրո կիներու աշխատաւորական ուժը բարձրացաւ 3 միլիոնի:

Ոչ-ճերմակ կիներ շարունակեցին գաղթել Փարմային շրջաններէն դէպի արդիւնարեւորական կեդրոնները: Ծառ մը նեկրո կիներ ալ գաղթեցին հարաւային նահանգներէն:

Նէկրո կիները խոշոր քաղաքներու մէջ 10 տարիներու ընթացքին դաստիարակութիւն ստանալով, կոչուեցան մտարուեստի գործերու. եղան գրագիր, հաշուակալ, գրամեքենայավար, պանքաներու մէջ արկղակալ, սղազրոզ եւ քարտուղար: Այդպիսով այդ կիներու տարեկան եկամուտն ալ 1.276 տոլարէն բարձրացաւ մինչեւ 3 հազար տոլարի: Այստեղ յատկանշական է դիտել տալ որ, մինչ նէկրո կիներէն 67 տոկոսը կը փոխադրուէին փրոֆէսիոնալ ճիւղերուն վրայ, ճերմակ կիներէն միայն 44 տոկոսն էր որ կը հետեւէր անոնց: Նոյնպէս վաճառատուներու մէջ նէկրո կիները 42 առ հարիւր աւելցան եւ վաճառողուհիներ եղան, մինչ ճերմակ կիները այդ մարդին վրայ միայն 24 տոկոսով աւելցան:

ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՐԾԻ ՑԵՂԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Նախագահ Թրումըն պաղ պատերազմը սկսաւ պարզապէս 1930ի տաղանապի յարութիւնը արդիւնելու համար. ճիշդ է որ պատերազմական ճարտարարուեստը բազմաթիւ դործեր ստեղծեց եւ աւելի քան 26 միլիոն մարդոց դոհացուցիչ աշխատավարձքով զբաղում հայթախեց եւ ատով նպաստեց նաեւ արդիւնարեւորական միւս ճեղքերու

զարգացման, բայց ի՞նչ ըսել, որ անգործներու պահեստի բանակը շանհետացաւ:

Նախագահ Ճոնսըն, Ամերիկայի աշխատուժի մասին իր զեկոյցին մէջ յայտարարեց որ — «նէկրո բանուորներու դործի դրութիւնը քիչ մը բարելաւուած է. բայց ան տակաւին ստորակարգ աստիճանի վրայ կը մնայ երբ զայն բաղդատենք ճերմակներու դրութեան հետ: Անգործ, ոչ-ճերմակ բանուորական ընտանիքներու կէսէն աւելին, կ'ապրին տարեկան 3 հազար տոլարէն պակաս եկամուտով: Եւ այս՝ իրականութեան տխուր մէկ կողմն է»:

Նախան Հէտոֆ, իր Նոր Հաւասարութիւն անուն վերջին գիրքին մէջ կ'ըսէ — «Բանուորական միութեանց մէջ տակաւին նշմարելի է ցեղային խտրականութիւնը, զոր կարելի չէ վերցնել քմահաճօրէն. ատոր համար խստապահանջ օրէնք մը պէտք է: Տեխնիքականօրէն AFL — CIO բանուորական կազմակերպութիւնները, վերջերս իրենց սահմանադրութեան մէջ աւելցուցին յօդուած մը, որ կ'արգիլէր ցեղային խտրականութիւնը. այդ օրէնքին անսաստողները միութեանէն պիտի վտարուէին. բայց մինչեւ հիմա նման քայլ մը առնուած չէ: Ուրեմն, հարցին լուծումը բանուորական միութեանց չի մնար: Գոնկրէսը նման օրէնք մը անցնելու է եւ բանուորական միութիւնները առանց այլ եւ այլի՝ հետեւելու են դրուած օրէնքին»:

Արշաւ դէպի Վաշինկտոն. —

1963 Օդոստոս 28-ին, 210 հազար անձեր, նէկրո եւ ճերմակ, մեծ մասով երիտասարդ, արշաւեցին Վաշինկտոն, եւ հոն նմանը չտեսնուած հսկայական ցոյց սարքեցին դործերու եւ ազատութեան քաղաքացիական իրաւանց պաշտպանութեան համար: Արշաւողները կը պահանջէին զոնկրէսի սեղանին վրայ դրուած Քաղաքացիական իրաւանց Օրինագիծի անմիջական որդեգրումը, դպրոցներէն վերցնել ցեղային խտրականութիւնը, վերջ տալ ոստիկանական խզումութեանց, ընդունիլ հասարակական գործերու ծրագիրը, անգործներուն դործ հայթախելու անկողմնակալ կարգադրութեան օրինագիծ եւ ընդհանուր նուազագոյն աշխատավարձքի համար որոշել ժամին երկու տոլար: Այդ հսկայ բազմութիւնը, որ կազմուած էր Ամերիկայի ամէն կողմերէն եկած մարդոցմով, գրեթէ մէկ մղոն երկարութեամբ շարժող հոսանք մը կը ներկայացնէր, որ կը միացնէր Վաշինկտոնի Արձանը Լինքընի Յուշարձանին:

Առաջին անգամ ամպիոնի վրայ երեւցաւ Վաշինկտոնի Կաթոլիկ Արքեպիսկոպոս Փատրիկ Օ'րոյլի, որ շեշտեց հաւասար իրաւունքի մասին արդարութեան պահանջը: Յաջորդ խօսողները անդրադարձան ձէյմս Փարմըրի շուրջ, ցեղային հաւասարութեան զոնկրէ-

սի ընդհանուր դիրքկտորին, որ բանտարկուած էր Լուիզիանայի մէջ իր քաղաքացիական իրաւանց գործունէութեան համար: Ամենէն վերջը խօսեցաւ նէկրոներու կորովի առաջնորդը՝ Վերապատուելի Մարթին Լուտէր Քինկ: «Հարիւր տարի անցած է այն օրէն ի վեր», ըսաւ ան, «երբ յայտարարուեցաւ նէկրոներու ազատագրումը, բայց անոնք տակաւին ազատ չեն: Ես վստահ եմ թէ այս ազգը օր մը պիտի արթննայ, պիտի գիտակցի այն ճշմարտութեան՝ որ բոլոր մարդիկ ստեղծուած են հաւասար եւ պիտի ապրին հաւասար»:

Յոյցէն յետոյ՝ քաղաքացիական իրաւանց 10 առաջնորդներ ներկայացան Նախագահ Քէնդրոսին, որ խորապէս ազդուած էր տեղի ունեցող ցոյցէն: Ան ըսաւ. — «Այն բազմութիւնը, որ այժմ հաւաքուած է Վաշինկտոնի մէջ՝ ի ինդիր քաղաքացիական իրաւանց, ես վստահ եմ որ կը ներկայացնէ ամբողջ ամերիկեան ժողովուրդի կամքը եւ անկեղծ ցանկութիւնը: Այդ դատը արդար դատ է եւ իր լուծումը պիտի ունենայ»:

Հաշիւ եղած էր որ այդ բազմութեան մէջ էին եկեղեցիներու եւ սինակոկներու 40 հազար ներկայացուցիչները՝ 200 կրօնական առաջնորդներու հետ:

Նախագահ Քենէտի երկար չապրեցաւ որ շուտափոյթ կատարէր իր խոստումը, նոյն տարին ան զոհը դարձաւ խորհրդաւոր դատարանութեան մը, որուն պիտի անդրադառնանք:

1964-ին, Քաղաքացիական Իրաւանց Օրինագիծը ստորագրեց Նախագահ Ճոնսոնը՝ Յուլիս 2-ին: Ասով հեղինակութիւն տրուեցաւ Ընդհանուր Դատախաղին՝ արդիւիւլ ցեղային խտրականութիւնը հասարակաց գպրոցներուն մէջ:

Ըր Ռոյ Քալլընդ, Ֆլորիտայի նախկին կառավարիչը, որ յետոյ եղաւ Հասարակական Յարարերութեանց Մտաւոյութեան դիրեկտորը 1965 Փետրուար 3-ին, այս առթիւ յայտարարեց. — «19 նահանգներու գլխաւոր քաղաքներու մէջ կատարուած քննութիւնը ցոյց կուտայ որ անոնք իրենց սեփական օրէնքներով կը կառավարուին եւ շատ քիչ կարեւորութիւն կուտան որդեգրուած նոր Օրինագիծին»:

ԸՆԴԳԻՒՄԱԴՐՈՒԹԻՒՆ՝ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾԻՆ ԳԷՄ

Տարիներէ ի վեր սովորութիւն դարձած ցեղային խտրականութիւնը մէկ անգամէն կարելի չէր փոխել: Հարաւա ճերմակ ամերիկացիին, որ ինքզինքը գերազանց էակ մը կը կարծէր եւ սորված էր նեկրոն նկատել որպէս ստորին արարած ու գերի, յանկարծ կը գրտնուէր նոր օրէնքի մը առջև որ իրեն կ'ըսէր. — «Որպէս ամերիկեան պարտաճանաչ քաղաքացի, նեկրոն հաւասար իրաւունք ունի ամէն

բանի մէջ, որքան դու՛ն ունիս»: Ո՛չ, այդպիսի օրէնք մը դժուար էր ընդունիլ եւ ահա սկսաւ հակահոսանք մը, որ ծնունդ տուաւ խռովութիւններու: Ցեղապաշտ ընդդիմադիրները այնքան ուժգին հակառակութիւն ցոյց չեն տար նեկրոներու քուէարկութեան մասնակցելու իրաւունքին, որքան իրենց անհատական կամ պիզնեսային գործառնութեանց ազատութեան բռնարարումին, ինչ որ հակառակ է Ամերիկեան Սահմանադրութեան:

Ճերմակ ընտանիք մը իր տան մէջ սենեակ մը ունի, կամ իր տան յարակից յարկարածին մը ունի, զոր վարձու չուզեր տալ նեկրոյի մը: Նոր օրինագիծը կ'ըսէ անոր. — «Դուն իրաւունք չունիս խտրականութեան հարց յարուցանել ճերմակին ու նեկրոյին միջև: Անդին, ուրիշ մը, ճաշարան մը կամ պանդոկ մը ունի, ուր կը յաճախեն միայն ճերմակները. ճաշարանին կամ պանդոկին տէրը երբ թոյլատրէ նեկրոյի մը մուտքը, ճերմակները իսկոյն կը հեռանան ու մարդը ատանկով կը սնանկանայ: Մարդոց ազատութիւնը յարգելու սկզբունքով, Ամերիկեան Սահմանադրութեան համաձայն՝ օրէնքը չի կրնար պարտադրել որ ճերմակները նոյն ճաշարանը շարունակեն յաճախել որպէսզի ճաշարանին տէրը շտուժէ, բայց նոր օրէնքը կը պարտադրէ որ ճաշարանի տէրը նեկրոներու մուտքը չարգիլէ: Այստեղ կը ցցուի օրէնքի հակասութիւնը:

Բայց անդին կայ ուրիշ օրէնք մը, որ ցեղային գոյն չունի, այլ իր բնոյթով դասակարգային է: Մասնաւորապէս միջակ կամ խոշոր քաղաքներու մէջ մասնաւոր պարսպաւորուած շրջաններ կան, ուր բացարձակապէս արդիւլուած է 50,000 տոլարի արժողութենէն պակաս բնակարան կառուցելը: Մէկը, որ այդպիսի շրջանի մը մէջ հոգաչերտ մը ունի եւ իր ամբողջ ֆինանսական կարողութիւնը միայն 40 հազար տոլար է եւ կ'ուզէ իր հոգին վրայ 30,000 տոլար արժողութեամբ շէնք մը կառուցանել, եւ մնացած 10,000 տոլարը պահել ընթացիկ ծախքերու համար, օրէնքը թոյլ չի տար անոր այդ քայլը առնել, այլ կը յանձնարարէ վաճառել այդ հողը:

— «Բայց իմ հողաչերտին համար շատ աննշան գումար մը կ'առաջարկեն», կ'առարկէ մարդը:

Կառավարութեան պատասխանը կ'ըլլայ հետեւեալը. — «Մեր երկրի օրէնքը մարդու մը անհատական ազատութիւնը չի կրնար բռնաբարել: Դուն այնքան ազատ ես քու հողին համար քու ուզած դինք պահանջելու, որքան գնորդը ազատ է իր դինք առաջարկելու: Դուք երկուքդ ազատ քաղաքացիներ էք, ազատօրէն կրնաք համաձայնիլ»: Ասոր ըսելիք կա՞յ...:

Մէկ կողմէն ազատութիւն, միւս կողմէն ազատութեան կաշկան-

դում, ահաւաստիկ մէկը կապիտալիստական սխտէմի հակասութիւններէն:

Տարակուսելի չէր, ուրեմն, որ ցեղային խտրականութիւնը վերցնելու կոչուած օրինագիծը եւս, պիտի ծնէր իր հակասութիւնը:

Աւելի քան 300 տարիներու ընթացքին արժատացած ցեղային խտրականութիւնը նոր օրէնքով մը կարելի չէր վերցնել. այդ նախապաշարուած բոլորովին արժատախիւ ընել տալու համար դաստիարակչական սխտեմատիկ աշխատանք եւ երկար ժամանակ էր հարկաւոր: Ահա թէ ինչո՞ւ 1960-էն սկսեալ հակացեղապաշտական շարժումը շատ աննշան նուաճում կը ցուայ յառաջացնել Ամերիկայի մէջ, ուր մինչեւ այսօր, տեղի կ'ունենան սոսկալի ընդհարումներ, ընդհարումներ՝ Շիրակոյի մէջ, Նիւ Եորքի մէջ, Ֆիլատելֆիոյ մէջ, Լոս Անճելըսի մէջ, Պոսթընի մէջ: Մարդիկ ու կիներ կը սպաննուին, տասնեակներով կը վերաւորուին, հազարներով կը բանտարկուին եւ անլուծելի հարցը տակաւին կախուած կը մնայ օդին մէջ:

Այստեղ պէտք չէ մոռնալ նշելու որ ցեղապաշտութեան դէմ կռուողները միմիայն նեկրոները չեն, այլ բազմաթիւ ազատասոհ ճերմակներ. — կղերականներ, ուսանողներ, փաստարաններ, լրագրողներ, ուսուցիչներ, Ծրոֆեսորներ՝ որոնք իրենց ամբողջ ուժը տրամադրեր են այդ արդար դատին:

Ցեղապաշտներու դայրոյթն, ուրեմն, առաջին հերթին, ուղղուած է ճերմակ «դաւաճաններուն» դէմ:

1964 Ապրիլ 7-ին, Քլիվլէնտի մէջ սպաննուեցաւ երիտասարդ պատուելի մը — Քրուս Քլեմտըր, որ նոր ձեռնարկեր էր ճերմակ եւ նեկրո միացեալ դպրոցի մը կառուցումին:

Պոսթընի համալսարանի փրոֆեսորներէն՝ Փրոֆ. Հալբըտ Զին, իր նոր հոբրտակչականները անուն գիրքին մէջ կը նկարագրէ թէ ինչպէս Ամերիկայի չորս կողմերէն հազարաւոր ուսանողներ 1964-ին, դաշնակցած կազմակերպութիւններու խորհուրդը կազմեցին, Միսիսիպիի մէջ հաստատելու համար ամառնային դպրոցներ, Ազատութեան Դպրոցներ, որոնց նպատակը պիտի ըլլար նեկրոներու սորվեցընել գրել, կարդալ եւ որ ամենէն կարեւորն է, նեկրոներու պատմութիւնը: Աւելի քան 30 Ազատութեան Դպրոցներ հիմնուեցան գանազան քաղաքներու մէջ: Այդ դպրոցներուն արձանագրուեցան 4000 նեկրո երիտասարդներ, մեծ մասով Միսիսիպիի նահանգին մէջ:

Այս շարժումին դէմ անմիջապէս սկսաւ պոյքթի եւ դաւաղըրութեան շարժումը՝ ցեղապաշտներու կողմէ, որոնց միացան Քու-Քլուքս-Քլանները:

Թուենք տասնեակներով գործուած ոճիրներէն մէկ քանին: 1964 Յունիս 21-ին, Միսիսիպիի մէջ քաղաքացիական իրաւանց դա-

տին նուիրուած երեք աշխատաւորներ անյայտացան: Անոնցմէ մէկն էր Միշըլ Եելլըրնէր, 21 տարեկան — Պրուքլին — Նիւ Եորք. երկրորդը՝ Էնտրու Կուամըն, 20 տարեկան, Գուինս Գոլէճէն, ուսանող՝ Նիւ Եորքէն, եւ Ճէյմս Եէնի, 24 տարեկան, Մէրիտիընէն (Միսիսիպիի նահանգ), Դաշնակցած Կազմակերպութիւններու Խորհուրդի քարտուղարը:

Այս երեք աշխատաւորները իրենց անյայտացման օրը պէտք է վերադառնային Մէրիտիընի պաշտօնատունը, երբ նախապէս քննութեան առած էին Յունիս 16-ին Չայըն Մկրտչական Եկեղեցւոյ հրդեհումը: Այդ եկեղեցին վերածուած էր Ազատութեան Դպրոցի՝ Միսիսիպիի ամառնային եղանակին համար: Անոնց քննութենէն պարզուեցաւ որ Քու-Քլուքս-Քլաններու եւ ցեղապաշտներու դործն էր այդ հրդեհումը:

Ոստիկաններու Որոգայքը.—

Ֆիլատելֆիա քաղաքին մօտ (Միսիսիպիի նահանգ), ոստիկանները կեցուցին այդ երեք ճամբորդներու ինքնաշարժը եւ ձերբակալեցին մեքենավարը՝ Եէնին, օթոն արագ քշելու յանցանքով, իսկ անոր երկու ընկերներն ալ՝ քննութեան համար: Քանի մը ժամ անոնք բանտ մնացին բոլորովին կտրուած արտաքին հաղորդակցութենէ: Քննութեան պահուն մշտական բանտարկութեան պատրուակ մը չդրան ոստիկանները. միայն 20 տուրք տուգանքի դատապարտեցին Եէնին, որ տուգանքը վճարելէն յետոյ՝ իր ընկերներուն հետ ազատ արձակուեցաւ: Բայց ատենակալի փոխանորդը զանոնք չթողուց որ իրենց օթոյովը իրենց ճամբան շարունակեն. իր ինքնաշարժով զանոնք տարաւ քաղաքէն քիչ մը հեռու այն տեղը, ուր 20 մարդասպաններ կ'ըսպասէին անոնց: Այդ մարդասպանները թակարդուած երեք երիտասարդները տարին Ֆիլատելֆիայէն 6 մղոն հարաւային արեւմուտք եւ հոն զանոնք խողխողեցին ու անոնց դիակները թաղեցին նոր բարձրացուած 20 ոտք խոր թուճրի մը տակ:

Յունիս 23-ին, անոնց ինքնաշարժը վառուած վիճակով դտնուեցաւ Ֆիլատելֆիայէն հիւսիս՝ 10 մղոն հեռու ճահիճի մը մօտ:

Անսովոր դէպք էր տեղի ունեցածը: Ամերիկեան թերթերը, աստիճան, թելեվիզիոնը, ամէն օր դէպքին յարակից հաւանականութիւններու շուրջ կ'անդրադառնային: Պարզ էր որ երեք երիտասարդները ցեղապաշտ ոճրագործներու ձեռքով սպաննուած էին, բայց ո՞ւր էին անոնց դիակները: Դաշնակցային կառավարութիւնը մէջ մտաւ եւ մեծ պարզեւ խոստացաւ անոր՝ որ ոճրագործներու հետքերը գտնելու կ'օժանդակէր եւ կամ կը գտնէր զոհերու դիակները: Փնտտուքը շարու-

նակուեցաւ շարաքներով. վերջապէս գտնուեցան սպաննուածներու մարմինները 1964 Օգոստոս 4-ին :

Կատարուած խուզարկութեանց, քննութիւններուն եւ փնտրուածքներուն մէջ Միսիսիփի նահանգի իշխանութիւնները երբեք բաժին, մասնակցութիւն չունեցան : Չորս ամիս յետոյ՝ Նեչորայի շերիֆն ու իր տեղակալը եւ 19 ուրիշ ճերմակներ՝ մի քանի Քու-Քլուքս-Քլանի առաջնորդներու հետ ձերբակալուեցան : Կատարուած քննութիւններէն պարզուեցաւ որ շերիֆի տեղակալը պատրուակով մը ձերբակալեր էր երեք երիտասարդները եւ յետոյ՝ զանոնք յանձնել էր ոճրագործներուն : Եղածը, ուրեմն, մասնաւորապէս կանուխէն պատրուատուած դաւադրութիւն մըն էր : Բայց Դաշնակցային կառավարութիւնը իրաւասութիւն չունէր ոճիրի ամբաստանութեամբ դատելու դատապարտել ձերբակալուածները, որովհետեւ այդ ոճիրը դաշնակցային կառավարութեան մէկ կալուածին վրայ գործուած չէր : Դաշնակցային կառավարութեան գործն էր զոհերու փնտրուած մարմինները գտնել եւ ոճիրին հետ կապ ունեցող կասկածելիները ձերբակալել . իսկ այդ կասկածելիներու դատավարութեան գործը կ'իյնար նահանգային կառավարութեան դատարանին :

Եւ ի՞նչ բրաւ նահանգի դատարանը : 12 հոգինոց երդուեալներու ատեան մը կազմուեցաւ, բոլորն ալ ցեղապաշտներ, որոնք որեւէ փաստ չդրան ձերբակալուածները դատապարտելու համար, հակառակ անոր, որ անոնցմէ 10 հոգիները դաշնակցային պաշտօնեաներուն խոստովանած էին իրենց գործած ոճիրը : Երդուեալներու Ատեանը եկաւ յայտարարել որ 10 հոգիներու խոստովանութիւնը բռնութեան եւ սոսկումի ներքեւ եղած եւ օրինական չէ : 1965-ի Յունուարին, ձերբակալուածները ազատ արձակուեցան : Ամերիկեան հասարակական կարծիքը, որ ամիսներ առաջ այնքան յուզուած կը թուէր, շուտով հանդարտեցաւ :

Գոնկրէսի 18 դեմոկրատ անդամներ, գիմեցին դաշնակցային կառավարութեան, որպէսզի «անհրաժեշտ եւ կարուկ քայլեր առնուին արգիլելու Միսիսիփի մէջ տեղի ունեցող բռնութիւններն ու արիւնահեղութիւնները : «Նիւ Եորք թայմզ» թերթը 1965 իր Հոկտեմբեր 6-ի թիւին մէջ կուտար հետեւեալ տեղեկութիւնները. — «Աւելի քան 40 եկեղեցիներ հրդեհուած կամ ուժեղորոշուած են Միսիսիփի մէջ՝ անցնող վեց ամիսներու ընթացքին : Բայց այս թիւը կարելի է բսել թէ անկատար է, որովհետեւ ուրիշ լրատու գործակալութիւններ կը ծանուցանեն թէ աւելի քան 34 եկեղեցիներ ամբողջապէս աւերուած են եւ 31 ուրիշ չէնքեր մասամբ կործանուած են 13 քաղաքներու մէջ, որոնց կարգին են մասնաւորապէս ձեքսըն, Վիքսուրկ, Նաչէզ, Մէրիտըն եւ ՄքՔոմ : Այդպիսի դէպքեր տեղի ունեցեր են հետեւեալ

քաղաքներուն մէջ. — Քլինտընի մէջ (Միսիսիփի) Յունիս 26-ին, ճերմակ պատուելի մը, որ նեկրոներու Աւետարանական դասընթացքը կ'աւարտէր, իր եկեղեցին ամբողջապէս աւերակ դարձաւ հրդեհումով : ձեքսընի մէջ թերթի մը ճերմակ խմբագրի գրասենեակը ուժքով խորտակուեցաւ Օգոստոս 27-ին : Նաչէզի քաղաքապետը, որ համակիր էր քաղաքացիական իրաւանց շարժումին, Սեպտեմբեր 14-ին ուժեղորոշուած տակ կորսնցուց իր պաշտօնասենեակները եւ իր սեփական բնակարանը : ՄքՔոմի մէջ Տիկին Այլին Գուինի տունը հրոյ ճարակ դարձաւ եւ հոն ողջ ողջ այրուեցան անոր երկու երեխաները : Վիքսուրկի մէջ քաղաքացիական իրաւանց համար աշխատող երկու մարդիկ, Ազատութեան Տան մէջ քնացած ատեն սպաննուեցան երբ Հոկտեմբեր 4-ին ուժքի մը պայթումին հետեւանքով ընկերութեան այդ չէնքը գիշեր ատեն կործանեցաւ յանկարծակի յարձակումով :

1963-65 տարիներու ընթացքին, նեկրոներու դէմ արիւնահեղութեան բնոյթ ունեցող յարձակումները շարունակուեցան Հարաւային եւ Հիւսիսային նահանգներու մէջ : Ոստիկանները, ինչպէս նաեւ Քու-Քլուքս-Քլանի ցեղապաշտ անդամները ձերմակ Քաղաքացիներու կազմակերպած Վրիժախումբերու հետ միացած, յառաջ կը տանէին սկսուած վայրի խաչակրութիւնը : Նեկրոներու եւ անոնց դաշնակիցներու սահմանադրական իրաւանց պաշտպանութեան ջանքերը ճակատեր էին բացէն ի բաց գործուած ապօրինութեանց ու սարսափելի յարձակումներու : Ոճրագործները նախ կը ձերբակալուէին, ապա ազատ կ'արձակուէին թատերական դատավարութեամբ : Տանք մի քանի օրինակներ :

Մեկտար Էյլբրս, ձեքսընի մէջ նեկրո առաջնորդ մը, 1963 Յունիս 22-ին, դարանակալ դաւաճանի մը զնդակին զոհ զնաց գիշեր ատեն իր տունէն ներս մտած ատեն : Պայրն Բէկվիտ, չրջուն վաճառորդ մը, որ ճերմակի գերակայութիւն կը քարոզէր իր ճամբորդութեանց ատեն, ձերբակալուեցաւ եւ դատավարութիւնը շարունակուեցաւ մինչեւ 1964 Յունուար եւ Փետրուար ամիսները : Հակառակ անոր որ 39 այր մարդիկ եւ կանայք իրենց վկայութեամբ հաստատեցին ոճրագործին ինքնութիւնը, երդուեալ դատաւորները, բոլորն ալ ճերմակ ցեղապաշտներ, ոճրագործը յայտարարեցին անմեղ :

Բիրմինկհէմի (Ալապամա նահանգ) մէջ չորս մանկամարդ նեկրո աղջիկներ սպաննուեցան ձեքսընի փողոցներու Միկրոչական եկեղեցւոյ աւերակներուն տակ : Ձերբակալուեցան երեք մարդիկ, դատապարտուեցան երեք ամսուայ բանտարկութեան եւ իւրաքանչիւրը 100 սողար տուգանքի : Շարաթ մը յետոյ՝ վճիռը բեկանուեցաւ եւ ոճրագործները ազատ արձակուեցան :

Լուիզ Ալէն, 44 տարեկան նեկրո առաջնորդ մը, Լիպլթի քա-

դաքին մէջ (Մխիթարի նահանգ) 1964 Յունուար 31-ին, մեռած գրտնուեցաւ իր տան բակին մէջ: Հրացանի երեք զնդակներով սպաններ էին մարդը, որովհետեւ ան 1961-ին, ուրիշ նեկրոյի մը՝ Հրապարակիի դատաւարութեան ատեն ոճրագործին զէմ վկայութիւն տուած էր:

Երկու երիտասարդ նեկրոններ՝ Չարլզ Մուր, զօլէճի ուսանող մը եւ Հենրի Դի, բանուոր մը, երկուքն ալ 19 տարեկան, սպաննուած էին 1964 Մայիս 2-ին: Անոնց զիակաները դտնուեցան Մխիթարիի գետին մէջ: Անոնք մեռած էին վայրի քանակոծութեամբ: Երկու ճերմակ մարդիկ ձերբակալուեցան Միսիսիպի մէջ Նոյեմբեր 6-ին: Անոնցմէ մէկը Քու-Քուլուքս-Քլանի անդամ էր: Հակառակ անոր որ հաստատուեցաւ անոնց ոճիրը, երեք ամիս յետոյ՝ վերակոչուած դատաւարութեամբ ոճրագործները ազատ արձակուեցան:

Նեկրո պատանի մը, ձէյմա Փալէլ, 15 տարեկան, սպաննուեցաւ Նիւ Եորքի մէջ, 1964 Յունիս 16-ին: Սպաննողն էր ոստիկան Թամաս Կիլիկէն: Սեպտեմբեր 1-ին, երգուեալներու ատենը ոստիկանը անպարտ արձակեց, այն փաստով որ նեկրո պատանին ճերմակ աղջըկայ մկ վրայ յարձակում փորձեր էր եւ յետոյ՝ դիմադրեր էր ոստիկանին:

Բանակի զինուորական մը՝ Լըմուէր Փէն, որ զինուորական ծառայութեանն յետոյ՝ նեկրոներու դաստիարակ եղեր էր, իր օթոյով ձորճիայէն անցնելով Քոլորադո մօտ մի քանի ճերմակ դարանակալներէն հրացանազարկ եղաւ: Դաշնակցային կառավարութեան հաւատարմօրէն ծառայող սպայ մը սպաննուած էր: Խիստ քննութիւն կատարուեցաւ: Վեց հոգի ձերբակալուեցան: Երկար բարակ թատերական դատաւարութիւն... Ականատես վկաներ կը պակսէին. կասկածելի ոճրագործները ազատ արձակուեցան:

Մխիթարիի Ազատ Դեմոկրատական Կուսակցութիւնը .—

Մխիթարիի նահանգի նեկրոներու քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու համար ձեքսընի մէջ կազմուեցաւ Մխիթարիի Ազատ Դեմոկրատական Կուսակցութիւնը: Նախագահական ընտրութեան օրերն էին. 1964-ի Նոյեմբեր 3-ի օրը կը մօտենար: Դեմոկրատներու թեկնածուներն էին ձոնարն եւ Հրմֆրրի: Նոր կուսակցութիւնը Մխիթարիի նահանգէն զոնկրէսի համար 4 նէկրո թեկնածուներ որոշած էր: Ընտրութեան ատեն, սակայն, ո՛չ միայն նեկրո թեկնածուներու անունները ջնջուեցան քուէարկութեան ցանկէն, այլեւ ձիմ Քրոյչիգմի իշխանութեամբ ամբողջ նահանգին մէջ արգիլուեցաւ նեկրոներու քուէարկելու իրաւունքը, եւ ընտրուեցան ցեղապաշտ ճերմակ հանրապետականներ: Այս անարդարութեան զէմ բողոքեցին նոյնիսկ Հիւսիսի ազատական հանրապետականները, որով-

հետեւ 400 հազար ամերիկեան քաղաքացիներ՝ բնութեամբ զըրկուած էին քուէարկելու անբոնարարելի իրաւունքէն:

Սկսաւ պայքարը. պայքարին հետ՝ տէնորը: Եւ տէնորը տարածուեցաւ Ալաբամայի, ձորճիայի եւ ուրիշ նահանգներու մէջ:

Սէլմայի մէջ (Ալաբամա նահանգ) վերապատուելի ձէյմա Ռիտ, 38 տարեկան, փողոցին մէջ ենթարկուեցաւ 3 ճերմակ ցեղապաշտներու յարձակման: Լախտի վայրենի հարուածներու տակ անզգայազիրկ փոռուած էր դետին: Երկու օր միայն ապրեցաւ. երրորդ օրը մեռաւ, իր ետեւ թողլով այրի կին մը եւ 4 երեխաներ:

Վայրենիները ձերբակալելու փորձ չեղաւ. միայն Նախագահ ձոնարն, խորապէս յուզուած՝ զիմեց զոնկրէսին, որպէսզի օրէնքով արգիլուի ցեղային խտրականութիւնը եւ քաղաքացիները ազատ ըլլան դաշնակցային, նահանգային եւ քաղաքային ընտրութեանց ատեն իրենց քուէարկելու իրաւունքը կիրառելու մէջ:

Տոսընի մէջ (ձորճիա նահանգ) Տիկին Քարոլայն Դանիէլս, որ ընտրութեան ատեն հրահանգեր էր որ նեկրոները արձանագրուին քուէարկութեան համար, զիշեր ատեն, տուն վերադարձին, ատրճանակի զնդակով վիրաւորուած՝ փոխադրուեցաւ հիւանդանոց: Յաջորդ օրը իր տունը հրոյ ճարակ դարձաւ:

ձան Լուիզ, Հարաւի նէկրոներու Ազատութեան Կոմիտէի Նախագահը, որ ընտրութեան օրը ուսանողները հաւաքած էր Սէլմայի համալսարանին մէջ նէկրոները պաշտպանելու համար, ձերբակալուեցաւ ու դատաւարտուեցաւ մէկ տարուայ բանտարկութեան եւ 300 տոլար տուգանքի:

Քուէարկելու արձանագրութեան արշաւը կեղբոնացաւ Սէլմայի մէջ կրկին անգամ՝ 1965-ի Փետրուարին: Մարթին Լ. Քինկ, եւ հարիւրաւոր ուրիշներ, շատ մը բարձրագոյն դպրոցի ուսանողներու հետ ձերբակալուեցան, երբ անոնք կը փորձէին քալել դատարանի շէնքին առջեւ. հոն ցոյց սարքելու համար: Նոյն շաբաթուր սկսաւ մօտակայ Մարիոս քաղաքին մէջ: Երկու տեղերու ցուցարարները՝ թիւով 2.800 հոգի ձերբակալուեցան: Բայց երկու օր յետոյ ազատ արձակուեցան, բաւական էր որ ծրագրուած երկու քաղաքներու ցոյցերը ձախողեր էին:

Մարտ 7-ին, Կիրակի օր, 600 նէկրոներ մի քանի ճերմակ հակիրներու հետ Մարթին Լուտէր Քինկի առաջնորդութեամբ արշաւ մը սկսան Սէլմայէն Մոնթիոմըրի, բողոքելու նէկրոներու քուէարկելու իրաւանց ոտնակոխումին դէմ:

Նահանգային զինուորները եւ հեծեալ ոստիկանները յարձակեցան ցուցարարներուն վրայ արտասուարքեր ուղարկելով, բիրտով, խարազաններով ու պարաններով. կարծես թէ այդ քաղոյները

մարդեր չէին, այլ անասուններ: Կառավարիչ ձորճ Վալէսի հրա-
մանն էր այդ — «Կեցուցէ՛ք այդ անողւամները. մենք հաւասար
քուէարկութեան իրաւունքի գծով, մէկ մասնաշափ զիջում չենք
կրնար բնել»: Եւ մարդիկը կառավարիչին հրամանը կը դործադրէին:

Յուցարարներէն շատերը բիրի, խարազանի հարուածներէն
վիրաւորուած՝ քաշուեցան ետ եւ բոլորը ազատանեցան Սէլմայի
մէջ Պրատունի եկեղեցւոյ բակը: Ծանրապէս վիրաւորուածները փո-
խադրուեցան հիւանդանոց: Ասիկա շատ աւելի վայրենի յարձակում
էր, քան ինչ որ տեղի ունեցաւ Պիրմինիսէմի մէջ՝ 1963-ին:

Յամառօրէն պայթարող Մարթին Լ. Քինկ, այս անգամ ուրիշ
փորձ մը բրաւ 1,500 հոգինոց խումբ պատրաստելով, Մարտ 9-ին,
արշաւանք մը սկսաւ Հիւսիսէն: Խումբին մէջ կային շատ մը ճեր-
մակներ: Բայց դատարանը իսկոյն արդիւման հրամանագիր հանեց
եւ նահանգային զինուորներով շղթայի տակ առաւ ցուցարարները,
որոնք աղօթքով բաւարարուեցան ու զլխիկօր վերադարձան իրենց
տեղերը:

Մարթին Լուտէր Քինկ չէր յուսահատած սակայն. ան դիմեց
Դաշնակցային Գերազոյն Ատեանին, եւ անկէ ստացաւ Սէլմայէն
Մոնթկոմբրի արշաւի համար արտօնագիր մը: Ինք բռնութեան
կողմնակից չէր. իր ցոյցը խաղաղ ցոյց մըն էր: Կառավարիչ Վալէս,
յայտարարեց որ ինք հարկ եղած Ֆինանսական եւ զինուորական ու-
ժը չունէր իր նահանգի ամբոխը հանդարտեցնելու համար: Ատոր
վրայ Նախագահ ձոնսըն ազգային պահակազօրքէն 1,900 հոգի, իսկ
կանոնաւոր զօրքերէն՝ 500 զինուորներ արամադրեց ի պաշտպանու-
թիւն՝ ցուցարարներուն: Այդ պաշտպանութեան տակ Մարթին Լ.
Քինկ երկու հազար մարդոցմով սկսաւ իր արշաւը Սէլմայէն Մոնթ-
կոմբրի, 50 մղոնի ճամբայ մը: Ճամբու ընթացքին Ամերիկայի ամէն
կողմերէն մարդիկ եկան միանալ ցուցարարներուն, որոնց թիւը
հասաւ 26 հազարի: Երբ այդ բազմութիւնը մտաւ Մոնթկոմբրի —
նահանգի մայրաքաղաքը — կառավարիչը մերժեց ընդունիլ ցուցա-
րարներու պատգամաւորութիւնը: Բայց պատգամաւորութեան ա-
ռաջնորդը՝ Լուտեր Քինկ պատասխանեց — «Մենք հինգ օրէն յի-
սուն մղոն ճամբայ կտրելով եկած չենք հոս, մենք երեք դարերու
ընթացքին տառապանքի ու դժուարութեան երեք հարիւր հազար
մղոն ճամբան կտրելով եկած ենք հոս: Մենք եկած ենք... յայտա-
բարելու որ մենք մեր ազատութիւնը ստանալու ենք ճիշդ հիմա...
Մենք պէտք է ունենանք քուէարկելու իրաւունք. մենք պէտք է ու-
նենանք հաւասար պաշտպանութիւն՝ օրէնքի առջեւ: Մենք կը պա-
հանջենք որ վերջ տրուի ցեղային խտրականութեան. վերջ տրուի
ոստիկանական խժդժութեանց»:

Կառավարիչը ուրիշ երկնարանք չունէր. դիմեց խարզախ դի-
ւանագիտութեան: «Արդարացի է ձեր պահանջը», բաւ ան. «ես կը
խոստանամ լուրջ նկատողութեան առնել ամէն ինչ եւ կարգադրել
հարկ եղածը»: Եւ մարդը հարկ եղածը կարգադրեց?...:

Մոնթկոմբրիի այս պատմական ցոյցէն չորս ժամ յետոյ՝ մահ-
ուան հարուածը դարձեալ խից զոհ մը: Այդ զոհն էր Տիկին Վայոլա
Կրէկ Լուիզօ, 5 զուկի տէր՝ 39 տարեկան մայր մը, որ Տիգրոյիտէն
եկած էր եւ կը վերադառնար Սէլմա, անկէ ալ իր քաղաքը: Օթոյին
մէջ իր քով նստած էր նէկրօ երիտասարդ մը: Յանկարծ սրընթաց
օթօ մը եկաւ կեցնել Լուիզոյի ինքնաշարժը: Այդ օթոյին մէջ կա-
յին 3 դիմակաւոր մարդիկ: Առանց ազդարարութեան, առանց որեւէ
ուղերձի, հրացանի պայթում մը, եւ Տիկին Լուիզոյի անշնչացած
մարմինը գլորուեցաւ մեքենայի ղեկին տակ: Այս ամէնը կատար-
ուեցան մէկ վայրկեանի մէջ: Նախագահ ձոնսըն թէլէվիզորի վրայ
Մարտ 27-ին, խտիւղ դատապարտեց այդ «սոսկալի ոճիրի» հեղի-
նակները եւ յայտարարեց որ արդէն Քու-Քլուքս-Քլէնի մարդիկը
ձերբակալուած են եւ ինք պիտի պահանջէ զոնկրէսէն, որ «մոլե-
ռանդներու այդ կնկաւոր ընկերութիւնը» խիտ հետազօտութեան
ենթարկուի ամբողջ Միացեալ Նահանգներու մէջ եւ հռչակուի օրի-
նազանց ու ապօրինի...:

Եւ Քու-Քլուքս-Քլէնը հռչակուեցաւ ապօրինի?...:

Ամիս մը յետոյ՝ նէկրօ երիտասարդ մը, Մէքիոնի մէջ (Ալա-
բամա նահանգ) երբ ճաշարանի մը մէջ նստած կը ճաշէր, երկու
նահանգային զինուորներ ներս մտան: Անոնցմէ մէկը հարցուց երի-
տասարդին անունը: — «Լի ձէքսըն», պատասխանեց երիտասարդը:
Ատոր վրայ հարցում ընողը բռնեց երիտասարդը, մինչ միւսը ատըր-
ճանակի հարուածով գետին փռեց զայն: Վիրաւոր երիտասարդը
զեռ չէր մեռած. զայն փոխադրեցին Մէքիոսի հիւանդանոցը. հի-
ւանդանոցը մերժեց ներս ընդունիլ զայն: Վիրաւորը պիտի փոխադ-
րուէր Սէլմա... ճամբան, խեղճ երիտասարդը առատ արիւնահո-
սութեանէն, աւանդեց իր հոգին:

Քուէարկելու իրաւունքի օրէնքը. — 1965-ին, Մ. Նահանգներու
Գոնկրէսը որդեգրեց քուէարկելու հաւասար իրաւունքի օրինագիծը,
զոր ստորագրեց Նախագահ ձոնսըն Օգոստոս ամսոյն:

Ամերիկեան զոնկրէսը այդ օրինագիծը որդեգրելով կը յու-
սար զոհացնել նէկրոները եւ վերջ տալ ցեղային խտրականութեան:
Բայց չարիքի արմատը ուրիշ հոգի մէջ թաղուած էր: Ամերիկայի
տիրող դասակարգն է, որ մէկ կողմէն՝ առերես հակառակ է ցե-
ղապաշտութեան, միւս կողմէ՝ մութ ուժերու շունչով կը հրահրէ

զայն, ժողովրդական զանգուածներու ուժերու հակամարտ ճակատներով իրարմէ մշտապէս բաժնուած պահելու համար:

Գրեթէ մէկ տարի անցեր է այդ օրինադիժի դորձադրութեան դրուելու թուականէն, բայց այսօր, երբ այս տողերը կը գրեմ, (1966, Յունիս 24, Կիրակի օր) Քլէվլէնտի մէջ 5 օրէ ի վեր կը շարունակուին նմանը չտեսնուած խռովութիւններ: Տասնեակներով մարդիկ կը սպաննուին, հարիւրներով կ'ոտնակոխուին, հազարներ բանտերը կը լեցուին: Վաճառատուներու ապակիները կը խորտակուին, հրդեհ-հուճներ, կողոպուտ, իրարանցում, թալան: Ոստիկաններ չեն բաւեր. աղբային պահակազօրքը օգնութեան կը հասնի, բայց տակաւին խռովութիւնը վերջացած չէ: Երեք շաբաթ առաջ նոյն սոսկալի դէպքերը պատահեցան Երզնկայի մէջ, նախորդ ամսոյն՝ Լոս Անճէլէոսի մէջ: Մէկ տեղի խռովութիւնը կը հանդարտի, միւս տեղը ան դուրս կը ցցէ իր դուրսը: Պարապ տեղը չէ որ մեծ դուրսերը տիեզերական օդանաւորներու յանդուգն փորձերով Հրատի ճամբան կ'ուզեն ապահովել, հոն փոխադրուելու համար: Յաջողութեան մաղթանքներ: Գուցէ այդպիսով ճնշուածներու լուծը կը թեթեւնայ...

5. — ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչ քաղաքացիական իրաւանց համար պայքարը դեռ կը շարունակուի, եւ ոմանց համար այդ հարցը գրեթէ լուծուած կը համարուի, քանի որ գոնկրէսը նոր օրինադիժով հաւասար իրաւունք տուած է բոլոր քաղաքացիներուն ազատօրէն քուէարկելու եւ դատաւարտած է ցեղապաշտութիւնը, բայց քաղաքացիական ազատութեանց հարցը տակաւին առկախ կը մնայ այս մեծ դեմոկրատական հանրապետութեան մէջ:

Հակա-ամերիկեան գործերու կումիտէն. — Ամերիկեան Քաղաքացիական Ազատութեան Միութիւնը կը նշէ որ Հակա-Ամերիկեան Գործերու Կոմիտէն այնպիսի խիստ ճնշում կը բանեցնէ կրթութեան ու դաստիարակութեան վրայ, որ շղթայած է անոնց կարեւոր խնդիրներու շուրջ քննարկի ազատութիւնը: Երկրորդ՝ կ'անուանարկէ այն անհատներն ու խմբակցութիւնները, որոնք կրօնական կամ բարոյագիտական խնդիրներով գործօն դեր ունին զանազան ընկերային շարժումներու մէջ: Երրորդ՝ Ամերիկայի զանազան քաղաքներու մէջ տնտեսական կամ քաղաքացիական ճնշման հետեւանքով պայթած խռովութիւններու պատասխանատուութիւնը կը վերադրէ կոմունիստներու դաւադրական փորձերուն, առանց փաստական տուեալներու:

Ամերիկեան Քաղաքացիական Ազատութեան Միութիւնը (Ա. Ք. Ա. Մ.) ուրիշ կազմակերպութեանց եւ ականաւոր անհատներու հետ

քանիցս դիմում կատարեց Հակա-Ամերիկեան Գործերու Կոմիտէին (ՀԱԳԿ) որպէսզի գոնէ չափաւորէ իր խստութիւնները եւ վերջ տայ իր զազափարաքննութեան ատենանին, որ յար եւ նման է Միջին Դարու հաւատաքննութեան, միայն այն տարբերութեամբ՝ որ կոմիտէի գատապարտած անձերը խարոյկներու վրայ չեն վառուի: Օրինակի համար, 1964-ի Մայիսին, վեցէն տասնհինգ կասկածելիներ ներկայացան ՀԱԳԿ-ի ատենանին: Ամերիկեան Քաղաքացիական Ազատութեան Միութիւնը պահանջեց որ ամբաստանեալներուն օրինական պաշտպանութիւն տրուի, բայց այդ պահանջը մերժուեցաւ: Ամբաստանեալները կորսնցուցին իրենց գործը՝ Պըֆլոյի մէջ ու նետուեցան անդործներու շարքը. (կոմիտէն զանոնք բանտարկելու իրաւատութիւն չունէր):

Գարձեալ Պըֆլոյի մէջ (նիւ Եորք նահանգ) նահանգային Համալսարանի ուսուցիչներէն մին «կոմունիստական համակրութեան» յանցանքով կանչուեցաւ քննութեան: Մարդը չկրցաւ ինքզինքը արդարացնել, ու դուրս նետուեցաւ համալսարանէն:

Նոյն դէպքը պատահեցաւ Մինիէպոլիսի մէջ (Մինիսոտա նահանգ) ուր 11 ամբաստանեալներ կոմիտէի առջեւ հարցաքննութեան կանչուելէ յետոյ՝ կորսնցուցին իրենց գործը:

Մոնթէկլիի մէջ (Թէնըսի նահանգ) Հայլընտըր ժողովրդական դպրոցը, ատենէ մը ի վեր կասկածելի դարձեր էր որպէս «կոմունիստական օջախ»: Կոմիտէի քննութենէն յետոյ՝ դպրոցը փակուեցաւ, անոր ինչքերը բռնադրուուեցաւ եւ դպրոցն ալ հրոյ ճարակ դարձաւ:

1963-ի Սեպտեմբերին, Պիրմինկհէմի մէջ նեկրոներու մէկ եկեղեցին ուժերով աւերակ դարձաւ եւ երիտասարդ նեկրօ աղջիկ մը սպաննուեցաւ: Կոմիտէն անոր յուղարկուորութեան մասնակցող բոլոր ձերմակ մարդիկն ու կիները լուսանկարեց եւ յետոյ անոնցմէ շատերը քննութեան տակ առնելով 105 տեղեկագրեր պատրաստեց, որոնց նպատակն էր պացուցանել որ յուղարկուորները կոմունիստ համակիրներ էին, որոնք կը վտանգէին երկրի ապահովութիւնը:

1964 Դեկտեմբեր 6-ին, հարիւր տասը սահմանադրական հեղինակութիւններ հանրազրութեամբ դիմեցին գոնկրէսին, որպէսզի Հակա-Ամերիկեան Գործերու Կոմիտէն ջնջուի: Անոնք ատով կը փաստէին որ այդ կոմիտէն այս դեմոկրատական երկրի ազատ արտայայտութեան սիստէմը ոտքի տակ կ'առնէր իր քահահաճօրէն ձեւակերպած նեղմիտ քննութիւններով եւ կ'արգիլէ կեանքի մէջ երեւան եկող նոր հարցերուն լայնախոհ եւ ազատ մտեցումը:

Աւելորդ է ըսել թէ անոնց պատրաստած հանրազրութիւնը կարգացուեցաւ եւ նետուեցաւ դարակներէն մէկուն մէջ:

Իրողութեան մխիթարական կողմն այն էր որ այդ կոմիտէն պատիժ սահմանելու իրաւասութիւն չունէր. այլապէս հազարաւոր մարդիկ պիտի դատապարտուէին բանտարկութեան: Անիկա տեսակ մը նախադատ ատեան էր, որուն առջեւ ներկայացողը պարտաւոր էր տրուած հարցերուն պատասխանել: Ատեանը այնուհետեւ կամ այն էր որ ամբաստանելին ճակատը սեւ մուր ծեփելով կը բաւականանար եւ կամ զայն իրական հայրենիքի դաւաճան նկատելով կը յանձնէր Միացեալ Նահանգներու բարձրագոյն դատարանին, որ նկատի կ'առնէր կոմիտէի քննութեան տեղեկագրութիւնը:

Այս կոմիտէն տարին 370 հազար տուլար պետական յատկացում կը ստանայ երկրին վնասակար իր գոյութիւնը պահելու համար:

6.— Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԹՐԷՅՑ ԻՆԵԻՐՆԵՐԸ

Կառավարութեան կողմէ պաշտօնական վիճակագրութիւն մը չկայ որ ճշդիւ ներկայացնէ Մ. Նահանգներու Թրէյտ Իւնիլըններու անդամներու թիւը ներկայ տարուայ համար: Բայց 1962-ի վիճակագրութեան համաձայն՝ բանուորական միութեանց անդամներու թիւն էր մօտաւորապէս 18 միլիոն. մէկ միլիոնը եթէ Գանատայի հաշիւին արձանագրենք, անդին կը մնայ 17 միլիոն: Այս թիւը կը ներկայացնէր AFL — CIO եւ միւս ոչ-պաշտօնական միութիւնները:

AFL — CIO-ի համագումարը .—

AFL — CIO-ի երկամեայ համագումարը տեղի ունեցաւ Նիւ Եորքի մէջ 1963, Նոյեմբեր 14—20 օրերուն, 970 պատգամաւորներու ներկայութեամբ:

Համագումարը անդրադարձաւ երկու կարեւոր հարցերու շուրջ. առաջին՝ կազմակերպուած բանուորներու անտեսական դրութեան քննարկը, երկրորդը՝ զաշնակցային կառավարութեան բռնած զիրքի կարեւորութիւնը:

Ճորճ Մինի, ընդհանուր նախագահը, իր բացման ճառով անդրադարձաւ ճարտարարուեստներու մեքենայացման եւ սպառնացող անդործութեան շուրջ: Ան ի միջի այլոց ըսաւ.— «Այլեւս իմ մտքիս մէջ միայն մէկ հրատապ հարց կայ. այն է՝ այս օրերու զարգացած ու հետզհետէ զարգացող մեքենայացումը զէպի ո՞ր կը տանի մեզ...: Այդ մեքենայացման մէջ օրհնութեան տարր չկայ: Ան արագօրէն իրական անէծք մը կը դառնայ այս հասարակութեան համար: Երբ դուք ուսումնասիրէք այն՝ ինչ որ տեղի կ'ունենայ ամէն ամիս, ամէն տարի, այն ատեն պիտի համոզուիք թէ մենք իրապէս վտանգի կը զիմենք մեր կամքէն անկախ: Ասիկա կրնայ մեզի բերել ընդհա-

նուր աղէտ: Ամերիկայի մէջ ամէն քորթորէշըն կատաղի մրցման մէջ է արտադրելու աւելի եւ աւելի՝ եւ զործածել նուազ մարդկային աշխատուժ, առանց մտածելու թէ ի՞նչ կը նշանակէ այդ մեր ազգային անտեսութեան համար: Եւ այս բանը տեղի կ'ունենայ մեր կառավարութեան հսկողութեան ներքեւ»:

Իսկ ի՞նչ ըրաւ Համագումարը:

Համագումարը մի քանի կէտերով ծրագիր մը կազմեց: Առաջին՝ նախադահական յանձնաժողով մը նշանակել մեքենայացման շուրջ: Երկրորդ՝ հաստատել տեղեկատու գրասենեակ մը, որուն զործը պիտի ըլլայ տեղեկութիւններ հաւաքել այն փոփոխութիւններու մասին, որոնք կը սպառնան բանուորներու զործերուն: Երրորդ՝ անտեսական անձան չափանիշով գոնկրէսէն պահանջել տուրքերու կրճատում: Չորրորդ՝ անդործութեան վնասուց հատուցման ծրագրի բարելաւում: Հինգերորդ՝ աւելի բարձր աշխատավարձք եւ ուրիշ նպաստներ: Վեցերորդ՝ հաստատել տեղեկատու բիւրօ մը, որուն զործը պիտի ըլլայ օգնել բանուորական միութեանց եւ զործատէրներուն՝ զարգացնել այն միջոցառումները, որոնք կը նպաստեն լուծելու տեխնիկական փոփոխութիւններէն յառաջացած խնդիրները:

Գործերու մասին Քեմլտիի կոչը.— Իր ամենավերջի ելոյթին մէջ Նախագահ ձան Քենէտի, Նոյեմբեր 15-ին, կոչ ըրաւ որ տրնտեսական անձան զազարէն խուսափելու համար օգնելու է աշխատաւորներուն՝ զեղջելով հետզհետէ ծանրացող տուրքերը: Ան ըսաւ.— «Ամբողջ մեր անտեսութիւնը, որ այս տարի առատութեան մեծագոյն չափանիշ մը ցոյց կուտայ, չենք կրնար ուրանալ որ նոյն ատեն կը ցուցնէ նաեւ իր բացասական կողմը: Այսօր, աւելի քան չորս միլիոն անգործներ ունինք եւ անոնց թիւը օրէ օր կ'աճի շատ աւելի՝ քան ինչ որ էր 1954-ին — զազարի տարին: Արտադրողութիւնը այնքան արագ կ'ընթանայ եւ այնքան շատ միլիոններ կը հաւաքուին աշխատանքի չուկային մէջ, որ եթէ մենք բոլորին համար նպաստաւոր արտասովոր անտեսական յառաջդիմութեան ծրագիր մը չունենանք, անգործներու թիւը 50 առ հարիւր կ'աճի:

«Քաղաքացիական իրաւանց պաշտպանութեան պահանջ դրուած է. գոնկրէսը չի կրնար եւ պէտք չէ անտեսէ այդ պահանջը, որ արդարացի է: Բայց գործերու մէջէն խտրականութեան վերացումով չի շահիր այն անձը, որ գործ չունի: Ոչ ոք կը շահի, երբ ճաշարան մը կը մտնէ մէկը եւ դրամ չունի ծախսելու: Մէկը գպրոց կը յաճախէ, չըջանաւարտ կ'ըլլայ, բայց ի՞նչ կը շահի երբ գործ չի կրնար գտնել: Ամէն մարդ իրաւունք ունի իր սեփական տունը ունենալու եւ մար-

դավայել կեանք ապրելու. բայց ո՞վ կը մտածէ այնպիսիներու մասին, որոնք ո՛չ գործ ունին, ո՛չ ալ դրամ :

«Անտարկեի պահանջ կայ, որ մենք ուժգին թափ տանք մեր նոր սերունդի կրթութեան գործին, բայց ես ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ աւելի նկատի կ'ունենամ այն վիճակագրութիւնը, որ կը ցուցնէ թէ ութը միլիոն տղաք եւ աղջիկներ կան, որոնք բարձրագոյն դպրոցներէ շրջանաւարտած չեն ու ամէն տարի կը նետուին աշխատանքի շուկային մէջ... լաւագոյն դպրոցներ, լաւագոյն ուսուցիչներ, լաւագոյն դիրքեր, ասոնք հանրամատչելի չեն, երբ մենք անդործներուն գործ չենք կրնար հայթայթել» :

Նախագահ Քենէտի ելոյթը անուղղակի թելադրական գծով պատճառ եղաւ որ իւնիւրներու համազուտմարը քիչ մը արժատական ընոյթով տնտեսական ծրագիր մշակէ : Այդ ծրագրի կարեւոր կէտերը հետեւեալներն են. — Կազմել ընդհանուր-աղջային ծրագրով գործակալութիւն մը, պահանջել որ գոնկրէսը հասարակական գործերու համար յատկացումները կրկնապատկէ. օրէնք անցնել տալ որ նուազ կամ չափաւոր եկամուտ ունեցող հարկատուներու տուրքերը կրճատուին. երիտասարդներուն գործ հայթայթելու ծրագիր մշակուի. շուտափոյթ քայլ առնել աւելցնելու աշխատավարձերը՝ նուազագոյնը նշանակելով ժամը 2 տուրք. որոշել շարժուման համար 35 օր աշխատանքի օր. կազմել յանձնաժողով մը, որ գաշնակցային եւ նահանգային կառավարութիւններու բարոյական ու ֆինանսական օգնութեամբ միանուազ պատերազմի սկսի յամառօրէն յարատեւող ամօթալի թշուառութեան դէմ :

Բայց այս որոշումները միմիայն թուղթի վրայ արձանագրուելու եւ պահուելու դատապարտուեցան եւ այդ՝ ոչ թէ անոր համար որ Նախագահ Քենէտի սպաննութիւնը եկաւ ամէն ինչ մոռցնող յուզումնալից մթնոլորտ մը ստեղծել, այլ անոր համար՝ որ աջակողմեան թեւի ասպետները ամէն տեղ, տիրողի, հրամայողի դիրք ապահոված էին, շնորհիւ կոմունիստներու համասփիւռ ուրուականին : Քիչ մը արժատական թէզ պաշտպանող մը՝ եթէ իւնիւրնի անդամ էր, դուրս կը հանուէր իւնիւրնէն, իսկ եթէ բանուոր էր, դուրս կը հանուէր գործարանէն, իր ետեւ յարմարցուած կոմունիստի պոչը :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԻՆԵՐԸ ԻՒՆԻԸՆԵՐՈՒ ՄԷՁ

Թրէյտ իւնիւրներու անդամ կիներէն 650 հազար հոգի կը գործեն հազուատեղէնի գործարաններու մէջ, միւսները՝ պանդոկներու, ճաշարաններու, հիւանդանոցներու եւ զանազան գրասենականներու մէջ. կիներ ալ կան, որ կը գործեն ինքնաշարժի գործարաններու մէջ :

Ինչպէս անկազմակերպ բանուորներու՝ նոյնպէս անկազմակերպ բանուորուհիներու թիւը կրկնապատիկ աւելի է :

Մ. Նահանգներու Աշխատանքի Բիւրոյի վիճակագրութեան համաձայն՝ իւնիւրնի անդամ կիներու թիւն է 3·271·000 :

Կիները գործի ու պայքարի մէջ. — Կիները գործի մէջ եղած են աշխոյժ, պայքարի մէջ՝ յանդուգն եւ աննահանջ : Աթլանտայի մէջ (Ճորճիա նահանգ) 1964 Դեկտեմբերին 700 բանուորներ գործադուլի ելան, անոնց մեծ մասը նեկրօ կիներ էին : Սքրիպտօ ընկերութեան մարդիկը, ուղեցին գործադուլ աւրող մարդիկ ներս առնել : Կիները յարձակեցան մարդոց վրայ եւ թոյլ չտուին անոնց ներս մտնել : Գործադուլը տեւեց 7 շաբաթ : Մինչ այդ մարդիկ յուսահատ՝ պատրաստ էին ընդունիլ գործատէրերու առաջարկը, նեկրօ բանուորուհիները, ընդդիմացան եւ վերջապէս յաջողեցան իրենց աշխատավարձի յաւելման պայմանները ընդունիլ տալ : Նոյնը պատահեցաւ 1964 Սեպտեմբեր-Նոյեմբերին Ճէնէրալ Մոտորսի օթոյի բանուորներու գործադուլի ատեն : Կին բանուորուհիներն էին որ առաջնորդողի դեր կատարեցին :

Տիկիճ Ռոզ Ռըսըլ. — Այս կինը Նիւ Եորքի Ուսուցիչներու Միութեան համաւաւոր առաջնորդն էր, որ մեռաւ 1965, Յունուար 22-ին : Ան ամբողջ 17 տարի, ոչ միայն Ուսուցիչներու Միութեան առաջնորդն եղաւ, այլեւ կորովի պայքարող մը ցեղապաշտներու դէմ, կարմիր վտանգը հեռացնելու պատրուակով չորս կողմը ահ ու սարսափ տարածող Միջարտիստականներուն դէմ : Նիւ Եորքի քաղաքային վարչութիւնը ուղեց զայն պաշտօնանկ ընել, բայց Ուսուցիչներու Միութիւնը մէկ մարդու պէս կեցաւ անոր կողքին :

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻԻՆԸ

Մ. Նահանգներու մէջ, Մայրըն Լիպըրմէն, Հասարակաց Կրթութեան Ապագան անուն գիրքով, կ'ապացուցանէ, որ ուսուցիչները որպէս մարտական իւնիւրնիստներ չեն նկատուիր, որովհետեւ անոնք բանուորական միութեան յատուկ կուուելու մեթոտը չունին, անոնք քաղաքային կամ նահանգային վարչութեան դէմ չեն կրնար կուուիլ, այսու հանդերձ 1964 թուին 91 գործադուլներ տեղի ունեցեր են նախակրթարաններու ուսուցիչներու կողմէն : 1964-ի Նոյեմբերին Քէնտաքէի, Նիւ Ճըրզիի, Ճորճիայի եւ Օքլահոմայի մէջ, ուսուցիչները գործադուլ յայտարարեցին անդահացուցիչ ամսաթուակ ստանալու համար : Սոյն բոլոր գործադուլներու ընթացքին 251·660 օրերու կորուստ տեղի ունեցաւ, 1940-էն 1964 :

Նահանգներ կան, ուր ուսուցիչներու տարեթուշակը 3 հազար տոլարէն աւելի չէ, բայց նահանգներ կան ուր ուսուցիչները 6 հազարէն մինչեւ 14 հազար տոլար տարեթուշակ կը ստանան:

Այս ցցուն անհամաչափութենէն յառաջացան ուսուցիչներու գործազուլները, որոնք առ հասարակ տեղի կ'ունենային Նոյեմբեր ամսոյն — բնորութեանց ատեն:

1965-ին վերջապէս կազմուեցաւ Ամերիկեան Ուսուցիչներու Ֆէտէրատիոնը, որ բուսական բարեօրոյց արհամարհուած ուսուցիչներու դրութիւնը:

ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ

Կառավարական գործաւորներու միութիւններ կան բայց անոնց բացարձակապէս արդիւլուած է գործազուլը, կամ աշխատավարձի, աշխատատեղի կամ օրէնքի սահմանած կանոններու մասին սակարկութիւն ընելը: Անոնք միայն գործի պայմաններու մասին կրնան դանդաղել:

Նախագահ Քենէտի եկաւ բարեփոխել չին օրէնքը: Կառավարութեան ծառայողներն ալ գործաւոր են, ըսաւ ան, եւ անոնք ազատ ըլլալու են իրենց միութիւնը կազմելու եւ աշխատավարձի ու աշխատատեղի մասին պահանջ ներկայացնելու: Ասով՝ 1962-ին կառավարութեան երկուքուկէս միլիոն գործաւորները իրաւասութիւն ստացան կազմակերպուելու: Առաջին անգամ նամակատան գործաւորները կազմեցին իրենց սեփական ինիւրը:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԳՈՒԼՆԵՐԸ (1963-1964)

1963 տարին — Մ. Նահանգներու մէջ 1963-ին 3·362 գործազուլներ տեղի ունեցան, որոնք 16 միլիոն աշխատանքի օրուայ կորուստ պատճառեցին: 1963-ի գործազուլներուն մասնակցող բանուորներու նուազագոյն միջին թիւն էր 280 հոգի. 1962-ին այդ թիւն էր 340, իսկ 1961-ին 431: Այդ բոլոր գործազուլներու դրդապատճառն էր աշխատավարձի յաւելման պահանջը:

1963-ին միայն 7 գործազուլներ եղան, որոնց մասնակցեցան 10 հազարէն աւելի բանուորներ: Յունիս 6-էն Օգոստոս 18, Քալիֆորնիայի, Օրէկոնի, Վաշինկտոնի եւ Մոնթանայի ատաղձագործարաններու 29 հազար բանուորները գործազուլի էլան եւ 73 օրերու պայքարէ վերջ ժամը 30 սէնթի յաւելում ստացան 3 տարուայ պայմանագրութեամբ: Սէնթ Լուիզի մէջ 21 հազար շինարարութեան բանուորներ՝ 3 ամիս գործազուլ ըրին եւ յաջողեցան ամէն մէկ

ժամուայ վրայ 28 սէնթ յաւելում ստանալ 3 տարուայ պայմանագրութեամբ:

Արեւելքի եւ Մոլաձոցի նուամատոյցներու 60 հազար բանուորները Յունուար եւ Փետրուար ամիսներուն գործազուլի էլան եւ ստացան ամէն մէկ ժամուան համար 24 սէնթ յաւելում՝ 2 տարուայ պայմանագրութեամբ:

Ֆիլատելֆիայի Փոխադրական Բանուորներու Միութիւնը 29 օրերու գործազուլով շահեցաւ ամէն մէկ ժամուայ համար 20 սէնթ յաւելում՝ 2 տարուայ պայմանագրութեամբ:

Նիւ Եորքի մէջ 20 հազար տպարանական բանուորներ երկարատեւ գործազուլ մը սարքեցին եւ 114 օր վերջ շահեցան շարաթական 12 տոլար 65 սէնթի յաւելում: Քլէյվլէնտի մէջ նոյն ճիւղի բանուորները թուով՝ 2·500 հոգի, 129 օրուայ գործազուլով շահեցան շարաթական 13 տոլար 65 սէնթի յաւելում:

Սուիֆէ ընկերութեան կապոցարանի բանուորները թուով 10·000 հոգի վեց նահանգներու մէջ գործազուլի էլան իրենց գործի ծանրութիւնը թեթեւցնելու համար եւ բարելուեցին իրենց վիճակը:

Իլլինոյի մէջ 80 քիմիական գործարաններու 2 հազար բանուորները գործազուլ ըրին եւ 92 օրուայ պայքարէ մը յետոյ ժամին 17 սէնթի յաւելում ստացան 21 ամսուայ պայմանագրութեամբ:

Ֆայրստոն եւ Մ. Ն. Րըպըր ընկերութեան բանուորները, թուով 3000 հոգի, գործազուլ յայտարարեցին եւ 7 ամիս յետոյ ստացան ամէն մէկ ժամուայ համար 16 սէնթ յաւելում՝ երկու տարուայ պայմանագրութեամբ:

Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրզի մէջ հիւսուածեղէնի բանուորներ՝ թուով 9000 հոգի, գործազուլի էլան եւ 9 օրէն վերջացուցին գործազուլը՝ ստանալով ամէն մէկ ժամուայ համար 12 սէնթի յաւելում երեք տարուայ պայմանագրութեամբ:

Ֆիլատելֆիայի 9 խոշոր պանդոկներու մէջ գործող 2000 բանուորներու գործազուլը, տեւեց մէկ շարաթ միայն:

Օք Րիճի մէջ (Թէչնոսի Նահանգ) աթոմական ճիւղերու բանուորները, թուով 4500 հոգի, գործազուլ յայտարարեցին, որ տեւեց 38 օր: Բանուորները 3 առ հարիւր աշխատավարձի յաւելում ստացան, իսկ Կիրակի օրերը գործելուն համար ամէն մէկ ժամուան համար 25 սէնթ բուսական վճարում՝ 18 ամսուայ պայմանագրութեամբ:

Քալիֆորնիոյ մէջ հազորակացութեան ճիւղի բանուորները, թուով 7000 հոգի, գործազուլի էլան Հոկտեմբեր 20-ին: Գործազուլը երկար շտեմեց: Բանուորները 5 առ հարիւր յաւելում ստացան երեք տարուայ պայմանագրութեամբ:

Ֆլորիտայի մէջ տպարաններու բանուորները, թուով 1500 հո-

զի, Նոյեմբերին գործադուլ ըրին՝ աշխատավարձքի յաւելման համար եւ ստացան ամէն մէկ ժամուան համար 15 սէնթի յաւելում երկու տարուայ պայմանագրութեամբ:

Ճենըրըլ Մոթորսի եւ Փորտ Ինքնաշարժի բանուորները, թուով 30,000 հոգի, գործադուլի ելան արագ գործելու խտուրթիւնը արգելելու համար. անոնք կը պահանջէին առողջապահական կանոններու յարգանք եւ արկածներու դէմ ապահովութեան միջոցառումներ: Գործադուլը սկսաւ Հոկտեմբերին եւ վերջացաւ Դեկտեմբերի 9-ին: Ընկերութիւնները համաձայնեցան:

Արեւելեան նահանգներու մէջ Փուտ Ֆէր վաճառատուներու 11,000 բանուորները գործադուլի ելան եւ ստացան ամէն մէկ ժամուան համար 12 սէնթի յաւելում՝ առանց պայմանագրութեան:

Շիգակոյի մէջ ելեքտրական ճիւղի գործաւորները, թուով 4000 հոգի, Նոյեմբերին գործադուլի ելան եւ ստացան ամէն մէկ ժամուան համար 10 սէնթի յաւելում՝ երկու տարուան համար:

Նիւ Եորք քաղաքի 115 ճաշարաններու սպասարկուները, թուով 2500 հոգի, գործադուլի ելան Դեկտեմբերին, եւ առանց երկար պայքարի՝ մէկ շաբաթէն շահեցան գործադուլը, շաբաթական 2 տոլար յաւելումով եւ երեք տարուայ պայմանագրութեամբ:

Շիգակոյի մէջ 1500 մեքանիստներ գործադուլ ըրին Նոյեմբերին եւ ստացան ամէն մէկ ժամուան համար 19 սէնթի յաւելում ու հիւանդութեան դէմ ապահովագրութիւն՝ երեք տարուայ պայմանագրութեամբ:

1964 Տարին.— 1964 տարուայ ընթացքին տեղի ունեցող գործադուլները աւելի շատ թիւ կը կազմեն. նոյնպէս կորսուած աշխատօրերը աւելի բարձր են քան նախորդ տարիներունը: 1964-ին, տեղի ունեցան 3600 գործադուլներ՝ 23,300,000 մարդ-գլուխ աշխատօրի կորուստով:

Ամենամեծ գործադուլն էր ձենըրըլ Մոթորսի 126 գործարաններու օթոյի բանուորներու գործադուլը, որուն մասնակցեցան 250 հազար բանուորներ: Գործադուլը սկսաւ Սեպտեմբերին եւ վերջացաւ Նոյեմբեր 9-ին: Բանուորները ստացան 5 առ հարիւր աշխատավարձքի յաւելում:

Մենք զանց կ'ընենք 1964-ի գործադուլները ցուցակագրելը, միայն համառօտելու համար ըսենք՝ որ այդ տարի տեղի ունեցող գործադուլները նախորդող տարիներու գործադուլներուն նման վերջացած են «ի նպաստ» բանուորներուն:

Բայց ի նպաստը չակերտեցինք. ինչո՞ւ: Բացատրենք մեր միտքը:

Գործարանատէր մը, որ իր կօշիկի գործարանին մէջ կ'աշխատեցնէ 500 գործաւոր եւ գործադուլի մը հետեւանքով ժամին 10 սէնթ աշխատավարձքի յաւելում կ'ընէ, օրական 8 ժամ հաշուելով, ամէն մէկ գործաւորի տուած կ'ըլլայ 80 սէնթ աւելի. շաբաթը վեց աշխատօր հաշուած՝ կ'ընէ 4 տոլար 80 սէնթ: 500 գործաւորներուն որպէս յաւելում տուած կ'ըլլայ 2,400 տոլար:

Մի՞թէ կարելի է հաւատալ որ գործատէր մը մէկ շաբաթուան իր շահոյթէն 2400 տոլար կորուստ ունենայ զիջելով բանուորներու պահանջին: Ո՛չ, ատիկա անկարելի ու անրնական է: Գործադուլէն անմիջապէս յետոյ՝ գործատէրը ամէն մէկ զոյգ կօշիկի զինին վրայ 50 սէնթ կ'աւելցնէ: Անոր գործարանը երբ 500 բանուոր կ'աշխատեցնէ, օրական առ նուազն կրնայ արտադրել 1000 զոյգ կօշիկ. շաբաթը վեց օր հաշուելով կ'ունենանք 6000 զոյգ կօշիկ, որոնցմէ իր յաւելեալ շահոյթը կ'ըլլայ 3000 տոլար: Ինք՝ գործադուլէն վերջ 500 բանուորներուն կը վճարէ 2400 տոլար աւելի. ուրեմն իր շահոյթը այդ պարագային՝ փոխանակ պակսելու՝ 600 տոլար կ'աւելնայ ամէն մէկ շաբաթ: Ատիկա պարզ հաշիւ է: Ատոր համար երբեք տարօրինակ թող չթուի, երբ ըսենք թէ գործատէր մը սոսկ ձեւական հակառակութիւն է որ ցոյց կուտայ գործադուլաւորներուն, բայց սրտանց համակիր է անոնց եւ շատ յաճախ՝ ինքն է որ բանուորները կը դրդէ գործադուլի, բայց նոյն ատեն՝ կը հակառակի անոնց: Ի՞նչպէս բացատրել այս հակասութիւնը:

Գործատէրը խորամանկ մարդ է եւ կը զիմէ նուրբ զիւանագիտութեան: Գործատէրը առերես հակառակութիւն ցոյց կուտայ գործադուլի հանդէպ նախ՝ անոր համար որ ան կ'ուզէ իր զիջողութիւնը սուղ զինով ծախել, գործաւորները տաղնապի մասնէլ եւ զանոնք վարժեցնել մշտատեւ համակերպութեան: Երկրորդ՝ անոր համար որ ան կ'ուզէ ժողովուրդին հասկցնել թէ իր ապրանքի զինին բարձրացումին պատասխանատուները բանուորներն են: Ատով ժողովուրդի զայրոյթը կը զրգոէ գործադուլաւորներուն դէմ: Եւ արդէն Ամերիկայի ժողովուրդը առհասարակ այն համոզումը ունի որ ապրանքներու զիններու բարձրացումը գործադուլներու հետեւանք է, մինչդեռ իրականութիւնը բոլորովին այլ է. գործադուլները չեն որ ապրանքներու զինները կը բարձրացնեն, որովհետեւ անոնք զիններու բարձրացման արդիւնքն են: Մէկ զոյգ կօշիկը 10 տարի առաջ 7 տոլարով կարելի էր գնել, այժմ անոր զինը բարձրացեր է 18 տոլարի: Մէկ փաուստ ոչխարի միւսը 10 տարի առաջ 35 սէնթ կ'արժէր, այժմ անոր զինը բարձրացեր է 85 սէնթի: Բանուորին աշխատավարձքը արդեօք նոյն համեմատութեամբ բարձրացե՞ր է — ո՛չ...: Բանուոր մը, որ 10 տարի առաջ շաբաթը 50 տոլար կը ստանար, այժմ կը ստանայ 75 տոլար: Ալ չխօ-

սինք այն բանուորներուն մասին, որոնք հազիւ թէ չարաթը 40 տուար կը ստանան կամ քիչ մը աւելի:

Այժմ հարց կը ծագի թէ ովքե՞ր են պատասխանատուները՝ գործադուլաւորնե՞րը թէ գործարանատէրերը:

Այս հարցման պատասխանելու համար եթէ կապիտալիստական սխառտէմի խարխիսն եղող ազատ ձեռնարկութեան սկզբունքը նկատի պիտի ունենանք, պիտի ըսենք՝ պատասխանատուները ոչ գործադուլաւորներն են ո՛չ ալ գործարանատէրերը: Երբ բանուորները ազատ են գործադուլ ընելու մէջ, գործատէրերն ալ ազատ են իրենց յաւելեալ արժէքի շահոյթը ապահովելու համար իրենց ապրանքներու գինները բարձրացնելու մէջ: Իսկ մենք արդեօք պարտաւո՞ր ենք կապիտալիստական սխառտէմի ազատ ձեռնարկութեան սկզբունքը ընդունիլ որպէս անխախտելի իրաւական սկզբունք՝ երբ խնդրոյ առարկան է ժողովուրդի ընդհանուր բարօրութիւնը, իրաւանց հաւասարութիւնը եւ ընկերային ներդաշնակութիւնը: Ո՛չ, մենք մեզ պարտաւորութեան տակ չենք զզար, ատոր համար կ'ըսենք. — Ամերիկայի բանուորները գործադուլային պայքարի միակողմանի գիծին հետեւելով աւելի կը նպաստեն գործատէրերուն՝ քան թէ իրենք իրենց: Միակողմանի գիծ ըսելով, ըսել կ'ուզենք անասական պայքարի գիծը: Տնտեսական պայքարի գիծին զուգահեռ՝ պէտք է անոր կապուի քաղաքական պայքարի գիծը: Մ. Նահանգներու կառավարութիւնը եքէ ժողովրդական կառավարութիւն է, ուրեմն ան կենալու է ժողովուրդի մեծամասնութեան շահերը պաշտպանելու գիրքին վրայ: Մինչդեռ այդ կառավարութիւնը բացայայտօրէն կեցած է այդ ժողովուրդի արիւնն ու քրտինքը շահագործելով յրացող կապիտալիստ դասակարգի շահերը պաշտպանելու անչեղ ճամբուն վրայ: Այդ կառավարութիւնը պէտք է հսկէ երկրի արդիւնարեւութեան վրայ, պէտք է ղեկավարէ զայն համաձայն ընդհանուր ժողովուրդի շահերուն: Ան թոյլ տալու չէ որ գործատէրը ընկերային ուժերով արտադրուած ապրանքներու գինները բարձրացնէ գործադուլի պատրուակով: Մինչեւ որ կառավարութիւնը վճռապէս զնորոշման իրաւասութիւն չունենայ, գործադուլները աւելի կը շատնան եւ անոնք աւելի կը նպաստեն գործատէրերուն՝ քան թէ բանուորներուն: Ահա թէ ինչո՞ւ բանուորները իրենց տնտեսական պայքարին հետ նոյն աշխուժութեամբ տանելու են նաեւ քաղաքական պայքարը:

Եթէ գործատէրերը կը բողոքեն թէ զնորոշման ճնշող սխառտէմին տակ իրենց գործը չեն կրնար շարունակել, այն ատեն՝ կառավարութիւնը իր հսկողութեան տակ կ'առնէ գործերը եւ զանոնք կը յանձնէ բանուորներուն: Սոցիալիզմ կը կոչէք զայն, կամ անոր մէկ ուրիշ անուն կուտաք, հարցը այդ չէ. հարցը այն է, որ խնդրին բարեք լու-

ծումը, ուրիշ կերպ չի կրնար ըլլալ: Ատոր ապացոյցը այն է, որ ամէն տարի գործադուլները կ'աւելնան, ոչ թէ կը պակսին: 1964-ին համար եթէ գործադուլներու թիւը նշանակեցինք 3600, 1965-ին, գործադուլներու թիւը բարձրացաւ 4100-ի:

Գործադուլներու հետ կ'աւելնայ նաեւ ոճիրներու թիւը: Մ. Նահանգներու Ընդհանուր Գատախաղի հրապարակած վիճակագրութեան համաձայն՝ 1963-ին, Մ. Նահանգներու մէջ ոճրագործութեանց թիւը (ոճրագործութիւն անունին տակ կ'երթան սպանութիւնները, աւազակութիւնները, առեւանդումները, հրդեհումները, բռնաբարումները եւ գողութիւնները) հասած էր 2,300,000-ի: 1964-ին՝ 2 միլիոն 850,000-ի: 1965-ին՝ 3,200,000-ի: Իսկ 1966 տարուայ առաջին վեց ամիսներուն՝ Յունուարէն մինչեւ Յուլիս 1՝ այդ ոճրագործութեանց թիւը արդէն անցեր էր 3,000,000-ը:

Պաղ պատերազմի գիծը.—

AFL—CIO-ի վերջին համագումարին մէջ կազմակերպուած բանուորութեան յետադիմական առաջնորդները, չնայած որ վաշինկթընի եւ Մոսկուայի միջեւ գոյութիւն ունեցող լարուածութիւնը մասամբ մեղմացեր էր, շարունակեցին իրենց արտաքին քաղաքականութեան նկատմամբ անհաշտ դիրքաւորումը, եւ ըստ այնմ ալ՝ խրմբագրեցին ժանդոտած որոշումներ:

Այս մարդիկը, որ իրենց սկզբունքն ըրած էին հեռու մնալ քաղաքական պայքարի ճակատէն, կոմունիստներուն դէմ պայքարելու համար այժմ անցան քաղաքական պայքարի ճակատին վրայ: 1964-ի Մայիսի համագումարին անոնք արձանագրեցին հետեւեալ որոշումը. — «Մենք չենք յոգնած այն պայքարին մէջ, որ պիտի արզիլէ կոմունիզմի աշխարհակալութիւնը: Մենք կը քննադատենք Պորտուգալի Միութեան հետ Մ. Նահանգներու կառավարութեան առած մերձեցման քայլերը: Մ. Նահանգները եւ Արեւմտեան Եւրոպան ասանկով պիտի օգնեն կոմունիստ երկիրներուն, որոնք ազատուելով իրենց այժմու դժուարութիւններէն, վաղը պիտի անցնին ազատ աշխարհին դէմ իրենց կործանարար յարձակողականին»:

Միամիտի մէջ գործադիր մարմինը 1965-ի Փետրուար ու Մարտ ամիսներուն իր պաշտօնական ժողովի որոշումով բուռն կերպով հակառակ արտայայտուեցաւ Նախագահ Ճոնսոնի Պորտուգալի Միութիւն այցելելու մտադրութեան դէմ: Եւ դեռ աւելին, այդ ժողովը սխալ ու վտանգաւոր կը համարէր «երբ Մ. Նահանգներու կառավարութիւնը չեղօք կարծուած կոմունիստ երկրի մը հետ առևտրական յարաբերութիւն կը պահէ, որովհետեւ հաստատուած է որ այդ եր-

կիրը Ամերիկայէն դնած ապրանքները կը փոխանցէ մեր թշնամի երկիրներուն՝ Չինաստանի եւ Քուպայի»:

Եւ այդ նոյն գործադիր խորհուրդը պահանջ ներկայացուց Ամերիկայի կառավարութեան՝ որ անմիջապէս օդանաւային յարձակումով ջախջախէ Հիւսիսային Վիեթնամի կոմունիստ ռեժիմը: Նախագահ Ճորճ Մինին յայտարարեց. — «Ամերիկեան ժողովուրդը պէտք չէ ճնշում բանեցնէ Նախագահ Ճոնսոնի վրայ, որպէսզի ան խորհրդակցութեան քայլեր առնէ որեւէ կոմունիստ ռեժիմի տակ ապրող երկրի հետ»: Ան ծափահարեց Ճոնսոնի Տոմինիկեան Հանրապետութեան մէջ զինուորական միջամտութեան քաղաքականութիւնը:

Մեծամասնութիւն կազմող այս յետադիմական հոսանքին դէմ, սակայն, կար փոքրամասնութիւն մը, որ կեցած էր ուղիղ ճակատի վրայ: Ասոնք էին ուսուցիչներ, ուսանողներ, եւ անկախ թրէյտ Իւնիւններ, որոնք կ'ուզէին դադարեցնել Վիեթնամի աւերիչ պատերազմը, որ կրնար երրորդ համաշխարհային պատերազմին դուռ բանալ:

7.— ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մ. Նահանգներու Գոնկրէսը, 1963-ին գումարեց իր առաջին նիստը Յունուար 9-ին եւ փակուեցաւ Դեկտեմբեր 30-ին. անոր երկրորդ նիստը գումարուեցաւ 1964-ի Յունուար 7-ին եւ փակուեցաւ Հոկտ. 3-ին:

Թէեւ առաջին նստաշրջանէն սպասուածէն շատ քիչ բան դուրս եկաւ, երկրորդ նստաշրջանը դրազեցաւ Նախագահ Ճոնսոնի առաջնորդութեամբ Նախագահ Քենէտի պատրաստած ինքնատիպ ծրագրի հարցերով, որոնց վրայ Ճոնսոնը աւելցուց իր առաջադրութիւնները. օրինակ՝ չքաւորութեան դէմ կռուելու ծրագիրը, եւ ազգային անյետաձգելի կարիքները հոգատարելու հարցը:

Առաջին նստաշրջանին ամենէն կարեւոր գործը որ զլուխ ելաւ, ատոմական փորձարկութեանց արգելման դաշնագրութեան վաւերացումն էր, դաշնագրութիւն մը՝ որ երեք պետութեանց՝ Մ. Նահանգներու, Մեծն Բրիտանիոյ եւ Ս. Միութեան միջեւ կայացած համաձայնութեան արգիւնքն էր:

Այդ դաշնագրութեան վաւերացումը, սակայն, արգելք մը չէր որ օրէնսդիր ժողովը պաշտպանութեան պիւտճէին վրայ մէկ ու կէս անգամ աւելի յատկացման որոշում տար, մասնաւորապէս տիեզերաօդանաւորդութեան յաջողութեան համար: Մարդիկը ծրագրած էին որ մարդ մը իր ոտքը դնելու էր լուսին վրայ. եւ ամերիկացին անպատճառ լուսինը պիտի դրուէր, հոգ չէր թէ միլիոններ չքաւորութեամբ կը տառապէին իրենց հայրենիքին մէջ:

Այստեղ անհրաժեշտ կը նկատենք երկու նստաշրջաններու օրէնսդրական միջոցառումներէն մէկ քանին թուել, որոնք հասարակական տեսակէտով նշանակալից են:

Քաղաքական իրաւանց օրինագիծը. — Այս հարցը Նախագահ Քենէտի Գոնկրէսին ներկայացուցեր էր նախապէս. երկրորդ նստաշրջանին նոյն հարցը դարձեալ սեղանին վրայ դրուեցաւ եւ 83 օր անընդհատ անվերջ վիճարանութեան առարկայ եղաւ: Անոր ամենէն կատաղի հակառակորդներն էին հարաւային նահանգներու ծերակուտականները:

Օրինագիծը ներկայացուցչական Տան մէջ անցաւ 126-ի դէմ 289 քուէով, ծերակոյտին մէջ՝ 27-ի դէմ 73 քուէով: Նախագահ Ճոնսոն օրինագիծը ստորագրեց 1964, Յուլիս 2-ին:

Այդ օրինագիծով վերջ կը տրուէր ցեղային խտրականութեան պանդոկներու մէջ, ճաշարաններու եւ թատրոններու մէջ, երկաթուղային, նաւային ու օդանաւային ճամբորդութեանց մէջ, ինչպէս նաեւ գործարաններու մէջ: Այդ օրէնքով նեկրոները ազատ կը մնային քուէարկելու եւ բարձր պաշտօններու թեկնածու ըլլալու:

Բայց հակառակ այս օրինագիծին, մինչեւ այսօրերը, երբ այս տողերը կը գրուին (1966 Յոգոստոս 2) ցեղային խտրականութեան հետեւանքով տակաւին կը շարունակուին արեւնահեղ ընդհարումներ՝ Քլէվլէնտի մէջ:

Տուրքի կրճատում. — 1964 Փետրուար 26-ին տուրքերու կըրճատման օրէնք անցաւ ժողովուրդի զնոդական կարողութիւնը բարձրացնելու համար: AFL — CIO-ի նախագահը՝ Ճորճ Մինի, ծափահարութեամբ ընդունեց այդ օրէնքը, որ իր կարծիքով՝ Ամերիկայի տնտեսութիւնը կը դնէր հաստատ հիմքերու վրայ:

Տուրքի կրճատումը թէեւ գործի վրայ եզոզ բանուորին պատահութիւն կուտար դրամ իննայելու, բայց անհաւասարութեան դիւր նոյն համեմատութեամբ պահպանուած կը մնար: Սոցոր եկամուտ ունեցող գործատէրը աւելի կ'օգտուէր, քան թէ բանուորը:

1964-ի տնտեսական ապահովութեան օրինագիծը. — Ասիկա չքաւորութեան դէմ մղուած պայքարի քայլ մըն էր, զոր գոնկրէսը Նախագահ Ճոնսոնի առաջարկութեամբ յօժարեցաւ առնել: Նիւ Եորք Թայմըզ, իր 1964 Հոկտեմբեր 19-ի խմբագրականով, շատ իրաւամբ այդ օրինագիծը անուանեց — «Սիստ սահմանափակ իր իմաստին մէջ, խիստ երկշոտ՝ իր դադափարներուն մէջ, նոյնիսկ երբ նկատի առնենք անոր մեկնակէտը»:

Բնակարանային հարցը. — Այս մարդին վրայ գոնկրէսը, ար-

դէն իսկ գոյութիւն ունեցող ծրագիրը քիչ մը ընդարձակեց, 15 ամսուան համար, նշանակելով 1 միլիառ տոյարի յատկացում: Այդ յատկացումով պիտի շինուէին ցած վարձագիւնով հասարակաց տուներ եւ այլ շէնքեր: Իսկ 50 միլիոն տոլար պիտի յատկացուէր միմիայն սարսափելի բնակարանները մարդավայել բնակարաններու վերածելու համար:

Հասարակական գրաստիպարներ.— Գոնկրէսը նկատի առնելով որ դաշնակցային կառավարութիւնը անսահման տարածութեամբ շրջաններ ունի, որոնք ամայացած կը մնան, որոշեց այդ վայրերը մաս առ մաս գեղացարդել եւ զանոնք վերածել ժողովրդական գրաստիպարներու:

Գաստիարակութիւն.— 1963-էն ի վեր գոնկրէսը որոշեր էր մէկ երկիրին 200 միլիոն տոլար յատկացնել գոլէճներու եւ ակադեմական շէնքերու կառուցման համար: Այդ որոշումը, սակայն, մրնացեր էր թուղթի վրայ, որովհետեւ երկրի պաշտպանութեան գործը աւելի կարեւոր էր: 1964-ի գոնկրէսը, այս անգամ որոշեց 731 միլիոն տոլար յատկացնել ընդունակ երիտասարդներու ապագայ կրթութեան համար:

Կիներու համար հաւասար վնարում.— 18 տարիներէ ի վեր պայքար կը մղուէր որպէսզի դաշնակցային օրէնքով կիները զօրծի ընտրութեան ու աշխատավարձի հաւասար իրաւունք ստանան, առանց սեռի խտրութեան: 1964-ի գոնկրէսը այդ օրէնքը վաւերացուց եւ գործադիր իշխանութեան յանձնեց որ անոր գործադրութիւնը յառաջ տանի Աշխատատեղերու Արդար Զափանիչի Օրինագիծի տրամադրութեան համաձայն:

Ֆարմային բանուորները.— Սեզոնային գաղթական բանուորներ կան, որոնք տարւոյն որոշ եղանակներուն, Ամերիկա կը մտնեն մի քանի ամիս կը գործեն, ապա կը վերադառնան իրենց տեղերը: Այս թափառական, խեղճուկ բանուորները շատ անգամ կ'ենթարկուին չարաչաճ մարդոց անխիղճ շահագործումին, ուրկէ կը յառաջանան ամերիկեան վարկին վնասող անխտրութիւններ: Գոնկրէսը նկատի առնելով այդ հանգամանքը, որոշ օրինագիծ մը անցուց, որ կ'ապահովէ գաղթական բանուորներու զօրծի անխտրաբար ապահովութիւնը, անոնց աշխատավարձի առանց գեղջի վճարումը, եւ անոնց հետ մարդավայել վարուեցողութիւնը:

Առողջապահական ծրագիրներ.— Գոնկրէսը 4 տարուայ համար 329 միլիոն տոլարի յատկացում որոշեց հիմնելու մտային առող-

ջապահութեան կեդրոններ եւ հետազոտութեան եւ բժշկական խնամքի հիմնարկութիւններ՝ մտային խանդարման ենթարկուող անձերուն ու երեխաներուն օգնելու համար:

Գոնկրէսը նոյնպէս աւելի ընդարձակեց Հիլ-Բըրտոն Օրինագիծի ծրագիրը, դաշնակցային կառավարութեան ձեռքով հիմնելու հիւանդանոցներ, հիւանդապահական տուներ եւ արդիականացնել այն հիւանդանոցները, որոնք առողջապահական եւ բժշկական խնամքի տեսակէտով պահանջուած սարքաւորումը չունին:

Գոնկրէսը նոյնպէս քուէարկեց որոշ հիմնադրամներ՝ կառուցելու համար մասնաւոր դպրոցներ, որոնք պատրաստելու են հիւանդապահուհիներ եւ բժիշկներու եւ ատամնարոյժներու օգնականներ:

Ուտեստեղէն՝ խաղաղութեան համար.— Գոնկրէսը նկատի առնելով զանազան երկիրներու մէջ տիրող թշուառութիւնը (Մ. Նահանգներու մէջ թշուառութիւն գոյութիւն չունի?...) խաղաղութեան համար ուտեստեղէնի ծրագրի ժամանակաշրջանը աւելի երկարեց եւ այդ ծրագրի գործադրման համար յատկացումը աւելի բարձրացուց: Համաձայն նոր որոշումու օրինագիծին, 4 երկիրին 500 միլիոն տոլար արժող Փարմային արտադրութիւններ զրկուելու են սովէն ու նուազ սննդառումէն տառապող հարիւրէն աւելի յետամնաց երկիրներուն:

Գոնկրէսը սոյն ծրագիրը ընդարձակելով հանդերձ՝ բացարձակապէս արգիլեց որ վարչութիւնը կոմունիստական ոէժիմի տակ ապրող երկիրներուն որեւէ օգնութիւն ընէ, քանի որ անոնք խաղաղութեան կողմնակից չեն:

AFL — CIO-ի առաջնորդները ասիկա լաւագոյն գոնկրէսը համարեցին 1936 թուականէն սուղին. լաւագոյն այն իմաստով, որ անիկա այնպիսի օրինագիծեր որոշեցրեց, որոնք կը բարձրացնեն Ամերիկայի պատիւը եւ կ'ապահովեն անոր հեղինակութիւնը»:

Նեկրոներն ու կիները գոնկրէսին մէջ.—

Մ. Նահանգներու ծերակոյտին մէջ մէկ հատ նեկրո չէ մտած ու չկայ հիմա ալ: 1964-ին, 6 նեկրոներ ընտրուեցան Ներկայացուցչական Տան մէջ, անոնց հետ նաեւ 10 նեկրո կիներ: Երբ մենք նկատի առնենք 6 միլիոն նեկրո քուէատուները, այն ատեն կը տեսնենք որ նոյն իսկ սահմանափակուած քուէարկութեան մէջ նեկրոներուն զբաղակցումը է արդարութեան չափանիշը:

Բըրչ ընկերութիւնը կը բարգաւաճի.— Մ. Նահանգներու ալթիկա կազմակերպութիւններէն ամենէն աւելի բարգաւաճող կազմա-

կերպութիւնը ձան Բրբշ ընկերութիւնն է, որ 1965-ի Յունուարին յայտարարեց որ 1964-ին 3 միլիոն 500 հազար տոլար ստացած է իր անդամներու նուիրատուութիւններէն: Անոր պատուարժան Նախագահ Բարբրտ Վէլ իր տեղեկագրութեամբ ծանոյց որ 1964-ի ընտրութեանց ատեն Հանրապետականներու Ընդհանուր Համագումարին մէջ 115 պատգամաւորներ ունեցեր է, որոնք մեծ ազդեցութիւն դրածեր են Հանրապետականներու ներքին եւ արտաքին քաղաքականութեան վրայ:

Այս ընկերութիւնը անհաշտ թշնամի է նեկրոներուն, օտարականներուն, կաթողիկէներուն, հրեաներուն եւ մասնաւորապէս կոմունիստներուն:

Անոր բարձրագոյն պաշտօնեաներուն տարեթուական է 15 հազար տոլարէն մինչեւ 30 հազար տոլար:

Եւ երեւակայեցէք որ, մինչ ցեղային խտրականութիւնը վերջնելու օրէնք անցած է, այս ընկերութիւնը ազատ թողուած է պրօպականտի ու գործունէութեան ասպարէզին վրայ:

Մ. Նահանգներու կոմունիստ կուսակցութիւնը.—

Պաղ պատերազմը սկսած օրէն շարունակ աշխատանք թափուած է Ամերիկայի կոմունիստ կուսակցութիւնը որպէս ապօրինի կուսակցութիւն՝ հրապարակէն անհետացնելու համար: Տասնեակներով կոմունիստներ բանտարկուեցան որպէս դաւաճաններ: 1951-ին, գոնկրէսը օրէնք անցուց, որ կոմունիստ կուսակցութեան անդամները պէտք է արձանագրուին, իրրեւ օտար կառավարութեան գործակալներ, եւ անոր երեւուտքի գործառնութիւնը առնուի խիստ քննութեան տակ: Ամերիկայի ազատականները այդ օրէնքը համարեցին ամերիկեան սահմանադրութեան ոգիին հակառակ եւ նեցուկ կեցան կոմկուսի պայքարին: Ամերիկայի Գերագոյն Ատենը հրապարակուած այդ օրէնքը բեկանեց, բայց կոմունիստ կուսակցութիւնը 1964-ի ընտրութեանց ատեն իր թեկնածուները չգրաւ ընտրական ցանկին վրայ ձախակողմեան բաժնի ուժերը չբաժնելու կանխահոգութեամբ: Միայն Քալիֆորնիոյ նահանգին կոմունիստ կուսակցութիւնը նախնական ընտրութեանց պահուն իր թեկնածուն նշանակեց նեկրօ մը՝ Վիլիյմ Թէյլլըր, որ ստացաւ 38,519 քուէ, ան ալ Լոս Անճէլլըսի մէջ:

Ընտրութեանց արշաւը.—

Մ. Նահանգներու նախագահական ընտրութեանց ատեն ապշեցուցիչ հսկայական գումարներ կը ծախսուին, հակառակ դրուած օրէնքին: Ամէն կուսակցութիւն պարտաւոր է իր ծախսած գումարներու մասին ստոյգ տեղեկութիւն տալ ձերակոյտի քարտուղարին:

Բայց այդ օրէնքին կարեւորութիւն տուող չկայ: 1960-ին, ընտրութեանց համար ծախսուած դրամներու ընդհանուր գումարն էր 175 միլիոն տոլար, իսկ 1964-ին, այդ գումարը բարձրացաւ 210 միլիոն տոլարի:

Դրուած օրէնքը անտեսուած է.— ո՛չ, մարդիկը օրէնքով կը շարժին եւ զարտուղի ճամբաներով կը հասնին իրենց նպատակին: Օրէնքը ընտրութեան առթիւ նուիրատուութեան համար որոշ գումար մը նշանակած է. անհատ մը 3 հազար տոլարէն աւելի չի կրնար տրամադրել ընտրական յանձնախումբին եւ ընտրական յանձնախումբը իր կարգին՝ 3 միլիոն տոլարէն աւելի չկրնար ծախսել ընտրութեանց համար: Բայց օրէնքը յանձնախումբերու թիւին սահման դրած չէ, ոչ ալ արգիլած է որ 3 հազար տոլար նուիրողին ընտանիքի անդամներն ու ազգականները չմասնակցին նուիրատուութեան: Ծոնսըն Նախագահական Յանձնախումբը ծերակոյտի քարտուղարութեան տուած տեղեկագրութեան մէջ յայտնած էր որ 700 հազար տոլար հաւաքուած է ընտրութեան համար: Բայց ասիկա միակ յանձնախումբը չէ որ զոյութիւն ունի. կան անոր պէս տասնեակներով յանձնախումբեր, որոնք ցրուած են զանազան նահանգներու եւ խոշոր քաղաքներու մէջ: Ասկէ զատ՝ միլիոնատէր մը որ 3 հազար տոլար կը նուիրէ ընտրապայքարին, անոր կիներ, զաւակները, ազգականներու եւ բարեկամներու ընտանիքի անդամները եւս կրնան 3 հազարական տոլար նուիրել եւ ահա հարիւր հազար տոլարի գումարը կ'անցնի:

Ամերիկայի ընտրապայքարը հարուստի խաղարկութիւն է:

8.— ԱՄԵՐԻԿԱՆ ՄՇՈՒՇԱՊԱՏ ԵՐԿԻՐ

Ամերիկայի պետական պաշտօնեաները, բուրժուայ լրագրողները, պաշարաւոր քաղաքագէտներն ու անոնց թութակները, ամէն անգամ երբ Ս. Միութեան շուրջ կ'անդրադառնան, շարունակ անթափանցելի խորհրդաւորութիւն մը կը վերագրեն անոր՝ նոյնիսկ միջազգային բռնՖէրանսներու մէջ: Անոնք երկաթէ վարագոյր մը կախած են խորհրդային երկրի բոլորտիքը, որով ըսել կ'ուզեն թէ սովետներու երկիրը դաւազիրներու երկիր է, սովետներու մարդիկը այս կամ այն երկիրը կ'այցելեն, խաղաղութեան մասին կը խօսին, սպառազինման արշաւը դադրեցնելու համար առաջարկներ ու պընդումներ կ'ընեն, բայց երկաթէ վարագոյրին ետեւ սարսափելի պատրաստութիւններ կը տեսնեն, իրենց գործակալներու միջոցով ամէն տեղ կը յառաջացնեն խռովութիւն եւ քաղաքացիական պատերազմ եւ ատով կը խանգարեն ազգերու ներդաշնակ յարաբերութիւնները: Այս բոլոր վերագրումները կը կրկնուին տարիներէ ի վեր, առանց

դրական փաստերու, միմիայն շարունակուող պող պատերազմը աւելի հիմնաւորելու, նոյն ատեն այս կամ այն երկրի մէջ հրամանատարի յատուկ իրենց գինուորական միջամտութիւնը արդարացնելու համար: Պարզ իրականութիւնը, սակայն, մեզի ուրիշ պատկեր ցոյց կուտայ, այսինքն այն՝ որ Ամերիկան ինքնին անթափանցելի մշուշապատ երկիր մըն է, որուն ներքին ու արտաքին քաղաքականութիւնը ամբողջապարական Ֆրագներով հիւսուած վարագոյրի մը ետեւ կը մնան առեղծուածային, մասնաւորապէս անոնց համար, որոնք կապիտալիստական սիստէմի թաղուն ծալքերը չեն ուսումնասիրած: Մենք մեր ուսումնասիրութեան նեղ շրջանակին մէջ արդէն փորձեցինք պատկերացնել այդ ծալքերը. այժմ պիտի անդրադառնանք միակ դէպքի մը, որ մինչեւ այսօր տակաւին ծածկուած կը մնայ անպատմելի խորհրդաւորութեան մէջ: Այդ դէպքը ձոն Քենէտի՝ այդ երխասարդ նախագահի սպաննութիւնն է, որ տեղի ունեցաւ 1963, Նոյեմբեր 22-ին Քէնտաքի նահանգին Դէլաս քաղաքին մէջ:

ՁՈՆ Ֆ. ՔԵՆԷՏԻ

Ես այստեղ նպատակ չունիմ Քենէտի կենսագրութիւնը ընել, միայն պէտքը կը զգամ յիշատակել դէպք մը, որ թէեւ անձնական է իր երեւոյթով, բայց հասարակական է իր բնոյթով ու էութեամբ:

Ինձ համար Ամերիկայի տիրական երկու կուսակցութիւնները՝ — Դեմոկրատ եւ Հանրապետական — երկուքն ալ կեցեր են նոյն գիծին վրայ. երկուքն ալ կը ծառայեն Ֆինանս. կապիտալի արքաներու շահերուն. եւ այդ միացումը կատարուեցաւ այն օրէն՝ երբ Ամերիկան Ա. Աշխարհամարտէն յետոյ՝ մտաւ իմպերիալիստական պետութեանց շարքը: Իմ Ամերիկա մտած օրէս մինչեւ այսօր, 7 նախագահներ յաջորդած են իրարու եւ ես անոնց զիմագծային արտայայտութեանց միջեւ միայն տարբերութիւն տեսած եմ. անոնց հոգեբանութիւնը եղած է գրեթէ նոյնը: Այդ նախագահներէն քանի մը հատը անձամբ տեսած եմ, իսկ միւսներուն նկարները ուսումնասիրած եմ: Առաջին նախագահը, զոր տեսած եմ, եղած է Վուտրօ Վիլսոն: Համամարդկային դադափարներու հետ ճոխ ու խրթին բառերու առատ պաշար ունեցող մարդ մը, որուն երազուն աչքերը այն տպաւորութիւնը կը ձգէին որ անոր տիրոջ նայուածքը ուղղուած էր նոր ու անձանթ հորիզոններու: Ան Վուտրօ Վիլսոն մարդն էր, որ հակառակ էր պատերազմին, խզճամիտ մարդ մը, որ տառապող ու բազմաթիւ զոհեր տուող հայ ժողովուրդին իր սեփական հայրենիքն ունենալու իրաւունքը չէտեց ու այդ հայրենիքին սահմանները գծեց, բայց նախագահ Վուտրօ Վիլսոն՝ իր ներքին մարդուն սկզբունքն-

րուն հակառակ դիրք բռնեց: Անոր յաջորդեց Վարըն Հարտինկ: Այս մարդուն լուսանկարը իմ վրայ այն տպաւորութիւնը թողուց, որ ան աւելի շատ խաղով ու հաճոյալի ժամանցով հետաքրքրուող էր, քան թէ վարչական գործերով: Ասոր յաջորդեց ուրիշ հանրապետական մը Գարլին Գուլիճ, որ ճաշարանի մէջ սպասարկուի զիմագիծն ունէր եւ կ'ուզէր ամէն կերպով ճաշարանապետին հաճելի ըլլալ իր հաւատարիմ ծառայութեամբ: Ասոր յաջորդն եղաւ երրորդ հանրապետական մը Հէրբերտ Հուվըր: Ձինքը մօտէն տեսած իմ: Դրամատան մէջ արկղակալի գործ ունեցողի մը զիմագիծն ու նայուածքը արտայայտող մարդ մը, որ կարծես կը զգուշանար միշտ իրեն մօտեցողներէն: Այս պարոնը այնքան ազահ էր, որ ցամաքեցուց երկրի արգիւնարեքական ազդիւրները ու Ամերիկան տարաւ սնանկութեան դուռը: Ասոր յաջորդն եղաւ դեմոկրատներու թեկնածուն, Ֆրէնկլին Ռուզվէլտը: Ամերիկայի ժողովուրդը ձանձրացեր էր հանրապետականներէն, այս անգամ պատեհութիւն տուաւ դեմոկրատներուն. ու դեմոկրատ նախագահը Ամերիկան դուրս հանեց քառսէն: Բայց թողունք այդ խնդիրները եւ պատկերացնենք մարդը: Ֆրէնկլին Ռուզվէլտ, հպարտ, ինքնավստահ եւ ուժեղ անհատականութիւն ունեցող մարդ մը, որ գիտէր թէ ի՞նչ խօսելու էր, գիտէր թէ իր քայլերը ո՛ւր ուղղելու էր եւ ուր առաջնորդելու էր իր երկիրը: Անոր գէմքի արտայայտութեան շատ ուշադրութիւն տուած եմ, երբ տեսած եմ անոր նկարը Չրըչիլի եւ Ստալինի հետ: Անոր նայուածքը սապէս կարելի է թարգմանել. — «է՛հ, ի՛նչ ընենք, ժամանակները, պայմանները փոխուած են... Այլապէս ես քովնտի պիտի չնստէի կոմունիստ աւազակի մը հետ»: Անոր յաջորդեց Հէրբի Քրուժըն, մարդ մը, զոր առաջին անգամ տեսնելուս, կարծեցի թէ ես անոր հանդիպած եմ քանիցս՝ հրեայ հնափաճառի մը խանութը, ուր կ'այցեցէի երբեմն՝ իմ նեղ օրերուս՝ գործածուած աժան վերարկու մը կամ տափառ մը գնելու համար: Այո՛, այդ մարդը ճիշդ նոյն հրեայ հրեափաճառի տպաւորութիւնը թողուց իմ վրայ: Իր ակնոցներուն ետեւ յարաշարժ ու խորամանկ աչքերու նայուածքը կեղծ ժպիտով շրջանակուած՝ խանութի յաճախորդները սիրաշահելով իրեն յանձնուած հնամաշ ապրանքները սպառելու փութկոտութիւն մը կ'արտայայտէր: Վա՛յ այն երկրին, որ ասանկ նախագահ մը պիտի ունենայ, ըսի ինքնիբեմս, երբ լսեցի իր անիմաստ պոռտուքներն ու ծիծաղաշարժ խօսքերը, որոնք միայն ծաղրածուի մը յատուկ էին: Եւ բոլոր մեղքերուս վրայ՝ դեմոկրատ էր այդ մարդը... Անոր յաջորդեց Տուայտ Այդընհաուր, ճաղատ գլուխով ու զարմացական նայուածքով մարդ մը, որ իր նայուածքով ըսել կ'ուզէր. — «Քաղաքացիներ, դուք զիս հանգիստ ի՞նչու չէք թողուր: Սխալ կ'ընէք,

երբ երկիրը կը յանձնէք զինուորականի մը, որ կրնայ բանակ մը ղեկավարել, բայց ոչ Ամերիկայի նման բարդ պայմաններով շրջ-
 թայուած երկիր մը»։ Եւ իրաւ ալ, այս մարդը մէկ հակասութենէն
 անցաւ միւսին եւ թողուց որ երկիրը անցնի զինուորականութեան
 ձեռքը եւ ճիշդ ատոր համար ալ՝ վերընտրուեցաւ՝ հակառակ իր
 կամքին եւ ենթարկուեցաւ բախտախնդիր թզուկի մը՝ Ռիչըրտ Նիք-
 սընի, որ վարեց փոխ-նախագահութեան պաշտօնը, մարդ մը, որ
 Ամերիկայի բանուորութեան կատաղի թշնամի ըլլալուն ի վարձատ-
 րութիւն՝ հասարակ փաստարանի գրասենեակէն ցատկեց ու մտաւ
 ծերակոյտին մէջ ու ապա բարձրացաւ փոխ-նախագահութեան պա-
 տասխանատու պաշտօնին։ Այցելեց Հարաւ. Ամերիկեան երկիրները,
 եւ խայտառակուելով վերադարձաւ։

1960-ին, նոր նախագահական ընտրութեան շրջանը եկաւ. Ե-
 ուղեւորատ, յուզումնալից շրջան մը, Հանրապետականներու թեկնա-
 ծուն էր Ռիչըրտ Նիքսըն, Դեմոկրատներու թեկնածուն էր Ճոն Գիչ-
 կըրալտ Քենէտի։ Քանիցս տեսած էի Նիքսընը, բայց ամէն անգամ
 շատ վատ տպւորուած էի անկէ. իր աղուէսի աչքերը, իր սուր ու
 ատելալաւ նայուածքը շատ դէշ ազդեր էին վրաս։ Ի՞նչ պիտի ըլլայ
 Ամերիկան եթէ այսպիսի արկածախնդիր մը, կեղծաւոր փարիսեցի
 մը նախագահ ըլլայ, կը հարցնէի ինքնիրենս։ Անկէ յետոյ՝ տեսայ
 Քենէտին, բարի ու պարզամիտ նայուածքով եւ սակայն, հմուտ ու
 ժողովրդասէր քաղաքագէտ մը, որու արտայայտած մտքերը առա-
 ջին առիթով իսկ՝ գրաւեցին իմ խոր համակրութիւնը։ Համարձա-
 կեցայ մօտենալ իրեն եւ սեղմել իր ձեռքը. — «Դուք ճշմարտապէս
 Ամերիկայի հասարակ ժողովուրդին առաջնորդն ըլլալու արժանիքն
 ունիք, ըսի իրեն, ձեր ուղերձը հիացում պատճառեց ինձի»։ Ժպտե-
 ցաւ անկեղծ ու ազնիւ մարդու ժպիտով. «Շնորհակալ եմ», ըսաւ ու
 մտերիմ մարդու պէս ուժգին սեղմեց ձեռքս։

Ձեռ գիտեր ի՞նչու, ինձ համար ամէն կասկածէ վեր էր, որ
 Քենէտին անպատճառ ընտրութեան մէջ պիտի յաջողէր յաղթելու
 իր անարժան հակառակորդին։ Ան պիտի ընտրուէր. ես մտադիր էի
 իմ այդ անխախտ հաւատքը եւս աւելցնել իմ խօսքերուս, բայց մտա-
 ծեցի որ այդպիսի մարդարէութեամբ մը գուցէ վիրաւորած կ'ըլլամ
 այդ մեծ հոգիի տէր մարդու համեստութիւնը։ Ձգուչաւորութիւնս
 տեղին էր։

Քանի որ մենք անձնական դէպքի մը նկարագրութիւնը կ'ընենք
 պէտք է ըսեմ թէ ես՝ որպէս ամերիկեան քաղաքացի, ո՛չ Հանրապե-
 տական եւ ո՛չ ալ Դեմոկրատ թեկնածուի քուէարկած էի, բայց այս
 անգամ որոշեցի Քենէտիի տալ իմ քուէն։ Դեռ աւելին։ Այնքան տար-
 ուած էի Քենէտիի ելոյթներէն ու ժողովրդական վարուեցողութենէն,

որ վճռեցի հասարակական որոշ աշխատանք տանիլ, գոնէ ինձի հո-
 գեկան բաւարարութիւն տալու համար։

Այդ տարին ես կը գտնուէի Վըլէյօ։ Տարիներ առաջ՝ պատե-
 րագմի շրջանին, գործեր էի պետական նաւաշինարանը։ Վըլէյօ քա-
 ղաքը օրաթերթ մը ունէր — դեմոկրատ թերթ մը — Vallejo's Times
 Herald։ Բաւական երկար ու ծայրայեղ խնամքով պատրաստուած
 յօդուած մը գրեցի Քենէտիի յաջողութեան ի նպաստ։ Ես հոն քննա-
 դատեր էի թրոււմնի վարչութիւնը, Այգընհաուքրի երկդիմի ու հա-
 կասական քաղաքականութիւնը եւ Նիքսընի վտանգաւոր ու անխտա-
 հելի անհատականութիւնը։ Յօդուածս չհրատարակուեցաւ։ Դիմեցի
 խմբագիրին։ «Ձեր գրութիւնը չէինք կրնար հրատարակել, ըսաւ ան,
 որովհետեւ լրագրական պատշաճութեան օրէնքին հակառակ՝ շատ
 սուր նկատողութիւններ կային հոն»։ Հասկցայ թէ մարդը ի՞նչ ըսել
 կ'ուզէր։ Չեռագիրս առի ու դուրս ելայ։ Նոյեմբերին ընտրական
 պայքարը վերջացաւ։ Քենէտին յաղթանակը տարած էր. ան ընտր-
 ուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ։ Ուրախու-
 թիւնս չափ չուէր։ Գուշակութիւնս կատարուած էր։ Մերժուած յօ-
 դուածս շնորհաւորական նամակիս մէջ ներփակած՝ գրկեցի ուղղակի
 վաշինկթըն՝ ձոն Քենէտիի։ Նամակիս մէջ որպէս վերջարան գրած
 էի հետեւեալ տողերը. — «Դուք՝ Պր. Քենէտի, պատմական այս ժա-
 մանակաշրջանին, երբ տարիք մեծ յաջողութիւն մը եւ նախագահ
 ընտրուեցաք, պարզ անոր համար էր, որ ժողովուրդը Ձեր մէջ տե-
 սաւ նուիրուած կորովի առաջնորդ մը, որ պիտի կրնայ աւելործեալ
 ուղիանոսին մէջ տատաւուող Ամերիկեան նաւը տանիլ խաղաղու-
 թեան նաւահանգիստը։ Ծորձ Վաշինկթըն, Ամերիկայի ժողովուրդը
 ազատեց անգլիական տիրապետութեան լուծէն, Արբահամ Լինքըն
 նեկրոնները ազատեց ստրկութեան շղթաներէն, իսկ դուք՝ Պր. Քենէ-
 տի, կը հաւատամ թէ աւելի մեծ, աւելի վսեմ կոչում մը ունիք, այն
 է՝ պիտի ազատէք տառապող մարդկութիւնը համաշխարհային պա-
 տերագմի մղձաւանջէն, որ տարիներէ ի վեր շղթայած է խաղաղասէր
 մարդոց հոգիները»։

Գրուած յօդուածիս հետ սոյն նամակը փոստին յանձնելէս յե-
 տոյ՝ պահ մը ծիծաղեցայ իմ առած քայլիս վրայ։ Քենէտին արդէն
 Նախագահ ընտրուած է. ան եւս, ինչպէս ժողովուրդէն ընտրուած
 ամէն ամերիկացի պետական պաշտօնեայ՝ նախքան ընտրութիւնը ա-
 մէն կարգի խոստումներ չաւրող ժողովրդական մարդ ըլլալու էր եւ
 էր. ընտրութենէն յետոյ՝ հիմնապէս կը փոխուի։ Թեկնածուի բեր-
 նով ամերիկեան շատ յատկանշական, իմաստալից ասացուածք մը
 կայ, որ կ'ըսէ. — «Ընտրութենէն առաջ ե՛ս ձեր ոտքը կը համբուրեմ,
 ընտրուելէս յետոյ՝ դ՛ուք է որ իմ ոտքը պիտի համբուրէք»։ Այժմ

Քենեդիին նոյն ընտրական պայքարը մղող Քենեդիին չէ՝ ան հանրապետութեան նախագահն է այլևս. այս օրերս ան թերեւս միլիոնաւոր նամակներ կը ստանայ. մի՞թէ կարելի է յուսալ որ ան առանձնապէս իմ նամակին ուշադրութիւն դարձնէ: Այսպէս կը մտածէի ես ու մտնալ ուղեցի ամէն ինչ: Բայց մեծ եղաւ իմ զարմանքը, երբ երկու շաբաթ յետոյ՝ իրմէ ստացայ հետեւեալ նամակը —

UNITED STATES SENATE

Washington, D. C.

December 5, 1960

Mr. Leon Mardirossian
238 Ohio St.
Vallejo -- California

Dear Mr. Mardirossian

I want to thank you for the very friendly message you send to me after my election to the presidency.

I am most heartened by the many expressions of good will which I have received. I am sure that they reflect a broad unity of purpose in our nation. I hope that my record during the next four years will sustain your generous confidence.

With very good wish, I am

Sincerely

John F. Kennedy

Թարգմանութիւնը —

ՄԻԱՅԵԱԼ ԵԱՀԱՆՔԵՆԵՐՈՒ ԾԵՐԱԿՈՅՏ

Վաշինկթըն. Գ. Ք.

Դեկտեմբեր 5, 1960

Պր. Լեւոն Մարտիրոսեան
238 Օհայո Փողոց
Վըլէյօ — Քալիֆորնիա

Թանկագին Պր. Մարտիրոսեան,

Կուզեմ շնորհակալ ըլլալ Ձեզի այն խիստ բարեկամական նամակին համար, զոր դուք զրկած էք ինձի նախագահութեան պաշտօնին իմ ընտրութենէս յետոյ:

Ես չափազանց ողբերուած եմ այն բազմաթիւ բարի կամեցողական արտայայտութիւններէն, զորս ես ստացեր եմ: Ես վստահ եմ թէ անոնք բոլորն ալ կ'արտացոլեն մեր ազգին մէջ լայն միասնակամութեան մը նպատակը: Ես կը յուսամ թէ յաջորդ շորս տարիներու

ընթացքին՝ իմ գործերու թողած արձանագրութիւնը պիտի վաւերացնէ Ձեր ազնուօգի վստահութիւնը:

Լաւագոյն ցանկութեամբ, կը մնամ
Անկեղծօրէն
ձՈ՛Ն Ֆ. ՔԵՆԵՏԻ

Այս նամակը ստանալուս՝ այդ մարդը աւելի պատկառելի մեծ մարդ մը եղաւ ինձի համար: Բայց իր նախագահութեան երկրորդ տարին, Քուպայի կնճռոտ հարցին մէջ երբ ան պատերազմի սպառնալիքով ցոյց տուաւ իմ պերիալիստական պետական մարդու ժանիքը, ես յուսախար եղայ: Քասթրոյի կառավարութիւնը երկրի պաշտպանութեան համար ՊորՏրոյալին կառավարութենէն օգնութիւն խնդրած էր եւ խորհրդային իշխանութիւնը Քուպայի մէջ հաստատելու էր նետակներու մի քանի կայաններ: Ասիկա զուտ պաշտպանողական ծրագիր մըն էր, որ յարձակողականի բնոյթ չունէր: Քենեդիի պահանջեց որ անմիջապէս այդ կայանները վերցուին, այլապէս պիտի յայտարարէր պատերազմ: ՊորՏրոյալին կառավարութիւնը խոհեմութեամբ տեղի տուաւ: Բայց Ամերիկան Ս. Միութեան քիթին տակ՝ Թուրքիոյ մէջ ռազմական կայանները անվթար պահելու էր ու կը պահէ: Քենեդիին, այդ աչք ծակող հակասութիւնը նկատի չառաւ, ենթարկուեցաւ Ֆինանս կապիտալի արքաներու քաղաքականութեան. բայց այդ արքաները զինքը իր աթոռին վրայ չի պահեցին: 1963 Նոյեմբեր 22-ին, Դէլաւս քաղաքին մէջ Քենեդիի գոհ գնաց արտասովոր խնամքով պատրաստուած դաւադրութեան մը:

ՔԵՆԵՏԻ ԼԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԿԱԵԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1963-ի Նոյեմբեր 22-ին, Թէքսաս նահանգի Դէլաւս քաղաքին էլիմ փողոցին մէջ, նախագահի թափօրը անցած պահուն, ցերեկ ատեն՝ ժամը 12-ը 31 վայրկեան անցած, հրացանի երեք պայթիւններ լսուեցան: Արձակուած զնդակներէն մին մտած էր Քենեդիի կողորդէն ու ելած էր ծոճրակէն դուրս: Անոր հետ վիրաւորուած էր նաև Թէքսասի կառավարիչը: Քենեդիին կը փոխադրուի Փարքլէնտ Մէմօրիըլ հիւանդանոցը, ուր բժիշկները անոր կեանքը չկրցան ազատել: Նոյն օրը որպէս տէնորիստ՝ ձերբակալուեցաւ Լի Հարվէյ Օսվալտ: Ահա կատարուած դէպքը, որ տեղի ունեցաւ կարծես մէկ ակընթարթի մէջ, այնքան յանկարծակի, այնքան արագ:

Այս դէպքին պաշտօնակախ նկարագրութիւնը հետեւեալն է. Լի Հարվէյ Օսվալտ դարանակալ կը սպասէ Դէլաւս քաղաքին էլիմ փողոցին վրայ գտնուող գիրքերու պահեստանոցի ճ-րդ յարկը, որու պատուհանէն իր ձեռքի հրացանը 3 անգամ կը կրակէ, կը սպաննէ Քե-

նէտին, կը վերաւորէ կառավարիչը, ապա կը փախչի, հանրակառքը կ'առնէ եւ 7 փողոց հեռու վար կ'իջնէ. յետոյ՝ քաճախի մը կը վարձէ ու քանի մը փողոց անդին՝ կը թողու քաճախին: Այդ պահուն՝ երբ շուարած վիճակով կը վազէ տեղ մը պահուելու համար: Թիփփիտ անունով ոստիկան մը վրայ կը հասնի եւ զայն ձերբակալել կ'ուզէ: Օսվալտ կը սպաննէ ոստիկանը եւ կը վերաւորէ ուրիշ մէկը՝ Վարըն Ռէյնոլտ: Բայց Օսվալտ կը ձերբակալուի, շուտով վրայ հասնող ոստիկաններէն: Օսվալտ 48 ժամ հարցաքննութեան կ'ենթարկուի, բայց մինչեւ վերջ կը պնդէ թէ ինք անմեղ է. այսինքն՝ ինք չէ եղեր նախագահը սպաննողը, նոյնպէս ինք չէ եղեր Թիփփիտ ոստիկանը սպաննողը: Օսվալտ, առաջին երկու օրուայ բանտէն գլխաւոր բանտը փոխադրուելու ատեն, Դէլաս քաղաքի դիշերային զուարճախաղի ակումբի մը սեփականատէրը՝ Ճէք Րուպի, ատրճանակը ձեռքին՝ կը խոյանայ ոստիկաններով չըջապատուած Օսվալտի վրայ եւ զայն կը սպաննէ: Աւելորդ է ըսել թէ Րուպին իսկոյն կը ձերբակալուի:

Ահա ամբողջ պատմութիւնը, որուն եթէ հաւատք ընծայենք, Օսվալտը մեր առջեւ կը կանգնի որպէս ոճրագործ, որ առանձինն կատարած է այդ տէրորը: Ուրեմն, խնդրոյն մէջ որեւէ խորհրդաւորութիւն չկայ: Բայց կարելի՞ է հաւատք ընծայել պատմութեան այն զգայացունց դէպքին, որու մասին մինչեւ այսօր հրապարակուած տեղեկագրութիւնները լեցուն են հակասութիւններով: Այժմ քննենք այդ հակասութիւնները եւ լուսարանները զանոնք պարզօրէն՝ տրամաբանական կարգով (*), համաձայն The Minority of One Ամսաթերթի անկողմնակալ ու կշռադատ հետազոտութեանց արդիւնք տեսութիւններուն:

Նախ վեր առնենք Վորընի Քննիչ Յանձնախումբը, որ Ամերիկայի ժողովուրդը չի ներկայացներ: Այդ յանձնախումբին մէջ են երկու դեմոկրատներ — Ճորճիայի ծերակուտական Ռըսըլ եւ գոնկրէսի անդամ Բոկկս — Լուիզիանայէն, երկուքն ալ ցեղապաշտ: Երկու հանրապետականներ — Քէնտաքիի ծերակուտական Քուլփըր եւ գոնկրէսի անդամ Ֆորտ — Միչիկընէն. վերջինը Պէրրի կոչու Վոալըրի խնկարկու եւ գաղտնի գործակալութեան անդամ, Ալէն Դուլէս, նախ-

(*) Այստեղ նշուած բոլոր տեղեկութիւնները քաղած եմ Ամերիկայի The Minority of One Ամսաթերթի 1964 տարուայ Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր քիւնբէմ, որոնց մէջ շարունակաբար դրուած է Վորըն Յանձնախումբի պաշտօնական տեղեկատուութիւններէն յատկանշական մասեր: Տեղի սղութեամ պատճառով՝ ես ստիպուած եղայ համառոտագրել զանոնք: Դիտողութիւններն ու հարցումները թերթին կողմէն են:

կին տիրէկտոր՝ Կեդրոնական Տեղեկատու Գործակալութեան, եւ Պարոն ՄկՔլոյ, որ հակառակ էր Քաղաքացիական Իրաւանց Օրինագիծին: Այս յանձնախումբը կը գլխաւորէր Գերագոյն Ատենսի գլխաւոր դատաւոր՝ Իրլ-Վորըն: Դատաւոր Վորըն յօժարութեամբ չէր որ ընդունեց այդ պաշտօնը: Յանձնախումբի մնացեալ անդամներէն ոչ ոք՝ համաձայն Մ. Նահանգներու օրէնքին, կրնար որպէս երգուեալ դատարանի անդամ ընտրուիլ, եթէ Օսվալտ ողջ մնար ու դատավարութեան կանչուէր:

Այստեղ մենք հարկ կը համարենք ընել մեր առաջին հարցումը. — Նախագահ Քեմէտի կառավարութեան կողմէ ընտրուած չէր, ընտրուած էր ժողովուրդէն. բայց ի՞նչու Վորըն Յանձնախումբի բոլոր անդամները Մ. Նահանգներու կառավարութեան կապուած անդամներն եղան:

Ասկէ գատ, օրինական ձեւակերպութեան համար գոնէ, պաշտպան փաստարան մը ըլլալու էր որ ներկայացնէր Օսվալտը եւ ենթարկուէր խաչածեւ հարցապնդումի: Այդպիսի բան չի թոյլատրուեցաւ: Վերջէն էր որ, ճնշման տակ, յանձնախումբը Փաստարաններու Ընկերակցութեան Նախագահ՝ Վոլտըր Կրէկը ընտրեց որպէս Օսվալտի ներկայացուցիչ: Բայց այս մարդն ալ միայն մէկ անգամ ներկայ եղաւ դատական նիստերուն ան ալ որպէս գիտող, անկէ յետոյ՝ այլեւս չուզեց հետաքրքրուիլ այդպիսի խորհրդաւոր հարցով:

Յանուն ազգային ապահովութեան, յանձնախումբը իր նիստերը շարունակեց փակ դռներու ետեւ՝ խիստ գաղտնի: Այդ պարագան կը թելադրէ մեզի ընել երկրորդ հարցումը — Քանի որ ըսուած, իսուած ու փաստուած է թէ՛ Օսվալտն է եղած միակ տէնորիստը, այլիս ի՞նչ կարկ կար մկատի ունենալ ազգային ապահովութիւնը: Արդարեւ նոյն հարցումը կարելի է կրկնել այստեղ, ինչ հարցում որ եղաւ Ֆրանսայի մէջ Դրէյֆուսի դատի ատեն. — Եթէ կառավարութիւնը բացարձակապէս վստահ է իր վարած դատի նշմարութեան, ի՞նչու իր ֆննութիւնները յառաջ կը տանի անթափանցիլ ու ամենախիստ գաղտնապահութեամբ:

Սկզբնական չըջանին, յանձնախումբը վեց հոգիներ երգուեալ խումբ մը (panel) ընտրեց, որուն գործը պիտի ըլլար քննութիւններ կատարել եւ լուսարանել հետեւեալ հարցերը. (1) — Օսվալտը 1963, Նոյեմբեր 22-ին, ի՞նչ ըրաւ. (2) — Ի՞նչ եղած է Օսվալտի անցեալ կեանքը. (3) — Օսվալտ Մ. Նահանգներու ծովային սպայակոյտին մէջ ի՞նչ ըրած է եւ ի՞նչ ըրած է Սովետ Միութեան մէջ. (4) — Ճէք Րուպի ի՞նչպէս սպաննեց Օսվալտը. (5) — Ի՞նչ եղած է Ճէք Րուպիի անցեալը. (6) — Նոյեմբեր 22-ին, ի՞նչ միջոցներ ձեռք առնուած էին պաշտպանելու նախագահը: Այս հարցերը կը թելադ-

րեն մեզ, որ ընենք հրրորդ հարցում մը.— Վորընի Յանձնախումբը ի՞նչու չորոշեց երզուեալախումբ մը, որ գրադէր այս կարեւոր հարցով՝ քէ ո՞վ սպաննեց Նախագահ Քենէտին:

Յանձնախումբին տրուած բոլոր փաստերը նշանակուած են որպէս «զերազոյն զազանիք», ներառեալ նոյնիսկ այն պահանջը, որ դատաքննութիւնը ըլլալու է հասարակական: Հակառակ այս ծայրայեղ զգուշաւորութեան, մաս մը ճեղքուածքներէն շարք մը փաստեր գուրս եկան ու յանձնուեցան մամուլին, փաստեր՝ որոնք միմիայն կը հաստատէին թէ Օսվալտն է եղած առանձնապէս միակ տէնորիստը: Այսպէս, օրինակի համար, զերազոյն դատաւոր Վորըն, մամուլի ներկայացուցիչներու քոնֆէրանսին մէջ, ըսած է եղեր, որ Օսվալտի կիներ՝ Մարինան, իրեն յայտնած է թէ՛ ինք կը հաւատար որ իր ամուսինը եղած է նախագահը սպաննողը: Դատաւոր Վորըն, նոյն քոնֆէրանսին մէջ նոյնպէս յայտարարեց թէ ինք՝ ամբողջ երկու օր հարցաքննած է Օսվալտի եղբայրը՝ Բապըրտ Օսվալտը եւ ան վկայեւ է թէ՛ իր եղբայրը եղած է Սովետ Միութեան գործակալ եւ հաւանականաբար Սովետ Միութեան հրահանգով կատարած է այդ ոճիրը: Ասոր վրայ Բապըրտ Օսվալտ, արդար զայրոյթով բռնկած՝ թերթերու թղթակիցներուն բացէն ի բաց յայտարարեց որ ինք՝ ո՛չ դատաւոր Վորընի, ո՛չ ալ յանձնախումբի որեւէ մէկ անդամի՝ նման յայտարարութիւն ըրած է. իրեն վերադրուած խօսքերը բոլորովին յերիւրածոյ խօսքեր են: Ընդդէմ է, ինք կանչուած է յանձնախումբին առջև, բայց ըսած է որ իր եղբայրը անմեղ է եւ անհնարին է հաւատալ որ ան նման ոճիրի մը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցած ըլլայ:

Մեր առջև պարզուած բոլոր երեւոյթները ցոյց կուտան որ յանձնախումբի որդեգրած հետազոտական մեթոտները իրապէս ողբալի են, ատոր համար անոր ամբողջ գերը իրական ոճրագործները ծածկել է միակ անհատ մը՝ Օսվալտը, որպէս ոճրագործ, հրապարակելն է՝ Ամերիկայի ժողովուրդին եւ ամբողջ աշխարհի մարդկութեան առջև: Ամենէն ցցուն ու յատկանշական կէտն այն է, որ յանձնախումբը իր հետազոտութեանց աղբիւրները ընտրած է միմիայն կառավարական գործակալութիւնները.— Դաշնակցային Հետախուզութեան Բիւրոն (FBI-ը), զազանի գործակալութիւնը եւ Դէլաս քաղաքի ոստիկանութիւնը: Յանձնախումբը իր ամբողջ հաւատքն ու վստահութիւնը կեդրոնացուցեր է այդ երեք հիմնարկութեանց վրայ: Ի՞նչու շատ մը ազատականներ հրաժարած են իրենց սեփական պատասխանատուութենէն եւ ամէն ինչ յանձնած են յանձնախումբի մը, որու գործերը ֆինարկի ենթարկելէ կը զգուշանան:

Ուրիշ հակասութիւններ.—

Դէլաս քաղաքին մէջ, Նոյեմբեր 22-ին, Մ. Նահանգներու նախագահի այցելութեան առիթով շատ անսովոր նախազգուշական միջոցներ ձեռք առնուած էին կատարեալ ապահովութեան համար: Այդ քաղաքը հռչակաւոր եղած է վայրի յարձակումներու տեսակէտէն եւ եղած է հայրենիքը՝ Ամերիկայի աջ թեւի ծայրայեղ Փանատիկներուն: Լինտըն Ճոնսըն, փոխ-նախագահական թեկնածուի հանգամանքով երբ 1960-ին իր տիկնոջ հետ հոն այցելեց, ենթարկուեցաւ յարձակումի: Ատլէ Ստիվընսըն Քենէտիի Դէլաս մտնելէն ամիս մը առաջ՝ Հոկտեմբերին, երբ այդ քաղաքն այցելեց, բանախօսած պահուն՝ ենթարկուեցաւ Փիլիքիական յարձակման եւ հազիւ իր օճիքն ազատեց ոստիկաններու օգնութեան շնորհիւ: Նոյեմբեր 22-ի առաւօտեան՝ Դէլասի Մօրնինկ Նիուզը ամբողջ էջ մը նուիրած էր արտասովոր ծանուցումի մը՝ որ նախագահ Քենէտին կը ներկայացնէր որպէս կոմունիզմի համակիր ու աշխատակից: Քաղաքին փողոցներու պատերը ծածկուած էին նախագահին նկարը կրող աղղազերբով: Նկարին ներքեւ դրուած էին հետեւեալ բառերը. Wanted for Treason (կը փնտռուի դաւաճանութեան յանցանքով): Դէլասի դաւադիրներու ցանկը կը բաղկանար 23 անուններէ, որոնց մէջ առաջինը Օսվալտի անունն էր: Այդ օրը նշանակուած դաւադիրները բոլորն ալ հետապնդումի ենթարկուեցան, բացառելով Օսվալտը: Քաղաքային իշխանութիւնները ի՞նչու բոլոր ենթադրական ոճրագործները հետապնդեցին եւ միայն Օսվալտը ազատ քողոցին, որ երեք ութ երկար հրացանը առած մտաւ էլմ փողոցի գրապահեստանոցը, բարձրացաւ 6-րդ յարկը, եւ անկէ կրակոցով սպաննեց նախագահը ու վիրաւորեց կառավարիչը:

Բայց այստեղ ուրիշ աչք ծակող հակասութիւն մըն ալ կայ:

Դէլասի Մօրնինկ Նիուզ թերթը արդէն խոշոր տառերով ծանուցեր էր թէ նախագահի թափօրը ո՛ր փողոցներէն պիտի անցնէր Նոյեմբեր 22-ին: Վերջին վայրկեանին, սակայն, քաղաքին զազանի գործակալութիւնը յանկարծ ծրարիւր փոխեց, այնպէս որ նախագահի օթոն իր հետեւորդներով թողուց Մէյն փողոցը եւ մտաւ Հուստըն եւ էլմ փողոցներուն մէջ: Այս փոփոխութեան հետեւանքով նախագահի օթոն անցաւ էլմ փողոցի գրապահեստանոցի շէնքին առջևէն, ուրկէ ենթադրեալ հրացանարձակումներէն սպաննուեցաւ Քենէտին: Այժմ հարց է. ենթադրեմք քէ Օսվալտը նախապէս մտած էր գրապահեստանոցը՝ նախագահը սպաննելու սեւեռեալ նպատակով. ան ի՞նչպէս կրնար գիտնալ որ քերթի ծանուցման հակառակ՝ նախագահի համար որոշուած նամբան պիտի փոխուէր: Եւ յետոյ՝ կուգայ

ուրիշ հարցում մը.— Վերջին վայրկեանին ինչո՞ւ պիտի փոխուէր քափօրի նամբան եւ նախագահի օթոն պիտի անցնէր Օսվալտի պահուրտած շէնքին առջեւէն :

Ոճիրէն վերջ Օսվալտը ձերբակալուեցաւ եւ անմիջապէս արձակուեցաւ վճիռը . այսինքն՝ Օսվալտն էր աէոորիստը եւ ան գործեր էր միտ մինակ , առանց գործակիցի : Ուրիշ կասկածելիներ ձերբակալելու ո՛չ մէկ փորձ . ո՛չ մէկ հետախուզութիւն : Միլիոնաւոր մարդիկ առանց որեւէ տարակուսանքի՝ հաւատացին թէ Օսվալտն էր սճրագործը եւ այդ՝ առանց դատավարութեան , որովհետեւ Դէլլասի ընդհանուր դատախազը՝ Պարոն Վէյտը այդպէս էր յայտարարած : Բայց իրողութիւնները տարբեր եզրակացութեան կը տանէին հետազօտող մարդոց միտքը : Դէլլասի իշխանութիւնները իրենց հաւատարացումը հաստատելու համար երեք թէորիններ հրապարակած էին եւ յետոյ՝ պարզուեցաւ որ այդ երեք տեսութիւններն ալ անհիմն էին : Առաջին թէորին այն էր որ նախագահին օթոն Հուստըն փողոցը մտնելէն վերջ երբ կը մօտենար էլմ փողոցի գիրքերու պահեստանոցին , այդ առեւն էր որ Օսվալտը կրակեց : Բայց հանուած լուսանկարներն ու ականատեսները բոն որ ատիկա սխալ էր . նախագահի օթոն գիրքերու պահեստանոցի շէնքին առջեւէն անցնելէն վերջն էր որ հրացանի ձայներ լսուեցան : Պարոն Վէյտը երբ տեսաւ որ այդ տեսութիւնը ջուրը ինկաւ , ելաւ յայտարարել , որ Օսվալտի բնակարանը խուզարկուելով հոն գտնուած էր յատակագիծ մը , ուր գիրքերու պահեստանոցի շէնքը կարմիր մեկանով չըջանակուած էր եւ Հուստըն եւ էլմ փողոցներուն հետ դժուած վիճակով պատրաստուած ծրարագիրը կը պարզէր : Առաջին թէորին անհիմն ըլլալը փաստուելէ վերջ Նոյեմբեր 27-ին թերթերը խոշոր տառերով ծանուցին հետեւեալը.— «Դէլլասի իշխանութիւնները այսօր յայտարարեցին որ Օսվալտի բնակարանին մէջ գտնուած յատակագիծ մը գտնուած չէ» :

Երկրորդ թէորին նախագահին օթոն դրաւ էլմ փողոցին վրայ , 50 կամ 75 եարտա գիրքերու պահեստանոցի շէնքին առջեւէն հեռացած դիրքով : Բայց նախագահը կոկորդէն զարնուած էր : Օսվալտ ի՞նչպէս կրնար հեռացած օթոյին ետեւէն կրակել եւ այնպէս ընել որ զնդակը իր ճամբան շեղէ ու կիսարուրակ կազմելով մտնէ անոր կոկորդը : Life պարբերաթերթը Դեկտեմբեր 6-ի թուով եկաւ բացատրել որ նախագահը իր օթոյին մէջ իր ետեւ նստողներուն հետ խօսելու համար գլուխը դարձուցեր էր ետեւ եւ ճիշդ նոյն պահուն ընդունած էր զնդակի հարուածը : Բայց այս տեսութիւնն ալ հերքուեցաւ , որովհետեւ թէ՛ անուած լուսանկարները եւ թէ՛ ակնատեսները ատոր հակառակը կը հաստատէին : Այսպէս երկրորդ տեսութիւնն ալ չքացաւ :

Բայց ամբողջ պաշտօնական մտածողութիւնը կեղբոնացեր էր միակ նպատակի մը շուրջ , այն էր՝ փաստել որ Օսվալտն էր միայնակ սճրագործը : Ահա երեւան եկաւ երրորդ թէորի մը . ի՞նչ էր այդ թէորին : Համառօտակի պարզեմք եղածը :

Փարքլէնա Մէմօրիըլ հիւանդանոցին մէջ այն բժիշկները , որոնք աշխատեցան փրկել Քենէտի կեանքը , անոր մահէն յետոյ՝ մանրակրկիտ դիագնոսթիւն մը կատարելով պատրաստեցին իրենց բժշկական տեղեկագիրը : Բայց Գաղտնի Գործակալութեան պետը այդ տեղեկագիրը հրապարակ չհանեց , այլ միայն յայտարարեց որ «Բժշկական տեղեկագրի համաձայն նախագահը սպաննուած էր ծոճրակէն» : Օսվալտ գիրքերու պահեստանոցի շէնքին 6-րդ յարկէն երբ կրակեր էր եւ զնդակը մտած էր ծոճրակէն , այդ զնդակը շեղակի իջնելու էր անոր թոքերուն մէջ եւ այդ զնդակը պէտք էր զըտնուէր . մինչդեռ արձակուած զնդակը նախագահի կոկորդը ծակեր՝ ու ծոճրակէն ելեր դուրս ու անյայտացեր էր : Ուրեմն , պարզ էր որ հրացանը արձակուած էր ուղղակի ճակատէն . այսինքն՝ նախագահի օթոյի զնացքին ճիշդ հանդիպակաց կողմէն : Այստեղ բնականօրէն կը թելագրուի ուրիշ հարցում մը.— Բժիշկներու պատրաստած տեղեկագիրը ի՞նչու մամուլով չհրապարակուեցաւ եւ միայն բերանացի յայտարարութեամբ վերջացաւ ամէն ինչ : Եւ մամուլի ներկայացուցիչները երբ հարցուցեր են Տոքտոր Միլթըլէնտին՝ թէ արդեօք եղած յայտարարութիւնը կը համապատասխանէ՞ պատրաստուած բժշկական տեղեկագրին , ան միայն կտրուկ երկու բառով պատասխանած է.— No comment (բացատրութիւն չունիմ) : Ի՞նչ կարելի է կրակացնել այդ պատասխանէն : Բժշկական տեղեկագիրը ինչո՞ւ գաղտնի պահուեցաւ . ի՞նչու դիագնոսթիւն կատարող բժիշկներու բերաններուն կղպանք դրուեցաւ , որպէսզի անոնցմէ մէկը չհամարձակի հրապարակուած յայտարարութիւնը որեւէ կերպով հակասել : Այս հարցումներուն պատասխան չկայ . ուրեմն , այս երրորդ թէորին ալ կը չքանայ :

Թէեւ կանխաւ պատրաստուած փաստերը կը միտին ապացուցանել թէ նախագահը ետեւէն զարնուած է , բայց կան շարք մը ակնատես վկաներ , որոնք վստահ են թէ կրակոցի ուղղութիւնը եկած է ճակատէն : Այդ վկաններն են Փորտ Վորա՝ քաղաքի Star Telegram-ի երկու թղթակիցները , Դէլլասի Morning News-ի չորս թղթակիցները , եւ երկու ուրիշներ , որոնցմէ մին էր գիրքերու պահեստանոցի ընկերութեան փոխ-նախագահ Ռոյ Քրուլի եւ Դէլլասի ոստիկաններէն՝ Սէյմուր Վիցմըն : Այս վերջին երկու անձերը երբ հրացանարձակման ուղղութեամբ սկսան վազել , «մէկ մը» անոնց ըսաւ թէ զնդակները արձակուած էին շէնքի վերի յարկէն : Ասոր վրայ ,

անոնք վերադարձան եւ մտան շէնքը, անոնց հետեւեցաւ սատիկա- նութեան մեծաւորը՝ ձէսի Քուրին: Բայց ներս մտնողները բարձ- րանալով վերի յարկերը, ոչ ոքի հանդիպեցան: Նոյն ժամուն Դէ- լասի սատիկանական սատիոն կը յայտարարէր որ նախագահը սպան- նուած էր հանդիպակած կողմի կամուրջէն արձակուող հրացանի զնդակներէն: Ոստիկան Վիցմընի վկայագիրը յետոյ՝ կը հաստատէ թէ ան ոճրագործի հրացանը գտած էր 6-րդ յարկին վրայ. իսկ կան- խօրօք յայտարարութեան համաձայն՝ հրացանը գտնուած էր 5-րդ յարկին վրայ. այս յայտարարութիւնը իսկոյն փոխուեցաւ: Իսկ գտնուած հրացանը... Առաջին անգամ յայտարարուեցաւ որ այդ հրացանը Իտալիոյ մէջ գտնուած Մանլիիէր հրացան էր, յաջորդ օրը F.B.I.-ի կողմէ յայտարարուեցաւ որ ան գերմանական մատուցեր էր: Դէլասի ընդհանուր դատախազը Պարոն Վէյտ, անմիջապէս ուղղեց խաչաձեւող հակասութիւնը եւ յայտարարեց որ F.B.I.-ի ծանուցածն էր ճիշդը, այսինքն՝ գտնուած հրացանը գերմանական մատուցեր էր: Իսկ ամերիկեան թերթերու հակասութիւնները... Life ամսաթեր- թը գրած էր հրացանի նկարը Դեկտեմբեր 14-ի թիւով. Փետրուար 21-ի թիւով՝ նորէն գրած էր հրացանի մը նկարը, որ չէր նմանէր առաջինին: New York Times-ը Օսվալտի հրացանի նկարը գրած էր առանց թէլէսկոպիկի: New's Week շաբաթաթերթը նոր հրացանի մը նկարը գրած էր Մարտ 2-ին, որ բոլորովին տարբեր էր միւսնե- րէն: Ինչո՞վ բացատրել այս տարբերութիւնները:

Դեռ աւելին կայ: Նոյեմբեր 23-ին Դէլասի սատիկանութիւնը հարցաքննեց Օսվալտի կինը՝ Մարինան, անոր ցոյց տուաւ բռնուած հրացանը, հասկնալու թէ ան այդ հրացանը տեսած էր իրենց տան մէջ: Մարինա պատասխանած էր «Ո՛չ». իսկ մէկ շաբաթ յետոյ՝ ամ- բողային վրէժխնդրութենէ պաշտպանուած կինը վկայած էր որ ինք տեսած էր Օսվալտի ձեռքը այդ հրացանը եւ ինք կը հաւատար թէ ան էր իրապէս ոճրագործը: Այս վկայութեան փոփոխութիւնն ալ անբացատրելի է...:

Նոյեմբեր 22-ին, ոճիրը գործուած տեղին վրայ ճիշդ առենին, շատ մը լուսանկարներ առնուած են, որոնք կրնային լուսարանել կարգ մը մթին կէտեր: Երիտասարդ կին մը որ նախագահի օթոյնի ձախ կողմը կեցած էր եւ շատ մօտիկ, հրացանի պայթումի ձայներ լսուելէն առաջ եւ սպաննութիւնը կատարուելէն յետոյ՝ իրարու ետեւ լուսանկարած էր ամէն ինչ: F.B.I.ի երկու գործակալներ, անմիջապէս գրաւեցին կնոջ լուսանկարչական գործիքը եւ զայն հեռացուցին այդ տեղէն: Անկէ յետոյ՝ ոչ այդ լուսանկարները հրապարակուեցան, ոչ ալ այդ կնոջ ինքնութիւնը ճշգրտու փորձ եղաւ... Ինչո՞ւ...:

Աւելի այլանդակ ուրիշ հակասութիւն մը:

Նոյեմբեր 22-ի օրը, ինչպէս նշեցինք, Օսվալտի վերադրուե- ցաւ ուրիշ ոճիր մը. նախագահը սպաննելէն յետոյ՝ Օսվալտ, 7 փո- ղոց հետո կը հանդիպի պահակաշրջիկ սատիկանի մը՝ Թիփփիտին. զայն եւս կը սպաննէ, բայց վերջուպէս կը ձերբակալուի: Ոստիկանին սպաննութիւնը տեղի կ'ունենայ ժամը 1-ը վեց վայրկեան անցած. բայց ամենէն անյուժելի առեղծուածն այն է որ Թիփփիտի սպաննու- թեան շուրջ Դէլասի սատիկանութեան ոստիոն, Նոյեմբեր 22-ին ժա- մը 12-ը 43 վայրկեան անցած յայտարարեց որ Օսվալտը զինքը ձեր- բակալել ուղղ սատիկանը սպաններ է, մինչդեռ սատիկանը սպան- նուեցաւ ժամը 1-ը 6 վայրկեան անցած: Այս անբացատրելի հանե- լուկը հիւսողն եղած է Դէլասի ընդհանուր դատախազը՝ Պարոն Վէյ- տը... Ինչո՞ւ, ընթերցողը թող պատասխանէ այս հարցումին՝ եթէ կրնայ:

Դէպքին մանրամասնութիւնը հետեւեայն է:

Օրիորդ Հէլէն Մարքսամ, ահանաւես մը այդ դէպքին, այս- պէս կը նկարագրէ այդ ոճիրը. — «Նոյեմբեր 22-ին, ժամը 1-ը 6 վայրկեան անցած մարդ մը բուն վէճի մը բռնուած էր պահակա- շրջիկ սատիկան Թիփփիտի հետ: Այս վերջինը մարդը բռնելով տա- նիլ ուղեց իր մօտ կեցած սատիկանական վագոնը: Մարդը ատրճանա- կը հանեց ու տեղն ու տեղը սպաննեց Թիփփիտը, նոյն առեն երեւ- ցաւ ուրիշ մը, մարդը զայն եւս վիրաւորեց, եւ սարսափով փախայ եւ մտայ տուն մը»: Օրիորդը մարդուն կենդանագիրը տուած էր սա- պէս. — «Երիտասարդ սպիտակամորթ մարդ մը, կարճահասակ եւ դիրուկ, խոլու մազերով»: Օրիորդի տուած նկարագրութիւնը Օս- վալտի Փիդիթական կերպարին չէր համապատասխաներ. Օսվալտը նիհար էր ու երկարահասակ եւ մազերը գեղեցիկ ու կանոնաւոր: Բայց ընդհանուր դատախազը յայտարարեց. — «Մենք նախագահի սպաննութիւնը Օսվալտի վերադրելէն աւելի զօրաւոր փաստեր ու- նինք հաստատելու որ անիկա էր Թիփփիտը սպաննողը»: Իր վկայա- գիրը ստորագրելէն յետոյ՝ F.B.I.ի գործակալները խստիւ հրահանգե- ցին որ օրիորդը իր տեսածներու շուրջ ուրիշ ուէ մէկուն որեւէ բան չխօսի: Ինչո՞ւ այդ հրահանգը: Ինչո՞ւ սատիկանութիւնը բոլորովին աչքաթոյզ ըրաւ ահանաւես օրիորդի այդ վկայութիւնը:

New York Journal American-ի թղթակիցը՝ Պապ Քանսե- տայն, անդրադառնալով այդ դէպքին շուրջ, տեղեկագրեր էր որ «Թիփփիտի սպաննողը վիրաւորեց էր նաեւ Վարըն Ռէյնոլտ անու- նով մարդ մը, որ հիւանդանոց փոխադրուելէն ու բուժուելէն յե- տոյ, աներեւութացեր էր. անիկա միակ մարդն էր որ կրնար ոճրա- գործին, ինքնութիւնը ստուգել: Ոճրագործը ձերբակալուեցաւ, բայց երկու օր յետոյ՝ ազատ արձակուեցաւ, որովհետեւ հարկ եղած ա-

պացոյցներ կը պակսէին իր ոճերը հաստատող» : Պարոն Վէյտի համոզումով իրական ոճը պարծն էր Օսվալտը : Բայց այս մարդը ի՞նչպէս կը հիմնաւորէր իր համոզումը : Այժմ լսենք իր պատմութիւնը : Օսվալտ նախագահը սպաննելէն վերջ կը նետուի հանրակառքի մը մէջ, 7 փողոց անցնելէն յետոյ՝ վար կ'իջնէ եւ քաֆսի մը կը վարձէ . քաֆսիի մեքենավարը՝ Դարիլ Քլիք՝ ստորագրեր է վկայագիր մը : Բայց ֆողաքային Փոխադրութեան Ընկերութիւնը յայտարարեց որ այդ անունով քաֆսիի մեքենավար Դէլասի մէջ գոյութիւն ունեցած չէ : Պարոն Վէյտը, ասոր վրայ անմիջապէս փոխեց մեքենավարին անունը Վիլիյամ Վէլիի : Այս մարդուն ճամբորդներու արձանագրութեան գիրքը երբ քննութեան առնուեցաւ, տեսնուեցաւ որ Օսվալտի կերպարին նկարագրութեան մօտիկ մարդ մը քաֆսիին մտած էր ժամը 12:30-ին : Նախագահը սպաննուած էր ժամը 12-ը 31 վայրկեան անցած : Օսվալտ, անհնարին էր որ մէկ վայրկեանէն գրքերու պահեստանոցի 6-րդ յարկէն վար իջնէր եւ առանց մէկէ մը տեսնուելու հանրակառքն առնէր 7 փողոց հեռանար, յետոյ քաֆսի վարձէր, անկէ ալ վար իջնէր ու ոստիկանը սպաննէր : Ընդհանուր դատախազը ինչպէ՞ս կրցեր էր այս ու անոր հետ բոլոր հակասութիւնները վարադուրել եւ Օսվալտը յայտարարել որպէս աներկրայելի ոճրագործ :

Վերջին խորհրդաւորութիւն մը :

Օսվալտը, 48 ժամ հարցաքննուելէ վերջ՝ ոստիկաններով ու դազանի ոստիկաններու ամենախիստ պահպանութեան տակ պիտի փոխադրուէր նահանգային բանտը : Ըէք Ռուպի անունով մարդ մը ատրճանակը ձեռքին, կը խոյանայ, կը ճեղքէ ոստիկաններու շղթան ու կը սպաննէ Օսվալտը, բայց որեւէ ոստիկան արդէլք չըլլար անոր . որեւէ մէկը կրնար բռնել անոր բազուկը եւ զինաթափ ընել զայն : Բայց ո՛չ մէկ փորձ : Այս հանգամանքները կուզան ենթադրել տալ որ կանխամտածուած ծրագրի մը հետեւանքն էր եղածը :

Օսվալտը պէտք էր հռչակուէր որպէս Նախագահ Քենէտի տեւորիստը եւ յետոյ՝ Օսվալտը պէտք էր սպաննուէր նախապատրաստուած դաւադրութեան ճիւղերը անհետացնելու համար :

Ո՞վ էր ձէք Ռուպի կոչուած անձը . թունդ ու ֆանադիկ հայրենասէ՞ր մը, որ ուղից պատժական օրէնքը իր ձեռքն առնել, թէ՛ դաւադիրներու մէկ մեղսակիցը, որ նախապատրաստուած մեքենայութիւնը անթափանցելի վարադոյրով ծածկելու համար իրեն յանձնուած պաշտօնը կատարեց հաւատարմօրէն :

Այստեղ կը վերջանայ The Minority of One ամսաթերթի քննական դատումներն ու հարցումները : Այժմ մենք պիտի ներկայացրնենք մեր եմփադրական տրամախօսական խորհրդածոյցը :

Նոյեմբեր 15 : Ատեմապետը .—

Աւելորդ է ըսել որ մեր այս քննֆերանքը իր որոշումներով պիտի մնայ բացարձակապէս գաղտնի : Մենք երդուած ենք այդպէս եւ մեր կեանքի գինով պիտի պահենք մեր երդումը : Ամերիկան ուսերուն մատնողը պէտք չէ որ ապրի :

Պարոն Վէյտըն .— Ժամանակ փատնելու չէ . անցնինք մեր որոշման գործադրութեան միջոցներուն : Նախագահ Քենէտի Նոյեմբեր 22-ին քաղաքս կը ժամանէ : Անոր շքախումբի ճամբան նախազօժուած է արդէն, գիտէք . գիտէք նաեւ որ գաղտնի գործակալութիւնը յօժարած է անոր համար նախազօժուած ուղին փոխել եւ թափօրը առաջնորդել Հուսթըն փողոցէն էլ՝ փողոցը : Թափօրը գիրքերու պահեստանոցի չէնքին առջեւէն դարձած ատեն հանդիպակաց կամուրջի տակէն մեր ընկեր նշանաու տեւորիստը իր հրացանը ուղղելու է Նախագահի գանկին եւ կրակելու է . . . երեք անխալ հարուած միայն :

Ատեմապետ .— Բայց ո՞վ պիտի ձերբակալուի որպէս տեւորիստ :

Պարոն Վէյտ .— Լի Հարվէյ Օսվալտը :

Օսվալտ .— Բայց ինչո՞ւ ուրիշ մէկը չէք որոշեր :

Պարոն Վէյտ .— Դուք ամենայարմար մարդն էք . նիհար, արագաշարժ ու ճարտարախօս : Ասկէ գտա՛ դուք ուսու կին ունիք, սովետներու երկիրը մնացեր էք : Չեզոքով կարելի է տարածայնել թէ՛ դուք սովետ իշխանութեան գործակալ էք :

Օսվալտ .— Ուրեմն ես պիտի ամբաստանուիմ թէ՛ որպէս ուսական գործակալ եւ թէ՛ որպէս տեւորիստ . բայց ո՞վ պիտի պաշտպանէ զիս :

Պր. Վէյտ .— Չեզ պաշտպանողը պիտի ըլլայ ձեր ճարտասանութիւնը, ձեր լեզուն եւ յետոյ՝ հակասութիւններու ցանցը : Ո՛չ մէկ փաստ պիտի ճարուի, որ հաստատէ թէ՛ դուք լրտես եղած էք կամ տեւորիստ : Ամբաստանողը ես եմ եւ ես գիտեմ թէ՛ ի՞նչպէս կ'ամբաստանեմ : Ես կ'ամբաստանեմ ձեզ այն ձեւով, որ բռնուիմ հակասութեան մէջ . ատով դուք աւելի կը բարձրանաք, համաշխարհային հռչակ փաստիւղ մարդ կը դառնաք : Եւ արդէն, դատական իշխանութիւնները, նոյնիսկ Ամերիկայի Գերագոյն Ատեանը, ասոնք պիտի պաշտպանեն ձեզ : Դուք միայն մէկ բան պիտի կրկնէք, որ անմեղ էք : Ամբաստանեալի մը արարքը երբ անհերքելի փաստերով ու վկաներով չապացուցուիր, ան անմեղ է . իսկ ձեզի վերագրուած լրտեսական կամ տեւորիստական արարքին համար ոչ անհերքելի փաստեր կան, ոչ ալ ականատեսի վկայութիւններ : Նախագահի շքերթը Մէյն փողո-

ցէն պիտի շեղի ու մտնէ Հուսթըն փողոցը ժամը 12-20-ին, անկէ ալ՝ էլ՝ փողոցը: Գիրքերու պահեստանոցի շէնքին մօտ ընկեր Միշըլ պիտի կենայ ու կամուրջէն հրացանաձողութիւնը սկսելուն պէս երբ իրարանցումն ու շփոթութիւնը սկսին, բոլորին ուշադրութիւնը պիտի կեդրոնացնէ գիրքերու պահեստանոցի շէնքին վրայ՝ իրրեւ թէ հրացանը արձակուած է նոյն շէնքի վերեւի յարկէն: Նոյն այդ ժամուն, 7 փողոց հեռու՝ Սփրինկ փողոցի անկիւնը, պահակաշրջիկ ոստիկան մը՝ Թիփփիթը պիտի մնայ կանգնած իր վակոնին քով: Անոր հետ մեր Սուինին պատրուակով մը վէճի պիտի բռնուի եւ զայն պիտի ըսպաննէ: Թիփփիթը արդէն կասկածելի մարդ է, ան պէտք է հրապարակէն վերցուի:

Սուինի (ժպտելով) .— Իսկ եթէ ոստիկանը զիս սպաննէ՞:

Պր. Վէյտ .— Դուք շատ ոճիրներ գործեր էք. ճարպիկ էք. դուք ոստիկանին ատրճանակով զինքը պիտի սպաննէք:

Սուինի .— Եթէ ձերբակալուեմ . . . :

Պր. Վէյտ .— Ձերբակալուելու ատեն դիմադրութիւն մի փորձէք: Դուք իմ առջև պիտի բերուիք եւ ես զիտեմ իմ ընելիքը: Ձեզ ազատ արձակել պիտի տամ, որովհետեւ այդ ոճիրն ալ պիտի վերագրուի Օսվալտին:

Օսվալտ .— Ուրեմն, երկու ոճիրներու հեղինակն ալ ե՞ս ըլլալու եմ . . . : Այդ սոսկալի բան է:

Պր. Վէյտ .— Ընդհակառակը՝ դուք ատով պիտի արդարանաք: Նախագահը պիտի սպաննուի ժամը 12-30-ին, իսկ Թիփփիթը պիտի սպաննուի նոյն ժամուն՝ նոյն վայրկեանին: Մէկը, երբ իրարմէ հեռու երկու տարբեր տեղերու մէջ նոյն ժամուն եւ նոյն վայրկեանին գործուած երկու ոճիրներու որպէս հեղինակ կ'ամբաստանուի, երկուքին մէջէն դուրս կուզայ որպէս անմեղ: Ասիկա օրէնքով տրամաբանական է եւ անառարկելի:

Սուինի .— Այս բոլոր կարգադրութիւնները կարելի է ընել մեր քաղաքին՝ Տարասի մէջ: Բայց երբ Դաշնակցային Կառավարութիւնը գործին գլուխ անցնի, այն ատեն ի՞նչ ընելու է:

Պր. Վէյտ .— Այդ մասին բնաւ կասկած մի ունենաք. բարձրագոյն իշխանութեանց օժանդակութիւնը սպահովուած է, որովհետեւ գործը կը կատարուի անոնց հրահանգով:

Օսվալտ .— Իսկ ի՞նչ պիտի ըլլայ իմ վարձատրութիւնը:

Պր. Վէյտ .— Դուք ամենէն շատ վարձատրուող անձը պիտի ըլլաք: Նախ՝ ձեր ընտանիքի պահպանութեան պիտի հսկենք. յետոյ՝ ձեզի պիտի տանք քսան հազար տոլար: Ամենաառաջնակարգ փաստաբաններ պիտի տրամադրուին ձեր դատի պաշտպանութեան համար: Դուք մէկ տարիէն աւելի բանտը պիտի չմնաք: Ասկէ զատ աշխարհի

ամենէն հռչակաւոր անհատականութիւնը պիտի ըլլաք, նոյնիսկ Հովիվուտի դերասաններուն մէջ դերք պիտի դրուէք եւ շարաթական պիտի գրպանէք 5-10,000 տոլար:

Օսվալտ .— Շատ փայլուն կը պատկերացնէք իմ սպազաս:

Պր. Վէյտ .— Եւ այդ՝ երեւակայական չէ, այլ իրական. այնքան իրական՝ որքան որ ես այժմ կը խօսիմ ձեզի հետ: Միայն թէ դուք պիտի շարժիք ու պիտի խօսիք քննութեանց ատեն՝ համաձայն մեր թելադրանքին:

Ատենապետ .— Այժմ պիտի յայտնե՞նք նշանաու հրացանաձիղին անունը:

Պր. Վէյտ .— Ո՛չ, ծայրայեղ սպահովութեան համար ատիկա միայն ինձի ծանօթ պիտի մնայ. ո՛չ ոք պիտի գիտնայ անոր անունը:

Ատենապետ .— Համաձայն էք:

Ամէնքը միասին .— Համաձայն ենք:

Բ. ՆԻՍ — Նոյեմբեր 23

Ատենապետ .— Ամէն ինչ ժամացոյցի ճշգրտահասութեամբ կարգադրուեցաւ համաձայն մեր որոշումներուն: Մեր հայրենիքի դաւաճանը զտաւ իր պատիժը. անոր յաջորդը՝ Լինտըն ձոնսըն, այլեւ անոր ճամբուն չի կրնար հետեւիլ. Դամոկլեան սուրը կախուած է անոր գլխուն վերեւ: Այժմ տեսնենք թէ Պր. Վէյտը այսօրուան արտակարգ նիստը այս խոտլայոյց տաք շրջանին ինչո՞ւ դուժարել հրամայած է:

Պր. Վէյտ .— Այս ժողովը շատ աւելի կարեւոր է քան ինչ որ էր Նոյեմբեր 15-ի ժողովը: Այս՝, ճիշդ ծրագրուածին պէս մեր բոլոր որոշումները իրականացան: Այժմ, մեզի կը սպառնայ խոշոր վտանգ մը — Օսվալտը: Օսվալտ ձերբակալուած է: Ես կը կասկածիմ թէ այս մարդը՝ բախտախնդիր եւ յեղեղուկ նկարագրի տէր մէկը, յանկարծ փոխէ իր միտքը եւ հրապարակէ մեր ամբողջ մեքենայութիւնը: Ուստի ես կ'առաջարկեմ որ անմիջապէս կտրուի անոր շունչը:

Ճէֆ Ռուպի .— Այդ գործը ինձի ձեռքէն է: Ես արդէն շատոնց կասկած ունիմ Օսվալտի վրայ: Օսվալտ մեր ակումբի յաճախորդն էր եւ իմ գաղտնի խորհրդատուն(*): Ան սիրաբանութեամբ կը գրա-

(*) Ճէֆ Ռուպիի գիշերային Ակումբի նուագաձուներէն մին առաջին հարցաֆննութեան ատեն յայտնած էր որ Օսվալտը շատ յաճախ տեսեր էր ակումբին մէջ: Անոր վկայութիւնը միայն մէկ անգամ արձագանգ գտաւ Ամերիկեան քերթերուն մէջ, մինչ Ճէֆ Ռուպի Օսվալտը սպաննելէն յետոյ հարցաֆննութեան պահուն յայտարարեց որ ինք Օսվալտը բնաւ տեսած չէր: Իսկ Օր. Պէրի ՄէՏՏՆԱլտը, որ Նոյեմբեր 22-ին, ոստիկան Թիփփիթի սպաննուած փողոցին մէջ ձերբակալուեցաւ, մի քանի օր վերջ բանտին մէջ անձնատպան եղաւ. բայց տարածայնութեան մը համաձայն, ազգիկը խեղդամահ եղած է: Այս ալ ուրիշ խորհրդաւորութիւն մը:

ղէր երբեմն՝ մեր Ակումբի պարուհիներէն Օր. Պէթի ՄքՏոնալտի հետ : Զինքը կը զգուշացնէի որ ինք՝ ամուսնացած մարդ ու զաւակի տէր՝ հետու մնալու էր անկէ : Ես կը կասկածիմ որ Օսվալտ մեր ծրագիրի մասին բաներ մը յայտնած ըլլալու է այդ աղջկան՝ որ երէկ ձերբակալուեցաւ : Ինչ որ է... Ես այժմ կ'ուզեմ զիտնալ թէ Օսվալտ միշտ քաղաքային բանտը պիտի մնայ :

Պր. Վէյտ.— Ո՛չ. Նոյեմբեր 25-ին առաւօտեան ժամը 10-ին պիտի փոխադրուի նահանգային բանտը :

Ճէֆ Ռուպի.— Է՛հ, այդ լաւ է : Ես տեղն ու տեղը Օսվալտը կը սպաննեմ, նախքան բանտէն փոխադրուիլը, միայն թէ դուք զաղտնի ոստիկանութեան եւ ոստիկանական իշխանութեան հրահանգեցէք որ անոնք յանկարծակիի եկած հանդիսականի դերն ստանձնեն եւ իմ վրայ կրակ չբանան... :

Պր. Վէյտ.— Այդ մասին անհոգ եղէք : Նոյնպէս սա ալ աւելցընեմ որ Օսվալտի տրուելիք 20,000 տողարի վարձատրութիւնը ձեզի պիտի տրուի : Զեզի պիտի տրամադրուի նաեւ դատական ամէն տեսակի օժանդակութիւն :

(Ինչպէս զիտնեք, Բ. նիստի որոշումը եւս անշեղօրէն գործադրուեցաւ, որուն համար մեր երեւակայական խորհրդաժողովի նկարագրութիւնը կը վերջացնենք :)

2.— Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

The Minority of One ամսաթերթը 1965-ի Սեպտեմբերի թիւին մէջ արձանագրած է հետաքրքրական յայտարարութիւն մը : Երբ Իրլ-Վորընի հարցուցեր են թէ Նախագահ Քենէտի սպաննութեան շուրջ կատարուած քննութեանց տեղեկագրութիւնը, որ կնքուած դարակներու մէջ պահուած է այսօր, ե՞րբ է որ ժողովրդական սեփականութիւն պիտի դառնայ : Ան պատասխանած է.— «Ինք ձեր կեանքի տեւողութեան մէջ այդ չէք տեսներ... գուցէ 75 տարի վերջը» :

Մենք, ի հարկէ 75 տարի ապրելու պէտք չունինք զիտնալու ոճրագործին անունը, քանի որ մեզ հետաքրքրողը անհատ ոճրագործը չէ, այլ այդ սարսափելի դաւադրութիւնը ծրագրողը — այսինքն՝ Մ. Նահանգներու անտեսանելի կառավարութիւնը : Եւ ի՞նչ է անունը այդ անտեսանելի կառավարութեան, — Ամերիկայի բարձրագոյն զինուորականութիւնը՝ Զինուորական Սպայակոյտը :

Այժմ հարցը քիչ մը աւելի մօտէն քննենք :

Միացեալ Նահանգներու զինուորականութիւնը իշխող զիւրքի անցաւ այն օրէն, երբ Նախագահ Թրումբն պաղ պատերազմի օրինեալ զարաչըջանը բացաւ : Անկէ անմիջապէս վերջը սկսաւ Քորէայի պա-

տերազմը, յետոյ եկաւ Այդրնհաուրի վարչութիւնը : Իրարու յաջորդող զէպքերը այնքան ուժեղացուցին զինուորականութեան զիւրքը, որ առանց անոր՝ Ամերիկայի հաւասարակշռութիւնը կը խախտէր : Մ. Նահանգներու անտեսական զրութեան ղեկավարութիւնը Փիւնանս. կապիտալի արքաներու ձեռքն էր եւ այդ արքաներն էին որ զօրավիզ կեցեր էին զինուորականութեան ու անոր ուժով կը ձգտէին աշխարհակալ քաղաքականութեան : Առեւտրական կապիտալի տէրերը, աւելի խաղաղասէր՝ կ'ուզէին ազատուիլ խոշոր կապիտալի սեղմումներէն եւ իրենց ապրանքները ծախել հոն, ուրկէ պահանջ կրնար պալ, հոգ չէր թէ այդ երկիրը կոմունիստական էր կամ հակակոմունիստ : Առեւտրական կապիտալի տէրերուն հետ ճնշման տակ էին նաեւ մանր բուրժուական տարրերը, փոքրաքանակ արտադրող ընկերութիւնները, ասոնց հետ նոյնպէս՝ հասարակ ժողովուրդը եւ բանուորութիւնը, որոնք կը նեղուէին ներքուստ ու արտաքուստ՝ անընդատ պայմաններէն : Այս դասակարգերու ներհակ շահերը պիտի բաղխէին իրարու եւ պիտի յառաջացնէին քաղաքացիական պատերազմ՝ եթէ հասարակաց վտանգը կախուած չըլլար բոլորին գլխուն վերեւ : Այդ հասարակաց վտանգը կուզար Ս. Միութենէն, Ժողովրդական Զինաստանէն, մէկ խօսքով՝ կոմունիզմէն : Ամերիկեան զինուորականութիւնը այդ հանգամանքն էր, զոր կ'օգտաւորէր մէկ կողմէն իր զիւրքը ամբացնելով, միւս կողմէն՝ ծառայելով Փիւնանս. կապիտալի արքաներուն :

Ճան Քենէտի, ծերակոյտին մէջ մտած օրէն տեղեկ էր ընդհանուր զրութեան, բայց ինք՝ այդ հրատապ հարցը քննութեան առարկայ դարձնելու չափ ինքզինքը զօրաւոր չէր զգար, որովհետեւ գոնկրէսի անդամներու առաջնորդող ուժերը, բացի մէկ քանիններէն՝ զինուորականութեան փաստաբաններն էին : Անոնց մեծաւորն էր Բէրի Կոլտփոլըրը, ալ չիլչինք Նախագահ Այդրնհաուրը եւ փոխնախագահ Նիքսոնը : Ընտրեալ Նախագահ Քենէտի, որ տակաւին նախագահական պաշտօնական օժումը չէր ստացեր, 1960-ի Դեկտեմբեր 20-ին, Մերակուտական Ստուարտ Սայմինկոլտնի գլխաւոր երգուեալխումբ մը գումարեց : Սումբի անդամներն էին Քլարք Քլիֆորտ, Քենէտիի մտերիմ խորհրդատուն, Թամըս Ֆինլէտըրը, երբեմնի օդային ուժի քարտուղարը, Ռոզվէլ Գիլփէթրիկ, երբեմնի օդային ուժի ենթաքարտուղարը եւ երկու փաստաբաններ՝ Փաուլըր Համիլտըն եւ Մարքո Լէվա : Ահա այս խումբն էր որ երկար խորհրդակցութենէ յետոյ խմբադրեց ու հրապարակեց հետեւեալ գըլխաւոր յանձնարարութիւնները .

1.— Պաշտպանութեան քարտուղարութիւնն է որ ուղղակի երկրի պաշտպանութեան համար հարկ եղած հիմնադրամներու յա-

կացումները պիտի որոշէ եւ ան պիտի ըլլայ միակ հեղինակաւոր մարմինը՝ որ այդ հիմնադրամները պիտի ծախսէ յարմարագոյն ձեւով :

2.— Զինուորական ծառայութեան պետերը իրենց զեկոյցները պիտի տան Պաշտպանութեան Քարտուղարութեան : Բանակի, նաւատորմիղի եւ օդային ուժի առանձին քարտուղարութիւնները պիտի վերցուին :

3.— Սպայակոյտին պիտի փոխարինէ Զինուորական Խորհրդատու Կոմիտէն, որու անդամները պիտի ըլլան իրենց պատկանեալ ծառայութիւններէն մշտապէս բաժնուած աւագանի պաշտօնեաները : Կոմիտէն գլխաւորօրը պիտի ըլլայ նախագահ մը, որ նոյն ատեն՝ Նախագահին եւ Պաշտպանութեան Քարտուղարութեան զինուորական խորհրդատուի գործը պիտի վարէ :

4.— Զինուորական անջատ գործակալութիւնները — բանակային, նաւային եւ օդուժի — իրենց ինքնութիւնը կը պահեն, բայց անոնք պիտի ենթարկուին երեք տարբեր հրամանատարութեանց . Ռազմազիտական Հրամանատարութիւն, որ պատասխանատու է ջերմամիջուկային պատերազմի գործերուն . Թակտիկայական Հրամանատարութիւն, որ պատասխանատու է ամէն կարգի սահմանեալ պատերազմի գործողութեանց . Պաշտպանութեան Հրամանատարութիւն, որ պատասխանատու է բոլոր զաղթերկրային պաշտպանութեան գործուղումներուն :

Այս յանձնարարութիւններով Ամերիկայի զինուորականութեան իշխանական գիրքը կը խորտակուէր եւ ան կ'ենթարկուէր քաղաքային հեղինակութեան : Բայց մի՞թէ կարելի էր այդ յանձնարարութիւնները իրականացնել, երբ ուժեղ ընդդիմադիրներ՝ կատաղութեան նոպայէն բռնուած՝ ամէն ինչ ընելու պատրաստ էին : Ծերակուտականներ՝ Ստրոմ Տուրմոնա, Բէրի Կուլտօտերը, Քարլ Մունդը, Դէյլ Էլֆորտ, ասոնք զինուորականութեան պաշտպանութեան նուիրուած կատարած գաղաններ էին, որոնք իրենց թիկունքին ետեւ բազմաթիւ հետեւորդներ ունէին :

Նախագահ Քենէտի 1961, Օգոստոս 10-ին, մամուլի ներկայացուցիչներու քոնֆէրանսին հետեւեալ ձեւով արտայայտուեցաւ . — «Միացեալ Նահանգներու զինուորականութիւնը, որ մեր Սահմանադրութիւնը հիմնողներու ամենախելացի գործերու մէկ պտուղն էր, միշտ քաղաքական գիծէն պահուած է հետո, այսու հանգերձ՝ մեր զինուորականները իրենց պատկանած պատասխանատուութիւնները շարունակած են կատարել չնայած դեմոկրատ կամ հանրապետական վարչութեանց փոփոխումներուն :

Բայց ներկայիս՝ մենք ճակատած ենք խոշոր առեղծուածի մը,

այսօր մեր զինուորականութիւնը մեր քաղաքական կեանքի ղեկավարը դարձեր է : Այժմ մենք ունինք հրատապ հարց մը . այն է՝ ի՞նչպէս կարելի է մեր զինուորականութիւնը պահել իր ամբողջական ուժով եւ նոյն ատեն զայն ենթարկել քաղաքային իշխանութեան քննարկին» :

Քենէտի իր այս յայտարարութեամբ արդէն կը պարզէր թէ ան ի՞նչ քաղաքականութեան կը հետեւէր . զինուորականապաշտները անոր չէին կրնար ներել . . .

Պաշտպանութեան Քարտուղար՝ Միլնամբրա, փորձեց ամօքել ընդդիմադիրներու սրամտութիւնը եւ վերեւ նշուած յանձնարարութիւնները չեղեալ յայտարարեց : Բայց անօգուտ : Ահա վրայ հասաւ ուրիշ կատաղեցնող գէպը մը . — Խ. Միլնթեան հետ կնքուած այն զաշնագրութիւնը, որ մասնակիօրէն կ'արդիւլէր բաց օդին մէջ ատոմական փորձարկութիւնները : Այս գէպը լեցուց հակառակորդներու համբերութեան բաժակը . . . Ճան Քենէտի, ստորագրելով այդ զաշնագրութիւնը, ստորագրեց իր մահաւճիւղը . . . :

Ընթերցողը անտարակոյս համոզուեցաւ այժմ, որ Քենէտի տէնորական ծրագիրը պատրաստողն եղած է Մ. Նահանգներու անտեսանելի կառավարութիւնը՝ ամերիկեան զինուորականութիւնը :

3.— ՎԻԷԹՆԱՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Միացեալ Նահանգներու պատմութեան սեւագոյն մասը կը կազմէ Վիէթնամի անորակելի պատերազմը : Աշխարհի ամենազօր եւ ամենահարուստ կապիտալիստական երկիրը, որ ըստ երեւոյթին՝ կը ղեկավարուի դեմոկրատական սկզբունքներով, զինուորական ուժով մտած է խեղճուկ երկրի մը մէջ, բռնութեամբ կը զինէ եղբայր եղբօր դէմ, կ'աւերէ քաղաքներն ու գիւղերը, կը սպաննէ հազարներով, միայն այն պատճառարանութեամբ արգարացնել փորձելով իր վայրենի արարքը, որ ինք կ'ուղէ պաշտպանել ժողովուրդի մը ազատ ազրելու իրաւունքը : Բայց ս՞ր ժողովուրդի մասին է խօսքը : Հարաւային Վիէթնամի ժողովուրդի մասին . . . Բայց ինչո՞ւ անտեսել Հիւսիսային Վիէթնամի ժողովուրդը որ պատմութեան մէջ չտեսնուած զիւցազնութեամբ կուտեցաւ Ֆրանսական իմպերիալիզմին դէմ եւ զայն դուրս հանեց երկրէն եւ այսօր նոյն աննահանջ զիւցազնութեամբ կը կուտի իր հայրենիքի աղատութեան ու անկախութեան համար : Ինչո՞ւ այդ երկրի ժողովուրդը պիտի բաժնուէր երկու մասի երբ անոնց շահերն ու իղձերը նոյն գիծին վրայ դրուած էին : Ուրեմն, պարզ է որ վտանգուողը այդ ժողովուրդի ազատութիւնը չէր, այլ տիրող մէկ դասակարգի ազատութիւնը, դասակարգ մը, որ իր

բարձրացումին օժանդակող ժողովուրդի վստահութիւնը կորսնցնել վերջ երբ իր անխիղճ շահատակութիւններով այդ ժողովուրդին առեւտրեան առարկայ դառնալով անօգնական մնաց՝ դիմեց Ամերիկայի խնամատարութեան:

Հարաւային Վիէթնամի ժողովուրդի ազատութիւնը ե՞րբ եւ ո՞րմէ վտանգուեցաւ: Եթէ այդ ժողովուրդի ազատութիւնը երբեւեցէ վտանգուած էր, ան դիմելու էր Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ-ին) որ միակ մարմինն է համաշխարհային խաղաղութիւնը ազգերու միջեւ պահպանելու իր կոչումով: Վիէթնամի մէջ մտնողը, սակայն, ՄԱԿ-ը չէ, այլ՝ Ամերիկան: Ո՞վ տուաւ իրեն այդ իրաւասութիւնը: Ամերիկան կը պնդէ որ Հարաւային Վիէթնամի ժողովուրդը խնդրական դիմում կատարած է օգնութեան համար եւ ինք՝ հարկադրաբար ընդառաջեր է այդ աղաչողական դիմումին: Բայց Ամերիկան չ'ըսեր թէ՛ Վիէթնամի ժողովուրդը երբեք դիմում կատարած է ի՞նչ բանի պիտի վերադրել Ամերիկայի դէմ քանիցս կրկնուած այն յուզումնալից ցոյցերը, որոնց մէջ մարդիկ՝ որպէս արդար բողոքի արտայայտութիւն՝ ինքզինքնին ողջ ողջ վառեցին: Եստի՛, կօ հոսմ... Եանքի՛ Ամերիկացիներ՝, տուն վերադարձէք, մեզ ազատ ձգեցէք. ա՛յլ բաւական է...: Այս աղաղակները արձագանգեցին ամբողջ աշխարհի մէջ. բայց ձոնսըն, չուզեց լսել:

Առաջին անգամ յայտարարուեցաւ որ Հարաւային Վիէթնամի կառավարութիւնն է եղեր թախանձապին դիմում կատարողը, բայց այդ կառավարութիւնը արդեօք կը ներկայացնէ՞ Վիէթնամի ժողովուրդը: 1964-էն մինչեւ 1965 տարուայ վերջերը վեց տեսակ կառավարութիւններ փոխուեցան իրարու ետեւէ. անոնցմէ ո՞ր մէկն էր որ կը ներկայացնէր Վիէթնամի ժողովուրդը:

Նախագահ ձոնսըն, սարսափի ազդեցութեան տակ, (ամօթ իրեն) կորսնցուցած Մեծ Հանրապետութեան մը նախագահի բարձր անհատականութիւնը, բացորոշակի՝ դարձեր էր անկամ ու անհողի գործիքը ամերիկեան զինուորականութեան, այդ իսկ պատճառով ան խուլ մնաց աշխարհի չորս կողմերէն եկած խաղաղութեան դիմումներուն եւ մինչեւ այսօր ալ դեռ կ'աւելցնէ զինուորական թարմ ուժերու առաքումը: Ամերիկայի զանազան քաղաքներու մէջ կատարուած հսկայական բողոքի ցոյցերը եւս չկրցան կասեցնել այդ վայրենի պատերազմը:

Ամերիկեան նախագահներու շարքին մէջ չէ եղած մէկը, որ այնքան այպանելի բացասական կողմեր ունեցած ըլլայ՝ որքան Լինտոնըն ձոնսընը: Յաճախ մտիկ կ'ընեմ թէ՛ լէվիթընի վրայ իր հրապարակային ուղերձները: Շատ դանդաղ խօսող մարդ է ան: Ամէն անգամ երբ բառ մը կ'արտասանէ, ունկնդիրներուն վրայ այն տպաւո-

րութիւնը կը թողու որ իր ուղեղը անգամալոյժ եղած է եւ կամ՝ ենթարկուած է շուարումի: Բառեր կը փնտոէ իր միտքը բացատրելու համար, իսկ ունկնդիրները անմիջապէս կը համոզուին որ իր միտքը իրեն չի պատկանիր: Եւ իրաւ ալ՝ տարբեր մարդ է խօսող ձոնսընը, տարբեր մարդ է նախագահ ձոնսընը: Կը յիշեմ նախագահական ընտրապայքարի առեն իր արտասանած պատգամները: Այդ չըջանին՝ ան բաւական պերճախօս էր, երբ կ'ուզէր յաղթել իրեն հակառակորդ թեկնածուին՝ Բէրի Կոլտփորըին:

Հետեւեալ խօսքերը յիշատակութեան արժանի են. —

«Ընկեր քաղաքացիներ, ընտրապայքարի առեն սովորութիւն է, որ թեկնածու մը մեծ մեծ խոստումներ կ'ընէ, փայլուն, շլացուցիչ խոստումներ՝ միմիայն քուէ շահելու համար, իսկ ընտրուելէն յետոյ՝ կը մոռնայ ամէն ինչ: Ես ձեզի որեւէ խոստում չեմ ըներ, որովհետեւ ես առանց ժողովուրդի կամքին, առանց ժողովուրդի օժանդակութեան՝ ոչինչ կրնամ ընել: Ես չեմ սիրեր որ դուք բռէք թէ՛ Լինտոնըն ձոնսընը ի՞նչ խոստումներ կ'ընէ, ես կ'ուզեմ որ բռէք թէ՛ Լինտոնըն ձոնսընը ի՞նչ ծրագիրներ ունի եւ մեզմէ ի՞նչ կը պահանջէ:

Այժմ պարզեմ իմ ծրագիրները:

Ամերիկայի Միացեալ Նահանգները աշխարհի ամենաառաջնակարգ երկիրն է, որ մրցակից չունի: Չարդացեր է մեր երկրի տեխնիկան անպերազանցելի կոչուելու աստիճան. մեր երկրի հարստութիւնը ամբողջ աշխարհի մարդկութիւնը կրնայ հողատարել. մեր երկրի զինուորական՝ պաշտպանողական ուժը աշխարհի բոլոր պետութեանց միացեալ զինուորական ուժէն գերազանց է, բայց այս բոլոր առաւելութեանց հետ ունինք խոշոր բաց մը. մեր երկիրն մէջ այսօր վաթսուս միլիոն կարօտեալներ կան, որոնք զրկուած են մարդավայել կեանքի պայմաններէն: Առատութեան մէջ չբաւորութիւն. ասիկա հակադրութիւն մըն է, զոր աչքաթող պէտք չէ ընել: Մենք կուր ունինք այժմ. կուր՝ թշուառութեան դէմ: Այս կուրին մէջէն յաղթական դուրս գալու համար անհրաժեշտ է համակարգել եւ գործի դնել ժողովուրդի կամքը եւ ուժը: Մենք պիտի ունենանք իրական մեծ հասարակութիւն մը, երջանկութեան եւ բարօրութեան մէջ ապրող հասարակութիւն մը: Մեր երկրի հարստութիւնը շափորոշողները մի քանի տասնեակ միլիառատէրերը չեն, այլ ժողովուրդը: Ամէն մարդ իր սեփական բնակարանը պիտի ունենայ իր բոլոր յարմարութիւններով. ամէն մարդ պիտի ունենայ իր սեփական ինքնաշարժը, ամէն ընտանիք պիտի ապրի տնտեսապէս ապահով կեանքով առանց ճնշուելու կարիքի բերան տակ:

Մեր նոր սերունդը կ'աճի անհաւատալի արագութեամբ: Մեր դպրոցները անբաւարար են. մեզի պէտք են նոր դպրոցներ, նոր գո-

լէճներ: Դուք գիտէ՞ք թէ հազարաւոր հանճարներ կը խամբին, կը չըքանան չքաւորութեան մէջ: Մենք պիտի աշխատինք որ ուսանողներուն անխտիր՝ պատեհնութիւն տրուի ստանալու բարձրագոյն կրթութիւն: Մեզի պէտք են գիտնականներ, երկրաչափեր, քիմիագէտներ եւ վարչական կարողութեան տիրացած բազմաթիւ մասնագէտներ: Այս մարզին վրայ մեր աշխատանքի պահուն բոլորովին չքացնելու ենք մեր ուժերը ջլատող ցեղային խտրականութիւնը: Մեր երկիրը լայն զեմոկրատական երկիր է, օրէնքի առջեւ բոլոր քաղաքացիները հաւասար են, աննկատ առնելով անոնց մորթի գոյնը, կրօնը, դաւանանքը, անոնց ցեղն ու ազգութիւնը: Անոնք եղած են մեր երկրի հարստութեանց ակերը բացողներն ու զարգացնողները:

Մեզի պէտք են նոր հիւանդանոցներ, առողջապահական հիմնարկութիւններ, ժողովրդական դուրձատեղիներ եւ հասարակական հաստատութիւններ, անակնկալ աղէտներու ատեն, անմիջական օգնութիւն հասցնելու համար:

Մենք՝ երբ չենք հանդուրժեր որ օտար պետութիւն մը միջամուխ ըլլայ մեր ներքին գործերուն, այնպէս ալ մենք միջամուխ ըլլալու չենք որեւէ երկրի ներքին գործերուն: Մենք յարգելու ենք որեւէ երկրի ազգային, վեհապետական անկախութիւնն ու պատուութիւնը: Մենք պիտի գործենք Միացեալ Ազգերու Կազմակերպութեան խողովակով, անոր Ուխտագրի արամադրութեան համաձայն: Աշխարհի խաղաղութիւնը ամուր հիմքերու վրայ պահպանող միակ մարմինը ՄԱԿ-ն է»:

Ահա ասոնք էին Լինտըն ձոնսընի ծրագրի ամենազլխաւոր մասերը: Այժմ հարց է թէ ձոնսըն իր հրապարակած ծրագրին հետեւողական մնաց:

Ձոն Քենէտի տէնորէն յետոյ՝ ձոնսըն, փոխ-նախագահութեան պաշտօնէն երբ նախագահ եղաւ, ձեւակերպութեան սիրոյն հետեւեցաւ Քենէտի ուղեգիծին, բայց 1964-ին երբ ջախջախիչ քուէներու մեծամասնութեամբ պարտութեան մասանց Հանրապետականներու թեկնածուն՝ Բէրի Կոլտուոթըրը, բոլորովին մոռցաւ իր ծրագիրները եւ երեւան եկաւ աւելի այգանելի գործակալ մը զինուորականութեան՝ քան ինչ որ Կոլտուոթըրը պիտի ըլլար: ձոնսընը եղաւ Բէրի Կոլտուոթըր:

Այժմ հակիրճ կերպով պատկերացնենք Վիեթնամի՝ նախկին Հնդկաչինի մշուշապատ պատկերը:

Ֆրանսական իմպերիալիզմը երբ պարտութեամբ հեռացաւ Հնդկաչինէն, երկիրը բաժնուեցաւ երկու մասի. Հիւսիսային Վիեթնամը, որ կոչուեցաւ Վիեթմինհ (Կոմունիստ Վիեթնամ), եւ Հարաւային Վիեթնամը, որ համաձայն ամերիկեան մամուլի տեղեկատու-

ւութեան՝ երջանիկ ու բարգաւաճ երկիր մըն էր: Առաջինին մայրաքաղաքն էր Հանոյ, երկրորդինը՝ Սայգոն:

Հարաւային Վիեթնամի մէջ կ'իշխէր արիւնկղակ զիկտատոր մը՝ Նկօ Տինհ Տիէմ: Այս մարդը ժողովուրդը կը պահէր սարսափի մէջ եւ իր զիկտատորական իշխանութիւնը յաւերժացնելու համար երկիրը կը պահէր պատերազմական դրութեան մէջ: Պատերազմը Հիւսիսի եւ Հարաւի միջեւ կը շարունակուէր տարիներէ ի վեր: Հիւսիսը կը կոուէր յանուն Կոմունիզմի, Հարաւը կը կոուէր յանուն դեմոկրատական ազատութեան: Հիւսիսի համար դեմոկրատական ազատութիւնը ստրկութիւն էր, Հարաւի համար դեմոկրատական ստրկութիւնը ազատութիւն էր: Բայց մէկ բան պարզ էր, որ Հարաւային Վիեթնամի ժողովուրդը բռնութեան տակ էր որ կը կոուէր: Իսկ ամենէն տարօրինակ կէտը այն էր որ Հարաւն ու Հիւսիսը իրարու դէմ կը կոուէին ամերիկեան զէնքերով: Ամերիկեան էր որ երկու կողմերուն զէնք կը հայթայթէր եւ աւելի առատօրէն՝ Հիւսիսին, որպէսզի Հարաւը տաղանապի մատնուէր եւ Ամերիկեան պատեհնութիւն ունենար զինուորական օգնութեան պատրուակով մտնել երկրէն ներս: Ձոն Ֆոսթըր Տրլէսի քաղաքականութիւնն էր որ կը գործադրուէր. — «Ասիացիները կոտորել ասիացիներու ձեռքով»: 1963-ին, ձեռներալ Մաքսվէլ Թըյլըրը զրկուած էր Սայգոն, որպէս լիազօր դեսպան, անձամբ ու սումնասիրելու երկրի ռազմապիտակական կէտերը: Նախագահ Քենէտի կը տեսնէր թէ մեքենայութիւն մը կը լարուէր, բայց չէր կրնար իրենու ընթացքը կասեցնել մէկ հարուածով:

Քենէտի տեղորէն յետոյ՝ Ամերիկեան մամուլը արձագանգ տուաւ զգայացունց, զրգոխ լուրի մը. Հիւսիսային Վիեթնամը առանց ազգարարութեան՝ յարձակեր էր Մեքոնկի Տելլայի մօտ գտնուող ամերիկեան նաւաբաժնին վրայ եւ պատճառեր էր խոչոր վընասներ: Նախագահ ձոնսըն զէպքին ստուգումը կատարելու փորձ չըրաւ, որովհետեւ ամերիկեան զինուորականութիւնը այդ ստուգումը կատարած էր արդէն, եւ անմիջապէս պատերազմական օդանաւերով 20,000 զօրքեր հասցուց Հարաւային Վիեթնամի մէջ եւ սկսաւ ռազմապիտակական գործողութիւնները. անկէ յետոյ՝ ուղարկուած զինուորներու թիւը հասաւ քառորդ միլիոնի: Մեքոնկի զէպքը ստուգուած չէր եւ ձոնսընը աճապարանօք քայլ էր առեր...: Ժողովրդական հակալական ցոյցեր խոչոր քաղաքներու մէջ...: Ամերիկեան զինուորականութիւնը գործի վրայ էր եւ ոչ ոք կրնար անոր դէմ կենալ:

Ատեն մը Մ. Նահանգներու կառավարութիւնը դժուար աշխատանքով այն տպաւորութիւնը թողուց որ, ձոնսընի Վարչութիւնը սիրայօժար էր խորհրդակցութեամբ վերջ տալ Վիեթնամի պատե-

բազմին, բայց Հիւսիսային Վիեթնամը վճռականապէս մերժեր էր ընդառաջել այդօրինակ քայլի մը: Էրիք Սեվէրայտ, ԼՈՒՔ պարբերաթերթի 1965 Նոյեմբեր 30 թիւին մէջ հրատարակուած յայտարարեց որ Հիւսիսային Վիեթնամի կառավարութիւնը ՄԱԿի ընդհանուր քարտուղար Եու թանի առաջարկը ընդունած է եղեր, 1964-ի աշնան՝ բանակցելու ամերիկեան ներկայացուցիչներուն հետ Բուրմայի մէջ նախնական բանակցութեանց համար եւ Մ. Նահանգներու կառավարութիւնը մերժեր է մասնակցիլ այդպիսի խորհրդակցական հաւաքոյթի մը: Ամերիկեան կառավարութիւնը աշխատեցաւ այդ իրողութիւնը ծածկել: Անցեալ Փետրուարին, Սպիտակ Տան Մամուլի քարտուղար ձորձ Ռիտի, նոյնիսկ ելաւ յայտարարել որ Նախագահը Եու թանի կողմէ որիւէ առաջարկ չէ ստացեր: Երկու ամիս վերջ, սակայն, պետական բաժանմունքի ներկայացուցիչ Ռապըրթ ՄքՔլոսքի, մետասաներորդ ժամուն հաստատեց որ Նախագահ ձոնսըն կ'ընդունէր խաղաղութեան խորհրդաժողովի մը գումարման անհրաժեշտութիւնը: Այս լուրը գրուեցաւ Նիւ ԵՈՐՔ ԷՆՐՈԼՏ ԹՐԻՊԻԻՆԻ 15 Նոյեմբեր 1965-ի թիւին մէջ:

ձոնսընի վարչութիւնը ինչո՞ւ ստեց, ինչո՞ւ ուրացաւ սոյն իրողութիւնը: Այս հարցման պատասխանը պարզ է. Նախագահ ձոնսըն բացէն ի բաց կ'ուզէր խարել ամերիկեան ժողովուրդը, որ Ամերիկայի կառավարութիւնը Վիեթնամի պատերազմը ի սրտի կը փափաքի վերջացնել փոխադարձ հասկացողութեամբ, բայց Հիւսիսային Վիեթնամի կառավարութիւնը ամէն տեսակ բանաւոր առաջարկ կը մերժէ: — «Մենք պատրաստ ենք խորհրդակցելու, կ'ըսէ ան, բայց միւս կողմէն ալ կը մերժէ զալ քոնֆերանսի սեղանին շուրջը»:

Բայց տեսնենք թէ ի՞նչ է Նախագահի բանաւոր առաջարկը: Նախագահը կ'ըսէ. — «Մենք Վիեթնամի մէջ երկու պատերազմ կը մղենք. մին՝ Հիւսիսային Վիեթնամի դէմ, միւսը՝ Հարաւային Վիեթնամի մէջ՝ պարտիզանական գունդերուն դէմ: Մենք պատրաստ ենք բանակցիլ Հիւսիսային Վիեթնամի կառավարութեան հետ, բայց չենք ուզեր տեսնել պարտիզանական գունդերու ներկայացուցիչները»:

Նախագահ ձոնսըն ի՞նչ ըսել կ'ուզէ այդ առաջարկով: Ան ըսել կ'ուզէ, որ մենք ոմբակոծումը կը շարունակենք պարտիզանական հրոսակներուն դէմ եւ նոյն ատեն կը բանակցինք խաղաղութեան համար՝ Հիւսիսային Վիեթնամի կառավարութեան հետ: Ռմբակոծում մէկ կողմէն, խաղաղութեան քոնֆերանս՝ միւս կողմէն. ո՞ւր է այդ առաջարկին բանաւոր կողմը:

Այժմ տեսնենք թէ Հանոյի կառավարութեան առաջարկը ի՞նչ է: Հանոյի կառավարութիւնը կ'ըսէ. — «Մենք խաղաղութեան քոն-

ֆերանսին կը մասնակցինք միայն այն ատեն՝ երբ Ամերիկան բոլոր զօրքերը դուրս կը հանէ Վիեթնամէն»:

Բանաւոր առաջարկ է աւ...: Անտարակոյս, այո՛, անառարկելիօրէն բանաւոր առաջարկ է եղածը: Վիեթնամի հարցը կը պատկանի Վիեթնամի ժողովրդական զանդուածներուն. անոնք իրարմէ բաժնուած են, իրարու դէմ կնճոռտ խնդիրնե՞ր ունին, Ամերիկան տնտեսական կամ քաղաքական տեսակէտով որեւէ կապ չունի անոնցմէ մէկուն հետ: Ամերիկայի ներկայացուցիչները կրնան զալ քոնֆերանսի սեղանին շուրջը, բայց անոնք իրաւասութիւն չունին վճիռ արձակելու, կամ ուղղակի կամ անուղղակի միջոցներով ազդեցութիւն բանեցնելու մէկ կամ միւս կողմին վրայ: Վէճերը կը հարթուին ժողովրդական ներկայացուցիչներու միջոցով, անոնց ազատ համաձայնութեամբ:

Նախագահ ձոնսընի վարչութիւնը այս ձեւը չընդունիր: Ի՞նչու... Որովհետեւ որոշակի գիտէ թէ Հարաւային Վիեթնամի ժողովուրդը ո՛չ մէկ թշնամական զգացում ունի եւ կրնայ ունենալ Հիւսիսային Վիեթնամի ժողովուրդին դէմ: Թշնամութեան հող պատրաստողը, պատերազմի փողը հնչեցնողը Հարաւային Վիեթնամի տիրող դասակարգն է:

Եւ պատերազմը կը շարունակուի ու պիտի շարունակուի: Զուր տեղը չէ որ Հիւսիսային Վիեթնամի հերոս ժողովուրդը ի լուր աշխարհի յայտարարեր է. — «Մենք պիտի կռուինք մինչեւ մեր վերջին շունչը՝ մեր ազատութեան ու անկախութեան համար, եթէ նոյնիսկ պատերազմը տեւէ մինչեւ տասը տարի»:

Եւ այդ գիւցպոն ժողովուրդը պիտի չպարտուի...:

Ի՞նչ ԿԸ ՍՊԱՍԷ ԱՄԵՐԻԿԱՆ ՎԻԵՒՆԱՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ

Ամերիկան շատ լաւ գիտէ թէ՛ ինք Վիեթնամի պատերազմը արդէն կորսնցուցեր է, բայց կը շարունակէ զայն եւ պիտի շարունակէ, հող չէ թէ ան՝ շատ սուղի կը նստի իր վրայ, ըլլայ նիւթական՝ ըլլայ մարդկային կեանքերու կորուստով:

Ի՞նչու...:

Այս հարցման պատասխանելու համար երկու զլխաւոր պատճառներ կրնանք նշել:

Առաջին պատճառը. — Պաղ պատերազմը թէեւ երկրի տնտեսութիւնը կեանքոտ պահելու տեսակէտէն օգտակար է, բայց ան արտադրուած զէնքերը կ'ամբարէ, չսպառեր: Ամերիկեան ռազմական արդիւնաբերական խոշոր ընկերութեանց համար անիրաժեշտ է տաք պատերազմ — սպառողական պատերազմ: Եւ Վիեթնամի պատերազմը սպառողական պատերազմ է: Համաձայն պաշտօնական յայտարար-

բութեան՝ մինչև այսօր Վիէթնամի պատերազմը Ամերիկայի կառավարութեան արժած է քսան երկիրիսն տուար: Այդ կը նշանակէ թէ ամերիկեան խոշոր բնկերութիւններն են որ իրենց միջև բաժնած են այդ հսկայական գումարը:

Երկրորդ պատճառը.— Ամերիկան Վիէթնամի պատերազմը շարունակելով, պատրուակ կը փնտոէ յարձակիլ Չինաստանի վրայ: Չինաստան այսօր, արագօրէն կը զարգանայ. կը զարգանայ թէ՛ տնտեսապէս եւ թէ՛ գիտութեան տեսակէտով: Ժողովրդական Չինաստանը եթէ չուտով պատերազմի մէջ չի քշուի, աշխարհի ամենէն հուժկու, ամենէն անպարտելի երկիրը կը դառնայ: Ան արդէն տիրացեր է ատոմական ուժի գաղտնիքին, պատրաստեր է իր ատոմական ուժերը. չուտով ան կը սկսի պատրաստել նաեւ ջերմամիջուկային զէնքեր, ու հեռարձակ նետակներ: Չինաստան ո՛չ միայն գիտութեան տեսակէտէն վտանգաւոր կը դառնայ Ամերիկայի համար, այլև տնտեսական տեսակէտով կը սպառնայ ամերիկեան իմպերիալիզմին: Ան իր տնտեսական զարգացումով, հիւսիսային կողմէն միանալով Խ. Միութեան, վազը կրնայ իրեն կապել ձարոնը եւ յետոյ՝ օրինակ եւ սոսիսորդ դառնալով Ասիական բոլոր երկիրներուն, Ամերիկան, ստիպուած՝ իր պայուսակները կտորած՝ պիտի հեռանայ Ասիայէն: Իսկ այդ հեռացումը արդէն պիտի փութացնէ իր սնանկութիւնը: Այս հանգամանքները նկատի առնելով ամերիկեան գիտութեան փորձագէտները կը գոչեն.— «Այժմ՝ կամ երբեք...»: Այսինքն՝ Չինաստանի վրայ յարձակելու ժամը հասեր է, կամ հիմա պիտի յարձակինք, կամ երբեք պիտի չյարձակինք եւ ապագային պիտի մատնուինք անել գրութեան:

Ասոնց զէմ կեցած է ուրիշ խումբ մը, որ յաջողութիւն չի նախատեսեր այդ յարձակումին մէջ: Փոքրիկ Վիէթնամ մը, որ երբ 3 տարի կըրցաւ զբաղեցնել Ամերիկան եւ տակաւին պարտութեան նշանցոյց չի տար, 700 միլիոն բնակչութիւն ունեցող Չինաստան մը, որ տիրացեր է արդիական զէնքերու, անառիկ բերդ մըն է, որուն մօտենալը անխոհեմութիւն է:

Այս երկու խումբերը մինչև հիմա տակաւին չեն կըրցած համաձայնիլ, բայց հաւանական է որ ամերիկեան գիտութեան ուժերը յաղթական դուրս գայ: Չինաստանը պիտի ենթարկուի յարձակման եւ այդ դուռ պիտի բանայ համաշխարհային Գ. պատերազմին, որուն պիտի յաջորդէ կապիտալիստական իմպերիալիզմի թաւալազոր փրլուզումը եւ սոցիալիստական դարաշրջանի ամբացումը ամբողջ երկրագունդի վրայ:

Կապիտալիզմի զաղանը իր հոգեւարքի պահուն իր աներեւակայելի կատաղութեան փրփուրին մէջ պիտի խեղդուի:

Այժմ մենք կ'ապրինք այդ երկունքային տաղնապալի շրջանը:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Սոյն մասին մէջ մենք համառօտակի կը պատկերացնենք գիտութեան նուաճումները: Ընթերցողը հոն պիտի տեսնէ թէ դասակարգային կռիւներու գուզընթաց՝ գիտութիւնը ի՞նչ ֆայլերով յառաջ գացեր է:

Անկէ յետոյ մենք կը պատկերացնենք ազատ մտածողութեան ընթացառումը՝ սոցիալիստական հասարակութեան մէջ:

Այս մասին վերջին գլուխը յատկացուած է եզրափակման:

ԳԼՈՒԽ Ա.

1.— ԱՐԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԻՐ

Արդիւնաբերութեան, առուտուրի եւ քաղաքներու զարգացումը որ նուաճող թափով կը յառաջանար Միջին Դարու վերջերը, կ'ապացուցեր որ ան անհամատեղելի էր Ֆէոդալական տնտեսութեան հետ: Այս փոփոխութիւնները, որոնք դանդաղօրէն կը հասունանային Ֆէոդալական կարգերու տակ, վերջապէս մէկ տեղէն միւսը արտա-յայտուեցան տնտեսական եւ գիտական նոր սարքաւորումով: Աւելի լաւ տեխնիկայով, աւելի լաւ փոխադրական միջոցներով եւ աւելի լայն շուկաներով վաճառքի համար ապրանքներու արտադրութիւնը յարատեւօրէն աճեցաւ:

Այն քաղաքները, որոնք սպառման շուկաներ ունէին եւ երկարատեւն Ֆէոդալական տնտեսութեան մէջ նպաստամատոյցի կամ զրեթէ պարազիտի դեր կը կատարէին, 15-րդ դարուն փոխուեցան, որովհետեւ այդ դարու քաղաքացիները կամ բուրժուազիան այնքան զօրացան որ սկսան այդ տնտեսութիւնը փոխակերպել նորի մէջ, ուր արտադրութեան ձեւը որոշողներն եղան զրամական վճարումը, եւ ոչ թէ պարտադրական ձեւով ծառայութիւնները: Բուրժուազիայի յաղթանակը եւ կապիտալիստական եղանակի տնտեսութիւնը, զոր անոնք յառաջ տարին, տեղի ունեցան քաղաքական, կրօնական եւ մտաւորական դաժան պայքարներու ճանապարհով: Բնականաբար փոխակերպումի այդ պրոցէսը դանդաղ էր ու անհաւասար: Ան արդէն 13-րդ դարուն սկսեր էր Իտալիոյ մէջ, սակայն 17-րդ դարու կիսուն էր որ անիկա հաստատեց իր իշխանութիւնը Բրիտանիոյ եւ Հոլանտայի նման առաջաւոր երկիրներու մէջ: Ուրիշ դար մը եւս պէտք էր որ այդ դասակարգը իր հսկողութեան ենթարկէր ամբողջ Եւրոպան:

Նոյն շրջանը — 1450—1690 — որ ահանատես եղաւ կապիտալիզմի զարգացման՝ որպէս արտադրութեան նոր մեթոտի մը, նոյնպէս ահանատես եղաւ փորձառական եւ հաշուառումի նոր մեթոտի մը — բնական գիտութեան մեթոտին:

Այդ փոխակերպութիւնը խառն ու բազադրեալ բան մըն էր: Տեխնիկայի փոփոխութիւնները խթանեցին ու զարգացուցին գիտութիւնը, իսկ գիտութիւնը իր կարգին՝ խթանեց ու զարգացուց տեխնիկայի մէջ նոր եւ աւելի արագ փոփոխութիւններ: Ասոնց միւս-

թեամբ տեղի ունեցաւ անտեսական, տեխնիկական եւ գիտական յեղափոխութիւնը, որպէս ընկերային միաձեւ երեւոյթ :

Կապիտալիզմի եւ գիտութեան շարժումները եղած են յարակից, թէեւ անոնց ներքին յարաբերութիւնները կարելի է բացատրել պատճառի եւ արդիւնքի պարզորոշ կապակցութեամբ : Բայց կարելի է ըսել թէ՛ սկզբնական շրջանին, անտեսական գործօն ուժն էր հրամայողը : Կապիտալիզմի յառաջխաղացման ազդու պայմաններն էին որ կարելի ու անհրաժեշտ դարձուցին գիտութեան փորձառական միջնորդութիւնը : Այդ շրջանէն յետոյ, սակայն, սկսաւ զգացուիլ անոր հակադարձ ազդեցութիւնը : Գիտութեան գործնական յաջողութիւնները արդէն կը նպաստէին որ յաջորդէ մեծ տեխնիկական յառաջխաղացք մը — Արդիւնաբերական յեղափոխութիւնը : Այսպէս, այս շրջանին էր որ բնական գիտութիւնը իր ճշմարտամային օղակէն անցաւ եւ հասարակութեան արտադրողական ուժերուն մէջ իր որոշ տիրական դիրքը գրաւեց : Պատմութեան մանրակրկիտ ուսումնասիրութեան մէջ այս կէտը կարեւոր է ուշադրութեան արժանի, քան թէ միմիայն տուեալ ժամանակի քաղաքական ու անտեսական դէպքերը, որովհետեւ կապիտալիզմը կը ներկայացնէ հասարակութեան անտեսական էվոլյուցիայի ժամանակաւոր մէկ շրջանը, մինչդեռ գիտութեան դերը մարդկութեան հետ կապուած է անխզելիորէն եւ տւեական է : Եթէ գիտութիւնը կապիտալիզմին նպաստեց եւ դայն տիրապետող դիրքի հասցուց, նոյն գիտութիւնը այսօր, կուզայ յայտարարել որ կապիտալիզմը մարդկային յառաջդիմութեան արդելք է, ժամանակավրէպ ըլլալու սահմանուած եւ անպէտք է :

Գիտական յեղափոխութիւնը .—

Գիտութեան փոխակերպման երեւոյթը գիտական յեղափոխութեան ամբողջ շրջանին, երեք գլխաւոր փուլերէ անցած է : Առաջինը՝ 1440-1540-ին, Վերածնունդի շրջանն է . երկրորդը՝ 1540-1650, կրօնական պատերազմներու շրջանն է . երրորդը՝ 1650-1690, Բարեկարգութեան շրջանն է : Պէտք է ի մտի ունենալ, սակայն, որ իրարու յաջորդող այդ երեք փուլերը զիրար չեն հակասեր, այլ մէկ փոխակերպման 3 տարբեր ձեւերն եղած են, որոնք Ֆէոդալիզմէն սկսեր են ու գացեր են կապիտալիստական անտեսութեան :

Ֆէոդալիզմէն կապիտալիզմի փոխանցման առաջին փուլը այն շրջանն է որ կը գրաւէ Վերածնունդէն Բարեկարգութեան թուականներու միջեւ կատարուած շարժումները, որոնք երկար տարիներ առած են : 12-րդ դարէն սկսած, չուկայի համար գրամական վճարումով ապրանքային արտադրութիւնը գոյութիւն ունէր մի քանի ցրուած քաղաքներու մէջ : Այդ ձեւի առաջին անտեսութիւնը տիրական

դարձաւ Իտալիայէն մինչեւ Վերին Գերմանիա : Այդ շրջանակին մէջ միայն Իտալիան ունեցաւ աւելի մեծ քաղաքներ, ինչպէս Վենետիկը, ձէնովան, Ֆլորէնսն ու Միլանը, որոնք անտեսական ու քաղաքական անկախութեամբ կրցան հիմնել Վերածնունդի արուեստի եւ մտաւորական վերելք մը յատկանշող փայլուն քաղաքակրթութիւն մը : Իտալիոյ մէջ այս փոխակերպումը տեղի ունեցաւ առանց եկեղեցւոյ դպչելու, որովհետեւ Հռոմի Սուրբ Աթոռը Քրիստոնէական աշխարհէն խոչոր նպաստներ կ'ընդունէր եւ անով կը վարձատրէր իրեն հաւատարիմ ծառայողները : Իրերը տարբեր բնոյթ ստացան, երբ շարժումը անցաւ Գերմանիա եւ անկէ՛ հետունքը : Այնտեղ, այդ շարժումը երեւան եկաւ երկու ձիւղով . մէկը՝ ազգային հիմքի վրայ կրօնական անկախութեան ձգտումն էր, որ արտայայտուեցաւ Լուտերական Բարեկարգութեամբ, միւսը այն կատաղի կոսիւն էր, որ արտայայտուեցաւ 1525-26-ի գիւղացիական պատերազմով եւ 1533-ին՝ Վերամկրտչականներու յեղափոխութեամբ : Նման ապստամբութիւններ տեղի ունեցան Հունգարիոյ եւ նոյնիսկ Կաթոլիկ Սպանիոյ մէջ : Ի վերջոյ, երբ բարեկարգութիւնը տարածուեցաւ աւելի հեռուն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի մէջ, շարժումը Կալվինիզմի արմատական բնոյթն առաւ, որով կը ժխտէր եկեղեցւոյ նուիրապետական իշխանութիւնը եւ քաղաքացիական ինչպէս նաեւ եկեղեցական հեղինակութիւնը կուտար զեմոկրատական ընտրեալին :

Վերածնունդն ու Բարեկարգութիւնը միեւնոյն շարժման երկու կերպարներն էին, որոնք կ'ուզէին ընկերային յարաբերութիւնները փոխել, այսինքն՝ հաստատուած ժառանգականութեան գոյսվիճակէն անցնել ապրանքներն ու աշխատուժը գնելու եւ վաճառելու ազատ գրութեան : Գլխաւոր անտեսական գործօն ուժը, որ այդ շարժումը յառաջ կը մղէր, առուտուրի արագ ընդարձակումն էր : Միջին Դարու վերջերը, տեխնիկական զարգացման ներմուծումով՝ զիջուած էին յաւելեալ արտադրութիւնները, մասնաւորապէս երկրագործական եւ հագուստեղէնի ապրանքները . անոնք պէտք էր սպառուէին : Նոյն ատեն այդ յաւելեալ ապրանքները աւելի բազմացան երբ զարգացան առաքման միջոցներն ու նաւարկութիւնը : 15-րդ դարու ամբողջ ընթացքին, առուտուրի գլխաւոր հոսանքը կազմող տարրերն էին պերճանքի ապրանքները, որոնք Արեւելքէն կուզային ու յետոյ Վենետիկի դիմով կ'անցնէին Գերմանիա, ապա Ֆրանսա ու Բրիտանիա : Այդ առուտուրն էր որ այդ շրջաններուն մէջ բացաւ հարստութեան ու մշակոյթի դոնները :

Այսու հանդերձ, նոյն դարու վերջերը, երբ վերջացաւ Վերածնունդի շրջանը, հին ձեւի առուտուրը ենթարկուեցաւ տագնապի մը, որուն մէջ գիտութիւնը կարեւոր դեր խաղցաւ : Հին ու բազմա-

ծախս ցամաքային ճամբաները, որոնցմով շուկաներ հաստատուած էին, կամայ կամայ մոռցուեցան, որովհետեւ նուարկութեան զարգացումով աւելի կարճ ու աւելի աժան ճամբաներ երևան եկան դէպի աներևակայելի նոր շուկաները: Այս շարժման ամենէն հոյակապ արդիւնքն էր նոր Աշխարհի՝ Ամերիկայի գիւտը, բայց անմիջակա- նօրէն աւելի կարեւորն էր փորթուգալցիներու կողմէ ասիական ծովային առևտրական ճամբու գրաւումը եւ Պալիպիէան երկիրներու եւ Ռուսաստանի արագ զարգացումը: Առևտրական ճամբաներու այս գիրքի փոփոխութիւնը եկաւ փոխել Եւրոպայի ամբողջ տնտեսական հաւասարակշռութիւնը: Իտալիոյ եւ Վերին Գերմանիոյ աուուտուրը արմատախիլ եղաւ, որով անոնք կորսնցուցին իրենց քաղաքական ու տնտեսական գիրքերը, թէև անոնց մշակութային ազդեցութիւնը այնուհետեւ երկար ատեն շարունակուեցաւ: Անոնց տեղն անցան ծովային երկիրները — Փորթուգալն ու Սպանիան, ապա՝ Հոլանտան ու Բրիտանիան:

Ծովային աուուտուրի շահերէն առաջին առիթով կարելի եղաւ հոսուն կապիտալի կուտակումը. այսինքն՝ այն կապիտալը որ շահարկութեան դրուելու էր ո՛չ միայն ցամաքի մէջ, այլև արտադրողական ձեռնարկութեանց մէջ: Առաւել եւ առաւել շահու անյազ ցանկութիւնը առաջնորդեց նաւաշինութեան եւ նաւարկութեան արագ զարգացումին, ուրիշ յառաջացաւ արդիտական զետուծեան ծրնունդը: Փոխան Ֆէոդալական ձևի զօրահաւաքի, վճարովի դիւուորներ պահելով կարելի էր պատերազմները աւելի երկար շարունակել, բայց ատիկա աւելի սուղի կը նստէր. պէտք է գէնքերը զարգացնել. ասիկ յառաջացաւ արծաթի ու ոսկիի փոխարէն անագապղինձի եւ երկաթի պահանջը: Ծագիկեցաւ հանքագործութիւնն ու մետաղագործութիւնը. արտադրուեցաւ մեծ քանակութեամբ վաւօղ եւ ժողովուրդը գինովցնող սպելից բմպելիքները:

Այս ամբողջ շրջանը տնտեսական ընդարձակման շրջան էր: Եւրոպայի ամէն մէկ մասին մէջ ոչ միայն ճարտարարուեստական՝ այլև երկրագործական արտադրութիւնը կ'աճէր հսկայ համեմատութեամբ: Ամենուրեք կար աւելի, ցորեն, աւելի արջառ, աւելի ձուկ: Անշուշտ սխալ է այդ բանը վերագրել տեխնիկական յառաջգիժմութեան, քանի որ գիտենք թէ ան արդիւնքն էր բազմաթիւ տարբեր զարգացումներու կուտակումին, որուն կ'ընկերանար առևտուրի նոր խողովակներու մէջէն նոր տեսակի զարգացումներու ծաւալումը: Միակ արմատական եւ կարեւոր տեխնիկական յառաջգիժմութիւնը, զոր կ'արժէ յիշատակել ու շեշտել, տպագրութիւնն է: Տպագրութիւնը ապրանքային արտադրողութիւնը շաւելցուց, բայց ան գիտութիւնն ու գրականութիւնը խից կրօնական դասակարգի ձեռ-

քէն — ինչպէս նշեցինք մեր ուսումնասիրութեան Ա. հատորին մէջ — եւ տուաւ ժողովուրդին, ասով տեխնիկական յառաջգիժմութիւնը գիրքերու միջոցով արագօրէն ծաւալեցաւ. անոր հետ ընդհանրացան գիտական ծանօթութիւններն ու նոր գաղափարները:

Հարցին մարդկայնական կողմը եւ գաղափարները.—

Եթէ Վերածնունդը միմիայն նշէր աստիճանական կամ նոյնիսկ արագ զարգացումը տնտեսական պայմաններուն, անիկա աշխարհի պատմութեան մէջ տեղ մը չէր կրնար գրաւել, ինչ որ գրաւած է այսօր: Վերածնունդը կարելի է ըսել թէ գիտակցական շարժում մըն էր, յեղափոխական շարժում մը, որ կարեւորութիւն տուաւ գիտութեան, արուեստին ու քաղաքական կեանքին: Ասոր մտաւորական կողմը բնորոշողներն եղած են այն փոքրաթիւ՝ բայց գիտակից ուսումնականներն ու արուեստագէտները, որոնք որպէս ընդգիժմագիրներ միջնադարեան կեանքի բոլոր ձևերուն, աշխատեցան ստեղծել նոր ձև մը կարելի եղածին չափ մօտիկ՝ դասական հնութեան: Անոնք շուղեցին Հիներուն նայիլ աւանդութեանց երկար շղթային մէջէն, անոնք չի հետաքրքրուեցան արարներու եւ դպրատպաներու գործերով, այլ փորձեցին ուղղակի հին օրինակներէրու ծալքերը: Այդ կը նշանակէր թէ անոնք ո՛չ միայն ուսումնասիրեցին յոյն իմաստասէրներէն Պլատոնն ու Արիստոտէլը, այլև Դեմոկրիտէսն ու Արքիմէտէսը:

Մարդկայնական — հիմանիստական — շարժումը արգարեւ նախ սկսաւ Իտալիոյ մէջ 14-րդ դարու սկիզբին Փեթրարքայի եւ Պոքաչիոյի երևումով: Այն՝ ինչ որ անոնք կը դնահատէին հին դասական գործերու մէջ, անոնց արտայայտութեան զեղեցկութիւնն էր, զգացումի այնուականութիւնը, քան թէ ձկուն տրամարանութիւնը: Հիմանիստական այդ շարժումը տարածուեցաւ յետոյ՝ 16-րդ դարուն Ֆրանսայի եւ Հիւսիսային Եւրոպայի մէջ եւ առաւ տեսակ մը կրօնական երանգ: Ամէն տեղ ան կը ժխտէր մասնաւորապէս նուիրապետութեան կապուած Ֆէոդալական գաղափարները եւ աւելի կը հակէր հասարակութեան աշխարհական կեցուածքին: Ան չէր ժխտէր անձնական կրօնի խորհրդաւորութիւնը, միայն աւելի կը շեշտէր անձնական կրօնի կարիքը, որուն մէջ եկեղեցւոյ միջամտութիւնը այնքան կարեւոր չէր: Անհատի պաշտամունքը, առաքինութեան սէրը, առնական անկախութեան հին հոովմէական իմաստը, ասոնք եղան իտէալներ, որոնց նուիրուելու էր մարդ անհատը:

Բողոքական երկիրներու մէջ յայտարարուեցաւ անհատական դատումի իրաւունքը: Այնտեղերը, հիմանիստները Աւետարանը յոյն եւ հրեայ բնագիրներէն թարգմանեցին իրենց տոհմիկ լեզուներ-

րով եւ անոր տունն հեղինակութիւն մը, որ կը տարբերէր Սր. Պետրոսի յաջորդներու արտայայտութիւններէն: Ասոնք բոլորը որպէս բարոյագիտական սխառմ՝ կը յարմարէին վաճառական դասակարգին: Կաթոլիկ եկեղեցին նոյնիսկ՝ ստիպուած էր տեսակ մը բարեկարգութիւն ներմուծել իր միջնադարեան անցեալի շարունակութեան օղակներուն մէջ:

Հանոյք, արուեստ եւ դրամ.—

Թէ՛ Կաթոլիկէ եւ թէ՛ Բողոքական երկիրներու մէջ վերածընունդը եկաւ քանդելու մի քանի կամուրջներ, որոնք կապուած էին անցեալին հետ: Անոնցմէ շատերը անխուսափելիօրէն կանգուն մնացին, բայց նոր ուղղութիւն մը երեւան եկած էր, որ կ'անհետացնէր շէնքերու կառուցման, արուեստի ու մտածողութեան եւ տնտեսութեան միջնադարեան ձեւերը եւ անոնց տեղը կ'անցնէր նոր մշակոյթ մը. իր տնտեսութեան մէջ կը գնէր կապիտալիստական տնտեսութիւնը, իր արուեստի ու գրականութեան մէջ կը ներմուծէր նոր տեսակի դասական ձեւ մը, իսկ բնութեան մօտեցման գիծը կը յանձնէր գիտական ճիւղին:

Վերածնունդը խոտլայոյց բայց յուսալից չըջան մըն էր երբ դայն բազմատեսնք վերջընթեր դարաշրջանին, որ յուսահատական էր եւ անոր յաջորդող դարաշրջաններուն, ուր հաւատքը այլևս կը հրաժարէր մարդոցմէն: Ապագայ կեանքի մասին մարդիկ շատ քիչ կը մտածէին, բոլորին մտածումը կեդրոնացեր էր ներկայի շուրջ, մտածում մը, որ կ'արտայայտուէր աշխարհիկ արուեստներու արագ աճումով, ինչպէս էր նկարչութիւնը, բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը: Արտայայտութեան ամէն մէկ ձեւին մէջ կար նոր ու համարձակ փափաք մը՝ Ֆիզիքական հաճոյքի: Այս շրջանի մեծ մարդարէն էր Տր. Ֆրանսուա Բարէլէս (1490—1553) որ իր Տէլէմայի Աբրայի համար նշանաբան ընտրեց իտալական հասարակարգ մը.— «Ըրէ ինչ որ կը սիրես...»: Այդպիսի հասարակութեան մէջ ժողովուրդը պիտի ապրէր ազատօրէն եւ պիտի մտածէր վտանգաւոր եղանակով: Իրապէս շատ քիչերը կրնային այդպէս ընել, որովհետեւ այդ նոր կեանքը մեծածախս էր եւ կանխավճար կը պահանջէր: Դրամը շատ աւելի կարեւոր դարձեր էր քան ինչ որ տաաջները: Որպէս բնական հետեւանք՝ դրամ շահելու եղանակն ալ ենթարկուած էր փոփոխութեան: Որեւէ միջոց, որ դրամ կը հայթայթէր լաւ էր, հոգ չէր թէ ան պարկեշտ մանուֆակտուրայի գործ էր կամ առուտուր, եւ կամ նոր շահաւէտ աղբիւր մը բանալը, ինչպէս հանքագործութիւնը, օտարականները կողոպտելը եւ կամ տոկոսով դրամական փոխառութիւնը: Եկեղեցին կրնար առարկել ասոնց հա-

մար, բայց եթէ ան իր առարկութիւնները չեշտէր, ասով կը վնասուէր եկեղեցին, ինչպէս այդ բանը ցոյց տուաւ Բարեկարգութիւնը: Նոյնիսկ կախարգութիւնը, որպէս հարստութեան եւ զօրութեան միջոց, նոր շահագրգռութիւն ստացեր էր, ինչպէս կը տեսնենք Յաուստի վէպին մէջ: Արդարեւ բնական կախարգութիւնը դժուարաւ կը զանազանուէր գիտութենէն:

Զեռագործ վարպետը կը միանայ ուսումնականին.—

Որովհետեւ ամենէն էական բանը դրամ ձեռք ձգելն ու ծախսելն էր, տեխնիկայի տիրացած մարդիկն ու արուեստագէտները այլևս այնքան չէին արհամարհուէր ինչքան կ'արհամարհուէին միջնադարեան ժամանակները: Զարգարանքի ու ցուցադրութեան համար զարգացող արուեստները, ինչպէս նկարչութիւնը, արձանագործութիւնն ու ճարտարապետութիւնը, ծագկեցան ու զարգացան նուազ հոյակապ՝ բայց աւելի ինքնատիպ՝ քան դասական ժամանակներու արուեստները: Ինչ որ իրապէս նոր էր, այն էր որ արտասովոր արժէք ու յարգանք կը տրուէր գործնական արուեստներուն, ինչպէս՝ մանելը, հիւսելը, կուաշինութիւնը, ապակեշինութիւնը եւ ամենէն աւելի այն արուեստները, որոնք կրկնակի կերպով կը նպաստէին հարստութեան կուտակման եւ պատերազմին ասոնք էին հանքագործութիւնն ու մետաղագործութիւնը: Ահա թէ ինչո՞ւ հանքագործներն ու մետաղագործները այլևս այնքան արհամարհուած մարդիկ չէին, անոնք այլևս դերի չէին, ինչպէս էին Միջին Դարուն, այլ ազատ մարդիկ, որոնք նոր հասարակութեան իշխաններու միջոցով ստրկական դրութենէն փոխադրուած էին ընկերային ու տնտեսական ազատութեան վիճակին: Միջնադարեան Ֆլորէնսի մէջ, օրինակի համար, արուեստագէտները ենթարկուած էին բժիշկներու եւ համեմունք վաճառողներու համաքարութեան (guild), արձանագործները աւելի ցած աստիճանի վրայ էին քան որմնագիրները: 16-րդ դարուն, սակայն, անհատ նկարիչներն ու արձանագործները կրնային հրամայել պապերուն ու թագաւորներուն, թէ եւ յաճախ դժուարաւ կը ստանային իրենց գործերուն վարձատրութիւնը: Այսպէս, վարպետ արուեստագէտներու ազատագրութիւնը նորոգեց այն կոտորած օղակը, որ գոյութիւն ունէր կանխագոյն քաղաքակրթութեան շրջանին՝ ձեռագործ վարպետներու եւ ուսումնականներու միջեւ: Ասոնք երկուքն ալ մեծապէս նպաստեցին Վերածնունդին: Զեռագործական վարպետները դասական հին տեխնիկայի վրայ աւելցուցին նորութիւններ. ուսումնականները յունական փիլիսոփայութեան վրայ աւելցուցին համաշխարհային նոր տեսութիւններ ու նոր դազափարներ: Այս երկուքին միացումէն յետոյ՝ այլևս կարելի չէր արգիլել

այն բազմաթիւներ, ուրիշ պիտի յառաջանար պայթում մը: Վերածնունդի մտաւորական գործն էր՝ համաշխարհային արուեստի եւ ընտելեան տիրապետելու գործը հականօրէն վերստուգումի ենթարկել:

Աշխարհի քննութիւնը .—

Վերածնունդի շրջանը լեցուն է նկարագրական գործերով, որոնք կը բովանդակեն մարդկային փորձառութեան ամբողջական գետինը: Անոր հետախուզութեան ծաւալը կ'երեւի գործունէութեանց մէջ այն մարդուն՝ որ ինքնին հաւաքական ներկայացուցիչն է այդ դարաշրջանի նորութեանց. այդ մարդն է Լէոնարտո տա Վինչի: Անոր երկու կարեւոր գործերը եկան յայտարարել որ արեւը երկնային հաստատութեանց կեդրոնն է: Լէոնարտո տա Վինչի (1452-1519) ո՛չ միայն տիեզերական մեծ էնթինէր էր, այլեւ գիտնական ու հանճարեղ արուեստագէտ, նկարիչ եւ արձանագործ. արաստուգոր կարողութեանց հաւաքականութիւն մը: Անոր ժամանակակից էր Կոպերնիկոս (1473-1543) որ աւելի հիմնաւորեց Լէոնարտո տա Վինչիի երկնաբանական տեսութիւնները: Ասոնց հետ պէտք է յիշատակել անունը այն մարդուն՝ Վէսալիուսի (1480-1548) որ տիեզերական մարմիններէն հեռանալով առաւ մարդկային մարմինը, մարդուն Ֆիզիքական կազմախօսութիւնը: Կոպերնիկոսի եւ այս վերջին հեղինակին գործերը հրատարակուեցան 1543-ին: Ասոնք էին այն մարդերը, որոնք առաջին պատկերը ներկայացուցին թէ ի՞նչպէս երկնային մարմինները կեցեր են տիեզերքի մէջ եւ թէ ի՞նչպէս կազմուած է մարդկային մարմինը, անկէ յետոյ մարդիկը նայեցան արեւուն, երկրին ու ինքզինքնուն: Կազմուեցաւ աշխարհիկ տեսութեամբ հասարակութեան խաւը: Անկէ վերջն էր որ այս տեսութեանց քաղաքական հետեւանքները երեւան եկան, որոնցմէ վախցան իշխանութիւնները: Անոնք փորձեցին կափարիչ գնել բոլորին, բայց ուշ էր:

Արուեստի ու ընտելեան գանազան մարդերուն վրայ ուրիշներու մեծ գործերը եւս եկան ընդարձակելու մարդոց ծանօթութեան հորիզոնը ո՛չ միայն հանճարներու եւ մետաղներու շուրջ, այլեւ անոնց տարրեր ձեւերով գործածութեանց շուրջ: Վերջերը, երեւցան այնպիսի գիրքեր՝ ինչպէս Կէսնըրի (1516-65) Բոնդլէտի (1507-66) եւ Բէլլոնի (1517-64) հիանալի ուսումնասիրութիւնները հին ու նոր աշխարհներու կենդանիներու եւ բոյսերու մասին, որոնք նպաստեցին կենդանաբուժութեան եւ պտղաբուժութեան ու բանջարեղէնի մշակութեան: Ասոնց վրայ պէտք է աւելցնել նոր երկիրներու հետախուզութեան համար թիւղաբիւր բազմաթիւ գիրքերը, որոնց մէջ յի-

շատակութեան արժանի է Ամերիկո Վէսպուչիի նամակները հրատարակուած 1504-ին:

Երկու բառ այս մարդու մասին:

Ամերիկո Վէսպուչի (1451-1512) Իտալացի նաւարկու էր, որ 1499-ին հասաւ Ամերիկա եւ աւելի քան 900 մղոն երկարութեամբ ծովեզերքի հետախուզութեամբ զբաղեցաւ եւ վերադարձաւ Սպանիա: Իր անունով նոր գտնուած ցամաքամասը կոչուեցաւ Ամերիկա:

Ամերիկո Վէսպուչիի հետ յիշատակենք նաեւ Մակէլլանի անունը, անունը փորթուգալցի այն նաւարկուին (1480-1521) որ աշխարհի շուրջ ճամբորդութիւն կատարեց 1519-ին եւ 1921-ին սպանուեցաւ Ֆիլիպեաններու մէջ:

Երրորդ անուանի նաւարկուն Քրիստոֆօրը Քոլումպոս, (1436-1506) որ 1492-ին հասաւ Ամերիկա:

Կը տեսնենք թէ նոյն տարիներուն մէջ տեղի ունեցան այս կարեւոր ցամաքային հետախուզութիւնները, եթէ չլինէնք Վասքոտէկամայի 1497-ին Բարեյուսոյ Գլուխի վրայով Հնդկաստան հասնելը, կամ Փարոտի 1497-ին, Հիւսիսայի Ամերիկայի խուզարկութիւնը:

Նորածին կապիտալիզմն էր որ իր սողալու շրջանը աւարտելէ յետոյ սկսեք էր քալել՝ իր նայուածքը ուղղելով դէպի հեռաւոր հորիզոնները:

Գիտական յեղափոխութեան առաջին շրջանը սկսաւ նկարագրական եւ քննադատական գիծով. անոր կառուցողական գործը վերջէն պիտի սկսէր երբ կրօնական խոչնդոտները մաքրուէին իր ճամբայէն:

Արուեստ, բնութիւն եւ դեղ-բժշկութիւն .—

Վերածնունդի յատկանշական գիծն այն էր որ ան եկաւ կրաւորական եւ կղզիացած խոկումը փոխարինել ձեռագործական արուեստի տեսանկիւ բարձրացումով. ճիշդ է որ Միջին Գարուն ծաղկած էր նկարչութիւնը, արձանագործութիւնը, ճարտարապետութիւնն ու կրթչառութիւնը: Բայց անոնք տեխնիկական եւ դասական ժամանակներու փոխանցման միջնորդներ էին, մասնաւորապէս քիմիագիտութեան ու մետաղագործութեան միջնորդները: Անոնք ձեռագործ արհեստաւորներու եւ վանականներու գործերն էին որոնք թէ՛ որպէս միջոց՝ եւ թէ՛ որպէս նպատակ, կը ծառայէին եկեղեցիին եւ նուազագոյն չափով ալ՝ ասպետականութեան:

Վերածնունդի ատեն, արուեստի, ընկերային եւ անտեսական կարեւորութիւնը, սակայն, տարրեր էր: Արուեստները իրենց միատեսակութենէն դուրս եկան եւ առաջին անգամ ըլլալով անոնք իրենք իրենցմով արժէք ստացան: Արուեստագէտները սկսան ծառա-

յիւ վաճառական իշխաններուն, ուր որ կը ծաղկէին անոնք. առաջին անգամ Իտալիոյ մէջ, յետոյ Բուրկոնտիի, Չլէնտրրսի եւ Վերին Գերմանիոյ մէջ: Հարուստի նոր կեանքը պատկերացնող տպււորիչ եւ աչքառու ձեւերու անսահման պահանջ կար: Ասոր հետ երեւան եկան արուեստի օրինազիրքեր, եւ Իտալիոյ շատ մը քաղաքներու մէջ հիմնուեցան արուեստանոցներ, նոյն ատեն՝ համալսարաններ ու փորձակայաններ: Արուեստը ինքնին՝ աւանդական ըլլալէ չզտազրելով եղաւ խորապէս գիտակցական եւ գիտական: Արուեստագէտները իրենք իրենց նոր հարցեր հարուցին եւ սկսան որոնել անոնց նիւթական եւ մտաւորական լուծումը: Պատմութեան մէջ ո՛չ մէկ ատեն տեսողական արուեստները այնքան խոր ազդեցութիւն ըրած են գիտութեան զարգացման վրայ, որքան Վերածնունդի շրջանին. ասոր համար կրնանք ըսել թէ՛ գիտութեան պատմութեան մէջ փոխակերպումը պատահական չէր, այլ արդիւնքն էր իրերու զարգացման ընթացքին:

Վերածնունդը եւ դեղն ու բժշկութիւնը .—

Այստեղ, պէտք է նշել որ Վերածնունդը շատ մեծ ծառայութիւն մատոյց սաղմնարանական ուսումնասիրութեան, որ կեղրոնական առանցքը կը կազմէր բժշկական գիտութեան: Իտալական համալսարաններու բժշկական կաճառները, բացառելով իրենց ամբլութիւնն ու գիտարկութիւնը, մեծ հռչակ ունէին: Մասնաւորապէս Փատուայի համալսարանին մէջ, բժշկական կաճառը մեծ համբաւ ունէր իր փայլուն մտաւորականներով: Ան ո՛չ միայն նպաստեց բժշկական փորձառութեան, որովհետեւ դարերով քիմիարանութիւնն ու սաղմնարանութիւնը աննկատ առնուած էին, այլ առաւելապէս օգնեց բնական գիտութեան զարգացումին:

Իտալացի բժիշկներն ու բազմաթիւ օտար ուսանողներ, որոնք հոն կուզային բժշկութիւն ուսանելու, կղզիացած չէին մնար: Անոնք ազատ կերպով կը խառնուէին արուեստագէտներու, մատեմատիկոսներու, աստղագէտներու եւ էնժինէրներու հետ: Անոնցմէ ստացուած ծանօթութեանց բնկերակցութեամբ զարգացաւ անգամազննութիւնը, բնագիտութիւնը եւ արտարանութիւնը:

Վերածնունդն ու արուեստագիտութիւնը .—

Վերածնունդի արուեստագիտութեան հսկայական յառաջդիմութիւնը օղակուած է հանքագործութեան, մետաղագործութեան եւ քիմիարանութեան զաշտերուն հետ: Մետաղի կարիքը պատճառ եղաւ որ արագ կերպով բացուին հանքեր. նախ՝ Կեղրոնական Գերմանիոյ, ապա՝ Ամերիկայի մէջ: Գերմանական հանքերը կապիտալիստական

արտագործութեան անկարանները զարձան: Միջին Գարուն, հանքեր գործածութեան գրուած էին, բայց անոնք «ազատ հանքագործներով» յառաջ կը տարուէին թագաւորի կամ իշխանի պաշտպանութեան տակ: 15-րդ դարուն հանքագործութիւնը անցաւ բնկերութեանց ձեռքը, որոնք վարձուած մասնագէտներու օժանդակութեամբ զայն զարգացուցին ու անոր գործառնութեան շրջանակը աւելի եւ աւելի ընդարձակեցին: Ասկէ յառաջացան գիտական եւ ճարտարարուեստական յեղափոխութիւնները: Գերմանիան հանքագործութեան մէջ առաջինն էր, բայց կրօնական պատերազմները քայքայեցին անոր անտեսութիւնը: Փորձառութեանց տիրացած մասնագէտ հանքագործները անցան Սպանիա, ուրիշներ՝ գաղթեցին Ամերիկա, իսկ ամենէն կարեւորները՝ մտան Անգլիա, ուր անոնք հիմերը դրին բրիտանական ապագայ հարստութեան:

Մետաղագործութիւնն ու քիմիագիտութիւնը .—

Մետաղները հալեցնելը քիմիագիտութեան իրական դպրոցն էր: Հայնստարած հանքագործութիւնը կոչուած էր լոյս աշխարհ բերել նոր հանքեր եւ նոյնիսկ նոր տեսակի մետաղներ ինչպէս զինկը, բիսմութը, քոպալտը, քոլմարնիքը: Ասոնք բաժնելու եւ գործածելու համար հարկաւոր էր ոչ միայն դառն փորձառութիւն, այլև քիմիագիտական ծանօթութիւն, կշռադատ հաշուառում, ներառեալ օգսիտացում, վերածում, թորում եւ բազազրում: Մետաղազննութեան համար հարկաւոր էր ունենալ քիմիագիտական փորձառութիւն ու վերլուծում:

Մետաղագործութեան ատեն յաճախ կը պատահէր որ դտնուած նոր մետաղեայ նիւթը լաւ կամ գէշ ներգործութիւն կ'ընէր գործողի Ֆիզիքականին վրայ: Ասկէ սկսաւ մետաղեայ բազազրութեանց գործածութիւնը բժշկութեան մէջ: Չառիկը, օրինակի համար՝ հանքագործական շրջաններու մէջ կիները սկսան գործածել իրենց մորթը փափկացնելու համար: Մասնաւորապէս վճռական դեր կատարեց սնդիկի գործածութիւնը Փրանկախտի բուժման մէջ:

Նաւարկութիւն եւ աստղագիտութիւն .—

Մետաղագործութեան եւ հանքագործութեան մէջ տեխնիկայի զարգացումը շատ քիչ բան պարտական է գիտութեան, թէև ասոնք գիտութեան խուզարկութեան համար շատ հող պատրաստեք են: Խնդիրը կը տարբերի երբ մենք նկատի առնենք այն մեծ ճամբորդութիւնները, որոնք ամբողջ աշխարհի դռները բացին եւրոպական կապիտալիստական ձեռնարկութեանց համար: Ասոնք աստղագիտական եւ աշխարհագրական գիտութեան գիտակից գործարկումի

առաջին պտուղներն էին, որոնք կոչուած էին ծառայելու տիրոջ գասակարգի փառքին ու շահին:

Այս մեծ նաւարկութեանց տնտեսական արդիւնքները անմիջական էին ու տեւական: Բաց ծովու կարճ ճամբաները հսկայական շահեր ապահովեցին փորթուղացիներուն, երբ անդին վեներտիկցիները սկսան տկարանալ: Ի վերջոյ, Ամերիկայի մէջ գերիներու աշխատանքով շաքարեղէզի եւ ծխախոտի անկարկումով եւ հանքերու շահագործումով աւելի խոշոր եւ աւելի կայուն եկամուտներ ապահովուեցաւ Սպանիոյ եւ ուրիշ գաղութարար իշխանութեանց համար: Բայց Սպանիան տնտեսապէս յետամնաց երկիր մը ըլլալով իր գիրքը հաստատուն չկրցաւ պահել եւ հանքերու շահագործման հետ առուտուն ալ անցաւ օտարներու ձեռքը: Հոլանտան եւ Բրիտանիան առաջ անցան, Սպանիան ընկճուեցաւ:

Այս իրադարձութիւնները գիտութեան վրայ վճռական դեր խաղացին: Կանխագոյն չըջանի ճամբորդութիւնները իրենց յաջողութեամբ՝ ստեղծեցին նաւաշինութեան եւ նաւարկութեան հսկայական պահանջ: Ասով երեւան եկաւ մտաւորական նոր դասակարգ մը, որուն անդամներն էին կրթուած մտեմատիկոսներ, մարդիկ՝ որ կրնային դործածել կողմնացոյցը, աշխարհագրական քարտէզը եւ կարող էին շինել նաւարկութեան համար անհրաժեշտ գործիքներ: Գիտութեան դռները բացուեցան ժողովուրդին առջեւ: Պահանջ կար աճէն դասակարգի պատկանող աշխոյժ եւ խելացի երիտասարդներու, որոնք կը յօժարէին մտնել նաւարկութեան ծառայութեան մէջ: Նաւարկութեան մարզանքի համար դպրոցներ բացուեցան Փորթուգալի, Սպանիոյ, Անգլիոյ, Հոլանտայի եւ Ֆրանսայի մէջ: Բացուած էր նոր ու անասման ասպարէզ մը ուր պիտի մանէին գիտութեան սիրահարներու հետ՝ բախտախնդիրներն ալ:

ԵՐԿՐՈՐԿ ՓՈՒԼԸ . ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ — 1540-1690

Այս շրջանը որ կը սկսի 1540-էն մինչեւ 1690, պատմութեան մէջ որոշ անուն չունի: Ան առհասարակ կոչուած է Հակա-Վերածնունդի շրջան. բայց մենք զայն ամբողջապէս յետադիմական չենք կրնար նրկատել: Այս շրջանին տեղի ունեցան կրօնական պատերազմներ Ֆրանսայի մէջ (1560-98), Ստորին Նահանգներու մէջ (1572-1609) եւ Գերմանիոյ մէջ (1618-48): Այս շրջանին էր, նոյնպէս, որ հաստատուեցաւ 1576-ին, Հոլանտայի Ընդհանուր Նահանգներու Միութիւնը եւ 1649-ին Անգլիոյ Հասարակագիտութիւնը: Այս վերջին երկուքը ամենամեծ կարեւորութիւն ունեցող իրողութիւններ էին, որովհետեւ

անոնք կը նշէին նորելուկ բուրժուադիայի քաղաքական յաղթանակը այդ երկու երկիրներու մէջ, ուր կեդրոնացեր էր աշխարհի առուտուն ու մանուֆակտուրայի շահաւէտ գործը:

Այս շրջանին գիտական մարզին վրայ տարուած յաղթանակները կատարուեցան գիտարկական ու փորձառական մօտեցումներով: Հրնարուեցան հեռագրատակը եւ մանրագրատակը. մէկը երկնային մարմինները զննելու, միւսը՝ մարդկային մարմինը:

Որչափ որ հակա-բարեկարգութեան շարժումը յաջողած էր արդիւնէլ Բողոքականութեան տարածումը Եւրոպայի մէջ, ան նոյն ազդեցութիւնը չունեցաւ գիտութեան վրայ: Ժիզուէիթները, որոնք այդ շարժումը կը ղեկավարէին, խոհեմութիւնն ունեցաւ համոզուելու որ մարդոց հոգիները գրաւելու համար աւելի լաւ է գիտութեան սատարել՝ քան թէ անոր առջեւ խոչընդոտներ յարուցել: Ասոր համար անոնք մտան գիտական շարժման մէջ, մասնաւորապէս նոր աստղագիտութեան մէջ, եւ նոյնիսկ գործակալները դարձան անոր տարածումին, եւ նոր գիտարաններ հաստատեցին Հնդկաստանի, Չինաստանի եւ Ճարոնի մէջ: Բայց նոյն ատեն անոնք շանտեսեցին իրենց պահակի պաշտօնը, որպէսզի գիտութիւնը որեւէ չեղումով չվնասէ կրօնքին: Ասով անոնք պատահութիւն տուին որ բողոքական գիտնականները եւս իրենց հսկողութենէն դուրս՝ նուիրուին գիտութեան:

Յիշենք գիտութեան դարդացման նպաստող մի քանի մեծ մարդոց անունները, որոնք պատմութեան մէջ որոշ տեղ գրաւած են:

Առաջին առիթով յիշենք Ճիւրտանօ Բրունոյի անունը (1548-1600): Անիկա աւելի փիլիսոփայ կոչուած է քան թէ գիտնական. իր յանդուզն արտայայտութեանց համար որպէս հերետիկոս՝ ողջ ողջ այրուեցաւ հաւատաքննութեան ատենի խարոյկին վրայ:

Քէփլէր (1571-1630) բողոքական գիտնական եւ աստղագէտ, որ կրցաւ բացատրել խաւարումներու շրջանառութիւնները:

Կալիլիօ (1564-1642)՝ համոզուած Կոպեռնիկոսեան մը, որ ասպացուցեց որ երկիր մոլորակը իր առանցքին վրայ կը դառնայ, եւ նոյն ատեն կը դառնայ արեւուն բոլորտիքը, իսկ Լուսինը որպէս արբանեակ կը դառնայ երկրի բոլորտիքը: Կալիլիօ նոյնպէս որպէս հերետիկոս պիտի այրուէր խարոյկի վրայ, բայց ազատուեցաւ, որովհետեւ անուանի մարդ էր եւ մեծ պաշտպաններ ունէր:

Վիլիբրմ Հարվէյ (1578-1657) մարդակազմութեան եւ բնախօսութեան ճիւղերու հետախուզող գիտնական, որ մարդու մարմնոյն մէջ արեան շարժումներուն մեքենական բացատրութիւնը կրցաւ տալ: Ան ասպացուցանեց որ ինչպէս Արեւը տիեզերքի կենդանութեան ակն է, նոյնն է սիրտը մարդկային մարմինին մէջ: Արիւնը անկէ կ'ելլէ, շրջան կ'ընէ մարդու մարմինին բոլոր կողմերը եւ կը դառնայ ղէպի

սիրտը: Սիրտը երկու մասի կը բաժնուի. աջ եւ ձախ սիրտ: Արիւնը մէկ կողմէն կ'ըլլէ ու կը վերագառնայ միւս կողմը: Բայց ան չկըրցաւ տեսնել թէ այդ շարժումը ինչպէս տեղի կ'ունենար: Մալպիգիէն էր որ (1628-94) եկաւ հաստատել թէ արիւնը մաղերակներու միջոցով էր որ շրջան կ'ընէր: Այս երկու գիտնականները եկան փաստել որ մարդուս մարմնոյ շարժումները զուտ մեքենական են եւ հոն չկայ խորհրդաւոր, անտեսանելի հոգի մը, որ կը ղեկավարէ ամէն ինչ:

Ֆրանսիս Փեքոն (1561-1626). — Անգլիացի պետական մարդ եւ փիլիսոփայ: Իր փիլիսոփայութեան մէջ կը գործածէր տրամաբանութեան մակածական մեթոտը: Ան կը ջատագովէր արուեստներու զարգացման միջոցները, բայց նոյն ատեն կ'ընդունէր թէ երկրի զբոսաբուծութիւնները չեն յառաջանար հին մտածողութենէն, այլ Անգլիոյ մէջ բարեկարգութեան շարժման ընկերացող մտահայեցողութեան քառնէն:

Դէկարտ-Ռընէ. — (1596-1650) Ֆրանսացի նշանաւոր փիլիսոփայ, որ իր տրամաբանութեան մէջ կը գործածէ հետեւողական մեթոտը: Հանդէս եկաւ միջնադարեան փիլիսոփայութեան դէմ: Կ'ընդունէր երկու ինքնուրոյն, իրարմէ անկախ սկզբունք. մտածողութեան եւ նիւթական գոյացութիւն: Իմացական տեսութեան մէջ Դէկարտ բանապաշտ է, բնախօսութեան մէջ մեխանիկական մատերիալիստ:

Ֆրանսիս Բեքոն հինի պաշտամունքով եւ նոր արուեստներով թագաւորական հասարակութիւն կ'ուզէր կազմել, Դէկարտ, ընդհակառակը՝ կ'ուզէր որ գիտնականները բոլորովին ազատ ըլլան կրօնական միջամտութիւններէն:

Այս գիտնականներն ու փիլիսոփաներն էին որ անտեսական զարգացող գործօններու հետ հող պատրաստեցին Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան համար:

Իմացական կողմը ներկայացնելէն յետոյ՝ այժմ համառօտակի պատկերացնենք նոյն շրջանի անտեսական կողմը:

Այդ դարու անտեսութեան տիրական տարրերն էին նաւարկութեանց կուտակած պտուղները, որոնց մէջ մտած է Եւրոպայի հին ներքին առուտուրը: Մեծապէս բարձրացեր էին ապրանքներու գիները ամերիկեան արծաթի ներհոսումով: Արեւմտեան Եւրոպայի, մասնաւորապէս Հոլանտայի եւ Անգլիոյ Ֆէոդալական հողատիրութեան քայքայումով շուկայ նետուած էին հողագուրկ ժողովրդական գանգուածներ. վարձու բանուորներու աշխատավարձերը դէռ կերպով կտրատուած էին: Ասով երբ արտադրութիւններու համար ծախսը կը պակսէր եւ միւս կողմէ աժան աշխատուժը կ'աւելնար, մանուֆակտուրայի տէրերը եւ առեւտրականները, որոնք ծովային առեւտուրի

ճամբաներու վրայ էին, աւելի հարստութիւն կը կուտակէին: Պատերազմներն ու առուտուրի ճամբաներու փոփոխութիւնը աւերեցին գերման անտեսութիւնը, որ ամենէն յառաջըլժականն էր Եւրոպայի մէջ ժՁ. դարու կանխագոյն շրջանին:

Տնտեսական յեղափոխութեան այս երկրորդ փուլին մէջ շարժող ուղիներն ու ամենէն աւելի շահողներն էին Հոլանտայի եւ Անգլիոյ վաճառականները: Բայց պէտք է ըսել թէ այս երկու երկիրներու գերաճող բնակչութեան համար կարիք կար եղիպտացորենի, իսկ իրենց պիղկէսին համար անհրաժեշտ էր վուշ, ատաղձ, կուպր եւ երկաթ: Եւ որովհետեւ անոնք կը ստացուէին Տանիմարքայէն, Շուէտէն, Լեհաստանէն եւ Ռուսիայէն, ասոնց անտեսական զարգացումն ալ խրթանուեցաւ եւ անոնք ալ իրենց կարգին եղան անկախ պետութիւններ:

Տեխնիկայի զարգացումը. —

Տեխնիկական տեսակէտով այս դարը յարատեւ յառաջխաղացքի ու գործունէութեան մէջ էր առանց որեւէ յեղափոխական նորաձեւութեանց, որոնք յատկանշական էին նախորդող դարերուն եւ յատկանշական եղան յետագային: Երկրագործութիւնը տիրական գրազումն էր եւ բրդեղէն հագուստներ պատրաստելը՝ միակ զլխաւոր ճարտարարուեստը: Այսուհանդերձ օգին մէջ առկա փոփոխութիւն մը կար: Նաւաշինութիւնը կը զարգանար փորձառութեամբ, անոր հետ կը զարգանար նաեւ նաւարկութիւնը: Առուտուրի աճումը եւ փոխադրութեան ծախսերու նուազումը առաջնորդեց հարստութեան բաշխումին՝ բուրժուազիայի միջեւ: Պերճանքի ստարկաները, որպիսիք էին մետաքսները, հայկիներն ու ապակիները, եղան հասարակ ապրանքներ, մինչ արեւելքի ու արեւմուտքի նոր արտադրութիւնները, ինչպէս բամբակը, յախճապակին, քաքսոն, ծխախոտը, սկսան լեցուիլ Եւրոպական շուկաները: Նկարչութիւնը Փլամանկեան եւ հոլանտական դպրոցներու մէջ, սկսաւ հեռանալ կրօնքի ու ազնուականութեան ծառայութենէն եւ սկսաւ նկարել հասարակ ժողովուրդի կենցաղի պատկերները, ուտելը, խմելը եւ գուարճանալը:

Հնոցը եւ ձոյլ երկաթը. —

ԺԴ. դարէն սկսած երկաթը կարեւորութիւն ստացեր էր Եւրոպայի մէջ, բայց ան տակաւին այնքան չէր զարգացեր իր արդիւնաբերութեան ու գործածութեան մէջ: Երկաթը հալեցնելը եւ ձոյլ երկաթը նուրբ գործիքներու վերածելը շատ գժուարին պրոցէսներէ անցընելու էր եւ ան ալ՝ շատ քիչ քանակութեամբ: Երկաթը հալեցնելու համար կը գործածուէին փայտեայ ամուխ եւ փքոցներ: Բայց տեխ-

նիկայի զարգացումով երկաթի արդիւնարեւութիւնը առուտուրի եւ պատերազմի մէջ կարեւոր դեր ունեցաւ եւ աշխարհի տնտեսութեան մէջ առաջնորդող ուժ դարձաւ: Բայց բան մը կար որ կը դանդաղեցնէ անոր յառաջխաղացքը: Ինչպէս ըսինք, Հնոցներու մէջ կը գործածուէր փայտեայ ածուխ. իսկ փայտեայ ածուխ արտադրելու համար հսկայական աշխատանք էր հարկաւոր. եւ յետոյ՝ անտառներն ալ բաւարարութիւն չէին տար: Երկաթ հալեցնելու համար փայտի պակասը խիստ զգալի դարձաւ Հռլանտայի եւ Անգլիոյ մէջ ԺԶ. դարու վերջերը: Վաճառականութեան զարգացման համար ատաղձի մեծ պահանջ կար. նաեւ որ տուններ շինուելու էին, աղ եւ օճառ շինողները պէտք ունէին փայտի. ասկէ դատ ժողովուրդը տնական գործածութեան համար պէտք ունէր փայտի. տեղական անտառները այդ բոլոր պահանջներուն բաւարարութիւն չէին կրնար տալ: Ահա այդպիսի ճշմարտամային շրջանին կատարուեցաւ հրաշքի նմանող բան մը. գտնուեցաւ քարածուխը: Ինչպէս Դանիէլ Դիֆոն կ'ըսէ. — «Ես կը հաւատամ թէ նախախնամութիւնն էր որ օգնութեան հասաւ մարդկութեան, այլապէս մեր անտառները պիտի վերջանային, մեր ջուրի ակերը պիտի ցածքէին, ու մարդկութիւնը պիտի մատնուէր ահաւոր տագնապի մը, որուն հետեւանքը կարելի չէ երեւակայել»: Բայց այդ բանը ո՛չ հրաշք էր, ոչ ալ նախախնամութեան գործը, ինչպէս շատ մը գիւտեր, այդ մէկն ալ արդիւնք էր պատահարի: Մարդիկ հանքագործութեան ատեն՝ գտան այդ սեւ ոսկին:

Ածխահանքերու մօտերը, փոխադրական ծախքերը խնայելու համար շինուեցան ձուլարաններ, գործարաններ, անոնց հետ հիմնուեցան ճարտարաբանական նոր քաղաքներ: Երկաթը, որ քաղաքակրթութեան ջիզն էր, ածուխը եկաւ անոր տալ շունչ եւ ոգի: Եւ քաղաքակրթութիւնը սկսաւ իր սրբնթաց վաղքը:

Ածուխը երբ միացաւ երկաթին, միջնադարեան տնտեսութիւնը կամաց կամաց զերեզմանուեցաւ եւ մարդիկ սկսան որոնել նոր ագրիւրներ ու զարգացնել նոր տեխնիկներ:

Գիտական կրթութիւն. Կրէշէմ Գոլէնը. —

Հռլանտայի եւ Անգլիոյ մէջ նոյնիսկ գիտական կրթութեան համար բացուեցաւ մասնաւոր նոր ճիւղ մը, սպանական ու փորթուգալական դպրոցներու հետեւողութեամբ, նաւարկութեան արուեստը կատարելագործելու նպատակով: Ֆլամինկեաններէն Կէմմա Ֆրիսիուս (1508-55) եւ Կիրարտ Մէրկատոր (1512-94) ցոյց տուին ճշգրիտ կերպով կազմելու նաւարկութեան աշխարհագրական քարտէսներ: Ասոնք շատ մօտէն հետեւեցան անգլիացի աշխարհագէտներուն,

որոնցմէ առաջինն էր Ճան Դին (1527-1608) որ քաջածանօթ աստղագէտ մըն էր եւ նոյն ատեն բրիտանական դիտնական: Առաջին հիմնարկութիւնը, որ կոչուած էր Անգլիոյ մէջ սորվեցնել նոր գիտութիւնը, Կրէշէմ Գոլէնն էր՝ հաստատուած 1579-ին, Սըր Թամըս Կրէշէմի (1519-79) կտակով: Այս մարդը Լոնտոնի մեծ վաճառականներէն մէկն էր, կայսրութեան Փինանսական գործակալը եւ Թագաւորական Սակարանի հիմնարկուն: Ան կը մարմնացնէր վաճառականական կապիտալի եւ նոր գիտութեան միակցութիւնը: Կրէշէմ Գոլէնը կանխագոյն շրջանի Ֆրանսայի Գոլէնի նման այլեւս հիւմանիստ հաստատութիւն մը չէր, ուր ամէն ոք ազատ էր մտնելու: Դասուանողութիւնները կը տրուէին անգլերէն, ինչպէս նաեւ լատիներէն լեզուներով: Անոր եօթը փրոֆէսորներէն երկուքը որոշուած էին երկրաչափութեան եւ աստեղագիտութեան համար, միւսները՝ միմիայն նաւարկութեան արուեստը կատարելագործելու համար. նաւարկութեան ի՞նչ գործիքներ անհրաժեշտ էին, ինչպէ՛ս պէտք էր գործածել այդ գործիքները, եւ ի՞նչ հնարաւորութիւն կար դանոնք զարգացնելու համար: Կրէշէմ Գոլէնը ամբողջ մէկ դար եղաւ Անգլիոյ գիտութեան կեդրոնատեղին եւ Թագաւորական Հասարակութեան պաշտօնական ժողովատեղին:

Այդ շրջանին, գիտնականներէն մեծ մասը, որոնք միջնադարեան ժամանակներուն համար հերետիկոսներ էին, բայց այժմ անոնք ազատ էին հաւատաքնութենէն, որովհետեւ անոնք նուիրուած էին գիտութեան, Բնութեան եւ արուեստներուն, եւ իրենց նպատակն էր օգտակար ըլլալ մարդկութեան: Անոնցմէ ոմանք մէկ կամ միւս կերպով մտած էին Պետական ծառայութեան մէջ եւ կը փորձէին արդարացնել իրենց ծառայութիւնը գործածական գիւտերով, որոնք անհրաժեշտ են խաղաղութեան ու պատերազմի մէջ: Անոնց ինքնատպութիւնն ու անհաստականութիւնը սոսկ երեւութական էին: Անոնց մտածողութիւնը մեծ մասով կապուած էր նոյն աւանդութիւններուն, ասոնք կը գործածէին նոյն մեթոտները եւ բոլորն ալ կը ձգտէին լուծել նոյն խնդիրները: Եւ այդ խնդիրները սահմանափակ էին եւ որակական տեսակէտով դրեթէ նոյնը. անոնք կապուած էին նաւարկութեան ծառայող աստղագիտութեան, մեքենագիտութեան ու բնախօսութեան: Վերջինը, բնախօսական գիտութիւնը նոյնպէս կարեւոր էր, որովհետեւ նաւարկութեան ատեն պէտք էին առողջ, կայտաւ, կորովի եւ զօրաւոր նաւաստիներ: Անոնց ծրագիրը բացասական չէր ինչպէս Վերածնունդի առաջին շրջանին ձգտումները. անոնց սարքաւորման նըպատակը քանզի չէր Արիստոտէլեան սխառմաները, այլ հայթայթել գործածական փոփոխութիւններ: Այս մարդին վրայ անոնք սպասուածէն աւելին յաջողեցան ընել, թէեւ վերջնական համադրութիւնը վերապահեցին Նեւտոնեան դարաշրջանին:

(1650-1690)

Արդիական գիտութեան հաստատման երրորդ եւ բացորոշ փուլը եկաւ ԺԷ. դարու վերջերը: Մտաւորական տեսակէտէն, ինչպէս տեսանք, նախօրօք հարիւր տարիներու ընթացքին, պատրաստուած էր Ֆէոդալ-դասական տեսութեանց քայքայման ու կործանման գիտիներ: Թէեւ այդ քայքայումը նպաստեց գիտութեան ամրացման ու յառաջդիմութեան, բայց ան միակ ու գլխաւոր պատճառը չէր այն պայթիոզ աշխուժացման՝ որով արդիական գիտութիւնը կրցաւ իր նուաճումները կատարել իր մարդերու մեծ մասին մէջ: Գիտութեան զարգացման ընթացքը իր ուժղնութեամբ արդէն սկսած էր այդ քայքայումէն առաջ եւ շարունակուեցաւ վերջն ալ: Գիտութեան գլխաւոր կեդրոններն էին Լոնտոնն ու Փարիզը, որովհետեւ Իտալիոյ եւ Հոլանտայի դործօն գիտնականները իրենց սեփական երկիրներուն մէջ չէին դասեր այդպիսի արտայայտութեանց կեդրոններ, մինչ կեդրոնական արեւելեան Եւրոպան դեռ դործի մէջ չէր մտած:

Գիտութեան արագ աճման հնարաւորութիւն տուող եւ անոր կեդրոնացումին նպաստող պայմանը պիտի նկատենք այն՝ որ Բրիտանիոյ եւ Ֆրանսայի մէջ հաստատուած էր մնայուն կառավարութիւն մը, ուր վերին խաւի բուրժուազիան տիրապետող կամ առնուազն կարելոր դիրք կը զբաւէր: Բրիտանիոյ մէջ Քաղաքացիական Պատերազմը յառաջ բերած էր իրական յեղափոխութիւն մը, ուր աւելի հարուստ վաճառականները քաղաքային մարդոց եւ մանր հողատէրերու օգնութեամբ թագաւորէն եւ հողատէր ազնուականութենէն իշխանութիւն ձեռք բերած էին: Բայց այս խմբաւորումները, իրենց յաղթանակէն յետոյ՝ շուտով իրարու հետ սկսան կռուիլ: Փոքր մարդիկը յուսահատօրէն կը ձգտէին դեմոկրատիզմին եւ անտեսական հաւասարութեան եւ երբ Բրոնիէլը ճամբայէն հեռացաւ, վաճառականները իրենց շահերը համաձայնեցուցին հողատէր լորտերուն հետ, որով թագաւոր Չարլզ Բ. հրապարակ իջաւ որպէս սահմանադրական միապետ: Վաճառականները դեռ եւս անտեսութեան մէջ տիրապետող դեր ունէին. բայց մանուֆակտուրայի տէրերու նոր դասակարգ մը երեւան եկաւ, դասակարգ մը, որ բազկացած էր մաս մը վաճառականներէ, մաս մըն ալ ձեռագործ որակաւոր վարպետներէ: Քաղաքացիական Պատերազմի վերջաւորութեան, որուն հետեւեցան մանուֆակտուրայի եւ առուտուրի խոշոր աճումը, ընկերացած նաւարկութեան ստեղծած նոր կարելիութիւններուն հետ, մեքենական գիտերու պահանջը եղաւ որպէս հրամայական նախադիմ: Ժամանակը եւ միջավայրը երկուքն ալ նպաստաւոր էին գիտութեան աճման:

Հոլանտան, թէեւ արտասովոր հարուստ, բայց իր առողջ երիտասարդական շրջանը անցուցեր էր: Վաթսուն տարի անցած էր այն յեղափոխութենէն յետոյ՝ երբ վերջ տրուած էր Սպանիոյ իշխանութեան: Այս ժողովուրդը, որ նեցուկ կեցեր էր եւ ապահոված էր երկրի անկախութիւնը, մեծ մասով կը ներկայանար ցրուած ու բաժնրւած ուժերով եւ կառավարութիւնը մնացեր էր հարուստ վաճառականներու եւ հողատէր լորտերու ձեռքը: Ուժասպառ եղած վաճառականական պատերազմներէն, եւ առանց ուժեղ մրցման գիմացող մանուֆակտուրաներու, Հոլանտան այնքան տկարացաւ որ իր նախկին առաջնորդող դիրքը չկրցաւ պահել: Տասնօթերորդ դարուն հոլանտացի ամենէն կարող մարդիկը, գիտնականներ, արուեստագէտներ, թողուցին իրենց հայրենիքը ու ցրուեցան հոս ու հոն. մեծ մասով անոնք անցան Անգլիա, միւսները՝ մտան Փարիզ:

Ֆրանսայի մէջ, միւս կողմէն, ուր յեղափոխութիւնը պայտային կը նայէր, ուր Ֆէոդալիզմի եւ եկեղեցւոյ ուժը դեռ եւս ահեղ էին, որով երկուքը միասին կրցան ճղմել ու չբացնել հիւզնոտները (Ֆրանսական բողոքականները): Ֆրանսայի անտեսական յառաջդիմութիւնը բրիտանականին համեմատած՝ դանդաղ կ'ընթանար: Ֆրանսան Եւրոպայի ցամաքամասին մէջ ամենէն մեծ եւ ամենէն հարուստ երկիրն էր այն ատենները, բայց ընդհանրապէս անտեսական զարգացումէն մէկուսի կը մնար: Գործադիր իշխանութիւնը կեդրոնացեր էր թագաւորին մէջ, բայց պետական մեքենան բուրժուազիայի ձեռքն էր, անոր վարիչներն էին բարձր իմացական կարողութեան տիրացած փաստարան, օրէնսդէտները, անոնք կը կոչուէին Noblesse de Robe, ասոնցմէ երեւան եկան շատ մը գիտնականներ: Լուի ԺԴ-ի գահակալութեան շրջանին (1661-83) գիտութիւնը նշանակելի կերպով զարգացաւ:

Եւրոպայի միւս երկիրները շատ աննշան դեր ունեցան գիտական աշխարհին մէջ: Գերմանիան եւ Աւստրիան Երեսնամեայ Պատերազմէն (1618-48) յետոյ հազիւ թէ սկսեր էին ոտքի կենալ: Հաւատաքննութիւնը ամբողջապէս չէզոքացուցեր էր Սպանիան եւ Փորթուգալը. իսկ Իտալիոյ մէջ Կալիլէոյի ժառանգորդները կատաղի կռիւ կը մղէին կղերական ուժերուն դէմ: Շուէտը, Լեհաստանը եւ Ռուսիան, թէեւ գիմուորական տեսակէտէն ուժեղ՝ բայց մեծ մասով հում նիւթերու երկիրներ էին տակաւին եւ նոր սկսեր էին գիտութեան սատարելու փորձեր ընել:

Գիտական ընկերութեանց կազմութիւնը.—

Նախորդող հարիւր տարիներու ընթացքին, կրօնական ու քաղաքական խոշոր խումբութիւններէն յետոյ՝ տասնօթերորդ դարու վերջի կիսուն՝ եկաւ համեմատաբար խաղաղ եւ աշխոյժ առատու-

թեան շրջան մը: Համաձայնակներն ու պատերազմները կը շարունակուէին, բայց անոնք զարմանալիօրէն գիտնականներու գործին վրայ չէին ազդեր: Ոչ ալ ազգային թշնամութիւնները լրջօրէն միջամուխ կ'ըլլային անոնց ազատ շարժումներուն եւ հաղորդակցութեանց մէջ: Առաջաւոր երկիրներու կառավարութիւններն ու տիրող դասակարգերը խորապէս շահագրգռուած առուտուրով ու նաւարկութեամբ, գիտակցարար կ'օժանդակէին գիտութեան, որու զարգացումը կը նպաստէր իրենց հետապնդած ընդհանուր, հասարակաց նպատակին:

Առաջին երկու փուլերուն պալատական գիտնականներն ու համալսարանի փրոֆէսորները իրենց վարձատրութիւնը կը ստանային իշխաններէն. տասնօթերորդ դարու կիսուն գիտնականները անկախ մարդիկ դարձան. անոնց մեծ մասը վաճառական էին, միջին դասուհողատէրեր եւ լիպերալ մտարուեստի յաջողակ հետեւորդներ — բրժիշկներ, փաստարաններ եւ քանի մը քարոզիչներ: Ասոնք կրնային զիմել թագաւորական խնամատարութեան, բայց գիտութեան համար յոյս չկար որ թագաւորական դանձարանէն զրամ ստանային: Չարլզ Բ. թագաւորը մէկ փէնի չէր տար Royal Society-ին եւ նոյնիսկ ժամանակ չունէր հոն այցելելու: Գիտնականներն, ուրեմն, իրենց սեփական գրպանէն զրամ պիտի ծախսէին գիտութեան համար: Եւ պէտք է ըսել թէ անոնց գրպանը միշտ լեցուն էր շնորհիւ առուտուրի երաշխաւորեալ յաջողութեան: Ոմանք նոյնիսկ զրոնքն ուրիշ գիտնականներու կը զիմէին իրենց գիտական ճիւղը աւելի զարգացնելու համար: Ասոնք իրապէս ընդունակ եւ հետաքրքիր մարդիկ էին, որոնք կ'ուզէին գիտական հետախուզութիւնները յառաջ տանել իրենց սեփական միջոցներով. բայց երբ այդ գիտնականները թուով բազմացան, անոնք սկսան իրարու մօտենալ, իրենց ծանօթութիւններն ու փորձառութիւնները իրարու միջեւ փոխանակել. ասով գիտութեան դաշտը ենթարկուեցաւ համադորձակցական լուրջ աշխատանքներու: Իրերու բնական բերումով, ուրեմն, այս երրորդ փուլը եղաւ շրջան մը, ուր կազմուեցան գիտական ընկերութիւններ, ինչպէս Թագաւորական Ընկերութիւնը Լոնտոնի մէջ եւ Թագաւորական Ակադեմիան՝ Փարիզի մէջ. ասոնք այդ ժամանակուան տեխնիկական գիտաւոր խնդիրները նկատի առին — ինչպէս օրինակ ջրիւղաւորը եւ ջուրի ուժի գործածումը, զինագիտութիւնը (հրացաններու եւ թընդանօթի կատարելագործումը) եւ նաւարկութիւնը, ու մէկ կողմ գրին փրիւստփայական վիճարանութիւնները: Ասոնց մէջ յատկապէս նաւարկութեան վերաբերեալ խնդիրներն էին որ աւելի շատ խթանեցին գիտութեան յառաջգիմութիւնը, որովհետեւ անոր կապուած էին գիտական երկու ճիւղեր — մեքենագիտութիւնն ու աստղագիտու-

թիւնը, որոնք մէջտեղ հանեցին Նեւտոնի (1642-1727) համադրութիւնը:

Գիտական հետախուզութեանց մէջ ամենէն յատկանշական կէտն այն է որ, մարդիկ՝ բան մը փորձարկած, կամ բան մը փնտաւ պահուն, գտած են նոր բան մը, որու մասին չէին մտածեր. օրինակի համար ջրհանի մեքենան սարքաւորուած ատեն մարդիկ Vacuum-ը (օդատուրիւնը) հնարեցին, յետոյ՝ ուսումնասիրեցին կազերու օրէնքները եւ անոնցմէ ծագում առաւ շոգեշարժ մեքենան, ինչպէս նաեւ յաջորդ դարուն՝ քիմիագիտութեան հեղանիւթային յեղափոխութիւնը:

Հետաքրքրական է այստեղ նշել որ թէ՛ Ֆրանսայի եւ թէ՛ Անգլիոյ մէջ գիտական ընկերութեանց գործունէութիւնը սահմանափակ չըջանի մը մէջ միայն տեղի ունեցաւ: 1690-ին, երկուքն ալ սկսան քայքայուել, որովհետեւ Ժ.Ղ. դարը անոնց դէմ հանեց նոր հիմնարկութիւն մը: Յամենայն դէպս, իրողութիւն է որ այդ ընկերութիւնները իրենց ատենին, մեծ շահագրգռութիւն ստեղծելով գիտութիւնը վերածեցին սկզբունքով կառավարուող հիմնարկութեան մը, որ հրապարակէն կը հեռացնէր շարլաթաններն ու անպարարները:

Ֆրանսիա Բէքոն, ինչպէս չորս դար առաջ Բաճըր Բէքոն (1214-1294) յայտնած էր այն գաղափարը՝ թէ Բնութիւնը քոնթրոլի տակ առնելով մարդուն ծառայեցնելու միջոցը բնութեան գաղանիքները հասկնալն է: Բայց հսկայական տարբերութիւն կար գաղափարին եւ իրական գործունէութեան միջեւ: Գիտութիւնը գեոեւս բնութեան գաղանիքը չէր գտած:

Իստակ Նեւտոնն եղաւ մեծ գիտնականը, որ գտաւ բնութեան գաղանիքներէն մէկը. — այն է քաշողական ուժը: Խնձորը ծառէն իջնալով օդին մէջ չի մնար, կ'իջնայ գետին. երկիրը քաշողական անդիմազերելի ուժ ունի: Երկիրը իր առանձքին վրայ դառնալով հանգերձ՝ կը դառնայ արեւուն բոլորտիքը, ուրեմն, արեւը երկիր մոլորակէն երկու կամ երեք միլիոն անգամ մեծ է ու քաշողական զօրութիւն ունի: Այդ քաշողական զօրութեան հետեւանքովն է որ երկիրը կը դառնայ արեւուն շուրջը: Ուրեմն, երկնային բոլոր մարմիններն ալ այդ օրէնքին կապուած են. այդ օրէնքին կապուած են տիեզերական բոլոր շարժումները, մոլորակներու, արբանեակներու պահպանած դիրքերը: Բայց թէ տիեզերական այս ընդհանուր ներդաշնակութեան ետեւ աստուածային զեկալարող ուժ մը կա՞յ թէ ոչ՝ Նեւտոն այդ հարցին չուզեց մօտենալ:

ՅԵՏԱԿԱՐՁ ՀԱՅԵԱՅՔ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Երբ մենք յետադարձ ակնարկ մը նետենք ժԵ. — ժԶ. եւ ժԷ. դարերու ընթացքին նոր գիտութեան զիջագներգական շարժման վրայ, յատկօրէն կը տեսնենք թէ գիտութիւնը ինչո՞ւ ծնաւ, ո՞ւր ծնաւ եւ ի՞նչ գործ կատարեց: Մենք կրնանք տեսնել թէ ի՞նչպէս ան մօտէն հետեւեցաւ առուտուրի եւ արդիւնարեութեան վերադարձնումին, ուրիշ հրապարակ իջաւ բուրժուազիան՝ ժԵ. ու ժԶ. դարերուն եւ անոր քաղաքական յաղթանակը ապահովեց ժԷ. դարուն: Կապիտալիզմի ծննդեան հետեւեցաւ արդիական գիտութեան ծնունդը: Այն ոգին, որ աւրեց Ֆէոդալիզմի եւ եկեղեցւոյ հաստատած ձեւերը, նոյն ոգին փշրեց նաեւ հին գերետիրութիւնը՝ դասական աշխարհի պահպանողական աւանդութեանց կապանքներուն հետ: Գիտութեան եւ քաղաքական աշխարհին մէջ, երբ հին աւանդութիւնները խորտակուեցան, մարդկային միտքը, որ մինչեւ այդ ատեն չգիտարարած էր, գտաւ իր ազատութիւնը: Նոր գիտնականներուն համար տիեզերքի որեւէ մասը այլեւս այնքան անիմանալի չէր, ինչպէս որ որեւէ առուտուր նուաստացուցիչ չէր:

17-րդ ԳԱՐՈՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Հակառակ անոր, որ ուսումնասիրութեան մարդերը խորացէս իրարմէ կը տարբերէին, գիտութիւնը, ժԷ. դարուն բոլոր մարդերը երեք ճիւղերով միացուց բունի մը. այդ ճիւղերն էին — անհատները, գաղափարները եւ փորձարկու կիրարկումները: Առաջին առիթով, ժԷ. դարու գիտնականը կարող էր արտադրել ինքնատիպ գործ մը, որ մինչեւ այդ ատենուան գիտութեան ծանօթ չէր: Նեւտոնը ո՛չ միայն մատեմատիկոս, աստղագէտ, ակնագէտ եւ մեքենագէտ էր, այլեւ տարիներով գործեց քիմիադիտութեան ճիւղին վրայ, որու մասին ան թէեւ շատ քիչ գրական գործ արտադրեց, բայց իր ժամանակաշրջանին, քիմիադիտութեան մէջ զինքը գերազանցող չկար: Բարբրտ Հուք, թէեւ մեծ մատեմատիկոս մը չէր, (1627—1702) բայց բնախօսութեան մարդին վրայ գիտութեան մեծ ծառայութիւն մատուց: Քրիստոֆր Վրէն (1632—1723) թէեւ ճանչցուած է որպէս հռչակաւոր ճարտարագետ, բայց նոյն ատեն ան գիտական շարժման կեդրոնը գտնուող անհատներէն մէկն էր: ժԷ. դարու գիտնականները այսպիսով համաշխարհային միակցութեան մը պատկերը կը ներկայացնէին, որուն նմանը չենք տեսնել վերջին ժամանակներուն մէջ: Ծայրայեղ օրինակ մը կուտայ Սպինոզան (1632—77) որ իր բարոյագիտութիւնը միացուց մատեմատիկական սկզբունքներու հետ:

Գիտութիւնը եւ տեխնիկական հարցերը —

Նոր գիտութեան միակցութեան ձգտող սկզբունքի ամենէն յատկանշական մասը կը կազմէր օրուան գլխաւոր տեխնիկական հարցերու նկատառումը: Ինչպէս տեսանք, տեխնիկան տասնըչորրորդ դարէն սկսած, կամ նոյնիսկ անկէ առաջ, Եւրոպայի նպաստաւոր հանգամանքներու տակ, յառաջդիմելով փշրեք էր շարք մը աւանդութեանց կամուրջները եւ երեւան հանած էր հանճարեղ մարդիկ, որոնք գտած էին հարստութեան նոր աղբիւրներ: Մասամբ լուծուած էին հանքագործութեան, մետաղագործութեան, նաւարկութեան, մեքենագիտութեան եւ զինագիտութեան հարցերը, մնացեալներու լուծումը կը մնար ժԸ. դարուն: Որոշ չափով յառաջ դացեր էր մտաւորական յեղափոխութիւնը. բայց նկատելի բան մը կար, այդ՝ այն էր որ գիտական յեղափոխութեան սատարողները մեծ մասով պահպանողական էին կրօնական եւ փիլիսոփայական տեսութեանց մէջ:

2.— ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒԹԻՒՆԸ

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԸ

ժԸ. եւ ժԹ. դարերը մեծ չափով մեր արդի աշխարհը ձեւակերպող դարեր եղած են, դարեր, որոնք այդ շրջանին ապրող մարդոց համար կերտել են մարդկային զարգացման ազատագրութեան շրջան մը, ուր մարդը վերջապէս գտած էր առատութեան եւ անսահման յառաջդիմութեան ճշմարիտ ուղին: Մեզի համար, սակայն, երբ քսաներորդ դարու խուճուկներն ու փոփոխութիւնները ապրած ենք, անոնք կ'երեւին մարդկային տառապանքով շրջանակուած այնպիսի դարեր, որոնք արտադրած են հոյակապ՝ բայց անկայուն կուլտուրա մը: Անոնք կը պարունակեն այն շրջանը, ուր գիտութիւնը հաստատուեցաւ որպէս անփոխարինելի դերակատար՝ ճարտարարուեստական նոր քաղաքակրթութեան համար: ժԷ. դարու յեղափոխութեան գիտութեան յայտնագործած փորձառական նոր մեթոտները ընկերացան մարդկային փորձառութեան ամբողջ ընթացքին հետ եւ նոյն ատեն՝ անոնց կիրարկումով տեղի ունեցան արտադրութեան միջոցներու հսկայական փոխակերպութիւն՝ զոր մենք կը կոչենք ֆարտարարուեստական յեղափոխութիւն:

Ճարտարարուեստական յեղափոխութիւնը իր առաջին փուլին մէջ, ստուգիւ գիտական յառաջդիմութեան արտադրութիւնը չէր,

թէ եւ գիտութիւնը որոշ ծառայութիւններ մատուց անոր : Երբ մենք այդ շարժումը մօտէն քննենք, պիտի տեսնենք որ անիկա կապիտալիզմի անտեսական սիստէմի ներքին փոխակերպման ու աճման արդիւնքն էր : Նախ երեւցան վաճառականներն ու մանր մանուֆակտուրաները . անոնց յաջորդեցին Ֆինանսական արքաներն ու ծանր արդիւնարեբութիւնը :

Սխալած չենք ըլլար երբ ըսենք թէ՛ գիտութեան որպէս մըտաւորական գործօն ուժի երեւան դալը, ճարտարարուեստի տեխնիկական փոփոխութիւնները եւ կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական տիրապետութիւնը, ասոնք բոլորը միասին պիտի երեւնային նոյն ժամանակներուն եւ նոյն տեղերուն մէջ : Ասոնց միջեւ եղած յարաբերութիւններու թնջուքը այնքան զիւրին չէ իրարմէ անջատելը : Տեխնիքի եղանակները, տնտեսական ձեւերը եւ գիտական ծանօթութիւնը ասոնք տրուած ժամանակաշրջանին կ'աճին եւ արագօրէն կը փոխուին : Մենք պիտի փորձենք դատարել զգիտութեան տուած նպաստը տեխնիկային ու տնտեսական փոխակերպումին եւ յետոյ՝ պարզել թէ՛ գիտութիւնը իր կարգին ի՞նչպէս կ'ըցաւ աճիլ եւ փոխել իր բնոյթը :

ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ
ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Տասնութերորդ դարու սկիզբի գաղափար (1690—1760)

Այն հիմնական յառաջմղումը, զոր ստեղծեց գիտութիւնը Վերածնունդի շրջանին եւ յառաջ տարաւ մինչեւ ժէ . դարու կէսը, այնպէս կը թուէր թէ սկսեւ էր կազալ ու մեռնիլ : Գիտութիւնը հետզհետէ կը կորսնցնէր իր ստեղծած հետաքրքրութիւնը մեծ չափով Անգլիոյ՝ նուազ չափով աշխարհի միւս մասերուն մէջ : Ասոր պատճառը կապուած է ընկերային եւ տնտեսական գործօններու հետ : Այն դասակարգը — վաճառական պարոնները — որոնք ժէ . դարուն գիտական արշաւն սկսան եւ կը շահագրգռուէին նաւարկութեան, առուտուրի եւ մանուֆակտուրայի մէջ գիտական մեթոտներով, տեղ տուին նոր սերունդի մը՝ աւելի հարուստ, նուազ ձեռներէց ու հետաքրքիր եւ աւելի զիրահաճ : Ասոնք Վիլ արիստոկրատի առաջւորները, իրենց շահարկութեան համար աւելի ապահով նկատեցին հողը, հողային արտադրութիւնները եւ էլքի ճամբայ մը՝ դէպի Հարաւային ծովերը : Իսկ այն դասակարգը, որ զանոնք իշխանութեան հասցուց — մանր մանուֆակտուրայի տէրերը, որոնք ի վերջոյ ճարտարարուեստական յեղափոխութիւն յառաջացուցին, տակաւին գիտակ չեղան գիտութեան գոյութեանը կամ անոր կատարելիք գերի հը-

նարաւորութեանը : Անոնք ժԸ . դարու սկզբնական շրջանին բաւականացան զարգացնել եւ գործածել տեխնիկական մեթոտներ, որոնք ատեն մը կը ծառայէին հաղուստի եւ այլ մանուֆակտուրայի առարկաներու գերաճող պահանջներուն գոհացում տալ :

Սոյն փոփոխութիւնները անդրադարձան Թագաւորական Ընկերութեան Ողիմպոսին, գիտութեան վառարանին, որ սկսաւ քայքայուիլ : 1740—ին անոր անդամներուն մեծ մասը հեռացան, ընկերութիւնը մատնուեցաւ Ֆինանսական անել գփուարութեան :

Նոյն ատեն, սակայն, թէ եւ գիտութիւնը կը հիւժէր, տեխնիկական փոփոխութիւնը դեռ դադարած չէր : Այս փոփոխութիւնները, որոնք սկսան Անգլիոյ մէջ նոյն դարու սկիզբները, կարելոր դեր պիտի խաղային ապագային՝ ճարտարարուեստի եւ գիտութեան մարզերուն վրայ :

Այդ փոփոխութիւններէն մին՝ հողագործութեան արագ զարգացումն էր — վաճառականական փարմիկը — ազարակարանութիւնը, որ ընդօրինակուեցաւ հողանտացիներէն ու տարածուեցաւ Բրիտանիոյ մէջ : Վաճառականական աղբիւրներէ կուտակուած դրամադուխը շահարկութեան դրուեցաւ հողի մէջ, մինչ միւս կողմէն արագօրէն մեծցան քաղաքները, առաջին տեղը բռնելով Լոնտոնը, որ եղիպտացորենի, միսի եւ վէճէթէպլի — բանջարեղէնի — շուկան էր դարձեր : Բայց այս փոփոխութիւնը տեխնիկական յառաջդիմութիւն ցուցնելով հանդերձ՝ միւս կողմէն անարդար էր եւ անդուծ, որովհետեւ զիւղացիները կը զրկէր իրենց հողերէն եւ զանոնք կը նետէր գործ փնտուղ բանուորներու շարքերուն մէջ :

Միւս կարելոր փոփոխութիւնը նոր ծանր արդիւնարեբութեան արագ ընդարձակումն էր, որ հիմնուած էր անուսի, հանքագործութեան եւ փոխադրական մեթոտներու զարգացման եւ երկաթ ու պողպատ արտադրելու արմատական նոր մեթոտներու վրայ : Այստեղ օգնութեան հասաւ գիտութիւնը, որու հնարած չողջարժ մեքենան, որ սկզբնական շրջանին գործածուեցաւ հանքերու մէջի ջուրերը ցամքեցնելու համար, մեծապէս նպաստեց տեխնիկական զարգացման : Բայց բոլոր այս զարգացողական ճիւղերը իրենց սահմանափակ շրջանակով տակաւին ճարտարարուեստական յեղափոխութիւնը չէին ամբողջացնէր, այլ սոսկ անոր յառաջընթացներն էին : Միայն մէկ բան պարզ էր, որ երկրի տնտեսութիւնը գիւղական հին ձեւի տնտեսութենէն հեռացած էր եւ ուտեստեղէնի տնտեսութենէն կը զիմէր ուժի տնտեսութեան, որու խթանիչ ազդակն եղաւ անխահանքերու շահագործումը :

Աճուսի վրայ հաստատուած տնտեսութեան փոխանորդութիւ-

նը ոչ միայն Անդլիոյ հիւսիսի եւ հարաւի մասերու մէջ եղած հաւասարակշռութիւնը փոխեց, այլեւ պատճառ եղաւ որ Սկոտլանտ ալ որպէս մտաւորական ու անկախ ուժ՝ անցնի առաջին կարգի վրայ: Սկոտլանտ, հակառակ իր հին աւանդութիւններուն եւ ժԶ. դարու Գալլիկական շարժումին, չէր կրնար հետեւիլ ժէ. դարուն՝ Անդլիոյ արագ զարգացումին, որովհետեւ ճարտարարուեստական յեղափոխութեան նպաստող ազդեւորները կը պակսէին: Բայց երբ քարածուխը երեւան եկաւ իսկոյն փոխուեցաւ անոր դերքը: Սկոտլանտ ալ սկսաւ զարգանալ եւ զուրս գալ չքաւորութեան ու տգիտութեան քառուկն: Ան մտաւորական կապ հաստատեց Հոլանտայի հետ: Բժշկութեան եւ քիմիագիտութեան ճիւղերուն տիրացած մարդիկ լեցուեցան Սկոտլանտի մէջ ուր բացուեցան համալսարաններ, որոնք սկսան մրցիլ Անդլիոյ համալսարաններուն հետ:

Մինչ Սկոտլանտ եւ Անգլիա արագօրէն կը մտանային ճարտարարուեստական յեղափոխութեան, Ֆրանսան, որպէս առաջաւոր երկիր, դեռ եւս կը շարունակէր հին ուղեգիծը: Հոն, յաւորակ տեսակէտով կ'աճէր ձեռագործական ճարտարարուեստը, որ աշխատանքի բաժանման հիման վրայ աւելի շատ կ'արտադրէր քան Անգլիան, բայց ան փորձ չէր ընէր մեծ քանակութեամբ մեքենականութիւն դնել գործին մէջ, բացի թագաւորական ջուրի ուժը:

Ֆրանսայի մէջ նորածնու գիտութիւնը — փիլիսոփաներ. —

Նոյն տանն, Ֆրանսայի մէջ նոր տեսակի գիտական աշխուժութիւն մը երեւան եկաւ, որ տարբեր էր անգլիականէն: Այդ աշխուժութիւնը էապէս շահու արտայայտութիւնն էր մէկ կողմէն արքունական շրջանակներու մէջ գործող արիստոկրատիին, միւս կողմէն՝ դժգոհութեան արտայայտութիւնը նորերու միջին դասակարգին, որու առաջնորդներն էին Ֆրանսայի մէջ վարչական եւ վաւերական մտարուեստները: Գիտութիւնը այդ տանն մտեր էր նորածնութեան մէջ եւ ստացեր էր յեղափոխական բնոյթ: Այս ցուցանշական երեւոյթը յայտնաբերողն եղաւ այն մարդը, որ Նեւտոնեան փիլիսոփայութիւնը ներմուծեց Ֆրանսայի մէջ: Ատիկա Վոլթէրն էր (1694-1778):

Գիտութեան սիրահարները — բնական փիլիսոփաներ կամ առհասարակ փիլիսոփաներ — իրենց բոլոր ջանքերը յատկացուցին գոյութիւն ունեցող հիմնարկութեանց քննադատութեան գործին, որովհետեւ անոնք կ'ընդունէին թէ այդ հիմնարկութիւնները կ'արգելակէին երկրի անտեսական ու քաղաքական զարգացումը: Այսուհանդերձ՝ ճարտարարուեստի մէջ աճող հետաքրքրութիւն մը կար, որ

եկաւ դրսէն ժէ. դարու յորինած ձեւով: Ռէսոնը (1683-1757), օրինակի համար, բարձր իմացականութեան տէր եւ շահագրգռուող մարդ մը, 1710-էն մինչեւ 1720, արտասովոր հետախուզութիւններ կատարեց պողպատ շինելու համար: Ան քաջախերութիւն չզտաւ Ֆրանսայի մէջ, որովհետեւ աւանդութեամբ շղթայուած ճարտարարուեստը չէր համաձայններ այդ մեծ մարդու նպատակին հետ, ատոր համար անոր գիւտերը հարիւր տարի վերջ անգլիացիները օգտագործեցին:

Եւրոպայի մէջ գիտութեան տարածումը. —

Այս շրջանին էր որ գիտութիւնը մեծ շահագրգռութիւն ստեղծեց Ֆրանսայէն, Անգլիայէն եւ Հոլանտայէն հեռու ուրիշ երկիրներու մէջ. ասով խախտեցաւ գիտութեան մոնոպոլը: Անգլիական եւ Ֆրանսական օրինակով ակադեմիաներ հաստատուեցան Լայքնիցի (1646-1716) ջանքերով, Գերմանիոյ եւ Աւստրիայի զանազան թագաւորութեանց մէջ, անկէ յետոյ եկաւ արտակերտն մարդ մը գիտական եւ բանաստեղծական հակումներով ղեկավարուող Փրուսիոյ թագաւորը — Մեծն Ֆէրտինանդը (1712-1786), որ գիտութեան ու արուեստին մեծ զարկ տուաւ: ժէ. դարու վերջի քառորդին, ո՛չ մէկ արքունիք կատարեալ չէր համարուէր, ասանց արուեստի ու գիտութեան ակադեմիաներու ներկայացուցիչներու, որոնք թէեւ անկանոն վճարում կը ստանային, բայց իրենց ներկայութեամբ եւ զուարճացնող փորձագիտութեամբ կ'արժանանային ներբողներու:

Շուէտի եւ Ռուսիոյ նման հիւսիսային երկիրներն ալ իրենց զինուորական եւ անտեսական կարեւոր դերքերով հաստատեցին ակադեմիաներ: Սակայն ասոնք, եւրոպական միւս քաղաքավար ընկերութիւններէն տարբեր էին իրենց գործառնութեամբ: Անոնք մեծ մասով կը շահագրգռուէին հում նիւթերու ազդեւորներով, ինչպիսիք էին փայլը, նավթը, վուչը, երկաթը եւ ուրիշ անքային նիւթեր, որոնք կը նպաստէին ծովային առուտուրի արագ աճումին: Մեծն Պետրոս (1672-1725) օրինակի համար, գիտութիւնը ներմուծեց իր ծրագրին մէջ, որպէսզի ապահովէ Ռուսաստանի անտեսական եւ զինուորական անկախութիւնը: Թէեւ ան օտարականներ գործածեց, մեծ մասով՝ գերմանացի եւ Ֆրանսացի գիտնականներ, բայց անոնց կարգին առաւ նաեւ զուիցերիացի Եուլէրը (1707-83), մատեմատիկոսներու իշխանը, նպատակ ունենալով կառուցել գիտութեան ազգային մարմին մը: Իր հետապնդած յաջողութիւնը եկաւ իր գահակալութենէն յետոյ՝ երբ հրապարակ իջաւ ժԸ. դարու մեծագոյն հանճարը — Միքայէլ Լամոնտոսֆ (1711-1765):

ՆՈՐ ՇԱՀԱԳՐԳՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Ելեկտրականութիւն եւ բուսականութիւն .—

Թէեւ այս ուսմունքները յառաջ կը տարուէին գիտութեան պրէսդիթով, բայց անոնց անմիջական արժէքը կը յառաջանար ոչ թէ շահագրգռութիւնները խորացնելով, այլ անոնց դաշտերը աւելի ընդարձակելով: ԺԸ. դարու կիսուն, գիտութեան տրուած նպաստներն էին Ելեկտրականութեան եւ բուսաբանութեան դաշտերը, մէկը որպէս նորութիւն, միւսը՝ որպէս հին գիտութեան նորի ձեւակերպումը: Երկուքն ալ, իրենց առաջին շրջանին, ցոյց տուին որոշ շեղում մը ԺԷ. դարու մեքենական եւ մատեմատիկական գիծէն:

Ելեքտրականութեան ուսումնասիրութիւնը նախ սկսաւ որպէս հաճոյքի ու ժամանցի առարկայ, բայց վերջէն դարձաւ նոր եւ հոյակապ փորձագիտութեան դաշտ: Առաջին անգամ Բենիամին Յըրանկլինն էր որ (1706-90) հնարեց կայծակի հաղորդիչը եւ ելեքտրականութիւնը երկինքէն վար բերաւ եւ նախագծեց անոր ապագայ կարեւորութիւնը: Բուսաբանութիւնը հեռացաւ տասնութերորդ դարու բուսական պարտէզներու հոգատարութենէն, որոնցմով բրժիչիկները իրենց դեղերը կը պատրաստէին եւ Լինէուսի (1707-78) տուած ներշնչումով տարածուեցաւ ամենուրեք, հարկադրելով որ արիստոկրատի եւ յամառ բուրժուազիայի ընկերային ձգտումները ուղղուին բնութեան:

Գիտութիւնը եւ յեղափոխութիւնները (1760-1830) .—

Մեր շրջանի երկրորդ փուլը կ'ընդգրկէ Խոթանասուն տարիներու շրջան մը, որ որոշակի կը նշէ քաղաքական իրադարձութեանց մէջ գիտութեան կատարած դերը: Բաղդատելով ԺԷ. դարու գիտական կարեւորութիւնը, ան գերազանցեց իր անմիջական եւ դործնական հետեւանքներով՝ ժամանակի հոլովոյթին մէջ: Անոր մէջ կը մտնեն ճարտարաբուսական յեղափոխութիւնը Անգլիոյ մէջ եւ քաղաքական յեղափոխութիւնները Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ: Յեղափոխական պատերազմները իրենց արդիւնքով կը բաժնուին երկուքի, հոգ չէ անոնք գիտութեան ու տեխնիկայի շարունակութիւնը չեն ընդհատեր: Առաջին քառասուն տարիներուն, ելեքտրական հոսանքի գիտով յառաջացաւ նոր ու բանավարական քիմիագիտութիւն մը: Երկրորդ շրջանը՝ 1800-էն 1830, թէեւ նոր գիտական արդիւնագործութիւն մը չի ներկայացներ, ոչ ալ քաղաքական նոր գաղափարներ կը յայտնարէ, բայց աւելի կ'ընդարձակէ մարդկային գործունէութեան դաշտերը:

Ընկերային փոփոխութեան այս տարրեր երեւոյթներու միջեւ

եղած կապակցութիւնը չկրնար բացառիկ պատահմունք մը ըլլալ: Արդարեւ անոնք որքան մօտէն քննուին այնքան խոնջտուած կ'երևին այն թելերը, որոնք այս շրջանին, գիտութիւնը, տեխնիկան, տնտեսութիւնն ու քաղաքականութիւնները իրարու կը կապեն: Մարդկութեան զարգացման ճգնաժամային շրջանն է այս: Անկէ վերջն է որ տեղի ունեցաւ այն շրջադարձը, ուր մարդը կրցաւ տիրապետել բնութեան՝ շոգիի ուժով ու բազմապիսի մեքենականութեամբ: ԺԶ. եւ ԺԷ. դարերու երկու հիմնական փոխակերպումները կարելի դարձուցին ԺԸ. դարու փորձառական-քանակական գիտութեան եւ արտադրութեան կապիտալիստական մեթոտներու ծնունդը: Գիտութիւնը այդ շրջանին՝ գործնական կերպով ուղղակի ներգործեց նաւարկութեան եւ առուտուրի վրայ, իսկ անուղղակի կերպով՝ արտադրութեան վրայ:

Ճարտարաբուսական յեղափոխութիւն .—

«Ճարտարաբուսական յեղափոխութիւն» անունը առաջին անգամ Էնգէլը գործածեց 1844 թուին. անկէ վերջ այդ անունը նուիրագործուեցաւ եւ գործածուեցաւ յաճախակի: Արդէն տարազագործութեան մարդերուն մէջ կատարուող արտադրողական փոփոխութեան յեղափոխութիւն անունէն զատ ուրիշ անուն կարելի չէր տալ: Բամպակեղէն ապրանքներու արդիւնաբերութիւնը 1766-էն 1787 թուականը հինգ անգամ աւելցաւ: Ասոր հետեւեցաւ առուտուրի, երկրագործութեան եւ քաղաքային ընկալութեան աճումը, որ նոյնպէս արագ ընթացք ստացաւ: Այդ յեղափոխութիւնը ուր որ մտաւ, այնտեղ փոխուեցան հին ձեւի արտադրողութեան մեթոտները:

Ճարտարաբուսական յեղափոխութիւնը, սկիզբէն սահմանափակուած իր ծնած վայրերուն մէջ, այդ գլխաւոր վայրերն էին Բրիտանիոյ կեդրոնական եւ հիւսիսային մասերը, գլխաւորաբար Բիրմինգհեմի մօտերը, Մանչէստը, Լիտս, Նիու Քէսըլ եւ Կլասկո:

Արտադրողականութեան մէջ արժատական փոփոխութեան համար տնտեսական եւ քաղաքական նախապայմանները նպաստաւոր էին Անգլիոյ համար: Աւելի հոն՝ քան թէ Ֆրանսայի մէջ էր որ տարազագործութիւնը կրնար զարգանալ ու բաւարարել գերաճող պահանջները, որովհետեւ Անգլիոյ մէջ Ֆէոդալական եւ թագաւորական սեղմումները վերցուած էին ԺԷ. դարու յեղափոխութեանց հետեւանքով: Բրիտանիոյ ուրիշ մէկ մասնաւոր հանգամանք ստեղծող պարագայ մը կար որ էր փայտի պակասը, որ հարկադրեց դանելու եւ շահագործելու քարածուխը եւ քարածուխի հանքերը: Աձուխին միացաւ երկաթը եւ ասոնք երկուքը հիւսուածեղէնի ճարտարաբուսութեւ մեքենայացուցին: Եւ արդէն ճարտարաբուսական յեղափոխութեան

թիւնը սկսաւ ո՛չ թէ ծանր արդիւնաբերութեան՝ այլ հիւսուածեղէնի արդիւնաբերութեան մէջ:

Հիւսուածեղէնի յեղափոխութիւնը իր կարգին՝ ծնունդ տուաւ արդիւնաբերական կապիտալիզմին՝ որ կը պահանջէր շահագործող կապիտալ եւ շահագործուող աշխատուժ: Ասոր հետեւեցաւ արդիւնաբերութեան ճիւղերու կեդրոնացումը մէկ կողմէն եւ երկրադործական յեղափոխութիւնը՝ միւս կողմէն: Այս բոլոր իրադարձութեանց շրջանին գիտութիւնը աւելի օժանդակողի դեր ունեցաւ քան թէ առաջնորդողի: Առաջնորդող ուժը ներկայացնողներն էին անտեսական, ընկերային դործօնները, որոնք աւելի ուժեղացան Անգլիոյ մէջ:

Բանականութեան դար — ձոգէֆ Փրիստլի —

Գիտութեան ազդումները սահմանափակուած չէին արդիւնաբերական մարդերուն մէջ: Բենիամին Ֆրանկլինէն սկսած ԺԸ. դարու գիտնականները, Անգլիոյ ինչպէս նաեւ Ֆրանսայի մէջ արմատական եւ ազատական մտածումներու եւ գաղափարներու տէր մարդիկ էին: Այս շարժման ամենէն կարկառուն ու յատկանշական գիրք ունեցող անհատը, որ իր մէջ կեդրոնացուց գիտութեան հետախուզութիւնը, եւ արմատական քաղաքական մտահայեցողութիւնը խոր մարդասիրութեան հետ, ձոգէֆ Փրիստլին էր (1733-1804): Գործաւորի զաւակ, ան նախ կրթուեցաւ Դէվէնարիի ակադէմիայի մէջ, նպատակ դրած ըլլալով դասնալու կոնգրէտային քարոզիչ: Ան անյադօրէն լաիկեց ԺԸ. դարու լուսաւորութեան գաղափարները, որոնք զինքը շտարին անհաւատութեան, ինչ որ պիտի ըլլար եթէ ապրէր Ֆրանսայի մէջ, այլ առաջնորդեցին բանավարական քրիստոնէութեան, աւելի շուտ օգտապաշտական հոսանքին: Այս հանգամանքը չյանձնարարեց որ ինք զիմէր գտարին ուղղադաւանութեան, որովհետեւ իր ուսմունքն ու հետաքրքրութիւնը զինքը մօտեցուցեր էին Բենիամին Ֆրէնկլինի, որուն համար գրեց ելեֆտրակամութեան պատմութիւնը: Անկէ յետոյ՝ Փրիստլի նուիրուեցաւ գիտական հետախուզութեան: Իր կեանքի ամենէն բեղմնաւոր շրջանն եղաւ 1773-էն 1780 թուականը, երբ Լորտ Շէլթոնը իրեն արամադրեց լաւ բնակարան մը եւ սարքաւորուած փորձակայան մը: Հոն էր որ ան գտաւ թթուածինը, որ զինք աշխարհահռչակ գիտնականի դերքին հասցուց:

Այսու հանգեմա՞ իր այս գիտական հետախուզումները օժանդակ մասը կը կազմէին ազատական կրօնքի ի նպաստ սնուցած գլխաւոր նպատակին: Փրիստլիի կրօնական տեսութիւնները օղակուած էին իր գիտական ճիւղին հետ: Ինք Դէքարտէն կը բաժնուէր անով որ, նիւթն ու ոգին, բանականութիւնն ու հաւտքը իրարմէ չէր անջա-

տեր, այլ զանոնք կ'ուզէր միացնել: Ֆրանսացիները կը զարմանային որ փրիստլիայ մը կրնար հաւատալ Աստուծոյ, իսկ անգլիացիք այնպէս կը նկատէին որ Փրիստլիի կրօնքը դժուար կը զանազանուէր Աթէիզմէն: Եւ սակայն Փրիստլին հիմնապէս կը հաւատար Քրիստոնէական բարոյագիտութեան, որ ուրիշ բան չէր այլ միայն կեանքի լաւ բարոնումը, երկիւղածութիւն՝ Աստուծոյ հանդէպ եւ աւելի խոր բարեբաւութիւն՝ մարդուն հանդէպ: Այդ ոգիով էր որ Փրիստլին կը պաշտպանէր ընկերային ու կուլտուրական ամէն մէկ նպաստաւոր ձեւ, որ կրնար ապահովել աւելի երջանկութիւն՝ մարդկութեան մեծամասնութեան համար:

Փրիստլին քաղաքական ակտիւ գործունէութիւն չունեցաւ, բայց իր արտայայտած կրօնական ու քաղաքական միտքերը այնքան զրգուեցին Բիրմինկհէմի մամբլը, որ 1791-ին Եկեղեցւոյ եւ Թագաւորի պաշտպանութեան անունով, վառեցին իր տունը, իր զրազարանն ու փորձակայանը եւ ինք հաղիւ թէ կրցաւ իր կեանքը ազատել ու փախչիլ Ամերիկա:

Անթուան Լափուազիէ —

Գիտութեան պատմութեան մէջ Փրիստլիի անուան հետ անխզելի կերպով կապուած է Լափուազիէի անունը (1743-1794), անունը այն Ֆրանսացիին, որու յեղափոխական թէորին քիմիագիտութիւնը միանգամ ընդմիջա վերածեց բանավարական եւ քանակական գիտութեան: Որպէս արտակարգ անհատականութիւն՝ Լափուազիէ տիրապետած էր տասնութերորդ դարու Ֆրանսական գիտութեան: Բայց ան Փրիստլինէն կը տարբերէր: Թէեւ երկուքն ալ գիտութիւնը ըրած էին իրենց կեանքի նպատակը, բայց Լափուազիէն շունէր այն կողմերը, որ փոքր ի շատէն յարմարուէր Փրիստլիի կրօնական, արմատական եւ մարդասիրական անորոշ տեսութիւններուն: Անոնց փոխարէն Լափուազիէն նկատի ունէր հասարակական ծառայութիւնը եւ գիտութեան գործնական կիրարկումը՝ հիմն ռեժիմը արդիականացրնելու նպատակով: Լափուազիէն հարուստի զաւակ էր, ատոր համար ան ամէն միջոցներ ունէր իր գիտական հետախուզութիւնները յառաջ տանելու համար: Իր գիտական կրթութիւնը բազմակողմանի էր եւ լաւագոյնը: Ան տիրապետած էր մատեմատիկայի, աստղագիտութեան, բուսաբանութեան, մարդակազմութեան, երկրաբանութեան եւ ամենէն կարեւորը՝ քիմիագիտութեան: Այս վերջինին՝ այսինքն քիմիագիտութեան տուած նպաստը շատ մեծ եղած է:

Փրիստլի եւ Լափուազիէ եղած են այն երկու անհատները, որոնք մարդկային յառաջընթացութեան մասին տաժամ իրենց յոյսը կապած են գիտութեան եւ ճարտարարուեստի արագ աճման հետ: Նոյն

դարու վերջերը աւելի եւ աւելի թիւով մարդիկ, եւ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կիներն ալ, սկսան մտածել թէ կարելի է հասարութեան եւ բանավարութեան ուղեգիծով աշխարհ մը ունենալ, որ ազատ ըլլայ նախապաշարութեան եւ առանձնաշնորհումներէ։ Այս շարժումը ծաւալեցաւ ամբողջ Եւրոպայի եւ Նոր Աշխարհի մէջ։ Նըշանակելի է, որինակի համար, թէ ինչպէս գիտութիւնը, որ քնացած էր Իտալիոյ մէջ, Կալվանի (1737-1798) եւ Ալեքսանտրո Վոլտայի (1745-1827) նման ազգային հանճարներ երեւան եկան, որոնք հսկայ նպաստներ մատուցին գիտութեան։ Անոնք ո՛չ միայն ազդուած էին իրենց սեփական փորձառութենէն եւ ներշնչումներէն, ինչպէս էին Ժան Ժազ Թուսոյի (1712-1778) գործերը, այլեւ ինչ որ կարելի էր սորվել Զինաստանի բանավարական ընկերութենէն, Հնդկաստանի առաքինի համայնքէն, Ամերիկայի ազնիւ հնդիկներէն եւ հարաւային ծովերու մէջ Բուստի կղզիներու պարզ ու երջանիկ ժողովուրդներէն։ Փիլիսոփաները վեր հանեցին բնականութենէ ազատագրուած հասարակութիւն մը, որու նայուածքը ուղղուած էր դէպի Բնութիւնը։

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԱՆՈՐ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Միապետութեան վերջին օրերու Փրանսական գիտնականները տողորուած էին փիլիսոփաներու ոգեւորիչ շունչով, եւ կը նայէին այն նոր ռեժիմին, որ իրենց գործելու պատեհութիւն տալու էր։ Եւ ահա, երբ Ֆէոդալական հետքերը ջնջուեցան եւ բանականութիւնը հասաւ իր բարձրացումին, նոր գիտութիւնը անցաւ իր առաջնորդող դերին։ Յեղափոխական բոլոր կառավարութիւնները ձեւականօրէն ճանչցան գիտութեան կարեւորութիւնը, շատ բան տուին անոր, եւ շատ բան կը սպասէին անկէ։ Կարգ մը գիտնականներ՝ ինչպէս Մոնկէ (1746-1818) եւ Լազար Կարնոտ (1754-1823) եռանդուն հանրապետականներ էին եւ անմիջապէս տնտեսական եւ նոյնիսկ գինուորական վարչութեանց մէջ մտան։ Ուրիշներ, ինչպէս Պէյլի (1736-1793), Կոնտորսէ (1743-1794) եւ Մեծն Լավուազիէ, թէեւ առաջին առիթով համագործակցեցան կառավարութեան հետ, բայց հին ռեժիմի իրենց ընկերներուն հետ չկրցան հաշտուիլ եւ զո՛հ զարձան ժողովրդական յետադիմութեան։ Յամենայն դէպս, գիտնականները մեծ մասով կը զրազէին Պետութեան հին մեխանիզմի բարեկարգութեան եւ գիտական ուղեգիծով դաստիարակութեան։

Գիտնականներու առաջին գործն էր կշիռքներու եւ չափերու բարեկարգումը, որուն համար պէտք էր յեղափոխական փոփոխութիւն մը, որ յաջորդելու էր հին տաժանելի սխառմին։ Վերջապէս

մեքրակամ դրութիւնը հաստատուեցաւ 1799-ին։ Անոնց երկրորդ մեծ գործն էր ստեղծել արդիական գիտական կրթութեան հիմնարկութիւններ։ Յեղափոխականները սխառմատիկ կերպով կառուցին հին համալսարաններու հակադիր հաստատութիւններ, որոնք նուիրուած էին պատերազմական գիտութեան եւ ճարտարարուեստի զարգացման։ Նապոլէոն, այդ գինուորական զպրոցներէն մէկուն կ'աշակերտէր։ Հաստատուած զպրոցներուն մէջ ընտրուած էին կարող մասնագէտներ։ Սոյն հաստատութիւններէն դուրս եկան առաջին առիթով հետեւեալ անուանի ուսանողները.— Կէյ Լուսակ (1778-1850) Թէնարտ (1777-1853) Մալուս (1775-1812) եւ Ֆրէշլէ (1788-1827)։ ասոնց վիճակուած էր գիտական շարք մը ճիւղերու զարգացման ստատրոգ կարեւոր դերը։ Այս հիմնարկութիւնները հաւասար պատեհութիւն կուտային բոլոր դասակարգերու ընդունակ աշակերտներուն, ռաք դնել գիտութեան մարզին վրայ։ Ֆրանսան անոնց կը պարտի ԺԹ. դարու գիտական տիրակալութեան իր դիրքը, մինչեւ նոյն դարու վերջերը երբ Բրիտանիա եւ Գերմանիա հետեւեցան իր օրինակին։

Նապոլէոն — գիտութեան խնամակալ —

Նապոլէոնական շրջանը որ հետեւեցաւ Փրանսական Յեղափոխութեան, գիտական արշաւը որեւէ կերպով չդանդաղեցուց։ Բարեսէր բռնապետները շարունակեցին իրենց խնամակալի դերը գիտութեան վրայ, բայց Նապոլէոն անձամբ անոնց վարչական գերն ստանձնեց։ Ան շատ անգամ ներկայ եղաւ Ակադեմիայի նիստերուն եւ յետոյ՝ գիտական ամբողջ արշաւախումբ մը առաւ իրեն հետ, երբ արշաւեց Եգիպտոս։ Ինքն էր զարձեալ, որ Աբրա Հոյի (1743-1822) հրամայեց դասագիրք մը պատրաստել բնախօսութեան վրայ։ Այդ մարդը բիւրեղագիտութեան հիմնարկուն էր։ Նապոլէոն, պէտք է ըսել թէ աւելի քան մէկ դարու ընթացքին միակ եւ կարեւոր իշխանապետն էր, որ նուիրուած էր գիտական կրթութեան։ Ան տեսակ մը բուրժուական խորամանկ զազափար մը ունէր գիտութիւնը օգտագործել իր ռեժիմին ու իր բանակներուն համար։

Նապոլէոնական պատերազմները անուղղակիօրէն նկատելի կարեւորութիւն ունէին գիտութեան համար։ Ճարտարարուեստական Յեղափոխութիւնը այդ դարու շրջագարձին, դանդաղօրէն կը ներթափանցէր Փրանսայի մէջ, բայց Փրանսան աւելի բազմամարդ երկիր էր քան Բրիտանիան — Սկոտլանտ եւ Իրլանտան չհաշուած — 28 միլիոն բնակչութիւն՝ 11 միլիոնի դիմաց։ Իր ճարտարարուեստական արտագրութիւնը, թէեւ նուազ կեզրոնացած, իրապէս աւելի խոշոր էր, քան բրիտանականը։ Ատոր համար ան կարող էր աննախընթաց

ձգտումով իր բանակները ղրկել Եւրոպայի բոլոր կողմերը: Բրիտանական Պրոֆէյտը, որ կարելի եղաւ տեխնիկական եւ նաւային գերակայութեամբ, իր երկար տեւողութեամբ, Ֆրանսայի ազգային տընտեսութեան քիչ վնասեց, միայն թէ չքացուց անոր անդրծովեան շուկաները: Այդ պլոքէյտը երբ մէկ կողմէն խափանեց բնածխատի եւ շաքարի աղբիւրները, միւս կողմէն խթանեց Ֆրանսայի քիմիական ճարտարարուեստը եւ նպաստեց որ Ֆրանսան տիրական դառնայ քիմիագիտական մարզին վրայ՝ յաջորդող երեսուն տարիներուն: Արդի պատերազմներու ժամանակներէն բոլորովին տարբեր էին Նապոլէոնական Պատերազմները. անոնք չգրաւեցին գիտութեան գաշտերը, բայց քաջալերեցին տարբեր երկիրներու գիտնականներու մուտքն ու գործը: Նապոլէոն մեծ մրցանակով վարձատրեց Դէյվին (1778-1829)՝ Անգլիացի քիմիագէտը՝ 1808-ի քիմիական գիւտերուն համար, երբ զայն հրաւիրեց Փարիզ:

Ֆրանսական Յեղափոխութեան շրջանին, Բրիտանիոյ մէջ իրերու զարգացողական բնթացքը բոլորովին տարբեր էր: Այնտեղ, փոխան ուժգին եւ ազդու նորաձեւութեանց գրեթէ յուսահատական ճիգ մը կար փարելու Եկեղեցւոյ եւ պետութեան հին ձեւերուն եւ ժխտում մը՝ Վիկերու ազատամիտ հակումներուն: Կրօնական հակակարծութիւնը բանավարտական աստուածապաշտութենէն գնաց զգացական Մեթոսականութեան: Ասոնցմէ ո՛չ մէկը, սակայն, միջամուխ եղաւ ճարտարարուեստի յառաջացման, որովհետեւ Ֆրանսայի Պրոքէյտի հետեւանքով Բրիտանիոյ առջեւ բացուած էին մեծ շուկաներ, որոնք կը հարկադրէին որ պատերազմական նիւթեր արտադրուին ո՛չ միայն Քրիստոնեայ՝ այլեւ ճարտարարուեստական տեսակէտով յետամնաց զաշնակից երկիրներու համար:

Նաբոլէոնական շրջանէն յետոյ՝ գիտութիւնը ժամանակաւորապէս սկսաւ կաղալ բացառելով Գերմանիան, ուր գիտութիւնը զարթնող նացիոնալիզմի հետ օգակուած՝ սկսեւ էր զարգանալ աննախընթաց թափով: Բէնէտիան պարզ էր, որ իր գլուխը ցոյց կուտար Բրիտանիոյ, Ֆրանսայի, ինչպէս նաեւ՝ որոշ չափով Գերմանիոյ մէջ, բայց գիտնականներն ու գիտութեան սիրահարները, չլքեցին պայքարի գաշտը եւ նուիրուեցան ազատական բարեկարգութեան շարժումին:

ԺԹ. ԴԱՐՈՒ ԿԷՍԸ (1830-1870)

Եթէ ԺԸ. դարը մեքենական ճարտարարուեստի ժամանման դարն էր, ԺԹ. դարու կիսուն՝ կը տեսնենք թէ անոր ազդեցութիւնը տարածուած էր աշխարհի ամէն մէկ մասին մէջ: Գիւտերու աճումով

ճարտարարուեստական երկիրներու մէջ ազդող միլիոնաւոր մարդոց կեանքի պայմաններն ալ ամբողջապէս կերպարանափոխուեցան: Նոր ու ընդարձակ քաղաքներ կազմուեցան արագօրէն բազմապատկուող բնակչութեամբ: Ճարտարարուեստի աման հետ զուգընթաց՝ արմատականօրէն զարգացան փոխադրական միջոցները. երկաթուղիներ, որոնք կապուեցան արդիւնաբերական կեդրոններու հետ, շոգենաւեր, որոնք հում նիւթեր հաւաքեցին հեռուներէն, եւ տարազարծուած ապրանքներ տարին սպառման շուկաներուն՝ ծովերէն անդին: ԺԸ. դարը արտադրողութեան բանալին գտաւ, իսկ ԺԹ. դարը գտաւ հաղորդակցութեան ու փոխադրութեան բանալիները: Մարդկային կեանքի պայմաններուն մէջ այսպիսի ամբողջական եւ արագ փոփոխութիւն տեղի ունեցած էր: Ուր որ մտաւ ճարտարարուեստականացումը, այնտեղ քայքայուեցան Փէնոպալական ընկերային յարաբերութիւնները: Տնտեսական ու քաղաքական ձեւերէնցութիւնը կը պատկանէր կապիտալիստ ձեռնարկուներու գասակարգին: Նոյնիսկ պետութեան մէջ Ֆէոդալական րէակցիայի մնացուկները աւլուեցան, Ֆրանսայի մէջ՝ 1830-ի յեղափոխութեան յաջողութեամբ, իսկ Անգլիոյ մէջ Բարեկարգութեան Օրինադիմի որդեգրումով՝ որ տեղի ունեցաւ 1932-ին: Մարքսի որակումով՝ «իշխող դասակարգի գործադիր կոմիտէն» էր որ հրապարակ իջեր էր: Այլեւս անհրաժեշտ էր օրէնսդրական միջոցով պաշտպանել առանձնաշնորհեալը, անգամ մը որ սեփականութիւնը ապահով էր: Հաստատուած տնտեսական սիստէմի գործն էր տեսնել որ ամէն ոք ստանալու էր այն՝ ինչ որ ինք կ'արժէր:

Նախորդող դարերուն, հարստութիւնը երբեք այնքան գիւրուութեամբ չէր կուտակուեր, իսկ թշուառութիւնը այնքան չէր տարածուած եւ ընկերային ամէն տեսակի պաշտպանութեան կողմէ երբեք այնքան չէր անտեսուած: Մեքենագիտական եւ ճարտարարուեստի նոր յաղթութեանց հետ երեւան եկաւ ծխապատ աղտոտութիւն մը, զոր նախորդ դարերու քաղաքակրթութիւնը չէր կրնար արտադրել: Այս միջավայրին մէջ էր որ գիտութիւնը զգալի ըրաւ իր ներկայութիւնը՝ իր գործունէութեան եւ կարեւորութեան կշիռքով:

Արդէն ԺԹ. դարու սկզբնաւորութենէն առաջ գիտութիւնը նոր ճարտարարուեստներու անբաժան գործակիցն էր, եւ երբ այդ դարու յառաջդիմութիւնը արագացաւ, գիտութեան ծառայութիւնն ալ աւելցաւ: Ան աճեցաւ աւելի լայն շրջանակով եւ այդպէս ընելով, ան անխուսափելիօրէն ենթարկուեցաւ կապիտալիզմի ընկերային ուժերու ազդեցութեան:

1830-ին ճանչցուած իրողութիւն էր որ իշխանութիւնը որպէս անհրաժեշտութիւն՝ հասարակ ժողովուրդէն անցեր էր հարուստին ձեռքը: Գիտութիւնը սկզբունքով ասոր հակառակ էր: Ճշմարիտ է,

Ֆրանսական Յեզուիտութեան ատեն, ան շատ աւելին բրաւ, քան ինչ որ իր պարտականութիւնն էր. բայց երբ սահմանադրական դեմոկրասին հաստատուեցաւ, այլեւս տիրող հասարակութեան ուղղուած որեւէ քննադատութիւն՝ անարգանք կը համարուէր: Անցեալին, գիտութիւնը գլխաւոր խթանողն քննադատութեան, գիտնականներն ու ոչ-գիտնականները այժմ կը զգային թէ գիտութեան քննադատական դերը որպէս անհաւատարմութիւն՝ կրնար մէկ կողմ դըրուիլ:

Օգտապաշտները.—

Այն՝ ինչ որ աւելի քան կարելոր էր, ինչպէս ժՁ. դարուն, բաժնել գիտութեան ըմբռնումը իր ընկերային կեանքի կիրարկումէն, ստեղծել «գտարիւն գիտութեան» գաղափարը եւ զայն մեծարելի դիրքի մէջ դնել, եւ այդպէս ընելով հնարաւորութիւն տալ անոր, որ ծաղկի եւ իրապէս ծառայէ որպէս շահարէր աղբիւր: Այս փոխակերպութիւնը կատարուեցաւ մեծ մասով՝ Օգտապաշտներու կողմէ, որոնք ժԸ. դարու փիլիսոփաներու հետեւորդները ամուլութեան գատապարտեցին: Հետեւելով Ադամ Սմիտի (1723-90) եւ Երէմի Պէնտէճմի (1748-1832), անոնք՝ այդ Օգտապաշտները, հասարակութեան հին, աւանդական շարիքները վերցնելու գործը յանձնեցին օրէնսդրութեան, որով կապիտալիստը բացարձակապէս արձակեցին անհակադէյո եւ ազատ: Միայն սասնկով էր որ Բիկարտոյի (1772-1823) եւ Ճոն Ստուարտ Միլի (1806-73) նման անտեսագէտներու մեկնարանած երկաթեայ կանոնները պիտի կրնային աղահոյժել մեծամասնութեան մեծագոյն երջանկութիւնը: Այդ դարաշրջանին էր որ անոնք գերազանցօրէն զստահ էին թէ՛ գիտութիւնը եղած է որ ձեւակերպեր է հասարակութեան յաւիտենական այս օրէնքները, որոնք նուիրականացուցեր են անկախ անհատներու ազատ պայմանագրութիւնները: Հաստատապէս համոզուած իրենց նոր մարդարէներուն, կապիտալիստիկաբան ձեռնարկուները, այսպիսով կրցին ապացուցել որ իրենք իրենց գործին մէջ արգարացի էին: Արտադրողական աշխուժութեան, այն ուժեղ հոսանքին մէջ որ յառաջ կ'ընթանար 1870-1870-ի տարիներուն, առանց նշանակելի դադարի, գիտութիւնը փոքրիկ, բայց կենսական բաժին ունեցաւ:

Ասիկա կապիտալիզմի լուսածիր շրջանն էր, ուր շուրջ հարըստութեան կողքին կ'երեւէր փայլելուն թշուառութիւնը: Կապիտալիզմը արդէն, ինչպէս Մարքսը 1848-ին գուշակած էր, հրապարակ հանած էր ընչազուրկներու դասակարգը, որուն վերջնական ուժը կապիտալիզմին գերեզմանը պիտի բանար: Բայց այդ օրը տակաւին հեռու էր. եւ թէեւ լուսագոյն պայմաններու համար մղուած կռիւր երբեք

գաղար չառաւ, արտադրողութեան աճումը եւ ընդարձակուող շուկաները թոյլատրեցին որ կապիտալիստները որոշ ժամանակով զիջումներ ընեն բանուոր դասակարգին, յեզափոխական շարժումը կասեցնելու համար:

ԺԹ. դարու մէջտեղի շրջանը տեխնիկական փոխակերպումի արժատական շրջան մը չէր, դուր կարելի ըլլայ բազմատեղ ժԸ. դարու հետ: Ան աւելի շուտ, տարագաղործական մեթոտներու յարատեւ գարգացման շրջան մըն էր, որ կը ձգտէր աւելի խոշոր չափանիշի: Թէեւ մրցակիցները սկսեք էին մտնել գաշաը, բայց Բրիտանիան կը պահէր իր գերակշռող դիրքը: Ճարտարարուեստական Յեզուիտութիւնը չէր դադրած. ան նոյնիսկ աւելի կը զարգանար: Ատենի մը համար Բրիտանիան աշխարհի գործատեղին էր: Անոր ապրանքներուն աժանութիւնը, մասնաւորապէս նորագոյն մեքենաներով հիւսուածեղէնի ապրանքները տասնեակ տարիներով անսահման շուկաներու բաւարարութիւն կրնային տալ: Ատոր համար արտադրութեան մարդին վրայ նոր մեքենաներու ուժգին պահանջ չկար. միայն կար հաղորդակցութեան եւ փոխադրութեան միջոցները արագացնելու յարաճուն պահանջը: Հեռագիրը եւլքտրականութեան կապուած նոր գիտութեան գործնական կիրարկումն էր: Բայց ամենէն շատ կարելորութիւն կը տրուէր փոխադրական միջոցներու կատարելագործման — երկաթուղին ու շոգենաւր — այստեղ գիտութիւնը օժանդակողի դեր ունէր միայն:

Ելեքտրականութիւն, քիմիապիտութիւն, սաղմնարանութիւն, մանրէարանութիւն, ախտարանութիւն եւ գիտական այլ ճիւղեր զարգացան ժԹ. դարու վերջերը: Կապիտալիստական տնտեսութիւնը գիտական բոլոր այդ ճիւղերը ի սպաս դրած էր ուղղակի կամ անուղղակի կերպով կապիտալիստ դասակարգի շահերուն ծառայեցնելու հասար:

ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Գիտութիւնը կապիտալիստական շրջանին.—

ԺԸ .եւ ժԹ. դարերուն գիտական յառաջգիմութեան գլխաւոր ճիւղերու ուրուագծումին հետեւելով մենք տեսանք թէ Ճարտարարուեստական Յեզուիտութեան եւ անոր հետեւող հասարակութեան նիւթական զարգացման ու մարդկային մտածողութեան Էվոլուցիայի միջիւ կապ մը կար, որ մարդը զննելու էր նոր ստեղծուած ընկերային միջավայրի հետ աղբուօրէն ներգործող յարաբերութեանց մէջ: Այս շրջանին էր որ կապիտալիզմը իր սեփական հասակով բարձրացուց իր

զլուխը, բարդաւածեցաւ յորդառատ կերպով եւ յետոյ՝ սկսաւ ցուցը-
նել անկումի առաջին նշանները: Գիտութիւնն ալ շարունակարար
ուժգնորէն մեծցաւ — չենք նշեր անոր մանր երերումները — եւ պէտք
է ըսել թէ ան աւելի արագ աճեցաւ քան տնտեսութիւնը եւ նոյն դարու
վերջերը որպէս անջատուած ճիւղ՝ աւելի կարեւոր դիրք գրաւեց քան
կապիտալիստական սխտէմը՝ որպէս ամբողջութիւն վեր առած: ԺԹ.
դարու վերջերը բոլորովին գիտութեան վրայ հիմնուած նոր ճարտար-
արուեստներ երեւան եկան: Բայց պէտք է ըսել թէ գիտութիւնը թոյ-
լատրած էր հին ձեւի ձեռագործական ճարտարարուեստներն ու հին
ձեւի երկրագործութիւնը: Սկզբնական շրջանին ան տակաւին շատ
բան ունէր սորվելիք ճարտարարուեստէն, բայց ի վերջոյ՝ ճարտար-
արուեստի գոյութիւնը կապուեցաւ գիտութեան հետ: ԺԶ. եւ ԺԷ.
դարերու գիտական յեղափոխութեան եւ ԺԸ. ու ԺԹ. դարերու ճար-
տարարուեստական Յեղափոխութեան շարժումները արժատական փո-
փոխութիւն յառաջացուցին գիտութեան եւ տնտեսութեան յարաբե-
րութեան մէջ: Առաջին շրջանին գիտութեան քայլն ու ազդեցութիւնը
սահմանափակ էր. քիչ մը աւելի զգալի՝ աստղագիտութեան ու նա-
ւարկութեան գիծով: Երկրորդ շրջանին, ճարտարարուեստական գոր-
ծունէութեան դաշտին մէջ մտան մեքենականութիւնը, ուժը, փոխա-
դրութիւնը, քիմիական նիւթերը եւ սաղմամթերքը: Առաջին շրջանի
հաղորդակցութեամբ գիտութիւնը առաւելապէս կը հետաքրքրուէր
նոր գործիքներով բնութեանէն ծանօթութիւններ հաւաքելու գործով.
Եւ հնարուեցաւ հեռադիտակը, մանրադիտակը, ջերմաչափը եւ ծան-
րաչափը. այս գործիքներով մատեմատիկական վերլուծումով պիտի
պատկերացուէին ստացուած ծանօթութիւնները եւ պիտի թարգմա-
նուէին անոնց արդիւնքները: Երկրորդ շրջանին, գործիքները թէեւ
շարունակեցին զարգանալ եւ բազմապատկուիլ, անոնք այժմ գիտու-
թեան նիւթակամ արտադրութիւններու միայն մէկ մասը կը կազմէին:
Նոր մեքենաները — շոգեմեքենաներ, թուրպիններ, ուժանիւններ, ե-
լեքտրական մոթորներ եւ քիմիական գործարաններ — որոնք ԺԸ.
եւ ԺԹ. դարերու արտադրութիւններն էին, նպատակադրուած էին
ոչ թէ սոսկ բնութեան շուրջ յայտնագործումներ ընել, այլ զայն փո-
խել, եթէ հնարաւոր էր:

Մէկ յեղափոխութենէն միւսին միջեւ, գիտութիւնը իր կրա-
ւորական դերէն անցաւ ներգործող դերին, կամ ըսենք՝ Բնութեան
հետախուզութենէն «իրերը հնարաւոր եղած չափով փոխելու» դերին:
Այս փոխանցումը կարելի եղաւ նախ՝ տեխնիկապէս, գործաւորներու
եւ գիտնականներու միացեալ ջանքերով, այսինքն՝ մեքենականու-
թեան զարգացումով, եւ յետոյ՝ տնտեսապէս, շահագործման զրուած
կապիտալի յարատեւ կուտակումով: Կապիտալիստական ձեւի Ֆի-

նանսաւորմամբ տեխնիկական եւ գիտական յառաջդիմութիւնն էր որ
զարկ տուաւ ԺԸ. եւ ԺԹ. դարերու աշխուժութեան:

ԳՈՐԾԱՒՈՐ ԳԱՍԱԿԱՐԳԸ ԵՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Կապիտալիստները սիրայօժար նուիրուեցան գիտութեան երբ
ան կը ծառայէր իրենց շահերուն: Բայց անոնք ահաճութեամբ գի-
մեցին անոր, երբ խնդրոյ առարկան ժողովրդական առողջապահու-
թիւնը կամ բարեկեցութեան առաջնորդող կրթութիւնն էր: Անոնք
բացարձակապէս մերժեցին գործածել զայն, երբ ան քննութեան
կ'առնէր եւ կարելիութեան սահմանին մէջ կ'ուզէր փոխել այն սխ-
տէմը, ուրկէ իրենք կը քաշէին իրենց հարստութիւնը: Գիտութիւնը
չաճու նպատակին ծառայեցնելու պրոցէսին մէջ կապիտալիստները
ցոյց տուին արտադրութեան ընկերային ձեւի այն ընդարձակածաւալ
եղանակը, որ աննկատելի կը դարձնէր բանուոր զստակարգ մը, որուն
դէմ կեցած էր կապիտալիստական սխտէմը, որպէս աշխատանքի,
անապահովութեան ու կարօտութեան սխտէմ:

Կապիտալիզմի նոր երեւումի սկզբնական շրջանին արտադրու-
թեան հին Ֆէոդալական ձեւի վերջին նշխարները երբ կը ցնցուէին,
նոյն ատեն կը ձեւակերպուէր յառաջդիմական ընդարձակման շրջան
մը: Ի վերջոյ, կապիտալիզմը հսկայական չափով զարգացաւ եւ տա-
րածեց իր տիրապետութիւնը աշխարհի բոլոր մասերուն մէջ, որով-
հետեւ իր դէմ կանգնած էր նոր դասակարգ մը — բանուոր զստակար-
գը, որ կը շարժի դէպի նոր եւ աւելի բանաւոր արտադրութեան սո-
ցիալիստական ձեւին, ձեւ մը, որ պիտի կրնայ գործածել գիտութեան
բոլոր արդասիքները:

Ասկէ պարզ կ'երեւի որ, այն ինչ որ կապիտալիստները չեն ու-
զեր ընել, բանուորութիւնը պիտի կրնայ եւ պիտի ընէ:

3.— ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Փոխանցման մէկ ժամկէտը.—

Պատահական չէր որ գիտութեան եւ հասարակութեան մէջ կա-
տարուած յեղափոխութիւնները տեղի պիտի ունենային միասին. բայց
պարզ ըլլալու է այն տեսութիւնը, որ մէկը միւսին հետեւանքն եղած
է: Անոնց փոխադարձ ազդեցութիւնները եղած են նուրբ եւ փոփոխա-
կի: Այժմ մենք պիտի փորձենք երեւութական կնճառտութիւնները
անջատել:

Կատարուած իրողութիւնները, որոնք եղած են սոսկալի, արագ եւ շփոթեցնող, առանց ընդհանուր նախատիպի չեն: Մենք կ'ապրինք հասարակութեան մէկ ձեւէն միւսին փոխանցման այն դարաշրջանը, ուր տակաւին չլուծուած հակամարտութիւններ կան: Աշխարհի բաժանումը որ երեւցաւ 1917-ին, իր սրուածութեամբ հակադիր պատկեր մը կը ներկայացնէ, երբ բողոքատենք ժԹ. դարու միաձեւ հասարակութեան հետ: Հոգ չէ թէ մարդիկ ինչպիսի բացատրութիւններ կուտան մեր առջեւ պարզուող իրականութեան, անոնք չեն կրնար ուրանալ որ մեր աշխարհը բաժնուած է երկուքի. — Սոցիալիստական աշխարհ եւ կապիտալիստական աշխարհ: Կապիտալիստական ամբողջ սիստէմը, որ հաստատուեցաւ 300 տարի առաջ, այսօր ստացեր է սոցիալիստական սիստէմի մարտահրաւէրը, սիստէմ մը, որ երկինքէն չիջաւ, այլ դուրս եկաւ կապիտալիզմի ներքին հակադրութիւններէն: Եւ այս՝ անհերքելի ճշմարտութիւն է:

Ի. դարու ամբողջ ընթացքին, սակայն, ակնարկուած մարտահրաւէրը ներկայացնողը Սորհրդային Միութիւնը չէ, թէեւ ան եղաւ 1917-ին պատմութեան գլխաւոր շրջադարձը վճռորոշողը, որովհետեւ մենք նկատի պիտի ունենանք կանխագոյն ժամանակներէն սկսած ընկերային պայքարող ուժերը, որոնք Համաշխարհային Առաջին Պատերազմին ուսական յեղափոխութեան յաղթանակը սպառնում էին: Կապիտալիզմի էվոլյուցիան կը շարունակուի ամբողջ շրջանին համար եւ տակաւին ան տիրապետող տնտեսութիւնն է աշխարհի մեծ մասին վրայ:

Աշխարհի սոցիալիստ մասի էվոլյուցիան, առաջին անգամ միայն Ռուսաստանի մէջ, այժմ Չինաստանի եւ ուրիշ շատ մը երկիրներու մէջ, բոլորովին տարբեր տեսակէն է: Ասոր պատճառները հետեւեալներն են. առաջին՝ այդ երկիրները կապիտալիստական շահատակութեանց հետեւող թշուառութիւն մը ժառանգած են, զոր այնքան դիւրին չէ մէկ անգամէն անհետացնելը: Երկրորդ՝ որովհետեւ դարերով հաստատուած տնտեսական հին սիստէմ մը հիմնայատակ քանդելը շատ աւելի դժուար է քան առանց նախընթաց արգելքի նոր սիստէմ մը կառուցելը, ատոր համար դժուարին պայքարներ մղելու է արմատապէս նոր մը կառուցելու համար: Երրորդ՝ որովհետեւ կը շարունակուին արտաքին թշնամական փորձերը եւ դաւադրութիւնները, հակայեղափոխական շարժում ստեղծելու համար: Վերջին տարիներուն է որ կը տեսնենք թէ սոցիալիստ երկիրները ո՛չ միայն յաղթահարած են ներքին դժուարութիւնները, այլեւ առաջնորդողի դեր ստանձնել են տնտեսութեան, տեխնիկայի եւ գիտութեան մէջ:

Այսու հանդերձ, հակառակ այս ուշացումին, սոցիալիստ եր-

կիրներու մէջ տեղի ունեցած զարգացմանց կարեւորութիւնը շատ աւելի մեծ է, քան ինչ որ անոնք կրնան ցուցնել: Անոնք կը ներկայացնեն բնական եւ մարդկային աղբիւրներու բոլորովին նոր տեսակի գործածութեան եղանակ մը, որ ոգեւորիչ հանգամանք ունի կապիտալիստական երկիրներու բանուորներուն եւ նոյնիսկ տնտեսապէս յետամնաց երկիրներու ժողովուրդներուն համար:

Մոնոպոլը եւ իմպերիալիզմը. —

Կապիտալիստական աշխարհի մէջ Ի. դարու գլխաւոր, աչքի զարնող երեւոյթն է մասամբ վաճառականական, մասամբ արդիւնաբերական հիմունքով թրքատներու, կարտէլներու արագ աճումը: Անոնց անունները ծանօթ են ամբողջ աշխարհին — Տու Պոնտ, Ճէնէրալ Մոտոր, Քրուպպ, Շնայտր, Իմպերիալ Քիմիքըլ, Էւալըն — ալ չենք յիշատակեր Ստանդարտ Օյլի անուանապէս ցրուած կայսրութիւնը եւ Մորկանի պանքաները:

Թրքատներու եւ կարտէլներու պատուարժան գոյութեամբ կը պաշտպանուին սպրանքներուն գիները՝ մրցակցական աստիճանէն շատ բարձր: Ասոր կը միանայ էմփիւնիական եւ գիտական հետախուզումներու գործածութեամբ մեծաքանակ արտադրութեան ծախսերու զեղչը, որով մոնոպոլի տէրերը կ'ապահովեն հսկայական շահարաժիւններ: Ասոր հետեւանքով՝ անոնք կարող կ'ըլլան իրենց գործունէութեան դաշտը աւելի ընդարձակել միակցութիւններով եւ արկածախնդրական ձեռնարկներով: Բայց փորձառութիւնը ցոյց տուած է որ անոնք չեն կրնար խուսափիլ շահու համար յառաջ տարուած արտադրութեան Նեմեսիսէն: Որչափ մեծ ըլլայ անոնց աշխատանքի շահագործման կարողութիւնը, նոյնքան կը դժուարանայ սպրանքներ արտադրող նոյն բանուորներու մէջէն սպառողներ ձարելը: Ասկէ կը ծնի նոր շուկաներ գտնելու կարիքը եւ արդէն իսկ ստացուած շուկաները պաշտպանելու անհրաժեշտութիւնը, եւ ահա հոս երեւան կուզայ կառավարութեան գործօն դերը:

Հակառակ անոր որ ժամանակ առ ժամանակ աշխարհի շուկաներու շուրջ զանազան երկիրներու մոնոպոլիստներու միջեւ համաձայնութիւն կը կնքուի, բայց ասով մրցակցական կոիւր չի վերջանար: Երբեւիցէ շուկաներու սահմանաւորումը չի համարպատասխաներ համաձայնող պետութեան մը արտադրողական գերակայ կարողութեանը. այստեղ յարաբերութիւնները կը փոխուին զինուորական ուժի միջամտութեամբ: Ասկէ ծագում առած են մեծ ու փոքր պատերազմները, որոնք հսկայ աւերներ գործած են աշխարհի մէջ վերջին եօթնամասուն տարիներու ընթացքին: Պատերազմը եւ պատերազմի պատրաստութիւնները պողպատի եւ քիմիական ճարտարարուեստ-

ներու մենատէր ընկերութեանց ամենէն արդիւնաւէտ աղբիւրներն եզրած են: Անոնք կը հայթայթեն պատուէրներ, եւ ո՛չ մէկ քննութիւն կամ առարկութիւն՝ որոշեալ գիշերու մասին: Այսու հանդերձ, յաջողակ երկիրներու մոնոպոլիստները պատերազմի առիթով ինչ առաւելութիւններ ալ որ ձեռք բերեն իրարու ետեւ աւելցող շուկաներու մէջ, ճարտարարուեստական արտադրութիւններու սպասման հիմնական գծուարութիւնը կայ ու կը մնայ, եւ դաժան ճղնածամերը, որոնք անձանօթ էին նախորդող դարերուն, կը հարկազրկեն որ միայն պատերազմով կարենան մոնոպոլիստները իրենց գոյութիւնը պահել: Պաղ պատերազմը, ահա, յառաջացաւ այդ հարկազրուութեան հետեւանքով, բայց ան ալ, երբ մտնէ մրցակցական համակեցութեան շրջանը, այն ատեն պիտի գծուարանայ արտադրողութեան շահարկութիւնը, որովհետեւ մոնոպոլիստները պիտի փորձեն կառավարութեանէն խոշոր պատուէրներ խլել՝ գիշերու մեծ գեղջումով, եւ կառավարութիւնը իր ծախսերը կրճատելու համար պիտի կապուի նուազ գին առաջարկողին:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ ՏԵՆՆԻԿԱՅԻ ԵՒ ՄՈՆՈՊՈԼԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Մոնոպոլի, իմպերիալիզմի եւ պատերազմի միջեւ սմբայցած օգակները ուժգնօրէն կ'ազդեն կառավարութեան վրայ, որուն գըլխաւոր պատասխանատուութիւններն ու մեծագոյն ծախքերը ուղղուած են սպառազինման գործին: Պէտք է նոր գէնքեր հնարել, նոր գէնքեր արտադրել. եւ ատիկա խոշոր մոնոպոլիստ ընկերութեանց ճիւղն է: — Ռմբաձիգ եւ արագաթռիչ օդանաւեր, ղեկավարուող նետակներ, արտածղական հրթիռներ, ատոմական եւ ջրածնային ռումբեր — այս գէնքերը գիտական մեթոտներով կը շինուին եւ գիտական մեթոտներով յարասելօրէն կը զարգանան: Եւ կառավարութիւնը ստիպուած է մէջ մտնել անոնց զարգացումն ու արտադրութիւնը արագացնելու համար: Եւ արդէն կառավարութեան կողմէ գինուորական հետախուզութիւններուն համար եղած յատկացումները ստուերի մէջ կը թողուն ճարտարարուեստի զարգացման համար զուտ գիտութեան արուած յատկացումները: Իսկ այս խնդրին ամենէն տարօրինակ կէտն այն է որ կառավարութիւնը իր գանձարանէն միլիարաներ կը ծախսէ գինուորական գէնքերու հետախուզութեան ու կատարելագործման համար, եւ այդ գէնքերու արտադրութիւնը կը յանձնէ խոշոր մոնոպոլիստ ընկերութեանց, ասով՝ կառավարութիւնը արտը կը հերկէ, կը սերմանէ, իսկ հունձքը կը թողու մոնոպոլիստներուն, որոնց հեղինակութիւնն ու ուժը հետզհետէ աւելի կը կեդրոնանայ եւ կ'աւելնայ:

Այստեղ մեր առջեւ կը պարզուի յատկանշական երեւոյթ մը: Մինչ իշխանութեան կեդրոնացման այս պրոցեսը տեղի կ'ունենայ, այն անկախ կապիտալիստները, որոնք ժժ. դարու մրցակցական անտեսութեան մէջ տիրող էին, կը տեսնենք որ ներկայիս միտրճուած են ուսուցող հասանքին մէջ: Ատոր պատճառը այն չէ, որ այժմ պղտիկ մարդոց համար հոգ չկայ: Արդի ընդարձակածուալ ճարտարարուեստը կարիք ունի եւ պատահութիւն կուտայ ենթա-պայմանադրեալներու եւ բազադրեալ տարրերու օժանդակ արտադրութեանց: Իրողութիւնը այն է որ երէկուան այդ անկախ կապիտալիստներու յարաբերական կարելւորութիւնը կծկուած է. անոնք կորսնցուցած են իրենց անկախութիւնը եւ կախուած են խոշոր ընկերութիւններէն: Նոյն դրութեան ենթարկուած են գիւտարարներն ու գիտութեան սիրահարները, որոնք ժէ. դարուն գիտութեան յառաջ-գիմութեան մէջ կարելւոր դեր խաղցած էին իրենց առենին: Ասկէ յետոյ՝ գիտնականները եւ տեխնիկայի մասնագէտները, ինչպէս նաեւ շատ մը բժիշկներ, դադրած են հին իմաստով մտարուեստի մարդըլլալէ. անոնք, դրամական վճարումով կը ծառային որպէս աշխատուոր՝ կառավարական մէկ որոշ մասնաբաժինին կամ խոշոր ընկերութեան մը հաշույն: Ասանկով գիտութիւնը մարդկութեան օգտակար ըլլալու գերէն հեռացած՝ մտած է տիրապետութեան ու պատերազմի ծառայելու գերին մէջ: Այս փոփոխութիւնը կատարուեցաւ նախ աստիճանաբար, ապա՝ արագօրէն Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն յետոյ:

ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գիտութեան գերը Պ. Միութեան եւ միւս սոցիալիստական երկիրներու մէջ, բոլորովին տարբեր է: Հոն, ուր գլխաւոր ճարտարարուեստները ենթարկուած են պետական հսկողութեան, ուր ո՛չ մոնոպոլ կայ, ո՛չ ալ շահարկութեան համար անտեսական մրցակցութիւն, հոն գիտութիւնը գիտակից արշաւով կը զարգանայ եւ իր լիութեան մէջ կը ծառայէ հասարակութեան:

Սոցիալիստական երկիրներու մէջ, մասնաւորելով Պորտուգալին Միութիւնը, գիտութեան կազմակերպութիւնը հետեւած է տարբեր ընթացքի մը, քան ինչ ընթացքի որ հետեւած է կապիտալիստական աշխարհին մէջ: Թէեւ գինուորական հետախուզութիւնը յառաջ տարուած է, եւ յաջողութեամբ, ինչպէս կը ցուցնէ աթոմական եւ ջրածնային ռումբերու յայտնագործման ճիւղը, բայց այդ գինուորական հետախուզութիւնը չէ եղած ո՛չ բացարձակ, ո՛չ ալ յարաբերա-

կան տիրակալութեան հանդամանքով, ինչ որ եղած է կապիտալիստական երկիրներու մէջ:

Տիրակալութիւնը աւելի շուտ՝ տրուած է գիտութեան գործածութեանը՝ ազգային տնտեսութեան աշխատանքին համար: Ճարտարարուեստի եւ հողագործութեան մէջ գիտութեան ամենամեծ չափանիշով մասնակցութիւնը ապահովելու կարիքը հարկադրած է որ գիտութիւնը ո՛չ թէ կառավարութեան ուղղակի ազդեցութեան տակ մնայ, այլ որպէս առանձին հիմնարկութիւն՝ հարազատօրէն զարգանայ եւ իր ընդարձակուած շրջանակով ներկայացնէ գիտական մարմիններ, գլխաւորապէս Ակադեմիաներ, որոնց մէջ կը մտնեն հազարաւոր բանուորներ: Գիտութիւնը, ուրեմն, դադրելով մասնաւոր, առանձնաշնորհեալ գասակարգի շահուն ծառայող գործիք ըլլալէ, եղած է հասարակական ծառայութեան նուիրուած հաստատութիւն մը:

Այս սխտէմը գիտութեան ուղղութիւնը կը թողու գիտնականներուն, այսինքն՝ այն մարդոց, որոնք իրենց ամբողջ հօգիտով նուիրուած են անոր: Այս հանդամանքը, նոյն ատեն, կ'ապահովցնէ որ անոնք ունենան այն բոլոր միջոցներն ու ծանօթութիւնները, որոնք կ'օժանդակեն զարգացնելու գիտութիւնը այն ուղղութեան մէջ, որ իրենց կուտայ ապագայի համար ամենահարուստ խոստումներ: Հակառակ յաճախակի հրատարակուած հաւաստումին, Սովետական Միութեան գիտական ծրագիրը գիտնականներու համար չէ շինուած, այլ շինուած է գիտնականներու ձեռքով: Բնականաբար անոնք իրենց միտքին մէջ կ'ունենան տնտեսական ծրագիրներ, եւ հաւաքաբար կը խորհրդակցին հեռատեսութեամբ անոնց գործնականացման մասին: Սովետ Միութեան հարաւարեւելեան կողմի գետի հովիտներու հրակայական կառուցման ծրագիրը, որ յայտարարուեցաւ 1950-ին, որ լրանալու էր եօթը տարիներու ընթացքին, ամբողջ 20 տարի գիտական քննութեան առարկայ եղած էր նախքան գործի ձեռնարկելը: Գիտութեանց Ակադեմիայի տարեկան եւ հնդամեայ ծրագիրները կը կեդրոնանան գլխաւորապէս գիտական կէտերու վրայ, թէեւ յաճախ այդ ծրագիրները կը մտնեն այն տեղերուն մէջ ուր տեխնիկական կիրարկումները աւելի արդիւնաւոր կ'ըլլան: Աշխարհի սոցիալիստական երկիրներու մէջ գիտութեան միջոցով տեղի կ'ունենայ տեսակ մը կերպարանափոխութիւն՝ որուն էութիւնը գծուարաւ կրնան հասկնալ կապիտալիստական երկիրներու գիտնականները:

Արեւմուտքի գիտական գործաւորը գծուարութեամբ կրնայ հասկնալ թէ ինչե՛ր կը պատահին Արեւելեան Եւրոպայի եւ Զինատանի մէջ այսօր, ո՛չ թէ անոր համար որ այդ երկիրներու պայմանները տարօրինակ են, այլ անոր համար որ անոնք հասարակական

նպատակի մը համար աշխատող ժողովուրդի մը դործերն են. նպատակ մը, զոր կը բաժնեն բոլորը, ներառեալ գիտական գործաւորները:

Նացիզմի երեւումը.—

Մինչեւ 1933 թուականը, հակառակ Առաջին Աշխարհամարտի յառաջացուցած տակնուվրայութեան, գիտնականները կը վաշխելին ապահով եւ որոշ աստիճանի առանձնաշնորհեալ ազգային եւ միջազգային դիրք մը: Ճշմարտութեան եւ մարդկային ազդի բարօրութեան նուիրուած անոնց գործը, զիրենք բարձր կը պահէր Պետութեանց եւ դասակարգերու կոխներէն: Երբ Հիթլերը իշխանութեան գլուխն անցաւ, հալածանքի առաջին ակիքներուն զոհ գացին գիտնականները: Նացիները, ցեղապաշտ թէորիաներով ներշնչուած, առաջին անգամ հարուածեցին հրեաներն ու հրեայ գիտնականները, որոնք ցրուեցան ուրիշ երկիրներ, իրենց հետ տանելով իրենց արժէքաւոր ուսմունքներն ու զերման մտաւորականներու փիլիսոփայութեան մէկ մասն ու նախապաշարուածները:

Նացի իշխանութեան տասներկու տարիները, աւերիչ պատերազմներ, որոնք վերջացան տասնեակ միլիոններով անօդնական ժողովուրդներու գիտական նախճիրով, բաւական եղան յայտնաբերելու գիտութեան նուիրուած մարդոց՝ այն վտանգները որոնք կապիտալիզմի անպատասխանատու ազահութեան ու ընչաքաղցութեան մէջ որպէս ժառանգութիւն տակաւին կը պահէին իրենց գոյութիւնը: Անոնցմէ ոմանք, պահ մը ուղեցին արգիլել անոնց վերերեւումը: Բայց ապագայի սարսափը եւ աղէտներու ահռելի հեռապատկերը կապիտալիստ երկիրներու գիտնականները մատնեցին հոգեկան անդամալուծումի, որով անոնք ապահովութեան եւ հաւատարմութեան գիծով կապուեցան այն մեքենային, որ Հիթլերի պակաս թողածը լրացնելու կոչուած է: Մի քանի երկիրներու մէջ, սակայն, շարք մը մտաւորականներ — անշան փոքրամասնութիւն մը — դարուս ողբերգական դէպքերու ճնշման տակ, ուղեցին կտրել իրենց կապերը բոլորովին՝ տիրող սխտէմին հետ, ուրկէ յոյս չկար եւ անցնիլ անոր դէմ՝ պայքարի ճակատին վրայ, բայց անոնց քով կը պակսէր այդ քաջութիւնը. ատոր համար անոնք յուսահատութեան անձնատուր, բաւականացան թեթեւ ու անլսելի գիտողութիւններով:

Մինչեւ այստեղ մենք հարեւանցի կերպով խօսեցանք տնտեսութեան հետ կապուած գիտութեան շուրջ, այժմ վեր առնենք ընկերային գիտութիւնը, այն գիտութիւնը, որ կապուած է մարդոց ընկերային յարաբերութիւնները ներգաշնակելու գործին հետ:

4.— ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՖԵՈՒԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԻՆ

Նախքան Ֆէոդալիզմի շրջանը, հռովմէական հասարակութիւնը ընկերային գիտութեան մասին որոշ գործնական ծանօթութիւն մը ունէր: Այդ ծանօթութիւնը ստացուած էր դժուարին միջոցներով. ախրող իշխանութիւնը նախ բռնի ուժով կամ համաձայնութեամբ ճգմեր էր ազնուականներու եւ սամիկներու միջեւ երկար տարիներով մղուած դատակարգային հակամարտութիւնները եւ յետոյ՝ սկսեր էր իր արշաւանքները՝ յաղթելով, կողոպտելով ու շահագործելով: Այդ ծանօթութիւնը կ'արտայայտուէր ո՛չ թէ որպէս փիլիսոփայութիւն՝ այլ որպէս Օրէնք: Հռովմէական օրէնքը ամենէն կատարեալ կանոնադրութիւնն էր, որ առանց արուեստական ձեւակերպութեան՝ կ'ապահովէր դրամատէրերու եւ քաղաքական անձեռնմխելի հեղինակութեան ախրացողներու իշխանութիւնը: Հռովմէական օրէնքը նուիրականացուցեր էր սեփականատիրութեան իրաւունքները: Սեփականատէր մը իրաւունք ունէր իր ունեցած սեփականութեանց հետ վերաբերուիլ այնպէս ինչպէս կ'ուզէր: Եւ սեփականութիւն էին գերիները, պահուած ընտանի անասունները, կալուածները, եւ այլն:

Հռովմէական օրէնքը իր բովանդակ կազմութեամբ չկրցաւ վերապրիլ, բայց անոր հիմնական սկզբունքը վարերով նոյնը մնաց. սեփականատիրութեան նուիրականացումը չփոխուեցաւ, միայն թէ սեփականութիւն նկատուածներու շրջանակին մէջէն գերիները դուրս հանուեցան: Ընկերային մտածողութեան նոր եղանակ մը յաջորդեր էր հինին: Պատմութեան մէջ նոր երեւոյթ մըն էր որ կը յառաջանար, երեւոյթ մը, որուն ծնունդ տուողն եղաւ կազմակերպուած կրօնքը: Ասիկա առաջին իսկ առիթով դեմոկրատական սիստէմ մըն էր, որ հիմնուած էր հաւատքի միարանութեան վրայ: Ասոր նախատիպարը հրեաներու Սինակոկն էր, դիմադրական շարժման վստահելի վայրը, որ կառչած էր օրէնքին ու ծիսակատարութեան՝ ի պաշտպանութիւն օտար իշխանութեանց դէմ: Կանխագոյն Քրիստոսեայ եկեղեցիները, իրենց հիմնադիրքի աւանդութեամբ թէ եւ յեղափոխական էին եւ կոմունիստական, իրենց ընկերային փիլիսոփայութիւնը հիմնած էին իրենց շուրջը բոլորուող տարրերէն, որոնք մեծ մասով հրեաներ ու յոյներ էին: Քրիստոնէութիւնը հեթանոս աշխարհի գաղափարներէն ու հալածանքներէն պաշտպանելու կարիքը հարկադրեց որ անջատ միարանութիւններ միացնեն իրենց հաւատքները եւ անոնք ուժեղացուցին իրենց կազմակերպութիւնը. բայց հեռետիկօսութիւնն ու պառակտումը արդիւնցին որ անոնք որեւէ ատեն կատարելապէս միացեալ

ճակատ կազմեն: Երբ Արեւմտեան Եւրոպայի մէջ անտեսական փլուզումով եւ բարբարոսներու արշաւանքով կայսերական իշխանութիւնն ու աշխարհական կուրտուրան իրենց վայրէջքը կ'ապրէին, Եկեղեցին կարող եղաւ իր վրայ առնել իշխանութիւնը եւ իր հսկողութեան ենթարկել ընկերային կեանքի բոլոր կողմերը՝ կազմակերպուած ձեւով:

Հոն, ուր այդ փլուզումը կատարուած չէր, ինչպէս Արեւելեան Կայսրութիւնն էր, ո՛չ Քրիստոնէական Եկեղեցին, ոչ ալ Իսլամի կրօնը կրցան Ասիոյ եւ Աֆրիկէի մէջ համապատասխան որեւէ կեդրոնական կազմակերպութիւն յառաջացնել, ոչ ալ կրցան նոյն քաղաքական ուժը գործածել: Բայց նոյնիսկ այդ երկիրներու մէջ, ինչպէս նաեւ Հնդկաստանի եւ Չինաստանի մէջ կրօնները, թոյլ եւ աւելի տեղական հիմքերով, կը ձգտէին կազմակերպուիլ որպէս ընկերային հիմնարկութիւններ: Իսլամական երկիրները ունէին օրէնքի եւ ուղղադաւան վարդապետութեան յարակից մէտրքսէմերը, բուզղաթականները զարդացուցին իրենց սեփական լամայական վանքերու կազմակերպութիւնը որուն շնորհիւ ան տարածուեցաւ Արեւելեան Ասիոյ մէջ: Միայն Թիպէթի եւ Մոնղոլիոյ նման յետամնաց երկիրներու մէջ էր որ պապականին նման կրօնական ուժեղ նուիրապետութիւն հաստատուեցաւ: Բրահմինները մնացին բրամոյացած կուրտուրայով եւ թոյլ կազմակերպութեամբ իրենց սեփական հոգին վրայ:

Կազմակերպուած կրօնի հաստատումը վերջ դրաւ հաւատքի հոսանտութեան. ան նոյն ատեն ապահովեց հասարակութեան վերջնական թէորիաներու համար հիմնական խորհրդներ: Սխալած չենք ըլլար երբ ըսենք թէ կրօնական ուղղադաւանութիւնը իր մէջ կը պարունակէր ընկերային գիտութեան որոշ յօրինուածք մը: Իսկ Քրիստոնէական Եկեղեցւոյ համար պիտի ըսենք թէ Արեւմուտքի մէջ ան եղած է իրապէս ընկերային գիտութիւն:

Միջնադարեան սքոլաստիկ վէճերը մեծ մասով ընկերային հարցերու շուրջ կը դառնային, մասնաւորապէս կառավարութեան հետ կապ ունեցող հարցերու շուրջ, օրինակի համար Պապի եւ Կայսեր յարաբերական հեղինակութեան գօտիներուն շուրջ: Ալէնթ Թամբս Ագուէնոս (1225-1274) իր մէկ հեղինակութեան մէջ Summa Theologia — մեզի կը պարզէ արգար հասարակութեան մը պատկերը, որ կը համապատասխանէ սուրբ գրոց ու բանականութեան, մինչ Տանթէ (1265-1321) այս աշխարհը կը ներկայացնէ որպէս Իտալական քաղաքներու խոռվայրոյց կեանքի յետամտը:

Այս երկուքին ընդհանուր ըմբռնումները — մէկը սուրբ, միւսը՝ բանաստեղծ — ներդաշնակ են նուիրապետական հասարակութեան եւ անոր բաղկացուցիչ տարրերու ամբողջութեան հետ, ուր մասերը փոխադարձաբար կախում ունին իրարմէ եւ ուր ամէն ոք իր

ունքի գետինն ունի: Երկրային կեանքը կէտ առ կէտ կը համապատասխանէ տիեզերական երկնային կեանքին հետ: Հրեշտակները իրենց բարձրագոյն եւ ստորին դասերով կայարաններ հաստատել են անհատ մարդոց մէջ: Երկինքէն վճռուած հրեշտակները որպէս սատանաներ՝ մտած են շար մարդոց մէջ, հրեշտակապետները՝ իշխաններու եւ թագաւորներու մէջ, իսկ հասարակ հրեշտակները՝ հասարակ, բարի եւ օրինապահ մարդոց մէջ: Այս սխառմը բացայայտօրէն ըմբռնելի՝ անփոփոխելի էր ու տեւական եւ ենթակայ՝ Աստուծոյ կամքին: Ան սկիզբէն այդպէս ստեղծուած ու հիմնուած էր եւ պիտի տեւէր մինչեւ որ հնչէր վերջին դատաստանի փողը, որմէ յետոյ պիտի հաստատուէր երկինքի յաւիտենական թագաւորութիւնը:

Բայց այս երազային իտէալը երկար ատենուան համար իրականութեան չէր համապատասխաներ: Իրական եկեղեցին իր կրօնական պաշտօնեաներով՝ որոնք որպէս թէ Քրիստոսի աշակերտներն էին, կը ձգտէին կուտակել հարստութիւն, եւ այդ եկեղեցին ինքնին եղաւ Ֆէոդալական հիմնարկութեանց ամենամեծը: Կրօնական հաւատքի քննադատութիւնը շատ բնականօրէն պիտի հետեւէր հակաքրիստոնէական կղերականութեան բռնած ընթացքին. եւ իրաւ ալ այնպէս եղաւ, որովհետեւ այդ կղերականութիւնը աններելի միջոցներով կը շահագործէր գիւղացիութիւնն ու քաղաքներու ստորին դասու բուրժուազիան: Այս քննադատները կոչուեցան հերետիկոսներ, որոնք մէկ կամ միւս կերպով կը ձգտէին երթալ դէպի ետ, դէպի կամուռիստական Քրիստոնէութիւնը, իրենց քարոզչութիւնը հիմնելով Աւետարանի սկզբունքներուն վրայ: Սկզբնական շրջանին, հերետիկոսները երեւան եկան Միջերկրականի շրջակայ երկիրներու մէջ, ուր տնտեսութիւնը սկսած էր յառաջդիմել, բայց անոնք շուտով անհետացան խաչակրութեան եւ դաժան հաւատաքննութեան ահարկու ուժով: Միջին դարու վերջերը, սակայն, երբ գիւղացիական ապստամբութիւնները երեւան եկան Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ, որոնց հետեւեցաւ Չեխոսլովաքիոյ Հուսական(*) յաջող ապստամբութիւնը, հերետիկոսները ձգմելու գործը եղաւ դժուարին եւ ի վերջոյ՝ անյուսալի: Պէտք է ըսել, սակայն, որ այս հերետիկոսներու քննադատական տե-

(*) Ճան Հուս (1369-1415) հուշակաւոր բարեփոխիչ, բնիկ Պոհեմիացի: Մահուան դատապարտուեցաւ իր քարոզչութեանց համար: Առաջարկուեցաւ իրեն զգալի մերժեց. նախընտրեց խարոյկի վրայ վառուիլը: Վնիդը գործադրուեցաւ Յունիս 7, 1415-ին: Իր մահէն յետոյ սկսաւ քաղաքացիական պատերազմ, որ տեւեց տարիներով:

սութիւնները թէեւ կրօնական դոյն ունէին, բայց անոնց հիմքը կը կազմէին Ֆէոդալական Եւրոպայի դասակարգային սխառմի ցցուն անարդարութիւնները: Բայց գործին ղէչ կողմն այն էր որ այդ մարդիկը իրենք իրենց բոլորովին անկարող էին տիրող սխառմը խորատակել: Եւ արդէն իրենք իսկ չէին դիտար թէ այդ սխառմին տեղ ուրիշ ինչ սխառմ հաստատուելու էր, որ հիմնապէս տարբերուէր հինէն: Իրողութիւն էր, ուրեմն, որ այդ դրութիւնը խորատակելու եւ նոր սխառմ մը հաստատուելու համար պէտք էր աւելի ուժեղ տնտեսական հասունցած ուժերու գործողութիւնը:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Վերածնունդի փոխակերպութիւնը.—

Տնտեսական նոր ուժերը, որոնք կ'աճէին քաղաքներու մէջ վաճառականութեան եւ մանուֆակտուրայի զարգացումով, կը գտնուէին նորեկ թուրթուազիայի ձեռքերուն մէջ. եւ այդ բուրժուազիան բաւականին տարբեր դադափարներ ունէր: Ինչպէս որ երկինքներու երազային սխառմը Վերածնունդի դարաշրջանին ծաղկող վաճառականութեան պահանջները չէր գոհացներ, այնպէս ալ Միջին դարու ընկերային փիլիսոփայութիւնը չէր գոհացներ նոր ծաղկող տնտեսութեան պահանջները: Հողի վրայ հաստատուած տնտեսութիւնը եւ անձնական ծառայութեան աւանդական գործարկումը տեղի տուած էին դրամին. վաշխատութիւնը այլեւս մեղք չէր նկատուել, այլ պարզապէս ան փոխատուութեամբ սովոր բերող պատուաւոր պիղնէս մըն էր: Ծառայութիւնները այլեւս հողատիրոջ ապահոված հնազանդութեան ու հաւատարմութեան հարց չէր. զանոնք կարելի էր դնել եւ անոնց համար վճարել: Մարդ մը կ'արժէր այնքան՝ որքան կրնար դրամ վաստկել:

Բարենորոգչականները կառչելով հանդերձ կրօնին եւ պահանջելով որ ան վերագառնայ իր նախնական մաքուր ձեւին, կործանեցին միութենական ընկերային սխառմի ամբողջական ըմբռնումի չէնքը: Անոր տեղը անոնք դրին ուրիշ տեսակի ըմբռնում մը. անոնք վեր առին հասարակութիւնը որպէս մէկ հաւաքոյթը անհատներու, որոնցմէ իւրաքանչիւրը կրնար իր անջատ յարաբերութիւնը պահել Աստուծոյ հետ, աշխատել իր հողի փրկութեան համար եւ ազատ էր հետեւիլ Լուտերին կամ Կալվինին: Այս հարցին մէջ Կաթոլիկ եկեղեցին վերջ ի վերջոյ համաձայնեցաւ բարեկարգիչներուն հետ, որով միջնադարեան եկեղեցին ալ նոյնը չմնաց:

Միջնադարեան աշխարհը, որ ամբօրէն կառուցուած էր հասա-

բակութեան սովորութիւններով, այնքան դիւրին չէր փոխուեր. հարկաւոր էր բազմաթիւ խորհողներու ջանքերու կեդրոնացումը, ան ալ երկար ժամանակով՝ որպէսզի անհատապաշտական նոր աշխարհ մը կառուցուէր: Մաքիալէլը (1469–1527) Վերածնունդի մարդոց մէջ ամենէն նշանակելի մարդն էր, որ հասարակութեան նայեցաւ այնքան մօտէն եւ այնքան հանդարտութեամբ՝ ինչպէս նկարիչները կը նային բնութեան: Հայրենասէր եւ նոյն ասան գեմոկրատ ֆլորէնցին, իր առեւին չէր կրնար տեսնել յաջողութեան ուրիշ ճամբայ մը, բացի այն մէկէն, ուր երեւան գալու էր խորամանկութեան, ուժի եւ անձնախնդրութեան ուշադիր կերպով հաւասարակշուում գերը:

Կանխագոյն չըջանի բարեկարգիչները որեւէ կերպով ընկերային տեսակէտով նոյնատեսակ խումբ մը կազմած չէին: Անոնց առաջնորդները, ինչպէս Լուտեր (1483–1546) եւ Կալվին (1509–1564) հրապարակ իջան ընկերացած իշխաններուն եւ խոշոր քաղաքներու բուրժուազիայի հետ: Բարենորոգման մասսայական քաջալերանքը եկաւ փոքրիկ մարդոցմէն, արհեստաւորներէն եւ գիւղացիներէն, որոնց համար բարեկեցիկ կեանքը այնքան անհրաժեշտ էր այս աշխարհին՝ որքան հանդերձեալ աշխարհին մէջ: Անոնց քննադատութիւնը ուղղուած էր ոչ միայն Պապի ամբարիշտ իշխանութեան, այլեւ ամբողջ այն սխտէմին զէմ, ուր հարուստ անխղճօրէն կը շահագործէր աղբաւոր: Այս քննադատութեան ծնունդ տաին Հունդարիոյ եւ Գերմանիոյ մէջ գիւղացիներու եւ արհեստաւորներու յեղափոխութիւնները, որոնք մասնակի յաջողութիւններէ վերջ՝ ինչպէս էր Վերամկրտչականներու Մունցիրի մէջ հաստատած կոմունան, ճգմունեցան շատ աւելի անասելի կատաղութեամբ քան ինչ որ տեղի ունեցան նախկին ժամանակները:

Այդ շրջանին էր որ ԺՉ. դարու սկիզբին — հրապարակուեցաւ կոմունիստական պետութեան մը գաղափարը, որուն ախոյեանն եղաւ հիւմանիստ Սըր Թամս Մուրը (1478–1535) իր իւտոպիայով:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Բուրժուական ընկերային գիտութեան իրական ծնունդը կը դուրս գալիս կրօնական, ազգային եւ դասակարգային այն մեծ կռիւներուն, որոնք երեւան եկաւ ԺՉ. դարու վերջերը եւ ԺԷ. դարու կիսուն: Սպանիոյ թագաւորին զէմ յարուցուած ապստամբութիւնը (1645) կամ Անգլիոյ Չարլզ թագաւորի գլխատումը (1649) անհրաժեշտութիւն ստեղծեցին հարցապնդումի մը, որ կը վերաբերէր հասարակութեան վերջնական նպատակին: Ընկերային քննադատութեանց հետեւեցան ընկերային կարգ ու սարքի բարեկարգութեան

համար աշխատող հաւասարականները (անգլիական կուսակցութիւն մը որ գոյութիւն ունէր 1647–ին) որոնք նուիրուեցան թէ՛ ուսումնասիրութեան եւ թէ՛ գործնական բարեկարգութեան: Բայց այդ շարժումը կանխահաս էր, ատոր համար անոր փոխարինեց ԺԷ. դարու վերջի տարիներուն՝ Եւրոպայի ընդհանուր ուղեկցիան: Այդ ատենուան համար աւելի ընդունելի էր Հոբսի (1588–1679) վերլուծումը հասարակութեան հաւասարական բնոյթի մասին, որ կը շեշտէր ուժեղ կառավարութեան մը պահանջը:

Ազգերու հարստութիւնը —

Ազատական տնտեսագիտութիւնը որպէս լուրջ ուսումնասիրութիւն հրապարակ ելաւ Ադամ Սմիտով (1723–90), Սկոտիացի մտաւորականներէն մէկը, որուն գործունէութիւնը զուգադիպեցաւ այն շրջանին, երբ Սկոտիան երկրագործական յետամնաց թշուառ վիճակէն կը դառնար ճարտարարուեստական երկիր: Ադամ Սմիտ խորապէս ազդուած էր Բրիտանիոյ տնտեսական բարգաւաճումէն: Ան իր ուսումնասիրութեամբ համոզուած էր որ մանուֆակտուրայի միասնական եւ անկազմակերպ զարգացումէն յառաջացեր էր ճարտարարուեստական յեղափոխութիւնը, որուն զարկ տուած էր աշխատանքի բաժանումը եւ մանուֆակտուրաներու եւ ապրանքներու փոխանակութիւնը: Անոր աչքին կը զարնէր նաեւ այն միջամխումը, զոր կ'ընէր կառավարութիւնը՝ արդելիչ օրէնքներ զնելով մանուֆակտուրայի եւ առուսուրի վրայ: Ան մասնաւորապէս տեսաւ որ տիրող մէրկանտիլիզմի — առեւտրականութեան — սխտէմը, ուր մոնոպոլ եղած զաղութային առուսուրը մի քանի հարուստ վաճառականներու շահերուն կը ծառայէր, մեծագոյն թշնամին էր նոր ուժերու ազատ զարգացումին: Չարգացնելով իր տեսութիւնները, Ադամ Սմիտ վերլուծման ենթարկեց հասարակութեան արտադրողական եւ բաշխողական ամբողջ մեխանիզմը եւ իր եզրակացութիւններն ամփոփեց Ազգերու հարստութեան պատմաւեցումը եւ բնոյթի հարցապնդումը անուն գիրքին մէջ, որ հրատարակուեցաւ 1776 թուականին: Այս գիրքը իր առաջին հրատարակութեամբ նորածիլ ճարտարարուեստական կապիտալիզմի աւետարանն եղաւ, ինչպէս որ մէկ զար յետոյ՝ Մարքսի կապիտալը եղաւ բանուոր գասակարգի աւետարանը: Ադամ Սմիտի գիրքը, իր պարունակութեամբ եւ իմաստով շատ սահմանափակ ու նեղ՝ վեր կ'առնէր տնտեսական մարդը, այն արարածը, որ կ'ապրէր իր աշխատանքով եւ իր արտադրութիւնները կը փոխանակէր իր նմաններուն հետ կարելի եղածին չափ նպաստաւոր պայմաններով: Ադամ Սմիտ ատով կը բացատրէր թէ ինչպէս այս գործողութիւնները արդելքի տակ առնուած էին հին սովորու-

թիւններով, Ֆէոդալական իրաւունքներով եւ առեւտրականական կանոններով: Այժմ եկած է լուսաւորութեան դարաշրջանը, հասարակութեան բնականոն դրութիւն մը, ուր անտեսական մարդը այլեւս ազատ էր իր գործունէութեան մէջ առանց որեւէ արգելքի: Ասով կը ստացուէին լուսագոյն արդիւնքներ: Այլեւս հարկ չկար օրէնսդրական միջամտութեան: Laisser-faire-ի անտեսութիւնը Ազամ Սմիտի եւ իր հետեւորդներուն համար բնական դրութիւն մըն էր, որ կը յաջորդէր աստուածային նախախնամութեան եւ իշխաններու խելացի կարգադրութեան: Այս վարդապետութիւնը, որուն սարսափելի հետեւանքները վերջէն երեւան եկան, իր ժամանակին, ամենէն ազատական վարդապետութիւնն էր, որ ոչ միայն անտեսական նոր մտածողութիւն մը ընդհանրացուց, այլեւ ճարտարարուեստական կապիտալիզմի գործունէութիւնը նուիրականացուց:

Ազամ Սմիտի յաջորդեց մեծ անտեսագէտ Ռիկարտո (1772-1823) որ եկաւ ամբողջացնել Ազամ Սմիտի գործը: Այս մարդն ալ, որ մասնափակտուրաներու մեքենայացման հանդիսատես եղած էր, աշխատանքի թէորիան եւ կապիտալը իրարմէ անջատ վեր առաւ. ան չկըրցաւ տեսնել որ գործարանի եւ մեքենականութեան շրջանակով ներկայացած կապիտալը բանուորներու աշխատանքի նիւթականացումն է: Այս ճշմարտութիւնը վեր հանելու գործը կը մնար Քարլ Մարքսի:

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԳԻԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Ընկերային գիտութիւնը ԺԸ. դարուն միմիայն անտեսութեան շուրջը չէր դառնար: Անոր հետ արթնցաւ նաեւ նոր հետաքրքրութիւն մը, մարդուն ուսումնասիրութիւնը. ոչ այնքան եւրոպական քաղաքակիրթ երկիրներու մարդը, այլ չապականուած վայրենի վիճակի մէջ ապրող մարդը: Այս իտէալականացած պատկերը երեւցաւ այն ատեն՝ երբ մեծ ճամբորդութիւններ տեղի ունեցան եւ հըրտպարակուեցան միսիոնարներու պատմութիւնները: Արդէն եւրոպական դրականութիւնը ազդուած էր Չինաստանի եւ Հնդկաստանի աղնի քաղաքակրթութեան շուրջ տարածուած գրոյցներէն:

Յոյներէն յետոյ՝ առաջին անգամն է որ բաղդատական ընկերարանութեան հող կը ստեղծուէր, եւ այդ բաղդատութիւնը այնքան նպաստաւոր չէր Եւրոպայի ԺԸ. դարու քաղաքակրթութեան համար: Շարք մը դասական փիլիսոփաներ, ինչպէս Մոնթէսկիօ (1869-1755) եւ Վոլթէր (1694-1778) երբ վայրենիներու եւ արեւելեան քաղաքակրթութիւնը բաղդատեցին իրենց ապրած քաղաքակրթութեան հետ, սուր քննադատութիւն մը ուղղուեցաւ իրենց սեփական հիմնարկու-

թեանց դէմ: Ասով զարգացաւ բաղդատական ընկերարանութիւնը, որ կարեւոր դեր կատարեց ընկերային յեղափոխութեան նախապատրաստական շարժման մէջ. առաջին հերթին՝ Փրանսական յեղափոխութեան մէջ:

Եթէ ամերիկեան եւ Փրանսական յեղափոխութիւնները նախորդող փիլիսոփայական քննադատութիւնները ցնցեցին վայելչաբարոյ հասարակութեան հաւատալիքները, յեղափոխութիւններն ալ եկան այդ քննադատութիւնները տարածել ժողովրդական զանգուածներուն մէջ: Թամ Փէյն (1737-1809) նոր Ամերիկայի շունչով թարմացած՝ իր Մարդուն Իրաւունքները գիրքով բուռն կերպով յարձակեցաւ ԺԸ. դարու ազսպրուած քաղաքակրթութեան ըմբռնումին վրայ՝ սկսելով ձան Լաքէն (1632-1704) մինչեւ Էդմոն Բըրքը (1729-1779): Ան չվարանեցաւ այդ ըմբռնողութիւնը յայտարարել ապականեալ եւ բռնապետական: Այն դաղափարը՝ թէ բոլոր մարդիկը հաւասարապէս մարդ են եւ սխալ է զանոնք հարստութեան գիծով բարձր ու ցած դասերու բաժնելը եւ թէ սրպէս այդպիսին՝ բոլոր մարդոց իրաւունքները յարգուելու են, այդ դաղափարը նոյնիսկ թուղթի վրայ՝ կը ցնցէր հարուստները: Բարբրտ Բըրնզ (1759-1796) ժողովուրդի մարդոցմէն առաջինն էր, որ դարձաւ մեծ բանաստեղծ մը, ան հետեւեալ նշումն ըրած էր. — «Բարձրաստիճան անձը ոսկիի կնիքն ունի, բայց մարդուն մէջ մարդը պատկերացնողը այդ կնիքը չէ»: Այդ դաղափարներու եզրակացութիւնն այն էր որ միւս բոլոր իրաւունքները կամայական են եւ անոնք տեղի տալու են հասարակ ժողովուրդի իրաւունքներուն: Այս եզրակացութիւնը արդէն կը տանէր յեղափոխութեան: Բայց նոյն այդ յեղափոխութեան շրջանին, Բարոֆ (1760-1797) երբ յանդանեցաւ յայտարարել որ մարդը իր անտեսական շղթաներուն հետ փշրելու է նաեւ քաղաքական կապանքները, դատապարտուեցաւ գլխատման:

Անկէ յետոյ երեւան եկան իւտոպիստ սոցիալիստները, որոնց մէջ ամենէն նշանաւորն եղաւ Բարբրտ Օվէն (1771-1858): Այս մարդը բարի կամեցողութեան նշանաբանով ո՛չ միայն սոցիալիստական անտեսութիւններ հրապարակեց, այլեւ իր թէորիան ուղեց գործնականացնել, բայց ձախողեցաւ, որովհետեւ անոր միտքը միայն անտեսական, կառուցողական գիծին վրայ կը գործէր ու չէր մօտենար քաղաքական պայքարին: Ան չէր կրցած հիմնովին ըմբռնել կապիտալիստական սխտէմը, ատոր համար ան կը կարծէր թէ այդ սխտէմը բարի կամեցողութեամբ, կամ գործնական օրինակներով կարելի է փոխել:

Բոլոր այս մտածողները, սակայն, չկրցան բանուոր դասակարգին համար պատրաստել յեղափոխական գիտութիւն մը, որու

զմած շախմատի հետևելին թէ՛ յառաջապահները եւ թէ՛ կոտուելու պատրաստ մարտիկները: Այդ մեծ գիտութեան պատրաստութիւնը վերապահուած էր երկու հանձնարներու, Քարլ Մարքսին (1818-1883) եւ Ֆրէտէրիկ Էնգէլսին (1820-1895): Այդ գիտութիւնը ծանօթ է այսօր ամբողջ աշխարհին՝ Մարքսիզմ անունով, որու մասին խօսեցանք այս հատորի առաջին մասին մէջ: Բայց այն՝ ինչ որ հարեւանցիորէն փորձեցինք պատկերացնել Մարքսիզմի անտեսագիտական մասն էր. այժմ պիտի փորձենք հասկնալի զարձնել անոր փիլիսոփայական մասը, որ է հետեւեալը.—

ԳԻԱԼԷԿՏԻԿԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՅԵՄ

Դիալէկտիկական Մատերիալիզմը աշխարհի Մարքսիստական տեսութիւնն է: Անիկա դիալէկտիկական մատերիալիզմ կոչուած է, որովհետեւ բնութեան երեւոյթներու անոր մօտեցումը, այդ երեւոյթները ուսումնասիրելու եւ գանձնք հասկնալու մեթոտը դիալէկտիկական է (տրամարանական), մինչդեռ բնութեան երեւոյթներու իր թարգմանութիւնը, բայց երեւոյթներու իմ բմբռնումը, իր թէորիան (տեսութիւնը) մատերիալիստական է:

Պատմական մատերիալիզմը դիալէկտիկական մատերիալիզմի սկզբունքներու բնորոշումն է, որ նուիրուած է բնկերային կեանքի ուսումնասիրութեան եւ դիալէկտիկական մատերիալիզմի սկզբունքներու կիրարկումին որ նուիրուած է հասարակութեան կեանքի երեւոյթներուն, հասարակութեան եւ անոր պատմութեան ուսումնասիրութեանը:

Մարքս եւ Էնգէլս, երբ կը պատկերացնեն իրենց դիալէկտիկական մեթոտը, կը մատնանշեն Հէկէլը (1770-1831), այն գերման փիլիսոփան, որ ձեւակերպեց դիալէկտիկաներու գլխաւոր ստաղծները: Բայց ասիկա չի նշանակեր թէ Մարքս-Էնգէլսի դիալէկտիկները կը նոյնանան Հէկէլի դիալէկտիկաներուն հետ: Իրողութիւնն այն է, որ Մարքս եւ Էնգէլս Հէկէլի դիալէկտիկայէն առին միայն անոր «բանավարական (սացիոնալ) միջուկը» եւ մէկ կողմ նետեցին անոր իտէլապաշտական կեղեւր եւ զայն զարգացնելով հասցուցին իր արդի դիտական ձեւին:

Այս առթիւ Մարքս կ'ըսէ. — «Իմ դիալէկտիկ մեթոտը հիմնականօրէն ո՛չ միայն կը տարբերի Հէկէլականէն, այլ ուղղակի անոր հակառակն է: Ըստ Հէկէլի, մտածման պրոցեսը, որ «զազափար» անունին տակ նոյնիսկ նիւթի մը կը փոխարկուի, իրական աշխարհի ստեղծողն է, եւ իրական աշխարհը միայն արտաքինն է, «զազափարի» երեւութական ձեւը: Իսկ իմ տեսութեամբ, բնդհակառակը՝ զա-

զափարը ուրիշ բան չէ այլ միայն մարդկային միտքի միջոցով նիւթական աշխարհի ցոլարձակումը, որ կ'արտայայտուի մտածողութեան ձեւով»:

Մարքս եւ Էնգէլս իրենց մատերիալիզմը ձեւակերպած ատեն, սովորաբար կը յիշեն Ֆոէրպախի անունը (1804-1872), այն գերմանացի փիլիսոփան, որ մատերիալիզմը վերահաստատեց իր իրաւական բարձրութեան վրայ: Բայց ասիկա չի նշանակեր թէ Մարքսի եւ Էնգէլսի մատերիալիզմը կը նոյնանայ Ֆոէրպախի մատերիալիզմին հետ: Իրողութիւն է, սակայն, որ Մարքս եւ Էնգէլս Ֆոէրպախի մատերիալիզմի «ներքին միջուկը» առին եւ զայն զարգացնելով կազմեցին մատերիալիզմի գիտական-փիլիսոփայական թէորիան եւ մէկ կողմ դրին անոր իտէլալիստական ու կրօնա-բարոյալիստական կեղեւր: Էնգէլս մէկէ աւելի անգամ յայտարարած է որ «հակառակ մատերիալիստական հիմնական սկզբունքներուն, Ֆոէրպախ կապուած մընաց աւանդական իտէլիզմի շղթաներուն: Եւ իրապէս Ֆոէրպախի իտէլիզմը յայտնի կ'ըլլայ, երբ մենք վեր կ'առնենք կրօնի եւ բարոյագիտութեան իր փիլիսոփայութիւնը»: (Տես Լուսավիկ Ֆոէրպախի հեղինակ Էնգէլս. էջ 43):

Հին ատեն, յայն փիլիսոփաները այնպէս համոզուած էին որ խնդրի մը չուրջ ճշմարտութեան հասնելու համար պէտք է դրական ու բացասական կողմի մարդիկը վիճարանին, պատճառարանեն. այդ վիճարանութեան բնթացքին, բացասական կողմի փաստերու հիմնական հերքումովն է որ մտածողութեան հակասութիւնները կը վերջանան եւ ճշմարտութիւնը կը պարզուի: Ասիկա անոնց դայէլէկոն էր — տրամասացութիւնը: Դիալէկտիկական եկած է յունական այդ դայէլէկոնէն: Մտածողութեան այս տիալէկտիկական մեթոտը վերջերս յանգեցաւ բնութեան երեւոյթներու հոլովոյթին շուրջ՝ բնութիւնը տիալէկտիկ մեթոտով հասկնալու եզանակին, հասկացողութիւն մը, որ նկատի կ'առնէ բնութեան երեւոյթները իրենց մշտական շարժումով եւ ենթակայ՝ մշտական փոփոխութեան. նոյնպէս ան նկատի կ'առնէ բնութեան զարգացումը իրրեւ արդիւնք՝ բնութեան մէջ հակասութեանց զարգացման՝ որ իր կարգին արդիւնքն է բնութեան մէջ գոյութիւն ունեցող հակադիր ուժերու փոխադարձ ազդումներուն:

Իր էութեամբ դիալէկտիկական ուղղակի բնագանցական ճիւղերու հակառակ կողմը կը ներկայացնէ:

Մարքսիստական դիալէկտիկայի մեթոտի գլխաւոր կէտերը հետեւեալ ձեւով կրնանք պատկերացնել.

Ա.— Հակառակ բնագանցական տեսութեան, Մարքսեան դիալէկտիկական բնութիւնը վեր չառնէր որպէս մէկ գիպուածական կու-

տակումը իրերու եւ երեւոյթներու, որոնք իրարու կապուած չեն, կղզիացած են եւ իրարմէ անկախ են, այլ նկատի կ'առնէ որ այդ իրերն ու երեւոյթները կապուած են միակազմ ամբողջութեան հետ, որուն մէջ անոնք օրգանական կապով օղակուած են իրարու հետ, իրարմէ կախուած են եւ մէկը կ'որոշէ միւսին դերը: Դիալէկտիկ մեթոտը, ուրեմն, կ'ընդունի թէ բնութեան մէջ ո՛չ մէկ երեւոյթ կարելի է հասկնալ եթէ մենք զայն առանձին վեր առնենք, կղզիացած չըջապատող երեւոյթներէն, քանի որ բնութեան իրականութեան մէջ որեւէ երեւոյթ անիմաստ կ'ըլլայ եթէ մենք նկատի չառնենք անոր կապակցութիւնը շրջապատող պայմաններու հետ:

Բ. — Հակառակ բնագանցական տեսութեան, Մարքսեան տիալէկտիկան կ'ընդունի որ բնութիւնը հանդիստ ու անշարժ գոյովիճակ չունի, լճացած ու անփոփոխելի չէ, այլ շարունակական շարժման ու փոփոխութեան ընթացք մը ունի, շարունակական վերանորոգման եւ զարգացման ընթացք մը, ուր միշտ նոր բան մը երեւան կ'ելլէ ու կը զարգանայ եւ միշտ բան մը կը կազմալուծուի ու կը մեռնի:

Ասոր համար դիալէկտիկական մեթոտը կը պահանջէ որ երեւոյթները վեր առնուին ո՛չ միայն անոնց փոխ կապակցութեան եւ փոխ կախուածութեան տեսանկիւնէն, այլ եւ նկատի առնելով անոնց շարժումը, անոնց փոփոխութիւնը, անոնց զարգացումը, անոնց նոր բաներ երեւան բերելն ու ուրիշ բաներու գոյութենէ զազրեցումը:

Դիալէկտիկ մեթոտը գլխաւորապէս կարեւոր կը նկատէ վեր առնել ո՛չ թէ այն՝ որ տրուած վայրկեանին կը թուի տոկուն եւ սակայն արդէն դէպի մահ կը դիմէ, այլեւ այն՝ որ նոր երեւան կուզայ եւ կը զարգանայ նոյնիսկ՝ եթէ ան տուեալ վայրկեանին չի թուիր տոկուն ու տեւական, որովհետեւ դիալէկտիկ մեթոտը աննուաճելի կը նկատէ միայն այն՝ որ նոր երեւան կուզայ ու կը մտնէ զարգացողական ընթացքի մէջ:

Այս առթիւ Էնգէլս կ'ըսէ. — «Ամբողջ բնութիւնը ամենափոքրիկ բանէն մինչեւ ամենամեծը, աւազի հատիկէն մինչեւ արեւը, սերմաքղիջէն մինչեւ մարդը յարատեւ գոյառումի եւ գոյութենէ զազարումի վիճակի մէջ է, յարատեւ հոսանուտի մը մէջ, անզաղորմ շարժման եւ փոփոխութեան մէջ»: (Տես Էնգէլսի Բնութեան Դիալէկտիկան, էջ 13):

Գ. — Մարքսեան դիալէկտիկը բնագանցական տեսութեան հակառակ՝ զարգացման պրոցեսը շրջադարձի որպէս աճման պարզ պրոցես մը, ուր քանակական փոփոխութիւնները չեն առաջնորդեր որակական փոփոխութեանց, այլ կ'ընդունի զայն որպէս զարգացողական ընթացք մը, որ կ'անցնի աննշան եւ աննշմարելի քանակական փոփո-

խութիւններէ հիմնական՝ որակական փոփոխութիւններու, իսկ այդ որակական փոփոխութիւնը տեղի չունենար աստիճանաբար, այլ յանկարծակի եւ արագօրէն, տեսակ մը սատում՝ մէկ զրութենէն միւսը: Նոյնպէս այդ փոփոխութիւնը տեղի չ'ունենար զիպուածական եղանակով, այլ որպէս արդիւնք քանակական աննշմարելի, աստիճանական փոփոխութեանց կուտակումին:

Դիալէկտիկ մեթոտը, ուրեմն, կ'ընդունի թէ զարգացման պրոցեսը պէտք է վեր առնել ո՛չ թէ որպէս շրջանակի մը մէջ կատարուած շարժում մը, ո՛չ թէ արդէն իսկ կատարուած շարժումի մը պարզ վերակրկնումը, այլ շարժում մը որ միշտ կը ձգտի առաջ եւ դէպի վեր, շարժում մը, որ հին քանակական վիճակը կը փոխակերպէ նոր, որակական վիճակի մը. զարգացողական շարժում մը, որ կ'երթայ պարզէն դէպի բարդը, ցածէն դէպի աւելի բարձրը:

Քանակական փոփոխութիւններէ որակական փոփոխութեանց փոխանցումը որպէս դիալէկտիկական զարգացում նկարագրած ատեն Էնգէլս կ'ըսէ. — «Բնագիտութեան մէջ... ամէն փոփոխութիւն քանակականէն կ'անցնի որակականի. եւ այդ՝ արդիւնք է մարմնի մը մէջ ներքին կամ անոր հաղորդուած տեսակ մը ձեւի շարժումի մը քանակական փոփոխութեան: Օրինակի համար ջուրը իր սովորական ջերմաստիճանով հեղուկ վիճակ ունի. բայց երբ այդ ջերմաստիճանը բարձրանայ կամ ցածնայ, կուզայ վայրկեան մը, երբ յարակցութեան վիճակը կը փոխուի եւ ջուրը մէկ պարագային կ'ըլլայ շոգի, միւս պարագային՝ սառ: Ամէն մետաղ ջերմութեան որոշ աստիճանով հեղուկի կը փոխուի եւ ամէն հեղուկ կրնայ սառիլ կամ կազի փոխուիլ, եթէ մենք մեր ձեռքի տակ ունենանք պահանջուած միջոցները: Ինչ որ ծանօթ է բնագիտութեան մէջ այն է որ մարմնոյ մը մէկ վիճակէն միւսին փոխանցումին մէջ հանդուցային կէտ մը կայ, ուր շարժման քանակական աճումն ու նուազումը տրուած մարմնոյ մը մէջ կը յստաջանէ որակական փոփոխութիւն. ստով քանակութիւնը կը փոխակերպուի որակի»:

Դ. — Հակառակ բնագանցական տեսութեան, Մարքսեան դիալէկտիկան կ'ընդունի որ բնութեան բոլոր երեւոյթներուն եւ իրերուն մէջ ընդարոյս հակասութիւններ կան, որովհետեւ բոլորն ալ ունին իրենց զրական ու բացասական կողմերը, անցեալ մը եւ ապագայ մը, բան մը որ կը մահանայ եւ բան մը, որ կը զարգանայ. եւ պայթարը այս հակառակ ուժերու միջեւ, պայթարը հինին ու նորին, մահացողին եւ նորածինին, պայթարը անհետացողին ու զարգացողին միջեւ, կը կազմէ զարգացման պրոցեսին ներքին էութիւնը, քանակական փոփոխութիւններէն որակական փոփոխութեանց ներքին կերպարանափոխութիւնը:

Այս տողերով հակիրճօրէն պարզուած կը համարենք Մարքս-
եան դիալէկտիկական մեթոտի գլխաւոր կէտերը:

Այժմ դիւրին է հասկնալ թէ ինչքան կարեւոր է դիալէկտիկայի
մեթոտի սկզբունքներու կցումը հասարակութեան պատմութեան եւ
ընկերային կեանքի ուսումնասիրութեան հետ, եւ թէ նոյնպէս՝ ինչ-
քան կարեւոր է այդ սկզբունքներու կիրառումը հասարակութեան
պատմութեան եւ պրոլետարիատի կուսակցութեան գործունէութեան
մէջ:

Եթէ նիւթական աշխարհի կզգիացած երեւոյթներ չկան, եթէ
բոլոր երեւոյթները իրարու հետ կապուած եւ իրարմէ կախուած են,
ուրեմն, պարզ է որ պատմութեան մէջ ամէն մէկ ընկերային սիս-
տէմ եւ ամէն մէկ ընկերային շարժում պէտք է գնահատենք ոչ թէ
«ներքին արզարութեան» կամ տեսակ մը ուրիշ նախազուած գաղա-
փարի մը խարխալով, ինչպէս պատմաբանները կ'ընեն յաճախ, այլ
այն խարխալով՝ որուն կապուած են այդ սիստէմին կամ այդ ընկե-
րային շարժումին ծնունդ տուող պայմանները:

Գերտիրական սիստէմը ներկայ պայմաններու տակ անա-
բաւոյս անիմաստ եւ անընական պիտի ըլլար: Բայց նահապետական
կոմունայի սիստէմի քայքայման պայմաններու տակ, գերտիրական
սիստէմը բաւականին հասկնալի եւ ընական երեւոյթ է, որովհետեւ
ան նախնական կոմունայի սիստէմին հետ բազմապատճ՝ կը ներկա-
յացնէ աւելի յառաջդիմական սիստէմ մը:

Ռուսաստանի մէջ ցարիզմի օրով բուրժուայ դեմոկրատական
հանրապետութեան մը պահանջը յեղափոխական պահանջ էր, որով-
հետեւ բուրժուական հանրապետութիւնը աւելի յառաջդիմական սիս-
տէմ էր քան թէ ցարականը: Բայց այսօր Սոցիալիստական-Սովե-
տական Հանրապետութեանց միացեալ ուժերով ստեղծուած պայ-
մաններուն տակ բուրժուա-դեմոկրատ հանրապետութեան պահանջը
եղած է անիմաստ եւ հակայեղափոխական պահանջ, որովհետեւ բուր-
ժուայ հանրապետութիւնը բազմապատճ Սովետական Հանրապետու-
թեան հետ՝ անառարկելիօրէն յետադիմական է:

Ամէն ինչ կախուած է պայմաններէն, ժամանակէն ու միջա-
վայրէն:

Պարզ է, որ երբ մենք ընկերային կեանքի երեւոյթները վեր-
չենք առնել այսպիսի պատմական տեսակէտով, պատմութեան գի-
տութեան զարգացումը կը դառնայ անկարելի, եւ պատմութեան գի-
տութիւնը կը դառնայ դիպուածներու խառնշտուած կոյտ մը եւ
ամենէն անհեթեթ սխալներու կուտակում մը:

Դեռ աւելին կայ, երբ մենք նշեցինք եւ փաստեցինք որ աշ-
խարհը յարատեւ շարժման եւ զարգացման ընթացք մը ունի, եւ հինի

մահացումը եւ նորի աճումը զարգացողութեան մէկ օրէնքն է, ու-
րեմն, պարզ է որ «անշարժ» ու «անփոփոխ» ընկերային սիստէմ
չկայ, չկան շահագործման եւ մասնաւոր սեփականատիրութեան
«յաւիտենական սկզբունքներ», ոչ ալ «յաւիտենական օրէնքներ» որ
դիւզացին ենթարկուի կալուածատիրոջ եւ բանուորը՝ կապիտա-
լիստին:

Ասկէ կը հետեւցնենք թէ կապիտալիստական սիստէմը կրնայ
փոխարինել սոցիալիստական սիստէմը, ճիշդ այնպէս՝ ինչպէս իր
ատենին Ֆէոդալական սիստէմը փոխարինեց կապիտալիստական սիս-
տէմը:

Անտարակոյս սխալ է մտածել թէ ներկայիս՝ կապիտալիս-
տական սիստէմը տիրապետող ուժ մը կը ներկայացնէ իսկ բանու-
որութիւնը շատ հեռու է այդ ուժին հակադրելու իր ուժը, բայց զի-
անք թէ բանուորութեան ուժը իր զարգացման ճամբուն մէջ է, իսկ
կապիտալիզմը՝ իր վատասեման ու քայքայման ճամբուն մէջ: Ու-
րեմն այդ սխալէն հեռու մնալով մեր օրիէնտացիան ուղիղ զիժի
վրայ է:

Անցնող զարու ութսունական թուականներուն, երբ Մարք-
սիստներու եւ Նարոզնիկներու միջեւ պայքար կը մղուէր, Ռուսաս-
տանի մէջ պրոլետարիատը ընակչութեան շատ աննշան մասը կը
կազմէր, մինչ զիւզացիութիւնն էր մեծամասնութիւն կազմողը:
Բայց պրոլետարիատը որպէս ուրոյն դասակարգ՝ կ'աճէր ու կը զար-
գանար, մինչ զիւզացիութիւնը հեղհեղէ կը քայքայուէր որպէս
ուրոյն դասակարգ: Եւ որովհետեւ զարգացող դասակարգը պրոլե-
տարիատն էր, Մարքսիստները իրենց օրիէնտացիան, իրենց քաղա-
քական ու տնտեսական յեղափոխութեան սկզբունքը հաստատեցին
պրոլետարիատի վրայ: Եւ անոնք սխալած չէին, որովհետեւ, ինչպէս
գիտենք, պրոլետարիատն էր որ հեղհեղէ աճեցաւ, զարգացաւ եւ
անոր աննշան ուժը փոխուեցաւ առաջին կարգի պատմական եւ քա-
ղաքական ուժի:

Ուրեմն, քաղաքական սխալ չգործելու համար բանուորական
շարժման ղեկավարները նայելու են դէպի յառաջ, ո'չ թէ դէպի ետ:

Դեռ աւելին կայ. երբ մենք ըսինք եւ փաստեցինք որ զարգա-
ցողութեան մէկ օրէնքն է որ դանդաղ քանակական փոփոխութիւն-
ները կը յանդին արագ ու յանկարծական որակական փոփոխութեանց,
ուրեմն, պարզ է որ ճշուած դասակարգերու յարուցած յեղափո-
խութիւնները ընական եւ անխուսափելի երեւոյթներ են:

Ասկէ կը հետեւցնենք որ կապիտալիզմէն սոցիալիզմի փո-
խանցումը եւ կապիտալիստական լուծէն բանուոր դասակարգի ա-
զատագրումը դանդաղ փոփոխութիւններով կամ քարեկարգութիւն-

ներով չէ որ տեղի պիտի ունենան, այլ միայն կապիտալիստական սխտէմի որակական փոփոխութեամբ, մէկ խօսքով՝ յեղափոխութեամբ:

Հետեւաբար, իրապէս պրոլետարական գատին հոգիով ու սրտով նուիրուած մէկը պէտք է յեղափոխական ըլլայ ո՛չ թէ բարենորոգչական: Ան խորապէս համոզուած ըլլալու է որ պրոլետար դասակարգի քաղաքականութիւնը որեւէ կերպով կարելի չէ համաձայնեցնել բուրժուազիայի քաղաքականութեան հետ: Կապիտալիզմը խաղաղ անապահով սոցիալիզմի առջեւ ծուկի չի գար: Տիրող դասակարգը անձնասպան կ'ըլլայ, անձնատուր չըլլար, բայց անձնասպանութեան վայրկեանին՝ ան պատրաստ է ամբողջ աշխարհը հըրդեհել: Իր ամբարած ատոմական-ջրածնային ուժերը եթէ այդ վայրկեանէն առաջ չպայթեցնէ, նոյն վայրկեանին անպայման կը պայթեցնէ: Անոր մատի շարժումին նայող գործակալները բազմութիւ են:

Այսպէս է Մարքսեան դիալեկտիկական մեթոտի ըմբռնողութիւնը ընկերային կեանքի եւ հասարակութեան պատմական զարգացման պրոցեսի մասին:

Գալով Մարքսեան փիլիսոփայական մատերիալիզմին, ան հիմնականօրէն հակառակ ելրի վրայ կանգնած է փիլիսոփայական իտէալիզմի հանդէպ:

Մարքսեան փիլիսոփայական մատերիալիզմի գլխաւոր կէտերը հետեւեալներն են.

Ա.— Փիլիսոփայական իտէալիզմը աշխարհը կ'ընդունի որպէս «բացարձակ զաղափարի մը» (idea) «տիեզերական ոգիի» մը, «տիեզերական գիտակցութեան մը» նիւթականացումը: Մարքսի փիլիսոփայական մատերիալիզմը կ'ընդունի թէ աշխարհը իր ամբողջ էութեամբ նիւթակա է, որ աշխարհի բազմապիսի երեւոյթները նիւթի շարժման տարբեր ձեւերը կը յայտնաբերեն, որ երեւոյթներու միջանկեալ կապակցութիւնն ու միջանկեալ կախուածութիւնը, ինչպէս հաստատուած է դիալեկտիկ մեթոտով, շարժող նիւթի զարգացման մէկ օրէնքին ծնունդն են, եւ վերջապէս՝ որ աշխարհը նիւթի շարժման օրէնքներով կը զարգանայ եւ պէտք չունի «տիեզերական ոգիի» մը:

Լենին, խօսելով հին փիլիսոփաներէն Հէրակլիտի (576—480 Ն. Ք.) մատերիալիստական տեսութեան մասին, որ կ'ընդունէր թէ աշխարհը, միաւորեալ ամբողջութիւն մը, որեւէ աստուծո՛վ կամ որեւէ մարդէ չէ ստեղծուած, այլ գոյութիւն ունեցեր է, գոյութիւն ունի եւ յաւիտեան գոյութիւն պիտի ունենայ որպէս ապրող հուր, որ սխտէմատիկ կերպով վեր կ'արձակէ իր բոցերը եւ սխտէմատիկ կերպով կը մարի», կ'աւելցնէ. — «Դիալեկտիկական մատերիալիզմի նախատարրական լուսագոյն բացայայտութիւնն է աս» (Տես. Լենինի գործերէն՝ Փիլիսոփայական նոթեր, էջ 318):

Բ.— Փիլիսոփայական իտէալիզմը կը հաստատէ թէ՛ իրապէս գոյութիւն ունեցող մեր միտքն է, թէ՛ նիւթական աշխարհը, ապրող արարածները, բնութիւնը, ասոնք գոյութիւն ունին միայն մեր միտքին մէջ, մեր զգայնութիւններուն, զաղափարներուն ու ըմբռնողութեան մէջ. մինչդեռ Մարքսիստ մատերիալիստ փիլիսոփան ընդհակառակը՝ կ'ընդունի թէ նիւթը, բնութիւնը, ապրող արարածները ասոնք մեր միտքէն անկախ՝ նիւթական գոյացութիւններ են, որ նիւթը առաջինն է ու հիմնականը, քանի որ ա՛ն է աղբիւրը մեր զգայնութիւններուն ու մեր զաղափարներուն. իսկ միտքը կուգայ որպէս երկրորդական, լծակցական, քանի որ ան արտացոլումն է նիւթին, ապրող արարածներու արտացոլացումը, որ մտածողութիւնը նիւթի մէկ արտադրութիւնն է, որ իր զարգացման մէջ հասած է կատարելութեան բարձր աստիճանի մը. այդ աստիճանը ցուցնողը ուղեղն է, մտածողութեան օրգանը: Ուրեմն, որեւէ մէկը մտածողութիւնը չի կրնար բաժնել նիւթէն, առանց իյնալու խոշոր սխալի մը մէջ:

Այս առթիւ Լենին կ'ըսէ. — «Մատերիալիզմը անհասարակ կը ճանչնայ առարկայականօրէն իրական գոյացութիւնը — նիւթը — որ անկախ է մարդկութեան գիտակցութենէն, զգայնութենէն եւ փորձէն ... Պատմական մատերիալիզմը հասարակական գոյութիւնը կը ճանչնայ անկախ՝ մարդկութեան հասարակական գիտակցութենէն: Գիտակցութիւնը թէ՛ այնտեղ է եւ թէ՛ այստեղ միայն արտացոլումն է կեցութեան, լուսագոյն պարապիին՝ անոր մտաւորապէս ճիշդ (համարժէք, իտէալիստօրէն ճշգրիտ) արտացոլումը: Միակտուր պողպատէն ձուլուած Մարքսիզմի այս փիլիսոփայութեան կարելի չէ հանել ոչ մէկ հիմնական նախադրեալ, որեւէ մէկ էական մաս, երբ մարդ չուզեր հեռանալ առարկայական ճշմարտութենէն եւ չուզեր իյնալ բուրժուական ոչակցիոն ստութեան գիրկը (Տես. Լենինի Մատերիալիզմ եւ Իմպրիսիպիսիզմի, էջ 373—374):

Փիլիսոփայական իտէալիզմը կը մերժէ աշխարհի եւ անոր օրէնքներու ճանաչողութեան կարելիութիւնը. ան չի հաւատար մեր ծանօթութեան վաւերականութեանը, չի ճանչնար ճշմարտութեան առայկայականութիւնը եւ կ'ընդունի թէ աշխարհը լեցուն է «իրենք իրենց մէջ իրերով» (things-in-themselves) որոնք գիտութեան ծանօթ չեն կրնար ըլլալ, Մարքսիստ փիլիսոփայական մատերիալիզմը կը փաստէ որ աշխարհը եւ իր օրէնքները ամբողջապէս գիտելի են, որ

բնութեան եւ օրէնքներու բովէն անցած՝ առարկայական ճշմարտութեան վաւերական փաստն ունեցող ծանօթութիւն է, եւ վերջապէս՝ որ աշխարհի մէջ ոչինչ կայ անդիտելի, թէ եւ իրեր կան տակաւին որոնք մնացեր են անծանօթ, բայց անոնք ալ երեւան պիտի հանուին եւ դիտելի պիտի ըլլան գիտութեան ու գործնականացման ջանքերով:

Ասոնք են, կարճապէս կերպով ներկայացուած Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի գլխաւոր կողմերը:

Այժմ դիւրին է հասկնալ թէ ինչպէս կարելոր է փիլիսոփայական մատերիալիզմի սկզբունքները միացնել հասարակութեան եւ բնկերային կեանքի ուսումնասիրութեան, եւ նոյնպէս ինչքա՞ն կարելոր է այդ սկզբունքներու կիրառումը հասարակութեան պատմական կեանքին ու պրոլետարիատի կուսակցութեան գործնական աշխուժութեան մէջ:

Եթէ բնութեան երեւոյթներու միջեւ եղած կապակցութիւնը եւ անոնց միջանկեալ կախուածութիւնը բնութեան զարգացման օրէնքներուն կը հետեւին, ուրեմն, ընկերային կեանքի երեւոյթներն ալ կը հետեւին հասարակութեան զարգացման օրէնքներուն եւ անոնք զիպուսածական չեն: Ահա անոնց ուսումնասիրութիւնն է որ կ'ըլլայ գիտութիւն, սոցիալիստական գիտութիւն:

Եւ մենք զիտենք որ այդ սոցիալիստական գիտութիւնը Մարքսիզմն է, որ առաջնորդը դարձեր է սոցիալիստական բոլոր երկիրներուն ու սոցիալիզմի ձգտող բոլոր բանուորական զանգուածներուն:

ՖԱՊԻԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

1884-ին, Սիւտի Վէպ (1859-1947) իր շուրջը հաւաքելով շարք մը քաղաքական ծառայողներ, մարդասէրներ, գրապէսներ եւ անուանի մարդիկ՝ ինչպէս Լ. ձ. Վէլս (1866-1946) եւ ձ. Բերնարտ Ծօ (1856-1950) հիմնեց Ֆապիան Ընկերութիւնը: Անոնց գլխաւոր նպատակն էր բարեկարգութիւն ներմուծել տիրող վարչական եւ տնտեսական սխտէմին մէջ եւ հասարակութիւնը աստիճանական զարգացմամբ տանիլ արդար հասարակարգի մը: Անոնք կ'ընդունէին թէ գրութիւնը կայուն, մնայուն ըլլալու ճակատագրուած չէր, ան փոխուելու էր զէչէն լաւ եւ լաւէն լաւագոյնը, բայց այդ փոխակերպութիւնը ըլլալու էր առանց յեղափոխութեան, այնպէս որ սոցիալիստական միջոցներ կարելի էր որ որդեգրէին Ազատական կամ նոյնիսկ պահպանողական վարչութիւնները: Իրողութիւնն է որ այս մարդիկը զնահատելի աշխատանք տարին մերկացնելով կապիտալիստական սխտէմի տակ

բանուորներու բնակարաններու սոսկալի դրութիւնը եւ աշխատուորներու տանջալի վիճակը եւ Սիւտի Վէպը ինքը՝ մատուորական եւ բարոյական մեծ օժանդակութիւն մատուցեց բանուոր դասակարգի կազմակերպութեան գործին: Ֆապիան Ընկերութիւնը հրատարակած է շատ մը լաւ կողմերով գործեր, որոնք տարածեր են ջրախառն սոցիալիզմի դադափարները շատ աւելի լայն շրջանակներով քան ինչ որ կարելի էր երեւակայել: Բերնարտ Ծոյի եւ Վէլսի վէպերը վերջերս միջինուոր մարդոց ուշագրութիւնն ու հիացումը գրաւեցին եւ ստեղծեցին իրենց սեփական մատուորական շրջանակները:

Ֆապիան ընկերաբանութիւնը առանձնապատուկ ընկերաբանութիւն մը եղաւ, աւագուտ ընկերաբանութիւն մը:

Ֆապիանները հպարտ էին որ իրենց սեփական տնտեսական թէւորիան չէին ունեցեր, անոր փոխարէն ընդունել էին «գիտական» տնտեսագիտութիւնը, այսինքն լուսանցքային թէորիան, առանց տեսնելու, կամ առանց տեսնել ուզելու որ կապիտալիզմը կարելի չէ փոխել այնպիսի թէորիայով, որ կառչած է կապիտալիզմի անվերջ շարունակման տեսութեանը: Ֆապիան Ընկերութեան մեծագոյն գործն այն եղաւ որ ան հիմնեց Լոնտոնի Տնտեսական եւ Քաղաքական Գիտութեան Գարոցը 1895 թուին, որուն սկզբնական նպատակն էր երիտասարդ սերունդը դաստիարակել յառաջդիմական մտածողութեամբ եւ լուսաւորեալ իտէալներով: Այս գարոցէն շրջանաւարտ եղան հետեւեալ անուանի մարդիկը՝ Կրէհէմ Վէլս (1858-1932), Հապհաուզ (1864-1929) եւ Լէսքի (1873-1950): Ի հարկէ անոնցմէ չէր սպասուեր որ անոնք սատարէին ընկերային յեղափոխութեան, անոնց գործն եղաւ տնտեսագիտութեան եւ ընկերաբանութեան վերաթարգմանութիւնը: Իրապէս Ֆապիաններու ներածին երկչոտութիւնը արգելք եղաւ որ անոնք հակին յեղափոխական ուղիին: Ատոր համար անոնք տունին կարող վարչապէսներ եւ ապագային ալ՝ աշխատուորական նախարարներ:

Ֆապիանիզմը հրապարակ իջած չէր կուուելու իմպերիալիզմի դէմ, այլ ընդհակառակը՝ ան կ'ուզէր անոր մասսաները գրգռող թերիները վերցնել եւ դայն զնել հեռատես եւ ազգու դերին վրայ: Ան չէր տեսներ, կամ կը մերժէր նայել այն ներքին հակասութիւններուն, որոնք իմպերիալիզմը կ'առաջնորդէին պատերազմի եւ աւերածութեան: 1899-ին, երբ Պոլէրական Պատերազմը պայթեցաւ, Ֆապիան Ընկերութիւնը երեք մասի բաժնուեցաւ — Սաղաղասէրներ, Ազատականներ եւ Աշխատուորական Կուսակցութեան անդամներ, ասոնք բողոքեցին պատերազմին դէմ, բայց Ծոյի եւ Վէպսի գլխաւորութեամբ պաշտօնական տեսակէտը յողթանակեց:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ
ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

ԺԹ. զարու վերջերը ընկերային գիտութեանց զարգացման հարեանցի պատմութիւնը կը յայտնարե՛րէ անոնց անյարակից ու հակասական ընդթր: Իրողութիւն է որ տիրող դասակարգը ամէն տեսակի դժուարութիւններով կ'արգիլէր զարգացումն ու ծաւալումը այն ընկերային գիտութիւններու ճիւղին, որ կրնար վնասել շահու համար աշխատանքի շահագործման իր սկզբունքին: Գիտութիւնը անհրաժեշտօրէն պէտք էր տիրող դասակարգի շահաբեր մասնարածիին կցուէր ու ծառայէր այդ դասակարգին: Ահազեմիկ ընկերային գիտութիւնը վատասերող կապիտալիզմի հովանիին տակ ապագայ չունէր, բացի այն՝ ինչ որ ընկերային կարգերը իրեն գոյութեան իրաւունք կուտային:

Ռուսական Յեղափոխութեան ծնունդը.—

Ռուսիա ԺԹ. զարու վերջերը քաղաքականապէս եւ տնտեսապէս նոյն առեն՝ իմպերիալիստական եւ զաղութաւարական երկիր մըն էր: Ան հին կուլտուրայով եւ աւանդութեամբ, քաղաքականապէս Եւրոպայի ամենէն յետամնաց պետութիւնն էր: Յարական ինքնակալութիւնը նոյնքան իմպերիալիստական՝ որքան Անգլիան եւ միւս եւրոպական պետութիւնները, զրացած էր Կեղրոնական եւ Արեւելեան Ասիոյ մէջ հողային ընդարձակման քաղաքականութեամբ: Բայց անոր իմպերիալիզմը տնտեսական ուժեղ յենարան չունէր. Ռուսաստանը ճարտարարուեստի տեսակէտով յետամնաց էր, եւ թէև կարող էր իր սեփական արդիւնարեութիւնը զարգացնել, սակայն ցարական կառավարութեան տակ անկարելի էր այդ: Ատոր փոխարէն այդ երկիրը շահագործման գաշտ դարձեր էր օտար ընկերութեանց կողմէ, որոնք ո՛չ միայն անոր շահաւէտ ազրիւրները առած էին իրենց ձեռքերուն մէջ, այլեւ կառավարութիւնը բեռնաւորած էին վախճանուական փոխատուութեամբ: Զարմանալի չէր, ուրեմն, որ ատոր հետեանքը պիտի ըլլար թշուառութիւն, կաշառակերութիւն եւ յուսահատութիւն, սարսափելի դրութիւն մը, որ բնականօրէն պիտի պատրաստէր ընդվզում եւ տէնորական փորձեր: Բայց տարերային այդ ընդվզումներն ու տէնորական փորձերը դատապարտուած էին ձախողանքի, եւ այդ՝ ոչ միայն անոր համար որ ցարական ոստիկանութեան ուժը ահռելի էր, այլեւ անոր համար որ ընդդիմադիրները չունէին ընկերային թէորիա, չունէին յեղափոխական կշռագատ ծրարագիր, եւ որպէս այդպիսին՝ կղզիացած էին մասսաներէն: Եկաւ, սակայն, ժամանակ մը, երբ բանուոր դասակարգի շարքերը ստուար-

ցան, եւ մարքսիստական զաղափարները սկսան թափանցել Ռուսաստանի մէջ, ուր կը պատրաստուէր յեղափոխական տարրը՝ պրոլետարիատը: Մարքսիստական զաղափարները որդեգրողներու կարգին՝ ամենէն բանիմացն էր Պլեխանովը (1856-1918):

Լենին.—

Մարքսի ամենէն հանճարեղ աշակերտը, որ գերազանցեց իր վարպետը իր անմրցելի հանճարով եւ յեղափոխական ռազմավարութեամբ Վլադիմիր Իլիչ Ուլիանով Լենինն էր (1870-1924) ամբողջ աշխարհի մարդկութեան ծանօթ պարզապէս Լենին անունով: Լենին, Մարքսիզմի ուսանող եղած առեն արդէն յեղափոխական էր: Ան էր որ առաջին անգամ՝ հիմնական Մարքսիստական թէորիան իւրացուց եւ կրցաւ զայն կապել ո՛չ միայն ռուսական պայմաններուն, այլեւ աւելի խորացնելով եւ ընդարձակելով Մարքսի ուսուցմունքը, կրցաւ զայն կապել Ի. գարու տնտեսական, քաղաքական եւ մտաւորական աշխարհի կացութեան: Եթէ ան աշխարհի քաղաքական առաջնորդներէն ամենամեծը չըլլար իսկ՝ Լենինի անդերազանցելի հանճարը ամբողջ աշխարհի կողմէն պիտի ճանչցուէր տնտեսագիտութեան եւ փիլիսոփայութեան տուած իր հսկայ նպաստներով: Ան էր առաջինը, որ իր ժամանակի երիտասարդ, կայտառ ու բարձրաթռիչ իմպերիալիզմին մէջ, որուն նեցուկ կեցեր էին նոյնիսկ Ֆրանկլիզմի յառաջդիմական առաջնորդները, տեսաւ կապիտալիզմի քայքայման նախանշանները: Ան է դարձեալ, որ այնքան խանդավառ էր որպէս կատարուած իրողութիւն՝ իմպերիալիստական դարաշրջանին ընկերացող մտաւորական եւ կուլտուրական փոփոխութիւններուն ի տես: Իր Մատերիալիզմ եւ իմպերիոկրիտիցիզմ երկասիրութեամբ ան կը վերլուծէ Մախի (1838-1916) եւ անոր հետեւորդներուն Ռուսաստանի սոցիալիստական շարժման մէջ յառաջ տարած պողիտիվիստական (դրապաշտական) ձգտումները եւ կը ցուցնէ որ անոնք բոլորը կը մօտենան Բէրքըլիի (1684-1753) եւ Պլատոնի (428-348) Ն. Ք.) մաքուր իտէլիզմին եւ ատով նեցուկ կը կենան ռէակցիայի դիրքաւորումին:

Լենինի համար, սակայն, կեղրոնական հարցը քաղաքական հարցն էր: Յեղափոխութիւնը, որուն համակիր էին ռուս բոլոր յառաջդիմական տարրերը, ի՞նչպէս յառաջ տանելու էր եւ ի՞նչ գրութիւն հետեւելու էր անոր. ահա այս էր ամենէն էական խնդիրը: Լենին, Պլեխանովէն սորված էր բան մը, այն էր՝ նոյնիսկ յետամնաց Ռուսաստանի մէջ ճարտարարուեստական բանուորութիւնն էր որ կը ներկայացնէր յեղափոխութեան կարեւորագոյն ուժը: Ասկէ ան գործնական եզրակացութեան հասաւ որ մարքսիստական հակա-

ցողութեամբ խորապէս սողորուած կուսակցութիւն մը պէտք էր, որ կարենար ներգրաւել ժողովուրդը սոցիալիզմի կատարեալ յազթանակին համար: Այս կուսակցութիւնը սկզբնական շրջանին, կը կոչուէր Սոցիալ Դեմոկրատ Մեծամասնական (բուլճեիկ) կուսակցութիւն, որ յետոյ եղաւ Կոմունիստ Կուսակցութիւն: Այս նորակազմ կուսակցութիւնը Լենինի առաջնորդութեամբ կը հետեւէր 1905-ի յեղափոխութեան հետքերուն: 1917-ի յեղափոխութիւնը իր սկզբնական շրջանին բուրժուական էր. ուստի բուրժուական ուղելով խորտակել ցարական կառավարութեան շէնքը, իր դատը միացուց բանուորներու դատին հետ: Բայց երբ տեսաւ որ յեղափոխութիւնը իր նախագծած սահմանէն կ'անցնի եւ աւելի յառաջ կ'երթայ, անմիջապէս ետ դարձաւ եւ համաձայնեցաւ ցարիզմի հետ: Լենինի կուսակցութիւնը, սակայն, թոյլ չտուաւ որ բուրժուազիտայի եւ ցարիզմի դաշնակցութիւնը ամբողջապէս եւ ուժեղանայ, եւ բանուորներու եւ զիւղացիներու դաշնակցութեամբ սկսաւ յեղափոխութեան երկրորդ շրջանը — պրոլետարական յեղափոխութիւնը, որ հակառակ ներքին եւ արտաքին թշնամիներուն, յազթանակեց եւ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հաստատեց պետութիւն մը, որ իր բոլոր մասնաբաժիններով ենթակուած էր բանուորներու եւ զիւղացիներու հսկողութեան: Որպէս անգղազական ճարտարապետը նոր հասարակութեան, Լենին եղակի տեղ մը կը զբաւէ մարդկային ընկերութեան պատմութեան մէջ, որովհետեւ ան էր որ 1871-ի Փարիզի Կոմունայի եւ 1905-ի յեղափոխութեան դասերէն օգտուելով մատեմատիկոսի հաշուետեսութեամբ յեղափոխական թէորիան վերածեց գործնականի եւ ապահովեց իր կազմած կուսակցութեան մնայուն յազթանակը: Ան նոյնիսկ Սովետ պետութեան կանխադոյն օրերու պայքարներու շրջանին շարունակեց իր քաղաքական վերլուծումը: Պետութիւն եւ Յեղափոխութիւն երկասիրութիւնը, որ հրատարակուեցաւ յեղափոխութեան շրջանին Լենինի կարենոր գործերէն մէկն է: Լենին, հոն բաղդատութիւնը կ'ընէ Սովետական պետութեան եւ բուրժուական պետութեան միջեւ, եւ վեր կը հանէ սոցիալիստ պետութեան գերազանց առաւելութիւնն ու ուժը, ուր երեւան կուզան գործօն մասնակցութեամբ՝ հազարաւոր կազմակերպութիւններ, գործարաններ, փողոցներ եւ ֆարմեր: Այս նոր դեմոկրատական պետութեան առաջին գործը պիտի ըլլայ փշրել հին կառավարական մեքենան եւ անոր տեղը հաստատել պրոլետարական զիկտատուրան, որ կը տանի զէպի կոմունիստական հասարակարգը:

Լենին նոյնպէս շատ մօտէն տեսաւ սուսական յեղափոխութեան գերը համաշխարհային սոցիալիստական շարժման մէջ: Ան շատ լաւ գիտէր թէ սուսական յեղափոխութիւնը Ռուսաստանի սահմաններուն

մէջ պիտի չմնար, նոյնիսկ Գերմանիոյ յեղափոխութեան պարտութենէն յետոյ՝ անոր ալիքները պիտի տարածուէին ամէն կողմ: Եւ Լենին սխալած չէր:

Լենինի այս հետադարձ կշռադատութեամբ հաստատած յեղափոխական թէորիաներն են պատճառը, որ այսօր, երբ Մարքսիզմի անունը կը նշուի, անոր հետ անմիջապէս կը կցուի նաեւ Լենինիզմը. առաջինը՝ որպէս պրոլետարական զիտութիւն, երկրորդը՝ որպէս ընկերային յեղափոխութեան գործնական սաղմապիտութիւն:

5.— ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԷՆ ՅԵՏՈՅ

20-րդ դարու ընկերային կերպարանափոխութիւնը .—

Մարդկութիւնը պատմութեան ո՛չ մէկ շրջանի մէջ կարճ ժամանակի ընթացքին այնքան խոր փոփոխութեան ենթարկուած է որքան 1914-ի պատմական թուականէն յետոյ: Տեսնական տատանումներ, ներքին դժանդակի քաղաքական կոխներ, պատերազմներ եւ նոր պատերազմներու պատրաստութիւններ, յաջորդեցին իրարու առանց դադարի եւ բոլորն ալ սովորական կեանքի մը շրջանին: Մարդոց ու կիներու մտածումներն ու զիրքերը այս փոփոխող կացութենէն անխուսափելիօրէն ազդուեցան, նոյնիսկ եթէ այդ ի գործ դրուած ազդեցութիւնը վեր առնենք քաղաքական եւ ընկերային թատերամէն բացորոշ մեկուսացման իմաստով:

Ամբողջ կապիտալիստական աշխարհը այս անկանոն աճման ու քայքայման շրջանին, չունէր որեւէ ուրիշ կեղծոնական նպատակ եւ ակնկալութիւն՝ բացի շահու նկատումն ու վերապրումի ցանկութիւնը: Ատոր համար բնաւ զարմանք չէր պատճառէր որ կապիտալիզմի շրջապատին մէջ եթէ խորհրդատուներ կային, անոնք ալ պիտի չուարէին ընկերային զիտութեան զանազան թէորիաներու մէջէն ընտրելու իմացական բացատրութեանց լաւագոյնը: Հոգեբանութեան մէջ, տնտեսագիտութեան մէջ, փիլիսոփայութեան մէջ կային իրարու հակառակ եւ տեսակ մը վաղանցուկ զպրօցներ, որոնցմէ ոմանք հազիւ թէ կը տածէին իմաստալից յոյս մը, նպատակ մը, կամ նոյնիսկ բանական համոզում մը: Միայն անոնք, որոնք յօժար էին քննել եւ քննադատել այն դրութիւնը, որուն տակ կ'ապրէին, անոնք էին որ կրնային հետեւիլ ընդդիմադրութեան աւանդական դրօշմին եւ այդպիսով գտնել իրենց յոյսի խարխիւր կազմող հասկացողութիւնը:

Սոցիալիստական աշխարհին մէջ առաջին անգամ գոյութեան ստիպողական հարցը կուզար, յետոյ՝ շինարարութեան եւ կուլտու-

րական ստեղծագործութեան հարցը, եւ այդ հարցերն էին որ ուժեղ միութեան մը նպատակը կը դրոշմէին ժողովուրդի հողերանութեան մէջ եւ զանոնք գերմարդկային ճիգերով կը կապէին եռանդագին գործունէութեան: Այդ միութիւնը իրականացնելը այնքան դիւրին գործ չէր, սակայն: Տասնեակ տարիներով երբ Խորհրդային Միութեան ժողովուրդները ապրեցան պատերազմի կամ պատերազմի սպառնալիքներով լեցուն պայմաններու մէջ, անոնք պիտի դարբնէին իրենց ընկերային թէւորիաները Մարքսէն ու Էնգէլսէն ժառանգած սկզբունքներու սալին վրայ՝ օգտուելով սխալներու եւ յաջողութեանց փորձառութեանէն: Եւ պէտք է ըսել թէ անոնք վերջապէս կըրցան իրենց ընկերային մտածողութեան յստակուած մթնոլորտը ստեղծել:

Քսաներորդ դարուն կապիտալիստական երկիրներու մէջ փոփոխութեան ընդհանուր ընթացքը, կը տեսնենք թէ ճահիճի մը մէջ թաւալալոր անկումի մը ընթացքն եղած է, որ կը պարզուի առաջին եւ երկրորդ պատերազմներու շրջանին եւ անկէ ալ յետոյ՝ մինչեւ մեր ներկայ օրերը: Իւրաքանչիւր տասնամեակին մէնք կընանք զանազան ընկերային յառաջդիմութեան ու ազատագրական շարժման տարիները: 1912-ին կը տեսնենք խոշոր գործադուլներ եւ անոնց յաջորդող Ա. Պատերազմէն յետոյ՝ սոցիալիզմի վերապրումը: 1920-ին, յետ պատերազմեան շրջանի վերակառուցումը: 1936-ին ժողովրդական ֆակտի յաղթանակը: 1946-ին, ազատագրութեան դարաշրջանին հետ «միացեալ աշխարհի» համագործակցութիւնը: 1953-ին, պաղ պատերազմի ստեղծած ստոցակոյտերը: 1966-ին, ամերիկեան իմպերիալիզմի կեանքի ու մահուան կռիւի սկզբնաւումը Վիեթնամի վայրենի պատերազմով: Այս տասնամեակներու միջեւ ինկած տարիները կը ցուցնեն ոչակցիա եւ աւերում, որոնք կը փաստեն թէ իր տնտեսութեան ժառանգած դժուարութիւնները լուծելու միայն մէկ ճամբայ մնացեր է, այն է՝ պատերազմը:

Ամէն մէկ խոշոր աւերածութիւն, ուր երեւան կուգար հասարակութեան հին ձեւերու ներածութիւնը, իր հետ բերաւ ժողովրդական ապստամբութեան յուսալից շարժում մը յառաջդիմական զաղափարներու ընկերակցութեամբ: Բայց այդ շարժումը չկրնալով փչրել կապիտալիստական սիստէմի պաշտպանութեան աշտարակները, մեռաւ երերումի ու շուարումի մէջ եւ տուն տուաւ յետադիմութեան ու ճնշումի: Բայց որովհետեւ որեւէ յետադիմութիւն չի կրնար կայուն սիստէմ մը հաստատել, ուստի ծնունդ կուտայ նոր աւերումներու:

Այս փոփոխութեանց մէջ, ի հարկէ, սխալ պիտի ըլլար տեսնել որ պատմութիւնը շրջանային ձգտումով ինքզինքը կը կրկնէր

անվերջ: Փոխակերպուող իւրաքանչիւր փուլ իր սեփական յատկանշական կողմերով կապիտալիզմի իշխանութիւնը կը ջլատէր եւ կը պարզէր անոր հաստատուն խարխիս մը գտնելու անկարողութիւնը:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԳԵՊԳԵՐՈՒ
ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

Տնտեսական, քաղաքական եւ զինուորական դաշտերուն վրայ մղուած պայքարները չէին կրնար չազդել ընկերային դիտութեանց, հոգ չէր թէ անոնք ակադեմական էին: Այսու հանդերձ, որովհետեւ այդ պայքարները զստակարգային բնոյթ ունէին, կապիտալիստական երկիրներու մէջ մտաւորականները բնականաբար զօրաւոր ընկերային գրգապատճառներ ունէին հակելու դէպի աջ: Այն ատեն, երբ Մարքսիզմը երկրի մը մէջ յաղթանակեց եւ դարձաւ օրինակ՝ ինչպէս նաեւ վտանգ մը, ոչակցիայի ամբողջ ազդեցութիւնը ուղղուեցաւ անոր դէմ: Դարուս կանխագոյն շրջանին մտաւորականներէն շատերը թէեւ լիբերալիզմի աւանդութեան կապուած էին, բայց դժուարութիւն կը քաշէին դիմադրելու քաղաքագէտներու, մամուլին եւ իշխանութեան միացեալ յարձակումներուն: Անոնք հաւատարմութեան դժով բաժան բաժան եղան. բաժանում յառաջացաւ զաղափարներու եւ գործնականութեան միջեւ, զրկուածներու պաշտպանութեան եւ լաւ քաղաքացի ըլլալու ձգտումին միջեւ: Իրերու այս ազդումներն էին որ մտաւորականներուն թոյլ շտուին պահպանել ժողովուրդին վրայ իրենց տածած հաւատքը:

Ազատագրութեան շրջաններուն զրեթէ բոլոր մտաւորականները ժողովրդական զգացումներու հոսանքին ազդեցութեան տակ քայլ մը յառաջ գացին երբ Առաջին Համաշխարհային Պատերազմէն յետոյ՝ վերակառուցման գործը սկսած էր, եւ մասնաւորապէս Ամերիկայի մէջ՝ երբ յայտարարուեցաւ New Deal-ը — նոր կարգադրութիւնը: Բայց անգամ մը որ ժողովրդական ուժերը դժուարութեանց բաղխեցան, եւ յետադիմութիւնը տիրական դարձաւ, մտաւորականներէն մեծ մասը հիասթափուեցաւ եւ դարձաւ յուստես: Յեղափոխական պրոպականտիստի վերադրումէն խուսափելու իրենց ջանքերուն մէջ այդ մտաւորականները քուեցան յառաջդիմական զաղափարները խեղաթիւրելու հոսանքին մէջ: Ոմանք ալ համոզուած որ յառաջդիմական զաղափարներով իրական աշխարհը կարելի չէ փոխել, քաշուեցան իրենց սեփական աշխարհներուն մէջ:

Այս պայմաններուն մէջ կապիտալիստական հովանաւորութեան տակ տարօրինակ թող չթուի, երբ ըսենք թէ պաշտօնական

ընկերային մտածողութիւնը աւելի երկչոտ էր քան թէ ինչ որ էր ժժ. դարու վերջերը: Ան կորսնցուցեր էր իր ներշնչողի յատկութիւնն ու կարողութիւնը: Բայց քարոզչութիւնները կը հաւաստէին թէ ազատ կապիտալիստական աշխարհի պահած հաւասարակշռութիւնը աւելի նախընտրելի էր քան թէ կոմունիստներունը: ժժ. դարու ազատական աշխարհապատկերը Բ. դարուն գրեթէ անճանաչելի դարձեր էր, թէև մի քանի երկիրներու մէջ ան ցոյց կուտար վերապրումի նշաններ: Անոր տեղը, պայմաններու տարբերականութեամբ զանազան երկիրներու մէջ երևան եկան ուրիշ գիրքաւորումներ սկսելով սոցիալ դեմոկրատիէն մինչև Փաշիզմ:

Ամերիկեան քառերաբեմը .—

«Ունեւոր» մեծ երկիրն՝ Միացեալ Նահանգներու մէջ 1917-18-ի պատերազմի փորձառութիւնը որոշ գասեր սորվեցուցեր էր տիրող դասակարգին, որ կրցաւ երկիրը պահել բնականոն վիճակի մէջ մինչև որ վրայ հասաւ 1929-32-ի տնտեսական տագնապը: Մնանկութիւնները բազմազան, ստուարացաւ անդործներու բանակը, ասով աճեցան յառաջդիմական գաղափարներն ու անոնց հետ յառաջդիմական գործունէութիւնը: Երևան եկաւ Զրէնկլին Դէլանո Ռուզվելտի (1882-1945) Նիու Տրը: Բայց ազատական գաղափարներ ունեցողի համար վայելող Ռուզվելտը իսուսափեցաւ տնտեսական գրութիւնը լուրջ վերլուծման ենթարկելու փորձէն: Ան ձախողեցաւ յառաջ տանիլ հիմնական ծրարիւր մը, որ պիտի կրնար ժողովուրդի օժանդակութիւնը ապահովել եւ ընդարձակել սկսուած ազատական շարժումը: Երկրորդ Համաշխարհային Պատերազմին կարճ եւ մասնակի միջնադարէ մը յետոյ՝ Միացեալ Նահանգները ինկան աւելի եւ աւելի խոր ոչակցիայի եւ մթազնացումի մէջ՝ Փաշիստական յատկանիշներով, եւ ծածկուած այնպիսի կեղծաւորութեամբ մը, որուն նմանը Հիտլերը նոյնիսկ չէր ուզած յարմարցնել իր նացիական շարժումին:

Քորէայի անվճռական եւ երկարատեւ պատերազմը եւ Միջբարտիզմի ծայրայեղութեան դէմ մղուած յետադարձքի շարժումը նկատելիօրէն տկարացուցին յետադիմութեան ուժը, մինչ միւս կողմէն՝ Պաղ Պատերազմը լայն պատահութիւններ կը ստեղծէր ապահովելու վիթխարի դէնքերու կատարելագործումը եւ տիրող դասակարգի վարկի բարձրացման նպաստող դիտարարութիւնները, ինչպէս օրինակ՝ Լուսնի հետախուզութիւնը:

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՅԹԸ

1917-էն առիւն, տնտեսական եւ քաղաքական դարգացումներու տարրեր փուլերու միջոցին տարբեր երկիրներու մէջ երևան եկան զանազան ազդեցութեանց հետեւող իրադարձութիւններ եւ պայքարի հասարակաց դիժ մը, որ կ'անցնի այդ ամբողջ շրջանին մէջէն: Այդ դիժը վկան է այն ճակատամարտին, ուր մէկ կողմը կեցեր են ազդու տամբ վարի դասակարգերն ու ճնշուած ազգութիւնները, միւս կողմը՝ կապիտալիստական երկիրները: Իսկ այդ ճակատամարտին մէջ տիրող պայմանները կը նպաստեն կապիտալիստական երկիրներուն: Բայց այդ նպաստը տեսական յաղթութիւն մը չերաշխատուր, որովհետեւ ընդդիմադիր ուժերը իրենց դարգացման ընթացքին մէջ աւելի ու աւելի կ'ուսճանան, քան թէ կը սմբին:

Այժմ, եթէ մենք ժողովրդական զգացումներէն դառնանք մտաւորականներու արտայայտած տեսութեանց, ի մասնաւորի՝ կապիտալիստական երկիրներու ընկերային գիտնականներուն, պատկերը այնքան պարզ չերեւիր: Անոնք ամբողջ շրջանին, մասնաւորապէս Պաղ Պատերազմի ճնշող փուլին մէջ, ապրած են, ուղղակի կամ անուղղակի՝ նկատելի ճնշումի տակ, որով կը մերժեն մտեւալ ժողովրդական ազատագրումի պատկերին, նոյն տեսն դիմադրելով զէպի կոմունիզմ առաջնորդող բոլոր շարժումներուն, անոնք կ'անցնին կապիտալիզմի պաշտպանութեան գործին՝ «ազատ աշխարհի», «դեմոկրատի» կամ «Արեւմտեան Քրիստոնեայ Քաղաքակրթութեան» հրապուրել զիմակին տակ: Անոնք պարտաւորուած չեն հաւատալու այդ բաներուն եւ դուցէ չեն ալ հաւատար, բայց իրենց շրջապատին մէջ ամէն ինչ — գիրքերը, շարժանկարները, ձայնասփիւռները եւ անոնցմով կազապարուած ամբոխային մտայնութիւնը — ասոնք բոլորը կը հարկադրեն որ անոնք մտնեն դիւրին ճամբան. եւ պէտք է ըսել որ թէ՛ հողեկան եւ թէ՛ նրթական տեսակէտով անոնց համար աւելի նպաստաւոր է հետեւիլ այն ուղղութեան՝ որ իրենց կ'ապահովէ տիրական արժէքներ:

Ամէն մէկ մտաւորական բնականաբար կ'ուզէ որ կարող ըլլայ շարունակել իր ընտրած գործը, կարողանայ հրատարակել զայն ազատօրէն, եւ վարկ ստանալ իր ըրածին համար: Վերջապէս ամէն բանէ առաջ, ան կ'ուզէ ապրիլ եւ լաւ ապրիլ: Տեսական եւ ապահով գործ, օտարոյի պայմանագրութիւն, հեղինակի բաժիններ կամ շարժանկարի իրաւունքներ, օտար երկիրներու հաճելի ճամբորդութիւններ, ասոնք եթէ բացարձակ անհրաժեշտութիւններ չեն, լաւ կեանքի մը համար էական կարեւորութիւններ են: Երբ մէկը իր կրթուած վի-

ճակով այդ ցանկութիւնն ունի, եւ դիտէ թէ կեղծիքով դիւրին է իր ցանկութիւնները դաճացնել, բնականաբար պիտի հետեւի այդ ուղե-
 դիծին: Տակաւին անդին կայ ուրիշ նկատելի բան մը. բոլոր նիւթական
 աղբիւրները, անհատ մը ժողովրդականացնող վարձատրութիւնները
 կառավարութեան եւ խոշոր կապիտալիստներու ձեռքերուն մէջ են.
 անոնց դէմ կենալ, անոնց դէմ պայքարել, կը նշանակէ կեանքի բոլոր
 յաջողութիւնները կամովին խափանել: Այստեղ մասնաւորապէս նկա-
 տի ունենանք Միացեալ Նահանգները, ուր հաւատարիմ Ամերիկանիզ-
 մի ճամբէն շեղողները կ'ենթարկուին յանձնարարութեան քննութեան
 եւ կը կորսնցնեն ամէն ինչ:

Կապիտալիստական աշխարհին մէջ մտաւորական մարդուն առ-
 ջեւ կը բացուի երկու ճամբայ, մին փչոտ է ու դժուարին, որ կը
 տանի հարստանքի ու նախատինքի, անդործութեան ու թշուառու-
 թեան, միւսը՝ դիւրին է պատուաւոր, որ կը տանի մեծարանքի ու
 յարգանքի, բարձր դիրքի ու հարստութեան: Շատ քիչերն են որ ար-
 համարհելով ամէն ինչ կ'ընտրեն առաջին ճամբան, եւ անոնք տա-
 ուապող դասակարգի դատին նուիրուած հերոսներն են: Իսկ կապի-
 տալիստները այդ հերոսներուն առջեւ կը հանեն պատրանք, կեղծա-
 ւորութիւն, բիրտ ուժ եւ յուսահատութիւն:

Պատրասնի քաղաւորութիւնը.—

Դեմոկրատի մեխանիզմը կապիտալիստական սիստէմի տակ
 հիմնալի կերպով կը ծառայէ պահպանելու փոքրամասնութեան գրե-
 թէ ժառանգական զարձած իշխանութիւնը, եւ այդ՝ կամ անդլիս-
 կան աշխուհականական ձեւով եւ կամ բացորոշակի ազականուած ու
 խարդախ ամերիկեան կամ Ֆրանսական քաղաքականութեան հա-
 գուստով: Դեմոկրատի ըսուածը տեսակ մը մեքենայութիւն է, որ
 ժողովուրդին կուտայ իշխանութեան մեծագոյն պատրանքը բայց կը
 թոյլատրէ որ անոնք այդ իշխանութեան փոքրագոյն իրականութեան
 մօտենան: Մ. Նահանգներու մէջ, օրինակի համար, մէկ կողմէն
 բարձր աշխատավարձքը եւ բանուորներու քաղաքական յետամնա-
 ցութեան հոգածու պահպանութիւնը, միւս կողմէն՝ ներկայացուց-
 չական սիստէմի ախտաւոր եւ երեւութապէս յառաջդիմական ձեւը,
 երկուքը միասին, կը ցած են երկար տարիներով ծաղկեցնել ազա-
 տական, ազատ ձեռնարկութեան փիլիսոփայական պատրալի տեսու-
 թիւն մը: Այդ տեսութիւնը, որ ուժեղացեր է հակա-կոմունիստական
 ոգիով, եւ հաւատարմութեան ուխտով, նպատակ ունի խարանել
 որեւէ ընդդիմադրութիւն որպէս դաւաճանութիւն՝ կապիտալիստա-
 կան նուիրականացած անասճման իշխանութեան դէմ:

Տարբեր է պատկերը Անգլիոյ մէջ: Հոն, բանուոր դասակարգը

որ արդիական աշխարհի մէջ առաջինն եղած է որպէս դասակարգ ե-
 բեւան եկողը, ունի աւելի քաղաքական փորձառութիւն, բայց հա-
 կառակ այդ փորձառութեան՝ այդ դասակարգն ալ ուրիշ տեսակ
 պատրանքի անձնատուր եղած է, բարեշքական սոցիալիզմի պատ-
 րանքին: Ժողովրդական զանգուածները կը շարունակեն հաւատալ
 թէ՛ իրենք այս ճամբուն վրայ են, որ կը տանի դէպի խաղաղութեան
 եւ ընկերային արդարութեան աշխարհը: Սոցիալ դեմոկրատիայի բա-
 րենորոշական գաղափարախօսութիւնը, որ կը ներկայանայ Ֆրա-
 պիանիզմով գունաւորուած կերպարանքով եւ աշակողմեան թրէյտ
 իւնիթիզմով, որեւէ պարագայի տակ չուղեր մօտենալ կապիտա-
 լիստական սիստէմի հիմնական քննադատութեան եւ խտիւ կը մեր-
 ժէ՛ որեւէ ուժղին փոփոխութեան գաղափարը, որ կընայ կոչուել
 յեղափոխական: Ան կ'ընդունի թէ աւելի օգտաւէտ է հաւատալ, կամ
 առնուազն կեղծել հաւատալ, որ բարեկեցիկ պետութիւնը արդէն
 հասած է, կամ եթէ չէ հասած՝ ան որոշ ժամանակին գալու է, միայն
 թէ «ոչ-առանձնաշնորհեալները» պէտք է համբերեն:

Բարեկեցիկ պետութեան գաղափարը, որուն մէջ բոլորիս հա-
 մար ապահովուած են կեանքի էական պիտոյքները, պաշտպանուած
 է ժողովուրդի առողջութիւնը, եւ կը թութեան լիառատ պատհու-
 թիւններ կան ամենուն համար, այդ գաղափարը երկար ատեն ներ-
 շնչում տուած է բանուոր մարդոց եւ կիներու սերունդներուն: Այդ
 գաղափարը, սակայն, իրականութեան չի համապատասխաներ:
 Իրիտանական պետութիւնը, որ իբր թէ կը հոգատարէ իր որդիներն
 ու դուստրերը, անոնց օրբանէն մինչեւ գերեզման, առասպելական
 պատկեր մըն է, զոր կը ներկայացնէ: Կառավարութիւնը իր ազգա-
 յին եկամուտին միայն 10 տոկոսը յատկացուցեր է ընկերային ծա-
 ուայութեանց համար, իսկ 90 տոկոսը յատկացուցեր է սպառազինման
 եւ տիրող դասակարգի պաշտպանութեան համար:

Բարեկեցիկ պետութեան սոցիալիզմը իր արտադրողական
 մարդին վրայ նոյնպէս պատրանքի մը պատկերը կը պարզէ: Ազգայ-
 նացած արդիւնարեւութիւններն անոնք են, որոնք արդէն դադրած
 են շահարեւ ըլլալէ: Անոնք այնպէս մը սարքաւորուած են որ հում
 նիւթեր եւ ամենաաժան ծառայութիւններ կը հայթայթեն ճարտա-
 բարուեստի շահարեւ ձիւղերուն, որոնք կը մնան անհատ կապիտա-
 լիստներու ձեռքերուն մէջ: Այս պատրանքին հետ քով քովի կ'երեւի
 նաեւ անդործութեան վերացման պատրանքը: Անդործներու պահես-
 տի բանակը կապիտալիզմի թիկունքային բանակն է:

Կեղծաւորութիւն.—

Հաւատալիքի գիծին վրայ երկու տեսակ պատրանքներ կան.

մէկը այն է որ ժողովուրդը պարկեշտօրէն հաշտուած է կապիտալիզմին հետ եւ կը յուսայ թէ ան կրնայ բարեկարգուիլ. միւսն այն է որ ժողովուրդը կը հաւատայ թէ կապիտալիզմն արդէն բարեկարգուած է. այժմ զժուար է դիժ մը քաշել այս երկու պատրանքներու միջեւ, որովհետեւ կեղծիքը դեղեցիկ Ֆրազներով վերէն վար բոլոր շարիքները անտեսանելի ըլլալու աստիճան վարագուրած է: Ժողովուրդի ուշադրութիւնը ներկայի անձկութիւններէն վրիպեցնելու միակ ազդու միջոցն էր ցոյց տալ անոնց, որ աւելի սոսկալի ուժով մը կայ, որուն հետ կարելի չէ բաղդատել ներկայի ուժովը: Եւ կապիտալիզմի փաստարանները կոմունիստական ուժովը ներկայացուցին որպէս այդօրինակ սոսկալի ուժով մը: Եւ այսպիսով հակա-կոմունիզմը երկար տարիներով ծառայեց այս մարդոց, մասնաւորապէս պաղ պատերազմի ընթացքին:

Հրապարակութեան յատկացուած ամէն օրգաններու — թերթերու եւ պարբերաթերթերու մէջ ծախու հանուած ամէն տեսակ Ֆրազներ գործածուեցան վարկարեկելու կոմունիզմը եւ արդարացնելու կապիտալիզմը: Առաջին առիթով այդ պրոպականտան յառաջ կը տարուէր յանուն սեփականատիրութեան, կարգ ու կանոնի եւ աւանդական օրէնքներու պաշտպանութեան եւ «ուզղամիտ մարդիկ» կը պնդէին որ ժողովուրդը ինքզինքը պաշտպանէ կարմիր յեղափոխութեան դէմ, անիշխանութեան դէմ, բռնութեան դէմ: Բայց այս վարձկան փաստարանները, որոնք ստապատիր, արտառոց յերկրանքներ կը հիւսէին սոցիալիստ երկիրներու առաջնորդներուն շուրջ, այդ երկիրներու ներքին կեանքին շուրջ, վարպետօրէն կը քողարկէին կապիտալիստական երկիրներու իրական նեխածութիւններն ու անասելի վայրենութիւնները: Կեղծիքը ո՛չ մէկ զարու մէջ այնքան տիրական եղած ու բնդհանրացած է, որքան մեր ապրած այս դարուն: Ուստացած այս կեղծարտութիւնը իրերը իր ցանկացած ուղղութեան տանելու անկարողութենէն կատրած՝ դատարկ Ֆրազները թողուց եւ բացաւ Փաշիզմի ճամբան:

ԲԻՐՏ ՈՒԺԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Առաջին Համաշխարհային Պատերազմէն յետոյ՝ հետզհետեւ պարզ եղաւ որ կապիտալիստական սխտէմի տակ ժողովուրդի մեծամասնութեան համար առատութեան շրջանը մտնելու հեռանկար չկար. բարդաւաճումը միայն առանձնաշնորհեալ փոքրամասնութեան համար էր: Այս իրողութիւնը առաջին անգամ պարզուեցաւ նուազ յաջողակ կամ պարտուած կապիտալիստական երկիրներու մէջ, բայց

անտեսական տագնապը երբ վրայ հասաւ, միւս երկիրներն ալ — ինչպէս Ամերիկան, նոյն երեւոյթը պարզեցին: Երբ այս իրականութիւնը ցցուն դարձաւ, երեւան եկան կոպիտ, տգէտ եւ անհաւաստարկչի ուղեղի աէր մարդիկ, որոնք սկսան քարոզել թէ Ֆիլիքսպէս ուժեղ կամ կուլտուրապէս աւելի բարձր ցեղ մը իրաւունք ունի բուն ուժով իր տիրապետութեան տակ առնելու ամբողջ աշխարհը: Այս գաղափարախօսութիւնը, որ կ'արհամարհէր բանականութիւնը, բարոյականութիւնը, արդարութիւնն ու զեմոկրատին, առաջին անգամ միջակորեար գասակարգի բերնով տարածուեցաւ Իտալիոյ մէջ, ուր ծնունդ առաւ Փաշիզմը, յետոյ՝ անցաւ Գերմանիոյ մէջ, ուր ծնունդ առաւ ու բիւրեղացաւ նացիզմը: Այդ երկու հոսանքներն ալ քայքայուող կապիտալիզմի զիտակցութեան նախանշանները ցոյց կուտային: Տիրող դասակարգը կը զգար թէ անկումի ճամբուն մէջ էր, այդ իսկ պատճառով կը կարծէր թէ միայն ցեղապաշտութիւնն ու բիրտ ուժն էր որ պիտի կարենան զինքը ազատել ահաւոր փլուզումէն:

Վայրագութիւնն ու շահագործումը միշտ ընկերացած են կապիտալիզմի հետ, բայց անոնք երբեմն կը ծածկուին ազատական զեմոկրատիի վերմակին տակ: Անոնք իրենց այդ վերմակին ալ մէկ կողմ կը նետեն. առիկա ապացոյց է որ կապիտալիստները այլեւս համոզուած են թէ լիբերալիզմն ու զեմոկրատին աւելորդ պերճանքներ են, որոնց կապուելը աւելի վտանգաւոր է քան թէ շահաբեր: Փաշիզմի եւ նացիզմի նեցուկները Իտալիոյ եւ Գերմանիոյ խոշոր գրամատուներու տէրերն ու մեծ գործարանատէրերն են, որոնք չեն տարբերի Անգլիոյ, Ֆրանսայի ու Ամերիկայի իրենց գործակիցներէն. ասոնք բոլորը կը մոռնան իրենց ներքին հակամարտութիւնները երբ Խորհրդային Միութեան դէմ կոուելու հարց կը ծագի:

Փաշիստ Իտալիան պարտուեցաւ, նացի Գերմանիան ջախջախուեցաւ, բայց նացիական վայրագութիւնը տակաւին իր զոյութիւնը կը պահէ: Կեղծիքի վարագոյրին տակ, եւ հիւսնալի կերպով սարքաւորուած պրոպականտայի մեքենայի օգնութեամբ բուն ուժով փրկութեան հին գաղափարը իր վերապրումի շրջանին մէջ է: Սովետական Միութիւնը եւ անոր հետ սոցիալիստական երկիրները աւելելու նպատակը կը մնայ անփոփոխ: Միացեալ Նահանգները այսօր ստանձներ է իմպերիալիզմի յառաջապահ զերը եւ տակաւին կը շարունակէ զարգացնել եւ կուտակել իր ջրածնային ռումբերն ու ջերմամիջուկային զէնքերը: Եւ խնդրին ամենէն զաւելջատական կողմը այն է որ նոյն Ամերիկան, խաղաղութեան անմրցելի խոսեանք երեւնալ կ'ուզէ. ան ալ՝ յանուն «Արեւմտեան քաղաքակրթութեան», յանուն «զեմոկրատի» եւ յանուն «ազատ աշխարհի»: Եւ ան՝ այդ

ձեւի խաղաղութեան համար է որ եօթը հազար մղոն հեռու՝ խեղ-
ճուկ երկիր մը — Վիեթնամը, երկու տարի է ի վեր վերածած է
մարդկային սպանդանոցի: Ամէն օր հազարաւոր գիւղեր կը սրվո-
ուին հոն:

Վայրագութեան քաղաքականութիւնը մեծ մասով նկատի
կ'առնէ յարձակողական դիժը, նուաճումը եւ տապալուելու վախը:
Ընկերային խորհուրդեան համար շատ աննշան նոր բան մը կ'ա-
ռաջարկէ ան: Արդարեւ ան իր էութեամբ հակամտաւորական է, ո-
չինչ գիտնալու շարժում մը, որ արագօրէն կը դառնայ համարեայ
անդրադիտական. ան իր ներշնչումը կը ստանայ կատակերգականէն,
շարժանկարներէն, եւ պիղնէսային թէլէվիժընէն, եւ կը հրճուի տես-
նելով անոնց ներկայացուցած վայրագութիւնը, անբարոյականու-
թիւնը եւ գիտական նախճիրները: Իր արարքը արդարացնելու համար
ան կը կոթնի աւանդութեան վրայ եւ կրօնի մթազնոզ զգացակա-
նութեան վրայ: Այստեղ, կաթոլիկ եկեղեցւոյ ամենէն յետադիմա-
կան տարրերն են որ կը ցցուին հակա-կոմունիստական վարդապե-
տութեամբ, ուր թոյլատրուած է ամէն բան՝ որ կրնայ արմատախիլ
ընել մեծ շարիքը — կոմունիզմը:

Յուսահատութեան փիլիսոփայութիւնը.—

Գտնուած են շատեր, մասնաւորապէս մտաւորականներու մէջ,
որոնք իրենց յատկատեսութեամբ ընդունած են կապիտալիստական
լիբերալիզմի եւ սոցիալ դեմոկրատիայի պատրանքները եւ որպէս
մարդկային էակներ, ինկած են վայրագութեան եւ աւերածութեան
վարդապետութեանց մէջ: Դարուս ողբերգական ղէպքերու ազդե-
ցութեան տակ, անոնցմէ ոմանք, չնչին փոքրամասնութիւն մը շարք
մը կապիտալիստական երկիրներու մէջ, իրենց կապերը խզեր են
տիրող սիստէմին հետ, ուր ո՛չ մէկ յոյս կը տեսնեն եւ միացեր են
անոր ղէմ պայքարի ճակատին: Բայց անոնք որ ո՛չ ցանկութիւն, ոչ
ալ քաջութիւնը ունեցեր են այդ ընելու, հրաժարեր են աշխարհի
գործերէն եւ անձնատուր եղած են մելամաղձատ յուսահատութեան,
ինչպէս ըրին իրենց հին նախահայրերը Հռովմէական կայսրութեան
անկման շրջանին: Փախուստի այս ձգտումը որոշակի պարզուեցաւ
երկրորդ Համաշխարհային Պատերազմէն յետոյ, երբ գիտական եւ
զեղարուեստական գործերը սպառեցան եւ մնաց ցամաք իրականու-
թիւնը, որ կը պահանջէր քաղաքական ղէպքերը անգիտանալ եւ քա-
ղաքական գործունէութենէ քաշուիլ:

6.— Ընկերային Գիտութիւնը
ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Ընկերային գիտութեանց ներկայ վիճակի քննադատական ու-
սումնասիրութիւնը յստակօրէն ցոյց կուտայ թէ կապիտալիզմի ըն-
կերային մթնոլորտին մէջ մտաւորականութիւնը ինչպիսի ազդեցու-
թեան ենթարկուած է: Ծիշոյ է որ ընկերային գիտութեանց եւ դրամի
շուրջ մեծ հետաքրքրութիւն ստեղծուեցաւ, բազմաթիւ հատորներ
հրատարակուեցան, բայց բոլորին մէջէն ոչ մէկ նոր գաղափարի
նշոյլը կ'երեւէր. անոնց հեղինակները տարբեր Ֆրագներով կեցած
են նոյն դիժին վրայ. անոնք կը փորձեն նոր գոյն տալ հին թէորիա-
ներուն եւ կը խուսափին կապիտալիզմի ձախողութեանց անդրա-
դառնալ իրապաշտական վերլուծումով: Օրինակի համար Մէյնար
Քէյնէս (1883-1946) կը փորձէ ապացուցել որ անտեսական ճղնա-
ժամերը կը յառաջանան Ֆրինանսական դէշ կարգաւորումներէն, հը-
րաշարժօրէն հաւասարակշռուած կապիտալիստական մեքենայի տեխ-
նիքական գործադրումէն: Ան կը բացատրէ թէ անտեսական տազնապ-
ները ի սպառ վերցնելու համար անհրաժեշտ է որ կառավարութիւնը
չահարկութեան քաղաքականութիւնը իր անմիջական հսկողութեան
ենթարկէ եւ վերջ դնէ աշխատավարձերու կրճատումին. ասով
անգործութեան առեղծուածը կը լուծուի եւ նոյն ատեն՝ անտեսու-
թեան շահարեր սիստէմին մէջ վտանգաւոր փոփոխութիւն տեղի
չունենար: Զիլմոնտ Ֆրէնտը (1856-1939) հոգեվերլուծութեամբ
դրազոզ հռչակաւոր հեղինակը կը փորձէ փաստել որ պատերազմի
ձգտումը մարդոց մէջ ժառանգական դարձած յարձակողական բը-
նազդներու արդիւնք է: Դրապաշտները միւս կողմէն կը հաստատեն
թէ ընկերային խռովութիւնները կը յառաջանան լեզուի սխալ գոր-
ծածութիւնէն: Ասով անոնք բսել կ'ուզեն թէ քաղաքական վարիչները
եթէ իրարու հանդէպ ազնիւ վերաբերմունք ունենան եւ համաձայ-
նողական ողիւով պատշաճ բառեր գործածեն, այն ատեն խռովու-
թեանց տակերը կը ցամքին:

Այս տեսութիւնները կը յայտնաբերեն ընկերային գիտական-
ներու մտաւորական սնանկութիւնը: Զարմանալու տեղ չմնար, երբ
մենք կը տեսնենք որ անոնց թէորիաները որեւէ կերպով չեն ազդեր
աշխարհի խառնակ գործերուն վրայ: Բայց եւ այնպէս, այդ թէո-
րիաները իրենց գործածելի կողմերն ունին. անոնք կապիտալիզմի
համար կը հայթայթեն մտաւորական պատրանք մը եւ նոյն ատեն
միջոցներ՝ որ ան սահուն ճամբայէ մը ընթանայ առանց խոշոր դըժ-
ուարութեանց: Օրինակի համար Քէյնէսի անտեսական վարդապե-

տութիւնը կ'օժանդակէ թէ՛ հին անտեսագիտական դպրոցի հետեւորդներուն, որոնք կը կարծեն թէ ան մէկ կողմ նեւած է անհատական անկաշկանդ ձեռնարկութեան հարցը, եւ թէ՛ աշխատատեղիական առաջնորդներուն, որոնք կ'ողջունեն զինքը՝ բարեկեցիկ պետական սոցիալիզմը արդարացնելուն համար:

Իրողութիւնը, սակայն, այն է որ կապիտալիզմի քայքայումը կանխարգելող Քէյնէսի առաջարկած դարմանումները երբեք դործածութեան չեն դրուած: Անոր աշխատավարձերը անձեռնմխելի պահելու առաջարկն ալ մնաց ակազեմական:

Քէյնէսի դործի արժէքը Անգլիոյ եւ Ամերիկայի իշխողներուն համար այն իրողութեան մէջ է որ ան կը մատակարարէ գիտական եւ անկողմնակալ անտեսական վերլուծում մը, որուն նպատակն է կապիտալիստական անկումի շրջանին՝ հաշտեցնել դործատիրոջ եւ դործատիրին շահերը, երբ ազատ մրցման մարզանքը միայն յեղափոխութիւն կրնար հրահրել: Արեւմտեան զեմոկրատիի զեկավարներու ընկերային գիտութեան թէորիայի յաջողութիւնը սքանչելի վարագոյր մըն է որ իր անկուսակցականի հանդամանքով կը ծածկէ տիրոջ դատակարարի իշխանութիւնը: Լենին այս առթիւ շատ իրաւամբ կ'ըսէ. — «Անկախի որ ստրկատիրական հասարակութեան մէջ գիտութիւնը անկողմնակալ դիրք բռնէ, այնքան սպուշութիւն եւ միամտութիւն է, ինչքան սպասել որ դործատէրը բանուորներու աշխատավարձի հարցին մէջ անկողմնակալ ըլլայ եւ հոգ չընէ թէ աշխատավարձի յաւելումը կը կրճատէ կապիտալի շահը»:

Ներդաշնակութիւն քարոզող նոր անտեսագիտութիւնը իր սեղմիչ գործերով խիստ միակողմանի է, ան մէկ կողմէն կը շղթայէ բանուորական միութեան գործունէութիւնը, միւս կողմէն՝ լիակատար ազատութիւն կուտայ դործատէրերուն: Այս վերջին տարիններուն, անիկա անցաւ արտագրողականութեան արշաւի գիծին վրայ, որ մտայարմար գրաւութիւն մը ունի:

Քաղաքական գիտութիւնը.—

Նախքան 1914 թուականը, քաղաքական գիտութիւնը առանց գոյությունից կը ճամբորդէր ազատական յառաջդիմութեան դժած ուղեգիծի վրայէն: Մարքսիստ բանակատեղիէն դուրս այդ գիտութիւնը որդեգրած էր այն իտէալը, որ ուշ կամ կանուխ՝ տարածուելու էր ամբողջ աշխարհի վրայ. ասիկա պարլամենտական զեմոկրատիի իտէալն էր, որ կ'ապահովէր սեփականատիրութիւնը եւ անհատական նախաձեռնութեան առջեւ ազատ կը ձգէր դործունէութեան դաշտը: Յաջորդող տարիներու դէպքերը եկան ցոյց տալու որ ան գատարկ երազ մըն էր. պարլամենտական զեմոկրատին չընդհանրա-

ցաւ. ան ամէն տեղ կորսնցուց իր ոտքի տակի հողը: Նոյնիսկ այն ատեն երբ ղինուորական միջամտութիւններէն յառաջացած պատերազմներն ու առողջապահական գոտին կրցան կասեցնել բոլշեւիզմի տարածումը, արդիւնքը սոսկական զեմոկրատի մը չէր, այլ Փաշիւմի մօտիկ կամ Փաշխասական զիկտատուրայի հաստատումը: Կատարուած փոփոխութիւնները յետաշրջական էին. անոնց մէջ կ'արձագանդէր կրօնական կամ Փաշխասական հեղինակութեան տիրական ձայնը: Բայց եւ այնպէս որոշ նշաններ կային, որ նոր հովմը սկսած էր փշել:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

Թէեւ ընկերային գիտութիւնը իր ակազեմիկ կողմերով, այսինքն՝ անտեսագիտական եւ քաղաքական թէորիաներով կը ծառայէր գլխաւորապէս կապիտալիզմի զազափարախօսութեան պաշտպանութեանը, Բ. Համաշխարհային Պատերազմէն յետոյ՝ երբ այդ գիտութիւնը ծագկեցաւ, անոր կանխիկ արժէքով դործածութիւնը կապուեցաւ կապիտալիստական սիստէմի դործնական աշխուժացման հետ: Ընկերային գիտնականներն արդէն, նախքան պատերազմը, իրենց գործը ապահոված էին անտեսական վերատեսուցութեան մարզին վրայ, շուկաներու հետախուզութեան եւ ծանուցումներու մէջ, արդիւնարեւութեան ներդաշնակ յարաբերութեանց աշխուժացման ճիւղին վրայ, քաղաքային եւ սահմանային ծրագրումի եւ կրթական մասնաբաժիններու մէջ: Որպէսզի այդ բոլոր դաշտերուն մէջ անոնք կարենային օգտակար արդիւնք մը յառաջացնել, պէտք էր ակազեմիկ ընկերային գիտութեան գատարկ ընդհանրացումներէն հեռանային եւ որդեգրէին նոր ուղղութիւն մը: Բայց գիտնականները գոյությունից կը քաշէին թողուլ իրենց ձեռնական եւ անամէջ թէորիաները եւ արդարացնէին իրենց ուղեկցիայի հետեւողական քայլերը: Եւ ահա երեւան եկաւ նոր ընկերաբանութիւն մը, ուր բոտական սահմանումներու եւ ընդհանրացումներու տեղն անցան չափելու, կշռելու եւ հաշուառումի ճիւղերը: Այս նոր ընկերաբանութեան զարգացումը մեծ թափ ստացաւ Բ. Աշխարհամարտի դէպքերէն, թէեւ անոր ազդումները այնքան երկար չտուեցին, որքան կը նախատեսուէր: Պատերազմը ատենի մը համար, հնարաւոր դարձուց որ Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ ընկերային գիտութիւնը սիրուած ձեւով դործածութեան գրուի: Ընկերաբանները, որոնք մինչեւ այդ ատեն ակազեմիկ ուսումնասիրութեամբ կը զբաղէին, ինքզինքնին գտան հոն, ուր կոչուեցան իրենց հետազոտութիւնները դործնական հողի վրայ դնել: Անոնք կողք կողքի դործակցեցան բնագէտներու եւ կեն-

սարաններու հետ ուղղական ճարտարարուեստի դաշտին վրայ: Այս միացեալ գործակցութեան արդիւնքը օգտակար էր թէ՛ ընկերային եւ թէ՛ բնախօսական գիտնականներուն համար: Բնախօսական գիտնականները շատ բան սորվեցան ընկերային գիտնականներու վիճակագրական եւ տեխնիկական հետախուզութիւններէն, իսկ վերջինները իրենց կարգին՝ շատ բան սորվեցան կենսաբանական եւ բնախօսական գիտնականներէն՝ անոնց ծրագրեալ փորձարկումներէն ու վերլուծումներէն:

Ընկերային գիտնականներու որդեգրած մեթոտներէն ամենէն ազդուն եւ ընդհանրացածը վիճակագրական նոր մեթոտն էր: Ընկերային վիճակի ընդհանուր քննութիւն, հանրային կարծիքներու վերատեսուցութիւն, ընկերային եւ արդիւնարեւրական հոգեբանութեան միատեսակ կադապարում, շուկայի եւ տնտեսական գործառնութեանց շահարեւ միջոցներու հետազոտութիւն, ասոնք բոլորը անհրաժեշտ առաջընթացները կը կազմէին վիճակագրական վերլուծման, որ կապուած էր խորհելու, գործելու եւ ապրուստի կեցութեանց սիստեմատիկ հարցապնդումին հետ:

Վիճակագրութիւնները երկար ատենէ ի վեր կը գործածուին տնտեսագիտութեան եւ կառավարութեան գործերուն մէջ, որպէս միջոց՝ անտեսական զատորոշուած վիճակները արձանագրելու եւ իրողութիւնները համադրելու համար, ինչպէս նաեւ որպէս միջոց՝ պիւտձէ մը որոշելու եւ բնակչութեան մարդահամարը նկատի առնելով հարկ եղած օրէնքները սահմանելու համար:

Ամէն տարի, հազարաւոր շրջանաւարտներ դուրս կուզան ամերիկեան համալսարաններէն. անոնցմէ ոմանք կը հետեւին բժշկութեան, ոմանք փաստաբանութեան, ոմանք ղեղագործութեան, ոմանք մեքենագիտութեան եւայլն: Այս մարդիկը բոլորն ալ ժողովուրդին ծառայելէ աւելի մտասեւեռեալ զազափարն ունին ձգտիլ իրենց եսին ու շահուն բարձրացման: Անոնք, իրենց մանկական հասակէն, իրենց ծնողքէն ու գլխոցէն սորված են քամահրել հասարակութիւն կոչուած հաւաքականութիւնը, որուն անբաժան մասը կը կազմեն իրենք, եւ բնաւ չեն մտածեր թէ իրենց Ֆիզիքական կադմածքով ընկերային աշխատանքի արդիւնք են եւ իրենց կեանքի պայմանները կապուած են այդ ընկերային աշխատանքին, հետեւաբար իրենք՝ այդ հասարակութեան հանդէպ որոշ պարտաւորութիւններ ունին: Ո՛չ, անոնք այդ բաները չեն մտածեր, այլ կը մտածեն շուտով հարստանալ, ղիրքի տիրանալ, բարձրանալ, մտնել քաղաքական ասպարէզի մէջ, ըլլալ դատաւոր կամ ոստիկանապետ, ըլլալ նահանգի կառավարիչ, ներկայացուցչական Տան անդամ՝ կամ ծերակուտական, եւ ինչո՞ւ չէ, օր մըն ալ՝ Ամերիկայի բարձրապատիւ

նախագահ: Լինտըն ձոնսընը հասարակ գործաւորի մը բնասնիքէն սերած չէ՞. արդեօք՝ փողոցներու մէջ լրագիր ծախող պատանի մը... բայց այսօր... Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահն է ան, որու մատի շարժումին կը նայի այսօր՝ ամբողջ աշխարհի մարդկութիւնը: Եւ ճաշարաններու մէջ ամաններ լուացող եւ կամ հոթէլներու մէջ սպասարկող Սմիթը, որ շարաշար աշխատանքով ու աներեւակայելի զրկանքներու զինով համալսարան աւարտեր է, յանուն ի՞նչ բանի խենթութեան նօպայէն պիտի բռնուի, եւ փոխանակ խոտամնալից ու փայլուն պատեհութիւններէն օգտուելու՝ պիտի ընտրէ զրկուածներու եւ տառապողներու դատը պաշտպանող այն փշալից ճամբան, որ կը տանի դէպի նախատինք, դէպի արհամարհանք, դէպի անգործութիւն ու թշուառութիւն: Բայց ամերիկեան միջավայրը այդպիսի խենթեր չի պատրաստեր, այլ կը պատրաստէ բանիմաց, խելացի, հեռատես, օրինապահ, հաւատարիմ ու տիպար քաղաքացիներ, որոնք սորված են ու գիտեն թէ ի՞նչպէս բարձր պահելու են ամերիկեան աստղագարդ դրօշակը: Եւ պէտք է ըսել թէ՛ համեստ խաւերէն բարձրացող այս մարդիկը աւելի անդուծ են, աւելի գազանային վերաբերմունք կ'ունենան իրենց նախկին հաւասարակիցներու հետ, քան թէ ժառանգական զիծով մեծահարուստները: Բայց պէտք է զիտնալ որ, համալսարաններէն շրջանաւարտ եղող երիտասարդները բոլորովին իրենց բախտին չեն թողուիր. անոնց մասին հոգածու են տիրող դասակարգը եւ կառավարութիւնը: Անգործներու բանակը, որպէս կապիտալիստներու պահեստի բանակ՝ մշտապէս կը պահուի, բայց այդ բանակին հետ մտաւորականներու անգործներու բանակ մը կարելի չէ պահել. որովհետեւ այդ մտաւորականները երբ անգործ մնան ու թշուառ՝ կը դառնան յեղափոխականներ, որոնք կրնան ոտքի հանել առանց առաջնորդի մնացող անգործ բանուորներու բանակները եւ շահագործման լուծի տակ տնքացող բանուորները: Եւ մտաւորականները կը տեղաւորուին յարմարագոյն գործերու մէջ եւ կը սկսին իրենց առջեւ դրուած պատեհութեանց սանդուխէն վեր ելլելու աշխատանք տանիլ, իրենց հաւատարմութիւնը գործնականորէն ապացուցելու փութկոտութեամբ: Եւ այս մարդիկը, ո՛չ միայն տիրող դասակարգի պահանջած ընկերային ներդաշնակութիւնը պահպանելու ազդու միջոցներ կը հնարեն, ո՛չ միայն տիրող թշուառութիւնն ու կապիտալիստական սիստեմէն ծնած հակասութիւնները փայլուն թուղթի դէզերու տակ կը ծածկեն, այլեւ շնորհիւ իրենց ստացած առատաձեռն վարձատրութեանց, իրենք՝ լուազոյն սպառողները կը դառնան ճարտարարուեստի արտադրութեանց. ամէն տարի կը փոխեն իրենց ինքնաշարժը, կը գնեն նորաձեւութեան զիծին վրայ շարուած կահ կարասիք, գար-

գեղէններ, սուղ հաղուստներ, թանկարժէք նկարներ, դորգեր, ելեք-տրական կազմածքներ, եւ ամէն ինչ որ փարթամ կեանքի վայել է, եւ այդպէս՝ օրինակ դառնալով իրենց ետեւ վազողներուն, մրցումի ոգին կը հրահրեն եւ կը զարգացնեն այն՝ ինչ որ կը կոչուի արեւմրտեան քաղաքակրթութիւն:

Այժմ հարց է թէ՛ կապիտալիստական սխտէժը տարուէ տարի բազմացող այս մտաւորականներուն դորձ կրնա՞յ հայթայթել...: Այս հարցման պատասխանն է — Այո՛: Կապիտալիստական սխտէժը երբեք դժուարութիւն չի քաշեր դորձ հայթայթելու բոլոր անոնց՝ որոնք կը մտնեն իրեն հաւատարիմ սպասարկութեան մէջ: Իր դորձունէութեան զաշտերը լայն են ու անասման, իր ճիւղերը բազմաթիւ են ու բազմատեսակ, բաւական է որ ան իր վրայ հսկող շունի եւ իր ազատութիւնը կաշկանդուած չէ: Քանի որ աշխատանքի բաժանման արդիւնաբեր միջոցը կայ, ան այդ բաժանումը աւելի կը ճիւղաւորէ, կը վերածէ մագերակներու, որոնց մէջէն աւելի արագ շրջան կ'ընէ բանուորներու քրայինքներէն կազմուած արիւնք: Եթէ ատանկով կը կրկնապատկուին իր ծախսերը, ատիկա իրեն առիթ կուտայ որ ինքն ալ քառասպատկէ իր սպրանքներուն զինքը: Ասով, մտաւորականներու յաւելումով եւ անոնց տրուած աւելորդ կարծուած վարձատրութիւններով կապիտալիստական աւազանին շահու աղբիւրը ո՛չ թէ կը ցամքի, այլ աւելի առատարուի կը դառնայ:

Եւ պէտք է ըսել որ այդ մարդոց յանձնուած դորձն ալ ո՛չ միայն հանգստաւէտ է, այլեւ հետաքրքրական: Օրինակ՝ հասարակական քննութիւն կատարել, դռնէ դուռ պտտիլ, հարց ու փորձ ընել եւ արձանագրել իւրաքանչիւր տան բնակիչներու անունները, անոնց տարիքը, զբաղումը, եկամուտը, ծախսը, նպատամատոյց ընկերութեանց արուած նուիրատուութիւնը կամ անոնցմէ ստացուած նպաստը: Մարդը իր այս ուսումնասիրութեան շուրջ կրնայ երկար յոգուածներ գրել եւ բուրժուական թերթերը անոնց համար իրեն վճարում կ'ընեն, նայած թէ այդ յոգուածները ինչքան ճարտար ու հրապուրիչ կեղծիքով շարադրուած են եւ որքան թմրեցուցիչ գեղ կը պարունակեն:

Անդին կայ սպառման շուկաներու հետախուզութիւնը եւ գրնորդներ սիրաշահող ծանուցումներու դորձը: Ի՞նչ միջոցներով ըսպառման շուկաներ կարելի է գտնել եւ ի՞նչպէս կարելի է զանոնք օտար մրցակցութենէ ազատել. եւ յետոյ՝ ի՞նչ ընելու է արտադրուած սպրանքները ներքին շուկայի մէջ արագ սպառելու համար: Այստեղ կը շեշտուի գեղարուեստական փայլուն ծանուցումներու գիծը: Այդ գիծին վրայ գեղարուեստը ծառայելու է խարերայութեան:

Կայ նաեւ արտադրողութեան մէջ ընկերային գիտութիւնը դոր-

ծարկելի դարձնելու ճիւղը: Բանուորի հոգեբանութիւնը այնպէս մը պէտք է կադապարել, որ ան իր գործածած մեքենային հետ ընտանեանայ, մեքենան իր ընկերը նկատէ, ո՛չ թէ իր թշնամին: Անիկա պէտք չէ մտածէ թէ ինք կը շահագործուի, այլ համոզուելու է որ ինք դորձարանատիրոջ բաժնեկիցն է, անոր ընկերը: Անիկա ճարտարարուեստին հետ կապուած այն հոգեբանութիւնն է, որուն կադապարման դորձը յանձնուած է մտաւորականներուն, որոնց կը գործակցին մէկ կողմէն աստուածահաճոյ կրօնաւորները, միւս կողմէն՝ կառավարութիւնը:

Ճարտարարուեստի բոլոր մարզերուն մէջ նկատի առնելու արժանի ուրիշ կէտ մը եւս կայ: Պատերազմական պիտոյքի համար երբ ազգական գէնքեր իրարու ետեւ կատարելագործեալ եղանակով կ'արտադրուին, գիտնականներու եւ մտաւորականներու դորձն է, այդ գէնքերը գործածող մարդեր պատրաստել: Նոյն մարզանքը անհրաժեշտ է ճարտարարուեստական մեքենաներու կատարելագործման վերաբերմամբ՝ երբ նոր մեքենաներ կ'արտադրուին ու դորձաժութեան կը դրուին. հոն դարձեալ գիտնականները, մտաւորականներն են որ բանուորութիւնը կը կապեն մեքենաներուն հետ: Այսպէս, կը տեսնենք թէ գիտութիւնը իր բոլոր ճիւղերով ծառայելու է պարապիտ դասակարգի շահերուն եւ այդ դասակարգը հովանաւորող պետութեան իշխանութեան պահպանումին: Այստեղ, ուրեմն, գիտութիւնը կը դառնայ դասակարգային, եւ իր էութեան մէջ կը պարզէ դասակարգային հասարակութեան բոլոր տեսակի սպականութիւնները:

Կապիտալիստական երկիրներու բոլոր գիտնականներու եւ մրտաւորականներու դորձերու հետքերը կ'երևին մեր ապրած կեանքի ամէն մէկ հոլովոյթին մէջ: Ուր որ շարժինք, ինչ որ ընել ուզենք, մեր դէմ կը կանգնին անոնք իրենց վարպետօրէն շարադրուած հարցարաններով:

Հիւանդ է մարդ մը եւ կը դիմէ բժիշկին. հոն անիկա պարտի լեցնել իրեն մատուցուած հարցարանը. Ան արձանագրելու է իր անունը, մականունը, իր բնակարանի հասցէն, ո՞րքան դրամ ունի խրանայած, իր բնակած տունը իր սեփականութիւնն է, պարտաճուրհակի տա՞կ է, ի՞նչ են իր եկամուտի աղբիւրները: Եւ յետոյ՝ արձանագրելու է անունները չորս արժանահաւաս անձերու, որոնք յօժար են երաշխաւոր ըլլալ իրեն, երբ ինք անկարող ըլլայ վճարելու բժշկական ծախքերը: Հիւանդ մը նոյն ձեւի հարցարան մը լեցնելու է նոյնպէս հիւանդանոց ընդունուելէ առաջ:

Ուրիշ մը, համաձայն թերթերու մէջ տպուած «գործաւոր կ'ուզուի» ծանուցման, գործ մը սպահովելու յոյսով կը դիմէ գործա-

րանի վարչութեան. այնտեղ եւս ան հարցարան մը լեցնելու է, եւ պարզելու է իր քաղաքական ու ընկերային դաւանանքը. կոմունիստ եւ ղե՞ր է. երբեւիցէ բանտարկուած է, եւ ինչո՞ւ... Մարդը տալու է իր կեանքի պատմութիւնը եւ պատկերելու է իր ներքին հոգեբանութիւնը, որպէսզի գերի դառնայ:

Բանուոր մը կ'ուզէ մտնել Թրէյստ Իւնիւրնի մէջ. այնտեղ եւս հարցարան մը կայ, զոր լեցնելու է, եւ փաստելու է որ ինք կոմունիստ չէ եւ հակառակ է սովետներուն:

Կառավարական շրջանակի մէջ հասարակ պաշտօն մը ունենալու համար մարդ մը ո՛չ միայն պարզելու է իր քաղաքական դաւանանքը, իր պատկանած եկեղեցւոյ հովիւը վկայ արձանագրելու է, այլեւ երզմնագիր մը ստորագրելու է, որ ինք որեւէ կերպով կապ պիտի չպահէր դաւադիր կազմակերպութեան մը հետ, եւ եթէ առիթ ունենայ ծանօթանալու դաւադիրներու գաղտնի գործունէութեան, անմիջապէս պիտի խմացնէ պատկան իշխանութեան՝ ստանալով իր վարձատրութիւնը: Այսպէսով կառավարական պաշտօնեան ո՛չ միայն պիտի ծառայէ ժողովուրդին, այլ պիտի ըլլայ վարձուած լրտես մը:

Քուէարկութեան ատեն ժողովրդական քուէի դրուած են գանադան տեղական կամ ընդհանուր առաջադրութիւններ՝ դրական եւ բացասական տուեալներով: Օրինակի համար դպրոցներու մէջ կրօնական դասաւանդութիւն տալու է թէ ոչ: Այս հարցին դրական մօտեցման դէմ շարագրուած է բացասական վերաբերմունք՝ հետեւեալ բառերով — «Մեր երկիրը՝ Ամերիկան, ազատ դեմոկրատական երկիր է, ուր կրօնը բաժնուած է պետութենէն: Եւ որովհետեւ մեր դպրոցներուն մէջ կը կրթուին մեր նոր սերունդները, բացարձակապէս սխալ է որ անոնց միտքը շղթայուի կրօնական նախապաշարունակներով: Անոնք պիտի ըլլան ազատամիտ ամերիկեան քաղաքացիներ, որոնց կարելի չէ պարտագրել որեւէ կրօնական դաւանանք: Մեր դպրոցներուն մէջ ո՛չ միայն պէտք է արգիլուի կրօնական դասաւանդութիւնը, այլ եւ աղօթելը»:

Մտաւարկելի փաստարկութիւն չէ՞ այս:

Քուէի դրուած է ուրիշ առաջադրութիւն մը: Ամերիկեան գոլէճներու դասագիրքերը գրաքննութենէ ազատ ըլլալու են: Ամերիկեան բարձրագոյն դպրոցներու եւ համալսարաններու մէջ ընկերային, քաղաքական խնդիրներու ազատ քննարկութիւնը թոյլատրելի է: Թոյլատրելի է որ կոմունիստ մը մտնէ մեր դպրոցներէն մէկուսն մէջ եւ ստանձնէ ուսուցչական պաշտօն: Այո, կամ ոչ:

Բացասական կողմի փաստարկութեան դրական պատասխանը շարագրուած է սապէս — «Ամերիկեան կառավարութիւնը Ամերիկա-

յի կոմունիստ կուսակցութիւնը որպէս դաւադիր եւ ապօրինի կուսակցութիւն յայտարարած չէ, ո՛չ ալ մեր Գերագոյն Ատեանը օրէնքով արգիլած է կոմունիստական գաղափարներու պրոպագանդան: Երբ մեր դպրոցներու ուսուցիչները ազատ են պատկանելու գեմոկրատ կամ հանրապետական կուսակցութեան, եւ անոնց պաշտօնի կոչուած պահուն նկատի չառնուիր անոնց կուսակցական դաւանանքը, մենք ծիծաղելի հակասութեան մէջ կ'իյնանք, երբ կոմունիստի մը կ'ըսենք — «Ինք ուսուցչական պաշտօն չէք կրնար ունենալ, քանի որ կոմունիստ կուսակցութեան կը պատկանիք»: Ընդհակառակը՝ մենք թոյլատրելու ենք որ կոմունիստներ մտնեն մեր դպրոցներէն ներս ուսուցչական պաշտօնով, եւ նոյնիսկ աշակերտներու ներկայութեամբ՝ պէտք է թոյլատրել որ յաճախակի վիճարանական ազատ հանդիսութիւններ կատարուին, որպէսզի ուսանողներու մը տածողութեան հորիզոնը ընդարձակուի, եւ անոնք կարող ըլլան բազմազանութեամբ զատուիլ իրենց ընտանեկան եւ կոմունիստական գաղափարախօսութիւնները: Ամերիկեան գոլէճներու դասագիրքերը գրաքննութեան ենթարկել, կոմունիստներուն դէմ խաչակրական արշաւանք շարունակել, կը նշանակէ ոտնակոխել Ամերիկեան Սահմանագրութիւնը, որ բացայայտօրէն կ'արտօնէ ազատ խօսքն ու ազատ հաւաքոյթը»:

Թէ առաջին եւ թէ՛ երկրորդ փաստարկութիւնը շարագրողներն եղած են ամերիկեան գոլէճներու եւ համալսարաններու մէջ պաշտօն ստանձնող մտաւորականները, որոնք կրկնակ նպատակ ունեցեր են. առաջին՝ որ անոնք պարզեր են իրենց ներքին մարդու շղթայուած գաղափարախօսութիւնը, որ իրենք հակառակ են կրօնական խաւարի տիրապետութեան, հակառակ են կոմունիստներու դէմ սկսելիք խաչակրական արշաւին, եւ կ'ուզեն անուղղակի կերպով ժողովուրդը արթնութեան առաջնորդել. երկրորդ՝ որ անոնք ուզեր են միւս կողմէն՝ կառավարութեան պարզել թէ ժողովուրդը քանակական ի՞նչ տոկոսով կը հակի հակակրօնական գիծին, եւ յետոյ՝ կոմունիզմին, եւ այդ քանակական տոկոսը ո՞ր նահանգներու մէջ գերակշռող է:

Յամենայն դէպս, ինչ ալ որ ըլլայ, ցեղային խտրականութիւնը, իմպերիալիստական գաղութարարութիւնը, սպառազինման հրակայական յատկացումները, պաղ պատերազմը, եւ ամենէն աւելի ջերմամիջուկային գէնքերու ապագային յառաջացնելիք սարսափելի աւերածութեանց հեռանկարը, ասոնք կապիտալիստական աշխարհի մտաւորականներէն ոմանց մէջ ճշմարիտ մարդկային գիտակցութիւնը մասամբ արթնցնելով զանոնք տակաւ կը մօտեցնեն ընդգիծադիր ճակատին, որով դուր կը բացուի ընկերային գիտութեան գերիփոխակերպման:

Այժմ մենք կ'ապրինք դժուարին երկունքային շրջան մը, ուր-
կէ պիտի յայտնագործուի սովետականին հետեւող ընկերային դի-
տութիւն մը, որ պիտի ըլլայ փորձառական եւ նոյն ատեն՝ վերլու-
ծողական:

7.— ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Սոցիալիստական առաջին պետութիւնը.—

Յեղափոխութիւնը եւ անոր յաղթանակի պաշտպանութիւնը սովետական նոր պետութեան ճգնաժամային տարիներու մէջ Կոմու-
նիստ Կուսակցութեան գործն էր: Այդ կուսակցութեան կ'իյնար երկրի անտեսութիւնը վերահաստատելու եւ օտար միջամտութիւն-
ները վանելու ամենաձանր ու դժուարին պարտականութիւնը, ան ալ այնպիսի պայմաններու տակ, երբ երկիրը պատերազմի հետեւանքով
զրեթէ աւերուած էր, երբ դուրսէն որեւէ օգնութիւն ստանալու յոյս
չկար եւ միւս կողմէն իր առջեւ ցցուած էին յետադիմական տարրե-
րու յայտնի կամ գաղտնի թշնամութիւնները: Կուսակցութիւնը, ուրեմն, առանց յապաղման՝ գտնելու եւ գործածելու էր այն բոլոր
ուժերը, այն բոլոր ընկերային ձեւերը, որոնք յարմար էին նոր կազ-
մուած հասարակութեան մը համար, որուն նմանը աշխարհի մէջ գո-
յութիւն չէր ունեցեր: Կուսակցութեան անդամները ապահոված էին
յեղափոխութեան յաղթանակը, բայց կարեւորագոյն գործը դեռ նոր
կը սկսէր. եւ անոնք երբեք պիտի չկրնային այդ գործը զլուխ հանել,
եթէ տիրացած ըլլային այն հասկացողութեան բանալիին, որ դու-
ռը կը բանար ընկերային զօրութեան հրաշագործութեանց ճամբուն,
որուն վրայ պիտի համադրուէին միլիոնաւոր մարդկային էակներու
համագործակցական ուժերը: Այդ բանալին անոնք գտած էին Մարք-
սի եւ Էնգէլսի գործերուն մէջ, որոնց միջուկը անոնք կ'ապեցին իրենց
սեփական փորձառութիւններուն:

ՍՈՎԵՏ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Բազմագգի պետութիւն մը.—

Լենին, մեծ փրկիւստիան եւ յեղափոխութեան ամենավարպետ
ազգամուտը, իր պատկառելի մեծութեան աղացոյցը տուաւ այն բա-
նով, որ ան կրցաւ նոր քաղաքակրթութեան մը հիմքը դնել: Արդարեւ

իր վերջին գործն եղաւ հաստատել Սովետական Սոցիալիստական
Հանրապետութեանց Միութիւնը.— Բազմապի պետութեան նոր
տիպար մը: Այն սկզբունքը, որուն վրայ հիմնուած էր այդ միու-
թիւնը, պատմականօրէն գոյութիւն ունեցող բազմաթիւ ազգերու
միազանդուած հաւաքականութեան մը ճանաչողութիւնն էր, որուն
խարխիւր կը կազմէր հասարակական լեզուն, հասարակական երկ-
րամասը, հասարակական կեանքը եւ հասարակական մշակոյթով
յայտնաբերուած հոգեբանութիւնը: Միութեան մէջ համաձայն իր
գծուած սահմանադրութեան, իւրաքանչիւր ազգ իրաւունք ունի վա-
յելելու կուլտուրական եւ վարչական անկախութիւն, միայն մէկ
պարտաւորութեամբ, որ ան կը համագործակցի միութեան մաս կազ-
մող միւս պետութեանց հետ՝ հասարակաց շահերու՝ մասնաւորապէս
անտեսական եւ երկրի պաշտպանութեան անյետաձգելի գործերուն
մէջ: Ս. Միութեան մեծ ընտանիքի ամէն մէկ անդամ հանրապետու-
թիւն՝ ինքնիր մէջ կեդրոն մըն է բարձրագոյն կրթութեան, գիտու-
թեան եւ ազգային կուլտուրայի:

Ազգութեանց վերաբերմամբ այս քաղաքականութիւնը բարձ-
րախօս ու ազգու օրինակ մըն է Սովետական Միութենէն դուրս գրա-
նուող ամբողջ աշխարհի գաղութային եւ իմպերիալիստական տիրա-
պետութեան տակ ճնճուած ազգերուն համար:

Այդ ազգերը կրնան այժմ տեսնել թէ ի՞նչպէս կարելի է գործ-
նականին մէջ իրենց իրաւունքներուն տէր դառնալ, զարգացնել իրենց
ուրոյն կուլտուրան, յառաջդիմել գիտութեան ու ճարտարարուեստի
մէջ իրենց սեփական ջանքերով եւ արագօրէն մօտենալ յառաջադէմ
երկիրներուն: Ասիկա Ասիոյ, Ափրիկէի եւ Լատին Ամերիկայի մէջ
ազգային ազատագրական շարժման նոր վստահութիւն ներշնչող
գաղտնիքն էր: Ի վերջոյ տակաւին, այդ գաղտնիքը ոչեւորիչ ազգակ
մը եղաւ ասիական եւ ափրիկեան Բանդունի միութեան՝ որպէս «Ձէ-
ղոք ըլկի», որ աշխարհի քաղաքականութեան գիմազիծը փոխեց
եւ խորունկ ձեղքուած յառաջացուց սրազ պատերազմի մասնակցող
երկիրներու բանակատեղիին մէջ:

Ծրագրուած արդիւնաբերութիւն եւ երկրագործութիւն.—

1928-ին, Սորհրդային Միութեան մէջ առաջին անգամ ըլլա-
լով երբ ներքին հակայեղափոխական ուժերը ջախջախուած էին եւ
արտաքին միջամտութեան փորձերը ձախողած՝ երկրի վերակազ-
մութեան համար Ստալին (1879-1953) մտածեց անհրաժեշտ քայլեր
առնել: Անոր անմիջական փորձն եղաւ Հնդկամեայ Պլանով երկրի
արդիւնաբերութիւնը զարգացնել եւ երկրագործութեան մէջ ներմու-
ծել հաւաքական եւ սովետական անտեսութեան նոր ձեւերը: Տարա-

կոյս չկայ որ Ստալինն համոզուած կոմունիստ էր, պայքարի մէջ թրծուած կոմունիստ մը, որ ունէր արտասովոր ուժեղ կամք ու աննահանջ վճռականութիւն, խոր, անմար ու անհաշտելի ասելութիւն՝ հանդէպ կապիտալիստական սխառտիւն, եւ հաստատուն հաւատք՝ սոցիալիզմի վերջնական յաղթանակին: Ստալինն, նոյնպէս չէր այն կոմունիստներէն, որոնք մի քանի բրոշիւրներ կարդալով ինքզինքնին Մարքսիստ տեսարան կը հռչակեն. Ստալինն, շատ խոր ուսումնասիրած էր Մարքս-էնգէլսի եւ Լենինի գործերը, իր հեղինակած գիրքերն ու բազմաթիւ գրութիւնները կ'ապացուցեն որ ան արտակարգ պաշարաւոր մտքի տէր հեղինակութիւն մըն էր, ատոր համար ան մնաց կոմունիստ կուսակցութեան Քարտուղարի պաշտօնին գլուխը: Բայց Ստալինն գլխաւոր թերութիւն մը ունէր. այն էր՝ ան ժողովուրդին վրայ չունէր այն խոր ու անաստան հաւատքը, ինչ որ Լենինը ունէր, անոր հաւատքը կեղրոնացեր էր իր եսին մէջ. ինքն էր թէ՛ առաջնորդողը եւ թէ՛ կառուցողը, ինքն էր թէ՛ ստեղծողը եւ թէ՛ ստեղծածը պահպանողը: Այս բացայայտօրէն այլամերժ ինքնապաշտութիւնը զինքը առաջնորդեց աղիտարեր սխալներու: Լենինն, Մարքս-էնգէլսի ձեւակերպած պրոլետարիատի գիտութիւնը իր հանձնարով ու ռազմապիտութեամբ փոխակերպեց պրոլետարական գործնական, յեղափոխական գիտութեան. ասով հիմնուեցաւ Մարքսիզմի անբաժան թելը կազմող Լենինիզմը: Ստալինն ուզեց տասը քայլ առաջ երթալ եւ առանձին երկրի մը մէջ հաստատել կոմունիստական հասարակարգ եւ ասով նոր իզմ մը հրապարակել — Ստալինիզմը:

Լենինն, ժողովուրդի նուիրուած առաջնորդն էր: Ան ժողովուրդը կ'առաջնորդէր բազիկ ստեղծելով. ան գիտէր թէ իր ետեւէն քայլողները տակաւին կ'օչիկ չունէին, այդ իսկ պատճառով ան կ'ընտրէր այն ճամբան, որ քարքարուտ չէր, փշալից չէր: Տարբեր էր Ստալինը: Ստալինն իր մոյկերը քաշած մինչեւ ծունկերը, յախուռն կերպով կ'ընտրէր այն ճամբան, որ իր կարծիքով՝ ամենէն կարուկն էր. հոգ չէր թէ այդ ճամբան կ'անցնէր ճահիճներու մէջէն, փշախտտերու մէջէն, սրածայր ակռաներով քարերու մէջէն: Ան մաղաչափ չէր մտածեր թէ իր ետեւէն քայլող բանուորներու եւ զիւղացիների մերկ ստեղծումն ու սրունքները կ'արիւնոտէին, անոնք պարտաւոր էին հետեւելու իրեն՝ մտրակի հարուածներուն տակ, մինչեւ որ ինք հասնէր իր երազած օթեւանը: Բայց այդ օթեւանը — կոմունիստական հասարակարգը մնաց որպէս երազ, որպէս հեռապատկեր: Լենինն, յեղափոխութեան յաղթանակով ցարիզմի կրունկներուն տակ կոխկրտուած ժողովուրդին խոստացած էր տալ հաց, հող, խաղաղութիւն. ան իր այդ խոստումը պահեց. բանուորներուն տուաւ հաց, զիւղացիներուն՝ հող եւ ամբողջ երկրին՝ խաղաղութիւն:

Ստալինն եկաւ ու փոխեց ամէն ինչ. բանուորներուն հաց տուաւ, բայց ողորմութեան ձեւով, անոնց գլխուն վերեւ պահեց խարազանը. զիւղացիներու ձեռքէն հողը առաւ եւ կազմեց կոլտոգական եւ սովխոգական անտեսութիւն, եւ խաղաղութեան սեղձներքին անհաստատութեանց զոները բացաւ, հետապնդելով նոյն երազը, որ չհասունցած ժամանակի պայմաններու համաձայն՝ անիրականանալի երազ մըն էր:

Յեղափոխական շրջանի գառարին կոմունիստներէն ոմանք մեռած էին, ոմանք իրենց վախէն՝ կամ հատուածականութիւն շտեղծելու զգուշաւորութեամբ քաշուած էին իրենց կաշիին մէջ. իսկ կուսակցութեան մէջ մանողներէն շատերը ահաս՝ ոմանք ալ մանր բուրժուական տարրեր էին, ոմանք՝ զիմակաւորներ՝ որոնք բերդը զաքականութեան հետեւանքով լսելի եղան ընդզիմադիր տարրերու ձայները: Այդ ընդզիմադիրներու մանր բուրժուական մասի գլխաւորողն էր Զինովիէվ (1883-1936) իսկ ձախակողմեան մասի գլխաւորողն էր Լէոն Թրոցկին (1877-1940): Ստալինն, բնաւ չուզեց անսալ այդ «ընդզիմադիր» տարրերու գաղափարական, տեսարանական տարրերութիւնները բանական միջոցներով հարթելու հրամայականին, եւ սկսաւ մաքրագործման ահաւոր սպանդին: Գիտնականներ, մտաւորականներ, կուսակցական անդամներ, ասոնց հետ ժողովրդական մասսաներ, որպէս հակայեղափոխական շարժման գործակիցներ՝ Պէրիայի նման զիմակաւոր կոմունիստներու սաղբանքներով, տասնեակ հազարներով մարդիկ զնդակահարուեցան կամ քուլեցան զէպի Սիպերիա: Գերմանացի Հիթլերը երբ տեսաւ Ս. Միութեան ներքին այդ տաղնապալի գրութիւնը եւ նոյն տան նկատեց որ Ստալինը իրեն ճակատող թշնամի պետութեանց մօտեցումի մասին կը մտածէ, յարմար գատեց յարձակել սովետներու երկրին վրայ, խորհելով որ քայքայուած ուժերով այդ երկիրը իրեն լուրջ զիմադրութիւն պիտի չկարողանայ ցոյց տալ, եւ ինք՝ ջախջախելով Ս. Միութիւնը, շատ դիւրաւ պիտի կրնար համաշխարհային շուկաներու բաժանման կնճառտ հարցին մէջ սակարկութեան մտնել Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ամերիկայի հետ, քանի որ ինք՝ անոնց երազն էր զոր իրականացուցեր էր: Հիթլեր ձախողեցաւ ու պարտուեցաւ: Այդ պարտութիւնը փութացնողը ո՛չ թէ Ստալինի հանձարն էր, այլ մէկ կողմէն՝ Հիթլերի դիւրազրդիւ կարճատեսութիւնը, միւս կողմէն՝ սովետական ժողովուրդներու գիտակցական, հերոսական միասնականութիւնը: Շատեր կը ջանան հաւաստիացնել թէ — «Եթէ Ստալինը չըլլար, Ս. Միութիւնը այսօր աշխարհէն սրբուած անհետացած կ'ըլլար»: Մենք չենք գիտեր թէ այս մարդիկը ի՞նչ դրական տուեալ-

ներու վրայ հիմնած են իրենց այդ անհեթեթ եղբայրացութիւնը, միայն պարզ է, որ անոնք այնքան կոյր են եւ այնքան ազատ՝ որ չեն կրցած ճանչնալ սովետ ժողովուրդներու հոգեբանութիւնը եւ անոնց անպարտելի ուժի գաղանիքը: Երբ մենք «Երէ» ներով պիտի առաջնորդուինք, ապա ուրեմն, ապահովարար կրնանք ըսել.— Եթէ Ստալինի տեղն անցնէր մէկ ուրիշը, որ հաւատարմօրէն հետեւէր Լենինեան ուղեգիծին, այն ատեն Ս. Միութիւնը հսկայական չափերով այնքան պիտի յառաջգիւղէր անտեսական, գիտական, ճարտարարուեստական եւ զինուորական ճակատներու վրայ, որ այլեւս Հիթլեր մը դուրսէ չհամարձակէր յարձակել կրանիթեայ անանցանելի լեռներով պաշտպանուած իր հզօր զրացիին վրայ:

Ռուսական յեղափոխութեան ամենէն ճղմամային տարիներն էին 1917—էն 1923—ի տարիները, երբ ամբողջ աշխարհը լարուած էր Սովետներու դէմ. մէկ կողմէն արտաքին պոչքոթը եւ զինուորական միջամտութեան փորձերը, միւս կողմէն՝ Վրանկէլի, Եուսէնիչի, Դենիքինի պատրաստած հակաօգոստական շարժումները անգունդի եզրին տարած էին բանուորներու եւ զիւղացիներու նորակազմ պետութիւնը: Բայց ի՞նչ եղաւ այդ բոլորին վերջաւորութիւնը: Թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին թշնամիները սմբեցան, եւ աշխարհն ամբողջ ապշեցաւ: Ո՞ւր էր ատոր գաղանիքը: Ատոր գաղանիքը Սովետ ժողովուրդներու հոգիին մէջ էր, անոնց համոզումներուն եւ պատրաստակամութեանց մէջ: Լենինի կուսակցութիւնը անոնց Մարքսի եւ Էնգելսի գիրքերը չէր տուած որպէսզի կարգան ու համոզուած կոմունիստներ գտնան, այլ անոնց ըսած էր.— «Պաշտպանեցէ՛ք ձեր յեղափոխութիւնը, այլապէս ցարիզմը յարութիւն կ'առնէ: Եւ անոնք անբեւեակայելի հերոսութեամբ եւ անպատմելի գրկանքներու ու բազմաթիւ գոհերու զինով պաշտպանեցին իրենց յեղափոխութիւնը: Երկրորդ Պատերազմի պահուն, նոյն Լենինի ահեղազոր ձայնն էր, որ կը հնչէր երկրի մէկ ծայրէն միւսը.— «Պաշտպանեցէ՛ք ձեր արիւնով ու քրտինքով հիմնած պետութիւնը, հոգ չէ թէ Ստալին մը իր կամապաշտութեան բերումով ձեզ չղթաներու տակ գրաւ: Պաշտպանեցէ՛ք ձեր պետութիւնը, այլապէս՝ ցարիզմը կը վերագտնայ. վկա՞յ... Հիթլերի գազանութիւնները»: Եւ խորհրդային հերոս ժողովուրդները գերմարդկային ուժով գրոհ տուին նացիական յարգանքներուն դէմ եւ զանոնք քշեցին ետ՝ մինչեւ անոնց միջնարեզը, ուր մտան յաղթութեան գրօշակով:

Լենինի հաւատքը մեծ էր Սովետական ժողովուրդներու վրայ, եւ անոնք այդ հաւատքը անոր մահէն 20 տարի վերջը դարձեալ եկան արգարացնել: Ստալին հաւատք չունէր այդ ժողովուրդներուն վրայ, բայց անոնք զինք ապշեցուցին:

Եւ ինք ի՞նչ ըրած էր... Սարսափի շղթայի տակ առած էր Եւրոպականը, Եւ բանաստեղծը, Եւ վիպասանը Եւ պատմաբանը, Եւ բանուորը, Եւ զիւղացին: Եղբայրը իր եղբոր լրտես եղբր էր. կասկածը, վախը, անստուգութիւնը եւ անվստահութիւնը տարածուեր էին ամէն տեղ. գիտութիւն, զբաղանութիւն, արուեստ եւ զեղարուեստ, անբնական էր որ այդ պայմաններու տակ Լենինի նախագծած ձեռով՝ անբնական էր որ այդ պայմաններու տակ Լենինի նախագծած ձեռով՝ աշխիւնը դուռ պրոլետարական գոյնով զարգանային եւ ամուր պատուանդանի հիմքը կազմէին ապագայի կոմունիզմին: Ստալին, կուսակցական-բիւրոկրատական դիկտատուրա հաստատած էր երկրին մէջ: Ան յամառօրէն չէր ուզեր յիշել Լենինի պատգամը, զոր յայտարարեր էր իր ատենին.— «Մեր կուսակցութեան աւագ պարտականութիւնն է ժողովուրդներուն սորվեցնել եւ զանոնք զերազոյն հոգածութեամբ առաջնորդել, բայց ո՛չ անոնց վրայ իշխել եւ կամ՝ անոնց հրամայել»:

Ստալինի մահէն յետոյ՝ անոր գործունէութեան շուրջ հասկընալի վերապահութեամբ շատ թեթեւ անդադարձումներ եղան. ապագայ պատմագիրին կը մնայ թագնուած իրողութիւնները ապատօրէն հրատարակելը: Միակ արդարութիւնը, որ զորձադրուեցաւ, այն էր՝ որ Ստալինի մարմինը թոյլ չտրուեցաւ որ հանդիս Լենինի գամբարանին մէջ, Լենինի կողքին: Եւ այդ ճիշդ էր, որովհետեւ պատմութիւնը խորհրդային երկրին համար միայն մէկ Լենին տուած էր եւ անոր հաւասար ուրիշ Լենին մը չէր կրնար արտագրել: Լենինը, իր տխրահեղ պատկանելիութեամբ առանձինն կը ննջէ եւ առանձինն պիտի մնայ, որպէս պատմական, անուղական անհատականութիւն, որ իր անշնչացած վիճակով իսկ՝ ներշնչող, ոգեւորող բան մը ունի եւ անով ալ՝ կը մնայ յաւերժական:

Սառոյցը կը հալի.—

Ստալինի մահէն յետոյ՝ սառոյցը սկսաւ հալիլ: Ծուտափոյթ տեղի ունեցաւ քաղաքական ներքին լարուածութեանց մեղմացում: Քաղաքական, դաւանական յանցանքով ողջ մնացող բախտաւոր աքսորեալներուն «ճերմակ» շնորհուեցաւ եւ անոնք վերադարձան իրենց տեղերը: Մեծ չափանիշով վերահաստատուեցաւ խօսքի ու քննադատութեան ազատութիւնը, մասնաւորապէս կատարեալ հանգամանքով՝ զիտութեան ու կուլտուրայի մարդերուն մէջ, որովհետեւ անոնք շատ ճշուած էին Ստալինեան բիւրոկրատիզմի շրջանին: Տեսեալական տեսակէտով այդ մեղմացումը կը նշանակէր որոշ աստիճանի ապակեզրոնացում՝ թէ՛ ճարտարարուեստի եւ թէ՛ երկրադորձութեան մէջ: Արտաքին յարաբերութեանց տեսակէտով՝ հաշտուողական քաղաքականութեան զեփուր սկսաւ փչել Սովետական պետութեան եւ Եու-

կողմից միջև, և միեւնոյն ատեն, Պաղ Պատերազմի բերնէն դուրս եկած ցուրտ հովը սկսաւ մեղմանալ, երբ 1955-ին, Մեծ Պետութեանց ներկայացուցիչները հաւաքոյթ մը ունեցան: Այդ բոլոր քայլերը առնելու նախաձեռնողն եղաւ Սովետական Միութիւնը, որուն առաջարկութիւնները իրենց բառական իմաստով ընդունուեցան, իսկ գործնական գետնի վրայ՝ անոնք մնացին առկախ՝ օդին մէջ: Սովետները նոյնիսկ առաջարկեցին խաղաղութեան սիրոյն՝ զօրացրուով կատարել, բանակէն հեռացնել երկու միլիոն զինուորներ, բայց անոնց առաջարկը երրորդ Պատերազմին ակնդէտ սպասող կապիտալիստական պետութեանց կողմէ, մնաց անպատասխան:

Քսաներորդ Գոնկրէսը .—

1956-ին, Սովետական Միութեան Կոմունիստական Կուսակցութիւնը նոր դարաշրջանի մը բացման առթիւ իր քսաներորդ քոնկրէսին մէջ յայտարարեց որ սկսած է անտեսական զարգացման նոր շրջանը, ուր վերջացեր են ներքին և արտաքին քաղաքական կնճռոտութիւնները: Տնտեսական տեսակէտով յայտարարուեցաւ որ վեցերորդ հնգամեայ պլանով արդիւնաբերական արտադրողական աճուամբ արդէն արագացման փուլին մէջ մտած է և երկրագործութիւնն ալ ընդարձակեր է իր սահմանները: Ասոր մէջ կ'իյնայ կեդրոնական Միպերիոյ մէջ ճարտարարուեստական ընդարձակ խարխիւի մը հաստատումը, և աւելի շուտ՝ Խաղախոտանի արօտափայրերու ճամբաներու մեքենայացման ծրագրի իրագործումը, որուն ամենէն շատ մղում տուողն եղաւ Խրուշչովը: Գոնկրէսը նոյնպէս որոշում անցուց չուտափոյթ աւելցնել սպառողական ապրանքներն ու ուտեստեղէնները, ինչպէս նաև աշխատավարձերը այն բանուորներուն, որոնք նրաւ աշխատավարձ կը ստանային:

Քաղաքական մարզին մէջ Գոնկրէսը նշեց յիշատակելի դարձակէտ մը, մասնաւորապէս դուրսի աշխարհի խաղաղութեան և բարեշրջումի հարցին մէջ: Նոյն գոնկրէսը ընդունեց նաև կապիտալիստական պետութեանց հետ խաղաղ համակեցութեան քաղաքականութիւնը, որ փոխարինելու է յեղափոխական միջոցառումներուն՝ սոցիալիզմի աստիճանական նուաճումները ապահովելու համար:

Նոր Գիտութիւնը Սովետ Երկրին մէջ .—

Երբ մենք ըսինք թէ բեկում մը յառաջացաւ Սովետական Միութեան մէջ Ստալինի մահէն յետոյ, և խոշոր փոփոխութիւններ տեղի ունեցան հոն, ասկէ կրնանք եզրակացնել թէ՛ ընկերային գիտութիւններն ալ ենթարկուեցան այդ փոփոխութեան:

Մենք այժմ այդ փոփոխութեան ուրուպիծը Կիւսին կրնանք տալ:

Սովետ գիտնականներու և կապիտալիստական երկիրներու գիտնականներու միջև ո՛չ միայն նիւթական և քաղաքական հանգամանքներու տարբերութիւններ կան, այլև կայ մեծ տարբերութիւն մը՝ հետապնդուած ձգտումներու միջև. մէկը ուղղուած է սոցիալիստական կուլտուրայի զարգացումին ու ծաւալումին, միւսը՝ կապիտալիստական կուլտուրային պահպանումին: Յարկական ռեժիմի ներքև Մարքսիստները բնաւ պատեհութիւն չունէին որ պաշտօնական և մշակութային շրջանակներու մէջ կարեւոր դեր կ'առարկէին: Իսկ յեղափոխական շրջանին ալ՝ անոնք զբաղած էին յեղափոխութեան յաղթանակը հիմնաւորելու գործով: Մարքսիստական գաղափարախօսութեան տարածումով էր որ գիտութիւնը, զբաղանքութիւնը և արուեստը նոր դոյն պիտի ստանային, և այդ՝ սխտեմատիկ ու ծանր աշխատանք կը պահանջէր: Եւ այդ աշխատանքը յատկապէս տարուելով երեւան եկան նոր գիտնականներ — երիտասարդ մարտիկ ու կիներ, որոնց գործն էր փոխել հասարակութեան հոգեբանութիւնը, անոր կուլտուրան և ամուր հիմքերու վրայ հաստատել անոր նոր հիմնարկութեան նորագոյն մեթոտի մը անհրաժեշտ պահանջը, ու ճամբայ բացաւ Մարքսիստական մարդարանական, և բանասիրական ճիւղերու հին ուսումնականները իրենց ընտելացած եղանակով և աւելի նոր ներշնչումով սկսան շարունակել իրենց գործը: Միւս կողմէն, տնտեսագէտները, իրենց ուսումնասիրութիւնները ուղղեցին դնել նոր հիմունքներու վրայ, որոնք կը տարբերէին բուրժուա-տնտեսագէտներու շահագիտական ուսումնասիրութիւններէն: Այդ մարդիկը այլ ևս գիտարկուներ պիտի չըլլային, այլ տնտեսական նոր ձևեր ըստեղծողներու գործակիցներ: Անցնելով աւելի նոր կարգապահութեան վարժուած ընկերաբաններուն, հոգեբաններուն և դաստիարակներուն, անոնք երբեք պիտի չհետեւէին կապիտալիստական երկիրներու ընկերաբաններու, հոգեբաններու և դաստիարակներու ակադեմիական զարգացման ուղիին, այլ պիտի ըլլային ախոյեաններ՝ որոնք գործնական աշխատանք պիտի տանէին կառուցելու նոր հասարակութիւն մը՝ անոր տալով նոր տեսակի դաստիարակութիւն մը .— Մարքսիստական դաստիարակութիւնը: Ասանկով քաղաքական գիտութիւնը բուրովին կորսնցուց իր նախկին բուրժուական գոյնը և վերածուեցաւ պրոլետարական քաղաքական գիտութեան: Այն ինչ որ տեղի ունեցաւ բոլոր գիտական ճիւղերուն մէջ՝ յատկանշական գիծով Մարքսիստական փիլիսոփայութեան յարաճուն զարգացումն էր: Աստեղ սակայն, նկատի առնելիք կէտ մը կայ . Մարքսիստ կուսակցութեան և կառա-

վարութեան տարակերպութեամբ Մարքսիստական փելիսոփայութիւնը այնքան բեռնաւորուած էր քաղաքական պատասխանատուութիւններով, որ ան իր նախկին ինքնատուութիւնն ու բիւրեղացած ձեւով զարդացումը չեւառուած եղանակով չէր կրնար ցուցնել, ինչպէս որ կը ցուցնէր ցարական շրջանին՝ ընդգլխապէս հոսանքի իր հանգամանքովը: Արդարեւ այնպէս կը թուի թէ՛ Սովետական Միութեան մէջ վերջին քսան տարիներու ընթացքին Մարքսիստական թէորիան զարդացողական շատ քիչ նշան ցոյց տուած է, քան թէ արտաքին աշխարհի մէջ, մասնաւորապէս Չինաստանի մէջ, ինչպէս նաեւ Իտալիոյ, Ֆրանսայի, Բրիտանիոյ եւ միւս եւրոպական երկիրներու մէջ: Հետեւաբար, վեր առնելով երեւոյթները, այնպէս կարելի է եզրակացրնել, որ աւելի շատ բան կրնանք սորվել Սովետական Միութեան մէջ հասարակութեան գործնական զարդացման փուլերէն քան թէ ահադեմիկ գիտութեանց եզրակացութիւններու ուսումնասիրութիւնէն: Եւ ասիկա ճշմարտութիւն է մասնաւորապէս Ստալինեան շրջանին համար, որուն յոսի կողմերու սխալները թէեւ վերջերս ճշգուեցան, բայց ստով ալ յաւաճացաւ տեսակ մը շփոթութիւն:

Պատմութեան վերագնահատութիւնը.—

Մենք նկատի պիտի չունենանք միայն ընկերային նոր ձեւերու ազդեցութիւնը գիտութեանց զարգացման ճամբուն մէջ, այլեւ անցեալի եւ ուրիշ ընթացիկ հասարակութեանց ուսումնասիրութիւնը: Ասոր մասը կը կազմէ պատմութեան եւ անոր յարակից գիտութեանց վերատեսուցութեան ենթարկուած ուսումնասիրութիւնը, ուր Մարքսիստական գաղափարներու միջնորդութեամբ ո՛չ միայն պատմութիւնը նոր թարգմանութեան մը կ'ենթարկուի, այլեւ նոր լոյս մը կը սփռուի նորածագ նիւթերու վրայ: Այդ ուսումնասիրութիւնը ստալին իսկ ասիւթով վեր կ'առնէ Ռուսիոյ եւ Միութեան մաս կազմող միւս ազգերու մշակութային ժառանգութիւնները:

Պատմութիւնը, Հնագիտութիւնը եւ մարդաբանութիւնը այնպիսի չափանիշով ծաղկեցան, որու նմանը տեսնուած չէր նախապէս: Սովետ մարդաբանները հիանալի կերպով ծրագրուած եւ լուսապէս գործադրուած հետախուզութիւններով դուրս հանեցին անձանօթ մընացած անցեալի մթին խաւերը: Անոնց գործերը թէեւ հրատարակուած են, բայց դեռ ծանօթ չեն աշխարհի մնացած մասերուն: Մենք գիտենք, սակայն, որ Նորաքարեան շրջանէն (Neolithic) ասդին, ամէն կասկածէ դուրս կույտուրաներ եւ քաղաքակրթութիւններ ծագկեր են Ռուսաստանի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ: Այս ծանօթութեամբ կը բացատրուի մասսաներու տեղափոխութիւնները, որոնք աշխարհի պատմութեան մէկ մասը կը կազմեն:

Նոյնիսկ աւելի պատշաճ է ըսել, որ որքան աւելի մօտենանք մեր այժմեան սեփական հարցերուն, եւ Եւրոպայի պատմութիւնը ուշադիր վերլուծումի ենթարկենք, պիտի տեսնենք որ հակառակ արեւմտեան քրիստոնեայ քաղաքակրթութեան ասպետներու ամէն կարգի հերքումի փորձերուն, Ռուսաստանը այդ պատմութեան մասը կը կազմէ: Մէկ կողմէն՝ երբ պարզուած է կանխագոյն շրջանի ուսական ցեղերու յարաբերութիւնները Հիւսիսի մարդոց հետ, միւս կողմէն՝ Հարաւէն Բիւզանդիոնի հետ, ասով արդէն հաստատուած կ'ըլլայ Ռուսաստանի զատորոշուած ազգային բնութագիրը: Բայց ուս պատմաբաններու գործը հոս դադար չ'առնէր: Փրոֆէսոր Քողմիտի ուսումնասիրութիւնը, օրինակի համար, Անդլիոյ եւ Ֆրանսայի միջնադարեան պատմութեան շուրջ, ուսումնականներու կողմէ գնահատուած է այն բանով որ ան նոր լոյս կը սփռէ Ֆէոդալիզմի ամձան ու քայքայման շրջանատուութեան վրայ: Մարքսիզմի ուղիով պատմական նոր հետախուզութիւններու մեթոտը արդէն իր պտուղները տուած է թէ՛ Սովետ Միութեան ներսը եւ թէ՛ դուրսի աշխարհին մէջ:

Ռուսական գիտութեան պատմութիւնը.—

Անցեալին մէջ այնքան անտեսուած գիտութեան եւ տեխնիկայի պատմութիւնը ստալին անգամ Սովետ Միութեան մէջ էր որ մասնաւոր հետաքրքրութեան առարկայ դարձաւ: 1936-ին, երբ Լոնտոնի մէջ գումարուեցաւ Գիտութեան Պատմութեան Գոնկրէսը, Սորհրդային պատգամաւորները բոլորովին նոր մօտեցումով վեր առին գիտութիւնը որպէս ընկերային եւ տնտեսական երեւոյթ՝ ոչ թէ սոսկ բացարձակ եւ զուտ մտածողութեան մէկ արտայայտութիւնը: Ասով կազմուեցաւ նոր դպրոց մը, որ իր քննադատներուն հետ հաստատեց գիտութեան ընկերային պատմութեան կարեւորութիւնը: Անկէ յետոյ աւելի խոր ուսումնասիրութիւններ կատարուեցան եւ հին կոպիտ ըմբռումները մէկ կողմ նետուեցան:

Ռուսաստանի մէջ գիտութեան պատմութեան շուրջ կեդրոնացած հետաքրքրութեան իրողութիւնը, հարց մըն է, որ անարդարանալի կերպով անտեսուած է գիտութեան նախկին պատմագիրներու կողմէ: Այստեղ շատեր, իրենց ազգային արժանապատուութիւնը վիրաւորուած կը նկատեն, երբ այդ վարկը կը տրուի ուս գիտմականներուն: Կամաւոր կուրուութիւն մըն է աս, որ թոյլ չի տար ճանչնալ յոսաջ տարուած հետախուզութեանց արժէքին հետ նաեւ անոնց ազդիւրը: Բայց ինչ ալ որ ըլլայ, պատմութիւնը չի կրնար ուրանալ ուս գիտմականներու գիտութեան տուած նպաստը: Ռուսաստան աշխարհի տուած է Փավլովի նման (1849-1936) գիտնականներ, Բէթ-

լրովի նման քիմիագէտներ (1828-1886) Լոտիկիւնի պէս (1847-1923) բնագէտներ, Զուքովսկիի նման (1847-1921) օդանաւային զիւտարարներ: Շատ մեծ ուշադրութիւն տրուած է նաեւ տեխնիկայի պատմութեան, քան ինչ որ տուած է Անդլիան, ճարտարարուեստական յեղափոխութեան այդ օրրանը:

Սովետ տնտեսագէտները.—

Մարքսիստական մտածողութեան կեդրոնական դիմը կը կազմէ տնտեսագիտութիւնը: Լենինի ժամանակներէն սկսած Մարքսիզմը ամբողջապէս զբաղած է կապիտալիստական տնտեսութեան քննադատական վերլուծումով եւ կրցած է ցոյց տալ թէ ի՞նչ ընելու է նոր հասարակութեան մէջ: Սովետ Միութեան ամբողջ պատմութիւնը կը ներկայացնէ տնտեսական նորաձեւութեանց մէկ դիմը. — արդիւնաբերութեանց ազդանայում, կոլլէկտիւ Փարմային սխաւէմ, շահարկութիւնն ու օտար առուտուրը պետութեան հսկողութեան ենթարկում: Այստեղ աշխատավարձի հարցը բնականաբար կը թուի բաւականին կնճռոտ: Յետ պատերազմեան շրջանին կառավարութիւնը որոշեց աշխատավարձերը աւելցնել եւ ապրանքներու գիները կրճատել, առանց պահեսցնելու որակաւոր բանուորներու տրուած քաջալերանքը: Այս բոլորին հետ, սակայն, պէտք է ըսել թէ սովետ տնտեսութիւնը տակաւին հասած չէ իր անթերի կատարելագործման աստիճանին: Նախ որ պաշտօնական վիճակագրութիւնները կը պակսին, որով մենք չենք կրնար սովետներու քաղաքական տնտեսագիտութեան դասադիրքերը իրականութեան հետ բազմապատկեան գնել: Բայց պիտի դայ ժամանակը, որ նոր ուժերը, այլեւս կարիք չ'զգայ երկրի ապահովութեան նկատառումով իր պաշտօնական վիճակագրութիւնները դադարի պահել:

Ընկերային պատասխանատուութիւն.—

Ծրագրուած տնտեսութիւնը իր յաջողութեան համար կը պահանջէ որոշ չափով ընկերային պատասխանատուութիւն: Անոր գործունէութեան ճամբուն վրայ կարեւոր խնդիրներ կան թէ՛ կառավարութեան եւ թէ՛ ժողովուրդին համար: Վարչական կազմի անդամները յաճախ ստիպուած են կարուկ քայլեր առնել, երբեմն ալ՝ նահանջել, երբ կը տեսնեն որ աւելի առաջ չեն կրնար երթալ: Ժողովուրդի անդամներն ալ անհատական պատեհութիւնները օգտագործելու փորձութեան կ'ենթարկուին, բայց երբ այդ փորձութիւնը զիրենք գործի կը մղէ, գործ մը, որ կը վնասէ հասարակութեան, ան կ'ըլլայ սճիր: Ասով թէ՛ կառավարութիւնը եւ թէ՛ անհատները սխալներ կը գործեն: Եւ այդ սխալները բնական են, որովհետեւ ա-

նոնք կը յառաջանան արմատ կտպած հին սովորութիւններէ, սխալ հասկացողութիւններէ եւ հակամարտ շահերէ: Բայց Լենին կ'ըսէ. — «Սխալները անխուսափելի են. ոչ մէկ մարդկային էակ անթերի է: Կարեւորագոյն բանը սխալ չգործելուն մէջ չէ — թէեւ գործելու ատեն պէտք է զգուշանալ սխալումէն — բայց գործուած սխալը չկրկնելու եւ գործուած սխալներէն դաս առնելուն մէջ է կարեւոր կէտը»:

Սովետական նոր սերունդը դաստիարակութեան ու փորձառութեան միջոցով իւրացուցեր է ընկերային պատասխանատուութեան գիտակցութիւնը, բայց հին սերունդէն մնացորդներ կան, որոնց մէջ հինի ոգին տակաւին կ'ապրի: Այսու հանդերձ երբ որոշ չափով ճարտարարուեստական գիտական աշխարհին մէջ նուաճումներ կատարուած են, այլեւս յետագարձ շարժում անհնարին է: Արդիական ճարտարարուեստական պետութեան մէջ հաւաքական կազմակերպուածութիւնը դարձեր է բնական անհրաժեշտութիւն մը, որ իւրաքանչիւր անհատի մէջ կը շեշտէ ընկերային պատասխանատուութիւնը, առանց որուն, մարդկութիւնը գերի կը դառնայ իշխանապետներու եւ աւագակներու ձեռքը:

Կրքուրքիւնը.—

Դեռ եւս երիտասարդ Սովետ Միութիւնը իր առջև ունի ընկերային ու դաստիարակչական գործեր, որոնք այնքան մեծ են եւ այնքան կարեւոր՝ որքան նիւթական՝ տնտեսական գործերը: Յետամնաց, դասակարգերու բաժնուած երկիր մը, ուր կը բնակէին նախապաշարումներով շղթայուած բազմաթիւ ցեղեր դանազան լեզուներով, տանիլ բարձրագոյն տեխնիկայի եւ մշակոյթի աստիճանին վրայ, այնքան զիւրին գործ չէր: Սոր արմատ բռնած հակառակակառուցողութեան մտածողութեան ձեւերը, կապիտալիստական եւ Ֆէոդալական ժամանակներու արդեցութիւնները, աւելորդապաշտութիւններն ու հակամարտութիւնները, կասկածներն ու վախերը՝ որոնք մարդիկը իրարմէ կը հեռացնէին, ասոնք պէտք էր արդիակուէին, վերցուէին կրթութեամբ: Սովետ Միութեան մէջ կրթութեան պատմութիւնը իր քանակական կողմով եղած է արագ եւ յարաճուն, սկսելով նոյնիսկ քաղաքացիական պատերազմներու շրջանէն եւ տակաւին կը շարունակուի: 1913-ին, Ռուսաստանի մանուկներուն միայն 20 տոկոսը նախնական կրթութիւն կը ստանար. 1932-ին, կրթութիւնը եղաւ ընդհանրական եւ անզբաղիտութիւնը ամբողջապէս սրբուեցաւ: 1913-ին, երիտասարդութեան միայն մէկ հարիւրերորդն էր որ բարձրագոյն կրթութիւն կ'ունենար, ան ալ վերին դասակարգերէն, 1956-ին, սակայն այդ երիտասարդութեան 15 տոկոսը — աղ-

ջիւղներ եւ պատանիներ, սկսած էին ստանալ բարձրագոյն կրթութիւն, ան ալ ո՛չ թէ վճարովի, այլ պետական օժանդակութեամբ:

Սովետ Միութեան կրթական գործը միմիայն երեխաներուն համար սահմանուած չէ, այլ շափահաս մարդոց ու կիներուն որոնք մեծ նպաստ բերած են ծաղկող նոր քաղաքակրթութեան: Սովետ Միութեան երկու մեծ գործերը յաւէտ նշանակելի պիտի մնան մարդկային ազգի պատմութեան մէջ, մէկը՝ կնոջ ստորագաս վիճակէն կատարեալ ազատագրումն է, միւսը՝ կրթական պատեհութեան ընդհանրացումը անխափր՝ ամենուն, առանց նկատի առնելու տարիքը, դասակարգը, մորթի գոյնը, լեզուն եւ ազգութիւնը:

Կրթուած ժողովուրդը.—

Սովետ Միութեան կրթական քաղաքականութիւնը յճուական կարեւորութիւն ունի իր ամբողջ տնտեսութեան ինչպէս նաեւ մշակութային էվոլուցիային համար: Գիտութիւնը եւ կուլտուրան այսօր արդէն առնուած են առանձնաշնորհեալ դասակարգի ձեռքէն եւ արուած են ժողովուրդին: Ասով կը պարզուի այն իրողութիւնը, որ արդիական ճարտարարուեստական պետութիւն մը կազմուած է, որուն վարող ուժն կրթուած ժողովուրդն է: Մարդիկ ու կիներ, հասած ըլլալով գիտական բարձրորակ գիրքի, լծուած են մեքենայացուած արդիւնարբերութեան պահանջներուն, գիտական երկրագործութեան եւ այն հետախուզութեանց, որոնք երկիրը կը տանին աւելի բարձր զարգացման աստիճանին:

Բայց պէտք է գիտնալ որ այս նոր ընդհանրացած գիտական կրթութիւնը Սովետ Միութեան սահմաններուն մէջ ամփոփուած չի պահուիր: Նոյն երեւոյթը նկատելի է նաեւ ընկերային ուրիշ սիւստէմ ունեցող երկիրներու մէջ, որոնք մեքենարար ստիպուած են ընդօրինակել Սորճրգային երկիրներու ձեւը, ի հարկէ, յարմարցնելով զայն տիրող դասակարգի շահերուն:

Ընկերային փոքրագիտութիւն.—

Սովետ Միութեան առած նպաստը ընկերային գիտութեան, կը պարզուի այն իրողութեամբ, որ կառավարութեան ստիպողական հրամաններով չէ որ ժողովուրդը ահամայ կը հետեւի կրթութեան, ինչպէս այդ բանը տեղի կ'ունենայ կապիտալիստական երկիրներու մէջ, այլ ժողովուրդի գիտակցական, ներուժ մղումով: Տասնեակ հազարաւոր անհատներ եւ խմբաւորումներ ինքնարեւարար կը յառաջանան նոյն ճամբուն մէջ գովելի մրցակցութեամբ: Կուսակցութեան եւ կառավարութեան գերը միմիայն ընդհանուրի բարեկեցութեան ու յառաջգիժմութեան նկատառումով հեռատեսութեամբ

յուսմունքներ ընել է. գործի միւս մասերը թողուած են գործողներուն, որոնք թրծուած ընկերային փորձագիտութեամբ գիտեն թէ ի՞նչ ընելու են իրենց գործը զարգացնելու եւ անթերի կերպով զլուխ հանելու համար: Սովետ Միութեան ամբողջ պատմութիւնը ընկերահասակակերպութեան նոր ձեւերու էվոլուցիայի պատմութիւնն է, որ սկսած է սովետներէն, բանուորներու, գիւղացիներու եւ զինուորներու կազմած խորհուրդներէն: Այնտեղ այլեւս գիտական ծանօթութիւնները մոնոպոլի կապելու հնարաւորութիւն չկայ: Հոն մենք սկսած ենք ահանաւես ըլլալ այն իրողութեան, որ ազատագրուած մարդիկ ու կանայք չեն գործեր սոսկ ապրուստի համար, կամ անձնական շահու կամ գիրքի համար, այլ պարզապէս հասարակութեան բարօրութեան եւ յառաջգիժմութեան համար: Ասիկա ընկերային փորձագիտութիւնն է, որ սոցիալիզմէն կը ձգտի գէպի կոմունիզմ, այսինքն՝ այն բարձրագոյն հասարակակարգը, որ իւրաքանչիւր անհատ հասարակութեան կը սրամադրէ այն՝ ինչ որ կը բոյլատրէ իր մտային ու ֆիզիքական կարողութիւնը եւ կը ստանայ այն՝ ինչ որ կը պահանջեն իր կարիքները:

ՓՈԹՈՐԻԿԸ ԱՍԻՈՅ ՄԷՑ

Նախ քան Համաշխարհային Բ. Պատերազմը, Կեղրտական Ասիոյ միջնադարեան լորտերու երկիրները Սորճրգային Հանրապետութեանց նիւթական վեհանձն օգնութեան շնորհիւ, իրենց տնտեսական եւ կուլտուրական զարգացումով փոխակերպուեցան յառաջադէմ երկիրներու եւ գրեթէ համահասար աստիճանի հասան շատ մը եւրոպական երկիրներու հետ բազմապատ: Այս փոխակերպման պրոցեսի կանխագոյն տարիներուն, Սովետ Միութիւնը շատ աւելի տուաւ, քան ինչ որ ընդունեց որպէս փոխարինութիւն: Եւ այդ օժանդակութիւնը երկաթուղիներու կառուցման, հանքերու շահագործման ու գործարաններու հաստատման շրջանակին մէջ չէր միայն. ան հայթայթեց նաեւ մեքենաներ՝ թեթեւ արդիւնարբերութեան ու երկրագործութեան համար: Ատկէ դատ, այդ երկիրներէն բազմաթիւ որակաւոր եւ անորակ բանուորներ լեցուեցան խորճրգային դըպրոցներու, գոլէճներու եւ համալսարաններու մէջ, ասով նոր կուլտուրայ մը պատուաստուեցաւ. հին աւանդութեամբ մեծցած ծառերուն: Գրականութիւն, թատրոն, արուեստ եւ գիտութիւն, եռանդալին հետաքրքրութեան եւ հետապնդումի առարկայ զարձան, եւ այդ ժողովուրդները ո՛չ միայն գիտցան գնահատել գիտութեան արժէքը, այլև հիմնեցին իրենց սեփական դպրոցներն ու համալսարանները: Նոյնիսկ հիւսիսային արեւելեան խաշարած ցեղերը սթափեցան իրենց խաշարած զբաղումին հետ կապուած անհոգութենէն,

սկսան կառուցել իրենց սեփական նոր կուլտուրան՝ նոր երկաթագիծերու վրայ:

Այսպիսով տեղի ունեցաւ Ասիոյ մէջ յեղաշրջումի փոթորիկը:

Զինական ժողովրդական հանրապետութիւնը .—

Նախապէս մեր յիշատակած իրադարձութեանց մէջ ամենէն կարեւորը Զինաստանի ժողովուրդի ազատագրութիւնն էր, ազատագրումը Ֆէոդալիզմի եւ եւրոպական կապիտալիստական պետութեանց ճնշիչ կապանքներէն, որ տեղի ունեցաւ 1949-ին: Այստեղ, հին կարգերէն նորին փոխանցումը կատարուեցաւ երկար տարիներու տաժանելի պայքարներով եւ Մարքսիզմի ուղեգիծով: Այս նոր ուժերը, որ երկար տարիներէ ի վեր կը խմորուէր, անցաւ երեք շրջաններէ: Առաջին անգամ Սըն-Եաթ-Սէնի առաջնորդութեամբ՝ ընդդէմ իմպերիալիզմի եւ ընդդէմ չինական պատերազմական լորտերուն: Երկրորդ շրջանին՝ Ծանկ Քայ Ծէքի աւաղակութեան եւ դաւաճանութեան դէմ: Երրորդ շրջանին՝ ընդդէմ ճարտնական իմպերիալիզմին, երբ պարտուեցաւ աւաղակապետ Ծանկ Քայ Ծէքը եւ անոր ամերիկեան նեցուկները հեռացան երկրէն: Այն ատեն Զինաստանի կոմունիստ կուսակցութիւնը ժողովրդական ասեղ ուժերու մղումով սորվեցաւ ինքնավար կառավարութիւն մը հաստատելու կնճռոտ գազանիքը: Զինացի կոմունիստները շառաջնորդեցին ժողովուրդը, այլ հետեւեցան ժողովուրդին: Որովհետեւ պէտք է ըսել թէ՛ Զինաստանի յեղափոխութիւնը իր ծագումով, զարգացումով ու յաղթանակով չինական ժողովրդական յեղափոխութիւնն էր: Զինաստանի կարմիր դրօշակի 4 աստղերը կը ներկայացնեն 4 խմբաւորումներ. բանուորները, դիւղացիները, մտաւորականները եւ հայրենասէր պիզնէսմէնները: Այս հանգամանքն էր գլխաւոր պատճառներէն մէկը, որով չինական յեղափոխութիւնը չունեցաւ իր ներքին այն դժուարութիւնները, ինչ որ ունեցաւ ուսական յեղափոխութիւնը: Ատոր համար չինացի կոմունիստները ժողովրդական անդիմադրելի ուժի օգնութեամբ կարճ ժամանակի ընթացքին — 10. Միութեան օժանդակութիւնը անուրանալի է անշուշտ — կրցան ոտուամներով յառաջդիմել, կառուցելով իրենց երկրի ծանր ու թեթեւ արդիւնաբերութիւնը: Գիւղական հաւաքական տնտեսութիւնը Զինաստանի մէջ կուսակցութեան վերին հրամանով տեղի չունեցաւ, այլ ուղղակի գիւղացիներու պահանջով: Զինաստանի ժողովուրդը առանց Մարքսի, Էնգէլսի եւ Լենինի գործերը ուսումնասիրելու, իր մարմնով ու հոգիով կոմունիստ էր արդէն, որովհետեւ երկար տարիներու դժոխային պայմաններու ներքեւ դժուարին պայքարի դպրոցին մէջ թրքումը էր այդ ժողովուրդը:

Գիտութիւնը նոր Զինաստանի մէջ .—

Յեղափոխութեան յաղթանակէն անմիջապէս յետոյ ամենամեծ քաջալերանքը տրուեցաւ գիտութեան՝ որպէս անհրաժեշտ ազգակերկրին թէ՛ նիւթական եւ թէ՛ մշակութային յառաջդիմութեան համար: Առաջին իսկ առիթով՝ շատ մեծ կարեւորութիւն տրուեցաւ կրթական գործին: Զինաստան պէտք ունէր կրթուած դասակարգի: Մի քանի տարիներու մէջ կազմուեցաւ գիտական եւ տեխնիկական բանուորներու մարմին մը՝ համապատասխան արդիական ճարտարաւեստական պետութեան կարիքներուն: Որովհետեւ երկիրը երկար ատեն չէր կրնար սպասել օգտագործելու ընական աղբիւրներ եւ կառուցելու ծանր արդիւնաբերութիւնը, մասնաւոր ջանքեր ի գործ դրուեցաւ վարժեցնելու երկրաբաններ եւ մասնագէտ մետաղագործներ, որոնք կարճ ժամանակի ընթացքին անհաւատալի արագութեամբ բազմացան, ինչ որ կապիտալիստական երկիրները չէին կրնար երազել անգամ: Նոյն ատեն Գիտութեան Ակադեմիայի վերահսկողութեամբ յառաջ տարուեցան գիտական աշխրթ հետախուզութիւններ, որոնք կապուած էին երկրի տնտեսական կարիքներուն հետ: Ատով առաջին կարգի գործ մըն էր որ զլուխ հանուեցաւ, եւ տարակուս չկայ որ Զինաստան երկար ժամանակ պիտի չառնէ մանու գիտական աշխարհի յառաջապահը հանդիսանալու գերին մէջ:

Զինաստանի կուլտուրական զարգացման նախկին սովորական դանդաղութիւնը նկատի առնելով նոր հանրապետութեան կուլտուրական յառաջդիմութիւնը իրապէս հրաշք կարելի է համարել: Յեղափոխութիւնը երբ վերջ դրաւ օտար տիրապետութեան՝ ատով վերջ դրաւ նաեւ ներքին նեխածութեան: Զինաստանի մտաւորականները, որ վատ ժամանակներու մէջ իսկ պահած էին չինական հին մշակոյթը, անոր հետ միացուցին արդիական գիտութիւնները եւ իրենց ամբողջ հօգիտով՝ նեցուկ կեցան նոր ուժերին: Անոնք հոգեկան անպատմելի գոհունակութիւն ստացան ծառայելով ժողովուրդին անոր տալով այն կուլտուրան, որ հազարաւոր տարիներով արխտոկրաս բնտանիքներու մենաշնորհն եղած էր: Ատենօք, դասական դպրոցի վարպետները ամպերէն վար կը նայէին ժողովրդական ստորին խաւերուն վրայ եւ անոնցմէ պաշտամունք կը պահանջէին: Մասօ-Յէթունի, անոնց մասին խօսելով ըսած է .— «Այժմ մենք վերին եւ ստորին խաւեր չունինք: Հակառակորդ դպրոցները թող հաշտուին իրականութեան հետ: Թողուցէք որ բոլոր ծաղիկները նոյն հողին վրայ միասին ծաղկին»:

Զին յեղափոխութեան բոլոր առաջնորդները նշանաւոր ուսումնականներ էին: Մասօ-Յէթունիք ինքը՝ բանաստեղծ է ու փի-

լիստիայ: Ան շատ խոր ուսումնասիրած է Մարքսից՝ և հիմնականորեն հասկցեր է Մարքսի և Լենինի սկզբունքները և զիտել զանոնք ի՛նչպէս գործածելու է կիսապաշտօնային երկրի մը մէջ, ուր հաստատուած է նոր հասարակարգ մը: Լենինի նման ան կրցած է գերդնահատել հասարակ ժողովուրդի հակայական ուժը և անասան հաւատք ունի այդ ուժին վրայ:

Իր ամենամօտ ընկերներէն մէկն է, պատմարան և թատերագիր Քուօ-Մօ-Եօ, Ակադեմիա Սինէկայի նախագահը, որ կը հաւատարացնէ թէ Չինաստանի հին մշակոյթը վերածնուած նորին մէջ պիտի չարունակէ ապրիլ նոր թեւածումներով: Եւ արդարեւ Չինաստանի անցեալը վերակենդանացած է նոր հասարակութեան յատուկ պատկանելի կերպարանքով: Մարգարանութեան տրուած է նոր խրթանում մը. անցեալի շատ մը անկասկածելի նշխարներ այժմ լոյս աշխարհ բերուած են: Այս բոլորին հետ մասնաւոր աշխատանք կը թափուի բոլոր հոս հոն ցրուած շինացիները ամփոփել հայրենիքի մէջ և զանոնք մասնակից դարձնել Չինաստանի պատմական արդիական ժառանգութիւններուն:

Գրագիտութիւն, դաստիարակութիւն և առողջութիւն.—

Արդէն նոր կուլտուրական շարժման գործնական արտայայտութիւնը ինքնին ակնյայտնի իրականութիւն դարձեր է: Այժմու առաջնագոյն պահանջն է անդրադիտութեան վերացումը, որուն համար արտասովոր աշխատանք կը թափուի. 6-7 հարիւր միլիոն մարդիկ պէտք է սորվին գրել ու կարդալ: Արդէն ծրագրուած է շինական ներկայ գրերը փոխարինել հոռոմէական այբուբէնով. ասանկով կը խորհուրի թէ աւելի զիւրին է գրադիտութիւնը ընդհանրացնել և պատրաստել ուսումնական սերունդներ:

Բայց շինացի յեղափոխական առաջնորդները գրագիտական դաստիարակութիւնը ընդհանրացնելու աշխատանքը աշխուժօրէն յառաջ տանելով հանդերձ, ուրիշ կարեւոր գործի մը ևս լծուած են. այն է՝ ժողովուրդին տալ առողջապահական դաստիարակութիւն և ատանկով մաքրել ու պայծառացնել շինական ազտոտ ու դարչահոտ քաղաքներն ու գիւղերը: Եւ պէտք է ըսել թէ անոնք, ժողովուրդի ժրջան մասնակցութեամբ անհաւատալի նուաճումներ կատարեցին այդ ուղղութեամբ և աշխարհին պարզեցին թէ սոցիալիստական ուղեգիծով ի՛նչ հրաշափոխութիւն կարելի է իրագործել: Եւ այսօր, ամբողջ աշխարհը մասնաւորապէս ասիական ժողովուրդները երբ կը տեսնեն թէ Չինաստանի մէջ անկախ և յառաջդիմական կառավարութիւն մը կրցաւ այդ հրաշքները գործել, իրենք ևս կրնան

նոյնը ընել, ապաստելով իմպերիալիզմի լուծէն և պատերազմի վտանգէն:

Չինաստանի նպաստաւոր միջավայրը.—

Ժողովրդային Չինաստանի յեղափոխութիւնը մէկէ աւելի ներքին ու արտաքին նպաստաւոր ազդակներու շնորհիւ զիւրութեամբ հիմնաւորուեցաւ և առանց հակայ դժուարութեանց կատարեց իր նուաճումները արդիւնարեքութեան, գիտութեան, գրականութեան ու արուեստի մարզերուն մէջ: Արտաքին ազդակներն էին Ռուսական Յեղափոխութեան փորձառական գտները, Սորհրդային Միութեան ընձեռած մեծարժէք օժանդակութիւնները: Իսկ ներքին ազդակներն էին Չինաստանի աշխարհագրական դիրքը, չին ժողովուրդի կրօնական-աւանդական հաւատալիքները և Չինաստանի մէջ դասակարգային խորունկ խրամատներու չգոյութիւնը:

Չինաստանի աշխարհագրական դիրքը.—

Չինաստան, եւրոպական ու ամերիկեան կապիտալիստական պետութիւններէն հազարաւոր մղոններով հեռու ըլլալով ենթակայ չէ անոնց անմիջական ազդեցութեան, ոչ ալ այնքան զիւրութիւն կ'ընծայէ անոնց էնթրիկներու յաջողութեան: Քորէան, օրինակի համար, ցոյց տուաւ որ ասիական ազատագրուած երկիրները այնքան զիւրին մարտուելիք պատաններ չեն: Հակառակ անոր, որ Հարաւային Քորէան, Ամերիկեան իմպերիալիզմի համար զինուորական գործողութեանց նպաստաւոր կայան էր, ամբողջ երեք տարի Հիւսիսային Քորէան հերոսական դիմադրութեամբ ևս մղեց թշնամիներու յարձակողականը և մնաց անպարտելի: Երբ այդպէս էր Քորէան, որուն այսօրերու օրինակն է Հիւսիսային Վիէթնամը, ի՞նչ պիտի ըլլար Չինաստանը, որու հոգերը մաքրուած էին թշնամիներէն և 6-7 հարիւր միլիոն ժողովուրդ՝ մէկ մարդու պէս կեցեր էր իր պետութեան կողքին: Այդ երկիրը կրնար և կրնայ անանկացնել եւրոպական և ամերիկեան իմպերիալիստական պետութիւնները՝ առանց այլ ևս այլի:

Չին ժողովուրդի կրօն-աւանդական հաւատալիքները.—

Չին ժողովուրդի կրօնական հաւատալիքները կապուած են իրական կեանքի տուեալներուն հետ: Կոնֆիլիոսի և Բուդդայի պատուէրները անդրչիրիմեան աշխարհին կապուած չեն, այլ կապուած են տեսանլի աշխարհին: Եթէ չին ժողովուրդը քրիստոնեայ ժողովուրդ ըլլար, շինական յեղափոխութիւնը յազթէր իսկ՝ պիտի չկրնար հաստատ հիմքի վրայ դնել իր պետութիւնը, որովհետեւ իր հոգեկան աշխարհը պիտի տրամադրէր արեւմտեան քրիստոնեայ քա-

զէաներէն Ամերիկան ոչինչ ունի ընդօրինակելիք: Անոնք կրնան զալ, ձեւականութեան սիրոյն՝ անոնք կը ծափահարուին Ամերիկայի մէջ ու ճամբու կը դրուին. ու եթէ անոնցմէ ոմանք ամերիկեան ճոխութենէն ու փարթամութենէն շլանալով շուրջն փերադառնալ իրենց հայրենիքը ու մնան, այդ աւելի լաւ. անոնք կը դառնան ամերիկեան կապիտալիստական սխալմի պրոպականդիստները: Մի քանի տարիներէ ի վեր մշակութային կապ հաստատուած է Ամերիկայի եւ Ս. Միութեան միջեւ: Կրնա՞նք այնքան միամիտ ըլլալ հաւատալու որ Ամերիկայի դիտաւորութիւնը անկեղծ է ու բարեկամական, երբ մըշակութային կապին կցած է Ամերիկայի Չայնը, սուտի զրպարտութեան ու յերիւրանքներու խողովակը, որ կ'երկարի մինչեւ Խորհրդային սահմաններէն ներս գոգոհութիւն ու ըմբոստութիւն սերմանելու համար: Մշակութային այդ կապէն ո՞ր կողմը աւելցնէ: Սովետ Միութեան արուեստը, երգն ու պարը սովետ ժողովուրդի հոգին կը ներկայացնեն, ուր պատկերուած է ընկերային բարձր կենցաղի, բարձր գաստիարակութեան ընտան ձգտումը: Ամերիկեան ժողովուրդը մեծամասնութեամբ՝ կազապարուած ըլլալով բուրժուական հոգեբանութեամբ եւ գերակայ երկրի աշխատեթ խորհողութեամբ, հաճոյքի ու դուարձութեան սիրահար՝ ոչինչ ունի ընդօրինակելու խորհրդային արուեստէն. բայց ի՞նչ բնի սր խորհրդային երիտասարդութիւնը հետուէն հետո՞՝ հետաքրքիր ամերիկեան ճոխ կեանքի շլացուցիչ երեւոյթներուն շուրջ, արդէն սկսած է օրինակել մի շարք պարեր ու նուագի տեսակներ — օրինակ՝ ռաքքն ռոլը եւ ճէգ պէնտը — որոնք Սովետ երիտասարդութեան բիւրեղ հոգին խաթարելու եւ ազականելու բրնոյթ ունին: Վերջերս, այս երեւոյթը արդէն խորհրդային երկիրներու սրատես առաջնորդներու ուշադրութեան առարկայ եղած է: Ամերիկան, մշակութային կապի խողովակով իր ներքին ազականութիւնները պատուաւանել կ'ուզէ խորհրդային ժողովուրդներուն. այն՝ ինչ որ զէնքով կարելի չէ իրագործել, հնարաւոր գտած է իրագործել խորամանկ ու զարտուղի միջոցներով:

Ահա թէ ինչո՞ւ ամերիկեան լիպերալիստները նոյն ուղիով կ'ուզեն մուտք գործել ժողովրդային Չինաստանի մէջ, բայց շինացի ժողովուրդը Մարքսիզմի նախակրթարանի ուսմունքը աւարտելէ վերջ պատրաստուած ծուղակէն հետո կը մնայ:

Ամերիկան, հոգիները ախտաւորող երկիր է. իսկ այդ ախտը անբուժելի է, կրնանք բնել:

Օրինակի համար, վեր առնենք ամերիկահայերը, մասնաւորապէս սա վերջին համաշխարհային պատերազմէն յետոյ: Անոնց մէջ շատ քիչ թիւ կը կազմեն մաքուր հայրենասիրութեան կապուած հոգիները. տալարի պաշտամունքը եղած է անոնց կրօնքը: Ոմանք նոյնիսկ

միջոցներու մէջ խորութիւն չեն դնել զրամ կուտակելու եւ հարստանալու համար: Տակաւին միլիոնատէր հայեր կան, որոնք մուրացկաններէն չեն գատորշուիր: Նոյնիսկ ամենէն աւելի արմատական կարծուածները, որոնք Մարքս են ուսումնասիրելու եւ Լենինէն կը ճառեն, միւրճուած են տալարապաշտութեան ճահիճին մէջ:

Հատորներ կարելի է լեցնել նկարագրելով ամերիկահայերու ցուցարեւած ընկերային աշխանդակութիւնները, որոնք բոլորն ալ ծածկուած են կեղծիքի վարագոյրին ետեւ:

Մեր հայրենիքի ղեկավարները գիտակ չե՞ն արդեօք այս իրողութեան: Այո՛, գիտակ են շատ աւելի՛ քան այս օտոզերը գրողը, բայց անոնք ըլլալով հաւատարիմ հետեւորդները Լենինեան ուղեգիծին, իրենց ամէն մէկ քայլին, կ'ունկնդրեն Լենինի պատգամը — «Մտէ՛ մասսաներու մէջ. մասսաները աւազակներու ձեռքը մի՛ յանձնէ՛ք»: Արտասահմանի Հեռ Մշակութային կապի Կոմիտէն, Վարդգէս Համազասպեանի գլխաւորութեամբ, իր «Հայրենիքի Չայն»-ով մեր սոցիալիստ Հայաստանի առաջնորդներու գերմարդկային վեհանձնութիւնն է զոր կը յայտնարեմէ, երբ կոչ կ'ուզէ սփիւռքահայութեան՝ գէթ հողեկան կապով կապուիլ մեր յառաջդիմած հայրենիքին հետ: Ինչքա՞ն հոգածութիւն, ինչքա՞ն աննկարագրելի նուիրուածութիւն կայ մեր Հայաստանի ղեկավար մտաւորականներու մօտ: Գիրքեր, թերթեր, լուսարձակ գրականութիւն, այսօր առատօրէն եւ ճրիարար կ'ուզարկուին ամէն տեղ:

Մշակութային կապի Կոմիտէն վերջերս 80,000 հայերէն դասագիրքեր զրկած է Լիբանանի, Սուրիոյ, Կիպրոսի, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի հայկական կրթական հաստատութիւններուն: Հայ աշխատաւոր ժողովուրդի եւ անոր անձնուրաց մտաւորականներու միտքի ու բազուկի աշխատանքի արդիւնքն է այս հսկայական գոհօրութիւնը:

Ո՞ր պիղծ բերանն է, որ պիտի յանդգնի յայտարարել թէ՛ շահագիտական քաղաքականութիւն մը ծածկուած է այդ գիծին տակ: Մեր հայրենիքը ո՛չ միայն կը հետաքրքրուի իր ծոցին մէջ գտնուողներուն մտաւորական հորիզոնը ընդարձակել, ձեւով հայկական՝ բովանդակութեամբ միջազգային կուլտուրայի զարգացմամբ, այլեւ այդ զարգացումին կ'ուզէ մասնակից դարձնել հազարաւոր մղոններով հետու գտնուող հայորդիները, որոնք ներկայիս կը խարխափին անորոշութեան ու յուսահատեցուցիչ մթութեան մէջ:

Նոյնը չընե՞ր Խորհրդային Միութիւնը. ան իր գիտութեան լուսարձակով կը լուսաւորէ անտեսապէս եւ գիտական մարդին վրայ յետամնաց երկիրներու մթին անկիւնները:

Կապիտալիստական պետութիւնները իրենց շահերուն ծառա-

յող գիտութեամբ կը ձգտին շահագործման աղբիւրները կրկնապատկելով՝ ապահովել տնտեսական նուաճումներու ուղին: Սոցիալիստական երկիրները, միւս կողմէն՝ կը ձգտին Մարքսիստական գիտութեան տարածումով խաւարը հալածել եւ անյայտացնել մեր աշխարհէն:

Մարգարէ մը ըլլալու կարիք չկայ յայտարարելու որ վերջնական յաղթութիւնը կը պատկանի վերջիններուն՝ սոցիալիստական երկիրներուն:

ԳԼՈՒԽ Բ.

ԱԶԱՏ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՆԵՐԿԱՅ ԴԱՐՈՒ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐՋԱՆԻՆ

1. — Ազատ մտածողութիւնը վերածնունդի շրջանին. —

Այն՝ ինչ որ վերածնունդ կը կոչուի, Միջին դարու վերջերք խմորուող ընկերային ուժերու էվոլյուցիայի յայտնագործումն էր, որ երեւան եկաւ դասական գրականութեան վերադարձումով: Հին մշակոյթի սերմերը նորակազմ հասարակութեան մէջ ստեղծուած նոր պայմաններու օժանդակութեամբ աճեցան նախ Իտալիոյ մէջ, ապա տարածուեցան Ֆրանսայի, Անգլիոյ եւ Գերմանիոյ մէջ: Փրուսիոյ թագաւոր Ֆրէտրիկ Բ-ը, որ կարկառուն ներկայացուցիչն եղաւ այն բանաւարական անհաւատութեան, որու նախանշանները սկսած էին երեւնալ ԺԳ- դարուն, հռչակ հանած էր որպէս կէս խալած եւ կէս անաստուած(*): Ան իրականին մէջ բաւականին աւելորդապաշտ մարդ էր. կը պաշտէր նշխարները, եւ համարեայ այնքան անգութ ու աններող հանդէպ հերետիկոսներուն եւ Մանիկեաններուն՝ որքան Հռոմի Պապը. բայց նոյն առեւն՝ ան կը ծաղրէր Յիսուսի կուսական ծնունդը, վերջին հաղորդութիւնը եւ ուրիշ գովմաները: Ասանկով ան կը համարուէր տեսակ մը խորթ քրիստոնէայ: Իր մէկ որդին՝ Մէնֆրէտը պատմութեան մէջ անուն թողած է որպէս Եպիկուրեան, որ ո՛չ Աստուծոյ կը հաւատար ո՛չ ալ սուրբերու. չէր հաւատար նաեւ հոգիի անմահութեան. իր բմբունումով՝ մարմինը երբ կը մեռնի, հոգին ալ կը մեռնի անոր հետ: Ֆրէտրիկ Բ-ը, ուրեմն, կրնանք ըսել թէ Իտալիոյ մէջ ծաղկող վերածնունդի ժառանգորդն էր:

Իտալիան եղած է վերածնունդի օրրանը, եւ այդ հետեւանք էր իրերու բնական օղակաւորումներուն: Հոն կը թափառէին հռոմէական կայսրութեան թողած ժառանգութիւնները, շինուած կանոնա-

(*) Ֆրէտրիկ Բ. որ Մեծն Ֆրէտրիկ ալ կը կոչուի, (1712-1786) ո՛չ միայն փրուսիան գիմուորական յաջողութիւններով բարձրացուց, այլեւ ինք՝ որպէս ուսումնական բազուր մեծ անուն ունեցաւ. հեղինակած է երեսուն հատորներ: Իր գահակալութիւնը սկսաւ 1740-ին եւ տեւեց 46 տարի:

ւոր ճամբաները, որոնք կը նպաստէին վաճառականութեան. հոն մտած էր ամբամորթ եւ հնամենի բիւզանդական արուեստը եւ հին Յունաստանի քաղաքակրթութեան անդուստի հետաքրքրութիւնը, ասոնք նպաստեցին որ իտալական ազատ ու ջանասէր հասարակութիւնները աւելի բարձր քաղաքակրթութիւն մը հիմնեն այն եկեղեցւոյ կողքին, որ մէկ կողմէն ազատ մտածողութիւնը խեղդել կը փորձէր, միւս կողմէն՝ նկարչական արուեստին ու արձանագործութեան ուժ կուտար: Առաքինութեան տեսակէտով, սակայն, արուեստներու ձգտումն էր սրահել կրօնը մարդակերպական դիմին վրայ հոն, որ հին մշակոյթը հետզհետէ կը կորսնցնէր իր տիրականութիւնը: Նախ քան յունական հին գրականութեան վերագարթնումը, բացի այն՝ որ Արիստոտէլեան փիլիսոփայութիւնը արդէն հիմքը դրած էր ստեղծագործութեան, նախաինամութեան ու անդրչիրիմեան կեանքի կառուցման, իր առջեւ ունէր բոցիտնալիզմի հետեւեալ գլխաւոր ազդակները. (1) — Իսլամական կրօնի մրցակցութիւնը, որ յայտնարեութեան մաւրիսանացիներու հետ յարաբերուելով. ի վերջոյ՝ խաչակրական արշաւանքը, եւ յետոյ՝ Սիկիլիոյ սարակինոսեան կուրտուրան եւ Արեւելքի հետ յառաջ տարուած վաճառականական յարաբերութիւնը: (2) — Քրիստոնէութեան մէջ հաւատալիքներու շուրջ մղուած պայքարները: (3) — Կղերականութեան ցոյց առած աշխարհապաշտութիւնը եւ բարոյական կեղծաւորութիւնը: Ասոնք էին որ խթանեցին մարդոց ազատ մտածողութիւնը եւ ճամբայ բացին Վերածնունդի շրջանին:

Վերածնունդի շրջանի պատմութեան մէջ առաջին կարգի վրայ գրուած է Դանտէի (1265–1321) անունը: Բայց Դանտէի բանաստեղծական հանճարը Իտալիոյ մէջ մտաւորական Էվոլուցիայի զանգաղեցման ազդակ մը եղաւ աւելի՛ քան թէ սասարեց անոր դարգացման: Դանտէի բանաստեղծութիւնը հաւատքի ճամբուն վրայ կրցաւ իշխանութեան հաւասարակշռութիւնը պահել դարերով:

Դանտէի մահուանէն վեց տարի վերջ Վերածնունդի կանխադոյն հերետիկոսներէն ամենէն յանդուգնը՝ Բոլոնայի փիլիսոփայութեան փրոֆէսոր Սէզզօ ա'Աքոլի (1260–1327) խարոյկի վրայ ողջ ողջ վառուեցաւ, որովհետեւ յայտարարեւ էր թէ՛ Քրիստոս զատարկագորտ շարլաթան մըն էր, որ Եգիպտոսի կախարհներէն մի քանի անպարարութիւններ սորվեւ՝ եւ անոնցմով հրապուրեւ էր իրեն նման զատարկագորտ տղաներ՝ որպէս աշակերաներ:

Դանտէի վրայ գրական մեծ ազդեցութիւն գործող մարդ մըն էր Պոքաչիոն (1313–1375), որ մտածողութեան բացիտնալիզմի ախոյեան մը չեղաւ, այլ եղաւ համբերողութեան եւ լիպերալիզմի զգուշաւոր ջատագովը: Պոքաչիոյ Տասնօրեակը կը հայեկիպցնէ Վե-

րածնունդի բոլոր յոռի կողմերը — անոր թեթեւօլիկութիւնները, անոր սանձարձակութիւնները, անոր հակակրեական դուարձարանութիւնները եւ ապրող ուրախութեան մէջ անոր ուռուցիկ կերպարանաւորումը:

Պոքաչիոյի հետ կրնանք յիշատակել նաեւ անոր մէկ բարեկամը՝ Պէթրարքան (1304–1374), որ նուազ յարձակողական էր, բայց եկեղեցական բոնաստեղծութեան առջեւ կրցաւ իր անկախութիւնը պահել եւ պայքարիլ դոկմայապաշտութեան դէմ:

Վերածնունդի շրջանի ամենէն սիրուած բանաստեղծներէն մէկն է Պուլիի (1430–1488), որ նրբամիտ հեղինակով ծաղրեց կղերականներն ու եկեղեցական շինծու հրաշքները: Այս մարդը հրաշքով ազատուեցաւ հաւատաքնութենէ, բայց մեռնելէն վերջ, եկեղեցականները իր մարմինը «սրբազան» հողին մէջ շթաղեցին, այլ նետեցին ծովը:

Ասոր ժամանակակից է Գապրիէլ տի Սալօ (1440–1502) ազատախոհ բժիշկ մը, որ իտալացի ազնուականներու պաշտպանութեամբ ազատ մնաց հաւատաքնութեան առեանէն: Անիկա կը պնդէր ո'ր «Քրիստոս Աստուած չէր, այլ Յովսէփի եւ Մարիամի զաւակն էր... որ Ան իր խորամանկութեամբ կրցաւ ամբողջ աշխարհը խաբել, ո'ր երէ ան խաչուեցաւ, խաչուեցաւ պարզապէս իր գործած ոճիրներուն համար»: Այս յայտարարութիւնը կ'ըլլար 1497–ին, այսինքն այն առեան՝ երբ Կալէսօ Մարսիօ կը վառուէր խարոյկին վրայ:

Վերածնունդի վերջընթեր շրջանի խոշորագոյն դէմքն է Մաքիավէլլը (1469–1527) որ բարեկարգութենէն առաջ կրցաւ ապացուցանել թէ Իտալիան իր բարձր բանականութեամբ կրնար ձերբազատուիլ հաւատքի կապանքներէն: Իր կարծիքով՝ իտալական քաղաքականութեան ճամբուն վրայ եկեղեցին զերագոյն շարիքն էր — «վէրքին մէջ գրուած քար մը»: Իր մէկ հռչակաւոր ասացումքով ան կը յայտնէ հետեւեալ կարծիքը. — «Կոստապաշտ կրօնքը կը սրբացնէր այն մարդիկը, որոնք հասարակական պատիւով կը պահաւորուէին. այն է՝ զօրավարները եւ պետական պաշտօնեաները. մեր կրօնը, ընդհակառակը՝ կը փառաւորէ խոնարհներն ու անկարները քան թէ զործունեայ մարդիկը. ան բարձրագոյն բարին կը դնէ խոնարհամբուութեան եւ ստրկամտութեան մէջ եւ կը սորվեցնէ անարտունջ տառապիլ՝ քան թէ զործել, ասանկով աշխարհը կը վերածուի սրիկաներու սրտրդութեան անտառի մը»:

Ազատ մտածողութեան դարաշրջանին գրական հռչակաւոր մէկ ներկայացուցիչն է Պոմպոնացի (1462–1525), որ յանդիմնեցաւ հերքել հոգւոյ անմահութեան պաղափարը: Անիկա իրապէս ձեւակերպողն եղաւ Իտալական Վերածնունդի փիլիսոփայութեան, եւ ասոր

համար ան իրաւամբ կոչուած է արգիւական քննադատութեան հայրը :
 Բայց պէտք է ըսել թէ բոլոր այս առաջաւոր ազատախօս մը-
 տաւորականները չկրցան կազմել որոշ կարգապահութեան շրջանակի
 մէջ հաւաքուած մարմին մը, որ մասձոցութեան եւ գործունէու-
 թեան որակաւոր առաջնորդն ըլլար, իտալական քայքայուող հասա-
 բարութեան մէջ :

Կապիտալիստական տիրապետութեան շրջանը կը մօտենար,
 անոր հետ կը մօտենար նաեւ Վերածնունդի կերպարանափոխութիւնը :

* * *

Վերածնունդի ուղիղ շրջանաւորութիւնը եւ շարունակութիւնը
 սկսած է Իտալիոյ մէջ, այդ իսկ պատճառով իտալական պատմու-
 թիւնը կապուած է անոր հետ : Նոյն պրոցեսը տեղի ունեցաւ ի վեր-
 ջոյ Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ եւ նոյն իմաստով՝ Գերմանիոյ մէջ,
 բայց այս երկիրներու մէջ մտաւորական վերապրումները իտալա-
 կան ազդեցութեան տակ զանդազօրէն յառաջացած պտուղներն էին :
 Արգարեւ Միջին Դարուն չէ եղած աւելի նշանակելի դէմք մը քան
 Բաճըր Բէքոնը (1214—1294), անգլիացի Փրանչիսկեան կրօնաւորը,
 որ ուսած էր Փարիզի մէջ : Իր հերետիկոսութեան մասին ոչինչ զի-
 տենք, միայն գիտենք որ իր գաղափարներն ու հետախուզութիւնը
 իր ապրած ժամանակի բմբուսներուն անհամարատասխան էին :
 Երկու անգամ երկար բանտարկութեան դատապարտուեցաւ, առա-
 ջին անգամ՝ տասը տարի, երկրորդ անգամ եօթը տարի : Իր սրամը-
 տութիւնը կղերական բռնապետութեան հանդէպ, մնաց միշտ ան-
 զօր : Անգլիական վերածնունդը ժՁ. դարուն երեւան եկաւ երբ Իտա-
 լիան իր փառքի շրջանը աւարտեց էր : Տասնըորորդ դարուն ճիշդ է
 որ նոր կեանք մը կար Անգլիոյ մէջ, երբ իտալական եւ Փրանսական
 դրականութեան հետ հազորդակցութիւն մը սկսաւ : Այդ շրջանին
 նշանաւոր բանաստեղծն էր Շոսէր (1340—1400) որ Վերածնունդի յա-
 տուկ անհաւատութեան նշաններ ցոյց չէր տար : Միջին դարուն, ա-
 մենաուժեղ անհատականութիւնը, որուն կը հանդիպինք Անգլիոյ
 մէջ, անիկա Վիքլիֆն է (1324—1384) որ աւելի սքոլաստիկ փիլիսո-
 փայութեան հետեւող մըն էր քան թէ Վերածնունդի առաքեալ մը :
 Միայն թէ իր նշանակելի առաւելութիւնը այն էր որ ան անհաշտ էր
 եկեղեցական իշխանութեան եւ իր վարդապետութիւնն ալ պահեց
 նոյն անհաշտ դիմին վրայ : Ասով կրնանք ըսել թէ այս մարդն էր որ
 պատրաստեց Բողոքականութեան նախադիմը : Ուրիշ կերպար մըն
 էր Վ. Փիլքալի (1395—1460) որ կը տարբերէր Վիքլիֆէն : Եղակի երե-
 ւոյթ մըն էր որ Եպիսկոպոս մը կը մտնէր ազատ մտածողներու շար-
 քին մէջ : Ան կը հաւատար թէ բարոյական օրէնքներու հիմքը Աւե-

տարանը չէ, այլ մարդկային բանականութիւնը : Սուրբ Գիրքը գեր-
 բնական ճշմարտութիւններ միայն կը յայտնարերէ, ո՛չ ուրիշ բան :

* * *

Այժմ անենք Ֆրանսան :

Ֆրանսայի մտաւորական զարգացման պատմութիւնը ժԳ. ու
 ժԶ. դարերուն աւելի հարուստ եղած է քան ինչ որ եղած է Անգլիան :
 ժԲ. եւ ժԳ. դարերուն, Փրանսական փիլիսոփայական զարոցները
 աւելի կեանքոտ էին, աւելի բազմածախս էին քան ուրիշ որեւէ երկ-
 րի փիլիսոփայական զարոցները, այնպէս որ եթէ ակնարկ մը նետենք
 փրովանսական դրականութեանէն մինչեւ Ֆրանսայի կրթական ճար-
 տարապետութեան սկզբնաւոր մը, պիտի տեսնենք որ Ֆրանսան Վե-
 րածնունդի առաջնորդն եղած է : Տասներեքերորդ դարու վերջին
 մասին մէջ ալ Փարիզի բացիտնալիզմի ճիւղը իր մէկ համալսարանը
 յառաջ տարած է քրիստոնէական կրօնի մասնաւոր գովմաներու
 հերքումով : Բայց ժԳ. դարու կիսուն Ֆրանսայի յառաջդիմութիւնը
 երկու դարով համեմատական դադարի դատապարտուեցաւ : Մտաւո-
 րական այս յառաջընթացքը կասեցնողներն էին երեք գլխաւոր ուժեր,
 մէկը՝ կոմունական ազատութեանց կորուստն էր որ Ֆրանսայի մէջ
 տեղի ունեցաւ ժԱ. ու ժԲ. դարերուն, երկրորդը՝ եկեղեցւոյ ճըն-
 շիչ իշխանութիւնն էր. երրորդը՝ պատերազմներու հետեւանքով ազ-
 գային ուժերու վաւանումն էր : Արեւելեան խաչակիրներու քրոնիկ
 պատերազմները, Ֆրանսայի միաւորման շուրջ մղուած պատերազմ-
 ները, Ֆլէմինկեաններու եւ անգլիացիներու հետ տեղի ունեցող պա-
 տերազմները, անգլիական արշաւանքը Էդուարտ Գ. ի (1312—1377)
 օրով եւ աւելի աւերիչ՝ Հենրի Ե. ի (1387—1422) արշաւանքը, ասոնք
 բոլորը այնպէս ըրին որ ժԵ. դարուն Ֆրանսան նուազ քաղաքակիրթ
 երկիր էր քան Անգլիան : Բայց ժԶ. տ'Արք, Փրանսացի զեղջկուհի
 մը (1412—1431) երբ անգլիացիները զուրս վտարեց Ֆրանսայէն,
 Շարլը Ը.—րդ թագաւորը արշաւեց Իտալիա եւ անկէ սկսաւ Փրան-
 սական նոր վերագարթնումը, որուն գլխաւոր ներշնչումը տուողն
 եղած էր Իտալիան :

Վերեւ նկարագրուած շրջանին հետեւեալ համալսարանները
 հաստատուած են Ֆրանսայի մէջ. Փարիզի մէջ՝ 1200 թուականին,
 Թուլուզի մէջ՝ 1220-ին, Մոնտպելիէի մէջ՝ 1289-ին, Էվիէիոյի մէջ՝
 1303-ին, Օբլէանի մէջ՝ 1312-ին, Քահորի մէջ՝ 1332-ին, Պորտոյի
 մէջ՝ 1463-ին, Բուրկէսի մէջ՝ 1472-ին : Ասոնց մէջ Փարիզի համալ-
 սարանը ամենէն մեծ յուսատու վտարանն էր :

Անտարակոյս Փրանսական կուլտուրան արտաքին վտանգները

հեռացնելն յետոյ՝ կրնար աւելի բարձր աստիճանի հասնիլ, եթէ ներքին արգելակներ չըլլային: Այդ արգելակներն էին միլիտարիստական պայմանները, կղերականներու իշխանապետութիւնը եւ ասպետական միարանութիւնները: Այս վերջինները եկեղեցւոյ հեղինակութիւնը պաշտպանող զինուորական անպատասխանատու մարմիններ էին:

* * *

Վերածնունդի կանխագոյն շրջանին Եւրոպայի մնացեալ մասերուն մէջ կեանքը մասնաւոր նշանակելի երեւոյթ մը չէր պարզեր: Գերմանիոյ մէջ օրինակի համար, գրականութիւնը հակա-կղերական գոյն ստացած կը շարունակուէր: Հոն աւելի կարեւորութիւն կը տրուէր նիւթական բարգաւաճման քան թէ կուլտուրայի զարգացման: Այդ շրջանին, նշանաւոր դէմքը եղաւ Էքհարտ (1329-1382) որ ժողովրդական կրօնի քարոզիչ մը եղաւ: Ան կը քարոզէր որ մարդիկ բանավարութեամբ առաջնորդուելու են, եւ ո՛չ թէ կրօնի պատգամներով: Ասիկա կը բաւէր որ ինք կանչուէր Հաւատաքննութեան Ատեանին առջեւ: Էքհարտ յետո կոչեց իր սկզբունքները եւ այդպիսով ազատեց իր կեանքը: Իր մեռնելն յետոյ՝ իր զարոցը երկու մասի բաժնուեցաւ, մին հերետիկոսական, որ կոչուեցաւ «կեղծ ազատ ուղիներ», միւսը կոչուեցաւ «Աստուծոյ բարեկամները»: Այս վերջինները յառաջապահներն եղան Բողոքականութեան:

Արեւմտեան Եւրոպայի միւս երկիրներուն մէջ, ներառեալ Սպանիան, ԺՊ. դարուն, ժողովրդական հակա-եկեղեցական հերետիկոսութիւնը զանազան աստիճանով միայն տարածուեցաւ, որովհետեւ անոնց մէջ անտեսական զարգացման նպաստող պայմաններու չզոյլութեան կ'ընկերանար հաւատաքննութեան տարածած սարսափը:

2.— Բարեկարգութեան շրջան.—

Եկեղեցական յեղափոխութիւնը, որ ընդհանուր իմաստով ճանչցուած է որպէս բարեկարգութիւն, ազատ մտածողութեան մէկ երեւոյթն էր: Ան աւելի կը նմանէր ժառանգական թագաւորի մը դէմ պայթող ապստամբութեան, քան թէ ինքնաքննութեան եւ տրամաբանական հետախուզութեան պրոցեսին, ուր մարդիկ որոշ վարչապետութեան մը կամ վաւերապրի մը կապուած հաւատքէն կ'անցնին անհաւատութեան: Ասիկա պարզ կ'ըլլայ, երբ մենք նշենք որ բարեկարգութիւնը միայն ընկերային ու քաղաքական ուժերու հասունացման յայտնադորձումն էր, որու նախանշանները դարեր առաջ արդէն տեսնուէր էին քրիստոնէութեան ամբողջ շրջանին: Ուրեմն,

հասկնալի է որ բողոքականները արդէն իրենց յառաջապահները ունեցեր էին յանձինն զանազան հերետիկոսներու, որոնք չէին հաւատար զհարեութեան, չէին հաւատար անդրջիրթեան վարդապետութեան ու եկեղեցական նուիրապետութեան, չէին հաւատար սուրբերու միջնորդութեան: Ասոնց նման շատ մը կէտերու շուրջ բողոքեր են Պօղոսեաններն ու Լուարտեանները Լուտերէն դարեր առաջ: Եթէ Լուտերը յաջողեցաւ, պատճառը պէտք չէ վերագրել իր հանճարին, այլ Գերմանիոյ մէջ զարգացած անտեսական եւ քաղաքական պայմաններուն:

Մենք տեսնք որ Լուտերէն 3 դար առաջ բարեկարգութեան շունչը զգալի ըլլալու աստիճան ուժեղ էր Իտալիոյ մէջ. նոյնպէս բարեկարգութեան շուրջ ուժեղ շարժումներ կային եկեղեցւոյ մէջ: Վերածնունդի շրջանին ալ նոյն ուղիով բայց նուազ կրօնական գոյնով բարեկարգչական շարժում մը կար, որ շրջան կ'ընէր Պրանսայի, Գերմանիոյ եւ Անգլիոյ մէջ: Սալոնարոյս (1452-98) ժե. դարուն կրօնական բարեկարգութիւն կը քարոզէր Ֆլորէնսի մէջ: Իմացարանութեան տեսակէտով ան նոր զաղափարներ շունչէր, ընդհակառակը՝ մտաւորական լուսաւորութեան թշնամի էր, բայց որպէս հերետիկոս՝ խարոյկին վրայ քաւեց իր յանցանքը, որովհետեւ ընկերային, քաղաքական կեանքի մէջ խռովարար մը նկատուած էր: Եթէ Սալոնարոյս ձախողեցաւ Իտալիոյ մէջ, Լուտեր (1483-1546) յաջողեցաւ Գերմանիոյ մէջ:

Այդ շրջանին, Անգլիոյ մէջ ուրիշ բարեկարգիչ մըն էր Կալվինը (1509-1564): Լուտեր եւ Կալվին, երկու բարեկարգիչներ, զահիճներ դարձան հանդէպ անոնց՝ որոնք անտեսական ճշնող պայմաններու հետեւանքով իրենց իրաւունքներուն համար կը պայքարէին: Երկուքն ալ անհաշտ թշնամի էին ազատ մտածողութեան: Կալվինն էր որ Սէրվէտիուսը (1511-1541)՝ ազատախոհութեան այդ եռանդուն առաքեալը խարոյկին վրայ վառել տուաւ: Դարձեալ Քրիստոնեայ Լուտերն էր, որ 1525-ին գերման զիւլպայիները հաղարներով կոտորել տուաւ:

Անգլիոյ մէջ, այսպէս կոչուած բարեկարգութիւնը կրօնական աւելի քաղաքական գոյն ունէր, որուն ետեւը կրօնական վարչապետութիւն չկար: Լուարտեանները (բողոքական ազանդ մը) որոնք թուական դերազանցութիւն մը ունէին, քաղաքական տեսակէտով ո՛չ մէկ ազդեցութիւն կրնային գործադրել. նոյնիսկ պարլամենտը երբ ծրագրեր էր եկեղեցւոյ եկամուտները տուրքի ենթարկել, անոնք չկրցան հակառակիլ, շնայած որ թագաւորն ալ եկեղեցւոյ զաշնակից էր: Հենրի Ը.ի (1491-1547) օրով Անգլիան աւելի

ուղղագրւան էր քան Հիւսիսային Եւրոպայի առաջաւոր որեւէ ուրիշ պետութիւն: Բայց պարագայ մը կար, որ թագաւորին կը պարտադրէր Պապի հեղինակութենէն հեռանալ. ատիկա ալ իր Ֆինանսական նեղ դրութիւնն էր: Ասոր հետեւեցաւ վանքերու կողոպուտը եւ կաղձակերպումը մարմինի մը՝ որ շահու տեսակէտով թշնամի էր պապականութեան: Այդ տեսնները, թագաւորը եւ ժողովուրդը վարդապետական գիծով պապական էին, բայց եկեղեցական կալուածները զբաւոյնները նոր կղերական դասակարգ մը երեւան հանած էին, եւ նոր տեսակի հերետիկոսութիւն մը, որ հակառակ էր պապական իշխանութեան: Սպանական նաւատորմիցի միջազէպը եկաւ ժողովուրդը տանիլ հակա-կաթոլիկութեան: Սկոտլանդի մէջ իրերը գրեթէ նոյն գիծին վրայ էին շարուած: Կաթոլիկ կղերները շատ քիչ բարեկամներ ունէին: Բարեկարգութեան օրինադիժը պատճառ եղաւ որ հոն ալ բնաբազց պղծուականները կողոպտէին եկեղեցւոյ կալուածները եւ հաստատէին բողոքականութեան մէկ ճիւղը նոր քարոզիչներու միջոցով, որոնք աշակերտեր էին Կալվինի դպրոցին: Իրլանտայի մէջ, սակայն, բողոքականութիւնը մուտք չգտաւ, որովհետեւ ժողովուրդը արդէն ճնշուած անգլիական լուծին տակ, բողոքականութիւնը կը համարէր որպէս ճնշումի հոմանիշ վարդապետութիւն մը. ասոր համար Իրլանտան մնաց կաթոլիկ:

Այսպէս, կը տեսնենք թէ բարեկարգութիւնը նուազագոյն չափով միայն ազատ մտածողութեան հակած էր, իր գլխաւոր ուղեգիծն էր անտեսական նպատակի ուղղուած քաղաքական գործունէութիւնը: Տպագրութեան գիւտը (1444) թէեւ գրականութիւնը առաւ կրօնականներու ձեռքէն, բայց նոր գաղափարներու տարածման չնպաստեց, այլ նպաստեց հին գաղափարներու վերստուգման: Յաջորդ երկու սերունդներուն համար նոր գիրքեր լոյս չտեսան, այլ հին գիրքերն էին որ բազմապատկուեցան եւ անոնք մասսաներու մտաւորական դարգացումին չնպաստեցին: Այսպէս, ուրեմն, ազատ մտածողութիւնը Անգլիոյ, Ինչպէս եւ ուրիշ երկիրներու մէջ շատ քիչ հոգ գտաւ, որովհետեւ պապական բռնակալութիւնը փոխարինած էր տեղական-քաղաքական բռնակալութիւնը: Նախապէս հակապապական հերետիկոսները կը վառուէին խարոյկի վրայ, այժմ, խնամապետութեան ներքեւ փիւրիտանները — մաքրակրօնները — սկսան նոյն պատիժը գործադրել նորազարթ մոլեռանդութեամբ՝ պապականներուն՝ կամ իրենցմէ տարրեր մտածողներուն վրայ:

Բարեկարգութեան շրջանին ալ մենք կը տեսնենք որ հարիւրաւորներ զոհուեցան ազատ մտածողութեան ճամբուն վրայ եւ աղիթութեան խաւարը իր նախկին վիճակով ծածկեց քրիստոնէայ աշխարհը, մինչեւ որ եկաւ Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը:

3.— Արդիական ազատ մտածողութեան ծնունդը .—

Ազատ մտածողութեան գիծով բարեկարգութեան արմատները սկսած են Իտալիայէն, ուր քաղաքական եւ անտեսական պայմանները միշտ ձգտեր են չկողքացնել հաւատաքննութիւնը, եւ մենք այդ արմատներուն մէջ կրնանք գտնել հեռքերը արդիական աստուածական վարդապետութեան, արդիական օգտապաշտութեան, արդիական համաստուածութեան եւ արդիական աթէիզմի — անհաւատութեան — ձգտումին: Աստուածեաններու մասին առաջին անգամ կը խօսի Բէյլին (1647-1706) վեր առնելով Զուիցերիացի բողոքական Վիրէթի (1500-1563) հեղինակած քրիստոնէութեան ներածումը, ուր ան կը յայտնարեւէ այն ճշմարտութիւնը՝ որ աստուածեանները նոր անունով ազանդաւորներ են, որոնք մերժելով հանդերձ կրօնական յայտնադործումները, կը մերժեն նաեւ անաստուածութիւնը:

Իտալիոյ մէջ նոյն շրջանին, երեւան եկաւ Սոկրիսականութիւնը (երրորդութեան ու յաւիտենական պատիժի չհաւատացող ազանդ մը) որ 1546-52 տարիներուն՝ տարածուեցաւ Զուիցերիոյ բողոքականներուն մէջ:

Սոկրիսականութեան ձեւաւորումէն առաջ նախկին վանական մը՝ Բենարատ Օկինո (1487-1564) միտախիական եւ օգտապաշտական ձգտումներու միացումով կը քարոզէր բազմակրօնութիւն եւ ապահարգանի պատուութիւն: Իր ազդեցութիւնը բաւական տարածուեցաւ բողոքական շրջանակներու մէջ, բայց յետոյ՝ զինքը հոշակեցին որպէս հերետիկոս:

Իտալիոյ մէջ բոլոր հին անհաւատութեանց կարգին՝ կրօնական օգտապաշտութիւն մը սկսաւ ծագում առնել, որուն հետեւորդները իրրեւ հերետիկոս կը հալածուէին: Կրիկորէօ Բրանիտատա (1515-1591) Հաւատաքննութեան Ատեանին կողմէ մահուան դատապարտուեցաւ եւ իր մեղքը քաւեց խարոյկին վրայ: 1562-ին Կիլիօ Դրէվիգօ, եւ 1566-ին, Ֆրանսիսկօ Սագա Վենետիկի մէջ խարոյկի վրայ վառուեցան. իսկ 1570-ին, Անիօ Պալերիօ Միլանի մէջ կախազան բարձրացաւ. անիկա իր ժամանակին՝ լուազոյն փրօֆէսորն էր:

Հաւատաքննութիւնը Իտալիոյ մէջ գրեթէ բոլոր ակադեմիկ հաստատութիւնները փակած էր եւ կը շարունակէր՝ ծաղիկի սկսած գտական կուլտուրայի քայքայիչ դերը:

Ֆրանսայի մէջ բարեկարգութեանն առաջ եւ բարեկարգութեան ատեն գրականութիւնը ազատ մտածողութեան երանդ ստացեր էր: Բազմաթիւ էին հակակղերականները, թէեւ բաւական զգուշաւոր՝ չխօսելու համար հանդերձեալ կեանքի մասին:

Այդ շրջանին, Ֆրանսացի ամենափայլուն ազատ մտածողն է-

զած է Բանափէնաւոր տի Պէրիէ (1503-1567), որ Կալվինի հետ ընկերացաւ եւ յետոյ՝ Ս. Գիրքը վերաքննութեամբ թարգմանեց եւ վերջը բողոքականութենէ հետացաւ :

Ուրիշ ազատ մտածող մըն էր Ֆրանսայի Ֆրանսիս Ա.ի քոյրը Մարգարիտ Նաւարի (1492-1549) որ բարենորոգչական վարդապետութեան ուսանողներու խնամակալուհին եղաւ, իր ժամանակի ամենէն ազատամիտ կինը :

Այդ շրջանին, Ֆրանսական գրական ասպարէզին վրայ երեւցաւ ծնունդով կաթոլիկ՝ բայց մտածողութեամբ սկեպտիկ նշանաւոր գրող մը — Մոնթէյնը (1533-1592), որ այդ ոչ-գիտական դարաշրջանին եկաւ յայտարարել, որ «կրօնը շատ աւելի անշափելի չարիքի պատճառ եղած է քան թէ բարիքի» : «Մեր կրօնը», կ'ըսէ ան, «եղած է մոլութիւնները արմատահան րնելու համար, բայց ընդհակառակը՝ ան սնունդ կուտայ անոնց եւ կը գրգռէ զանոնք» :

Մոնթէյն ինքնատիպ փրկութեամբի վրայ շահմանեց, հետեւեցաւ Սէնէկայի (4 Ն.Ք. — 65 Յ. Ք.), բայց մեծ ազդեցութիւն ունեցաւ յաջորդ սերունդներուն վրայ : Իր վարդապետութիւնը շարունակողն եղաւ իր մէկ աշակերտը՝ Ծարոնը (1541-1603), որ եկաւ փաստել թէ ճշմարիտ բարոյականութիւնը կրօնի տաղձները կազմող յոյսի ու վախի վրայ հիմնուած չէ, այլ ատողջ բանավարտութեան վրայ :

Աշխարհական ազատ խորհողներու կարգին՝ յատկանշական է տեսնել կղերական մը՝ Ժիլդուիթ Հայր Ֆրանսուա Կորակասի (1595-1671), որ հազար էջոց գիրք մը գրած է, որուն մէջ կը ներկայացնէ ազատ մտածողութիւնը ու թեր նշանարաններով :

1.— Իմաստուն հոգիները սակաւաթիւ են այս աշխարհի մէջ. եւ յիմարներն ու տղէտները, որոնք մեծամասնութիւն կը կազմեն, մեր վարդապետութիւնը չեն կրնար հասկնալ : Ատոր համար անդուստ է անոնց խօսիլ ազատորէն, այլ խօսելու է զաղտնի, միայն հասկցող, վստահելի հոգիներու :

2.— Իրական իմաստունները Աստուծոյ կը հաւատան ձեւականօրէն, նկատի առնելով հասարակական քաղաքականութիւնը :

3.— Ազնիւ հոգին պիտի ճանչնաք իր ազատ հաւատքով, որուն մէջ խառնուած չեն ամբոխային անիմաստութիւնները :

4.— Ամէն ինչ կը կառավարուի ճակատագրի անօրինութեամբ, որ անփոփոխելի է, անսխալ է, անշարժ է, յաւիտենական է եւ անխուսափելի է բոլոր մարդոց համար :

5.— Ընչդ է որ մեր կրօնի գիրքը կոչուած է Աւետարան կամ Սուրբ Գիրք, ուր շատ լաւ բաներ կան, բայց մարդիկ հարկադրուած

չեն դատապարտութեան վախով հաւատալ ամէն ինչի՝ ինչ որ գըրուած է հոն :

6.— Աշխարհի մէջ ուրիշ աստուածութիւն կամ գերիշխող գիտակից իշխանութիւն գոյութիւն չունի բացի բնութիւնը, որ կը գոհացնէ մարդկային բոլոր կարիքները, առանց մերժելու որեւէ բան, որ անհրաժեշտ է մեր մարմինին ու զգայարաններուն համար, երբ անոնք իրենց բնականոն վիճակի մէջ են եւ որեւէ կերպով խանգարուած չեն :

7.— Ենթադրենք թէ Աստուած մը կայ, ինչպէս պատշաճ է ընդունիլ, բայց ասով՝ առանց նախապաշարութի կամ աւելորդապաշարութեան անձնատուր ըլլալու, չենք կրնար ընդունիլ որ զուտ իմացական էակներ կան, որոնք աննիւթական են, նիւթին կապուած չեն : Ամէն ինչ որ ըմբռնելի է, կամ տեսանելի, կազմուած է նիւթէն : Ուրեմն, աշխարհի մէջ ո՛չ հրեշտակներ կան, ո՛չ ալ դէւեր, եւ ո՛չ որ կրնայ ապացուցանել որ հոգին նիւթէն անջատ է ու անմահ է :

8.— Ըճմարիտ է որ երջանիկ ապրելու համար անհրաժեշտ է արմատախիլ ընել եւ խեղդել խղճահարութիւնը. բայց միեւնոյնն է՝ մարդիկ երջանիկ չեն կրնար ըլլալ երբ ամբարիշտ կամ անառակ կոչուելու վախէն նեցուկ կը կանգնին նախապաշարեալ եւ աւելորդապաշտ մարդոց :

ԺԸ. դարու Ֆրանսական լուսաւորչներու ճամբան նախապատրաստող կրօնականի մը այս պատգամները իրապէս յատկանշական են եւ պատմական նշանակութիւն ունին, որովհետեւ անոնք կը բացայայտեն որ արշալուսային շողերը արդէն սկսած էին կանխագոյն շրջանին :

* * *

Անգլիան, ընդհանուր կրօնական մոլեռանդութենէ դէպի ազատ մտածողութեան ճամբուն վրայ նուազ յառաջգիւղիւթութիւն ցոյց տուած է քան Ֆրանսան : Ասոր պատճառն էր բողոքականութեան եւ կաթոլիկութեան միջեւ մղուած պայքարը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ նորածին բուրժուազիայի եւ հիւանդկախ Ֆէոդալ լորտերու պայքարը : Բայց անհաւատութիւնը թաղուն խողովակներու միջոցով սկսեր էր տարածուիլ : Էսսէքսի դուքսը՝ Վոլտըրը, իր մահամեքձի անկողինին մէջ 1576-ին յայտարարեց. — «Մեր երկրին մէջ ո՛չ պտպակաւութիւն կայ, ո՛չ բողոքականութիւն, այլ միայն անհաւատարմութիւն, անհաւատարմութիւն, եւ անհաւատարմութիւն... Անաստուածութիւն եւ անաստուածութիւն... Կրօնք չկայ... Կրօնք չկայ...» : Էլիզաբէթ Թալուսին (1533-1603) իրապէս անկրօն էր, բայց

իր նախարարները եկեղեցին կը նկատէին որպէս պետութեան մէկ մասը եւ անխնայ կը պատճէին անխոհեմ հերետիկոսները: Մաթիու Հէմսնա, սայլագործ մը, 1579-ին խարոյկի վրայ վառուեցաւ, որովհետեւ ան յայտարարած էր թէ Նոր Կտակարանը տոտայէլներու հաւաքածու է, ինչպէս Հին Կտակարանը, որ Քրիստոս ածարար մըն էր, որ տղաներու բերնով եղաւ աստուածորդի, որ Սուրբ Հոգի գոյութիւն չունի եւ հաղորդութիւնը ապուշ արարողութիւն մըն է: Փիթըր Քոլ, խաղախորդարանի գործաւոր մը, 1587-ին նոյնպէս վառուեցաւ նոյն յանցանքին համար: Ֆրանսիա Քիտ, երիտասարդ կրօնական մը, նոյնպէս վառուեցաւ կրակին վրայ, որովհետեւ օգտապաշտ միաբանութեան անդամ էր: 1593-ին, վերջապէս մենք կը գտնենք անասունածութեան ամբաստանութեան տակ երկու նշանաւոր մարդիկ՝ Քրիստոֆըր Մարյօ (1564-1593), զոր երիտասարդ հասակին մէջ փոքրցին մէջ վայրագօրէն խոլխոլեցին, եւ Սըր Վոլթըր Ռալի (1552-1618), բանաստեղծ, պատմարան եւ պետական մարդ, որ երկու անգամ երկար բանտարկութեան դատապարտուելէ վերջ՝ գլխատուեցաւ, ձէյմս Ա. թագաւորին (1566-1625) ձեռքով:

Շէյքսպիրի թատերգութեանց մէջ, մասնաւորապէս Համլէթի մէջ որոշակի կ'երևի բացիոնալիզմի ոգին(*): Շատեր փորձեցին կրօնական շունչ դնել անոնց մէջ, բայց ձախողեցան:

Շէյքսպիր (1564-1616) ապահովարար ազգուած է Մոնթէյնի գործերու ընթերցումէն:

Ազատ մտածողութիւնը Եւրոպայի մնացեալ մասերուն մէջ Բարեկարգութեան թուականէն 150 տարիներու ընթացքին պատմական շատ քիչ արձանագրութիւն թողած է: Կոպենհիկոսի (1473-1543) գործը շատ քիչ ազդեցութիւն գործեց Գերմանիոյ մէջ: Ֆիզիքական եւ բնական կոիւնները սկսեցին հոն եկեղեցական յեղափոխութեան հետ եւ շարունակուեցան ամբողջ մէկ դար: Գիւղացիական ապստամբութիւնը ճգնուեցաւ, երբ 100,000 մարդիկ կոտորուեցան 1525-ին: Բազմաթիւ վերամկրտչականներ կոտորուեցան նաև 1535-ին: Քաղաքացիական պատերազմը շարունակուեցաւ մինչև Օկսպուրիի խաղաղութեան քոնֆերանսը, որ գումարուեցաւ 1555-ին:

(*) Շատ մը պատմա-ֆննդատներ կը փորձեն հաստատել որ Շէյքսպիրի գործերու հեղինակը ինքը՝ Շէյքսպիրը չէ եղած, այլ վանական մը, որ հաւատաֆննուքենէ վախճալով իր գործերը իր կենդանութեան ատեն չէ կրցած հրատարակել եւ յանձնած է իր ուշիմ սպասաւորին՝ Շէյքսպիրին, որ իր վարպետին մահէն յետոյ զանոնք հրատարակած է իր անունով:

Սպանիոյ մէջ, ուր հաւատաքննութիւնը սարսափելի ուժեղ էր, եկեղեցին եւ Պետութիւնը 160,000 հոգի խարոյկներու վրայ կամ բանտերու մէջ փծացուցին: Փորթուգալը նոյնպէս հետեւեցաւ Սպանիոյ օրինակին: Տասնութ տարուան մէջ 15,000 մարդիկ զոհ գացին հաւատաքննութեան:

Սպանիա ո՛չ միայն մասսայական ջարդ կազմակերպեց հերետիկոսներու դէմ, այլև հրեաներն ու մալթրտանացիները դուրս քշեց երկրէն, եւ երկիրը մտաւորական սնանկութեան հետ մատնուեցաւ անտեսական սնանկութեան: Հալածանքը նախ սկսաւ հրեաներուն դէմ. հրեաներն էին, որ 1500 տարի առաջ Քրիստոսը խաչին վրայ քամեր էին, ուրեմն, ամբողջ հրեայ ազգը այդ մեծ ոճիրին համար հատուցում տալու էր, եւ անոնք հալածուելու էին ու հալածուեցան: Անկէ յետոյ՝ կարգը եկաւ մալթրտանացիներուն: Սկզբնական շրջանին արգիլուեցաւ անոնց իրենց կրօնական ծէսերը կատարելը. այդ բաւական չէր, հաւատաքննութիւնը գտնոնք ազատ չձգեց: Սկսան զանոնք կեղեքել, հարստահարել, դատապարտել եւ բռնի Քրիստոնեայ մկրտել. վառեցին անոնց արարական գիրքերը: Բոնութեան սաստկացումը դուռ բացաւ ապստամբութեան: Տեղի ունեցաւ արիւնալիզ ընդհարում: Վերջապէս Ժէ. դարու բացման տարիներուն՝ Ֆիլիպ Գ. ի օրով մէկ միլիոն մալթրտանացիներ, որոնք Սպանիոյ բնակչութեան ճարտարարուեստի ուժը կը կազմէին, քուուեցան երկրէն դուրս:

4.— Ազատ մտածողութիւնը Սոցիալիստ երկիրներու մէջ.—

Յաւալի է որ մենք նոյնիսկ թոռցիկ ակնարկներով ալ պիտի չկարողանանք ներկայացնել ԺԶ., ԺԷ. եւ ԺԸ. դարերու ընթացքին Ազատ մտածողութեան տեղատուութիւնն ու մակընթացութիւնը՝ յայտնի մտաւորական մարդոց կենսագրականներով ու գործերով, որովհետեւ այժմ կը տեսնեմ որ իմ ուսումնասիրութեան յատկացում այս բաժինը աւելի ընդարձակելով ուրիշ հատոր մը եւս պէտք է աւելցնել, այդ իսկ պատճառով ստիպուած եմ ուսումներով անցնիլ կապիտալիստական դարաշրջանի վրայէն եւ Ազատ մտածողութեան գիծով հարեւանցի տեսութեամբ մը բաւականանալ՝ արդի սոցիալիստական երկիրներու շուրջ:

Սոցիալիստ երկիրներու մէջ ազատ մտածողութիւնը թոյլատրուած է. Բոլորովին վերցուած են ազատ մտածողութեան կապանքները:

Այս հարցումներուն պատասխանելու համար վեր պիտի առնենք այն միակ առարկայական ուղիղ դիժը, որ դասակարգային դիժն է:

Միջին դարու հաւատաքննութիւնը Քրիստոնէական կրօնի բարձրբացման ու տարածման չէր ծառայեր, այլ կը ծառայէր բացարձա-

կապէս Եկեղեցւոյ աւատական իշխանութեան ամբաստանութիւն: Եկեղեցին եւ անոր կապուած վանքերը անհուն տարածութեամբ հողեր ունէին, որոնց վրայ կ'աշխատէին միլիոնաւոր ընչազուրկ զիւղացիներ՝ փոր մը հացի համար: Մնացեալ հողերը բաժնուած էին պետութեան եւ հողատէր ազնուականներու միջեւ: Եկեղեցի, ազնուականութիւն ու պետութիւն, ասոնք երրորդութիւն մը կազմած էին ու կը ճնշէին ժողովուրդը: Եկեղեցին էր հայր աստուածը, պետութիւնն էր որդին աստուածը, իսկ հողատէր ազնուականութիւնն էր հողին սուրբ աստուածը: Պետական օրէնքները, դիտութիւնն ու գրականութիւնը նուիրուած էին այդ երրորդութեան շահերու պաշտպանութեան զործին: Հասարակ ժողովուրդը, տգէտ ու միամիտ, երկնային պատգամներու ուսուցումով սորված էր հաւատարու թէ՛ աստուածային կարգադրութեան հետեւանք էր հաստատուած գրութիւնը. եւ անոր այդ հաւատքը պէտք էր մնար անխախտ: Ահա թէ ինչո՞ւ հաւատքին ուղղուած որեւէ կասկած վտանգ մըն էր երրորդութեան համար եւ այդ կասկածը սնուցանողները պէտք էր հրկիզուէին խորոյին վրայ, որպէսզի սարսափը ստեղծէր հաստատուած բնութիւնը, սակայն, անբնական էր որ կարենար մարդկային անսանձ բանականութիւնը ընդմիջտ շղթայուած պահել: Երեւան եկան ազատ մտածողներ: Բայց այդ ազատ մտածելու յանդէնութիւն ունեցողները չէին կրնար խորհիլ ժողովուրդը ազատամբութեան ճակատը տանելու մասին, որովհետեւ նախ՝ որ դասակարգային կռիւր դեռ չէր սկսած, երկրորդ՝ որովհետեւ իրենք ալ միջոցներ չունէին այդ ընելու, քանի որ զիրն ու գրականութիւնը կրօնական դասակարգի ձեռքին մէջ էին: ԺՆ. դարուն երբ տպագրութեան զիւտը եկաւ գրականութիւնը առնել կրօնաւորներու ձեռքէն, այս անգամ նիւթական դժուարութիւններն էին, որոնք կ'արգիլէին ազատ մտածողները, որպէսզի իրենց զաղափարները տարածէին ժողովուրդին մէջ: Գիրք մը հրատարակելու համար զրամ հարկաւոր էր եւ յետոյ՝ հրատարակուած գիրքը գնելու համար գնորդը զրամ վճարելու էր, իսկ ժողովուրդը անգրագէտ էր ու թըշուառ: Դպրոցները, զօլէճներն ու համալսարանները ունեւոր դասակարգի զաւակներուն համար էին միայն մատչելի: Պարզ էր, ուրեմն, որ լուսաւորութեան գործը սկսելու էր վերեւէն — ունեւոր դասակարգէն, այսինքն այն դասակարգէն՝ որ ժողովուրդին հետ՝ եթէ ոչ հաւատար՝ բայց վերջապէս որոշ չափով կը ճնշուէր Ֆէոդալական իշխանութեան տակ: Այժմ, ո՞րն էր այդ դասակարգը, որ պիտի պատրաստէր յեղափոխութիւնը: Յայտնի էր որ անիկա նոր ծնող դասակարգն էր, մանուֆակտուրայի տէր՝ բուրժուա դասակարգը, որուն կը ծառայէին վաճառականները: Ասանկով ազատ մտածողները բազմացան. երբ անոնք կապիտալիզմի զարգացման հետեւանքով բազմա-

ցան, անոնց զաղափարարանութիւնն ալ բիւրեղացաւ եւ կազմուեցաւ պայքարի ընդհանուր ուղիգիծ մը: Այլեւ ազատ մտածող անհատներ չէին որ կրօնական այս կամ այն կէտի շուրջ իրենց ձեւակերպած վարդապետութիւնը քարոզէին պաշտպանութեան մը ներքեւ կամ մահը արհամարհելով, այլ կազմուած էր յեղափոխական հոսանք մը, որ կ'ընդունէր թէ Ֆէոդալական չէնքը խորտակելու համար միակ միջոց մը կար. այն էր քանդել կրօնը:

Ազատ մտածողութեան պատմութեան ո՛չ մէկ մասը այնքան չէ խեղաթիւրուած, որքան այն մասը, որ Փրանսական Յեղափոխութեան մասը կը կազմէ: Անգլիոյ մէջ աւանդական տեսութիւնը այն եղած էր որ Փրանսական Յեղափոխութիւնը անաստուածներու զործն էր, որ անոնք Քրիստոնէութիւնը ոտնակոխեցին եւ քաղաքային կին մը որպէս աստուածուհի պաշտեցին, որ տեւորը անոնց սկզբունքն էր, որով կ'ուզէին կրօնը արմատախիլ ընել: Անգլիական բուրժուազիան այս հաւատարկացումով պահեց իր թագաւորը, չհետեւեցաւ Փրանսայի եւ հաշտուեցաւ հողատէր լորտերու հետ եւ ուժ տուաւ դադութային քաղաքականութեան: Բայց իրողութիւն է, որ Փրանսայի յեղափոխականները մեծ մասով աստուածեան էին քան թէ աթէիստներ, միայն թէ աթէիստներն էին անոնց առաջնորդները, որովհետեւ այդպէս կը պահանջէր յեղափոխութիւնը: Ժողովրդական զանգուածները, որոնք իրենց կաշիին վրայ կրած էին կրօնաւորներու խարազանի հարուածները Պետութեան ու եկեղեցւոյ պաշտպանութեան տակ, ոտքի էին կանգնեցրել, եթէ հաւատալիքներու սանձը մնար հոգեւորականներու ձեռքը:

ԺԼ. դարը ազատ մտածողութեան յաղթանակի դարն էր: Այդ դարու ազատ մտածողները հարկադրուած էին կոուիլ կրօնի դէմ, բայց ոչ շահագործման սկզբունքին դէմ: Փրանսական բուրժուազիան կրօնի վրայ հաստատուած ճորտաախրութիւնը կ'ուզէր վերցնել գործարաններուն ազատ բանուորներ մատակարարելու համար, բայց չէր ուզեր որ ժողովուրդին մէջ յեղափոխական ոգին արմատանար եւ օր մըն ալ անիկա ապստամբէր իր նոր հաստատած սխտէմին դէմ: Բուպէսպէր (1758-1794) նորելուկ բուրժուազիայի այդ հեռատես առաջնորդը, պարապ տեղը չէր որ Գերագոյն էակը դարձեալ բազմեցուց իր գահին վրայ եւ արմատական մտածողները գլխատել տուաւ: Ի վերջոյ, թէեւ ինքն ալ գլխատուեցաւ, բայց իր տեսութիւնը յաղթանակեց ԺԹ. դարուն, երբ կապիտալիստական սխտէմը արդէն իսկ հաստատուած՝ կրօնքը առաւ իր պաշտպանութեան տակ եւ ամէն մարդու իր ցանկացած ազատութիւնը տուաւ:

Գերին կամ ճորտը, որքան որ հողին կապուած կը տանջուէր բայց վերջապէս ունէր տէր մը, որ զինքը բնտանի կենդանիներու կար-

զին՝ կը պահէր, թէեւ երբեմն զինքը կը խարազանէր, սակայն ինք անտէր ու անօթի չէր մնար: Այժմ ինք եղեր էր ազատ մարդ, բայց այս անգամ ճակատեր էր անշունչ եւ անհողի հրէշի մը — մեքենային, որ զինքը կը շարժարէր անդադար եւ չէր թողուր որ պահ մը շունչ առնէր, հանգստանար: Արիւն քրտինք թափելով գործելու էր օրական 16 ժամ. իրեն միայն 8 ժամուան ազատութիւն տրուած էր քնանալու, որպէսզի թարմացնէր իր ուժերը յաջորդ օրուան համար: Ընտանիք ունէ՞ր... իրե՞նն էր այդ ընտանիքը: Զաւակներ ունէ՞ր... իրե՞նն էին այդ զաւակները: Ինք զանոնք չարչարանքով պիտի խնամէր, պիտի մեծցնէր, որպէսզի անոնք իր մեռնելէն վերջ ժառանգէին նոյն շղթաները: Ո՛ւր էր իր ազատութիւնը... Այո՛, ազատ էր, կըրնար թողուլ իր մեքենան ու ազատօրէն թափախիլ փողոցները. բայց անօթի պիտի մնար: Ուր որ զիմէր, իր դէմ պիտի գտնէր նոյն հրէշային մեքենան: Նոր տեսակի ստրկութիւն էր այդ, քաղաքակրթեալ ստրկութիւն մը՝ անտեսանելի լուծին տակ: Եւ բանուորը իր կատաղութիւնը թափեց մեքենային վրայ, փշրեց այդ մեքենան: Այս անգամ իր դէմ կանգնած տեսաւ պետական ուժը. հրացաններով ու սուլնաներով զինուորներ՝ որոնց մէջ էին իր մեծցուցած զաւակները: Ան ուրիշ ճար չունէր, համակերպեցաւ: Անցան տարիներ: Անիկա զառն փորձերով համոզուեցաւ որ ինք անհատապէս ոչինչ կրնար ընել. դիմեց իր ընկերներուն: Բանուորները կազմակերպուեցան եւ կազմակերպուած ուժով պայքարեցան. պայքարեցան առանց հիմնական ծրարադիրի, սոսկ իրենց լուծի ծանրութիւնը թեթեւցնելու՝ ո՛չ թէ այդ լուծը փշրելու եւ դրութեան տէր դառնալու համար: Արիւնահեղ խրատովութիւններ յաջորդեցին իրարու: Հրապարակ ելան բարեսիրտ սոցիալիստներ, ուրիշ տեսակի ազատ մտածողներ, որ կոչ ըրին մարդկային խղճմտանքին՝ դասակարգային կռիւր զազրեցնելու համար: Բայց կապիտալիստը խղճմտանք չունէր, ան միայն մէկ նպատակ կը հետապնդէր — աւելի եւ աւելի շահոյթի, կապիտալի կուտակում:

ԺԹ. դարու վերջերը դասակարգային կռիւր նոր գոյն ստացաւ եւ երեսն եկան երկու մեծ հանձարներ՝ Քարլ Մարքս եւ Ֆրեդերիկ էնգէլս, ազատ ու արմատական մտածող երկու տիտաններ, որոնց կոչը արձագանդ գտաւ բոլոր տանջուող հողիներուն մէջ. — «Քաւուորներ բոլոր երկիրներու, միացէ՛ք»...: Եւ Փարիզի բանուորները ոտքի ելան 1871-ին ու հաստատեցին Փարիզի Կոմունան, որ աւա՛ղ, երկար կեանք չունեցաւ: Բայց պատմութեան վճիռը ատով չէր բեկանուէր: Պատմութիւնը սուս պրոլետարիատին վերապահած էր Փարիզի Կոմունայի վրէժը լուծելու պարտքը: Եւ սուս պրոլետարիատը հաստատմօրէն կատարեց իր պարտքը՝ աշխարհի մէջ վեցերորդ մասին վրայ հաստատելով սոցիալիստական, սովետական հանրապետու-

թիւն: Ասով՝ Լենինի կուտակցութիւնը նոր դարազուլտ մը բացաւ պատմութեան մէջ: Քսաներորդ դարը եղաւ Մարքս-Լենինեան դարաշրջան: Ճնշուած ժողովուրդները հետեւեցան սուս հերոս ժողովուրդի օրինակին: Եւ այսօր կը տեսնենք թէ համարեայ աշխարհի մարդկութեան կէսը արդէն անցած է սոցիալիզմի դրօշակին տակ: Ի՞նչ կը տեսնենք միւս կէս մասին մէջ... կապիտալիզմի կեդրոնացում եւ միլիտարիզմի ծայրայեղ ուժեղացում: Կապիտալիզմը իր ամբողջ ուժերը կեդրոնացուցեր է երկու անառիկ կարծուած ամբողջներու մէջ. մին՝ իր հարստութիւնն է — դրամական գանձարանը, միւսը՝ իր զինարանը, ուր կուտակուած են առոմական զէնքերը: Այս կեդրոնացումը արդէն յայտնի է որ պիտի փութացնէ իր վերահաս կործանումը: Անոր ամբողջներուն դէմ կեցած է Մարքս-Լենինեան գիտութիւնը, որ ներկայիս անհաւասար կերպով տարածուած է աշխարհի զանազան մասերուն մէջ: Այդ անհատաորութիւնը, սակայն, հիմնական եւ տեսական երևոյթ մը չէ: Այս օրերը, զաղափարները սայլերով չեն ճամբորդեր, այլ ելքերական անտեսանելի եւ անխորտակելի թելերով, որով ապահովարար կրնանք ըսել թէ քսանմէկերորդ դարը պիտի ըլլայ համաշխարհային սոցիալիզմի դարաշրջան:

Այժմ անդրադառնանք մեր առաջագրած հարցին. ներկայիս սոցիալիստական երկիրներու մէջ ազատ մտածողութիւնը ի՞նչպէս ըմբռնուած է. ազատ մտածողութեան սանձ դրուած չէ՞: Մէկ խօսքով՝ կա՞յ ազատ կամք: Մարդիկ ազա՞տ են խօսելու եւ դրելու այն՝ ինչ որ կը մտածեն: Ազա՞տ են ընելու այն՝ ինչ որ կը սիրեն: Այս հարցումներուն հանդամանօրէն պատասխանել սուս անմիջապէս ըսենք որ մարդ էակը քանի որ հասարակութեան մէկ անբաժան անդամն է, ո՛չ մէկ ատեն ազատ է եղած եւ ո՛չ մէկ դրութեան տակ բացարձակապէս ազատ կրնար ըլլալ: Ազատ կամքի հասկացողութիւնը բուրժուական ըմբռնում է:

Բացատրենք մեր միտքը:

Մարդ էակը իր պատկանած հասարակութեան մէկ անբաժան անդամն է, ըսինք: Այո՛, եւ առիկա անհերքելի ճշմարտութիւն է, եւ ո՛չ ոք կրնայ ատոր հակառակը փաստել: Մարդ անհատը իր փորձառութիւնը, իր մտաւորական պաշարը ստացեր է ուրիշներու հետ ունեցած ընկերային ու անտեսական յարաբերութիւններէն, իր գիտութիւնը՝ գիրքերէն: Իսկ գիրքերը մտաւորական մարդոց միտքի արտադրութիւններն են, որոնց դործակցեր են տպարանի բանուորները իրենց մեքենաներով, իսկ մեքենաները արտադրուած են հանքերու մէջ աշխատող բանուորներու եւ ձուլարաններու մէջ գործող

գործաւորներու ձեռքով: Գալով իր Ֆիզիքական կազմախօսութեան՝
ան եւս արտադրութիւնն է ընկերային աշխատանքի: Ան սնանած է
կաթով, միսով, բանջարեղէնով, պտուղներով. ասոնք բոլորը ըն-
կերային աշխատանքի արդիւնքներ են: Անոր բնակարանը, ինչպէս
նաեւ մէջի կահ կարասիները շինուած են քարով, տախտակով, եր-
կաթով, ապակիով՝ ասոնք եւս ընկերային աշխատանքի արդիւնքներ
են: Ան պիտի գործածէ հագուստ, կօշիկ, զլխարկ եւ այլ առարկա-
ներ. ասոնք եւս ընկերային աշխատանքի արդիւնքներ են: Ասկէ կը
հետեւի այն՝ որ մեր ամբողջ կեանքը կապուած է ընկերային աշ-
խատանքի հետ: Մարդ էակը ո՛չ թէ իր լեզուով ու բանականութեամբ
է որ կը տարբերի անասուններէն, այլ անով՝ որ ան ընկերային բազ-
մաթիւ ու բազմատեսակ աշխատանքներու մարմնաւորումն է: Ու-
րեմն, մարդ անհատը երբ իր ամբողջ էութեամբ ընկերային արտադ-
րութիւն է ու կապուած է ընկերային արտադրութեան հետ, ո՛չ մէկ
պարագայի տակ ազատ ու անկախ չի կրնար ըլլալ: Ահա թէ ինչո՛ւ
սոցիալիստ երկիրներու մէջ ալ կայ հասարակական օրէնք մը, որ
կ'արգիլէ մարդոց ազատ կամքն ու ազատ մտածողութիւնը: Մար-
դիկ այդ երկիրներու մէջ ալ ազատ չեն կրնար մտածել, ազատ չեն
կրնար խօսիլ ու գրել: Ուրեմն, ի՞նչ է տարբերութիւնը գերետիրա-
կան սխտէմին, Ֆէոդալիզմին, կապիտալիզմին եւ սոցիալիստական
սխտէմին միջեւ, երբ նոյն բռնութիւնն է որ ցոյց կուտայ իր դուրսը,
եւ կը սանձէ մարդու ազատ մտածողութեան իրաւունքը:

Այո՛, շատ խոր տարբերութիւն մը կայ, երբ մենք նկատի առ-
նենք ազատ մտածողութեան սկզբունքը, անոր ձգտումն ու ուղիքի՞ծը:
Գերետիրական շրջանին ազատ մտածողները կը հալածուէին,
որովհետեւ իրենց արդարութեան բմբռնումով ապագայի մասին կը
մտածէին, գերիներու ազատութեան մասին: Ֆէոդալիզմի շրջանին,
ազատ մտածողները կը հալածուէին, որովհետեւ իրենց ազատու-
թեան բմբռնումով ապագայի մասին կը մտածէին եւ կ'ուզէին խոր-
տակել մարդկային միտքը շղթայող կրօնական կապանքները: Կապի-
տալիզմի շրջանին, ազատ մտածողները կը հալածուին, որովհետեւ
ասոնք ալ ապագայի մասին կը մտածեն եւ կ'ուզեն որ ընկերային
արդարութիւն մը հաստատուի գասակարգային հակամարտութեանց
կապուած խռովութիւնները վերջացնելու համար: Բայց սոցիալիս-
տական հասարակարգի տակ անսանձ ազատութիւն տրուած է ապա-
գայի մասին մտածողներուն, իսկ կը հալածուին միայն անոնք՝ ո-
րոնք անցեալը կ'ուզեն վերահաստատել: Եւ ատիկա շատ բնական
ու տրամաբանական է: Սոցիալիզմը երկնային շնորհ մը չէ եղած,
որ տրուած է մարդոց. սոցիալիստական շարժումը արեան ճամբա-
ներէ անցած է եւ տուած է միլիոնաւոր զոհեր, մինչեւ կրցած է յաղ-

թանակել եւ կտուցել իր պետական շէնքը, իր տնտեսութիւնը, եւ
դարգացնել իր սեփական մշակոյթը:

Կայ նաեւ ուրիշ տարբերութիւն մը, ըլլայ գերետիրական շրջ-
անին, ըլլայ Ֆէոդալական կամ անկէ յետոյ՝ կապիտալիստական
շրջանին. տիրող կառավարութիւնը վարձուած լրտեսներու միջոցով
երեւան հանած է վտանգաւոր ազատ մտածողները, որոնք զոյլութիւն
ունեցող զբոսիւնը խորտակել երազեր են իրենց ապագայի երա-
զանքով: Սոցիալիստ երկիրներու մէջ վարձուած լրտեսներ չկան,
ամէն մէկ սոցիալիստ երկրի քաղաքացի իր կառավարութիւնը, իր
հայրենիքը պաշտպանելու մտածումովն է որ կ'ապրի, կը շնչէ ու
կը գործէ: Ան գիտէ որ սոցիալիստ հայրենիքի հանդէպ ունեցած իր
պարտաւորութեանց կատարումովն է որ կը ստանայ իր ապրելու
իրաւունքը: Իր բարօրութիւնը պայմանաւորուած է սոցիալիստ հա-
սարակութեան բարօրութեան հետ, նոյնպէս իր զարգացումն ու յա-
ռաջգիմութիւնը: Ասկէ կը հետեւի այն՝ որ իր նայուածքը ուղղուած
է ապագային, ո՛չ թէ պատմութեան կարգը անցած անցեալին: Ան ես
չունի, իր եսը ձուլուած է ընկերային հաւաքականութեան մեծ եսին
մէջ, ատոր համար ան կը ձգտի միշտ այդ հաւաքականութեան լաւա-
գոյնին, բարձրին, վսեմին: Եւ ատանկները կը վարձատրուին, ոչ
թէ կը պատժուին:

Անտարակոյս քանի դեռ սոցիալիստական երկիրները շրջա-
պատող կապիտալիստական երկիրներ կան, երբեմն երեւան կուզան
չլացուցիչ երեւոյթներէն խարուողներ ու դասալիքներ, բայց անոնք
մեր պարզած իրողութիւնը չեն կրնար թխտել:

Կուզայ ստիպան ժամանակը, եւ այդ հեռու չէ, երբ ներկայ
կապիտալիստական երկիրները նոյնպէս կը կործանուին եւ կը տիրէ
սոցիալիզմը ամբողջ աշխարհի մէջ, ուր այլեւս կը վերնայ պրոլե-
տարական զիկտատուրան, ուր ազատ մտածողութիւնը կը կորսնցնէ
իր այժմէական իմաստը եւ ան կը դառնայ այնքան բնական ինչպէս
ընկերային աշխատանքը, եւ ուր մտաւորականն ու բանուորը իրար-
մէ չեն զատորոշուիր մտածողութեան գոյներով, որովհետեւ այն ատե-
տեն կուր կը սկսի բնութեան դէմ:

ՎԵՐՋ Գ. ՀԱՏՈՐԻՆ

ԾԱՆՕԹ.— Նիւթական եւ այլ անյաղքելի դժուարութեանց
պատճառով ստիպուած եղանք գեղջել էջ 10-ի վրայ ներկայացուած
յատակագիծի Գ. ՄԱՍը.— Կապիտալիզմի Քայքայիչ Ազդակները:
Սոցիալիստական Դարաշրջանի Նախակարգակաւ Երկիրները եւ այլն:
Այդ մասը ապագային պիտի դրուի մօտ ատենէն հրատարակուելիք
ուրիշ հատարի մը մէջ: ՀԵՂԻՆԱԿԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Գ. ՀԱՏՈՐԻ

	էջ
Որպէս Նախարան	6

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳՂՈՒԽ Ա.— Կապիտալիզմը. Ֆետդալիզմի Պատկերը	13
ԳՂՈՒԽ Բ.— Բուրժուազիայի Սկզբնաւորումը	43
ԳՂՈՒԽ Գ.— Արդիւնաբերական Կապիտալի Երեւումը	64
ԳՂՈՒԽ Դ.— Մարքսի «Կապիտալը» (Ընդհ. Տեսութիւն)	80
ԳՂՈՒԽ Ե.— Մարքսի «Կապիտալը» (Ամփոփում)	98
ԳՂՈՒԽ Զ.— Աշխարհի Թրէյտ Ինիթընները, Թրէյտ Ինիթընի Շարժման Հիմնաւորումը (1764-1876)	188

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ (ԺԸ.-Ի. ԴԱՐԵՐ)

ԳՂՈՒԽ Ա.— Եւրոպա եւ Ամերիկա 18-րդ Դարուն	265
ԳՂՈՒԽ Բ.— Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը	294
ԳՂՈՒԽ Գ.— 1848-ի Յեղափոխութեան Շրջանը	338
ԳՂՈՒԽ Դ.— Փարիզի Կոմունան	380

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳՂՈՒԽ Ա.— Իմպերիալիզմի Շրջանը	439
ԳՂՈՒԽ Բ.— Բանուորական Շարժումը Երկու Աշխարհամարտերու Միջեւ	484
ԳՂՈՒԽ Գ.— Համաշխարհային Սոցիալիզմը Ընդդէմ Համաշխարհային Կապիտալիզմին	584
ԳՂՈՒԽ Դ.— Ամերիկայի Միացեալ Նահանգները	666

ԶՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳՂՈՒԽ Ա.— Արդիական Գիտութեան Ծագումը	761
ԳՂՈՒԽ Բ.— Ազատ Մտածողութիւնը Ներկայ Դարու Եւ Ժամանակակից Շրջանին	869

ՎԵՐՋ Գ. ՀԱՏՈՐԻՆ



Ներկայ հատորը կը ձօնենք անմոռաց յիշատակին
մեր թանկագին բարեկամին ու ընկերոջ՝
Գ. ԳԱՏԷԳՃԵԱՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Գալուստ Գատէֆնեան ծնած է 1894 Փետրուար 18-ին, վան՝ Այգեաստան Հանգոյց Զոր քաղին մէջ: Համեստ ընտանիքի գաւակ, իր նախնական կրթութիւնը ստացած է իր քաղի ծխական վարժարանին մէջ: Դպրոցական շրջանը աւարտելէ յետոյ՝ վանի առաջնակարգ հարուստներէն Գալուստ եւ Մարգար Զիտաչեան եղբայրներու վաճառատան մէջ գրագիրի պաշտօն կը վարէ: 1912-ի Դեկտեմբերին, կ'ամուսնանայ Աշուգեան ընտանիքէն Օրիորդ Եւգինէի հետ: Նորապսակ ամուսնեքը կը բախտաւորուին երկու մանչ գաւակներով: Բայց անոնց երջանկութեան շրջանը երկար չի տւեր. վրայ կը հասնին Առաջին Աշխարհամարտը եւ անոր հետեւող քրֆական ջարդարարութիւնը: 1915-ի Յուլիսին, կը սկսի վանի գաղթը: Գալուստ իր ընտանիքին հետ ապաստան կը գտնէ նախ Երեւան, ուր կը կորսնցնէ իր մէկ մանչը եւ ծնողքը, ապա կ'անցնի Բագու, ուր կը կորսնցնէ միւս գաւակը, բոլորն ալ անշիրիմ: Դժբախտ հայորդին, բախտէն հալածական՝ իր տիկնոջ հետ կը վերադառնայ Երեւան, ուր անպատմելի դժուարութիւններով ու չարքաշ աշխատանքով կը հոգատարէ իր գոգանչը՝ Տիկին Իսկուհին եւ Բենին՝ Արուսը, որ այժմ Երեւան կը բնակի իր Լիլի դստեր հետ՝ ուրիշ դժբախտ կին մը, որ կորսնցուց իր մէկ սիրասուն գաւակը՝ Ալբերդը, գոլէնական շրջանը աւարտած պահուն, նոյնպէս իր փոքրիկ եղբայրը՝ Կարապետը, որ հայրենական պատերազմին գոհուեցաւ հիբլերական հորդաններուն դէմ մղուած կռիւներուն մէջ:

1917-1918-ին, Գալուստը կը նշանակուի *Նիլլը Իստ Բիլիֆի* կողմէ սննդակայաններ հաստատելու համար մարդահամարի տեսուչ: 1918-1920 տարիներուն, *Նիլլը Իստ Բիլիֆի* զնահատելով իր ծառայութիւնը, 3500 որբեր պատսպարող Էջմիածնի եւ շրջակայքի որբանոցներուն փոխ-կառավարիչ եւ գանձապահ կը կարգէ զինք: Սոյն պաշտօնավարութեան ընթացքին, Գալուստը կ'ենթարկուի դաշնակի խմբապետներուն դրամապաշտական հետապնդումներուն: Այդ ըստառնակիներուն չկարենալով հանդուրժել, 1920-ի Օգոստոսին, պատուով կը հրաժարի իր պաշտօնէն եւ տիկնոջ հետ միասին կ'անցնի Պոլիս, յետոյ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները, նախ Զըլսի, ապա՝ Քալիֆորնիա եւ կը հաստատուի Ֆրէզնո:

1933-ին, Հայաստանէն վերադարձիս, երբ Հայաստանի Օգոստոսեան Կոմիտէի (ՀՕԿ) կողմէ շրջուն գործիչ նշանակուած էի,

Ֆրէզնոյի մէջ ծանօթացայ իրեն: Հայրենիքի կարօտով, հայրենիքի սիրով վառուած անկեղծ ու նուիրուած հայ մը, որ նոյնքան եռանդով ոգեւորուած իր տիկնոջ հետ, իր ամբողջ ուժն ու կորովը, սիրտն ու հոգին տուած էր Հայաստանի Օգնութեան Կոմիտէին:

Գրամի ետեւէ վագոզ մարդ չէր Գալուստը: Ան գերին էր դարձեր իր սիրած հայրենիքին օգտակար դառնալու սեւեռեալ գաղափարին, մշտապէս փայփայելով Հայաստան վերադառնալու երազը: Բայց ի՞նչ ըսել որ կեանքը բշնամի էր դարձեր այս անձնուրաց հայրերին: Իր նամբուն վրայ եկան ձախողանք ձախողանքի ետեւ եւ կտրատեցին Հայաստան մեկնելու իր երազի թելերը: Երբ ձախողեցաւ Ֆրէզնոյի մէջ, իր տիկնոջ հետ 1942-ին փոխադրուեցաւ Վըլէյօ:

Հինգ տարի միասին գործեցին պետական նաւաշինարանը: Պատերազմը վերջանալուն՝ երբ բազմահազար մարդոց հետ ինքն եւս գործէն հանուեցաւ, նախ աշխատեցաւ քաղաքին նամակատան մէջ, ապա՝ տեւական գործ ապահովեց *Մէրի Թայմ Էքսպրէս*ին: Երջանիկ էր Գալուստը, շատ երջանիկ: «Մի քանի տարի վերջ միասին Հայաստան կը գնանք», կ'ըսէր ինձ յանախ: Գործատեղին քաղաքէն հեռու ըլլալուն՝ ինքնաշարժ մը գնած էր: Իր գործին մէջ շատ սիրուած էր մեծաւորներէն՝ իր ժրջանութեամբ ու հաւատարմութեամբ: Բայց... որ մըն ալ գործէն վերադարձին՝ յանկարծ իմացանք որ ան ինքնաշարժի դեկը ձեռքին՝ կաքուածահար եղած էր...: Այսպիսի աղթուր վախճան ունեցաւ այս անանուն հերոսը, որու կեանքը չարքաշութեան, գոհողութեան ու նուիրումի կեանք եղած էր:

Այս տողերը բող ծաղկեպսակ մը ըլլան իմ ամենասիրելի բարեկամիս ու ազնիւ ընկերոջս շիրիմին՝ ուր ամփոփուած են իր անիւնները՝ Ֆրէզնոյի գերեզմանատան մէջ:

27 Յունուար 1967
Ֆրէզնօ - Քալիֆորնիա

Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ը Կ Ը Գ Ն Ա Հ Ա Տ Է

Սոյն հատորին հրատարակութեան համար դրամական որոշ չափով օժանդակութիւն հասցնելու գնահատական աշխատանք տանողն եղած է Տիբրոյիտէն՝ Արտաշէս Գրիգորեան, որու օրինակին հետեւած են նոյնպէս Տիբրոյիտէն հետեւեալ համակիր ընկերները.

- Լեւոն Մուշեղեան*
- Խորէն Անսպիկեան*
- Խոսրով Անսպիկեան*
- Խորէն Լէքցեան*
- Սուրէն Արզոյեան*
- Սահակ Ասլանեան*
- Աշոտ Ղազարեան*
- Համբարձում Նալբանտեան*
- Հայկ Ղազարեան*

Մեր Բ. Հատորին համար օժանդակողներ եղած են.

- Տիբրոյիտէն. — *Ղազար Տէր Վարդանեան*
- » *Գաննիկ Տէրաէրեան*
- » *Մ. Խաչատուրոֆ*
- Շիգակոյէն. — *Արշակ Վասիլեան*
- Խոտ Ս. Լուիզէն. — *Սողոմոն Գապրիէլեան*
- Հէվրիիլէն. — *Յովհաննէս Չաղիկեան*
- Պէլմար Նիու ձըրզիլէն. — *Յակոբ Մեսրոպեան*
- Պոստընէն. — *Թ. Յարութիւնեան*
- Նիւ Եորքէն. — *Տիկին Աննա Քարայեան*
- Վոքսթաունէն. — *Յ. Պէճոյեան*
- Ֆրէզնոյէն. — *Կարապետ Քիրէմիտեան*
- » *Յարութիւն Երկաթ*

Յաւօք սրտով կ'ուզեմ յիշատակել որ վերեւ նշուած ազնիւ օժանդակողներէն վերջինը՝ Յարութիւն Երկաթ, գիտակից, հայաստանասէր եւ գոհաբերուող հայորդի մը՝ յանկարծամահ եղաւ իր բնակարանին մէջ՝ Մարտ 10-ին, 1967:

Յարգանք իր յիշատակին:

« Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ն Ե Ր Ո Ւ Ա Ր Ա Հ Ե Տ Ո Վ »

Փաղափարներու Արահետով այս անտիպ գործը, որ հայելին է հեղինակին ապրած զազափարական կեանքին՝ երիտասարդական շրջանէն սկսած մինչև իր ութսունամեայ տարիքը, ստուար հատոր մըն է. պիտի բաղկանայ մօտաւորապէս 700 տպագիր էջերէ :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

Արձակ էջեր. — (Արձակ բանաստեղծութիւններ. Համալ կեղծ անունով 1914-ին հրատարակուած. Անդունդին Մէջէն քաղուած կըտորներ) :

Բ. ՄԱՍ

Յուշեր. — Բանուորի Մը Յուշատետրէն (քաղուածարար զըրուած կատրներ) : Այդ հետաքրքրական գործը դեռ կը մնայ անտիպ :

Գ. ՄԱՍ

Բանախօսութիւններ. — Հեղինակին բանախօսութիւններէն մի քանին 1909-էն մինչև 1967 : Ասոնց մէջ կը տեսնենք հեղինակին որդեգրած զազափարականին միագոյն ու անսայթաք զիծը :

Դ. ՄԱՍ

Նամակներ. — Հեղինակին ստացած մաս մը նամակները եւ անոնց արուած պատասխանները, որոնք հասարակական արժէք կը ներկայացնեն :

Ե. ՄԱՍ

Հայ Թերթերէն Մերժուած Յօդուածներ. — Այս մասին մէջ հեղինակը դրած է ամերիկահայ թերթերուն զրկած յօդուածները որոնք որոշ պատճառներով չեն հրատարակուած :

Զ. ՄԱՍ

Երգիծական. — Հեղինակը այս մասին մէջ զրած է ամերիկահայ ընտանեկան, ընկերային եւ կուսակցական իրական կեանքէն անուած երգիծական հետաքրքրական պատկերներ՝ որոնց նմանը երբեք չէ հրատարակուած :

Հեղինակը պատրաստ է իր այս գործը նուիրել ընտանեկան ծախքը : կենսաբ կը դառնայ եւ կը հողայ անոր հրատարակութիւնը տրամադրէ Նոյնպէս հեղինակը իր այդ գործին ամբողջ հասոյթը նախաբանին մեկենասին կամ իրեն նախասիրած նպատակին՝ զրքնաւորներն ու մէջ պատշաճ տողերով ներկայացնելով մեկենասի կենսագիրն ու հակիրճ կենսագրութիւնը :

Այս մասին զրեւ հեղինակին՝

L. MARDIROSSIAN
370 N. San Pablo Ave.
Fresno, California - 93701
U. S. A.

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր Ը

Յո՞ Երբաս Ամերիկա (սպառած)	4 տոլար
Կեանքի Մը Ալբոմը	8 տոլար
Համաշխարհային Կրօններու Մատերիալիստական Հիմունքները Ա. Հատոր	4 տոլար
Նոյնը Բ. Հատոր (սպառած)	4 տոլար
Գասակարգային Կոիւներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ Ա. Հատոր	8 տոլար
Նոյնը Բ. Հատոր (սպառած)	8 տոլար
Նոյնը Գ. Հատոր	10 տոլար

Գիւմել հեղինակին՝

L. MARDIROSSIAN
370 N. San Pablo Ave.
Fresno, Calif. 93701
U. S. A.